ԱՐԹՈՒՐ ԱՐՄԻՆ

ՀՆԱԳՈՒՅՆ ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ՝ ՍԱՄՆԱ ԾՌԵՐ ԷՊՈՍԸ

ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԱՐԹՈՒՐ ԱՐՄԻՆ
/ Արթուր Լեւոնի Բաբայան /

ՀՆԱԳՈՒՅՆ ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ՝ «ՍԱՍՆԱ ԾՌԵՐ» ԷՊՈՍԸ

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

«ՍՓՅՈՒՌՔ»
Հասարակական–մշակութային կազմակերպություն

ՀՆԱԳՈՒՅՆ ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ
ԱՍՏՎԱԾԱԾՈՒՆՉ՝
«ՍԱՍՆԱ ԾՌԵՐ» ԷՊՈՍԸ, – հատոր I
Լոս–Անջելես 2007թ., Արթուր Արմին /Արթուր Բաբայան/
Arthur Armin (Arthur Babayan), Los Angeles, 2007

THE ANCIENT PAGAN BIBLE : ARMENIAN EPIC SASNA TSRER, Vol. I, p. 494,
Copyright © Arthur Babayan, 2007
Published in USA 2007. All rights reserved. No part of this publication may be reproduced or transmitted in any form or by any means, electronic or mechanical, including photocopy, recording or any other information storage and retrieval system, without prior permission in writing from the publisher.

For information address:
SPURK–Diaspora Org., 1325 Valley View Rd., # 204, GLENDALE, CA 91202.

Այս աշխատությունը բաղկացած է երկու մասից:
Առաջին մասում՝ ***«Հնագույն հավատամքի թաքնագիտական իմաստները»***, ներկայացված են հնագույն հավատամքային պատումների ընդհանրությունները, թվաբանական, երկրաչափական, աստղագիտական համակարգերը եւ հին ժամանակների աշխարհճանաչողությունը:
Երկրորդ՝ ***«Սասնա Տուն հավատամք-էպոսը»*** մասում, ներկայացված է հայկական էպոսի քողարկված, թաքնագիտական իմաստների վերծանություններն ու վերլուծությունները, որ փաստում են «Սասնա Ծռեր» էպոսի հնագույն հեթանոսական հավատամք լինելը:

Շապիկի նկարները. ուրարտական քուրմը երկու մուրճերով, մ.թ.ա. I հազարամյակ, Հայկական լեռնաշխարհի ժայռապատկերներ, մ.թ.ա. VI-III հազարամյակներ, Արարատ լեռը:

Published by the SPURK–DIASPORA Charitable Organization &
INTERNATIONAL ACADEMY OF SCIENCES OF NATURE AND SOCIETY

Դարերով փնտրում ենք այն, ինչը մեր մեջ է.
եւ կորցրածը կվերագտնենք միայն այն ժամանակ,
երբ գիտակցենք կորստի արժեքը:

Արթուր Արմին

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍ - I, ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ
ՀՆԱԳՈՒՅՆ ՀԱՎԱՏԱՄՔԻ ԹԱՔՆԱԳԻՏԱԿԱՆ ԻՄԱՍՏՆԵՐԸ

Գլուխ I,
Հնագույն պատումներում «արարչության սկզբի» մասին իմֆորմացիայի եւ խորհրդաբանական սիմվոլների նմանությունները 14
Գլուխ II,
Հնագույն հավատամքներում աստվածների հիերարխիաների կառուցվածքային նմանությունները եւ թվային համակարգերը 52
Աստվածների անունները որպես թվային արժեքներ 61
Գլուխ III,
Աստղագիտություն 76
Գլուխ IV,
Մայր պատում (Basic Myth), 1 > 8 համակարգ.
ներքին բնազանցական եւ աստղագիտական իմաստները 122
Գլուխ V,
Հնագույն բնազանցական իմաստնության գիտականությունը 140
Խորհրդապաշտություն՝ հնագույն սիմվոլների իմաստներն ու ընդհանուր նշանակությունները 149
Աստվածների անունների ստուգաբանության հետ առնչվող մոտեցումներ 160

ՄԱՍ - I I,
ՍԱՆԱ ՏՈՒՆ ՀՆԱԳՈՒՅՆ ՀԱՎԱՏԱՄՔ ԷՊՈՍԸ

Գլուխ I,
Ովքե՞ր են հայոց «թշնամիները»՝
հայկական հնագույն «առասպելներում» 177
Գլուխ II,
Դուալիստական սկզբունքը հնագույն հնդեւրոպացիների հավատամքում եւ
դրա անդրադարձը նրանց հասարակական կառուցվածքում 194
Գլուխ III,
Գագիկ թագավորը որպես հիերարխիայի
«սկիզբ», հայր եւ պապ 218
Գլուխ IV,
Ծովինար՝ նախամայր 251
Գլուխ V,
Քեռի Թորոս > Թորգոմի Տուն 278
Գլուխ VI,
Ովքե՞ր են, ի վերջո, գաղտնատես հոր երկվորյակ որդիները՝
Սանասարն ու Բաղդասարը 287
Գլուխ VII,
Մեծ Մեր, Առյուծաձեւ Մեր 345
Գլուխ VIII,
Սասնա Տավիթ 364
Գլուխ IX,
Փոքր Մեր 388
Գլուխ X,
Պատմահայր Մովսես Խորենացին եւ
«Սասնա Տուն» հնագույն հավատամք-էպոսը 439

ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐ

HALDI դիցանուն եւ «Մեր դուռ» 466
Նշումներ՝
*Մաշտոցյան այբուբեն 487
*Շարականներ 489

I

Խոսել «Սասնա Տուն» *(կամ «Սասնա Ծռեր» անունով)* էպոսի մասին, որպես հազարամյա էպոս՝ անհեթեթություն է *(1939 թվականին նշվել է էպոսի 1000-ամյակը):* Կամ ընդունել, որ հայկական հնագույն էպոսն իբրեւ-թե ավարտվել է մ. թ. 10-րդ դարում եւ համանման տրամաբանությունից ելնելով, նշել հազարամյան *(ինչպես մահվան տարելից),* անհեթեթություն է նրմանապե՛ս:

Հայկական էպոսի խորհրդապաշտական հենքը հնագույն է, այն բազում հազարամյակներ առաջ, հայ արիներ կոչվող ցեղամիավորումներին կամ նախահնդեւրոպական մայր լեզվով խոսող ժողովրդին պատկանող, քրմական գլխավոր տաճարի կրոնամիստիկ ավետարանն է, որը արարչության, ըստ համաստեղությունների երկնակամարի ձեւավորման եւ մարդկության հոգեւոր ընթացքի մասին կարգակառույց է: Հնագույն ժողովուրդների էպոսներն իրենց հիմքում հոգեւոր, ներհայացական են: Դրանք առ Աստված աղոթական խոկումների, ներհուն փնտրումների, տիեզերաճանաչողության եւ մարդու աստվածային կոչման մասին մեկնություններ են: Ընդհանրապես, հնագույն հավատամքների հետ կապված էպոս-պատումները, մեկ հավատքի՝ մեկ աշխարհճանաչողության ներքո կենտրոնացած մարդկային տեսակի՝ ցեղի, աշխարհընկալումն է՝ արարչության, տիեզերքի, բնության եւ գոյության իմաստների մասին: Հնագույն էպոս-հավատամքներն իրենց արտաքին պատումի ներքո ունեն ներքին ասելիքը՝ խորհրդաբանական թաքնագիտությունը: Հնագույն հավատամք-էպոսները դուրս են եկել վաղընջական հավատքների տաճարներից *(անշուշտ, դրանց բարբարոսաբար կործանումից հետո)* եւ, տարածվելով ժողովրդի մեջ, պատմվել ու երգվել են ժողովրդական գուսանների կողմից, որոնք, հավատամքային կառույցն ընկալելով որպես սյուժետային պատում, հարմարեցրել են այն նոր հավատամքին ու իրենցից ոչ հեռու ընկած պատմական անցքերին, իհարկե, հին պատումին հաղորդելով ժողովրդական բանահյուսությանը հատուկ գծեր՝ կենցաղային դրվագներ, հումոր, կենարար շունչ, թրթիռ, մշտապես կենդանի պահելով այն, եւ, որ ամենակարեւորն է՝ փրկել են մոռացումից ու ոչնչացումից:

Այսօրվա դյուցազներգությունները հնագույն քրմական տաճարների հավատամքային ավետարան-կոթողներ են, որ հին ժամանակներում ձեւավորել են մարդկանց հոգեւոր եւ բարոյական նկարագիրը: Հնագույն հավատամքային պատումներում փորձել են բացատրել գոյության գաղտնիքը եւ մեկնաբանել բնությունը՝ որպես հոգեւոր-աներեւույթ սֆերայի տրանսֆորմացիա՝ նյութականացված պրոեկցիա, որը երեք չափումնանի նյութա-

կան-գոյաբանական մեր իրականությունն է: «Սասնա Տուն»*(Սասնա Ծռեր)* էպոսը նույնպես պատկանում է այդ էպոսների ընտանիքին եւ հնագույն ժամանակների աշխարհաճանաչողության ու արարչության մասին վիպականացված պատում-կառույց է: Սակայն, ժամանակին, մի շարք հեղինակներ՝ Մ. Աբեղյան, Վ. Ժիրմանսկի, Կ. Մելիք Օհանջանյան եւ այլոք, ընդունելով հանդերձ, որ հայկական էպոսի միջուկը՝ «ատաղձը», ժամանակագրությամբ միջին դարերից շատ ավելի խորն է գնում, այնուամենայնիվ, «Սասնա» էպոսը ներկայացնելով որպես 7-10-րդ դարերի պատմական դեպքերի մասին ժողովրդական արձագանք-պատումներ, այն «մի կերպ տեղավորեցին» միջին դարերում:

20-րդ հարյուրամյակում տիրապետող մատերիալիստական մոտեցման համաձայն, հատկապես խորհրդային տարիներին, հնագույն հավատամքային կառույցները համարվում էին ժողովրդական հեքիաթներ՝ ժողովրդական բանահյուսություն, որոնց հիմքն իբր մի կողմից՝ բնության երեւույթները հեքիաթային բացատրություններով ներկայացնելն է եղել, մյուս կողմից՝ *«ժողովուրդը բիլինաների մեջ ցանկացել է պատկերել ընթացիկ քաղաքական կյանքը»*[*1]: Հետեւանքի ու պատճառի տեղերը փոխելով, արհամարելով ու չհասկանալով՝ ժամանակագրությո՛ւն, ճարտարպետությո՛ւն, մաթեմատիկա՛, աստղագիտությո՛ւն եւ այլն, ժամանակի բանասերներն ու պատմաբաններն ընդունում էին, որ ժողովրդական պայքարի հետ կապված դեպքերը եւ պատմական իրական դեմքերը, որոնք գլխավորել են այդ շարժումները, հետագայում «ուռչելով» ու դառնալով աստվածներ՝ հանդիսացել են արարչության մասին կոսմիկական հավատամքային պատումների ատաղձը: Այսօր, արդեն, գիտնականների մեծամասնության համար պարզ է, որ հնագույն քրմական տաճարների կոսմիկական հավատամք-կարգականոնն է, որ կործանվելուց հետո, ժամանակի ընթացքում ժողովրդի մեջ սփռվելով եւ վերապատմվելով, հարմարեցվել է պատմական դեպքերին ու դեմքերին: Օրինակ, «Սասնա» էպոսի քեռի Թորոսը, որ մեր բանասերների կողմից նույնացվել է Թեոդորոս Ռշտունու (7-րդ դար) հետ, իրականում հնագույն, համընդհանուր հնդեւրոպական՝ Թոր-Թհոր-Թեշուբ աստվածությունն է: Սակայն, Մ. Աբեղյանը գտնում էր, որ Սասունցի Դավթին, Ձենով Օհանին, Քեռի Թորոսին օրինաչափ է նույնացնել 8-10 դարերի սասունցիների պատմական որոշակի դեմքերի հետ[*2]: Այս մոտեցումը՝ էպոսի հերոսներին կամ պատումային անցքերը նույնացնել պատմական դեմքերի ու դեպքերի հետ, ոչ թե լուրջ գիտնականի, այլ ժողովրդական ասացողի, երգիչ-գուսան-

---

*1 - Վ. Յ. Պրոպպ, «Ֆոլկլորը եւ իրականությունը», Մոսկվա, 1976, էջ 125:

*2 - Մ. Աբեղյան, «Երկեր», Երեւան, հ. I, էջ 354-371, 571-554:

ների «արտաքին» տրամաբանությամբ՝ ուղիղ եւ պարզունակ մեկնաբանության ձեւ է: Բնական է, որ ժողովրդական ասացողը՝ գուսանը, իրեն ժառանություն հասած հնագույն, պատրաստի կառույցը՝ հեթանոս էպոսը, ընկալի որպես սյուժետային պատում եւ այն հարմարեցնի իր նոր հավատամքին *(այս դեպքում՝ քրիստոնեությանը),* եւ իրենից ոչ հեռու ընկած ժամանակների պատմական անցքերին, քանի որ ժողովրդական ասացողը, միջնադարում՝ VIII-X դդ., առավել եւս XIX-XX դարերում, անծանոթ լինելով իր նախնիների հնագույն հավատամքին ու աշխարհճանաչողությանը, հանդես է գալիս որպես իմպրովիզատոր-փոխանցող: Սակայն, երբ գիտնականն է իր «տեսությունը» կառուցում գեղջուկի տրամամաբանությանը համանման պարզունակ սխեմայով, աղավաղելով հնագույն հավատամք-էպոսի թե՛ ժամանակագրությունը, թե՛ ներքին խորհրդաբանական իմաստները, առնվազն... անթույլատրելի է: Մեծ գիտնական Հ. Օրբելին սովետահայ էպոսագետներին զգուշացնում էր, որ՝ *«առասպելական հերոսների սխրագործությունները հարմարեցվել են արաբ նվաճողների դեմ հայ ժողովրդի մղած համառ պայքարի իրադրությանը»*[*1]: Ուրեմն, հնագույն «միթոսական» հավատամքը հետագա ժամանակների պատմական դեպքերի ու դեմքերի հետ հարմարեցնելը՝ *հետեւանք* է: Սակայն, ընդունել՝ թե իբր դրանց հղացման հիմնանյութը եւ կառույցը՝ այս կամ այն պատմական իրադարձությունն է եղել, եւ գիտական աշխատությունը կառուցել իր նախնիների հնագույն հավատամքին անծանոթ գեղջուկի պարզ, «արտաքին» տրամաբանության հիմքով, առնվազն... անլուրջ է: Ու թեեւ հայկական էպոսն ուսումնասիրողները՝ բոլորը, անվերապահորեն ընդունում են, որ հայկական էպոսի հիմքում առկա է վաղնջական հավատամքային *(ըստ ոմանց՝ հեքիաթային)* աշխարհճանաչողությունը՝ հեթանոս էպոսը, սակայն, «Սասնա» Էպոսի՝ մեր հնագույն հավատամք-կառույցի էության մեջ խորանալու որեւէ լուրջ փորձ դեռեւս չի արվել[*2]:

Թե ինչո՞ւ են ժամանակին «Սասնա Ծռերի» միստիցիզմը՝ «հեքիաթային» մասերը, թերագնահատել ու արհամարհել, կարծում եմ այնքան էլ դժվար չէ հասկանալ: XIX-XX դարերի մատերիալիստական աշխարհճանաչողության անկյունաքարն այն էր, որ իբր հին մարդն ավելի հիմար էր, քան թե ինքը՝ ժամանակակիցը, գտնելով, որ հնագույն քրմապետը՝

---

*1- Հ.Օրբելի, «Հայկական հերոսական էպոս», Երեւան, 1956թ., էջ 64:

*2- Վերապահում թերեւս կարելի է անել Արմեն Պետրոսյանի “The Indo-European and Ancient Near Eastern Sources of the Armenian Epic” աշխատությանը (“Journal of Indo-European Studies”, M 42, Washington D.C., 2002, որտեղ ներկայացված են «Սասնա Ծռերի» եւ հնդեւրոպական ծագում ունեցող հնագույն միֆական պատումների արտաքին բացահայտ նմանությունները:

մտածող մարդը, ամպը ձիուն նմանեցնելով է իր հավատամքի «հեքիաթը» հյուսել: Այսօրվա «քաղաքակիրթ» աշխարհը մոռանում է, որ տիեզերքի, անսահմանության ու գոյության գաղտնիքների մասին ամենն տասնամյակ գիտական մի հեքիաթ է հյուսվում, որ հետո՝ մերժվում է: Որ այսօր, քվանտային եւ մոդեռն ֆիզիկան հնագույն խորհրդապաշտական թաքնագիտությունից է գաղափարներ ու մոտեցումներ ներմուծում՝ փաստ է: Բայց միեւնույն ժամանակ, մատերիալիստական պատմագիտությունը՝ քրմապետի հնագույն հավատամքը չհասկանալով, էպոսը պարզամիտ պատում-հեքիաթ է համարում: Սա նորօրյա կրոնի՝ մատերիալիզմի դոգմատիկ մերժողականության մոտեցումն է: Իմիջիայլոց, միջնադարում «քրիստոնեա բոլշեւիկները»՝ եկեղեցու դոգմատիկ հայրերը, նույն մոտեցումն ունեին: Նրանք կարողացան ոչ միայն ոչնչացնել իրենցից առաջ գոյություն ունեցող հավատամքն ու հազարամյակներով կուտակված գիտական միտքը՝ մարդկությանը թաղելով 1000-ամյա խավարի մեջ, այլ նաեւ հաջողեցին անդամահատել բուն քրիստոնեական էության հոգեւորն ու գիտականությունը՝ խորհրդաբանական թաքնագիտությունը ու թողնել միայն նրա կաղապարային պատում-հեքիաթը՝ Աստծո գաղափարը օգտագործելով որպես սարսափի ու հնազանդության միջոց:

Մարդկության զարգացման ընթացքը՝ պարզագույն ուղղագծի բանաձեւով պրոգրեսիվ ընթացք չէ, այլ նման է սինուսոիդի վեր ու վար անող գալարին, որ ներկայացնում է՝ մարդկության գիտական մտքի անկումը եւ ապա... նոր վերազարթոնքը: Երկրագնդի գնդաձեւության, պտույտի ու նրա ճշգրիտ ժամային բաժանումների մասին գիտեին Գալիլեից ու Կոպեռնիկոսից դարեր առաջ, սակայն մարդկությունը մոռանալով ու անկում ապրելով, իր իսկ իմացածը նորից հայտնագործեց 16-20-րդ դարերում:

Հնագույն էպոսներն ու այսպես կոչված՝ «հավատամքային առասպելները», ժողովրդական բանահյուսության արդյունք չեն: Եւ որեւէ հնագույն էպոսի հիմքում, «հեքիաթի տակ», պետք է տեսնել նրա խորհրդաբանական իմաստները եւ հասկանալ այդ հոգեւոր ուղերձների նպատակն ու այդ ժամանակի «գիտականությունը»:

Որեւէ լավ գրող կամ լավ դասախոս գիտե, որ տեսության վրա «սարքված» վիպականացված պատմությունն ավելի լավ է ընկալվում ուսանողի կողմից, քան ուղղակի տրվող տեսական ինֆորմացիան *(ասենք՝ էներգիայի* $E=mc^2$ *կամ բենզինի* C_6H_6 *«ֆորմուլաների էությունը»):* Որովհետեւ, մասնիկների փոխհարաբերությունների, ամբողջի հետ կապի ու միասնության եզրերի մասին տեսության բազմակողմանի ներկայացումը լավագույնս հնարավոր է՝ գեղարվեստական պատում-օրինակի տարբերակով:

Եգիպտական Օզիրիս-Իզիս «հեքիաթային պատումի»՝ հավատամքի հիմքում, քրմերը «նաեւ տեսնում» էին աստղերի տեղադրություն, երկնակամարի ժամային բաժանումներ ու աստղերի տեղաշարժեր: Հասարակ ժողովրդի, կամ աշակերտի հասկացողության համար, կամ հետագա սերունդներին փոխանցելու համար կար «ֆոլկլորային» պատումի լեզուն, որն ավելի խոսուն է, գունեղ, ընկալելի, քան որեւէ մաթեմատիկական բանաձեւ:

Հնագույն հավատամքի «հեքիաթային սյուժետներն ու կերպարանվորումները» քրմերի կոդավորված գիտական լեզուն էր:

«Մեր միտքը կորցրել է իր սրությունը, մենք դժվար ենք հասկանում հներին»,- ասում էր Գրեգորի դե Թուրսը դեռեւս մ.թ. 6-րդ դարում:

«Սասնա Ծռեր» էպոսի մասին Հովհ.Թումանյանը զգուշացնում էր. ***«...այդ առասպելական (դիցաբանական, միթոսական) պատմությունն է, որ կազմում է ամեն ազգի գրական պատմության նախադուռը: Նրա ստեղծագործության մեջ գործ չունեն <u>քմահաճույքն ու ֆանտազիան</u>: Առասպելը անխուսափելի, տեսողական երեւույթ է, բացատրելի պերսպեկտիվայի օրենքներով, որին ենթարկվում է տարածության նման եւ ժամանակը»*[1]***:

Ցավոք, «Սասնա էպոսի» եւ հայկական առասպելների հետ կապված մեր երկու մեծերի՝ ***Հ. Թումանյանի եւ Հ. Օրբելու*** մոտեցումներն ու զգուշացումները մնացին՝ ձայն բարբարո հանապատի: Եւ ժամանակին, հայկական հնագույն էպոսի հավաքագրված 69 պատումներից «սարքվեց» բոլորիս հայտնի «հողեղեն» մեկ տարբերակ, լուսանցքից դուրս դնելով հնագույն հավատամքին հատուկ տիեզերական, խորհրդաբանական՝ «հեքիաթային» մոտիվները, եւ հայկական հնագույն հավատամքային կարգակառույցը՝ «Սասնա Տուն» էպոսը, ներկայացվեց հասարակությանը՝ ուսումնական ծրագրերում, դպրոցներում, որպես... միջնադարյան ժողովրդական բանահյուսություն՝ «Սասունցի Դավիթ» վերնագրով:

II

Ակնհայտ է, որ «Սասնա Ծռեր» էպոսի հերոսները վաղնջական ժամանակներում «հանդես են եկել» որպես աստվածներ: Ծովինարը՝ տիեզերական նախաջրերի աստվածություն, երկվորյակներ Սանասար եւ Բաղդասարը՝ ջրածին-հրածին էակներ, որ պայքարում են երկնային ու անդրաշխարհի վիշապների հետ: Քեռի Թորոսը նույնանում է հողմափոթորկի աստվածությանը, որն իր վեցոտանի նժույգով, մեկ օրվա մեջ հարյուրավոր կիլո-

*1,- Հ. Թումանյան, «Ուսումնասիրություններ եւ հրապարակումներ», հ. III, 1983թ., Երեւան, էջ 301:

մետրեր անցնելով հայտնվում է Վան, Արզրում, Կարս քաղաքներում: Իսկ Ջենով Օհանը, Յռան Վերգոն, ըստ ակադեմիկոս Հ. Օրբելու, ամպրոպի եւ անձրեւի աստվածություններ են*1: Նույնիսկ «թշնամին»՝ Մսրա Մելիքը, նույնպե՛ս հանդես է գալիս որպես աստվածություն: Այս աստվածությունն աղերսվում է լուսնային տարվա՝ 360 օրվա հետ. Մելիքի գուրզը երեք հարյուր վաթսուն լիտր է կշռում*2: Դավթի *(հնագույն անունը քրիստոնեացված՝ փոխված է)* հետ նրանք եղբայրներ են՝ հոր կողմից: Քառսուն Ճյուղ Դեղձուն Ծամը, Մեծ Մհերը աղերսվում են արեւի աստվածության հետ: Հրեղեն ձին՝ Քուռկիկ Ջալալին *(անունն աղավաղված է),* որ ծառայում է սասնա չորս սերընդի հերոսներին, ժամանակ եւ տարածություն չի ճանաչում: Հերոսների աներեւույթ հայրը՝ գերագույն աստվածությունը *(էպոսում՝ անանուն),* իր երկնային «Խաչ-Պատրազի» նշանով կնքում է Սանասարի ու նրա սերունդների աջ բազուկը, եւ մշտապես հետեւում, պահպանում է նրանց վտանգներից: Հետաքրքրական է, որ Ծովինարը, Ջենով Օհանը, Քեռի Թորոսը, Դեղձուն Ծամը, ինչպես նաեւ Քուռկիկ Ջալալին կենտրոնական չորս սերնդի հերոսների հերթափոխության ընթացքում մշտապես առկա են որպես օգնական կամ խորհրդատու: Փաստորեն նրանք անմահ են՝ ինչպես Փոքր Մհերը:

Հայկական էպոսում, նոր ծնված երեխային թոնրի վրա կնքելը, հոգին տվող, մեռնող ազգականի գլուխը ծնկան վրա պահելը, վիրու ոչխարը «զեննելն» ու արյունը սալաքարին փորված քառասուն ճյուղերով հոսեցնելը եւ այլն, հնագույն հեթանոսական հավատամքին հատուկ ծիսակատարություններ են:

Ուրեմն, ***«երբ խոսվում է ժողովրդական էպոսի մասին, բանականորեն պետք է որոնել այն միջուկը, որի շուրջ հյուսված է տվյալ էպոսը, եւ այն ձեւն ու նշանակությունը, որ նա ստացել է իր զարգացման ընթացքում»*3:***

«Սասունցի Դավիթ» էպոսում առկա է հին հայերի կոսմիկական հնադարյան առասպելները, որոնք ստեղծվել են Հայաստանի նախապատմական կյանքի հազարամյակների ընթացքում, եւ ականատեսների ու նրանց հետնորդների հիշողության մեջ դրոշմված պատմական իրադարձությունները միաձուլվել, մի միասնական ամբողջություն են կազմել, երանգավորված պատմականության արտաքին երեւույթով»*4:

«Սասնա Տուն» հայկական հնագույն էպոսի մասին միջնադարյան հայ պատմիչներն ակնարկներ արել են, խուսանավելով ժամանակի քրիստոնեական եկեղեցու դոգմատիկ հայրերի հետապնդումները: Բացահայտ

---

*1, *2 - Հովսեփ Օրբելի, «Հայկական հերոսական էպոսը», Երեւան, 1956թ., էջ 79-96:
* 3, *4, - Նույն աղբյուր, էջ 71-79:

երեւում է պատմահայր Մովսես Խորենացու վախն ու զգուշավորությունն իր ժամանակի «քրիստոնեա յահվեականներից», երբ հնագույն «առասպելը» պատմելուց առաջ օգտագործում է՝ «անհեթեթ», «անճոռնի» ածականները, եւ այնուամենայնիվ, սիրով պատմում է: Կամ Վահագնի մասին, որ նա Աստված է եղել եւ պաշտվել է իր իսկ սեփական, հայկական մեհյանում, Խորենացուն լավ հայտնի պիտի լիներ, թեկուզ Ագաթանգեղոսի մատյանից, սակայն Վահագնին մարդացնելով, Հայաստանում նրա պաշտամունքի մասին ոչինչ չի հայտնում, փոխարենը ասում է, որ Վահագնին աստվածացրել են Վրաց աշխարհում եւ արձան են կանգնեցրել ու զոհերով պատվել*[1]: Խորենացու վախի եւ զգուշավորության հանգամանքը, ինչպես նաեւ ներքին ցավով ընդվզումը բացահայտ է՝ ***«...Մանավանդ, որ սուրբ գիրքը յուրայիններին զատելով իբրեւ իր սեփական ազգ՝ մյուսներին լքեց, իբրեւ արհամարհելի եւ իր կողմից նշանակվելու անարժան»*** *[2]:

Ըստ իս, պատմահայր Խորենացին հայկական «Սասնա» էպոսի մասին ուղղակի ասել չէր կարող, որովհետեւ այն հնագույն հեթանոսական կրոնի սուրբ գիրքն էր՝ ավետարանը, կանոնավորված հավատամքային կառույցը: Բայց մենք պատմահայրը, կարծում եմ, հիշատակելով եւ մասամբ պատմելով հայկական բազմաթիվ առասպելներ, փաստորեն միեւնույն ***կառույց-հավատամքի*** տարբեր դրվագներն է ներկայացրել *(եւ միշտ երրորդ դեմքով՝ պատմում են, ասում են եւ այլն, զգուշավորություն բանեցնելով է խոսում):*

Հայկական էպոսի ***«...այն մասերի վերաբերյալ,-*** գրում է ակադեմիկոս Հ. Օրբելին դեռեւս 1956 թվականին, ***- որոնք զուտ առասպելական բնույթ են կրում, հին հեղինակների մոտ կան որոշ ակնարկներ: Դրանց թվում պետք է հիշատակել Մովսես Խորենացու անունը, որը խնամքով պահպանել է Հայաստանի հնագույն կոսմիկական էպոսի բազմաթիվ հատվածներ եւ սիրով հաղորդում է...»*** *[3]:

Պետք է արժանին մատուցել Հ. Օրբելուն, որ 1-ին՝ «Սասնա Ծռերը» ներկայացնում է որպես կոսմիկական էպոս, եւ 2-րդ՝ որ հայկական հնագույն առասպելները համարում է ***էպոսի*** հատվածներ:

Փաստորեն, մի շարք հեղինակների համակարծիքությունը, որ հայկական շատ ու շատ ավանդապատումներ, առասպելներ, ինչպես նաեւ տեղանունների հետ կապված զրույցներ, հայկական էպոսի հետ մաս են կազմում կամ ուղղակի աղերսվում են էպոսի հետ, նորություն չէ, սակայն, հայկական էպոսը՝ որպես հին հայերի հեթանոս հավատամք, որպես կոսմիկական, կրոնամիս-

---

*1,- Մ. Խորենացի, «Պատմություն», Երեւան, 1981թ., էջ 103, նաեւ տես՝ էջ 475, ծանոթ. # 93:
*2,- Մովսես Խորենացի, «Պատմություն», էջ 21:
*3,- Հովսեփ Օրբելի, «Հայկական հերոսական էպոսը», Երեւան, 1956թ., էջ 69:

տիկ ամբողջական կարգակառույց, երբեք չի դիտարկվել, եւ այն վերականգնելու լուրջ փորձ դեռեւս չի արվել:

«Սասնա Տուն» էպոսը եզակի է: Այն ազգային եզակի ներաշխարհ է ու եզակի պատուհան-հայացք է դեպի տիեզերք:

Այս հնագույն էպոսն իր իսկ ժողովրդի «Գիրք Ծննդոցն» է ու գենետիկ հավատամքն է: Եվ նրա տարիքը պայմանավորված է այդ էպոսը ծնող ժողովրդի տարիքով:

Հայկական էպոսն ուսումնասիրել, կնշանակե նրա հիմքում ընկած հնագույն հավատամքի աշխարհճանաչողության ներքին էության մեջ խորանալ եւ փորձել վերականգնել այդ հնագույն հավատամք-կառույցի ընդհանրական պատկերը ու փորձել իմանալ նրա ներքին նպատակայնությունը՝ ուղերձը:

Ինչպես հայերեն լեզուն է պատկանում հնդեւրոպական մայր լեզվընտանիքին եւ, այն ուսումնասիրելիս անհրաժեշտ է ցեղակից այլ լեզուների հետ զուգահեռ նմանությունների եւ փոխկապվածությունների վերլուծությունը, այնպես էլ հայկական «Սասնա Տուն» էպոսը պետք է ուսումնասիրել ընդհանուր հնդեւրոպական եւ հնագույն հավատամքային կարգակառույցներին ու պատումներին զուգահեռ:

Ինչպես նախահնդեւրոպական մայր լեզուն է ունեցել իր ծննդոցը , այնպես էլ հնդեւրոպացի մայր ժողովրդի հնագույն կրոնը՝ «հավատամքային մայր պատում-կարգակառույցն» է ունեցել իր նախահայրենիքը եւ, անշուշտ, այս երկուսը «կանխագծում» են նույն տեղանքը:

Ի հակադրություն այն հին ու թյուր տեսակետի, թե մայր լեզվնտանիքի նախահայրենիքը Սեւ ծովի ափերին կամ ուկրաինական կուրգաններում է եղել, Վ. Իվանովը, Թ. Գամկրելիձեն, Մ. Ռուհլենը, Լեհման Հաուպտը եւ այլոք, լեզվաբանական վերլուծությունների հիմքով փաստում են, որ ***«հնդեւրոպական մայր լեզվընտանիքի»*** նախահայրենիքը Հայկական լեռնաշխարհն է *(իսկ այսօր, արդեն, գենի՝ DNT-ի անալիզներն են ցուցում սույն փաստը)*[*1]:*

Այս աշխատությունը բաղկացած է երկու բաժնից: Առաջին՝ ***«Հնագույն Հավատամքի Թաքնագիտական իմաստները»*** մասում ներկայացված է հավատամքային պատումների ընդհանրությունները, թվաբանական, երկրաչափական, աստղագիտական համակարգերը եւ հին ժամանակների հավատամքային աշխարհճանաչողությունը: Երկրորդ՝ **«*Սասնա Տուն* հավատամք էպոսը»** մասում, ներկայացված է հայկական էպոսի քողարկված, թաքնագիտական իմաստների վերլուծությունը:

---

*1, - Merritt Ruhlen, “The Origin Of Languages”, Canada, 1994.

ՀԵՂԱԳՈՒՅՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԱՔԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԻՄԱՍՏԵՐԸ

ՄԱՍ - I

ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ



Դիցաբանական երկվորյակների հետ կապված վաղնջական կոսմիկական առասպելները, հնագույն ժողովուրդների աշխարհճանաչողական հավատամքկառույցներում, ժամանակագրական առումով նախնական են:

«***Աստվածային երկվորյակների մասին միֆական պատումը, որտեղ երկվորյակները գերագույն աստծո կամ արեւի աստծո որդիներն են, խորանում է մինչեւ նախահնդեւրոպական հնագույն ժամանակներ: Այս միֆական պատումը հայտնաբերվել է համարյա բոլոր հնդեւրոպական հնագույն հիմնական տրադիցիաներում, որտեղ ոչ միայն կրկնվում են միեւնույն մոտիվները, այլ նաեւ առկա է հերոսների անունների համատեղությունը, որը եւ հաստատում է այդ մոտիվների եւ պերսոնաժների բնույթը որպես՝ նախահնդեւրոպական»*** [1]:

Երկվորյակների մասին միֆական պատումների նախահնդեւրոպական ժամանակներին պատկանելը, ոչ միայն վերոհիշյալ հեղինակների մոտեցումն է, այլ, այսօր, փաստված եւ համընդհանուր ընդունված է գիտական աշխարհում: «Սասնա Ծռեր» էպոսն իր կառուցվածքով, հերոս-աստվածների կատարած ֆունկցիաներով եւ պատումային պերսոնաժներով ու մոտիվներով, պատկանում է համընդհանուր հնդեւրոպական հավատամքապատումային ընտանիքին, եւ նրա «ծննդյան տարիքը» խորանում է մինչեւ նախահնդեւրոպական ժամանակներ:

Թ. Գամկրելիձեի եւ Վ. Իվանովի վերոհիշյալ եզրակացությանն ավելացնենք նաեւ, որ շումերական, հիթթիթական եւ հուրրիական, ինչպես նաեւ եգիպտական միֆական պատումները *(հավատամքային կառույցները)* այուժետային մտածողությամբ ու բացառիկ նմանությամբ, անունների կրկնությամբ եւ աստվածներին «դերաբաժանված» կարգավիճակով *(առաջնայինից դեպի երկրորդային՝ ըստ նրանց ֆունկցիաների կարեւորության),* նույնանում են հնդեւրոպական միֆական պատումների հետ, որը եւ խոսում է դրանց՝ ***հնդեւրոպական ընտանիքի պատկանելիության*** [2] եւ բնույթի մասին:

Այսուամենով, հնդեւրոպական միթոսական պատումներն ունեցել են մեկ մայր՝ մեկ նախահիմք-պատում, որը ***նախա***հնդեւրոպական է, այսինքն՝ ձեւավորվել եւ պատրաստի հավատամքային կառույց է եղել մինչեւ հնդեւրոպական նախալեզվի տրոհումը՝ մինչեւ հնդեւրոպական *(արիական)* ցեղերի մեծ միգրա-

---

*1,- T. Gamkrelidze, V. Ivanov, “The Indo-European And The Indo-Europeans”, Berlin, New York, 1995, p. 680:

*2,- L.A. Waddell, «The Makers Of Civilization In Race & History», 1929, London:

*2, - L.A.Waddel, “Sumer-Ayran Dictionary”, 1927, London; “Indo-Sumerian Seals Desipherd”, London, 1925. Տես՝ *եգիպտական, շումերական, հիթթիթական, հուրրիական աստվածների հնդեւրոպական անունները* բաժինը:

ցիաների ժամանակները: Անշուշտ, այդ ***նախահիմք-միֆը՝ «վիպական կը-ռոնը»,*** չէր կարող ձեւավորվել Եւրոպայից մինչեւ Հնդկաստան ահռելի տարածքներում. այն պետք է ունենար իր հայրենիքը՝ ծննդավայրը: Տրամաբանությունը նաեւ ասում է, որ վերականգնել «մայր պատումը»՝ կնշանակե որոշել նրա ծննդավայրի սահմանները:

Որպես հնդեւրոպական «նախահիմք-միֆ» *(“Основной миф”)*[*1] սրանից հետո կօգտագործենք «մայր պատում» ձեւակերպումը)* Վ. Իվանովը եւ Վ. Տոպորովը վերականգնել են մի կառույց, ըստ որի, Ամպրոպի աստվածը՝ [*per (K^{w})uno-] ոչնչացնում է իր թշնամուն՝ վիշապին [*wel-]: Վիշապին նախապատվելով, ամպրոպի աստծո կինը դավաճանում է ամուսնուն, իսկ նրա որդին պատժվում-մեռնում է իր սխալի համար, բայց հետո, նորից հառնելով, իր հետ բերում է նոր կյանք, նոր համակարգ եւ այլն[*2]: Մ. Խորենացու «Հայոց Պատմության» մեջ էլ կա նույն պատումի մի այլ տարբերակը. ***«...սա մեկ եւ միակն է հայկազուններից, որ Աժդահակին սպանեց եւ գների տարավ նրա տունը եւ Անույշին, վիշապների մորը...»***[* 3]***:***

Հնդեւրոպական հնագույն հավատամքային միֆական պատումները՝ վիշապների ու ամպրոպի աստծո հետ կապված «միֆը», որի շարունակությունը՝ մեռնող ու հառնող աստվածության մասին է, իրենց հիմքում միեւնույն կոնցեպտն ունեն եւ ներկայացնում են միեւնույն հավատամքային աշխարհճանաչողությունը: Դրանք բոլորը ունեն էզոտերիկ, մետաֆիզիկական իմաստներ ու նպատակայնություն՝ ասելիք, այնպես ինչպես՝ եգիպտական՝ Օզիրիս-Իզիս, շումերաբաբելական՝ Ինանա-Դումուզի տարբերակները, համանման՝ հունական, կելտա-գերմանական, հնդիրանական, հայկական Արա Գեղեցիկ եւ Շամիրամ *(հարալեզները, լիզելով Արայի վերքերը, պիտի հարություն տային հերոս-աստծուն)*[*4]*, եւ այլն, տարբերակներին: Հավատամքի հետ աղերսվող հնագույն բոլոր պատումները՝ ներառյալ հին եգիպտականն ու շումերաբաբաբելականը, նախահնդեւրոպական «մայր պատումից էմիգրացված տարբերակներ» են, քանզի հավատամքային այդ կարգակառույց-պատումների սրբազան անունները հնդեւրոպական ծագում ունեն եւ ներկայացնում են աշխարհճանաչողական միեւնույն սխեմատիկ մատրիցան եւ միեւնույն մատեմատիկական, աստղագիտական համակարգն ու սիմվոլները:

Նախեւ առաջ, պետք է ընդունել, որ հնդեւրոպական ցեղամիավորումները մեծ միգրացիաների ժամանակ, նոր տերիտորիաներ յուրացնելու եւ տեղաբնիկ ժողովուրդներին ենթարկելու, իրենց լեզվի բառամթերքը, ինչպես նաեւ գոյատեւ-

---

*1, *2, - В. Иваов, В. Топоров, “Основной миф”, Москва, 1974.

*3, *4, - «Մովսես Խորենացի, «Պատմություն Հայոց», Երեւան, 1981թ., էջ 103, էջ 63:

ման կենսափորձը *(երկրագործություն, ձիաբուծություն, մետաղագործություն եւ այլն)* փոխանցելու համար, ոչ միայն զենքով ու զարգացածության, կուլտուրայի աստիճանով պետք է անհամեմատ ավելի բարձր լիներ նոր տերիտորիաների տեղաբնիկներից, այլ նաեւ անհրաժեշտ էր, որ նրանց հավատամքային կառույցը՝ «մայր պատումը», լիներ այնքան կուռ, մշակված ու «տեսողական պերսպեկտիվայով հիմանվորված» *(երկնակամար, աստղաբաշխություն),* որ ազդեցության ուժ ունենալով, օգներ ենթարկել տեղաբնիկներին: Կամ, այդ հավատամքը *(«մայր պատումը»)* այնքան «զորություն» պիտի ունենար, այսինքն, այն պետք է լիներ նաեւ կենսաձեւ, որ ***նախահնդեւրոպացու*** հայրենիքից հեռանալուց եւ հազարամյակներ անցնելուց հետո էլ մնար նրա հիշողության մեջ: Վ. Տոպորեւի եւ Վ. Իվանովի նախահնդեւրոպական հավատամքային կառույցին՝ **«մայր միֆ»՝ առասպել»** անվանելը, ըստ իս, անհարիր է: «Հնքիաթը»՝ որպես այդպիսին, չէր կարող գոյատեւել հազարամյակներ: Միմիայն ***հավատամքային կառույցն*** է, որ իրենում առկա «հոգեւոր ասպեկտի» շնորհիվ կարող է տարածվել եւ հազարամյակներ գոյատեւել: Ուրեմն, փորձել հասկանալ կամ վերականգնել «մայր պատումը», նշանակում է, որ խնդրո առարկան՝ հնագույն, ***նախահեթանոսական*** ժամանակների հավատամքն է:

Նախահնդեւրոպական ժամանակների հավատամքային «մայր պատումը» վերականգնելու համար անհրաժեշտ է հասկանալ պատումների խորհրդապաշտական իմաստները, արտաքին վիպական կեղեւաշերտերից խորանալ դեպի ներքին իմաստների ոլորտները: Հնում, *հավատամք-կառույցներն* ունեցել են ***«ներքին»***՝ խորհրդաբանական-փիլիսոփայական, եւ ***«արտաքին»***՝ վիպական ներկայացումներ[*1]: Առաջինը՝ քրմական գլխավոր տաճարների, բարձրաստիճան քրմական կաստայի սեփականությունն էր՝ բացառիկ գաղտնիության սկզբունքով: Երկրորդը՝ այդ նույն խորհրդաբանական կառույցի վիպական ներկայացումն էր՝ ժողովրդի համար, մասսաներին սաստելու, կառավարելու, էլեմենտար բարոյականություն սերմանելու, հավատքի հիմքով՝ օրենք ու կարգուկանոն հաստատելու համար: Նաեւ, հնում, հոգեւոր այրերի ***գիտական լեզուն***՝ վիպական սյուժեով արտահայտված լեզու է, որը լավագույնս է բացատրում որեւէ կարգակառույց կամ տեսություն: Վիշապի, առյուծի, ձիու, շան, ամպրոպի, թռչունի եւ այլ սիմվոլները՝ թե՛ եգիպտական, թե՛ բաբելական, թե՛ հնդիրանական տաճարներում «գործածվում» էին որպես արտահայտման ձեւ[*2], եւ ոչ թե ընկալվում էին ուղղակի: Այսօր, բազմաթիվ գիտնականներ, ուսումնա-

*1- G.W.F. Hegel “Lectures On The History Of Philosophy”, London, 1995, v. I, Introduction, p.83.
*2- Timothy Freke & Piter Gandy “Jesus And The Lost Goddess”, N.Y., 2001.

սիրողներ կարծում են, թե հին ժամանակների մտածող մարդը եղել է պրիմիտիվ. հեքիաթներ է հյուսել ու հավատացել է իր իսկ հյուսած հեքիաթներին: Պետք չէ հիմարության աստիճան միամիտ լինել ու կարծել, թե 5-7 հազար տարի առաջ Քեոփսի բուրգը նախագծողը՝ հնագույն ժամանակների*1 այդ անօրինակ հանճարը՝ քրմապետը, այնքան հիմար է եղել, որ նրա պատկերացրած տիեզերաբանության մեջ, վիշապն ու ամպրոպի աստվածն իրար հետ «կռիվ-կռիվ» են խաղացել, որից տիեզերք ու մարդկություն է առաջացել*2:

Ուրեմն, «մայր պատումը» վերականգնելու, հասկանալու եւ նրա «ծնընդավայրի» սահմանները որոշել-գտնելու համար, անհրաժեշտ է՝ հնագույն հավատամքային կառույցների արտաքին վիպական կեղեւն ընդունել որպես սիմվոլիկ պատումային արտահայտչամիջոց եւ խորանալ դրանց ներքին խորհրդապաշտական իմաստների մեկնությունների մեջ: Առաջ անցնելով ասենք, որ նման փորձեր արդեն արվել են՝ Ջ. Բոհեմ, Յ. Յակոբսոն, Մ. Մյուլեր, Հ. Բլավատսկի եւ այլն, սակայն միայն՝ հնագույն էզոտերիկան որոշակիորեն ներկայացնելու նպատակայնությամբ:

«Սասնա Ծռեր» հայկական էպոսն իր կառույցով, հերոսների ֆունկցիոնալ դերակատարությամբ, կոսմիկական բնույթով եւ այլն, պատկանում է հնագույն հնդեւրոպական հոգեւոր պատումների շարքին եւ, ուրեմն, այն պետք է դիտարկել այդ պատումների հետ զուգահեռ վերլուծումներով, եւ ամենակարեւորը՝ այդ հնագույն հավատամքի ***«թաքնագիտական-խորհրդապաշտության լույսի ներքո»:***

---

*1,- Ըստ նորագույն հետազոտությունների (ակադեմիական եգիպտոլոգների) մեծ բուրգը 7500 տարեկան է, ըստ Անտոնի Վեստի, Ռ. Բովալի եւ այլոց՝ 12,500 տարեկան: Hancock & Bauval, “The Message of the Sphinx”, USA, 1996:

*2, - Բերենք միայն մեկ օրինակ. ժամանակակից աստղագիտությունը Հ. Կեպլերին /մ.թ. 1571-1630թթ./ համարում է մոլորակների ուղեծրի, արեւի նկատմամբ էլիպսաձեւ շարժման, տարածության ու ժամանակային բաժանումների երեք հիմնական օրենքների հայտնագործողը: Սակայն Կեպլերն իր “Harmony of the World”, գիրք V-ում գրում է, որ ինքը ոչ թե հայտնագործել է այդ օրենքները, այլ, հասկանալով վերականգնել է եգիպտական միֆոլոգիայի մեկ հատվածը, որտեղ վիպական պատումի միջոցով պարզ ներկայացվում է մոլորակային երեք հիմնական օրենքները: Կեպլերը միայն վերահառնել է հնագույն գիտական հայտնությունները:

“ Now eighteen months after the first light, three month s after the true day, but a very few days after the pure Sun of that most wonderfull study began to shine, nothing restrains me; it is my pleasure to yield to the inspierd frenzy, it is my pleasure to taunt mortal men with the candid acknowledgment that I am stealing the golden vessels of the Egyptians to build a tabernacle to my God from them, far, far away from the boundaries of Egypt ”.

(”Egyptian Cosmology”, second edition, Moustafa Gadalla, USA, 2001, p. 135):

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀՆԱԳՈՒՅՆ ՊԱՏՈՒՄՆԵՐՈՒՄ «ԱՐԱՐՉՈՒԹՅԱՆ ՍԿԶԲԻ» ՄԱՍԻՆ ԻՄՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԱԲԱՆԱԿԱՆ ՍԻՄՎՈԼՆԵՐԻ ԷԱԿԱՆ ՆՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



Տիեզերական նախաձուն՝
որպես հնագույն սիմվոլ:
The Orphic Egg

"The Serpent Lord Enthroned." From Campbell (1964, p. 11).

Միջագետքյան ԷԱ-ն, ետեւում նրա սիմվոլը՝
երկու պարուրաձեւ օձերը:

Վիշապ-օձի խորհրդապաշտությունը:

Համարյա բոլոր հնդեւրոպական հավատամքային հնագույն պատումները սկսվում են հերոս-աստծո *(հիմնականում՝ փոթորիկ-ամպրոպ աստծո)* կողմից վիշապի կամ վիշապների «սպանության» մոտիվներով: Վիշապ-օձը, փաստորեն, էական կարեւորություն ունի բոլոր պատումներում, եւ նրա «սպանվելուց» հետո, «տիեզերքը» լցվում է քաղցրահամ ջրերով ու սկսվում է կյանքը: Պատումներում կամ ավանդազրույց-առասպելներում վիշապը կամ ջրերի հիմքն է փակել կամ հենց ինքն է ջրերի հարուցիչը:



«Վիշապ զինք թափ էտու,
Ակ բերնեն թռավ, գնաց մեջ դաշտին:
Վիշապ զինք թափ էտու, ջուր էլից քաղաք.
Ինչպես անձրեւ գա, էնպես զքաղաք է թաց.-
Ծով կատղավ, վիշապ քամի քաղաք եղավ»[*1]:

Հայկական «Սասնա» էպոսում երկվորյակ եղբայրները երեք տարբեր վիշապների են հաղթում կամ սպանում, որի հետեւանքը՝ ջրերի հորդումն ու կյանքի վերազարթոնքն է: Հայկական ավանդապատումներից մեկում, Տավրոսը վիշապ Զագրոշին պոզահարելով սպանում է, եւ եղջրավոր վիշապի որովայնից քաղցրահամ ջուր է բխում, որ Զաբ գետն է՝ անուշ, անմահական ջուր է *(Տավրոսը եւ Զագրոշը լեռներ են: Զագրոշը գտնվում է Վանա լճից հարավ արեւելք)*[*2]:

Շումերաբաբելական «Երբ վերեւում» արարչության մասին պատումում Աբզուի սպանությունը տեղի է ունենում Տիգրիս եւ Եփրատ գետերի ակունքներում եւ այս կենսատու գետերը նրա աչքերից են սկիզբ առնում[*3]:

Ըստ հնագույն միֆական պատումների, վիշապը որպես սիմվոլ՝ գոյության նախահիմքն է՝ նախագոյությունը, որից առաջանում է «Կյանքի Ծառը»: Վիշապը, որպես տիեզերական նախահիմք, հավատամքային հնագույն պատումներում իր նկատմամբ ունի նաեւ «դրական վերաբերմունք»: Օրինակ Ռիգ-Վեդայում.

abjā́m uktháir áhiṃ gṛṇīṣe
budhné nadī́nāṃ rájassu ṣī́dan
mā́ no áhir budhnyò riṣé dhān
mā́ yajñó asya sridhad ṛtāyóḥ

(Ռ. Վ. 7. 34, 16-17)[*4]:

«Ես երգերով եմ գովերգում ջրածին այն վիշապին (*օձին*),
Որ նստած է խավարում, խորքերում մութ գետերի:
Գուցե վիշապն ընդերքի մեզ վնասներ չբերի,

---

*1,- «Սասունցի Դավիթ», Երեւան, 1989թ., էջ 140:
*2,- Ա.Դանալանյան, «Ավանդապատում», Երեւան, 1969թ., էջ 23:
*3,- Stepanie Dalley, “Mythts From Mesopotamia”, Oxford, 2000, p. 233-274.
*4,- C. Watkins, “How To Kill A Dragon”, Oxford University Press, 1995, p. 460.

Վեդայական Վիշնու աստվածությունը հազարագլուխ վիշապի վրա

Թե երկրպագումը երգչի, որ ճշմարտությունն է փնտրում, (*Իր երգերի գովերգում, մեծ*) սխալներ թույլ չտա:

[Շեղագրով ավելացումները՝ թարգմանության մեջ իմաստների պահպանման հետ է կապված]:

Վիշապը հնագույն պատումներում, որպես տիեզերքի պրոտոտիպ (Áhi Budhnyá-)[*1], տարբեր լեզուներում հանդես է գալիս տարբեր անուններով:

Սանսկրիտ.՝ Áhi-Budhnyá- «ընդերքի վիշապ»-ի անվան առաջին Áhi բառը՝ Ավեստա՝ aži- «վիշապ», հունարեն՝ óphis «օձ», «վիշապ», լիտվ.՝ anguis, հին պրուս.՝ angis, հին ռուսերեն՝ uz «օձ», լատիներեն՝ anguis «օձ, վիշապ» եւ հայերեն՝ iž «իժ, օձ, վիշապ» իմաստով, բխում է նախահնդեւրոպ. *og^{u}his ձեվից[*2]: Վեդայական Budhnyá «հիմք» բառի իմաստը՝ լատիներեն՝ «funds», գերմաներեն՝ «boden», հին անգլերեն՝ «botm» ձեվերն են, բոլորն էլ ի վերջո աղերսվում են «հիմք, խորք, անդունդ» իմաստներին[*3]:

Իրանական **Aži Dah**āka-ն, որ հայկական առասպելում՝ Աժդահակն է,- *(Խորենացի, «Հայոց պատմություն»)*, նույնպես ընդերքի օձ իմաստն ունի: Հինդ-իրանական տարբերակում, ընդգծվում է վիշապ Aži Dahāka-ի սպանվելը հերոս Thraētaona-ի կողմից *(իրանական, Ավեստա)* եւ հրեշ Vis'ivarūpa-ի սպանվելը Trita Āptya-ի կողմից *(հնդկական, վեդայական)*: Սա նույն պատմության երկու տարբեր պատումներն են. երկու պատումներում էլ *վիշապ-հրեշն* ունի երեք գլուխ եւ վեց աչք: Սակայն, (a**Ž-**)-ը որպես բայ՝ նաեւ նշանակում է «քշել, օր.՝ վարել մեքենա», իսկ vis'ivarūpa-բառացի իմաստն է՝ «բազում ֆորմաներ ունենալ»[*4]: Ուրեմն, բառի տարբեր կողմերից ստուգաբանությունն ընդգծում է, որ այս «վիշապը» շարժման մեջ ստեղծում է ֆորմաներ:

Դեռեւս 1974 թվականին, Վ. Իվանովը եւ Վ. Տոպորովը ցույց են տվել, որ *bhudh-n- եւ *dhubh-n- վեդայական երկու բառերն էլ իրենց հիմքում սեմանտիկ նույնություն կամ նմանություն ունեն[*5]: Միֆական «վիշապ» անվան երկու բառերն էլ՝

Սարդուրի II-ի գուտը: Հայկական ութ վիշապներիի պատկերումը, 1 > 4 + 4 = 8 համակարգ: Ուրարտական շրջան:

*1- H. Oldenberg, Die Religion des Veda, Stuttgart, Magnus, 1917:70.
C. F. Oldenberg 1917:70, Hillebrandt 1929:2. 308-6. A. Hillebrandt, Vedische Mythologie, 2nd edition, v 2. Breslau, 1929:2.305-6.
*2 - T. Gamkrelidze & V. Ivanov, "The Indo-European And The Indo-Europeans", New York, 1995, p. 444.
*3, *4 - C. Watkins, "How to Kill a Dragon", Oxford, 2001, p. 461, 462, 465, 468.
*5 - В. Иваов, В. Топоров, "Основной миф", Москва, 1974:37-8.

«ընդերք, հիմք» իմաստների հետ են առնչվում: Վերեւում բերված բոլոր տարբերակները ենթադրում եւ բացատրում են ***«ընդերք»*** իմաստը՝ օժանդակ, կողմնակի ձեւերով: Հայերեն ***«վիշապ»*** (**viŠap**) բառը, որը ***առասպելական օձի*** իմաստ ունի եւ ներկա է հայկական հնագույն բազմաթիվ առասպելներում ու հեքիաթներում, իրականում, ներկայացնում է՝ հնդեւրոպական հավատամքային պատումներում առկա վիշապի ***«ընդերք»*** բացատրության ուղիղ իմաստը: ՎԻՇԱՊ բառը բնիկ հայ բառ է, որ նաեւ ըստ Հր. Աճառյանի աղերսվում է հայերեն ***«վեց՝ 6»*** թվանունի հետ *(իրանական եւ վեդայական վիշապն ունի 6 գլուխ եւ 6 աչք):* Սակայն, Հ. Աճառյանի մոտեցումը՝ այս բառի իմաստը կապել զենդ-իրանական թույն՝ viša-[*1] բառի եւ «սողուն-օձ» իմաստների հետ, սխալ է: ՎԻՇԱՊ-ը առասպելական բնույթ ունի, եւ հնագույն հավատամքային պատումներում *(«Ռիգ-Վեդա», «հայկական առասպելներ», «Սասնա Ծռեր», «Ավեստա», «հունական առասպելներ» եւ այլն),* ըստ էության, նախատիեզերական քաոսի՝ պրոտոտիպ տիեզերքի խորհրդապաշտական սիմվոլի անվանումն է[*2], որ աղերսվում է երկնային անդնդից ձեւավորվող տիեզերքի եւ երկնային աստվածությունների հետ:

ՎԻՇԱՊ բառի ստուգաբանությունը պետք է բխի նրա սիմվոլի՝ ***«անդունդ»*** բացատրության իմաստից: ՎԻՇԱՊ < ՎԻՀ + ՇԱՊ > ՎԻՀ-ԱՓ, ինչպես օրինակ, խորվիրապ > խոր+ՎԻՀ(ր)+ապ[*3],- նշանակում է վիհ՝ «անդունդ» եւ շապ+իկ՝ ***ափ> շապ > շապիկ > «պլազմա»,*** որ նաեւ արտահայտում է՝ վիհ՝ «անդունդ» եւ ***շապ***՝ «եզերք, սահման» իմաստները: Սա ուղղակի աղերսվում է **տի+եզերք**> դի (ք)+եզերք բառի *(հայերեն՝ տի > տիվ > դի(ք), սանսկրիտ.՝ divā, հունարեն՝ dios «երկինք, աստված» միեւնույն իմաստն է)* հետ, որտեղ հայերեն ***տի(տիւ)*** նախահնդ.՝ «diw»-ն է[*4]: Սանսկրիտում՝ Div´as «դրախտ», dyáuh «երկինք», հունարեն՝ Zeùs, Diwós «աստված», «երկինք», նույն իմաստներն են ներկայացնում[*5]: Տիեզերք = Աստծո եզերք: Վիշապ = վիհ- ափ:

---

*1, - Հր. Աճառյան, ՀԱԲ, h. IV, էջ 341:

*2, - C.Watkins, “How to Kill a Dragon”, Oxford, 2001, էջ 460-471:

*3, - Գրիգոր Լուսավորչի Խոր Վիրապում 13 տարի տառապելու պատմությունը՝ արարչության հետ կապված հնագույն թաքնագիտական սիմոլիզմ է՝ հարմարեցված Հայաստանում քրիստոնեություն տարածող անձի՝ «Լուսավորչի» հետ, եւ որեւէ աղերս չունի պատմական եղելության հետ: ***Անդունդ***-ը եւ ***վիշապը*** համարժեքներ են թաքնագիտության մեջ, եւ թիվ 13-ը՝ «վիշապի» թիվն է: Համանման պատումներ՝ անդունդի, անգոյության մեջ 13 տարի Գրիգորի հայտնվելը, որից հետո **Օտտա** անունով իշխանի դուրս ելնելու հրահանգը (Օտտա՝ հունարեն նշ. է՝ ***«ժամանակ»***), հայտնի են դեռ հին ժամանակներից, օր.՝ եգիպտական համակարգում: Վիշապի ընդերքում Աթումը 13, կամ 13000 տարի է գտնվում, իսկ 14-ում դուրս է ելնում: Օզիրիսի մարմինը Սեթը կտրատում է 14 մասերի, նրա կինը՝ Իզիսը գտնելով 13 մասերը փորձում է նրան հարություն տալ, նման Արա Գեղեցիկի հարությանը: Ի տարբերություն 1, 3 կամ 13 թվի՝ ***խավար, անդունդ*** թաքնագիտական իմաստով գործացությանը, հաջորդը՝ թիվ 14-ը կամ՝ 1-ը եւ 4-ը, խորհրդանշում են Լույսի խորհուրդը: Քրիստոնեական բութ մատի եւ մատնեմատի միացումով հայրապետական օրհնանքը, մ.թ.ա. առկա էր հնդ-արիական կամ բրահմայական հավատամքային կարգակառույցում եւ խորհրդանշում է՝ (14 = 1 > 4) ԼՈՒՅՍԻ խորհուրդը:

*4, - Հր. Աճառյան, «Հայոց լեզվի պատմություն», 1936թ., Երեւան, h. I, էջ 74:

*5, - T. Gamkrelidze & V. Ivanov, նույն աշխատութ., էջ 192: Մեր կարծիքով շումերաբաբելական *Ափսուն* եւ *Թիամատը*՝ պրոտոտիպ, նախատիեզերք,- հայերենի «տի+եզերք» բառիմաստի հետ է նույնանում:

Եգիպտական ֆորմաներ
ստեղծող երկգլխանի
վիշապը, դիմացը խաչ՝
կյանքի նշանը:



Աթումը վիշապի
ընդերքում:
18-րդ դինաստիա

Փաստորեն, «Վիշապ» բառը անուն է եւ հնդեւրոպական լեզուներում աղերսվում է՝ «ընդերք», «նախահիմք», «երկնքի ընդերք», «դրախտ», «աստված» իմաստների հետ, եւ այս վիշապը ջրային՝ **(ap-)** հիմք ունի՝ ըստ հայկական, շումերաբաբելական, հնդ-իրանական պատումների: Հայերեն [*ՎԻՇԱՊ > ՏԻԵԶԵՐՔ = վիհ, որն աստված է՝ ԴԻ(g) է եւ ունի եզերք՝ ապ = ափ*] բառը բացահայտ ցուցում է, որ Մեծ ՈՉԻՆՉ-ից «առաջացած» այս ՎԻՇԱՊ-ը՝ հիմք է (տիեզերք), որ սահման, շապիկ, եզր ունի, անսահման չէ[*1]: Հնագույն թաքնագիտական երկրաչափության մեջ վիշապը առաջին ֆորմայի սիմվոլն է՝ շրջանագիծ, գունդ՝ սֆերա, որից ձեւավորվում են մնացյալ հինգ՝ icosahedron, dodecahedron, tetrahedron, cub, octahedron ֆորմաները *(այս մասին՝ առջեւում):*

Հնագույն հավատամքային պատումներում, առաջին աստվածները՝ բոլորը, վիշապազուններ են *(կես մարդ, կես վիշապ պատկերային սիմվոլներով),* «վիշապից» ծնված, հոգեւոր էություններ են: Հետագա ժամանակների վերախմբագրմամբ, նրանք դառնում են վիշապասպան աստվածություններ: Ինչպես եգիպտական Ամոն-Աթումն է ինքն իրեն ծնում երկինք-նախագոյություն՝ ՆՈՒՆ-ից,- արտահայտվելով որպես ԿԱՏՈՒ կամ Բզեզ, կտրատում է վիշապի օղակները, «համանման մոտեցմամբ», հնդեւրոպական ամպրոպ-որոտի աստվածությունն է «սպանում» տիեզերական վիշապին ու հաստատում իր իսկ «արտահայտված գոյությունը» եւ «իշխանությունը»:

Հնդեւրոպական հնագույն բոլոր պատումներում ՎԻՇԱՊԻՆ «սպանող» աստծո զենքը՝ լուսաբեր ԿԱՅԾԱԿ-ն է, ինչպես ամպրոպային Զեւսի ձեռքի ահարկու կայծակ-զենքը: Այս «զենքը»՝ հուրրիական, ուրարտական Թեշուբ-Թեյշեբայի լուսաբեր ՄՈՒՐՃ-ն է, ինչպես նաեւ հնդկական Բրահմի մուրճաձեւ զենքն է, եգիպտական Աթումի գավազանն է, «Սասնա Ծռեր» հայկական էպոսի Սանասարից սկսած միչեւ Փոքր Միհր հերոսների Թուր-Կեծակի > թուր-կայծակին է, որն ի վերջո, *վիշապ-խավարը* սպանելող, լուսաբեր, կյանք արարող զենք է : Ուրեմն, ըստ հնագույն հավատամքային պատումների ՎԻՇԱՊԸ՝ նախագոյ անդունդի սիմվոլն է, իսկ ՎԻՇԱՊ սպանող հերոս աստվածությունն իր շանթարկող զենքով՝ խավարը լուծարող եւ կյանք արարող ԼՈՒՅՍՆ է:

---

*1,- 2003 թվականի հոկտեմբերին, NACA (Wilkinson Microwave Anisotropy) տվյալներով, գիտնականները եկել են այն եզրակացության, որ տիեզերքը բավական փոքր (R-ը՝ շառավիղը, մոտավորապես 11 մլրդ. լուսատարի), սնամեջ, դատարկ, մակերեւույթով պլազմատիկ պղպջակ է, նման հայելապատ կլոր սենյակի, որի հայելային անդրադարձումները անսահմանության զգացողություն են ստեղծում (Հոկտեմբեր 16, 2003թ., «www. Pravda. Ru»):

«Մեծ ոչինչը», «անդունդ-նախաքաոսը» եւ «քաոսը» հնագույն հավատամքային պատումներում:



"Here is the dragon that devours its tail."
From Maier (1965, p. 239)

"Ouroboros: bronze disk, Benin art." From Chevalier and Gheerbrant (1982, p. 716)

Հնագույն աֆրիկյան օրացույց վիշապի սիմվոլով (ներքին երկրորդ օղակ), 1+8 համակարգ՝ Կենտրոն եւ 8 բաժանում:

Արարման մասին բոլոր պատումները սկսվում են ՄԵԾ ՈՉԻՆՉ-ից դեպի ջրային խավար՝ ՆԱԽԱՔԱՈՍ(արգանդ), ապա դեպի առաջին ՇՈՒՆՉ = ԼՈՒՅՍ:

Բաբելական (կամ Խալդեան) տարբերակ*[1]:

Երբ վերեւում երկինքը դեռ չուներ անուն,
Ոչ էլ ներքեւում երկրի անունն էր արտաբերված,
ԱՓՍՈՒՆ ամենաստեղծը նախածին
Եւ Թիամատը՝ մայրն ամենածին
Միասին իրենց ջրերն իրար խառնեցին,
Երբ դեռ չէր ձեւավորված նախահողը սնուցող,
Ոչ էլ նախահիմքերը ***եղեգնիկի****[2],
Երբ ոչ աստվածներ կային արտահայտված,
Ոչ արտաբերված անուններ ու ճակատագրեր…
Որից հետո միայն աստվածները ծնվեցին նրանցից:
Լահմուն (եւ) Լահամուն անսպասելի հայտնվեցին,
Նրանց անունները արտահայտվեցին:

Հայկական տարբերակ (հուր աստծո՝ Վահագնի ծնունդը)*[3]:

Երկնէր երկին, երկնէր երկիր,
Երկնէր եւ ծովն ծիրանի.
Երկն ի ծովուն ունէր եւ զկարմրիկն ***եղեգնիկ…***

Հին Կտակարան*[4]:

Սկզբումն Աստված ստեղծեց երկինքը եւ երկիրը: Եւ երկիրն անձեւ ու դատարկ էր.
Եւ խավար կար անդունդի վրա. եւ Աստծո հոգին շրջում էր ջրերի վրա: Եւ Աստված ասեց լույս լինի. եւ եղավ:



Հայկական վիշապ: Հավատամքային, ծիսական թաս, 1+6 համակարգ: Ուրարտական շրջան:

*1.- Stepanie Dalley, "Myths From Mesopotamia", Oxford, 2000, p. 233.
*2.- Ս. Դալեյի նոր, ճշտված թարգմանության մեջ՝ «եղեգնիկ»:
*3 - Մ. Խորենացի, «Հայոց պատմություն», էջ 102:
*4 - «Աստվածաշունչ», Գիրք Ծննդոց, գլ. Ա, 1-3:

Արարչության թաքնագիտական սիմոլը:

Հունական*1:

«Ամենից առաջ գոյություն է ունեցել միայն հավիտենական Քաոսը»: «Քաոսից առաջացել է նաեւ երկրի աստվածուհին՝ Գեան»: «Երկրի ընդերքում… ծնվեց Տարտարոսը՝ ահավոր անդունդը, լեցուն հավիտենական խավարով: Քաոսից՝ ***կենսատու աղբյուրից***, ծնվեց նաեւ հզոր ուժը՝ ամեն ինչին կենդանություն տվող ՍԵՐԸ՝ ԷՐՈՍԸ»:

Եգիպտական տարբերակ*2:

Սկզբում Տիեզերական անհունն էր՝ ՆՈՒՆ-ը: ԱԹՈՒՄ-ը անձեւ ներունակ նախագոյից՝ ՆՈՒՆ-ից արտահայտվեց, ինքն իրեն ստեղծեց:

Վեդայական (հնդկական) տարբերակ*3:

Սկզբում ՈՉԻՆՉ-ն էր: Չկար ոչ ժամանակը, ոչ նախանյութը: Մեծ ՈՉԻՆՉ-ից հայտնվեց արական եւ իգական ոսկյա սաղմը, որոնցից արտահայտվում են ամենայնը:

Իրանական տարբերակ (Ավեստա)*4:

Անսահմանության ընդերքում արտահայտվում են երկուսը՝ Ահուրա-Մազդան (Օրիմազդ) եւ Արիիմանը (բարու եւ չարի երկվության խորհուրդ):

Բոլոր հնագույն պատումներում, «սկզբնական» ***նախաերկինք*** կամ ***քաոս*** առաջին գոյությունը, խորհրդապաշտական պատկերներում ներկայանում է որպես ՎԻՇԱՊ, որն աղերսվում է Քաոս՝ նախաերկնքի եւ հաջորդ փուլում՝ Ծիր Կաթնի հետ:

Հարվարդի համալսարանի պրոֆեսոր Կ. Վաթկինսի «How To Kill a Dragon»*5 մեծարժեք աշխատությունը, արարչության մասին հնդեւրոպական պատումներում ***վիշապ-քաոսի*** եւ ***երկնքի*** կայծակ-ամպրոպ աստվածության «պայքարի» մասին քննությունն է: Հնդեւրոպական հավատամքային բոլոր պատում-

*1, - Ն.Կուն, «Հին Հունաստանի լեգենդներն ու առասպելները», Երեւան, 1979թ., էջ 3:
*2- Moustafa Gadalla, ”Egyptian Cosmology”, 2001, USA, p. 35.
*3, *4, - Rachel Storm, “Indian Mythology”, 2000, USA, p. 12, 57, 88-89.
*5,- Calvert Watkins, «How To Kill a Dragon», Oxford, 1995.



Հունական Զեւսը
Տիփոնի դեմ

ներում առկա այս դուալիստական սյուժեն, փաստորեն, «հավաքվում» են մեկ ֆորմուլայի ներքո,- եզրակացնում է հեղինակը.

*gʷhen- ՎԻՇԱՊ + անասելի ԶԵՆՔ :

Եվ, «***Վիշապ-հակառակորդ*** միֆական պատումը կարող է հեշտորեն դառնալ որպես ***մարդ-հերոս եւ հակահերոս*** էպիկական «իրականություն»*1, որն իր հիմքում արարչության մասին նույն մոտիվն է, նույն ֆորմուլայով:

ԱՍՏՎԱԾ + ԶԵՆՔՈՎ --- ՍՊԱՆՈՒՄ է --- ՎԻՇԱՊԻՆ,

որ հետագայում դառնում է էպիկական «իրականություն»՝

ՀԵՐՈՍԸ + ԶԵՆՔՈՎ --- ՍՊԱՆՈՒՄ է --- ՀԱԿԱՀԵՐՈՍԻՆ*2:

Փաստորեն, ըստ իս,

ԱՍՏՎԱԾ + լուսաքեր ԶԵՆՔՈՎ ՍՊԱՆՈՒՄ է ՎԻՇԱՊԻՆ,

ներկայացումը՝ արարչության մասին կոսմիկական, խորհրդապաշտական գիտելիք է, որ քրմերի կոդավորված գիտական լեզվից «թարգմանվում» է՝

արարիչը + լույսով --- լուծարում է --- տիեզերական խավար-անդունդը
ԱՍՏՎԱԾ + ԶԵՆՔՈՎ --- ՍՊԱՆՈՒՄ է --- ՎԻՇԱՊԻՆ:

Տիեզերական անհունից *(ներունակություն, potential)* առաջացած առաջին ֆորման՝ սֆերան, տիեզերական խավար անդունդն է՝ վիշապի սիմվոլով, որ սպանվում է Աստծո կողմից, շանթարձակ լույսով, որի արդյունքում «գոյանում» են տիեզերական առաջին ֆորմաները:

Եզրակացություն

Վիշապի ու կայծակ *զենքով* հերոս-*աստծո* հակամարտության մասին հնդեւրոպական համընդհանուր այս միֆապատումը՝

1) ***արարչության մասին է,***

2) ***կոսմիկական բնույթ ունի,***

3) ***«միֆապատումը» չի ընկալվել բառացի, գոնե քրմական «բարձրագույն դպրոցներում»*** *(հին եգիպտական դպրոց, Միջագետքյան՝ խալդեական դպրոց, Պյութագորյան՝ մ.թ.ա.VI դ., եւ այլն)*,

*1, *2, - C. Watkins, "How to Kill a Dragon", Oxford, 2001, p. 471, 460-463:

Հնդկական Ինդրա աստվածությունը Կայծակ-զենքը ձեռքին:

այլ՝ այս սիմվոլիկ պատմության հիմքում առակա է կոսմիկական արարչության մասին հավատամքային կարգակառույց՝ կյանքի եւ գոյության մասին մշակված աշխարհայացք:

Հավատամքային պատումների **ՎԻՇԱՊԸ** որպես սիմվոլ՝ տիեզերական անդունդի, հիմքի, նախանյութ-քաոսի կերպարանավորումն է, եւ որեւէ կապ չունի սողուն-օձի հետ: Վիշապի եւ լուսաբեր մուրճը կամ կայծակ-զենքը ձեռքին վիշապասպան երկընքի աստվածության՝ *թռչուն, արծիվ, կատու* եւ այլն կերպարանավորումները՝ սիմվոլներ են. սրանց հիմքում կան ենթատեքստային իմաստներ, որ աղերսվում են հների աստղագիտական, մատեմատիկական, երկրաչափական գիտելիքների հետ:

Հնագույն հավատամքային պատումների վիշապազուն կամ վիշապասպան աստվածները, ժամանակի ընթացքում, ունեցել են իմպրովիզացիոն փոփոխություններ՝ կոսմիկական արարչությունն իրականացնող գլխավոր աստվածություններից դառնալով միֆական հերոսներ, հետագայում՝ հարմարեցվել են պատմական անձերին ու անցքերին: Միեւնույն պատումային հերոսների այս փուլային երեք վերափոխումների ժամանակագրությունը մեկը մյուսից հեռու են հազարամյակներով եւ, ամենակարեւորը՝ ոչ թե պատմական ***հերոս-անձն*** է պատումներում «ուռչում»՝ դառնում կոսմիկական աստվածություն, այլ հակառակը՝ կոսմիկական հին աստվածներն են, որ նոր կրոնի տիրապետության ժամանակ, «մարդանում» են՝ դառնալով էպիկական «իրականություն», հագնելով այս կամ այն պատմական ***հերոս-առաջնորդի*** քիչ թե շատ հարմարեցված «շապիկը»*1:

*1- Արեւմուտքում, հեթանոսական ժամանակների հոգեւոր դպրոցների ոչնչացումից հետո, նրանց թաքնագիտական՝ «վիպական լեզուն», որի ոճն է՝ նաեւ պատմականության երեւույթ հաղորդել գրված տեքստին, հաջորդ սերունդների համար ընկալվել է բառացի: Օրինակ. առաջին քրիստոնեա համայքների, որոնց թվում նաեւ քրիստոնեա գնոստիկների աշխարհայացքի կոնցեպտներում *(Կումրանի, Նագ-Համադիի ձեռագիր տեքստեր)* **Քրիստոսը** տիեզերական ԲԱՆ-ն է, եւ ոչ թե պատմական անձ: Որեւէ ամենաբարձր՝ եռաստիճան հոգեւոր անձ, կատարյալ հայյալ, կարող էր նաեւ կոչվել ***Քրիստոս***, որովհետեւ համարվում էր տիեզերական ԲԱՆ-ի ուղղակի կապն ապահովող ներկայություն-խոսնակը: Սա էր առաջին քրիստոնեաների մոտ ՔՐԻՍՏՈՍ-ի նախնական ընկալումը, որն ամբողջովին հնագույն հավատամքի փիլիսոփայական մոտեցումն է՝ վերաձեւավորված նեոպլատոնյան

Աշխարհճանաչողական հավատամք-տեսությունից՝ կրոն, կրոնից՝ էպոս-առասպել, ապա՝ հերոսապատում, անցումային փոփոխությունը մոտավորապես ունենում է հետեւյալ հաջորդականությունը.

1. Հավատամք > Աշխարհճանաչողական տեսություն /թաքնագիտություն/:

2. Կրոն > հավատալիք /դոգմա/:

3. Առասպել > մոռացված *հավատամք-տեսության* արտաքին սյուժետային պատումը:

4. Հերոսապատում > /Մոռացված հավատամքի սյուժեն, հարմարեցվում է պատմական դեպքերի եւ հերոսական դեմքերի հետ/:

Փաստորեն, հայկական հնագույն առասպելների հերոսները՝ Հայկ եւ Բել, Վահագն, Տիգրան եւ Աժդահակ, Արտավազդ, Արա Գեղեցիկ եւ Շամիրամ եւ այլն, ինչպես նաեւ «Սասնա Տուն» էպոսի հերոսները՝ Գագիկ, Թեւաթորոս, Ծովինար, Սանասար-Բաղդասար, Մեծ Մհեր, Ջենով Օհան, Դավիթ, Փոքր Մհեր եւ այլն, որեւէ իրական պատմական հերոսի նախատիպ չունեն, հակառակը՝ լինելով նախահնդեւրոպական ժամանակների կոսմիկական արարչության հավատամքային համակարգի աստվածություններ, հետագայում, իմպրովիզացիայի ենթարկվելով, պատմական իրադարձությունների հետ հարմարեցումով «դարձել» են էպիկական «ռեալություն»՝ հերոսներ:

Գիտական քիչ-թե շատ հիմնավորում ունեցող «տեսական աշխարհայացք-հավատամքը», դեգրադացիայի ենթարկվելով, դառնում է դոգմատիկ «հավատալիք-կրոն», իսկ վերջինս «նոր կրոն»-ից «պարտվելով» եւ մոռացության մատնվելով, դառնում է սյուժետային կաղապար-պատում՝ «առասպել»:

«Սասնա Տուն» վաղնջական ժամանակների հավատամքային կառույցի դեգրադացիան՝ մինչեւ «հողեղեն» պատմական դեպքերի ու դեմքերի հետ աղերսումը, դասական օրինակ է *(եւ ոչ միայն «Սասնա Տունը»):* Օրինակ, էպոսի հերոսներից Քեռի Թեւաթորոսը, որ օժտված է երկնային դիցին բնորոշ հատկու-

---

դպրոցի բարոյական ստանդարտների ազդեցությամբ: Սակայն, ժամանակի ընթացքում, քրիստոնեական հավատամքը կայսերական կրոն դառնալուց հետո, գնոստիկների դաժան ոչնչացումից հետո, «նոր» հավատամքի բոլոր թաքնագիտական իմաստները մոռացության տրվեց, եւ շրջանառության մեջ սկսեց մտնել բառացի ընկալումն ու պատմական անձի աբսոլյուտ աստվածացումը: Իրականում, Աստված ոչ թե դարձավ պատմական անձ՝ «մարդացավ», այլ... կայսրական իշխանությունն ապահովող եկեղեցու աստիճանավորները, հոգեւոր իմաստներին անտեղյակ՝ մարդացրին Աստծուն, հրեական նոր շապիկ հագցնելով նրան:

Օր. առաջին քրիստոնյաների աշխարհայացքում ՅԱՀՎԵ-ն դեմիրուգն էր՝ նյութական տիեզերքի իշխանը՝ «քրիստոնեական սատանան»:

Տես՝ The Dead Sea Scrolls Uncovered, USA, 1994.

The Nag Hammadi Libraray, J. M. Robinson, USA, 1988.

թյուններով, իրականում, հնագույն աստվածություն էր, որ վաղնջական հավատամքային կարգակառույցում խորհրդաբանորեն ներկայացրել է նախաբնության քառահիմք ատրիբուտները *(հուր, օդ, ջուր, օդ):* Հետագայում, հեթանոսական շրջան, դառնում է փոթորիկ-ամպրոպի աստված *(ինչպես Զեուսը, Պերկունոն, Թորի-Թեյշեբան, Ինդրան եւ այլն):* Հազարամյակներ հետո, - միջնադարյան հայ ազատագրական շարժման շրջանում, ըստ գեղջուկի կամ միֆական պատումը փոխանցող-պատմող իմպրովիզատոր գուսանի, նա մարդանում է, եւ հետո, 20-րդ հարյուրամյակի կեսերին, ըստ որոշ մոդեռն «գիտնականների» դառնում է պատմական անձ, շարժումը գլխավորող հերոս՝ իշխան Թորոս Ռշտունի:

Սովետական շրջանի հայ «գիտնական էպոսագետները» «Սասնա Տուն» էպոսը ներկացրել են որպես ժողովրդական բանահյուսության արտադրանք: Հավատամքային կարգակառույցը երբեք չի կարող լինել ժողովրդական ստեղծագործություն: Հավատամք-կարգակառույցները դուրս են եկել հնագույն քրմական ***հոգեւոր*** տաճարներից: Եվ փաստ է, որ այդ բարձրագույն քրմական դասը, երկրի գնդաձեւության, երկնակամարի ժամանակային փուլապտույտի, արեգակնային համակարգության եւ մեծ տարվա*(25920տարի),* տիեզերական առաջընթացության մասին ամբողջական գիտելիքներ է ունեցել:

Ըստ էության, հնագույն հավատամքային պատումները՝ ոչ մատերիալիստական, այլ՝ աստվածակենտրոն աշխարհճանաչողություն է, որի հիմքում կա գիտություն: Հնդեւրոպական հավատամքային ***մայր պատումը*** կամ մայր պատումից «առաջացած» տարբերակները՝ տիեզերքի եւ արարչության մասին ներկայացնում են պարզ եւ հանճարեղ մատրիցա, ըստ որի՝ ***Արարիչն անհունն է, անսահման է եւ միակն է: Ստեղծելով նյութական տիեզերքը, նա ինքն իրեն արտահայտում է դուալիզմի սկզբունքով՝ 1-1, եւ 1> 4+4=8 փուլերով, որոնք աստվածություններ կամ ավելի ճիշտ՝ միակ Աստծո արտահայտություններն են*** *(համակարգի մանրամասն ներկայացումը՝ առջեւում)**:***

Այսօր, ժամանակակից ֆիզիկայում *(քվանտային)* գոյության ինքը վիբրացիոն ռեալությունների տեսությունը (Brane new M-theory) կարծես կրկնում է հների «աշխարհճանաչողության մոտեցումները»:

19-20-րդ դարերի եւ այսօրվա մատերիալիստական աշխարհճանաչողությունը թեւ կոչվում է «գիտական», բայց ըստ էության, գոյության եւ բնության մասին անկատար, երբեմն իրարամերժ տեսությունների եւ ենթադրությունների հավաքականություն է՝ նորօրյա դոգմատիկ կրոն:

Մոդեռն ֆիզիկան ներկայացնող մի շարք գիտական այրեր, այսօր, փորձում են «ստեղծել-գտնել» այն ***հավաքական մատրիցա թեորիան (Unified Theory),*** որն իր մեջ կկարողանա ներառել եղած գիտական ձեռքբերումները: Բայց, փաստորեն, հնագույն ժամանակների գիտունները ունեին տիեզերքի եւ գոյության գաղտնիքի մասին իրե՛նց հավաքական կարգակառույցը՝ գիտական աշխարհայացքը:

Եւրոպայից մինչեւ Հնդկաստան, Եգիպտոսից մինչեւ Միջագետք հավատամքային հնագույն պատումն իր բոլոր իմպրովիզացիոն տարբերակներով հանդերձ, հանդես է գալիս համանման այուժեով եւ միեւնույն բանի մասին է: Հարց է առաջանում, արդյո՞ք հնագույն հոգեւոր ինտելեկտուալներն այնքան «բութ» էին, որ չէին կարող միեւնույն պատում-առանցքի շուրջ «պտտվելու»՝ բանահյուսելու փոխարեն, ստեղծել-հնարել տարբեր կառույցներով տարբեր «հեքիաթներ»: Չէ՞ որ նույնիսկ քրիստոնեությունը, բուդդիզմը եւ իսլամը այդ նույն՝ միեւնույն հնագույն «միֆական պատումի» աղճատված «արձագանքներն» են: Փաստորեն, հնագույն իմաստունները *(քրմապետները)* հասկացել էին, որ տիեզերքի եւ կյանքի արարման սկզբունքները՝ ամենափոքր մասնիկից մինչեւ «անհուն» կամ տիեզերք ու տիեզերական լուսատուներ, իրենց ձեւավորման-արտահայտման ընթացքում «գործում» են համանման սկզբունքներով, ահա թե ինչու՝ արարչության մասին հավատամքային պատումների ասելիքը, սիմվոլները եւ այուժետների հիմնական, ֆունկցիոնալ գծերը չեն փոփոխվում հազարամյակների ընթացքում:

Հայաստանում, Մեծամոր հնավայրի *(թվագրվում է՝ 2800-2600 տարի մ.թ.ա.),* հավատամքային կոթողներից է արական առնանդամը՝ գագաթին քառաձեւ սվաստիկայի նշանը, որ ***անհունի*** «իգական»՝ շրջանաօղակի ուղղահայաց եւ «արական»՝ շրջանաօղակի հորիզոնական «խաչաձեւման» արտահայտությունն է, եւ ըստ հների, բնորոշում է տիեզերական դուալիզմն ու տիեզերական ամբողջի՝ 4+4=8 փուլային մանիֆեստացիան: Կամ՝ Վիշապ > Վի(h)+շապ անունը, բառի իմաստաբանությամբ ոչ թե օձ-սողուն է նկատի առնում, այլ՝ «տիեզերական անդունդ-սֆերան»,- պրոտոտիպ տիեզերքի՝ ***ներունակության*** երկրորդ արտահայտությունը: Այսինքն, Անհունից հետո՝ Վիշ-ապ = Օշ-ափ*[1],- ***ափ, սահման*** ունեցող տիեզերք, որ նաեւ կոչվել է ***սֆերա:*** Ըստ հնագույն հավատք-պատումի հնդ-իրանական տարբերակների, տիեզերքի արար-

---

*1 - Վիհ-շապ > աղերսվում է սասկրիտ տեքստերում վեդայական՝ áhi- «օձ, վիշապ» եւ Budhnyá «հիմք» իմաստների հետ:

ման պրոցեսում ***ընդերքի վիշապը***՝ Áhi- Budhnyá, Áhi - «օձ» եւ Budhnyá- «հիմք», ունի ***երեք*** գլուխ եւ ***վեց*** աչք եւ աղերսվում է ***ջրերի*** հետ: Հայկական էպոսում եւ առասպելներում հանդիպող ***վիշապ*** բառը թե՛ աղերսվում է «վեց» թվի հետ, ե՛ւ թե հնդեւրոպական āp «ջուր, գետ» իմաստն ունի իրենում*(տես ուրարտական վեց վիշապագլխներով ծիսական ջրաթասը):*

Աշխարհճանաչողության հնագույն մոտեցումները, այսօրվա գիտության ձեռքբերումներով, «հաստատվում» են մոդեռն ֆիզիկայի տեսական ենթադրություններով: Հավատամքային պատումներում պատահական չեն խորհրդապաշտական իմաստներով սիմվոլների, բառերի ներկայացում-արտահայտությունները, քանի-որ դրանք բնորոշում են պատումի բուն «էությունը» եւ ասելիքը: Հնագույն հավատամքային պատումներում ***Վիհ-շապը,*** տիեզերական անսահմանության երկրորդ փուլի՝ սահմանային լինելու մասին է, եւ «ինչ-որ մեկը» հնում, որը հնարել, ստեղծել է այդ բառը եւ օգտագործել է «ըստ էության», եղել է հանճարեղ եւ բացառիկ գիտակ: Ինչպես հայտնի գիտնական Ֆրիտյոֆ Քապրան է ներկայացնում իր *«Ժամանակակից ֆիզիկայի եւ արեւելյան հնագույն միստիցիզմի զուգահեռները»*[*1] գրքում, հնագույն մտածողների մշակած գիտական՝ «վիպական լեզուն» *(կամ խորհրդապաշտական սիմվոլիկան),* իրերի էությունը առավել ճկուն, համապարփակ է բնորոշում, քան այսօրվա՝ 21-րդ դարի գիտության «բանաձեւային» լեզուն:

Անշուշտ, մենք դեռ լիարժեք չենք հասկանում «հներին» եւ նրանց թողած «միֆական պատումների» ամբողջական գիտականությունը, որը կոչվել է թաքնագիտություն, եւ հավանաբար, մեզ «հասածը» արդեն որոշ դեգեներացիայի ենթարկված, առավել ուշ շրջանի «վիպական իմֆորմացիան» է:





*1 - Fritjof Capra, “An Exploration of the Parallels Between Modern Physics and Eastern Mysticism”, Boston, 2000.

ՎԻՇԱՊԸ ՈՐՊԵՍ ԵՐԿՐԱՉԱՓԱԿԱՆ ԵՎ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԻ ԾՆՆԴՈՅ

/Հնագույն հավատամքային կարգակառույցը երկրաչափական ծավալներով (The Sacred Geometry)/

Ըստ հնագույն հավատամքային աշխարհճանաչողության, տիեզերական ՈԳԻ-ն արարելով նյութականանում է՝ ստեղծելով ֆորմաներ: Եվ տարածական ծավալները օգտագործվել է որպես արարչության փուլային ներկայացման մետաֆոր: Ներքեւի շեղագիր տեքստը ներկայացնում ենք՝ ըստ Ռոբերտ Լոուլորի գրքի[*1] :

«Եգիպտական Հելիպոլիսի արարչության մասին հնագույն հավատամքային կարգակառույցը՝ տարածական ծավալները ներկայացնելով որպես պատումային մետաֆոր, լավագույն օրինակներից է: Եգիպտական ՆՈԻՆ-ը՝ տիեզերական օվկիանոս, ներկայանում է որպես մաքուր, չդիֆերենցված ԱՆՍԱՀՄԱՆ ՈԳԻ, առանց սահմանի եւ ֆորմաների: Նա ԱՆՀՈԻՆ-ն է, որ համարժեք չէ որեւէ որակական, քանակական բնորոշիչ կոնկրետության, որեւէ աստծո հետ, այլ մաքուր նախնական ***ներունակությունն*** *է (պոտենցիալն է): Արարչի ԿԱՄՔ-ը կամ սերմը, որ թաքնված է ՆՈԻՆ-ի՝ անդիֆերենցիալ անսահմանության մեջ, ստեղծում է ինքն իրեն, «ձեւավորելով» առաջին ծավալը՝ սֆերան, գունդը,-որպես արաչության սկիզբ, որն իր մեջ ներառում է մնացյալ բոլոր էլեմենտների նախնական վիճակները:*

Բնության մեջ, գոյություն ունեն չկրկնվող հինգ հիմնական ծավալաձեւեր, որոնց եզրերը եւ դրանց ներքին անկյունները հավասար են: Դրանք են՝

1.- *Տետրահեդրոն՝ քառանիստ բուրգ* ---
2.- *խորանարդ*, վեցանիստ ---
3.- *Օկտահեդրոն՝ ութանիստ* ------
4.- *Իկոսահեդրոն՝* 20 նիստ ---
5.- *Դոդեքահեդրոն՝ 12 նիստ* --------

*Մնացած բոլոր ռեգուլյար ծավալներն այս հինգի կրկնումներն են: Այս հինգ երկրաչափական մարմինները կոչվում են՝ «Պլատոնյան», որովհետեւ ընդունված է, որ Պլատոնի տիեզերքի մասին փիլիսոփայությունը այս հինգ երկրաչափական ծավալների հետ զուգահեռ փոխաբերական համեմատություն ունի: Այս աշխատության մեջ[*2] նա սահմանում է, որ աշխարհի հիմքը չորս հիմնական էլեմենտներն են՝* ***ջուր, օդ, հող, հուր****: Պյութագորյան ժամա-*

---

*1,-Robert Lawlor, «Sacred Geometry», N.Y. 1989, chap. X.
*2,- Plato, «Timaeus», trs. Thomas Taylor, Minneapolis, 1975.

Առաջին ծավալը՝ սֆերան, որն իր մեջ ներառում է մնացյալ բոլոր էլեմենտների նախնական վիճակները:

նակներից այս աշխարհճանաչողությունը փոխհարաբերական իմաստներով արտահայտում էին երկրաչափական ծավալները՝

ՋՈՒՐ = բազմանիստ (20 նիստ), icosahedron ---

ՕԴ = ութանիստ, octahedron ----------

ՀՈՂ = խորանարդ, cube ----------

ՀՈՒՐ = քառանիստ, tetrahedron ----------

ԵԹԵՐ = բազմանիստ, 12 նիստ, dodecahedron ----------

Պլատոնը հիշատակում է, որ հինգերորդ էլեմենտը՝ եթերը (prana), կամ «կոմպոզիցիան», արարիչն օգտագործել է տիեզերքը ստեղծելու համար եւ dodecahedron-ը աղերսվեց հինգերորդ էլեմենտի՝ ***Եթերի*** *հետ:*

Ըստ Պլատոնյան աշխարհճանաչողության, աստվածային էությունը բարձրագույն ռեալությունում ստեղծում է թվերի եւ ֆորմաների էությունը, որ հետո, ըստ կարգի, նախատիեզերական Քաոսից ստեղծվում են դրանց համապատասխան նմանատիպերը, որ չորս ատրիբուտների՝ հուր, ջուր, օդ, հող, միջոցով ձեւավորում են նյութական, ֆիզիկական տիեզերքը[*1]*»:*

Պյութագորյան եւ Պլատոնյան հոգեւոր դպրոցներում, այս երկրաչափական ծավալների զուգահեռ փոխաբերություն-համեմատությունը՝ որպես տիեզերքի փուլային ձեւավորման համակարգ, փաստորեն ավելի հին ժամանակներից եկող, մոռացված գիտելիքների կիսատ տարբերակն է:

«Գ. Պլամերն իր աշխատության մեջ (Gordon Plummer, «The Mathematics Of The Cosmic Mind») ցուցում է, որ հնդկական հավատամքային տրադիցիայում բազմանիստ ***icosahedron-ը (20 նիստ)****, զուգորդվում է «միֆական» Պուրուշայի հետ, որը Բրահմայի սերմն է՝ անդրադարձում-պատկերն է, որը հենց ինքը՝ արտահայտված գերագույն արարիչ Բրահման է՝ նյութական տիեզերքում: Արեւմտյան էզոտերիկ ուսմունքում, Պուրուշան՝ Բրահմայի արտացոլանքային պատկերը՝ տիեզերական մարդն է՝ մարդակերպ տիեզերքն է (anthropocosm):»*

Անտրոպոկոսմոսը քրիստոնեության մեջ ԲԱՆ-ն է՝ գերագույն արարչի «հայլային պատկերն» է, որ նաեւ ներկայանում է որպես՝ Աստծո միակ որդի՝ տիեզերական մարդ՝ Քրիստոս[* 2]:

«Պլատոնյան կոչվող երկրաչափական ծավալները մարդկությանը հայտնի էր շատ ավելի վաղ ժամանակներում: Քեիթ Կրիչլոուն իր «Time Stands

---

*1, - Նաեւ բնորոշում է, որ նյութն ունի չորս վիճակ՝ կարծր, հեղուկ, գազային եւ հրային:

*2, - «Սկզբից էր Բանը, եւ Բանը Աստուծոյ մոտ էր, եւ Բանը Աստուած էր: Նա սկզբից Աստուծոյ մոտ էր...». Նոր Կտակարան, Ավետարան ըստ Յովհաննեսի, գլ. Ա, 1-5:

				Եզր	Նիստ	Ուղղաձիգ	Երկարութ.
Tetrahedron				6	4	4	$\sqrt{2}$
Octahedron				12	8	6	$\frac{1}{\sqrt{2}}$
Cube				12	6	8	1
Icosahedron				30	20	12	ϕ
Dodecahedron				30	12	20	$\frac{1}{\phi}$

Still» գրքում ներկայացնում է փաստացի ապացույցներ, որ այսօրվա Բրիտանիայի տարածքում, Նեոլիթյան ժամանակների մարդիկ այս հինգ երկրաչափական ծավալների մասին գիտեին Պլատոնից առնվազն 1000 տարի ավելի վաղ: Հնագիտական պեղումների ժամանակ գտնված քարերը այսօր պահվում են Օքսֆորդի Աշմոլինի թանգարանում:

Ձեռքի ափում բռնելու չափսի այս հինգ երկրաչափական ծավալները վերոհիշյալ պլատոնյան հինգ ծավալների տարբերակներ են՝ խորանարդի, բուրգի, ութանիստի, 12 եւ 20 նիստերով բազմանիստերից «բխող» կիսառեգուլյար ծավալների յուրահատուկ կոմպոզիցիաներ են:

Քեիթ Կրիչլոուն ասում է. «Հայտնաբերվածը փաստում է նեոլիտյան ժամանակների մարդու մատեմատիկայի բարձր իմացությունը, որ պատմագիտության կամ հնագիտության կողմից «անհնար» էր համարվել»: Հեղինակը կապ է տեսնում երկրաչափական այս ծավալների եւ Սքոթլանդիայի

Օքսֆորդի Աշմոլինի թանգարանում պահվող հնագույն երկրաչափական ծավալները:

կիկլոպյան աստղադիտարանների միջեւ: Երկինք-դրախտի ուսումնասիրությունը հների համար, անշուշտ, աֆերաների կորդինացիաների ուսումնասիրությունների հետ պետք է աղերսվեին: Պատահական չէ, որ Պլատոնը, Կեպլերը եւ Ալ-Կինդին տիեզերքը բնորոշում են երկրաչափական այս ծավալներով:

Լուսի Լամին, Եգիպտական չափման համակարգի մասին իր չորրորդ գրքում, փաստում է, որ հնագույն եգիպտացիք գիտեին վերոհիշյալ հինգ երկրաչափական ծավալների մասին դեռեւս Հին թագավորության ժամանակներում»:

Ռոբերթ Լոուլորն, իհարկե, համեմատական զուգահեռներ չի անցկացրել հնում հայտնի երկրաչափական կանոնավոր հինգ ծավալների եւ հնագույն տեքստերում (եգիպտական, շումերական) մատեմատիկական չափումների եւ աստվածների անունների ու նրանց ֆունկցիաների միջեւ, եւ որքան մեզ



ԵԹԵՐ

հայտնի է, դեռեւս թվային համակարգերով հնագույն պանթեոնների համեմատական քննություն չի արվել[*1]: Եվ, ըստ իս, գավեշտալի է հինգ երկրաչափական ծավալների օրինակները քարերի տեսքով գտնել, շոշափել ու միայն նոր համոզվել, որ հին ժամանակների մարդու մատեմատիկական իմացությունը շատ ավելին է եղել, քան մենք կարծել ենք: Այդ ճշգրիտ իմացությունները բացահայտորեն առկա են հնագույն հավատամքային տեքստերում եւ կիկլոպյան բացառիկ ճարտարապետական կառույցներում՝ որպես հաշվարկային մեթոդներ *(եգիպտական բուրգ, զիկուրատ, մեհյան, հունական ոճի տաճար եւ այլն):* Դրանք միայն տեսնելու կարողություն է պետք, որ մատերիալիզմով նախապաշարված պատմագիտության մեջ առկա դոգմատիզմի շնորհիվ դառնում է անհնարին:

Պյութագորասը եւ նրա դպրոցի հետեւորդները շրջանագիծը կամ ծավալային մոտեցմամբ՝ գունդը, համարում էին կատարյալ ֆորմա, հավաքական, աստվածային ***ամբողջ,*** եւ դնում էին երկրաչափական հինգ մարմիններից առաջ, որպես «սկիզբ»:

Շումերները գիտեին վեց երկրաչափական ծավալները: Շումերները 10 ական եւ 60 ական հաշվարկային համակարգերն օգտագործելով, գունդը կամ հարթության մեջ շրջանօղակը, ընդունում էին որպես արաջին ֆորմա՝ ամբողջ (unity), որը ժամային ամբողջի՝ մեկ լրիվ շրջապտույտի հետ կապված, ուներ հատուկ անուն՝ ՇԱՐ, հայերեն՝ ՇԱՐ եւ ՍԱՐ[*2] = 3600 տարի, դարաշրջան, հունարեն՝ Սարոս: Վեցական համակարգը խորհրդապաշտական պատկերներում ներկայացվում է որպես՝

*1,- Սույն աշխատության մեջ համեմատական քննությունները տես հաջորդ գլուխներում:

*2,- *ՍԱՐ՝ «գլուխ, ծայր, դար», ՍԱՐԻՔ՝ «շղթա, կապ, հյուսվածք», *ՍԱՐ՝ «ապիկի, ջնարակ, ջնարված ական» եւ այլն: ՍԱՐ՝ բնիկ հայ բառ է՝ «կապանք, շղթա» նշանակությամբ, ՀՆԽ՝ k՛r-, k՛er- արմատից: Հր.Աճառյան, ՀԱԲ, h. IV, էջ 183-184, 187-188:
Մ. Խորենացին իր «Հայոց Պատմության» մեջ *(Երեւան, 1981, էջ՝ 14)* ժամանակի հաշվարկները ներկայացնում է *շար* -երով՝ ՇԱՐ = 3600 տարեշրջան: *«Թագաւորեաց Ադովրոս շարս տասն, որ լինին ամք երեսուն եւ վեց հազար»:*



Տիեզերք-վիշապի կերպարային ներկայացումը՝
6 - ական համակարգ:
Հայկական Ծիսական բրոնզյա աման:
Ուրարատական շրջան, մ.թ.ա. I հազ.:

Ուրարատական շրջան, մ.թ.ա. I հազ.:



Շրջանագծի մեջ 6 կողեզրերովը՝ հեքսագոնն է:

ՎԻՇԱՊ = ՕՁ: Հայակական առասպելաբանության մեջ, աստվածները վիշապազուններ (օր. Վահագնը), այսինքն՝ վիշապի զարմից էին: Հոմերոսը Զեւսին երկրպագելիս իբրեւ օձ է բնութագրում: Մայաների հավատամքում օձն ունի վեց թվի համեմատական «կարգավիճակը»: Հայերենում «վեց» թվի անունը բխում է ՎԻՇԱՊ բառից*1, որն ինքնին տիեզերական ԱՆՀՈՒՆԻ առաջին ֆորման է, եւ բնորոշում է հավաքական ամբողջը, որն իր պոտենցիալում ունի մնացած բոլոր հինգ ֆորմաները կամ երկրաչափական ծավալները՝ մարմինները:

Փաստորեն, հնագույն հավատամքային կառույցը վեցական համակարգ է՝ ամբողջը = ՎԻՇԱՊԻ սիմվոլով, կամ ԱՆՀՈՒՆՆ



"The ancestral anaconda . . . guided by the divine rock crystal." From Reichel-Dolmatoff (1981, p. 79).

է, որ վեց արտահայտություններ ունի: Ուրարտական շրջանի (մ.թ.ա. 9-7դ.դ.) վեց վիշապներով հայկական ջնարակը՝ թասը, հնագույն հավատամքային կարգակառույցի օրինակ է (տես նկարը ձախում): Պոտենցիալ ունեցող այս ամբողջը (unity), որ հների մոտ ***վիհ+շապ*** սիմվոլով շրջանաձողակն է, աղերսվում է երկրաչափական հեքսագոնի հետ, որ ունի վեց անկյուն եւ վեց կողեզր: Հեքսահոնը որպես մեկ՝ որպես ամբողջ, ունի պոտենցիալ վեց միավոր-աստվածություններ, որ «արտահայտվելով», ի վերջո, ստեղծում են 12-ի միությունը՝ ծավալային խորանարդը: Վեց աստվածությունները անդրոգեն են՝ այսինքն, յուրաքանչյուրը երկակի՝ ***արականից*** եւ ***իգականից*** կազմված մեկ զույգ է, վեց զույգը՝ ընդհանուր 12 միավոր կամ աստվածներ: Օրինակները՝ 12 կենդանակերպ, հունական 6 աստվածներն իրենց վեց կողակից աստվածուհիներով, Շումերական Անուից մինչեւ Իշկուր,- իրենց իգական կողմերով կամ աստվածուհիներով եւ համապատասխան թվային հաջորդականությամբ:

Օրինակ. Շումեր-բաբելական պանթեոն *(թվային համարժեներով)*՝

Արական աստվածներ	իգական կողակիցները
60 - ԱՆՈՒ	**55 - ԱՆՏՈՒ**
50 - ԷՆԼԻԼ	**45 - ՆԻՆԼԻԼ**

*1, - Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, Երեւ.,1940թ., h. I, էջ 74:



40 - ԷԱ/ԷՆԿԻ	**35 - ՆԻՆԿԻ**
30 - ՆԱՆԱ/ՍԻՆ	**25 - ՆԻՆԳԱԼ**
20 - ՈՒԹՈՒ/ՇԱՄԱՇ	**15 - ԻՆԱՆԱ/ԻՇՏԱՐ**
10 - ԻՇԿՈՒՐ/ԱԴԱԴ	**5 - ՆԻՆՀՈՒԵՍԱԳ**
6 արական, աստվածներ	**6 իգական, աստվածուհիներ*[1]**

ՋՈՒՐ



Վեցական համակարգը, սիմվոլը՝ շրջանագիծ-վիշապ, ավելի ուշ՝ Պյութագորյան ժամանակներում, ներկայացվում էր նաեւ կենտրոնով, որ բնորոշում էր աստվածային **ԿԱՄՔ** -ը, որն արտահայտվում էր 8 սֆերաներով՝ **[1 + 6 = 7 + «երկիր»]**: Ութ աներեւույթ սֆերաների գաղտնագրությունը ներկայացվում էր հետեւյալ մոլորակային նշանների գործածությամբ՝

ՕԴ



♁ ☽ ☉ ☿ ♀ ♂ ♃ ♄

Երկիր Լուսին Արեւ Մերկուրի Վեներա Մարս Յուպիտեր Սատուրն

ՀՈՂ



Հնագույն հավատամքային կարգակառույցներում գործարկվում էր նաեւ ***իննական համակարգը***: Արդյո՞ք դրանք՝ 6-ական եւ 1+8= 9-ական համակարգերը, տարբեր բնույթի աստվածություններ կամ տարբեր համակարգեր էին: Ո՛չ: Չորս հիմնական ծավալաձեւերը *(որ աղերսվում են՝ ՀՈՒՐ, ՀՈՂ, ՕԴ, ՋՈՒՐ ատրիբուտների հետ)* «ծագելով» երկրաչափական ամբողջից՝ գունդ, արտահայտվում են երկրաչափական՝ ***եռանկյուն-հուր***, ***խորանարդ-հող***, ***ութանիստ-օդ***, եւ ***բազմանիստ (20 նիստ)-ջուր*** ծավալներով: Յուրաքանչյուրը «լինելով» երկակի, անդրոգեն *(երկսեռ)*, ստեղծում են 2x4=8-ը, որ 1>8 համակարգն է: Ուրեմն,

ՀՈՒՐ



ԵԹԵՐ





Dodecahedron

1	1	2	3	4	
1	2	4	6	8	= 1+8 = 9

իննական համակարգը՝ 1+8=9, իրականում՝ գնդի եւ չորս տարրերի, որ երկակի բնույթ ունեն (2 x 4), համակառույցն է:

Դոդեկահեդրոնը *(12 նիստ, ըստ Պլատոնի՝ Աստծո «կոմպոզիցիան»)*, փաստորեն, համարվել է «վերադարձի օղակ» (***վերադարձ դեպի նախնական ամբողջականություն՝ գունդ***) եւ, առաջին

1,- «Կրեպտոգրաֆիկ թվային համակարգի թվերը, երբեմն, տեքստերում փոխարինում են աստվածներին(անուններին)*՝ Անու 60, Էնլիլ 50...» եւ այլն, Z. Sitchhin, «The 12th Planet», USA, 1978, p. 124.

ԵԳԻՊՏԱԿԱՆ



ՀԱՅԿԱԿԱՆ «ՍԱՄՆԱ ՏՈՒՆ





Վիշապի պտույտը ձեւավորում է տիեզերքը՝ ըստ երկրաչափական ծավալների:





երկրաչափական ծավալի՝ գնդի նմանություն-արտացոլանքն է, որ համապատասխանության մեջ է հնագույն հավատամքային պատումներում *(տարբեր ժամանակներում եւ տարբեր պանթեոններում տարբեր անուններով)* վերջին, 8-րդ աստվածության՝ ՀՈՐՈՍի *(հորոսկոպ =12 կենդանակերպ)*, ԱՐԱՅԱՆ ԱՐԱ-ի*[1], ՓՈՔՐ ՄՀԵՐի, ԱԴԱՄ ԿԱԴՄՈՆի, ՔՐԻՍՏՈՍի հետ: Ըստ հնագույն աշխարհճանաչողության, **Նա**՝ գերագույն արարչի արտացոլանք-պատկերն է, տիեզերական մարդն է, 12 նիստանի դոդեքահեդրոն-ԵԹԵՐ-ն է, որից տրանսֆորմացվում է կյանքը, տիեզերքը: Հորոսը *«միացրեց վերին եւ ներքին Եգիպտոսը»* խոսքի իմաստը՝ *«երկինք» եւ «երկիր», հոգին նյութի մեջ,* **հոգեւոր** *եւ* **նյութական** *սֆերաների միացման մասին է,* որ գոյաբանական աշխարհն է: Խաչված Քրիստոս թաքնագիտական սիմվոլը՝ խաչված մարդը խաչի վրա նույն իմաստն ունի եւ, 4+4=8 համակարգն է ներկայացնում, որտեղ քառակողմ մարդը՝ տիեզերական ոգու սիմվոլն է, իսկ փայտյա խաչը՝ նյութական աշխարհն է:

Տիեզերքի ձեւավորումը՝ վիշապի պտույտ-կերպարանավորումներն ըստ երկրաչափական ֆորմաների:

Գեոմետրիայի լեզվով ցուցել արարչությունը որպես աբսոլյուտ ամբողջի պոտենցիալ բազմազանության տարամիտում՝ ըստ երկրաչափական ֆորմաների, հնարավոր է, երբ «ամբողջը» ընդունվում է որպես շրջան = վիշապ կամ քառակողմ-քառանկյուն *(քառադեմք Բրահմ եւ այլն)*: Երկու հատ «ամբողջ» կամ երկու անսահմանություն՝ թե՛ մետաֆիզիկական, եւ թե՛ գիտական տեսանկյունից չի լինում (1 x 1 = 1): Թիվ երկուսը՝ ամբողջի տարամիտում-բեւեռացումն է: Մեկը՝ Աստծո կատարյալ ամբողջությունն է*[2]: Փուլ առ փուլ գերագույն միակը ինքնասերում է, տարամիտում է՝

«իր անձը» - (1) եւ «իր ենթադրյալ ես-ը» - (1):

Այսինքն, ՎԻՇԱՊԻ սիմվոլը՝ անհուն ամբողջը,- գունդը, շրջանագիծը, սկսում է տարամիտվել փուլերով:

---

*1. - Արայան Արան 12 տարեկան էր, երբ նրա հայրը՝ Արա Գեղեցիկը զոհվեց: Արա+*մանյակը,* ինչպես Արայան Արան, նաեւ Փոքր Միհրը, Հորոսը, տիեզերական Քրիստոսը եւ այլն, աղերսվում է 12 կենդանակերպերը ներկայացնող, «ապրող» ԼՈԳՈՍԻ հետ:

*2. -«Անհուն» կամ «բովանդակ» գաղափարը շումերական տեքստերում արտահայտվում էր՝ օղակաձեւ փչակի ներկայացմամբ:



(Համապատասխան նկարները՝ ձախում)

Շրջանագիծը կամ սֆերա-գունդը՝ «վիշապը», որն իր մեջ ներառում է բոլոր էլեմենտները, սկզբում դառնում է ***իկոսահեդրոն:*** Որպես հարթապատկեր, Իկոսահեդրոնը ***հնգաձև*** է եւ ունի 6 եզրագիծ: Որպես ծավալաձեւ ունի 20 նիստ եւ 30 եզր: Տարերքը՝ ջուր, որ իրենում որպես «սերմ» ունի Տետրահեդրոնը՝ հուրը:

Իկոսահեդրոնը, որ ներկայացնում է ջուր էլեմենտը եւ իրենում ունի՝ տետրահեդրոն-հուրը, որպես սերմ:



Երկրորդ փուլ՝ «վիշապը» դառնում է ***Օկտահեդրոն,*** որ երկու բուրգերի միացություն է՝ «երկվորյակներ»: Որպես հարթապատկեր ***Օկտահեդրոնն*** ունի 8 եզր, որպես ծավալաձեւ՝ 12 եզր: Տարերքը՝ օդ:





Երրորդ փուլում՝ «Օկտահեդրոն վիշապը» դառնում է ***Խորանարդ:*** Որպես ծավալաձեւ ունի 12 եզր, 6 նիստ:





Չորրորդ փուլ՝ ***Տետրահեդրոն:*** Որպես ծավալաձեւ ունի 6 եզր, 4 նիստ:

Dodecahedron



ԵԹԵՐ

Չորրորդ փուլ՝ Վիշապը դառնում է դոդեկահեդրոն՝ եթեր, վերջին փուլ, որ համարվում էր Աստծո կոմպոզիցիան՝ ըստ Պլատոնականների, մ.թ.ա. 5-4դդ.:

Վերեւի չորս փուլերի վերջին արդյունքը Դոդեկահեդրոնն է՝ եթերը, որն ըստ Պլատոնականների (մ.թ.ա. V- IV դդ.) կոչվում է՝ Աստծո կոմպոզիցիա: Սա լիարժեք արտահայտված տիեզերքն է կամ տիեզերական մարդը **(Anthropocosm):**

Դոդեկահեդրոնը, որպես ծավալաձեւ ունի 12 նիստ եւ 30 եզր: Եգիպտական հավատամքային համակարգում այս տիեզերական մարդու՝ ***Anthropocosm***-ի անունը Հորոս է, որից «հորոսկոպ»՝ 12 համաստեղությունների հավաքականություն: Արեւմտյան էզոտերիկ ուսմունքներում նա կոչվում է Ադամ Կադմոն: Ըստ հայկական «Սասնա Տուն» էպոսի՝ Փոքր Մհեր, ըստ Մ. Խորենացու բերած հին զրույցների՝ Արայան Արա: Ըստ վեդայական համակարգի՝ Քրիշնա: Ըստ առաջին քրիստոնեա գնոստիկների՝ Քրիստոս եւ այլն:



ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՀԱՅՐ - ՄԱՅՐ - ՈՐԴԻ

Մենամորի հնավայրի *(մ.թ.ա. III հազ.)* խորհրդապաշտական առնանդամ-արձանայունը:

Տիեզերքի «կառուցման» գաղափարը որպես՝ **ՀԱՅՐ-ՄԱՅՐ-ՈՐԴԻ**, մենք տեսնում ենք հնդ-արիական **«Ռիգ Վեդա»** սրբազան տեքստերում՝ ծավալների ներկայացմամբ *(Բնության մեջ գոյություն ունեցող գունդը եւ հինգ ծավալները, որպես՝ հուր, ջուր, օդ, հող տես՝ «Վիշապը որպես տիեզերական ծավալների ծննդոց» բաժնում):* Երկրաչափական ծավալներ՝ Իկոսահեդրոնը ***(icosahedron)*** եւ Դոդեկահեդրոնը ***(dodecahedron)*** կերպարային ներկայացմամբ՝ ***Պուրուշան*** եւ ***Պրակրիտին***, հանդես են գալիս որպես նախնական «արական» եւ «իգական» երկվություն-աստվածություններ, որոնց «միակցումից» առաջանում է ութանիստ օկտահեդրոնը ***(octahedron)*** *[1]: Պուրուշան «արական» նախագոյությունն է, որ ստեղծելով իր հայելային հակադարձ արտացոլանքը՝ «իգական» Պրակրիտիին, նորից «ծնվում» է նրանից՝ որպես ***Օկտահեդրոն***: Այս երկու աստվածությունները երկրաչափորեն ներկայանում են որպես՝ մեծ շրջանաօղակ, որն ամբողջն է, եւ նրա հայելային արտացոլանքը՝ փոքր շրջանաօղակ: Այս երկուսի «միակցումից», շրջանաօղակների R-ը՝ շառավիղը նույն է, եւ երկու օղակները միասին, հատման հատվածում, «ստեղծում են» որդուն՝ Օկտահեդրոնին: Հնագույն հնդեւրոպացիների մոտ արարչական դուալիզմը նաեւ արտահայտվում էր որպես արական «արեւային աղբյուր» եւ իգական «լուսնային աղբյուր» ներկայացմամբ *(տես նկ.):*

Նույն դուալիզմի սկզբունքով է թե՛ հին եգիպտական արարչության հավատամքը, թե՛ Միջագետքյան, եւ թե՛ հայկական տարբերակները: Հին Բաբելական տարբերակում՝ ԱՓ.ՍՈՒ-ն եւ ՏԻԱՄԱՏԸ խառնում են իրենց ջրերը, որի արդյունքում արարվում են առաջին աստվածությունները: Եգիպտական տարբերակում Աթումն ասում է՝ «Ես մենկն եմ, որ դառնում է երկու...»,- ձեւավորելով ՇՈՒ եւ ԹԵՓՆԱԹ զույգին: Հայկական տարբերակներում՝

ա) «Վահագնի Ծննունդ». երկնում է ***երկինքը***, երկնում է ***երկիրը***, երկնում է նաեւ ***Ծիրանի Ծովը***, որտեղ գտնվող եղեգնյա փողից ծնվում է Վահագն աստվածությունը:

բ) «Սասնա Տուն» էպոս. երկնքի կամոք ***(արական հիմք)***, Ծովի-Նարը ***(իգական հիմք)***, խմելով ծովի միջից բխած գերբնական աղբյուրից ***(արական հիմք)*** հղիանում է երկվորյակներով:

Ծավալային առումով այս ***երկվորյակ աստվածությունը***՝ ութանիստ օկտահեդրոնն է, որ կազմված է երկու բուրգերից: «Հայր աստվածությունն» ինքը,

---

*1,- Robert Lawlor, «Secred Geometry», USA, 1989, p. 103.



Վերևում՝ շրջանագիծը որպես ամբողջ՝ 360⁰: Աջում և ձախում՝ գծային և ծավալային արտահայտությամբ «արական» իկոսահեդրոնը և «իգական» դոդեկահեդրոնը: Նրանց միացումից առաջացած ութանիստը՝ Օկտահեդրոնը:





«Արական» իկոսահեդրոնը և «իգական» դոդեկահեդրոնը ներկայացված են որպես շրջանագծեր, որոնց հատման տեղում առաջանում է հարթապատկերային քառակուսին, որը ծավալային՝ Օկտահեդրոնն է, քրիստոնեական որդին՝ որպես «Ձուկ» ֆորմա:

որպես ***առաջին շրջանաօղակ-ամբողջ՝*** 20 (քսան) տետրահեդրոններից կազմված երկրաչափական ծավալ է, որ հաջորդ փուլում դառնում է երկու միացյալ բուրգեր՝ Սանասար և Բաղդասար: Ըստ «Սասնա Ծռեր» էպոսի պատումների, Սանասար և Բաղդասար երկվորյակներին, թագավորը՝ *(նրանց պապը՝ ըստ էպոսի պատումներից մի քանիսի)* նվիրում է 20 տուն-ընտանիք*[1] կամ 30 տուն*[2], որպեսզի բնակեցնեն «Սասուն» քաղաքը: ***Իկոսահեդրոնը***՝ որը տիեզերական

*1,- «Սասնա Ծռեր», հ. I, Երևան, 1936թ., էջ՝ 986, պատում #23:
*2,- «Ս. Ծռեր», հ. IV, Երև., 1999թ., տես՝ «Մոտիվների համացանկ», էջ՝ 422, պատ. # 20:

Octahedron



Tetrahedron





icosahedron ունի 20 նիստ եւ 30 կողնզր



«արական» ամբողջն է, ունի 20 նիստ եւ 30 եզր: Փաստորեն, թագավորը ***(ծավալային՝ նա իկոսահեդրոնն է)***, որը «տիեզերական ամբողջի» սիմվոլն է, տալիս է այն բոլորն ինչ-որ ինքն ունի՝ 20 տուն-ընտանիք: Եթե ընդունենք այն փաստը, որ օկտահեդրոնն ունի 8 նիստ եւ երկվորյակները երկուսն են՝ 8+8=16, ապա կպարզվի որ՝ այս երկու ֆորմաները ստեղծում են՝ 20 + 16 = 36 «տուն»: Փաստորեն, ***Սասնա Տունն*** ինքնին ունի 36 միավոր» եւ, մ.թ.ա. XI դարին վերագրվող Միջագետքյան MUL. APIN աստղացանկում ներկայացված աստեղատների քանակը նույնպես 36 է: Մյուս կողմից, «Սասնա Տուն» էպոսը, գլխավոր հերոսների չորս սերնդափոխության, չորս ճյուղերից բաղկացած կառույց է: Ըստ խալդեական դպրոցն ուսանած Պյութագորասի ***(հաղորդողը Պլուտարքոսն է)***, թվային համակարգում առաջին չորս զույգ եւ չորս կենտ թվերը Աստծո ամբողջն է՝

1+3+5+7=16,- երկվորյակները,

2+4+6+8=20,- թագավորի 20 տուն (աստեղատուն) նվերը,

16 + 20 = 36*[1], - ամբողջը, որպես 36 տուն կամ՝ 3600 կամ 360⁰:

Հնագույն հեթանոսական հավատամքում սուրբ երրորդության ***Հայր-մայր-որդի սկզբունքը,*** առկա էր նաեւ քրիստոնեա թաքնագետ գնոստիկների մոտ (մ.թ. I-II դդ.): Տիեզերական Քրիստոսն արտահայտվում է որպես «Օկտահեդրոն», որը հայր-Աստծո՝ ***երկրաչափական Իկոսահեդրոնի,*** ներքին մեկ նիստն է: Այսինքն, որդին՝ «Զուկ» ֆորման,- Օկտահեդրոնը, հոր պատկերով ու նմանությամբ է: Նոր Կտակարանում *(Ըստ Յովհաննեսի, գլխ.21, 11)* ***153 հատ ձկների*** քանակությունը, որպես թաքնագիտական կոդ, հայտնի էր դեռ մ. թ. ա. VII դարում, Պյութագորյան դպրոցից, որպես «Ձկան չափ»՝ բարձրության եւ լայնության հարաբերությունը՝ 153 : 265*[2]:

Ուպանիշադում, տիեզերական ԲԱՆԸ՝ որդին, լոգոսը, «ներկայանալով» ասում է՝

Ես եմ քարկապը,

Ես եմ տիեզերքի ոսկյա պորտալարը:

Նա ով գիտե այս, գիտե ուպանիշադը:

(***Ուպանիշադ՝*** թարգմանաբար նշանակում է՝ *մոտենալ*:)

---

*1,- M. P. Hall, «The Secret Teachings Of All Ages», p. LXXII.

*2,- T. Freke & P. Gandy, «The Jesus Mysteries », USA, 2000, p. 39.

Մենամորի հնավայրի *(մ.թ.ա. III հազ.)* խորհրդապաշտական առնանդամ-արձանասյունը:

Ուրարտական պատկեր, որ աղերսվում է Սարդի աստվածուհու հետ: Սար + DI(դից), Սար = Շար = 3600 = շրջանաօղակ, ամբողջ: Երկու շրջանաօղակները վերաբերում են ոչ թե սեպագրին, այլ գաղափարապատկերի անքակտելի մասն են կազմում:



Մենամորի հնավայրի *(մ.թ.ա. III հազ.)* խորհրդապաշտական արձանասյան վրայի պատկերը ներկայանում է՝ իր ժամանակի արարչական աշխարհճանաչողությամբ եւ աստղագիտական իմաստներով: Առնանդամ սյան վրա, երկու շրջանաօղակների մեջ, ձախից դեպի աջ պտտվող սվաստիկան հաճախակի կրկնվում է հայկական լեռնաշխարհի հնավայրերից գտնված պատկերներում: Նույն սկզբունք-գաղափարն է՝ «առյուծը» ներքին շրջանաօ-ղակում, իսկ «արծիվը» արտաքին շրջանաօղակում պատկերը*(տես նկ.)*: Իրար մեջ երկու շրջանաօղակները կամ դրան համարժեք երկու քառակուսիներն իրար մեջ, որ ձեւավորում են ութաթեւ աստղը՝ 1 > 4 + 4 = 8, հնագույն համակարգն է, որ ծավալային մոտեցմամբ ներկայացնում է որպես՝ գունդ եւ չորս ծավալաձեւեր: Ուրարտական խորհրդապաշտական այս հարթապատկերի զուգահեռը՝ եգիպտական ՇՈՒ եւ ԹԵՓՆԱՏ աստվածների առաջին զույգն է՝ ՇՈՒ-ն*(տես նկ., արծվի փետուրովը ՇՈՒ-ն է)* որպես արու արծիվ ու ԹԵՓՆԱՏԸ որպես էգ հովազառյուծ՝ ***«օր ու գիշեր»-ը*** ներկայացնող դիցերի , ինչպես նաեւ Ծիր Կաթնի երկու գլուխների սիմվոլներն են: Հնդկական Ռիգ Վեդայում, նույն համակարգն է՝ ***հայր-մայր երկու շրջանաօղակների «մերձեցումից» ծնվում է նոր աստվածություն:***

Առջեւում մենք կներակայացնենք, որ 600 թիվի*[1] անունը՝ շումերական՝ nēr, բաբելական՝ nēru, աղերսվում է Հայասա երկրի ***Ներգալ*** աստվածության եւ «Սասնա էպոսի» աստվածամայր ***Ծովինարի*** անվան հետ: ՆԵՐգալ + ծովինԱՐ = 600 + 600 = 1200, որ «ամբողջի»՝ շրջանաօղակի, տրամագիծն է՝ 2R=1200, ու քանի-որ հների մոտ, օրինակ վաղ Բաբելոնում*(մ.թ.ա. 2500թ.թ.)*, ***Պի*** թիվի արժեքը՝ ***«3»*** է եղել*[2], եւ «բովանդակ-ամբողջի» գաղափարը ներկայացնող շրջանաօղակի պարագծը՝ 3600 է, 2R x π = 3600: 3600-ը՝ թիվ է, որ նաեւ ներկայացնում է տարեշրջան*[3], որը հայկական եւ շումերական ՇԱՐ-ն է, հունական՝ Սարոսն է:

Մենամորի արձանասյան վրա, փաստորեն, պատկերված է արարչական այն սկզբունքը, որ պատումային տարբերակով առկա է թե՛ հնդ-արիական Ռիգ-Վեդայում, թե՛ եգիպտական համակարգում, թե՛ հին բաբելոնյան տեքստում, եւ թե՛ արարչության մասին «Վահագնի ծնունդ», «Սասնա էպոս» տարբերակներում: Հայկական լեռնաշխարհում, հների մոտ, ծավալային այս մոտեցումը պարզ եւ ուղղակի ձեւով՝ թվերի լեզվով, առկա է ուրարտական շըր-

*1,- *2,- D. Teresi, «Lost Discoveries», USA, 2002, p. 48, 51.
*3, - Հր.Աճառյան, «Հայոց լեզվի պատմություն», Երեւան, 1940թ., հ. I, էջ 74:



Ուրարտական շրջանի (մ.թ.ա. 9-7դդ.) Վնց վիշապներով ծիսական ջրամանը, որը համապատասխանում է վնց եզր ունեցող երկրաչափական *հնքսագոնին:*
«Վնց այծ Հալդիին»

ջանի ***(մ.թ.ա. I հազարամյակ)*** «Միհրի Դռան» վրայի աստվածներին զոհաբերվող կենդանիների թվաքանակի արձանագրության մեջ:

Արձանագրությունը՝ մինչեւ Հալդիի գլխավորությամբ աստվածներին զոհաբերվող կենդանիների ցուցակը, սկսվում է՝

6 այծ Հալդիին:

Այծը որպես զոհաբերության կենդանատեսակ միայն մեկ անգամ է հիշատակվում, եւ այն էլ 6 հատ եւ միայն զոհաբերվում է գերագույն աստվածությանը՝ ***Հալդիին:*** «Վնց» թվի հիմքով համակարգը՝ 6-60-ը, շումերական ժառանգություն, «շրջանաձոգակ-ժամանակ» ցուցող թվային համակարգը էր:

«Շումերներն ունեին երկու համակարգային սիստեմ: Նրանք հաշվում էին երկու՝ 10 ական եւ 60 ական համակարգերով: Վնցական համակարգը մեր՝ 60 բոպեն = 1ժամի, 60 վրկ. = 1 բոպեի, որը նաեւ 360 աստիճան ցուցող կողմնացույցն է (6 x 60)»*[1]:



Շրջանագծի մեջ 6 կողեզրերովը՝ հնքսագոնն է:

Որեմն, «Միհրի դռան» վրա գրված,- ***6 այծ Հալդիին՝*** նկատի է առնվել, որ Հալդին «ամբողջն» է, որպես՝ «Տիեզերական վիշապ», «շրջանավիհն» է, որն իր մեջ ներառում է ամենայնը: Շրջանագծից՝ անհունից հետո, ***առաջին «գոյությունը»՝ հնքսագոնն է,*** որ ունի 6 կողեզր:

«17 ցուլ եւ 34 ոչխար Հալդիին»,- ասում է արձանագրությունը:

Որպես երկրաչափական հարթապատկեր, Հալդին՝ հնքսագոնն է, որ իր մեջ ներառում է ամենայնը: Նրա 6 կողերից յուրաքանչյուրը 17 միավոր է: Ուրեմն **հնքսագոնի** պարագիծը՝ 17 x 6 = 102 է: Վանա Քարի վրայի արձանագրության ցանկում գրված բոլոր արական սեռի աստվածներին զոհաբերվելիք ցուլերի թվաքանակը՝ 102 է:



Հալդին =17-ի, $12^2+12^2=144+144=\sqrt{288} = 17$:

Համակարգը «քառակուսիներով» ներկայացնելու պարագայում, եթե առաջին քառակուսու կողեզրը 17 է, ապա հաջորդ քառակուսու անկյունագիծը 12 է, եւ հաջորդ քառակուսիների անկյունագծերը համապատասխանաբար ենթարկվում են՝

*1,- D. Teresi, «Lost Discoveries», USA, 2002, p. 48, 51.



գծագիր # 1



գծագիր # 2

AC=17,
17 ցուլ Հալդիին:
AA″= 6, A″ B = 12,
Թեյշեբային՝ 6 ցուլ եւ 12 ոչխար:
AA′= 4, A′A‴ = 8,
Շիվինիին՝ 4 ցուլ եւ 8 ոչխար:

2V̄2, V̄2 հաջորդականությանը (V̄2=1.414), *(տես գծ. #1):*

Այս նույն ***հնքսագոնը,*** փաստորեն, երկրաչափական հավասարաչափ ***խորանարդի*** հարթապատկերն է: Այս դեպքում, հավասարաչափ խորանարդն ունի 6 նիստ ***(6 այծ՝ Հալդիին)***, նիստերից յուրաքանչյուրի անկյունագիծը՝ 17 է ***(17 ցուլ Հալդիին)***, իսկ կողեզրը՝ 12 է: Փաստորեն, ***Հալդի*** գերագույն աստվածությունը՝ հարթապատկերային հեքսագոնն է, որ ինքնին որպես ծավալաձեւ՝ խորանարդ է: Եվ այս խորանարդը «ձեւավորում է» հաջորդ՝ Թեշեյբա եւ Շիվինի աստվածությունները՝ 6-12, 4-8 երկրաչափական հարաբերությամբ (տես գծ. #1, #2):

[Բիայնական թագավորության Մհերի դռան արձանագրությանը՝ աստվածներին զոհաբերվելիք կենդանիների թվաքանակին եւ ցուցակին, ավելի մանրամասն կանրադառնանք առջեւում]:

Նույն մոտեցմամբ է «Սասնա Տուն» էպոսի հերոս աստվածների «ծավալային կարգավիճակը»: Գագիկ = Կակե՝ «ամբողջ», սիմվոլը՝ ընկույզ, ուրեմն՝ սֆերա,- գունդ, շրջանաձողակ: Քեռի Թորոս՝ 6 ոտանի ձիով շրջելը կարեւոր ատրիբուտ է, որ



խորանարդի ակնարկն է էպոսում՝ խորանարդն ունի 6 նիստ եւ 12 եզր: Սանասար եւ Բաղդասար՝ երկվորյակներ, սրանց ծավալային ատրիբուտը՝ օկտահեդրոնն է եւ այլն:

Ուրարտական շրջանի *(մ.թ.ա. I հազարամյակ)* վեց այծագլուխս վիշապներով ծիսական ջրամանը խորհրդանշում է տիեզերքի արարչի՝ Հալդիի արարչական առաջին ֆորման, որը համապատասխանում է երկրաչափական ***հնքսագոն*** ֆոր-



Ուրարտական շրջանի (մ.թ.ա. 9-7դդ.) վնց վիշապներով ծիսական ջրամանը, որը համապատասխանում է վնց նզր ունեցող երկրաչափական *հնքսագոնին:*



Երկու շրջանագծերի R-երի հարաբերությունները՝ 1/φ եւ 1/φ² է: Արարչական սկզբունք:

Սարդուրի 2-րդի սաղավարտը *(մ.թ.ա. 1-ին հազ.)*

մային: Շրջանագծից հետո, սա արարչության՝ նյութական տիեզերքի ծավալման, առաջին լիարժեք արտահայտված ֆորման է: Հարթապատկերային ***հնքսագոնը*** որպես տարածական ծավալաձեւ ներկայանում է որպես՝ ***խորանարդ:*** Հնքսագոնից միչեւ դոդեկահեդրոն, Հալդին դեռ պետք է ծավալվի, արտահայտվի եւս նույնքան՝ «եւս մեկ խորանարդի կամ շրջանի չափով», որպեսզի ըստ՝ 1 > 4 + 4 = 8 համակարգի, 3 չափումնանի (Three dimentional universe) աշխարհ արարչությունը կայանա: Այսինքն, երկու իրար մեջ շրջանաօղակները որպես սիմվոլ կամ իրար մեջ երկու խորանարդները, ներկայացնում են տիեզերք-արարչության մոդելն ըստ հին հայերի: Տիգրան Մեծի ժամանակների ութաթեւ աստղը՝ նույն, իրար մեջ երկու խորանարդներն են, բայց հարթապատկերային ներկայացմամբ: Մեծամորի հուշարձանի՝ առնանդամի *(3-րդ հազ. մ.թ.ա.)* վրայի պատկերը՝ երկու իրար մեջ շրջանագծերը, արարչության մոդելի մասին սկզբունքային նույն ասելիքն ունի՝ տիեզերական Ոգին *(1-ին խորանարդ),* «ձեւավորեց» տիեզերական մարմինը *(2-րդ խորանարդ):* Կամ՝ տիեզերական ***Ոգին*** արտայատվեց ***կրկնակի:***

Հնագույն հավատամքային պատումներում գոյություն ունեցող ամբողջը՝ անհունը, որ արտահայտվում է 1>4+4=8 համակարգով արարչական սկզբունք, պատկերային արտահայտությամբ լավագույնս ներկայացված է Ուրարտական Սարդուրի 2-րդի սաղավարտին *(տես նկ. հաջորդ էջում):* Սաղավարտ-գլխարկն իրենից ներկայացնում է սուր «գագաթով» շրջանաթաս: Երկրաչափորեն, վերեւից նայելու դեպքում, այն ներկայանում է՝ կենտրոնով շրջանագիծ: Գուտի վրայի ***աջակողմյան չորս վիշապները*** եւ ***ձախակողմյան չորս վիշապները*** ներկայացնում են անհուն-ամբողջի «արտահայտվելը» որպես՝ 4+4=8 համակարգ: Երեք շարքերով զույգերը՝ տասնմեկն են, որպես առանձին միավորներ՝ քսանմեկ միավոր է,- 21= 3 x 7: Տասնմեկ հատ են նաեւ գուտի վրայի դուռ-դարբասները: Երեք շարքերով կանգնած զույգերից միայն ***վնց*** զույգերն են թեւերով աստվածություններ, որ կարող է հիշեցնել վնց նզր ունեցող ***հնքսագոնը:*** Աջակողմյան չորս վիշապները երկրաչափական «քառակուսին» է, ձախակողմյան չորս վիշապները՝ երկրորդ «քառակուսին» է: Այս երկուսն

Սարդուրի 2-րդի սաղավարտը
(մ.թ.ա. 1-ին հազ.)

իրար մեջ «ներհյուսված» ութաթեւ աստղի հարթա-պատկերային ներկայացումն է, որ հետագայում, Տիգրան մեծի թագի խորհրդապատկերն է դառնում: Երկու «քառակուսիները» կարող են ներկայանալ նաեւ որպես հարթապատկերային մեկ «խորանարդ» կամ որպես վեցանկյուն ***հեքսագոն***: Այս նույն երկու «քառակուսիների» խորհրդապաշտական սիմվոլը, միա-ժամանակ կարող է ներկայանալ որպես երկու շրջանագծեր, քանի-որ դրանց չորս անկյունները յուրաքանչյուրը՝ 360⁰ է, որը հների մոտ կոչվում էր՝ ՇԱՐ = 3600:

Մեր թվագրությունից առաջ երկրորդ հազարամյակով թվագրվող Սեւանի ավազանից գտնված բրոնզյա «տիեզերածառը», որն ըստ իս, հների աշխարհճանաչողությամբ «արարչության մոդելն» է, իրենից ներկայացնում է թվային եւ երկրաչափական նույն կարգակառույցը՝ ինչ որ մենք տեսնում ենք Սարդուրի 2-րդի գուտի վրայի պատկերում: «Տիեզերածառը» միջին մասում ունի երեք շերտերով կառուցված «քառակուսին», որ արտահայտված է վեց ելուստներով*(hexagon)*: վերեւում՝ գագաթսկիզբն է, որ արտահայտված է 11 բացված թերթիկներով, եւ ներքեւում այն վերջանում է երկու շրջանաօղակներով *(կայացած գոյաբանական աշխարհ)*: Գագաթի տասնմեկ ելուստներով շրջանաշղթայի մեջ է գտնվում խաչանման կորիզը, հակադարձ կամ հայելային անդրադարձման սկզբունքով, այն կրկնվում է ներքեւում, իրար մեջ երկու շրջանաօղակների կենտրոնում: Սրա թաքնագիտական բացատրությունն է՝ տիեզերակերտության սկզբում, անհունի մեջ ոսկյա սաղմը (golden embryo, Rig Veda, Creation) իր վերջնական, լիարժեք՝ ոգու եւ նյութի միասնությամբ, արտահայտությունն է ստանում, որը մեր գոյաբանական աշխարհն է: Կամ, ***Որդի*** աստվածությունը՝ ***Հայր*** աստվածության պատկերով ու նմանությամբ: Կամ, ***Որդի*** աստվածությունը ***Հայր*** աստվածության արտացոլանքն է, որը եւ է՛ մեր ***գոյաբանական աշխարհը:***

Բրոնզյա «տիեզերածառը»
(մ. թ. ա. 2-րդ հազ.)

Անգղի եւ Առյուծի սիմվոլները որպես հայր-մայր՝ առաջին

Մայր աստվածուհի երկվորյակների (սիմվոլը 2 ընձառյուծներ) մայրը: Հայկական լեռնաշխարհ, Չաթալ Հույուկ հնավայր, մ.թ.ա. 6-րդ հազ.:



Ուրարտական պատկեր, որ աղերսվում է *Սարդի* աստվածուհու հետ: Սար + DI(դից), Սար = Շար = 3600 = շրջանաօղակ, ամբողջ:



Եգիպտական համակարգ. Աթումից հետո առաջին զույգ աստվածությունը: Թեֆնատն ընձառյուծն է, փետուրով Շուն՝ թռչունը:



Ներգալ-Էրրա Հայասա երկրի գերագույն աստծվածության պատկերանշանը. անգղի եւ հովազի գլուխներով: Վերեւում կիսալուսնաձեւ նշանը ***Հայասա*** երկրի գերագույն աստվածության սիմվոլն է, ուրաթեւ աստղը բնորոշում է նրա՝ «ամբողջ, ամենայն» լինելու սկզբունքը եւ 360º շրջապտույտը *(նկարը վերցված է Ա. Դավթյանի «Հայոց աստղային դիցաբանություն» գրքից):*

զույգ աստվածություն, որ երկու շրջանաշղթայով «ձեւավորում» են գոյաբանական աշխարհը, առկա է թե՛ հնագույն նախահընդեւրոպական խորհրդապաշտության մեջ՝ ԱՅԱ աստվածամայրը իր երկու երկվորյակ ընձառյուծ որդիների հետ, թե՛ Հայասա երկրի հավատամքային պատկերներում, թե՛ ուրարտական շրջանի խորհրդապաշտության մեջ եւ թե՛ եգիպտական հավատամքային համակարգում:

Հնագույն այս աշխարհճանաչողությունը որպես տասնմեկ ատրիբուտների մատրիցա, որ իննական՝ 1> 4 + 4 = 8 համակարգն է կամ ութ փուլերով արտահայտվող գոյաբանական աշխարհն է, լավագույնս ներկայացված է հայկական «Սասնա Տուն» էպոսում: Նախամայր Ծովինարը տիեզերական նախաջրերի իպոստասն է, որ հղիանում է անանուն, անտես գերագույն հայր աստվածության կամքով, որի նշանը՝ Խաչ Պատրազին, հետագայում կհայտնվի երկվորյակներից Սանասարի աջ բազուկին: Սա «Արծիվ-Անկղ» (այսօրվա՝ Cygnus-ը) համաստեղությունն է, որ ներկայացնում է երկրաչափական տետրահեդրոն սիմվոլ ծավալաձեւը:

Փաստորեն, հայկական լեռնաշխարհում Մեծամորի առնանդամ հուշարձանի *(մ.թ.ա. 3-րդ հազ.)* վրայի իրար մեջ երկու շրջանաօղակների արարչության հետ կապված խորհրդապատկերը, Սեւանի ավազանի բրոնզյա «տիեզերածառը» *(մ.թ.ա.2-րդ հազ.)*, ուրարտական շրջանի վեց այծավիշապներով ծիսական թասը եւ Սարդուրի 2-րդի սաղավարտ-գուտի վրայի 4+4=8 վիշապներով խորհրդապատկերը *(մ.թ.ա. 1-ին հազ.)*, ինչպես նաեւ Տիգրան Մեծի թագի վրայի խորհրդապաշտական ութաթեւ աստղը *(մ.թ.ա. 1-ին դար)*, իրենցից ներկայացնում են արարչության մասին թվային եւ երկրաչափական նույն կարգակառույց համակարգը:

Պյութագորյան թեորեմը պատկերային արտահայտությամբ՝ երեք քառակուսիների ներկայացմամբ, հայր-մայր-որդի՝ $3^2 + 4^2 = 5^2$:



Տիեզերքի արարման մասին հնագույն հավատամքային կարգակառույցը արտահայտվել է նաեւ հին հեթանոսական տաճարի, ինչպես նաեւ քրիստոնեական եկեղեցու գլխքենթի ճարտարապետության մեջ՝ որպես եռանկյունը քառակուսու վրա մոտեցում:
*Հուր եւ ջուր՝ հայր եւ մայր.
*3-ը արական է, 4-ը իգական է.
*սիմվոլները՝
հուրը որպես եռանկյունի,
ջուրը որպես քառակուսի:
*Երեքը չորսի վրա՝
«Արական եռանկյունու» հիմքը
«իգական քառակուսին» է:

Ընդմիջարկում

Դջիանի գիրք (հատվածներ)*[1]

Հնագույն հավատամքը որպես մետաֆիզիկական համակարգ, որպես թվերով եւ երկրաչափական ծավալներով տիեզերածավալման աշխարհճանաչողություն, լավագույնս ներկայացված է նաեւ Դջիանի գրքում, որից ներկայացնում ենք հատվածներ:

ստանզա 1-ին (հատվածներ)

Հավերժական եւ անփոփոխ Անհունը՝ ծնանողը, փաթթված էր իր աներեւույթ ծածկույթներում ու յոթ հավերժությամբ նընջում էր մեկ անգամ եւս:

Չկար ժամանակը, այն նույնպես քնած էր կրծքում հավերժության: Չկար եւ միտքը տիեզերական ու չկար ***մեկը*** դեռ, չկար ի զորուն կրելու միտքը:

Յոթ ուղիները դեռ չէին օրհնված ու չկային դեռ: Մեծ պատճառը տառապանքների չկար դեռ, քանի որ չկար մեկը, որ ստեղծեր ու կրեր այն:

Խավարն էր միայնակ եւ լի ամբողջությունը, ***Հայր-Մայր-Որդի*** մեկ էին նորից եւ որդին դեռ չէր արթնացել ու դեռ չկար նրա կիրքը նոր շրջապտույտի, անիվի համար:

Յոթ տերերը բարձրագույն եւ յոթ ճշմարտությունները դեռ չէին արտահայտվել:

Տիեզերքը՝ որդին անհրաժեշտության, դեռ չէր արտաշնչվել ու արտաբերվել: Մեկը չկար, Ոչինչը կար:

Միայնակ, գոյության միայն մեկ ձեւ, որն անձեւ էր ու անսահման, հավերժ ու անպատճառական: Յոթ որդիները դեռ չէին ծնվել լույսի կապերից, Սեւ խավարն էր միայն ***հայր-մայրը,*** SVABHAVAT-ը դեռ չկար, խավար էր:

Ստանզա 2-րդ (հատվածներ)

Սեւ խավարը լուսարձակեց Լույսը, եւ լույսը կաթեց՝ մեկ ճառագայթ դեպի մայրական արգանդախորքը: Երեքը՝ չորսի մեջ:

Ճառագայթն էության արտահայտվեց, դարձավ յոթ ներքին

*1,- H. P. Blavatsky, «The Secret Doctrine», Theosophical University press, USA, 1999, p. 27.









Dodecahedron



Չորրորդ փուլ՝ Վիշապը դառնում է դոդեկոհեդրոն՝ նթեր, վերջին փուլ, որ համարվում էր Աստծո կոմպոզիցիան՝ ըստ Պլատոնականների, մ.թ.ա. V-IVդդ.:

եւ յոթ արտաքին:

Շողարձակող կուսական ձուն դարձավ կյանքի օվկիանոս: Խավարը լուծարվեց, այն լուծարվեց իր իսկ էության մեջ, որնէ՝ ***հուրը*** եւ ***ջուրը՝ հայրը*** եւ ***մայրը:***

Ճերմակ – տիեզերք՝ որդին, սեւ տիեզերքից: Փայլատակողը՝ աստվածային իմաստնության Վիշապն է:

Հետագայում ներկայացնում է, որ միակը՝ գերագույն Բրահման կամ ՀԱՐԻ-ն՝ քառադեմք աստվածությունը, որի անիվ-վահանը տիեզերքն է, շարունակում է ինքնարտահայտվել որպես՝ ***երեքը՝ մեկ, չորսը՝ մեկ եւ հինգ,*** *հաջորդականությամբ (նկատի է ունենում* ***Π թիվը՝ 3,1415,*** *շրջանագծի երկարությունը բաժանած նրա տրամագծի երկարության վրա, հաստատուն թիվ է՝ 3,1415), մինչեւ 8 եւ 9-ը ռեալություններ: Թաքնված, պոտենցիալ մեկից մինչեւ 9 –ի մասին ասվում է՝*

I ԱԴԻ – Սանաթ,- թիվ, որը մեկ է:

II SVABHAVAT (Սվաբհավաթ) տիրոջ ձայնը, որը թվեր են, քանի որ նա մեկն է եւ ինն է:

III Անսահմանը՝ Անհունը՝ անձեւ շրջանաշղթան (O):

Ըստ Պյութագորյան դպրոցի, հայր աստվածությունը երրորդություն է՝ եռաստիճան մոնադն է, բնույթը՝ հուր: Մայր աստվածությունն աղերսվում է չորս թվի հետ, բնույթը՝ ջուր: Եվ որդի աստվածությունը հինգ թվի հիմքով է, բնույթը՝ նթեր: Պյութագորասի հայտնի բանաձեւը՝ $a^2 + b^2 = c^2$, որտեղ՝ $a = 3$, $b = 4$, $3^2 + 4^2 = 5^2$, մոնադի արարման մասին է:

Աստղագիտական սիմվոլները եւ Պյութագորասի թեորեմը

Յուպիտեր (Զեւս), Ապոլոն, Մերկուրի (Հերմես) եւ Կերես (Դեմետրա): Օլիմպիական փիլիսոփայության երեք կայուն սկզբունքները:





Վիշապի պտույտը, որի ընթացքում ձեւավորվում են երկրաչափական պլատոնիկ մարմինները:


.40824
.5000
.7071
.9732
1.0000
1.1441
1.224
1.309
1.5388
a Octahedron a = 1
R
P
r
a Tetrahedron (not shown) a = 2
R
P
r
a Cube a = √2 1.414
R
P
r
a Dodecahedron a = √2/Φ 0.874
R
P
r
a Icosahedron a = Φ 1.618
R
P
r



Երկիրը եւ հունա-հռոմեական յոթ սֆերաները

Եզրակացություն

Հնագույն հավատամքային տեքստերում եւ պատումներում վեցական (6-60) եւ իննական (1+8) համակարգերը՝ միեւնույն կարգակառույցի մեկնաբանական մոտեցումներն են: Առաջինը՝ հիմնականում, ժամանկի ամբողջական փուլի հետ է աղերսվել *(մեզ հայտնի շումերական քաղաքակրթությունից),* երկրորդը՝ թվաբանական հաշվումների հետ: Առաջին տարբերակը, թաքնագիտության մեջ՝ երաժշտության, ձայնային վիբրացիաների առումով, նաեւ կոչվում է՝ *հարմոնիկ*: Այս երկու թվային աճի համակարգերը հայտնի է նաեւ լամբադայի աղյուսակ անունով:

Պյութագորյան թվերի բազմապատկման կարգակա-

Թվային աճի լամբադայի աղյուսակ						
1	2	4	8	16	32	64
	3	6	12	24	48	96
		9	18	36	72	144
			27	54	108	216
				81	162	324
					243	486
						729

Արիֆմետիկ՝ $b = \frac{a+c}{2}$,

Հարմոնիկ՝ $b = \frac{2ac}{a+c}$,

Երկրաչափական՝ $b^2 = ac$:



ռույցում օգտագործվում է՝ 3:2, որտեղ 2-ը՝ «իգական», 3-ը՝ «արական» բնույթ ունի: «հարմոնիկ» եւ «թվաբանական» սկզբունքներով թվերի աճը այս երկու համակարգերով, ստեղծվում էր երաժշտական օկտավը: Ըստ պյութագորիստների, տիեզերական սֆերաների մեղեդին վիբրացիոն տատանում է այս երկու հինական՝ 2-ը՝ «իգական», 3-ը՝ «արական», թվերի միջեւ:

Գեոմետրիայի լեզվով, երկու համակարգերի միասնական ներկայացումը, վերահայտնաբերել են հանրահայտ էզոտերիկ թաքնագետ, հայազգի Ի. Գուրջիեւը եւ անվանի եգիպտագետ՝ Շեւալիե դե Լուբիցը:



Ի. Գուրջիեւի սխեման

Շրջանագծի մեջ եռանկյունին եթե ընդունվում է որպես կենտրոն՝ միջուկ, ապա շրջանը՝ ամբողջը, «ձեւավորում» են

վեց կետերը. Պյութագոր-Պլատոնյան սիստեմում, սրա բազմապատկումով՝ թվերի աճի հարմոնիկ տարբերակն է. 1-ից 9-ը կետերով շրջանի ամբողջացման՝ թվաբանական տարբերակ:

Ութ սֆերաների մասին 7-րդ դարի հեղինակ Անանիա Ճիրակացին գրում է. «Այս յոթ գոտիները հակառակ են միմյանց: Առաջին գոտին, որ կոչվում է երկնային ցրտության բնակատեղի, հենվում է այն ոլորտի վրա, որ կոչվում է ութերորդ»*1: Ա. Ճիրակացին գրում է, որ այն կոչվում է Քիմերական գոտի («Քիմեր» = Վիշապ, օձ):

Ըստ Ճիրակացու հայտնածի, յոթ գոտիներից վեր, ամենայնի հիմքը՝ Արփին է, որից Արեգակը ստանում եւ փոխանցում է աստվածային հուր-լույսը: Թաքնագետ Ա. Ճիրակացին մոլորակների մասին տալիս է հետեւյալ տեղեկությունը:

*«Արդ՝ մոլորակ կոչվող այդ աստղերը յոթն են, որոնք եւ համապատասխանում են շաբաթվա օրերին՝ սկսելով անծայրածիր արեգակից, այսինքն՝ կիրակի օրվանից, որի հետեւությամբ հեթանոսները անվանել են շաբաթվա օրերը ի պատիվ Արեգակի, Լուսնի եւ հինգ մոլորակների ...»*2:

		Հույները	Հայերը	Պարսիկները
☉	Կիրակի՝	Հելիոս	Արեգակ	Խորաշետ
☽	Երկուշաբթի՝	Սելենոս	Լուսին	Մանգ
♂	Երեքշաբթի՝	Արես(Մարս)	Հրատ	Նազ
☿	Չորեքշաբթի՝	Հերմես(Մերկուրի)	Փայլածու	Կոճ
♃	Հինգշաբթի՝	Զեւս(Յուպիտեր)	Լուսնթագ	Տիրենջ
♀	Ուրբաթ՝	Ափրոդիտես(Վեներա)	Լուսաբեր	Անահիտ
♄	Շաբաթ՝	Հրոնոս(Սատուրն)	Երեւակ	Զրվան»*3:

Փաստորեն, ըստ հների աշխարհճանաչողության, հին գիտունները տարին բաժանելով օրերի՝ 360+5, ամիսների՝ 12 ամիս եւ հավելյալ ամիս 5օր, շաբաթը որպես այդպիսին կանոնավորել են ըստ ***հնքսագոնի***՝ իր կենտրոնով՝ 6 օր + 1 հանգստի օր, շաբաթվա օրերին տալով արեգակնային համակարգության մոլորակների անունները:

---

*1, *2, *3, - «Հայ մատենագիրներ, Ա. Ճիրակացի», Երեւան, 1979թ., էջ 116-119, ծանոթագրություն, էջ՝ 343:

Հավելում

Հինգ երկրաչափական ծավալային մարմինների հետ է կապված հնագույն ժամանակներից մինչեւ մեզ հասած ՔԱՐԿՏԻԿ խաղը: Այս խաղում անպայման են տարբեր՝ հինգ ծավալաձեւերի քարերը (տես նկարը), որ համանման են Բրիտանական տարածքում նեոլիթյան ժամանակների գտածո նմուշներին: Խաղի կանոնները հետեւյալն են: Այն ունի վեց փուլ: Առաջին փուլը կոչվում է՝ ***մին պար,*** երկրորդը՝ ***մեկնուկ,*** երրորդը՝ ***երկնուկ,*** չորրորդը՝ ***թաք ու երեքնուկ,*** հիգերորդը՝ ***շնուկ,*** վեցերորդը՝ ***ճանտաս***: Հինգ քարերից յուրաքանչյուրի չափը մոտավորապես բթամատի եղունգի չափ է. խաղում են մեկ ձեռքով: *1-ին փուլ.* ընտրվում է բազմանիստ քարը եւ ափի մեջ հավաքելով մնացյալ բոլոր քարերը, պետք է առաջին քարը վեր նետել, 4 հատը հասցնել դնել գետնին եւ բռնել վար իջնող քարը: Սա կոչվում է՝ մին պար: *2-րդ փուլ.* բազմանիստ քարը վեր նետելով, մինչեւ քարի վար իջնելը հատ-հատ՝ չորս անգամով, մեկ-մեկ հավաքվում է գետնի վրայի քարերը: Սա կոչվում է մեկնուկ: *3-րդ փուլ.* գետնին չորս քարերը վերցվում է երկու անգամից՝ մեկը վեր նետելով, վերցնել երկու քար եւ էլի նույնը. կոչվում է՝ երկնուկ: *4-րդ փուլում* նույնը՝ 1+3, 1+1 կարգով. կոչվում է՝ թաք-երեքնուկ: *5-րդ փուլ.* բթի, ցուցամատի եւ միջնամատի միջոցով սարքում են կիսաշրջան՝ շնիկ = դարբաս: Մեկ քարը վեր նետելով, մինչեւ նրա վար իջնելը, պետք է մնացած քարերը մեկ առ մեկ անցկացնել դարբասով. կոչվում է շնուկ: Եւ 6-րդ փուլ. մեկը վեր նետել եւ չորսը միանգամից ճանկելով հավաք անել բռում. սա կոչվում է՝ ճանտաս:

Բացատրություն

Ինչու բոլորին լավ հայտնի մեր տատիկների սովորեցրած այս խաղը հիշվեց: Հանգամանքները. նախ, խաղի համար հատուկ ընտրվում էին քարերը՝ վերեւում հիշատակված պլատոնյան հինգ սոլիդներին համապատասխան: Երկրորդ՝ քարերն ամպայման պետք է լինեն հինգ հատ: Երրորդ՝ խաղը բաղկացած է վեց փուլերից: Չորրորդ՝ փուլերի անունների իմաստները եւ կանոնները համապատասխանության մեջ են Պլատոնի «Timaeus» աշխատության մեջ կոսմիկական փուլերի՝ 1-4 կառուցվածքին, օրինակ՝

ՄԻՆ ՊԱՐ

Աստվածային գաղտնաթաքույց մեկը՝ արարչության հարուցիչը, արտահայտվում է որպես չորս՝ շրջանագիծ: Եվ այն կոչվում է մին պար՝ մեկի պարը: Վեդայական ուսմունքում նյութական տիեզերքը համարվում է մայա՝ իլուզիա, աստծո մտքի արտահայտություն-շրջապտույտը: Այն նաեւ հայտնի է որպես Շիվայի պար անունով:

ՃԱՆՏԱՍ

Ճանտասը խաղի վերջին փուլն է, որ 1-ին փուլի հակադարձն է: Եթե առաջին փուլում, մեկ քարը վեր նետելով, ափի միջի մնացյալ չորս քարերը դրվում են գետնին, ապա վերջին փուլում բոլոր քարերը մեկ ճանկով պետք է հավաքվեն բռում, որը նախնական, մեկնարկային սկիզբն էր, այսինքն՝ վերադարձ նախաելակետ: Եվ արեւմտյան էզոտերիկ եւ վեդայական ուսմունքներում եւ նույնիսկ ժամանակակից ֆիզիկայում (St. Hawking, «The Universe In A Nutshell», UK, 2001), տիեզերքի արարչության շրջապտույտի վերջին փուլը՝ վերադարձ է դեպի չդիֆերենցված նախնականություն, փակ համակարգ, անսյութ տիեզերք:

Հաջորդ հանգամանքը՝ բոլոր հավատամքային հնագույն միֆական պատումներում, անդրաշխարհի դարբասամուտքը պահպանում է շունը: Հունական դիցաբանության մեջ՝ Կերբեր շունը, հին եգիպտականում՝ անիբուս-շունը, հայկական էպոսում՝ Գեորգիզը (թարգմանաբար նշ. է՝ գայլ կամ գայլաշուն), Արա Գեղեցիկ-Ծամիրամ միֆական պատումում՝ հարալեզներ-շները, Արտավազդի շղթաները կրծող շները եւ այլն: Նաեւ, շան խորհրդապաշտությունն առկա է հնագույն աստղագիտության մեջ: 12 կենդանակերպ աստեղատներում դա Կարիճ համաստեղության մոտ, քիչ հարավ, այսօրա Serpens-աստղատունն է, որ ըստ հների, Ծիր Կաթնի կենտրոն-երախի՝ «դարբասների» պահապան շան աստեղատունն է: Ըստ նորագույն գիտական հետազոտությունների, մեր գալակտիկայի կենտրոնում կա սեւ խոռոչ:

Եվ վերջապես, ՔԱՐԿՏԻԿ խաղը 6 ական համակարգի հետ աղերսելու հայտնությունը՝ մորս տատին հիշելն է. երեխա ժամանակ, մորս տատն ինձ ասում էր, որ այս խաղը՝ **«արնաբաշդի»** խաղ է:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀՆԱԳՈՒՅՆ ՀԱՎԱՏԱՄՔՆԵՐՈՒՄ ԱՍՏՎԱԾՆԵՐԻ ՀԻԵՐԱՐԽԻԱՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՆՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԹՎԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ







ՆՈՐԴԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ*[1]
ԻՆՆ ԱՇԽԱՐՀՆԵՐԸ՝
կենտրոն + 8 սֆերաները



*1- M. Hall, "The Secret Theachings Of All Ages", USA, 2000.

Տիեզերքի արարչության մասին հնագույն պատումները, ինչպես նաեւ աստվածների պանթեոնների հիերարխիաները՝ Միջագետքի, եգիպտական եւ հնդեւրոպական ժողովուրդների մոտ, միանման են: Եթե փորձենք պատումների վիպական լեզուն վերածել թվերի, այսինքն, գլխավոր աստվածների արարչական ֆունկցիաները՝ սկզբից մինչեւ վերջինը, թվային արժեքներով արտահայտենք, ապա բոլոր պատումների կառուցվածքների հիմքում կարող ենք տեսնել միեւնույն թվային համակարգը՝ 1, 1, 2, 3, 5, 8, 13... կամ՝ 1, 2, 4, 8, 12...

Պատումների վիպական լեզվին համապատասխան, «նյութական աբստրակցիայի», կամ «անսահման ներունակության» գաղափարի արտահայտությունը՝ Մեծ ՈՉԻՆՉ, ՔԱՈՍ, ԽԱՎԱՐ եւ այլն, ներկայացված է «0» (զերո)-ով[*1], որի սիմվոլը, ինչպես նախորդ գլխում ներկայացվեց՝ ՎԻՇԱՊՆ է, երկրաչափորեն՝ շրջանագիծը, որպես ծավալ՝ գունդը *(Պյութագորյան դպրոցի «սֆերան»)*: Մեկ թիվը՝ աստվածային առաջին մանիֆեստացիան է, առաջին գոյությունը, միակ ամբողջը, որն անսահման է: Հաջորդ բոլոր աստվածները՝ «թվերը», ՄԵԿ-ի տրոհումներն են *(կոտորակներ)*, եւ մեկ թվից ծնունդ-արտահայտություններ են: «10» թիվը, որը ներկայացվել է՝ ***շրջանագիծ*** եւ կենտրոնում կետ, համարվել է երկրորդ փուլ,-նոր շրջապտույտ-տրոհում՝ նոր ցիկլ:

Օրինակ, եգիպտական համակարգում, ***աբստրակտ ներունակության*** գաղափարը՝ պոտենցիալ ՆՈՒՆ- է, որից ինքնարտահայտված բարձարագույն աստվածություն ԱԹՈՆ-ը ասում է՝

Ես մենն եմ, որը դառնում է՝ երկուս,
դառնում է՝ չորս,
դառնում է՝ ութ,
Եւ հետո ես մենն եմ նորի՛ց:

[Կահիրեի Փեթ Ամոնի թանգարան, item no.1160,][*2]:

Ըստ եգիպտական հավատամքի, գոյություն ունեն յոթ (7) բարձրագույն իրականություն (ռեալություն) եւ երկու (2) ցածրադիր իրականություն: Ութ (8)-ը միջանկյալ, կապող իրականության շղթան է, իսկ 9-րդը, վերջին՝ նյութական աշխարհի իրականությունն է: Փաստորեն, Աթոնը եւ իր ութ արտահայտությունները միասին, ներկայանում են որպես ինը իրականություններ: Նույնն է նաեւ հնագույն համարյա բոլոր պանթեոններում, օրինակ՝ Նորդերի մոտ, Օդինի ինը աշխարհները եւ այլն:

Վերոհիշյալ բոլոր պատումային հավատամքներում *(Միջագետքյան, եգիպտա-*

---

*1,- Հնագույն շումերական տեքստերում «դատարկ տարածք»-ը կամ «փոսորակ»-ը ներկայանում էր ոչ թե որպես թիվ կամ որպես «Զերոյի» գաղափար, այլ որպես՝ ***անհուն ներունակություն:***

*2,- Moustafa Gadalla, ”Egyptian Cosmology”, USA, 2001, p. 56.

Աղուսյակները բերված են ըստ՝ Rachel Storm,-ի «Egytian Mythology» եւ «Indian Mythology» գրքերի (USA, 2000) վերջում տրված «Family Trees» բաժնից: Ամուսնական զույգի համար օգտագ. են՝ **(=) , (+)** նշանները:

ԵԳԻՊՏԱԿԱՆ ՊԱՆԹԵՈՆ



ՇՈՒՄԵՐԱԿԱՆ ՊԱՆԹԵՈՆ



կան, հունական, հայկական, հիթթիթական եւ այլն) աստվածային հիերարխիան իր հիմքում ունի միեւնույն թվային համակարգերի սխեման եւ «կոմբինացիաները» *(մի բան, որ մինչեւ այժմ, վերլուծող մասնագետները չեն «նկատել»):* Աստվածների ընդհանուր թվաքանակն էլ համապատասխանում է հետեւյալ սխեմաներին՝ գլխավոր աստվածությունների թվաքանակ՝ (1+8=9), փոքր համակարգ՝ (12+12=24), ամբողջ համակա*րգ*՝ (4 x 9=36), *աստվածայ*ին էոն-*ենթախավեր*՝ (7x7=49), *առաջն*այ*ին* եւ երկրորդական աստվածների ընդհանուր թվաքանակ եւ կատարյալ թիվ՝ (8 x 9=72): Արարման համակարգը սկսվում է մեծ ՈՉԻՆՉ-ից՝ անդիֆերենցյալ ամբողջ, որ տրոհվում է՝ արական եւ իգական հիմքերի. սիմվոլը երկու շրջանաշղթա, որոնց հատման միջին ձրկնակերպ օղակը կամ երկրաչափական օկտահեդրոնը, որից արարվում է գոյաբանական աշխարհը: Այս համակարգը բնութագրող լավագույն օրինակներն են հայկական «Վահագնի ծննունդը»-ը *(Մ. Խորենացի, «Պատմություն»)* եւ բաբելական «Արարման մասին» *(«The Epic Of Creation», Stephanie Dalley, p.228)* հնագույն գոհարները *(գծանկարները տես էջ 52-ում):*

Հնագույն պանթեոններում աստվածները որպես թվային «արժեք»՝ համակարգվում են հետեւյալ կերպ:

Շումերական տարբերակ. ՆԱՄՈՒ-ից մինչեւ ՆՈՒՇԿՈՒ համապատասխանում է՝ ամբողջ *(Նամու),* եւ չորս փուլ *(1.Ան+Կի, 2.Էնլիլ+Նինլիլ, 3.Նինգալ + Նանա/Սին, Ներգալ+Էրեշկիգալ, 4.Ութու, Ինանա, Դումուզի, Նուշկու)*: Համակարգում պահպանված է նաեւ ՆԱՄՈՒ +12 աստվածներ,- թվային հաջորդականությունը՝ Նամու = ամբողջ, եւ ապա՝ 2+2+4+4 հաջորդականությամբ աստվածների հիերարխիան:

Նույնն է *բաբելական պանթեոնում.* ԱՓՍՈՒ-ԹԻԱՄԱՏ աբստրակտ ամբողջից մինչեւ ԱՆՈՒ-ԱՆՏՈՒ՝ 4 փուլ՝ 8 աստվածներ, եւ ԱՓՍՈՒ-ից մինչեւ ԶԱՐՓԱՆԹՈՒ՝ 12 աստվածներ, 6 զույգ:

Եգիպտական պանթեոն. ԱԹՈՆ-ից մինչեւ Օզիրիս, ՆՈՒՆ-ից մինչեւ ՀՈՐՈՍ՝ (8 – 12):

Հունական պանթեոն. ՔԱՈՍ-ից մինչեւ Ուրանոս՝ 8, եւ Քրոնոսից մինչեւ Զեւս՝ 8:

Զրադաշտականը. Օրիմազդից մինչեւ Ամերտա 7, եւ պաշտպանիչ ոգիները՝ նույնպես- 7: Եթե ընդունում ենք, որ եղբայրները՝ Օրիմազդն ու Արիիմանը ունեն հայր (Զրվան = ժամանակ), որը ծնվել է անժամանակ անհունից, ապա նորից՝ համակարգը «լրանում է» 8 թվի հիմքով:

Վեդայականը. Դիաուսից մինչեւ ՄԱՆՈՒ՝ 8 եւ Դիաուսից մինչեւ Բրհասպատի՝ 12 (5+4+3=12) համակարգով:

Հայկական էպոս. մինչեւ Փոքր Մհեր՝ 8:

(Աղուսյակների շարունակությունը տես հաջորդ էջերում):

ԲԱԲԵԼԱԿԱՆ ՊԱՆԹԵՈՆ



Մեկից մինչեւ 8 թվերի գումարը՝ 36:

36 = (1+2+3+4+5+6+7+8):

{Տարբերությունները՝ յոթ, թե՞ ութ,- իրականում չկա, խնդիրը նրանում է, թե չդիֆերենցված ամբողջը՝ 0 - վիշապը, համակարգում հաշված է որպես՝ կենտրոն՝ մե՞կ, թե՝ ոչ}:

Վերոհիշյալ հավատամքային պատումներում, բոլորում, նաեւ պահպանված է երրորդության սկզբունքը՝ որպես արարման սկիզբ, արարման հիմք: Ըստ հնագույն թաքնագիտության *(Պյութագորասի դպրոցի փոխանցմամբ),* ոսկյա եռանկյունին գոյության հիմքն է, իսկ քառակուսին ամենայնի խորհուրդն ունի իրենում: Եւ այս երկուսի՝

3 + 4 = 7-ը՝ ստեղծում է կառույցն ամենայնի:

ՀՆԴԿԱԿԱՆ ՇԻՎԱՅԻ ԸՆՏԱՆԻՔ



ԱՐԱՐՄԱՆ ԿԱՐԳԱԿԱՌՈՒՅՑԸ ՎԵԴԱՆԵՐՈՒՄ

ԴԻԱՌՈՒՍ = **ԱԴԻԹԻ**
արարիչ | մայր

ՎԻՎԱՍՎԱՏ/ՍՈՒՐԻԱ = **ՄԱՆՋՆԱ**
արեւի աստված | խիղճ, գիտակցություն

- **ՌԵՎԱՆԹԱ** — Որսորդների պաշտպանիչ
- **ՅԱՄԱ** — անդրաշխարհի տիրակալներ
- **ՅԱՄԻ** — անդրաշխարհի տիրակալներ
- **ՄԱՆՈՒ + ԻԴԱ** — **ՄԱՐԴԿԱՅԻՆ ՑԵՂ**

ՎԵԴԱՅԱԿԱՆ ԱՍՏՎԱԾՆԵՐԻ ՀԻԵՐԱՐԽԻԱՆ

ԴՐԱԽՏ / ԱՐՔԱՅՈՒԹՅՈՒՆ

ԴԻԱՌՈՒՍ	ՎԱՐՈՒՆԱ	ՄԻԹՐԱ	ՊՈՒՇԱՆ	ՎԻՇՆՈՒ
/երկինք/	/արդարություն/	/լույս/	/կենսատու/	/արարող/

ՄԹՆՈԼՈՐՏ

ԻՆԴՐԱ	ՎԱՀՈՒ	ՐՈՒԴՐԱ	ՄԱՐՈՒԹ
/ամպրոպ, անձրեւ/	/քամի/	/կործանող/	/փոթորիկ/

ԵՐԿԻՐ

ՍՈՄԱ	ԱԳՆԻ	ԲՐՀԱՍՊԱՏԻ
/բույսեր/	հուր	/հոգեւոր առաջնորդ/

ՀՈՒՆԱԿԱՆ ԱՍՏՎԱԾՆԵՐԻ ՊԱՆԹԵՈՆ

ՔԱՈՍ
- ⇨ **ԳԵԱ** + ⇨ **ԷՐՈՍ** = ⇨ **ՏԱՐՏԱՐՈՍ** ⇨ **ՈՒՐԱՆՈՍ**
- ⇨ **ԷՐԵԲՈՍ** + ⇨ **ՆԻՔՍ** = ⇨ **ԵԹԵՐ, ՀԵՄԵՐԱ**

ՔՐՈՆՈՍ + ՌՀԵԱ = ↯

↓ **ՀԵՍՏԻԱ** ↓ **ՊԼՈՒՏՈ** ↓ **ԴԵՄԵՏՐԱ** ↓ **ՀԵՐԱ** ↓ **ՀԱԴԵՍ/ԱԻԴ/** ↓ **ՊՈՍԵՅԴՈՆ** ↓ **ԶԵՎՍ**

ԻՐԱՆԱԿԱՆ
ԶՐԱԴԱՇՏԻ ՀԻԵՐԱՐԽԻԱՆ

ԱՀՈՒՐԱ-ՄԱԶԴԱ \ ՍՊԵՆՏԱ ՄԱԻՆՅՈՒ
ՕՐՀՄԱԶԴ

իմաստուն Աստված

ԱՄԵՇԱ ՍՊԵՆՏԱ

Աստծո ուստրերն ու դուստրերը կամ Աստծո ստեղծագործության հիմքերը

ՎՈՀՈՒ ՄԱՆՈ	ԱՇԱ ՎԱՀԻՇՀԱ	ՍՊԵՆՏԱ ԱՐՄԱԻՏԻ	ԿՀՇԱՏՀՐԱ ՎԱԻՐԻԱ	ՀԱՈՒՐՎԱՏԱՏ	ԱՄԵՐԵՏԱՏ
բարի միտք /կենդանիներ/	օինականություն /կրակ/	նվիրվածություն /երկիր/	թագավորություն /արեւ եւ դրախտ/	սրբություն /ջուր/	անմահություն /բուսականություն/

ՅԱԶԱՏԱ

պաշտպանող, օգնական Ոգիներ

ԱՆԱՀԻՏԱ	ԱԹԱՐ	ՀԱՕՄԱ	ՍՐԱՕՇԱ	ՐԱՇՆՈՒ	ՄԻԹՀՐԱ	ԹԻՇՏՐԻԱ
բերրիություն, ջուր	կրակ	բուժող բույսեր	հնազանդություն, աղոթք	արդարադատություն	ճշմարտություն	Շնաստող՝ բերիության աղբյուր

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՆԹԵՈՆ ըստ՝
Գողթան երգերի (Մ. ԽՈՐՈՆԱՑԻ)

ԵՐԿ - ԻՆ + ԵՐԿ - ԻՐ

ԾՈՎԸ ԾԻՐԱՆԻ

ԲԱԲ ՏԻՐԱՆ ՎԱՀԱԳՆ

Տիեզերք-վիշապի փուլային ձեւավորման միթնոսական՝ կերպարային ներկայացումը. 6 ական համակարգ:

Տիեզերքի փուլային ձեւավորման միթնոսական ներկայացումը, ըստ «ՍԱՄՆԱ ՏՈՒՆ» էպոսի, 1+8 համակարգ է՝ ամբողջ + չորս ճյուղ: Այսինքն,- Հայր + չորս զույգ աստվածություն: Առաջինը՝ Գագիկը, սկիզբն է եւ «նման» է վերջինին՝ Փոքր Մհերին: Երկու շրջանագծերի սիմվոլներով նրանց «հարաբերությունը»՝ $R= 1/\phi$, $R'= 1/\phi^2$ է:

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՆԹԵՈՆ
ըստ՝ «ՍԱՄՆԱ ԾՌԵՐ» էպոսի



Գլխավոր աստվածները եւ նրանց ֆունկցիաների «դերաբաժանումները»:

Հնագույն հավատամքային պատումներում (էպոս-առասպելներում) աստվածների «դերաբաժանումները» եւ հերթականությունը՝ ըստ նախնականության, նույնպես «քմահաճույքի» կամ պատահականությունների արդյունք չեն: Հնագույն քրմերը բնության մեջ ամեն ինչի հիմքը համարում էին չորս տարրերը՝ ***հուր, օդ, ջուր, հող:*** Եւ սա կարող է հասկացվել ոչ թե բառացի, այլ, որ նյութը ունի չորս վիճակ՝ ***հրային, գազային, հեղուկ*** եւ ***կարծր-պինդ:***

Ըստ քրմերի պատկերացումների, մեկից մյուսի հաջորդական փոխակերպումով եւ դրանց տարբեր կոմբինացիաների շնորհիվ է «առաջանում»՝ ձեւավորվում բնությունը: Օրինակ, եթերը, որի երկրաչափական սիմվոլ-ատրիբուտը ***դոդեկահեդրոնն*** է, Արիստոտելը համարում էր Աստծո կոմպոզիցիան:

Հներն առաջնորդվում էին մի քանի «պոստուլատներով»:

1-ին՝

գոյաբանական աշխարհի ձեւավորման պրոցեսների եւ կարուցվածքների սկզբունքները ամենափոքրագույն մասնիկում մինչեւ տիեզերական կամ աստեղային գոյակցություններ՝ նույնն են:

2-րդ՝

այն, ինչ «վերեւում է», նույնը՝ «ներքեւում է» *(Հերմես Եռամեծի բանաձեւման մեջ՝ «վերեւում» եւ «ներքեւում»,-ը նկատի է առնվել հոգեւոր եւ նյութական սֆերաները)*[*2]:

Փաստորեն, հնագույն պանթեոններում աստվածներն ըստ քմահաճույքի չեն համակարգված, եւ եթե կա թվային համակարգ, ապա պատումներում նրանց ֆունկցիոնալ «դերաբաժանումները» նույնպես ***քմահաճույքի արդյունք*** չեն կարող լինել: Գլխավոր աստվածություններն իրենց իսկ ծնունդով, գոյաբանական աշխարհի «ձեւավորման մեջ» կատարում են որոշակի ֆունկցիա, եւ ըստ հին փիլիսոփաների՝ ամենայնի հիմքը հանդիսացող չորս տարրերը պետք է բնորոշեն այդ աստվածությունների «բնույթը» եւ նրանց կատարած ֆունկցիան:

Հնագույն տեքստերում առկա բնութագրումները լիովին «բացահայտում են» նրանց «բնույթը», որ համապատասխանում է՝ ***հուր, օդ, ջուր, հող*** սկզբունքին: Օրինակ,- **Աթոն՝** *հուր,* **Շու՝** *օդ,* **Թեֆնատ՝** *խոնավություն, ջուր,* **Գեբ՝** *երկիր, հող* եւ այլն: Եգիպտական պանթեոնում, որը նախնական, հնագույններից է, աստվածները «դերաբաժանված» են բնության չորս տարրերի հիմքով: Նույնն է շումերական պանթեոնում,- ***Ան՝*** հուր, ***Էա՝*** ջուր, ***Էնլիլ՝*** օդ, ***Կի*** կամ ***Զարփանթու՝*** հող:

---

*1,-The Kybalion, "A Study Of The Hermetic Philosophy Of Ancient Egypt & Greece", Chicago, 1940, p. ILL.

Շրջանաձևակված վիշապը, որ անհունի սիմվոլն է եւ իր մեջ ունի բոլոր էլեմենտների ատրիբուտների պոտենցիալը, իր «տրոհման» ընթացքում, չորս վիճակների հաջորդական անցումով, ստեղծում է իր հայելային պատկեր-տիեզերքը՝ Ոգու եւ նյութի միասնությամբ: Գերագույն աստվածությունը, որ հայտնի է տարբեր անուններով՝ ԱՆ, Աթում, Հալդի, Բրահմա եւ այլն, արտահայտվում է ներունակ (potential) նախա-տիզերքից: Նրա ֆունկցիան ինքն իրեն արտահայտելու ֆունկցիան է, եւ ինքը առաջին մոնադն է: «Ջուրը» որպես կյանքի առաջին եւ հիմնական ատրիբուտ՝ անհունի (վիշապի) բնույթն է: Հավատամքային բոլոր հնագույն պատումներում հերոս աստվածությունը սպանելով վիշապին ջրի հորդման հարուցիչն է դառնում: Վիշապի սիմվոլով այս **«նախագոյություն»** կոչվածը ներկայացնում է՝ **«ամբողջը»,** որից առաջանում են գլխավոր վեց զույգ աստվածությունները: Այսօրվա գիտատեխնիկական հնարավորությունները բացահայտում են, որ «ջրի» մոլեկուլյար կառուցվածքը, երբ սառեցնում ենք, ստեղծում է վեցանկյուն հեքսագոն: Հնագույն հավատամքներում առաջին աստվածությունը (որ նաեւ ներկայացվում է որպես անդրոգեն) միշտ աղերսվում է «ջրի» հետ եւ ունի 6 կամ 60 թվի համարժեքը: Նրա «արական կողմը» նաեւ աղերսվում է «հուր» ատրիբուտի հետ, եւ սրանց՝ ***«հրի»*** եւ ***«ջրի»*** միությունից արտահայտվում են «Երկվորյակները», որի սիմվոլիկ ծավալաձեւը՝ ***օկտահեդրոն*** է, ատրիբուտը՝ ***օդ,*** որ երբեմն հանդես են գալիս՝ «օդ» եւ «ջուր» ներկայացմամբ: Օրինակ, 60 թվային արժեքով շումերաբաբելական ԱՆՈՒ աստվածության որդիները՝ «Էնլիլ»-ը եւ «Էա-Հայա»-ն համապատասխանաբար ներկայացնում են՝ ***«օդ»*** եւ ***«ջուր»*** ատրիբուտները:

Շումերաբաբելական տարբերակ

Արական աստվածներ	իգական կողակիցները
60 - ԱՆՈՒ	55 - ԱՆՏՈՒ
50 - ԷՆԼԻԼ	45 - ՆԻՆԼԻԼ
40 - ԷԱ/ԷՆԿԻ	35 - ՆԻՆԿԻ
30 - ՆԱՆԱ/ՍԻՆ	25 - ՆԻՆԳԱԼ
20 - ՈՒԹՈՒ/ՇԱՄԱՇ	15 - ԻՆԱՆԱ/ԻՇՏԱՐ
10 - ԻՇԿՈՒՐ/ԱԴԱԴ	5 - ՆԻՆՀՈՒԵՍԱԳ
6 արական, աստվածներ	6 իգական, աստվածուհիներ:

«Կրեպտոգրաֆիկ թվային համակարգի թվերը, երբեմն, տեքստերում փոխարինում են աստվածների *անուններին:* Z. Sitchhin, «The 12th Planet», USA, 1978, p. 124.

Բաբելական հավատամքային պատումը նույնպես 6 զույգ համակարգով աստվածների հաջորդական ֆունկցիաների «բացահայտման» մասին է, որի շնորհիվ արարվում է տիեզերքը:

Բաբելական տարբերակ			Հայկական էպոս		
ԱՓ-ՍՈՒ	+	ԹԻԱՄԱԹ	Գագիկ = Կակի	+	?(անանուն)
ԼԱՀՄՈՒ	+	ԼԱՀԱՄՈՒ	Թորոս	+	Ծովինար
ԱՆՇԱՐ	+	ԿԻՇԱՐ	Սանասար	+	Դեղձուն
ԱՆՈՒ	+	ԱՆՏՈՒ	Մեծ Միհէր	+	Արմահան
ԷԱ(ՀԱՅԱ)	+	ԴԱՄԿԻՆԱ	Դավիթ	+	Խանդուդ
ՄԱՐԴՈՒԿ	+	ԶԱՐՓԱՆԻԹՈՒ	Փոքր Միհր	+	Գոհար

Հայկական «Սասնա Տուն» էպոսի երկվորյակները՝ Սանասարն ու Բաղդասարը համապատասխանում են «օդ» ատրիբուտին եւ նրանց սիմվոլը՝ ***օկտահեդրոն*** ծավալաձեւն է: Նրանք «ջրածին» են, նրանց հարուցիչը՝ «հայրը» գերբնական ***հուր-աղբյուրն*** է եղել, նրանց մայրը ***ծովի ՆԱՐ***-ն է (ջուր): Այս երկվորյակները նժույգի վրա սլանում են երկինքներում, արեւից անդին *(տարբեր գույն ունեցող աշխարհներում)* եւ, նույնիսկ արեւը նրանց չի կարող այրել: Նժույգը, զենքը՝ Թուր Կայծակին, Սանասարը գտնում է ***ծովի հատակում*** եւ նրա յոթ անգամ հզորանալը՝ կենարար ջրով լոգանք ընդունելուց է: Փաստորեն, «օդ» ատրիբուտը՝ Սանասարը, հզորանում է իր ***մորից*** եւ ***հորից***՝ «ջրից» եւ «հրից»:

հայր-մայր



հուր-ջուր / իկոսահեդրոն

Ողդի/եր-կորյակներ



օդ / օկտահեդրոն

Հնդեւրոպական հավատամքային պատումների բոլոր աստվածությունները թվում է թե «կռվազան» են: Նրանք բոլորը ունեն միեւնույն կայծակ-զենքը եւ տարբեր աշխարհներում՝ քաջանց երկիր, կանաչ երկիր, հմայքի երկիր եւ այլն, նրանց ֆունկցիան, առաջին հայացքից, կռվելն է: Սակայն, դա միայն առաջին հայացքից է թվում: Նրանք տիեզերքը ձեւավորող աստվածություններ են եւ, միայն «կռվում» են իրենց հակոտնյա իպոստասների հետ: Օրինակ, «Սասնա Տուն» էպոսում, «արական հուրը» անդրոգեն Լուսնից «փախցնում է» լուսնի «իգական մասը՝ որպես իրեն կին» եւ միանալով նրան՝ հղի թողնելով Ծովինարին, ստեղծում է նոր սերունդ, նոր հաջորդականություն: Սենեքերիմին *(սիմվոլը՝ լուսին)* խափանողը՝ նրա հարսնացու լուսին-Ծովինարին ***(ըստ էպոսի Ծովինարը 14 օրնկան լյուսնյակի էր նման, երբ որպես հարսնացու ճանապարհվեց Սենեքերիմի թագավորություն)*** հղի թողնողը, նրա հակոտնյան՝ գերբնական ***հուր-աղբյուրն*** է, երբ կույսը խմում է հուր-ջրից:

Երկվորյակների՝ Սանասարի եւ Բաղդասարի ֆունկցիան «անվերջ կռվելը» չէ, այլ, նրանց միակ եւ հիմնական ֆունկցիան՝ տիեզերական ձեւավորումը շարունակելու համար, հմայքների, ոգիների անիրական աշխարհից տիեզերական մորը՝ Քառասուն Ճյուղ Դեղձուն Ծամին «իրական աշխարհ» բերելն է, եւ նրա միջոցով շարունակական վերարտադրություն ապահովելն է, որ ինքնին՝ տիեզերքի ձեւավորման պրոցեսն է: Դեղձուն Ծամը տիեզերական նախաձուն է, որից, նորից պիտի սերվեն, այս անգամ երեք առանձին-առանձին աստվածություն-ատրիբուտներ՝ օդ, ջուր, հուր = Ձենով Օհանը *(ամպրոպի աստվածություն)*, Յոան Վերգոն*(անձրեւի աստվածություն)* եւ Մեծ Միհրը*(հուր-աստվածություն):*

ԱՍՏՎԱԾՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԹՎԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐ





Հնագույն հավատամքներում, թվերը եւ չափումները աղերսվում էին աստվածների անունների եւ «միստիկ ծավալների» հետ: Ցավոք, այս ակնհայտ, պարզ ճշմարտությունը չի նկատվել, եւ առ այժմ, որքան մեզ հայտնի է ***«հնագույն հավատամքները որպես արարչության մասին թվային համակարգեր»*** մոտեցումը որդեգրված չի եղել ո՛չ լեզվաբանության, ո՛չ պատմագիտության եւ ոչ էլ հնագույն միֆոլոգիայով զբաղվող գիտնականների կողմից:

Ըստ հնագույն հավատամքի, արարչությունը սկսվում է աստվածների ծնունդ-արտահայտությամբ, որտեղ աստվածները «հանդես» են գալիս թվերի լեզվով եւ «արտահայտվում» են միստիկական ծավալների խորհրդաբանությամբ:

Եգիպտական Աթումը «1»-ն է, որ դառնում է երկու հատ մեկ՝ «I - I» որպես՝ Շու եւ Թեֆնատ: Հավատամքային տեքստում Աթումն ընդգծում է, որ հիմա երեք աստվածներ են իր մեջ: Շարունակելով, Աթումը 1+8 համակարգով «արարում՝ ձեւավորում» է տիեզերք-աշխարհը:

Վեդայական Բրահմը նույնպես թվային արժեքների ու ծավալների հետ աղերսվող ներկայացում է ստանում, երբ նրա օրվա 12 ժամերի եւ 100 տարվա կյանքի տեւողությունը արտահայտվում է՝ ծավալային եւ ժամանակի սիմվոլներով:

Պյութագորյան դպրոցը (մ.թ.ա. 7-րդ դար) «կետը» {●} որպես՝ «մեկ», համարվում էր սկիզբն ամենայնի: Եւ «կետից» մինչեւ *օկտահեդրոն* ու *դոդեքահեդրոն* ծավալային չափաձեւերը համարվում էին «կետի» աստվածային տրոհում-արտահայտումները:

Ըստ Արիստոտելի («METHAPHYSICS-AS»), պյութագորյան դրպրոցը թվերի նկատմամբ ուներ հետեւյալ վերաբերմունքը՝

« *Դրախտը ներդաշնակություն է եւ թվեր,*
Թվերը էությունն են ամբողջի,
Իրերի գոյությունը՝ թվային արտահայտություններ են »:

Հին Կտակարանի ***«Աստված աշխարհն արարեց 6 օրում»*** «պոստուլատը», տիեզերական լոգոսի՝ Ադամ-Կադմոնի, Հորոսի, Փոքր Մեների թիվն է, որ ժամային արտահայտությամբ՝ 144 կամ



sidi = քառակուսու կողմ

144000 է, *{իրավամբ՝ 6 (օր) x 24 (ժամ) =144 ժամ, մոտեցման արդյունք է, որ նոր կտակարանում, Հովհաննու Հայտնության մեջ, իսրայելի 12 ցեղերից 144000-ը փրկվածների քանակն է}* եւ հնագույն շումերական 6-60 թվային հիմքով համակարգի ազդեցության արդյունքն է:

Վեդայական Բրահմի մեկ օրը՝ {60^3 x 20}, նույնպես ժամային՝ «60»-ական համակարգ է, եւ նրա հոգեւոր, ծածկագիր անունը՝ ***թիվ*** է:

Հայկական էպոսում դիցերի անունները՝ ՍԱՆ-Ա-ՍԱՐ, ԾՈՎԻ-ՆԱՐ (ՍԱՐ = ՇԱՐ = 3600, ՆԱՐ < ՆԵՐ = 600) եւ այլն, հայկական լեռնաշխարհի հնագույն շրջանի աստվածների թվային ծածկանուններն են:

<u>Արարչության մասին հնագույն հավատամքը՝ համակարգ է նաեւ իր թվային ներկայացմամբ</u>:



X^2= sidi ² = mehr =
= քառակուսու մակերես:
Եթե sidi-ն = 60, ապա ունենում ենք 60 x 60 սրբազան չափը՝ մեկ IKU-ն, եւ mehr-ը դառնում է սրբազան քառակուսու մակերեսը՝ 3600 (60x60):

«Սասնա Տուն» էպոսում մի շարք դիցանուններ՝ թվերի ու չափման միավորների համարժեքային անուններ են, որոնք զուգահեռաբար, հավատամքային աստվածների թվային՝ «ծածկագրային» անուն-արտահայտություններն են: Օրինակ, ՄԻՀՐ = ՄԸՀԷՐ = meẖur = «ժամանակ» (հիթթիթերեն), ՍԱՆԱՍԱՐ = ՍԱՐ - Ա - ՍԱՐ = ՇԱՐ - Ա - ՇԱՐ = 3600 - Ա - 3600: (ԾՈՎԻ) + ՆԱՐ < ՆԵՐ = 600 եւ այլն:

Աստվածների այս անունները, փաստորեն, հնագույն Միջագետքում, մաթեմատիկական գործողություններում օգտագործվող տերմին-բառեր են եղել:

Շումերների մոտ ***mehr***-ը թվաբանական տերմին էր: Առաջին բաբելոնյան շրջանից մեզ հասած մաթեմատիկական խնդիրներում, բաբելացիք **«քառակուսու»** կողմի համար օգտագործել են՝ **sidi** տերմինը: **«Քառակուսու»** մակերեսի համար օգտագործել են՝ **mehr** տերմինը: Եվ,- **$sidi^2$ = mehr:** Այս տերմինների անուններն*1 օգտագործել են խորանարդի ծավալը չափելու, հաշվելու եւ այլն, համար: Շումերական «6» թվի անունը՝ **šaš** էր (հայերեն՝ վեց > վեց > վիշապ), «60» թվի անունը՝ **šuš,** «600» թվի անունը որպես տարեշրջան՝ **nēru***2 եւ այլն: Դժվար չէ «կռահել», որ եթե շումերական ժամանկներից սրբազան համարվող չափը՝ **1 IK=** = 60 x 60-ի, ապա՝ համապատասխան խորանարդի մեկ նիստի՝



*1,- Dick Teresi, "Lost Discoveries", USA, 2002, p. 50.
*2,- Հր.Աճառյան, «Հայոց լեզվի պատմություն», h. I, Երեւան, 1936թ., էջ 199:

քառակուսու, մեկ կողմի երկարությունը՝ sidi-ին, հավասար է՝ 60-ի: Ուրեմն՝ 60^2 = mehr = 3600ը՝ հին շումերական ամբողջն է, շրջանն է՝ Šar = 3600, հայկական՝ ***շար,*** սիմվոլը՝ «O» շրջանը: Շումերական Նոյի՝ Ուտնապիշտի տապանը խորանարդ է՝ յուրաքանչյուր նիստը 60 x 60 չափով. խորանարդի մակերեսը կլինի՝ 60^3=21600, քանի որ խորանարդն ունի 6 նիստեր եւ սրա մեկ նիստի մակերեսը 3600 է: Այս խորանարդը, փաստորեն, շումերական սրբազան չափի հիմքով է՝ մեկ IK = 60 x 60: 2160 տարին, երկրագնդի առանցքի տատանման «շնորհիվ»՝ մեկ զոդիակային աստեղատան «մեջ լինելու» տեւողությունն է *(Precession, առաջընթացության երեւույթ)*:

Հին Կտակարանում (Եսայի, գլ. 7, 3 - 4) Յեհովան ժամանակների մասին իր նշանն է հայտնում, որ *ընդերքից մինչեւ երկինք խորհուրդ է՝* «**Մահէր Շալալ Հաշ Բազ**»: Իրականում՝ Մահէր = Մահուր, հիթթիթերեն նշանակում է՝ ***Մեհուր*** = ժամանակ, եւ *սրբազան համարվող չափի*՝ 1 IKU = 60 x 60 հիմքով *խորանարդի* հետ է առնչվում: 60 x 60 = 3600, որը սբազան համարվող խորանարդի մակերեսն է, կարելի է համարել հին Միջագետքյան մեկ ժամը *(սա նաեւ այսօրվա մեկ ժամն է վայրկյաններով հաշված)*, որ օրվա 24 ժամերի առումով կլինի՝ 86400, լուսնային, սխեմատիկ մեկ տարվա՝ 360 օրվա կտրվածքով՝ 31104000, որը բազմապատկած 100 տարով՝ 311040000, տալիս է Բրահմայի կյանքի տեւողությունը: Սա տիեզերական մարդու՝ Փոքր Միերի, Հորոսի կամ Ադամ-Կադմոնի թիվն է:

Նոր կտակարանում, աշխարհի վերջում, սուրբ քաղաքի՝ որպես հավասարակողմ խորանարդի «պարսպի» չափը՝ 144000 է: Այսինքն, 60x60=3600 սրբազան խորանարդի մեկ նիստի մակերեսը եթե բազմապատկենք 4-ով, քանի-որ քառակուսի քաղաքը քառանիստ պարիսպներով է, ապա կստանանք՝ 144000 *(Յայտնություն, գլ. ԻԱ, 15-17):* Սա շումերական ժառանգություն է: **Ուրեմն, Միհր / mehr - ը՝ թե՛ տերմին է հների մատեմատիկական գործողություններում, թե՛ ցուցում է տիեզերական ժամանակը:** Ինքը ՄԱՀՈՒՐ՝ Mah+ur = Mah+er կամ ՄԱՀ-ՈՒՐ-ը, որտեղ բառանվան երկրորդ մասը՝ ՈՒՐ > ԷՐ < ԱՐ, համարժեք հնչյունային ձեւափոխության ենթակա է, եւ միտում է «արեւ» իմաստը: Me‹ur հնագույն անունը, որ հիթթիթերեն նշանակում է՝ «ժամանակ», հավաքական գաղափար-անուն է, որ հնդեւրոպական լեզուներում եւ հայերենում ներկայանում է որպես՝ «լուսին» եւ «արեւ», քանի-որ Միհր-Միթրա աստվածությունը՝ 'Mihr u Mâh' անունով, «արեւի» եւ «լուսնի» համար ընդունված արտահայտություն էր:

* meH- «լուսին», եւ arēw «արեւ» իմաստները *[հայ.՝ arēw, սանսկրիտ՝ raví-, հիթթիթ. ‹ar(u)wanai-*[*1], հուրիերեն՝ hur «հուր»*[*2]*]* պատահական չեն, քանի-որ

*1,- T. Gamkrelidze & V. Ivanov, նույն աշխատություն, էջ 590-591:
*2,- Ն. Վիրապեան, «Հայ ժող. Ծագումը», Լոս Անջելես, 1993թ., էջ 15:

Միհրի բոլոր տաճարներն ունեն 24 սյուններ, որոնք խորհրդանշում են օրվա 24 ժամերը՝ 12-ը ցերեկային, 12 գիշերային *(դեկտեմբեր 25՝ գիշերահավասար):* Եվ ՄԸՀԵՐ = ՄԱՀԱ - ԱՐԱ անունը խորհրդանշում է գիշերային իպոստասին՝ ***Լուսին,*** որի «իշխանությունը» գիշերային 12 ժամերն են, եւ ***Արեւ*** իպոստասին, որի «իշխանությունը»՝ օրվա 12 ժամերն են:

Բրահմայականության մեջ, հոգեւոր վարպետները՝ սվամիները, գերագույն Աստծո անունը արտաբերում են «Narayan Hari» (Նարայան Հարի)*1: Սա գերագույն էակի՝ Բրահմայի թե՛ անձնանունն է **{Hari > Հարի(ք) > Հայ(ք)}**, եւ թե՛ թվային անունը՝ (Nar-a-yan): Ու թեեւ Hari եւ Narayan անունները ստուգաբանված են որպես՝ «ազնիվ» -Hari*2, եւ մարդ (Nar) *3, որ վարում է (yana)*4 քառանիվ կառքը *(նյութական տիեզերքը),* սակայն միեւնույն ժամանակ, Բրահման՝ քառակողմ, քառագլուխ էակ է համարվում, որը նաեւ ցուցում է արարչությունը որպես ամբողջից տրոհվելով արտահայտվելու թվային համակարգ: Մյուս կողմից, Բրահմայի 12 ցերեկային ժամերը՝ 4 մլրդ. 320 մլն. մարդկային տարի է, եւ բաժանված է **4** ժամանակային մահայուգաների՝ 1) **8 x 60³,** 2) **6 x 60³,** 3) **4 x 60³,** 4) **2 x 60³**, որոնք իրականում ***(թվերը, թվային համակարգերը, անունները)*** Միջագետքյան ծագում ունեն, եւ խորանում են մինչեւ շումերական թվային՝ 60-ական հիմքով համակարգ, օգտագործելով հնագույն շումերական չափական միավորների անուններ: Այսօրվա 1 ժամը = 60րոպե, 1 րոպեն = 60վրկ., շրջանագիծը = 60 x 60 = 3600, որը՝ 360° է եւ այլն, Միջագետքյան ժառանգություն է*5:

Նոր կտակարանյան սատանան՝ ՆԵՌ-ը, գազանը, որն աղերսվում է 6 թվի հետ *(« եւ գազանի թիվը՝ 666 էր »*6, թաքնագիտության մեջ 666-ը արեւի կոդ-թիվն է),* իրականում իր անունը «ստացել» է շումերական վեց հարյուր թվի անունից՝ ՆԵՌ < ՆԵՐ < nēru = 600, որը 600 տարեշրջանի անվանումն է, հունարեն՝ neros, հայերեն՝ Ծովի-***նար***, շումերների մոտ՝ **nēru**: Հայերեն՝ ներ(ք) -ին, ԻՆ>ԱՆ>ՀԱՆ – ի ներսը, նաեւ՝ «նախաշրջան», որը իգական հիմք ունի *(ՀԱՆ > ԱՆ = ANNA = հնդեւրոպական մեծ մայր, աստեղային մայր, astral mother):*

Հնագույն հավատամքներում, կոսմիկական մեծ մայրերի կամ նախամայրերի՝ տիեզերական չդիֆերենցված նախագոյության անունները *(որոնցից արտահայտվում է գերագույն արական աստվածությունը),* սիմանտիկ նույնականություն ունեն՝

---

*1, – Swami Rama, "Living With the Himalayan Masters", 1978, USA, p. 182.
*2,- T. Gamkrelidze & V. Ivanov, "Indo-European & the Indo-Europeans", 1995, NY, p. 849.
*3, – նույն աղբյուրը, էջ 174:
*4, – նույն աղբյուրը, էջ 627:
*5 – B. L. Van der Waerden, "Science Awakening - II", 1974, USA, p. 308.
*6- Նոր Կտակարան, Հովհանու հայտնություն, գլ. ԺԳ, 18:

ՆՈՒՆ	ՆՈՒԱՐԴ	ծովի ՆԱՐ	ՆԱՐԻ	ՆԵՐ(nēr)= 600
եգիպտ.	**հայկ. դիցապատ.**	**հայկ. էպոս**	**հնդկական**	**շումեր. թվանուն:**

Եթե հնագույն հավատամքներում «6» թիվը համարվում էր աստվածային՝ հոգու («3») եւ նյութի («3») միացություն, հոգին նյութականի մեջ արտահայտվելու շրջափուլի թիվ, իսկ «9» թիվը՝ նեգատիվ, որպես մատերիալ տիեզերքի գոյության չեզոքացում-լուծարում, որպես շրջափուլի վերջ, ապա քրիստոնեության ժամանակ, քրիստոնեական աշխարհամերժությունը սրանց իմաստները ***շրջեց***՝ նյութական աշխարհի արտահայտման 6 թիվը համարվեց «ատելի», իսկ նյութական աշխարհի լուծարման թիվը՝ 8 կամ 9-ը՝ «աստվածային»:

Հնագույն հավատամքներում՝ «6», «60», «600» թվերը համարվել են ամենայն գոյության հիմքը, ծնողը եւ համարվել են սրբազան *(օր.՝ Միջագետքյան Ուտնապիշտիի տապանի մակերեսը 60 x 60 = մեկ IKU է, որը սրբազան չափ է),* եւ հնագույն աստվածների անունների գաղափարագրերն այս թվի՝ 6, 60 հիմքով, ստացված թվային արժեք ներկայացնող բառեր են:

Հայկական Ծովի-ՆԱՐ, վեդայական ՆԱՐ-Ա-ՅԱՆ (ՆԱՐ եւ ՆԱՐԻ) անունները, ըստ իս, աղերսվում են շումերական ՆԵՐ = **nēru** = 600 թվի հետ: Հին Կտակարանում, ՆՈՅ-ը «ջրհեղեղի ժամանակ» 600 տարեկան էր:

«Վաղնջական հնդեւրոպական տրադիցիաներում որոշ թվեր ձեռք են բերել հատուկ խորհրդապաշտական արժեքներ եւ, արարչության հետ կապված մի շարք առաջնային աստվածությունների անուններ սերտորեն աղերսվում են թվերի եւ դրանց անունների հետ» [1]:





Փաստորեն, «Սասնա Տուն» հնագույն հավատամքային պատումում, որոշ գլխավոր աստվածությունների անուններն իրենց հիմքում ոչ թե այդ աստվածությունների անձնանուններն են, այլ ***կենդանակերպ սիմվոլների*** անունները, ինչպես նաեւ ***ծածկանունները՝ թվային եւ երկրաչափական*** միստիկ համարժեքների անունները: Օրինակ, Քեռի Թորոսը ***(ՅՈՒԼ= ՏԱՎԱՐ = Taurus = The Bull of Heaven, երկնային ցուլ)*** աղերսվում է «4» եւ «40» թվերի հետ *(40 փահլեւանների տան գլխավորը),* եւ ***վեցոտանի լազգի ձիով է շրջում:*** Հայտնի է, որ հնդեւրոպական **ԹՀՈՐ** աստվածությունը ***(Թհոր = Թնշուբ = Թնյշնբա = Թորգոմ = Քեռի Թորոս = Տավար = ՅՈՒԼ = Taurus)*** աղերսվում է արարչության չորրորդ օրվա հետ: Սրա թաքնագիտական նշանակությունը եւ սիմվոլը՝ խորանարդն է, որը քառանկյուն է եւ ունի 6 նիստ *(հայկական էպոսում Քեռի Թորոսը քառասուն քաջերի գլուխն էր եւ 6 վեց ոտանի լազգի ձիով էր շրջում):* Նախահնդեւրոպական Թոր աստվածությունը, հնագույն Թեյշեբան, փաստորեն, զուգահեռաբար, աղերսվում է քառագլուխ վեդայական Բրահմի

*1,- T. Gamkrelidze & V. Ivanov, նույն աշխատություն, էջ 748-752.

հետ, որի 12 ժամը՝ 60^3 x 20 = 4 մլրդ. 320 մլն. մարդկային տարի է:

Երկրաչափական ծավալներից հավասարաչափ խորանարդը , որի յուրաքանչյուր նիստը եթե ընդունենք շումերական սրբազան չափը՝ (60 x 60 = մեկ IKU), որ Նոյի՝ շումերական Ուտնապիշտի տապանի մակերեսի հետ է աղերսվում, ապա խորանարդի ներքին եւ արտաքին մակերեսների գումարը՝ 60 x 60 x 60 =216000 x 2 = 60^3 x 2-ը, տաս անգամ մեծացնելով՝ 60^3 x 20, նույնպես կստանանք վեդայական գերագույն աստվածության ցերեկային 12 ժամը, որ մարդկային 4 մլրդ. 320 մլն. տարի է, եւ հիմքում, նորի՛ց՝ շումերական 60-ական հենքով թվային համակարգն է:

Թվային հնագույն համակարգ («6», «60», «600»)*1

Ըստ Դիկ Թերեսիի, շումերաբաբելական մաթեմատիկայի զարգացումը՝ այսօրվա ուսումնասիրությունների եւ բացահայտումների հիմքով, թվում է ավելի անկատար էր եգիպտականից *(Դիկ Թերեսին հավանաբար չի անդրադարձել, որ իր հիմքում, շումերների թվային համակարգն ամբողջի եւ մասի երկրաչափական ներկայացումն է),* սակայն նրանց մոտ 10-ական եւ 60-ական համակարգերի միացյալ կիրառումը յուրօրինակ կատարելություն ուներ: Շումերների պարզ նշանագրությունն այսպիսի տեսք ուներ՝

1	10	60	600	3600
	a =10	šuš = 60	nēru =600	šar = 3600

Հետագայում, հին բաբելոնյան շրջանում (մ.թ.ա. 2500-2000), ստեղծվեցին՝ «1» թվի համար՝ «խոփի» (T), եւ «10» թվի համար՝ «թեւերի» (<) տեսքերով երկու նշանագրերը: Բայց կային երկու կարեւոր կամ սրբազան «հիմք-մոտեցումներ»: Թվի (նշանագրի) արժեքը որոշվում էր նրա տեղադրությամբ, դիրքով: Եւ երկրորդ՝ «60»-ը մնում էր թվային հաշվումների համար որպես հիմք: Ահա օրինակ, թե ինչպես էին գրվում 4, 28, 59 երեք թվերը՝ «60» -ի հիմքով՝

95 = 60(1) + 35:

Օրինակ, «95» թիվը գրվում էր այսպես՝

4: 28: 59:

Առաջինը՝ «խոփը» ուներ՝ «60»-ի համարժեքը, երեք թեւերը՝ երեք «10»-ականներ են = 30, վերջին հինգ «խոփերը»՝ հինգ միավոր: Հին բաբելացիք չունեին

*1- Dick Teresi, “Lost Discoveries”, 2002, USA, p. 47-49.

«զրո» նիշ եւ դրա համար նշանագրերի միջեւ թողնում էին ***դատարկ, բաց տարածություն կամ փոսորակ էին անում:***

Շումերական ժամանակներից սրբազան համարվող չափը՝ 1 IKU-ն հավասարաչափ քառանկյուն է = 60 x 60, եւ նրա կողեզրը, հին բաբելական շրջանում, կոչվում էր **sidi**, իսկ մակերեսը գտնելու համար անհայտ կողի քառակուսու համար՝ X^2**,** օգտագործում էին՝ **mehr** տերմինը*[1]: Ուրեմն՝ 60^2 = mehr = 3600 է, որ հին շումերական ՇԱՐ-ն է, շրջանն է՝ Šar = O, որ նաեւ՝ «ամբողջ» գաղափարի սիմվոլն է: Մ. Խորենացին հին ժամանակագրության մասին խոսելիս, նույնպես օգտագործում է ՇԱՐ-ը՝ որպես 3600 տարեշրջանի անվանում: Ուրեմն, 3600 թիվը, եթե վերաբերում է ժամանակին, ապա անվանվում է՝ ***ՇԱՐ***, եթե 3600 թիվը չափագրության առումով է արծածվում, ապա շումերական սրբազան չափը՝ 60x60= կոչվում է՝ ***mehr =*** X^2: ***Mehr*** **շումերական մաթեմատիկական տերմինը, հնդեւրոպացի հիթթիթների լեզվով նշանակում է՝ Me<u>h</u>ur = «ժամանակ», ինչպես նաեւ՝ մ. թ.ա. 2-րդ հազարամյակի առաջին կեսում, գլխավոր աստվածություններից մեկի՝ Միհր-Միթրայի անունն է:** Հնագույն շումերական սրբազան չափի անունը՝ ***1 IK*** հնչում է՝ ***«այկ»,*** որը՝ ***մեկ ամբողջն է***, որ հետագայում գրվել է մեկ խոփի սեպագիր նշանով, սակայն «խորքում»՝ 60 x 60 չափն է: ***Մեկ***-թիվը որպես «սկիզբ», որպես արարչության առաջին մանիֆեստացիա, պետք է նաեւ աղերսվի հավատամքի եւ առաջին աստվածության հետ: Օրինակ. հին բաբելական *(մ.թ.ա. 3-2-րդ հազարամյակներ)* երկնքի աստված Անուից սերված ԱՆՇԱՐ եւ ԿԻՇԱՐ աստվածների առաջին զույգի անունները ստուգաբանվում են որպես ԱՆ՝ «երկինք» + ՇԱՐ՝ «3600» (շրջան) եւ ԿԻ՝ «երկիր, կին» + ՇԱՐ՝ «3600» (շրջան): ԱՆՇԱՐ աստվածության անունը նշանակում է՝ «ամբողջ երկինք»*[2], որտեղ ԱՆ = երկինք, ՇԱՐ = ամբողջ: Այսինքն, այս աստվածների անունները թվեր եւ երկրաչափական սիմվոլներ են: Եվ, մեկ ***IK,- «այկ»*** սրբազան չափի այս անունը շումերաբաբելացիների մոտ, առաջին աստվածության ալտերնատիվ անունը պետք է լինի: Նրանք չունեին «h» հնչյունը *(ինչպես Վանի բարբառում է)*, փոխարենը կամ գրում էին՝ ***«խ»*** կամ հիմնականում բաց էին թողնում: Այնպես-որ սրբազան չափը՝ «այկ»-ը՝ «խայ+կ», «հայկ»՝ ՀԱՅԿ աստվածությունն է:

Եգիպտական՝ **hikē** մանիֆեստացիայի հայր աստվածությունը, Աթումի գլուխից ծնված առաջնային աստվածությունն է, որ համարժեք է՝ «մեկ, առաջին» թվին, ըստ իս, աղերսվում է հնդեւրոպական՝ ***oi-k^h-** ձեւին, որից՝ միտանիական՝**aika-**, սանսկրիտ՝ **e´ka-,** լատին՝ **ūnicus,** «մեկ, միակ» իմաստ-

---

*1, - Dick Teresi, “Lost Discoveries”, USA, 2002, p. 50-51.

*2, - Stephanie Dalley, “Myths From Mesopotamis”, Oxford, 2000, p. 317.

Աղուսյակ #1

Թվեր	Բիայնական	Եգիպտական	Սեպագիր	Խեթա-լուվիական
1	•			
3	⁝, ∴, ∴, ∴, ∴, •••			
5	⁘, ⁘, ⁘, ⁘, ⁘, ⁘			
10	⊙, ⌉ (?)			—
100	×, ⌣ (?)			(?)

Աղուսյակ #2

Բիայնական	Խեթաս-լուվիական	Շումերական	Եգիպտական	Միջնադարյան հայկական
a; Արև	su, su 4 (<siuni ?)		Արև	Արև
nu	nu < nuwa «9»			
Աստված (ային) Երկինք, երկնային	Երկինք, երկնային	Օր, արև, ժամանակ		
Haldi Աստված		Տեր		
Haldi Արարիչ	Տեր	Մեծ		Սկիզբն
Առավոտ	?			Առավոտ
Teišeba Ցուլ	Ցուլ	Հերոս	Կատաղի	Ցուլ
Teišeba (?)	Tešub			
Քուրմ, երկրպագող				Կուսապաշտ
Ականջ			Ականջ	
Կենաց ծառ / անմահություն	Կենաց ծառ			Անթառամ

* Ներկայացված աղուսյակները՝ Ա. Մովսիսյան, «Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը» գրքից, Երևան, 2003թ., էջ 37, 39:

ներով՝ «մեկ» թվը որպես «ամբողջ» բնորոշող բառերն են[*1] ***(հայերեն՝ m'e'k, miak):***

Հին բաբելական սալիկները պարզում են, որ նրանք գիտեին քառակուսի արմատ 2-ը՝ 1. 41421297 եւ 1. 41421356237309 չկրկնվող հաջորդականությամբ, ինչպես նաեւ ծանոթ էին ՊԻ=π թվի հետ, դրա արժեքը սկզբում ընդունելով եւ օգտագործելով «3»-ը, իսկ հետո՝ π =3,125-ը, շրջանագծի մակերեսը հաշվելու համար *(ինչ խոսք, π =3,14 ճշգրտությունից շեղումը մեծ էր):* Պյութագորասի հայտնի թեորեմը՝ $\mathbf{a^2 + b^2 = c^2}$, բաբելացիք գիտեին Պյութագորասի ծնվելուց 1200-1500 տարի առաջ[*2]:

<u>Հայկական լեռնաշխարհի թվային համակարգը</u>:

«Ի տարբերություն Եգիպտոսի, Փոքր Ասիայի, սեպագիրը գործածող Միջագետքի եւ հարակից երկրների, հայկական լեռնաշխարհում, թվերի նշումները կատարել են ոչ թե գծիկներով, սեպերով կամ այլ սիմվոլիկ նշաններով, այլ կետ-շրջանակներով[*3]:



«1-9 թվերի համար կետային նշումներից բացի, ունենք նաեւ ուղղահայաց գծիկներով նշաններ, որոնք հանդիպում են Թոփրաք Կալեում, Արին Բերդում ու Այանիսում»[*4]*:*

Թվերի կետային նշումը, լինելով հայաստանյան երեւույթ, գալիս է դեռեւս ժայռապատկերներից. բիայնական մեհենագրության մեջ վերջինիս լայն կիրառումը այդ գրային համակարգի տեղական ծագման ապացույցներից մեկն է»[*5]:

Թվային միստիցիզմը՝ շումերական եւ հայկական լեռնաշխարհի թվային համակարգերը, «սկզբունքայնորեն» չեն տարբերվում: Թեկուզ առաջինը՝ «6-ական», իսկ երկրորդը՝ «9-ական» համակարգի հիմք է ենթադրում, սակայն առաջինը ենթադրում է՝ ժամային(6-60), երկրորդը՝ ծավալային(1+8) չափում, եւ երկու դեպքում էլ՝ ամբողջ շրջանագիծը՝ (O), երկու համակարգերով էլ՝ 360° կամ՝ շումերական շրջանի համարժեք՝ 3600-ի է հավասար (**6 x 6 = 36**, **4 x 9 = 36**), 60x60=3600, 40x90=3600:

Նախորդ էջում բերված աղուսյակ #2- ից պարզորոշ երեւում է, որ հայկական լեռնաշխարհի եւ շումերական թվերի հետ աղերսվող սիմվոլները միանման են, ինչպես նաեւ հանդես են գալիս որպես հավատամքային գաղափարագրեր:

---

*1- T. Gamkrelidze & V. Ivanov, նույն աղբյուր, էջ 741:

*2, - Dick Teresi, "Lost Discoveries", 2002, USA, p. 50-51.

*3,*4,*5 -Արտակ Մովսիսյան, «Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը», Երեւան, 2003թ., էջ՝ 37, 39, 33: Հայկական թվային համակարգը 60 թվի հիմքով, տես՝ էջ 84:



Հնավայրեր, որոնցից հայտնաբերվել են խեթա-լուվիական և Վանի թագավորության մետենագիր բնագրեր

Հայկական լեռնաշխարհի թվային համակարգը:

Քարտեզը՝ Ա. Մովսիսյանի «Նախամաշտոցյան Հայաստանի Գրային Համակարգերը» գրքից:

1. Կարմիր բլուր
2. Արին բերդ
3. Նոր Արեշ
4. Երևանի բիայնական դամբարան
5. Երևան Ա և Բ
6. Արմավիր
7. Արագած
8. Օշական
9. Դովրի
10. Հակկո
11. Հոռոմ
12. Նորատուս
13. Գավառ
14. Սարուխան
15. Գեղհովիտ
16. Ծովինար
17. Կարճաղբյուր
18. Իգդիր
19. Արտաշատ
20. Եղեգնաձոր
21. Ալիշար
22. Կալեհ-օղլու
23. Բաստամ
24. Էվոդլու
25. Լիվար
26. Սեկենդել
27. Ուշնավիե
28. Հասանլու
29. Զիվիե
30. Պատնոց
31. Այանիս
32. Թռիլրաք կալե
33. Հայկաբերդ
34. Հիրկանիս (Գիյիմլի)
35. Կայալի-դերե
36. Դիարբեքիր
37. Ալթին-թեփե
38. Նորշուն թեփե
39. Քորուջու թեփե
40. Թեփեջիք
41. Շիրզի
42. Իշփեքչուր
43. Քյոթյուկալե
44. Կարակույու
45. Գյուրյուն
46. Դարենդե
47. Փալանգա
48. Կարահյուլուք
49. Իզգին
50. Ասլանթաշ
51. Մալաթիա (Ասլանթեփե)
52. Անչոզ
53. Ադիյաման
54. Սամոսատ (Շամշատ)
55. Բոյբեյփինարի
56. Կալաքենդ

Հավելում

«Արխայիկ հնդեւրոպական տրադիցիաներում որոշ թվեր ձեռք են բերել հատուկ սիմվոլիկ արժեքային նշանակություն: Թվային սիմվոլիզմը արտահայտվում է դեռեւս վաղ հնդեւրոպական տրադիցիաներում»[*1]:

Դիոգինես Սոտիկը, որը ճանաչված էր որպես Դիոգինես Բաբելացի, հավատում էր, որ շրջափուլը՝ տիեզերական մեծ տարին՝ 360x18000=30x60^3 տարի է: Պյութագորասը (մ.թ.ա. 7-րդ դար), որի «աշխարհայացքը» առավել հին դպրոցների՝ եգիպտական եւ բաբելոնյան ազդեցություններից ձեւավորված աշխարհճանաչողություն է *(տես՝ B. L. Van Der Waerden, "Science Awakening", II, p. 124),* համոզված էր, որ բոլոր դեպքերը հավերժական շրջապտույտում՝ կրկնություններ են: Օրինակ, Դիկայիարքոսի մոտ, որի միջոցով Պյութագորասի «դասերը» մեզ են հասել, կարդում ենք. *«Պյութագորասն ասում է…, որ ամեն ինչ եթե մեկ անգամ պատահել է, կրկնվելու է ժամանակային հաջորդ շրջափուլում եւ ոչինչ իրականում նոր չէ» (Porphyrios, Vita Pyth., 19, p. 26, Nauck):* Օրփեուսը եւ Կասանդրոսը տիեզերական մեծ տարին, շրջափուլի «լայնքը», ընդունում էին 120000 եւ 3600000 տարիների քանակությունը: Հին վեդայական համակարգում՝ 60³ x 8, 60³ x 6, 60 ³x 4, 60³ x 2 թվերի գումարը մեկ Կալպա է, որը Բրահմայի 12 ժամն է, չորս մահայուգա շրջաններով: Եւ, փաստորեն, արարման սկզբի մասին կամ աշխարհճանաչողական թվային միստիցիզմներում բոլոր թվերի հիմքը շումերական 1 IK = 60 x 60 սրբազան չափն է:

Հին հույների մոտ տիեզերական շրջափուլը՝ 1,753005 տարի է, երբ բոլոր աստղերը «հավաքվում» են «Խեցգետնի» 30º-ում կամ «Առյուծի» 1º-ում, եւ ամբողջության լրացումը կատարվում է: *«Երբ աստղերը հանդիպում են Խեցգետնի համաստեղությունում, տիեզերքի մի մասում կլինի ջրհեղեղ» (The Greek Astrological Text, an excerpt from Antiochos, Transmitted by Rhetorios):* Տիեզերական տարին *(շրջափուլը)* կապում էին նաեւ Սիրիուս աստղի հետ եւ «շրջանառության» մեջ Սոտկյան մեկ շրջափուլը՝ 1400 ± 1 տարի էր: Բերոսոսի ներկայացմամբ *(մ.թ.ա. 280),* մեկ ՍԱՐ-ը (SAR = ՇԱՐ) 3600 տարի է *(շումերական ժամանակների ժառանգություն)*, եւ 120 ՍԱՐ-ը մեկ շրջափուլ է՝ 120 x 3600 = 432000 տարի*[*2]: Հին Կտակարանում, «Ծննդոց», Աստված ասում է. *«Իմ հոգին մարդի վրա չմնա, այն պատճառով, որ նա մարմին է. այլ նրա օրերը 120 տարի լինեն»*[*3]: Սա հենց բաբելական 120 «սար»ն է՝ 120 տարին, բազմապատկած մեկ (3600) ***շար***-շրջափուլով, որ հավասար է՝ 432000 տարվա, որ նաեւ՝ *հնդ-արիական* գերագույն աստվածության՝ Բրահմի մեկ օրվա 12 ժամն է *(Բրահմի ցերեկային մեկ օրվա ընթացքում, չորս փուլերով, տիեզերքն ու տիեզերական կյանքն է ձեւավորվում*, T. Gamkrelidze & V. Ivanov, նույն աղբյուր, էջ 748-752:*)*:

*1,- T. Gamkrelidze & V. Ivanov, նույն աղբյուր, էջ 748-752:
*2, – P. Schnabel, Die Babyl. Chronologic in Berossos' Babelonika, Mitteil Vorderas. Ges (1908), No. 5.
*3, – Ծննդոց, գլխ. Զ, 3-4:

Բրահմայի մեկ Կալպան = 60^3 x 30 եւ նրա 1/10 մասը՝ Կալիյուգան 432000 տարեշրջան է: *«Եւ Աստված աշխարհն արարեց 6 օրում»*, Հին Կտակարանյան «ճշմարտությունը», փաստորեն, շումերական շրջանագծի (3600) հիմքով կամ սխեմատիկ տարվա, լուսնային տարեշրջանով (360 օր) հաշվարկներ են, որի արդյունքում մենք նորից «հանդիպում» ենք «60^3»-թվին [6 օր x 3600 = 21600]: Այսօրավա մեկ ժամը, ինչպես հին շումերների մոտ էր, աղերսվում է սրբազան չափի 1 IKU = 60 x 60 = 3600 թվի հետ: Մեկ ժամը՝ 60 րոպե է, մեկ րոպեն՝ 60 վայրկյան է, ուրեմն մեկ ժամը՝ 3600 վայրկյան է: «216» թիվը, որն Աստծո անվան հնչյունների թվաքանակն է՝ ըստ Կաբալլայի, Բրահմայի օրվա տեւողության հիմքն է, բաբելական 120 SAR-ի հիմքն է եւ այլն, որն իրականում մատնանշում է ծագման աղբյուրը՝ հնագույն շումերական «60» հիմքով թվային համակարգը:

Փաստորեն, հավատամքային բոլոր միստիկ թվերն ու չափերը՝ թե՛ կաբալիստական, թե՛ քրիստոնեական, թե՛ քաղդեական, թե՛ հունա-հռոմեական եւ թե՛ վեդայական, «կառուցված» են «6-60» թվային համակարգի հիմքով, որը շումերական քաղաքակրթության մեջ ընդունված թվային մատրիցան է եղել: Հայկական լեռնաշխարհի եւ եգիպտական հնագույն քաղաքակրթություններում ընդունված 9-ական համակարգը, որ վերաբերում էր շրջանին, փաստորեն, շումերական «6-60»-ի հետ ոչ թե հակասության մեջ է, այլ լրիվ հակառակը՝ համատեղության: Երկուսում էլ «շրջանը» ընդունվում էր որպես մեկ պտույտ-փուլ, գունդը՝ կատարյալ ծավալային ֆորմա, հիմք: Շրջանագիծը երկուսի մոտ էլ (40 x 9 = 360 եւ 6 x 600 = 3600) նույն կերպ էր արտահայտվում, որի ծածկագիր թիվը «ինն» էր (3+ 6 + 0 + 0 = 9):

<u>ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ: Գերագույն Աստծո «օրը»՝ որպես տիեզերական շրջափուլերի կրկնություններ՝ թվերով եւ միստիկ չափերով արտահայտված:</u>

Միստիկ թվերի հետ կապված, գերագույն էակի կամ Աստծո «մեկ օրվա», ինչպես նաեւ նրա «կյանքի» շրջափուլային տեւողության մասին հնագույն Միջագետքյան իմֆորմացիան պահպանված մեզ է հասել հնդ-արիական՝ բրահմա-վեդայական ուսմունքից:

Գերագույն Բրահմայի «կյանքն» ունի 100 տարվա տեւողություն, որը՝ 311 040 000 000 000 մարդկային տարի է: Նրա օրը, 12 ժամը՝ 4 միլիարդ 320 միլիոն տարի է, որ բաժանվում է չորս շրջանների՝ մահայուգաների, որի ընթացքում ձեւավորվում է ՈԳՈՒ եւ ՆՅՈՒԹ-ի միասնությամբ մեր գոյաբանական աշխարհը:

Սաթիա Յուգ - ոսկյա շրջան՝ 1,728 000 000 = 60^3 x 8
Տրետա Յուգ - արծաթյա շրջան՝ 1,296 000 000 = 60^3 x 6
Դվափարա Յուգ -
(բրոնզյա կամ պղնձյա շրջան),- 864 000 000 = 60^3 x 4
Կալի Յուգ - երկաթյա շրջան՝ 432 000 = 60^3 x 2

Ընդհանուր 12 ժամը՝ 4 մլրդ. 320 մլն. մարդկային տարի, որը = 60^3 x 20:

A B

6	32	3	34	35	1
7	11	27	28	8	30
19	14	16	15	23	24
18	20	22	21	17	13
25	29	10	9	26	12
36	5	33	4	2	31

C D

Արեւի մոգական քառակուսին: 1-ից 36 թվերի գումարը՝ 666 է. բոլոր հորիզոնական, ուղղահայաց եւ անկյունագծերով դասավորված թվերի գումարները՝ 111 է: Օրինակ՝ AD=6+11+16+21+26+31=111, CD=36+5+33+4+2+31=111 AC=6+7+19+18+25+36=111 եւ այլն:

Սրբազան համարվող չափը՝ 1 IKU-ն, նաեւ 6x6=36 մոգական քառակուսու չափն է, որտեղ քառակուսին բաղկացած է 36 փոքրիկ քառակուսիներից: Եվ եթե փորձենք 1-ից միչեւ 36 թվերը շարել այդ 36 քառակուսիների մեջ այնպես, որ հորիզոնական, ուղղահայաց եւ անկյուագծային դասավորությամբ թվերի գումարը լինի նույն թիվը, ապա այդ կարդինալ թիվը՝ 111 է: 111 թիվը՝ մեկ հարյուր, մեկ տաս եւ մեկ, եթե ներկայացնենք շումերների նման, 6 ական արժեքային համակարգով, ապա կունենանք հետեւյալ պատկերը՝ 6 x 100, 6 x 10 եւ 6 x 1, որն ի վերջո, 666 թիվն է: Նաեւ՝ 1-ից մինչեւ 36 թվերի գումարը՝ 666 է *(1+2+3+4+5.... +36):* Սա թաքնագիտական Արփի-Արեւի կոդն է՝ 666: Ի՞նչ կարող է նշանակել մոգական համարվող քառակուսու 111 կարդինալ թիվը երկրաչափական ծավալի թաքնագիտական ներկայացմամբ, հաշվի առնելով, որ խորանարդը շումերական սրբազան չափ համարվող 1IKU-ի հիմքով է. այսինքն, խորանարդի յուրաքանչյուր նիստը՝ 60 x 60 է, եւ ուրեմն, ամեն նիստի քառակուսում գտնվող 36 քառակուսիններից յուրաքանչյուրի արժեքը 10 է: Նախ, 111 (հարյուր տասն ու մեկ) թվի պյութագորյան թաքնագիտական մոտեցմամբ՝ երրորդությունն է,- 100 + 10 + 1 = 1+0+0+1+0+1= 1+1+1 = 3: Նաեւ՝ «եռաժանին» հնագույն հավատամքներում գերագույն աստվածության սիմվոլ նշանն է (օրինակ, ուրարտական Հալդի Աստծո սիմվոլը՝ **ψ**)*[1]: Այս երրորդությունը



*1,- «**Hal** վանկի՝ բացառապես գերագույն աստծո անվան գրության մեջ հանդես գալը **di** «աստված» բաղադրիչից առաջ, չի կարող պատահական լինել եւ հատուկ նշանակություն չունենալ:

Վանի թագավորության սեպագիր սալիկների ուսումնասիրության արդյունքում Ի. Մ. Դյակոնովը նկատեց, որ բիայնական դպիրների կողմից կիրառված որոշ նշանաձեւեր գործածությունից դուրս էին եկել դեռեւս հին բաբելոնյան գրչության կենտրոններում, սակայն առկա են Ք.ա. III հազարամյակում եւ Ք.ա. II հազ. կեսերի խեթական եւ խուռիական դպրության կենտրոններում: Տրամաբանորեն, բիայնական սեպագրության ակունքները պետք է գան Ք. ա. III հազարամյակից կամ Ք.ա. II հազ. կեսերից»:

«Շումերական պատկերանշան-գաղափարագրերից ծագող սեպագրերի զարգացումը դիտարկելիս՝ մեր հարցին ստանում ենք ուշագրավ պատասխան: **Hal** վանկը չունի երկրորդ նշանակություն *(մինչդեռ բազմանշանակությունը չափազանց տարածված է միջագետքյան սեպագրության մեջ)* եւ ծագում է շումերական **«լուսավորել»** եռաբաղադրիչ աստղի տեսք ունեցող գաղափարագրից (**ψ**): Այս ուշագրավ երեւույթը գալիս է լրացնելու մեր պատկերացումները Խալդիի պաշտամունքի մասին, ընդգծելով դրանում երկնային լույսի գաղափարի կարեւոր տեղը:

Սեպանշանի նախաձեւ-գաղափարագրի նմանակը՝ դեպի վեր ուղղված եռաժանին, հանդիպում է բիայնական արքայական կնիքների պատկերներում՝ խորհրդանշելով Խալդիին: Այդ նշանը համադրելով շումերական, խեթա-լուվիական, միջնադարյան հայկական մատյաններում վկայված գաղափարագրերի հետ՝ ժամանակին մեկնաբանել ենք որպես Haldi «արարիչ»: /Ա.Մովսիսյան, «Հայկական քաղաքակրթությունը հնագույն ժամանակներից մինչեւ քրիստոնեության ընդունումը» Գիտաժողով (Զեկուցումների թեզեր), 2000թ., Երեւան., էջ 33-35/:

«եռաժանին» **(ψ)** կամ՝ 111, որ գերագույն աստվածության նշանն է եւ հնագույն շումերների մոտ՝ ***«լուսավորել»,*** խեթա-լուվիացիների մոտ՝ ***«տեր»*** եւ հայկական միջնադարյան մատենագիրների մոտ՝ ***«սկիզբն»*** իմաստային նշանակությունն է ունեցել, թաքնագիտական երկրաչափության մեջ վերաբերում է շումերական սրբազան 1 IKU չափով խորանարդի՝ լայնություն, երկարություն, բարձրություն պարամետրերին: Այսինքն, սրբազան չափի հիմքով խորանարդի մակերեսը հավասար է՝ 216000-ի: Պրոցեսիայի երեւույթով արեւը մեկ աստեղատան մեջ «սահելով մնում» է 2160 տարի: Խորանարդն ունի 6 նիստ. 6 x 2160 = 12960 տարում պրոցեսիայի մեկ ամբողջ շրջանի կեսն է, 12 աստեղատներով անցումը՝ 25920 տարի: «Եվ Աստված աշխարհն արարեց վեց օրում» հին կտակարանյան «ճշմարտությունը», որ շումերական ժառանգություն է *(պանթեոնի 6 զույգ գլխավոր աստվածություններ եւ նրանց կատարած ֆունկցիաները արարչության մեջ)* ուղիղ համեմատության մեջ է «սրբազան խորանարդի» մակերեսի եւ հնդ-արիական գերագույն էակ Բրահմի 6 օրվա հետ, որն աղերսվում է տիեզերական մեծ տարվա՝ 25920 թվի հետ *(Բրահմի նյութականորեն արտահայտվելու կյանքի տեւողությունը կամ նրա 100 տարին՝ 311040000000000 մարդկային տարի է)*[1]*:

Հնդկական համարվող, վեդայական սանսկրիտ տեքստերում, գերագույն աստվածություն՝ ***հայր Մահա*** -ի (Pita Maha) անունը, ուղղակի աղերսվում է՝ Pita՛ ***«հայր»*** եւ ***M ā́ha** «լուսին, ժամանակ»* իմաստների հետ: Հնագույն «հնդեւրոպացիների մոտ լուսինը համարվել է որպես ժամանակի չափման տերմին, որ բխում է *MeH- ձեւից»*[2]*: Օրինակ, հնդեւրոպական լեզվնտանիքին պատկանող հնագույն հիթթիթների լեզվով ***me<u>h</u>ur*** նշանակում է՝ «Ժամանակ»: Հին բաբելացիների մոտ *(կասիտական շրջան),* «սրբազան քառակուսու» մակերեսի՝ X^2 համար, օգտագործվում էր **meher** ***տերմին-բառը,*** որի միջոցով հաշվում էին քառակուսու մակերեսը:

Պատկերը, կարծում եմ, լիովին պարզ է դառնում. նույնիսկ բարձրագույն Հայր Աստծո անձնանունը՝ ***մակերես*** եւ ***ժամանակ*** ցուցող թիվ է, որ Միջագետքյան ու Հայկական լեռնաշխարհի դիցապանթեոններից է արտահանվել դեպի Հիմալայաններ, Հնդկաստան, հնդեւրոպական մայր լեզվի միգրացիաների ժամանակներից սկսած:

Հայկական էպոսում, Սանասար եւ Բաղդասար կամ՝ ՍԱՐ-Ա-ՍԱՐ

---

*1-Ն. Վ. Բարգինսկայա, «Օրացույց», հոդված: «Мифы народов мира», т. I, М. 1980, с. 612- 615.
*2- T. Gamkrelidze & V. Ivanov, “Indo-European & Indo-Europeans”, 1995, New York, p. 591.

(ՍԱՐ - ՇԱՐ - Սարոս = 3600) արտահայտմամբ, դիցերի անուններն իր հիմքում ենթադրում է «թիվ»՝ 3600 x 3600 = 12960000: ԾՈՎԻ-ՆԱՐ-ը նույնպես թվային համարժեքով կառուցված անուն է՝ ԾՈՎԻ + ՆԱՐ = nēru = 600: Փոքր Միների, Ագռավաքարից տարին երկու անգամ ելնելով, «կիսատ» ընթացքը, նույնպես ծածկագրված թվային համակարգ է ցուցում, որ ուղղակի ներկայացնում է՝ արեւի խավարման 54 տարվա կրկնություն-փուլը , պրոցեսիայի երեւույթով տիեզերական մեծ տարին՝ 25920 տարի, եւ Բրահմի կյանքի տեւողությունը *(մանրամասն տես «Փոքր Միներ» բաժնում)*:

Սրանք բոլորը «6» թվի հիմքով հնագույն թվային համակարգի միստիկ կառուցումներ են, որը՝ ինչպես վերեւում տեսանք, հատկանշական է բոլոր հնագույն հավատամքային կառույցներին: Եւ եթե այս մոտեցմամբ «վերծանենք» հայկական հնագույն էպոս-հավատամքը, ապա կտեսնենք, որ «մոգական խորանարդի» միստիկ թվերն ու ծավալները ճշգրտորեն կրկնվում են:



X^2= sidi ^{2} = mehr =
= քառակուսու մակերես



ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԱՍՏՂԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

MUL. APIN-ը *(գտնվում է Բրիտանական թանգարանում)*



Fig. 6. Reconstruction of a Circular Astrolabe according to A. SCHOTT, Zeitschrift Deutsche Morgenl. Ges. *88*, p. 302.

Տիեզերական փուլեր



Հայտնի է, որ երկրագնդի առանցքը ուղղահայաց չէ, այլ շեղում ունի: Այս շեղումը հաստատուն չէ, այն տատանվում է 22,1^{o} աստիճանից*(մինիմում)* մինչեւ 24,5^{o} աստիճան *(մաքսիմում):* Տատանման մեկ ցիկլը՝ 24,5^{o} -ից 22,1^{o} եւ նորից ետ՝ 24,5^{o} տեղի է ունենում մոտավորապես 40 հազար տարվա ընթացքում: Երկրագնդի առանցքի տատանումով, շեղումը ուղղահայացի նկատմամբ, մոտավորապես 23,5^{o} աստիճան է, իսկ մոլորակների ուղեծրային հարթության հետ՝ մոտավորապես 66,5^{o} աստիճան շեղում ունի (տես՝ նկ.): Մոտավորապես 40 հազար տարվա ընթացքում երկրագնդի շեղման տատանումը այսօրվա աստղագիտությունը կոչում է՝ ***տիեզերական առաջընթացություն*** (Precession of the equinoxes): Երբ երկրագնդի ուղեծրային հարթությունը «մոտենում» է կամ «հատվում» է երկնային սֆերայի հետ, այսօրվա աստղագիտությունն այն կոչում է ***էկլիպտիկա:*** Երկրագնդի առանցքի ծայրերը՝ վերեւում եւ ներքեւում «գծում» են պայմանական «օղակ-շրջանագծեր»:



Հնում, մեծ կարեւորություն էր տրվում հյուսիսային բեւեռում «իշխող» աստեղատանը: Օրինակ, եթե այսօր երկրագնդի հյուսիսային բեւեռը ուղղված է դեպի ***Փոքր Արջի*** համաստեղության ***Ալֆա*** աստղը, ապա 5000 տարի առաջ հյուսիսային բեւեռում «իշխողը» Դրակոնիսի աստեղատունն էր: Ճշգրիտ հաշվարկներով կարելի է հաշվել, որ հեռու ապագայում՝ մ.թ. 14000-ին, այն ուղղված կլինի դեպի ***Վեգա*** համաստեղության ***Ալֆա Լիրային****[1]**:** Սակայն, հնում, առանձնահատուկ կարեւորություն ուներ այն աստղատունը, որտեղից գարնանային գիշերահավասարին, առավոտյան, ելնում էր արեւը: Հին ժամանակների



Երկրագնդի տատանումով պայմանավորված «սահում-անցումը» 12 կենդանակերպ աստղատներով, այսօրվա աստղագիտության մեջ կոչվում է՝ ***առաջընթացության երեւույթ:*** *Յուրաքանչյուր աստեղատան մեջ «մնալով» մոտ 2160* տարի, իսկ 12 աստեղատներով անցումը՝ 25800-25920 տարի, կոչվում էր տիեզերական մեծ տարեշրջան:

*1- Նույն հաշվարկով կարելի է ետ հաշվել եւ իմանալ, թե ինչպե՞ս, ինչո՞ւ

աստղագետները նաեւ գիտեին, որ այդ աստեղատունը նույնպես փոփոխվում է, եւ արեւը 12 կենդանակերպ աստեղատներից յուրաքանչյուրում «մնում» է 2160 տարի: Հնում այս ամենն ավելի «լուրջ» էր ընդունվում, քանի որ տիեզերական այս երեւույթները «կապում» էին աստվածների, տիեզերական աներեւույթ «ոգի-էներգիայի» եւ փուլային շարժերի հետ, ընդունելով, որ նման փոփոխություններն «ազդում» են, իսկ առավել ճիշտ՝ դրանով է նախապայմանավորված նաեւ մարդկության ճակատագիրը:

Ինչպես վերեւում ասվեց, երկրագնդի առանցքի տատանման պատճառով, 12 կենդանակերպ աստեղատնների շղթայում, որեւէ աստեղատան, որտեղից գարնանային գիշերահավասարի ժամանակ արեւը ելնում է, «իշխանությունը» հաստատուն չէ, այլ, տեւում է 2150-2160 տարի *(օրինակ, այժմ երկիրը «Ձկներից» ելնելով մտնում է «Ջրհոս» համաստեղություն):* Ամեն այդպիսի փուլը՝ 2160 տարի (30°), համարվում է տիեզերական ամիս, իսկ 12 աստղատներով անցումը՝ ժամանակաշրջանների գումարը՝ 2160 x 12 = 25920, տիեզերական մեծ տարի *(այսօրվա գիտատեխնիկական նորագույն ճշտումներով՝ 25776 տարի):* Երկրագնդի առացքի տատանման մեկ եւ կես փուլի ընթացքը, երբ այն «վերադառնում է» իր նախկին դիրքին՝ մոտ 38700 տարի է: Հույն պատմիչ Հերոդոտոսին եգիպտական քրմերը պատմում էին, որ իրենք պահում են ժամանակագրությունը՝ անհիշելի ժամանակներից, եւ այդ «ընթացքում» արեւը ***երկու անգամ*** դուրս է եկել այնտեղից, որտեղ հիմա *(Հերոդոտոսի ժամանակ)* մայր է մտնում եւ հակառակը: Փաստորեն, մեկ նման շրջադարձի համար կպահանջվի մոտավորապես 12960 տարի: Իսկ եգիպտական քրմի ասած ժամանակաշրջանը մոտ 38700 տարի է անում:

Երկնքի բաժանումը 12 +12 + 12 կենդանակերպ համաստեղությունների, դրանց կերպարային՝ կենդանատեսակներով բնորոշելը, անուններով կոչելը,

---

*1,- Նույն հաշվարկով կարելի է ետ հաշվել եւ իմանալ, թե ինչպե՞ս, ինչո՞ւ ի նշան Բելի դեմ հաղթության *(մ.թ.ա. 2492 թվական)* Հայկ նահապետը փոխեց հայկական տոմարը, որ ընդունվեց որպես հայոց բուն թվական *(հայոց երկրորդ թվագրություն)*, բայց այն անվանեց իր դուստր ***Նավասարդի*** անունով: Ո՞րն է եղել աստեղային փոփոխություններով «հիմնավորված» պատճառը: Հյուսիսային բեւեռում մինչ այդ՝ 5 հազար տարի առաջ, «իշխում» էր Ալֆա Դրակոնիսը *(բեւեռային աստղը՝ Թուբան),* որն աղերսվել է Բելի հետ: Կարապ-Անգղ համաստեղության «հաղթանակով», որն աղերսվում է Հայկի հետ *(Haik > **Հաւք,** այսօրվա Cygnus-ի համաստեղությունը),* Հայկն իր առաջին տունը՝ հյուսիսային բեւեռի կենտրոնական «տունը», բնակության է տալիս իր թոռ ***Կադմոսին,*** որ ***Արամանյակի*** որդին էր *(Փոքր Արջի կամ Սայլի համաստեղություն): **Արա + մանյակը՝*** արեւի մանյակ, ի նկատի ունի 12 կենդանակերպ համաստեղությունների «արահետը», որտեղով արեւն անցնում է տարվա ընթացքում: Նավասարդի՝ հայկական նոր տոմարով, նոր տարվա սկիզբը, սկսվում էր օգոստոս 6-11-ին եւ վերջանում սեպտեմբեր 9-ին(Sky Glob 3.5): Մ.թ.ա. 2492 թվականի օգոստոս 11-ին արեւը «մտնում» է ***Կույսի*** համաստեղություն եւ «դուրս» է գալիս սեպտեմբեր 9-ին: Ըստ Ա. Շիրակացու հայտնած հեթանոսական ավանդության, Նավասարդը Հայկի դուստրն է եղել, եւ *նավասարտա,*- նոր տարի, նոր փուլ է:

որից նույն սկզբունքով բխում է տարվա բաժանումը չորս եղանակների եւ օրերի, նաեւ ժամային բաժանումը եւ այլն, մարդկային քաղաքակրթության մեծ նվաճում է: Եվ այն հանճարեղ ժողովուրդը, որը ստեղծել է այդ ամենը, ըստ աստղագետներ՝ Օքոլտի, Մաուդերի եւ Սվարցի, Ֆլամարիոնի գտնվել է երկրագնդի 36⁰-44⁰ սրբազան տարածքում:

Հնագույն հավատամքային բոլոր պատումները սերտորեն աղերսվում են աստղագիտության, 18 +18 = 36 աստեղատների հետ, որոնք համարվել են այս կամ այն աստվածության աստեղատունը: Օրինակ, եգիպտական Օզիրիս աստվածության աստեղատունը «Օրիոն» համաստեղություն էր, հայկական լեռնաշխարհում, ***Հայասա երկրի*** աստվածություն Ներգալը՝ «Կարապ-Անգղի» աստեղատունն էր եւ այլն:

Աշխարհով մեկ սփռված հնագույն հավատամքային պատումներն ի սկզբանե ունեցել են մեկ մայր, եղել է մեկ «մայր պատում», որը «ձեւավորվել», կանոնիզացիայի է ենթարկվել՝ ըստ երկնային լուսատուների, երկրագնդի որոշակի տարածքում, եւ ապա, հնդեւրոպացի ցեղերի մեծ միգրացիաների ժամանակ, դուրս եկել իր հայրենիքից ու տարածվել է աշխարհում:

Փաստորեն, նախահնդեւրոպական ***մայր լեզվի*** եւ նախահնդեւրոպական ***հավատամքային մայր պատումի,*** որն աղերսվում է աստղագիտության հետ, հայրենիք-ծննդոցները համատեղվում են:

Միջագետքյան աստեղային համակարգի ***պահպանված ամենահին ցուցակը*** *(Բեղինյան Աստրոլյաբիան)* թվագրվում է մոտավորապես մ.թ.ա. 1100թ.-ով: Այստեղ, աստղերը*(աստեղատները)* դասավորված են երեք շրջանաձեւ շարքերով, եւ յուրաքանչյուր շարքում՝ տասներկու (3x12=36): Առաջ ընկնելով, նախորոք ասենք, որ հայկական տառերը, դրանց դասավորությունը, ինչպես նաեւ «Սասնա Տուն» հնագույն հավատամքային պատում-էպոսը սերտորեն աղերսվում են երկնքի, աստեղատների ընթացքի Միջագետքյան պատկերացումների հետ: Ըստ բաբելոնյան «Երբ վերեւում» *(կամ՝ The Epic of Creation)* արարչության մասին հավատամքային պոեմի, աստղերը 3x12 համակարգով «դասավորելը» մեծ աստված Մարդուկին է վերագրված: Ուրեմն, երկնակա-մարի աստեղատների դասավորվածությունն ավելի քան առնչվում է հնագույն հավատամքային պատումներին: Մյուս հանգամանքը. Բաբելոն քաղաքը գտնվում է Արարատ *(Մասիս)* լեռան գագաթով իջնող միջօրեական-ուղղահայացի վրա, եւ աստեղատների նմանությունները, կենդանիների սիմվոլներին ու շրջապտույտների դիտարկումները թե՛ հյուսիսում, թե՛ Բաբելոնում՝ միանման պետք է լինեն:

Քարահունջի հնագույն աստղադիտարանից դիտարկված աստղերն ու աստեղատները *(գիտական մանրազննին ուսումնասիրությունները կատարել է ֆիզիկոս,*

ակադեմիկոս Պարիս Հերունունին)[*1], երբ համադրում ենք Միջագետքյան «Աստրոլաբիա -B»-ի եւ «MUL. APIN»-ի տեքստերում նշված աստղերի ու աստեղատների եւ դրանց դասավորությունների հետ, պարզվում է, որ հնագույն ժամանակներում, այսօրվա Հայաստանի տարածքից դրանք ուսումնասիրվել եւ համատեղվում են:

MUL. APIN-ը *(գտնվում է Բրիտանական թանգարանում)* թվագրվում է մ.թ.ա. 7-րդ դար, սակայն տեքստերի վերլուծությունները ցուցում են, որ այն «պատճենահանված» տարբերակն է, քանի որ առավել վաղ ժամանակների դիտարկումների նկարագրություններ է ներառում:

Ըստ MUL. APIN-ի վերլուծությունների, այսօրվա ընդունված աստեղատներից մի քանիսն ունեցել են այլ «դասավորություններ»՝ սիմվոլներ ու անուններ:

Միջագետքյան աստղագետները տարվա 12 ամիսները եւ 36 աստեղատները «բաժանել» են երեք գլխավոր աստվածությունների միջեւ: Հասարակածով անցնող միջին շերտը կոչվել է՝ ԱՆՈՒ-ի «արահետ», հյուսիսը՝ ԷՆԼԻԼ-ի եւ հարավը՝ ԷԱՅ-ի «արահետ» (տես նկ.):

Ինչպես նկատել է Լ. Բ. Վան դեր Վարդենը, [mul]APIN-ի երկրորդ սալիկի

Ընդմիջարկում

Հայկական լեռնաշխարհում գտնված Սանահինի 3000 ամյա լուսնային գոտի-օրացույցը հետազոտողներին հանգեցրել է այն եզրակացության, որ մ.թ.ա. I հազարամյակում, հայկական լեռնաշխարհի քրմերն օգտագործել են թե՛ սարոսը (Շար), թե՛ 600 ամյա տարեփուլը (որ կազմված է 7421 լուսնային ամիսներից) հաշվարկելով էկլիպտիկայի շեղումը*[2]: Սակայն կարծում եմ, որ 1968թվականներին օրացույցը հետազոտողները սխալվել են, ներկայացնելով, որ հայկական լեռնաշխարհի քրմերը տարին բաժանել են երեք եղանակների՝ յուրաքանչյուրում չորս ամիս կտրվածքով: Նախ, հայկական լեռնաշխարհում տարին անցնում է լիարժեք չորս եղանակներով: Երկրորդ՝ տարվա չորս մասի բաժանումները եւ երկնակամարի աստեղատները չորս մասի բաժանելը, պետք է ընդհանուր համակարգ լիներ թե՛ հայկական լեռնաշխարհի թե՛ Միջագետքի քուրմ-գիտունների համար: Միջագետքյան MUL.APIN աստղաբալաստիկան, որ թվագրվում է մ.թ.ա. XI դդ., կարծում եմ բացահայտում է այս սխալի պատճառները: Ըստ MUL.APIN-ի երկնակամարը բաժանված է երեք աստվածների անուններով՝ ԷԱ, ԱՆՈՒ, ԷՆԼԻԼ, սակայն բաժանված է չորս հավասար մասերի, որտեղ ԱՆՈՒ -ին «պատկանում» են երկնակամարի երկու հատվածներ: Սխալի պատճառը՝ երեք գոտիները որպես երեք եղանակներ ընդունելն է, որ հանդիպում է նաեւ MUL.APIN-ի արեւմտյան ուսումնասիրողների մոտ, մինչեւ Բ. Լ. Վան դեր Վարդենի գիտական հոդվածների հրատարակումները(1972-1974թթ.):

Ամիսներ՝ XII, I, - II արեւը գտնվում է ***ԱՆՈՒ***-ի արահետում: Ամիսներ՝ III, IV, V արեւը գտնվում է ***ԷՆԼԻԼ***-ի արահետում: Ամիսներ՝ VI, VII, VIII արեւը գտնվում է ***ԱՆՈՒ***-ի արահետում: Ամիսներ՝ IX, X, XI արեւը գտնվում է ***ԷԱ***-ի արահետում*[3]:

«Տարին բաժանված էր չորս աստեղային սեզոնների...»*[4]: «Չորս եղանակներ, եւ յուրաքանչյուրը բաժանված էր երեք ամիսների»*[5]: «Արեւային տարին բաժանված էր 12 մասերի, իսկ զոդեակը՝ չորս հավասար մասերի»*[6]:

---

*1,- Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիա, «Զեկույցներ», 1998, #4, էջ 307-328:
*2,- Բ. Ե. Թումանյան, «Հայ աստղագիտական պատմությունից», Երեւան, 1985թ., էջ 231-232:
*3, *4, *5, *6,– Bartel L.Van Der Waerden, “Science Awakening II”, NY, 1974, էջ 80, 83:

Երկնակամարը բաժանվել է որպես՝ հայր աստված *Անուի* եւ նրա երկու որդիներ՝ *Էնլիլ* եւ *Էա* աստվածությունների գոտիներ:
A - Անուի գոտի,
B - Էնլիլի գոտի,
C - Էայի գոտի:





XIV հատվածում (Text Sm 1907) կա բացառիկ «հաղորդագրություն»՝

«XII ամսի 1-ից մինչեւ II ամսի 30-ը արեւը գտնվում է ***ԱՆՈՒ***-ի արահետում՝ *քամի եւ փոթորիկ:*

III ամսի 1-ից մինչեւ V ամսի 30-ը արեւը գտնվում է ***ԷՆԼԻԼ***-ի արահետում՝ *բերքահավաք եւ շոգ:*

VI ամսի 1-ից մինչեւ VIII ամսի 30-ը արեւը գտնվում է ***ԱՆՈՒ***-ի արահետում՝ *քամի եւ փոթորիկ:*

IX ամսի 1-ից մինչեւ XI ամսի 30-ը արեւը գտնվում է ***ԷԱ***-ի արահետում՝ *քամի եւ փոթորիկ»*[*1]:

Եթե վերեւում բերված իմֆորմացիան համադրենք [mul]APIN-ի 2-րդ բաժնում ներկայացված առավոտյան բարձրացող 36 աստղերի եւ աստղատների ցուցակի հետ*(աղուսյակ #1)*, նաեւ՝ յուրաքանչյուր ամսվա սկզբում, երկնակամարում առավոտյան առաջին աստեղատան երեւալը, որտեղ ծագում է արեւը *(աղուսյակ #2)*, ապա կունենանք՝ հների սկզբունքային տրամաբանությամբ բացատրված աստղագիտական օրացույցը:

Աղուսյակ # 1

Առավոտյան բարձրացող 36 աստղեր եւ աստեղատներ

(ըստ Bartel L.Van Der Waerden-ի վերականգման, "Science Awakening II", NY, 1974, էջ 75)

Ամիս	I., day 1	LU.ĘUN.GA rises.
	day 20	GAM rises.
Ամիս	II., day 1	MUL.MUL rises,
	day 20	*is li-e* rises.
Ամիս	III., day 10	SIBA.ZI.AN.NA and MASH.TAB.BA.GAL.GAL rise.
Ամիս	IV., day 5	MASH.TAB.BA.TUR.TUR and AL.LUL rise,
	day 15	KAK.SI.DI, MUSH and UR.GU.LA rise.
Ամիս	V., day 5	BAN and LUGAL rise.

Աղուսյակ # 1-ի շարունակությունը հաջորդ էջում

*1,- Bartel L.Van Der Waerden, “Science Awakening , II”, 1974, NY, p. 80.

Ամիս VI.,	day 10	NUN^{ki} and UGA rise,
	day 15	SHU.PA rises,
	day 25	AB.SIN rises.
Ամիս VII.,	day 15	*zibanitu*, UR.IDIM, EN.TE.NA.MASH.LUM and UR.KU rise.
Ամիս VIII.,	day 5	GIR.TAB rises,
	day 15	UZA and GAB.GIR.TAB rise.
Ամիս IX.,	day 15	UD.KA.DUḪ.A, A^{mushen} and PA.BIL.SAG rise.
Ամիս X.,	day 15	SHIM.MAḪ, *shi-nu-nu-tum*, IM.SIS rises.
Ամիս XI.,	day 5	GU.LA, IKU and LU.LIM rise,
	day 25	*Anunītu* rises.
Ամիս XII.,	day 15	KUA and SHU.GI rise.

Աղուսյակ # 2
Առավոտյան առաջին բարձրացող առաջին աստղերի եւ աստղատների ցանկը տարվա 360 օրվա ընթացքում

Բաբելականհամաստեղությունները	ՕՐԸ	1-ին աստղը(այսօրվա անունով)	ՕՐԸ	Շեղում
KAK.SI.DI	0	Sirius	0	–
MUŠ	0	β Cancri	8	–8
UR.GU.LA	0	ε Leonis	8	–8
BAN	20	δ Can. mai.	18	2
LUGAL	20	Regulus	19	1
NUN^{ki}	55	Canopus	50	5
UGA	55	γ Corvi	–	–
ŠU.PA	60	Arcturus	62	–2
AB.SIN	70	Spica	70	0
zibanītu	90	α Librae	95	–5
UR.IDIM	90	δ Serpentis	–	–
EN.TE.NA.MAŠ.LUM	90	γ Centauri	89	1
UR.KU	90	η Herculis	–	–
GIR.TAB	110	γ Scorpii	104	6
UZA	120	Vega	121	–1
GAB.GIR.TAB	120	Antares	117	3
UD.KA.DUḪ.A	150	δ Cygni	140	10
A^{mushen}	150	ζ Aquilae	146	4
PA.BIL.SAG	150	γ Sagittarii	144	6
ŠIM.MAḪ	180	ε Pegasi	186	–6
GU.LA	200	β Aquarii	190	10
IKU	200	β Pegasi	199	1
LU.LIM	200	γ Cassiopeiae	193	7
A-nu-ni-tum	220	β Andromedae	229	–9
KUA	240	Fomalhaut	234	6
ŠU.GI	240	γ Persei	238	2
LU.ḪUN.GA	260	α Arietis	262	–2
GAM	280	Capella	277	3
MUL.MUL	290	Pleiades	297	–7
is li-e	310	Aldebaran	314	–4
SIBA.ZI.AN.NA	330	γ Orionis	339	–9
MAŠ.TAB.BA.GAL.GAL	330	Castor	336	–6
MAŠ.TAB.BA.TUR.TUR	355	ι Geminorum	–	–
AL.LUL	355	Procyon	361	–6

Հին ժամանակներում 1-ին ամիսը համարում էին գարնանային գիշերահավասարը, որ համընկնում է այսօրվա Մարտի 21-ի հետ: Փաստորեն, վերեւում բերված հին համակարգը, որը արեւի ընթացքն է համաստեղություններով, լավագույնս ներկայացված է 7-րդ դարի հեղինակ Անանիա Շիրակացու մոտ*[1]:

I ամիս- Մարտ 20-ից Ապրիլ 20, *Խոյ*	**VII ամիս - Սեպտեմբեր 18-ից Հոկտեմբեր 18, *Կշեռք***
II ամիս- Ապրիլ 21-ից Մայիս 19, *Ցուլ*	**VIII ամիս-Հոկտեմբեր 19-ից Նոյեմբեր 16,*Կարիճ***
III ամիս- Մայիս 20-ից Հունիս 19, *Երկվ.*	**IX ամիս - Նոյեմբեր 17-ից Դեկտեմբեր 16, *Աղեղնվ.***
IV ամիս- Հունիս 20-ից Հուլիս 18 *Խեցգ.*	**X ամիս- Դեկտեմբեր 17-ից Հունվար 18, *Այծեղջյր.***
V ամիս- Հուլիս 19-ից Օգոստոս 18, *Առյծ.*	**XI ամիս - Հունվար 19-ից Փետրվար 16, *Ջրհոս***
VI ամիս- Օգոստ.19-ից Սեպտեմ.17,*Կույս*	**XII ամիս -Փետրվար 17-ից Մարտ 19, *Ձկներ***

Ա. Շիրակացու ժամանակներում, նրա բերած օրացույցը չի համապատասխանում առավոտյան բարձրացող աստեղատան եւ այդ աստեղատան մեջ արեւի ծագման հետ, որ հնագույն արեւապաշտ հեթանոսների համար պետք է-որ սկզբունքային մոտեցում լիներ: Գուցե իր ժամանակների եկեղեցու հետապնդումներից խուսափելու համար է, որ Շիրակացին, բերելով ***արեւի ընթացքն աստեղատներով*** հնագույն համակարգ-մոտեցումը, չի «կարեւորել»՝ յուրաքանչյուր ամսվա առաջին օրն այդ ամսվա աստեղատան առավոտյան առաջինը բարձրանալու եւ արեւը ա՛յդ աստեղատն մեջ մտնելով ծագելու մոտեցումը, որն ինչպես տեսնում ենք վերեւում բերված Միջագետքյան հնագույն աղուսյակներից, մ.թ.ա. 2-րդ հազարամյակի*[2] աստղագետների համար կարեվոր սկզբունք է եղել: Վերեւում բերված Ա. Շիրակացու այս աղյուսակը, ոչ մեծ շեղումներով, համապատասխանում է՝ մ. թ. ա. 1100-1400 թվականներին, ամեն ամսի 1-ին օրը առավոտյան բարձրացող աստղատներով եւ այդ աստղատան մեջ առավոտյան արեւի ծագման ընթացքով օրացույցի հետ (տես՝ Sky Glob 3.5): Փաստորեն, վերեւում բերված աղյուսակների շնորհիվ, Շիրակացու օրացույցի հետ համադրությամբ, ճշտվում են մ.թ.ա. II-I հազարամյակում գարնանային գիշերահավասարը՝ Մարտի 20-21, երբ տարվա առաջին օրը, արեւը մտնում է տարվա սկզբում առաջին անգամ առավոտյան բարձրացող ***Խոյ*** համաստեղություն: Սակայն, գտնված հնագույն սալիկների բոլոր պատկերները եւ հավատամքային միստիցիզմը, ցուցում են արեւադարձի՝ գարնանը.- «Ցուլ», ամռանը.- «Առյուծ», աշնանը.- «Կարիճ», ձմռանը.- «Այծեղջյուր-Ջրհոս» համակարգը, որը հնարավոր է՝ մ.թ.ա. V-IV հազարամյակներում, երբ գարնանը,

---

*1, - «Հայ մատենագիրներ, Ա. Շիրակացի» 1979թ., Երեւան, էջ 250-253:

*2, - Մասնագետների վերլուծությունների համաձայն, մեզ հասած միջագետքյան աստղագիտական սալիկներում տեղ գտած տեքստերը, առնվազն, մ.թ.ա. 14-12-րդ դարերի դիտարկումներ են, որ հին գիտունները կատարել են ոչ թե Ասորեստանի տարածքում, այլ Բաբելոնում: Տես՝ Bartel L.Van Der Waerden, “Science Awakening II”, 1974, NY, p. 77.

Պատկեր #1

Հայկական լեռնաշխարհ, Բաստամ. մ. թ. ա. I հազարամյակ / Նկարը վերցված է Ա. Մովսիսյան, «Հայկական մեհենագրություն», էջ 230, Երեւան, Պետ Համալսարան, 2003թ./:

Մարտ ամսվա կեսերին, արեւն առավոտյան սկսում է տարվա իր ընթացքը, մտնելով «Ցուլ» համաստեղություն (տես պատկ. #1, #2 ձախում): Շումերական աստղագիտական պատկերը (պատ.#2), պրոֆեսոր Վիլլի Հարթները *(Willy Hartner, "The Earliest History Of The Constellations In The Near East")* բնութագրում է որպես՝ մ.թ.ա. IV հազարամյակում, գարնանային գիշերահավասարը՝ «Ցուլի» եւ ամառային արեւադարձը՝ «Առյուծի» համաստեղություններում գտնվելու «ֆիկսում», որ դիտարկվել է երկրագնդի լայնության մոտավորապես 30⁰ աստիճանից, որտեղ շումերական Ուր քաղաքն էր*(Նույնը՝ Հայկական լեռնաշխարհից գտնված Բաստամի պատկերն է):* Ըստ մասնագետների *(Jeremias, "The Old Testament In The Light Of The Ancient East")* շումերների մոտ, ***գերոյական կետը*** գտնվում է «Երկվորյակների» եւ «Ցուլի» մեջտեղում: Ըստ Հ. Հիլփրեչթի *(H.V. Hilprecht, "The Babylonian Expedition of the University of Pennsylvania")* շումերական բազմաթիվ սալիկներում կրկնվող 12960000 թիվն աղերսվում է տիեզերական մեծ տարվա կեսի հետ՝ 25920 տարի:

Պատկեր #2

Մ. թ.ա. 4-րդ հազարամյակ. Գարնանային գիշերահավասարը՝ «Ցուլի», եւ ամառային արեւադարձը՝ «Առյուծի» համաստեղություններում գտնվելու «ֆիքսում»:
Willy Hartner, "The Earliest History Of The Constellations In The Near East".

Հաջորդ կարեւոր հանգամանքը.

Արեւը եւ Լուսնը աստղատնից աստղատուն սահելով, «ստեղծում» են իրենց ***շավիղները***՝ կորագիծ-արահետները: ***Արեւի*** եւ ***Լուսնի*** շավիղները՝ շրջանաձողակները, իրարից փոքր ինչ տարբեր են, եւ հատվում են երկու կետերում՝ «Երկվորյակների», եւ «Աղեղնավորի» ու «Կարիճի» արանքում: Այս ***հանգուցային կետերը*** կոչվում են լուսնի ***հարավային*** եւ ***հյուսիսային մակածներ:*** Արեւի եւ լուսնի ***շավիղների*** խաչաձեւման պատճառով, մոտավորապես ամե՛ն 54 տարին մեկ տեղի է ունենում խավարման երեւույթ: Որ այս մասին գիտեին հնագույն շումերները եւ արձանագրել են, փաստվում է՝ Ուրուկում գտնված սալիկի տեքստով *(F. THUREAU-DANGIN, Tabletts d'Uruk, Paris 1922, Text no. 14': B. L. van der Waerden, Science Awakening II, N.Y. 1974, p. 103)*:



Արեւի եւ Լուսնի շավիղներ:
Լուսնի հարավ. մակած→ ♋
Հյուսիսային. մակած→♎

Պատահական չէ, որ բոլոր հնդեւրոպական հնագույն պատումներում ***երկվորյակները,*** որ գերագույն աստվածության որդիներն են, աղերսվում են արեւի հետ: «***Աստվածային երկվորյակների մասին միֆական պատումը, որտեղ երկվորյակները գերագույն աստծո կամ արեւի աստծո որդիներն են, խորանում է մինչեւ նախահնդեւրոպական հնագույն ժամանակներ: Այս միֆական պատումը հայտնաբերվել է համարյա բոլոր հնդեւրոպական հնագույն հիմնական տրադիցիաներում, որտեղ ոչ միայն կրկնվում են միեւնույն մոտիվները, այլ նաեւ առկա է հերոսների անունների համաստեղությունը, որը եւ հաստատում է այդ մոտիվների եւ պերսոնաժների բնույթը որպես՝ նախահնդեւրոպական»*** [1]:

Փաստորեն, հնագույն հավատամքային պատումների գերագույն աստծո որդիները՝ ***երկվորյակները,*** արեւի եւ լուսնի ***արահետ-շավիղներն*** են: Հայկական «Սասնա Ծռեր» էպոսի երկվորյակները՝ Սանասարն ու Բաղդասարը, կոչվում են ***ծուռ, ծռեր,*** որ ըստ իս, ***«կորի»*** նշանակությունն ունի: Արեւի եւ Լուսնի շավիղ-արահետները՝ կորագծեր են: Եվ, ըստ պատումներից մեկի, ***երկվորյակները*** Խանդուդ Խաթունին, քաջանց թագավորությունից հարս բերելու ճանապարհին, «ֆիքսում» են շրջանաշղթայի ***չորս կարդինալ աստեղատները,*** որ 5-4 հազարամյակում՝ գարնանային եւ աշնանային գիշերահավասարները, եւ ամառային ու ձմեռային արեւադարձերը «ֆիկսող» կետերն են: Դրանց պատկերային վկայությունը՝ հնագույն շումերական եւ ուրարտական շրջաններում, աստղագիտական հարթաքանդակներում ցուցված պատկերներն են (տես նախորդ էջի պատկերները): Հայկական էպոսում*[2] ***երկվորյակներն*** իրենց ուղին սկսում են գնալով «հանտե»՝ կենտրոն, որտեղ առաջինը նախ հանդիպում են աղվեսին*[3], այսօրվա ***Serpens*** աստղատունն է, որ գտնվում է «Կարիճ»-ի մոտ: Այնտեղից շարժվելով Բաղդասարը հանդիպում է՝ «Յոթ ջրաղացի ջուր խմող մարդուն»,- «Ջրհոս», ապա «յոթ փուռ հաց ուտող մարդուն»,- «Օրիոն» *(մի շարք պատումներում՝ «հովվին», որ նույնն է, քանի որ աղերսվում է «Օրիոնի» համաստեղության հետ,- "shepherd of the sky),* ապա իջեւանատիրոջը՝ «Առյուծ, Ռեգուլուս»: Եվ քանի-որ՝ «Օրիոնը» եւ «Ցուլը» նույն տեղամասում են գտնվում եւ արեւը V-IV հազարամյակներում, գարնանային գիշերահավասարին, գտնվում է այս աստեղատների արանքում, ապա մենք ստանում ենք տարվա չորս եղանակները ֆիկ-

*1,- T. Gamkrelidze, V. Ivanov, "Indo-European and Indo-Europeans", 1995, USA, p. 680:

*2,- «Սասնա Ծռեր» հ. I, 1936թ., Երեւան, պատում՝ ***Է***, պատմեց Մոկացի Սախո: Գրի է առել Ս. Հայկունին: Պատմողը պատումը լսել է կիսաթաքուն կյանք վարող գզրչիներից. տես՝ առաջաբանը: Այս պատումն առաջին անգամ տպվել է Եմինյան ազգագրական Ժողովածուի ***Բ*** հատորում, 1901թ.-ին: *(ըստ իս՝ ամենամիստիկ, կոսմիկականն է հավաքված 150 պատումներից):*

*3,- Ըստ հնագույն պատումների՝ գայլ, շուն կամ աղվես, համանման կերպարանավորմաբ նույն աստեղատունն է:



սող՝ «Ցուլ», «Առյուծ», «Կարիճ», «Ջրհոս» կարդինալ համաստեղությունները:

Հնդ-արիական՝ վեդայական արարչության մասին հավատամքային պատումում եւ աստղաբախշության մեջ, «Երկվորյակներից» մինչեւ «Աղեղնավոր» ձգված է «վիշապը», որի գլուխը կոչվում է ***Ռահու,*** իսկ պոչամասը՝ ***Կետու:*** Հնդարիական աստղաբախշության մեջ, վիշապի շրջանաշրջան եւ կենտրոնը, կոչվում է՝ ***Ծիր Կաթնի խնոցի:*** Ըստ հնդկական աստղաբախշության, այս վիշապը գլխատվել է ժամանակների սկզբում, ***Ինդրա*** աստվածության կողմից: Վիշապի ***Ռահու*** գլուխը եւ ***Կետու*** պոչամասը առանձին-առանձին ապրում են եւ փորձում են վերամիավորվել: Ավանդությունն ասում է, որ եթե դրանք միավորվեն, ապա վիշապը կկարողանա կուլ տալ իր ուղեծրով անցնող արեգակը եւ աշխարհի վերջը կլինի:

Փաստորեն, հավատամքային հնագույն պատումները, տեքստերը եւ պատկերաքանդակ սալիկները ցուցում են մեր գալակտիկայի՝ Ծիր Կաթնի կենտրոնի կարեւորությունը: Վիշապի գլուխը գտնվում է կենտրոնում, իսկ պոչածայրը՝ «Երկվորյակներ», «Օրիոն», «Սիրիուս» աստեղատների տեղամասում: Նույն՝ վիշապի գլխից մինչեւ պոչածայր «տեղամասով» են ձգվում նաեւ ***արեւի եւ լուսնի շավիղները,*** եւ այդ շավիղների հատման կետերը, նույնպես գտնվում են վիշապի գլխի եւ պոչածայրի մոտ:

Միջագետքյան աստղագիտական տեքստերի համադրությամբ պարզվում է, որ այսօրվա «Հիդրա» համաստեղությունը հին բաբելացիների մոտ ավելի երկար է ձգված եղել: Բ. Լ. Վան Դեր Վարդենը գրում է. *«Բաբելոնյան “Հիդրայի”*



Արեւի եւ Լուսնի շավիղներ:
Լուսսնի հարավ. մակած→ ♋
Հյուսիսային. մակած→♌

Վիշապը ձգվում է «Եկվորյակներից» մինչեւ «Աղեղնավոր»:



" Мифы народов мира" т. II , М. 1988, с.651

Մելիշպակի կուդուրու պատկերաքարը Սուզից: Մ.թ.ա. 12-րդ:

գլուխն ավելի բարձր է ձգված քան մեր Հիդրա համաստեղությունում է»[1]*:* Հեղինակը, հին տեքստերի համաձայն, վերականգնելով բաբելոնյան ***վիշապի պոչածայրը,*** որ հասնում է մինչեւ՝ «Prokyon, Canis minor», չի անդրադառնում թե որքա՞ն երկար է ձգված բաբելական «Վիշապի» գլուխը: Սակայն, մ.թ.ա. 14-12 դարերով թվագրված, Միջագետքյան աստղագիտական հնագույն հարթաքանդակ սալիկներում «Վիշապի» գլուխը հասնում է մինչեւ «Կարիճի» համաստեղություն: Այսինքն, հին ժամանակներում, երկինքն ըստ աստեղատների «բաժանող» գիտունները, ***արեւի եւ լուսնի շավիղների հատման կետերը*** եւ «վիշապի» գլխի եւ պոչածայրի «տեղանքները» նույնացրել՝ համատեղել են: Եվ «Հիդրայի» ձգվածությունն ընդգրկում է վեց աստեղատներ *(տես նկարները ձախում)*, ընդունելով «գալակտիկայի եզրը» Օրիոն՝ ***հացի տուն*** համաստեղության մոտ, իսկ գալակտիկայի կենտրոնը՝ «Աղեղնավորի» ու «Կարիճի» արանքում: Ըստ Զոն Մեյջր Զեկինսի ենթադրության, ***գալակտիկայի մակածը,***



Վերականգնված Վիշապի(Hydra) համաստեղությունը ըստ MUL.APIN-ի
B. L. van der Warden, Science Awakening II, Oxford Univ. Press, 1974, p. 73

ինչպես նաեւ ***արեւի ու լուսնի մակածները*** գտնվելով «նույն տեղում», գրավիտացիոն հավասարակշռություն են ստեղծում մեր լոկալ տիեզերքում, եւ հին գիտունները գիտեին թե՛ երկրագնդի առանցքի տատանման՝ Precession երեւույթի, թե՛ մակածների տեղանքների այս ոչ պատահական զուգադիպության մասին*[2]:

Ըստ հնագույն թաքնագիտության, տարվա չորս եղանակների բաժանումներ կան նաեւ Ծիր Կաթին գալակտիկայում *(գարուն, ամառ, աշուն, ձմեռ)*, կապված նրա փուլային պտույտով պայմանավորված էներգիայի ակտիվության եւ պասիվության հետ:

---

*1,- B. L. van der Warden, Science Awakening II, 1974, Oxford Univ. Press, N.Y. p. 73.
*2,- John Major Jenkins, "Galactic Alignment", 2002, USA, p.74-85.

Նկար # 1



Հնագույն հավատամքային տեքստերում աստվածներն աղերսվում են երկնային աստեղատների հետ: Շումերաբաբելական «The Epic Of Creation» պահպանված եւ մեզ հասած արարչության մասին պատումում, աստեղատները ներկայացված են որպես՝ դրախտային կամ երկնային մարմիններ, որոնք գլխավոր աստվածությունների երկնային ատրիբուտներն են:

Փաստ է, որ՝

1. Աստեղային երկնքի բոլոր պատկերներում սիմվոլները համարյա նույնությամբ կրկնվում են:

2. Պատկերներում ներկայացված սիմվոլները եւ կերպարանավորումներ ստացած աստեղատներն աղերսվում են հնագույն հավատամքի եւ արարչության մասին հների աշխարհճանաչողական պատկերացումների հետ:

3. Այս պատկերներում կա համակարգ. կա՝ սկիզբ, ծավալում եւ ավարտ:

4. Շումերաբաբելական, հայկական, հիթթիթական, հուրրիական, հունական, հնդ-իրանական, եգիպտական եւ այլն, հավատամքային բոլոր պատումները՝ արարչության մասին նույն համակարգի իմպրովիզացիաներն են եւ ունեն աստեղատների միեւնույն սիմվոլներն ու իմաստները:

Նկար # 2 (ա)

" Мифы народов мира"
т. II , М. 1988, с.651

Մելիշպակի կուդուրու պատկերաքարը Սուզից: Մ.թ.ա. 12-րդ:

Ներկայացված չորս տարբեր պատկերներներները՝ նկ.#1, #2, #3, #4, որոնք տարբեր ժամանակների եւ տարբեր տեղանքների «արտադրանք» են, ցուցում են, որ դրանցում պատկերված սիմվոլներն ու դրանց դասավորությունները նույնն են:

Նկար #2 (ա)-ի պատկերում կա 10 հատ պատվանդան, յուրաքանչյուրը՝ երկուական կամարներով:

Ներքեւից առաջին հարկում կա մեկ պտվանդան, երկրորդ հարկում՝ երկու պատվանդաններ, երրորդ հարկում՝ երեք պատվանդաններ: Հաջորդ հարկում, առյուծների եւ վիշապների հատվածում դրանք չկան, եւ վերջին հարկում՝ չորս պատվանդան: Ընդհանուրը՝ կրկնակի կամարով 10 պատվանդաններ: Սա խոսում է այն մասին, որ մենք գործ

Նկար # 2 (ա)-ի գծանկար)

Մելիշիպակի կուդուրու պատկերաքարը Սուզից: Մ.թ.ա. 12-րդ դար:



Նկար # 3

Աստղային երկինքը. Բաբելական վաղ շրջան (Հ. Բաղալյան, «Օրացույցի պատմություն», Երեւ. 1970թ.)

ունենք տասական համակարգի հետ եւ չորս շերտերի հետ, որն է՝ չորս փուլեր, չորս սերնդափոխությամբ արարված, գլխավոր աստվածներով՝ ամբողջական, կայացած համակարգ: Տասական համակարգը՝ յուրաքանչյուրը երկու կամարով, որ աղեսվում է քսան թվի հետ, երկրաչափական ծավալաձեւերից իկոսահեդրոնն է, որ ունի 20 նիստ, որ նաեւ՝ վեց կողեզրով հարթապատկերային հեքսագոնն է:

Երկրորդ կարեւոր հանգամանքը. բոլոր պատկերներում վիշապի գլուխը գտնվում է «Կարիճ» համաստեղության մոտ, «Աղեղնավորի» եւ «Կարիճի» արանքում, իսկ պոչը սկսվում է «Օրիոնի» համաստեղությունից, որն անցնում է «Երկվորյակների» եւ «Ցուլի» արանքով: Նկար #2 (ա)-ում, 1-ին հարկում, «վիշապի» պոչածայրը սկսվում է պատվանդանի վրա դրված ցորենի հասկերից: «Օրիոնի» համաստեղությունն աղերսվում է ***հացի*** հետ եւ կոչվում է «հացի տուն»: Եգիպտական համակարգում Օզիրիս*(Asar)* աստվածության*(Օրիոն)* մարմնից ցորեն էր աճում: «Վիշապի» գլուխը, ինչպես վերեւում ասացինք, գտնվում է «Կարիճ» եւ «Աղեղնավոր» աստեղատների արանքում: ***«Կարիճ»*** համաստեղության պոչամասը ամենամոտն է գտնվում մեր գալակտիկայի՝ Ծիր Կաթնի կենտրոնին, որտեղ կա սեւ խոռոչ: Բոլոր հնագույն հավատամքային պատումներում՝ եգիպտական, Միջագետքյան, հայկական (Սասնա էպոս), հունական, հնդ-վեդայական եւ այլն, այստեղ է գտնվում արտաշխարհ-անդրաշխարհ «մուտք-դարբասը», որտեղ միշտ նստած է պահապան ***շունը:*** Եգիպտական համակարգում այս շունը՝ Անիբուսն է, հունականում՝ Կերբերը, շումերաբաբելականում՝ ***Գուլա*** շունը, որ հայկական «Սասնա Տուն» էպոսի մի քանի պատումներում՝ Խանդութ խանումի դռնապան վրացի Գորգիզն է. թարգմանաբար նշանակում է՝ գայլ կամ գայլաշուն,*[1] մեկ այլ պատումում՝ աղվեսն է*[2]: Հնագույն հավատամքային պատումներում անդրաշխարհ-արտաշխարհ մուտքի մոտ նստած շունը կամ աղվեսը՝ այսօրվա «Կարիճի» եւ «Արծվի» մոտ գտնվող ***Serpens*** աստեղատունն է (ըստ Բ. Լ. Վան դեր Վարդենի վերակազմության)*[3]:

Ուրեմն, «վիշապի» պոչամասը գտնվում է «Օրիոն» եւ «Երկվորյակներ» համաստեղությունների մոտ, իսկ գլուխը

Նկար # 4

Քարե պատկերաքանդակ, Կասսիտական շրջան, մ.թ.ա. 14-րդ դար, Լուվրի թանգարան

«Կարիճի» եւ «Աղեղնավորի» արանքում:

Հերոս աստվածությունը, օրինակ հայկական էպոսում՝ Սանասարը, կույս Քառասուն ճուղ-ծամ Դեղձունին, քաջանց թագավորությունից՝ հմայքների աշխարհից ազատելով, դարձնում է տիեզերածավալման շարունակությունն ապահովող մայր: Հայկական էպոսում արեգակի սիմվոլով Դեղձունը տիեզերական այն նախաձուն է, որից ըստ վեդայական համակարգի, արարվում, ծավալվում է գոյաբական աշխարհը:

Նկար #4 -ում, ըստ էության, նկար #2-ի նույն աստեղային երկինքն ու սիմվոլներն են: Պատվանդանին նստած կինը գտնվում է «Կարիճի» համաստեղության մոտ, նրա ոտքերի մոտ գտնվում է պահապան շունը՝ այսօրվա Serpens անունով աստեղատուն: Կույսի գլխավերեւում նորալուսինն է՝ լուսնի մահիկն է: Նկար # 4-ում Կույսն ունի չորս ծալք մազեր, ինչպես Դեղձունը: Այստեղ մեզ բառացի օգնության է գալիս հայկական «Սասնա Տուն» էպոսը: Ինչպես տեքստում է ասվում, իր հոր տանը Ծովինար-Կույսը 14 օրեկան լուսնյակի է նման: ***«... տրսնուչուրս հավուր լուսնրկի կը նմանի»*[4]: «Իմ հոր տնեն որ կուս եկեր եմ, մինչեւ էսօր դեռ կուս եմ»*[5]:***

Հնում կարեւորվում էր ամսե-ամիս աստեղատների տեսանելիությունը առավոտյան առաջին բարձրացումով: Միջագետքյան [mul]APIN աստրոբալաստիկայի II բաժնում ցուցվում է 36 աստեղատները՝ որպես առավոտյան բարձրացող աստեղատներ*[6]: Մ.թ.ա. 14 -15 դարերում, ըստ #4 պատկերաքանդակի ժամանակագրության, «Կույսի» համաստեղությունը Միջագետքում եւ հայկական լեռնաշխարհում, որպես առավոտյան բարձրացող աստեղատուն, Մարտի 17-20-ից «կորչում է»՝ առավոտյան երկրակամարում չի երեւում մինչեւ սեպտեմբեր 20-21-ը: Ուրեմն, Մարտի կեսերին, որ հների մոտ, գարնանային գիշերահավասարն էր եւ նոր տարին էր, լուսինը՝ «Կույսի» աստեղատանը 14 օրեկան է, որ

---

*1,-Մեր կարծիքով «Սասնա» էպոսում անդրաշխարհի պահապան շան անունը՝ GU.LA, հետագայում հարմարեցվել է Գորգիզ՝ թարգմանաբար «շուն» անվան հետ:
*2,- «Սասնա Ծռեր» h. I, 1936թ., Երեւան, պատում՝ Է :
*3,- B. L. van der Waerden, Science Awakening II, 1974, Oxford Univ. Press, N.Y. p. 73:
*4,- «Սասնա Ծռեր» h. I, 1936թ., Երեւան, պատում՝ Է :
*5,- «Սասունցի Դավիթ», 1989թ., Երեւան, էջ 73:
*6,- B. L. Van der Waerden, Science Awakening II, 1974, Oxford Univ. Press, N.Y., p. 74-83, p. 73:

նշանակում է լիալուսին (կլոր-ամբողջ): Առավոտյան երկնակամարում «Կույսի» աստղատունը նորից լիարժեք երեւում է սեպտեմբեր 20-ից սկսած՝ աշնանային գիշերահավասար: Լուսինը սեպտեմբերին մտնելով «Կույսի» համաստեղություն՝ նորալուսին է,- 28 օրեկան, իսկ նոյեմբերի առաջին կեսին, «Կարիճի» համաստեղությունում՝ մահիկ (cresent): Ըստ հնագույն հավատամքային պատումների, այստեղ է, որ «Կույսը» կլլողն է եւ հղիանալով պիտի ծնի նոր աստվածություն: Ըստ «Սասնա Տուն» էպոսի, Ծովինարն այստեղ, «Կարիճ» աստեղատան մոտ, գալակտիկայի կենտրոնում «դառնում» է լուսնի մահիկ՝ 28 օրեկան, եւ հղիանում է խմելով *(կլլում է)* երկու բուռ ջուր: Եգիպտական տարբե-րակում, Հաթորի մանիֆեստացիայում, մայր աստվածուհին ասում է. *«Ես կլլողն եմ, ես կարիճն եմ, դուստրն եմ Ռ-Ա-ի»*[*1]: Կնոջ դաշտանի 28 օրվա ցիկլի կեսում՝ 14-15 օր, հղիության ամենաբեղուն շրջանն է: Փաստորեն, հին գիտունները, երկինքը բաժանել են ըստ ժամերի եւ աստեղատուն-զոդիակների, հաշվի առնելով կնոջ հղիության ցիկլային երեւույթը: Լուսինը «կույսի» աստղատանը 14 օրեկան է՝ լիալուսին, հասնելով «Կարիճի» համաստեղություն նա դառնում է 28 օրեկան՝ մահիկ: Ըստ «Սասնա» էպոսի, «Կույս» աստվածության հղիության շրջանը 28-14 օրերի փուլային բաժանումը, տեղի է ունենում գալակտիկայի կենտրոնում, «Կարիճ» համաստեղության մոտ: Հայկական էպոսի այս պատումն իր մանրամասներով հանդերձ, լիաժեք ներկայացնում է մ.թ.ա. 14 դարի, Կասիտական շրջանի պատկերաքանդակը (տես նկար #4):

Միջագետքյան աստղային համակարգի մասին երկու սալիկների համեմատությունը (տես՝ նկ.#1 եւ նկ. #2) ցուցում է, որ նկար #1-ում, առաջին հարկի վիշապը, որը ձգվում է «Յորենի Տուն» համաստեղությունից (Օրիոն) մինչեւ «Կարիճ», ընդգրկում է արեւի շավիղով անցնող ***վեց համաստեղություններ:*** Վիշապը, այսօրվա ***Հիդրան,*** Միջագետքյան աստղաբալաստիկայում, ինչպես Լ. Բ. վան դեր Վարդենի վերակազմությամբ է ներկայացված, պոչամասով հասնում է մինչեւ «Օրիոնի» մոտ գտնվող ***Prokyon եւ Canis minor****[*2]: Նկ. # 1-ում, որտեղ վեց աստեղատներով ձգված վիշապ չկա, նույն գաղափարը ներկայացված է Նկար # 3-ում, պատվանդանի վրայի շրջանագծով, որ վեց ելուստներ ունի: Նախ, ինչո՞ւ եւ ինչպե՞ս է, որ ամբողջի՝ շրջանաձոգակի մեջ է ներառված վեց աստեղատներ: Վեցական համակարգով են կազմված թե՛ շումերական, թե՛ բաբելոնյան գլխավոր աստվածների պանթեոնները: «Առավոտյան բարձրացող»***(morning first rise)*** 6-18-36 աստեղատները միանգամից չեն կարող երեւալ:

---

*1,- "The Book Of The Dead", chapter 86, "For transformation in to a swallow"- the sacred bird of Hathor. Papirus Of Ani. Eighteenth Dynasty. / J. Naydler "Theple Of The Cosmos", 1995, USA, p.156.
*2,- B. L. Van der Warden, Science Awakening II, 1974, Oxford Univ. Press, N.Y., p. 74-83, p. 73:

նկար # 2 (ք)



Մելիշիպակի կուդուրու պատկերաքարը Սուզից: Մ.թ.ա. 12-րդ դար:

Տարվա կենսում, ըստ հների, 180 օրվա ընթացքում, տեսանելի են 18 աստեղատներ, որոնցից վեցը արեւի շավիղ-գոտու՝ 12 զոդեակներից են: Երկինքը, որպես երկու երկինքների պատկեր-ային ներկայացում, լավագույնս ցուցում են եգիպտական հարթաքանդակները:

Նկ.#2-ում, եւ #3-ում քառաթեւ եւ ութաթեւ աստղերը, առաջին հերթին, ընդգծում են «երկու երկինքների» կամ երկնքի երկու «ծավալումով» ամբողջությունը: Այսինքն, 18 + 18 աստեղատներով «հագեցված» երկու «շրջան»-ամբողջությունները: Առաջին փուլի սիմվոլը՝ շրջանագծի մեջ քառաթեւ խաչաստղն է, որ նաեւ արարչության համակարգում եզրափակվում է երկնային ցուլի՝



Եգիպտական NUT-ը նույնպես ներկայանում է որպես «երկու երկինք»:

նկար # 3



Շրջանաօղակը 6 նլուստներով: 12 աստեղատները՝ վեց + վեց բաժանումներով:

ամպրոպի աստծո՝ Զեւս-Թոր-Թեյշեբայի ծննդով (The bull of heaven): Քառաթեւ խաչը միտում է արարչության սկզբից սկսած, 1-ին փուլի լրացումը, որը համապատասխանում է ամպրոպի աստվածության ծննդի հետ: Թոր-Թեշուբ աստվածությունը համակարգում չորրորդ աստվածությունն է: Երկրորդ փուլը, որն ըստ էության, պետք է լինի երկրորդ քառաթեւ կամ շրջան ամբողջությունը, չի ընդգծվում, այլ ներկայանում է որպես երկու փուլերի միասնությամբ ութաթեւ աստղ՝ 360⁰ կամ ԾԱՐ՝ «բովանդակ»: Հնագույն շումերական արարման մասին տեքստն ասում է, որ սկզբում, երբ դեռ չկար ***նեղգնիկը,*** նախաստեղծ AB.ZU-ն եւ TIAMAT-ն իրենց ջրերը խառնեցին ու արարման սկիզբը դրեցին: Պատմահայր Մ. Խորենացու հայկական ***«Երկնից երկինք, երկնից երկիր, երկնից եւ ծովը ծիրանի»*** տեքստը, որտեղ եղեգան փողից ծնվում է Վահագն աստվածությունը, նույն համակարգն է միտում: Այսինքն, աստղագիտական ներկայացմամբ այս երկու նախագծությունները ներկայանում են որպես երկնքի երկու ամբողջություններ, որ միանալով են արարում՝ երկինքը

Զեուս, Թեյշեբա՝ երկնային ցուլ սիմվոլով, որը նաեւ ներկայանում է քառաթեւ խաչի սիմվոլով, քանի-որ արարչության սկզբից սկսած, Թհոր-Թեշուբը չորրորդ աստվածությունն է:



եւ առաջին աստվածություններին:

Նկ.#2(բ)-ում պարզ ներկայացված է արարչության հետ կապված հնագույն պատկերացումները: Վիշապի պոչածայրը հասնում է Սիրիուս, որտեղ եղեգնյա նետն է՝ KAK.SI.DI: Այս ***եղեգնիկն*** առկա է թե՛ շումերաբաբելական եւ թե՛ հայկական արարչության մասին տեքստերում: Վիշապի գլխին նստած է ***Անգղ-թռչունը***՝ UD.KA.DUH̲.A*[1]: Եթե մենք երկնքի երկու շրջանաշղթաները միացնենք կամ «խառնենք նրանց ջրերը», ինչպես բաբելական եւ հայկական արարման մասին հնագույն տեքստերն են ասում, ապա կունենանք նույն պատկերը, ինչ-որ պատկերված է Սուզի սալիկի վրա(նկ.#2բ): Այսինքն, վիշապի գլխին թառած անգղը (այսօրվա Cygnus-աստղատունը) «կիշխի» երկնքի վերին ծայրում, իսկ եղեգնիկը, որ ընկնում է «Օրիոնից» ներքեւ, «կֆիկսի» երկնքի ներքեւի մասը: Եգիպտական համակարգում, ***Շու*** եւ ***Թեֆնատ*** առաջին զույգը ներկայանում է՝ ՇՈՒ-ն արծվի փետուրով, իսկ Թեֆնատը էգ առյուծի գլխով: Նույնը ***Հայասա*** երկրի գլխավոր աստվածության ***հովազ-անգղի*** սիմվոլով պատկերն է:

Փաստորեն, 1 > 4 + 4 = 8, 1 > 8 արարչության համակարգը հնագույն աստղագիտության մեջ ներկայանում է նո՛ւյն կերպ, նո՛ւյն բաժանումներով: Եգիպտական գերագույն աստվածություն Ատումի թվային բաժանումներով ներկայացումը՝ ***«Ես մենակն եմ, որ դառնում եմ երկու, չորս, ապա՝ ութ, որից հետո ես մենակն եմ նորից»***[2] որպես համակարգ, «տարածվում» է թե՛ երկրաչափական մարմինների ու տաճարների ճարտարապետական լուծումների վրա, թե՛ հնագույն աստղագիտության վրա: Ատումը տիեզերական ***ներունակություն-պոտենցիալից***՝



Եգիպտական՝ առյուծ եւ թռչուն սիմվոլներով առաջին զույգը:



Հայասա երկրի՝ առյուծ եւ անգղ, առաջին զույգ աստվածությունը:

---

*1,- MUL.APIN, B. L. van der Waerden, Science Awakening II, 1974, Oxford Univ. Press, N.Y., p.74.
*2,- Moustafa Gadalla,"Egyptian Cosmology", 2001, second edition, USA, p. 56.



Գծագիր # 1 / Ծիր կաթինը ամբողջն է՝ արական եւ իգական բնեռներով. Հովազ-Անգղ աստվածություն:

Գծագիր # 2



Գծագիր # 3

ՆՈՒՆ- ից ծնված առաջին մեկն է, որ «սերում» է ***էգ*** եւ ***արու*** առաջին զույգը: Արարաչության հետ կապված հնագույն պատումների աստղագիտական ներկայացումը այս է. 1-ին փուլ՝ Ծիր Կաթնում կարեւորվում են նրա հյուսիսային աստեղատուն Cygnus-ը, կենտրոնը ֆիկսողը՝ Դենեբ աստղն է, եւ հարավային մասում Սիրիուսը (Canis Maior): ***Առաջին փուլ՝ Մեկը*** դարձավ ***երկուս՝ արու*** եւ ***էգ:*** *2-րդ փուլ՝* ***առաջին զույգ աստվածների*** *երկվորյակ որդիները՝* ***արեւի եւ լուսնի շավիղներն են:*** 3-րդ փուլ՝ երկվորյակները «ձեւավորում» են արեւի շավիղում գտնվող չորս կարդինալ աստեղատները, որոնք ***գարնանային, աշնանային*** գիշերահավասարներին եւ ***ամառային ու ձմեռային*** արեւադարձերին, առավոտյան առաջինը բարձրացող՝ «***Յուլ», «Կարիճ», «Առյուծ», «Ջրհոս»*** աստեղատներն են: Այսինքն,- ***մեկը*** դարձավ ***երկուս,*** ապա՝ ***չորս,*** ապա՝ ***ութ,*** ծավալումով համակարգն է: Փաստորեն, մ.թ.ա. V հազարամյակում, ամառային արեւադարձի ժամանակ, առավոտյան երկնակամարում ***«Կարապ-Անգղի»*** համաստեղության ***«Դենեբ»*** աստղը հյուսիս արեւմուտքում, իսկ ***«Կանիս մեծ»*** համաստեղության ***«Սիրիուս»*** աստղը հարավ արեւելքում, ***երկուսով՝*** երկնակամարում, ձեւավորում են «առաջին տրամագիծը»: Երկնակամարի «երկրորդ տրամագիծը»՝ ձեւավորում են արեւի եւ լուսնի շավիղները: Հաջորդը՝ տարվա չորս եղանակները ֆիկսվում են ***չորս կարդինալ աստեղատներով,*** երբ արեգակը *գարնանային* եւ *աշնանային գիշերահավասարներին* եւ *ամառային ու ձմեռային արեւադարձերին* մտնում է,- ***«Յուլ», «Առյուծ», «Կարիճ», «Ջրհոս»*** համաստեղություններ:

Եգիպտական գերագույն Աթում աստվածության՝ ***«ես մեկն եմ, որ դառնում է երկուս, ապա՝ չորս, ապա՝ ութ»,*** արարչական սխեման՝ ըստ աստղագիտության ներկայանում է այսպես՝

I - Գերագույն չդիֆերենցված «ամբողջ»,

II-*հայր -մայր* = «Անգղ - Ընձառյուծ» = «Cygnus» եւ «Sirius» **(գծ. # 1)**,

II- *երկվորյակներ,*- արեւի եւ լուսնի շավիղներ **(տես գծ. # 2-ը)**,

IIII - *չորս եղանակները* ֆիկսող ***կարդինալ աստեղատները:***

⇩

I ⇨ **II** — **երկուս,** **II** — **չորս,** **IIII** — **ութ:**

(տես գծ. #3-ը: Մ.թ.ա. V-IV հազ., գարնանային գիշերահավասարին արեւը ելնում է «Յուլ»-ից: Ամառային արեւադարձին արեւը՝ «Առյուծում» է, Աշնանային գիշերահավասարին՝ «Կարիճում» է, Ձմեռային արեւադարձին՝ «Ջրհոս»-ում է):

Նկար Ա

Նկար Բ

Նկար Գ

Նկար # I

Եգիպտական երկվորյակները

Միջագետքյան Կուդուրու քարապատկերի վերեւից ներքեւ, երկրորդ հարկի գաղափարապատկերում, աջից ձախ, առյուծն է, հետեւում առյուծագլուխ վիշապը(նկ. Ա): ***Սա իգական Ծիր-կաթինն*** է՝ հովազառյուծի գլխով, որի կենտրոնը Կանիս մեծ համաստեղության Սիրիուս աստղն է: ***Ծիր կաթնի*** հյուսիսում, գլխավորողը՝ արական սկզբունք թռչունն է, հետեւում վիշապանգղը (նկ. Բ): Սա այսօրվա «Կարապ» անունով համաստեղությունն է, Դենեբ աստղով: Այս հայր-մայր՝ մեկ ամբողջություն աստվածությունը, Հայասա երկրի ***Ներգալ*** աստվածությունն է նույն խորհրդապատկերով, որ շատ ավելի հին է, քան մ.թ.ա. 12 դարում Կուդուրուի հարթաքանդակը:

Անգդ-Հովազ՝ հայր-մայր աստվածությունը, երկնակամարում ներկայացնում է ամբողջական Ծիր Կաթին շրջանաձեւ վիշապը. առաջին շրջանագիծ*(տես նախորդ էջի **Գծագիր # I**)*:



Հայասա երկրի աստվածություն Ներգալի գաղափարապատկերը: Մ.թ.ա. II հազարամյակ:

«Գիշեր» եւ ***«երկիր»*** գաղափարը խորհրդանշում է ***մայր հովազառյուծը,*** որ երկրի վրա ամենաուժեղ կենդանին է: ***«Օր»*** եւ ***«երկինք»*** գաղափարի սիմվոլն է ***անգդը,*** որ երկնքում, թռչունների մեջ ամենաուժեղն է:

Նույն հարկի վերջին խորհրդապատկերը նորից թեւավոր առյուծն է մեջքին՝ «եռաելուստ գավազան»(նկ. Գ): Գավազանի աջ եւ ձախ գլուխները երկու հովազառյուծներ են, իսկ կենտրոնի ելուստը՝ պտտվող գունդ է: Սա ***Անգդ-հովազառյուծ՝ մայր-հայր*** աստվածության ***երկվորյակ որդիներն են,*** որ խորհրդանշում են ***արեւի եւ լուսնի շավիղները,*** այսինքն՝ խավարածիրը. երկրորդ շրջանագիծ*(տես նախորդ էջի **Գծագիր # II**)*: Եթե առաջին՝ հայր-մայր վիշապաօղակը խորհրդանշում է ամբողջական օղակաձեւ Ծիր Կաթինը, ապա նրանց երկվորյակ որդիները խորհրդանշում են արեւի եւ լուսնի օղակաձեւ շավիղները եւ պտույտը՝ արեւ եւ լուսին իպոստասների դուալիզմով*(տես նախորդ էջի **Գծագիր # III**)*: Տիեզերական առաջին հայր-մայր զույգը որպես ՇՈՒ եւ ԹԵՓՆԱՏ, իսկ երկվորյակները որպես գլխավոր ***ենթերու*** աստվածներ, որ միավորում են վերեւի եւ ներքեւի երկու սֆերաները, առկա են եգիպտական հավատամքային կարգա-

Նկար # II

Մայր աստվածուհին երկվորյակ ընձառյուծների հետ: Մ.թ.ա. VI հազ., Հայկական լեռնաշխարհ, Զաթալ Հույուք հնավայր: Գտնըվում է Դիարբեքիրի մոտ:

Կուդուրու սահմանաքարի վերին հարկերը

կանոնում դեռեւս հին թագավորության շրջանից*[1] *(տես նախորդ էջի նկ. # I)*: Սակայն, այս հավատամքային համակարգի ամենահընագույն խորհրդապատկերները հայկական լեռնաշխարհի երկվորյակ ընձառյուծների մայր աստվածուհին է *(տես նկ. ձախում)*, որ Հայասա երկրում, մայր ընձառյուծի սիմվոլով, Ներգալ աստվածության իգական կենսն է՝ **Ua** - հովազ, եւ միեւնույն ժամանակ «Սասնա Ծռեր» էպոսում երկվորյակների մայրն է՝ Ծովինարն է *(տես նկ. # II)*: Միջագետքյան Կուդուրու քարապատկերի վերեւից ներքեւ, ***երկրորդ հարկի*** գաղափարապատկերն, ի վերջո, խորհրդանշում է Ծիր Կաթին վիշապաօղակը *(հայր-մայր)* եւ արեւի ու լուսնի երկու շավիղները *(երկվորյակ որդիներ)*: **Առաջինն** ընդգրկում է Ծիր Կաթնի շրջանաձեւ պտույտը, **երկրորդը**՝ արեւի եւ լուսնի շրջանաձեւ պտույտը: Այս երկու կոսմիկական վիշապները երկնքի հիմքն են եւ սահմանում են ***կայացած վերին երկինքը,*** որ Կուդուրուի պատկերաքարի վրայի վերին հարկն է: Հնագույն համակարգի հավատամքային սկզբունքը զուգահեռաբար նաեւ աստղագիտության մեջ էր. գարնանային գիշերահավասարից մինչեւ աշնանային գիշերահավասար՝ Մարտ 21-ից մինչեւ Սեպտեմբեր 17, վեց ամսվա ժամանակահատվածն է, որը արեւի ընթացքն է ***«Խոյ»*** համաստեղությունից մինչեւ ***«Կույս»*** համաստեղության վերջը: Աշնանային գիշերահավասարը սկսելով ***«Կշեռք»*** համաստեղությունից՝ սեպտեմբեր 18-ից, լրում է իր հաջորդ վեց ամսվա ընթացքը՝ մինչեւ գարուն: Սա մեկ տարեփուլն է, արեւի մեկ շրջանաձեւ անցումը, որ Կուդուրուի քարապատկերի վերեւի հարկում ներկայացված է երեք համաստեղությունների՝ ***Խոյից-Կույս, Կույսից-Այծեղջյուր,*** ինչպես նաեւ ***քառաթեւ*** ու ***ութաթեւ*** աստղերի գաղափարապատկերներով: Այստեղ վեց աստեղատները, կենս տարին՝ ներկայացված է որպես մեկ շրջան՝ ***քառաթեւ աստղ: Ութաթեւ աստղը***՝ որպես երկու երկինքների միություն՝ լիարժեք ամբողջ՝ ՇԱՐ, 4+4=8 համակարգն է: Երկու եղջուրներով պատվանդանները միտում են՝ երկու երկինք,- նույն՝ 4+4=8 համակարգը: Կիսալուսնի սիմվոլը՝ նույնպես «ամբողջի»՝ ***բովանդակ շրջանի*** խորհուրդն ունի, որովհետեւ սխեմատիկ տարին հաշվվում էր լուսնային (360 օր) փուլով: Եվ շատ անգամ, ***ԷԱ-Զրհոս-Այծեղջյուր*** դիցի պատկերի գլխավերեւում կիսնալուսնի գաղափարագիրը ***ձմեռային արեւադարձով*** «ամբողջ տարեփուլ-շրջանը» ներկայացնելու իմաստն ունի:

*1, -Moustafa Gadalla, «Egyptian Cosmology», 2001, USA, p. 41.



Գծագիր # III

Միջագետքյան Կուդուրու պատկերաքանդակի միջին հարկում(նկ. Դ), աջից ձախ, մենք տեսնում ենք նույն աստեղատները, որ Ծիր Կաթնի կենտրոն-միջնամասի երեք աստեղատներն են՝ **1. «Կատաղի շունը»,** որը MUl APIN-ում՝ UR.IDM = այսօրվա Serpentis անունով աստեղատունն է*[1], **2. Նաբու** «դպրության աստվածությունը» ներկայացնող եղջրավոր կենդանին, որի հետեւում կա ***«գրատախտակ եւ գրիչ»*** գաղափարապատկերը: Երկրորդը՝ հայկական ***Տիր*** դպրության աստվածությունն է, որի ամիսը՝ «Աղեղնավոր», հայոց մեջ կոչվում էր՝ ***ՏՐԷ***, որը ըստ հունական դիցաբանության, այբուբենն ստեղծող Քիրոնն է, եւ հնում նրա աստեղատունը համապատասխանաբար այսօրվա «Կարիճի միջնամաս եւ Աղեղնավորի 3⁰» աստեղատներն են: Հաջորդը՝ տեգավոր Մարդուկն է, որ ըստ բաբելական «Երբ վերեւում» էպոսի, տարվա, ժամանակի ու աստեղատների դասավորությունը կանոնավորողն է: Հին հույների մոտ «Աղեղնավոր» աստղատունը նաեւ Կենտավրոսն էր*[2]: Մարդուկը բաբելական ***արեւի ուղեծիրն է,*** որ «Աղեղնավոր» համաստեղությունում գլխատում է Թիամատին ու հավիտյան իրարից բաժանում է ***երկինքը*** եւ ***երկիրը:*** Վեդայական համակարգում նա ***Ինդրան*** է, հայկական էպոսում՝ ***Սանասարը*** *(մանրամասն տես «Երկվորյակներ» բաժինը):* Արեւի եւ լուսնի ուղեծրերը հատվում են «Երկվորյակներ» եւ «Աղեղնավոր» համաստեղություններում. այս «տարածքով» էր ձգվում վիշապ Թիամատը, որ հնդ-վեդայական աստղագիտության մեջ հայտնի է՝ Ռահու-Կետու անունով: Կուդուրուի պատկերում Մարդուկը «գրավել» է «Աղեղնավոր» համաստեղության տեղը:

Նկար Դ

Նկար Ե

Սուզի Կուդուրու քարապատկերի ***առաջին հարկի*** խորհրդապատկերը՝ «Հիդրայի» համաստեղությունն է՝ ***վիշապը:*** Միջագետքյան «Հիդրա» համաստեղությունը շատ ավելի երկար է եղել, քան այսօրվա աստղերի այն խումբը, որ մենք կոչում ենք ***«Հիդրա»:*** Նրա պոչը սկսվում է «Օրիոնի» հարավում, չհասած Սիրիուս-Պրոցիոն, իսկ գլուխը հասնում է «Կարիճի» համաստեղություն*[3]: Առաջին հարկում, պատվանդանի վրայի ցորենի խուրձը որպես «հացի տուն»՝ ***Օրիոն*** աստեղատան գաղափարապատկերն է: Երկնային ***հիդրա-վիշապը*** ձգվում է մինչեւ

*1, - B. L. Van Der Waerden, “The Birth Of Astronomy”, 1974, NY, p. 76.
*2, - Giles Sparrow, «The Universe», 2001, UK, p. 137.
*3, - B. L. Van Der Waerden, “The Birth Of Astronomy”, 1974, NY, p. 73.

«Կարիճի» համաստեղություն, եւ վիշապի գլխին թառել է՝ ***Անգղ-Կարապ*** աստեղատունը՝ «Cygnus + Cepheus-ի մի մասը»*[1], որի գաղափարագիր անունը MUL.APIN-ում UD.KA.DUH.A է*[2]:

Երկրորդ հարկը սկսվում է աջից ձախ՝ 1. «Անգղ-Cygnus», 2. «թռչուն-արտույտ», 3. «գութան-խոփ», 4. «խոյ», 5. «ցուլ» պատկերներով, որոնք համապատասխանաբար, մ.թ.ա. 2-րդ հազարամյակում, ձմեռային արեւադարձից սկսած, յուրաքանչյուր ամսվա ***առավոտյան առաջինը բարձրացող*** հետեւյալ աստեղատներն են՝

1. «Անգղ-Cygnus», որ MUL.APIN-ի նշված է UD.KA.DUH.A *(Cygnus + Cepheus-ի մի մասը)* անունով:

2. «Պեգասոսի քառանկյուն», որ հնում կոչվել է «արտ-IKU»*[3]: Այսօրվա Պեգասոսի քառանկյունը, որ կոչվել է՝ IKU «արտ, արտաչափ», նկարում ներկայացված է՝ ***արտի թռչուն*** *(գուցե արտույտ)* գաղափարագրով, քանի-որ նրանից հետո գալիս է արտը վարող գութանի համաստեղությունը *(գութան - խոփ - Եռանկյուն)*, որի ետեւում վարողն է Դումուզի-Խոյն է*[4]:

3. «Եռանկյունին», որ հնում կոչվել է «գութան-APIN»:

4. «Խոյ», հնում կոչվել է LU.HUN.GA եւ Խոյի ետեւում, պատվանդանի վրայի մկրատաձեւ, երկու ելուստներով գաղափարագիրը խորհրդանշում է Դումուզի դիցի «երկենցաղ» բնույթը՝ որպես անդրաշխարհի եւ արտաշխարհի, մեռնող ու հառնող աստվածություն:

5. «Ցուլ» համաստեղությունը, որ հնում կոչվել է MUL.MUL - Պլեադաներ անունով*[5]: Ցուլի հետեւում, պատվանդանի վրայի խորհրդանշանը ամպրոպի աստվածության խորհրդանշանն է:

Հավատամքային կոնցեպտում, Սուզիի Կուդուրու քարապատկերի աստեղատների համակարգը՝ նույն խորհրդապատկերներով, աստեղատների նույն դասավորությամբ, լավագույնս պահպանված է եգիպտական համակարգում:

Մեռյալի հոգին՝ նկարում # 5-ն է, անցնելով ***42 դատավոր աստվածությունների*** քննությունը*(եթե անցնում է)*, հայտնվում է գալակտիկայի կենտրոնում՝ դեպի անդրաշխարհի կամ հոգեւոր աշխարհի դարբասների մոտ: Նկարում #1, երկու փետուրներով ***Մա-ատը,*** տիեզերք ***դուալիզմի սկզբունքն է,*** որ նաեւ ներկայանում է որպես ***Շու եւ Թեֆնատ՝ էգ հովազառյուծ*** եւ ***արու թռչուն*** խորհրդապատկերով*[6], համանման Հայասա երկրի գերագույն Ներգալ աստվածության

---

*1, *2, *3,- B. L. Van Der Waerden, “Science Awakening II”, 1974, NY, p. 73, 72,

*4, - B. L. Van Der Waerden, “Science Awakening II”, 1974, NY, p.71: «Սասնա Ծռեր» էպոսում, շումերական Դումուզիի զուգահեռը՝ Դավիթը, ինքն է լծվում գութանին ու վարում արտը:

*5,- B. L. Van Der Waerden, “Science Awakening II”, 1974, NY, p.76:

*6,- Moustafa Gadalla, «Egyptian Cosmology», 2001, USA, p. 39-40.



դուալիզմի սկզբունքով խորհրդապատկերին*(տես նկարները ձախում)*: ***Մա-ատի*** հրահանգով եւ միջոցով են սկիզբ առնում նույնիսկ մեծ աստվածությունները: Մեռյալի հոգին ներկայանում է աստվածների դատաստանին ***աստվածների դահլիճում, Մա-ատի*** միջոցով: Եվ դուալիզմի սկզբունքով՝ երկու փետուրներով ***Մաատը,*** նաեւ ներկայացնում է «Կշեռք» համաստեղության երկու նժարների խորհրդաբանությունը*[1]:

42 դատավոր-աստվածությունները քննում են մեռյալի հոգին: Անուբիսը կշռում է մեռյալի սիրտը որոշելու համար նրա





մեղքի եւ մաքրության աստիճանը: Քրմապետը՝ Թոթը (#4), գրանցում է արդյունքները եւ որոշումը: Եթե մեռյալի մեղքերը գերակշռում են, ապա նրա սիրտը ուտում է Ամմիթին՝ գայլաշունը (#3) եւ մեռյալի հոգին գնում է երկիր, նորից վերածնվելու՝ ֆիզիկական նոր մարմնով (ռեինկորնացիա): Եթե մեռյալի հոգու մեղքերը չեն գերակշռում, ապա Հերու-Հորոսը (#6), որը վերին եւ ստորին երկինքները միացնող աստվածությունն է[2], մեռյալի հոգին հանձնում է գահի վրա նստած իր հորը՝Օզիրիսին (#7), որը կայացնում է իր որոշումը, թե մեռյալի հոգին երկնային-դրախտային ո՞ր աստիճանում(2-6) պետք է շարունակի իր հոգեւոր զարգացումը: Եթե մեռյալի հոգին լիարժեք արդար է, ապա Ասուար-Օզիրիսը նրան դուրս է բերում 12 համաստեղությունների շրջանաշրջթայից եւ յոթ մոլորակների շրջապտույտից դեպի ամենավերին հոգեւոր սֆերա*[3]:*

(Վերեւի շեղագրով տեքստը ըստ՝ «The Book Of The Dead», Chapter CXXV, Moustafa Gadalla, «Egyptian Cosmology», USA, 2001, p. 156-159.)

---

*1, *3,- Moustafa Gadalla, «Egyptian Cosmology», 2001, USA, p. 156-159.

*2, - Արեւի ուղեծրի 12 զոդիակների ամբողջությունը ներկայացնող է, որի անունն իսկ՝ Հորոս-Հորոսկոպ, մինչեւ այսօր օգտագործվում է իր իսկ նշանակությամբ:



Մելիշիպակի կուդուրու պատկերաքարը Սուզից: Մ.թ.ա. 12-րդ դար:

Ըստ հնագույն բոլոր համակարգերի, այդ թվում նաեւ եգիպտական հավատամքի, երկնքի կենտրոն-միջնամասում են գտնվում ***Անբու-Անուբիսը*** *(նկարում #2)*, ***Ամմամ-Ամմիթը*** *(նկարում #3)* եւ ***Թեհութի-Թոթը*** *(նկարում #4)*: Այս երեքը համապատասխանաբար՝ «Կշեռք-աղվես», «Սերպենս-Գայլաշուն» եւ «Թոթ՝ Կարիճի միջնամաս եւ Աղեղնավորի 3⁰» աստեղատներն են, այնպես ինչպես ներկայացված է թե՛ Կուդուրու քարապատկերում եւ թե՛ MUL.APIN Միջագետքյան աստրոլաբիայում*(տես՝ նկ. Ա, նկ. Բ):*

Ծիր Կաթնի՝ գալակտիկայի կենտրոնի գաղափարը, որպես արտաշխարհ-անդրաշխարհ ուղի, նույնությամբ կա ե՛ւ հայկական «Սասնա Ծռեր» էպոսում, ե՛ւ Ռիգ-Վեդայում: «Սասնա Ծռեր» էպոսում, երկվորյակները, քաջանց՝ ոգիների թագավորություն ուղեւորվելու համար, նախ հասնում են ***հանտե՝ կենտրոն,*** որտեղ հանդիպում են ***աղվեսաշանը***: Հունական էպոսում, անդրաշխարհ-արտաշխարհ մուտքի դռանը կանգնած է ***կերբեր պահապան շունը,*** ինչպես «Սասնա Ծռեր»էպոսում Խանդուդի ***դռնապանը գայլ-Գորգիզն է***՝ նույն տեղամաս, գալակտիկայի կենտրոն: Ռիգ Վեդայում, երգիչը ***Վարունա*** աստծուն դիմելով, խնդրում է, որ ինքը չուղարկվի «երկրի տուն»՝ գերեզմանոց, որտեղ*(մարդու)* այրումից հետո մոխիրն է հավաքվում (mrnma´yam grha´m), այլ ուղարկվի՝ ջրերի միջնամաս (apā́m mā́dhye)*[1]

Նախորդ էջի նկարում #1-ը՝ երկու փետուրներով ***Մա-ատը,*** տիեզերքի դուալիզմի սկզբունքով մատրիցան է, որ նաեւ ներկայացնում է «Կշեռք» համաստեղության երկու նժարները*[2]:

Նկար Ա

Նկար Բ



Ըստ հնագույն թաքնագիտության, «Կշեռք» համաստեղության մի նժարը «Կույսի» եւ մյուսը՝ «Կարիճի» համաստեղություններն են: «Սասնա Ծռեր» էպոսում երկվորյակները հարսնացու Քառասուն Ծամ-ճյուղ Դեղձունին քաջանց՝ ոգիների թագավորությունից փախցնելիս, «խոտորում» են երկու աշխարհների բալանսը: Էպոսում կոսմիկական այս պերսոնաժը՝ աստեղատների դեպի արտաշխարհ արտահայտվելու արարչության մասին լինելով հանդերձ, նաեւ ընդգծում է՝ հյուսիսային բեւեռից հարավային բեւեռ կշռույթային խոտորումը: Այս պերսոնաժը նաեւ միտում է արեւի եւ լուսնի ուղեծրերի ***հյուսիսային մակա-***

*1,- «Հիմն Վարունային», Rig Veda VII, 89:
*2,- Moustafa Gadalla, «Egyptian Cosmology», 2001, USA, p. 156.



Մ.թ.ա. I-II հազ., գարնանային գիշերահավասարին արեւը ելնում է «Խոյ»-ից:

ձից՝ հատման կետից, դեպի ***հարավային մակած*** անցման ընթացքը: Սա նաեւ՝ ***գարուն-աշուն,-*** տարեփուլի կեսի ավարտով դեպի ***աշուն-գարուն,-*** հաջորդ կեսի անցման մասին է, որտեղ աշնանային գիշերահավասարը՝ «Կշեռքի» համաստեղությունն է եւ «Կշեռքի» նժարների ցռուկը: Վերեւում արդեն ասեցինք, որ ըստ հնագույն թաքնագիտության, «Կշեռք» համաստեղության մի նժարը «Կույսի» եւ մյուսը՝ «Կարիճի» համաստեղություններն են: Սա նույնպես հնագույն այն պատկերացումն է, ըստ որի՝ հները երկինքը տեսնում էին որպես երկու կեսերի միություն, որ ունի նժարների կշռութային «հարաբերություն»: Բերված նկարում*[1] աստեղատները դասավորված են հետեւյալ հերթականությամբ՝



Արեւի եւ Լուսնի շավիղներ:
Հարավ. մակած→♋
Հյուսիսային. մակած→♈

I ամիս- Մարտ 20-ից Ապրիլ 20, Խոյ
II ամիս- Ապրիլ 21-ից Մայիս 19, Ցուլ
III ամիս- Մայիս 20-ից Հունիս 19, Երկվ.
IV ամիս- Հունիս 20-ից Հուլիս 18 Խեցգ.
V ամիս- Հուլիս 19-ից Օգոստոս 18, Առյծ.
VI ամիս- Օգոստ.19-ից Սեպտեմ.17,Կույս

VII ամիս - Սեպտեմբեր 18-ից Հոկտեմբեր 18, Կշեռք

VIII ամիս-Հոկտեմբեր 19-ից Նոյեմբեր 16,Կարիճ
IX ամիս - Նոյեմբեր 17-ից Դեկտեմբեր 16, Աղեղնվ.
X ամիս- Դեկտեմբեր 17-ից Հունվար 18, Այծեղջյր.
XI ամիս - Հունվար 19-ից Փետրվար 16, Ջրհոս
XII ամիս -Փետրվար 17-ից Մարտ 19, Ձկներ:

Այստեղ «Կշեռք» համաստեղությունը ներկայացվում է որպես աստեղատների երկու խմբերի ընթացքի համար բալանսն ապահովող ցռուկ:

*1,- H. P. Blavatsky, «Isis Unveiled», vol. II, p. 461:



Արարչության մասին հին բաբելական եւ հայկական տեքստերում, առաջին ***արական, հրե*** աստվածությունը ծնվում է եղեգնիկից: Իսկ եղեգնիկի հնագույն սիմվոլը՝ գաղափարագիրը, սեւ շրջանաօղակն է, որպես երկրաչափական ծավալաձեւ՝ գունդն է, որ հների ճարտարապետության մեջ ներկայանում է որպես «քառակուսի»: Առաջին հրե աստվածության սիմվոլը՝ «եռանկյունին» է, որ թռչուն-անգղի սիմվոլն է, իսկ որպես երկրաչափական ծավալաձեւ, արական առաջին հրե աստվածության սիմվոլը տետրահեդրոնն է: Մայր-հայր առաջին զույգ աստվածության հարաբերությունը ճարտարապետության մեջ՝ եռանկյունին քառակուսու վրա կառույցն է: Արարչության սկզբում առաջին զույգը եգիպտական եւ շումերական ***Անկի***-ի գաղափարագիրը՝ AKH, ĀKHA- , սիմանտիկ նմանություն ունի հայերեն բառի հետ:



Ծիր Կաթինը ամբողջն է՝ արական եւ իգական բեւեռներով.

Ըստ L.A. Waddel-ի, "Sumer-Arian Dictionary", London, 1927, Plate # 2 & # 4.



Նկ. # 1

Երկու փուլերով ամբողջական համակարգը, հների մոտ, ներկայանում էր՝ 1-ին փուլ՝ քառաթեւ եւ 2-րդ փուլ՝ ութաթեւ աստղերի տեսքով, որտեղ ութաթեւ աստղը նաեւ աղերսվում է՝ ՍԱՐ = ՇԱՐ = 3600, «շրջան, ամբողջ» գաղափարի հետ: Երկրաչափական սիմվոլների լեզվով այն կարող էր ներկայանալ երկու շրջանագծերի տեսքով: Համակարգը՝ կենդանիների կերպարանավորումներով սիմվոլների ներկայացմամբ՝ երկու շրջանաօղակներում ***էգ առյուծի*** եւ ***արու անգղի*** պատկերավոր համադրությունն է: Հայր «անգղը» պայծառ երկնքի՝ օրվա, լուսաբացի սիմվոլն է: Մայր «հովազառյուծը»՝ գիշերային երկնքի սիմվոլն է *(տես Նկ. # 2):* Եվ սրա խորհրդաբանությունը՝ «լույսը ծնվում է գիշերից» հնագույն պատկերացումն է, որ հայերեն լեզվում ներկայանում է՝ արեւի մայր մտնելու «մայրամուտ» դարձվածքով: Այս երկուսը՝ անգղն ու առյուծը՝ Cygnus-ն ու Siriusը «ձեւավորում» են առաջին շրջանաօղակը՝ առաջին քառաթեւ խաչը, 360⁰: Երկրորդ շրջանը «ձեւավորում» են նրանց երկվորյակ որդիները, որ արեւի եւ լուսնի ***«շավիղներն են»,*** **360⁰:** Այս երկու բաժանման համակարգն իրար հետ «ձեւավորում» են «ամբողջը»՝ ութաթեւ աստղ*(տես Նկ. # 1):* Երկու կենտրոններով երկնքի այսպիսի ներկայացումը հնագույն Հայասա երկրի Ներգալ աստվածություն է,

Նկ. # 2

որի մարմնի մի կեսը էգ առյուծ է, մյուս մասը Անգղ: Եվ պատահական չէ, որ Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ, Միջագետքյան անդրաշխարհի տիրակալ աստվածություն Ներգալի անունը փոխարինված է Անգղով*[1]: Փաստորեն, 5-րդ դարի հայ թարգմանիչ մատենագիրները հիշում էին եւ լավ գիտեին հայոց հնագույն աստվածության աստղագիտական ներկայացումը: «Հովազ-Անգղ» աստվածությունը, որ երկնքում «Կանիս մեծ» (կենտրոնը՝ Սիրիուս աստղն է) եւ «Կարապ-Անգղի» (կենտրոնը՝ Դենեբ աստղն է) աստղատներն են ներկայացնում, իրար նկատմամաբ բինարիզմի սկզբունքով ընթանում են 180^0-ով:

Մայր երկնքի արգանդ-կենտրոնից, ինչպես եգիպտական համակարգում է, «ծնվում» է արեգակը*(տես Նկ.#3)*: Ըստ հին գիտունների, երկնային Ծիր Կաթնի «արգանդատեղը» համապատասխանում է ***արեւի եւ լուսնի շավիղների*** հատման տեղամասին, լուսնի հարավային մակածին, որը «Կարիճ» համաստեղության մոտ է: Եվ իսկապես, այսօրվա գիտության տվյալներով, գալակտիկայի կենտրոնը մոտ է «Կարիճ» համաստեղության պոչին: Լուսնի հյուսիս. մակածը՝ որպես գալակտիկայի եզր, «անցնում» է «Երկվորյակներ» համաստեղությունով:



Նկ. # 3

Միջագետքյան եւ հայկական անդրաշխարհի ***երկնային*** պատկերացումները նաեւ ունեին իրենց ***երկրային զուգահեռը***՝ տարածքը: Կանիս Մեծի Սիրիուս աստղը հանդես է գալիս որպես տիեզերական մայր աստվածության ատրիբուտ եւ աղերսվում է արարատյան դաշտավայրի Մեծ Մասիսի հետ, իսկ Կարապ-Անգղի համաստեղությունը՝ Կորդվաց նահանգի Մասիոն*(Մաշու)* լեռների, ինչպես նաեւ Անգեղ Տուն՝ Աղձնյաց նահանգի հետ:

Եթե երկրագնդի 0^0 միջնորականն ընդունենք արարատյան դաշտավայրի Մասիս լեռով իջնող ուղղահայացը, ապա Կորդուք նահանգի Մասիոն/Մաշու լեռն ուղղահայացի նկատմամբ կուենա որոշակի անկյուն, եւ այս երկու «կետերը» միացնող գիծը կդառնա «ամբողջ» գաղափարը ներկայացնող շրջանագծի տրամագիծը:



Գրինվիչ քաղաքով(Անգլիա) է անցնում այսօրվա պայմանական 0°միջորեականը

*1, - Թագավորաց Դ., 17, 30: Ա. Դավթյան, «Հայոց աստղ. դիցաբանություն», 2004թ., Երեւան:

Գծագիր # 2



Գծագիր # 3



Գծագիր #1-ում Անգլիայի Գրինվիչ քաղաքով անցնող 0^0 Միջորեականն է: Գծագիր #2-ում, այսօրվա 44^0-45^0-ը՝ արարատյան դաշտավայրի Մասիսներով անցնող 0^0 Միջորեականն է, որի նկատմամբ A եւ B կետերով անցնող գիծը, որ ֆիկսված է հարավային Մաշու-Մասիոն եւ հյուսիսային Մասիս-Արարատ լեռներով, «ձեւավորում է» երկրագնդի առանցքի 22.1^0-24.5^0 տատանում-շեղումը:

Աստղագիտություն եւ Հայկական լեռնաշխարհ:

Հնագույն հավատամքային պատումները թե՛ աղերսվում են երկնակամարի, աստղերի եւ աստեղատների ընթացքի ու փուլային շարժերի հետ, եւ թե՛ **«աշխարհի կենտրոն»**, ***«աշխարհի պորտալար», «աստվածների երկիր»*** անուններով կոչված աշխարհագրական ***կոնկրետ տեղամասի*** հետ, որը ճշտում է Եւրոպայից մինչեւ Հնդկաստան, Միջագետքից մինչեւ Եգիպտոս սփռված հնագույն հավատամքային պատումների նախնական՝ «մայր պատումի» ծննդոց-հայրենիքը: Ըստ շումե-

ական աղբյուրների, այդ երկրի «դարբասները» սկսվում է Մաշու լեռներից, դա «աստվածների տեղամաս-երկիրն է», դա սրբազան «Արատտա երկիրն է», այդտեղ է ջրհեղեղից փրկված տապանի «նավահանգիստը»*1:

Ըստ հուրրիական դիցապատումի՝ այդ սրբազան տարածքում, հայկական լեռնաշխարհում են գտնվում երկու գերագույն՝ աստվածությունների կենտրոնակացարանները. Կումարբիինը՝ Ուրկիշում (Մաշու-Մասիոն լեռների շրջանում) եւ Թեշուբինը՝ Կումմեում (Մեծ Հայքի Կորդված աշխարհի տարածքում)*2:

Ըստ հիթթիթական հավատամքային պատումի, այդ երկրում կամ տեղամասում, Կումարբի աստծուց են ծնվում երեք մեծ աստվածությունները՝ Ամպրոպի աստվածությունը, Արանցախ գետը եւ Թասմիսուն*3:

Հնագույն վեդայական աղբյուրների հիմքով, հնդկական եւ բուդիստական տրադիցաներում, Մերու լեռը տիեզերքի կենտրոնն է եւ աստվածների բնակատեղին է*4:

Ըստ Հին Կտակարանի, որտեղ սկիզբ են առնում չորս գետերը՝ Տիգրիս, Եփրատ, Փիսոն, Գեհոն, երկրային դրախտի տարածքն է*5: Նույն տարածքում, հայկական լեռնաշխարհում, ջրհեղեղից փրկված Նոյյան տապանը հանգրվանեց Արարադի երկրում, լեռան վրա*6:

Ըստ Բաբելոնի Բելի տաճարի քուրմ Բերոսոսի (մ.թ.ա. IVդ.), երբ Քիսութրոս արքան (բաբելոնյան Նոյը), ուզեցավ իմանալ թե «ո՞ւր պիտի հասնի իր փրկվելու համար, երկնքից պատասխան լսվեց. «Աստվածների մոտ», իսկ երբ փրկվածները ցած իջան նավից, երկնային ձայնն ավետեց, որ նրանք Հայաստանում են»*7:

Արտաշխարհ-անդրաշխարհ «մուտք-տեղանքը», որն աշխարհի պորտալարն էր համարվում, աղերսվում է հայկական լեռնաշխարհի Կորդվաց նահանգի Մաշու կամ Մասիոն անունով լեռների հետ: Այստեղ է, որ ըստ Միջագետքյան «Երբ Վերեւում» (Էնումա Էնլիշ) հավատամքային պատումի համաձայն, նախաստեղծ աստվածներ ԱԲԶՈՒ-ն եւ ԹԻԱՄԱՏԸ արարելու պահանջով «խառնեցին իրենց» ջրերը, եւ Թիամատի աչքերը՝ Տիգրիս եւ Եփրատ գետերն են*8:

---

*1, - Ա. Մովսիսյան, «Արրատտա», 1992թ., Երեւան, էջ 24-28:

*2,- Ա. Մովսիսյան, «Սրբազան Լեռնաշխարհ», Երեւան, 2004թ., էջ 20-22, "Луна, упавшая с неба. Древняя литература Малой Азии" (пер. и коментар. В. В. Иванова), с. 125-140, М., 1977; Хачикян М. Л., Кумарби, “Ìèôû íàðîäîâ ìèðà” (ò. II, c. 28, Ì. 1991-2); Иванов В. В., Тешуб, “Ìèôû íàðîäîâ ìèðà” (ò. II, c. 505, Ì. 1991-2).

*3, - «Հին Արեւելքի Պոեզիա», Երեւան, 1982թ., էջ 180:

*4,- Rachel Storm “Indian Mythology”, 2000, USA, p. 57.

*5,- Ծննդոց, Գլ. Բ, 10-15:

*6,- Ծննդոց, Գլ. Ը, 4-5:

*7,- Ա. Մովսիսյան, «Սրբազան Լեռնաշխարհ», էջ 6, տես՝ Schnabel, 1923, էջ 264-266, Հ. Փլավիոս, Ընդդեմ Ապիոնի, I, 128-130, էջ28; Հովսեպոս Փլավիոս, Հրեական հնախոսություն, I, 89-93, 54-55; Եւսեբի Պամփիլեայ Կեսարացւոյ,1818, էջ 15-18, 14-25:

*8,- Ա. Մովսիսյան, «Սրբազան Լեռնաշխարհ», 2004թ., Երեւան, էջ 11-13:



Գծագիրը՝ James Evans, "The History and Practice of Ancient Astronomy", NY, 1998, էջ 55:

«Հունիսի կեսերին արեւը հասնում է *արեւադարձային կետին,* եւ *Երկվորյակների* համաստեղությունը մոտ է *ամառային արեւադարձին:* Եթե մինչեւ *(երկու շաբաթ առաջ)* Արեւի *Երկվորյակներին* հասնելը նայենք արեւմուտք, մայրամուտից հետո, հորիզոնին շատ մոտ, որտեղ արեւը մայր է մտել, կարող ենք տեսնել Երկվորյակների պայծառ աստղերը»*[1]:

Հայկական լեռնաշխարհից նայելու դեպքում *(հատկապես՝ Lat:36, Long: -42)* հունիսի կեսերին, ամառային արեւադարձի ժամանակ, Երկվորյակների ***Castor*** եւ ***Pollux*** պայծառ աստղերը գիշերը լուսաբացից առաջ, հայտնվում են Սասնո Մարաթուկ երկգագաթ լեռների գլխին, նաեւ՝ ***Կորդունք*** գավառի ***Արարադի*** լեռների վրա (sky glob 3.5): Երկվորյակների՝ MASH.TAB.BA շումերական անունը եւ Մարաթուկ ***(Մարութա լեռ՝ զույգ գլուխ Մարաթուկ են անվանում)****[2] լեռան անունը համահունչ են եւ աղերսվում են հնագույն հավատամքի՝ Սասնո երկվորյակ դիցեր՝ Սանասար եւ Բաղդասարի հետ: Մյուս կողմից, միջնադարյան հայ պատմիչները ***Կորդուք*** գավառի Արարադի լեռներին ***Սարարադ*** լեռ են ասում: Պատահական չէ, որ միայն Փավստոս Բյուզանդն իր «Պատմության» ***Ժ*** գլխում երեք անգամ նշում է լեռան անվան ***Սարարադ*** ձեւը*[3]: Միջնադարյան ուրիշ հեղինակների մոտ էլ գործածվել է ***Սարարադ*** ձեւը:

---

*1,– James Evans, "The History and Practice of Ancient Astronomy", 1998, NY, p. 55:

*2, - Ա. Ղանալանյան, «Ավանդապատում», 1969, Երեւան, էջ 29: Մարութա սարի պաշտամունքը զայրացնում է Անդոկին եւ սա «թրով» ճեղքում է Մարաթուկի գլուխը:

*3, – «Փավստոս Բյուզանդ, «Հայոց պատմություն», 1987թ., Երեւան, էջ 37:

Բաբելական MUL.APIN աստեղային աղյուսակի ուսումնասիրությունները Բ. Լ. Վան Դեր Վարդենին հանգեցնում են այն եզրակացության, որ այն «ձեւավորվել» է առնվազն մինչեւ մ.թ.ա. 1100 թվականները եւ որ MUL.APIN-ում տեղ գտած դիտարկում-համադրումները հնարավոր էին միայն Բաբելոնից հյուսիս ընկած տարածքից:

Մեկ ուրիշ օրինակ՝ միջագետքյան հնագույն արձանագրությունում խոսվում է *Թալեսի խավարման* մասին: Ժամանակակից հաշվարկներով փաստվում է, որ արեւի խավարման երեւույթը եղե՛լ է, եւ այն արձանագրել հնարավոր էր՝ մ.թ.ա. 584-ին, ***Հայկակա՛ն լեռնաշխարհ*** տեղանքից *(հեղինակը տեղանքի համար օգտագործել է Northern Turkey ձեւակերպումը)*[1]*:

Հնագույն հավատամքային պատումների տեքստերում նշված աստեղատները, արեւի եւ լուսնի ընթացքը, ինչպես նաեւ սրբազան տեղանքների անունները, գալիս են փաստելու, որ ***«ինչպես վերեւում, այպես էլ ներքեւում»*** հերմեսյան անունը կրող սկզբունք-բանաձեւը, հնագույն հավատամքը ձեւավորող քրմերի աշխարհճանաչողական մեկնություններում եղել է որպես առանցքային մոտեցում եւ, հայկական լեռնաշխարհի սրբազան համարվող տեղանքների անունները սերտորեն առնչվում են հնագույն հավատամքային պատումներում արծարծվող երկնային լուսատուների, աստեղատների շարժման ու շրջափուլերի հետ:

Հայտնի է, որ հների համար շատ կարեւոր էր հյուսիսային բեւեռաստղը: Եթե 5-6 հազար տարի առաջ այն Ալֆա Դրակոնիսն էր *(Alpha Draconis, Thuban),* ապա ավելի ուշ, Մեծ եւ Փոքր Արջի համաստեղությունների Միզար (Mizar, Big Dipper) եւ Կոչաբ (Kochab, Little Dipper) աստղերի միջոցով էին որոշում բեւեռը եւ… ***Միջօրեականը:*** Օրինակ, կա գիտական տեսակետ, որ եգիպտացիները Քեոպսի բուրգը կառուցելու համար, մ.թ.ա. 2467թ.-ին, ճշգրիտ հյուսիսային բեւեռից ***Միջօրեականը*** գտնելու համար «օգտագործել» են վերոհիշյալ երկու աստղերը *(Մեծ եւ Փոքր Արջի համաստեղություններ)*[3]* :

Հին քրմերը, որոնք ունեին աստղագիտական գիտելիքներ եւ հավատամքային պատումներն աղերսում էին՝ երկնակամարի, աստեղատների հետ, անշուշտ, պե՛տք է ունենային «առանցք», միջօ-րեական (0º): Եթե այսօր պայմանականորեն ընդունվածը ***Գրինվիչն*** է *(Անգլիայի Գրինվիչ քաղաքով անցնող ուղղահայացը, երկրագնդի 0º Միջօրեա-*

*1,– Bartel L.Van Der Waerden, “Science Awakening II”, 1974, NY, p. 91-92, 121:
*3,– Dick Teresi, “Lost Discoveries”, 2002, NY, p. 127-128:

կանը), ապա Արարատ *(Մասիս)* լեռան մեծ գագաթով անցնող ուղղահայացով(**44.25⁰**) են «շարված» հավատամքային կենտրոն Էջմիածինը՝ հյուսիսում *(որը հնա-գույն 4-րդ՝ Թիոր-Թեշեյբա լուսաբեր աստվածության կենտրոնն է եղել: Մուրճով տեղանքը «ցուցելը» հին հեթանոսական, նախահնդեւրոպական ժամանակների Թիոր > Թորգոմա > Թեշեբա աստվածության մուրճով լույս բերելու, տիեզերքը արարելու պատումն է, որ քրիստոնեացված է)*[1], հնագույն Մուսասիրի Արդինի հավատամքային կենտրոնը (Մասիսից հարավ), ինչպես նաեւ Բաբելոնը եւ Բաղդադը՝ հարավում:

Հնագույն ժամանակներում, Մասիս/Արարատ երկգագաթ լեռը եղել է «0º Միջօրեականը» եւ, այսօրվա Մեծ Արջի «Միզար» եւ Փոքր Արջի «Կոչաբ» աստղերը մ.թ.ա. III-II հազարամյակներում, աշնանը, մեկ գծի վրա են եւ, հունիսի կեսից մինչեւ ուշ աշուն «նստում» են Մեծ եւ Փոքր Արարատի գագաթներին*(Sky Glob 3.5):*

Հետաքրքիր է Զաքարիա Սիտչինի դիտարկումը՝ կապված հնագույն շումերական առաջին յոթ քաղաքների տեղադրության հետ: Արարատ *(հյուսիս արեւելյան Մասիսը)* լեռը որպես ***Միջօրեական*** ընդունելու դեպքում, նրա նկատմամբ 45º անկյունով, Բադ-Թիբիրա, Շուրուպակ եւ Նիպուր շումերական քաղաքները գտնվում են միեւնույն գծի վրա: Էրիդուն եւ Լարսան ուղղահայացի հետ խաչվող 2-րդ գծի վրա, Սիփփարը՝ Միջօրեականի վրա,(տես նկ.)*[2]: Զարմանալին այն է, որ «կերամիկական սալիկի վրա այս գծագրությունը գտնվել է շումերական **Սուսա** քաղաքում, որը թվագրվում է մ.թ.ա. 3200թ.-ով»*[3]:

Զարմանալին, շշմեցուցիչն այն է, որ մեծ Մասիսով անցնող ***Միջօրեականի*** մասին, որպես հեթանոսական ժամանակներից ժառանգություն, կա պատմահայր Մ. Խորենացու մոտ: Փաստ, որ ցավոք մինչեւ այժմ որեւէ մեկի կողմից չի նկատվել: Շամիրամը Հայաստան մտնելով, երբ գալիս հասնում է Վանա ծովակին առընթեր բլրին, Խորենացին այս բլրի մանրամասն տեղադրությունը եւ ուղղվածությունը նկարագրելիս, օգտագործում եւ ընդգծում է ***Միջօրեականը.*** *«... Առ եզերբ ծովուն երկայնաձեւ բլուր մի, որոյ նիստ երկայնութեանն ի մուտս կոյս արեգականդ, սակավ ինչ առիկողյեալ ի հիւսիսոյ, իսկ* ***ի միջօրեայ կողմանէ*** *դէպ ուղիղ առ երկրին հայելով՝ քարանձաւ կանգուն անշեղ...»*[4]:* Ըստ Խորենացու, Շամիրամի այս տեղանքում կառուցումների համար բերված արհեստավորների թվաքանակը՝ 420000 եւ 6000, ակնարկ է հնագույն 42 + 6 = 48 աստվածություններից կազմված համակարգի մասին, որ պահպանված մեզ է հասել եգիպտական եւ շումերական տարբերակներով, որպես՝ վեց գլխավոր եւ քառասուներկու «երկրորդական» դիցերի թվաքանակ-համակարգ:

---

*1,- Ըստ ավանդության, իբր Գրիգոր Լուսավորչին Էջմիածնի եկեղեցու տեղանքը եւ չափերը Աստծո առաջին հրեշտակը լուսաբեր մուրճով է ցուցում:

*2, 3, - Z. Sitchin, "The 12th Planet", 1978, USA, p. 302:

*4,- «Մ. Խորենացի, «Հայոց պատմություն», 1981թ., Երեւան, էջ 62, 64:

Ըստ հայկական դիցապատումի, Արա Գեղեցիկի դիակը դրվում է արտաշխարհ եւ անդրաշխարհ անցումային մուտքի մոտ, որպեսզի շնակերպ աստվածությունը՝ ***արալեզը*** կամ ***հարալեզները,*** Արայի՝ ***արեւի*** վերքերը լիզելով, նրան հարություն տան: Երկնակամարում անդրաշխարհ-արտաշխարհ «տեղանքը» գտնվում է այսօրվա «Աղեղնավորի» եւ «Կարիճի» արանքում: Այս տեղանքին առընթեր գտնվում է Շուն՝ UR.IDIM համաստեղությունը, որ ներկայացնում է այսօրվա Serpens անունով աստղերի խումբը*[1]: Երկնային այս տեղանքը՝ երկրի վրա, հայկական լեռնաշխարհում, համապատասխանում է հարավում «Կորդվաց նահանգի» Արարադի լեռների մոտ գտնվող տարածքի հետ: Արարատյան դաշտավայրում գտնվող Մեծ Մասիսից մինչեւ Կորդվաց նահանգի Արարադի լեռը հատող գիծը, հյուսիսից հարավ Մեծ Մասիսով անցնող Միջօրեականի հետ ունի մոտավորապես 30^0-24.5^0 անկյուն: Փաստորեն, հին գիտունները գիտեին ոչ միայն երկրագնդի առանցքի տատանումով Precession երեւույթի մասին, այլ նույնիսկ, որ թվում է անհավատալի, երկրի վրա՝ հայկական լեռնաշխարհում են նախանշել երկրագնդի առանցքի շեղման անկյունը(տես էջ 104, գծ.#3, #2):

Ջոն Մեյջր Ջեկինսն իր «Galactic Alignment» գրքում*[2], Միջագետքյան, եգիպտական, վեդայական եւ Մայաների դիցապատումներում արծարծվող ***Գալակտիկայի կենտրոնի ու Եզր-հակակենտրոնի*** «տեղանքները» քննելիս, ցուցում է, որ այս կետերը հնագույն պատումներում ֆիկսված են՝ «Երկվորյակներ» աստեղատան եւ «Աղեղնավոր» ու «Կարիճ» համաստեղությունների արանքում ընկած տարածքներում:

Պատմահայր Մ. Խորենացին Շամիրամի կառուցումների մասին խոսելիս նշում, ակնարկում է տարվա չորրորդ մասը՝ ամառային եղանակը*[3]: Մ.թ.ա. III հազարամյակում, ամառային արեւադարձին, սկսած մայիս 22-ից մինչեւ հունիս 20-ը արեւը մտնում է «Երկվորյակների» համաստեղություն:

«Երկվորյակներ» համաստեղության հետ կապված ճշգրիտ բացահայտում է անում Ա. Դավթյանը: Շումերական հնագույն էպոսում, երբ Գիլգամեշը գնում է աստվածների երկիր, նա պետք է անցներ ՄԱՇՈՒ լեռները, սակայն սկզբում նա հանդիպում եւ զրուցում է Մարդակարիճի հետ: Մարդակարիճները՝ «Կարիճի» եւ «Օձակիրի» աստղախմբերն են, որ «Ցուլ» եւ «Երկվորյակների» հետ ունեն 180^0-ի դիրք, այսինքն իրարից վեց ամսվա հեռավորություն ունեն եւ դեմ դիմաց են:

«Էպոսից անկախ աղբյուրները տալիս են Երկվորյակների համաստեղության շումերական անունը՝ MAS (Մաշ), որին գիտունները վերագրում են «երկվորյակ» նշանակությունը: MAS.TAB.A.GAL.GAL = երկվորյակների

---

*1, - B. L. Van Der Waerden, “The Birth of Astronomy”, 1974, NY, p. 73.

*2,- John Major Jenkins, «Galactic Alignment», 2002, USA.

*3,- «Մ. Խորենացի, «Հայոց պատմություն», 1981թ., էջ 62:



Վիշապը ձգվում էր «Եկվորյակներից» մինչեւ «Աղեղնավոր»:

Կաստոր աստղը եւ MAS.TAB.A.TUR.TUR = Երկվորյակների Xi Gem. աստղը[*1]*:*

Այսպիսով նույնանում են էպոսի(շումերական) Մաշու լեռները եւ ՄԱԾ՝ «Երկվորյակներ» համաստեղությունը: Ավելի ճիշտ՝ ՄԱԾ երկվորյակները աստղային մարմնավորումն են, աստղային կողն են ՄԱԾՈՒ իրական երկգագաթ լեռների:

Տառացիորեն նույն բանը տեսնում ենք հայոց պատկերացումներում, որտեղ կա իրական պաշտամունքային երկգագաթ Մաս-Իս լեռ եւ Մաս-Իս 18-րդ օրանուն, որ օրանունների մեր (հայկական) ցանկում համապատասխանում է Երկվորյակներ Կենդանակերպին»[*2]:



Արեւի եւ Լուսնի շավիղներ:
Լուսնի հարավ. մակած→ ♋
Հյուսիսային. մակած→♌

Սակայն, ինչպես նախորդ էջերում ներկայացվեց, Հայկական լեռնաշխարհում կան երկու Մասիսներ՝ հյուսիսում, Արարատյան դաշտավայրի Մեծ ու Փոքր Մասիսները եւ հարավում՝ Կորդվաց նահանգի Մասիոն լեռները, ուր ըստ ավանդության իջավ Նոյյան տապանը, որ շումերական «Գիլգամեշ» էպոսում նշվում է որպես Մարդակարիճի հետ հանդիպման «վայր»: Փաստորեն, երկնքում այս «տեղանքները» այսօրվա «Կարիճ-Աղեղնավոր» եւ «Ցուլ-Երկվորյակներ» իրարից վեց ամսվա բաժանումով եւ 180⁰-ի դիրք ունեցող աստեղատներն են: Եվ պատահական չէ, որ հայոց օրանունների ցանկում հե՛նց 18-րդ օրանունի անունն է ***Մաս-Իս***: Արեւի եւ լուսնի շավիղները նույնպես հատվում են այս երկու՝ իրար դեմ դիմաց աստեղատներում: Եվ ըստ հնագույն հավատամքային պատումների, ***գալակտիկայի կենտրոնը*** *(վիշապի գլուխը)* գտնվում է «Կարիճ-Աղեղնավոր» արանքում, իսկ գալակտիկայի հակակենտրոնը *(վիշապի պոչածայրը)* «Երկվորյակներ» համաստեղությունում:

Միջագետքյան MUL-APIN-ի ժամանակներում *(մ.թ.ա. 1100թ.)* «Երկվորյակների» Castor եւ Pollux պայծառ աստղերը Հունիս ամսին *(ամառային արեւադարձ)* գիշերը հայտնվում են Հայկական լեռնաշխարհի ***Կորդուք*** գավառի **Սարարադ** *(Արարադի)* լեռների վրա, որոնց բարձունքներին, ըստ ավանդության, ջրհեղեղից հետո իջել է Նոյյան տապանը[*3]: Պատահական չէ, որ միջնադարյան հայ պատմագրության մեջ այս լեռները հիշվում են՝ ***Սարարադ*** անունով: ***Սար***-ը շումերական Šar -ն է, որ թվային արժեք՝ ***«3600»*** եւ ***«շրջան»***

---

*1, - B. L. Van Der Waerden, “The Birth of Astronomy”, 1974, NY, p. 76.
*2, - Ա. Դավթյան, «Հայոց աստղային դիցաբանությունը», 2004թ., Երեւան, էջ 256:
*3,- Մծբինի եպիսկոպոս Հակոբը *«Վեր կացավ իր քաղաքից, որպեսզի գա հասնի Հայոց լեռները, **Սարարադ** լեռը, որ գտնվում էր Այրարատյան տերության սահմաններում, Կորդվաց գավառում»:* Փավստոս Բյուզանդ, գլխ. Ժ:



է ցուցում, աղերսվելով Սասնա էպոսի՝ **Սանա +սար** = **Սարասար** *(ըստ Խորենացու՝ Սարասար**1*)* եւ Բիայնական ***Սար+դի*** աստծո անունների հետ:

Համադրման արդյունքում (տես նկարները հաջորդ էջերում) Մասիսները եւ Սարարադի լեռները «ընկնում» են մեկ գծի վրա, որը Մասիսի գագաթից Միջօրեական ուղղահայացի հետ կազմում է մոտ 30⁰-24.5°-ի անկյուն: «Երկվորյակների» պայծառ աստղերը Մայիս 20-ից մինչեւ Նոյեմբեր ամիսների ընթացքում, շրջապտույտ անելով, հայտնվում են ***Մարաթուկ*** եւ ***Սարարադ*** լեռների գլխավերեւներում: Ավելին, քարտեզի վրա **(Operational Navigation – ONC G-4), *Մասիս/Արարատ*** եւ ***Սարարադ/Արարադ*** լեռները միացնող գիծը հատում է Վանա լճի հարավ արեւելքում գտնվող ***Վանաքարը,*** որ ըստ Խորենացու, Շամիրամի կառուցումների կենտրոնն էր, իսկ ըստ ***Սասնա էպոսի՝ Ագռավաքարը,*** Փոքր Միհրի լեռան մեջ փակվելու տեղանքը: Մասիսով իջնող Միջորեականը «ձեւավորում է» 45° անկյուն՝ Սասնո Մարաթուկի, եւ 90° անկյուն՝ էպոսում հիշատակվող ***Մանձակերտ*** քաղաքի հետ *(Ըստ հայկական էպոսի, Քեռի Թորոսի մեկ օրվա ընթացքը՝ Սասուն, Վան, Կարս, Էրզրում քաղաքներով, ձեւավորում է խաչ (X), որ հատվում է Մանազկերտում: Այս հինգ քաղաքները, ըստ հայկական էպոսի, քեռի Թորոսի հանգրվանային կենտրոններն են):*

«Արա Գեղեցիկ Շամիրամ» հնագույն պատումը պարզում է ***Աղթամար*** կղզու «աստղաբաշխական» նշանակությունը որպես «Աղթարի կղզի»՝ աստեղատուն կենդանակերպերի դիտարան, կենտրոն, իսկ

---

*1,- «Եւ զՇարաշան ի տանէ Սարասարայ», Մ. Խորենացի, «Պատմություն», 1981թ., Երեւան, էջ՝ 130:



Խոսիսկա գյուղի վերամիկ լեռնաշղթայի և Սամսոն գյուղ՝ Մարիս-ոսկեղ գետերի միջև գտնվող դիտակետերի դիրքերը

Վանա լիճը որպես՝ «հուռութքի ծով»*[1] {Աղթարք անելը հուռութքի ձեւ է, տես՝ էջ 240}:

Հայկական հնագույն ավանդապատումներից մեկում,*[2] Զագրոշ կոտոշավոր հրեշը ուզում է ուտել Տավրոսին, եւ վերջինիս հարվածից Զագրոշի կոտոշներից մեկը, թռչելով, գնում խրվում է Արարատյան դաշտավայրում գտնվող Մասիսի կողը, իսկ Զագրոշի մյուս կոտոշը ընկնում է Արգոշից հեռու եւ կոչվում է Մասիս (Մասիոն): «Կռվի վայրն» անցնում է Մասիսից իջնող Միջօրեականով: Կորդվաց նահանգի Մասիսը(Մասիոն) ընկնում են Միջօրեականից արեւմուտք: Երկնակամարում Տավրոսը՝ ***Յուլի*** համաստեղությունն է, ***Զագրոշը՝ Հիդրայի,*** որոնք համապատասխանաբար «համընկնում» են Հայկական լեռնաշխարհի՝ *(տավար-ցուլ)* Տավրոսի*[3] լեռնաշղթայի*(հայկական Տավրոս)* եւ Հաքյարի*(Զագրոս)* լեռների հետ: Բերված բոլոր դիտարկումները ցուցում են, որ երկրի վրա՝ Հայկական լեռնաշխարհում, Արարատյան դաշտավայրի Մասիս լեռը, հնագույն ժամանակների քրմապետերի կողմից «հարմարեցված» է եւ համապատասխանում է «գալակտիկայի կենտրոն» գաղափարին, որն ունի «ամենայնի մայր» կամ ***«աշխարհի մայր»*** խորհրդաբանությունը: ***Երկնակամարում*** այս տեղանքը՝ «Կարիճ» եւ «Աղեղնավոր» աստեղատների միջեւ ընկնող «տարածքն» է, որը ***«գալակտիկայի կենտրոնն»*** է, եւ այստեղով է անցնում ***լուսնի հարավային մակածը,*** նաեւ՝ արեւի եւ լուսնի շավիղների հարավային հատման «տեղամասն» է: Կուրդուք նահանգի Մասիոն լեռները, որ վաղ միջնադարյան հայ մատենագիրների մոտ ***Մարարադ*** անունով է կոչվում, համապատասխանում է երկնքում «Երկվորյակներ» համաստեղությանը. ***լուսնի հյուսիսային մակած,*** արեւի եւ լուսնի շավիղների հյուսիսային հատման «տեղամաս»:

Վերեւում բերված «զուգադիպությունները» նախ՝ ցուցում են հին քրմերի մաթեմատիկական եւ երկրաչափական գիտելիքների բացառիկ իմացությունը, եւ երկրորդ՝ հնագույն հավատամքի երկնային կարգականոնն «արարվել» է ըստ ***սրբազան տեղանքի*** լեռնաշղթաների դասավորության, ապա «բարձրացվել» է երկինք ու սեփական լեռների պատկերային նմանությունների համաձայն, աստղախմբերը «դասավորել» են ըստ աստեղատների, դրանց տալով՝ «Տավար-ցուլ», «աստիճանաձեւ օձ-վիշապա» եւ այլ անուններ:

Հին շումերներն ***աստվածային սրբազան երկիր*** էին համարում ԱՐԱՏՏԱ երկիրը, որ լեռնային երկիր էր եւ ընկնում էր Միջագետքից դեպի հյուսիս ընկած տարածքում: Գիլգամէշը անմահության ծաղիկը որոնելու համար հասնում է Մաշու լեռներին, որտեղ մարդակարիճներն են պահպանում նրանց դարբասները, որ «աստվածների երկիր» մտնելու «դարբասներն» են: Հարց է առաջանում. ինչո՞ւ է այս տարածքը համարվում ***սրբազան տարածք:*** Տարրական տրամաբանու-

---

*1,- «... զյուռութսն ի ծով», Մ. Խորենացի, «Հայոց պատմություն», Երկրորդ Գրոց, գլխ. ԺԸ:

*2,- Ա. Ղանալանյան, «Ավանդապատում», էջ 23:

*3, -Tarhu- <*terH- > խեթական Taru-/Tarawa > Taruisa > Տորք = Տարքու – Tabra/Tubar, Տավրոս լեռան անվան հետ համահունչ է:

թյունն իսկ հուշում է, որ,-

1-ին՝ սրբազան տարածքը պետք է լինի հնագույն հավատամքի ծննդոցը:

2-րդ՝ հնագույն հավատամքային պատումներում առկա աստեղատները, որ սերտորեն աղերսվում են արարչության մասին հնագույն պատկերացումների հետ, գոյություն ունեն երկրի վրա, որպես տեղանքներ: Կամ՝ հնագույն աստղագիտական ցուցակներում նշված աստեղատների երկրային զուգահեռները որպես տեղանքներ, հենց ա՛յս տարածքում են: Եվ ուրեմն,

3-րդ՝ 18 - 36 աստղատների «կերպարային» ներկայացումը, որ վերջին հաշվով երկնակամարը ըստ գոտիների բաժանման մասին է, կատարվել է ըստ այդ տեղանքի լեռների, գետերի, լճերի նմանությամբ եւ անունների համադրմամբ:

MUL.APIN-ի հնագույն տեքստի համաձայն, փաստորեն, այսօրվա «Hydra» աստեղատունը շատ ավելի երկար է եղել, ձգվելով մինչեւ **«Canis Minor»** *(տես նկ., վերականգնումը՝ Բ. Լ.Վան Դեր Վարդենի)*[1]: Հայկական լեռնաշխարհից, հատկապես վերոհիշյալ ավանդապատումի համաձայն, հայկական Տավրոս եւ Զագրոս (Հաքյարի) լեռնաշղթաների «հակամարտության» վայրից դեպի հյուսիս նայելու դեպքում *(MUL.APIN-ի ժամանակներում, մ.թ.ա. 1100),* գիշերային երկնակամարում կարելի է տեսնել նույն «հակամարտությունը» երկնքում, որ «ձեւավորված է» թաքնագիտական՝ «ինչպես ներքեւում, այնպես վերեւում» հերմեսյան բանաձեւի համաձայն *(տես նկ. #2, sky glob 3.5):* «Սասնա Ծռեր» էպոսում, Բաղդասարը, եղբորը օգնության հասնելու ճանապարհին, նախ հանդիպում է «Մատ ան յոթ դեւ»-ին *(«Հիդրա»),* հետո՝ «Խանջիին» *(աստղը՝ Ռիգիլուս, - թագավոր, տանուտեր, իջեւանատեր)*[2]*:* Ուրեմն «Հիդրայի» պոչը հնում պետք է ձգված լիներ մինչեւ «Canis Minor», որ Բաղդասարը նախ հանդիպեր աստիճանաձեւ յոթ դեւերին, որից հետո հասներ իջեւանատիրոջը՝ «Առյուծ» համաստեղություն: Փաստ, որ մենք տեսնում ենք Բ. Լ. Վան դեր Վարդենի վերականգնած գծագրում (տես նկարը հաջորդ էջում):

Արծիվը կամ թեւավոր արեւը վերեվում, ցուլը եւ առյուծը ներքեւի աջ եւ ձախ կողմերում: Աստղագիտական նշանակություն ունեցող այս պատկերը գտնվել է հայկական լեռնաշխարհում, Բաստամ (մ.թ.ա. I հազարամյակ): / Նկարը վերցված է Ա. Մովսիսյան, «Հայկական մեհենագրություն», էջ 230, Երեւ. Պետ Համալսարան, 2003թ./

Հայկական էպոսում կարեւոր տեղանքներից է նաեւ Ագռավաքարը, որտեղ փակվում է էպոսի վերջին դից՝ Փոքր Սիերը: Բ. Լ. Վան Դեր Վարդենի վերականգնած գծագրում տեսնում ենք, որ հնագույն MUL.APIN-ում եղել է UGA^{mushen} «Ագռավ» համաստեղությունը, որը հեռու չէ ***Առյուծի*** համաստեղությունից*[3]:

Բ. Լ. Վան Դեր Վարդենի, Դ. Թերեսիի եւ Ջ. Էվանսի կողմից (MUL. APIN) աստեղատների հնագույն տարբերակի վերականգնումը բացառիկ կարեւորություն ունի: Նրանց աշխատու-

*1,- B. L.Van Der Waerden, Science Awakening II, 1974, NY, p. 73:
*2,- «Սասնա Ծռեր», h. I, պատում «Է», Երեւան, 1936թ., էջ 323:
*3,- B. L.Van Der Waerden, նույն աղբյուր, էջ 73:

B. L.Van Der Waerden, “Science Awakening II”, p. 73:



թյունները եւս մեկ անգամ փաստում են, որ երկնային աստեղատների ձեւերը, քարտեզավորումը, տեսքն ու անունները, ձեւավորում են ստացել ըստ Հայկական լեռնաշխարհի լեռների, գետերի եւ լճերի ձեւերի նմանությամբ եւ տեղադրումով: Թեեւ աստղագետներ՝ Օլբոտտը*[1] եւ Մաունդերը վաղուց է ինչ փաստել էին, որ 12 կենդանակերպերի՝ ***զոդիակների*** «հայրենիքը» երկրագնդի 36^0, 42^0 տարածքում է գտնվում, սակայն, ցավոք, նրանցից ոչ ոք, ինքն իրեն հարց չէր տվել, թե հին գիտունները ի՞նչ են նկատի ունեցել, ի՞նչ հիմքով են երկնակամարի աստղերը խմբավորել ըստ՝ Հիդրայի (օձ), Ցուլի, Կույսի, Երկվորյակների եւ այլն տեսքով ու համապատասխան անուններով: Օրինակ, ինչո՞ւ են հին գիտունները, ասենք, 12 աստղերից բաղկացած տվյալ խումբը*[2] ներկայացրել որպես «Ցուլի համաստեղություն» եւ ոչ թե մի այլ կենդանու տարատեսակով: Ինչո՞ւ է օրինակ՝ «Ցուլ» համաստեղությունը՝ ցո՛ւլ, տավա՛ր: Ի՞նչ տրամաբանությամբ են երկնակամարի կենդանակերպ աստեղատները «ձեւավորված»:

Ըստ իս պատասխանը պարզ է: Փաստորեն, հին գիտունները, ըստ իրենց լեռների, գետերի նմանության եւ «հավատամքային պատումի» են «քարտեզավորել», ձեւավորում տվել երկնային աստղախմբերին, հիմք ընդունելով՝ ***«Այն ինչ վերեւում է, նույնը՝ ներքեւում է*** *(եւ հակառակը)»* մոտեցումը (*տիեզերքի, գոյության կառույցում, ամենափոքրը՝ ասենք **հյուլեն**, եւ մեծը՝ ասենք արեգակնային համակարգը, նույն սկզբունքով են կառուցված):* Փաստորեն, *տավար-ցուլի* նմանություն ունեցող Հայկական Տավրոսի լեռները երկնակամարում պիտի դառնային «Ցուլի» համաստեղություն, Տիգրիս եւ Եփրատ գետերը պետք է ձեւավորեին «Զրհոսի» համաստեղությունը, օձագալար ձգված Զագրոսի լեռները՝ «Հիդրայի» համաստեղությունը (Սասնա Ծռեր էպոսում՝ մատան յոթ դեւ) եւ այլն:

Աշխարհի որեւէ ուրիշ տարածքում չկան՝

1.Տիգրիս եւ Եփրատ գետեր, որ ներկայացնում են «Զրհոսի համաստեղության» հնագույն սիմվոլը՝ երկու սափորներից կամ ուսերից երկու գետերից ջուր հոսեցնող ծերունի. աստեղատունը՝ «Զրհոս – Ջկներ»,

2. «Ցուլի համստ.» (Տավրոս) > Տավար = ***հայկական Տավրոսի լեռներ,***

---

*1,- В. Олькотт, “Легенды звездного мира”, С. П., 1914, с.8.

*2,- «Հայ Մատենագիրներ, Ա. Շիրակացի», Երեւան, 1979թ., էջ 250:



3. «Երկվորյակների համաստ.» (Castor եւ Xi Gem.) = ***Արարադի Մարարադ եւ Մասիս ու Միս լեռները, նաեւ՝ Մարաթուկ:***

4. «վիշապի համաստ.» > Հիդրա (օձ) = ***Զագրոսի լեռներ,***

5. «Կույսի համաստ.» = ***Վանա ծովակ,***

6. «Ագռավ»՝ այսօրվա Corvus աստեղախումբը = ***Ագռավաքարը***՝ Վանա լճի հարավում ձգված ժայռը,

7. «Կարիճի համաստեղ.» = ***Կարիճի լեռներ*** > Կորդուքի լեռնաշղթա եւ այլն:



Տասներկու զոդեակ-աստեղատները*[1], երկրագնդի պտույտի «պատճառով», որպես առավոտյան առաջինը բարձրացող, երկնակամարում սահելով երեւում են՝ 6 + 6 հաջորդականությամբ՝ տարվա վեց ամիսներին վեց հատը, տարվա մյուս կեսին՝ հաջորդ վեցյակը: Ըստ աստղագետներ՝ Օքոլտի, Ծվարցի, Մաունդերի եւ Ֆլամարիոնի, երկնակամարի աստեղատներն ըստ զոդիակների «ձեւավորել» են մ.թ.ա. 3-2 րդ հազարամյակներում: MUL.APIN Միջագետքի պահպանված աստեղացանկը, ըստ Վան Դեր Վարդենի, ցուցում է մ.թ.ա. 1400-1100թթ. ժամանակները: Սակայն, այսօր, համակարգչային SKY Glob 3.5 ծրագրով կարող ենք «ժամանակով ետ գնալ» եւ ամառային ու ձմեռային արեւադարձերի ժամանակները ֆիկսել ըստ հնագույն տեքստերի ու որոշել ե՛ւ դիտարկման ժամանակը ե՛ւ այն տարածքը որտեղից դիտել են երկինքը: Ունենալով թեկուզ միայն մեկ ֆիկսված կետ, ասենք «Ջրհոս» համաստեղությունը, որն ըստ MUL.APIN-ի պետք է լինի ***Էա-Հայա*** գոտու աստեղախբում եւ ձմեռային ժամահատվածում, որպես ձմեռային արեւադարձը ֆիկսող կարդինալ աստեղատուն, մենք կարող ենք բացահայտել թե՛ երկնակամարը ըստ 18-36 աստեղատների «բաժանման» ժամանակը, եւ թե՛ նրա ծնողը՝ հայրենիքը: Եվ փաստորեն, յոթ հազար հինգհարյուր տարի առաջ, ձմեռային արեւադարձի ժամանակ, դեկտեմբեր 21-25-ին, արեւն առավոտյան «ծնվումելնում» է ***Ջրհոսի*** աստղախումբ համաստեղությունից, որը հենց այդ ժամանակ «կանգնում է» Տիգրիս եւ Եփրատ գետերի ակունքների մոտ տարածքի վրա *(Ներքին Տավրոսի լեռնաշղթա, Սերմնաց կամ Բյուրակն լեռներ, Արածան գետի մոտ):* Հիթթիթների *(մ.թ.ա. 18-14-րդ դդ.)* հավատամքային տեքստերում՝ «Աստվածների առաջին երեք սերունդները» հենց այս տարածքում են ծնունդ առնում. *«... Նախ՝ հիմա հղի ես դու Ամպրոպի Աստծով անվեհեր: Հետո՝ հղի ես դու այժմ հսկայական Արանցախ գետով: Եվ հետո՝ հղի ես դու այժմ Թասմիսու*

---

*1, - B. L.Van Der Waerden-ի այն կարծիքը (նույն աղբյուր, էջ 83), որ իբր մ.թ.ա. 1400-1100թթ. արեւային տարին բաժանված էր 12 մասերի, սակայն զոդիակները՝ միայն չորս մասի, այսինքն չկար 12-ի օղակաշղթան, թյուր տեսակետ է, որովհետեւ նախ՝ 18+18=36 բարձրացող աստղերի ցուցակում այս 12-ը կան, երկրորդ՝ mulAPIN-ում չորս զոդիակային աստեղատների ընդգծումը վերաբերում է չորս եղանակների գիշերահավասարների եւ արեւադարձերի ժամանակ չորս աստեղատների առավոտյան բարձրացմանը եւ արեւի մուտքը այդ աստղատներ:

Արծիվը վերեւում, ցուլը եւ առյուծը ներքեւի աջ եւ ձախ կողմերում: Աստղագիտական նշանակություն ունեցող այս պատկերը գտնվել է հայկական լեռնաշխարհում (մ.թ.ա. 2-րդ հազարամյակ):
/ Նկարը վերցված է Ա. Մովսիսյան, «Հայկական մեհենագրություն», էջ 230, Երեւ. Պետ Համալսարան, 2003թ./

աստծով անվեհեր...»:[1] Փաստորեն Կումարբին հղիանալով միանգամից ծնելու էր երեք աստվածություններ: Հնագույն բոլոր պատումներում, հայր աստվածության չորս կողմերում են՝ «Առյուծը», «Ցուլը», «Արծիվը», եւ մարդը՝ «Զրհոսը», որ չորս կարդինալ աստեղատներն են: Հնագույն թաքնագիտական այս «ներկայացումը» ժառանգաբար անցել է նույնիսկ քրիստոնեական կանոնագիրք՝ «Նոր Կտակարան» *(Հայտնություն Հովհաննու, գլ. Դ, 6 - 8):*

«Առյուծի», «Ցուլի» եւ «Արծիվի» խորհրդապաշտական պատկերները բազմաթիվ են: Դրանք շատ հին են եւ ունեցել են նաեւ աստղագիտական նշանակություն: Թեւերով, թռչող սկավառակը երկնքում, ճախրող արեւի հնագույն սիմվոլն է: Ներքեւում, ***առյուծը*** եւ ***ցուլը*** ներկայացնում են արեւի ընթացքը. ամառային արեւադարձը եւ գարանանային գիշերահավասարը՝ «Առյուծ» եւ «Ցուլ» համաստեղություններում, որ միայն հնարավոր է մ. թ. ա. VII-V հազարամյակում, երբ Հայկ-Հալդին՝ «Առյուծի» վրա է, Թեշուբը՝ «Ցուլի»: Արեւը **Ցուլում** է գարնանը՝ Մարտ 21-ին. հնթանոս հայերի հին նոր տարին է: Ամռանը՝ հունիս 21-26-ին, արեւադարձը **Առյուծի** համաստեղությունում է եւ արեւը «միակցվում» «Առյուծի» Ռիգիլուս (թագավոր, տանուտեր) աստղի հետ: Աշնանային գիշերահավասար՝ ***Կարիճի*** համաստեղություն: Ձմռանը՝ արեւադարձը **Զրհոսի** համաստեղությունում է:

Բրահմայական հավատամքում, այս չորս աստեղատների խաչման «տեղը» համարվում է ֆիկսված արական կենտրոն, որը Cygnus՝***Կարապ*** անունով աստեղատունն է: Կամ այլ ձեւակերպմամբ՝ ***վիշապ-շրջանի*** ներսում արտահայտված **ՄԵԿ**-ը՝ իր խաչաձեւ կամ քառակողմ արտահայտությամբ, կոչվում է՝ ՈԳԻՆ, որ ծնվեց կրկնակի*[2]:

MUL.APIN-ի տեքստերով աստեղատների դասավորության վերականգնումը (Բ.Լ.Վան Դեր Վարդեն)*[3] ի դերեւ է հանում, որ հնում 14 աստեղատներ տարբեր դասավորություններ են ունեցել:

MUL.APIN-ի աստղերի ցուցակը, փաստորեն, Սասնա էպոսում նկարագրված դեպքերի հետ կապված, շատերի մոտ նոր «տեսադաշտեր» է ճշտում: Օրինակ, ինչպես Ա. Դավթյանն է նկատել. *«Մեր նախնիների համար չափը արտավայրն է, այսինքն՝ IKU-Արտ-Պեգասի ուղղանկյունը»: «Այս համաստեղությունը կոչվել է «Արտ», որի տերը էպոսի Արտատեր պառավն է: Այստեղ է*

---

*1,- «Հին Արեւելքի Պոեզիա», 1982թ., Երեւան, էջ 180,
*2,- H.P. Blavatsky, «The Secret Doctrine», V. I, p.19.
*3,- B. L.Van Der Waerden, “The Birth of Astronomy”, 1974, p. 71, 79.



Հնրմնս Եռամնծի «Ինչպես վերնում, այնպես էլ ներքնում» բանաձեւումը, որ հայելու նման՝ հակադարձ արտացոլման սկզբունքի հիմքով է:

որս անում միամիտ Դավիթը եւ արժանանում արտատեր պառավի կշտամբանքին[1]:*

MUL. APIN-ի տեքստում ասվում է. «IKU-ի (արտի) հետեւում կանգնած աստղերը Դումուզի աստվածն է (mul LU. ḪUN.GA), MUL.MUL ***յոթնապատիկ*** *աստվածությունը»*[2]: Էպոսի Դավիթ-Դումուզին Սասնո Խոյն է, յոթերորդ աստվածությունը (1+8) համակարգում: Ըստ վերլուծողի, Խոյը հետեւում է IKU-արտը՝ աջից ձախ ուղղությամբ*[3]:

Միջագետքյան աստեղային կարգականոնների մասին աղյուսակները դեռ ուսումնասիրությունների ընթացքում են եւ ամբողջական վերականգնումը ժամանակի խնդիր է: Հնագույն տեքստերի նոր ընթերցումներն ու ուսումնասիրությունները կարծես որդեգրել են նոր մոտեցումներ. աստիճանաբար սկսվել է ժխտվել եգիպտական, Միջագետքյան եւ այլ հնագույն քաղաքակրթությունների մասին քարացած մի շարք թյուր տեսակետներ:

Հնագույն համակարգում, արարչության եւ աստեղատների փուլային պտույտների կապը բացահայտ է բոլոր հնագույն հավատամքային պատումներում: Թե՛ հնագույն Հայաստանում, թե՛ Միջագետքում, թե՛ Եգիպտոսում, Հնդկաստանում եւ Մայաների արարչության մասին հոգեւոր տեքստերում, մշտապես առկա է՝ աստվածներին աստեղատների հետ զուգահեռ ներկայացնելը: Համադրելով միջագետքյան, տիբեթական, եգիպտական եւ հայկական աստեղատուն կենդանակերպերի պահպանված պատկերագրությունները, ինչպես նաեւ հնագույն կոսմիկական առասպելաբանությունները եւ օգտագործելով

Նկ. Ա

P. Rawson, “Sacred Tibet”

Նկ. Բ



Sky Glob 3.5, մ.թ.ա. 17-րդ հազարամյակ, երբ «Անգղ-կարապի», «Վիշապի» եւ «Վարազի» աստեղատները «հանդիպում» են հյուսիսային բեւեռում:

*1, - Ա. Դավթյան, «Գարուն» ամսագիր, 1.2003թ., էջ 82:
*2, *3, - B. L. Van Der Waerden, նույն աղբյուր, p. 71:

համակարգչային ծրագրերը *(աստղերի տեղաշարժերը 64 հազար տարվա լայնքով, sky glob),* մենք հանգեցինք՝

ա) Հայկական լեռնաշխարհն է երկինքը աստեղատուն կենդանակերպերի սիմվոլներով «քարտեզավորելու» հնագույն հայրենիքը *(Օլքոտ*[1], Ֆլամարիոն),* եւ այն կատարվել է ոչ թե մ.թ.ա. III-II, այլ՝ մ.թ.ա. VII-V հազարամյակների ընթացքում:

բ) Երկնքում ***կերպարանավորված*** 18-36 աստղախմբերի բաժանումներն ըստ գոտիների, նրանց սիմվոլները, անունները եւ դիրքերը՝ ուղղակի համապատասխանության մեջ են Հայկական լեռնաշխարհում գտնվող լեռների, գետերի, լճերի անունների եւ տեղադրության հետ, ըստ՝ ***«ինչպես վերեւում, այնպես էլ ներքեւում»*** հավատամքային սկզբունքի:

գ) «Սասնա Տուն» էպոսը արարչության եւ աստեղատների զուգահեռներով հավատամքային կարգականոն-պատում է:

դ) Բոլոր հնագույն աստղաբաշխական սխեմաներն ու արարչության մասին կոսմիկական առասպելներն աղերսվում են տիեզերական մեծ տարվա *(25920 տարի)* շրջափուլերի հետ, դրանց «սկիզբը» նախանշելով հյուսիսային բեւեռ-կենտրոնում երեք աստեղատների՝ «Կարապի», «Վիշապի» եւ «Վարազի» «հանդիպումը»:

Տիբեթյան հավատամքային համակարգում, որը կանոնիզացիայի է ենթարկվել հնագույն արիացիների այս տարածք ներխուժումից հետո, արարչության սկզբում եւ փուլային անցումներում, կենտրոնական են հյուսիսային բեւեռի երեք աստեղատները: Ներքեւում բերված համեմատական պատկերները ցուցում են հյուսիսային բեւեռում երեք աստեղատների՝ ***Թռչունի, Վիշապի եւ Վարազի*** առաջնայնությունը: Տիբեթյան համակարգում, Բրահմի մտքից սկսում է ձեւավորվել իլյուզիայի աշխարհը, որը նրա՝ նյութական, տիեզերական արտահայտությունն է: Տիեզերական մեծ տարին եւ կոսմիկական շրջապտույտ-փուլերը աղերսվում են Բրահմի կյանքի տեւողության հետ:

Նախորդ՝ 119 էջի նկարի կենտրոնում **Կենաց Ծառն է** *(Ծիր Կաթինը, տիեզերական գետը),* որի շուրջը «հանդիպում» են առաջին երեք կենտրոնական աստեղատները:

1-ինը թռչունն է, հնագույն հավատամքում այն խորհրդանշում է **իղձ-կիրք-ցանկություն***[2]**:** Այսինքն, Աստծո էությունը ցանկանում է նյութականորեն արտահայտվել եւ «գահավիժում» է իլյուզիայի շրջապտույտի մեջ: «Թռչունը» եգիպտական Ռ-Ա *(արեւ)*-ի հայրն է, որ հայկական՝ Անգղն է, այսօրվա Cygnus-ի՝ «Կարապի» համաստեղությունն է. հայկական էպոսի հերոսների աջ բազուկին «դաջված» է խաչ-հայրը՝ ***Խաչ-Պատարագին*** սիմվոլով:

---

*1,- В. Олькотт, “Легенды звездного мира”, СПБ. 1914; К. Фламарион, “История неба”, СПБ. 1875:
*2,- Philip Rawson, “Sacred Tibet”, 1991, NY, p. 66.

2-րդը՝ «Վիշապն» է. հնագույն հավատամքում խորհրդանշում է **բեւեռացում-ատելություն-հակադրություն*[1]:** Այսօր այս աստեղատունը հայտնի է Դրակոնիս «վիշապ» անունով:

3-րդը՝ «Վարազ կամ Ցուլ». խորհրդանշում է՝ **անիրազեկություն-պատրանք-մոլորություն*[2]:** Այսօր այս աստեղատունը հայտնի է Cepheus անունով:

Այս երեք աստեղատները պտտվում են ***Կենաց Ծառի*** շուրջ, որ Ծիր Կաթինն է եւ խորհրդանշում է՝ նրա շուրջ հոգիների շրջապտույտը երեք *(Թռչունի, Վիշապի, Վարազի)* փուլերով: Շրջապտույտից դուրս, «հանգստի» կամ «կատարելության» շերտն է՝ ոչ նյութական, այլ հոգեւոր գոյությունը: Հնագույն արարչության մասին համակարգում, հյուսիսային բեւեռի վերոնշյալ առաջին երեք աստեղատներից հետո, հյուսիսային բեւեռում սկսում են «իշխել» Մեծ եւ Փոքր Արջի(Սայլի) համաստեղությունները եւ սկսվում է «ձեւավորվել» արեւի շավիղով կենդանակերպ համաստեղությունները: Ըստ հայկական «Սասնա Ծռեր» էպոսի, շարքում առաջինը՝ «Երկվորյակներն» են, նրանցով է սկսվում աստեղատների «ձեւավորումը»: Ի դեպ, հետաքրքրական է, որ Մայաների հավատամքում Երկվորյակների պատմությունը ճշգրիտ համատեղություն եւ նմանություն ունի Սասնա էպոսի Երկվորյակների պատումի հետ, նույնիսկ անունների ու դեպքերի համահունչ «զուգադիպությամբ»*[3]: Այս «զուգադիպությունը» մտածելու լուրջ տեղիք է տալիս, եթե ավելացնենք նաեւ Իգնատիոս Դոննելլիի այն նկատումը, որ Պտղոմեոսի «Փոքր Ասիայի աշխարհագրություն» աշխատության մեջ նշված Մեծ Հայքի հինգ քաղաքների անունները (մ.թ. 140թ.) զուգահեռ համապատասխանության մեջ են կենտրոնական Ամերիկայի հնագույն հինգ բնակավայրերի անունների հետ:

Հայկական քաղաքներ	կենտրոնական Ամերիկայի բնակավայրեր
Chol	Chol-ula
Colua	Colua-can
Zuivana	Zuivan
Cholima	Colima
Zalissa	Xalisco

(Short's "North Americans of Antiquity", p. 497),
Ignatius Donnelly, "Atlantis", NY, 1976, p. 178.

Երկվորյակների մասին Մայաների միֆոլոգիայի նկարը բերված է՝ J. M. Jenkins, "Maya Cosmogenesis - 2012", USA, 1998, գրքից:

Հայկական լեռնաշխահը շումերները կոչում էին ԱՐԱՏՏԱ երկիր: ԱՐԱՏՏԱ եւ ԱՏԼԱՆՏԱ անուններն ունեն հնչյունային արտահայտության նմանություն:

*1, *2,- Philip Rawson, "Sacred Tibet", 1991, NY, p. 66.
*3, - J. M. Jenkins, "Maya Cosmogenesis - 2012", 1998, USA.

ԳԼՈՒԽ ՉՈՐՈՐԴ

ՄԱՅՐ ՊԱՏՈՒՄ (Basic Myth), 1+8 ՀԱՄԱԿԱՐԳ, ՆԵՐՔԻՆ՝ ԲՆԱԶԱՆՑԱԿԱՆ (մետաֆիզիկա) ԵՎ ԱՍՏՂԱԳԻՏԱԿԱՆ ԻՄԱՍՏՆԵՐԸ (համառոտ անցում)



Հնագույն բոլոր «միֆական պատումները»՝ թե՛ աստվածների անունների նմանությամբ, թե՛ մոտիվների ու պերսոնաժների նույնությամբ, փաստում են, որ գոյություն է ունեցել «մայր պատում», որը ժամանակի ու տարածության մեջ սփռվելով, ունեցել է իմպրովիզացիաներ: Հնդեւրոպական լեզուն ու հնդեւրոպացիների հավատամքային «միֆերը» ուսումնասիրողները համակարծիք են այս հարցում, սակայն, վերջապես ինչի՞ մասին են այս «միֆերը», ո՞րն է դրանց ասելիքն ու նպատակը՝ մինչեւ այժմ լուրջ քննության առարկա չի դարձել: Բավարարվելով արտաքին համեմատական նմանություններով, լուրջ փորձ չի արվել բացահայտել՝ ըմբռնել հների հավատամքային կարգականոնի ներքին իմաստները:

Նախ, հնագույն բոլոր միֆերը կամ տարբերակները ***ներհայացական*** են եւ ներկայացնում են տիեզերքի (կամ ընդհանրապես՝ գոյության) սկիզբն ու կառուցվածքը, ցուցում են մարդու տեղն այդ կառույցում, ինչպես նաեւ՝ մարդու եւ մարդկության ***հոգեւոր բարեշրջման*** (էվոլյուցիա) ճանապարհը: Ըստ հների աշխարհճանաչողության, գոյաբանական աշխարհը ստորաբաժանված է՝ հոգեւոր (աննյութ) եւ նյութական ռեալությունների՝ 1:8 հարաբերությամբ: Այսինքն, աննյութ, անձեւ Մեծ ՈՉԻՆՉ-ից, աստիճան առ աստիճան, ձեւավորվում են հոգեւոր ութ սֆերաները, որի արդյունքում «ստեղծվում» է մեր երեք չափումնանի ռեալությունը: Ըստ հների, անսահմանությունը մեկն է՝ Աստծո գոյությունն է, որն արտահայտելով ինքն իրեն Մեծ Ոչինչից **(ՈՉԻՆՉ՝ սիմվոլը = մայր վիշապ՝ նախատիեզերք)**, դառնում է արտահայտված լոգոս՝ հայր աստվածություն **(օրինակ, ըստ հնդկական անվանումի՝ ՀԱՐԻ Բրահմա)**, որից սերում են «անթիվ» սահմանավոր տիեզերքներ: Նա ամենայն է եւ ամեն ինչի մեջ է:

Ծիր Կաթինի մեջ **(որպես լոկալ տիեզերք)** նա՝ Լոգոսը, նույնպես տրանսցենդենտալ հիմքով, նստած է կենտրոնում եւ, ստեղծելով 1 + 8 = 9 ռեալություններ **(հոգեւոր-աննյութ եւ նյութական-շոշափելի)**, որոնք հակադրության ու համադրության միասնականությունն են, գոյաբերվում-արտահայտվում է 100 տարի **(Բրահմայի մեկ օրը՝ 311 040 000 000 000 մարդկային տարի է)**: Որից հետո՝ արտահայտվելուց հետո, բարձրագույն միակ գոյությունը, երբ «գոհանում է» իր մտքի եւ շնչի արտացոլանք՝ «նյութական տիեզերքից», վերադառնում է ինքն իր մեջ, «ոչնչացնելով» իր «ստեղծած, ինքնասերած» նյութական տիեզերքը: Սա նրա մեկ փուլն է՝

ԱՆԳՈՅ-(ից) > ԳՈՅ-(ից) > ԱՆԳՈՅ:

Գ. Վ. Ֆ. Հեգելը, Ոգու (Աստծո) այս երեք փուլերը կոչում է՝

1) Սուբյեկտիվ Ոգի → 2) Օբյեկտիվ Ոգի → 3) Բացարձակ Ոգի ատրիբուտների



Տիեզերական մարդը՝ լոգոսը, 12 զոդիակ-աստեղատների կենտրոնում, որ ըստ հնագույն հավատամքային պատումների՝ Արայան Արան է, Փոքր Միհրն է, Ադամ Կադմոնն է, Քրիստոսն է եւ այլն:

փուլային շրջապտույտ*1: Բարձրագույն ՈԳՈՒ **(Հայր)** «մանիֆեստացիան», վերջին՝ 8-րդ տիեզերական փուլում, հանդես է գալիս որպես՝ **Որդի Լոգոս,** որ Քրիստոսն է, եգիպտականում՝ Հորոսը (որից Հորոսկոպ զոդիակների անունը), բաբելականում՝ Մարդուկը, հայկականում՝ Փոքր Միհրը կամ Արա Գեղեցիկի որդի Արան, հնդ-արիականում՝ Միթրա, Միհր եւ այլն: Նախորդ 7-րդը՝ «մեռնող եւ հառնող» աստվածությունը, 8-րդի հայրն է, որի կերպարանավորումը՝ վիպական ներկայացումը,- եգիպտական Օզիրիսն է, շումերական Դումուզին, հայկական Արա Գեղեցիկը կամ «Սասնա էպոսում»՝ Դավիթը: Քրիստոնեության մեջ 7-րդը հանդես է գալիս որպես Հովհաննես Մկրտիչ + Յիսուս կոմբինացիայով: Ամեն ինչի հիմք հանդիսացող «ոսկյա եռանկյունին» իր հայելային անդրադարձումներով **(երեք եռանկյունի՝ 3x3=9 ընդհանուր)** ներկայացնում է ողջ գոյությունը:

Ըստ հնագույն թաքնագիտական դպրոցների **(Պյութագորյան դպրոց, եգիպտական եւ այլն)***2, զոդիակի շղթայի մեջ կանգնած է մեր լոկալ տիեզերքի հոգեւոր մարդը՝ հայկական Փոքր Միհրը **(կամ Արա Գեղեցիկի որդին՝ Արան)**, եգիպտական Հորոսը, Ադամ-Կադմոնը եւ այլն*3: Նրա կենսահուրը՝ «էներգիան», տրանսֆորմացվելով, ստեղծում է տիեզերական կյանքն այս տարածքում: Իսկ երկրային մարդու հոգին, տիեզերական այս «աննյութնյութական» էակի մասնիկն է՝ հոլոգրամային արտահայտությունն է նյութական մարմնում, որ ***ծնունդ - մահ - ծնունդ*** վերամարմնավորումների (ռեինկարնացիա), կենսափորձերի «շնորհիվ» ձեւավորում է իր «բարձրագույն գիտակցությունը» եւ, բարոյահոգեւոր պրոգրեսիվ աճով, ի վերջո, գիտակցելով իր վերերկրային էությունը «նույնանում է» տիեզերական մարդու հետ **(Ադամ-Կադմոն, Քրիստոս, Հորոս եւ այլն)**: Որից հետո, եթե տվյալ մարդու հոգին կատարելության է հասել եւ անցել է 49 շերտերի՝ աստվածությունների «քննությունը», այլապես նորից նախատեսվում է վերադարձ՝ մարդկային ծնունդ-վերամարմնավորում, ՀՈՐՈՍ-ը նրա հոգին հաճնում է Օզիրիսին (Օրիոն-Հայկի

*1,- Гегель, “Сочинения”, “Философия духа”, т. III, 1956, Москва.
*2,- M. Hall, “The Secret Theachings Of All Ages”, 2000, USA.
Moustafa Gadalla, “Egyptian Cosmology”, 2001, USA.
*3,-Տիեզերական անտրոպակոսմոս գեր-էակը տարբեր ժամանակներում եւ տերիտորիաներում անվանվել է տարբեր անուններով: Եբրայական կոչված ներկայացումը՝ շումերականից, եգիպտականից եւ հիմանականում՝ հնդեւրոպականից, փոխառությունների շարան է:



Մեռյալի հոգին (նկարում #5) սկզբում հասնում է ճշմարտության սիմոլը հանդիսացող կրկնակի Մա-Աթ աստվածության (նկարում#1) արդարադատության սրահ, որտեղ Անբուն (Anbu, Anubis) (նկարում#2) եւ Անանը (նկարում#3) կշռում են սիրտը: Ապա Թոթը (նկարում #4) մեռյալի հոգին հանձնում է Հորուսին (նկարում#6), որն իր հերթին դիմում է բարձրագույն դատավոր Օզիրիսին (նկարում#7): Լսելով 42 աստվածակալ աստվածությունների (նկարում#8) քննությունը, Օզիրիսը որոշում է կայացնում(նկարը՝Moustafa Gadalla, "Egyptian Cosmology", 2001, USA., գրքից):

համաստեղություն), որը նավով այդ հոգին դուրս է բերում 12 կենդանակերպերի շղթայից դեպի «հոգեւոր էվոլյուցիայի» հաջորդ փուլ՝ հոգեւոր գոյություն (հնագույն եգիպտական կարգականոն)*1:

Հնդկական հավատամքային էպոսում, Արջունայի ողջ խոսակցությունը աստրալ պլանի իպոստասներից՝ Քրիշնայի հետ ***(Լուսնային խորհուրդ-աստվածություն՝ շունչ-հոգի),*** ամբողջ համակարգի, վիպական պատում **«Մահաբհարաթայի»** էությունն է, միջուկն է՝ փիլիսոփայական ուղերձն է, որը տիեզերական շրջապտույտում մարդու հոգու էվոլյուցիայի մասին է:

«Դեպի հոգեւոր գոյություն» կենսափիլիսոփայությունը բոլոր հնագույն «միֆական» պատումների ծրագրային նպատակն է: Օրինակ, ըստ հնագույն եգիպտական հավատամքային կարգականոնի, մարդու հոգին մեռնելուց հետո ենթարկվում է 42 աստվածություն-դատավորների եւ 7 գլխավոր աստվածների «քննությանը», որի ընթացքում որոշվում է նրա «կարգավիճակը». կամ վերադառնում է դեպի «երկիր» (վերածնունդ) կամ, եթե «մաքուր» է, ազատագրվում է նյութականի իշխանությունից եւ շարունակում է իր «հոգեւոր առաջընթացը» առավել բարձր ռեալություններում*2:

Փաստորեն, եգիպտական բուրգերը՝ իրենց համապատասխան «հոգեւոր առաջընթացի խցերով», ողջ պատմական Հայաստանի տարածքով մեկ սփռված, ժայռերի մեջ փորված-կառուցված խցերը, որոնք «ոսկե անկյունահատման» սկզբունքով ստեղծված մենախցեր են, ինչպես նաեւ Միջագետքյան զիկուրատները, ծառայել են միեւնույն հոգեւոր նպատակի համար: Մեդիտացիայի (գերկենտրոնացում, աղոթք, կապ) միջոցով ստեղծվում էր հոգեւոր կապ «այլ աշխարհների»՝ հոգեւոր ռեալությունների հետ: Կար (եւ միչեւ այժմ էլ գոյություն ունեն՝ Տիբեթ-Հիմալայաններ) պրակտիկ «հոգեւոր վարժանքների» համակարգ, մշակված «մեթոդիկա», կապված՝ աղոթատեղի, նստելու դիրքի, մտքի կենտրոնացման եւ այլն, հետ:

Հետաքրքրական է, որ հնագույն հոգեւոր կենտրոնները, եթե լեռնային երկրում է գտնվում, ապա ծովի մակերեւույթից 1600-ից միչեւ 3600 մետր բարձրության վրա է, եթե հարթ տարածքում է, ապա, որոշակի բարձրությամբ, ճշգրիտ հաշվարկումներով կառույց է (Միջագետքյան զիկկուրատ, եգիպտական կամ ամերիկյան հնդկացիների բուրգ):

Ամերիկյան գիտնական Գրեգ Բրադենի ուսումնասիրությունները պար-

---

*1, 2, - Moustafa Gadalla, "Egyptian Cosmology", 2001, USA. "The Book of the Dead", Chapter CXXV



գում են, որ թե՛ հոգեւոր մեդիտացիային համար լեռնային այրերում եւ թե՛ Քեոպսի բուրգի թագավորի խցում՝ ***երկրագնդի մագնիսական դաշտի ինտենսիվությունը ցածր է, մոտ է զերոյին[*1]:***

Ըստ մեր դիտարկումների, 1600-3600 մետր բարձրություններում ***թթվածնի քանակությունը 15-18% քիչ է, որը թափառող մտքի համար կենտրոնացման պայման է:***

Բոլոր նշանավոր հոգեւոր բարձրագույն կենտրոնները՝ Օլիմպոս, Արարատի երկիրը, Կաշմիր, Մայաների հոգեւոր կենտրոնները եւ այլն, գտնվում են լեռնային գոտիներում եւ «զբաղեցնում են» երկրագնդի հասարակածից 30 ⁰ վեր, մինչեւ 40 ⁰ շերտը: *Սա պայմանավորված է արեւի դեպի երկիր ուղղված ճառագայթների անկյունով, որ պատճառ եւ պայման է երկրի վրա արեւի էներգիայի «բարեխառն» կենսական ուժգնության համար:*

Հոգեւոր բարձրաստիճան մեդիտացիայի համար այս նախադրյալ պայմաններն անհրաժեշտ են: Հենց այս պայմանով իսկ, Պաղեստինի տերիտորյան, Փիլոն Ալեքսանդրացու եւ նրա նմանների կողմից որպես նոր «սրբազան տարածք Holly Land»-ի քաղաքական նկատառումներով նորամուծությունը՝ կեղծ եւ հնարածին է:

Քրիստոնեական «Ահեղ դատաստան» կոչվածը, ըստ Հերմես Եռամեծի՝ «Գերագույն հրաշանքի օր» է, երկրի վրա մասսայական «հոգեւոր բարեշրջման», իսկ մերժողների համար՝ դատաստանի օրն է, երբ տիեզերական 25920 տարեփուլը փակվում-վերջանում է: Թաքնագիտական աստղագիտության մեջ, սա երկակի՝ հոգեւոր եւ աստղագիտական նշանակություն ունի: Այսինքն, փոքր փուլ-շրջապտույտում, Օրիոն համաստեղությունն ամենամոտն է (մոտենում է) 12 կենդանակերպերի շրջանակ-շղթային եւ երկրագնդի ուղեծրին ***(սա տեղի է ունենում 13 հազար տարին մեկ, որը զոդիակային մեկ տարվա՝ 25920 շրջափուլի կեսն է)[*2]***: Տիեզերական Precession երեւույթն իր «վիպական արտահայտությունն» է ստացել բազմաթիվ հավատամքային «միֆական» պատումներում: Օրինակ, հայկական առասպելում՝ Վահագնը հարդ է գողանում Բարշամից[*3] ***(Վահագն աստվածը հոգիներ է գողանում-փրկում աստրալ պլանի լուսնային իպոստաս Բարշամից),*** քրիստոնեության մեջ սա ներկայանում է որպես «եկեղեցու հափշտակում» կամ՝ Քրիստոս որպես «հոգիների գող» եւ այլն:

Շումերաբաբելական, վեդայական, հունական, հայկական եւ այլ պատումներում, առաջին գոյությունը **(հայր լոգոսը), Մեծ ՈՉԻՆՉ- ից** արտահայտվում է հիմնական երկու փուլերով (4+4): Այսինքն, միակ գոյությունը՝ մեկը, որ աստի-

---

*1,- Gregg Braden, «Awakening to Zero Point», 1997, USA.
*2,- G. Hancock & R. Bauval, «The Message Of The Sphinx» p.231, 283.
*3,- Ա. Ղանալանյան «Ավանդապատում», 1969թ., Երեւան:

ճանաբար բացահայտում է իր ութ արտահայտությունները (1>8 համակարգ), ներկայացվել է կենտրոն եւ երկու շրջանագծերի կամ երկու իրար նկատմամբ հակադարձ պտտվող քառակողմ խաչերի (svastika) տեսքով: Սա տիեզերական եւ հնագույն խորհրդաբանական ***մեկ***-ն է՝ ***«բովանդակը»,*** որն իր պոտենցիալում ունի արտահայտվելու ութ սֆերաները: Հնագույն հեթանոսական տաճարները եւ քարանձավային վանքերը կառուցված էին այս սկզբունքով. իրար մեջ երկու քառանկյունաձեւ կառույց եւ կենտրոնում՝ խորան կամ կրակարան, որն ըստ հնագույն պատկերացումների՝ տիեզերքի մոդելն էր: Քրիստոնեական եկեղեցաշինության հատակագիծ-մոդելը՝ խաչը խաչի մեջ եւ կենտրոնական գմբեթ, միեւնույն սկզբունքի փոխառությունն է*[1]:

Մեկը՝ Մեծ Ոչինչից սկսելով «բացահայտվել», իր առաջին եւ լիարժեք «ձեւավորումը» ստանում է առաջին փուլում քառակողմ արտահայտվելով (***քառագլուխ Բրահմա*** կամ քրիստոնեության մեջ ***էզոթերիկ քառանիվ սայլ*** եւ այլն): Նրա՝ որպես ***«սկիզբ»*** աստեղային «ներկայությունը», հնագույն՝ հայկական, շումերական, եգիպտական, վեղայական համակարգերում Cygnus

Գծ. # 1



Գծ. # 2



*1-Փաստորեն, թե՛ կարծր ժայռերի խորքում փորված ճարտարապետական ճշգրիտ հաշվարկներով կառույցների *(Գեղարդ, Այրիվանք եւ այլն, պատմական Հայաստանի տարածքում ժայռափոր մենախցերի թվաքանակը հասնում է հարյուրների)* եւ թե՛ բուրգերի շինարարական տեխնոլոգիաներն այսօր մոռացված են: Հեթանոսական տաճարների հորիզոնական, երկարաձեւ կառույցները՝ ինչպես հունական Զեւսի տաճարը, հայկական Գառնին եւ այլն, քրիստոնեության ժամանակներում ձեւափոխվեցին՝ կրկնակի խաչի հիմքով դեպի վեր ձգվող եկեղեցիների ճարտարապետական ֆորմայով, որը համարվեց նոր մոտեցում, քրիստոնեական ժամանակների մտքի հանճարեղ նորարարություն եւ այլն: Սակայն դա այդպես չէ. հեթանոսական ժամանակներում, կային հավատամքային կառույցների երկու ճարտարապետական մոտեցումներ՝ 1. հեթանոսական տաճարի մեզ լավ հայտնի, հունական անվանում ստացած, տարածական ֆորման(Գառնի), եւ 2. ներքին ժայռափոր հավատամքային մեհյանները՝ հոգեւոր կատարելիության ձգտող անապատականների համար (տես՝ գծ. #1, #2): Վիմափոր մեհյանների ճարտարապետական ֆորման՝ interior, ներմուծվեց քրիստոնեական եկեղեցաշինության մեջ եւ դարձավ՝ արտաքին կառույց-ֆորմա՝ exterior:

Նախահնդեւրոպացիների հայրենիքում՝ Հայկական լեռնաշխարհում, վիմափոր հոգեւոր կենտրոն-կառույցները, հնագույն բուրգերին նախորդող հոգեւոր կառույցներ են:

Գեղարդի ժայռին կից եկեղեցին 12-րդ դարի կառույց է: Սակայն, 1-ին եւ 2-րդ հարկերի ժայռափոր տաճարասրահները քրիստոնեական եկեղեցիաշինության ճարտարապետական լուծումներին «խորթ» կառույց է: Քրիստոնեական ժամանակների երկրորդ նման ժայռափոր կառույց չկա, որովհետեւ այն փորել, կառուցելու տեխնոլոգիան մոռացված, կորսված էր: Գեղարդը

(հավք-թռչուն) համաստեղությունն է, որը 36000 կամ կեսը՝ 18000 տարին մեկ դառնում է Հյուսիսային բեւեռում իշխողը *(այսօր՝ հյուսիսային բեւեռում «իշխում է» Փոքր Արջի համաստեղությունը):*

Cygnus = Swan(լատին.) = Կարապ(հայ.) համաստեղությունը հնդեւրոպական բոլոր հնագույն միֆոլոգիաներում աղերսվում է հիերարխիայի գերագույն աստվածության հետ: Հնում Կարապը *(այսօրվա անունով՝ Cygnus)* համարվել է հյուսիսային համաստեղություն*[1]: Հունական Զեւսը Կարապի տեսքով այցելում է Լեդային, որի հետեւանքով ծնվում են «Երկվորյակներ» համաստեղությունը՝ Կաստոր եւ Փոլուքս (Castor & Pollux) աստղերը: Հնդկական Բրահմին մշտապես ուղեկցում է Համսա թռչունը (Կարապ կամ Սագ):

[{Cygnus աստեղատունը որպես ութաթեւ աստղ ուրարտական շրջանի թագավորների եւ Տիգրան Մեծի թագի վրայի պատկերանշանն է: Թաքնագիտական խորհրդապաշտության մեջ ութաթեւ աստղը բարձրագույն էոնի սիմվոլն է՝ «թագ»[2] *իմաստով, որ ներմուծված, ընդօրինակված է Կաբ-*

(սկիզբը նախորդ էջում) Գեղարդը հեթանոսական ժամանակների Թոհոր լուսաբեր աստվածության տաճարն է, որ շանթարձակ զենքով՝ գեղարդով *(ըստ համընդհանուր հնդեւրոպական մայր պատումի սցենարի)* սպանում է տիեզերական վիշապին: Գեղարդի ժայռափոր տաճարը որեւէ առումով չի կարող քրիստոնեական լինել: Քրիստոնեական եկեղեցում պատկերապաշտությունը, եւ այն էլ վիշապապոչերով առյուծների հարթաքանդակներ պատկերելը՝ անհարիր էր: Պռոշյանների տոհմանշանը համարվող այս հարթաքանդակն իրականում՝ երկրագնդի առանցքի տատանումով՝ Precession-ի երեւույթով պայմանավորված, մ.թ.ա. III-II հազարամյակներում, տարվա չորս եղանակների սկզբին՝ գիշերահավասարներին եւ արեւադարձին, առավոտյան առաջինը բարձրացող աստեղատներում արեւի ելքի հետ է առնչվում, որ հայ հնագույն «Սասնա Ծռեր» էպոսի վիզուալ արտահայտությունն է:

Գեղարդի վիմափոր տաճար: Վիմափոր տաճարի 1-ին հարկում, գլխավոր պատին փորված ցլան եւ վիշապագլուխ պոչերով երկու առյուծների պատկերաքանդակը ցուցում է նրա հեթանոսական ժամանակաշրջանի հավատամքային պատկերացումները: Վերեւում Ցուլը՝ Թեշուբ-Թեյշեբայի «Ցուլի» համաստեղությունն է: Առյուծները, որոնք ունեն կորագիծ վիշապագլուխներով պոչեր, ներկայացնում են ***երկվորյակներին***՝ արեւի եւ լուսնի ուղեծրերը: Կենտրոնում ***արծիվը*** ներկայացնում է՝ ***թռչող արեւի*** սիմվոլը: Արծվի ճանկերում խոյը ներկայացնում է՝ «Խոյի» համաստեղությունը: Այսինքն, Precession երեւույթի հիմքով, սկսվել է նոր դարաշրջան, «Խոյի» դարաշրջան, երբ գարնանային գիշերահավասարին, Մարտ 21, առավոտյան արեւը ելնում է «Խոյի» համաստեղությունից: Սա, Precession երեւույթի հիմքով, առնվազն մ.թ.ա. II հազարամյակի «ներկայացում» է:

*1, *2, - «The World Book», 1988, USA, v. I, p. 516; v. II, p.1194.
R. Storm, «Indian Mythology», 2000, USA, p. 26.



Անգղ-Կարապի համաստեղությունը, որ այսօր հայտնի է Cygnus անունով:

Մ. Խորենացու «Հայկ եւ Բել»-ը աստղագիտական նշանակություն ունի: «Եւ Հայկը չվելով հյուսիս, Բելի դեմ պատերազմելու, իր առաջին տանը հաստատեց իր Կադմոս թոռանը»:

Պետք է ընդունենք, որ «պատմական հերոսը» չեր կարող ***չվել,*** եւ ի՞նչ է նշանակում 1-ին տուն, եթե ոչ՝ ***աստեղատուն:*** Հայկը՝ խաչաձեւ ***Հաւք*** համաստեղությունն է, որ այսօր հայտնի է որպես՝ Cygnus: Հայկի գերդաստանի՝ ***«երկնքիարյուր»*** թիվը նշելը, թաքնագիտական ակնարկ է՝ ***տետրահեդրոն*** ծավալաձեւի եւ ***հուր-թռչուն*** սիմվոլի մասին*(մանրամասն տես՝ «Գագիկ թագավոր» բաժինը):*
Փաստորեն, երկրագնդի առանցքի մեկ լրիվ տատանումը՝ 18-36 հազար տարվա շրջան է, եւ ամեն 18 հազար տարին մեկ, տիեզերական մեծ տարվա 25800-25920 շրջափուլից առաջ «Հավք-Կարապի» համաստեղությունը դառնալով հյուսիսային բեւեռում իշխող աստեղատուն, «ավետում է» տիեզերական մեծ տարվա սկիզբը:

բալայում: Հայկական էպոսում Cygnus աստեղատունը՝ «Անգղը», երկվորյակների՝ Սանասար-Բաղդասարի երկնային հայրն է, որը՝ Խաչ-Պատարագի (խաչ հայր) նշանի տեսքով իջնում է Սասնա գլխավոր հերոս աստվածների աջ բազուկին:

Հայերեն լեզվում **հաւ**՝ *«թռչուն»-ը, նաեւ նշանակում է* ***մորենական պապ, մեծ հայր:*** *Հայերենում, բարբառներում, օրինակ, սասնո բարբառում՝* ***օր = հաւուր,*** *այսինքն լուսաբացը բերող, ավետող հավքը եւ այլն:* ***Հաւ = մեծ հայր, հաւուր = օր, հաւ = թռչուն,-*** հայերեն լեզվում օմոնիմներ են: *Եվ պատահական չէ, որ հին եգիպտական համակարգում Haik-թռչունը համարվել է արեւի՝ Ռա-ի հայրը: Աթումի ուղեղից ծնված* **hikê =** *հունարեն արտաբերմամբ Heka-ն՝ հրային, տիեզերական թռչուն-աստվածությունն է, որ ծնում եւ կառավարում է մնացյալ աստվածություններին*[*1]*: Շումերական պանթեոնում Cygnus-ը ԱՆ երկնքի աստվածության՝ ութաթեւ աստղ (ութաթեւ աստղն իր կենտրոնով՝ 1+8 համակարգ, ամբողջ) պատկերանշանն է: Վեդայական քառագլուխ Բրահմը նույպես ներկայացվում է թռչունի տեսքով*[*2]*}]:*

Տիեզերական ԼՈԳՈՍ-ն իր «արտահայտման ընթացքում» ձեւավորում-ֆիկսում է կենդանակերպ-զոդիակի շղթայի չորս կարդինալ, իրար նկատմամբ դուալիզմի հիմքով հակադիր աստեղատները՝ Առյուծ-Ջրհոս եւ Ցուլ-Կարիճ: Կենտրոնում՝ երկու անկյունագծերի հատման կետում, թռչունի՝ թռչող Կարապի համաստեղությունն է: Այսպիսով, Մեկը՝ Անգղ-Կարապի համաստեղությունը, «դարձավ» քառակողմ, որը աստղագիտական-աստղաբախշական երեւույթ է եւ հավատամքային հնագույն պատումներում ներկայանում է որպես՝ քառագլուխ Լոգոս: Աստծո գահի եւ նրա չորս կողմերում կանգնած կենդանիների մասին հնագույն միստիցիզմը, որ տեղ է գտել թե՛ հին եւ թե՛ նոր Կտակարաններում. ***«... Եւ աթոռի մեջ եւ աթոռի չորս կողմովը չորս կենդանիք՝ առաջից եւ ետեւից լիքն աչքերով: Առաջին կենդանին առյուծի նման էր, եւ երկրորդ կենդանին զուարակի (ցուլ), եւ երրորդ կենդանին մարդի երես ուներ, եւ չորրորդ կենդանին թռչող արծվի***

*1, - R. Bauval, A. Gilbert, «The Orion Mystery», p.198.
*2,- R. Storm, «Indian Mythology», 2000, USA, p. 26.



Երկրագնդի առանցքի տատանումով կենդանակերպ աստղատներով «անցումը», այսօրվա աստղագիտության մեջ կոչվում է՝ *առաջընթացության երեւույթ: Յուրաքանչյուր աստեղատան մեջ՝ մոտ 2160* տարի, իսկ 12 աստեղատներով անցումը՝ 25800-25920 տարի, կոչվում էր տիեզերական մեծ տարեշրջան:

***նման(արծիվ-Aquila-ն եւ կարիճը տարբեր պատկերագրերում որպես համարժեք՝ փոփոխվում են)»*[1]**, իրականում, երկնային Կարապ համաստեղության՝ 12 Կենդանակերպերի աստեղատներում քառակողմ «արտահայտվելու» մասին է, որ ժամանակագրությամբ, աստեղատների «նման կոմբինացիան»՝ կարգականոն-մոտեցումը, «հնարավոր էր» միայն մ.թ.ա. VII-V հազարամյակում, երբ արեւը գարնանային գիշերահավասարին մտնում է առավոտյան բարձրացող «Ցուլի» համաստեղություն: Այս ժամանակներում, Միջագետքյան շումերական քաղաքակրթությունը դեռ չէր «ձեւավորվել». տարածքը դեռ ջրի տակ էր: Սակայն, մ.թ.ա. 9-րդ հազարամյակում, Հայկական լեռնաշխարհում, այսօրվա Դիարբեքիրի մոտ, կար 50 տոննանոց քարերից կառուցված հսկայական տաճարը:

Չորս կարդինալ աստեղատներով «գտնել, հաստատել» երկրագնդի առանցքը, առկա է հայկական «Սասնա էպոսում», ինչպես նաեւ՝ Մեսոամերիկյան, հատկապես Մայաների եւ Ինկերի հավատամքային էպոսներում[*2]:



Այսպիսով, հնագույն հավատամքային պատումներում, մինչեւ արարչությունը, որպես նախագոյություն՝ Մեծ Ոչինչն է՝ խավարը, անդունդը, վիհը,- ՎԻՇԱՊԻ սիմվոլով կամ շրջանի տեսքով: Որից հետո, այս շրջանի կենտրոնում «կետը» կամ *Մեկը*, որի խորհրդապաշտական պատկերագրությունը թռչունն է, թեւավոր ձին է, եգիպտականում՝ մայիսյան Բզեզը կամ Կատուն է եւ այլն, որ հնդեւրոպական բազմաթիվ պատումներում հանդես է գալիս որպես ամպրոպի աստվածություն, շրջանը բաժանում է սկզբում՝ երկու, ապա չորս մասի՝

[O ⊙⊘⊗], 1, 2, 3, 4:

Առաջին Լոգոսը՝ ՀԱՈՒՔ-ը (Հայկը), ՀԱՐ-ին՝ Բրահմը, եգիպտական Աթում-Ամոնը եւ այլն, ինքն իրեն լիարժեք արտահայտում է, երբ դառնում է՝ 4, քառակողմ: Պյութագորյան դպրոցը ***«տաս»*** թիվը համարում էր լիարժեք եւ կատարյալ, քանի որ առաջին չորս թվերի գումարը՝ ***«տաս»*** է,- 1+2+3+4=10: Մեկը՝ քառակողմ, 4 «կարդինալ

*1,- Նոր Կտակ. Յայտնություն, գլխ.Դ, 6-8: Հին Կտակ. Ես. զ, 1: Երեմ. ժէ, 12: Եզեկ. ա, 26, ժ, 1: Դան. է, 9:
*2,- John Major Jenkins «Maya Cosmogenesis 2012» 1998, USA.



Երկրագնդի առանցքի դանդաղ տատանումով, 12 զոդիակներով ընթացքը՝ 25800-25920 տարվա շրջապտույտը, համարվել է մեկ տիեզերական տարի:

կետերով» ամբողջական արտահայտվելով, դառնում է՝ [*tʰerH- «խաչ»), *tʰorH-] «վիշտի հետ մարտնչող»*[1]: Ըստ «Սասնա» էպոսի, Քեռի Թորոսի՝ ***Թեւաթորոս*** անունը, միտում է նրա թեւավոր աստվածություն լինելը՝ ***Cygnus աստղատուն,*** որ 12 զոդեակների շղթայում արտահայտվում է որպես «Ցուլ»: Հնդեւրոպական ժողովուրդներից շատերի մոտ միչեւ այժմ էլ պահպանվել է շաբաթվա 4-րդ օրվա հնագույն անվանումը, որը կոչվում է ԹՈՐ-ի օր ***(երկուշաբթի, երեքշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի՝ THOROS+day = TAURUS (ցուլ-տավար) = Thur's day)***: Թորը լույսի կամ ամպրոպ-լույսի աստվածությունն է, որը կոչվում է նաեւ «նյութական» տիեզերքի հյուսնը՝ ստեղծողը ***(Թորը՝ Նոր Կտակարանի Յիսուսի հայրացուի՝ հյուսն Յովսեփի նախատիպն է):*** Թորի խաչաձեւ ***գեղարդը՝*** մուրճը ***(հայկական Թուր-Կեծակի),*** որը լույս է, Ծիր Կաթինը պտտող խաչաձեւ սվաստիկան է, «արարման թե՛ գործիքն է, թե՛ զենքը»: Հայկական լեռնաշխարհի հնագույն Թհորը = Թեշուբը = Թեյշեբան, հնագույն հնդեւրոպական *(հիթթիթական, հուրրիական, ուրարտական շրջանում)* պատկերագրերում ներկայանում է ՑՈՒԼ-ի՝ ՏԱՎԱՐԻ (TAURUS) վրա կանգնած, որովհետեւ 12 կենդանակերպի շղթայում, ինչպես վերեւում ասվեց, շրջանաշղթայի կենտրոնի՝ Կարապի, չորս կարդինալ աստեղատներից առաջինն է՝ գարնանային գիշերահավասար: Աստղագիտական «մոտեցմամբ», կենտրոնը աղերսվել է՝ ***Կարապի,*** իսկ կողմերում՝ չորս աստեղատների հետ: Ըստ հնագույն համակարգի, մարդկության հավաքական հոգին ունի 6 հասակ, յուրաքանչյուրը՝ 6000 տարի, ընդհանուրը՝ 6 x 6000 = 36000 տարի, երբ ***Կարապը*** վերադառնում եւ նորից դառնում է հյուսիսային բեւեռում կենտրոնական, «իշխող» աստեղատունը:



Թորն իր «մուրճով», առկա է հնդեւրոպական ժողովուրդների բազմաթիվ միֆական հնագույն պատումներում՝ որպես ամպրոպի աստվածություն*[2]: Քառագլուխ Բրահման՝ հայկական՝ ԹՈՐՈՍ > ԹԵՇՈՒԲ > ԹՈՐԳՈՄԱ > ՏԱՐՔՈՒ ԳԱՄԱ > ՏԱՐՔՈՒ > ՏՈՐՔ, ըստ Ռիգ-Վեդայի Anima Mundi - է՝ ***կենդանական շունչ-հոգու*** տիեզերական էությունն է՝ ***Լուսնի*** խորհրդապաշտություն:

Թռչուն-Կարապը *(հաւ, հաւուր = աւուր = aura = լույս, արեւածագ= օր),*

*1, - T.Gamkrelidze & V.Ivanov, "Indo-European & the Indo-Europeans", 1995, New York, p. 176, 278, 81.
*2,- Calvert Watkins, "How to Kill a Dragon", 1995, Oxford Univ., p. 429-438:

ՀԱԻ(ք) > ՀԱՅ(ք) > ՀԱՐ(ք)*1 > ՀԱԼ(դի) (di= դից= աստված) > ՀԱՅԿ աստվածություն, բարձրագույն միտք-Ոգու էությունն է՝ ***հուր*** խորհրդապաշտություն՝ աղերսվում է ***Արեի*** հետ, որի աստեղատունը վերեւում ներկայացված 12 կենդանակերպի շղթայում ԱՌՅՈՒԾ-ի համաստեղությունն է. ամառային արեւադարձ:

Վերեւում արդեն ասվեց, որ տիեզերական ԼՈԳՈՍ-ն իր «արտահայտման ընթացքում» ձեւավորում-ֆիքսում է կենդանակերպի՝ զոդիակի շղթայի չորս կարդինալ, իրար նկատմամբ դուալիզմի հիմքով, հակադարձ աստեղատները՝ ***Առյուծ-Ջրհոս*** եւ ***Ցուլ-Կարիճ*** (դեմ-դիմաց կանգնած չորս աստեղատներ) եւ ինքը Կարապն է՝ կենտրոնում:

Հայկական լեռնաշխարհ, մ.թ.ա. I հազարամյակ, ուրարտական շրջան:

Ուրարտական պատկերագրերում, շրջանից դուրս, Հայկ-Հալդին Cygnus ***թռչունն է (Անգղ-Կարապի համաստեղ.),*** որ շրջանակի մեջ «արտահայտվել», կանգնել է ***առյուծի («Առյուծ համաստեղութ.»)*** վրա:

Մեկ այլ պատկերագրում՝ դեմ-դիմաց, Հալդին առյուծի վրա է կանգնած, Թեշուբը՝ ցլան: Այս աստղագիտական, հավատամքային խորհրդապաշտությունը գալիս է շատ հնից, եւ որպես կարգականոն հաստատվել է նախահնդեւրոպական ժամանակներում:

Բացատրություն.

Գերագույն աստվածության «արտահայտությունը» ***Առյուծ*** եւ ***Ցուլ*** աստեղատներում, արեւի ընթացքն է՝ տարվա չորս եղանակների բաժանումների ընթացքում, երբ արեւն ամռանն ու գարնանը մտնում է այս երկու համաստեղություններ, որը միայն հնարավոր է առնվազն մ. թ. ա. 5-րդ հազարամյակում, երբ Հայկ-Հալդին՝ **Առյուծի** վրա է, Թեշուբը՝ **Ցուլի**: Արեւը ելնում է **Ցուլի** համաստեղությունից ***գարնային գիշերահավասարին***՝ Մարտ 21, որը հեթանոս հայերի հին նոր տարին է: ***Ձմռային արեւադարձին*** արեւը «ծնվում է» Ջրհոսի համաստեղությունում: ***Ամառային արեւադարձին*** արեւը մտնում է **Առյուծի** համաստեղություն եւ «միակցվում» «Առյուծ» համաստեղության ***Ռեգուլուս (թագավոր, տանուտեր)*** աստղի հետ: ***Աշնային գիշերահավասա-***

*1- ՀԱՐԻ: Հարին հնդկ. Բրահմայի անունն է: Ամբողջ անունը՝ Նարա-*յանա* Հարի: Սիմանտիկ՝ հնչյունային համարժեքությամբ՝ ՀՈՅ-ՆԱՐ,- հայկ. հեթանոս. աստվածության անվանումը, որ պահպանվել է գյուղական ֆոլկլորային երգում:



ին արեւը մտնում է «Կարիճի» համաստեղություն *(տես քարտեզները՝ էջ 116, Sky Glob 3.5)*:

Բրահմայական հավատամքում՝ ԱՌՅՈՒԾ եւ ՅՈՒԼ աստեղատներում խաչաձեւ անկյունագծերի ֆիկսումը, որի կենտրոնը Cygnus՝ Կարապ աստեղատունն է, կամ այլ ձեւակերպմամբ՝ վիշապ-շրջանի ներսում արտահայտված **ՄԵԿ**-ը՝ իր խաչաձեւ կամ քառակողմ արտահայտությամբ, կոչվում է՝ ***ՈԳԻՆ, որ ծնվեց կրկնակի*** *[*1]*: «Սասնա Տուն» էպոսում, թագավոր Գագիկը = Նախահնդեւրոպական **[*ĝʰagʰa-]** = Կարապ: Մյուս կողմից, Գագիկը = Կակ+իկ՝ ամբողջն է, մեկն է*[*2]*, գունդ ծավալաձեւն է, որ սերում է երկուսին՝ ԹՈՐՈՍ եւ ԾՈՎԻՆԱՐ = քույր ու եղբայր, որ իր իսկ՝ ***արական*** եւ ***իգական*** արտահայտություններն են:

Հաջորդ փուլում՝ գլխավոր Աստծո որդիները կամ «թոռները»՝ երկվորյակները, ձեւավորում են զոդիակը, իրենց տեղերում հաստատելով մնացած կենդանակերպերը, սկսելով Օրիոնից:

Ութերորդ՝ վերջին, Բրահմա Լոգոսի արտահայտությունը երկու շրջանագծերի միասնությամբ սիմվոլն է՝ (OO), որ այսօր անսահմանության սիմվոլ է մաթեմատիկայի մեջ: Այս երկու շղթա-շրջանագծերն իրենց փոխհարաբերություններում եւ միասնական եւ հակասական՝ «թշնամական» են: Բայց սա միեւնույն Լոգոսի ստեղծած «հակասությունն» է՝ հակառակ լիցքերի միասնությունն է, որը ստեղծում է բարեշրջման (էվոլյուցիոն) շրջապտույտ, ընթացք: Եգիպտական համակարգում, բացասական աստվածություն Սեթն ուներ իր տաճարը եւ ընդունվում էր որպես Օզիրիսին հակառակորդ՝ դուալիզմի անհրաժեշտության նախապայմանով*[*3]*: Հայկ-Հարին (Բրահմա-Լոգոսը) տեղական, մեր տիրույթում (Ծիր Կաթինում) թե՛ Օրիոնն է (Հայկ), թե՛ Սեթն է (Հայկ): Այսինքն, թե՛ «կենսահուր» ուղարկողն է, թե՛ «կենսահուրը» «սպանողն» է՝ նյութականացնողն է:

---

*1, - H.P. Blavatsky, «The Secret Doctrine», v. I, p.19

* 2, -Հայկական էպոսում «սկիզբը, գլուխը» համարվում է թագավորը՝ Գագիկ = Կակի = Կակո = Կակալ = Ընկույզ, միտելով «բովանդակ»-ի խորհուրդը: Սասնո բարբառում՝ Կակո = մեծ հայր = մորենական պապ Կակալ = ամբողջ, ընկույզ: Հայկական էպոսում, վերջին դից՝ Փոքր Մհերի Ագռավաքարից ելնելու ժամանակների մասին իմֆորմացիան՝ «Երբ ցորեն ըլնի քանց գարի մի, երբ գարին ըլնի քանց ընկույզ մի...», միտում է՝ ***«վերադարձ դեպի սկիզբ՝ դեպի հայրը, դեպի տիեզերական «ամբողջ»*** խորհրդաբանությունը, միտքը: «Գունդ» ծավալաձեւը խորհրդանշում է գերագույն դիցին:

*3,- Moustafa Gadalla, “Egyptian Cosmology”, 2001, USA, p. 90-92.

Աստեղային համակարգում, հին եգիպտական, հին հայկական եւ Միջագետքյան համակարգերում, կենտրոնական, գլխավոր աստեղատան սիմվոլը՝ թռչուն-Կարապ-Կռունկն է (Cygnus): Եգիպտական տարբերակում Բգեզը կամ՝ Հելիոպոլիսի Կառնակ տաճարի համակարգում, անդիֆերենցիալ Տիեզերական ՆՈՒՆ-ից Ատումը կամ Թումը՝ առաջին գոյությունը, հայտնվում է տիեզերական Բեն-Բեն քարից որպես թռչուն (Pyramid Text 1652), R.A.S. de Lubicz, «The Tample Of Karnak», USA, 1999; R. Bauval, A. Gilbert, «The Orion Mystery», p. 198-206.

Երբ կենսափուլի 1-ին շրջանն է, ապա ***«լուսնային»*** եւ ***«արեւային»*** (կենդանական շունչ-հոգի եւ բարձրագույն միտք-հոգի) ***«էությունները»*** «համերաշխության» մեջ են: Իսկ երբ հակադրվում են (երկրորդ շրջան), ապա բալանսի մեջ են. Մեծ Միերը (արեւի իպոստաս) եւ Մեծ Մսրա Մելիքը (Լուսնի իպոստաս) չեն կարողանում իրար հաղթել եւ դաշինք են կնքում, եղբայրանում են *1:

Պայքարելու համար, ըստ հայկական էպոսի, լուսնային իպոստասը կամ լուսնապաշտները Արեւից կամ արեւապաշտներից, ***բեղմնավորման սերմ*** են գողանում, որպեսզի նրաց հետ կարողանան պայքարել (Մեծ Միերը եւ Մեծ Մսրա Մելիքը արյունները խառնելով եղբայրներ են դառնում ու դաշինք կնքում: Պայմաններից մեկը՝ նրանցից որեւէ մեկի ժամանակից շուտ մեռնելու դեպքում, մեկը մյուսի կնոջը պետք է կնության վերցնի: Փոքր Մսրա Մելիքը՝ Մեծ Միերի որդին է եւ Դավթի՝ հոր կողմից խորթ եղբայրը: Մայրական կողմը միշտ «անարատ» է, «արեւապաշտների մոտ», ի տարբերություն Լուսնապաշտների):

Փոքր Միերը, Արտավազդը, հնդկական Շիվան, Քրիստոսը *(2-րդ գալուստով)* շրջափուլի ավարտումով նյութական աշխարհը կործանող աստվածություններ են: Իրականում՝ միեւնույն աստվածությունն է տարբեր անուններով, իսկ ավելի ճիշտ՝ միակ Աստծո՝ ութերորդ արտահայտությունն է, որպես փուլի վերջ:

Ահա այս ամբողջ համակարգը բոլոր հնագույն միֆական պատումների *(իրականում՝ հնագույն մայր հավատամք-կառույցի)* էության սխեմայի կարճառոտ ներկայացումն է, որը նաեւ ժառանգել էին առաջին քրիստոնեաները *(գնոստիկները):* Քրիստոնեությունը, երբ դարձավ կայսերական, պետական կրոն, եւ աշխարհիկ իշխանությունն ապահովող լծակ, կորցրեց իր իմաստների խորհրդապաշտություն-թաքնագիտությունը. էությունից մնաց միայն կաղապարը՝ միֆը, պատումը (նոր Կտակարան), որն իրականում հին միֆական պատումների՝ նոր, կրճատված իմպրովիզացիան է, նույն խորհրդապաշտական նպատակային հետապնդումով *(որպես հոգեւոր արթնության ծրագիր),* որը սակայն, թե՛ անհասկանալի էր Հռոմեական կայսրության իշխանությունն ապահովող եկեղեցու սպասավորներին, թե՛ անհարիր, քանի որ նրանց նպատակը կրոնի ուժով աշխարհիկ իշխանության ձգտումն էր:

Ժամանակին, հոգեւոր քրմական կաստան, հոգեւոր վարպետները, «ինչպես վերեւում, այնպես էլ ներքեւում» հերմեսյան բանաձեւի համաձայն, նույնիսկ

---

*1,- «Սասունցի Դավիթ», ճյուղ՝ «Մեծ Միեր», 1989թ., Երեւան:

տեղանունները՝ լեռների, լճերի, գետերի անուններն ու բաժանումները, ինչպես նաեւ երկնքում աստեղատների կերպարանավորումները, իրականացրել են իրենց հավատամքային կարգականոնի համաձայն: Օրինակ, Արածան-Եփրատ-Տիգրիս, Նեղոս, Ինդոս գետերը, բոլորն էլ աղերսվում են երկնային Ծիր Կաթնի (գետի) հետ. մեհաններն ու բուրգերը կառուցվել են ըստ երկնային լուսատուների «տեղադրության» եւ այլն:

Թաքնագիտության դպրոցներն այժմ էլ կան եւ եղել են մի՛շտ: Խորհրդապաշտական պատում-միֆը հատուկ լեզու է, այն հնագույն դպրոցների աշխարհճանաչողական տեսության վիպական «սիմվոլիկ լեզուն» է, որն ըստ հոգեւոր կաստայի բացատրության՝ հասու չէ միլիոնավորներին. մասսային պետք չէ հավատամքը, նրանք դեռ հասու չեն հոգեւոր գիտությանը, նրանց բավարարում է հավատալիքը՝ կաղապարը *(օրինակ՝ Նոր Կտակարանի բոլորիս հայտնի բառացի մեկնությունը եկեղեցականների կողմից):*

Հնդեւրոպական սփռված հավատամքային կոսմիկական համակարգն ըստ էության, «արարչության» եւ «հոգեւոր բարեշրջման» հավատամքային համակարգ է, որ նաեւ աղերսվում է ***տիեզերական լուսատուների եւ աստեղատունզոդիակների հետ:***

Ըստ հին գիտունների, մարդը տիեզերական ԲԱՆ-ի՝ Լոգոսի միկրո մոդելն է: Եվ այս միկրո մարդը՝ տիեզերական հյուլեն, լինելով մակրո մարդու՝ Լոգոսի նմանակը, միլիոնավոր տարիների ընթացքում «հոգեւոր բարեշրջումով» առաջխաղացք է ապրում: Իսկ տիեզերական կենդանակերպերը, ըստ հների, այդ մակրո մարդու՝ ԼՈԳՈՍԻ, էներգիայի ատրիբուտներն են:



Հին քրմապետ գիտունները ոչ միայն տարին են ըստ եղանակների բաժանել չորս մասի, յուրաքանչյուր եղանակին տալով եռամսյա տեւողություն, այլ նաեւ Precession երեւույթով պայմանավորված, տիեզերական մեծ տարին են բաժանել 12 ամիսների եւ եղանակների: Տիեզերական մեկ ամսվա տեւողությունը ըստ հների՝ 2160 մարդկային տարի է, իսկ տարին՝ 12 ամիսների գումարը՝ 25920 մարդկային տարի: Ըստ հների, երբ գարնանային գիշերահավասարին՝ մարտ 21, արեգակը մտնում է այսօրվա «Ձկներ» համաստեղություն, ապա սկսվում է «տիեզերական ձմռան» ժամանակը: «Ձկներ» համաստեղության հին անունը ըստ մ.թ.ա. IX- XI դդ. թվագրվող Միջագետքյան MUL APIN-ի տեքստերի, կոչվում է՝ SHIM.MAH:

Թաքնագիտություն՝ հինավուրց իմաստնություն

(Մեջբերումներ Թորգոմ Սարայդարյանից)

Թորգոմ Սարայդարյանը հինավուրց իմաստնության թաքնագիտական դպրոցի թույլատրված գիտելիքները ներկայացնող լավագույն ուսուցիչներից էր: Մահացել է 1998թվին, ԱՄՆ-ում: Նրա ավելի քան երեք տասնյակի հասնող գրքերը թարգմանաբար հրատարակված են 20-ից ավելի լեզուներով: Ներկայացնում ենք հատվածներ նրա «Հինավուրց իմաստնության հիմները» գրքից (Արիզոնա, ԱՄՆ, 1994թ.):

Մեջբերում #1

«Թաքնագիտութիւնը իրականութեան մէջ յառաջխաղացքի, կեանքի խորհուրդի մէջ թափանցելու գիտութիւն է եւ այդ գիտութիւնը ամբողջ մարդկութեան բարիքին համար գործածելու արուեստն է: **Թաքնագիտութեան արժէքաւոր մագաղաթներ գոյութիւն ունէին Հայաստանում, որոնք բնաջնջուեցան մոլեռանդներու պատրաստած խարույկներու մէջ, եւ Հայոց մշակոյթի գանձարանը հրոյ ճարակ եղաւ:**

Հայկական դիցաբանութիւնը թաքնագիտութեան մէկ ճիւղն է: Եւ այդ ճիւղը եկած է Արեւէն, Արեւորդիներու միջոցով՝ մեր ցեղին: Արեւորդիները նախնական, հոգեւոր կատարյալ էակներ էին: *Արարադի երկիրը* հնագոյն թաքնագիտութեան կեդրոնն է եղած:

Բոլոր կրօններու հիմը թաքնագիտութիւնն է: Կրօնը հիմնուած է գիտութեան վրայ: Անոնք, որոնք կրօն տուին մարդկութեան՝ գիտուններ եւ ճանաչողներ էին, Աստուածային ներշնչեալներ էին, որոնք գիտէին տիեզերական օրէնքների խորհուրդը եւ տիեզերական սկզբունքների ակնաղբիւրը:

Կրօնը թաքնագիտութեան ժողովրդականացումն է: Անոնք, որ կուզեն կրօնը հասկնալ, պէտք է թաքնագիտութեան աղբիւրներին դիմեն:

Աստուածաբանութիւնը բոլոր կրօնների մէջ դէպի թաքնագիտութեան ձգտող քայլ է: Առանց թաքնագիտութեան կրօնը կվերածուի նախապաշարումների եւ կոյր մղումների, հակադարձութիւնների, պայքարի եւ կվերջանայ տգիտութեան խավարում: ***Կրօնը բաժանում կը ստեղծէ, թաքնագիտութիւնը՝ համադրում:*** Ըստ թաքնագիտութեան՝ բոլոր կրօնները լոյսի եւ գիտութեան աղբիւրէն ծնունդ առնող հոսանքներ են, պղտորուած իրենց վազքի մէջ եւ յաճախ կորսուած ճահճախուտներում»:

«Մեր եկեղեցիների մէջ երգուող Առաւոտ Լուսոն հեթանոսական գոհարներէն մէկն է, յարմարցուած նոր կրօնի գաղափարախոսութեան: Անոնք, որ թաք-



Մակրո Կոսմոս

նագիտական զգայարանք ունեն, կրնան տեսնել, թէ մեր Հեթանոսական տօները նոր կրօնի զգեստներով ներկայացան ժողովրդին: Մեր հեթանոսական գոհարները գործածուեցան մեր շարականների մէջ: Բարեբախտաբար անոնք չկորցրեցին իրենց հեթանոս արժէքը:

Առայժմ, մարդկային բարեշրջումի եօթը խաւերը տիեզերական եօթը խաւերէն ամէնէն վարի խաւն է, որ եօթը ենթաբաժանումներ ունի: Այս խաւերը կը կոչուին՝

1.Առաջին տիեզերական եթեր կամ աստուածային խաւ. Սանսկրիտ լեզուի մէջ այս խաւը կը կոչուի ***Ատի խաւ.***

2.Երկրորդ տիեզերական եթերային խաւ կամ Մօնադական խաւ եւ կամ ***Աքաշիկ խաւ.***

3.Երրորդ տիեզերական եթերային խաւ կամ ***Աթմիկ խաւ.***

4.Չորրորդ տիեզերական եթերային խաւ կամ ***Յայտնատեսական խաւ,*** կամ ***Բուդդիկ խաւ.***

5. Հինգը՝ ***Մտախաւ.***

6. Վեցը՝ ***Յուզախաւ.***

7. Յոթը՝ ***Ֆիզիքական խաւ.***

Այս ֆիզիքական խաւի մէջ կը գտնուի մարդու մարմինը, որ ինքն իր մէջ բաժանուած է եօթը ենթախաւերի»:

Մեջբերում #2

«Մարդու ոգին ճառագայթ մըն է, որ բխում կ'առնէ տիեզերական ոգիէն եւ 49 խաւերէն անցնելով, մարմին կ'առնէ իբրեւ հիուլէ, իբրեւ աթոմ: Բարեշրջումի ճանապարհին վրայ, այս աթոմը կամ հիուլէն, ներքնապէս կապուած լինելով գերագոյն ոգիին, հետզհետէ կ'առաջանայ դէպի այդ տիեզերական ոգին, բացուելով եւ զարգանալով ամէն մէկ խաւի վրայ եւ երեւան բերելով բնութեան թագաւորութիւնները:

Այսպէս գոյութեան կ'ուգայ բուսային թագաւորութիւնը, յետոյ կենդանական, մարդկային թագաւորութիւնները, յետոյ գերմարդկային թագաւորութիւնները, երբ այդ աստուածային կայծը յառաջանայ մարդկային թագաւորութիւնէն անդին»:

«Այդպես ճառագայթները Շունչի կը նմանին. Մեծ Գիտակցութիւնը կը շնչէ եւ կ'արտաշնչէ, կշռոյթային կենսունակութիւն մը ապահովելով արարչագործութեան դաշտին մէջ յառաջ



Մակրո Կոսմոս

տարուող բնաշրջումի կամ բարեշրջումի աշխատանքին»:

«Թաքնագիտությունը կուսուցանէ, թե այս ճառագայթները կը հոսին Մեծ Արջ համաստեղութեան եօթը աստղերէն: Անոնց Աղբիւրը Անհունին մէջն է:

Անհունէն ծագում կ'առնէ ահաւոր ոյժի ճառագայթ մը, եւ բախում ունենալով Մեծ Արջ համաստեղութեան եօթը աստղերուն հետ, կը բեկանուի եօթը ճառագայթներու: Այս եօթը ճառագայթներու հոսանքը ուղղուելով Ծիր Կաթին համաստեղութեան՝ կը միաձուլուի Ծիր Կաթինի եօթը իգական ուժերուն հետ եւ կը սաղմնաւորէ մեր արեւային դրութեան գոյութեան նախատիպարը, որմէ կառոյց կ'առնե դարերու տեւողութեան մեր արեւային դրութիւնը» ....

«Ուրեմն մեր Արեւային դրութիւնը, ըստ թաքնագիտութեան, կազմուած է եօթը ուժականութեան արական հոսանքներէ եւ եօթը ոյժի իգական հոսանքներէ:

Այս պատճառով մեր Արեւային դրութեան եւ մոլորակին մէջ գոյութիւն ունեցող ամէն ինչ երկութիւն մըն է:

Մեր մոլորակի ճառագայթները, թե արական եւ թե իգական են: Անոնց ստեղծած աշխատանքի դաշտերն ալ այս երկու բեւեռացումները ունին:

Այսպէս նաեւ մեր մոլորակում ունինք բնութեան եօթը թագաւորութիւնները, առաւել՝ իւրաքանչիւր թագաւորութեան արական եւ իգական բեւեռացումները եւ այս բեւեռացումներու յարաբերութիւնէն ծնունդ առնող առարկաները, դէպքերը, երեւոյթները եւ կազմակերպութիւնները:

Այս ճառագայթներուն արտայայտութիւններն են նաեւ Տիեզերական եօթը տարածքները, իրենց եօթնական ստորաբաժանումներով: Այս տարածքները կրնանք նաեւ կոչել խաւեր:

Մարդուն եօթը մարմինները ցոլացումներն են դարձեալ այս եօթը սկզբունքներուն, որոնց ցոլացումներն են մարդուն եօթը ներծոր գեղձերը, եօթը եթերային կեդրոնները եւ եօթը զգայարանները:

Այս ճառագայթները յաճախ նմանցուած են դաշնակի ստեղնաշարերուն, զորս Մեծ Գիտակցութիւնը կը գործածէ յօրինելու համար իր արարչագործ Երգը:

Ճառագայթները, ուրեմն, ուժականութեան հոսանքներ են, որոնք մասնաւոր կշռոյթով գործոն կը դառնան, իրենց ազդեցութիւնը կը բերեն եւ յետոյ գործոն ըլլալէ կը դադրին եւ վերստին ասպարեզ կ'ուգան նոր ազդեցութիւններով:

Ամէն մէկ ճառագայթ իր արտայայտութեան շրջանը ունի ամէն մէկ խաւի վրայ:



Գործոն շրջանները արտայայտութեան շրջաններ են, ոչ գործոն շրջանները այն ժամանակամիջոցներն են, երբ ճառագայթը կը քաշուի որեւէ դաշտէ եւ կ'արտայայտուի ուրիշ՝ աւելի բարձր դաշտի մը վրայ»:

«Այսպէս վերադարձի ճամբուն՝ մօնադը ստեղծած է՝ ***տարրերու թագաւորութիւնը,*** տարրերէն անցած է ***բուսային թագաւորութեան,*** բուսային թագաւորութենէն ***Կենդանական թագաւորութեանը,*** Կենդանական թագաւորութենէն ***Մարդկային թագավորութեան:*** Մարդկային թագաւորութիւնը վերջնական կայան չէ. Մօնադի ճամբան անվերջ է»:

Թեեւ, մեր այս աշխատության խնդրո առարկան՝ նախահնդեւրոպական ժամանակների հավատամքային կարգակառուցի՝ «մայր հավատամքի» վերլուծություն, վերականգնումն է, հիմք ընդունելով հնագույն «Սասնա Տուն» հավատամքային պատումների հավաքականությունը, սակայն, պատահական չէ վերեւում Թ. Սարայդարյանի «Հնագույն Իմաստնության Հիմունքները» գրքից բերված հատվածների մեջբերումները: Մինչեւ հայկական հնագույն «Սասնա Տուն» էպոսի թաքնագիտական բացահայտումներին եւ վերլուծություններին անցնելը՝ ՄԱՍ II, անհրաժեշտ էր ներկայացնել հնագույն իմաստնության ընդհանուր, համառոտ աշխարհճանաչողությունը եւ էությունը:

Միկրո Կոսմոս



ԳԼՈՒԽ
ՀԻՆԳԵՐՈՐԴ

/ ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐ /
Հնագույն քնազանցական իմաստնության գիտականությունը



Աշխարահռչակ ֆիզիկոս Ստենֆեն Հաուքինգի «Տիեզերքն ընկույզի կճեպում» գրքի շապիկը: Stephen Hawking, «The Universe In The Nutshell», 2001, USA.

ՀԱՎԵԼՈՒՄ # 1 Վիշապ-օձի հնագույն խորհրդապաշտություն. իմաստների նորագույն բացահայտումները:



Մեզ միշտ թվացել է, որ հնագույն քրմապետերի պատկերացումները կյանքի արարման մասին չափազանց պրիմիտիվ ու միամիտ են. դե իհարկե՝ երկնային աստվածությունը կայծակզենքով վիշապ է մորթում, որից կյանք է ստեղծվում: Սակայն, ժամանակակից գիտությունը, վերջին տասնամյակների ընթացքում հանգեց «համանման» եզրակացության: Էվոլյուցիայի վաղագույն շրջանում, երկրի աթմոսֆերայում տեղի ունեցած հզոր ամպրոպակայծակային անընդհատ լուսարձակումների շնորհիվ, որի արդյունքում ուլտրավիոլետային լուսարձակումները վերափոխվել են՝ մեթան, հիդրոգեն, նիթրոգեն եւ կարբոնիկ միացությունների, անձրեւների միջոցով այս մոլեկուլյար միացությունները թափվելով երկրի մակերեւույթ, առաջացրել են կյանք՝ օվկիանոսներում եւ ծովերում, ստեղծելով առաջին պարզագույն օրգանիզմները: Ավելին՝ ԴՆԹ-ի կառուցվածքը հայտնաբերող, մոլեկուլյար բիոլոգիայի ասպարեզում Նոբելյան մրցանակակիր Ֆրանսիս Կրիկը փաստում է, որ մոլեկուլյար կյանքը երկրի վրա ոչ թե երկրային ծագում ունի, այլ տիեզերքից է թափանցել, այնպես ինչպես համանման՝ միֆոլոգիայի լեզվով, նույնը ներկայացնում են հնագույն «առասպելական» տեքստերը կամ ամազոնյան այսօրվա շամանները*1:

Ստանֆորդ համալսարանի անտրոպոլոգիայի անվանի մասնագետ, գիտությունների դոկտոր Ջերեմի Նարբին իր «Կոսմիկական վիշապը» աշխատությունում, մանրակրկիտ քննությամբ փաստում է, որ այսօրվա ամերիկյան հնդկացիները, ամազոնյան շամանները, ինչպես հնագույն Միջագետքյան եւ եգիպտական տեքստերն ու պատկերագրերն են ցուցում, «վիշապ» ասելով, որպես այդպիսին, հասկանում եւ հասկացել են ոչ թե նկատի ունենալով՝ օձ-սողունին, այլ տիեզերական Ոգուն (spirit), որը գալարվող ռադիոալիքի տեսք ունի: Ավելին, ըստ նրանց աշխարհայացքի, յուրաքանչյուր մարդու մեջ «նստած» է երկպարույր վիշապը (ԴՆԹ), որի հետ կարելի է «կոնտակտի

*1- Jeremy Narbay, «Cosmic Serpant, DNA & The Origins Of Knowledge», 1988, NY., p. 73-74.

դուրս գալ», օգտագործելով արմատիքից պատրաստված հատուկ ըմպելիք: Մի շարք գիտնականներ, փորձելով հալուցինացիա առաջացնող շամանների պատրաստած եփուկը, իսկապես «հանդիպում» են ունեցել երկվորյակ՝ ճերմակ եւ սեւ վիշապներին եւ... «կոնտակտ ունեցել»: 2000 թվականին, գիտության տարբեր բնագավառների խոշորագույն երեք գիտնականներ, Ջ. Ներբիի միջնորդությամբ հայտնվելով հարավային Ամերիկայի շամանների մոտ եւ օգտագործելով եփուկը, «կոնտակտի միջոցով» իրենք իրեց համար վերջապես պարզել են տարիներով իրենց առջեւ ծառացած գիտական խնդրի լուծումները: Ջերեմի Նարբին քննության առնելով հալուցինացիա առաջացնող եփուկի քիմիական բաղադրությունը, գալիս է այն համոզման, որ այն ընդունելիս մարդու ուղեղում որոշակի ռեակցիաներ են գործում, եւ գուցե գոյություն ունի հնարավոր կապ՝ ***միկրո*** եւ ***մակրո*** աշխարհների միջեւ, որի «ճանապարհը» այսօրվա քաղաքակրթությունը՝ մարդկությունը, մոռացության է տվել:



Ջերալդո Ռեյշել-Դոլմոտով, «Ուղեղը եւ միտքը Դեսանա շամանիզմում», 1981թ., էջ 81: Մարդկային ուղեղ: Ձախակողմյանը որպես 1-ին մաս, աջակողմյանը՝ 2-րդ: Պատկերանկարը ըստ՝ Կոլումբիայի ամազոններում գտնվող Դեսանա ցեղի:

7-րդ դարի հայ մատենագիր Անանիա Շիրակացին գրում է. «**Նրանք** (նկատի ունի՝ հեթանոս գիտունները) **բարբաջանքով արմտիքը եւ բանջարը տանում եւ կապակցության մեջ են դնում աստղերի հետ, իսկ իրենք, ինչպես ասում են, աստղերին հակառակ, իբրեւ թե տարբեր կերպարանքներ են ընդունում, եւ դեւերը, աստղերի կերպարանքներ առած, իջնում են իրենց մոտ մինչեւ մեր ժամանակներն էլ»**[*1]:



Ջերալդո Ռեյշել-Դոլմոտով, «Ուղեղը եւ միտքը Դեսանա շամանիզմում», 1981թ., էջ 88: Մարդկային ուղեղ: Պատկերանկարը ըստ՝ Կոլումբիայի ամազոններում գտնվող Դեսանա ցեղի:

Ացտեկների լեզվում ԿՈԱՏԼ(coatl) բառը երկու իմաստ ունի՝ «վիշապ» եւ «եկվորյակ»: Ըստ Ջերեմի Նարբիի քննության, շամանների աշխարհընկալման մեջ, տիեզերական երկվորյակ վիշապները՝ կյանքի թաքնված էներգիայի սիմվոլն են խորհրդանշում, որ այսօր մեզ հայտնի է որպես ԴՆԹ-ի երկպարույր փաթաթված շղթա: Հեղինակն իր գրքում փաստում է, որ հնագույն Միջագետքյան եւ եգիպտական տեքստերում ու պատկերագրերում ներկայացված փուլ առ փուլ վիշապազուների կոսմիկական արարչության մասին պատումները, լիովին համընկնում են գենի մեջ տեղի ունեցող պրոցեսների փուլային հերթականության եւ նրանց «արտաքին տեսքի» հետ (տես նկ.):

Մարդուն ստեղծող հնագույն Միջագետքյան՝ ՀԱՅԱ = ԷԱ =

*1,- «Անանիա Շիրակացի, «Մատենագրություն», 1979թ., էջ 82:



Ֆրենսիս Կրիկի «Կյանքի ծագումը եւ բնությունը» գրքի կազմի վրայի նկարը, 1981թ.:

ԷՆԿԻ աստվածության սիմվոլը պատկերագրերում՝ երկպարուրաձեւ օձն է: Շումերական տեքստերից «Հին Կտակարան» ներմուծված օձը «խաբում» է Ադամ-Եվային, եւ սրանք համտեսելով բարու եւ չարի ծառի պտուղը, սկսում են տեսնել մեկը մյուսի մերկությո՞ւնը, թե՞ ուղղակի... «տեսանելի, նյութական» են դառնում: Հունական Զեւսը կամ համընդհանուր հնդեւրոպական գերագույն աստվածությունը, հնագույն պատկերանկարներում, վիշապաձեւ մարմին ունի, իսկ հետագայում ներկայացվում է, որ ինքն է սպանում տիեզերական վիշապին: Հնագույն եգիպտական հավատամքի համաձայն, հոգեւոր, ***աններեւույթ շերտում մնալով՝ նշանակում է նյութական մարմնավորմամբ հայտնվել այս կյանքում,*** այսինքն նկատի ունի շոշափելի, երեք չափումնանի մեր կյանք-իրականությունը: Եթե մարդն այստեղ է մնում, ապա հայտնվում է հոգեւոր էներգիա իրականությունում*[1]: Ժամանակակից ֆիզիկայում *(Մաքս Պլանկ, Նիլս Բոր)* լույսի ալիքային ֆոտոնը, երբ ֆիքսում ենք՝ փորձում ենք չափել («սպանում ենք»), ապա այն դառնում է մասնիկ, իսկ մասնիկների ուղղորդված «փաթեթավորված» հավաքականությունը՝ անտեսանելի էներգիայի ալիքն է:

Հնագույն հավատամքային համարյա բոլոր պատումներում, աստվածների հերիարխիայի ձեւավորումը՝ գերագույն մեկից դուալիզմի հիմքով բազմապատկվելու համակարգ է, որ հիշեցնում է՝ քրոմոսոմի աստիճանական զարգացումն ու 2-ից 4-ի տրոհումը:

*1- Զ. Ներբիին «կյանքը» բացատրող ամազոնյան այսօրվա շամանը հնագույն հավատամքում առկա նույն կոնցեպտն է ներկայացնում. «Ես գիտեմ, որ յուրաքանչյուր ապրող հոգի կամ որեւէ մեկը որ մեռել է, նման են օդում վխտացող ռադիոալիքներին: Նրանք էնտեղ են, բայց դու չես տեսնում նրանց, բայց հենց ռադիոն միացնում ես՝ այսինքն, երբ օգտագործում ես ***այահուասքա*** եփուկը եւ կոնտակտի ճիշտ համակարգը, ապա հաղորդակցվում ես նրանց հետ»: Զ. Ներբին, օրինակ, ճշտել է, որ այս շամանը գիտե, ճանաչում է մի քանի հարյուր հազարի հասնող բույսեր, որոնցով նա տարբեր դեղամիջոցներ է պատրաստում: Փաստորեն, հիշողության մեջ նման քանակության իմֆորմացիա պահել՝ անհնարին է, համանման իմֆորմացիա չես գտնի նույնիսկ լավագույն գրադարանների հավաքական ամբողջության մեջ: Իսկ շամանները զարմանում են իրենց հետ երկու տարի ապրող Զ. Ներբի վրա, թե ինչո՞ւ է պետք հիշել, եթե պետք եղած ժամանակ, կարելի է «դիմել» ոգիներին եւ ստանալ իմֆորմացիա՝ բույսի տեսքի, բույսի տեղի եւ դեղամիջոցը ստանալու եղանակի մասին: Jeremy Narbay, «Cosmic Serpant, DNA & The Origins Of Knowledge», 1988, NY, p. 31:

Տիեզերական վիշապը, որը կյանքի հարուցման պատճառ-հիմքն է, առկա է՝ թե՛ եգիպտական, թե՛ հնդկական, թե՛ հայկական եւ այլ «արարչական առասպելապատումներում» եւ բոլորն էլ, վիպական լեզվով, ներկայացնում են միեւնույն փուլային՝ թվային բաժանում, համակարգերը:





From Molecular biology of the Gene, *Vol. 1, 4th ed., by Watson et al. Copyright © 1987 by James D. Watson, published by The Benjamin/Cummings Publishing Company.*

Միջագետքյան ԷԱ աստվածությունը, որն արարեց առաջին մարդուն: Նրա ետեւում իր իսկ խորհրդապաշտական սիմվոլը՝ երկու պարուրաձեւ օձերն են:



"The Serpent Lord Enthroned." From Campbell (1964, p. 11).

ՀԱՎԵԼՈՒՄ # 2

Յոգա համակարգը:

Հնդկական Յոգա համակարգում յոթ չակրաների ուսմունքը մեզ է հասել հնագույն ժամանակներից:

Չակրաներով ողնաշարի ներքեւից վերեւ «թաքնված օձագալար» հուր-էներգիան դեպի վեր բարձրացնելու եւ ոչ շոշափելի, այլ՝ հոգեւոր ոլորտների հետ «հարաբերվելու» տեխնիկան, իր հիմքում, բրահմայական աշխարհճանաչողական կոնցեպտն է, տիեզերական արարչության հավատամքային համակարգի վրա հիմնված:

Յոթ չակրաները նույնպես երկրաչափական 6 ֆորմաների հիմքով կոմբինացիաների ներկայացում է: Օրինակ, առաջին չակրան ներկայացվում է՝ *շրջանագծի մեջ* ***քառակուսի եւ ներսում եռանկյուն*** երկրաչափական սիմվոլով, որը հնագույն հավատամքներում համարվել է կյանքի հիմք, եւ օգտագործվել թե՛ արեւմտյան, թե՛ արեւելյան տաճարների ճարտարապետություններում:

Հնդկական կամ Բրահմայական հոգեւոր համակարգում, մարդու ողնաշարին փաթաթված աներեւույթ վիշապ-օձի սիմվոլը, յոթական համակարգը, չակրաների թերթիկների ներքեւից վերեւ թվաքանակը՝ 4, 6, 10, 12, 16, 2, 1000, երկրաչափական 6 ծավալների կոմբինացիաները, դրանց անունները, լիովին համապատասխանություն եւ նմանություն ունեն հնագույն հավատամքային կարգակառույցների՝ «միֆական» համարվող պատումներում առկա գլխավոր աստվածների թվաքանակների,



Յոթ չակրաները որպես կրկնակի օձերի եւ երկրաչափական ֆորմաների ներկայացում հնդկական ուսմունքում:

նրանց բնույթի եւ կատարած ֆունկցիայի հետ: Այսինքն, Յոթ չակրանների ուսմունքի կիրառությամբ, տրանսցեդենտալ մեդիտացիայի միջոցով, անհատի հոգին որպես մասնիկ տիեզերական ԷՈՒԹՅԱՆԸ Էակից լինելով, ձգտում է ճանաչել ամբողջը՝ ձգտում է մարմնից դուրս ելնելով ***էանալ:***

Նույն համակարգի **հակադարձ ընթացքով,** Անհուն ԷՈՒԹՅՈՒՆ-ն է փուլ առ փուլ ստեղծել տիեզերքը: Եվ յոթ -ութ փուլերի ընթացքով, ձեւավորելով նյութական տիեզերքը, տիեզերական գերհոգին է մանիֆեստվել մասնիկներում:

Մարդու՝ ***միկրո տիեզերքի*** մարմնում, ողնաշարի օձահուրի ներքեւից վերեւ այս հերթականությունը, տիեզերական մարդու՝ ***մակրո-տիեզերք-լոգոսի*** նյութականորեն արտահայտվելու արարչության փուլերն են՝ վերեւից ներքեւ հաջորդականությամբ՝

ներքեւից վերեւ	**վերեւից ներքեւ**
1. Մուլադհարա	1. Սահասրարա
2. Սվադհիսթհանա	2. Աջնա
3. Մանիփուրա	3. Վիշուդդհա
4. Անահատա	4. Անահատա
5. Վիշուդդհա	5. Մանիփուրա
6. Աջնա	6. Սվադհիսթհանա
7. Սահասրարա	7. Մուլադհարա:

Տիեզերական Հոգին, ըստ հնագույն հավատամքային պատումների, երբ ցանկանում է նյութական արտահայտություն ստանալ կամ երբ սկսում է արարել տիեզերքը, փուլ առ փուլ սկսում է արտահայտել իր յոթ բացահայտումները:

1. ***Սահասրարա***-ն այն ամբողջություն-բովանդակն է, մեկն է, որ ցանկանալով նյութականանալ, դառնում է ***Աջնա՝*** առաջին զույգը, որ խորհրդաբանորեն դուալիզմի սկզբունքն է հոգեւոր ոլորտում: *Սահասրարա* սանսկրիտ բառը՝ հնդեւրոպական բառ է եւ նրա հիմքում ընկած ***արմատ-իմաստը*** շումերական՝ Սար-Շար = 3600-ն է, որ ամբողջի, բովանդակի իմաստն ունի, «շրջանագծի» սիմվոլով: ***Սահասրարա***-ի երկրաչափական ծավալային սիմվոլը ***իկոսահեդրոնն*** է, բնույթը՝ «ջուր», որ իրենում ունի ***տետրահեդրոնը՝*** «հուր»: 2-րդ փուլի՝ ***Աջնա***-ի սիմվոլը՝ ***օկտահեդրոնն է*** (արական եւ իգական դուալիզմ, համապատասխանում է՝ ***երկվորյակներին***):

Բոլոր փուլերն իրենց բաժանումներով, ֆուկցիաներով եւ հաջորդականու-

թյամբ համարժեք համապատասխանության մեջ են հնագույն հավատամքային պատումների արարչության ընթացքի՝ փուլային «բաժանումների» եւ աստվածությունների անունների հետ:

Այս յոթ աստվածությունները կամ միակ Աստծո յոթ փուլերով արտահայտվող էներգիաները «ձեւավորում» են Աստծո կոմպոզիցիան՝ ութերորդ հոգեւոր ռեալությունը, որից եւ «արտահայտված» է նյութական՝ իններորդ, երեք չափումնանաի մեր աշխարհ-տիեզերքը:

1 > 8 = 9 արարչական համակարգը ***Կենաց Ծառի՝ կյանքի աղբյուրի,*** գաղափարն է, որ իրենից ներկայացնում է թվային իննական համակարգ, իր մեջ ունենալով յոթ կուսական թվի խորհուրդը: Սա նաեւ մարդկային ֆիտուսի փուլային զարգացման համակարգն է:

Փաստորեն, Յոգայում, չակրաների ուսմունքը, իր հիմքում, անհատի կողմից գերագույն էակի հետ ***էանալու*** համակարգ է: ***Հակադարձը՝*** գերագույն էակի մանիֆեստացիան է որպես գոյաբանական աշխարհ. հոգեւորից նյութական աշխարհի արարման պրոցեսի ընթացքն է:

Ըստ հնագույն բնազանց իմաստասերների եւ Հեգելի ***«Ոգու փիլիսոփայությունը»*** ուսումնառության, **տիեզերական Գերհոգին** ունի փուլային երեք շրջաններ:

Առաջին փուլ,- երբ տիեզերական Գերհոգին ***ինքն իրենում է՝*** *նյութական տիեզերքի բացակայություն.* Նա ***սուբյեկտիվ Ոգի է:***

Երկրորդ փուլ,-***երբ ստեղծում, մանիֆեստվում է*** որպես նյութական տիեզերք՝ ոգու եւ նյութի միասնություն. Նա ***օբյեկտիվ Ոգի է,*** որովհետեւ կարող է համեմատել, ինքն իրեն «գնահատել»:

Երրորդ փուլ,-***երբ վերադառնում է՝ նորից ինքն իրենում է,*** ապա Նա «ինքնագիտակից», ***բացարձակ(աբսոլյուտ) Ոգի է:***

Հեգելի «Ոգու փիլիսոփայությունը» ուսումնառությունում առկա՝ սուբյեկտիվ ոգի, օբյեկտիվ ոգի, աբսոլյուտ ոգի,- անհունի գոյության փուլային երեք շրջանները ոչ թե պրոցես է, *(այլապես նա կունենար սկիզբ ու վերջ՝ եւ չէր լինի անհուն, անսահման),* այլ՝ Գերհոգու մտքի գործողություն: Նյութական տիեզերքը **գերագույնի՝** Աստծո համար, մտքի արդյունք է՝ պատրանք, մտքի աբստրակցիա է միայն: Մեր՝ գոյաբանական աշխարհի՝ նյութական տիեզերքի բնակիչներիս համար, Աստված է մտքի աբստրակտ գոյություն: Միակ կապը բանական արարածի ու Աստծու միջեւ՝ ***հոգեւոր միտքն է:***

Ըստ հնագույն բնազանց իմաստասերների,-

Անհունը՝ Էությունն է, Գոյությունն է, Սերն է:

Անհունի մանիֆեստացիան՝ ԲԱՆՆ է, որից սերում է աներևույթ գոոսֆերան ու առերևույթ մատերիան՝ ժամանակ-տարածությամբ:

ԲԱՆ-ի էությունը, գոյությունը եւ սերը ***(արտահայտություն-կերպարափոխումները)*** մեկ են: Լինելով ինքն ինքնյան, ԲԱՆԸ միաժամանակ ստեղծում ու թափանցում է ԳՈՈՍՖԵՐԱ*(զգայողական կենսոլորտ)*, արտահայտվելով որպես՝ **ԿԱՄՔ - ՎԻՃԱԿ և ԷԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ** ամբողջականությամբ, որը եւ սերում է ԻԴԵԱՆ ***(գաղափարներ),*** եւ ոչ միայն: Գաղափարը՝ կյանք է, ***էականի կամային վիճակն է:***

ԲԱՆԻ էությունն ու էության կեցությունը նույնն է: Նրա գոյությունը տրանսցենդենտալ է՝ այն ե՛ւ ***արտահայտված կոնկրետ է՝*** *(նյութականացված մանիֆեստացիա,- մասնիկ է եւ մասնիկի մեջ է)***,** եւ միևնույն ժամանակ՝ ***վերարցարկված ինքնին*** ԷՈՒԹՅՈՒՆ է:

ՓՈՔՐ ՏԻԵԶԵՐՔԻ(անհատ) եւ ՄԵԾ ՏԻԵԶԵՐՔԻ(անհուն) գոյության նպատակը «պրոցես» է՝ առավելագույն հաճույքի լինելիության ձգտումն է: Հարաբերականորեն նրանք հակադրության մեջ են: Անհուն ԷՈՒԹՅՈՒՆԸ ստեղծում, մանիֆեստվում է մասնիկներում: Մասնիկները ԷՈՒԹՅԱՆԸ Էակից լինելով, ձգտում են ճանաչել ամբողջը՝ ձգտում են ***էանալ:*** Հակադարձ վեկտորային բարեշրջման անընդհատ պրոցես՝ առավելագույն հաճույքի լինելիության ձգտումով, որն իրացվում է մասնիկի եւ ամբողջի իրար լրացնող ներդաշնակ համագոյմամբ: Ուրեմն, գիտակից մասնիկը ոչ միայն Անհունի էության հետ էակից է, այլ նաե՛ւ՝ ինքնին էությունն է:

Մարդը հոգի է, որ ունի մարմնական կենսափորձերի հնարավորություն-անհրաժեշտությունը: Նպատակը՝ հոգեւոր բարեշրջմամբ (spiritual evolution) դեպի հոգեւոր լինելիությունն է:

ՀԱՎԵԼՈՒՄ # 3

ԽՈՐՀՐԴԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ՝ ՀՆԱԳՈՒՅՆ ՍԻՄՎՈԼՆԵՐԻ ԻՄԱՍՏՆԵՐՆ ՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հնագույն հավատամքային պատումներում սիմվոլների ընդհանուր իմաստների խորհրդապաշտական նշանակությունները ներկայացված են ներքեւում բերված հեղինակների աշխատությունների հիմքով, ինչպես նաեւ՝ Զ. Բոհեմի, Յ. Յակոբսոնի, Մ. Մյուլերի, Հ. Բլավատսկի, Անի Բեզանդի, Ալիս Բեյլիի եւ այլ աղբյուրների համեմատական վերլուծումներով ու ճշգրտումներով:

* “Мифы народов мира” (Encyclopedia) т. I, II, M., 1987,
* T.V. Gamkrelelidze & V. Ivanov, “Indo-European and Indo-Europeans”, Berlin, New York, 1995,
* Stephanie Dalley, “Myths From Mesopotamia”, Oxford, 2002,
* Rachel Storm, “Indian Mythology”, 2000, USA,
* M.Hall, “The Secret Teachings Of All Ages”, USA,2000,
* M.Gadalla, «Egyptian Cosmology»,USA, 2001
* S. De Lubicz, “The Temples of Karnak”,Vermont,1999,
* Timothy Freke & Piter Gandy “Jesus & the Lost Goddess”, N.Y., 2001
* H.P. Blavatsky, “The Secret Doctrine”, N.Y.1999,
“Isis Unveiled”, USA, 1998,
* A. Schimmel, “The Mystery Of Numbers”, Oxford, 1993,
* H.Harish Johari, “Numerology”, Vermont, 1990,
* L.R. Chawdhri, “Secrets Of Yantra, Mantra & Tantra”, Delhi, 2003,
* J.M. Jenkins, “Maya Cosmogenesis”, Vermont, 1998,
* Z.S. Halevi, “Kabbalah”, USA, 1998 (reprinted),
* Զ.Կոսիդովսկի, «Բիբլիական ավանդապատումներ», Երեւան, 1980թ.,
* L.A.Waddell, “A Sumer-Aryan Dictionary”, London, 1227.
* “The Makers of Civilization in Race & History”, 1929, London, 2004,
“The Noontide press”.

Կենդանիների հետ կապված խորհրդապաշտությունը ընդունված էր հնագույն հավատամքներում՝ որպես ասելիքի էությունը արտահայտելու ձեւ[*1]: Յուրաքանչյուր սիմվոլ արտահայտում էր մեկ կամ մի քանի իմաստներ, նայած, ըստ կոնտեքստի՝ որտեղ եւ ինչպես էր օգտագործվում: Բերենք դրանցից մի քանիսը:

Վիշապ (*ՀՆԽ՝ *wel-),- նախատիպ-նախագոյություն, որի միջոցով ձեւավորվում են տիեզերական ֆորմանները: Հնագույն պատումներում նաեւ աղերսվում է տիեզերական նախաջրերի հետ եւ անպայման սպանվում է հրածին հերոս աստծո կողմից, որից եւ առաջանում են՝ երկինք, երկիր, տիեզերական ֆորմաներ եւ այլն[*2]: Վիշապի սիմվոլի հետ են աղերսվում հնդկական Վրթրրան, Վալան, եգիպտական՝ Նեհեբ Կաուն, հայկական՝ Անույշը եւ նույնիսկ՝ Արա Գեղեցիկը[*3] եւ այլն: Հայկական ժողովրդական հեքիաթներից մեկում Վիշապը օձամանուկն է, որն ի վերջո պատռում է օձի իր խորխը եւ դառնում գեղեցիկ պատանի[*4]: Վիշապի սիմվոլը նաեւ գործածվել է որպես որոշ լուսատուների սիմվոլ. օր.՝ արեւի,- արեւամանուկ-օձամանուկ: Հին կտակարանյան Յահվեն, հնում, նույնպես վիշապի խորհրդապատկերով է ներկայացվել որպես երկնային աստվածություն (astral god) որ փոխառնված է Միջագետքից[*5]:

Զուկ (ՀՆԽ՝ gĥu, հուն.՝ ichthy´s, լիտ.՝ Žuvis)[*6]**:** Առաջին խոսքի՝ ***բան, բառ,-*** խորհրդանիշն է: Հնդկական՝ Օհաննես-ձուկ, հայկական՝ Ձենով Օհան եւ այլն:

Առյուծ (ՀՆԽ՝ reug´ – մռնչալ, հուն.՝ ereu´gomai, լատ.՝ rūgio)[*7]:

Առյուծը աղերսվում է ***արեւի*** հետ, բարձրագույն ոգու խորհրդանիշն է: Ըստ հնագույն կոսմոլոգիայի, ***Առյուծի*** համաստեղությունն է «կառավարում» արեւին: Սատուրնը նույնպես առյուծի տեսքով է ներկայացվել իրանական Զրվանիզմում:

Լուսին-ցուլը (ՀՆԽ՝ ***K'°(o)u-**, *t^{h}euro- «կով, ցուլ», հայերեն՝ կով, տավար)[*8]: Լուսնի խորհրդապաշտություն. նյութական եւ շնչավոր՝ ցածր ռեալությունների հավաքական սիմվոլն է: Ուրարտական Թեշեյբային մենք տեսնում ենք ցուլի վրա, Խալդիին՝ առյուծի: [**(soul) – շունչ-հոգի՝ Ցուլ-լուսին**] եւ [**(spirit)- բարձրագույն Ոգի՝ Առյուծ-արեւ**]**:** Արդի հայերենում (անգլերեն՝ soul եւ spirit) հոգի եւ ոգի հասկացողությունները չունեն հստակ բաժանում, ոգին երբեմն հասկացվում է ուրվական կամ վատ իմաստով՝ սատանայական, որ կարծում եմ, քրիստոնեությունից հետո ընկած ժամանակների աղավաղումներ են:

Ձի կամ **էշ** – (հնխ.՝ gĥeyo, սանսկրիտ.՝ ha´ya, շումեր.՝ ANŠE)[*9]: Այս խորհրդապաշտությունը աղերսվում է կոսմիկական ***«շունչ-հոգի անիվի»*** հետ, սանսկրիտ.՝ վահան,(VAHAN), որն իր վրա որպես հենձյալ կրում է բարձրագույն ոգուն՝ արեւ խորհրդանիշը: ***«...Երկվորյակները արշավում են արեւի նժույգներին հենձած»***[*10]: Հայկական «Սասնա Ծռեր» էպոսի պատումներից մեկում Ծովինարը հրածին նժույգի սմբակի տակի ջրից խմելով է հղիանում եւ ծննդաբերում երկվորյակներ[*11]: Խորհրդաբանական իմաստն է՝ բարձրագույն կոսմիկական Ոգին ծնվում է տիեզերական շունչ-հոգուց (սիմվոլը՝ նժույգ կամ էշ), որը հետագայում նրա համար հանդիսանում է որպես անիվ (սանսկրիտ.՝ VAHAN):

Թռչուն (սեւ եւ ճերմակ): Անհատական Ոգի (սեւ՝ բարձրագույն) եւ շունչ-հոգի (ճերմակ՝ ցածրագույն, կենդանական «anima mundi»): Որոշ հոգեւոր տեքստերում սրանց նշանակությունները հակառակ իմաստներն ունեն՝ սեւը ցածրագույն, ճերմակը՝ բարձրագուն: Սեւ հերոս եւ ճերմակ հերոս սիմվոլ-զուգահեռները՝ նույն են, բայց տիեզերական իպոստասների «eon» իմաստով:

Եգիպտական՝ **Կա** եւ **Բա**[*12]: Մարդկային մարմնում «բնակվող» եւ մահվանից հետո այն լքող սեւ եւ ճերմակ թռչունները՝ ***շունչ*** եւ ***հոգի*** կամ՝ կենդանական ցածր ***հոգի*** եւ բարձրագույն ***ոգի***: Թաքնագիտական իմաստներով՝ համանման են Նոյյան ագռավին ու աղավնուն: Արտավազդի ուսին նստած էր ագռավ, Միհրի ագռավաքար, Օդինի *(գերմ. հավատամք-էպոս)* ուսին սեւ բազե եւ այլն: Առրամազդան Ագռավի միջոցով Միհր-Միթրային հրամայում է սպանել անհնազանդ Ցուլին: ***MUL.APIN*** Բաբելական աստղաբալաստիկայի տեքստում Ագռավ աստեղատունը 36 գլխավոր աստեղատներից է:

Աղվես, գայլ, շուն: Ըստ եգիպտական հավատամքի անդրաշխարհի եւ նյութական աշխարհների միջեւ դռնապահ կենդանին է՝ Անիբուսը: Ըստ հայկական էպոսի՝ աղվես, նաեւ՝ գայլ[*13]: «Սասնա» էպոսում՝ *Խանդուդի* դռնապահ ***Գորգիզը***, որ թարգմանաբար նշ. է՝ «գայլ», ինչպես նաեւ անուդնդի դռան առջեւ պտտվող աղվեսը («Ս.Ծ.» 1936թ., հ I, պատում՝ «Է»): Աստեղատներից շան կերպարխորհրդապաշտության հետ աղերսվում են այսօրվա ***Serpanis*** -ը, ինչպես նաեւ՝ Կենտավրոսի Պյուռիդա համաստեղությունը, որ Բել-Նեբրովթն է: Հայկական միֆոլոգիայում Հայկը Բելին է ասում՝ ***շուն*** (Հայկը՝ Կարապ-Անգղն է, Cygnus-ը): Արտավազդը Մասսի մեջ է փակված, եւ երկու հավատարիմ շները կրծում են նրա շղթաները: Արտավազդն այստեղ, վերջին՝ 8-րդ աստվածությունն է, ինչպես՝ Փոքր Միհրը, Քրիշնան, Քրիստոս իր 2-րդ գալստյամբ:

Անդրաշխարհ-արտաշխարհ կամ ***ոգիների աշխարհից*** դեպի արտահայտված՝ ***մատերիալ աշխարհ*** «դռնաշեմքին», հնագույն պատումներում միշտ նըստած է պահապան շունը: Օրինակ, Հունական դիցապատում՝ ***Կերբեր շունը:***

«Քարայրը» ունի խորհրդապաշտական երկու ներկայացում.

1-ին խորհրդաբանություն. նյութական տիեզերքի սիմվոլն է, իսկ այնտեղ փակված վերջին հերոս աստվածությունը՝ տիեզերական ոգին: Այսինքն, այս խորհրդաբանությունը՝ հոգու եւ նյութի միասնությամբ կայացած մեր երեք չափումնանի ***տիեզերք-աշխարհն*** է: Եվ եթե հոգին լքի մատերիան, ապա կգա աշխարհի վերջը: Այսինքն, եթե Արտավազդը, Փոքր Միհրը եւ այլն, դուրս ելնեն «քարայրից»՝ մատերիալ տիեզերքից, ապա այն կկործանվի:

2-րդ խորհրդաբանությունը. ***քարայրը,*** եթե ներկայացված է գույնով կամ սեւ թռչունի սիմվոլով, օրինակ Փոքր Միհրը մտնում է ***Ագռավուքար,*** ապա այս

խորհրդաբանությունն ունի ***բուն երկինք նշանակությունը:*** Այս ***երկինքը*** աստղային երկնքից անդին է, կոչվում է նաեւ ութերորդ երկինքից անդին: Այն առաջացել է ոչնչից: Այն ըմբռնելի է միայն բանականությամբ*[14]:

---

* ՀՆԽ - Հնդեւրոպական նախալեզու:
*1, *2- ”Egyptian Cosmology”, Moustafa Gadalla, USA, 2001; Timothy Freke & Piter Gandy “Jesus & the Lost Goddess”, N.Y., 2001:
*3 - Armen Petrosyan, “The Indo-European & Ancient Near Eastern Souses of the Armenian Epic”, 2002, Washington D.C. p. 80:
*4 - «Հայ ժողովրդական հեքիաթներ», հատոր IX, էջ 231, «Օձամանուկ, վարդ-մանուկ», Երեւան, 1968թ.:
*5 - Զ. Կոսիդովսկի, «Բիբլիական ավանդապատումներ», Երեւան, 1980թ. էջ 33:
*6,*7 - Հր. Աճառյան, «Հայոց լեզվի պատմություն», հ.1, 1936թ.:
*8, 9 - Հր. Աճառյան, «Հայոց լեզվի պատմություն», հ.1, 1936թ.:
*10 - T. Gamkrelidze & V. Ivanov, “Indo-European and Indo-Europeans”, USA, 1995, V. I, p. 133, V. II, p. 680.
*11 - «Սասնա Ծռեր», Երեւան, 1977թ., էջ 249, գրառող՝ Ս. Հարությունյան:
*12 - Moustafa Gadalla, «Egyptian Cosmology», USA, 2001:
*13 - Հայկական ժողովրդ. հեքիաթներում՝ ***սանամեր աղվես,*** նաեւ՝ ***սանահեր գայլ:*** Սանամեր՝ այսինքն ***հոգեմայր:*** «Հայ ժողովրդ. հեքիաթներ», ՀՍՍՀ ԳԱ, Երեւան, 1968թ.:
*14 - «Հայ մատենագիրներ, Ա. Ճիրակացի», Երեւան, 1979թ. էջ 120:

Հնագույն հավատամքներում թվերը որպես՝ արարչության խորհրդապաշտական սիմվոլներ:

ա.- **Մեծ Ոչինչ,** - Քաոս, անսկիզբ ու անժամանակ անգոյություն, խավար, անհատակ անդունդ, նախահիմք, որից ծնվում է առաջին գոյությունը՝ «թիվ 1-ը»: Ըստ հունական դիցաբանության, կենսատու աղբյուրից՝ ***քաոսից*** ծնվեցին առաջին աստվածները: Կլոր, դատարկ շրջանագծի՝ «0» կամ իր պոչը խայծել ցանկացող օղակաձեւ վիշապի պատկերանիշը այս Մեծ Ոչինչ-ի պատկերախորհուրդն էր, որից «ծնվում է» առաջին ծավալը՝ գունդը, ըստ պլատոնականների՝ սֆերա */սնամեջ պլազմա/:* Հնագույն պատումներում, երբեմն, թիվ «1»-ն է հանդես գալիս որպես «գունդ», խորհրդանշելով «Մեծ Ոչինչը»:

բ.- **Թիվ մեկ՝ I** - Առաջին գոյություն, կատարյալ, որը միշտ նույն է եւ երբեք չի փոփոխվում *(միայն մեկն է, որ ինքն իրենով բազմապատկելիս մնում է անփոփոխ):* Բոլոր թվերը «սերում են» մեկ թվից, մնացյալ բոլոր թվերը փոքր են մեկից *(մեկի մասերն են՝կոտորակները):* Մեկն ամբողջն է, որ ըստ նախահնդեւրոպացիների դուալիզմի կոնցեպտի, «արարելով ու բացվելով» 3 անգամ՝ ***երկուս, չորս, ութ,*** նորից վերադառնում է ինքն իրեն, ստեղծելով 1+8=9 համակարգը: 10-ը՝ նոր սկիզբ է, նոր մեկ է եւ թաքնագիտության մեջ տասնավորները, հարյուրավորները, հազարավորները եւ այլն, բերվում՝ ներկայացվում են միավորների համակարգով: Օրինակ՝ 10=1+0=1, 100=1+0+0=1 եւ այլն: «Մեկ թվի» զուգահեռը

թաքնագիտական երկրաչափության մեջ՝ ***հնքսագոնն*** է, ծավալածեւը՝ գնդանման ***իկոսահեդրոնն*** է:

գ.- Թիվ երկու՝ II - Տրոհում, բեւեռացում, դուալիզմ, երկու սեռ՝ ***արական*** եւ ***իգական,*** գիշեր-ցերեկ, մութ-լույս, Լուսին-Արեւ, չար-բարի եւ այլն: «Երկու» թիվը ***անդրոգեն*** է եւ նաեւ համարվում է՝ ՍԿԻԶԲ: «Երկու» թվի թաքնագիտական բացատրությունը լավագույնս տալիս է 5-րդ դարի հեղինակ Դավիթ Անհաղթը: *«Զույգ եւ կենտ թվերի համար ընդհանուր սկիզբ է հանդիսանում մեկը, իսկ զույգ թվերի համար՝ երկուսը... Բայց ոմանք կասկած են հայտնում, թե ինչո՞ւ երկուսը, թիվ լինելով* ***սկիզբ է հանդիսանում:*** *Սրան մենք այսպիսի պատասխան ենք տալիս. երկուսը թիվ չէ, որովհետեւ ինքը թվի հատկություն չունի, որովհետեւ ամեն մի թիվ իրենով բազմապատկելիս ավելի մեծ թիվ է տալիս քան գումարելիս... Իսկ երկուսն այդպես չէ, որովհետեւ ինքն իրենով բազմապատկելիս եւ գումարելիս նույն թիվն է տալիս... Երկուսը ոչ թե թիվ է, այլ միայն զույգ թվերի սկիզբ »*[1]:

Հնագույն համակարգերում «թիվ երկուսի» վիպական կերպարանավորումն է՝ «հայր-մայր»: Հայկ. էպոսում՝ Գագիկ թագավորը՝ Կակին «ամբողջն» է, գունդը: Թորոսը եւ Ծովինարը՝ արական եւ իգական առաջին բեւեռացում-բաժանումն է, դուալիստական առաջին զույգն է: Եգիպտական համակարգում՝ Շու-Թեփ-նաթ, բաբելականում՝ Ափսու-Թիամաթ եւ այլն:

դ.- Թիվ երեք՝ III - «Երեք»-ի հիմական գույներն են՝ կարմիր, դեղին, կապույտ: Երեք չափման միավորները՝ լայնություն, բարձրություն, խորություն:

Երեք թվի համար Լաո-Ցզին ասում է. *«Թառն սերում է ամբողջը, ամբողջը սերում է երկվությունը՝ դուալիզմը (հակոտնյան), երկուսը սերում է երրորդությունը, եւ երրորդությունից ստեղծվում է ամենայն ինչ»:*

Պյութագորի դպրոցը բանաձեւում էր՝ անառարկելի ամբողջը՝ մեկը, տրոհվում է երկու հակադիր ուժերի, որ ստեղծելով երրորդությունը *(հիմքն ամենայնի՝ ոսկյա եռանկյունին)* սերում է կյանք: Ըստ նրանց, հայրը՝ երեք թիվն է, մայրը՝ չորս, որդին՝ հինգ, որից եւ ոսկյա եռանկյունին՝ $3^2+4^2=5^2$:

Մ.Թ.Ա. III-II հազար., ըստ շումերաբաբելական ավանդության, աշխարհը նույնպես կառուցված էր երեք աստվածների՝ ԱՆ, ԷՆԼԻԼ, ԷԱ,- դրախտ, օդ, երկիր, սկզբունքով: Արարման համակարգում՝ Ապսու-Թիամատը սերում են երրորդին՝ Լահմու-Լահմահուին: Հայկական Էպոսում երրորդությունը՝ աներեվույթ հայր, որի նշանն է Խաչ Պատարագին, մայր՝ Ծովի-Նար եւ երկվորյակ որդիները՝ Սանասար եւ Բաղդասար: Կամ՝ 1.Գագիկ ***(Կակի= կարապ = Cygnus***

---

*1,- «Դավիթ Անհաղթ, «Փիլիսոփայության սահմանումները», Պրակ ԺԴ, էջ՝ 99-100, «Հայ Մատենագիրներ», 1980թ., Երեւան:

աստղը), 2.Ծովինար-Թորոս, 3.Սանասար-Դեղձուն: Ըստ Մ. Խորենացու՝ ***երկինք, երկիր*** եւ որդին՝ ***Վահագնը:*** Կամ երկրորդ փուլ՝ Արա Գեղեցիկ, Նուարդ, Արայան Արա *(որից՝ 12 կենդանակերպերի շղթան):*

Ուրարտական պանթեոնում՝ Հալդի, Թեշուբ, Շիվինի *(Շիուինի):* Հիթիթականում՝ Ալալու, Կումարբի, Թեշուբ:

Եգիպտականում՝ Ամոն, Քոնսու, Մուտ: Կամ երկրորդ փուլ՝ Օզիրիս, Իզիս, Հորոս *(որից հորոսկոպ՝ 12 կենդանակերպ):*

Բաբելոնյան երրորդությունը՝ Սին *(Լուսին),* Շամաշ *(Արեւ),* Իշտար *(Վենեռա):*

Հնդկական Ռիգվեդայում՝ Ագնի, Սոմա, Գանդհարվա: Հունականում՝ Զեւս, Աթանաս, Ապոլոն:

Զրվանիզմի հավատամքում՝ Զրվան, Ահուրա Մազդա, Արհիման:

Նորվեգական հին հավատամքում՝ «Օդինը տվեց միտք, Հլոդնիրը՝ հոգի, Լոդուրը՝ լույս եւ գույն»: Գերմանական հնագույն հավատամքում՝ Օդին, Վիլի, Վեհ:

Քրիստոնեության մեջ՝ Հայր, Որդի, Սուրբ Հոգի:

Ըստ Յակոբ Բոեհմի *(Jacob Boehm, 17- րդ դարի թաքնագետ, փիլիսոփա)* տիեզերական էակի՝ ԼՈԳՈՍԻ գոյությունը, կյանքը, ներկայանում է «երեք ծալքերով» կամ երեք սկզբունքներով:

Ե.- Թիվ չորս՝ IIII- Ըստ Պյութագորյան դպրոցի, բարձրագույն էակի «ինքնարտահայտման» առաջին՝ լիարժեք փուլը 360^0, քառաթեւ է՝ 1+2+3+4=10: «Չորսը» թե՛ ***քառակուսին*** է, թե՛ ***շրջանագիծն*** է՝ 360^0:

«Չորս» թիվն աղերսվում է՝ ***հուր, ջուր, օդ, հող,-*** բնության հիմք հանդիսացող ատրիբուտների հետ: Այն բնորոշում է նյութի՝ ***հրային, հեղուկային, գազային*** եւ ***կարծր*** վիճակները: Արիստոտելը ***հինգերորդ էլեմենտը՝ եթերը***, համարում էր Աստծո ***կոմպոզիցիան:***

Եգիպտական TET-ը՝ խաչ, որի վերեւի ելուստը օղակ է, արարչության հիմք հանդիսացող գաղափարանշանն է:

Ըստ հնդ-արիական՝ վեդայական հավատամքի, «չորս»-ը՝ քառագլուխ տիեզերական Բրահմն է, արարչության լիարժեք արտահայտությունը: Ըստ քրիստոնեական թաքնագիտության՝ ***քառանիվ Սայլ*** *(Հովհաննու հայտնություն):* ***Չորս*** թիվն աղերսվում է հայկական Անգղ-Cygnus համաստեղության հետ, որ հայկական «Սասնա Ծռեր» էպոսում երկվորյակների հայրն է: Ըստ հին եգիպտական հավատամքի՝ Cygnus-ը արեւի՝ ՐԱ (Ռ-Ա) հայրն է: «Չորս» թիվը հնդեւրոպական մուրճը ձեռքին, ամպրոպ-կայծակ ԹՀՈՐ-Թեշուբ դիցի թիվն է, կենդանակերպ աստեղատունը՝ ***«Ցուլ»(Taurus):*** Միչեւ հիմա էլ շաբաթվա չորրորդ օրը եւրոպական ժողովուրդների մոտ կոչվում է՝ Թորի օր անունով,-

Thursday = Thor's+day: Հնագույն հավատամքում նա էր տիրզերքի հյուսնը, որ քրիստոնեության մեջ ներմուցվեց որպես Յիսուսի հայրացու՝ հյուսն Յովսեփ:

զ.- Թիվ հինգ՝ IIIII- Խորհրդանշանն է հնգաթեւ աստղ: Տիեզերական մարդու նշանն է: Մարդու հոգու խորհրդանշանն է: «Հինգ» թիվը առաջին թիվն է, որ զույգ եւ կենտ թվերի գումարն է: Շրջանագծի մեջ հնգաթեւ աստղը՝ պենտոգրրամը, համարվել է ամենազորեղ պատկերանշանը թաքնագիտության մեջ: 72^0(72x5=360^0): Հինգ թիվը աղերսվում է Վեներա մոլորակի հետ: Աղերսվում է Իշտար/Մարիամ աստվածության հետ: Սիրո խորհրդապաշտական թիվն է, քանի որ շրջաբերական թիվ է՝ $5^2 = 25$, $5^3 = 125$ եւ այլն:

«Հինգ» թիվը կարեւոր դերակատարություն է ունեցել աստղագիտության մեջ: Եւ հնագույն արեւային տարվա հիմքում՝ 60 (5 x (5+7)) է, որը կարող էր բաժանվել 5x72օրվա, որը հետագայում ընդունվեց որպես արեւային տարվա տեւողություն՝ 365 օր:

«Հինգ» թիվը նաեւ սվաստիկայի թիվն է *(քանի որ ունի չորս թեւ եւ կենտրոն)* թե՛ հին հայկական, թե՛ հին չինական պատկերներում:

Է.- Թիվ վեց՝ IIIIII- Ըստ նեոպլատոնիստների վեց թիվը ամենակատարյալ թիվն է՝ 1+2+3=6, $1 \times 2 \times 3 = 6$: Առաջին երեք թվերը թե՛ գումարման, թե՛ բազմապատկման դեպքում տալիս են՝ 6: Հին Կտակարանում, Աստված աշխարհն արարեց վեց օրում: Շումերական թվագրության մեջ 6-ը, 60-ը, 600-ը արարչական թվերը էին եւ հատուկ կարեւորություն ունեին:

Հնագույն եգիպտական տարածական երկրաչափության մեջ «6»-ը նշանակում էր՝ ծավալ, խորանարդ, երեք չափումնանի տիեզերք, քանի որ խորանարդն ունի 6 նիստ: «Սասնա էպոսում» Քեռի Թորոսի ձին վեց ոտանի է: Այսինքն, չորրորդ աստվածությունը՝ Թոր-Թեշուբ-Թեյշեբան տիեզերական արարչության ձեւավորման ընթացքի առաջին փուլի՝ խորհրդաբանական երկու խորանարդներից առաջին ***խորանարդի*** վիպական ընդհանրացում-իպոստասն է:

«Վեցը»՝ ուրարտական Հալդիի թիվն է *(Մհերի դռան արձանագրության մեջ՝ 6 այծ զեննել Հալդիին):* Հայկական էպոսում 6-րդ աստվածությունը ***Առյուծ Մեծ Մհերն*** է, արեւի իպոստասը: 6^2=36 հայոց այբուբենի տառերի թվաքանակն է: 1-ից 36 թվերի գումարը՝ 666- է, որը Արեւի կոդ-թիվն է: 6x6=36 գլխավոր աստեղատներն են՝ ըստ Բաբելական աստղաքարտեզի: Հայերեն «վեց» թվի անունը, ըստ Հր.Աճառյանի, վիշապ բառից է ստուգաբանվում: Թիվ «վեցը» թաքնագիտության մեջ՝ գոյաբանական աշխարհի արարչության թիվն է,- ***Հոգու*** եւ ***նյութի*** միասնության խորհուրդն ունի՝ 3+3=6: «Վեց» թիվը երկրաչափական ***հնքսագոնն է:*** Հնագույն համակարգը *(1 > 8)* միտող՝ 1-ից 8 թվերի գումարը՝ 36 է, որ 6^2 է:

Զրադաշտության մեջ՝ արարչության վեց շրջան, վեց բարձրագույն հրեշ-

տակային էակներ՝ Ամեշտա Սպենտա եւ այլն:

ը.- Թիվ յոթ՝ IIIIIII - Ըստ հների «յոթը» կուսական թիվ է: Դավիթ Անհաղթն ասում է՝ *«... Յոթ թիվը կուսական է կոչվում ինչպես Աթանասը եւ ժամանակը: Կուսական, որովհետեւ տասնյակի մեջ մտնող բոլոր թվերը կամ ծնում են որեւէ թիվ կամ ծնվում են որեւէ թվից, իսկ յոթը ոչ ծնում է տասնյակի մեջ որեւէ թիվ, ոչ էլ ծնվում է նրանցից որեւէ մեկից... Այսպես եւ Աթանասը կույս է կոչվում, որովհետեւ հեթանոսներն Աթանասի մասին ասում էին, թե նա ծնվեց Արամազդի գլխից...»*[1]*:*

Ըստ հունական թաքնագիտական դպրոցների *(Հիպոկրատ),* «յոթը» ամենայն ինչի մատրիցան է, սխեմա-հիմքն է: Բոլոր ծննունդների տեւողությունը անմնացորդ բաժանվում է յոթի (օրինակ՝ հավինը = 21օր = 3 x 7): Բաբելոնյան թաքնագիտության մեջ տիեզերական անտեսանելի սֆերաները եւ մոլորակները յոթն են՝ ***Արեւ, Լուսին, Մերկուրի, Մարս, Վեներա, Յուպիտեր, Սատուրն,*** որոնք նաեւ կոչվում են յոթ դարբասներ: Հերմես Եռամեծի մոտ՝ յոթ կախարդական օղակներ: Հայկական այբուբենում՝ յոթ ձայնավորները հետեւյալ հաջորդականությամբ յոթ մոլորակներն են՝ Ա, Ե, Է, Ը, Ի, Ո, Ի(ու): Սրանց թաքնագիտական թվերն են՝ **Արեւ=1=6^2=36, Մարս=5^2=25, Վեներա=7^2=49, Մերկուրի=8^2=64, Լուսին=9^2=81, Յուպիտեր=4^2=16, Սատուրն=45:**

«Յոթ» թիվն աղեսվում է նաեւ Բազմաստեղի (Պլեադա), ինչպես նաեւ՝ Մեծ Արջի յոթ աստղերի հետ: Եգիպտական հավատամքում, Օզիրիսի մարմինը Սեթը 2x7=14 մասերի է կտրատում: Հորոսը առաջնորդելով իր հորը՝ Օզիրիսին, նրան անդրաշխարհից դուրս է բերում յոթ դահլիճների միջով: «Սասնա Ծռեր» էպոսում յոթերորդ աստվածությունը Դավիթն է՝ շումերական Դումուզին, որի հայկական անունը չի պահպանվել *(հավանական տարբերակը՝ Տավիթ = տիվ, դիվ):*

թ.- Թիվ ութ՝ IIIIIIII- Վերադարձի փուլ: Եգիպտական Աթումն ասում է՝ ***ես մեկն եմ, որ դառնում եմ՝ երկու, դառնում եմ՝ չորս, դառնում եմ՝ ութ, ապա ես նորից մեկն եմ:*** Ութերորդ աստվածությունը՝ արարումը եզրգփակող եւ գոյաբանական աշխարհը կործանող աստվածություն է: Քրիստոնեության մեջ, Յիսուսի երկրորդ գալուստով նա դառնում է ութերորդ աստվածությունը:

Հայկական էպոսում Փոքր Միհրը ութերորդ՝ վերջին աստվածությունն է: Միթրայի թիվը նույնպես ութն է, ինչպես Քրիստոսի թիվը՝ ութ. «Յիսուս» հունարեն տառերով թիվ է, թաքնագիր է՝ 888: IESOUS = 888; iota = 10, eta = 8, sigma = 200, omicron = 70, upsilion = 400, sigma = 200: IESOUS = 888.

ժ.- Թիվ ինն՝ IIIIIIIII- չարտահայտված ամբողջն է՝ 1+8=9 համակարգում: Ըստ եգիպտական խորհրդապաշտության իններորդ ռեալությունը մեր երեք չափումնանի իրականությունն է՝ 3x3=9:

---

*1- «Դավիթ Անհաղթ, «Հայ Մատենագիրներ», 1980, Երեւան, էջ 99-100:

ՀԱՎԵԼՈՒՄ # 4

Խորհրդապաշտական մի քանի օրինակների թաքնագիտական բացատրություն - ներկայացումներ:

Ըստ հնագույն թաքնագիտության, Նոյյան պատմությունը, ի տարբերություն հայտնի, համընհանուր բառացի ընկալմանը, բուն իմաստով ներկայանում է այսպես: ***Նոյ***՝ նշանակում է՝ նոր շրջան, նոր փուլ: Որպես «փրկված», իսկ ավելի ճիշտ՝ հոգով նորամանուկ (ջրհեղեղի սիմվոլ), մարդկության հավաքական կերպարն է*[1], որը երկրի վրա սկսում է հոգեւոր աճի մի նոր փուլ անցնել: **Մեւ ագռավը** նրա ***բարձրագույն Ոգու*** սիմվոլն է, որը դեռեւս հոգեւոր բարձր գիտակցություն չունենալով, խրվում մնում է նյութի, նյութականի սահմաններում՝ «լեշ ուտելով է զբաղվում», ինչպես հայկական էպոսում, տիեզերական բարձրագույն Ոգին՝ Միհրը, լռվում-փակվում է քարի մեջ՝ նյութական տիեզերքում (***«քարը»***՝հնդեւրոպական միֆոլոգիաներում ***«երկնքի»*** համարժեք խորհրդանշանն է)*[2]: ***Ագռավաքարը՝*** տիեզերական բարձրագույն ոգու լեռան մեջ փակվելու խորհրդապաշտությունն արտահայտելու երկու բառերի կապակցություն է: Միհրը նայում է իր առջեւ դրված ժամանակի ճախարակին*[3] *(տիեզերական զոդիակների փուլային շրջապտույտին, Precession-ի երեւույթ),* որ իր ժամանակը գալուն պես, ելնի՛ ու աշխարհը կործանի: Precession -ի երեւույթը պայմանավորված է երկրագնդի առանցքի տատանումով եւ տեսողական պեսպեկտիվայի օրենքի համաձայն հաշվարկվում է՝ աստեղատնից աստեղատուն արեւի «ընթացքով»: «Ավեստայում» տարբերակում, Միհրի ուսին նստած ագռավը արեւի «բանագնացն է»:

Ճերմակ աղավնին՝ ***մարդկության ցածրագույն շունչ-հոգու*** սիմվոլն է: Ձիթապտղի ճյուղը կտուցին աղավնին,- ***նոր մարդու,*** նոր քաղաքակրթության ***«սկիզբն»*** ընդգծող սիմվոլն է: Մարդու «կենդանական վիճակից» դեպի բարձրագույն՝ «արեւային՝ միտք-ոգի» փուլը նորից սկսելու խորհրդապաշտությունն է: Նոյի (= 1), որդիները՝ Սեմ, Քամ, Հապեթ՝ 2+3+4, ***- լուսնի փուլ (շունչ-հոգի)***, ***արեւային փուլ (բարձրագույն միտք-ոգի)*** եւ ***աստվածային՝ (անմահության փուլ),*** - մարդկային հոգու աճի խորհրդաբանությունն է: Ըստ Պյութագորյան թաքնագիտական դպրոցի՝ 2+3+4=9, գերագույն՝ տիեզերական Էակի փուլային արտահայտությունների միագումարն է: 10-ը կամ տիեզերական հոգեւոր 10-րդ փուլը՝ ամբողջականն ու կատարյալն է (1+2+3+4=10):

---

*1,- Timothy Freke & Piter Gandy “Jesus And The Lost Goddess”, 2001, NY:

*1,- Ըստ շումերական «Գիլգամեշ» էպոսի, Նոյը՝ Ուտնափիշտիմը, թեկուզ անմահություն էր ստացել, բայց ապրում էր եզրագծում, աստվածներից բաժանող գետի այս ափին, սահմանին: “Поэзия и проза Древнего Востока”, М.,1973:

*2,- T. Gamkrelidze & V. Ivanov, “The Indo-European And The Indo-Europeans”, 1995, USA, p. 575.

*3,- «Ս. Ծ.», 1936թ., Երեւան, հատոր Բ, մաս I, էջ 5: Հավաքագրող՝ Գ.Սրվանձտյանց, 1873թ.:

Թիվ «10»-ը՝ սկսվում է նոր սկիզբ՝ Աստվածային Ոգու նոր տրանսֆորմացիա, նոր նյութական տիեզերք[*1]:

Եւս մեկ օրինակ: **«Հուդան 30 արծաթով ծախվեց...»** խորհրդաբանությունը, հնագույն թաքնագիտական տաճարներում, ինչպես նաեւ առաջին քրիստոնեաները՝ գնոստիկները (մ.թ. I – III դարեր) ոչ թե բառացի էին «հասկանում» այս խորհրդաբանությունը, այլ՝ տարբեր բացատրություն ունեին: Այսինքն՝ տասներկու աշակարտներից մեկը չընդունեց, չկարողացավ, չանցավ բարձրագույն «արեւային» փուլ, որն է՝ Քրիստոս-արեւը, այլ մնաց նյութական-շնչավոր՝ «լուսնային» ցածր փուլում, որը հոգեւոր մահ է: Երեսուն արծաթ՝ կիսալուսնի խորհրդաբանությունն է *(**արծաթ՝** լուսնի սիմվոլ, **30 արծաթ՝** կիսալուսին: 28-30 օրեկան լուսինը՝ կիսալուսին է, 14-15 օրեկան լուսինը՝ լիալուսին):* «Նոր Կտակարանում» երկու իմաստով է գործածվում. 1-ին՝ Հուդայի ցեղը (հրեաները) մնացին նյութապաշտության փուլում *(Յահվե՝ շունչ-հոգի-նյութ՝ լուսնային փուլ է)* եւ 2-րդ՝ տիեզերական 12 փուլային համակարգերից մեկի խոտորման խորհուրդն է[*2]:

Հնագույն ժամանակներից եկող հավատամքային խորհրդապաշտությունը բազմաբնույթ ու բազմաշերտ է, եւ քանի որ մեր այս աշխատությունը նպատակ չունի ներկայացնել հների խորհրդաբանական բացատրական բառարանը, ապա *«Հայկական հնագույն էպոսի վերականգնված մեկնաբանություն»* բաժնում, անհրաժեշտ տեղերում, վերծանված կներկայացնենք «Սասնա» էպոսի խորհրդապաշտական իմաստները, հնդ-արիական, եգիպտական, շումերաբաբելական զուգահեռներով հանդերձ:

«Աստվածաշնչի» մեկնությունները, խորհրդաբանությունը եւ այլն, նաեւ առկա են առաջին քրիստոնեաների՝ գնոստիկների թղթերում *(քրիստոնեա գնոստիկներ,- մ. թ. ա. III դդ. - մ. թ. II դդ., այսօրվա Պաղեստինի տերիտորիայում բնակվող հոգեւոր համայնքներ):* Այս բնակության տարածքում, ազգային պատկանելիության մասին, թե՛ Հին եւ թե՛ Նոր Կտակարաններում Գալիլեան ընգծվում է որպես՝ ***հեթանոսների,*** եւ ոչ թե հրեաների բնակատեղի (Հին Կտկակարան, Եսայիա գլխ. Թ, 1-2; Նոր Կտկ. Ավ. ըստ Մատթէոսի, գլխ. Դ, 15-16): Քրիստոնեա գնոստիկները էզոտերիկ, թաքնագիտական դպրոցի ազդեցությամբ ձեւավորված հոգեւոր համայնքներ էին: Առաջին քրիստոնեաները՝ գնոստիկները, մերժում էին Հին Կտակարանը՝ որպես սուրբ գիրք եւ Յահվեին համա-

---

*1, - The Kybalion, A Study Of The Hermetic Philosophy Of Ancient Egypt & Greece, Chicago, 1940. M. Hall, "The Secret Theachings Of All Ages", USA, 2000, p. ILL .

*2,- Timothy Freke & Piter Gandy "Jesus And The Lost Goddess", N.Y., 2001, chapter III-V.

րում էին ***դեմիրուգ***՝ սատանա: 20-րդ հարյուրամյակում, Մեռյալ ծովի, Նագ-Համադիի ձեռագրերի հայտնաբերումը նոր լույս սփռելով, առնվազն մեզ պետք է պարտավորեցնի վերանայել հնագույն քրիստոնեաների աշխարհճանաչողության մասին մեր պատկերացումները: Փաստորեն, այսօրվա «ուղղափառ» կոչված եկեղեցու հայրերը *(մ. թ. III-IV դդ.)*, չունեին ***հոգեւոր հայրի*** որեւէ կարգավիճակ, եւ ներկայացնում էին ***գրական քրիստոնեաներ ուղությունը****[1]***,** որի հենարանը՝ Հռոմեական Կայսրության մեջ հրեական սփյուռքն էր: «Նոր Կրոնը», հնագույն հավատամքի՝ աղավաղված, կրճատված եւ վերախմբագրված գրական իմպրովիզացիան էր *(վաղ հեղինակներից մեկը Փիլոն Ալեքսանդրիացին, Փիլոն հրեան է)*: ***Գրական քրիստոնեաներ ուղությունը*** որդեգրելով այս «նոր ուսմունքը», այն դարձրեց լոկ լծակ՝ իշխանության հասնելու խնդրում: Եվ ի վերջո, քրիստոնեա գնոստիկների ուսմունքը կորցնելով իր միջուկի թաքնագիտական հոգեւոր գիտելիքը, դարձավ Հռոմի կայսրապաշտական, աշխարհաքաղաքական նկրտումներն ամրացնելու գործիք: Եկեղեցու հայրերը անհաս լինելով քրիստոնեության մեջ ներմուծված հոգեւոր ուսմունքին եւ թաքնագիտական խորհրդապաշտությանը, որը հազարամյակների վաղեմություն ուներ, անդամահատեցին այն, թողնելով միայն պատումային կաղապարը: Սպանդի ենթարկելով բուն քրիստոնեաներին՝ գնոստիկների համայնքները, եւ ոչնչացնելով նրանց հոգեւոր գրականությունը, ***«գրական քրիստոնեաներ»*** ուղությունն ինքնակոչ կերպով իրեն հայտարարեց՝ ***«ուղղափառ»,*** թեեւ քրիստոնեա գնոստիկների համեմատությամբ հենց նրա՜նց կարելի է համարել՝ աղանդավոր հերետիկոս:

Հայ ազնվականությունը, «լուսավորիչ» կոչված Գրիգորի մահասփյուռ հեղափոխությունից հետո, միայն 5-7-րդ դարերում սկսեց վերահառնել իր հնագույն հեթանոսական իմաստնության մնացորդները *(դպրություն, շարականներ, ճարտարապետություն, հոգեւոր տոներ եւ այլն)* եւ քրիստոնեական քողի տակ, դրանք սկսեց հարմարեցնել նոր կրոնին:

---

*1,- Timothy Freke & Piter Gandy, "Jesus And The Lost Goddess", chapter V-VI, USA, 2001.

ՀԱՎԵԼՈՒՄ # 5



Վանաքար / Ագռավաքար / Մեների դուռ

Հնագույն հավատամքային պատումներում աստվածների անունների ստուգաբանության հետ առնչվող մոտեցումներ:

Միանգամից ասենք, որ բոլոր հավատամքային պատումներում աստվածների անունները հիմնականում հնդեւրոպական են: Միջագետքյան եւ եգիպտական աստվածների անունները հիմնականում ո՛չ սեմիտական են եւ ո՛չ էլ անհայտ ծագումի են, այլ պատկանում են հնդեւրոպական լեզվընտանիքին *[1]:

Ըստ իս, աստվածների անունների եւ սրբազան տերմին-բառերի վերլուծման ու մեկնաբանման ձեւը՝ բանական բանաձեւն է.

1.- Այն լեզուներում որտեղ աստվածների անունների ստուգաբանություններն իմաստավորված են որպես որոշակի ֆունկցիա կատարող բառ կամ պրոցեսի անվանում եւ ուղղակի իմաստ են արտահայտում՝ կապված հնագույն տեքստում այդ աստվածության կատարած ֆունկցիայի եւ բնույթի հետ, ուրեմն, այդ աստվածների ընդօձին, նախնական պատկանելիությունը տվյալ լեզվով խոսող ժողովրդինն է:

2.- Այն լեզուներում, որտեղ աստվածների անունների ստուգաբանությունը ենթադրում է միայն հատկանիշ, ապա սա փաստում է, որ տվյալ աստվածությունը, ժամանակի ընթացքում, հիերարխիայի սանդղակում փոփոխել է իր «դիրքը»՝ գլխավորից դառնալով երկրորդական:

3.- Այն լեզուներում, որտեղ աստվածների անունները (բառային ստուգաբանությամբ) որեւէ իմաստ չեն արտահայտում, այլ միայն կողմնակի բացատրվում է նրանց էությունը եւ ֆունկցիաները, ապա պետք է համարել, որ տվյալ լեզվում այդ աստվածությունները լրիվ փոխառություններ են:

---

*1,- L.A.Waddell, “The Makers of Civilization in Race and History”, p. 4-5:
*L.A.Waddell, “Summer-Aryan Dictionary”, 1927, London.

Šar = 3600

բովանդակ
երկինք
an.Šar

բովանդակ
երկիր
ki.Šar

Օրինակ #1, - Երկնքի աստվածություն:

Շումերական երկնքի աստվածության անունը՝ **ԱՆ** է:

Բաբելական պանթեոնում այս անունը դարձել է՝ ԱՆՈՒ:

Աքադերենում կամ սեմիտական որեւէ լեզվում՝ ***Ան*** կամ ***Անու*** *երկնքի աստվածության* անունը որեւէ իմաստ չի արտահայտում, այն միայն նշանակում է՝ ***երկինք:***

Ի տարբերություն շումերական պանթեոնի, որտեղ ԱՆ-ը եւ ԿԻ-ն առաջին զույգ աստվածություններն են, որ առաջացել են ՆԱՄՈՒ-ից*(նախնական ծով, ջրեր)*, բաբելական պանթեոնում, երկնքի արական աստվածություն ԱՆ-ի հայրը՝ ԱՆ.ՇԱՐ-ն է, իսկ մայրը՝ ԿԻ.ՇԱՐ-ը: ԱՆՇԱՐ աստվածությունը նշանակում է՝ «ամբողջ երկինք» կամ «բովանդակ երկինք»: Շումերերեն ԱՆ՝ նշանակում է ***«երկինք»***, իսկ ՇԱՐ-ը, որ ***ամբողջի*** կամ ***բովանդակի*** իմաստը պետք է արտահայտի, շումերների մոտ եւ թվային արժեք է՝ 3600, եւ ***ամբողջի*** սիմվոլն է, որ ներկայանում է ***շրջանաձողակի*** նշանագրով*[1]:

ԿԻ.ՇԱՐ իգական աստվածության պարագայում նույն մոտեցումն է: ԿԻՇԱՐ նշանակում է՝ «բովանդակ երկիր»:

Այս երկու աստվածների միությունից ծնվում է երկնքի աստվածություն ԱՆ-ը:



Փաստորեն, բաբելական ԱՆՈՒ երկնքի աստվածությունը շումերական ժառանգություն է: ***ԱՆ*** երկնքի աստծո մասին ասվում է, որ ԱՆ-ի (էության) մասին ոչ ոք չգիտե, գերագույն գոյությունն է, որի մասին ոչինչ հայտնի չէ: Գերագույն աստվածության այս բնորոշումը աղերսվում է նաեւ ***անհուն*** իմաստի հետ, քանի-որ «անհունի» սիմվոլը, նույնպես շրջանաձողակն է, որ հայերեն՝ ***անհուն, անդունդ, անտուտն՝*** «հիմքից զուրկ» իմաստով է ներկայանում: Սրանից է ձեւավորված *$h_2$enti- «հակադիր», «դեմ», որ հայերենում ունի՝ ***անդին,-*** «այն կողմ» կամ «անդրաշխարհ» իմաստը, որ Հայասա երկրի գլխավոր աստվածության «տիրույթն» էր: Նախահինդեւրոպական՝ *$h_2$enti, «հակադիր», հայ.՝ [ընդ] «ընդդեմ», սանսկրիտ՝ a´nti, հիթթիթ.՝ hanti, հուն.՝ antí եւ այլն*[2]:

Հնդ-արիական՝ բրահմայական միֆոլոգիայում *(Դրհանի գիրք)*, արարչության սկզբում ***Ոչինչն*** է, որպես սիմվոլ օգտագործվում է բացարձակ սեւ գույնի օղակը՝ վիշապ: Սա ամենայն է. հետո՝ շրջանագծի կենտրոնում արտահայտվում է կետը՝ սա «ոչինչն» է, բայց արդեն նախածնող

*1,- Dick Teresi, “Lost Discoveries”, 2002, USA, p. 47-49.
*2, - Robert S.P. Beekes, “Comparative Indo-European Linguistics”, 1995, USA, p. 220.

հիմքով: Առաջին սեւ շրջանագիծը կոչվում է Ահ-հի (AH-HI), երկրորդը՝ (կետով շրջանագիծը) ADI-TI (Ադի-թի), որը պոտենցիալ տիեզերքն է՝ օղակաձեւ վիշապը (Ռիգ-Վեդա):

Նախահնդեւրոպ. լեզվում «մեծ մայրը»՝ *Han- > *an-, լատին՝ ***anus*** «ծեր կին», հունարեն՝ ***anni´s,*** հայերեն՝ ***han*** «մեծ մայր»*[1], աղերսվում է նախահնդեւրոպական [*ā̆no-]՝ «օղակ», հիթթիթ.՝ ***anna,*** լատ.՝ ***ānus,*** «օղակ», հայերեն՝ ***anur, անուր*** «շղթա, օղակ» իմաստներին*[2], որ շումերական ժամանակներից ամբողջի՝ «բովանդակի» գաղափարանշանն է:

ԱՆՈՒ-ն՝ հուրրիական եւ հիթթիթական լեզուներում ***Anu-*** նշանակում է՝ ***երկինք:*** Հունարենում այն դարձել է՝ Օուրանոս-Ուրանոս [Ouranós] - «երկինք»*[3]:

Արարման սկիզբը՝ սանսկրիտով,- [ԱՆՈՒ-պադակա] (Anupa-daka), նշանակում է անծնող՝ ծնողներ չունեցող*[4], որը եւս գերագույն աստվածությանը բնորոշող ատրիբուտ է: Օրինակ, եգիպտական գերագույն աստվածություն Աթումը ոչ թե ծնվում է, նա ծնողներ չունի, այլ՝ արտահայտվում է ինքնին:

Ուրեմն, շումերական՝ **ԱՆ**-ը կամ բաբելական **ԱՆՈՒ**-ն, հնդեւրոպական բացատրություն եւ հիմք ունի: Այն մի կողմից աղերսվում է «մեծ մոր»՝ [*Han- > *an-]-ի, մյուս կողմից աղերսվում է «բովանդակ»-ի կամ «անհունի» սիմվոլի՝ ***«շրջանաօղակ»*** նշանագրի հետ:

Եբրայական «Կաբալլա»-ում նույն տիեզերաբանությունն է. ԱԻՆ (AYIN) եւ ԱԻՆ-ՍՈՖ (AYIN SOF)*[5],- ***Մեծ ՈՉԻՆՉ*** եւ ***Մեծ ՈՉԻՆՉ, որ արդեն գոյություն է:*** Կաբալլայում, ***իմաստներն ըստ անունների*** հարմարեցված բացատրությունները կատարվել է 13-րդ դարում(Զոհար): Դրանք ամբողջովին փոխառված են հնդեւրոպական համակարգից եւ լեզուներից:

[***ԱՆ***]-ի հետ կապված, ավելացնենք, որ նախահնդեւրոպական՝ anH-*[6] «շունչ», «արտաշնչել» իմաստներով բառը, որը հավատամքային տեքստերում աղերսվում է՝ **շունչ-հոգի-ոգի** իմաստների հետ *(Ավեստա, «Հիմն Յուլի հոգուն», Յասնա 29),* ամբողջացնում է Մեծ ՈՉԻՆՉԻ՝ գուցե շումերական ԱՆ-ի ***ոչ նյութական*** լինելու մասին պատկերացումը:

---

*1, 2, - T. Gamkrelidze & V. Ivanov, “The Indo-European & The Indo-Europeans”, p. 175, 717.
*3, - T. Gamkrelidze & V. Ivanov, նույն աղբյուր, p. 798:
*4,- H. P. Blavatsky, “The Secret Doctrine”, 1999, p. 11.
*5, - Z. S. Halevi, “Kabbalah”, 1998, USA (reprinted), p. 5-6 .
*6, - T. Gamkrelidze & V. Ivanov, նույն աղբյուր, էջ՝ 693, 743, 748, 388:

Օրինակ #2, - *«Երկինք», «երկիր»* եւ *«երկու»* բառերը որպես «աստվածություններ»:

Արարչության մասին «Վահագնի ծնունդ» հին հայկական հեթանոս բանաստեղծությունը՝ «Երկնէր երկին, երկնէր երկիր…»-ը[*1], բացահայտ նմանություն ունի շումերաբաբելական արաչության մասին էպոսի հետ («The Epic Of Creation»)*[2]: Այստեղ նույնպես՝ ***երկինքը*** եւ ***երկիրը*** ներկայանում են որպես ***ամբողջի՝ «բովանդակի»*** բինարիզմ, երկու սեռ՝ հայր-մայր, որ միանալով ստեղծում են կենտրոնական ***Ծիրանի ծովը,*** որտեղ եղեգան փողից ծնվում է Վահագն աստվածությունը:

Հնագույն արարչական համակարգում, ***«բովանդակը»*** որպես երկու սեռերով երկու աստվածությունների միություն՝ ***«արաչության սկիզբ»*** է եւ սերտորեն աղերսվում է ***«երկու»*** թվի հետ: «Երկու» թվի բացատրությունը լավագույնս տալիս է 5-րդ դարի հեղինակ Դավիթ Անհաղթը: *«Զույգ եւ կենտ թվերի համար ընդհանուր սկիզբ է հանդսիանում մեկը, իսկ զույգ թվերի համար՝ երկուսը... Բայց ոմանք կասկած են հայտնում, թե ինչո՞ւ երկուսը, թիվ լինելով* ***սկիզբ է հանդիսանում:*** *Սրան մենք այսպիսի պատասխան ենք տալիս. երկուսը թիվ չէ, որովհետու ինքը թվի հատկություն չունի, որովհետեւ ամեն մի թիվ իրենով բազմապատկելիս ավելի մեծ թիվ է տալիս քան գումարելիս... Իսկ երկուսն այդպես չէ, որովհետեւ ինքն իրենով բազմապատկելիս եւ գումարելիս նույն թիվն է տալիս... Երկուսը ոչ թե թիվ է, այլ միայն զույգ թվերի սկիզբ* »*[3]:

«Վահագնի ծնունդ» հեթանոսական գոհարը, ըստ իս, ***երկինք*** եւ ***երկիր*** բառերի ծագումնաբանության եւ ստուգաբանության բանալին է: Ըստ Հր. Աճառյանի, դրանք իբր անհայտ ծագումի են: Սակայն ***երկին*** եւ ***երկիր*** բառերը երկու բառերի միացություն են: Հայտնի է, որ հայերենում ***ա, ի, ե, է, ը*** ձայնավորները, հատկապես բարբառներում, փոփոխվում են: Օրինակ՝ **մէծ** > **մընձ**: Իսկ բառասկզբի **ե** ձայնավորը բարբառներում կարող է դառնալ՝ ***«է»:*** Օր.՝ ***երկիր*** > ***էրգիր***, եւ այլն:

Այս առումով փայլուն օրինակ է հայերեն «երկու»՝ ***էրկի*** բառը, որն իբր անծանոթ է եւ «դուրս» է հնդեւրոպական համակարգից: Սակայն բառի ներքին իմաստներն անտեսվել են:

Հնդեւրոպական լեզուներում «երկինք» բառը աղերսվում է ***«երկնքի աստծո»*** անվան հետ, ինչպես նաեւ՝ ***«օր»*** կամ ***«արեւ»*** բառերի հետ:

---

*1,- «Մովսես Խորենացի, «Հայոց պատմություն», էջ 102-103:
*2,- Stephanie Dalley, «Myths From Mesopotamia», «The Epic Of Creation», Oxford, 2000.
*3,- «Դավիթ Անհաղթ, «Հայ Մատենագիրներ», 1980թ., Երեւան, էջ 99-100:

Հնագույն միֆոլոգիաներում «երկինքը» որպես աստվածություն՝ ***բինարիզմի՝ արական + իգական բնույթ ունի*** եւ նաեւ կանխամիտում է «երկու» թիվը: Սանսկրիտում՝ dyáuḥ «երկինք», հին լատ.՝ Diouis «երկինք», լատիներենում՝ diēs «օր», հին իռլանդերենում՝ dïe «օր» բառերը*[1] *(հայերենի համարժեքը՝ **տիվ**)*, աղերսվում են՝ ***աստված,-*** սանսկրիտ՝ devá-, լատին.՝ deus, հին իռլանդ.՝ dia, հայերեն՝ di(c) եւ, *թիվ **երկուսի*** հետ,- սանսկրիտ՝ dváu (երկակի), devā́(արական), dvé(իգական), հին լատիներենում՝ dui-, հին իռլանդերենում՝ dáu, dó, dí(իգական)*[2]: Այսինքն, թե՛ *«երկինք»*, թե՛ «աստված» եւ թե՛ *«երկու»* բառերը համահունչ-համանման լինելով հանդերձ, ե՛ւ ընդգծում են թվային մոտեցում, ե՛ւ հնագույն հավատամքային բինարիզմի համակարգն են միտում: Փաստն իրոք ցուցում է, որ հնագույն աստվածների անունները սերտորեն աղերսվում են՝ ***երկինքի, օրվա, աստծո,*** ինչպես նաեւ՝ ***թվերի անունների*** հետ, եւ իրենց հիմքում ձեւավորված են հավատամքային մատրիցայի հիմքով: Այսինքն, հնդեւրոպական հավատամքներում ***երկինքը*** երկակիության (բինարիզմի) սկզբունքով, առաջին զույգ՝ արական եւ իգական աստվածությունների անունների միությամբ է «ձեւավորվում»: Նույն սկզբունքով, հայերենի «երկինք» բառը՝ երկինք = Էրկին(ք) = էր(իկ)+ կին,- ***արական*** եւ ***իգական,*** հնդեւրոպական աշխարհաճանաչողական դուալիզմին հատուկ բառակապակցությամբ ձեւավորված բառ է: Այսինքն, հայերենում թե՛ ***«երկին»***, թե՛ ***«երկու»*** բառերը՝ հնագույն հավատամքային աշխարհճանաչողական հիմքից են բխում: Երկին(ք) բառը նաեւ՝ ***էր+կին*** > ***ար+կին*** > ***այր+կին*** իմաստն ունի, քանի որ հնագույն հնդեւրոպական բոլոր միֆոլոգիաներում, ինչպես նաեւ բառերի իմաստաբանական (semantic) կառույցներում՝ թե՛ ***երկինքը,*** թե՛ ***երկիրը*** «երկակիության» սկզբունքն ունեն եւ ***արական + իգական*** հիմքով են:

Օրինակ # 4, «տինզերք», «տիկին», «տիայր» բառերի մասին:

Տի+նզերք, տի+կին, տի+այր բառերը՝ ***տ < դ*** փոխաշրջումով աղերսվում են՝ ՏԻ<ԴԻ = «դից», «աստված» իմաստի հետ, ինչպես նախահնդեւրոպական՝ ***dud*** -ն է հայերենում դառնում՝ ***տուտն****(ծայր, հիմք, քոք, հատակ)****, դ>տ*** փոխանցումով: Հայերեն ***տուտն*** = նախահնդ. ***dud****[3]**:*** Փաստորեն, ***տինզերք*** բառը ներկայացնում է՝ «աստծո նզերք» իմաստը:

Պատմահայր Մ. Խորենացու Սաթենիկի պատմության հետ կապված հատվածում, ***տից*** բառը, որ ժամանակին դարձել էր իբր անվերծանելի գլուխկոտրուկ,

---

*1,- *2, - T. Gamkrelidze & V. Ivanov, նույն աղբյուր, էջ՝ 693, 743, 748, 388:
*3, - Հր. Աճառյան, «Հայոց լեզվի պատմություն», 1936թ., Երեւան, էջ 76:

հավատամքային համակարգում ***խավարի դիցի*** մասին է*[1], պայմանավորված նույն՝ դ > տ անցումով:

«Սասնա Ծռեր» էպոսի ***Խան+դուդ*** = ***Հան+դուդ*** մայր աստվածության անունն իր բուն իմաստով նշանակում է՝ ***անդունդ(ք),*** որը լիովին բավարարում է արարչության հետ աղերսվող հնագույն հնդեւրոպական հավատամքային պատկերացումների հետ*[2]:

Բաբելական «Արարման էպոս»- ի աստվածների անունների մեկ-երկու մեկնաբանություն:

«ԱՓՍՈՒՆ ամենաստեղծը նախածին
Եւ Թիամատը՝ մայրն ամենածին
Միասին իրենց ջրերն իրար խառնեցին...»*[3]:

Ուրեմն, ԱՓ.ՍՈՒ-ի անվան ստուգաբանությունը պետք է ուղղակի բխի նրա «ջրային էությունից» եւ ֆունկցիայից: Միջագետքյան էպոսում («The Epic Of Creation»), սպանված Ափսուի աջ եւ ձախ աչքերից բխում են Տիգրիս եւ Եփրատ գետերը:

ԱՓ.ՍՈՒ - Բաբելական պանթեոնում այս աստվածության անունը աքադա-սեմիտական կամ սեմական լեզվընտանիքին պատկանող որեւէ լեզվով չի ստուգաբանվում: Այն ունի հնդեւրոպական ծագում: Նախահնդեւրոպական ձեւը՝ *Hap^{h-}, սանսկրիտ՝ ăp- «գետ», հիթթիթ.՝ ḫappa - «գետ, հոսող ջուր» եւ այլն*[4]: Նախահնդեւրոպ.՝ [*$h_2$épo, *$h_2$pó],- «այն կողմ», սանսկրիտ՝ ápa, հուն.՝ ápo, լատ.՝ ab, գոթ.՝ af, անգլ.՝ of*[5], հայերեն՝ «ափ», «եզր», «գետափ»:

AB.ZU-ի անվան հետ կապված անհրաժեշտ է հաշվի առնել Ա. Դավթյանի ճշգրտումը. շումերական գաղափարագիրը ոչ թե՝ AB.ZU- է, այլ՝ ZU.AB, որ շումեր.՝ SU_2AB է, եւ ուրարտերեն ու հայերեն հնչում է՝ ***ծուավ-ծով*[6]:***

ՍՈՒ,- su-, seu- սանսկրիտ. նշանակում է՝ «ծնունդ տալ»*[7]:

ԿԻ աստվածության մասին:

ԿԻ,-շումերաբաբելական պանթեոնում ԱՆ-ը արական հիմք ունի, որ նշանակում է՝ ***երկինք***, իսկ ԿԻ աստվածությունը իգական հիմք ունի, որ նշանա-

---

*1,- Այս մասին ծավալուն ներկայացումը տես՝ Գլուխ X:
«Տենչայ, ասեն, Սաթենիկ տիկին,
Տենչանս՝ զարտախուր խավարատ
Եվ զտից խաւարծի
Ի բարձիցն Արգաւանայ»: «Մովսես Խորենացի, «Պատմություն Հայոց», 1981, Երեւան, էջ՝100:
*2,- Տես՝ Գլուխ VIII, «Սասնա Տավիթ»:
*3,- Stephanie Dalley, «Myths From Mesopotamia», «The Epic Of Creation», 2000, Oxford, p.233.
*4, - T. Gamkrelidze & V. Ivanov, նույն աղբյուր, էջ՝ 763, 814, 511:
*5, - Robert Beekes, “Comparative Indo-European Linguistics”, 1995, USA, p. 220.
*6, Ա. Դավթյան, «Հայոց աստղային դիցաբանություն», 2004թ., Երեւան, էջ՝ 176-177:
*7, - T. Gamkrelidze & V. Ivanov, նույն աղբյուր, էջ՝ 763, 814, 511:

կում է՝ ***երկիր***: Հնդեւրոպական բառ է: ՀՆԽ՝ *K'^{o}(c)naH$_2$-s, *k̂'en- > սանսկ.՝ gṇá «աստծու կին» իմաստով, հուն.՝ gunḗ կին», հայերեն՝ kin (կին) եւ այլն*1: Որից հունարեն génos «ցեղ», սանսկրիտ.՝ jánaḥ «ցեղ», հայերեն՝ cin (ծին) եւ այլն*2: Ki(n) հնդեւրոպական լեզուներում ուղղակի իմաստ ունի եւ համապատասխանում է հնագույն շումերական KI աստծո ֆունկցիային:

Այսինքն, շումերական, հետագայում բաբելական պանթեոնի գլխավոր աստվածությունների անունները սեմական լեզվով որեւէ իմաստ չեն արտահայտում: Վերեւում բերված օրինակները մեր ձեւակերպված առաջին, երկրորդ եւ երրորդ օրենքներն են միտում՝

1.- Այն լեզուներում որտեղ աստվածների անունների ստուգաբանություններն իմաստավորված են որպես որոշակի ֆունկցիա կատարող բառ կամ պրոցեսի անվանում եւ ուղղակի իմաստ են արտահայտում՝ կապված հնագույն տեքստում այդ աստվածության կատարած <u>ֆունկցիայի եւ բնույթի</u> հետ, ուրեմն, այդ աստվածների ընդծին, նախնական պատկանելիությունը տվյալ լեզվով խոսող ժողովրդինն է:

2.- Այն լեզուներում, որտեղ աստվածների անունների ստուգաբանությունը ենթադրում է միայն <u>հատկանիշ</u>, ապա սա փաստում է, որ տվյալ աստվածությունը, ժամանակի ընթացքում, հիերարխիայի սանդղակում փոփոխել է իր «դիրքը»՝ գլխավորից դառնալով երկրորդական:

3.- Այն լեզուներում, որտեղ աստվածների անունները (բառային ստուգաբանությամբ) որեւէ <u>իմաստ չեն արտահայտում</u>, այլ միայն կողմնակի բացատրվում է նրանց էությունը եւ ֆունկցիաները, ապա պետք է համարել, որ տվյալ լեզվում այդ աստվածությունները լրիվ փոխառություններ են:

<u>Ժամանակակից լեզվագիտության եւ պատմագիտության սխալները: Միջուկային գենետիկան եւ լեզվաբանությունը:</u>

Ընդհանրապես, այսօրվա լեզվագիտության մեջ առկա են անտրամաբանական եւ սխալ երկու հիմնարար մոտեցումներ:

<u>Առաջին.</u> եթե հնագիտական պեղումների արդյունքում հայտնաբերված է որեւէ հնագույն քաղաքակրթություն, ապա փորձում են ամեն ինչ ծագեցնել, կապել, ասենք՝ «շումերական» քաղաքակրթության եւ լեզվի հետ, չմտածելով, որ «վաղը» հնարավոր է հայտնաբերվի առավել վաղ շրջանի քաղաքակրթություն: Եթե 18-19 դարերում, մարդկության քաղաքակրթության ***հիմք-ծագումը*** կապում էին հունականի հետ, հետագայում՝ եգիպտականի, իսկ հետո հնդկական քաղաքակրթության հետ, ապա այսօրվա «մոդայով», մարդկության «ծնընդոցը» համարվում է՝ շումերական քաղաքակրթությունը: Եւ այստեղ էլ, վերջին ժամանակներում, քաղաքական նկատառումներով, այնքան հեռացան «գիտ-

*1, *2, - T. Gamkrelidze & V. Ivanov, նույն աղբյուր, էջ 159, 155, 654, 151, 170:

նականի մաքուր խղճմտանք» կոչվածից, որ ***շումներեն լեզուն*** հայտարարեցին ոչ հնդեւրոպական եւ, իբր՝ սեմիտականին մոտ: Նույնը փորձում են կիրառել «հուրրիերենի» հետ: Դեռեւս 1930-ականներին, անգլիացի խոշորագույն գիտնական Լ. Ա. Վադդելլը լավագույնս փաստել է շումերական, եգիպտական աստվածների, թագավորների եւ սրբավայրերի անունների, տեղանունների հնդեւրոպական ծագումի պատկանելիությունը[*1]: ***«Շումեր»*** անունը վաղնջական ժամանակների Միջագետքի տեղաբնիկների առումով չի օգտագործվել որպես ժողովրդի ինքնանվանում. տերիտորիալ առումով ո՛չ նրանք, ո՛չ նրանց հարեւանները, «շումերներին» չեն կոչել համանուն անունով: Օգտագործված՝ Ki-en-gin անվան արտաբերումը երբեք չի կարող դառնալ՝ շումեր (summer)[*2] : Համանման զավեշտալի զեխծարարության արդյունք է՝ Ուրարտու, ուրարտացի, ուրարտերեն «ուրարտագիտությունը»:

«Լեզվաբանական բոլոր օրենքների համաձայն, շումերական լեզուն հիմնավորապես արիական (հնդեւրոպական) է՝ իր կառուցվածքով, իր բառամթերքով»:[*3]

Երկրորդ՝

«Հնդեւրոպական նախալեզվի սխեմատիկ վերականգնումը կատարվել է բացառապես արտաքին համեմատությունների հիման վրա՝ անտեսելով լեզուների ներքին տվյալները, եւ դժվար չէ եզրակացնել, որ նման վերականգման հավաստիությունը չափազանցված է առնվազն երկու անգամ:

Այսօր արդեն մի բան պարզ է՝ լեզուների ցեղակցությունը նպատակից վերածվել է միջոցի եւ պայմանավորում է ողջ լեզվաբանական գիտության առաջընթացը...

... Հայերենի ստուգաբանական ողջ համակարգը կողմնորոշված է բացառապես դեպի արտաքին աշխարհը. փաստորեն բնիկ հայերեն բառեր ասելով, մենք հասկանում ենք միայն այն բառերը, որոնք զուգահեռներ ունեն ցեղակից լեզուներում...

Ստացվում է այնպես, որ եթե մի բառ գերմաներենում կա, բայց հայերենում չկա, ուրեմն... բնիկ գերմաներեն չէ»[*4]*:*

Կամ եթե արդեն հայտնի հնագույն բնակավայրերի պեղումներում, դամբարանում չեն գտնվել, ասենք, առյուծի ոսկորներ, ապա, ըստ լեզվաբանների տրամաբանության, որոշվում է թե ***առյուծ*** բառը փոխառված է: Առանց մտածելու, որ դեռ չգտնվածի, սակավաթիվ բնակավայրերի կիսատ-պռատ հետազոտությունների հիմքի վրա, չի կարելի լեզվաբանական եզրակացություններ անել:

Ինչպես Մերրիտթ Ռուիլենն է քամահարանքով ընդգծում,- *արդի լեզվա-*

---

*1, *2, *3,- Տես՝ L. A. Waddell, “The Makers of Civilization in Race & History”, 1929, London, p. 4-5; L. A. Waddell, “A Sumer-Aryan Dictionary”, London, 1927.

*4, - Վ. Սարգսյան, «Հայոց գրերի ծագումը», 1999թ., Երեւան, էջ 12-13:

գիտությունը, հնեաբանությունը, պատմագիտությունը եւ գենետիկան իրարից անկախ «զարգանում» են եւ իրար հակասող եզրակացություններով մարդկությանը նրա հնագույն պատմությունն են հրամցնում:

Միջուկային գենետիկան եւ լեզվաբանությունը

(Ներկայացվածը ըստ՝ «The Origin Of Language», Merritt Ruhlen, USA, 1994, գրքի)

Միջուկային գենետիկական մատերիալների (օրինակ՝ արյան խումբ, պրոտեին, էնզիմիս եւ այլն) համաշխարհային լայնքի ուսումնասիրությունների արդյունքները, որ գիտնականների խումբը Լուկա Կավալլի-Սֆորզայի գլխավորությամբ կատարել է, փաստում են, որ լեզվընտանիքների եւ գենի հաճախականության ու առանձնահատկությունների միջեւ անմիջական կապ եւ համադրում գոյություն ունի: Եվ լեզվընտանիքների տեղադրում-դասավորումը լիովին համապատասխանում է լեզվաբան Ջոզեֆ Գրինբերգի լեզվընտանիքների խմբավորման տեսության հետ:

Կավալլի-Սֆորզայի աշխատությունը հրատարակվել է 1994թվականին: Հետագայում, Ալլան Վիլսոնի գլխավորությամբ գիտնականների խումբը, մարդու գենում ԴՆԹ-ի (mitochondrial DNA) հիմքի ուսումնասիրությունների արդյունքում, նույնպես հանգեց համանման եզրակացության: Նման հետազոտություններ սկսեց անել Դուգլաս Վալլասը, այս անգամ մեսոամերիկյան լեզվաընտանիքի քննությամբ, եւ նորից արդյունքները շշմեցուցիչ էին ու համապատասխանում էին լեզվաբան Ջոզեֆ Գրինբերգի քննությունների արդյունքների հետ (Language in the Americas, 1987թ.):

Միացյալ Նահանգներում, Ռոբերթ Սոկալի լաբորատորյան, դեռեւս 1991թվականից սկսեց հրատարակել կատարված գիտական ուսումնասիրությունների արդյունքները՝ Եւրոպայում գենի եւ լեզվի միջեւ գոյություն ունեցող սերտ կապակցության տարածման մասին: Մինչ այդ, Սոկալն իր կոլլեգաներ՝ Նիլ Օդինի եւ Գուիդո Բարբուջանիի հետ միասին, հարավային Ամերիկայում, հին հնդկացիների միայն մեկ Յանոմամա ցեղի գենի եւ նրանց լեզվի հաճախականության ու փոփոխության հետ կապված ուսումնասիրություններ էր կատարել տեղաբնիկների գյուղերում: Միեւնույն ցեղի իրարից բավականին հեռացած, բայց ճանաչելի չորս բարբառները կարող են համարվել առանձին լեզուներ: Այս ցեղի գենների ուսումնասիրությունը ցուցեց, որ ԴՆԹ-ն հիմքում նույնը լինելով հանդերձ, միեւնույն ցեղի այս չորս իրարից բավականին հեռացած բարբառներով խոսող տեղաբնիկների մոտ, ակնառու եւ սխեմատիկ տարբերություններ ունեն:

Եզրակացությունն ակնհայտ է՝ լեզվական վիբրացիոն փոփոխությունները ուղղիղ համեմատական են գեներում եղած փոփոխություններին: Բրազիլիայի եւ Վենեսուելայի սահմանին գտնվող Yanomama ցեղի 20 փոքրիկ գյուղերում դրսից գենների հոսքը՝ («ներգաղթը»), այս կոնկրետ դեպքում բացառվում էր:

Շվեցարիայում, Անդրե Լանգանեիի լաբորատորյան, գիտական երկարատեւ քննություններից հետո, միեւնույն եզրակացության հանգեց Աֆրիկայի բնակչության խոսակցական լեզվի եւ գենետիկական առանձնահատկություններն ուսումնասիրելիս:

Հիմնականում գենետիկ առանձնահատկությունները համապատասխանում են լեզվական տարբերություններին:

Նաեւ, այս հետազոտությունների արդյունքում, ավելի քան հետաքրքիր փաստ է արձանագրվում. հյուսիս աֆրիկյան լեզուներով խոսող ժողովուրդների գենետիկ շղթան բացահայտ տարբերվում է աֆրիկյան մայր ցամաքում ապրող մյուս ժողովուրդների գենետիկ շղթայից:

Լեզվաբան Մերրիտթ Ռուիլլինն իր գրքում նաեւ մանրամասն քննարկում է Հնդեւրոպական մայր լեզվի նախահայրենիքի այդքան չարչրկված հարցը՝ համաշխարհային գենետիկական լաբարատորիաների ուսումնասիրությունների հիմքի վրա:

«... Եւրոպայում եւ Մերձավոր արեւելքում հնագիտական պեղումների արդյունքները բացահայտ ցուցում են, որ հողագործության զարգացումը ամբողջ աշխարհում, առաջին անգամ, ծագել է մոտավորապես 10000 տարի առաջ Անատոլիայի (ժամանակակից Թուրքիա) բարեբեր շրջանում եւ ձգվել միչեւ Միջագետք (ժամանակակից Իրաք):

Հողագործությունը մոտավորապես 6000-5000 տարի մ.թ.ա. թափանցել է Հունաստան, որից հետո Բալկաններ, ապա կենտրոնական եւ հյուսիս կենտրոնական Եւրոպա...

Մոտավորապես 3000 տարի մ.թ.ա. հողագործությունը թափանցել է Անգլիա եւ մոտավորապես 2000 տարի մ.թ.ա. հասել միչեւ Ատլանտյան օվկիանոսի ափերը՝ Պորտուգալիա»:

Հեղինակը մանրամասն քննարկելով ցուցում է, որ գենետիկական ուսումնասիրությունները բացահայտ փաստում են, որ Փոքր Ասիայի (Անատոլիա, *Հայկական Լեռնաշխարհ,- ընդգծումը՝ Ա. Ա.)* հնագույն հողագործ բնակիչների գենն է, որ արտագաղթել է Եւրոպա:

Զարմանալին այն է, որ գենետիկական ճշգրիտ գիտական քննությունների հիմքի վրա լեզվաբան Քոլի Ռենֆրիուի ներկայացրած տեսությունը մերժվեց մի շարք հայտնի լեզվաբանների, հնեաբանների եւ պատմաբանների կողմից, քանի

որ դեռեւս 1926 թվականին, Գորդոն Չայլդի, Մարիջա Գիմբուտասի եւ այլոց կողմից «որոշվել» էր հնդեւրոպական լեզվընտանիքի նախահայրենիքը Սեւ ծովի ափին, Ուկրաինայում, եւ հազարավոր աշխատություններ էին գրվել այդ հիմքով, իսկ այս նոր՝ գենետիկական ճշգրիտ քննությունների հիմքի վրա տեսությունը չէր «բռնում», համապատասխանում իրենց կաղապարին: Այս մոտ 100-80 ամյա սխալ տեսության հետեւորդ-հեղինակների նույնիսկ հոգը չէ որեւէ կերպ հիմավորել հնագույն նախահնդեւրոպական լեզվի մեջ սեմական եւ քարթվելական լեզուներից որոշ բառերի փոխառությունները, քանի-որ դա միայն հնարավոր է՝ հնդեւրոպական մայր լեզվի հայրենիքը ոչ թե Ուկրայնական Կուրգաններում «տեղադրելու», այլ՝ Հայկական Լեռնաշխարհում եւ Անատոլիայում լինելու դեպքում:

Նույնիսկ, ընդունված Հնդեւրոպական մայր լեզվի «տրոհման» ժամանակաշրջանը՝ 3000 - 4000 տարի մ.թ.ա., որեւէ գիտական հիմք չունի, պայմանական է եւ սխալ: Հողագործ հնդեւրոպացու գենը Հայկական Լեռնաշխարհից (եւ Անատոլիայից) սկսել է Եւրոպա (Հունաստան) «գաղթել» առնվազն 7000-8000 տարի առաջ:

(Վերեւում շեղագրով ներկայացվածը ըստ՝ Merritt Ruhlen, USA, 1994թ. «The Origin Of Language» գրքի, chapter 7 & p. 181-194):

Ըստ Մերրիտթ Ռուիլլինի Հնդեւրոպական նախալեզուն, այնպիսին ինչպիսին ընդունված է, ըստ բերված 2-րդ գծագրի, բավական հեռու է *(չորս աստիճան)* նախնական *Պրոտո-Սափիենսից* (Proto-Sapiens):

Մեր կարծիքով, վերջին հաշվով, կան մարդկային, հինականում, երեք ռասսաներ՝ 1) սեւամորթ, 2) դեղնամորթ, 3) սպիտակամորթ, որ տարբերվում են՝ մատնահետքերի տարբեր կառուցվածքներով, եւ լեզվի՝ մարդկային ձայնի վիբրացիաների առանձնացված երեք հնարավոր արտաբերումներով՝ խուլ ռնգային *(սեւամորթ)*, խուլ կոկորդային *(դեղնամորթ)*, եւ բաց գանգային *(սպիտակամորթ)*: Սրանք, ըստ իս, փոխկապակցված հարաբերությամբ՝ նախամարդու տեսակի կոնստանտներն են, որոնց ասիմիլիացիոն խառնիխուռն կոնբինացիաները՝ թե՛ գույնի, թե՛ լեզվի առումով, ձեւավորել են այսօրվա աշխարհի բնակչության տարաբնույթ տարբերությունները:

Օրինակ, գենետիկական քննությունները փաստում են, որ ***սեմիտ ռասսա***՝ որպես այդպիսին գոյություն չունի: Սեմիտները սեւամորթների ու սպիտակամորթների հնագույն խառնուրդ են: Եւ, հյուսիսային Աֆրիկայի ժողովուրդների գենը՝ *քոսիանը եւ նեթոպականը*, կտրուկ տարբերվում է Աֆրիկայում ապրող մնացած ժողովուրդների գենից եւ խոսակցական լեզուն՝ նմանապես: Եվ սա պարզից պարզ պիտի լիներ, որովհետեւ եգիպտական հնագույն տեքստերը բացահայտ հաղորդում են Ասորիքի հյուսիսից՝ ուրեմն Հայկական Լեռնաշ-

խարիից *(այսօր նոր տերմին դարձած՝ Անատոլիայից)*, եկվորների՝ առաջավոր ***հայքսոսների*** *(Հաքսոս,- Մենտոնի տեսակետ)* ինտերվենցիայի մասին (մ.թ.ա. 18-17դդ.): Իսկ դրանից շատ ավելի առաջ, հնդեւրոպացի հուրրիների ներթափանցման մասին*(մ.թ.ա. 3-րդ հազարամյակ)*: Եգիպտական հնագույն հավատամքում աստվածների հնդեւրոպական անունները դրա վկայության փաստերն են:

Հարավային Ամերիկայում Yanomama հնդկացիների գենների եւ խոսակցական լեզվի բարբառային տարբերությունների քննությունը եւ գենը ուսումնասիրող լաբորատորիաների ընձեռնած փաստերը, հեռուն գնացող եզրակացությունների են հանգեցնում: Փաստորեն, խոսակցական լեզվի ձայնային վիբրացիաները ազդեցություն ունեն գենի վրա եւ գենի առանձնահատկությունների հետ ուղղիղ համեմատական հարաբերության մեջ են***[1]:**

Փաստորեն, գիտական այս փաստը խոսում է այն մասին, որ լեզվական վիբրացիան՝ խոսակցական լեզուն, ժամանակի հետ՝ հաջորդական սերնդափոխությունների ընթացքում, կարող է ձեւափոխել որեւէ ազգային հավաքականության գենետիկական կոմբինացիան***[2]:**

Վերջին հաշվով, մայր լեզվից հեռացում-անջատումը, որը նպաստում է նոր ժողովուրդների եւ լեզուների ձեւավորմանը որպես ինքնուրույն միավորներ, հիմնականում լինում են երկու հիմքերով՝

<u>ա) միգրացիաների հետեւանքով՝ տերիտորիալ հեռավորությունների պատճառով հեռացում-տրոհումներ, եւ</u>

<u>բ) տարբեր ռասսայական եւ էթնիկական խմբերի ասիմիլիացիաներով:</u>

Գենետիկայի եւ լեզվագիտության միջեւ կապի արդյունքների մասին վերջին 10-15 տարիների հայտնագործությունները, որ համառոտ եւ ընդհանուր ներկայացրինք վերեւում, բացառիկ կարեւորություն ունի, քանի-որ հնագույն հավատամքում հատուկ անունների՝ հայկական «Սասնա Ծռեր» էպոսի հերոսների

---

*1,- Merritt Ruhlen, «The Origin Of Language», 1994, USA, p. 182:

*2, - Հայ մեծանուն մտավորականները բազմիցս են ընդգծել մայրենի լեզվի բացառիկ կարեւորությունը: Կարող եմ միայն ավելացնել, որ ազգը գենետիկական տեսակ է, եւ նրա հիմնական հենարանը լեզուն է: Հնագույն հավատամքներում հատուկ ձայնային վիբրացիաները՝ աղոթական տեքստերը, հոգեւոր կենսոլորտի՝ աստվածայինի եւ Աստծո հետ կապի միջոց են համարվել:

Ի վերջո, ***Իմ կրոնը իմ լեզուն է,-*** պոստուլատը, որոշում է տվյալ մարդու եւ ժողովրդի տեսակը՝ աստվածային պատկանելիությունը...

* ԼՐԱՅՈՒՄ.- Ֆրիդա Զորդանի առաջարկով Կալիֆորնիայում, եւ Հայաստանում, Սեւակ Ավագյանի գլխավորությամբ ստեղծված «Armenian Bone Marrow Donor Registry» կազմակերպության տվյալներով, հայկական էթնիկական առանձնահատկություններն արյան եւ գենի՝ ԴՆԹ-ի մեջ, այնքան մեծ տարբերություններ ունեն, որ համարյա չեն համապատասխանում աշխարհում որեւէ ուրիշ ազգային պատկանելիություն ունեցողների արյան եւ ԴՆԹ-ի առանձնահատկություններին: Սա շատ մեծ դժվարություններ է ստեղծում լյուքիմիայով տառապող հայ հիվանդներին բուժելու գործում, եւ «Armenian Bone Marrow Donor Registry» կազմակերպությունը ստեղծելու պահանջը նաեւ սրանով էր պայմանավորված: Տես՝ http://www.abmdr.am/about.html:

անունների, ինչպես նաեւ Հայակական լեռնաշխարհում տեղանքների եւ հնագույն աստղագիտական անունների *(աստղերի եւ լուսատուների)* ստուգաբանությունները կարեւոր նշանակություն ունեն վաղնջական հավատամքի վիպական ներկայացման՝ հեթանոսական էպոսի խորհրդապաշտական իմաստների ու դրանց ընդհանրական կառույցի քննության խնդրում:

Կավալլի-Սֆորզայի աղուսյակը Մերիտոթ Ռուհլենի «The Origin Of Language», գրքից, էջ 155



FIGURE 11 The genetic structure of the human population after Cavalli-Sforza et al. (1988).

Կավալլի-Սֆորցայի աղուսյակը Մերիտոթ Ռուհլենի «The Origin Of Language», գրքից, էջ 150



FIGURE 10 A Comparison of biological and linguistic classifications, after Cavalli-Sforza et al., 1988.

In this tree, (ling.) indicates populations pooled on the basis of linguistic classification. (1) Tibetans are associated genetically with the Northeast Asian cluster, but linguistically with the Sino-Tibetan phylum. (2) Melanesians speak, in part, Indo-Pacific languages. Genetic data are not currently available for Kartvelian or (North) Caucasian populations.

ՄԱՍ II

«ՍԱՍՆԱ ՏՈՒՆ» ՀՆԱԳՈՒՅՆ ՀԱՎԱՏԱՄՔ-ԷՊՈՍԸ

{ ԻՆՉԻ՞ ՄԱՍԻՆ Է ՀՆԱԳՈՒՅՆ ՀԱՎԱՏԱՄՔ-ԷՊՈՍԸ }



«Սասնա Տուն» դիցաբանական էպոսը, մեզ հասած պատումների համաձայն, սկսվում է Կապուտակողմի Գագիկ թագավորի դստեր՝ Ծովինար-կույսի պարտադրված կնության գնալով: Հակառակորդ Սենեքերիմ թագավորը «հայոց կողմին» սպառնում է պատերազմով, եթե իր ցանկությունը չկատարվի: «Սենեքերիմի երկիր» գնալու ճանապարհին, Ծովինարը, Վանա ծովի միջից բխած գերբնական աղբյուրից(պատումներից մեկում հրեղեն ձիու սմբակատեղի ջրափոսից) խմելով մեկ ու կես բուռ ջուր, հղիանում եւ ծննդաբերում է գերբնական երկվորյակներին, որոնք ի վերջո (երբ 10 տարեկան են դառնում), «ինքնապաշտպանության դիրքերից» սպանում են իրենց «հայրացուին» եւ, փախչելով Հայաստան, կառուցում են իրենց բերդաքաղաքը՝ Սասունը:

Հրեղեն ձիով մինչեւ արեւ հասնող երկվորյակները, կռվելով ջրի ակը փակող վիշապների հետ, արդարության համար մարտնչելով պղնձե քաղաքում, հմայքների երկրում եւ այլն,

հաստատում են իրենց արդարացի իշխանությունը: Երկվորյակ հերոսներից Սանասարը ամուսնանալով Քառասուն ճյուղ Դեղձուն Ծամի հետ ունենում է երեք զավակներ՝ Յռան Վերգո, Ձենով Օհան, Մեծ Մհեր:

Սանասարի հերոսական «էստաֆետն» իր վրա է վերցնում Մեծ Մհերը՝ երրորդ որդին: Մեծ Մհերը բազմաթիվ հերոսական արարքներից եւ մերկ ձեռքերով առյուծին երկու կես անելուց հետո, կոչվում է՝ «առյուծաձեւ»: Ճակատելով Մսրա Մելիքի հետ նա չի պարտվում եւ երկու հզորները եղբայրության դաշինք են կնքում: Երբ Մսրա Մելիքը մեռնում է, ըստ դաշինքի, Մեծ Մհերը դառնում է նրա այրու՝ Իսմիլի ամուսինը եւ արու զավակ է պարգեւում թշնամու կլանին, որի անունը դնում են Մսրա Մելիք՝ ի պատիվ Իսմիլի առաջին ամուսնու: Հասկանալով, որ խաբված է, որ թշնամու թագավորությունում ինքն օտար է, հերոսը վերադառնում է Սասուն: Մեծ Մհերի մահից հետո, նրա մինուճար որդին՝ Դավիթը, դեռ պատանի, ստանձնում է իր հայրենի «Սասունի» ազատագրումը Մսրա Մելիքի իշխանությունից, որը հոր կողմից Դավիթի եղբայրն է:

«Սասնա Տուն» էպոսի վերջին դիցը՝ Դավթի որդի Փոքր Մհերն է, որն անմահ է եւ անժառանգ: Նա դեռ մանուկ հասակում ավելի հզոր է, քան իր անասելի դյուցազուն հայրը: Ի վերջո, կնոջ՝ Գոհարի մահից հետո, Փոքր Մհերը գնում եւ փակվում է Ագռավաքար կոչվող ժայռաքարում եւ սպասում է ժամանակի լրմանը, որ դուրս ելնելով աշխարհը կործանի:

Ըստ էության, կազմողների կողմից «Սասնա» էպոսի հավաքագրված մոտ 169 պատումները չորս ճյուղ հաջորդականությամբ եւ դասավորու-թյամբ՝ ճիշտ է համադրվել: «Սասնա Տուն» էպոսն ունի չորս ճյուղ՝ «Սանասար եւ Բաղդասար», «Մեծ Մհեր», «Սասնա Դավիթ» եւ «Փոքր Մհեր»: Երկվորյակների «սկիզբը»՝ մորենական կողմի պապն է, Գագիկ թագավորը, որի զավակներն են՝ Քեռի Թորոսն ու Ծովինարը՝ երկվորյակների քեռին եւ մայրը: Եթե այս հաշվարկով մոտենանք, այլ ոչ թե՝ հայրիշխանության ժառանգական սերնդափոխության սկզբունքով, ապա էպոսը՝ Գագիկից թագավորից մինչեւ Փոքր Մհեր, նախանշում է վեց սերնդի հաջորդականություն:

Գարեգին Սրվանձտյանի մատնանշած զուգահեռը՝ հայկական էպոսի «Սանասար եւ Բաղդասար» առաջին ճյուղի եւ Հին Կտակարանում առկա պատմության*[1] նմանությունները բացահայտ են *(որից եւ բխում են՝ Մ. Խորենացու եւ Թովմա Արծրունու հիշատակումները):* Սակայն Ասորեստանի թագավոր Սիննահարիմի *(մ.թ.ա. 701-681թ.)*[*2] իր որդիներից՝ Ադրամէլեք եւ Սարասարից

*1- «Հին Կտակարան», Դ թագավորաց. գլ. 19, 36-37, Ես. ԼԷ, 38:
*2,- Հր.Աճառյան, «Հայոց լեզվի պատմություն», 1940թ., Երեւան, h. I, էջ 200:

սպանվելու ու նրա տղաների Հայաստան փախչելու Հին Կտակարանի պատմությունը՝ կրոնական միստիցիզմի, եւ ոչ թե պատմական վերաբերմունքի արդյունք է ու նաեւ՝ խորհրդապաշտական նշանակություն ունի: Որ այս երկվորյակներն աստվածներ են, կա նաե՛ւ Հին Կտակարանում՝ ***«... Մեփարուիմի աստվածներ Ադրամէլեքի եւ Անամելէքի համար»***[*1]***:*** Հավանական է, որ Սենեքերիմ արքայի հետ առնչվող այս պատմությունը փոխառնված է Հին Կտակարան, ինչպես օրինակ բազմաթիվ պերսոնաժներ են փոխառություններ, որոնց թվում՝ շումերական արարչության, Օձի ու Ադամ-Եւայի, Նոյյան ջրհեղեղի մասին պատումները:

Մինչեւ այժմ, հատկապես սովետահայ էպոսագիտության մեջ, հավատամքային պատումը համարվել է որպես՝ պատմական դեպքերի զարգացման արդյունք: Սա մատերիալիստական պարզամտության արգասիք է: Պատճառի ու հետեւանքի տեղերը փոխելով եւ արտաքին նմանությունից եզրակացություններ անելով, որն է՝ պատմական իրադարձությունը որպես դիցաբանական պատումի հղացման հիմք նկատելը, կիրառվել է թե՛ «Հայկ եւ Բել», թե՛ «Ծամիրամ-Արա Գեղեցիկ» եւ թե՛ «Սասնա Ծռեր» էպոսի նկատմամբ: Սա, մեղմ ասած, սխալ մոտեցում է. որեւէ պատմական միջադեպ, որքան էլ այն ուզում է հերոսական լինել, չի կարող ***«այնքան ուռչել»,*** որ դառնա՝ ***արարչական, կոսմիկական:*** Այսինքն, համակարգն «աշխատում է», ոչ թե՝ «ներքեւից վերեւ», այլ հակառակը՝ կոսմիկական աստվածությունն է, որ հին հավատամքի անկումով, ժողովրդի ասքերում, դարեր հետո, դառնում է գերբնական հերոս:

Նման մոտեցմամբ, հայկական էպոսի հիմքում առկա հին հեթանոսական պատումը վերականգնել՝ հնարավոր չէ, սխալ ճանապարհ է: Հայկական էպոսը հեթանոսական հնագույն շրջանի, հնդեւրոպական հավատամքային կառույցի միջուկային պատումներից է, եւ «Սասնա Ծռեր»-ի էությունը միայն հնարավոր է բացահայտել հնագույն հավատամքային պատումների հետ համեմատական զուգահեռներով: Եվ ինչպես ժամանակին Հովսեփ Օրբելին է իրավմամբ բնորոշել՝ *հայկական առասպելները կոսմիկական բնույթ ունեն*[*2]**:**

---

*1,- Հին Կտակարան, Թագավորաց Դ, գլ. 17, 31:

*2,- Հովսեփ Օրբելի, «Հայկական հերոսական էպոսը», Երեւան, 1956թ., էջ 69:

Հակառակ մոտեցում ունեցողներին արժեր հարցնել. ըստ նրանց «գիտական տեսակետի», Սանասարի մենամարտը վիշապի հետ, պատմական ո՞ր իրադարձությանն է համապատասխանում: Արժեր նաեւ հարցնել. ***Սանասար*** եւ ***Ինդրա*** աստվածության պերսոնաժների բացահայտ նմանությունները, միջնադարյան ո՞ր պատմական դեպքի հետ է հարմար աճպարարությամբ կապել: Ե՛ւ Սանասարը ե՛ւ Ինդրան, խմելով գերբնական աղբյուրից, Ինդրայի դեպքում՝ Սոմա, սարսափելի չափերով բազմապատկվում-հզորանում են: Երկուսն էլ մենամարտում են վիշապի հետ: Ինդրան էլ է Թուր Կեծակի հիշեցնող զենքով մենամարտում: Ինչպես սասնա դիցերի համար է Մարաթուկը սրբազան, այնպես էլ Ինդրայի «նստավայրը» երկրի վրա ՄԵՐՈՒ սարի գագաթն է եւ այլն *(Ինդրան, իմիջիայլոց, ըստ ակադեմիական, ընդունված տեսակետի, առնվազն մ.թ.ա. II հազարամյակում է «ներմուծվել» Հնդկաստան, աստվածների պանթեոն):*

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Թե իրականում ովքե՞ր են հայոց «թշնամիները»՝ հայկական հնագույն «առասպելներում»:

Վերոհիշյալ «Սասնա Ծռեր», «Հայկ եւ Բել», «Արա Գեղեցիկ-Շամիրամ» պատումներում հայոց թշնամին նո՛ւյն թշնամին է, եւ աղերսվում է Լուսնի աստվածության հետ:

Սեննքերիմ > ասոր. անվ. > Սիննահարիմ > sin-aẖ ẖē-eṙba, թարգմանվում է՝ «Սին (Լուսնի աստվածը) եղբայրներս շատացրեց»[*1]:

Շամիրամ > Այս աստվածության անունն աղերսվում է՝ հուն.՝ Semiramis, ասորերեն՝ sin-a-rah (փայլող լուսին) կամ՝ [sem-i-][*2] «ամբողջի կեսը» եւ arma՝ «բարձրացող լուսին»[*3] իմաստների հետ. ամենահավանական տարբերակը՝ «կիսալուսին»: Երկուսն էլ աղերսվում են Լուսնի աստվածության հետ: ***«Շամիրամ - Արա Գեղեցիկ»*** պատումը, **Լուսին - Արեւ** դուալիստական բինարիզմի հիմքով տարբերակ պատումներից է[*4], ինչպես եգիպտական «Օզիրիս – Սեթ», շումերական «Ինանա - Դումուզի» եւ այլն, պատումները:

Բել - աքադ.՝ «ՏԵՐ»: ԲԵԼ > ԲԱՀԱԼ > ԲԱՀԱՂ (պատկերն է՝ հորթ կամ ցուլ՝ պոզին լուսնի խորհրդանշաը), աղերսվում է Լուսնի աստվածության հետ: Նորի՛ց՝ լուսին:

Մսրա(Մելիք) > Մըսր > Մըսիր: Հնխ. ձեւն է՝ [*meH-s-] եւ [*me(H)-n-], երկուսն էլ բխում են [*meH-][*5] «չափման միավոր, ժամանակ», «ամիս» *(հնում հիմնականում լուսնամիսն է եղել ժամանակի չափման միավոր, տարին՝ 360 օր):* Սանսկրիտ՝ ***máh***, ***mása,***- «ամիս», «լուսին», Ավեստա՝ ***ma***, հայեր.՝ ***ամսոյ***[*6], ***ամիս***, ***մահ+իկ***, ***մահ***,- «լուսին», «ամիս»: Մսրա Մելիքի գուրզը կամ «հոլը» 360 լիտր էր կշռում. ի տարբերություն արեւային տարվա՝ 365 օր, լուսնային, սխեմատիկ տարին՝ 360 օր էր համարվում:

«Մըսրա Մելքի ասդըխ գը ֆըռֆըռը,
Սասնու Տավթի ասդըխ խավա՛ր ը»[*7]:

Դավիթն այստեղ՝ «մեռնող» արեւ = օրվա արեւամուտն է, իսկ Մըսրա աստղը՝ լուսնի մահիկը:

«Երկվորյակները կոչվում էին՝ «աստծո որդիներ» կամ «արեւի որդիներ»: «Միֆական եւ ծիսական դուալիզմն իր բացահայտ արտահայտությունն է գտել

---

*1, - Հր. Աճառյան, «Հայոց լեզվի պատմություն», 1940, Երեւան, հ. I, էջ 200:
*2, *3, -T. Gamkrelidze & V. Ivanov, "Indo-European & The Indo-Europeans", 1995, N Y, p. 740, 591.
*4, - Եւ Արա Գեղեցիկը եւ Հայկ աստվածությունը աղերսվում են արեւի՝ բարձրագույն աստվածության հետ: ***Արեւապաշտների*** եւ ***լուսնապաշտների*** անհաշտ պայքարը Հայկական լեռնաշխարհում եւ հյուսիսային Միջագետքում խորանում է առնվազն մինչեւ մ.թ.ա. IV-II հազարամյակներ:
*5, *6, - T. Gamkrelidze & V. Ivanov, նույն աղբյուր, էջ 591, 680, 682:
*7, - «Սասնա Ծռեր», 1977թ., Երեւան, էջ 129:

*հնագույն հնդեւրոպական տրադիցիաներում: Հիթթիթների ծիսակատարության մեջ, երբ մարդը չափահաս էր եւ կարողանում էր զենք կրել, ցեղը բաժանվում էր՝ «**Հաթթի**-ի մարդիկ» եւ «**Մասա**-ի մարդիկ» խմբերի (Մըսր,- ավ. իմն է): Առաջինները կրում էին բրոնզե (բրոնզ = պղինձ) զենքեր, իսկ երկրորդները՝ փայտյա զենքեր...»*[*1] *(հիշենք պղնձե քաղաքի աղջկա հետ Սանասարի ամուսնությունը)*: Ծիսակատարության ժամանակ «*Հաթթի մարդիկ*» իրենց բրոնզյա զենքերով պետք է հաղթեին «*Մասա-ի մարդկանց*» եւ նվիրաբերեին գերյալներին բարձրագույն աստծուն[*2]: Սա, անշուշտ, 1700-1200 թթ. մ.թ.ա., հիթթիթների կրոնածիսական արարողության ներկայացում էր՝ լուսնի աստծո որդիների պարտության եւ արեւի որդիների հաղթության մասին:

Հինդեւրոպացի հիթթիթների հավատամքային այս կոնցեպտի բացահայտ արտացոլումը տեսանելի է «Սասնա Ծռեր» էպոսում: Այսինքն՝ միեւնույն ցեղային հավաքականության մեջ, **լուսնային** եւ **արեւային** դուալիզմի հիմքով հավատամքային կոնցեպտն է:

Սանսկրիտ էպոսում՝ «Մահաբհարաթա», Կաուրավասները եւ Պանդավները ներկայացնում են ***արեւի*** եւ ***լուսնի դինաստիաները***[*3], որոնք թշնամական եւ նույնիսկ՝ պատերազմական հակասության մեջ են գտնվում: Փաստորեն, Կրիշնան՝ Լուսնի աստվածություն[*4], պանդավ Արջունային *(լուսնի դինաստիա)* խորհուրդ է տալիս սպանել Կաուրավասներին *(արեւի դինաստիա)* եւ նրանց ամբողջ զորքը: Կրիշնան Արջունային ներկայանում է որպես գերագույն աստվածություն, հերոսին ցուցելով իր «տիեզերական» տեսքը՝ ***աստրալ պլան***, որն ըստ «արեւապաշտության», միայն նյութական տիեզերքի՝ ***շունչ-հոգի*** ցածրադիր շերտն է[*5]: Աբրամին հայտնված ***Յահվեն*** նույնպես «լուսնի» աստվածությունն է: Եվ Աբրամի հեռանալը ***Խարան*** քաղաքից, ըստ գիտական, ընդունված տեսակետի, մ.թ.ա. 2-րդ հազարամյակում, արեւապաշտների ճնշման հետեւանքով լուսնապաշտների Հայկական լեռնաշխարհի հարավից եւ հյուսիսային Միջագետքից հեռանալու մասին արձագանքն է, որ տեղ է գտել Հին Կտակարանում[*6]:

Եզրակացություն

Հնագույն հայկ. առասպելներում եւ «Սասնա Տուն» էպոսում, «Հայոց կողմի» «վիպական թշնամիները»՝ ***Բել, Շամիրամ, Մենքերիմ, Մսրա Մելիք,*** աղերսվում են ***Լուսնի*** աստվածության հետ, եւ «Սասնա» էպոսի մոտիվներն իրենց հնագույն, նախնական՝ հեթանոսական տարբերակում, ներկայացնում են ***արեւապաշտության*** եւ ***լուսնապաշտության*** անհաշտ դուալիզմը: ***Մսրա Մելիքը*** կամ ***Մենքերիմը,*** Բաղդատի Խալիֆության կամ Եգիպտոսի հետ, ըստ էության, որեւէ կապ չունեն, այլ՝ ավելի ուշ ժամանակներում «հարմարեցվել» են տեղանքների, երկրների՝ Ասորեստանի, Եգիպտոսի, Բաղդատի հետ: Հայկական էպոսի միջուկը կազմող՝

---

*1, *2, *3, - T.Gamkrelidze & V. Ivanov, “Indo-European & ...”, 1995, New York, p. 680, 682, 681.
*4,- Տես՝ «Մահաբարաթա», «Բահագավաթ Գիտա»:
*5,- Torkom Saraydarian, « The Other Worlds», 1990, USA, p. 145, chapter - «Astral Contacts».
*6,- Զ.Կոսիդովսկի, «Բիբլիական ավանդապատումներ», 1980, Երեւան, էջ 95-100:

հնագույն հեթանոսական շրջանին համապատասխանող ***արեւապաշտների*** ու ***լուսնապաշտների*** միջեւ թշնամական դուալիզմը, շատ ավելի վաղնջական է, քան ենթադրվող մ.թ.ա.8-7 դարերի ասորական կիսաառասպելական թագավոր Սենեքերիմի հետ կապված դեպքերը կամ միջնադարյան արաբական արշավանքների դեմ հայոց ազգային ազատագրական պայքարի իրադարձությունները: **«Արեւապաշտների»** եւ **«լուսնապաշտների»** միջեւ դուալիզմի հիմքով հավատամքային անտոգոնիզմի վերաճած երեւույթը հատուկ է ***նախա***-հնդեւրոպական ժամանակներին, որի արտահայտությունն առկա է «Սասնա Ծռեր» էպոսում, եւ ավելին՝ էպոսի բոլոր պատումային սյուժետները կառուցված են երկու հիերարխիաների «թշնամական դուալիզմի» հիմքով:

Լուսնի աստվածության հետ առնչվող վերեւում բերված անունները ֆունկցիոնալ իմաստներ են արտահայտում եւ ստուգաբանվում են միայն հնդեւրոպական լեզուներում ու նախահնդեւրոպական ձեւերում. դրանք սեմական լեզընտանիքի անուններ չեն: Մսրրա Մելէքը, Իսմիլը, Խլաթցի Զմշկիկը եւ այլն, ավելի ուշ շրջանում, մեզ հասած վիպական տարբերակներում «օտարազգի» են ներկայանում այն պարզ պատճառով, որ արդեն ***արեւապաշտների*** ու ***լուսնապաշտների*** միջեւ հավատամքային անտոգոնիզմի պատճառով սկսվել էին դեպի հարավ մեծ միգրացիաները ***(նախապայման, որ մեծ միգրացիաների համար կարող էր խթան լինել)***:

Հին սեմիտները՝ սկսած աքքադների կողմից շումերական տարածքները ներխուժելու ժամանակներից, փոխառել են հնագույն հողագործ արիացիների հավատամքային կանոնակարգը, որը ժամանակի ընթացքում ենթարկվել է ձեւափոխությունների: Այս ճշմարտության ***(տենակնտի)*** օգտին են խոսում չորս հիմնարար եւ ծանրակշիռ փաստարկներ:

Առաջին՝ թե՛ հնագույն եգիպտական, թե՛ շումերական, թե՛ եւրոպական, թե՛ Հայկական լեռնաշխարհի, եւ թե՛ հնդ-իրանյան հավատամքային կանոնակարգ-պատումները նստակյաց հողագործի ստեղծարարություններ են, եւ ըստ հնագույն տեքստերի, նրանք, լեռնեցի ժողովուրդ են եղել: Մի բան, որն ակնառու է հնագույն «միֆական» համարվող բոլոր պատումներում: Դրանցում չկան քոչվորի (nomadic) կենսաձեւին հատուկ գծեր:

Երկրորդ՝ այս պատումները՝ բոլորը, թե՛ կառուցվածքով, թե՛ ֆունկցիոնալ ասելիքով, եւ թե՛ հերոս աստվածների հնդեւրոպական ծագումի անուններով, հնագույն նախահնդեւրոպացիներին հատուկ՝ երկակիության հիմքով կրոնամիստիկ աշխարհճանաչողություն է, *որը նաեւ առկա է հնդեւրոպական լեզուներում, միֆական, կրոնական գաղափարական սկզբունքների եւ տերմին-բառերի կառուցվածքներում*[*1]:

---

*1, - «One of the clearest examples is the binary nature of the ancient Indo-European classification of flora and fauna discussed in Chapter 1 of Volume II (p. 378-412). The same binarism characterazes Indo-European mythological and religious conceptions, fragments of which can be reconstructed by applying the comparative method to the data of individual historical cultures», ***T. Gamkrelidze & V. Ivanov, "The Indo-European And The Indo-Europeans", 1995, USA, p. 679.***

Երրորդ՝ հավատամքային կառույցներն աղերսվում են ***աստղագիտության*** հետ, որ հողագործի, նստակյացի, եւ ոչ թե՝ քոչվորական կյանք վարող սեմիտի կեցության արդյունք է: Եվ, հնդեւրոպացիների ***հավատամքը՝ «աստղային դիցաբանությունը»*** կանխագծում է երկրագնդի 36⁰- 44⁰ տարածքը:

Չորրորդ՝ գենի, ԴՆԹ-ի ուսումնասիրությունների այսօրվա արդյունքներն արդեն փաստում են առաջին հողագործ հնդեւրոպացիների նախահայրենիքի ճշգրիտ տեղանքը, որ երկրագնդի 36⁰- 44⁰ տարածքն է*[1], Հայկական լեռնաշխարհն է:

Հայկական լեռնաշխարհի հնդեւրոպացի հնագույն **մասսաները՝** «լուսնապաշտները», ի տարբերություն «արեւապաշտ» սասունցիների, ըստ «Սասնա էպոսի», տեղանքային համապատասխանության առումով, իջել են հյուսիսային Միջագետք, Հայկական լեռնաշխարհի՝ Խլաթ, Վան տեղանքներից:

«Լուսին» եւ «Արեւ» սիմվոլների իմաստները հնագույն հավատամքների խորհրդապաշտության մեջ: Հնագույն պատումների կոսմիկական բնույթը:

Ըստ հնագույն հավատամքային պատկերացումների, ***աշխարհը*** *(ամենայն գոյությունը)* ներկայանում է որպես եռաշերտ հիերարխիա. նույն սկզբունքով է նաեւ մարդու երրորդությունը՝ ՄԱՐՄԻՆ + ՇՈՒՆՉ + ՀՈԳԻ: Ահա այս թաքնագիտական երրորդությունը «տիեզերական մասշտաբներով», արտահայտվում է սիմվոլների լեզվով որպես՝

{1. ՄԱՐՄԻՆ - 2. ՇՈՒՆՉ*[2]- 3. ՈԳԻ*[3]} = {1. ԵՐԿԻՐ (ՆՅՈՒԹ) – 2. ԼՈՒՍԻՆ - 3. ԱՐԵՎ}:

Խալդեական (բաբելական) թաքնագիտությամբ, հավատամքային կառույցում վերոհիշյալը ներկայանում է բառացի՝ ***Sin, Samas, Bin (կամ՝ Bel, Anu, Hoa)***[4]: Ըստ հնայգույն հավատամքի, տիեզերական բարձրագույն ՀՈԳԻՆ ստեղծում է իր ՇՆՉԱՎՈՐ սկավառակ-անիվը՝ մարմինը, իսկ վերջինս ստեղծում է իր նյութական մարմին անիվը: Հաջորդականությունը՝

Երկիր՝ նյութից ➡Լուսին՝ կենդանական շունչ ➡ Արեւ՝ բարձրագույն Ոգի: Այսինքն, Հոգին(ոգի)՝ Շնչի մեջ, շունչը՝ նյութական մարմնի մեջ,- տրանսֆորմացիաների հաջորդականությամբ, ստեղծում են գոյաբանական աշխարհը: Երբ տիեզերական բարձրագույն ոգին «գահավիժում» է նյութականի մեջ *(ինչպես Փոքր Միները ագռավաքարում),* ապա, հետո, փորձում է «ազատվել, բարձրանալ», բայց Շունչը՝ ***(սիմվոլը՝ լուսին),*** լինելով անգիտակից, քանի որ նյութականին առավել մոտ է, չի թողնում, որ ոգին՝ ***(սիմվոլը՝արեւը)*** վեր բարձրանա, ազատվի նյութի ձգողական կաշկանդումից:

---

*1.- Merritt Ruhlen, «The Origin Of Language», 1994, USA, chapter 7 & p. 181-194.

*2, *3, *4, - Նախահնդ. ձեւում՝ *anH, որը միայն կենդանական ***շունչ-հոգուն*** է վերաբերում: ***Բարձրագույն Միտք-ոգի՝*** սանսկ.՝ atmán -, հայերեն՝ ***ոգի = հուր*** *(հրեշտակ),* որը միայն հոգեւոր հայալն ունի: H. P. Blavatsky, "Isis Unavailed", 1998, USA, v. I, p. 170-171, 301-304; p. 170.



Թաքնագիտական դպրոցների ահա այս հնագույն, միստիկ եռանկյունին՝ «դուալիզմի միասնությունը վերին երրորդ կետով», որը ստեղծում է հակասության սկզբունքով տիեզերական շրջապտույտը, ունի իր վիպական արտահայտությունները՝ «Ճամիրամ-Արա», «Ինանա - Դումուզի», «Օզիրիս - Սեթ», «Ահուրամազդա - Արիիման» եւ այլն պատումները:

Հնդեւրոպական» մայր միֆի «սփռված» բոլոր մոտիվները մի կողմից աղերսվում են Մեծ ՈՉԻՆՉ-ից տիեզերքի արարման հետ՝ կապվելով Վիշապի կամ վիշապների ընտանիքի ու ամպրոպի աստծո միջեւ կռվի վիպական ներկայացմանը, մյուս կողմից, իր երկրորդ փուլում, աղերսվում են տիեզերական կենդանակերպերի (զոդիակների) հետ: Առաջինի դեպքում, հնագույն խորհրդապաշտական հավատամքներում, տիեզերքը, իսկ ավելի ճիշտ՝ նախատիեզերքը, ներկայացվում է որպես Վիշապաձուկ կամ օձ, որն օղակված վիճակում փորձում է կուլ տալ իր պոչին դրված հրե ակը*1: Այս սեւ Վիշապը տիեզերքի պրոտոտիպի սիմվոլն է, որից ձեւավորվում են տիեզերական բոլոր ֆորմանները ***(կամ որին հերոս-աստվածն անպայման պիտի «սպանի» եւ արդյունքում աշխարհն արտահայտվի).*** մեծ շրջափուլ: Ճերմակ Վիշապը կամ օձը, հնագույն ավանդույթներում եւ շատ ժողովուրդների մոտ իմաստնության խորհրդանիշ է: Բրահմայական կանոնակարգում, Մեծ Ոչինչից արտահայտված առաջին գոյությունը՝ ՀԱՐԻ-ն՝ Բրահմը, քառադեմք աստվածություն է, որից սերվում են բազում տիեզերքներ: Նույն մոտիվները մենք տեսնում ենք եգիպտական հավատամքում: ԱԹՈՒՄ-ը տիեզերական նախնական անգոյությունից ինքն իրեն է արտահայտում-ստեղծում: Շումերաբաբելական էպոսում, ԱՓՍՈՒ-ն եւ ԹԻԱՄԱՏ-ը, «խառնելով» իրենց ջրերը, արարում են առաջին աստվածներին: Ըստ հայկական տարբերակի՝ ***երկինքն*** ու ***երկիրը*** երկնում են, եւ նրանց «միջանկյալ» ***Ծիրանի ծովից*** ծնվում են առաջին աստվածները («Վահագնի ծնունդ»), եւ այլն*2: Եւ այս գերագույն Աստծո՝ եգիպտական տարբերակում՝ ԱՄՈՆ-ի, վեդայական տարբերակում՝ Հարի Բրահմայի եւ այլն, յոթ արտահայտություններից կամ

*1,- Manly P. Hall, “The Secret Teachings of All Ages”, 2000, USA, p. XX.
Giles Sparrow, “The Universe”, 2001, NY, p. 137;
H. P. Blavatsky, “Isis Unavailed”, 1998, USA, p. 302.
*2, - «Մ. Խորենացի, «Հայոց Պատմություն», 1981, Երեւան, էջ 102:

հաջորդական աստվածային սերունդներից հետո, «արարչությունը» սկսում է աղերսվել երկնքի աստեղատների՝ զոդիակների հետ: Երկրորդ՝ փոքր շրջափուլ: Երբեմն, «արարչություն» երևույթը միանգամից է «կապվում» տիեզերական զոդիակների ձեւավորման հետ: Օրինակ, եգիպտական Օզիրիս-Իզիս-Հորոս հավատամքային պատում-կառույցը (**Օսիրիս՝ Հայկ-Օրիոն, Իզիս՝ Սիրիուս-Շնաստղ, Հորոս՝ Արամանյակ կամ Պզտիկ Մեծը,- հորոսկոպ, 12 կենդանակերպ աստեղատներ**) կամ շումերաբաբելական «The Epic Of Creation» կոսմիկական պատում-կառույցը նույնպես տիեզերական կենդանակերպերի շղթայի մասին է:

«…*Նա Մարդուկը կանգնած էր մեծ աստվածների համար: Ըստ աստղերի նա կարգավորեց կենդանակերպերը, բաժանեց եւ իր տեղերում դնելով, ձեւավորեց տարին...*»: Մարդուկը նաեւ որոշում է Անուի, Էայի եւ Էնլիլի «տիրույթները» եւ այլն*[1]:



Վիշապների մասին հիթթիթական, հուրրիական, հայկական, հնդիրանական եւ այլ պատումներն, ի վերջո, նույնպես տիեզերական արարչության եւ կենդանակերպերի (զոդիակ) ծննդյան մասին վիպական պատումներ են: Տեսնող աչքը «Սասնա» էպոսում անմիջապես կարող է նկատել, որ Կաթնաղբյուրը եւ Ծովինարը նույնանում են Ծիր Կաթինի հետ: Երկրորդ շրջափուլում, արդեն, շրջանառության մեջ է «Երկվորյակների» համաստեղությունը, ապա՝ «Առյուծ», «Կշեռք-Կարիճ» եւ «Զրհոս-Ձուկ» համաստեղությունները: Հայկական հնագույն էպոս-հավատամքը՝ աստեղատների շրջափուլերի մասին է: Եւ սա պատահական չէ. ըստ աստղագետներ՝ Սվարցի, Մաունդերի, Ֆլամարիոնի, Օլքոտի, երկինքն ըստ կենդանակերպ - համաստեղությունների համակարգելու հայրենիքը՝ աշխարհագրական լայնության 36-40°-ի եւ 42-44° Միջօրեականի միջեւ ընկած տարածքն է, որ ներառում է Հայկական լեռնաշխարհը: Միայն այդ տարածքից են երկնակամարի 6+6 զոդիակները մեզ լավ ծանոթ հաջորդականությամբ եւ կենդանակերպի նմանությամբ դիտվում: Հայկական լեռնաշխարհում, Մեծամորում եւ Քարահունջում հայտնաբերված հնագույն աստղագիտական կենտրոնները, որոնց վաղնջականությունը խորանում է ավելի քան 5-7 հազար տարիների խորքը, փաստում են, որ այս տարածքում են եղել

*1,- Stephanie Dalley, “Myths From Mesopotamia”, 2002, Oxford, p. 255:

հնագույն ժամանակների աստղագիտական գիտելիքների ստեղծման կենտրոնները*1:

Կոսմիկական թեմաներով հազարավոր ժայռապատկերներն ու կիկլոպյան վիշապաքարերի արձանները, թեեւ դեռ խորը չեն ուսումնասիրված, սակայն լիովին համընկնում են հայկական հնագույն առասպելներին ու ավանդապատումներին: Ըստ իս, ամբողջ Հայաստանի (պատմական) տարածքը՝ լեռները, լճերը, գետերը, ըստ հերմեսյան՝ «**ինչպես վերեւում, այնպես էլ ներքեւում**» սկզբունքի, անվանակոչվել են հնագույն հավատամքային պատումներում գոյություն ունեցող աստվածների ու հերոսների անուններով: Եւ հարեւանները Արատտայի երկիրը համարել են սրբազան, օրինաց երկիր, աստվածների երկիր*2, որովհետեւ այն եղել է հնագույն հավատամքի կենտրոնը, տիեզերական կենդանակերպի արարման հայրենիքը, որի «ձեւավորման» մասին է մինչեւ նախահնդեւրոպական ժամանակները խորացող «Սասնա Տուն» հայկական էպոսի հիմքում առկա հնագույն հավատամք-կառույցը:

«Սասնա Տուն» էպոսի գլխավոր հերոս-աստվածությունների ***անունների ստուգաբանությունը,*** համակարգում՝ աստվածությունների ***հանդես գալը միայն մեկ ֆունկցիայով,*** էպոսի ***սերտ առնչությունը երկնային 18, 36 աստեղատների հետ,*** եւ պատումներում ***աստղագիտական երեւույթների նկարագրությունները,*** պարզում են, որ այս հավատամքային պատում-կանոնակարգի ժամանակագրությունը խորանում է մինչեւ ***նախահնդեւրոպական ժամանակներ:***

"Zeus against Typhon." From Campbell (1964, p. 239)

*1- Մենամորի աստղադիտ.՝ 2800-2600 մ.թ.ա., Է. Ս. Պարսամյան, «Մենամոր», 1973թ., ՀՍՍՀ ԳԻՏ. Ակադեմիա, Երեւան: Քարահունջ՝ մ.թ.ա. 5500, տես՝ Պ.Հերունի, «Զեկույցներ», ՀԳ Ազգային Ակադեմիա, 1988, #4, (307-328):
*2.- Տես՝ Արտակ Մովսիսյան, «Հնագույն պետությունը Հայաստանում՝ Արատտա», 1992թ., Երեւան:

Էպոսի ընդհանուր վերնագիր-անվանումների մասին:

Հայկական էպոսն այսօր հայտնի է՝ 1)«***Սասնա Ծռեր***», 2)«***Սասնա Տուն***», 3)«***Ջոջանց Տուն***», 4)«***Քաջանց Տուն***» ընդհանրական վերնագիր-անվանումներով, որոնք բխում են էպոսի բազմաթիվ պատումներում դյուցազուն հերոսների եւ նրանց բնակավայարի բնութագրումներից: Վերեւում համարակալված հավաքական վերնագրերի՝ # 2-րդ, # 3-րդ եւ # 4-րդում, «*Տուն*»-ը կրկնվում է որպես՝ ***տեղ, վայր, ընտանիք*** իմաստով, հավաքականություն հաղորդելով վերնագրին: «*Քաջանց*» պայմանական վերնագիր-անվանումը, որ նշանակում է՝ ոգիներ, քաջքեր, առաջին հայացքից թվում է թե խորթ է՝ #1, #2, #3 անվանումներին, որովհետեւ «Քաջանց Տուն»-ը հուշում է, որ էպոսի հերոսները ոգիներ, քաջքեր են եւ, պատումը պետք է լինի նրանց ***ընտանիքի*** մասին, ***ոգիների տան*** մասին: Բայց մի փոքր առաջ անցնելով, փորձենք ստուգաբանել ***Սասուն*** անունը, որն ինչպես 19-20 դարերի պատմող գուսաններն են ներկայացրել՝ ***Սան*** եւ ***Սուն*** բառերի համադրում է: Օրինակ, պատմողներից մեկը՝ տարոնցի Կրպո, գրի առնող Գ.Սրվանձտյան, 1873 թիվ, ***Սասուն*** անունը մեկնաբանում է որպես՝

«Քարե սան սուն եք զարկել,

Ըդրա անուն տ'եղնի *Սանսուն*, Սասուն»[*1]:

Այսինքն, անունը կապվում է քարերի ահագնության եւ ձեւի հետ: Սա արտաքին նմանությամբ՝ իմաստի ու նշանակության բացատրություն է: Նմանատիպ ձեւով, 19-20-րդ դարերում, ժողովրդական պատմողները էպոսի պատումները երգելիս, չհասկանալով հնագույն հեթանոսական հավատամքում անունների իմաստները, փորձել են «հարմարեցնել» այս կամ այն անունների կամ երեւույթների իմաստները: Օրինակ, *Խաչ-Պատրագին* կամ *Պատարասին*-ը (պատմողի համար՝ անհայտ իմաստով անծանոթ բառ) հարմարեցվել է՝ *Խաչ-պատարագ* կամ *Խաչ-պատերազմ* իմաստների հետ[*2]:

Հայ պատմագրության մեջ առաջին անգամ **Սասուն** անունը որպես տեղանուն հիշատակվում է Անանիա Շիրակացու *(մ.թ. VII դար)* «Աշխարհացույց»-ի մեջ: Շիրակացին, թվարկելով Հայաստանի 15 նահանգներն ու դրանց վարչական բաժանումները, Սասունը հիշատակում է որպես Աղձնյաց նահանգի տասներորդ գավառ.

«Երրորդ՝ Աղձնիս առ Տիգրիս գետով կայ. եւ գավառ ունի տասն. զԱրզն, զՆփրկերտ, զՔեղ, զԿեթիկ, զՄատիկ, Սաղու, Վանաց ձոր, զԽերիեթս,

*1,- «Սասնա Ծռեր», 1977թ., Երեւան, էջ 15:

*2,- «Սասնա Ծռեր», հատոր Բ, II, էջ 843, ծանոթագրություն:

qԳգնդ, qՍալնոյ ձոր, qՍանասուն...»[*1]:

Սասունի մասին արձանագրություն կա նաեւ մ.թ.ա. 736 թ., Ասորեստանի թագավոր Տիգլատպիլասարի հուշարձան արձանագրության մեջ, որտեղ Սասունը հիշատակվում է որպես ***Սասսու*** քաղաք[*2]:

Սան եւ ***Սուն*** կամ՝ ***Սանասուն*** բառերի ստուգաբանությունը ցուցում է, որ Սասունը ոչ մի կապ չունի քարերի ձեւի եւ չափսերի հետ: ***Սան***՝ բնիկ հայերեն բառ է, որ բխում է ***Սուն*** ՝ սնուցանել բառից[*3]: **Սան** եւ **Սուն** բառերը՝ թե՛ ուղղակի, թե՛ հոգեւոր իմաստով՝ սնելու, կյանք տալու, սնուցանելու հետ են իմաստաբանվում:

ՀՆԽ՝ (հնդեւրոպ. նախալեզու) *anH- «շունչ, հոգի, արտաշնչում» **(սանսկրիտ՝ a´nila-h, հունարեն՝ a´nemos, գոթերեն՝ uz-anan, հին իսլանդ.՝ andi, լատիներեն՝ anima, հին իռլանդ.՝ ana´l եւ այլն, բոլորն էլ՝ «շունչ, հոգի» իմաստով)**[*4], հայերենում՝ ***u***-ի ավելացումով՝ u+ան = u+անh՝ «շուչ-հոգու» իմաստն ունի *(օրինակ՝ սանակից = հոգեկից)*, որ աղերսվում է նաեւ **արեւի** հետ: Հայերենում **«հոգի»** եւ **«արեւ»** բառերը, նաեւ իմաստների համարժեքության բնույթ ունեն. ***«արեւիդ մեռնեմ = հոգուդ մեռնեմ»:*** Նման արտահայտություն-դարձվածքները բազմաթիվ են հայերենում: Ուրարտերեն՝ ^{D}Ši-u-ni «*արեւի աստված*»[*5], հիթթիթ.՝ šiu-, šiuna-«*աստված*», šiwatt- «*օր*», Ištanu- «*արեւի աստված*», ինչպես նաեւ ՀՆԽ՝ *s(a)wHel-/n-, որ հին անգլ.՝ sunne, անգլեր.՝ sun, գոթեր.՝ sunnō, հին գերմաներ.՝ sunna, գերմ.՝ Sonne եւ այլն, **«արեւ»** իմաստի հետ են աղերսվում, որ բխում է ՀՆԽ՝ ***sut^{h}u-, *seu-*** «ծնունդ տալ» իմաստից[*6]:

«Սան» «հոգի» իմաստով, V դարից ունենք ծիսական ազգակցության՝ ***սան, սանկից, սանեղբայր*** բառերը*[7], որ աղեսվում են ***հոգեւորի*** հետ: ***Սան***-ը եւ ***Սուն***-ը՝ բնիկ հայերեն բառեր են եւ, հնդեւրոպական նախալեզվում ու լեզուներում ունեն նաեւ միեւնույն իմաստով՝ «կաթնագեղձ», «ստինք» հետեւյալ ձեւերը.

հայերեն	ՀՆԽ[*8]	սանսկրիտ	իրանական	հունարեն
Սան→Սուն >	Psn	Stana	fštāna	stḗnion[*9]

*1,- Ա. Աբրահամյան, «Ծիրակացու մատենագրությունը», 1944թ., Երեւան, էջ 349:
*2, - Գ. Ղափանցյան, «Ուրարտուի պատմություն», 1940թ., Երեւան, էջ 193:
*3, - Հր. Աճառյան, «Հայոց լեզվի պատմություն», h. I, 1936թ., Երեւան: Նաեւ տես՝ T. Gamkrelidze & V. Ivanov, նույն աշխատություն, էջ 511: Նաեւ տես՝ Robert S.P. Beekes, "Comparative Indo-European Linguistics", 1995, USA, p. 220:
*4, - T. Gamkrelidze & V. Ivanov, նույն աշխատություն, էջ 388:
*5, *6,- Նույն աղբյուր, էջ 793: Նույն աղբյուր, էջ 590, 511:
*7,- Գ. Վ. Հակոբյան, «Մկրտության ծեսի հետ կապված ազգակցական տերմինները հայերենում», Պատմա-Բանասիրական Հանդես, ՀՍՍՀ Գիտությունների Ակադեմիա, Երեւան, 1988, No. 3 (122), էջ 145, 146:
*8,- ՀՆԽ - Հնդեւրոպական նախալեզու:
*9, - Հր. Աճառյան, «Հայոց լեզվի պատմություն», h. I, 1936թ., Երեւան, էջ 74: Նաեւ տես՝ Robert S.P. Beekes, "Comparative Indo-European Linguistics", 1995, USA, p. 220:

Հայերենում, մի կողմից ***Սանասուն***-ը բացատրվում է որպես սնուցելու՝ «կրծքով սնուցելու», «կաթով սնուցելու», եւ մյուս կողմից՝ «հոգու սնուցման» իմաստներով *(ինչպես վերեւում արդեն ասացինք՝ սանակից, սանեղբայր):* Ուրեմն, «Սասնա Տունը»՝ հավանական՝ «ծծմատուն», «կաթնատուն» եւ «հոգու տուն» իմաստներն է ստանում: Եւ որովհետեւ Սասունը՝ ***Սան- ա - սուն*** է, երկու իրար մոտ, համանման նշանակությունն ունեցող բառերի միասնություն է, ուրեմն առաջինը՝ **սան**-ը, որը միանում է **սուն**-ի հետ ***ա*** շաղկապով, դրված է՝ «**հոգի**» իմաստով, իսկ **սուն**-ը՝ «**սնանել**», սնուցանել իմաստով: Եւ այս վերնագիր-անունը բխում է հենց էպոսի պատումի իմաստից: Չէ՞- որ Ծովինարը խմում է **Կաթնաղբյուրից,** որի հետեւանքով հղիանում եւ ծնում է երկվորյակ դիցերի: Բոլոր պատումներում Կաթնաղբյուրը կենսական ուժ, դիցական գերբնականություն ստանալու հետ է աղերսվում:

Նորից վերադառնալով վերեւում հիշատակված էպոսի վերնագրերի անվանումներին, տեսնում ենք, որ դրանք բոլորը, միանշանակ, արտահայտում են միեւնույն իմաստը:

1) «Քաջանց Տուն»→«Ոգիների Տուն»:

2) «Զոջանց Տուն»→«Մեծանց Տուն»→«Նախնյաց Տուն»:

3)«Սասնա Տուն»→«կաթնատուն»→«Ծիր Կաթնի Տուն»→
→«Ծննդոց»→«Հոգու Տուն» (սրան դեռ կանդրադառնանք)**:**

4) «Սասնա Ծռեր»→ «Մեծ Ոգիներ»→ « Շիտակ, արդար Ոգիներ»:



Արեւի եւ Լուսնի շավիղներ:
Լուսնի հարավ. մակած→ ♍
Հյուսիսային. մակած→♋

«Ծուռը»՝ էպոսում ներկայացված է որպես արդար, բարոյապես շիտակ, ուղիղ իմաստներով: Այսինքն, աշխարհն անարդար ու կեղծ է, իսկ աշխարհի նկատմամբ հերոսները ծուռ են՝ այսինքն շիտակ, արդար են: Հայկական էպոսում սա *արտաքին* իմաստ արտահայտող բացատրություն է, որ միչեւ այժմ հասկացվել է միայն բառացի իմաստով: Սակայն հայկական հնագույն էպոսը ճշգրիտ աստղագիտական երեւույթների գաղտնի իմաստներ է պարունակում, եւ «ծուռը» նաեւ ***կորի*** նշանակությունն ունի, որ արեւի ու լուսնի ուղեծիր-արահետների հետ են աղերսվում ***(արեւի եւ լուսնի արահետների, դրանց հանգուցային կետեր՝ մակածների, ինչպես նաեւ Precession երեւույթի մասին տես «Աստղագիտություն» բաժինը):*** Էպոսում, երկվորյակ դիցերը մեկ երկնքում հասնում են արեւին, մեկ անդրաշխարհի հրեշների հետ են մենամարտում:



Լուսնի մակած→ ♋
Արեւի մակած→ ♈
Արեւի եւ Լուսնի շավիղներ

«Ջոջանց Տուն»-ը որպես՝ «Մեծանց Տուն», «Նախնյաց Տուն», նույնպես լիովին իմաստաբանվում է որպես նախնիների՝ ***«հոգեվոր պրոտոտիպերի տուն»*** նշանակությամբ:

Սանատուն-ից բխած՝ «սնանող Կաթնաղբյուր» կամ «հոգեսուն» իմաստներն աղերսվում են «Ծիր Կաթնի» հետ, որի մասին բազմաթիվ են հայկական հնագույն ավանդապատումները:*1

Ուրեմն, «Սասնա Տուն»→«Կաթնաղբյուր»→«Ծննդոց»→«Շունչ-հոգու Տուն»→«Ջոջանց Տուն» բոլոր անունները ցուցում են՝ «***հոգեւոր սկիզբ***» կամ «***դիցական արարման տուն***», «***հոգետուն***» միեւնույն իմաստը: Առաջ ընկնելով ասենք, որ հայերեն լեզվում **ՀՈԳԵՏՈՒՆ** է կոչվում մարդու գլխի վերին գագաթամասը, որի մասին դեռ կխոսվի :

Ջուգահեռներ տանելով հնդկական՝ «Ռիգ-Վեդա»*2, եբրայական «Գիրք Ծննդոց», հունական՝ «Աստվածներ եւ հերոսներ», իրանական՝ «Ավեստա» եւ այլն, հնագույն էպիկական պատումների հավաքական անվանումների հետ, պետք է կարծել, որ հայկական էպոսը նույնպես պետք է- որ ուներ դիցաբանական պատումին համապատասխան անվանում: Ըստ իս, հնում էպոսն ուներ մեկ վերնագիր՝ մեկ անվանում, որը պետք է որ աղերսվեր գոյաբանական աշխարհի, երկնքի եւ աստեղատների ծննդյան, արարման հետ:



Երկրագնդի առանցքի տատանումով կենդանակերպ աստղատներով «անցումը», այսօրվա աստղագիտության մեջ կոչվում է՝ *առաջրնթացության երեւույթ: Յուրաքանչյուր աստեղատան մեջ՝ մոտ 2160* տարի, իսկ 12 աստղատներով անցումը՝ 25800-25920 տարի, կոչվում էր տիեզերական մեծ տարեշրջան:

Եւ, քանի-որ, ***Սասուն→Սանասուն*** անվանումը առավել հակիրճ եւ իմաստավորված է որպես՝ ***«շունչ-հոգու բխում»***, ապա հնարավոր է, որ «Սասնա Տուն» դիցաբանական հավատամքէպոսը կոչվել է «Աստվածային շնչի տուն» որն է՝ «Սասնա Տուն» («The House Of Divine Breath») անունով:

Ինձ միշտ հիացրել, բայց հատկապես զարմացրել է, թե ինչո՞ւ, ինչպե՞ս, ի՞նչ հիմքով է Մեսրոպ Մաշտոցը կամ գուցե Սահակ Պարթեւը «Բիբլիա»-ն, որ բառացի թարգմանվում է՝ «Գիրք», թարգմանել որպես՝ Աստծո շունչ,- ***«Աստվածաշունչ»***: Ինչո՞ւ հենց՝ «Աստված-ա-շո՛ւնչ»: Կարծում եմ, Հայաստանում, երբ քրիստոնեությունը ներմուծեց հին հեթանոսական հավա-

---

*1, - Արամ Ղանալանյան, «Ավանդապատում», 1969թ., Երեւան:

*2,-Rig Veda- սրբազան գիտելիք. հայերենով հակադարձ կարդալու դեպքում՝ «դիցական գիր» →ա-դեւ(ի) - գիր: Տիվ < դիվ < դեւ = օր, երկինք, աստված:
Սանսկրիտ՝ dya´uh, di´va = հայերեն՝ դի՝ «աստված», դի = տի, տիւ՝ «օր», ցերեկ «օր»՝ գիշերվա հակառակը, T. Gamkrelidze & V. Ivanov, նույն աղբյուր, էջ 692-693:



Աստեղային հոգենտուն



հոգենտուն

տամքի հետ կապված բազմաթիվ ծեսեր, երգարվեստի տաղեր, ճարտարապետական մոտեցումներ, այնպես էլ հին հավատամքի՝ «Սասնա Տուն» հոգեւոր ավետարան-պատումի անուն-վերնագիրն է վերախմբագրված ու ներմուծված, որպես նոր կրոնի ավետարանների համար հավաքական վերնագիր*[1]: Հին հեթանոսական տաճարները քանդելը կամ վերափոխելով, դրանց տեղը քրիստոնեական եկեղեցի հիմնելու մոտեցումը, կարծում եմ, կիրառվել է նաեւ հին հավատքի ավետարանի հավաքական վերանագրի առումով: ***Նոր կրոնի*** Սուրբ Գրքի՝ «Աստվածաշունչ» վերանագիր-անունը, ***հին հավատքի*** Սուրբ Գրքի վերնագիրի փոխառությունն է:

<u>Հոգու Տուն</u> կամ՝ ***<u>հոգենտունը</u>*** հնագույն կանոնակարգերում աղերսվում է տիեզերական 18 եւ 36 համաստեղությունների, հյուսիսային բեւեռի աստեղատան հետ, ինչպես նաեւ՝ հնդկական Յոգա համակարգում, հնագույն ժամանակներից մեզ հասած 7 չակրաների ուսմունքում, մարդու գանգի վերեւի մասում՝ ***<u>Սահասրարա</u>*** կոչվող հազարաթերթիկի հետ (**հայկական ճարտարապետության մեջ, տանիքի վեց շարքով ութաթեւ-ութանկյուն բացվածքը կոչվում է՝ *<u>հազարաշեն</u>***):

Չակրաներով, ողնաշարի «թաքնված օձագալար» հուր-էներգիան դեպի վեր՝ գլխի գագաթամասը բարձրացնելու եւ ո՛չ շոշափելի, այլ՝ հոգեւոր ոլորտների հետ «հարաբերվելու» տեխնիկան, հիմնված է բրահմայական աշխարհճանաչողական՝ տիեզերական արարչության հավատամքային համակարգի վրա, որը նախահնդեւրոպական ժամանակներից մեզ հասած ուսմունք է: Ըստ հնագույն կանոնակարգի, ***միկրո տիեզերքը***՝ մարդը, եւ ***մակրո տիեզերքը***՝ լոգոս-մարդը *(12 , 36 աստղատները նրա տրանսֆորմացիայի ատրիբուտներն են)* համանման են*[2]:

*1, - Հայաստանում քրիստոնեությունը հին հավատամքի հետ կապված ամեն ինչ ոչնչացրեց, փորձելով նույնիսկ նրա հիշողությունն իսկ ջնջել, բայց ժողովուրդը չմոռանալով իր հնագույն կրոն-հավատամքը, որն այսօր հայ ժողովրդին հայտնի է որպես «Սասնա Ծռեր» էպոս, հազարամյակներ շարունակ որպես դյուցազնագրույց պատմելով իր հին հավատամքի կաղապարը՝ պատումը, այն բերել ու հասցրել է մինչեւ 19-րդ - 20-րդ դարեր: Հայ հնագույն էպոսի պահպանման եւ փոխանցման համար մեծ կարեւորություն են ունեցել այն հայ համայնքներն ու գյուղերը, որոնք մինչեւ 14-19-րդ դարեր, քողարկված դավանել են արեւապաշտական հավատամքը:
Հայոց եկեղեցու ծիսագիրքը կոչվում է՝ «Մաշտոց», սա հայոց հեթանոսական ծիսագրքի անվանումն է, որ նույպես հին հավատամքից փոխառնված, ներմուծված է:
*2,- Մինչեւ այժմ, հայկական կենցաղում, մի քանի ամսական երեխայի գանգի վերին, փափուկ մասը կոչում են՝ ***հոգենտուն:***

«Սասուն» տեղանքը եւ «Սասնա տուն» հավատամքային էպոսը:

Ըստ հայկական «Սասնա Ծռեր» կամ «Սասնա տուն» ընդհանրական վերագրով հայտնի էպոսի, Սասունը կամ Սասնա բերդաքաղաքը կառուցում են երկվորյակ եղբայրներ՝ Սանասարն ու Բաղդասարը: Գարեգին Սրվանձտյանի մատնանշած զուգահեռը՝ հայկական էպոսի «Սանասար եւ Բաղդասար» առաջին ճյուղում առկա էպիզոդի *(երկվորյակ եղբայրները սպանելով իրենց հայրացուին փախչում են Հայաստան)* եւ Հին Կտակարանում Սինահարիմ թագավորի հետ կապված էպիզոդի*[1] նմանությունները՝ բացահայտ են *(որից եւ բխում են Մ. Խորենացու եւ Թովմա Արծրունու հիշատակումները):* Սակայն, Ասորեստանի թագավոր Սինահարիմի *(մ.թ.ա. 701-681թ.)* իր որդիներ՝ Ադրամէլեքից եւ Սարասարից սպանվելու ու տղաների Հայաստան փախչելու Հին Կտակարանում տեղ գտած պատմությունը կրոնական միստիցիզմի, եւ ոչ թե պատմական եզրով վերաբերմունքի արդյունք է: Այս բաժնի սկզբում մենք արդեն ընդգծել ենք, որ Հին կտակարանում տեղ գտած այս պատմությունը հավանական է, որ վերախմբագրված փոխառություն է, ինչպես շումերական արարչության, Օձի ու Ադամ-Եւայի, Նոյյան ջրհեղեղի մասին պատումներն են փոխառությամբ «ներմուծվել »Հին Կտակարան:

Փաստերը ցուցում են, որ Հայաստանում, ***Սասսու-Սասուն*** նույն անունով, նույն տեղանքի մասին մենք ունենք հիշատակություն, որ թվագրվում է մ.թ.ա. 736թ., Ասորեստանի թագավոր Տիգլատպիլասարի հուշարձան արձանագրության մեջ, որտեղ Սասունը հիշատակվում է որպես ***Սասսու*** քաղաք*[2]: Փաստերի համադրումը պարզում է, որ մ. թ. ա. 736 թվականին Ասորեստանի Սինահարիմ թագավորը *(մ.թ.ա. 701-681թ.)* դեռ չէր ծնվել, երբ ***Սասսու*** քաղաքն արդեն կար եւ այնքան կարեւոր նշանակություն է ունեցել, այսինքն չի եղել փոքրիկ գյուղ կամ բերդ, որ նշվել է ասորական թագավոր Տիգլատպիլասարի հուշարձան արձանագրության մեջ: Ուրեմն, իր երկու որդիների կողմից ասորական Սինահարիմ թագավորի սպանությունը , եւ նրա որդիների Հայաստան փախչելով Սասուն բերդաքաղաք կառուցելը, մեղմ ասած չի «տեղավորվում» պատմական ժամանակագրության համակարգում: Մյուս կողմից, «Սասնա Ծռեր» էպոսը եւ հատկապես Սանասար-Բաղդասար երկվորյակների մասին պատումը, նույնանում է ընդհանուր հնդեւրոպական հավատամքային պատումներում երկվորյակների մասին պերսոնաժների հետ, որոնց ժամանակագրությունը խորանում է մինչեւ նախահնդեւրոպական ժամանակներ: *«Աստվածային երկվորյակների մասին միֆական պատումը, որտեղ երկվորյակները գերագույն աստծո կամ արեւի աստծո որդիներն են, խորանում է մինչեւ նախահնդեւրոպական հնագույն ժամանակներ: Այս միֆական պատումը հայտ-*

---

*1, - «Հին Կտակարան», Դ թագավորաց. գլ. 19, 36-37, Ես. ԼԷ, 38:

*2, - Գ. Ղափանցյան, «Ուրարտուի պատմություն», 1940թ., Երեւան, էջ 193:

նաբերվել է համարյա բոլոր հնդեւրոպական հնագույն հիմնական տրադիցիաներում, որտեղ ոչ միայն կրկնվում են միեւնույն մոտիվները, այլ նաեւ առկա է հերոսների անունների համատեղությունը, որը եւ հաստատում է այդ մոտիվների եւ պերսոնաժների բնույթը որպես՝ նախահնդեւրոպական»[*1]:

Այսինքն, այստեղ տարրական տրամաբանությունն իսկ հուշում է, որ երկվորյակների մասին հնդեւրոպական հնագույն հավատամքային պատումը հարմարեցվել է՝ ասորական Սինահերիմի իր երկու որդիների կողմից սպանվելու եւ նրանց Հայաստան փախչելու գուցե «պատմական դեպքի» հետ, եւ վերախմբագրմամբ տեղավորվել է Հին Կտակարանում: Որ այս նույն երկվորյակները՝ ***աստվածներ*** են, կա նաե՛ւ Հին Կտակարանում՝ ***«... Մեփարուիմի աստվածներ Ադրամէլեքի եւ Անամելէքի համար»***[*2]: Հնագույն հավատամքային պերսոնաժները վերախմբագրելով Հին Կտակարան «խցկելու» փաստերը բազմաթիվ են: «Սասնա Ծռեր» էպոսի եւ Հին Կտակարանի որոշ էպիզոդների նմանությունների առումով, դեռ խորհրդային տարիներին, Լեւոն Մկրտչյանի տեսանկյունը ճշտում է այս խնդրի հետ կապված մոտեցման անկյունը: Լեւոն Մկրտչյանը «Սասունցի Դավիթ» գրքի առաջաբանում[*3] ըդգծում է «Սասնա Տուն» էպոսի շատ կարեւոր մի պատումի մասին[*4] եւ եզրակացնում է, որ *«Հեթանոսական Հայաստանում, հավանաբար, գոյություն է ունեցել բիբլիական տեքստից անկախ սեփական մի առասպել կամ դյուցազնական մի հեքիաթ հայոց երկրում Սանասարի ու Ադրամելիքի (Բաղդասարի) վարած կյանքի ու կատարած սխրանքների եւ նրանց տոհմի հովանավոր արծվի մասին»*[*5]:

Նախ, արժանավույնս գնահատելով Լեւոն Մկրտչյանի հայկական էպոսի նկատմամբ ոչ ավանդական մոտեցումը, պետք է ընդգծել, որ «Սասնա Ծռեր» էպոսում բազմաթիվ են հնագույն հեթանոսական կոսմիկական հավատամքկարգականոնին վերաբերող ատրիբուտներն ու դարձվածքները:

1-ին, սկսենք նրանից, որ ***Արծիվը***՝ որպես Սանասար-Բաղդասարի եւ նրանց տոհմի ***հովանավոր*** առկա է «Սասնա Ծռեր» էպոսի բառիս բուն իմաստով՝ բոլոր

---

*1,- T. Gamkrelidze & V. Ivanov, "Indo-European & The Indo-Europeans", 1995, NewYork, p. 680.
*2,- Հին Կտակարան, Թագավորաց Դ, գլ. 17, 31:
*3,- «Սասուցի Դավիթ», 1989թ., Երեւան, էջ16:
*4,- Ասացող Ֆարման Թովմասյան, գրի է առնվել 1969թ.: Ասացողը ծնվել է 1894թ., Սասունի Բագնոտ գյուղում: «Սանասարը սպանում է նախ «երկնային» վիշապին, որն իրենով ծածկել էր արեւը՝ քաղաքի ողջ երկինքը, իսկ այնուհետեւ սպանում է ջրի ակունքին տիրացած վիշապին եւ, վերջապես՝ այն վիշապին, որը բարձրանում էր ծառը՝ խժռելու անօգնական արծվիկներին: Եվ մայր արծիվը տարածում է թեւերը քնած Սանասարի վրա (այս մանրամասնությունները արձանագրված է նաեւ Խորենացու «Պատմության» մեջ), որպեսզի հով անի: Դրանից հետո, արծիվը Սանասարին դուրս է բերում ստորգետնյա թագավորությունից»(մեջբերումը՝ Լ. Մկրտչյանից, «Սասուցի Դավիթ», Երեւան, 1989թ., էջ15:): Տես՝ «Սասունցի Դավիթ, նոր պատումներ», Երեւան, 1977թ., էջ 326, 335-341:
*5,- «Սասուցի Դավիթ», 1989թ., Երեւան, էջ16:



Անգգի, այսօրվա Կարապ անունով (Cygnus) հայտնի հյուսիսային համաստեղությունը:

Նկարը՝ Ա. Մովսիսյանի «Հայկական Մեհենագրություն» գրքից է, Երևան, 2003թ.:«Աստված» գաղափարագրով եւ արծվի պատկերով (որը երբեմն հանդես է գալիս օձի հետ մարտնչելիս կամ ճյուղը կլոցած) բազմաթիվ կնիքներ են հայտնաբերվել մի շարք հնավայրերից (էջ՝ 109):

պատումներում: Էպոսի հերոս-աստվածությունների աջ բազուկին իջած ***Խաչ-Պատարագի*** երկնային նշանը՝ երկնային հոր հովանավորության մասին է, որ աղերսվում է երկնքում ***Անգղի,*** այսօրվա ***Cygnus -Կարապ*** համաստեղության հետ: ***Պատարագ խորհրդաբանական*** նշանը, որն իջնում է էպոսի հերոսների աջ բազուկին, նախահնդեւրոպական **Pat ér** -ը՝ հայերեն «հայր»-ն է[*1], որ մի կողմից աղերսվում է ****ptr-*** «հայր»[*2], մյուս կողմից՝ հին հոլ. e´n, հին վելշ. eterin, «թռչուն, թռչող» իմաստների հետ[*3]: Նախահնդեւրոպական **[*P^{h}et^{h-}]**[*4] արմատը, որից սանսկրիտով՝ ***patará-,*** հիթթիթերեն՝ ***pattar,*** հայերեն՝ ***t'ir*** եւ այլն[*5], աղերսվում է «թռչող», «թեւ» իմաստներին եւ սերտորեն կապված է հնդեւրոպական միֆոլոգիաների թեւավոր աստվածությանը: ***Խաչ-Պատարագին-ի*** վերջածանց ***ազի*** -ին, կամ ***ասի*** -ին՝ նախահընդեւրոպական [*azdo] ձեւից հնդեւրոպական լեզուներում ներկայանում է՝ «այրել, այրող» իմաստով, որ աղերսվում է շումերական՝ iz, azaz «կրակ»-ի հետ[*6]:

Փաստորեն, բառի ստուգաբանությունը ցուցում է, որ էպոսի այս միստիկ խորհրդանշանը ա) ***քառաթեւ խաչ*** է, բ) ***հայր*** է (նախահնդեւրոպ.՝ **Pat ér**), գ) ***թռչող*** է, (նախահնդ.՝**[*P^{h}et^{h-}]**) ***եւ*** դ) ***հրեշ*** բնույթ ունի:

2-րդ, ըստ «Սասնա Ծռեր» էպոսի արծվի մասին վերեւում բերված պատումի, բառացիորեն ընդգծվում է, որ արծիվն է Սանասարին դուրս բերում ստորգետնյա թագավորությունից: Մ.թ.ա. II հազարամյակում Հայասա երկրի գերագույն աստվածությունը՝ ***անգղ-արծվի*** սիմվոլով, ***անդրաշխարհի Ներգալ*** աստվածն էր: Նրա աստեղատունը՝ ***Անգղ,*** այսօրվա՝ ***Կարապ-Cygnus*** աստեղատունն է: Այս աստվածությունը՝ Ներգալը,- *«անդրաշխարհ է գնում Էրրա անվամբ, իսկ այնտեղից գալիս է **Ներգալ** անվամբ»*[*7] *(մանրամասն տես՝ Գագիկ թագավոր բաժինը):* Փաստորեն, հայկական հնագույն հեքիաթներում եւ «Սասնա Տուն» էպոսի պատումներից մեկում, արծվի կողմից Սանասարին ստորգետնյա թագավորությունից դուրս բերելն ունի նաեւ աստղագիտական իմաստ եւ նշանակություն:

---

*1,- Հր. Աճառյան, «Հայոց լեզվի պատմություն», Երեւ., 1940, մաս I, էջ 107:
*2, *3, *4, *5,- T. Gamkrelidze & V. Ivanov, "The Indo-European & The Indo-Europeans", 1995, New York, p. 455n (տես՝ տողատակ #53), 455, 528.
*6,- Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, h I, էջ 82:
*7,-Ա. Դավթյան, «Հայոց աստղ. դիցաբանություն», 2004թ., էջ 207-209:



Ներգալ-Էրրա Հայասա երկրի գերագույն աստծվածության պատկերանշանը. անգղի եւ հովազի գլուխներով: Վերեւում կիսալուսնաձեւ նշանը ***Հայասա*** երկրի գերագույն աստվածության սիմվոլն է, ուրաթեւ աստղը բնորոշում է նրա՝ «ամբողջ, ամենայն» լինելու սկզբունքը եւ 360⁰ պտույտը:
(նկարը վերցված է Ա. Դավթյանի «Հայոց աստղային դիցաբանություն» գրքից):

Փաստորեն, «Սասնա Տուն» էպոսում երկվորյակների հովանավորը կամ հովանավորող անտեսանելի հայրը ոչ թե Հին Կտակարանի Սենեքերիմ-Սինահարիբան է *(որը դեռ չէր էլ ծնվել, երբ Սասսու-Սասուն քաղաքն արդեն կար)*, այլ՝ մ.թ.ա. II հազարամյակի ***Հայասա երկրի*** գերագույն աստվածությունն էր՝ Էրրագալ-Ներգալը, որի պաշտամունքը հին հայերն ունեցել են Հին Կտակարանի պատումները գրի առնվելուց*(VI-V դդ. մ.թ.ա.)* առնվազն հազար տարի առաջ:

Աշխարհով մեկ սփռված հնագույն հավատամքային պատումներում գերագույն աստվածության սիմվոլ-ատրիբուտը միֆական թռչունն է՝ ***անգղ, արծիվ, կարապ, հավք, աքլոր*** եւ այլն: Օրինակ, եգիպտական համակարգում, մանիֆեստացիայի աստվածությունը՝ եգիպտական Ատումի ուղեղից ծնված միֆական թռչունն է՝ **Hikê** -ն է*[1] *(հայքսոյան շրջան):* Հայկական էպոսում՝ Գագիկ թագավորը > **[*ĝʰagʰa-],- «Անգղ-կարապ»** աստղատունն է. ըստ Մ. Խորենացու՝ ***Հայկն*** է, որն իր թոռ Կադմոսին դնելով իր առաջին տանը ***չվեց*** հյուսիս: Բրահմայական համակարգում 7-րդ չակրան՝ հազարաթերթիկ-լույսն է՝ «ամբողջը», որի սիմվոլներն են՝ «շրջանագիծը» կամ «գունդը»: Իսկ 6-րդ՝ ***Աջնա*** չակրայի սիմվոլը ***«Կարապն»*** է: Վեդայական Բրահմին ուղեկցող նրա ատրիբուտը՝ ***Համսա թռչունն*** է: Զեւսը ***կարապի*** տեսքով հանդիպում է աստվածուհի Լեդային, որը հղի մնալով ծննդաբերում է ***երկվորյակներին՝*** Կաստոր եւ Պոլուքս աստղերին եւ այլն:

«Սասնա Տուն» էպոսի պատումներում, երբ երկվորյակները տեղանքն ընտրելով կառուցում են Սասուն բերդաքաղաքը, նրանց պապը՝ Գագիկ թագավորը ***քսան տուն*** է նվիրում Սանասարին եւ Բաղդասարին: Սա թաքնագիտական կոդ է: Թագավորը հավանաբար նվիրում է այն ինչ-որ ուներ: «Սասնա Տուն» էպոսի պատումներում, պատանի երկվորյակները երկրից-երկիր դեգերելով, երբ կանգնում են որեւէ թագավորի առջեւ, ապա յոթ անգամ երկիր են պագանում եւ ***ութի վրա ծնրքները կանթում, կանգնում են:*** Ուրեմն, թե՛ Սանասարն է միտում ***ութ*** թիվը, թե՛ Բաղդասարը՝ 2 x 8 = 16: Եթե Գագիկ թագավորի նվիրած ***քսան տուն*** թվին գումարենք երկվորյակների՝ 8 +8 = **16** թիվը, ապա կստանանք «ամբողջի»՝ **36 տուն > 36 աստեղատուն = 360⁰ = «3600 թիվ գաղափարը»**, որը շումերական ժառանգություն է: Միջագետքյան մ.թ.ա XI դդ. թվագրվող MUL.APIN աստղացանկում, առավոտյան արեւի հետ բարձրացող աստեղատները 36-ն են, նրանցից 12-ը

*1, - Jeremy Naydler, "Temple Of The Gosmos", 1996, USA, p. 124.



Արեւի եւ Լուսնի շավիղներ:
Լուսնի հարավ. մակած → ☊
Հյուսիսային. մակած → ♈

ընկնում են արեւի եւ լուսնի ուղեծրերի ճանապարհին:

Երկրորդ վիշապին՝ ***«մեկ գոմշի չափ բարձր, հինգ գոմշի չափ էրկեն»***, որը նույնպես ջրի՝ կյանքի, «խոչընդոտ» էր, եղբայրները սպանում են երկու կլոր ջաղացքարերով (1>8 համակարգ):

«Էրկու կլոր քար կա, առնենք, էրթանք.
Էրկուսի մեջն էլ ծակ է, կը մտուցենք մեր թելքեր,
Կ'երթանք: Գնացին քարեր առին» [1]:

Կլոր ծակերով քարերն աղերսվում են շրջանաձողակի հետ: Սանասարը եւ Բաղդասարը կոչվում են՝ ***«ծռեր»***: Ժողովրդական գուսան-բանասացները չհասկանալով, սա կապել են՝ «ուղիղ, շիտակ բնավորություն» իմաստի հետ, սակայն էպոսում ***«ծուռը» կորի*** իմաստն ունի եւ աղերսվում է ***արեւի եւ լուսնի ուղեծրերի*** կորածեւ, էլիպսածեւ ընթացքների հետ, որ տեսողական պերսպեկտիվայի համաձայն, անզեն աչքի ընկալում է. օրինակ՝ արեւի կորածեւ ծագն ու մայրամուտը *(մանրամասն տես՝ «Երկվորյակներ» բաժինը):* Կամ՝ որպեսզի «երկվորյակները», ըստ էպոսի պատումների, սպանեն ***գոմշավիշապին,*** նրանք որպես՝ արեւ եւ լուսին, պետք է անցնեն կորաշրջան, որ ***արեւի ու լուսնի ուղեծրերն*** են: Սկսելով իրենց ճանապարհը, մ.թ.ա. V-IV հազարամյակում, «Երկվորյակները»՝ որպես արեւի եւ լուսնի ուղեծրեր, ֆիկսում են ***գարնանային գիշերահավասարը*** «Յուլի» համաստեղությունում *(գարնանամուտ, հեթանոսական նոր տարի, Մարտ 21),* եւ ***աշնանային գիշերահավասարը*** «Կարիճ-Աղեղնավոր» համաստեղության միջնամասում: Այսինքն, «Հիդրա-վիշապ» համաստեղության պոչամասից մինչեւ վիշապի գլուխ: «Երկվորյակներից» ***մինչեւ*** «Աղեղնավոր» ***վեց*** համաստեղություններով ընթացքը Precession-ի երեւույթով՝ 12960 տարի է, որ տիեզերական մեծ տարվա կեսն է (25920 : 2 =12960):



Եզրակացություն

«Սասնա Տուն» տուն էպոսը կոսմիկական բնույթով, արարչության մասին հնագույն հավատամքային կարգակառույց է: Էպոսի առաջին՝ «Սանասար եւ Բաղդասար» ճյուղի սկիզբը նման է, սակայն որեւէ էական եւ հիմնավոր կապեր չունի Հին Կտակարանում տեղ գտած պատմական Սինահերիբա թագավորի եւ նրա որդիների մասին պատմության հետ: «Սասնա Ծռեր» հնագույն էպոսը շատ ավելի հին է եւ աղեսվում է ***Հայասա երկրի*** հնագույն հավատամքի հետ:

---

*1,- «Սասունցի Դավիթ», 1989թ., Երեւան, էջ 143:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Դուալիստական սկզբունքը հնագույն հնդեւրոպացիների հավատամքում եւ դրա անդրադարձը նրանց հասարակական կառուցվածքում*[1]:



Ամբողջը՝ «բովանդակը»՝ որպես երկու կնճռերի միասնություն:

Վյաչեսլավ Իվանովը եւ Թովմաս Գամկրելիձեն համադրելով թե՛ իրենց եւ թե՛ բազմաթիվ այլ գիտնականների տասնյակ տարիների ուսումնասիրությունների արդյունքները, ցուցում են, որ նախահնդեւրոպական հնագույն հավատամքի հիմքում ընկած էր երկակիության (դուալիզմի) սկզբունքը: Նույնիսկ ֆլորայի ու ֆաունայի կլասիֆիկացիայում առկա է երկակիության բնույթը: Եւ հնագույն հնդեւրոպացիների հասարակությունը ձեւավորված, կազմակերպված էր այս սկզբունքի համաձայն: Հնագույն հավատամքը, կրոնական կոնցեպտները եւ միֆոլոգիան, իրենց ուղղակի անդրադարձով ազդում-ձեւավորում էին ցեղային հասարակության ներքին կառուցվածքային հարաբերությունները՝ ամուսնական օրենքներից մինչեւ սոցիալական պարզ շերտավորումների փոխհարաբերություն եւ իշխանության ժառանգականություն:

Նախահնդեւրոպական հավատամքում ցեղի հիմնադիր նախահայրերը միֆական երկու թագավորներն էին *(աստվածներ կամ կիսաաստվածներ.-ընդգծումը մերն է),* եւ այս հավա-

---

*1 – T. Gamkrelidze & V. Ivanov, “Indo-European & the Indo-Europeans” , p. 679.

Վերեւում այս ենթավերնագիրը Թ.Գամկրելիձեի եւ Վ.Իվանովի աշխատության մեջ շրջված՝ հակառակ իմաստով է ներկայացված,- «Դուալիստական սկզբունքը հնդեւրոպացիների հասարակության կառուցվածքում եւ դրա անդրադարձը նրանց ծեսերում եւ միֆոլոգիայում»: Նման ձեւակերպման հետ մենք ունենք սկզբունքային «փոքր» անհամաձայնություն, հավատալով, որ վերոհիշյալ հեղինակների (որոնց գիտական մեծարժեք ուսումնասիրությունները բարձր գնահատանքի են արժանի) նման մոտեցումը մարքսիստական միագիծ՝ «հասարակական կեցությունն է որոշում հասարակական գիտակցությունը» ժամանակի պարտադրված կարգախոսի սահմաններում մնալու հանգամանքով է միայն պայմանավորված: Ամեն դեպքում հարկ համարեցինք ճշտել «մոտեցման անկյունը». հնագույն հավատամքը («միֆոլոգիան») ոչ թե հասարակության կառուցվածքի անդրադարձում-արդյունքն է, այլ հակառակը՝ հավատամքային «միֆոլոգիայից» բխող սկզբունքների համաձայն է ձեւավորվել հնագույն հնդեւրոպացիների հասարակական կառույցը: Սակայն լիարժեք կիսում ենք վերոհիշյալ հեղինակների այն կարծիքը, ըստ որի, «սկզբունքները» այս երկուսում՝ մեկը մյուսի փոխադարձ անդրադարձումներն են: Այսինքն, հնագույն հնդեւրոպացիների հասարակության կառուցվածքում առկա սկզբունքների հիմքով, կարելի է հասկանալ եւ վերականգնել հնագույն հավատամքի («միֆոլոգիայի») ներքին փոխհարաբերությունները եւ ընդհանրական պատկերը: Կոնկրետ դեպքում՝ «Սասնա Տուն» հնագույն հավատամք-էպոսը:

«Ամբողջը» որպես երկու կեսերի՝ խավարի եւ ճերմակի հակադրություն՝ իրենց կենտրոններով:

տամքային սկզբունքով, վաղնջական ժամանակների հնդեւրոպական ցեղը միատեղ պատվում էր ցեղի երկու տոհմերի առաջնորդներին*[1]: Օրինակ. հին հիթթիթները ծիսական արարողության ժամանակ, զենք կրելու տարիքի տղամարդիկ, բաժանվում էին երկու՝ ՀԱԹԹԻ եւ ՄԱՍԱ խմբերի, որտեղ առաջինում կրում էին բրոնզե, երկրորդում՝ եղեգնյա զենքեր: Ծիսակատարության ընթացքում ՀԱԹԹԻ-ի մարդիկ հաղթում էին ՄԱՍԱ-ի մարդկանց եւ գերիներին նվիրում աստծուն:

Սանսկրիտ էպոսում Կաուրավաս եւ Պանդավաս արյունակից երկու կլան տոհմերն իրար դեմ պատերազմի են ելնում, որոնք համապատասխանաբար՝ խորհրդանշում են «Արեւի» եւ «Լուսնի» դինաստիաները*[2]:

Ամուսնական հարաբերություններում, կնոջ, աղջկա փոխանակություն էր կատարվում ցեղային հասարակության այս երկու արյունակից տոհմերի *(կլանների)* միջեւ: Ամուսնական զույգը, փաստորեն, համարվում էր մեկ ամբողջի ***երկու «կեսերի» միություն:*** Հնդեւրոպական լեզուներում ***«կես»*** տերմին-բառի իմաստաբանական կառուցվածքը ներկայանում է նույն կերպ՝ ***«մեկ ամբողջի երկու կեսեր»*** իմաստով*[3]: Ուրեմն, հների՝ հնդեւրոպացիների մոտ, այս դուալիզմը այնքան էլ «մաքուր դուալիզմ» չէր, այլ խորքում ուներ «երրորդությունը», այսինքն, «երկակիություն մեկ ամբողջում» սկզբունքով: Նախհնդեւրոպ. լեզ.՝ *pʰ(ol)- «զույգ, կես», *t'wei-pʰlo- «կրկնված, երկու կես» որոնք առնչվում են՝ *-tʰo - «մեկ ամբողջի» հետ*[4]:

Այս առումով բացառիկ հետաքրքրական են հայերեն ***u'կեսուր***, ***u'կեսայր*** եւ ***ԱՄ+բողջ*** բառերը: Հայերենի բարբառներում՝ u'կիս+ուր (կես մայր) եւ u'կեսրայր (կես հայր), որտեղ այր>հայր, ուր>մայր, եւ ՈՒՐ = ՈՒՐՀԻ-ն հին աստվածության իգական «կեսն» է (Ղ. Ալիշան, Հին հավատ, էջ 199): *Այս՝ ՈՒՐ-ին գումարվել է «կես»-ը, որ՝ ըստ Մառի, Krs արմատից *կերս > *կեյս > կէս, ըստ Pedersen-ի՝ ԿՈՅՍ, ԿԻՑ ձեւերից սերված* ***երկու, կրկին*** *բառերից է, ըստ Karst, Յուշարձ.-ի՝ շումերական gas, kas «երկու», kasar «կեսը», kas «կտրել, կիսել» բառերից է*[5]:

Երկինքը տեսողական պերսպեկտիվայով որպես՝ ամբողջ՝ «բովանդակ», որպես՝ Ծիր Կաթնի արական՝ «հավք-Կարապ», եւ իգական՝ «հովազ-Սիրիուս»,- ամբողջ՝ որ «կես + կես» է իրենց կենտրոններով:

*1,*2,*3,*4, – T. Gamkrelidze & V. Ivanov, "The Indo-European And The Indo-Europeans", 1995, NY, p. 679-682, 682n:

*5,- Հր. Աճառյան, «Հայերենի արմատ. բառարան», h. II, 1973թ., էջ 582:

Փաստորեն, ընտանիքի գլուխը հայերենում ***«ուր»***-*ի* եւ ***«այր»***-ի միությունն է:

Հնագույն մոտեցմամբ, բինարիզմի հիմքով է կազմված նաեւ ժամանակը որպես երկու՝ օր ու գիշերվա միությամբ մեկ ամբողջություն: ***Օրը*** ներկայանում է որպես ***արական***, ***գիշերը՝ իգական*** հիմքով: Հայերենում ***արեւը մայր մտավ, մայրամուտ*** եւ համանման հնագույն արտահայտությունները, փաստում են, որ ***ժամանակի հնագույն միավորը՝ «օրը»,*** ներկայանում է ***արական*** եւ ***իգական*** երկու կեսերով:

Հների մոտ բինարիզմի հիմքով է նաեւ երկնքի հետ առնչվող պատկերացումը: Կենդանապերպ 6 + 6 կամ 18 + 18 աստեղատներով, մեկ տարվա մեջ, երկնքի երկու կեսերով մեկ ամբողջությունը ներկայանում է որպես երկու կեսերի միություն: Միջագետքյան MUL.APIN-ի աստեղացանկում, տարին որպես 36 աստեղատների անցում, ներկայանում է երկու կեսերով՝ 36 = 18+18 աստեղատներով*[1]:

Հայերեն *ԱՄ բառը՝ ներկայանում է որպես՝ ***«տարի»,- ամեակ*** եւ ***«ամբողջ», «բովանդակ»*** իմաստներով: Հայերեն՝ ամեակ > ԱՄ ի-***ակ, «ակն»***-ը հայերենում՝ ***արեգակի,*** ինչպես նաեւ ***չափ*** իմաստն ունի*[2], որ ըստ իս, աղերսվում է շումերական IK՝ ***«չափ»***-ի հետ ***(ակ = IK)*** եւ բնորոշում է օրվա՝ 24 ժամվա կեսը: Պատահական չէ, որ հների մոտ նոր տարվա սկիզբ է համարվում գարնանային գիշերահավասարը, երբ օրն ու գիշերը ներկայանում են՝ 12 + 12 հավասար ժամերով: Շումերների մոտ ***mu՝*** նշանակում է «տարի», հայերեն՝ ***am*** նշանակում է «տարի», իսկ շումերերեն՝ ***am, ama*** նշանակում է «մայր»: Հայերեն ***am***-ի շրջված՝ ***ma*** «մայր», շումերերեն՝ ***mu*** նշանակում է «տարի»: Հայերենում ԱՄ-ը՝ *(Ամանոր աստվածություն)* արական, իսկ շրջված ՄԱ-ն՝ իգական հիմք ունի, հակադարձը՝ շումերական am-ը՝ «մայր», իսկ mu՝ «տարի»,- արական հիմք: Որպես հիմնավորման լրացում օգնության է գալիս բիայնական արձանագրությունը՝ Hamapsa դիցանունը am-ի համար*[3]:

«Ամբողջը»՝ որպես ***«երկու կեսերի միություն»*** հնագույն հավատամքային կոնցեպտը արտահայտված է հնագույն հնդեւրոպացիների թե՛ հասարակական կառույցում, թե՛ հավատամքային պատումներում, թե՛ թվային համակարգերում, թե՛ տարածական պատկերագրության եւ թե՛ աստղագիտության մեջ:

Ըստ հների աշխարհճանաչողության, աշխարհարի արարումը նույնպես դուալիզմի հիմքով է: «Անհունը» ամբողջական լինելով, երբ սկսում է սերել նյութական աշխարհը, ապա «գործում» է դուալիզմի սկզբունքով. արտահայտվում է որպես երկու հակոտնյա բեւեռների փոխհարաբերություն: Միֆոլոգիա-

---

*1,- B. L. van der Waerden, «Science Awakening II», 1974, p. 80.

*2,- Հր. Աճառյան, «Հայերենի արմատ. բառարան», h. I, 1971թ., էջ 107:

*3,- Նույն աղբյուր, h. I, էջ 143, h. III, էջ 242:



Ամբողջը երկու կեսերի միասնությամբ «ձեւավորում» է երրորդությունը:

ներում այս սկզբունքը կերպարային-պատումային արտահայ-տություններ է ստանում որպես՝ *էգ-որձ, հայր-մայր, մութ-լույս* եւ այլն: Սակայն, «ամբողջը» երկբեւեռվելուց հետո էլ չի կորցնում իր՝ ամբողջականի «անձնականությունը»: Հայկական Մեծամորի «առնանդամ հուշարձանների» վրայի երկու հակադարձ ընթացքները խորհրդանշող սվաստիկան՝ «ամբողջ-բովանդակ»-ի գաղափարն արտահայտող սիմվոլի՝ «շրջանաօղակի» մեջ է: Հնագույն եգիպտական հավատամքային կոնցեպտում *(որն արիական համակարգից ներմուծված է, քանի որ դիցանունները հնդեւրոպական ծագում ունեն)*[*1] գերագույն դից Աթումը ստեղծելով Շհու *(արական)* եւ Թեփնատ *(իգական)* աստվածներին, ասում է՝ ***հիմա արդեն երեք աստվածներ են իմ մեջ:*** Այսինքն, ԱԹՈՒՄ-ը՝ գերագույն հայր աստվածությունը, իր մեջ սերելով առաջին սեռական հակոտնյա զույգը *(արու եւ էգ),* չի «կորցնում» իր ամբողջականության «անձնականությունը», ձեւավորելով առաջին ***երրորդությունը:***

Մեծամոր,
մ.թ.ա. III հազարամյակ

Սակայն մինչեւ ԱԹՈՒՄ-ը, կար NU/NY/NUN-ը՝ «սուբյեկտիվ, անակտիվ» ներունակությունը, այն իգական սկիզբը, որից առաջ եկավ Աթումը: Ըստ հնագույն հավատամքի, պոտենցիալ արարչական նախահիմքը՝ ամբողջը *(սիմվոլը՝ օղակաձեւ վիշապ)* որպես «շրջանագիծ», իգական սկիզբ է: Շրջանի ներսում է ծնվում արական «պատճառը»՝ «մեկ»-ը, որը նորից միանալով իրեն ծնող «իգական շրջանի հետ», կիսում է այն՝ որդին դառնում է նաեւ ամուսին, եւ այս երկուսի՝ շրջանի ***(մեծ ոչինչի առաջին արտահայտություն «զերոն» - 0)*** եւ մեկի ***(պատճառ, «1»-մեկ)*** միասնությունից ծնվում են նորանոր ֆորմաներ *(աստվածներ):* Սանսկրիտ էպոսում, Դակշան ծնում է Ադիթիին եւ հակառակը՝ ծնվում է Ադիթիից: Դակշան՝ տիեզերական նախամայր-նախանյութ անակտիվ արգանդն է, չդիֆերենցված ***նյութ/էներգիան,*** որից ձեւավորվում է ակտիվը՝ «արական սկիզբը»:

Հայերենում՝ ***ni -*** «խորք» = ՆՈՒ < ՆԻ < ԻՆ > ԱՆ < ՀԱՆ = «նախամայր, մեծ մայր», որ միֆոլոգիայում ՆՈՒԱՐԴ ***(Արա Գեղեցիկի կինը, Արայան Արայի մայրը)***[*2], հնագույն հավատամքային կոնցեպտի արձագանք-անդրադարձն է: «Լույս»-ը որպես «արական» արտահայտություն, ըստ հների, ծնվում է «խավարի»***(իգական գիշեր)*** մեջ, եւ համապատասխանաբար՝ «Արեւը» եւ «Լուսինը» որպես գիշերային եւ ցերեկային «երկինքների» գլխավոր իպոստասներ, դառնում են նախահինդեւրոպացիների դուալիստական կոնցեպտի ամենահնագույն սիմ-

---

*1, – L.A.Waddell, “Sumer-Aryan Dictionary”, 1927, London.
*2, – «Մովսես Խորենացի, «Պատմություն», 1981թ., էջ 74:

վոլները: Հավատամքային անդրադարձով է ձեւավորված հնագույն հնդեւրոպացիների ցեղային հասարակության հիերարխիան: Ահա թե ինչու հիթթիթները ցեղի հիմնադիրներ են համարում երկու արյունակից միֆական առաջնորդներին: Հնագույն հավատամքում դուալիզմի սկզբունքը, փաստորեն, նման է Ֆիբոնաչիի թվային համակարգին, սակայն՝ կրկնակի հիերարխիաների յուրահատուկ ձեւավորման եւ հայելային անդրադարձման սկզբունքների հիմքով, քանի որ, ըստ հների, ՄԵԾ ԱՆՀՈՒՆ-ից («0») եւ ՊԱՏՃԱՌ-ից՝ «արական մեկից»*(որոնք մեկը մյուսի «հակառակ երեսն են» եւ միասին «ձեւավորում» են «ամբողջը»)* են «ծնվում» մնացյալ բոլոր «կոտորակ» աստվածները՝ գերագույն միակ աստվածության մեջ: Ֆիբոնաչիի թվային համակարգը՝ **0, 1, 1, 2, 3, 5, 8, 13, 21, 34, 55, 89, 144** ... եւ այլն*[1], նախորդի թվի հետ գումարման աճով թվային շարք է:

Այսպիսով, թե՛ «Սասնա Ծռեր» հայկական էպոսում եւ առասպելներում, թե՛ Միջագետքյան «Երբ վերեւում» արարչության մասին պոեմում, թե՛ եգիպտական, եւ թե՛ հնդ-արիական «Ռիգ Վեդա» համակարգերում, «դուալիստական սկզբունքը» արտահայտվում է կամ՝ ՄԵԾ ՈՉԻՆՉ-ից *(անդունդ, խավար, վիհ, անհուն)* արական լույսի՝ «1»-ի ծնունդով, կամ՝ ՄԵԾ ՈՉԻՆՉ-ից «ծնված» արական եւ իգական երկու հակոտնյա «կեսերի» ծնունդով, որ համանման է վերեւում բերված Ֆիբոնաչիի թվային համակարգին:

Փաստորեն, հնագույն հնդեւրոպական աշխարհճանաչողությունից բխող հնագույն հնդեւրոպական հասարակական կառույցը սկիզբ է առնում երկու կլանների միֆական երկու եղբայր առաջնորդ արքաներից*[2] եւ, հակամարտության դուալիզմը ծավալվում է միեւնույն ցեղի՝ ***արեւապաշտ*** եւ ***լուսնապաշտ*** կլանների միջեւ: Այս համակարգի ամենավառ օրինակը «Սասնա Ծռեր» հայկական հնագույն հավատամք-էպոսն է: Էպոսում, Դավիթը եւ Փոքր Միհրը մոր կողմից՝ խորթ, բայց հոր կողմից՝ հարազատ եղբայրներ են: Դավիթը ներկայացնում է արեւապաշտների կլանը, Փոքր Մսրա Մելիքը՝ լուսնապաշտների կլանը: Մեծ Միհրը եւ Մեծ Մսրա Մելիքը չկարողանալով իրար հաղթել, ըստ հին հավատամքային ծեսի, իրենց արյունները խառնելով եղբայրանում են: Նորի՛ց երկու եղբայրների դուալիստական համակարգ: Երկու կլանների առաջնորդ եղբայրների դուալիստական հակամարտության կրկնվող սկզբունքը, որ առկա է էպոսում, մեզ հուշում է, որ էպոսի հնագույն, չաղավաղված տարբերակում, Քեռի Թորոսի եւ Ծովինարի հայր Գագիկի թշնամին՝ լուսնապաշտ կլանի առաջնորդ Սենեքերիմը, նույնպես՝ ըստ էպոսի ներքին կառուցվածքային եւ համակարգային տրամաբանության, պետք Գագիկ թագավորի եղբայրը լինի:

---

*1,- Leonardo Fibonacci, 1202թ.-ին հրատարակել է իր հայտնի “Liber Abaci” գիրքը:
*2,- T. Gamkrelidze & V. Ivanov, “The Indo-European And The Indo-Europeans”, p. 679-682.

Հնագույն հավատամքային պատումներում արարչության կառուցվածքը՝ տիեզերական անհունի փուլերով «արտահայտվելը», նման է բնության մեջ միաբջջից բազմաբջջի ձեւավորման փուլային պրոցեսին, որ ***բնության մեջ գոյության սկզբունքն է,*** եւ հիշեցնում է Ֆաբինիոչիի աճող թվերի համակարգը՝ 0, 1, 1, 2, 3, 5, 8, 13, 21, 34, 55, 89, 144… եւ այլն, իսկ ավելի ճշգրիտ՝ 2, 4, 8,- ես մեկն եմ, որ դառնում եմ երկուս, չորս, ութ, ապա ես մեկն եմ նորից,- եգիպտական գերագույն դից Աթումի բանաձեւումը:



Ինչպես հիթթիթական հասարակության կառուցվածքում, նմանապես՝ «Սասնա Տուն» էպոսի կառույցում, երկու հիերարխիաների կամ կլանների թագավոր աստվածություններից՝ Գագիկ < «Gaga» ***(«Կարապ-Անգղի» լուսաբեր աստեղատունը)*** եւ Սենեքերիմ ***(Լուսնի իպոստասը)*** սկսվում են երկու հիերարխիաները: Անդիֆերենցիալ անհունից արտահայտված 4+4 համակարգում, նրանք՝ որպես «արեւապաշտների» եւ «լուսնապաշտների» հիերարխիաներ, ձեւավորում են ամբողջ «արարչածավալումը»:

«0»՝ անդիֆերեցյալ ամբողջ՝
անհուն:
↓
Անհունից դիֆերենցված
հայելային հակադարձ
երկու հիերարխիաներ

↙	↘
Գագիկ թագավոր (0-1)	**Սենեքերիմ թագավոր (1 - 0)**
↓	↓
Ծովինար եւ Թորոս	**անհայտ եւ Պղնձե քաղաքի թագավոր**

Միջագետքյան տարբերակում ԱՊՍՈՒ-ն եւ ԹԻԱՄԱՏԸ (արական եւ իգական) խառնում են իրենց ջրերը՝ արարելու պահանջով: Հայկական «Վահագնի Ծնունդ» արարչության մասին պատառիկում ***(«Երկնեց եկինս, երկնեց երկիր,***

երկնեց եւ ծովը ծիրանի ... ») երկինքը եւ ***երկիրը*** հանդես են գալիս որպես տիեզերական օվկիանոսներ, որ միասին «երկնում» են «միջին՝ Ծիրանի Ծովին», որն ինքն էլ երկնելով, եղեգնիկից արարում է ***Վահագն*** աստվածությանը: Վեդայական եւ եգիպտական տարբերակներում նույնպես «ամբողջի» երկու կեսերով՝ Դակշա-Ադիթի, Նուն-Աթում՝ ***(1/2 +1/2 =1),*** իգական եւ արական կեսերով «բովանդակի» կողմից արարչության պրոցեսի ներկայացում է:

Արարչության մասին հնագույն բոլոր տարբերակ պատումներն, ի վերջո, հիմքում ունեն միեւնույն համակարգը:

«●» - չարտահայտված, անակտիվ, չդիֆերենցված Անհուն՝ «ամբողջ»:

«O»- արտահայտված ամբողջ, արական հիմքով «լույս», որ ծնվում է ●-ի մեջ:

«O»-ն նույնպես ամբողջ մեկ է, ինչպես ●, բայց ակտիվ:

«●-1» - ամբողջ, որ ունի երկակի բնույթ՝ ☯

«1»-ը՝ խորհրդանշում է «արական» ակտիվ սկզբունք եւ ըստ էության՝ 1/2 - «կես» է:

«2»-ը՝ խորհրդանշում է «իգական» ակտիվ սկզբունք եւ ըստ էության՝ 1/2 - «կես» է:

«3»-ը՝ արական է եւ ըստ էության՝ 1/2 «կես» է:

անակտիվ, ↗ ● ↗ «2» = 1/2 իգական ↘
չդիֆերենցված ● «0-1» + «0-1»՛ ☯
ամբողջ ↘ ↘ «3» = 1/2 արական ↗
⊙

Երկու հիերարխիաների պարագայում, վերոհիշյալը կարող է ներկայանալ հետեւյալ կերպ՝

«0»
անդիֆերեցյալ ամբողջ՝ «անհուն»
↙ ↘

դիֆ. ամբողջ	**«Անհունից» դիֆերենցված**	**դիֆ. ամբողջ.**
«0-1»	**← հայելային հակադարձ →**	**«0-1՛»**
↓	**երկու հիերարխիաներ**	**↓**
↙ ↘		**↙ ↘**
«3» — «4»		**«4՛» — «3՛»**
|		**|**
«5»		**«5՛»**

Բերված գծագրում, ՄԵԾ ՈՉԻՆՉ-ը՝ «0», որպես Անհուն, նախ արտահայտվում է որպես՝ «1» եւ «1», որն իրականում՝ «1/2» եւ «1/2» է: Եւ սա հատկանշական է հնագույն հավատամքային կոնցեպտներին: Օրինակ, գերագույն Բրահման ունի 12 ժամ գիշեր եւ 12 ժամ ցերեկ,- հավասար կեսերով ձեւավորված «օր» ***(4 միլիարդ 320 միլիոն մարդկային տարին = 12 ցերեկային ժամի)***, յուրաքանչյուրում ներկայացնելով գիշերվա եւ ցերեկվա (օրվա) տիրակալ-իպոստասներին՝ ***Լուսին*** եւ ***Արեւ*** սիմվոլներով: Շումերական «օրը»՝ 24 ժամի, 6 x 4 = 24,- համակարգի արտահայտություն էր: Եւ հնդ-արիական Բրահմայի «օրն» էլ է ներկայացվում չորս ժամանակային բաժանումներով:

Բաբելական արարչության մասին պատումը, ինչպես նաեւ պատմահայր Մ. Խորենացու հաղորդած հայ հնագույն հեթանոսական տիեզերածնության մասին «Վահագնի ծննունդ» կոչված պատառիկը, այս կոնցեպտի արտահայտություններն են:

Բաբելական տարբերակում՝ անհունը «ստեղծում է» երկու կեսեր՝ Միջագետքյան ԱՓՍՈՒ եւ ԹԻԱՄԱՏ աստվածություններին: Հայկական տարբերակում՝ երկին(ք) եւ երկիր, որ իրենց ջրերը խառնելով, երեք աստվածությունների ծննդի պատճառ են դառնում՝ Բաբ, Տիրան, Վահագն:

«Երկնէր երկին, երկնէր երկիր,
Երկնէր եւ Ծովը Ծիրանի.
Երկն ի ծովուն ունէր եւ ըզկարմրիկն եղեգնիկ:
Ընդ եղեգան փող ծուխ ելանէր,
Ընդ եղեգան փող բոց ելանէր,
Եւ ի բոցոյն վազեր խարտէաշ պատանեկիկ:
Նա հուր հեր ունէր,
Բոց ունէր մօրուս,
Եւ աչկունք էին արեգակունք *[1]:





*1,- «Մովսես Խորենացի, «Պատմություն», 1981թ., էջ 102-103:

Հնագույն հնդեւրոպացիների հասարակական կառույցը:

Վ. Իվանովի եւ Թ. Գամկրելիձեի կողմից վերականգնած հնագույն հնդեւրոպացիների ***երկու կլաններով*** հասարակական կառույցը եւ աղջկա փոխանակությամբ ամուսնական հարաբերությունները արեւապաշտների եւ լուսնապաշտների միջեւ, բացառիկ կարեւորություն ունի*[1]:

ՀԱԹԹԻ-ների եւ ՄԱՍԱ-ների՝ Արեւ-Լուսին,- «կես-կես», երկու կլանների գոյությունը, եւ այս հասարակության երկու արյունակից «տոհմածառերի» միջեւ ամուսնական հարաբերությունները՝ կնոջ փոխանակությամբ, ներկայացնում են հնդեւրոպացիների հնագույն հավատամք-կարգականոնի անդրադարձը հասարակության կառուցվածքում:

C-ն կարող է ամուսնանալ **D′**-ի հետ, որն իր հորաքրոջ դուստրն է: **D′**-ի եղբայր **C′**-ը A-ի թե եղբոր որդին է, թե որդու կնոջ եղբայրը: **D′**-ի համար **A′**-ը հորեղբայր է, իսկ **D′**-ի որդին՝ **G**-ն, թոռն է **A′**-ի, որն իր մոր **D′**-ի հորեղբայրն է եւ իր հոր՝ **C**-ի հորեղբայրը: **G**-ի քեռին՝ **C′**-ը **A**-ի եղբոր որդին է: **A**-ն **G**-ի մորական պապն է: Ուրեմն, **A**-ն մայրական կողմի պապ է եւ կարծես կրկնակի քեռի, քանի որ **A**-ն **G**-ի հոր հայրն է եւ միաժամանակ իր քեռու՝ **C′**-ի հորեղբայրը:

Գծագրում ամուսնական սիմետրիկ կապը երկու տոհմ-կլանների միջեւ ցուցում



է, որ աղջիկը փոխանակվում է այս արյունակից հիերարխիաների միջեւ[2]: Վերեւում բերված աղյուսակների եւ վերլուծումների արդյունքում՝

1) հնդեւրոպացիների ցեղային հասարակության կառույցն անդրադարձն է հնագույն հավատամքային դուալիստական կոնցեպտների եւ ունի «երկաթյա» կամ «երկնային» զորություն:

2) Կնոջ, աղջկա փոխանակությունը կատարվում է երկու արյունակից կլան-տոհմերի միջեւ: Բոլոր պարագաներում

*1, *2, - T. Gamkrelidze & V. Ivanov, նույն աղբյուր, էջ՝ 672, 673-674:

միայն աղջիկն է, որ «լքում» եւ հարս է գնում մյուս ընտանիք, տոհմ:

3) Կլանի առաջնորդը չի կարող կնության վերցնել մյուս կլանի ***առաջնորդի կնոջը,*** չի կարող իր համար, բռնությամբ կնության վերցնել մյուս կլանի ***առաջնորդի դստերը,*** երբ սա ունի եղբայր, եւ բավարարում է ***եկու կեսերով*** «կատարյալ միություն» ավանդույթ-պայմանը, այլապես, տվյալ հիերարխիայի սերնդաշարունակությունն ըստ հավատամքային օրենք-պայմանի՝ չի լինի կատարյալ կամ կնդհատվի: Ուրեմն, ըստ օրինակառույցի, «Սասնա Ծռեր» էպոսի Սենեքերիմն իրավունք չուներ բռնությամբ ամուսնանալ Ծովինարի հետ, որն արեւապաշտների կլանի առաջնորդ Գագիկի դուստրը եւ Թորոսի քույրն էր:

4) Երկու կլաններից յուրաքանչյուրը նաեւ պետք է ունենար ի՛ր «շահերը» պաշտպանող, եւ մյուսից տարբեր օրենքներ:

«Սասնա Ծռեր» էպոսում մենք տեսնում ենք, որ լուսնապաշտների կլանում արեւապաշտներից «տնփեսա ներմուծելը» նորմալ երեւույթ էր, եւ նրանց մոտ կին-մայրը կարող էր գլխավորել կլանը *(օրինակները՝ Իսմիլ Խաթուն, Չմշկիկ Սուլթան):* Արեւապաշտների մոտ «տնփեսա գնալը» համարվում էր նշավակելի կամ օրենքի խախտում:

Մեծ Մհերն իրավունք ուներ կամ պարտավոր էր ծիսակարգով իր եղբայր դարձած Մսրա Մելիքի այրու ամուսինը լինել*[1]: Էպոսի համարյա բոլոր պատումներում նշվում է եղբայրության պայմանը, ըստ որի, այս երկուսից որեւէ մեկի մահվան դեպքում, մյուսը պիտի կին վերցնի մեռած եղբոր այրուն եւ հոգա մեռածի «տան»՝ տոհմի, կարիքները: Սա հնագույն հասարակության մեջ պայման-օրենք էր: Սակայն, ըստ արեւապաշտների օրենքի՝ Մեծ Մհերն իրավունք չուներ որպես տնփեսա գնալ լուսնապաշտների կլան: Ամուսնական փոխհարաբերությունները այս երկու կլանների միջեւ տեղի է ունենում միայն աղջկա փոխանակությամբ*[2]: Սասնա Դավիթն իրավունք ուներ լուսնապաշտների կլանի առաջնորդի աղջկան կնության վերցնել, բայց իրավունք չուներ իր կնոջ՝ Խանդուղի քրոջ հետ սեռական կապի մեջ մտնելով ապօրենածին դուստր ունենալ, որը «վնասում» էր հավատամքային կարգականոնով սահմանված լուսնապաշտների կլանի հիերարխիայի «շահերը» եւ միեւնույն ցեղի արյունակից երկու կլանների գոյության շարունակականությանը: Սա երկնային օրենքի խախտում էր, որի նշանը՝ Դավթի աջ բազուկին իջած ***Խաչ-Պատրազ*** երկնային նշանի սեւացումն էր:

5) Հասարակական կառույցում, քույր-եղբայր ամուսնական զույգի առումով, հուրրիական համակարգը գալիս է լրացնելու երկու ցեղապետերի, կլանների միջեւ ամուսնական փոխհարաբերությունների ընդհանրական պատ-

*1,- «Մելիքի կինը իր գոգնոցն ու գլխաշորն է ուղարկում Մհերին ի նշան իր այրիության եւ ի հրավեր կենակցության (պատում 13)», «Սասնա Ծռեր», հատ. IV, էջ 426:
*2,- T. Gamkrelidze & V. Ivanov, նույն աղբյուր, էջ՝ 673-674:

կերը*[1]: Տոհմապետը կամ նահապետը մյուս գերդաստանից իր տուն մուտք գործած հարսին նախ որդեգրում էր, նրան «դարձնելով» իր դուստրը եւ ապա կնության տալիս իր որդուն*[2], «ձեւավորելով» որպես քույր-եղբայր «երկու կեսերի»՝ ***կատարյալ միություն,*** - մոտեցումը*[3], որը հավատամքային կարգականոնի եզրով հասարակական կառույցի վրա անդրադարձի արդյունք է: Հարսը ամուսնու քույրերի համար ***քույր*** էր: Մինչեւ այժմ էլ արեւմտահայերի մոտ, պահպանված է ***«հարս-քույրիկ»*** տերմինը:

«Սասնա Տուն» էպոսում առկա են երկու միֆական թագավոր-աստվածությունների նո՛ւյն կլանային հիերարխիաները, ինչը մենք տեսնում ենք հիթթիթական ցեղային համակարգում՝ որպես ՄԱՍՍԱ-ների*(լուսնապաշտների)* եւ ՀԱԹԹԻ-ների *(արեւապաշտների)* հավատամքային երկու խմբերի առկայություն: Սա՝ ընդհանուր, դուլիզմի հիմքով, հնդեւրոպական հավատամքային համակարգի՝ արաչության համակառույցի անդրադարձն է հասարակության կառույցի վրա: «Սասնա Տուն» հայկական էպոսում, սասունցիների «հակառակ կողմը»՝ լուսնապաշտները, տարածքային առումով, աղերսվում են՝ Խլաթի, Մուշի եւ հյուսիսային Միջագետքի հետ, եւ նրանք՝ «լուսնապաշտ թշնամիները», հետագայում է, որ դարձել են՝ «օտար, հարեւան երկիր»:

Փաստորեն, «Սասնա Ծռեր» հնագույն հավատամք-էպոսի ներքին կառուցվածքը ներկայանում է՝ ընդհանուր հնդեւրոպական հասարակական կառույցին համապատասխան, որտեղ որպես «սկիզբ» հանդես են գալիս երկու կլանների՝ արեւապաշտների եւ լուսնապաշտների առաջնորդները, իրենց հաջորդական փուլային սերնդափոխությամբ, միտելով՝ 4 + 4 համակարգը:

1. Դագիկ թագավոր (արեւի կլան) △
↓
I - 2. Քեռի Թորոս + Ծովինար
↓
II.- 3. Սանասար + եղբայրը
↓
III.- 4. Մեծ Մհեր + երկու եղբայրները
↓
IV.- 5. Դավիթ
↓
6. Փոքր Մհեր
(անժառանգ, կամակարգը փակվում է)
Սասնա թագավորություն վերջին արական շավիղը, որ անսերունդ ու անմահ է, եւ ինքնակամ մտնում է Ագռավու Քար:

1. Սենեքերիմ թագավոր (լուսնի կլան) ▲
↓
I - 2. Պղնձե քաղաքի թագավոր + ?
↓
II.- 3. Դեղձուն + եղբայրը (?)
↓
III.- 4. Մսրա Մելիք + Իսմիլ
↓
IV.- 5. Փոքր Մսրա Մելիք + քույրը
↓
6. Չմշկիկի եւ Դավթի դուստրը,
(սպանելով իր հորը, մեռնում է)
Խլաթի թագավորություն: Վերջինը՝ պառավ է,- իգական վերջ, որ Փոքր Մհերի կողմից սպանվելուց առաջ, Նեմրութ լեռան գլխին փորձում էր «օջախի ծուխ» վառել:

---

*1,- Ըստ գիտական վերլուծում-մոտեցումների, հուրրիների լեզուն հնդեւրոպական է: Հուրրիների հնագույն տեքստերում տեղ գտած բազմաթիվ աստվածությունների անունները ուղղակի կրկնվում են հնդ-արիական՝ վեդայական հավատամքային համակարգում: Հուրրիների թագավորների անունները, նրանց զորքերի եւ հեծելազորի հետ կապված տերմին-անունները հնդեւրոպական են: Մեծանուն գիտնական Բ. Հրոզնին, որը հիթթիթների եւ հուրրիների հնագույն տեքստերի լավագույն գիտակներից էր, դեռեւս 1920թվականներին հուրրիներին կոչեց՝ «հնագույն հնդիկներ» անունով: Սակայն, ➞

Վերեւում բերված աստված-հերոսների սերունդների հաջորդականությունը ցուցում է, որ Ծովինարից հետո, «սասունցիների կողմը» միայն ***որդիների*** սերնդափոխության հաջորդականություն է եւ, հերոսները աղջիկ չեն ունենում՝ ի տարբերություն «հակառակորդ կողմի», որոնց հիերարխիայում կին-մայրերը՝ Իսմիլ, Չմշկիկ եւ այլն, առաջնորդներ են:

«Սասնա» էպոսի աստվածուհի մայրերի անունների ստուգաբանությունները եւ նրանց մասին էպոսում եղած ակնարկները ցուցում են, որ նրանք լուսնի սիմվոլով խորհրդանշում են «տիեզերական արգանդ-անդունդը»: Արմա-դան>Արմա+դան > Արմա+հան: Արմա = լուսին*[1], հան = մեծ մայր*[2]: Խանդուդ > Հանդուդ = Հան+դուդ: Հան = մեծ մայր, դուդ = տուտն = հիմք, հատակ*[3]: Ծովինարը, որն ըստ էպոսի, 14 օրեկան լուսնյակի է նման՝ նույնպես «լուսին» է: ***Չմշկիկը*** եւ ***Խանդուդը,*** ըստ «Սասնա Ծռեր» էպոսի, նույն Խլաթի թագավորության արքայադուստրերն են, ուրեմն՝ քույրեր են: «Սասնա Տուն» էպոսում ***ամուսինը*** եւ ***կինը*** ներկայացնում են՝ ***արեւ-լուսին*** բինարիզմը, որ երկու կեսերով՝ 1/2 +1/2 = 1,- ***կես-կես,*** ձեւավորում է ամբողջը՝ օրը, որպես ***գիշեր*** եւ ***ցերեկ:***

Գագիկ (Կակե) թագավորը եւ Սենեքերիմը (Սինահերիբա) «Սասնա» էպոսում ԱՐԵՎ-ի եւ ԼՈՒՍՆ-ի իպոստասներն են, միֆական երկու եղբայր թագավորները, որոնք հնագույն հնդեւրոպական ամբողջի՝ ցեղի, երկու հիմնադիր առաջնորդներն են: Միեւնույն ցեղի երկու «կեսերի»՝ լուսնապաշտների եւ արեւապաշտների առաջնորդները, հետագայում, հավանաբար միջնադարյան բանասաց-փոխանցողի վերախմբագրման շնորհիվ է, որ դարձել են ***«օտարազգի թշնամիներ»:***

Երկու արյունակից եղբայրների կամ զարմիկների «թշնամությունը» հնագույն էպոսներում «պարտադիր պայման» է: Միջագետքյան՝ ***Էա-Էնլիլ,*** հայկական՝ ***Գագիկ-Սենեքերիմ*** (կամ՝ Սիեր-Մսրա Մելիք), իրանական՝ ***Ահուրա Մազդա-Արհիման,*** եգիպտական՝ ***Ասար(Օսիրիս)-Սեթ*** եւ այլն, «եղբայր-թշնամիների» պատմությունը ընդհանուր է եւ հիմքում ունի հավատամքային դուալիստական սկզբունքը:

Փաստորեն, «Սասնա Ծռեր» հնագույն հավատամք-էպոսում, ամուսնական փոխհարաբերությունները ներկայանում են վաղնջական ժամանակների հնդեւրոպական ցեղային հասարակության խիստ օրենքների հիմքով: Էպոսում երկու կլանների միջեւ ամուսնական փոխհարաբերությունները՝ «երկնային կարգով» սահմանված, երկու հիերարխիաների միջոցով «ճիշտ սերնդաշարք» ապահովելու սխեմա է:

հուրրիների իբր ոչ արիացի՝ հնդեւրոպացի լինելու տեսակետը դեռեւս «մարտնչում» է:

*2,-The Anchor Byble, Genesis, E. A. Speiser, 1962, p. Intr. XL, Gerar, “The Wife-Sister Motive in the Patriarchal Narrative, Byble and Other Studies”, 1963, p. 15-28:

*3,- Մ.թ.ա. II հազարամյակում, Հայասա երկրում կիրառվում էր ամուսնական ***քույր-եղբայր*** միությունը: Տես՝ «Հայ ժող. պատմություն», Ակադեմ. հրատ., հ I, Երեւան, 1971թ., էջ 197-199:

*1, *2, - T. Gamkrelidze & V. Ivanov, նույն աղբյուր, էջ՝ 591; էջ՝ 667n 45:

*3,- Հր. Աճառյան, «Հայոց լեզվի պատմություն», 1936թ., հ. I, էջ 76:

Ծովինարը, որ ըստ «Սասնա Ծռեր» էպոսի՝ 14 օրեկան լուսնի կնմաներ*[1] *(լիալուսին)*, ներկայացնում է գիշերային երկինքը՝ 24 ժամվա կեսը, եւ ըստ կանոնակարգի պետք է ամուսնական միություն կազմեր՝ «արեւի» հետ՝ օրվա 12 ժամ, որպեսզի ձեւավորվեր «կատարյալ միությունը»՝ բավարարելու համար հնագույն հնդեւրոպացիների բինարիզմի սկզբունքը: Սենեքերիմն ինքը «Լուսին» էր*[2], եւ Ծովինարի հետ ամուսնության նրա ուժային պարտադրանքը՝ *{Լուսին + Լուսին =* «-» + «-» *= օրենքի խախտում}* «երկնային օրենքի» խախտում է:

Ըստ էպոսի, ի տարբերություն ***«լուսնապաշտների»*** ամուսնական տնփեսայական ավանդույթի*[3], սասունցի ***«արեւապաշտների»*** ամուսնական կարգականոնի համաձայն, արական սեռի ներկայացուցիչը չէր կարող ***տնփեսա*** գնալ հակառակ կլան եւ սերունդ՝ սերմ տալ հակադիր տոհմին: Տոհմից տոհմ ամուսնական փոխանակությունները, ըստ ***հնդեւրոպացիների կանոնակարգի,*** իգական սեռի միջոցով էր հնարավոր:

Դավիթը եւ Փոքր Մըսրա Մելիքը, փաստորեն, նույն հորից եւ տարբեր մայրերից եղբայրներ են: «Իրականում» նրանք, դուալիզմի կանոնակարգով, մեկ ամբողջի «լավ» եւ «վատ» ***կեսերն*** են: Այս «հանգամանքը» բացահայտ է «Սասնա» էպոսում: Երբ Դավիթը սպանում՝ ուղիղ երկու կես է անում Մըսրա Մելիքին, ապա Մելիքի ձախ մասը համարելով «պիղծ», թողնում է Մըսրում, իսկ «աջ մասը» բերում է Սասուն եւ պատվով թաղում «լավ կեսը».

Աջակողմը Դավիթ դրից ձիու վրա,
Պիրնց, ժամով-պատարագով թաղել տվնց.
Ինչ ձախ կողմն էր՝ մնաց էնտեղ անտեր.
Շներ, գիլեր կերան:*[4]

Մեծ Միերը մեռնում է, որովհետեւ խախտել է արեւապաշտների «երկնային սահմանումով» օրենքը: Աջ ձեռքը կտրելով, արյունները խառնելու հնագույն ծիսակարգով, Մսրա Մելիքը Մեծ Միերի եղբայրն էր արդեն*[5], եւ նրա այրուն կնության առնել, հակառակ կլան տնփեսա գնալ եւ արեւապաշտների ճյուղից սերունդ տալ «լուսնային տոհմին», նույնպես «արեւապաշտների» համար կարգականոնի խախտում է: Մեծ Միերի վերադարձից հետո, Արմաղանը չի թողնում նրան իր առագաստը մտնել: Մի ուրիշ օրինակ. Չմշկիկ*[6] Սուլթանը եւ Խանդուդ Խաթունը, ըստ էպոսի պատումների, միեւնույն տեղանքի՝ Խլաթ քաղաքի ար-

---

*1,- «14 օրեկան լուսնկի կնմաներ», - h. I, պատում «Է», էջ 308:

*2,- Սենեքերիմ = sin-aḫ ḫē-erba նշանակում է՝ «Սին (Լուսին աստվածը) եղբայրներս շատացրեց», Հր. Աճառյան, «Հայոց լեզվի պատմություն», 1940թ., Երեւան, էջ 200:

*3,-Աքքադական ազդեցությամբ գործել է նաեւ այս ավանդույթը: T. G. & V. I., նույն աղբ.,էջ 677:

*4, - «Սասնա Ծռեր», h. Ա, պատում Զ, գրի է առնվել 1899թ., էջ 283:

*5,- Մեծ Մսրա Մելիքը եւ Մեծ Միերը հորեղբոր որդիներ են: Տես «Երկվորյակներ» բաժինը:

*6,- Չմշկիկ (C'mskik) անունը աղերսվում է Չ'-մշկ-իկ = Չ՛- մուշ(k) = *mus- Մուշկ տեղանքի հետ եւ իմաստաբանվում է որպես՝ «վիշապ» եւ «Լուսին», *meH-s-, masa, հիթթիթական Masa եւ Hatti լուսնապաշտ եւ արեւապաշտ երկու խմբերը:

քայադուստրեր են, ուրեմն՝ քույրեր են: Կնշանակե, որ Դավիթը ոչ թե Չմշկիկի հետ կռվի ժամադրության իր տված երդումը մոռանալու համար պիտի մեռներ *(հերոսի աջ բազուկին դաջված խաչը՝ երկնային նշանը սեւացել էր: Փաստորեն, երկնային օրենքի խախտումը՝ մահվան փոխհատուցմամբ պատիժ-սպառնալիք էր),* այլ՝ լուսնապաշտներին անօրինական բեղմնավորելու՝ արեւապաշտների սերնդակարգի կանոնը խախտելու համար: Հատուկ, խիստ շեշտադրում կա էպոսում. Դավթի դուստրը նրա որովայնի սերմն է, որ հերոսին նետահարելով սպանում է: Այսինքն, անմաքուր, սխալ սերմնարդյունքը՝ Դավթի եւ Չմշկիկի դուստրը, սպանում է «արեւապաշտների» կանոնակարգը խախտած հորը եւ ինքն էլ մեռնում է: Մեռնելիս Դավթին ասում է. ***«Իմ ցեց իմ անձից է, էդ իմ սերմն էր, որ ինձի սպանեց»*** [1]:

Առաջին հայացքից թվում է, թե Փոքր Մհերը մի սարսափելի վրիժառու է, որ իր հոր վրեժը ամբողջ Խլաթ քաղաք-երկիրը լիովին ոչնչացնելով է առնում: Բայց դա այդպես չէ, էպոսն իր խորքում ավելի հիմնավոր պատճառ ունի: Փոքր Մհերը հիմնահատակ ոչնչացնում է ***«լուսնապաշտ կլանը»***, քանի որ ինքն էլ դատապարտված է՝ թեեւ անմահ, բայց ***անսերունդ*** լինելով, իր՝ ***«արեւապաշտների տոհմ-կլանը»*** նույնպես մայրամուտ պիտի ապրեր: [1 > 4] արեւային եւ [1 > 4] լուսնային տիեզերական դուալիզմն ապահովող համակարգերը պիտի փակվեին, քանի որ Փոքր Մհերը եւ Չմշկիկի դուստրը զուգահեռ հիերարխիաների այս համակարգերում վերջին դիցերն են:

Խլաթում մնացած, ***մինարի ծերին*** դադրած կատվին Փոքր Մհերը ***չինարի ծառով*** է սպանում: Ապա բարձրանալով Նեմրութա սարի գլուխ, տեսնում է Ջադու պառավի «սարքած» ծուխը: Երեքով՝ Փոքր Մհեր, Ջենով Օհան եւ Քեռի Թորոս, գնում կանգնում են պառավի գլխին ու հարցնում են, թե ի՞նչ ծուխ է անում նա: ***«Որ չասեք թե էնպես ավերեցինք Խլութ, որ հեչ մի տեղից ծուխ չելնի»*** [2], - ասում է պառավը: Օջախի ծուխը կլանի, տոհմի հարատեւության նշանն է:

«Գնաց, տեսավ քաղաք ավերած, մնացե մեկ կատու, թռե մինարի ծեր, դադրած կ'իրիշկի: Մհեր քաշեց չինարի մ'ծառ, զարկեց, կատուն էբեր տակ» [3]:

Մհերը ծառից կապելով, սրան էլ է սպանում: Թաքնագիտական սիմվոլիզմով՝ «կատուն» իգական վերարտադրություն, լուսնի սիմվոլն է, չինարի ծառը՝ «Կենաց տիեզերական Ծառի» խորհուրդն է: Ջադու պառավը, որ Նեմրութա լեռան կատարից է երեւում-բացահայտվում, լուսնային կլանի վերջին՝ «պառաված նախամոր» սիմվոլն է: Նեմրութա լեռը, որի խառնարանում, ըստ «Հայկ եւ Բել» առասպելի, նետված էր Բելի մարմինը, նույնպես հակառակ կլանի սիմվոլն է, ի տարբերություն Մարաթուկի, որը արեւային կլան-տոհմի սիմվոլն է *(ըստ «Սասնա» էպոսի)*:

Վերադառնալով միեւնույն ցեղային հասարակության երկու կլանների

---

*1, – «Սասունցի Դավիթ», 1989թ., էջ 386:
*2, *3, – Նույն աղբյուր, 1989, էջ 399-400:

միջեւ ամուսնական փոխհարաբերությունների «կարգականոնին», ավելացնենք եւս մեկ-երկու էական «մանրամասնություն»: «Դավթի» ճյուղում, երբ հերոսը պատանի է, նա մաքուր անարատ, «կարգականոնը» պահպանող դից է: Նա մերժում է հորեղբոր կնոջ սեքսուալ ցանկությունները, մերժում է նաեւ Մսրա Մելիքի մորը, որն առաջարկում է Դավթին Մըսրում թագավոր լինել: Գնալ Մըսր եւ դառնալ թագավոր, հնարավոր էր միայն ***ամուսնական կապի*** միջոցով: ***Էպոսում Մսրա Մելիքի քրոջ հպանցիկ կերպարը պատահական չէ:***

«Սասնա Ծռեր» էպոսում վերոհիշյալ «պատումային միջադեպերը» քմահաճույք-երեւակայությամբ ձեւավորում ստացած ստեղծագործություններ չեն, այլ արտացոլում են հնագույն հավատամքի կարգականոնը եւ վաղնջական ժամանակներում հնդեւրոպական *(այս դեպքում՝ հին հայկական)* հասարակության մեջ տիրապետող ամուսնական հարաբերությունների եւ սերնդաժառանգական իրավունքների «աստվածային» խիստ օրենքները:

Մայրիշխանություն եւ հայրիշխանություն

Ըստ Թ. Գամկրելիձեի եւ Վ. Իվանովի ուսումնասիրության արդյունքների՝ *«նախահընդեւրոպական ամուսնությամբ ազգակցություն միտող տերմինոլոգիայի վերլուծումները բացահայտում են հնդեւրոպական ազգակցականության մեկ հիմնական առանձնահատկություն՝ միայն ամուսնու կողմով է հնարավոր վերականգնել կնոջ ազգակցական կապերը (տերմին-բառերը), եւ կնոջ կողմով ազգակցություն միտող բառերը ամբողջովին բացակայում են»:* Կամ, 5-6 հազարամյակների ետեւում մութ են մնում*[1]:

Աղ.#1*[2]

Սերունդ	Ազգակց. կապ ամուսնությամբ	ամուսնու կողմով	կնոջ կողմով
0	եղբայր	*t'aiwĕr-	—
0	քույր	*k̂'al(ou-)	—
-1	հայր	*ǵoek̂ʰuro-	—
-1	մայր	*ǵoek̂ʰruH-	—

Աղ.#2*[3] Ընտանիքում ազգակցության տերմինոլոգիան

Ազգակցություն	Հնխ*	Ազգակցություն	Հնխ*
			*k̂'al(ou-)
ամուսին	*pʰoth- *k'oen-	ամուսնու քույր	*K'al(ou-)

*1,*2,*3,- T. Gamkrelidze, V. Ivanov, "The Indo-European And The Indo-Europeans", p. 663, 665.

կին	*K'oen	կնոջ քույր	—
Ազգակցություն	Հնխ*	Ազգակցություն	Հնխ*
ամուսնու հայր	*ϱoek̑huro-	ամուսնու եղբոր կին	*(y)enḪtʰer-
կնոջ հայր	—	քրոջ ամուսին	—
ամուսնու մայր	*ϱoek̑hruH-	դստեր ամուսին	—
կնոջ մայր	—	որդու կին	*snuso-
ամուսնու եղբայր	*t'aiwĕr-	եղբոր կին	*snuso-
կնոջ եղբայր	—		

*Հնխ – հնդեւրոպական նախալեզու

Աղ.#3*[1]
Ըստ արյունակցական ազգակցության տերմինոլոգիայի

Ազգակցական կապ	Հնխ
հայր	*pʰḪtʰer-
մայր	*maHtʰer-
եղբայր	*bʰraHtʰer-
քույր	*ϱoesor-
որդի	*suHnu-
դուստր	*dʰugʰḪtʰer-
հոր հայր	*HauHo-
հոր մայր	*Han-
մոր հայր	—
մոր մայր	—
հոր եղբայր	*pʰḪtʰruwio-
մոր եղբայր	*HauHo-
հոր քույր	—
մոր քույր	—
եղբոր որդի	*suHnu- (?)
քրոջ որդի	*nepʰōth-
եղբոր դուստր	*dʰugʰḪtʰer- (?)
քրոջ դուստր	—
որդու որդի	*nepʰōth-
դստեր որդի	—
որդու դուստր	*nepʰtʰī
դստեր դուստր	—

Աղուսյակների համաձայն, հնդեւրոպական լեզուներում, թվում է, թե հիմնականում բացակայում են մորենական կողմով ազգակցությունը բնորոշող բառերը, որը հնագույն հնդեւրոպացիների ցեղային հասարակության մեջ տիպիկ հայրիշխանության կարգականոնի մասին է փաստում: Սակայն, անկասկած է, որ հնդեւրոպացիները ավելի վաղ շրջանում ունեցել են մայրիշխանության համակարգ: Չաթալ Հույուքի, ամենահինը՝ Cayonu-ի պեղումները փաստում են, որ մայր աստվածության պաշտամունքը մ.թ.ա. 6-րդ հազարամյակում

*1, – T. Gamkrelidze & V. Ivanov, "The Indo-European And The Indo-Europeans" , 1995, NY, էջ 670.

տարածված է եղել Փոքր Ասիայում եւ Հայկական լեռնաշխարհում: Հայոց մեջ հին հեթանոսական ամենամեծ եւ սիրված պաշտամունքային տոներից էր «Ծաղկամոր Տոնը», որը կատարվել է գարնանը, տարին սկսելու հետ: Անահիտ աստվածուհու՝ ՄԵԾ ՄՈՐ պաշտամունքը, ըստ Ստրաբոնի,- ***«պաշտվում է նաեւ պարսից եւ մարաց կողմից, բայց նրա պաշտամունքը հայոց մեջ գերազանցում է բոլորին»: «Անահիտը փոքրասիական աստվածամայրն է»****[1]**:* Ավելին, հայերեն «արեւամուտ», «մայրամուտ», «արեւամայր» եւ այլ բնիկ բառերը բնորոշում են, որ գիշերային երկինքը որպես՝ ՄԱՅՐ եւ ՍԿԻԶԲ, առաջնություն է ունեցել:

Եւս մեկ կարեւոր հանգամանք. ***«մայրիշխանություն»*** հնագույն երեվույթը չի նշանակել ***«կին-իշխանություն»***: Գիտական ուսումնասիրությունները, նույնիսկ ամենահնագույն ժամանակների հնդեւրոպական ցեղային հասարակությունների կառույցներում, երբեւէ չեն «արձանագրել» կնոջ կամ մոր հասարակական դիրք՝ որպես ***ցեղապետի, տոհմապետի*** կամ ***կրոնական*** առաջնորդություն: Թե՛ հասարակական, թե՛ հոգեւոր ասպեկտներում ***առաջնորդություն կրողը*** եղել է ***արական սեռի*** ներկայացուցիչը: «Մայր» եւ «կին» հասկացությունները, փաստորեն, հնագույն հնդեւրոպացիների մոտ «առանձնացված» հասկացողություններ են:

«Մոր» պաշտամունքը եւ «մայրիշխանություն» ասվածը, որդի՝ արու զավակ ծնելու, հասարակական հիերարխիայում գահակալության ժառանգականությունը մորենական կողմով ապահովելու արտահայտություն է: «Արեւապաշտների» հավատամքում՝ արեւը արական լինելով, արարման իրավունք տալիս էր իր «հակադարձին»՝ կնոջը, եւ նախանյութ-նախամայր տիեզերական արգանդն է, որ ծնում է, պտղաբերում է իրական՝ արական աշխարհը:

Անշուշտ, «Մեծ Մոր» հնագույն հավատամք-պաշտամունքն իր անդրադարձը պետք է ունենար թե՛ ցեղային հասարակության հերիարխիայի ձեւավորման մեջ, մասնավորապես մորենական կողմով գահակալության ժառանգականության իրավունքի առնչությամբ, եւ թե՛ ***մորենական կողմը ընդգծող ազգակցություն միտող բառերում:***

Թեեւ հնդեւրոպացիների մոտ մայրիշխանությունից հայրիշխանություն անցումը եղել է շատ վաղ ժամանակներում *(մինչեւ մ.թ.ա. 4-3 հազարամյակ),* եւ ըստ Թ.Գամկրելիձեի եւ Վ.Իվանովի, հնդեւրոպական լեզուներում մորենական կողմով ազգակցություն միտող բառերը բացակայում են կամ մոռացված են՝ «ժամանակի փակի տակ են», սակայն մի շարք հնդեւրոպական հին լեզուներում, եւ հատկապես հայոց լեզվի բառամթերքում, մորենական կամ կնոջ կողմով ազգակցություն միտող բառերը որոշ չափով պահպանված են:

---

*1,- Գր. Ղափանցյան, «Արա Գեղեցիկի պաշտամունքը», էջ 23:

Ստորեւ ներկայացված բոլոր բառաձեւերը բնիկ հայերեն բառեր են:

Ազգակցություն միտող բառերը ըստ Հր.Աճառյանի ՀԱԲ-ի*[1]:

Ազգակցութ.-բառ	Ազգակցութ. բացատրություն
Կակո	մոր կողմի պապ [Ա. Սուքիասյան, «Հայոց լեզվի հոմանիշների բառարան», հ. I, էջ 192-193]
Հաւ	մոր կողմի պապ [հ. III, էջ 67]
Հան	մոր կողմի տատ [հ. I, էջ 192-193]
Անէր < Հանէր	կնոջ մոր՝ ՀԱՆ -ի ամուսինը = ՀԱՆ + Էր(իկ) [հ. I, էջ 192-193]
Աներձագ	կնոջ մոր եւ նրա ամուսնու զավակը Անէրձագ = ՀԱՆ + ԷՐ + ՁԱԳ (բրբ.) [հ. I, էջ 192-193]
Քեռի	մոր եղբայրը, «ՔՈՅՐ» բառի >ՔԵՌ սեռականից ձեւավորված [հ. IV, էջ 570]
Ամուսին	Ամ-ու-սին > «կնոջ մարդը»: Հիմքը՝ ամենահին հնդեւրոպական իգականակերտ swe-, sor > ՔՈՅՐ ձեւից է: Բառի առաջին «ԱՄ»-ը, ըստ Հր.Աճառյանի, «կից», «միասին» իմաստով է այստեղ: Սակայն շումերական mu «տարի» շրջված ձեւը am, ama նշանակում է՝ «մայր»: Հայերենում առկա է դրա հայելադարձային շրջված զուգահեռը՝ ԱՄ ⇆ ՄԱ, ՄԱ > ՄԱՅՐ [հ. I, էջ 160, հ. IV, էջ 228]:
Ս'կեսուր Ս'կեսրայր	բարբառներում՝ *կիս-ուր* - «կես մայր», որտեղ ՈՒՐ=ՈՒՐՀԻ-ն հին աստվածության իգական «կեսն» է (Ղ.Ալիշան, Հին հավատք, էջ199), ՈՒՐ > մայր: Եւ այս ՈՒՐ-ին գումարվել է «կես»-ը, ըստ Մառի՝ krs արմատից *կերս > *կեյս > կէս, ըստ Pedersen-ի ԿՈՅՍ, ԿԻՑ ձեւերից, որ սերվել է «երկու», «կրկին» բառերից: Ըստ Karst-ի Յուշարձան 404, - շումերական gas, kas «երկու», Kasar «կեսը», Kes «կտրել, կիսել» բառերից [ՀԱԲ, հ. II, էջ 528, հ. IV, էջ 228]:
Տալ	կնոջ ամուսնու քույր, բխում է *ծալ ձեւից: Նաեւ՝ daiver «տայգր» բառի իգական daivri ձեւից [հ. IV, էջ 356, Muller, Armen. VI, թ. 62]
Քենի	կնոջ քույրը [հ. IV, էջ 497]
Որդի	***որ*** = «Por», «ծնել զավակ» ձեւից է բխում: [հ. III, էջ 576]: ՈՐ (որ) + ԴԻ = ծնել ԴԻ՝ աստված, - բացատրությունը մերն է:
Թոռ > Թոռն	թոռնիայ՝ «էգ թոռ», tor արմատից, սանսկրիտ՝ taruna՝ մանկամարդ աղջիկ, կին»: Շումերերեն՝ tur «որդի» [հ. II, էջ 198]:
Մամե, մամ Ջոջո, ջոջիկ	մոր մայր, մեծ մայր [Ա.Սուքիասյան, «Հայոց լեզվի հոմանիշների բառարան», Երեւան, 1967]:

*1, – Հր. Աճառյան, ՀԱԲ՝ Հայերեն Արմատական Բառարան:

Վերեւում բերված ***մորենական կողմով*** ազգակցություն միտող բառերը նախահնդեւրոպական ժամանակների հավատամքային պաշտամունքի անդրադարձն է՝ պահպանված հայերեն լեզվի բառամթերքում, որ ցուցում է՝ ոչ թե «կնոջ», այլ «մո՛ր» պաշտամունք եւ մորենակա՛ն կողմով բնորոշող բառերի ազգակցություն:

Նույնիսկ վերոհիշյալ գիտնականների ներկայացրած նախահնդեւրոպական *HauHo- եւ *Han- ձեւերը *(«հոր հայր» եւ «հոր մայր»),* նախալեզվում վերաբերել են ոչ թե՝ հոր, այլ՝ մոր կողմի «պապին» ու «տատին»: Առավել ուշ շրջանում սեմիտական ազդեցության մասին խոսք անգամ լինել չի կարող, որովհետեւ, օրինակ,- ***՝Հաւ***-ի առումով, հնխ.՝ auo- կամ *HauHo- ձեւը «նախնական է, որից՝ ընդհ. գերմանական *awohaimaz «նա, որ պապի տանն է բնակվում» ձեւը: Սրանից հետեւում է, որ auo-ն՝ նշանակում էր «մոր կողմի պապ», կամիս. Huhhas «մեծ հայր» (Alde 78, Pokorny 1, 20, Ernout – Meillet 92, Kluge 355): - Հիւբշ. 465»*[1]:

«Սասնա Ծռեր» հնագույն էպոսում, «սկիզբը»՝ Գագիկ թագավորն է՝ Թորոսի եւ Ծովինարի հայրը, նա սասնա դիցերի համար մոր կողմի պապ է. ԳԱԳԻԿ + ԿԱԿԻ = ԿԱԿՈ = ՀԱՒ: Հայերենում ՀԱՒ նաեւ նշանակում է՝ «ծայր, սկիզբ», Հաւ,- (ի-ա), նախալեզվում Pau - «ծայր», նաեւ նշանակում է «թռչուն», «աքլոր», - Հաւ, - ու հլ., հնխ. auei- «թռչուն» բառից (ՀԱԲ, հ. III, էջ 66):

Փաստորեն, հնագույն միֆոլոգիաներում, ***«սկիզբը»***՝ երկնային զողիակաստեղատների «սկիզբ-թռչունն է» *(Կարապի համաստեղություն),* որ ըստ Սասնա էպոսի՝ «մորենական պապն»-է: ԳԱԳԱ «հավք, կարապ» = ԳԱԳԻԿ = ԿԱԿԻԿ = ԿԱԿՈ-ն լիրաժեք համապատասխանության մեջ է՝ թե՛ հավատամքային միֆոլոգիայում ***սկիզբ*** իմաստի, որ «մորենական կողմի» պապն է, եւ թե՛ աստղաբանության արական ***հաւ՝ «ծայր, սկիզբ»*** իմաստի հետ: Նույնիսկ «օր» բառը սասնո բարբառում աղերսվում է ***հաւ***-ի հետ՝ ***«հաւուր»:***

Ի տարբերություն սեմիտական ծանր ազդեցությամբ գրված Հին Կտակարանի, որտեղ տոհմածառը միայն հայրական կողմով է ներկայացվում, «Սասնա Ծռեր» էպսում պարտադիր է թե՛ հորենական, թե՛ մորենական կողմի հաստատումը՝ որպես ինքնության բացահայտում.

«Յա, տղա, քո հոր հերական ասա,
քո մոր մերական ասա…»:
«Իմ հոր հերական Դավիթն ի,
Իմ մոր մերական Խանդուդն ի…»*[2]:

---

*1, – Հր. Աճառյան, ՀԱԲ, հ. III, էջ 67, 1977թ., Երեւան:
*2, – «Սասունցի Դավիթ», 1989թ., Երեւան, էջ 394:

Ծովինարը, Իզիսը, Մայա Դեւակին եւ այլն, «Նոր Կտակարան»-ի Մարիամ աստվածածնի նախատիպերն են: Հայկական էպոսում՝ ***Սասնա Տուն*** -ը շատ անգամ հիշատակվում է որպես «Սասնա Ջոջ Տուն»: Հայերենում «ջոջ» նշանակում է «մեծ, ավագ» *(բարբառներում՝ Ալաշկերտ, Մուշ, Սասուն, -* ***«ջ'ոջ'»*** *ձեւով)**[1]: Սակայն, ***«ջոջո, ջոջիկ»*** նաեւ նշանակում է՝ «մոր կողմից տատիկ»*[2]. միֆոլոգիայի պարագայում՝ «մեծ նախամայր», որ աստվածային երկվորյակներ ծնող Ծովինարի զուգահեռ անունը կարող է լինել, քանի-որ Սանասարից հետո, սասնո հաջորդ սերունդների համար Ծովինար նախամայրը տատ է՝ ***ջոջո*** է: Մեծ նախամոր՝ «ջոջ», եւ սասնա «Ջոջանց տուն» անունները պատահական զուգադիպություններ չեն: Փաստորեն, «Սասնա Տունը», որը տիեզերական 36 աստեղատների եւ աստվածային «Հոգու Տունն» է, սկիզբ է առնում Ծովինարից:

Նախահնդեւրոպական ժամանակների արձագանքը՝ մորենական կողմով իշխանության ժառանգականության մասին, եւ մորեղբոր՝ քեռու «դերը» քրոջ որդիների նկատմամբ, տեսանելի է հիթթիթական հասարակության տրադիցիաներում: *«Հին հիթթիթական հասարակության մեջ քրոջ որդու հատուկ կարգավիճակը կարելի է տեսնել Հաթթուսիլիս 1-ինի (մ.թ.ա. 17-րդ դար) կտակում, որտեղ նա քրոջ որդուն գահի ժառանգության իրավունք է տալիս եւ կոչ է անում ապագա թագավորներին, որ իրենց քրոջ որդիներին ապագայում չբարձրացնեն [գահակալության]**[3]:

Թե՛ հնագույն եգիպտական, թե՛ իրանական եւ թե՛ հայկական հնագույն տրադիցիաներում «մայրական կողմի իրավունքով գահակալությունը» գործարկվում էր:

Փաստորեն, մինչեւ մ.թ.ա. 18-17-րդ դարերը, մայրական կողմի պապը եւ քեռին «ապահովում» էին «քրոջ որդու»՝ «մայրական կողմի իրավունքով», գահակալությունը:

«Սասնա Ծռեր» էպոսում մենք տեսնում ենք, որ նախ՝ դիցերի տունը սկիզբ է առնում ***Ծովինարից***, «հոր» բացակայությամբ: Երկրորդ՝ ***Քեռի Թորոսն*** է չորս սերնդի հերոսներին հայրություն անում ***(Դավթի ճյուղում նաեւ հորեղբայր Օհանը)***: Երրորդ՝ բացի Սանասարից եւ Բաղդասարից, որոնք «մայրական իրավունքով» թե՛ տեղանքի (նահանգի) կամ տոհմատան հիմնադիրներն են, եւ թե՛ գահակալ իշխանները, մնացած բոլոր հերոսները (դիցերը), Սասնո գահակալ տերերը չեն, այլ թափառական ասպետի կյանք են վարում, «անմասն» լինելով հորենական տնից*[4]: Հարց է ծագում, ո՞վ կարող էր «Տան», «Տոհմի» գահակա-

---

*1,- Հր. Աճառյան, ՀԱԲ, h. IV, էջ 131:
*2, - Ա. Սուքիասյան, «Հայոց լեզվի հոմանիշների բառարան», 1967թ., Երեւան:
*3,- T. Gamkrelidze, V. Ivanov, "The Indo-European And The Indo-Europeans" , 1995, NY, p. 675:
*4,- «Սասնա Ջոջ տնեն անմաս եմ…», - ասում է Փոքր Մհերը: «Սասունցի Դավիթ», էջ 413:

լությունից զրկել, «անմասն» թողնել մի ամբողջ զորք ջնջելու կարողությամբ օժտված հերոսին: Պատասխանը մեկն է. «Սասնա Ծռեր» հավատամք-էպոսը ***նախա***հնդեւրոպական հնագույն ժամանակների արձագանքով «արտադրանք» է, քանի որ, ըստ հին կանոնակարգի, իշխանության ժառանգականությունը «հասնում» է ***դստերը եւ նրա ամուսնուն***, ոչ թե ***որդուն՝ արու զավակին***: Ըստ ***հնագույն հավատամքի, արարչության ժամանակ,*** ամբողջը՝ շրջանը, ներկայանում է որպես իգական սկիզբ: Շրջանի ներսում է ծնվում արական «1»-ը եւ նորից միանալով իրեն ծնող իգական շրջանի հետ, որդին դառնում է նաեւ ամուսին եւ, միանալով իգական շրջանին, միությունից ծնվում են նորանոր ֆորմաներ, ձեւեր (աստվածներ)*[1]: Ըստ հավատամքի, նույն սկզբունքով է ձեւավորված հնագույն ժողովուրդների հասարակության կառույցը, ինչպես նաեւ գահակալության ժառանգական իրավունքը: Արեւը արական լինելով, արարման իրավունք տալիս էր իր «հակադարձին»՝ կնոջը, աղջկան*[2] *(տես նկ.):* Հայոց մեջ ***արեւը*** նույնպես ***արական*** է՝ «արեւը մայր մտավ» հնագույն դարձվածքը փաստում է այս իրողությունը: Այս առումով պահպանված եգիպտական օրինակները «ամենացայտունն» են: *«Ռամզես II-ը իր չորս դուստրերի ամուսինն էր, որոնց գլխավորը Բետանտարն էր՝ տիկնաց տիկինը, իր մորը՝ թագուհուն հաջորդողը»:* Կնոջ մահվան դեպքում, փարավոնն իր գահակալությունը պահպանելու համար ամուսնանում է իր աղջկա հետ*[3]: Սիֆոլոգիաներում սրա անդրադարձները մենք տեսնում ենք հնագույն հնդեւրոպացիների՝ թե՛ հին հիթթիթական, թե՛ հնդկական, թե՛ կելտիկ եւ այլն, առասպելազրույցներում եւ հավատամքային էպոսներում, որտեղ երկու եւ ավելի երկվորյակ եղբայրներն ամուսնանում են իրենց քույրերի հետ*[4]: Փաստորեն, սա հնդեւրոպական ցեղային հասարակության մեջ, ցեղի երկու՝ «կես+կես»-երի, տոհմերի միջեւ մորաքրոջ կամ հորաքրոջ աղջկա խաչաձեւ փոխանակությամբ ամուսնական հարաբերությունների*[5] օրինակ է: Քույր-եղբայր ամուսնությունը համարվում էր «կատարյալ միություն», որպես կլանի «ցեղային մաքրությունը» եւ տոհմական հիերարխիայի ամրությանը ապահովող միջոց*[6]:

Հայկական էպոսում, աներեւույթ հոր հրամանով, ԾՈՎԻՆԱՐԸ սկիզբ է դնում դիցերի ՄԵԾ ՏԱՆ տոհմածառին *(մայրական սկիզբ):*

---

*1,- Е. П. Блаватская, “Тайная доктрина”, Смоленск, 1993, т. 2, с. 136:
*2, *3,- Կ. Ավետիսյան, «Արարատը չափական թվերի լույսի տակ», 1995թ., Երեւան, էջ 13:
*4, *5, *6, - T. Gamkrelidze, V. Ivanov, “The Indo-European And The Indo-Europeans”, p. 680, 681, 681n.

Միջագետքյան «Երբ վերեւում» էպոսում, ՄԵԾ ՈՉԻՆՉ-ը միանգամից հանդես է գալիս որպես ***արական*** եւ ***իգական*** (ԱՊՍՈՒ եւ ԹԻԱՄԱՏ) երկու «կես»-երի միացում, ինչպես հայկական հնագույն ***«Երկնեց երկինք, երկնեց երկիր»*** պատառիկում է: Սակայն պարզորոշ է, որ ***մայր-Թիամատը*** առաջնային դիրք ունի եւ հայրիշխանության «ապստամբության» դեմ՝ ԷԱ-ի որդի Մարդուկի դեմ, «ճակատն» ինքն է գլխավորում եւ ոչ թե «ամուսինը»՝ արական ԱՊՍՈՒ-ն: ԷԱ-ի որդի Մարդուկի հաղթանակը, փաստորեն, հին մայրիշխանության «կարգականոնի» նկատմամբ հայրիշխանության հաղթանակն է: Փոքր Ասիայում եւ Հայկական լեռնաշխարհում նախահնդեւրոպական ժամանակներին բնորոշ է եղել մայրիշխանության գերիշխանությունը՝ մ.թ.ա. 4-3 հազարամյակներից շատ ավելի վաղ ժամանակներում: Չաթալ Հույուքում պեղված ցուլի *(իգական հիմք)* բազմաթիվ կուռքերը եւ մայր աստվածուհու արձանիկները այդ են վկայում:

Եզրակացություն

1)«Մայրիշխանություն» հասկացությունը «կին-իշխանություն» չէ, այլ հնագույն հավատամքում «մոր» պաշտամունքի գերակայություն, որի ուղիղ անդրադարձն է՝ մորենական կողմով հնդեւրոպական տոհմային հասարակության մեջ գահակալության ժառանգական իրավունքը: ***Մայրիշխանության*** արտահայտությունը մ.թ.ա. 18-14 դդ. Հայկական լեռնաշխարհում եւ միջագետքում ոչ թե առավել ուշ շրջանի սեմիտական ազդեցության արդյունք է, այլ՝ նախահնդեւրոպացիների քաղաքակրթության զարգացման հնագույն «մայրիշխանության շրջանի» հետք-արձագանքը «հայրիշխանության» ժամանակների համակարգում:

2) Հնդեւրոպական հին լեզուներում, հատկապես հայերենի բառամթերքում, մորենական կողմով ազգակցություն միտող բնիկ հայերեն բառերի գոյությունը, ինչպես նաեւ Հայկական լեռնաշխարհի հավատամքային կենտրոնների ու սրբազան վայրերի տեղանունները ***(մոր սկզբունքով)*** փաստում են Հայկական լեռնաշխարհում «մայրիշխանության» գոյությունը, եւ հնագույն հավատամքում՝ «մայրական սկիզբ» մոտեցման հնդեւրոպական ծագումը: Թե՛ եգիպտական, թե՛ Միջագետքյան, թե՛ հնդ-իրանական դիցանունները պատկանում են հնդեւրոպական լեզվընտանիքին: «Մայրիշխանության» երեւույթը ոչ թե քոչվորական *(սեմիտական),* այլ՝ նստակյաց ցեղային հասարակության արդյունք է: Միշտ եւ մինչեւ այժմ էլ հնդեւրոպական լեզուներով խոսող ժողովուրդների մոտ՝ ***կնոջ, մոր հասարակական դիրքն*** առավել է, բարձր եւ կարեւոր է, քան՝ աֆրիկյան, սեմիտական, մոնղոլո-չինական ռասաների հասարակություններում:

3) Արեւը եւ Լուսինը՝ որպես գիշերային եւ ցերեկային «երկնքի» գլխավոր իպոստասներ, «դառնում» են նախահնդեւրոպական դուալիստական կոնցեպտի ամենահնագույն սիմվոլները: Ըստ հնագույն հնդեւրոպացիների աշխարհճանաչողության դուալիստական սկզբունք-ըմբռնումների, ***Լուսնապաշտությունն*** ու ***արեւապաշտությունը,*** ի սկզբանե, ոչ թե գերակայությամբ՝ մեկը մյուսին մերժելու, այլ մեկ ամբողջի երկու հավասար «կեսերի» համակարգ է եղել: Հնագույն հավատամք-համակարգում «արեւի» եւ «լուսնի» իգական/արական *(կամ հակառակը)* սկզբունքները ներկայանում են ոչ թե հաստատուն, այլ հակադարձ հաջորդական փոփոխականությամբ*[1]: «Սասնա Ծռեր» հնագույն հավատամք-էպոսում, ամուսնական զույգը՝ «կես + կես», «կես արեւ + կես լուսին» ամբողջ է եւ կատարյալ միություն է: Դիցերը ներկայացնում են՝ ***արեւ/լուսին, լուսին/արեւ*** խորհրդապաշտության հայելային հակադարձ անդրադարձում հաջորդականությամբ (Մեծ Սիերը՝ «արեւի», Փոքր Սիերը՝ «լուսնի» խորհրդապաշտությունն է, Մեծ Սիերի կին Արմաղանը՝ «լուսնի», Փոքր Սիերի կին Գոհարը՝ «արեւի» խորհուրդն է եւ այլն:

4) «Սասնա Ծռեր» հավատամք-էպոսը նախահնդեւրոպական հնագույն ժամանակների արձագանքով «արտադրանք» է, որտեղ բացահայտ տեսանելի է վաղնջական հնդեւրոպական ցեղային հասարակության կառույցի եւ ներքին փոխհարաբերությունների անդրադարձը՝ ցեղի երկու հիերարխիաների, երկու առաջնորդների *(լուսնապաշտ, արեւապաշտ)* գոյությամբ, ամուսնական պատրիարխալ սիստեմում *(երկու տոհմերի միջեւ աղջկա փոխանակություն)* «մոր» պաշտամունքի ուժեղ արտահայտությամբ ու ***«մորական կողմով»*** գահակալության ժառանգականության իրավունքի գոյությամբ:

Միեւնույն ցեղի երկու միֆական առաջնորդ-աստվածների օրինակով ձեւավորվում էին արեւապաշտ ու լուսնապաշտ տոհմային հիերարխիաները *(օրինակ՝ ՀԱԹԹԱ-ներ եւ ՄԱՍԱ-ներ):* Եթե արեւապաշտ տոհմի առաջնորդն ուներ որդի եւ դուստր, ապա սրանց ամուսնական միությունը (կես արեւ + կես լուսին) համարվում է «կատարյալ միություն»: Եթե նահապետն ուներ որդի, բայց չուներ դուստր, ապա արյունակից լուսնապաշտ տոհմից հարս «ներմուծելով», սկզբում որդեգրելով «դարձնում» էր նրան իր դուստրը, ապա ամուսնացնելով իր որդու հետ՝ «բավարարում» էր ***քույր-եղբայր*** ամուսնական զույգ՝ «կատարյալ միություն» պայմանը: Եթե նահապետն ուներ դուստր, բայց չուներ որդի, ապա նույն արեւապաշտ տոհմից իր զարմիկին որդեգրելով եւ ամուսնաց-

---

*1,- Արեւը՝ եղբայր, լուսինը՝ քույր *(կամ հակառակը),* հայկական հին հեքիաթներում սիրահար զույգ կամ թագավոր/թագուհի են ներկայանում (Ս.Հարությունյան, «Հայ հին վիպաշխարհ», 1987թ., Երեւան, էջ 16):

նելով իր աղջկա հետ, կլրացներ պահանջված պայմանը: Եթե տոհմի առաջնորդի կինը *(քույրը)* մեռնում է, ապա նա կարող է զրկվել գահակալության իրավունքից, որը կանցնի նրա աղջկան եւ որդուն *(եգիպտական տարբերակում Ռամզես II-ը իր չորս դուստրերի (ձեւական?) ամուսինն էր):*

Տնփեսա կարգավիճակով գահակալությունը լիովին «խորթ» է *արեւապաշտների* պատրիարխալ համակարգում՝ ի տարբերություն *լուսնապաշտների*: «Սասնա Ծռեր» էպոսում, միայն Մեծ Միհրն է «ակամայից» յոթ տարի դառնում ***տնփեսա,*** եւ երբ ետ է վերադառնում, նրան չեն ընդունում, «երկնային» օրինակարգը խախտել էր, որի պատճառով, ի վերջո մեռնում են թե՛ ինքը, թե՛ կինը՝ Արմաղանը:

Էպոսում Քեռի Թորոսը սասունցի երեխաներին դրդում է ծեծել ու ջարդել Խանդուդի գովքն անող գուսան փանդիռներին, վախենալով, որ Դավթի սերը նրան կարող է «տանել» լուսնապաշտների տոհմ՝ որպես ***տնփեսա,*** չէ-որ Դավթի հայրը՝ Մեծ Միհրը, երկնային օրենքը խախտելով այդ նույն «թակարդի զոհն» էր դարձել, եւ սասնա սերունդների դաստիարակ ու պահպանիչ Քեռի Թորոսի առաջին հայացքից անտրամաբանական թվացող արարքն ունի խորը պատճառ-հիմնավորում:

Գոհարի՝ Փոքր Միհրի կնոջ մահից հետո, սասնա վերջին դիցը դառնում է «ջոջ տնից» անմաս: Այսինքն, կնոջ՝ Գոհարի մահով կորցնում է իր իրավունքները Սասնա Տան նկատմամբ:

Հայկական «Սասնա Ծռեր» ➞ «Սասնա Տուն» ➞ «Աստվածային շնչի տուն» ➞«Աստվածների տուն» հնագույն հավատամքային էպոսում ներկայացված հերոսների ներքին փոխհարաբերությունները պայմանավորված են վաղընջական ժամանակների հնդեւրոպական ցեղային հասարակության կառույցում առկա օրենք-տրադիցիաներով: Եվ հնդեւրոպացի ցեղային հասարակության մեջ գործող այդ ***«երկաթյա»*** կամ ***«երկնային»*** օրենքները գալիս են հնագույն արիացիների հավատամքից, նրանց աշխարհճանաչողությունից:

ԳԱԳԻԿ ԹԱԳԱՎՈՐ



Կարապ-Անգղի համաստեղությունը

Շումերական «թեւավոր թռչուն», «արծիվ» պատկերագիրը:

«SUMER-ARYAN DICTIONARY»
L. A. WADDEL, LONDON, 1927

Առաջին ստվածությունը որպես երկրաչափական ծավալ աղերսվում է՝ ***իկոսահեդրոնի*** եւ ***տետրահեդրոնի*** հետ: Իկոսահեդրոնը բաղկացած է ***20*** տետրահեդրոններից:



Իկոսահեդրոնն ունի ***20*** նիստ, ***30*** կողեզր: Էլեմենտը կամ բնույթը՝ ***«ջուր»:*** Կազմված է 20 եռանկյուններից:

Տետրահեդրոնը (քառանիստ) ունի ***4*** նիստ, ***6*** կողեզր. էլեմենտը կամ բնույթը՝ ***«հուր»:***

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Գագիկ թագավորը որպես հիերարխիայի «սկիզբ», «հայր» եւ «պապ»:





Առաջին ստվածությունը, որպես երկրաչափական ծավալ, աղերսվում է ***իկոսահեդրոնի*** (ջուր) եւ ***տետրահեդրոնի*** (հուր) հետ: Իկոսահեդրոնը բաղկացած է 20 տետրահեդրոններից: Իկոսահեդրոնն ունի 20 նիստ, 30 կողեզր: Էլեմենտը կամ բնույթը՝ «ջուր»: Կազմված է 20 եռանկյուններից «հուր»:



Երկրաչափական ծավալ՝ tetrahedron (քառանիստ), ունի 4 նիստ, 6 կողեզր: Քառ > Չորք, ***+Քառ,***- բնիկ հայ բառ է, նախահնդեւրոպ. K²tvr- ձեւից: Հր. Աճառյան, ՀԱԲ, h IV, էջ՝ 556, Երեւան, 1979թ., էլեմենտը կամ էությունը՝ «Հուր»:

«Սասնա» էպոսում Գագիկ թագավորը Ծովինարի եւ Թորոսի հայրն է, Սանասար եւ Բաղդասար երկվորյակների մորենական կողմով պապն է: Նա մի քանի պատումներում, խորհրդով եւ կամեցողությամբ օգնում է երկվորյակներին: Երբ երկվորյակներն իրենց կառուցած բերդն ուզում են անվանակոչել, անհայտությունից հայտված ծերուկին, որը եւ հսկաների հիմնադրած քաղաքը ՍԱՍՈՒՆ անունով է կնքում, երկվորյակները կանչում են՝ պապիկ, բայց, փաստորեն, երկվորյակների պապն իրականում՝ Գագիկ = Կակի = Կակո = Կակեն*[1] է, Գագիկ թագավորն է:

«***Սասնա» էպոսում Գագիկ թագավորի ֆունկցիան է՝***

1. մորենական կողմով հիերարխիայի «սկիզբ», 2. հայրն է՝ քույր եւ նոքայր՝ «առաջին զույգ» աստվածությունների, 3. Սասունը հիմնադրելու համար իր թոռներին 20 կամ 30 տուն է նվիրում:

«Սասնա էպոսի» համարյա բոլոր աստվածությունների անունների ստուգաբանությունները ցուցում են, որ դրանք ժամանակագրությամբ խորանում են միչեւ նախահնդեւրոպական ժամանակներ:

Գագիկ Թագավոր

«Սասնա Ծռեր» էպոսում Ծովինարի եւ Թորոսի հայրը՝ Գագիկ թագավորը, մի շարք պատումներում հանդես է գալիս՝ ***Աստղիկ*** եւ ***Խաչապաշտ*** անուններով:

«Գագիկ» → [Gag+իկ] > **[*ĝʰagʰa-]***[2] ***(իկ վերջածանցը մեծի կամ տեղանունի իմաստով է միանում: Օրինակ, աստղ+իկ = մեծ աստղ՝ Վենեռա, Հայ+իկ = Հայկ > մեծ հայ, որ հետագայում փաղաքշական կամ փոքրի իմաստն է ստացել: Նաեւ, իք -ը, որ տեղանքի պատկանելիություն է ցուցում):***

ԳԱԳ + իկ անունը հայերենում նաեւ արտաբերվում է՝ ԳԱԳ = ԿԱԿ = ԿԱԿԵ, բարբառներում՝ ***գ > կ*** հնչյունային անցումով, որ նշանակում է՝ մորենական կողմի պապ:

ԳԱԳ+իկ > GAGA անունը նախահնդեւրոպական **[*ĝʰagʰa-] > [*ĝʰans-]** ձեւն է՝ ***«կարապ», «սագ»*** նշանակությամբ, որ հնդեւրոպական տարբեր լեզուներում նույն «ջրային թռչուն» իմաստն ունի: Սանսկրիտ՝ **haṁsá-** «կարապ», հունարեն՝ **Khēnós** «սագ» եւ հայերենում՝ «կարապ», հին անգլ.՝ gōs, ռուս.՝ gus' եւ այլն*[3]:

GAG- (ik) > GAGA-ն ուրարտական՝ Տարիի Գամա, ասորա-բաբե-

*1,- Վ. Ա, Պետոյան, «Սասունի բարբառը», 1954թ., Երեւան, էջ 109:
*2, *3, - T. Gamkrelidze, V. Ivanov, նույն աղբյուր, էջ՝ 460:

լական աղբյուրների՝ Թիլ-Գարիմու > Թեգ-Արամա, բիբլիական՝ Թոգ-Արմանին է, Ըստ Մ. Խորենացու՝ «Տուն Թորգոմա»: Ուրարտական Տարիի-Գամա (***Տարիի > Տարխի > Տարքու***) Մ. Խորենացու Տորք Անգեղյան է եւ Arme (***Արմէ***) երկրի՝ Ինգալավա, (ingalava) հայերենում ***Անգղ*** կոչված գավառը (Անգղ Տուն գավառը) իր համանուն քաղաքով»[*1]: Փաստորեն, Տորք < Թորգոմ-Թեշուբի տունը կոչվել է Անգեղյան՝ անգղի, արծվի տնից: Այսինքն, Տորք-Թորգոմ-Թեշուբը պատկանում է անգեղյան տանը, անգեղյան տան սերունդն է: Անգղը ***Հայասա*** բովանդակ երկիրը ներկայացնող աստծո՝ Ներգալի աստեղային ատրիբուտն է, որն ***Անգղի***՝ այսօրվա ***Կարապի*** համաստեղությունն է:

«Սասնա Ծռեր» էպոսում ԳԱԳԻԿ-ի անունը, որ հայերենի բարբառներում նաեւ հնչում է՝ ԿԱԿԻ, ԿԱԿԵ տարբերակներով, հնդեւրոպական լեզուներում, բացի GAGA .- «Կարապ, թռչուն» նշանակությունից, նաեւ ունի գերագույն աստվածությանը խորհրդանշող՝ «գագաթ, ծայր, սկիզբ» իմաստը: Սանսկրիտ.՝ girí - «լեռ», ավեստա՝ gari - «լեռ», ալբ.՝ gur - «լեռնակատար», հուրրիերեն՝ KAKARI[*2] «գագաթ», հայերեն՝ «gagat»: Էպոսի Գագիկը թագավոր է՝ ***ԳԱԳԱ-(թ)***, մորենական կողմով մեծ հայր է, պապ է՝ ***Կակե*** → KAKI > KAKE: Գերագույն աստվածության ատրիբուտներ են՝ երկնային արքա, երկնային հայր, որի աստեղատունը՝ **Gaga > «Կարապ-Անգղի»** համաստեղությունն է *(**Կակե՝ «մեծ հայր»**, բնիկ հայկական բառ է, տես՝ Ա. Սուքիասյան, «Հայոց լեզվի հոմանիշների բառարան»,Երեւան, 1967թ.):* Մյուս կողմից, Թ. Գամկրելիձեի եւ Վ. Իվանովի հնդեւրոպական լեզվի ֆունդամենտալ ուսումնասիրությունը պարզել է, որ հնդեւրոպական «ժայռ» կամ «քար» բառը նաեւ նշանակում է՝ ***«երկինք»: «Հնդեւրոպական լեզուներում «քար»-ի համար ամենաճիշտ բառը նաեւ նշանակում է՝ «երկինք»***[* 3]:

*«**Քար** բառը բնիկ հայերեն բառ է, ՀՆԽ՝ **Kar-** «քար». կարծր արմատից, որ (հնդեւրոպ.) ցեղակիցների մեջ կրկնվում է կրկնությամբ կամ ածանցական իմաստներով»[*4]: Սանսկրիտ՝ **kara-kara-** «կարծր», «կոշտ», լատ.՝ **cancer** «խեցգետին», շվեդ.՝ **har** «քարքարոտ գետին», շումերերեն՝ **g'ar** «ադամանդ», ֆիննն.՝ **kari** «ժայռ», խալդերեն՝ **qarbi** «քարեր», սանսկրիտ՝ **karaka-** «կոկոսի ընկույզ»[*5]: Ինչպես նաեւ՝ Ավեստա **aśman-** «քար, երկինք», Սանսկրիտ՝ **aśman-** «քար, ժայռ, քարե գործիք, քարե մուրճ, ամպրոպի աստվածության քար, երկինք»[*6]:*

---

*1,- Մովսես Խորենացի, «Պատմություն Հայոց»: 1981թ. էջ 128-129:
Հ. Ներսիսյան, «Հայ ժողովրդի պետականութ. եւ պատմութ. ակունքներում», 2002, ԱՄՆ, էջ 121:
*2,- Ն.Վիրաբյան, ըստ E.A.Speiser-ի «Հայ ժողովրդի ծագումը», 1992, ԱՄՆ, էջ 95:
*3, *6, - T. Gamkrelidze, V. Ivanov, նույն աղբյուր, էջ 574-575:
*4, 5,- Հր.Աճառյան, ՀԱԲ, h. IV , էջ 558-559:

Անհունի
սիմվոլը՝ շրջանագիծ կամ երկրաչափական ծավալ՝ գունդ:
Գունդ > հայ հին մատենագրության մեջ՝ *կունտ*, *կունտն*:
Հր. Աճառյան, «Հայկական արմատական բառարան», հ I, էջ՝ 594, Երեւան, 1971թ.:

Բրահմայական համակարգ.
7-րդ չակրայի սիմվոլը՝ «Ջահ»,
8-րդ չակրայի սիմվոլը՝ «Կարապ»

Hikê աստվածությունը. դնտալ՝ Կհոնսու-Ռենեփ պապիրուսից, նոր թագավորություն: Նկարը վերցված է՝ Jeremy Naydler, "Temple Of The Cosmos" **գրքից**, USA, 1996, p. 125.

Հնագույն աստեղային համակարգում, գլխավոր աստվածության սիմվոլը՝ ***թռչունն*** է: Հնագույն կանոնակարգերում, անհունից, տիեզերական պոտենցիալ ներուժից արտահայտված առաջին էությունը, հրե թռչունը, որ արարում է տիեզերքը, հանդես է գալիս որպես՝ կարապ, հավք, թեւավոր բզեզ եւ այլն, որ ***անհունի կենտրոն - լեռնագագաթից*** արտահայտելով ինքն իրեն, սկսում է «ձեւավորել» նախ եւ առաջ՝ ***երկինքը:***

Երկրաչափական ծավալների առումով, «բովանդակ ամբողջը»՝ չդիֆերենցված ***անհունը,*** ըստ հնագույն համակարգերի, ներկայանում է որպես՝ ***շրջանաօղակ*** կամ ***գունդ*** սիմվոլով, իսկ նրա ***առաջին*** դիֆերենցված ներկայացումը՝ ***արական հրե թռչունը,*** որպես երկրաչափական միավոր ***Քառանիստն*** է՝ Tetrahedron-ը, որի էլեմենտն է՝ ***հուրը:*** Եգիպտական հայքսոսների թագավորության Khonsu-Renep տեքստում Hikê-ին, ոչ թե առաջինն է, որպես՝ «աստվածների հայր», այլ՝ մանիֆեստացիայի հայրն է: Անհունից աստվածներն արտահայտվում են նրա միջոցով:

Ես նա եմ,
որ կյանք է տալիս աստվածների ընկերակցությանը,
Ես ե՛մ աստվածների հայրը...
որն իրագործում է ցանկությունները,
Օ՜ աստվածներ, մինչեւ ձեր լինելիությունը
ամենայն ինչ իմն է, դուք միայն հետո եկաք,
Որովհետեւ ե՛ս եմ՝ Հա՛յկը (Hikê)* [2]:

Այս աստվածությունը եգիպտական պատկերներում ներկայանում է՝ ձեռքերում երկու օձեր, որոնք պարուրում են իր մարմինը, եւ գլխին՝ առյուծ: Երկու օձերով պարուրված թեւավոր առաջին աստվածությունն առկա է ե՛ւ հին Միջագետքյան, ե՛ւ հնդկական՝ բրահմայական համակարգերում *(տես նկարները):*

Հնագույն համակարգերում, առաջին աստվածությունը՝ Աթումի ուղեղից ծնված միֆական թռչունն է՝ **Hikê** -ն է, հայկական էպոսում՝ Գագիկ թագավորը > Gaga-ն՝ կարապը, ըստ Մ. Խորենացու՝ Հայկն է, որ Բաբելոնում իր Արամանյակ որդին ծնելուց հետո ***չվեց*** Արարադի երկիր*[3]:

Բրահմայական համակարգում 7-րդ չակրան՝ ***հազարաթերթիկն*** է, լույսն է, եւ ներկայացնում է՝ «բովանդակը, ամբող-

*1, - T. Gamkrelidze & V. Ivanov, նույն աղբյուր, էջ 575, 714n.
*2,- Jeremy Naydler, "Temple Of The Cosmos", 1996, USA, p. 124.
*3,- «Մովսես Խորենացի, «Պատմություն Հայոց», 1981թ., էջ 40-41:



Իկոսահեդրոն ծավալը, բնույթը «ջուր», իր մեջ ունի 20 տետրահեդրոններ, որի բնույթը «հուրն» է:

ջը», որի սիմվոլը՝ ***շրջանագիծը*** կամ ***գունդն է:*** Իսկ 6-րդ՝ ***Աջնա*** չակրայի սիմվոլը «Կարապն» է (տես նկ. նախորդ էջում):

Հնագույն թաքնագիտական երկրաչափության մեջ*(Պյութագորաս, մ.թ.ա. VII դար)*, ***գունդը*** կամ գնդանման ծավալը՝ ***իկոսահեդրոն,*** ներկայանում է որպես գլխավոր աստվածության ատրիբուտ՝ խորհրդապաշտական սիմվոլ*[1], որից արտահայտվում է առաջին էլեմենտը՝ հուրը.- Tetrahedron-ը:

Հայերենի մի շարք բարբառներում ԳՈՒՆԴ = ***կունդ, գ'օնդ, կոնտ, գիւնդ, գ'ոնդ*** *եւ այլն, ունի գնդաձեւ մարմնի նշանակություն, ինչպես նաեւ՝ «անիվ»-ի նշանակություն: Համշեցիների բարբառում՝* ***գունտ****, - նաեւ նշանակում է՝ «ընկույզի ամբողջ դուրս եկած միջուկը»*[2]*:*

«Սասանա Տուն» էպոսի «թագավորը»՝ ԳԱԳ+իկ-ը, ուրարտական ***«Մեների դուռ»*** ժայռի վրա արձանագրված աստվածների հիերարխիայի առաջին աստվածության՝ ՀԱԼ+ԴԻ-ի, եւ պատմահայր Խորենացու ներկայացրած հայ ժողովրդի ցեղային նահապետի, որ գլխավոր աստվածություն է՝ Հայկ > Հաւք > ՀԱՅ+իկ,- համարժեքն է: Էպոսում, **Գագիկ** անունը նույն աստվածության աստղագիտական անունն է, որ **նախահնդեւրոպական** ժամանակներից է մնացել:

Խորենացու՝ ***Հայկը չվեց հյուսիս*** եւ Հայկի գերդաստանը ***300 հոգուց*** էր բաղկացած իմֆորմացիան ունի՝ ***«հուր-թռչուն՝ սիմվոլը եռանկյուն»*** թաքնագիտական նշանակությունը: Precession երեւույթի համաձայն, Cygus-ը՝ «Կարապ-Անգղը», 5000 տարի առաջ մենամարտում է երկնակամարի հյուսիսային բեւեռում «իշխող» աստղատունը՝ ԲԵԼ> նշ. է՝ «Տեր», ՎԻՇԱՊԻ (Alpha Draconis) համաստեղության հետ: «Անգղ-Կարապ» համաստեղությունը հնում համարվել է հյուսիսային համաստեղություն*[3]: Հյուսիսային բեւեռում, ըստ տիբեթական համակարգի, «թռչուն», «վիշապ» եւ «վարազ» համաստեղությունները ***կենաց ծառի*** շուրջ պտտվելով ստեղծում է գոյաբանական աշխարհի երեք փուլերը: ԿԱՐԱՊԻ համաստեղությունը (Cygnus), որպես՝ «անգղարծիվ», հնագույն հայերի մոտ *(մ.թ.ա. II հազարամյակ, Հայասա երկիր)* եղել է բարձրագույն աստվածության

---

*1,- Բազմաթիվ օրինակներից բերենք մեկը՝ հայկականը. *«... Ոչ Արամազդ ոք, այլ ի կամեցողսն լսին լինել Արամազդ չորսից եւս այլոց անուանեցելոց ոմանց Արամազդ. յորոց մի է եւ* ***կունդ*** *ոմն Արամազդ»* (Մ. Խորենացի, «Պատմություն», Երեւ., 1981, էջ՝ 102): Փաստորեն, հնթանոս հավատամքի մասին 5-րդ դարի պատմահոր՝ Խորենացու, այս թաքնագիտական, խորհրդապաշտական իմֆորմացիան չհասկանալով, աշխարհաբար սխալ թարգմանությամբ՝ ***«կունդ Արամազդը»*** դարձել է՝ ***«Ճատատ Արամազդ»***: Խորենացին նաեւ պարզ հաղորդում է, որ ***ոմանք ընդունում են չորս Արամազդների գոյություն***, բայց ճիշտը միայն մեկն է՝ ***կունդ Արամազդը,*** ընդգծելով գլխավոր աստվածության երկրաչափական ատրիբուտը: Փաստորեն չորս Արամազդները, դրանք նույն Արամազդի հիերարխիայում աստիճանական տարբեր արտահայտություններն են, որ հետագայում իմաստային աղավաղումներ են ունեցել:

*2,- Հր. Աճառյան, «Հայկական արմատական բառարան», 1971թ., Երեւան, h I, էջ՝ 593-594:

*3,- Giles Sparrow, “The Universe”, 2001, UK, p. 17.

Նկարը՝ Ա. Մովսիսյանի «Հայկական Մեհենագրություն» գրքից է, Երևան, 2003թ.:«Աստված» գաղափարագրով եւ արծվի պատկերով (որը երբեմն հանդես է գալիս օձի հետ մարտնչելիս կամ ճյուղը կտցած) բազմաթիվ կնիքներ են հայտնաբերվել մի շարք հնավայրերից, որոնք կարող է կապվել Սարդիի պաշտամունքի եւ Սարդուրի անվան հետ» (էջ՝ 109):

Տիբեթական համակարգում Կենաց ծառի շուրջ պտտվող «գոյության» երեք փուլերը՝ թռչուն, վիշապ, վարազ աստղատներով՝ :

աստեղային եւ խորհրդապաշտական սիմվոլը, որի երկրաչափական ատրիբուտը Tethrahedron-ն է՝ 4 եռանկյունի նիստերով եւ 6 կողեզրերով, որ երկնակամարի հյուսիսային բեւեռում «մենամարտի» մեջ է «Վիշապ-Օձի», այսօրվա DRACO համաստեղության հետ: Մենամարտող թռչունը Հայկն է՝ Անգղի համաստեղությունը, որ Արամանյակի հայրն է:

«Աստված» գաղափարագրով եւ արծվի պատկերով (որը երբեմն հանդես է գալիս օձի հետ մարտնչելիս կամ ճյուղը կտցած) բազմաթիվ կնիքներ են հայտնաբերվել մի շարք հնավայրերից, որոնք կարող են կապվել Սարդիի պաշտամունքի եւ Սարդուրի անվան հետ»*[1]:

Հյուսիսային աստեղատներից «Անգղ-Կարապ» համաստեղությունն է, որ երկնակամարում արեւելքից արեւմուտք եւ հարավից հյուսիս 360^0-ի ընթացք ունի ու աղերսվում է տիեզերական մեծ տարվա՝ Precession երեւույթով 25920 տարեփուլի հետ: Սարդի > Սար-դի (***դի = դից = աստված***). շումեր.՝ šar, հունարեն՝ sáros, լատին՝ sarus-ը, հայ.՝ ***շար***, 3600 տարվա շրջան է նշանակում, բայց հատկապես ներկայացնում է «ամբողջ, բովանդակ» գաղափարը՝ ***շրջանաօղակի*** սիմվոլով, եւ շումերական ծագում ունի*[2] ***(ուրարտ.՝Š > s, TuŠpa = Տոսպ)***[3]: Հին հայերի մոտ, նոր տարվա Նավասարդյան տոները՝ 360^0 շրջանի ավարտի եւ նոր տարեշրջանի սկսման իմաստն է ունեցել (***նավասարդ > նավա(«նոր») + սարտա («շրջան > տարեշրջան»)***): ՇԱՐ-ը որպես 3600 տարեշրջան ընդունված է եղել հին հայերի մոտ: Մ. Խորենացին իր «Պատմության» մեջ, հին թագավորների կառավարման տարիները նույնպես հաշվում է ՇԱՐ-երով, եւ ըստ հների՝ 36000 տարին համարվել է որպես սկիզբ մարդկային*[4]: Ամեն 36000 եւ կեսը՝ 18000 տարեփուլերով, «Կարապ-Անգղ» համաստեղությունը հյուսիսային բեւեռում դառնում է՝ ***«իշխող»:***

Թե՛ «ութաթեւ աստղը», թե՛ «Անգղ-Կարապը» եւ թե՛ «Աստված» կիսալուսնաձեւ գաղափարագիրը վերաբերում են «Կարապի» համաստեղությանը, որ գերագույն աստծո աստղատունն է եւ երկնակամարում ունի 360^0 շրջապտույտ ու միայն դրա համար է կոչվում՝ Սար = šar + di(դից)= Սարդի:

---

*1,- Ա. Մովսիսյան, «Հայկական Մեհենագրություն» 2003թ., Երեւան, էջ՝ 109
*2,- Հր.Աճառյան, «Հայոց լեզվի պատմություն», 1940թ., էջ՝ 141, 199:
*3,- Գ.Բ. Ջահուկյան, «Հայոց լեզվի պատմություն», 1987թ., էջ 433:
*4,- «Մովսես Խորենացի, «Պատմություն», 1981թ., էջ 16-17:



Թռչունի, վարազի եւ վիշապի աստեղատները հյուսիսային բեւեռում: Sky Glob. 3.5 for windows



Հայկական լեռնաշխ., 38^0, -44^0:
3099 մ.թ.ա., Օգոստոս 11, «Կարապի» եւ «Վիշապի» մարտնչումը երկնքում:

Ըստ Մ. Խորենացու, Հայկի որդին է՝ Արամանյակը*[1]: Արայի ման-(յ)-ակ*[2] > Արայի օղակ-շղթա, նկատի ունի ***Արա արեւի ուղեծիրը,*** որը ներառում է զոդիակի՝ 12 կենդանակերպ համաստեղությունները: Մ. Խորենացու կողմից բերված մեկ այլ հին ավանդապատման մեջ, պատմահայրն էլի նշում, «թաքնագիտական լեզվով» ընդգծում է նույն միտքը՝ Արա Գեղեցիկի մահից հետո, նրա որդի ***Արայան Արան*** 12 տարեկան էր*[3]: Սա 12 զոդեակների դիցն է: Արա Գեղեցիկը՝ «արեւն» է, Շամիրամը՝ «լուսինը» (**sinarama = լուսինը բարձրացավ**): Ուրեմն, «Անգղ-Կարապ» համաստեղությունը՝ «արեւի ուղեծրի» ***հայրն*** է, «Արեւի» ***պապն*** է եւ, 12 համաստեղությունները խորհրդանշող դիցի ***նախապապն*** է: ***Կադմոսը,*** որն ըստ հունական դիցաբանության գրային համակարգն է նվիրում մարդկանց (սրա մասին առջեւում), ըստ Խորենացու, ***Արամանյակի՝ արեւի ուղեծրի*** որդին է:

ԿԱՐԱՊ-ԱՆԳՂԻ համաստեղությունը, հնագույն հայերի մոտ, համարվել է բարձրագույն աստվածության խորհրդապաշտական սիմվոլը, որի երկրաչափական ատրիբուտը՝ Tethrahedron-ն է՝ 4 եռանկյունի նիստերով եւ 6 կողեզրերով: ***Կարապ*** կամ ***Անգղ*** համաստեղությունը խաչաձեւ է, ամառային երկնքում պարզորոշ երեւում են նրա 7 պայծառ աստղերը: Ըստ հնագույն եգիպտական *(Հելիոպոլիս, հիքսոսյան շրջան)* համակարգի, նա՝ ԱՐԵՎԻ՛, ՌԱ-ի հայրն է:

Ուրարտական պատկերներում ՀԱԼԴԻՆ ունի չորս թեւ եւ կանգնած է առյուծի վրա*(նկարը հաջորդ էջում)*: Արեւի ուղեծրից, 12-ի զոդեակաշղթայից դուրս, ՀԱԼԴԻ-ն ***«Անկդ-արծիվն»*** է, որ 12 համաստեղությունների շղթայում առյուծի՝ «Առյուծ» համաստեղության վրա է կանգնած: Այսինքն, արեւը ամառային արեվադարձին մտնում է «Առյուծ» համաստեղություն *(մ.թ.ա. 5500թ., «Առյուծ» համաստեղության աստղ՝ Ռիգիլուս , որ նշանակում է՝ թագավոր)*: Հաջորդ էջի նկարում, ուրարտական շրջանի գերագույն աստվածությունը՝ Հալդին «Առյուծ»-ի վրա է, ձեռքին քառանկյուն «դրոշակ»: Սա արեւը տարվա չորս եղանակներին 4 կարդինալ աստեղատներում՝ քառակողմ արտահայտվելու մասին է***(արեւի դիրքն ամառային եւ ձմեռային արեւադարձերին, ինչպես նաեւ՝ գարնանային եւ աշնանային գիշերահավասարներին: Պատկերում Հալդին***

*1, *3,- Մ. Խորենացի, «Պատմություն», 1981թ., էջ 41, 75:
*2,- Արա +մանեկայ. մանեկայ > մանեակ > փաթ, ոլորք, հյուսք > շրջան, պտույտ: Ա. Սուքիասյան «Հայոց լեզվի հոմանիշների բառարան», էջ 436:

Ուրարտական շրջան, մ. թ.ա. I հազ.: Նկարը՝ Ա. Մովսիսյանի «Հայկական Մեհենագրություն»

առյուծի վրա է կանգնած, որովհետեւ ամառային արեւադարձին արեւն իր բարձրագույն կետում է, երբ մտնում «Առյուծի» համաստեղություն եւ 12 զոդիակների շղթայում «Առյուծ» աստղատունը համարվում էր թագավոր):

«Թռչունի» խորհրդաբանությունը, որպես ընդհանուր հնդեվրոպական հավատամքային կարգականոններում գերագույն աստվածության հիմնական սիմվոլ, ներկա է բազմաթիվ պատումներում: Հունական Զեւսը ***Կարապի տեսքով*** այցելում է Լեդային, որի հետեւանքով վերջինս հղիանում է, եւ ծնվում են ***երկվորյակները***՝ Կատոր եւ Փոլուքս (Castor & Pollux) աստղերը, որոնք գտնվում են ԵՐԿՎՈՐՅԱԿՆԵՐ-ի համաստեղությունում: «Սասնա Ծռեր» էպոսում եկնային հայրը ծովի միջից անմահական աղբյուր է բխեցնում, որից խմելով Ծովինարը հղիանում է երկվորյակներով, որոնք հետագայում կրում են երկնքից իջած հոր խորհրդանշանը՝ Խաչ-Պատարագին: Հնդկական Բրահմին մշտապես ուղեկցում է Համսա թռչունը (Կարապ կամ Սագ): Քրիստոնեության մեջ նույնպես, հայր աստվածության սիմվոլը որպես ՀՈԳԻ՝ թռչունն է, աղավնին:



Բիայնական(Վանի) աստվածների «ցանկի» հայտնի արձանագրության մեջ ասվում է՝ ***«6 այծ Հալդիին, որ լինեն զենված»:*** Նաեւ՝ ***«17 ցուլ եւ 34 ոչխար՝ Հալդի աստծուն զոհաբերել»:***

Ուրարտական Հալդիի 17 թիվը, մինչեւ այժմ, բոլոր ակադեմիական ուսումնասիրողների համար մնացել էր առեղծված: Նույնիսկ The «Mystery of Numbers» (***Օքսֆորդի համալսարան, Նյու-Յորք, 1993թ.***)-ի հեղինակ Աննամարիա Սշիմմելն իր գրքում բերելով այդ թվի միստիկ գործածության համարյա բոլոր հին տեքստերի տվյալները, այնուամենայնիվ չի պատասխանում, թե ինչո՞ւ է 17 թիվը սրբազան[*1]:



Ակնհայտ է, որ 12 զոդիակների 12 «թեւերը» ունեն 12 միավորի արժեք (***տարին ունի 12 ամիսների բաժանում, գիշերահավասարներին օրն ունի՝ 12 + 12 գիշերային եւ ցերեկային ժամերի բաժանում եւ այլն: Շումերական սրբազան չափը՝ 1 IKU- ն= 60 x 60, որը՝ 3600 է, ինչպես***



*1,- Հին Կտակարանում ջրհեղեղի մասին ասվում է, որ այն սկսվեց 2-րդ ամսի 17-րդ օրը եւ վերջացավ 7-րդ ամսի 17 օրը, եւ Նոյյան տապանը կանգնեց Արարատ լեռան գագաթին: Հեթանոսական շրջանում տարվա 1-ին ամիսը սկսվում էր Մարտ 21-ին: Երկրորդ ամսվա տասնյոթը կլինի՝ մեր Մայիս 7-8-ը: Ջրհեղեղը վերջացավ 7-րդ ամսվա 17-ին, որը մեր Հոկտեմբեր 7-8-ն է: Այս ընթացում մ.թ.ա. V հազարամյակում արեւը կատարելով կենս շրջան՝ «Երկվորյակների» համաստեղությունից հասնում է «Կարիճի» համաստեղություն:



Շումերական «թեւավոր թռչուն», «արծիվ» պատկերագիրը:

«SUMER-ARYAN DICTIONARY» L. A. WADDEL, LONDON, 1927



Անգղ կամ Կարապ (Cygnus) հյուսիսային համաստեղությունը:

նաեւ ներկայացնում է «շրջանաօղակը», որպես մեկ ՇԱՐ՝ «բովանդակ, ամբողջ»: Բաբելական MUL. APIN կոչվող մ.թ.ա. IX դ. աստղային ցանկում 36 աստղերն ու աստեղատները բաժանված են երեք օղակների, յուրաքանչյուրում՝12 աստղեր եւ աստղատներ,- 36:12=3): Ուրեմն, զոդիակի շղթայի 12 համաստեղությունները՝ փուլն ավարտող վերջին դիցի աստեղային ներկայացումն է *(տարբեր երկրներում տարբեր անուններով՝ Հորոս, Ադամ Կադմոն, Փոքր Միեր եւ այլն),* որի երկրաչափական ատրիբուտը կազմված է 12 «թեւերից», եւ յուրաքանչյուրը՝ 12 արժեքային միավոր է: Այս 12 արժեքով 12 «թեւերը» կարող են հենվել 6 ներքին կողեզրերին, որոնցից յուրաքանչյուրի արժեքը՝ 17 է ***(ըստ Պյութագորասի հայտնի օրենքի՝ $a^2 + b^2 = c^2$, որտեղ՝ a =12 եւ b =12, 12^2+12^2 =144+144 =288, c = $\sqrt{288}$ =16.970562-ը ≅17)***: Այսինքն, Հալդին 12 կենդանակերպ աստեղատների հիմքհենարանն է՝ 6 եզրաթեւերով հեքսագոնն է՝ ***6 այծ Հալդիին, որ լիններն զննված***), որոնցից յուրաքանչյուրի երկարության միավորը՝ 17 է,- ***17 ցուլ զոհաբերել Հալդիին, նաեւ՝ 34 ոչխար = 17 x 2 = 34*** *[1]:

«Եվ Աստված աշխարհն արարեց վեց օրում» Հին Կտակարանյան «ճշմարտությունը», որ շումերական ժառանգություն է *(շումերական պանթեոնի 6 զույգ գլխավոր աստվածություններ եւ նրանց կատարած ֆունկցիաները արարչության մեջ)* ուղիղ համեմատության մեջ է «սրբազան խորանարդի» մակերեսի եւ հնդ-արիական գերագույն էակ Բրահմի 6 օրվա տեւողության հետ, որն աղերսվում է տիեզերական մեծ տարվա հետ՝ 25920 տարի *(Բրահմի նյութականորեն արտահայտվելու կյանքի տեւողությունը կամ նրա 100 տարին՝ 311040000000000 մարդկային տարի է)*[*2]: Վեց օրը 144 ժամ է՝ 6 x 24 = 144, որը 12^2 է: Որպես երկրաչափական ծավալ՝ Tetrahedron-ը ե՛ւ «հուր» էլեմենտի, ե՛ւ հավատամքային միստիկ «թռչունի» կամ «Կարապ» աստեղատան ատրիբուտն է (***հուր-թռչուն***), եւ սա իրենից ներկայացնում է՝ ***եռանկյունիներ,*** որ ***չորս*** հատ են (***34 ոչխար զոհաբերել Հալդիին՝ 3:4 հարաբերություն***)[*3]: Tetrahedron-ը վեց

*1,- Արիստոտելը գրում է, որ hexameter-ը (վեցաչափը) ունի 17 վանկ-հնչյուն, ինչպես լիրա երաժշտական գործիքի կենտրոնական 2 լարերը՝ 9:8 հարաբերակցությամբ, որ «ստեղծում են» կանոնավոր երաժշտական ինտերվալը: Annemarie Schimmel, «Mystery of Numbers», 1993, p. 219-220:

*2,- Տես «Աստվածների անունները որպես թվային արժեքներ» եւ «Աստղագիտություն» բաժինները, էջ՝ 61-115:

*3,- «Միերի Դուռ». ուրարտական շրջանի աստվածներին զոհաբերվելիք անասունների թվաքանակների վերծանությունների մասին տես՝ «HALDI դիցանուն եւ «Միերի դուռ» բաժինը, էջ 449:

կողեզր ունի: ***Վեց այծ զենել Հալդիին,-*** հրամայում է ուրարտական արձանագրությունը: Եթե Hexsagon-ի կամ Tetrahedron-ի մեկ կողը՝ 17 միավոր է,- ***17 ցուլ զոհաբերել Հալդիին,-*** հրամայում է արձանագրությունը, ապա վեց կողերը՝ **6x17=102 միավոր է.** ստանում ենք հայտնի արձանագրության մեջ նշված բոլոր **արական սեռի աստվածներին զոհաբերվելիք ցուլերի ճիշտ թվաքանակը:**

«Սասնա Ծռեր» էպոսի որոշ պատումներում, Քեռի Մորոսը երբեմն ***«ստանձնում»*** է Գագիկ թագավորի ֆունկցիաները: Սա էպոսի հնագույն ժամանակներից մինչեւ մեր օրերը «դեգերումների» աղավաղումների ու իմպրովիզացիաների արդյունք է: Քեռի Մորոսը՝ Մհոր-Մեշուբ-Մեյշեբա, որի խորհրդապաշտական սիմվոլը երկնային Ցուլն է (Taurus = Տավար), երբեմն *(մեկ-երկու պատումներում)* ներկայանում է որպես՝ Մեւաթորոս = թեւերով Մորոս *(որտեղ Մորոսը թագավոր է եւ Մեծ Մհերի կնոջ՝ Արմաղանի հայրն է),* որը փաստորեն՝ Գագիկ = Gaga կարապ, թռչուն խորհրդապաշտական սիմվոլի ներկայացումն է:

«Ու հարցուցին, թե.- Մեւաթորոս տա՞նն է,
Ասին.- Մեւաթորոս գնացեր է Վան:
Ագրատգահ գնացին Վան
Ու հարցուցին.- Մեւաթորոս հո՞դ է:
Ասին.- Չէ, բերդի հիմ թալեց,
Իր հաց կերավ, գնաց Արզրում:
Ու հարցուցին էնտեղ.- Մեւաթորոս հո՞դ է:
Ասին.- Բերդի հիմ թալեց,
Կնսոր կերավ ու գնաց Կարս:
Գնացին ի Կարս: - Մեւաթորոս հո՞դ է:
Ասին.- Բերդի հիմ թալեց,
Հրամեն կերավ ու գնաց Մանազկերտու* [1]:

«Սասնա Ծռեր» էպոսում Քեռի Մորոսի մեկ օրվա ընթացքում Պատմական Հայաստանի չորս նահանգ-տներով կամ քաղաքներով *(Վան, Արզրում, Կարս, Մանազկերտու)* պտտվելը աստղագիտական բնույթ ունի, եւ վերաբերում է օրվա մեջ «Կարապի» (Gygnus) համաստեղության ընթացքին: Միայն այս համաստեղությունն է, որ (***Օգոստոս 11-ին, 3-րդ հազ. մ.թ.ա.***) հայկական լեռնաշխարհից (**37⁰-41⁰, 39⁰-46⁰**) երկնքին դեպի հյուսիս նայելու դեպքում, առավոտյան ժամը՝ ***06:00 - 07:00*** սկսյալ, հարավ արեւելքից հյուսիս արեւմուտք է ընթանում օրվա 12 ժամերի ընթացքում, երկնակամարը կտրելով աջից ձախ (***տես՝ Sky Glb. 4.0 համակարգչային ծրագիրը***): «Կարապը», առավոտյան հայտվում է ***Կորդվաց*** նահանգում ***(37⁰ - 44⁰),*** եւ «մայր է մտնում» ***Անգեղ Տուն*** նահանգում***(38⁰ - 40⁰):*** Այս պատումներում Մեւաթորոսն է, եւ ոչ թե Գագիկը, որ օրվա 12 ժամը բաժանելով 4 մասի եւ յուրաքան-

---

*1,- «Սասումցի Դավիթ», 1989թ., Երեւան, էջ 52:

չյուրում լինելով 3 ժամ, շրջում է հին հայկական չորս նահանգատներով՝ 1) Վանա տուն (***որը քիչ հյուսիս է Հայոց ձորից եւ Աղթամարա կղզուց***): 2) Մանավազյանց իշխանական տուն, որտեղ գտնվում է ՀԱՐՔ գավառը (***կենտրոնը՝ Հայկաշեն, Մանավազակերտ***), 3) Վանանդյաց իշխ. տուն (***կենտրոնը՝ Կարս***), 4) ***Արզրում*** (***Բյուրակն, սերմնաց լեռներին մոտ***) կամ հնարավոր տարբերակ է՝ ***Արզան***-ը, Աղձնիք նահանգ:

Իսկ այժմ, Հայկ նահապետի մասին 5-րդ դարի պատմահոր տեղեկությունը համադրենք «Սասնա» էպոսում Քեռի Թորոսի մասին իմֆորմացիայի հետ:

«... Բաբելոնում իր Արամանյակ որդին ծնելուց հետո. չվեց դեպի Արարադի երկիրը (Վանա լճից հարավ արեւմուտք, Կորդուքի լեռներ, որտեղ գտնվում է Արարադ լեռը)[*1]***, որ գտնվում է հյուսիսային կողմերում, իր որդիներով, դուստրերով եւ որդիների որդիներով, որ զորավոր մարդիկ էին, թվով մոտ երեք հարյուր հոգի, եւ ուրիշ ընդոծիններով, նրան հարած եկվորներով եւ բոլոր տունուտեղով: Գնում բնակվում է մի լեռան ստորոտում, դաշտավայր տեղում, որտեղ ապրում էին սակավաթիվ մարդիկ առաջուց գրվածներից: Հայկը նրանց իրեն հնազանդեցնելով՝ այնտեղ կալվածում շինում է բնակության տուն եւ տալիս է ժառանգություն Կադմոսին, Արամանյակի որդուն: Սա արդարացնում է ասված անգիր հին զրույցները...»***[*2]:

Ուրեմն, ***Հայկը*** հարավ արեւելքից «չվելով», իր առաջին տունը՝ հիմնում է ***Կորդուք-Կորճայք*** նահանգում եւ այն հանձնում է իր թոռ՝ ***Կադմոսին:***

«Իսկ ինքը, ասում է (Մար Աբասը), իր մնացած մարդկանցով եւ տունուտեղով շարժվում է դեպի հյուսիսային արեւմուտք եւ գալիս բնակվում է մի բարձրավանդակ դաշտում եւ այս լեռնադաշտի անունը կոչում է ՀԱՐՔ, այսինքն թե այստեղ բնակվողները հայեր են Թորգոմի տան սերունդի: Շինում է մի գյուղ, որ իր անունով կոչում է Հայկաշեն...»[*3]:

Հայկի երկրորդ տունը՝ Հարք լեռնադաշտն է, Հայակաշեն կենտրոնով, որ Թորգոմի տունն էր:

Հետեւելով պատմահորը, տեսնում ենք, որ Բելի դեմ ճակատամարտը տեղի է ունենում ***Վանա Ծովից*** ոչ հեռու գտնվող տեղանքում, որ կոչվում է՝ ***Հայոց ձոր***: ***«... Գնում հասնում է մի ծովակի ափ, որի ջրերն աղի են եւ մանր ձկներ են պարունակում...»***[*4]: Հայկի երրորդ տունը՝ Վանի շրջակա տարածքն է:

«Սասնա Ծռեր» էպոսում Թեւաթորոսի ընթացքը	Հայկի ընթացքը ըստ Մ. Խորենացու
1.Արզան (Աղձքիք եւ Կորդվաց նահնգ.)	1.Կորդվաց նահնգ.
2.Մանավազ. նահնգ.(կամ Մանազկերտ)	2.Հարք (Մանավազ. նահնգ.)
3.Վան	3.Վան
4.Կարս ? *(տես էջ 230-ի քարտեզները):*	4. (--)

Շարունակելով, պատմահայրն ընդգծում է, որ Մանավազը *(էպոսում՝ Մանազկերտ)* ժառանգում է ՀԱՐՔ-ը, նրա որդի Բազը՝ աղի ծովին առընթեր տարածքը, Որդունի կոչվածը եւ Խոռը հյուսիսային կողմերում են շեներ կառուցում:

Հայկական լեռնաշխարհը լինելով երկնակամարը՝ 18/36 կենդանակերպ

*1, 2, *3, *4, - Մ. Խորենացի, «Պատմություն», 1989թ., գլուխ՝ Ժ, ԺԱ, ԺԲ:

աստեղատներով բաժանելու հայրենիքը, ՏՈՒՆ բառը օգտագործվել է թե՛ աստեղատների իմաստով, թե՛ նախարարական մեծ «տների» իմաստով: Ե՛վ Հայկը *(ըստ Խորենացու)* ե՛ւ էպոսի Թեւաթորոսը «տներ» են հիմնադրում: Ինչպես տեքստերում է ասվում՝ Քեռի Թորոսի եւ Հայկ Նահապետի տնից-տուն՝ «չվելը», տեղանքների առումով, հիմնականում համընկնում են *(պետք է նաեւ հաշվի առնել, որ էպոսը ժողովրդական գուսանների բանավոր, հազարամյակներով անցած փոխանցում է):*

Հնում ընդունված էր ***պատմական իրադարձությունը***, ***հավատամքային պատում-սյուժեն*** եւ ***աստղագիտական երեւույթը*** համադրել մեկ կոմպոզիցիայի մեջ՝ որպես «թաքնագիտական պատումային կառույց»: «Թաքնագիտական լեզվով» են գրված հնագույն հավատամքային բազմաթիվ տեքստեր ***(շումերական, եգիպտական, Հին եւ Նոր կտակարաններ եւ այլն),*** նույնիսկ վաղ միջնադարյան հայ պատմիչները օգտագործել են այդ մոտեցումը թե՛ Գրիգոր Լուսավորչի եւ թե՛ Տրդարտ թագավորի առնչությամբ***[1]:**

Փաստորեն, պատմահայր Մ. Խորենացին Հայկ նահապետի հետ կապված պատմական հիշողություն-իրադարձությունը «համեմում» է հնագույն հավատամքի հետ, որը աստղագիտական երեւույթով, կոսմիկական խորհրդապաշտությամբ հավատամք է եղել: Թե վերջապես ո՞վ է Հայկը եւ ո՞վ է Բելը, կարելի է պարզել՝ համադրելով Մ. Խորենացու թաքնագիտորեն ներկայացրած իմֆորմացիան երկնակամարի աստեղատների շարժման ընթացքի հետ, օգտագործելով 64 հազար տարվա կտրվածքով երկնակամարի ընթացքը ցուցող համակարգչային ծրագրերը (օրինակ՝ Sky Glob 3.5):

Հայկ>Haldi գերագույն աստվածության երկրաչափական սիմվոլը hexagon-ն է, իսկ տարածական ծավալը՝ վեց կողեզր ունեցող Tetrahedron-ն է, որն աղերսվում է՝ «անգղ-թռչուն» եւ «հուր» հնագույն խորհրդապաշտական ատրիբուտներին: ***Հայասա*** երկրի գերագույն աստվածության աստեղային կոդը՝ երկնքում «Անգղի» համաստեղությունն է: «Անգղ» աստեղատունը Միջագետքյան գաղափարագրում (MUL.APIN աստեղացանկ, մ.թ.ա. IX-XIV դդ.) գրվում է՝ ^{d}U.GUR, որտեղ՝ **U =** šuš **=** 60 տարի*[2], իսկ GUR-ը՝ 1 gur = 300 միավորի*[3]: Այսուամենայնիվ, հնարավոր եմ համարում, որ «Անգղ» աստվածությունը ներկայացված է որպես տարեթիվ, քանի-որ՝ ^{d}U.GUR = 60 տարի x 300 = 18000 տարի:

---

*1,- Գրիգորը Խոր Վիրապում 13 տարի մնալուց հետո, եկավ Օտտա անունով իշխանը ու նրան հրահանգեց դուրս ելնել: Թիվ 13-ը հնագույն հնդեւրոպական կոսմիկական հավատամքում վիշապի թիվն է, որ անդունդի սիմվոլն է, Օտտա հունարեն նշ. է՝ «ժամանակ»: Թիվ 13-ից հետո, թիվ 14-ը խարհրդանշում է «լույսի» խորհուրդը: Գրիգորին կցմցել էին «լուսավորիչ» մականունը՝ թիվ 14: Տրդատը բարձրանում է Արարատ լեռը եւ բերում է 8 հսկա սալաքարերը: Հնագույն հավատամքի 1>8 տիեզերածնության խորհրդաբանությունն է: Վաղ միջնադարյան մատենագրության մեջ նման օրինակները բազմաթիվ են:

*2, *3- Georges Ifrah, «The Universal History Of Numbers», 1998, USA, p. 92. Հր. Աճառյան, «Հայոց լեզվի պատմություն», 1940թ., Երեւան, հ. I, էջ 199: Հաշվարկները կատարել ենք Ա. Դավթյանի հետ միասին:



«Սասնա Ծռեր» էպոսում Քեռի Թորոսի եւ Մ. Խորենացու «Պատմության» մեջ Հայկ նահապետի ընթացքների ու ֆիքսված տեղանքների համադրումը «Կարապ» կամ «Թռչող Խաչ» համաստեղության հետ:

Ամեն 18000 տարին մեկ(փուլի կեսը), «Անգդ» համաստեղությունը դառնում է հյուսիսային բեւեռի «իշխող» աստեղատունը: Մեկ լրիվ փուլը՝ 36000 տարի է, **18000 x 2= 36000** ***(տես Sky Glob 3.5):***

Ըստ Մ. Խորենացու «Պատմության», Բելի դեմ ճակատամարտի դուրս գալով, Հայկը՝ ***«Եվ յառաջ կոյս անցյալ բովանդակ ասպարէզս՝ հասանէ ի մեջոց ինչ դաշտաձեւ՝ լերանց բարձրագունից: Եւ յաջմէ ջուրց հոսանաց ի բարձրավանդակում կուռ կալով ի տեղւոջ, ի վեր զերեսս ամբարձեալ՝ երեւեցաւ նոցա բազմութիւն անկարգ հրոսակի ամբոխոյն Բելայ, ցան եւ ցիր յանդուգն յարձակմամբ ընդ երեսս երկրին սուրալով, իսկ Բէլ հեզ եւ հանդարտ ամբոխիւ մնծաւ ի ձախմէ ջուրցն ի վերայ ոստոյ միոյ, իբրեւ ի դիտանոցի»*[1]:***

Թե ինչո՞ւ է Խորենացին Հայկի ընթացքը եւ ճակատամարտը պարզ ներկայացնելու փոխարեն գրում, թե Հայկը՝ ***«կոյս անցյալ բովանդակ ասպարէզս»*** անցնելով հասնում դեպքի վայր, կամ, Բելը գտնվում էր ջրի ձախ, իսկ Հայկը աջ կողմում եւ այլն, առաջին հայացքից թվում է անհասկանալի, անիմաստ: Բայց համանման թաքնագիտական ակնարկներով, պատմահայրը, փաստորեն, ***փրկել է*** հայ հնագույն հավատամքի գերագույն աստվածությանը, ներկայացնելով նրան որպես պատմական անձ եւ նահապետ, խուսանավելով քրիստոնեա եկեղեցու արգելակող բռնադատումները:



Հայկական լեռնաշխարհ՝ 38^0, -44^0: 3099 մ.թ.ա., Օգոստոս 11, «Կարապի» եւ «Վիշապի» մարտնչումը երկնքում:



«Սասնա Ծռեր» էպոսում Քեռի Թորոսի եւ Մ. Խորենացու «Պատմության» մեջ Հայկ նահապետի եւ Թեւաթորոսի ընթացքների ու ֆիքսված տեղանքների համադրումը «Կարապ» կամ «Թռչող Խաչ» համաստեղության հետ:

*1,- «Մովսես Խորենացի, «Պատմություն», 1981թ. էջ՝ 44:



Նախ, Հայկի ընտանիքի 300 հոգուց բաղկացած լինելը, թաքնագիտական ակնարկ է ***(«Անգղ» = GUR-ը՝ 1 gur = 300 միավորի),*** որ Հայկը՝ ***եռանկյուն տնտրա-հնդրոնն*** է, որ աստեղատների առումով համապատասխանում է ***«Անգղ»ին***՝ այսօրվա «Cygnus»-ին*(տես 226 էջի նկարները):* Վերևում, մեջ բերված տեքստում, ***Կոյս***-ը*[1] վերաբերում է ***բովանդակին***, որ նշանակում է՝ ***«բովանդակ-ամբողջի» կենը*** *(երկու բովանդակ չի լինում):* ***«Բովանդակ-ամբողջի»*** սիմվոլն ըստ հների՝ ***շրջա-նաշրջան է՝ 360⁰: «Բովանդակ երկինքը»*** ըստ հների՝ ներառում էր 36 աստեղատներ: Ըստ Խորենացու *(նաև՝ ըստ շումերների),* մեկ ***շարը = 3600*** տարեշրջանի, նահապետների թիվը Քսիսութրոսով տասն է, 10 շարը՝ 36000 տարի է*[2], երբ լուսնային սխեմատիկ տարին՝ 360 օր է: ***Շարը***՝ շումերների մոտ նաև թիվ է՝ 3600, ու նրա սիմվոլը՝ ***շրջանաօղակն*** է: šar-u՝ մեծ շարն է {U = (x 10)} ու նրա թիվը՝ 36000 է*[3]: 36000 տարվա կենը՝ 18000 տարի է, երբ «Անգղի», այսօրվա «Կարապ» համաստեղությունը, «մենամարտելով» ***Վիշապի*** (Draco) համաստեղության հետ, որի Alpha աստղը իշխում էր հյուսիսային բևեռում, վայր է գցում նրան ու «ստանձնում» է երկնակամարի հյուսիսային բևեռի «իշխանությունը»: Փաստորեն, ըստ Խորենացու, Հայկը Բելի դեմ պատերազմելով՝ սկսում է տիեզերական նոր շրջափուլը, իսկ հետո, հյուսիսային բևեռի իր տանը «դնում» է իր թոռ՝ ***Կադ-մոսին*** *(Կադմոս = շերեփ, Փոքր Արջի համաստեղ., որ հայերի մոտ հայտնի է նաև «Շերեփ» անունով)* *[4]: Փաստորեն, ե՛ւ ըստ Մ. Խորենացու, ե՛ւ ըստ Հայասա երկրի ու Միջագետքյան համակարգի՝ ᵈU.GUR - «Անգղ» աստեղատան փուլային շրջափուլը՝ **18000/36000** տարիների քանակն է, որը Հայասա երկրի գերագույն դիցի աստեղատունն է, ու իսկապես, 18000 տարեփուլով «գրավում» է հյուսիսային բևեռը:

Արմեն Դավթյանի *«Հայոց աստեղային դիցաբանություն»* փայլուն աշխատությունն ի դերու է հանում հնագույն շումերական ու հայկական աստղագիտական գիտելիքի ու անունների նմանողությունն ու համադրությունը, ինչպես նաև այսօրվա «Կարապ» համաստեղության նկատմամբ հնագույն Միջագետքի հավատամքային վերաբերմունքը:

«Հատուկ» ուշադրության է արժանի հայասական դիցարանում առաջինը նշված ᵈU.GUR աստվածը: Սրա առանձնահատկությունն այն է, որ ի տարբերություն մյուս աստվածների, որոնցից յուրաքանչյուրը ներկայացնում է որոշակի քաղաք, ᵈU.GUR-ը ներկայացնում է ողջ Հայասա երկիրը»: «Միջագետքյան ավանդույթում ներկայացվում է «հովազ-անգղ» (UD.KA.DUH.A) համաստեղությունը, որի դիմաց MUL.APIN-ում (Միջագետքյան MUL.APIN աստեղային համակարգը ներկայացնող տեքստ, մ.թ.ա. XI-XIIդդ.) ուղղակի գրված է՝ ᵈU.GUR»: «Կռվել, մարտնչել իմաստներով U.gur-ոգոր-ը

*1,- ***Կոյս, ի-ա՝ «հայերեն գրաբար լեզվում՝ կէս, կից»,*** Pedersen 104, Հր. Աճառյան, ՀԱԲ, 1973թ., h. II, էջ՝ 630, 582:
*2,- «Մովսես Խորենացի, «Պատմություն», 1981թ. էջ՝ 14-16:
*3,- Georges Ifrah, «The Universal History Of Numbers», 1998, USA, p. 92.
*4,- Ա. Պետոյան, «Սասնո բարբառը», 1954թ., Երևան, էջ 134:



Ներգալ-Էրրա՝ Հայասա երկրի գերագույն աստծվածության պատկերանշանը. անգղի եւ հովազի գլուխներով: Վերեւում կիսալուսնաձեւ նշանը ***Հայասա*** երկրի գերագույն աստվածության սիմվոլն է, ութաթեւ աստղը բնորոշում է նրա՝ «ամբողջ, ամենայն» լինելու սկզբունքը եւ 360⁰ շրջապտույտը: (նկարը վերցված է Ա. Դավթյանի «Հայոց աստղային դիցաբանություն» գրքից):

նույնանում է Մարս մոլորակը մարմնավորող Ներգալ աստծո հետ, իբրեւ ռազմի աստված: Ներգալն ունի 2 աստղային կոդ: 7 մոլորակներից նա Մարսն է, իսկ աստղերի մեջ Անգղ աստեղատունը: Աստվածաշնչի թարգմանության մեջ հայերը Ներգալին զուգադրել են ո՛չ թե Մարս մոլորակի հայկական զուգահեռին, այլ Անգեղ աստծո հետ, որ նույն Անգղ (հովազ+անգղ) համաստեղությունն է: Ներգալ - U.GUR «հովազ-անգղ» աստեղատան դեմ Անգեղ աստված դնելը ցույց է տալիս, որ մեր թարգմանիչներն ունեին աստղային երկնքի բացառիկ ճշգրիտ եւ մանրամասն պատկերացումը, պատկերավոր ասած՝ «քարտեզը»: Մեր թարգմանիչներն այստեղ դրսեւորում են շումերական ժամանակներից գրավոր վկայված քրմական գիտելիքի զարմանալի իմացություն: Նրանք գիտեն եւ տալիս են Ներգալ աստծո աստղային կոդը: Սա նշանակում է, որ Հայաստանում եղել է համապատասխան ավանդույթ, որ չի խախտվել: Հայաստանի գլխավոր աստծո՝ Ներգալ-Ուգուրի, մասին այսքան բան իմանալ մ.թ. 5-րդ դարում, նշանակում է կրողը լինել նույն ավանդույթի: Ավելորդ չէ նշել, որ աշխարհում բացի շումերականից եւ հայկականից, ոչ մի ուրիշ ավանդույթում չկա «անգղ» պատկերացվող համաստեղություն (Պտղոմեոսն այս աստեղատունն անվանում է պարզապես Թռչուն): Մեզանում այս Թռչուն-կարապը կոչվում է Անգղ(Անկղ)»: *[Ա. Դավթյան, «Հայոց աստեղային դիցաբանություն», 2004թ., էջ՝ 207, 209]:*

Վերեւում արդեն ասվեց, որ «Կարապ» կամ «Թռչող Խաչ» համաստեղությունը օրվա 12 ժամը բաժանելով 4 մասի եւ յուրաքանչյուրում լինելով 3 ժամ, շրջում է հին Հայաստանի չորս նահանգ-տոներով, առավոտյան ելնելով հարավ արեւելքից ***(Հայկական լեռնաշխարհից երկնակամարին դեպի հյուսիս նայելու դեպքում)*** երեկոյան «անհետանում» է հարավ արեւմուտքում: Այս համաստեղության ընթացքը ցուցում է, որ նրա «գլուխը»՝ եթե նա ***թռչուն*** է՝ այսօրվա Albireo *(պայծառությունը, mag:3.2)* աստղն է: Եվ ինչպես Ա. Դավթյանն է ճշտորեն նկատել, Միջագետքյան MUL.APIN 36 աստեղացանկի նույն dU.GUR աստեղատան աստղերից մեկը կոչվում է՝ էրրագալ - «աստված»: Այս աստվածությունը՝ ***Ներգալը,*** անդրաշխարհ է գնում ***Էրրա*** անվամբ, իսկ այնտեղից գալիս է ***Ներգալ*** անվամբ, եւ հայերեն՝ ***երա = առաջին,*** բառն աղերսվում է ուրարտական՝ erir-li եւ հոմանիշ er-nuni «արքա» (առաջնորդ) բառերի հետ*1:

Եզրակացություն

Հնդեւրոպական լեզուների կառույցի հիմքում ընկած դուալիստական սկզբունքը գալիս է նրանց՝ նախահնդեւրոպացիների, հավատամքային աշխարհճանաչողությունից: Համարյա հնագույն բոլոր հավատամքային պատումներն իրենց հիմքում բինարիզ-

*1,- Արմեն Դավթյան, «Հայոց աստեղային դիցաբանություն», 2004թ., Երեւան, էջ՝ 207-209:

Եգիպտական գերագույն աստվածությունը որպես թռչող բզեզ:

մի սկզբունքով են կառուցված*[1]: «Լույս»ը՝ որպես «արական» արտահայտություն, ըստ հների, ծնվում է «խավարի» *(գիշեր)* մեջ, եւ համապատասխանաբար՝ «Արեւը» եւ «Լուսինը»՝ որպես գիշերային եւ ցերեկային «երկինքների» գլխավոր իպոստասներ, դառնում են նախահնդեւրոպացիների դուալիստական կոնցեպտի ամենահնագույն խորհրդապաշտական սիմվոլները: Հայերենում՝ ***«արեւը մայր մտավ», «արեւմուտ(ք) < արեւամայր»*** արտահայտությունները, խոսում են այն մասին, որ ***արեւի մայրը՝ գիշերային երկինքը,*** սեռ ունի, ***իգական*** է, իսկ օրը (ցերեկ)՝ ***արական*** է: Այսինքն, ***երկինքը՝*** երկակի բնույթ ունի:

Հայերեն **«երկին(ք)»** եւ **«երկիր»** բառերը լավագույնս ստուգաբանում են հենց հի՛ն աստբածաբանները՝ Յովհ. Երզնկացին, Գր. Տաթեւացին, որովհետեւ նրանք գիտեին թաքնագիտական խորհրդապաշտությունը: Երզնկացին **«երկին(ք)»** եւ **«երկիր»** մեկնում է՝ *«Զի երկինքն երկու իրք է՝* ***հուր*** *եւ* ***օդ****, եւ երկիրս երկու իրք է՝* ***հող*** *եւ* ***ջուր»*** *(հայերենի բարբառներում բազմաթիվ են՝* ***Էրկինք, Էրկիր*** *ձեւերը)**[2]:

Հուր, օդ, հող, ջուր՝ չորս էլեմենտների սիմվոլները, որպես երկրաչափական ծավալներ ներկայացնելու մոտեցումը այնքան հին է, որ խորանում է առնվազն մինչեւ մեզ հայտնի Պյութագորաս*(մ.թ.ա.VIդդ.)*: Շումերական «ամբողջի» նշանագիրը ***շրջանաձողակն*** էր, որ նաեւ համարժեք էր 3600 թվին: Միջագետքյան երկնքի աստվածություն ԱՆՈՒ-ի *(շումերական ԱՆ-ը)* որդին էր **ԱՆՇԱՐ-ը**, որ նշանակում է՝ «ամբողջ երկինք»*[3] ***(Ան= երկինք, Շար = շրջանաձողակ, եւ 3600 տարեշրջան)****[4] եւ նրա իգական զույգը՝ **ԿԻ-ՇԱՐ** -ն էր՝ «ամբողջ երկիր»*[5]: Մ. Խորենացու **«երկնեց երկինս, երկնեց երկիր»** հայ հնագույն հավատամքային արարչության ծննդի մասին տողերը, շումերաբաբելական հին սերդի վերոհիշյալ աստվածությունների հետ նույն իմաստն ունեն: Եվ **«երկինք»**-ը, ըստ հների աշխարհճանաչողության, ***երկակի՛*** բնույթ ունի: Հայերեն՝ ԷՐ-ԿԻՆ(ք)-ը առավոտվա՝ ԷՐ-ի >ԷՐՐԱ աստղի հետ է աղերսվում*(աստղի այսօրվա անունը՝ Albireo)*, որը «Կարապ» համաստեղության առաջին աստղն է, եւ հնում, Հայկական լեռնաշխարհի երկնակամարում նրա երեւումով էր օրը բացվում: Եվ քանի-որ **Էրրա-Ներգալ** դիցը Հայասա երկրի գլխավոր աստվածությունն է, ապա հայերենում «երկինք < էրկինք»-ի անվան առաջին

Եգիպտական գերագույն աստվածություն Աթումը որպես կատու:

*1,- T. Gamkrelidze & V. Ivanov, “The Indo-European And The Indo-Europeans”, 1995, p. 679.
*2,- Հր.Աճառյան, ՀԱԲ h. II, Երեւան, 1973թ., էջ 62:
*4,- Հր.Աճառյան, «Հայոց լեզվի պատմություն», h. I, 1936թ., Երեւան, էջ 199:
*3,*5,- Stephanie Dalley, «Myths From Mesopotamia», Oxford, 2000, p.317.

Աթումը դեռ չարտահայտված, գտնվում է տիեզերական անհունում(վիշապի սիմվոլ):



Աթումը կատվի տեսքով կտրատում է վիշապին, որ «արտահայտվի» ի գոյություն:

Ծիր Կաթինը ամբողջն է՝ արական եւ իգական բեւեռներով. Հովազ- Անգղ աստվածությունը միտում է «օր»-ը եւ «գիշերը»:

կեսը՝ ԷՐ > ԷՐՐԱ, գալիս է հնագույն գլխավոր աստվածության անունից: Հունարենում այն դարձել է՝ ***Օուրանոս-Ուրանոս*** [**Ouranós**], - «երկինք»: Եվ, հունական «երկինքի» դիցի՝ ***Օուրանոս*** անունը գալիս է հուրրի-հիթթիթական ANU-ից*[1]:

Հայկական լեռնաշխարհից ամռանը դեպի հյուսիս նայելու դեպքում, երկինքում Ծիր Կաթնի «գլուխը» գլխավորում է ***«հաւք»-ը՝ Կարապ*** կամ ***Անգղ*** համաստեղությունը: Կաթնածիրի հակառակ «գլուխը» նման է հովազի գլխի, որտեղ գլխավորող ամենապայծառ աստղը՝ Սիրիուսն է: Ծիր Կաթինը որպես երկգլխանի ամբողջություն՝ ***«անգղ»*** եւ ***«սեւ հովազ»,*** կիսում է ամբողջական շրջանագիծ-երկինքը «ճերմակ եւ սեւ» երկու կեսերի: Եգիպտական համակարգում *(հիքսոսյան շրջան)* գլխավոր աստվածություն Աթումի խորհրդանշան-սիմվոլը՝ ***սեւ Կատուն***, հայկականում եւ Միջագետքյան համակարգում՝ ***«հովազի գլուխը»***, կտրատում է «տիեզերական ամբողջ» համարվող օղակաձեւ «վիշապին» եւ, արտահայտում է ինքն իրեն, այսինքն, «ձեւավորում» է տիեզերքը: Կաթնածրի երկրորդ գլուխը՝

Աթումն արտահայտվել է որպես առաջին զույգ աստվածություններ՝ Թեֆնաթ.- իգական, առյուծի գլխով, եւ Շու.- արական, թռչնի փետուրը գլխին:

«հավքը»՝ հների մոտ ընդունված «հյուսիսային Խաչը», որ Կաթնածիրի հակառակ գլխի ծայրագույն աստեղատունն էր, խորհրդանշում է ամբողջ Կաթնածրի ճերմակ մասը: Փաստորեն, ինչպես եգիպտական *(հիքսոսյան շրջան մ.թ.ա.18-16 դդ.)* համակարգում, Աթումը՝ գերագույն աստվածությունը, որը ինքը ռեալություններից կազմված ամբողջն է, 1>8 համակարգ, հիմքում ունի երկու սիմվոլային ատրիբուտ՝ ***սեւ կատու*** եւ ***մայիսյան թռչող բզեզ (կամ որպես՝ Hikê թռչուն)***, այնպես էլ՝ Հայասա պետության գերագույն աստվածությունն է հանդես գալիս համանման

*1,- T. Gamkrelidze, V. Ivanov, նույն աղբյուր, էջ 798:

խորհրդապաշտական ***«թռչող հավը»*** եւ ***«հովազ կամ էգ առյուծ»*** սիմվոլներով: Պարզ է, որ Հայասա երկրում ընդունված ***«անգղը»*** եւ ***«հովազը»***, եգիպտոսում պետք է դառնար՝ տեղում գոյություն ունեցող կենդանիների համարժեքով սիմվոլներ՝ ***«թեւավոր բզեզ»*** եւ ***«կատու»***: Սակայն, եգիպտական համակարգում որպես ***«առաջին զույգ»*** աստվածություններ, Աթումը նաեւ արտահայտվում է՝ **Թեփնաթ՝ իգական, առյուծի գլխով, եւ Շու՝ արական, թռչնի փետուրը գլխին սիմվոլներով:**

Ընձառյուծ սիմվոլի աստղային կոդը «Կանիս Մեծ» աստղատան Սիրիուսն է:

Սիրիուս աստղով տիեզերական շրջափուլը , որ ընդունված է եղել է թե՛ հին հայերի մոտ *(Մեծամոր մ.թ.ա. III հազարամյակ)*, թե՛ Միջագետքում եւ թե՛ հին եգիպտացիների մոտ, հաշվում էին լուսնային ամսվա օրերի քանակով: Այն ընդունված էր որպես՝ 30 օրվա*(արական)*, ինչպես նաեւ՝ 28*(իգական)* օրվա համակարգ: Եվ ***սոտկական շրջափուլը***, այսինքն, 365 1/4 օրերի ֆիքսված տարով հաշվելու դեպքում, Սիրիուսի շրջափուլը համապատասխանում էր՝ 1460+1 տարեփուլի հետ:

Ո՞րն է գերագույն աստվածության հետ կապված այս հնագույն միստիցիզմի իրական հիմնավորում-բացատրությունը: Սոտկական կրկնվող փուլը եգիպտական օրացույցով հաշվում է՝ մ.թ.ա. 4241, -2781, -1321թթ.*[1]: Հայաստանում Մեծամորի հնավայրի գիտական պեղումները ցուցում են, որ հնավայրն առնվազն 5000 ամյա է *(մ.թ.ա. III հազարա-մյակ)*, երբ Սիրիուսը սկսում է «դառնալ» առավոտվա աստղ տեղական ժամանակով $4^h\ 39^m$, առավոտյան ժ. 5-ից 21ր. պակաս, ամառային արեւադարձի ժամանակ *(այժմ նա երեւում է ուշ աշնանը եւ երկար ձմռանը)*: Սիրիուսը *(եգիպտ. անունը՝ Sothis)* այս կիսագնդում ամենապայծառ աստղն է*[2]:



Գծագիր # I / Ծիր կաթինը ամբողջն է՝ արական եւ իգական բնեռներով. Հովազ-Անգղ աստվածություն: «Ամբողջ»-ի կամ «բովանդակ»-ի գաղափարը առնչվում է ***շրջանաձոգակ*** սիմվոլի եւ երկնքի փուլային շրջապտույտի հետ, որ հայերեն եւ շումերների լեզվով հնչում է՝ ՇԱՐ (Šar-di = 3600 = Šar = $3600 = 360^0$ «ամբողջ», եւ di = դից՝ «աստված»:



Հայասա երկրի «Հովազ-Անգղ»ի՝ UD.KA.DUḪ.A գլխավոր աստվածության սիմվոլը:

*1, - B. L. Van Der Waerden, «Science Awakening» II, NY, 1974, p.11.
*2,- «Մեծամոր», Երեւան, Հայկ. ՍՍՀ Գիտութ. Ակադեմիա, էջ 148:

Սիրիուս աստվածության եւ աստղի եգիպտական Սոթիս*(Sothis)* անունը եւ համարժեք զուգահեռը հայկական միֆոլագիայում, ըստ Մ. Խորենացու, Սաթենիկն է *(այս մասին մանրամասն՝ առջեւում)*:

Ըստ եգիպտական հավատամքի, Սիրիուսի (Sabt) դիցուհին՝ Իզիսն է, դիցանունը՝ «Auset» է, որ նշանակում է՝ «հիմք», «նստոց», «գահ»: Ծիր Կաթնի հետ են աղերսվում նաեւ Աթումի առաջին դիֆերենցման արդյունք՝ ***Թեփնաթը*** եւ ***Շու***-ն: Թեփնաթի սիմվոլը ***էգ առյուծն*** է, ՇՈՒ-ինը՝ ***արծիվը***: Շումերական 60 թվի հիմքով սրբազան խորանարդի կողեզրի թվային արժեքը կոչվում էր՝ sidi, իսկ Սիրիուս աստղի բաբելական գաղափարագիրը՝ GAG. SI.DI = KAK.SI.DI:

Հայասա պետության գլխավոր աստվածության աստեղատան անունը՝ հայերեն ***«Անգդ<Անկդ»,*** համանման է հնչում շումերական՝ AKH եւ եգիպտական՝ ĀKHA*[1] ձեւերի հետ: Նույն է նաեւ ***«եղեգնիկի»*** անվան առումով՝ ***ԵՂԵԳ < Ե - ՂԵԿ, KHA, KHA.KH:*** Եղեգնիկից են ծնվում են առաջին աստվածությունները:

Երեք հնագույն դիցարանների այս համանման խորհրդաբանության «բանալին» հայկական «Վահագնի ծննունդ» կոչված պատառիկն է, որտեղ ծիրանի ծովի **(Ծիր Կաթին)** «եղեգնիկից» **(Կանիս մեծ, Սիրիուս)** ծնվում են երեք աստվածություններ: Սա հնագույն հավատամքային կառույցներում առկա տիեզերական ամբողջի դիֆերենցումն է երկու բեւեռների: ԿԱԹՆԱԾԻՐ-ի պատկերավոր արտահայտությունը՝ «իգական» եւ «արական» սեռերի բեւեռացված ներկայացումն է. արականը՝ «անգդ» ***(օրվա երկինք)*** եւ իգականը՝ «հովազ-առյուծ» ***(գիշերային երկինք):*** Եվ, ըստ հների, լույսը ծնվում է խավարից, լույսի մայրը գիշերային երկինքն է: Ծիր Կաթնի՝ միջանկյալ ծովի մեջ գտնվող ***եղեգնիկից,*** որը Սիրիուս աստղն է, ծնվում է ***հրեղ թռչուն աստվածությունը:*** «Անգդի» հիմքը՝ գահը, իգական «հովազ-առյուծն» է: Ուրարտական

---

*1, - L.A. Waddell, «Sumer-Aryan Dictionary», London, 1927. Բերված *նկար-առյուսակը* նույն գրքից: Բերված նկարը՝ նույն գրքից:

նկ.#1,
Ուրարտական շրջանի պատկեր



նկ.#2,
«Հովազ-Անգղ»ի՝ UD.KA.DUḪ.A աստվածության սիմվոլը:



Ծիր Կաթինը ամբողջն է՝ արական եւ իգական բեւեռներով. Հովազ-Անգղ աստվածություն:

շրջանի պահպանված պատկերը ցուցում է, որ աստղերի մեջ գահին նստած մարդը «հավք-Հալդին» է, քանի-որ գլխին ունի երրորդության սիմվոլը՝ երեք օղակներ, եւ նրա գահը՝ էգ առյուծ-հովազն է: Այնպես, ինչպես եգիպտական համակարգում՝ AUSAR-ի ***(Օզիրիս)*** գահը AUSET-ն է ***(Իզիս-Սիրիուս)***: Սա*(վերեւի նկ.)* նույն գաղափար-պատկերն է, ինչ-որ հայասա երկրի Ներգալ դիցի «Անգղ-Հովազ» իդեոգրամը*(հաջորդ նկ.)*: Փաստորեն, տեսողական պերսպեկտիվայի համաձայն, Ծիր Կաթինն այստեղ հանդես է գալիս որպես «միջանկյալ ծով», որից եւ «ծնվում» են առաջին աստվածությունները: Այս «միջանկյալ ծովն» իր երկու բեւեռներում ունի «Կարապ-հավքի» համաստեղության ***«յոթ» պայծառ աստղերն*** իր ***Էրրա*** գլխավորող աստղով*[1] եւ հակառակ ծայրում՝ «Կանիս մեծ» համաստեղության «Սիրիուս» պայծառ աստղը: Առաջին գոյության՝ «ամբողջի», դիֆերենցումը երկու աստվածությունների, առկա է հնագույն բոլոր պատումներում: Եվ «իգական կողմը» ներկայանում է՝ որպես «արական կողմի» ***հենարան-գահը***, հովազի կամ էգ առյուծի սիմվոլով, խորհրդանշելով ***գիշերային երկինքը:*** «Արական կողմը» խորհրդանշում է ***օրվա կապույտ երկինքը՝*** թռչող հավքի ***(աքլոր, կարապ, արծիվ, բզեզ եւ այլն)*** սիմվոլով: Եգիպտական Թեփնաթը՝ էգ առյուծ է, հայկական լեռնաշխարհի հնագույն մեծ մայր աստվածուհի ԱՅԱ-ն երկվորյակ առյուծների մայրն է, ուրեմն ինքն էլ էգ առյուծ է: Եվ #1 նկարի ֆոնի շրջանակները եւ #2 նկարի ութաթեւ աստղը խորհրդանշում են Ծիր Կաթնի եւ այս երկու աստեղատների 360^0-ի պտույտը՝ **ՇԱՐ** -ը, «ամբողջը»: Եգիպտական **Hikê** թռչուն սիմվոլով աստվածության առաջնայնությունը եւ պտույտի բացատրությունը հուրրիական եւ հիթթիթական լեզուներում ներկայանում է՝ **aika-** նշ. է՝ «մեկ», **wahnu-** նշ. է՝ «պտույտ»*[2] իմաստներով:

---

*1,- «Միջագետքյան MUL.APIN 36 աստեղացանկի նույն **ᵈU.GUR** աստեղատան աստղերից մեկը կոչվում է՝ ***էրրագալ*** - «աստված»: Այս աստվածությունը՝ Ներգալը, անդրաշխարհ է գնում ***Էրրա*** անվամբ, իսկ այնտեղից գալիս է ***Ներգալ*** անվամբ, եւ հայերեն՝ ***երա = առաջին,*** բառն աղերսվում է ուրարտական՝ ***erir-li*** եւ հոմանիշ ***er-nuni*** «արքա» (առաջնորդ) բառերի հետ». Ա. Դավթյան, «Հայոց աստեղային դիցաբանություն», 2004թ., էջ՝ 207-209:
*2, -T. Gamkrelidze & V. Ivanov, “The Indo-European And The Indo-Europeans”, 1995, USA, p. 465.

Հայկ. լեռնաշխարհ, բաստամ. մ. թ. ա. I հազարամյակ / Նկարը վերցված է Ա. Մովսիսյան, «Հայկական մեհենագրություն», էջ 230, Երեւ. Պետ Համալսարան, 2003թ./

Մ. թ.ա. 4-րդ հազարամյակ. Գարնանային գիշերահավասարը «Ցուլի» եւ ամառային գիշերահավասարը «Առյուծի» համաստեղություններում գտնվելու «ֆիկսում»: Willy Hartner, "The Earliest History Of The Constellations In The Near East".

Թե ինչո՞ւ է այս հնագույն դից-աստեղատունն ամառային արեւադարձին անդրաշխարհից վաղ առավոտյան հայտնվելով կոչվում ***Ներգալ***, ունի իր կոսմիկական բացատրությունը: Նախորդ բաժիններում արդեն բազմիցս փաստել ենք, որ վերեւում թռչող սկավառակի, իսկ ներքեւում առյուծի եւ ցուլի նկարներով հնագույն պատկերները, ըստ էության, ներկայացնում են գարնանային գիշերահավասարի եւ ամառային արեւադարձի ժամանակ արեւի ծագելը՝ «Ցուլ» եւ «Առյուծ» համաստեղություններից, որ հնարավոր է մ.թ.ա. V-IV հազարամյակում(տես էջ 84-85): ***Անկդ-Կարապ*** համաստեղությունը, որ ***Հայասա երկրի*** գերագույն աստվածության՝ ՆԵՐԳԱԼ-ի աստեղատունն է, ամառային արեւադարձին, վաղ առավոտյան, հայտնվում է արեւելքում, երբ արեւը «ծնվում» է «Առյուծի» համաստեղությունում: Սա է ուրարտական գերագույն աստվածության՝ ***Հալդին առյուծի վրա*** պատկերի մեկնությունը: Նույն աստղագիտական երեւույթով է բացատրվում նաեւ եգիպտական **Hikê** թռչուն սիմվոլով աստվածության գերագույն լինելու առաջնայնությունը, որ Ռա-ի՝ արեւի հայրն է: Կարապ-Անգղը՝ ՆԵՐ-ԳԱԼ-ի աստեղատունը, գիշերային երկնքում **(*ne/okʰoʲtʰ- «գիշեր» > հիթթ.՝ nekut, սանսկրիտ՝ naʼk, հուն.՝ nuktoʼs, հին գերմ.՝ naht, հին անգլ.՝ niht եւ այլն)*** [1], գիշերվա ժամը տասներկուսից հետո «սուզվում» է դեպի անդրաշխարհ, վաղ առավոտյան նորից հայտնվելու «պայմանով»: Առավոտյան, օրը սկսող եւ ավետող ***Անգդ-հաւք*** աստեղատունը՝ ՆԵՐ-ԳԱԼ-ը, ներքին աշխարհից՝ անդրաշխարհից է գալիս. նա նաեւ անդրաշխարհի աստվածությունն է (ներքոյ > ՆԵՐ > բնիկ հայ բառ է՝ նախահընդեւ.՝ ner- ձեւից, հմմտ. հուն.՝ «ստորյանք», սանսկրիտ՝ naraka,- «ստորերկրյա աշխարհ», գերմ.՝ nord «հյուսիս» եւ այլն)*2:

Ներ***գալ*** եւ Էրրա***գալ***, անուններում առկա՝ GAL-ի հետ (GAL շումերերեն նշ. է՝ «մեծ») կապված, ունենք հետեւյալ նկատառումը: ***Գալ - գիլ - գլոր- գալար՝*** բնիկ հայ բառը, նախահնդեւ.՝ gal, gul «կլոր լինել» արմատից է, որ նույն է սեմական՝ gul արմատի հետ. հմմտ. եբր.՝ **gāl**, **gīl** «շրջան առնել» նույն իմաստն ունի*3: Եվ իսկապես, երկնքին նայելու դեպքում, Ծիր Կաթինը պտտույտի մեջ է, նրա երկու ծայրերը ֆիկսող աստեղատները՝

*1,- T. Gamkrelidze & V. Ivanov, նույն աղբյուր, էջ 693n (էջատակ):
*2, - Հր. Աճառյան, ՀԱԲ, h. III, էջ՝ 443-444:
*3,- Հր. Աճառյան, ՀԱԲ, h. I, էջ՝ 555:

Šar = 3600

բովանդակ երկինք an.Šar

«Կարապը»,- ***Դենեբ*** պայծառ աստղով, եւ «Կանիս մեծը»,- Սիրիուս պայծառ աստղով, տեսողական պերսպեկտիվայի համաձայն, կարծես ֆիկսում են գիշերն ու ցերեկը՝ մեկը մյուսի նատմամբ «գալարվում են արտաշխարհից անդրաշխարհ եւ հակառակը»: Երբ գիշերը՝ 12-ից հետո, ***Անկդ-Կարապ*** համաստեղությունը սկսում է սուզվել երկնակամարի հյուսիսային բաձրակետում, երկնակամարի հարավում, Կանիս մեծ համաստեղության Սիրիուս պայծառ աստղն է հայտնվում է գիշերային երկնակամարում *(տես՝ Sky Glob 3.5, մ.թ.ա.V-IV հազարամյակ)*:

Փաստորեն, Մ. Խորենացու դեպի հյուսիս «չվող» նահապետ Հայկը՝ ***առաջնորդ*** է, «Սասնա Ծռեր» էպոսի ԳԱԳ+ԻԿը՝ ***կարապ*** է (նախահնդ. լեզու) եւ ***թագավոր***, ինչպես նաեւ՝ Թեւաթորոսը, որն էպոսի պատումներից մեկում «ստանձնել» է ***գերագույն աստվածության եւ թագավորի*** դերակատարությունը եւ ունի ***թեւեր*** (Թեւա+թորոս), լիովին համապատասխանության մեջ են՝ հայերեն «արքա», «առաջնորդ» հոմանիշ բառերի եւ Հայասա երկրի ᶢU.GUR դիցի հետ, որ Միջագետքյան աստղացանկում ᶢU.GUR աստեղատունն է: Հայասա երկրի գլխավոր աստվածություն ՆԵՐԳԱԼԸ, ուրարտական գլխավոր աստվածություն ՀԱԼԴԻ-ն, Մ. Խորենացու ՀԱՅկ նահապետը եւ «Սասանա Ծռեր» էպոսի ԳԱԳիկ թագավորը ***(նախահնդեւրոպական GAGA = Կարապ)*** համարժեք են, եւ ավելի՛ն՝ միեւնույն գլխավոր աստվածությունն է, որ հին հայերի անփոփոխ գերագույն աստվածությունն է եղել մի՛շտ, որի ***աստեղային ատրիբուտը***՝«Թռչուն-Կարապ-Անգդ-Խաչ Պատրազին» = խաչ-հայր» համաստեղությունն է: Նա, ըստ հների, թե՛ երկնքի արարիչի աստեղատունն է, թե՛ երկնակամարի 12 կենդանակերպ աստեղատների ծնողն ու կանոնավորողն է, թե՛ հայ ժողովրդի ցեղային նահապետն է:

Քանի-որ ՆԵՐԳԱԼ*[1]-ը՝ ***Հայասա*** ամբողջ երկրի աստվածությունն էր, ի տարբերություն մյուս դիցերի, որ այս կամ այն տեղանքի հովանավոր աստվածություններ էին, Ներգալը՝ «ամբողջի», ***բովանդակի*** խորհուրդն ուներ, որ հնագույն համակարգերում ներկայացվում էր ***ութթեւ աստղի*** կամ ***շրջանաձողակի*** սիմվոլ-նշանագրերով, որի թվային ատրիբուտը եւ տերմինը՝ ՇԱՐ = 3600-ն էր: Šardi կամ **Sardi = sar + di**,- ներկայանում է որպես՝ Šar «բովանդակ» եւ di = դից՝ աստված իմաստով:

---

*1,-Նոր կտակարանի «Հայտնության» մեջ, հին հավատամքի ՆԵՐԳԱԼ-ն է, որ ժամանակի քաղաքական եւ անգրագետ, թաքնագիտական կոդերը խառնիխուռն ու հակասական ներկայացնող հրեական գրչի համաձայն դարձել է՝ ՆԵՐ = ՆԵՌ: ***Անգդ-Կարապի*** համաստեղության հետ կապված հնագույն միստիցիզմ-ավանդույթը, որ հետագայում դարձել է խառնիխուռն ու հակասական միստիկ նոր կոմբինացիաների պատճառ, իրականում աղերսվում է երկնակամարի եւ օրվա ժամային բաժանումների հետ: Այսինքն, հնում, Անգդ-Կարապի համաստեղությունը օրվա 24 ժամերից՝ 4 x 6 = 24, միայն վեց ժամ է, որ երկնակամարում չի երեւում, այսինքն գտնվում է անդրաշխարհում:

Աղթամարա կղզին, «ՀԻլի»-ն, եւ Գագիկ թագավորը:

Ավթամար կղզու անվան հետ կապված «Սասնա Ծռեր» էպոսի պատումներում, հանդիպում ենք հետեւյալ արտահայտություններին՝ «Կըրեր չկըրեր, Հաղթամար Գագիկ թագավոր ըմ կըեր»[*1], «Աղթամարա տուն. Կակիգ թագավորի պատմություն»[*2] կամ ԱՌՏԵՐ*(> Հառտեր)*[*3] կղզում, տեղի անունը ***Հիլի*** էր[*4]:

«Հիլի» անունը հանդիպում է տարբեր պատումներում որպես Աղթամար կըղզում տեղանքի վայր եւ վանքի անուն[*5]: ***«Հիլի»*** կամ ***«Հիլը»,*** որը ընդգծված է որպես տեղի կամ վանքի հատուկ անուն, նշանակում է ***ուլունք > հմայիլ,*** ինչպես նաեւ՝ բրոնզի կտոր, որի վրա ամրանում է ***ջրաղացի ցցի ստորին ծայրը, որն ապահովում է պտույտը*** *(Վ.Ս.Պետոյան, «Սասունի բարբառը», Երեւան, 1954)*:

Փաստորեն, մի շարք պատումներում Աղթամարա կղզին եւ ***ՀԻԼԻ***-ն դառնում են կարեւոր ու կենտրոնական:

Հինագույն ժողովուրդների հավատամքային պատումները սերտորեն աղերսվում են՝ ***հուռութք*** անելու եւ ***«կենդանակերպ աստղատների»,*** այսինքն՝ ***«աղթարի»*** հետ: Պատմահայր Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ, Վանա լիճը, ըստ հնագույն առասպելաբանության, ներկայանում է որպես «հուռութքի ծով», որ աղերսվում է Շամիրամի հմայիլի՝ հուլունքների հետ, որ 12 կենդանակերպ աստեղատներն են եւ, ներկայացնում է «դեպքերի» կենտրոնական վայրը, որի շուրջը «հյուսված» է պատումը:

«Բացի սրանից՝ մեր աշխարհի առասպելներն էլ արդարացնում են բազմահմուտ ասորուն Մար Աբաս Կատինայի կատարած քննությունը քաղդեական մատյանների, թե այստեղ է պատահել Շամիրամի մահը, նրա հետիոտն փախչելը, ծարավելը, ջրի պապակելը, ջուր խմելը, նաեւ՝ սուսերավորների մոտենալիս ***<u>հուռութների ծովը</u>*** *նետվելը եւ նրա ասած խոսքը -* ***«Ուլունք Շամիրամա ի ծով»[*6]:*** *«Բայց եթե առասպել ախորժում ես՝ Շամիրամը* ***Նիոբեից առաջ քար դարձավ»[*7]:***

Հնդեւրոպական լեզուներում եւ միֆոլոգիական տրադիցիաներում «քար» եւ «երկինք» բառերը համարժեք են[*8]: ***Աղթար*** նշանակում է՝ *«կենդանակերպ աստղատներով երկինք», «գուշակություն», «բախտ»*[*9]: Պատմահայր Խորենացու կողմից՝Շամիրամին զուգահեռել Նիոբեին, թաքնագիտական ակնարկ է: Հունական դիցաբանության մեջ ***Նիոբեն***, որ մեծ աստվածներ՝Զեւսի եւ Ատլասի թոռնուհին

---

*1,*2,*3,*4, - «Սասնա Ծռեր», 1936թ., Երեւան, h. I, էջ՝ 530, 471, 533, 1091, :

*5, - «Սասնա Ծռեր»-ում ***Հիլի*** կամ՝ ***Հիլը*** հանդիպում է h. Ա, էջ՝ 476, 530, 876, 879-882, 884, 1936թ., Երեւան: Հատ. Բ. II, էջ 849:

*6, *7, - Մովսես Խորենացի, «Հայոց պատմություն», էջ 70-71:

*8,- «Զեւսը Հերայի ոտքերից երկու սալաքարեր է կախում: Ամպրոպի աստվածը քարեր է նետում երկիր: Բալթո-սլավոնական ամպրոպի աստվածությունն ապրում է բարձր լեռնակատարում» եւ այլն, տես՝ T. Gamkrelidze & V. Ivanov, “The Indo-European & The Indo-Europeans”, 1995, p. 575.

*9,- Ա. Սուքիասյան, «Հայոց հոմանիշների բառարան», 1967թ., Երեւան:

էր, ուներ 7 ուստր եւ 7 դուստր, որոնց Ապոլոնն ու Արտեմիսը նետահարեցին: Օվիդիոսի պոեմը վերնագրված է՝ ***«Կերպարափոխություններ»*** անունով: Ըստ հնագույն հավատամքի՝ կար գոյաբանական երկու աշխարհներ: Սպանվել ոգիների սֆերայում նշանակում է, որ մեռնողը «կերպարանափոխվում»՝ կյանքի է կոչվում նյութական արտաշխարհում: Նիոբեի զավակները մեռնելով, ըստ թաքնագիտական աստղաբախշության, դարձան աստեղատներ: Իգական եւ արական՝ 6+6 կամ 7+7, վերաբերում են երկնքում դրական *(արական սեռ)* եւ բացասական *(իգական սեռ)* աստեղատներ-աստվածություններին*(տես՝ Manlly P. Hall, «The Secret Teachings Of All Ages», USA, 2000, p. XXXIII):* Հնդեւրոպական տրադիցիաներում՝ *«Յոթ թիվը աղերսվում է աստվածների հատուկ խմբին կամ միֆական պերսոնաժներին» (T. Gamkrelidze & V. Ivanov, "Indo-European & Indo-Europ.", 1995, p. 751):*

Այսուամենով, ***Աղթամարա ծովը*** Խորենացու մոտ՝ «հուռութքների ծով» է, եւ իրեն ծովը նետող Շամիրամը, որ Նիոբեից առաջ է դարձել քար, թաքնագիտական ակնարկ է՝ աստեղատներով երկնքի մասին, որը նաեւ կոչվում է՝ ***աղթարք:***

Ճշգրիտ «տեղանքը», որտեղից սկսվում է էպոսում Սասնա դիցերի առասպելական պատմությունը, առանձնակի կարեւորություն ունի:

*«Գագիկ թագավորն էր, կը նստեր Ախթամարի տեմաց Քարմանաձեղք: Էնտեղ կը թագավորեր Ավաշի, Խավի Ծորի, Շատախի, Մոկաց, Սպարկերտու, Խիզանի, Կարկառի, Կարճկանի վրա: Էտ ուներ ուր խամար ամառանոց: Էտ տեղուց անուն **Հիլի** է: Իրեք խարիր անող հոտավետ արոտատեղեր կա: Էտ տեղեր կը կնդվի Կաթնով հախպուր:*

Էպոսում, թիվ «երեքհարյուր»-ը որպես թաքնագիտական կոդ, աղերսվում է գլխավոր աստվածության եւ նրա «Անգդ» աստեղատան հետ: «Երեքհայուր» թիվը, Խորենացին օգտագործել է նաեւ Հայկ նահապետի առնչությամբ, որպես նրա գերդաստանի անդամների թվաքանակ:

Պատմողի կողմից այս տեղանքում ***Կաթնով աղբյուրի*** ներկայության ընդգրծումը, նույնպես պատահական չէ: «Սասնա Ծռեր» էպոսում Կաթնաղբյուրը այն կենսաուժ տվող աղբյուրն է, որը կարեւոր դերակատարություն ունի սասնա հերոս աստվածությունների համար: Այս Կաթնով աղբյուրը, որից ըմպելով սասնա հերոս-աստվածությունները կրկնապատկում են իրենց ուժն ու հզորությունը, զուգահեռաբար Ռիգ Վեդայում ***Սոմա*** ըմպելիքն է, որից Ինդրա աստվածության չափերը բազմապատկվեց:

*Կեղի մեջ շինուկ է մէ **կոքատուն**. պանցր շենք մ'է. շենքի վերեն նշաններ չկա. մեննակ, կ'ըսեն, կա **Ա** կամ **Ս**: Տռան հառճեվ կը կնդվի քառսուն պատի խուցեր, որ ժամանակով ետու **կոքերու տեղենն էր**: **Ուր ճոչ կուռք վանքի մեջն էր տրված:** Էս է Գագիկ թագավորի ամառանոց»*[*1]**:** Ուրեմն, Գագիկ թագավորը հեթանոսական գլխավոր դի՛ցն էր:

Մյուս օրինակը. 1911 թվականին մոկացի Հարություն Իլանյանի կողմից գրի առնված «Սանասար եւ Բաղդասար» պատումը, ըստ պատմող Վարդան Մուխսի Բազիկյանի, ուրիշ վերնագիր ունի, որ կազմողները տվել են էջի տակ՝ *«Ախթամարա Տուն. Կակիգ թագավորի պատմութեան. Խասունա Փահլեվաններ»*[*2]:

Ի՞նչ է նշանակում «Ախթամարա **Տուն**»-ը, որ ըստ էպոսի, Գագիկ թագավորի թագավորության կենտրոնատեղին է: «Սասնա» էպոսի մի շարք պատումներում այս տեղանքը կենտրոնական է: Իսկ «Տուն»-ը՝ կարող էր վերաբերել մեծ իշխանական նախարարությանը *(օրինակ՝«Արծրունյաց տուն»)* եւ երկնային համաստեղությանը որպես՝ **«աստղա տուն»:**

Թեեւ, ***Աղթամար***[*3] անունը Հր.Աճառյանի ***Անձնանունների բառարանում*** ներկայացված է որպես անհայտ ծագումի բառ, սակայն Աղթամար կղզու տեղանվան հետ կապված բազմաթիվ հնագույն հայկական թե՛ ավանդապատումները, թե՛ առասպելները եւ թե՛ «Սասնա» էպոսը, պարտադրում են ըմբռնել, որ Վանա(ծով)> Հուռթքի ծով > Ախթամարա տուն > Աղթարի տուն եւ այլն, աղերսվում է Աղթար = 12 կենդանակերպ*(Զոդիակ)* աստղատների հետ:

Աղթամար անունը*(կղզի, ծով, լիճ)* երկու բառերից է կազմված՝ ԱՂԹ-Ա-ՄԱՐ:

Աղ*[*4] **(«համ», «էություն»)** բառի հետ է աղերսվում հեթանոսությունից քրիստոնեության մեջ անցած ծիսական արարողությունները՝ «Աղօրհնեք»[*5] - աղը օրհնելը՝ մատաղացու անասունին տալու համար *(մատաղն ընդհանրապես հեթանոսական ժամանակներին հատուկ կրոնական ծես է):* ***«Աղորիք»*** բառը՝ պտտելով աղալու հետ է առնչվում. պտտեցնում են ջրաղացների աղորիքները *(իրար վրա դրված երկու անիվատիպ քարերը, որն է՝ աղաց)*[*6]: ***«Աղոթատուն»***.- եկեղեցի, տաճար *(այլադավանների աղոթատեղի)*[*7]: ***«Աղոթք»***՝ աղաչանք, դիմում սրբերին եւ Աստծուն[*8]: ***«Աղոն-Աղուն»***՝ սայլեր անծայրածիր ջաղացքարերուն[*9]: ***«Աղխ»***՝ տոհմապետի գերդաստան, շղթայաձեւ կոչնակ[*10]: Փաստորեն, բերվածի՝ ***«աղ»*** եւ ***«որիք»***՝ *անիվ*, իրար հետ աղերսվում են որպես մեկը մյուսից «դուրս բերված» իմաստ, որն է՝ անիվը պտտելով աղալ, ԱՂ - ԱԿՆ: ***Երկինքը՝*** որպես երկու շրջանաձողակների հաջորդական պտույտ՝ հնագույն հեթանոսական աստղագիտության մեջ հիմքային մոտեցում է: ԱՂՈԹՔ = ՀԱՂՈԹՔ *(սասնո եւ այլ բարբառներում հ-ն հատուկ դրվում եւ լսվում է),* հաղորդվելու = հաղորդ / հաղորդակցվելու, ինչպես նաեւ ԱՂԵՐՍԵԼՈՒ հետ առնչվող իմաստով գործածվող բառ է:

Աղթամարա անունը, նաեւ՝ «աստղ», «աստեղք»՝ ***աստղագիտություն > Ախ-***

---

*1,- «Սասնա Ծռեր», 1936թ., հ. I, էջ՝ 1091: Պատմեց Հովան Զոհրաբյան, գրի առավ Կ. Մելիք-Օհանջանյանը 1934թ.-ին: ***Հիլի,***- վանք է, գտնվում է Վանա լճի հարավային կողմում, լեռնագագաթի վրա:
*2, - «Սասնա Ծռեր», 1936թ., Երեւան, հ. I, էջ 475:
*3, - «Աղթամար», ստ. նույնանուն կղզու եւ վանքի անունից, որի ծագումը անհայտ է», Հր. Աճառյան, «Հայոց անձնանունների բառարան», հ. I, 1942թ., Երեւան:
*4,*5, - ԱՂ.- փխբ.՝ ***«համ», «էություն»,*** - «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», 1969թ., Երեւան, հ. I, էջ 31:
*6, *7, *8, *9, *10, - նույն աղբյուր՝ էջ 42, 40:

թարք[*1]***> Աղթ-ա-մար*** իմաստով է գործածված, որ ներառում է՝ ***«աստղերով լի երկինք»*** իմաստը: Խորենացու՝ ***Շամիրամը հուռութքի ծովը ենտվեց,*** հետո՝ ***Նիոբեից առաջ քար դարձավ*** հաղորդումները, թաքնագիտական ակնարկներ են, որ աղերսվում են՝ ***քար = երկինք*** եւ ***հուռութք = աղթար*** իմաստների հետ:

Աղթամար անվան երկրորդ մասը՝ **ՄԱՐ,**- *mor-/*mar ձեւը՝ «ծով, լիճ, ճահիճ» նշանակությունն ունենալ (հայերեն՝ mawr)***[*2]**:

«Սասնա Ծռեր» էպոսի պատումներից մեկը սկսվում է՝ ***«Կըրեր չկըրեր, Հաղթամար Գագիկ թագավոր ըմ կըեր»*** տողով: Փաստորեն, հայկական էպոսի դիցերի պապը՝ Գագիկ թագավորը, այստեղ կոչվում է՝ Հաղթամար Գագիկ: **Hal-di** ուրարտական աստվածության անունը հայերենով կարդացվում է՝ ***«Հաղթ աստված»***[*3]***:*** ***Հաղթամար*** -ի հնարավոր ընթերցումը կարող է լինել՝ **Հաղթ-ա-մար = Հաղթ + Մար**(= ծով), ընդգծելով ***Հալդի/Հաղթ*** աստվածության ***աստղերով լի երկնային ծով*** լինելու՝ ***«բովանդակ երկինք»*** գաղափարը: Մյուս կողմից, Հայասա երկրի ***Ներգալ՝ «Անգղ-Հովազաթյուծ»*** աստվածությունն էր ամբողջ Հայասա երկիրը ներկայացնող աստվածությունը, որ***հայր-մայր*** գերագույն աստվածության բինարիզմով***զույգն*** է:

Սասնա էպոսում ընդգծվում է, որ Աղթամար տեղանքում բլուր կա, որտեղ հին հեթանոսական տաճար է եղել: *«Կեղի մեջ շինուկ է մէ **կոքատուն**. պանցր շենք մ'է. շենքի վերեն նշաններ չկա. մենակ, կ'ըսեն, կա **Ա** կամ **Ս**: Տռան հառճեվ կը կնդվի քառսուն պատի խուցեր, որ ժամանակով ետու կոքերու տեղենն էր: Ուր ճոչ կուռք վանքի մեջն էր տրված: Էս է Գագիկ թագավորի ամառանոց»*[*4]**:**

Հիլին վանք է, գտնվում է Վանա լճի հարավային կողմում, բարձր գագաթի վրա, որ նախկինում հին հեթանոսական տաճար է եղել: Նոր կրոնը ընդունելու ընթացքում, հին հեթանոսական տաճարները քանդելով, նրանց տեղը քրիստոնեական եկեղեցի կանգնեցնելը՝ համընդհանուր բնույթ է կրել:

Վանա լճին հարակից է «Մհերի Դուռ» կոչված քարաբլուրը, որի վրա սեպագրված են ուրարտական աստվածների անունները ՀԱԼԴԻ գերագույն աստվածության գլխավորությամբ: Էպոսում ՀԻԼԻ եւ ուրարտական ՀԱԼԴԻ անունները համանման են հնչում եւ, երկուսն էլ ներկայացնում են աստվածների ***աստղային*** ատրիբուտներով երկինքը: Թե՛ «Սասնա» էպոսի Աղթամար Գագիկ թագավորը, թե՛ ուրարտական Հալդին, թե՛ պատմահայր Խորենացու Հայկ նահապետը՝ աղերսվում են Հայասա երկրի գերագույն աստվածության հետ: Եվ պատահական չէ պատմող ծերունու կողմից՝ *«Ախթամարա Տուն. Կակիգ թագավորի պատմութեան. Խասունա Փահլեվաններ»*[*5] էպոսի այսպիսի վերնագրումը:

---

*1, - Ղ. Ալիշան, «Հին հավատք կամ հեթանոսական կրոն հայոց», Վենետիկ, 1895թ., էջ 81:
*2,-T. Gamkrelidze & V. Ivanov, նույն աղբյուր, N.Y., 1995, p. 580.
*3,-Ս. Այվազյան, «Վանի թագավորության սեպագիր արձանագրությունները», Երեւան, 2006, էջ 69:
*4, - «Սասնա Ծռեր», 1936թ., h. I, էջ 1091:
*5, - «Սասնա Ծռեր», 1936թ., Երեւան, h. I, էջ 475:

Խաչ Պատրազին՝ իր աջ բազուկին:

Բոլոր հնագույն հավատամքային պատումներում, գերագույն հայր աստվածությունը՝ գաղտնատես եւ անիմանալի է: Շումերական հավատամքում, երկնքի ԱՆ աստվածության մասին ասվում է, որ նրա «էության» մասին ոչինչ հայտնի չէ: Նույն մոտեցումը կա նաեւ եգիպտական Աթումի առումով: «Սասնա Ծռեր» հնագույն էպոսում, իրար հաջորդող չորս սերնդի աստվածությունները՝ Սանասար, Մհեր, Դավիթ, Փոքր Մհեր, միայն այն ժամանակ են սկսում պայքարի իրենց գործողությունները, երբ «վերեւից» ԽԱՉ ՊԱՏԱՐԱԶԻՆ խորհրդանշանն իջնում է նրանց աջ բազուկին: Հայկական էպոսում այս ***«խաչ-պատարազինը»*** աներեւույթ, գաղտնատես երկնային հար աստվածության խորհրդանշանն է, որ երկնքից իջնում է հերոսների աջ բազուկին, խորհրդանշելով հերոսների ծագումը եւ պատկանելիությունը:

Էպոսը հավաքագրող բանահավաքները պատմող ծերունիներից փորձել են պարզել, թե ի՞նչ է նշանակում՝ ***պատարազը*** կամ ***պատրացինը,*** եւ ստացել են միեւնույն պատասխանը՝ պատմողները խոստովանել են, որ իրենք չգիտեն դրա իմաստը:

Մ. Աբեղյանը եւ Կ. Մելիք-Օհանջանյանը ժամանակին փորձել են ***պատարազը*** կապել Օսական էպոսի հերոս Բատրազդի հետ, սակայն, ***Խաչ-Պատարազին***, ***«Պատրազին»***, ***«Պատրացին»*** անունը, ոեւէ կապ չունի Օսական էպոսի հերոս Բատրազդի հետ, եւ այս կարծիքը թյուր է ու անհիմն*[1] *(գուցե վերոնշյալները ստալինյան սարսափի ժամանակների պարտադրանքով է, որ փորձել են այս բառը կապել օսական ծագում ունեցող Ստալինի հետ),*:

Տարրական տրամաբանությունն իսկ հուշում է, որ «Սասնա» էպոսի ԽԱՉ ՊԱՏԱՐԱԶ-ը՝ խաչի տեսք պետք է ունենա, եւ քանի-որ երկնքից է իջնում, առնվազն «թռչող» պետք է լինի, նաեւ՝ ըստ էպոսի միստիցիզմի *(գերագույն զորություն տալու կարողություն),* կապված լինի գերագույն աստվածության հետ, եւ աջակողմյան պտույտ ունենա *(այն իջնում է հերոսների աջ բազուկին):* ***Պատարազը՝*** «սրբազան սվաստիկայի» նշանը, որն իջնում է էպոսի հերոսների աջ բազուկին, նախահնդեւրոպական **Patḗr** -ը՝ հայերեն «հայր»-ն է*[2], որ մի կողմից աղերսվում է ****ptr-*** «հայր»*[3], մյուս կողմից՝ հին իռլ. e´n, հին վելշ. eterin, «թռչուն, թռչող» իմաստների հետ: Նախահնդեւրոպական **[*P^{h}et^{h-}]***[4] արմատը, որից սանսկրիտով՝ patará-,

---

*1,- Մ. Աբեղյանի եւ Կ. Մելիք-Օհանջանյանի կարծիքն է եղել, տես՝ «Սասնա Ծռեր», հատ. Բ, մ. II, էջ 843, ծանոթ.:

*2,- Հր. Աճառյան, «Հայոց լեզվի պատմութ.», 1940թ., մաս I, էջ 107:

*3,- T. Gamkrelidze, V. Ivanov, “The Indo-European & The Indo-Europeans.”, 1995, USA, p. 455n (տես՝ էջատակ #53), p. 455.

*4,- T. Gamkrelidze, V. Ivanov, նույն աղբյուր, էջ՝ 455n (տես՝ էջատակ #53), 455, 528:



Երկնքում Կարապ (Cygnus) հյուսիսային համաստեղությունը Ծիր Կաթնի, ըստ հների տեսանելի երկնային գետի, կենտրոնում :



Մենամորի հնավայր Մ. թ. ա. 2800թ.



նկ.#2, «Հովազ-Անգղ»ի՝ UD.KA.DUH.A աստվածության սիմվոլը:

հիթթիթերեն՝ ***pattar,*** հայերեն՝ ***t'ir*** եւ այլն, աղերսվում է «թռչող», «թեւ» իմաստներին եւ սերտորեն կապված է հնդեւրոպական միֆոլոգիաների թեւավոր աստվածությանը: ***Խաչ-Պատրա-զին-ի*** վերջածանց ***ազի*** -ին, կամ ***ասի*** -ին՝ նախահնդեւրոպա-կան [*azdo] ձեւից հնդեւրոպական լեզուներում ներկայանում է՝ «այրել, այրող» իմաստով, որ աղերսվում է շումերական՝ iz, azaz «կրակ»-ի հետ*[1]:

Փաստորեն, բառի ստուգաբանությունը ցուցում է, որ էպոսի այս միստիկ խորհրդանշանը ա) ***քառաթեւ խաչ*** է, բ) ***հայր*** է (նախահնդեւրոպ.՝Patĕr), գ) ***թռչող*** է, դ) ***հրե*** բնույթ ունի է:

Հավատամքային պատումների գերագույն աստվածության սիմվոլը հանդիսացող թռչունը, ըստ հնագույն աստղագիտության, վերաբերում է ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԽԱՉԻ՝ ***Կարապի*** համաստեղությանը: ԿԱՐԱՊԻ համաստեղությունը գտնվում է երկնային Ծիր Կաթին «գետ-ծովի» կենտրոնում եւ Հայասա երկրի Ներգալ՝ ընդերքի, անդրաշխարհի աստվածության աստեղատունն է: Եվ, ըստ հայկական էպոսի, Ծովինարը խմելով այդ ծովի միջից բխած աղբյուրից, հղիանում է գերբնական երկվորյակներով: Երկվորյակներից Սանասարը, եւ հետագայում նրա սերունդները՝ արական հերոս-աստվածությունները, իրենց աջ բազուկին ստանում են երկնքից իջած երկնային հոր նշանը, որը ցուցում է թե՛ այդ հերոսների պատկանելիությունը, թե՛ գերագույն աստվածության կամքը կատարելու պայմանը: Փաստորեն, երկնքից իջնող Խաչ-Պատրազինը՝ «Անգղ-Կարապի» աստեղատունն է որպես խորհրդանշան:

Ութաթեւ աստղը՝ ՇԱՐ = 360⁰, բնորոշում է «բովանդակի» եւ «գերագույն աստված», «երկնային դրախտ» գաղափարները:



Գերագույն աստված. շումերաբաբելական պատկերգիր եւ սեպագիր ներկայացումը:

*1,- Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, h I, էջ 82:

Հրեղեն ձին՝ Քուռկիկ Ջալալին:

«Սասնա Տուն» էպոսում հրեղեն ձին, որը սավառնում է մինչեւ արեւ եւ երկնակամար, հասնում է մինչեւ ***մութ ու լույս, սեւ ու կարմիր աշխարհներ,*** որը ճակատամարտի ժամանակ իր ***շնչով*** բանակներ է սրբում եւ ***անմահ*** է, ծառայում է էպոսի չորս սերնդի աստվածություններին: Սանասարն իր գերբնական թուրը՝ ***թուր-կայծակին*** եւ հրեղեն, խոսող նժույգը ձեռք է բերում ծովի հատակից: «Սասնա Ծռեր» էպոսում հրեղեն ձիու անունն է՝ Քուռկիկ Ջալալի:

Ինչպես արդեն ասվել է, հնագույն հավատամքներում ձիու խորհրդապաշտությունը ՇՈՒՆՉ-ՀՈԳՈՒ հետ է աղերսվում: Ըստ հնդկական «Ռիգ-Վեդայի», Բրահմայի օրը՝ 12 ժամը բաժանվում է չորս մասի՝ ոսկյա (Crita-yug), արծաթյա՝ (Treta yug), բրոնզյա՝ (Dwapara-yug) եւ երկաթյա՝ (Kali yug): Kali yug-ի շրջանում, ոգին նյութի «գրավիտացիայից» չի կարողանում «ազատվել» եւ մոռանում է իր վերերկրային էության ու կապի մասին: Այս ժամանակահատվածը «Ռիգ-Վեդայում» նաեւ ներկայանում է ձիու սիմվոլով եւ կոչվում է KALKI:

Տիեզերական Շունչը՝ ԱԼԱՅԱ-ն, որը բացարձակ հավերժական գոյություն է՝ ըստ Մահայանա դպրոցի, նաեւ անհատական ***Շունչ-հոգու*** իմաստն ունի:

Սանսկրիտով՝ jiva*[1] նշանակում է «կենդանություն», եւ սա ֆլորա եւ ֆաունային է վերաբերում: Իսկ **ánila-h***[2] նշանակում է՝ «շունչ»: Նույն իմաստով, ձին՝ Քուռկիկ Ջալալին, ինքն է իրեն ներկայացնում «Սասնա» էպոսի բազմաթիվ պատումներում.

«Եյ անիրավ, ընչի՞ կը վախենաս,
Քանի մ' քու թրի հեռջեվ եհան,
Երկու սկոմ յեմ շնչիլը՛ս հեռջեվ կը հա»:

(Սասնա Ծռեր, հ.I, էջ 674, Երեւան, 1936թ.)

Հայերենում ***շունչ*** բառի հոմանիշն է՝ հոգի, էակ, ***արարած*** :

Հայկական լեռնաշխարհի հնագույն հիթթիթական ***Ալալու*** աստվածությունն առաջին աստվածություններից (Ալալու, Կումարբի, Անու, Թեշուբ), ավագն է՝ առաջինն է, որ տիեզերական ***Շունչ-հոգի*** կենսաուժն է ներկայացնում: Հրեղեն ձիու անունը՝ «***Ջ+ ալալի»***՝ «ջ» նախդիրով, աղերսվում է հիթթիթական ալալու > արար-ու > հայերեն՝ արարած-ի *(լ > ր անցումով)* հետ:

«Սասնա» էպոսում պահպանված է նաեւ Քուռկիկ Ջալալու արժեւորման՝ աստիճանակարգի մասին իմֆորմացիա: Երբ պղնձե թագավորության քարվանսարայում գիշերելու համար, հրեղեն ձիու համար Սանասարից պահանջում են ***մեկ արծաթ***, իսկ իր՝ Սանասարի համար ***կես արծաթ***, Սանասարը ճշտում է

---

*1, *2,- T. Gamkrelidze & V. Ivanov, "The Indo-European & The Indo-Europeans", 1995, New York, p. 387, 388.



Ըստ՝ Ա. Մովսիսյանի աղյուսակի, «Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը», Երև.,2003, էջ 39:

«իրերի կարգը»՝

«Ախո, ես քեզ կտամ,
Ձիուս երկու արծաթ,
Իմ գլուխն իրեք արծաթ»*[1]:

Ըստ թաքնագիտության, մարդը տիեզերական երրորդություն է՝ ***մարմին-շունչ-հոգի***, իսկ ձին երկու՝ ***մարմին-շունչ***:

Հայկական լեռնաշխարհի հուրրի-միտանական [Kikkuli]*[2] > Քուռկիկ > հայ.՝ քուռակ, ձիու անվանումը, «Սասնա» էպոսի ձիու անվան նախնական, մայր տարբերակն է: Էպոսում, Քուռկիկը՝ թռչող, արծիվ ձի է, եւ **արծվի** նախահնդեվրոպական՝ He/or-> հիթթիթ.՝ haranas, լիտվ.՝ arelis, հին եկեղ. սլավոնական՝ orilu, գոթ.՝ ara, հայերեն՝ oror*[3],«արծիվ», «թռչուն» իմաստով բառերը, Լ > Ր անցումով, աղերսվում են էպոսի ձիու Ջ'ալալի անվան հետ: Այս համապատասխանությունը պատահականություն չէ. ուրարտական արքա Մենուայի ձիու անունը՝ Արծիբինի > Արծիվ(ինի), (բ)-ն եւ (վ)-ն փոխադարձվում են,- [Arsibini] > [Arcvini] > arciv > arcui «արծիվ»*[4]: Քուռկիկ Ջալալին թռչող ձի է, ձի-արծիվ է, ինչպես հունական Պեգասոսը: Էպոսի պատումներից մեկում, Սանասարը սպանում է նախ *«երկնային» վիշապին, որն իրենով ծածկել էր արեւը՝ քաղաքի ողջ երկինքը, իսկ այնուհետեւ սպանում է ջրի ակունքին տիրացած վիշապին, եւ, վերջապես՝ այն վիշապին, որը բարձրանում էր ծառը՝ խժռելու անօգնական արծվիկներին: Եւ մայր արծիվը հովհարի նման տարածում է թեւերը քնած Սանասարի վրա (**այս մանրամասնությունը արձանագրված է նաեւ Խորենացու «Պատմության» մեջ**): Դրանից հետո արծիվը Սանասարին դուրս է բերում «ստորգետնյա թագավորությունից»*[5]:*

Էպոսի մեկ ուրիշ պատումում*[6], Ծովինարին փոխարինող զուգահեռը՝ Սարան*[7] անունով արքայադուստրը, հղիանում է

---

*1,- «Սասունցի Դավիթ», 1989թ., էջ 136:
*2,- T. Gamkrelidze & V. Ivanov, "The Indo-European And The Indo-Europeans", 1995, New York, p. 465:
*3, - T. Gamkrelidze & V. Ivanov, նույն աղբյուր, էջ՝ 455:
*4, - Նույն աղբյուր, էջ՝ 45n, 92n, 457, 823:
*5,- «Սասունցի Դավիթ», 1989թ., Երեւան: Լեւոն Մկրտչյանի «նախաբանը», էջ 15: Ասացող՝ Ֆարման Թովմասյան, «Սասունցի Դավիթ, նոր պատումներ», 1977թ., Երեւան, էջ 326, 335-341:
*6,- «Սասնա Ծռեր», 1936թ., Երեւան, h. I, էջ 1029:
*7,- ***Սարան*** անունը՝ Sara-an, պատահական չէ էպոսի այս պատումում. այն խորհրդանշում է՝ Սար = ՇԱՐ, Šar = 3600 «բովանդակ, ամբողջ» եւ՝ ԱՆ > ՀԱՆ,- «մեծ մայր» իմաստները:

խմելով հրեղեն ձիու սմբակի տակի ջուրը : Թաքնագիտական համակարգում, ***բարձրագույն Ոգու*** «մարմին-անիվը»՝ ***շունչ-հոգին*** է, եւ առաջինը ծնվում է երկրորդից: Հայկական էպոսում Սանասարը ***բարձրագույն Ոգու***՝ «աներեւույթ, էզոտերիկ արեւի» (***ըստ VII դարի թաքնագետ Ա. Շիրակացու նրա անունը՝ ԱՐՓԻ է***) իպոստասն է, որ «Միերի դուռ» կոչվող արձանագրության աստվածների ցանկում **Šiuini**-ն է, որ վարգում է շունչ-հոգի՝ Քուռկիկ Ջալալուն: Հայտնի է, որ հնում ձիերին զոհաբերել են արեւի աստծուն եւ հայկ. լեռնաշխարհը նաեւ հնագույն ձիաբուծության հայրենիքն է: Փաստորեն, Քուռկիկ Ջալալին տիեզերական ՇՈՒՆՉ-ՀՈԳՈՒ խորհրդապաշտական իպոստասն է, որն իր վրա է կրում էպոսի ***աստված-հերոսներին****(միտք-ոգի):*

Ձիուն կամ էշին վարգելը, թաքնագիտական խորհրդապաշտության «լեզվով» (**ինչպես Քրիստոսի պարագայում է**) ներկայացնում է սեփական ԷԳՈ-ն կառավարելու կամ ցածրադիր ՇՈՒՆՉ-ՀՈԳԻ-ն կառավարելու կարողություն ունեցող ***«հոգեւոր հասյալին»****[1]: Եթե ձին կամ էշը ճերմակ գույնի է, ապա հասյալը եռամեծ հոգեւոր վարպետ է (**օր.՝ Հերմես եռամեծ, Պյութագորաս, Յիսուս եւ այլն**):

Թուր Կեծակի, Թուր Հավլունի:

«Սասնա Ծռեր» էպոսում, երկվորյակաները, որոնք գերբնական ակնաղբյուր ջրից հղիության արդյունք են, ծովի հատակից ***(անդրաշխարհից)*** գտնում են միանգամից՝ 1) հրեղեն ձին, 2) Թուր-Կեծակին, եւ գերագույն աստվածության դրոշմը՝ 3) Խաչ-Պատրազին, որ երկնքից իջնում է երկվորյակներից Սանասարի աջ բազուկին: Սերնդե-սերունդ, սասնա չորս հերոս-աստվածությունները մարտնչելով արդարության համար, ***գերագույն՝ հայր Աստծուց*** ստացած վերոհիշյալ երեք ատրիբուտների կրողն են, եւ փաստորեն, նրա կամքը կատարողներն են, քանի-որ առանց հրեղեն ձիու, առանց երկնքից ուղարկված խորհրդանշանի՝ «Թռչող Խաչ-սվաստիկայի», եւ առանց հավլունի թրի՝ Թուր Կեծակու, «Սասնա» էպոսում դյուցազնական գործողությունների ընթացքը չէր կայանա:

Միկրո տիեզերքում՝ մարդու մոտ, երրորդ աչք կոչվող, Սահասրարա 7-րդ չակրայից ցած, Սոմա չակրայի սիմվոլը՝ ***կարապը*** կամ ***թռչող ձին*** է:

Թուր-Կեծակին կամ Հավլունի թուրը, ինչպես «Խաչ-Պատրազին» է, նորից աղերսվում է «Կարապի» համաստեղության

*1, - Moustafa Gadalla, “Egyptian Cosmology”, USA, 2001, p. 148-149.



Հայկ. լեռնաշխարհում գտնված թրի պատկերներ՝ պտտվող սվաստիկայի սիմվոլով: Նկարները՝ Ա. Մովսիսյանի «Հայկական Մեհենագրություն» գրքից:

հետ, որպես գերագույն աստվածության «օգնություն» եւ «ներկայություն»:

ՀԱՎԼ+ՈՒՆԻ բառը աղերսվում է՝ հավ>հաւ, ***ու*** հլ. «թռչուն», «աքլոր» իմաստների հետ (բնիկ հայ բառ է, նախահնդեւրոպ.՝ aṵei- ձեւից «թռչուն», նաեւ՝ ՀԱՒ, ***ու, ո*** հլ. «մեծ հայր», նախահընդեւրոպ.՝ aṵo- ձեւից, բնիկ հայ բառ է, ինչպես նաեւ՝ ՀԱՒ, ***ի-ա*** հլ. «ծայր, սկիզբ, սկզբնավորություն», բնիկ հայ բառ է*[1]:

Ինչո՞ւ՝ ***«Հաւ», «սկիզբ» եւ «թուր»:*** Ամռանը հայկական լեռնաշխարհից դեպի հյուսիս նայելիս, առավոտյան, արեւելքից հառնում է առաջին աստեղատունը՝ բարձրացող «Կարապի» համաստեղությունը: Երկնային Հաւքը՝ օրվա սկիզբն է եւ ծայրը: Այն թրի տեսք ունի, եւ Միջագետքյան (մ.թ.ա. XIդ.) աստղացանկում «UGUR-ը ակադերեն ընթերցված է namsaru- , որ «թուր»-ն է»*[2]: Ինչպես Ա. Դավթյանն է դիպուկ նկատել՝ Հայասա երկրի գերագույն աստվածություն Ներգալի թուրը, «Սասնա Տուն» հնագույն էպոսի հերոս-աստվածների Թուր Կեծակին է: Սրա հայկական հոմանիշ անունը՝***գեղարդն*** է: Եվ, ըստ իս, Գեղարդի վիմափոր երկհարկանի քրիստոնեացված տաճարները աղերսվում են հնագույն հավատամքում գերագույն աստվածության լուսաբեր զենքի՝ գեղարդի հետ: Վեդայական Բրահմի, Վիշնույի, Կրիշնայի ձեռքում լուսաբեր այս նույն «զենքը» տիեզերքներ է ձեւավորում-արարում:, այնպես ինչպես Սանասարի Թուր-Կայծակին է անդրաշխարհի վիշապի գլուխը կտրելով նոր սկիզբ, նոր համակարգ հաստատում ողջ տիեզերքում:



Կարապ-Անգղի համաստեղությունը, որպես Խաչ-Պատերազմի: Նկ. վերցված է Ա. Դավթյանի գրքից:

*1,- Հր. Աճառյան, ՀԱԲ, h. III, էջ՝ 65-67:
*2,- Արմեն Դավթյան, «Հայոց աստեղային դիցաբանություն», 2004թ., Երեւան, էջ՝ 207-209:

Աղյուսակը՝ ըստ Պ. Հերունու «Armenians And Old Armenia», Երեւան, 2004, էջ 43:

DENEB. Periscope-Stone № 137				
J2000, $\delta_0 = 45°28'$, $\alpha_0 = 310°36'$, $\varphi = 39°34'$				
Years ago	Declination	Rising Azim.	Setting Azim.	Altitude
7400	39° 03′	35° 10′	324° 49′	89° 29′
7500	39 16	34 47	325 12	89 42
7600	39 30	34 23	325 36	89 56
7630	**39 34**	**34 15**	**325 44**	**90 00**
7700	39 44	33 58	326 01	90 10
7800	39 58	33 32	326 27	90 24
7900	40 13	33 05	326 34	90 39



Նկարի վերեւում, Օգոստոս 11-ին 12490թ. մեր թվագրությունից առաջ, ***Կարապ*** համաստեղության ***Դենեբ*** աստղը որպես հյուսիսային բեւեռի կենտրոնական աստղ: Ներքեւում ***արեւը*** մտնում է ***Կույսի*** համաստեղություն: Սա տիեզերական ***մեծ տարվա՝ 25920*** տարի, կեսն է, Հայկական լեռնաշխարհից **(39^0-44^0)** երկինքը դիտելու դեպքում:

Sky Glob 3.5 համակարգչային ծրագրով կարելի է նաեւ տեսնել հյուսիսային բեւեռում ***Կարապ-հավք>հառաջ*** համաստեղության «մենամարտը» ***Վիշապի (Dracon)*** համաստեղության հետ եւ Փոքր Արջի (Շերեփի=Կադրկ՝ ըստ սասնո բարբառի) համաստեղության հաստատումը առաջին տանը՝ բեւեռում:

«Բելայ՝ բռնանալ ունել զամենայն երկիր: Որում ոչ կամեցյալ հնազանդ լինել Հայկայ, յետ ծնանելոյ զորդի իւր զԱրամանյակ ի Բաբելոնի՝ չու արարեալ գնայ յերկիրն Արարադայ, որ է ի կողմանս հիւսիսոյ»(Մ. Խորենացի «Պատմություն», Երեւ.1981թ., էջ40): Հայկը չվելով հյուսիս, իր 300 հոգուց բաղկացած ընտանիքը հաստատում է Արարադի երկրում: Եվ իր ԿԱԴՄՈՍ անունով թոռանը, Արամանյակի որդուն, հաստատում է իր առաջին տանը: Հին թագնագիտական կոդերի եւ աստղագիտության համաձայն, Կարապ-թռչունը՝ երկրաչափական եռակողմ Tetrahedron-ն է՝ 300 թվի սիմվոլով: Կադմոսը՝ Շերեփի (Փոքր սայլ> Փոքր Արջի) համաստեղությունն է, Արա+մանյակը՝ արեւի ուղեծիրն է: Եվ Մ. Խորենացու այս պատումը, ուղղակի, հյուսիսային բեւեռից Ալֆա Դրակոնիսի (վիշապի համաստեղություն) անկման, որը հյուսային բեւեռի «իշխող» աստղն էր, եւ կենտրոնում Փոքր Արջ համաստեղության հաստատման մասին է, որը տիեզերական մեծ տարվա՝25920 տարի, շրջափուլի սկիզբն է: Այսօրվա աստղագիտության մեջ սա կոչվում է առաջընթացության, Precession-ի երեւույթ: Մ. Խորենացին իր «Պատմություն» մեջ, (Երեւան, 1981թ., էջ՝ 15-17) նշում է, որ հին պատմագիրները, բոլոր մարդկության արմատը կամ ծայրը համարում են 36000 տարեփուլը՝ 10 ՇԱՐ (3600 x 10 = 36000): «Կարապի» համաստեղությունը 36000 տարին մեկ եւ դրա կեսը՝ 18000 տարին մեկ (այս անգամ շրջված ձեւով) դառնում է հյուսիսային բեւեռում «իշխող» աստեղատունը, իր կողքին ունենալով «Վիշապին» եւ «Վարազին»:

ԾՈՎԻՆԱՐ՝ ՄԱՅՐ ԱՍՏՎԱԾՈՒՀԻ



Մայր աստվածուհին, երկվորյակների մայրը: Երկվորյակների սիմվոլը՝ երկու ընձառյուծներ:

Ժայռապատկերներ, Սյունիք, մ.թ.ա. V հազ.



Առաջին կոսմիկական մայր աստվածության երկրաչափական սիվոլը՝ ***իկոսահեդրոնն*** է: ունի 20 եռանկյուն նիստ, 30 կողեզր: Էլեմենտը կամ բնույթը՝ ***ջուր:*** Իրենում ունի ***հուր*** բնույթով պոտենցիալ արական ***տետրահեդրոնը:***

ԳԼՈՒԽ ՉՈՐՈՐԴ

ՆԱԽԱՄԱՅՐ ԾՈՎԻՆԱՐ

«Սասնա» էպոսում Ծովինարը խմում է գնրբնական աղբյուրից ու հղիանալով ծնում է երկվորյակ դիցերին, որոնք հետագայում «մենամարտում» են վիշապների հետ, խոյանում են մինչեւ արեւը, իջնում մինչեւ անդրաշխարհ եւ այլն: Ո՞վ է Ծովինարը, եւ ո՞վ է երկվորյակների գաղտնատես հայրը:

Մայր աստվածուհին երկու կատվառյուծների հետ: Մ.թ.ա. VI հազ., հայկական լեռնաշխարհ, Զաթալ Հույուք հնավայր: Գտնըվում է Դիարբեքիրին մոտ:

Նկարում *«Երկու կատվառյուծների մեջտեղում աստվածամայրը ծննդաբերման ընթացքում է: Նոր ծնվող երեխան նրա ոտքերի արանքում է» (Shrine in level II, 1, Çatal Höyük: 6000 B.C.). "Արձանիկի բարձրությունը 11.8 սմ. է":* Marija Gimbutas, " The Language Of Goddess", USA, 2001, p. 107.

Ծովինարի հետ կապված մենք ունենք եւս երկու «կողմնակի» վկայություն: Առաջինը՝ Մ.Խորենացու հիշատակած ***«Երկնէր երկին, երկնէր երկիր, երկնէր եւ ծովը ծիրանի...»*** հնագույն հավատամքից հատվածը, որտեղ՝ ծիրանի ծովը եւ «Սասնա» էպոսի Ծովինարը համարժեք են: Եւ երկրորդը՝ անձրեւի հետ կապված հնագույն ծիսական, այժմ՝ ֆոլկլորային երգն է. - «**Հոյ-Նար**»-ը[*1]:

ՆԱՐ-ը՝ ծովի + նարը, ծովի մայր, ծովի ոգի,- իգական հիմքով, ջրային տարերքն է եւ կապվում է ծովի հետ, այսինքն, տիեզերական կամ երկնային կենսաջրերի հետ՝ որպես արարման սկիզբ, ինչպես բոլոր հնդեւրոպական հավատամքային պատումներում: Էպոսում, Ծովինար անունն ըստ միֆոլոգիական իմաստի՝ ՆԱՐ >ՆԱՅ, (թաց), ր > յ , **ՆԱՅ+(ՈՒՀԻ)՝** «ջրահարս» իմաստի ստուգաբանությունը պետք է ունենա, եւ մյուս կողմից՝ ՆԵՐ ձեւով ***նար > ներ***՝«ներքեւ, ներքին, մեջ, հիմք, ընդերք,»[2] իմաստն արտահայտի:

Նար-ի նախահնդեւրոպական ձեւն է՝ [*Hnaras], որից Սանսկր.՝ **nár** - «մարդ», հունարեն՝ **anḗr**, սանսկրիտ՝ **sūnára-**, «կենսուժ» (կյանք սնտողծող լի ուժ)[*3]:

Հետաքրքիր է, որ էպոսի ***Ծովինարը***՝ որպես անուն, որից ծնվում են երկվորյակները, եւ հեթանոսական երգում՝ ծովը, որ ***Ծիրանի*** է կոչվում, որից ծնվում է Վահագն աստվածը, մեկը մյուսի շրջադարձված ձեւն է, եւ երկուսն էլ համապատասխանում են հնագույն հնդեւրոպական հավատամքային կարգակառույցում տիեզերական նախամոր՝ «խորք-հիմք» եւ «ջրային բնույթ» հիմնական հատկանիշ-ատրիբուտներին: Այս երկու

*1.- Տես՝ A. Petrosyan, "The Indo-European & Ancient Near Eastern Sources of Armenian Epic", Journal of Indo-Europ. Stud., Mngr. # 42, W. D.C., 2002, p. 8.

*2.- Հր.Աճառյան, «Հայոց լեզվի պատմություն», h. I, Երեւան, 1940թ., էջ 56:

*3 - T.Gamkrelidze & V. Ivanov, նույն աշխատութ., էջ 174.

բառերի երկրորդ կեսերը՝ Ծի+*բան* եւ Ծովի+*նար*, շրջադարձելիս իմաստ են արտահայտում՝ **նար ⇄ բան:** Առաջինը՝ *նար* -ը > նայ՝ «թաց», ինչպես նաեւ՝ նար>ներ՝ «մեջ», եւ *նար* -ի շրջված՝ *բան* (ծի - բան) ձեւը՝ «տեղ» (աստղարան, ժողովարան, նաեւ՝ *ծիր* < *ծրաւ*, *ծրով* , որ նշանակում է «շրջագիծ»): Հնագույն հավատամքային համակարգում այն ունի նաեւ աստղագիտական նշանակություն. ***«ծիր»*** արմատից է **ծիր-կաթին,** հարդագողի ճանապարհը*[1]:

Հայկական **«ՀՈՅ»** բառականչը, որն աղերսվում է անձրեւի հնագույն ծիսակատարության հետ, առկա է՝ թե՛ հնագույն հիթթիթական տեքստերում՝ **heúš,** որ «անձրեւ» նշանակությունն ունի, թե՛ հունարենում՝ **húei** «անձրեւում է», եւ թե՛ հին եգիպտական բառը կա՝ **ḥwj,** նաեւ ղպտերենում՝ **hōw,** որ նույն «անձրեւում է» նշանակությամբ եւ համանման հնչողությամբ է*[2]: Հոմերոսի մոտ՝ **hûe d'ára Zeús** կանչով, գերագույն աստվածությունից անձրեւ էր խնդրվում, եւ Զեւսը անձրեւ էր ուղարկում*[3], այնպես, ինչպես հայկական գյուղերում են **ՀՈՅ-ՆԱՐ** կանչելով, երգելով, երկնքից անձրեւ խնդրում: Մենք համակարծիք չենք Թ. Գամկրելիձեի եւ Վ. Իվանովի հետ, թե այս բառը՝ հնարավոր է հնդեւրոպական լեզվում եգիպտականից փոխառություն է: Նախ, փաստ է, որ հնագույն ժամանակներում եղել են հյուսիսային Միջագետքից դեպի Եգիպտոս մեծ միգրացիաներ եւ ինտերվենցիաներ(Հիքսոսներ), բայց ոչ հակառակը: Եվ ամենակարեւորը՝ հնագույն հնդեւրոպական ծիսակատարության ժամանակ, դիմվում է գլխավոր հայր աստվածությանը անձրեւ բերելու խնդրանքով, ուրեմն, ՀՈՅ - ը՝ անձրեւաբերն է, եւ ոչ թե՝ ղպտեր.՝ **hōw** անձրեւելը: ՀՈՅ-ն աղերսվում է երկնային հայր աստվածության հետ, եւ այդ աստվածության մականուններից է: Նախահնդեւրոպական «հայր»՝ **pt ér** ձեւը, որ հունարենում, կելտական, իտալական, գերմանական լեզուներում դարձել է՝**patér**, հայերենում դարձել է՝ ***հայր***[4]**:** Նախահնդեւրոպական **[*^{ph}Ht^{h}er-]**[5]**>** հայերեն՝ ***հայր→ հորու → յորայ***,- արական սեռ՝ **«հայր»**-ն է, որ հնագույն մի շարք հավատամքային կառույցներում հանդես է գալիս որպես հայր աստվածություն՝ ***հուր-երկինք*** բնույթով, ինչպես վեդայական Բրահմա՝ ***ՀԱՐԻ*** (Hari), Եգիտական՝ ***ՀԱՅԿԻ*** (Hikê «հուր թռչուն»), շումերական՝ **ԱՆ -** «երկինք» աստվածությունները:

Համարյա հնագույն բոլոր հավատամքային կոնցեպտուալ պատումներն իրենց հիմքում դուալիզմի սկզբունքով են*[6]: «Լույս»-ը որպես «արական» արտահայտություն, ըստ հների, ծնվում է «խավարի» (գիշեր) մեջ, եւ համապա-

*1, - Հր.Աճառյան, «Հայ. Արմատ.Բառարան», 1977թ., հ.II, էջ 459:
*2, 3, - T. Gamkrelidze & V. Ivanov, նույն աշխատ., էջ 586-587:
*4, - Հր.Աճառյան, «Հայ. Լեզվի Պատմութ.», հ. I, 1940թ., Երեւան, էջ 107:
*5, - T. Gamkrelidze & V. Ivanov, նույն աշխատ., էջ 808, 808(n):
*6, - T. Gamkrelidze & V. Ivanov, նույն աշխատ., էջ՝ 679 :

տասխանաբար՝ «Արեւը» եւ «Լուսինը»՝ որպես գիշերային եւ ցերեկային ***երկու երկինքների*** գլխավոր իպոստասներ, դառնում են նախահնդեւրոպացիների դուալիստական կոնցեպտի ամենահնագույն խորհրդապաշտական սիմվոլները:

Հայերեն՝ ԷՐ-ԿԻՆ(ք)-ը առավոտվա՝ ԷՐ-ի >ԷՐՐԱ աստղի հետ է աղերսվում, որը «Կարապ» համաստեղության առաջին աստղն է, եւ հայկական լեռնաշխարհում երկնակամարում նրա երեւումով է օրը բացվում *(աստղի այսօրվա անունը՝ Albireo):* Եվ քանի-որ **Էրրա-Ներգալ** աստվածությունը Հայասա երկրի գլխավոր աստվածությունն է, ապա հայերենում «երկինք-էրկինք»-ի անվան առաջին կեսը՝ ԷՐ > ԷՐՐԱ, գալիս է հնագույն գլխավոր աստվածության անունից *(տես՝ «Գագիկ թագավոր-ը՝ որպես հերիարխիայի «սկիզբ», «հայր» եւ պապ» բաժինը):*

Փաստորեն ՀՈՅ-ՆԱՐ-ը՝ հայր-մայր>հուր-ջուր>կայծակ-անձրեւ միասնական աստվածային խորհուրդ է:

Վեդայական գերագույն աստվածության Բրահմի ամբողջական՝ ***Հարի-Նարայանա*** անունը, որը ***Նարա*** (արական) եւ ***Նարի*** (իգական) կողմերով, ընդհանուր հնդեւրոպական դուալիստական կոնցեպտի էությունից է բխում, նույնանում է հայկական զուգահեռների հետ: Հայասա երկրի ***ՆԵՐ-գալ*** աստվածության եւ Սասնա էպոսի ***ծովի-ՆԱՐ*** աստվածուհու անունները համահունչ եւ համանման են վեդայական գերագույն եւ միակ գոյության՝ Բրահմի ***Նարա-Նարի*** անունների հետ: Եվ ինչպես ***Բրահմին,*** այնպես էլ Հայասա երկրի գլխավոր դից ***Ներգալն*** է ներկայանում ***արական*** եւ ***իգական*** կողմերով: Հայտնի է նաեւ հայկական լեռնաշխարհի անունը որպես ***Նայրի երկիր*** (մ.թ.ա. I հազ.):

Ինչպես գրում է Հ. Հոֆմանը. «Հուրրիական որոշ տեքստերում կախարդության կամ ծիսակատարության հետ կապված բառեր են տրված: Մյուսներում հասկացվում է, որ հուրրիական երգիչները երգում են (LÚ.MES NAR hurlas SÍR-RU) առանց բացատրելու բառի իմաստները: Ծիսական տեքստերում հուրրիական երգիչների բառերը կախարդական ծեսերի կամ ոգեկոչման հետ են կապվում (LÚ AZU կամ LÚ HAL), որ ծիսակատարողները հավանաբար «ծեր կնոջ» մասին են խոսում, որը արտաբերում, արտասանում է նրանց *անունները»*[*1] *(շեղագիր ընդգծումները՝ Ա. Ա.):*

Համանման ծիսական արարողություններ երբեք չտեսած եւ, արարչության հնագույն հավատամքը որպես լաբիրինթոս եւ ոչ թե համակարգ ընկալող Հոֆմանը, անշուշտ, տեքստերում հանդիպող «մեծ մայր, նախամայր» իմաստները պետք է ընկալեր սխալ, որպես՝ «ծեր կին» եւ ոչ թե՝ ***«դիցամայր»:*** Բաբելական «Երբ Վերեւում» արարչության մասին պոեմում բացահայտ երեւում է, որ հների հավատամքային մտածողության մեջ՝ «անուններն արտահայտել»,-

*1 - “Bibliotheca Mesopotamica”, v. 26, 1998, Malibu, USA, p. 185.



* - Dick Teresi, "Lost Discoveries", USA, 2002, p. 47-49

նշանակում է՝ հայտնվել ի գոյություն՝ «ծնվել», եւ ինչպես Բաբելական տեքստերում է, կոսմիկական մեծ մայր Թիամատը (եւ ոչ թե «ծեր կինը»), արտաբերելով Լահմունի եւ Լահամունի անունները, «ծնում» է նրանց՝ ***ի լինելիություն,*** նույն է նաեւ հուրրիական տեքստի իմաստների պարագայում:

«... Լահմուն (եւ) Լահամուն անսպասելի հայտնվեցին,
Նրանց անունները արտահայտվեցին»*[1]:

[NAR, hurlas, SÍR-RU, AZU, HAL արտահայտություն-բառերը] վերեւում հիշատակված հին հայկական երգն է՝ ՀՈՅ-ՆԱՐ (արական՝ ՀՈՅ եւ իգական ՆԱՐ) գերագույն աստվածությունն է, որ համահունչ անունով եւ իմաստով առկա է թե՛ հունական, թե՛ վեդայական, թե՛ Միջագետքյան, ինչպես նաեւ եգիպտական հավատամքային համակարգերում:

Նախահնդեւրոպական ***Han-**, հայերեն **հան**՝ «մեծ մայր», հայկական էպոսում Ծովինարի՝ [ԾՈՎ-Ի-ՆԱՐ] երկնային աստվածամոր կերպարն է: Իսկ, HUR > HAR > HAL > HAY-ը՝ գերագույն աստվածության արական սկիզբը՝ Էրրա-Ներգալ դիցը,- HAR > AR > ARRA > ERRA: Պատահական չէ, որ հայկական էպոսում աստվածամայր Ծովի-ՆԱՐԸ հղիանում է ստորգետնյա, անդրաշխարհի աղբյուրից, որ անդրաշխարհի դից ՆԵՐԳԱԼԻ «տիրույթն» է: Այս ᵈU.GUR աստվածությունը ամբողջ Հայասա երկրի աստվածն է*[2], որ ներկայանում է՝ ***անգդ-հավքի*** եւ ***առյուծի***՝ «կենս-կենս» գաղափարապատկերով:

Փաստորեն, հնագույն հավատամքային բոլոր կարգակառույցներում, տիեզերական ամբողջը, սկզբում տարամիտվում է՝ ստեղծելով Շու-Թեֆնաթ, Նարա-Նարի, Ան-Անատա, ԱՓ.ՍՈՒ-ԹԻԱՄԱՏ, առաջին զույգը, եւ, հայկական էպոսի Ծովինարը, զուգահեռաբար, առաջին զույգի իգական «կողմն» է՝ տիեզերական նախամայրն է: Հայասա երկրի գերագույն աստված ՆԵՐԳԱԼ աստվածության անունը համադրելով հայկական էպոսի աստվածամոր անվան հետ, մենք ստանում ենք հնդկական հնագույն բրահմայական հավատամքում՝ տիեզերքի գերագույն աստվածության Հարի Բրահմայի ճշգրիտ անունը: Այսպես՝ Ծովինար = ծովի + **ՆԱՐ**, Ներգալ = **ՆԵՐ** +

*1, - Stephanie Dalley, "Myths From Mesopotamia", "The Epic Of Creation, "Oxford, 2002, p. 233.
*2,- Արմեն Դավթյան, «Հայոց աստեղային դիցաբանություն», 2004թ., Երեւան, էջ 207:

գալ: ՆԱՐ-ի եւ ՆԵՐ-ի միասնությունն է ամբողջը՝ բովանդակ, միակ գոյությունը: Վեդայական գերագույն աստվածության՝ Բրահմայի ամբողջական անունը՝ ***Հարի-Նարայա-նա***, որը ***Նարա*** (արական) եւ ***Նարի*** (իգական) կողմերով, ներկայանում է որպես ***«բովանդակ գոյություն»,*** եւ նաեւ՝ ***«ժամանակ»*** միտող թվային համակարգ է: Բրահմայականության մեջ հոգեւոր վարպետները՝ սվամիները, գերագույն Աստծո անունը արտաբերում են Narayan Hari*[1]: Սա գերագույն եւ միակ էակի՝ Բրահմի թե՛ անձնանունն է (Hari) եւ թե՛ թվային անունը (Nar-a-yan): Ու թեեւ Hari եւ Narayan բառերը ստուգաբանված են՝ ազնիվ-Hari*[2] եւ մարդ (Nar)*[3], որ վարում է (yana)*[4] քառանիվ կառքը (նյութական տիեզերքը), սակայն միեւնույն ժամանակ, Բրահման քառակողմ-քառագլուխ էակ է համարվում, որը նաեւ ցուցում է արարչությունը որպես ամբողջից՝ մեկից տրոհվելով արտահայտվելու թվային համակարգ. խորհրդապշտական ծավալածեւը՝ Tetrahedron:



Քառանիստ՝ տետրահեդրոն:

Մյուս կողմից, ե՛ւ հայկական հնագույն ***«երկնեց երկինս, երկնեց երկիր, երկնեց եւ ծովը ծիրանի»*** արարման մասին պատմահայր Խորենացու փրկած պատառիկը, ե՛ւ Միջագետքյան «Արարման մասին էպոսում»՝ ԱՓ.ՍՈՒ-ի եւ ԹԻԱՄԱՏԻ իրենց ջրերն իրար խառնելով տիեզերք արարելու պրոցեսը, ինչպես նաեւ ***անդրաշխարհի աղբյուրից*** Ծովի Նարի հոիությունը՝ գերագույն աստծո կամոք, այնքան են նման, որ կարծես՝ միեւնույն համակարգի եւ աշխարհճանաչողական մտածողության արդյունք լինեն: Դրանք թե՛ սյուժետով են միանման, թե՛ արարչության սկզբունքն է նույնը, եւ թե՛ կառույցների հիմքում միեւնույն գաղափարային համակարգն է՝ ***ամբողջը որպես երկու կեսերի միասնություն:*** Ծովինարը հոիանում է ծովի միջից բխող աղբյուրից, նրա երկվորյակ որդիները իրենց աջ բազուկին կրում են երկնային «Խաչ Պատրազի»՝ ***խաչ-հայր,-*** խորհրդասիմվոլը, որ «Կարապ-Անգղ» համաստեղությունն է, որն ինքը՝ անդրաշխարհի աստվածություն ՆԵՐգալ-ի աստեղատունն է, որը ե՛ւ Հայասա պետության գլխավոր աստվածությունն է: Սա փաստորեն,-

«Մայր-հայր»՝ ծովի**ՆԱՐ + ՆԵՐ**գալ **միությունն է:**

Հայկական հնագույն էպոսում աստվածները հանդես են գալիս իրենց թվային եւ աստեղային անուններով (***տես՝ «Աստվածների անունները որպես թվային արժեքներ» բաժինը, էջ 61-75):*** Հայկական՝ ծովի+ՆԱՐ, եւ ՆԵՐ+գալ, բրահմայական հավատամքում՝ ՆԱՐ եւ ՆԱՐԻ անունները, ըստ իս, աղերսվում են շումերական ՆԵՐ = **nēru** = 600 թվի հետ: Շումերական «600» թվի անունը որպես

*1, – Swami Rama, “Living With the Himalayan Masters”, USA, 1978, p. 182:
*2, - T. Gamkrelidze & V. Ivanov, “The Indo-European & The Indo-Europeans”, NY, 1995, p. 849:
*3, – նույն աղբյուր, էջ 174:
*4, – նույն աղբյուր, էջ 627:

տարեշրջան՝ **nēru**[*1] էր: ՆԵՐ < nēru = 600 է: Եվ ըստ հայկական եւ Միջագետքյան տարբերակի, եթե «երկինքն ու երկիրը խառնեն իրենց ջրերը», եթե արարող այս երկու աստվածությունները՝ երկու «ամբողջ» կամ կես-կես՝ 1/2 արական եւ 1/2 իգական հարաբերությամբ են, այնպես ինչպես հնագույն տեքստերում եւ պատկերներում է ներկայացված, ապա՝ ՆԵՐգալ + ծովինԱՐ = 600 + 600 = 1200: Եվ եթե այս 1200 թիվն ընդունենք որպես շումերական «ամբողջ» համարվող սիմվոլի՝ «շրջանաօղակի» տրամագիծը՝ 2R=1200, R = 600, եւ ընդունենք, որ հին Միջագետքում *(մ.թ.ա. 2500թթ.)* Π թվի արժեքը հաշվում էին ոչ թե՝ Π=3.1415 էր, այլ՝ 3-ը (Π=3)*[2], ապա պարզ կդառնա, որ հայկական *(Վահագնի ծննունդ)* եւ Միջագետքյան ***«երկնի եւ երկրի կամ Ափսուի եւ Թիամատի ջրերի խառնումը»*** վերաբերում է հնագույն շումերական ամբողջի գաղափարին, որի սիմվոլը «շրջանագիծն» է, եւ դրա պարագիծը՝ 3600 է[*3] *(D = Π x 2R = 3 x 1200 , Π=3, D=3600):* Տիեզերքի ձեւավորման *(ինչպես արդեն բազմիցս ասվել է)* մասին ամենահնագույն խորհրդապաշտությունն աղերսվում է՝ ***օղակաձեւ, ճկված վիշապի*** հետ, որը փորձում է կուլ տալ իրե ակը: Այս սիմվոլի պատկերները արտացոլված են հնդեւրոպական ժողովուրդների ամենահնագույն տրադիցիաներում: Օղակաձեւ վիշապը՝ ***սեւ շրջանը,*** հնագույն խորհրդապաշտության մեջ ընդունված է որպես՝ «անսահմանություն» եւ տիեզերքի «քաոս-նախավիճակ», որից եւ ձեւավորում են ստանում տիեզերական սֆերաներն ու մարմինները: Քանի՝որ՝ ***վաղնջական հնդեւրոպական տրադիցիաներում որոշ թվեր ձեռք են բերել հատուկ «սիմվոլային արժեքներ», եւ «արարչության» հետ կապված մի շարք առաջնային աստվածությունների անուններ սերտորեն աղերսվում են թվերի եւ դրանց անունների հետ*** * [4]:

Հայերեն՝ **ներ-** (ք) -**ին**, ԻՆ > ԱՆ > ՀԱՆ – ի ներսը, նաեւ՝ «նախաշրջան», որը իգական հիմք ունի (ՀԱՆ > ԱՆ = ANNA = հնդեւրոպական մեծ մայր, աստեղային մայր, astral mother):

Հնագույն հավատամքներում, կոսմիկական մեծ մայրերի կամ նախամայրերի՝ տիեզերական չդիֆերենցված նախագոյության անունները (որոնցից արտահայտվում է գերագույն արական աստվածությունը) սիմանտիկ նույնականությունն ունեն՝

ՆՈՒՆ	**ՆՈՒ(ԱՐԴ)**	ծովի-**ՆԱՐ**	**ՆԱՐԻ**	**ՆԵՐ (nēru)= 600**
եգիպտ.	հայկ. դիցապատ.	հայկ. էպոս	հնդկական	շումեր. թվանուն:

«Սասնա Տուն» էպոսում անտեսանելի հայր աստվածությունը՝ անդրաշխարհի ՆԵՐգալ-ն է, որ երկնքում դառնում է ԷՐՐԱ: Մայր աստվածությունը՝ ծովինԱՐ-ն է, եւ նրանք միասին ծննունդ են տալիս հրեղեն ***երկվորյակներին***

---

*1, - Հր.Աճառյան, «Հայոց լեզվի պատմություն», h. I, 1940թ., Երեւան, էջ 199:
*2, 3, - Dick Teresi, «Lost Discoveries»,USA, 1991, p.51, 48.
*4,- T. Gamkrelidze & V. Ivanov, նույն աղբյուր, էջ՝ 748-752.

(երկրաչափական ծավալը՝ Octahedron-ութանիստ, էլեմենտը՝ օդ): Ծովիարի բնույթը ***ջուրն*** է*(նաեւ՝ հողը)*, երկրաչափական ծավալը՝ 20 նիստանի icosahedron-ն է, ԷՐՐԱ-Ներգալի բնույթը երկնքում՝ ***հուրն*** է (անդրաշխարհում՝ ջուրը), երկրաչափական ծավալը՝ tetrahedron-ն է, եռանկյունաձեւ նիստերով քառանիստն է: Հայկական լեռնաշխարհի տիեզերք ծնող հնագույն այս դիցազույգը՝ հնագույն հնդեւրոպական հավատամքային սկզբունքով է ի գոյություն հայտնվում, այնպես, ինչպես վեդայական Ադիթին ծնվում է Դակշայից եւ ծնում է Դակշային:

Փաստորեն, տեսողական պերսպեկտիվայի համաձայն, Ծիր Կաթինն այստեղ հանդես է գալիս որպես «միջանկյալ ծով», որից եւ «ծնվում» են առաջին աստվածությունները: Այս «միջանկյալ Ծովը»՝ «անգեղ» եւ «հովազառյուծ» երկակի գլխավոր աստվածություն է, որն ունի երկու ֆիկսված աստեղատներ: Երկինքն իր երկու բեւեռներում ունի՝ «Կարապ-հավքի» համաստեղության «յոթ» պայծառ աստղերը, կենտրոնը՝ Դենեբ *(հյուսիսում)* եւ հակառակ ծայրում «Կանիս մեծ» համաստեղության Սիրիուս պայծառ աստղը: Առաջին գոյության՝ ամբողջի, դիֆերենցումը երկու աստվածությունների, առկա է հնագույն բոլոր պատումներում: Եվ «իգական կողմը» ներկայանում է՝ որպես «արական կողմի» ***հենարանգահը***, հովազի կամ էգ առյուծի սիմվոլով, խորհրդանշելով գիշերային երկինքը:

Աստղազարդ երկնքում *Կանիս մեծը*՝ Սիրիուս ու Ադհարա երկու աստղերով, եւ *Կանիս փոքրը*՝ Պրոցիոն եւ Գոմեիսա երկու աստղերով, զուգահեռ են իրար, ստեղծելով քառակուսի *(իգական խորհուրդ, էլեմենտը՝ ջուր)*, որի կողերը շումերական չափումների համակարգում կոչվում է՝ sidi -«հիմք, հենարան» (տես էջ 61-75.)**: Հնագույն հավատամքային տաճարները կառուցված են նույն հիմքով. շենքի վերնամասը եռանկյունի է, որ նստած է քառակուսու վրա:**

Բաբելական MUL APIN 36-ի աստեղացանկում *Կանիս Մեծ* եւ Պրոցիոն ու Գոմեիսա աստեղատների խումբը կոչվում է KAK. SI. DI. կամ GAG.SI.DI: Արարչության մասին նույն Միջագետքյան «Երբ վերեւում» էպոսում Kakka-ն երկնքի աստվածություն՝ ԱՆ-ի խորհրդատուն է, որ կարող է աղերսվել հայկական էպոսի Գագիկ > Կակե > GAGA > «Կարապ» համաստեղության հետ: Շումեր. GAG նշ. է՝ «սեպ, կեռիկ» *(T.G. & V. I., նույն աղբյուր, էջ՝ 714n)*: **Ըստ իս «աղեղը» որպես հենարան՝ sidi «Անգեղ-Կարապ» համաստեղության հենարանն է: Ներգալ աստծո մոլորակը Մարսն էր, որի գաղափարապատկերը նույնպես նետ ու աղեղի տեսքն ունի՝ ♂: Ըստ Վան Դեր Վաերդենի** *(Science Awakening II, p.74, N.Y.1974)* ***KAK. SI. DI.-ն*** **բաբելական MUL.APIN-ում երկնային «նետ»-ն ու «աղեղ»-ն են: Սակայն, սրանք՝ Վելայի եւ Փուպպիս աստեղատների հետ, հնում կազմել են մեկ մեծ աստեղատուն, որ կոչվել է՝ Արգոնավիս** *(Giles Sparrow, The Universe, USA, 2001, p. 123, 135)*, **որը հունական դիցաբանության մեջ այն նավն է, որով արգոնավտները Ոսկե Գեղմը բերելու գնացին: Այս աստեղատունը հարավային երկնքի աստեղատուն է, որը պարզ երեւում է գարնանային Մարտ-Ապրիլ ամիսներին: Արգոնավիս աստեղատունը բաղկացած է այժմյան չորս աստեղատներից: *Վելան*՝ «տախտակամածն» է, *Փուպպիսը* «առագաստը», *Կանիս մեծը*՝ «նետը» (KAK.SI.DI.), որ նավի կայմն է, եւ *BAN-ը*՝ «աղեղ», որ նավի աղեղ-**

ցռուկն է: Եգիպտական հավատամքում, մեռյալների հոգիներն անդրաշխարհ նավով էր տեղափոխվում: «Արգոնավիս» համաստեղության անունը Հոմերոսյան հունարենում նշանակում է՝ *árguros «արծաթ» եւ náviu «նավ»: Տիեզերական անհունը որպես ամեն ինչի հիմք հանդիսացող պոտենցիալ ներուժակություն, հին եգիպտացիների մոտ աղերսվել է ծովի, օվկիանոսի հետ, որում լողում է ինքը գերագույն աստվածությունները տանող երկնային նավը: Այս երկնային նավով հոգին տեղափոխվում էր անդրաշխարհ:

Եգիպտական համակարգում Սիրիուսը՝ Auset աստվածուհին, համարվել է նրա ամուսին Ausar-ի ***հենարան-գահը:*** Ausar-ը հանգիստ է առնում Auset-ում: Հայկական լեռնաշխարհի հնագույն մեծ մայր աստվածուհի ԱՅԱ-ն երկվորյակ առյուծների մայրն է, ուրեմն ինքն էլ էգ առյուծ է, որ արարչության նախահիմքն է: Կատուն կամ էգ հովազառյուծը՝ իգական վերարտադրության խորհուրդն է՝ լուսնի սիմվոլով:

Աստղագիտական առումով Ծովինարն աղերսվում է երկնային Ծիր Կաթնի, Սիրիուս աստղի եւ լուսնի հետ: Սիրիուս աստղով տիեզերական շրջափուլը, որ ընդունված է եղել է թե՛ հին հայերի մոտ (Մեծամոր մ.թ.ա. III հազարամյակ), թե՛ Միջագետքում եւ թե՛ հին եգիպտացիների մոտ, հաշվվում էին լուսնի ամսեկան օրերի քանակով: Այն ընդունված էր որպես՝ 30 օրվա (արական), ինչպես նաեւ՝ 28 (իգական) օրվա համակարգ: 28 օրվա լուսնի փուլը կապվում էր՝ լուսնի եւ կնոջ դաշտանի 28 օրավա փուլաշրջանի հետ: Եվ ***աստղական շրջափուլը***, այսինքն, 365 1/4 օրերի ֆիքսված տարով հաշվելու դեպքում, Սիրիուսի շրջափուլը համապատասխանում էր՝ 1460+1 տարվա հետ:

Հայաստանում Մեծամորի հնավայրի գիտական պեղումները ցուցում են, որ հնավայրն առնվազն 5000 ամյա է (մ.թ.ա. III հազարամյակ), եւ այնտեղ դիտարկել են Սիրիուսը, երբ Սիրիուսը սկսում է «դառնալ» առավոտվա աստղ տեղական ժամանակով 4^h 39^m, ամառային արեւադարձի ժամանակ ***(այժմ նա երեւում է ուշ աշնանը եւ երկար ձմռանը)***: Սիրիուսը այս կիսագնդում ամենապայծառ աստղն է:

«Սիրիուս աստղը ավելի քան երկու անգամ փոքր է քան մեր Արեգակը: Եկիր մոլորակի հետ համեմատած, նրա պարագիծը միայն երեք անգամ է մեծ, սակայն նա 250000 անգամ ավելի է կշռում քան երկիր մոլորակը: Նրա մատերիան այնպիսի գերխտություն ունի, որ համեմատությամբ՝կապարից 5000 անգամ խիտ է: Մատերիայի նման ճնշումով գերխտության դեպքում, Սիրիուսի ուղեկցող ատոմներն իրենց «նորմալ տեղում» գոյություն չունեն, այլ այնքան են սեղմված մեկը մյուսին, որ բազմաթիվ ատոմների միջուկները հոծ խմբեր են ձեւավորել բաց տիեզերքում: Այս ատոմների էլեկտրոնները սեղման ճնշումից դուրս են թռչել իրենց ուղեծրից եւ ազատորեն թափառում են: Սա կարծես նեյտրոնային սուպ է՝մատերիայի եւ էներգիայի նախավի-ճակ, կարծես համանման նախատիեզերքին: Սիրիուսի այս ընկերակցությունը պտտվում է իր իսկ առանցքի եւ Սիրիուսի շուրջ, կարծես ստեղծելով արարման սկիզբի գաղափարը» (Moustafa Gadalla, «Egyptian Cosmology», 2001, USA, p.89):

Սիրիուսն աղերսվում է ***Լուսնի*** հետ, որովհետեւ Սիրիուսի սոտկական շրջափուլը հաշվարկել են լուսնային ամսվա հաշվարկով, որ իգական վերարտադրության իմաստով՝ կնոջ դաշտանի (28 օր) ցիկլն է ենթադրում:

«Սասնա Տուն» էպոսի պատումներից մեկում ասվում է, որ Ծովինարը՝

«... տրսնուչուրս հավուր լուսնըկի կը նմանի,
Վուր յոթ սարի իտնվեն դուրս կու գա,
Ճանճ վուր ճակտին վրա ման գա, կրնկնի,
Ճանճի յոթ կոդաշար կը կուտրը՛...»*[1]:

Տասն եւ չորս օրեկան լուսինը՝ լիալուսինն է, ամսվա կեսը, որ մայրության պատրաստ խորհուրդ ունի իրենում: ***Յոթ սարի ետեւից դուրս գալը***՝ նշանակում է 7-րդ «Կույսի» աստեղատուն, ինչպես նաեւ՝ լուսինը վերին յոթ եւ անդրաշխարհի յոթ շերտերի սահմանում է՝

☽	♀	☿	☉	♂	♃	♄
լուսին	**Վեներա**	**Մերկուրի**	**Արեւ**	**Մարս**	**Յուպիտեր**	**Սատուրն:**

Ծովինարը նաեւ ասում է՝ ***«Ի՛մ հոր տնեն որ կուս եկեր եմ, մինչեւ էսօր դեռ կուս եմ»*[2]:*** Հոր տուն՝ աստեղատուն: Տան մեջ՝ Կույս է > կո՛ւյսն է > եւ միշտ կո՛ւյս է՝ «Կույսի» համաստեղություն: 5-րդ դարի փիլիսոփա Դավիթ Անհաղթը հայտնում է, որ թաքնագիտության մեջ «յոթ» թիվը՝ «կույս» թիվ է: *«Յոթ թիվը կուսական է կոչվում, ինչպես Աթենասը եւ ժամանակը: Կուսական է, որովհետեւ տասնյակի մեջ մտնող բոլոր թվերը կամ ծնում են որեւէ թիվ կամ ծնվում են որեւէ թվից, իսկ «յոթը» ոչ ծնում է տասնյակի մեջ որեւէ թիվ, ոչ էլ ծնվում է նրանցից որեւէ մեկից»: «Այսպես եւ Աթենասը կույս է կոչվում, որովհետեւ հեթանոսներն Աթենասի մասին ասում էին, որ ծնվեց Արամազդի գլխից»:*[3]

Ծովինարն ասում է՝ ***«Վաղ՝ Համբարձում է, հրաման տուր ինձ՝ էրթամ Հիլի, աղբյուրներու վերան զբոսանք»*** («Ս. Ծ.» հ. I, Երեւ., 1936թ., պատում՝ ***Է***, էջ 71):

ՀԻԼԻ > ՀԱԼԴԻ > ՀԱՅԿ > ՀԱՅԱ > ԷԱ - ստորգետնյա աղբյուրների, գետերի իմաստնության աստվածություն՝ գերագույն աստվածություն:

Ծովինարի ջուր խմելը իրիկունն է կատարվում: Աղբյուրը «սպիտակ» էր եւ «բուսեց» ծովի մեջի քարից, բխեց քարից: ***Մեկ լիքը բուռ, մեկ կիսատ բուռ*** խմելուց աղբյուրը ցամաքեց: Ծովինարն ասում է՝ ***«Ի՛մ երեխեն ջրից է գոյացել»*** (նույն աղբ. էջ 73): Ո՞վ է գերբնական աղբյուրի ետեւում «թաքնվածը»:

1.- Աղբյուրը ծովի մեջ էր = «Կաթնածիր»:

2.- Աղբյուրը քարից բխեց = հնդեւրոպ. Քար = երկինք*[4]:

3.- Աղբյուրի ջուրը ճերմակ էր, հնխ.՝ = [*Hark’-]*[5] > - նշանակում է՝ «փայլող»,

*1.- «Սասնա Ծռեր» հ. I, 1936թ., Երեւան, պատում՝ ***Է***:
*2,- «Սասունցի Դավիթ», 1989թ., Երեւան, էջ 73:
*3,- «Դավիթ Անհաղթ», 1980թ., Երեւան, էջ՝ 100:
*4, *5,- T. Gamkrelidze & V. Ivanov, “The Indo-European And The Indo-Europeans”, p. 575, 618:

«ճերմակ», «արծաթ», որ բնորոշում է «ճերմակ աստվածություն», ինչպես նաեւ ստորգետնյա աղբյուրների, ջրերի աստվածություն, որ Միջագետքյան պանթեոնում՝ ԷԱ = ՀԱՅԱ > Հայկ > Հալդի:

4,-Ծովինարի գերբնական աղբյուրից ջուր խմելու «արարողությունը» կատարվում է Համբարձման գիշերը, որ հին հեթանոսական՝«Ծաղկամոր Տոնն»էր:

Ծաղկամոր տոնը» հին հեթանոսական ամենամեծ տոներից մեկն է: Հավատում էին, որ այդ օրը ջրերը մի պահ անշարժանում են, իսկ երկինքը, երկիրը, լեռ, քար, ծառ ու ծաղիկ սկսում են շարժվել եւ ողջունել միմյանց: Այդ կախարդական վայրկյանին բացվում էր Մհերի դուռը եւ կարելի էր մտնել նրա քարայրը, կամ ինքը՝ Մհերն էր դուրս գալիս աշխարհը դիտելու: Այս տոնը գլխավորապես կատարում էին դեռատի աղջիկներն ու նորահարսները, որոնք նախորդ օրը ելնում էին զբոսանքի՝ լեռներից ու դաշտերից ծաղիկներ հավաքելու եւ յոթ աղբյուրներից ջուր բերելու հաջորդ օրվա վիճակահանության համար: Այդ օրը վիճականահանություն էր լինում, այսինքն տարբեր ծեսերով փորձում էին գուշակել իրենց բախտը *[1]:

«Կարապ-Անգեղի» աստեղատունը, որ ***Ներագալ՝*** ընդերքի աստվածության աստեղային ատրիբուտն է, Հայասա երկրի գլխավոր դիցն էր*(մ.թ.ա. II հազարամյակ)*: «Կարապ-Անգեղի» աստեղատունը, Հայկ. լեռնաշխարհից երկնքին նայելու դեպքում, գարնանային գիշերահավասարի ժամանակ՝ Մարտ 21, որ հին հեթանոսական նոր տարին էր, երկնքում իր «շրջապտույտը» սկսում է գիշերով: Գիշերահավասարին, ժամը՝ 00:00-ին, այս աստեղատունը գտնվում է Ծիր Կաթնի ***կենտրոնում,*** եւ 14 օրեկան՝ լիալուսին լուսնյակը, որ «Կույսի» համաստեղությունում 14 օրեկան է, հարս գնալով «Աղեղնավորի տուն», ճանապարհին՝ «Կարիճի» համաստեղությունում, «դառնում» է նորալուսին. կնոջ դաշտանային փուլի կեսը, որ ամենաբեղմնավոր շրջանն է:

Ծովինարն աղբյուրից խմեց ***մեկ եւ կես բուռ՝*** $1 + 1/2 = 360^0 + 180^0$ մեկ շրջան՝ ամբողջ եւ կես շրջան: Զոդիակների շղթայում՝ Լուսնի եւ Արեւի շավիղների մակածները գտնվում են՝ հարավային մակածը - «Կարիճ» եւ «Աղեղնավոր» համաստեղությունների արանքում: Հարավային մակածից՝ որտեղ գալակտիկայի «կենտրոն-արգանդն» է, մեկ եւ կես շրջապտույտը «կանգնում» է «Երկվորյակների» համաստեղության վրա: Էպոսում ասվում է՝ ***«Ինն ամիս որ թմամավ երկու տղա էբեր»***: «Կույսի» համաստեղությունից ձախից աջ պտույտով, *(ժամացույցի սլաքի ուղությամբ՝ ոգու նյութականացման ուղղությունն է ըստ թաքնագիտության)* 9-ը ամիս = 9 աստեղատուն անցնելով, կհասնեք «Երկվորյակների» համաստեղությանը:

Եգիպտական միֆոլոգիայում բարձրագույն Հաթորի աստվածային մանիֆեստացիան «սկսվում» է Սելկիտ աստվածուհու խոսքերով.*«Ես **կում** կլլողն եմ, ես **կլլողն** եմ: Ես **Կարիճն** եմ, դուստրն եմ Ռ-ա-ի»*[2]: Եգիպտական համակարգում գերագույն աստվածություն Աթումի սիմվոլը՝ մի դեպքում «թռչուն» է,

*1,- «Սասնա Ծռեր», h. II, էջ՝ 849:

*2, - "I am a swallow, I am a swallow. I am the scorpion, the daughter of Ra", Jeremy Naydler, "Temple Of The Cosmos", 1966, USA, p. 155.



մի դեպքում «Բզեզն» է՝ «Ճանճը»: «Սասնա Ծռեր» էպոսում «Ճանճը» աղերսվում է «Կարապ-թռչունի» աստեղատան հետ, որ ակնարկ է թե Ծովինարը Ներգալ ընդերքի աստվածության խորհրդապաշտական սիմվոլից՝ «թռչուն-Կարապից» է հղիանալու:

Ծովինարը «... տրսնուչուրս հավուր լուսնրկի կը նմանի,
Վուր յոթ սարի իտնվեն դուրս կու գա,
Ճանճ վուր ճակտին վրա ման գա, կընկնի,
Ճանճի յոթ կողաշար կը կուտրը՛...»:

Եգիպտական Սելկիտ անունը աղերսվում է «Լուսնի» հետ, որի նախահնդեւրոպ. ձեւը՝ *loukhsna- «փայլող մարմին», հայերեն՝ «Լուսինն» է*[1]: Ըստ հայկական էպոսի Ծովինարը նույնպես «կլլողն» է՝ ինչպես եգիպտական Սիլկիտը: Ծովինարը երկու բուռ ջուր է «կլլում» եւ հղիանում է: Հայկական էպոսի պատումներից մեկում, Ծովինարը եգիպտական իր զուգահեռ աստվածուհի՝ Սելկիտի նման, երկու հատիկ ցորեն է «կլլում» եւ հղիանում է:

Քարե պատկերաքանդակ, Կասիտական շրջան, մ.թ.ա. 14-րդ դար, Լուվրի թանգարան

Միջագետք, մ.թ.ա. 2-րդ հազ. կնները : Կասիտները (արիական լեզվընտանիք) մ.թ.ա. 17-12 դդ. գրավել եւ վերահսկում էին միջագետքը :

Կասիտական շրջանի *(մ.թ.ա. 14-րդ դար)* Միջագետքյան պատկերաքանդակի վրա փորագրված խորհրդապատկերները կարծես քանդակված լինեն ըստ հայկական էպոսի, ցուցելով ճշգրիտ աստղագիտական երեւույթներ: «Սասնա Ծռեր» էպոսում Ծովինարը գնում է գալակտիկայի կենտրոն, որն ըստ հնագույն պատումների եւ հայկական էպոսի, ***«Կարիճ»*** համաստեղության պոչածայրին է. այստեղ են նաեւ արտաշխարհ-անդրաշխարհ մուտքի մոտ նստած պահապան շունը ***(այսօրվա՝ Serpens աստղատունը),*** ինչպես նաեւ՝ քառաթեւ եւ ութաթեւ աստղերը:

Այս հնագույն հավատամքային պատումների ենթատեքստում «դրված» է գալակտիկայի կենտրոնի գաղափարը, որպես տիեզերական մոր արգանդ, որից ծնունդ, նյութական արտահայտություն են առնում առաջին աստվածները:

Ծովինարը մայր աստվածուհի ԱՅԱ-ն է, երկվորյակ ընձառյուծների մայրը, որի պաշտանմունքը հայկական լեռնաշխարհում գոյություն է ունեցել առնվազն 11000 տարի առաջ (37⁰.17′ N & 38⁰.55 E, հնավայր՝ Գոբեկլի Թեփե, Մ. Թ. Ա. 9500թ.): Մինչեւ այժմ էլ հայկական բարբառներում, օրինակ՝ արցախցիները, գերդաստանի մեծ մորը կանչում են ***Այա*** անունով:

*1, - Եգիպտական աստվածությունների անունները հնդեւրոպական ծագում ունեն, տես՝ L. A. Waddel, «Sumer-Aryan Dictonary», London, 1927:

Տիեզերամայրը որպես՝ Գալակտիկայի կենտրո՞ն, թե՞ հակակենտրոն:

Հնագույն հավատամքային համարյա բոլոր պատումներում արծարծվում է տիեզերական մոր՝ որպես գալակտիկայի «կենտրոն-արգանդ» հասկացությունը: Ըստ հնագույն հավատամքային պատումների, Ծիր Կաթնի՝ գալակտիկայի արարող արգանդը՝ ներկայանում է որպես կենտրոն*(«Կարիճի» համասեղ. պոչամաս):* Ըստ էպոսի մի շարք պատումների, աստվածամայրն ինքն է գնում ***գալակտիկայի կենտրոն*** եւ հղիանում է այնտեղ: Հայկական էպոսի «Երկվորյակներ» ճյուղում, արական աստվածությունն է գնում ***գալակտիկայի կենտրոն,*** անցնում է դեպի հմայքների՝ քաջքերի անդրաշխարհ, եւ արքայադստերը փախլրցնելով, ամուսնանում է նրա հետ ու այդ միությունից ծնվում են արտաշխարհի աստվածությունները կամ նրանց ատրիբուտներ համարվող աստեղատները: Թե՛ մեցոամերիկյան մայաների հավատամք-պատումում, թե՛ եգիպտական, թե՛ հնդ-արիական՝ վեդայական, թե՛ բաբելական եւ թե՛ հայկական հավատամքային տեքստերը, այս կամ այն կերպ, ընդգծում են «կենտրոն» գաղափարը:

Եվ այս առումով, «Կանիս Մեծ» աստեղատունը Սիրիուս աստղով, որպես աստվածամայր, թվում է թե չի համապատասխանում «օրինաչափությանը», քանի-որ տեսողական պերսպեկտիվայի համաձայն, «գտնվում» է երկնային «Կաթնածիր գետի» ծայրում*(հակակենտրո՞ն):* Վեդիկ էպոս՝ Ռիգ Վեդայում այս առումով բացառիկ կարեւորության իմֆորմացիա կա: Երգիչը, հնագույն ***Վարունա*** *աստծուն* դիմելով, նրան խնդրում է, որ ինքը չուղարկվի «Երկրի տուն»՝ գերեզմանոց, որտեղ (մարդու) այրումից հետո մոխիրն է հավաքվում (mrnma´yam grha´m), այլ ուղարկվի՝ ջրերի միջնամաս (apā´m ma´dhye)*[1]:

Ըստ իս, «հակասության գաղտնիքը» բացատրվում է, երբ նկատի է առնվում արարչության փուլային համակարգը, որի մասին լավագույնս ներկայացված է արարչության մասին բաբելոնյան *(կասիտական շրջան)* եւ հայկական պատումներում*(«Վահագնի ծնունդ», «Սասնա Ծռեր»):*

Արարչության մասին Մ. Խորոնացու միջոցով մեզ հասած հայկական հնագույն հեթանոսական պատումային տարբերակը եւ բաբաեելական տարբերակը, համարյա մեկը մյուսի նմանակն է, եւ երկուսում էլ «եղեգնիկի» անկյունաքարային կարեւորությունն ընդգծված է:

Փաստորեն, բաբելական «Արարման էպոսի» նորագույն թարգմանությունը (1989թ.), որն առավել ճշգրտված տարբերակն է վերականգնված տեքստի, բացահայտում է ոչ միայն այս երկուսի ակնհայտ նմանությունը, այլ նաեւ ակնարկում՝ մեկը մյուսից սերելու կամ, նախնական՝ մայր տարբերակից երկու պա-

*1,- «Հիմն Վարունային», Rig Veda, VII, 89.

տումների ծագման հնարավորությունը: Ե՛ւ բաբելականը *(մ.թ.ա. II հազարամյակ)*, ե՛ւ հայկականը, տիեզերքի արարման մասին է, եւ երկուսում էլ ***եղեգնի*** մասին հիշատակվում է՝ որպես տիեզերքի արարչության համար ***նախահիմք-փող,*** որի միջոցով են արտահայտվում աստվածները:

Միջագետքյան տարբերակ
Երբ վերեւում երկինքը դեռ չուներ անուն
Ոչ էլ ներքեւում երկրի անունն էր արտաբերված,
Ափսուն՝ ամենաստեղծը նախածին,
Եւ Թիամատը՝ մայրն ամենածին,
Միասին իրենց ջրերն իրար խառնեցին,
Երբ դեռ չէր ձեւավորված նախահողը սնուցող,
Երբ նույնիսկ դեռ չկային նախահիմքերը *եղեգնիկի,*
Երբ ոչ աստվածներ կային արտահայտված,
Ոչ արտաբերված անուններ ու ճակատագրեր,
Որից հետո միայն աստվածները նրանցից ծնվեցին:
Լահմուն (եւ) լահամուն անսպասելի հայտնվեցին,
Նրանց անունները արտաբերվեցին*[1]:

Հայկական տարբերակ
Երկնէր երկին, երկնէր երկիր,
Երկնէր եւ ծովըն ծիրանի.
Երկն ի ծովուն ունէր եւ ըզկարմրիկն *եղեգնիկ:*
Ընդ եղեգան փող ծուխ ելանէր,
Ընդ եղեգան փող բոց ելանէր,
Եւ ի բոցոյն վազէր խարտեաշ պատանեկիկ:
Նա հուր հեր ունէր,
Բոց ունէր մօրուս,
Եւ աչկունքն էին արեգակունք:

1,- [{But had not formed pastures, not discovered} **reed-beds.**
Այո՝ եղեգնիկ, փորձել ենք որքան հնարավոր է հարազատ մնալ տեքստի բառերի ճիշտ իմաստներին: Տես՝ Stephanie Dalley, "Myths From Mesopotamia", Oxford University Press, 2000]:

Հետաքրքիր է, որ առաջին անգամ այս պատում-տեքստը հավաքվել եւ կարդացվել է 1876 թվականին Ջորջ Սմիթի կողմից, եւ պատումը եղել է խալդյան տարբերակով: Հետագայում դրա աքադերեն տարբերակն է հայտնվել, որը Լ. Վ.Քինգը անվանել է «Արարման յոթ սալիկներ» անունով: Նորագույն թարգմանության հեղինակ Ստեֆանի Դալլին բաբելական «Արարման էպոսի» մասին իր առաջաբանում կասկած է հայտնում, որ աքադական տարբերակը նախնական օրիգինալը չէ եւ հնարավոր է համարում, որ կասիտների թագավոր Ագում-Կակրիմի (մ.թ.ա. XVI դար) ժամանակ Էա-Մարդուկի *(անունները տեքստում իրարամերժ փոփոխվում են, որը եւ հիմք է տալիս մտածելու ստեղծագործության ոչ սեմիտական ծագման մասին)* հավատամքը նորից հետ է բերվել Միջագետք *(տես՝ "Myths From Mesopotamia", Stephanie Dalley, Oxford, 2000, էջ 229):* Եւ սա պատահական չէ, օրինակ շումերական քաղաքակրթությունը ժառանգած աքադների գրականության մեջ ***Էնկի*** աստվածը հանդես է գալիս ***Հայա*** անունով ***(տես՝ Արտակ Մովսիսյան, «Արատտա», 1992թ., Երեւան, էջ 40:*** Հետաքրքիր է, որ բաբելական տարբերակում AP.SU անունը, որը ոչ աքադերենով եւ ոչ էլ ասորերեն լեզվով չի արտահայտում որեւէ իմաստ ***(միայն նշվում է նրա նախնականությունը՝ մեկը, որ կար ի սկզբանէ),*** հնդեւրոպական նախալեզվով ստուգաբանվում է որպես՝ AP,- «հայր» (հնխ.՝ apa, հուն.՝ apfn, apphyn, գոթ.՝ aba, հայ. Ափու): Ըստ Ա. Դավթյանի ճշտման, շումերական գաղափարագիրը ZU.AB է, որ հայերեն՝ ***ծուավ-ծով***-ն է, եւ ներկայացնում է այս աստվածության ճիշտ բնույթը:
[Տես՝ Հր.Աճառյան, «Հայոց լեզվի պատմություն», հ. I, 1936թ., էջ 119: Ա. Դավթյան, «Հայոց աստղային դիցաբանություն», 2004թ., Երեւան, էջ 176]:



Գծագիր # I / Ծիր Կաթինը ամբողջն է՝ արական եւ իգական բնութագրերով. «Հովազ» - «Անգղ» աստվածություն:

Ամառային գիշերահավասար, երկինքը ժամը՝ 24:00-ից հետո: «Անգղը» գտնվում է վերեւում, եւ սուզվելով անհետանում է: «Կանիս մեծի» Սիրիուս աստղը գտնվում է հարավում:

«Բազմաթիվ լեզուներում, այդ թվում եւ հայերենում ***նետ*** *բառը ծագում է «եղեգ» նշանակությունից (հնդեւրոպ.՝ «եղեգ - nedo > net, սլաք, փքին, կայծակ)... Շումերական ավանդությունում անդրաշխարհի դռները հսկող աստվածության անունն է՝ ՆԵՏԻ»*[1]: **Եղեգնիկը** երկնքում աղերսվում է՝ Կանիս մեծի ***Սիրիուս աստղի եւ Պրոցիոն*** համաստեղության հետ: «GAG.SI.DI. - «նետ»- Elia՝a- Եղեգան Շամփուր՝ Սիրիուս (+ Պրոցիոն)»*[2]:

Թե՛ շումերական, թե՛ եգիպտական ***եղեգինիկի*** անունը՝ KHA, KHA.KH*[3], ինչպես նաեւ սիմվոլը՝ «կետ-շրջան» նույնն են: Հայկական «Անկղ» համաստեղությունը, որ շումերական՝ AKH, եգիպտական՝ ĀKHA «արծիվն» է, Սիրիուս-Եղեգնիկի հետ, ամառային արեւադարձին, «գծում են» ***գիշերային երկինք-շրջանաօղակի*** «տրամագիծը», կամ «բովանդակ երկնքի» «շառավիղը», քանի-որ «Կարապ-Անգղի» համաստեղությունը գտնվում է Ծիր Կաթին գետի մեջտեղում կամ ինչպես Ռիգ Վեդայի երգիչն է արտահայտվում՝ ջրերի միջնամասում: ***«Անգղի»*** համաստեղությունն ու ***Սիրիուս-Եղեգնիկն*** իրար նկատմամբ, աստեղային երկնքում, գտնվում են հակառակ ծայրերում: Հայկական ԱՆԳՂ-ԱՆԿՂ-ը, փաստորեն, եգիպտական եւ շումերական տարբերակներում դարձել է՝ AKH, ĀKHA, եւ նրա եռանկյունաձեւ երկրաչափական սիմոլը ընդգծում է նրա «հուր» բնույթը: ***Անկղը*** եւ ***եղեգնիկը,*** հների մոտ, ***«երկնքի»*** կամ



L. A.Waddel, «Sumer-Aryan Dictonary» գրքի, London, 1927:

*1, *2, - Ա. Դավթյան, «Հայոց աստղային դիցանանություն», 2004թ., Երեւան, էջ 163: Հղումները՝ Հր. Աճառյան, ՀԱԲ, h. III, էջ 442, եւ «Աշխարհի ժողովուրդների միֆոլոգ.», ռուսերեն էնցիկլոպեդիա, h. 2, էջ 648:
*3,- L. A. Waddel, «Sumer-Aryan Dictonary», London, 1927:

լոկալ տիեզերք՝ Ծիր Կաթնի, աստեղային «հայր-մայր» ատրիբուտն է: Հնագույն շումերական պանթեոնում հիերիարխիայի գլուխը սկսում է AN եւ KI արական եւ իգական աստվածություններով: Բաբելական տարբերակում նույնպես՝ ԱՓՍՈՒ եւ ԹԻԱՄԱՏ արարական եւ իգական առաջին աստվածությունների միությամբ է սկսվում արարչությունը, ինչպես հայկական տարբերակում՝ ***երկին*** եւ ***երկիր*** միությունից ծնվում է նոր աստվածություն:

Սակայն Ծիր Կաթնի՝ գալակտիկայի կենտրոնը, հները համարում էին «Կարիճի» աստեղատան պոչամասին մոտ՝ «Կարիճի» եւ «Աղեղնավորի» արանքում տարածքը, որը տեսողական պերսպեկտիվայի առումով, ընկնում է ***Կաթնածիրի*** միջնամասում, որ այսօրվա գիտական տվյալներով էլ մոտ է իրականությանը: Թե՛ եգիպտական, թե՛ հայկական, եւ թե՛ Միջագետքյան հնագույն պատումներում, իրար հաջորդող երեք տիեզերամայրերն աղերսվում են երկնքում ա՛յս «տեղանքի» հետ:

Օրինակ. «Սասնա Ծռեր» էպոսում, Սանասարը, Քառասուն Ճյուղ Ծամ Դեղձունին բերելու համար գնում է հանտե՝ կենտրոն, հանդիպում է արտաշխարհ-անդրաշխարհ ելքի դռնապան գայլաղվեսին, ապա անցնում քաջանց՝ ոգիների աշխարհ եւ փախցնում է արքայադստերը: «Սասնա Ծռեր» էպոսում, մյուս դիցամայրը Խանդուդը, նույնպես այս «կենտրոն-տեղանքի» հետ է աղերսվում, քանի որ նրա դուռը պահում է գայլաշունը՝ Գորգիզը: Փաստորեն, բոլոր աստվածամայրերը թե՛ անդրաշխարհի արքայադուստրեր են եւ թե՛ արտաշխարհ գալով, աղերսվում են «Կարիճ» եւ «Աղեղնավոր» աստեղատների արանքում գտնվող Ծիր Կաթնի կենտրոնի հետ: Ըստ թաքնագիտական սխեմայի, թեեւ «արական» գլխավոր երեք աստվածությունները միֆական հնագույն պատումներում ունեն «իգական» զուգընկեր, սակայն «իրականում» նրանք «ծնվում են»՝ ***քառաճյուղ-քառանիստ նույն մորից****[1]: Այսինքն, նո՛ւյն տեղանքից, որն է՝ մեր գալակտիկայի կենտրոնը: Բացառությունը՝ «Անգղ-հովազ» աստվածության երկնային ներկայացման «իգական» զուգահեռ երկնային ***եղեգնիկն*** է՝ Կանիս մեծ աստեղատան Սիրիուս աստղը: Եվ այս առումով, «Կանիս Մեծ» աստեղատունը Սիրիուս աստղով, որպես աստվածամայր, թվում է թե չի համապատասխանում «օրինաչափությանը», քանի-որ տեսողական պերսպեկտիվայի համաձայն, «գտնվում» է երկնային «Կաթնածիր գետի» ***ծայրում:*** Սակայն, ***եղեգնիկը*** որպես ***արարման սկզբի*** իգական դիցամայր առկա է՝ թե՛ բաբելական «Երբ վերեւում», թե՛ հայկական «Վահագնի ծնունդ» եւ թե՛ «Սասնա Ծռեր» էպոսում*(Ծովինար):* Ըստ հնագույն հավատամքային պատումների, արարման սկզբում, Ծիր-Կաթին գալակտիկայի ***եզր-հակակենտրոն*** եւ ***կենտրոն***

*1,- H. P. Blavatsky, «Isis Unveiled», 1998, USA, p.170.



Եգիպտական Մա-ատը որպես երկինք՝ երկու միավորների ամբողջություն է: Նկարի վերին մասում, 1-ին փուլ, արական գերագույն դից Աթումը ծնվում է նրա արգանդից որպես բգնզ կամ արծիվ: 2-րդ փուլում, արեւը ծնվում է Մա-ատի արգանդից, որ երկնքի կենտրոն գաղափարն է:

միությունից է սկսվում արարչությունը, որից հետո, ուստր եւ դուստր աստվածությունների ծնունդը փուլ առ փուլ շարունակվում է ***անդրաշխարհի տանող կենտրոնից***՝ «Կարիճ» եւ «Աղեղնավոր» աստեղատների միջնամասից, որտեղ, քիչ հետու, ջրերի միջնամասում է գտնվում նաեւ ***Անգդ-արծվի*** համաստեղությունը: Այսինքն, Հայասա երկրի գերագույն աստվածություն Ներգալը լինելով նաեւ անդրաշխարհի աստվածություն, որի աստղային ատրիբուտը «Կարապ-Անգդի» համաստեղությունն է, արարչության սկզբում բեղմնավորում է Ծիր Կաթնի իգական մասին, որի **հովազատիպ գլուխը**՝ Սիրիուսն է***(եզր-հակակենտրոն)***, իսկ արգանդը՝ Ծիր Կաթնի միջնամաս համարվող «Կարիճ» եւ «Աղեղնավոր» աստղատների միջեւ***(կենտրոն):***

Արարչության մասին եգիպտական տարբերակում, ՆՈՒՆ-ը պոտենցիալ ներունակությունն է, որի սիվոլը տիեզերական օվկիանոսի ջրերն են: Եվ սկզբում գերագույն աստվածություն Աթումը այդ ջրերում առանձնանում է որպես բլրակ, եւ ապա, որպես ***Բեն-բեն*** քարից՝ Փյունիկ թռչուն*[1]: Դրանից հետո, նա «կյանքի է կոչում»՝ իր ութ արատհայտությունները, որպես աստվածություններ:

Այս (**Hikê**) գերագույն կենսահուր աստվածությունը, որի «տեսողական արտահայտությունը»՝ անգդ-փյունիկ թռչունն է, ունի շատ հետաքրքիր «եգիպտական» իր տարբերակ «առասպելը», որի մասին հայտնի է հույն պատմիչ Հերոդոտոսի Եգիպտոս ուղեւորությունից (“Histories”, II, 73, Herodotus):

«…Կար սրբազան թռչուն՝ փյունիկ անունով: Ես այն երբեք չեմ տեսել, միայն նկարները, որովհետեւ դա շատ հազվադեպ է եւ հայտնվում է Հելիպոլսի մարդկանց միայն ամեն 500 տարին մեկ, այլ էլ իր ծնողի մահից հետո: Եթե պատկերները ճիշտ են, ապա նրա չափսն ու տեսքը հետեւյալն է: Նրա փետուրները կիսով չափ կարմիր, կիսով չափ ոսկեգույն են: Նրա ձեւն ու չափսը շատ նման է արծվի: Հելիպոլիսցիները այս թռչնի մասին պատմում են մի պատմություն, որն իմ կարծիքով աներեւակայելի է: Փյունիկն, ասում են, գալիս է Արաբիայից, բերելով իր (մեռած) ծնողին մրրիի մեջ դրած: Նա շարունակում է իր ճանապարհը դեպի արեւի տաճար, որտեղ նա թաղում է ծնողի մարմինը: Որպեսզի իրագործի այն, սկզբում նա ստեղծում է մի մեծ գունդ, այնքան մեծ, որ կարողանա ծնողի մեռած մարմինը

*1,- R. A. Schwaller de Lubicz, «The Templees Of Karnak», 1999, USA, p. 29.

տեղադրել գնդում: Դատարկելով գունդը, միջում նա տեղադրում է ծնողի մեռած մարմինը եւ գունդը պատում թարմ մրրիով: Եւ գունդը դրանից հետո ստանում է նույն քաշը, ինչ որ ուներ սկզբում (մինչեւ դատարկելը): Թռչունը քարշ է տալիս այս գունդը դեպի Եգիպտոս եւ այն դնում արեւի տաճարում»:

Այս նույն թռչունը «Սասնա» էպոսի պատումներից մեկում Սանասարին դուրս է բերում անդրաշխարհից դեպի լույս աշխարհ *(պատում 22, h. 4, «Սասնա Ծռեր»)*: Մյուս պատումում *(պատում 22, նույն աղբյուր)* վիշապը թաքուն ուտում է փյունիկ-արծվի ձագերին. ով-որ սպանի վիշապին, արծիվը նրան դուրս կբերի ***Օձ քաղաքի*** սահմաններից: Այս փյունիկ թռչունը, որ երգելով կյանք եւ երիտասարդություն է պարգեւում, որ արեւի սկավառակի դիմացն է բռնել եւ այլն, հայկական ավանդապատումներում ու հեքիաթներում հանդիպում է բազմաթիվ անգամ: Հետաքրքրական ու կարեւոր է Գ. Սրվանձտյանցի գրառած ավանդությունը. Թեւաթորոսը *(թեւավոր Թորոս)* Ծովք լճում ապրող «Թորոս եղբայր» թռչունն է (Գ.Սրվանձտյանց, II: 182-183, Երեւան, 1978-1982):

Եգիպտական «Արարչության» պատճառ-հիմք հանդիսացող, կենսահուր «ապահովող» գերագույն Hikê աստվածության պատմությունը եւ նրա կերպարանավորումը որպես արծիվ, ունի խորհրդաբանական իմաստ, եւ ներկայանում է որպես հավաքական սիմվոլ: Այս առումով Ռոբերտ Բուվալի եւ Անդրիան Ջիլբերտի եզրակացությունը միանգամայն ճիշտ է.

«Եզրակացությունը պետք է լինի այն, որ փյունիկ (թռչունը) աստվածային արարման եւ վերածննդի սիմվոլն է, այս կախարդության (վերածննդի) որակական բնութագրումը Հելիպոլիս բերվող սերմն է»[1]:

Աստվածամայր՝ ԱՅԱ > ԾՈՎԻՆԱՐ > ԱՆԱՀԻՏ

Նախահեթանոսական ժամանակների տիեզերական մեծ դիցամայրը՝ ԱՅԱ-ն, որ երկվորյակ ընձառյուծների մայրն է, հայկական «Սասնա Տուն» էպոսի Ծովինար հերոս-աստվածուհու համարժեքն է: Այս երկուսն էլ հնագույն հավատամքային համակարգում «օժտված» են միեւնույն ֆունկցիայով: Տիեզերամայրը հղիանում է գաղտնաթաքուր երկնային հոր կամքով եւ ծննդաբերում է առաջին զույգ ամենի երկվորյակ աստվածություններին, որոնք «ձեւավորում» են նյութական տիեզերքը: **ԱՅԱ** անունը հայերենում նշանակում է՝ «տոհմի մայր», «մեծ մայր», եւ մինչեւ այժմ էլ, Արցախում, մեծ մորը՝ ոչ թե տատիկին, այլ գերդաստանի քյոթուկին, ղեկավարին, կանչում են՝ ***«Այա»*** անունով: Ըստ իս, այս ԱՅԱ անունը նախահնդեւրոպական մայրիշխանության ժամանակներից եղել է նաեւ՝ ժողովրդի, ցեղի ինքնանուն *(քանի-որ հին ժամանակներում, ժողովուրդները կամ ցեղամիավորումները իրենց հավատամքային գերագույն աստվածության*

*1,-R. Bauval, A. Gilbert, «The Orion Mystery: Unlocking the Secrets of the Pyramids», 1995, USA, p. 138.

անունով էին իրենք իրենց անվանակոչում), եւ հայրիշխանության անցումով, ԱՅԱ աստվածամայրը դարձել է արական՝ ՀԱՅԱ աստվածություն, որ մինչեւ հիմա էլ հայ ժողովրդի ինքնանունն է՝ ՀԱՅ: ԱՅԱ անունը հնդեւրոպական լեզվում՝-ai, -oi*[1], ցուցում է՝ եզակի, առաջին դեմք, որ հնդեւրոպական իգական -**ā**-ն է*[2] եւ աղերսվում է՝ **ā**yu*[3]-ի հետ, միտելով՝ ***«կենսական ուժ, հավիտենականություն»*** իմաստը: «Սասնա Ծռեր» հայկական էպոսի Ծովինարը այս նույն աստվածամայրն է, որի անունը՝ ծովի-***նար,-*** «ջրահարս», այս աստվածության էությունն է բնորոշում:

Անահիտ > Անահիդ > Անահտայ

«Եգիպտական ՆԻԻԹ կամ ՆԱՅԹ, որ կոչվի եւ հավելվածով դա-նաթ կամ դա-նիթ, եւ համարվեր մեծ դիցուհի մի զգոնության, արիության, բնեմնավորության եւ առատության նյութոց: Դարձյալ եւ գիշերային երկինք՝ մայր Ռ-այի, այսինքն Արեւու՝ դիցահոր»[4]:

Այսինքն, Անահիտը նաեւ հայկական բազում հեքիաթներում հանդես եկող արեւամայրն է,- գիշերային մեծ երկինքը:

1. Նախահնդեւր. *Han- > *an-, հայերեն՝ han (հան) «մեծ մայր», նախամայր (ոչ թե՝ տատիկ)*[5]: ՀԱՆ, - բնիկ հայ. բառ է *(տես՝ Հր.Աճառյան, «Հայոց լեզվի պատմություն», h.I, Երեւան, 1936):*

2. Տիեզերամայրը նաեւ արարման ***«շունչ-հոգին»*** է:
Նախահնդեւր. *anH- «շունչ» > սանսկրիտ՝ aniti, anila-h, հուն.՝ anemos, գոթ.՝ uz-anan եւ այլն*[6]: Հայերենում՝ ս’անա > սանահ (սանա + մայր > հոգեմայր):

3. Ներկայանալով որպես գիշերային երկինք, այս աստվածուհու սիմվոլը շրջանաօղակն է: Հնագույն հավատամքում անհունի, ամբողջի, կոսմիկական պոտենցիալ ներունակության սիմվոլը՝ շրջանաօղակն է:

Նախահնդեւր. *ano- «օղակ», հիթթիթ.՝ anna-, լատ.՝ anus, հին իռլանդ.՝ ainne, հայերեն՝ anur «օղակ»:

4. Հնագույն հավատամքում տիեզերական ներունակությունը իգական է, մայր է եւ ***ամենայնի հիմքն է*** *(ՆԱՅԹ-ը, իգական հիմք ունի, որից արտահայտվեց Աթում գերագույն աստվածությունը):* Անահիտ < Անհտայ > աստվածությունն ունի նաեւ «հիմք» իմաստը:

«Հնդեւրոպական ****b^{h}ud^h-n-*** սանսկրիտում դարձել է՝ budhna՛- «հիմք, տակ», հայերենում՝ տուտն է,- «հիմք, տակ», որը նախահնդեւրոպ.՝ dud- ձեւից է*[7], եւ

---

*1, *2, *3, - T. Gamkrelidze & V. Ivanov, p. 778, 342, 345, 780, 237:

*4, - Ղեւոնդ Ալիշան, «Հին հավատք», Վենետիկ, Ս. Ղազար, 1895թ., էջ 169: Այս հանճարեղ ծերունին իր բացառիկ տրամաբանությամբ եւ գիտնականին վայել կողմնորոշվելու սուր զգացողությամբ, արդիական է մինչեւ այսօր:

*5, *6, - T. Gamkrelidze & V. Ivanov, նույն աղբյուր, էջ 388, 717, 408.

*7,- Հր. Աճառյան, «Հայոց լեզվի պատմություն», h. I, 1940թ., Երեւան, էջ 76:

հայերենում մենք ունենք սրանով կառուցած բառ՝ ***անդունդ, an-dund-k'***, որ նշանակում է՝ «անհատակ»: «Սանսկրիտ կոսմոլոգիայում, միֆական հիմքի վիշապը A'hi- Budhnya'- (բառացի՝ ***հիմքի, անդունդի վիհշապը***) պառկած է տիեզերական ծառի տակ»*[1]:

Հայկական եւ հնդեւրոպական հավատամքային համակարգում այս աստվածամայրը եւ նրա անունը միտում է՝ տիեզերքի կենսատու անդունդը, որը ***սկիզբ*** է տալիս աստվածների ծննդին:

Անահիտ աստվածուհու պաշտամունքը որպես նախամայր, առաջին արական լոգոսին սկիզբ տվող մայր՝ ամբողջն է շրջանը,- 360º, որը ե՛ւ մեծ նախամայրն է, ե՛ւ տիեզերական շունչ-հոգին է, ե՛ւ հայկական հեքիաթների արեւամայրն է *(տես՝ «Օձամանուկ-արեւամանուկ», Հայ. ժող. հեքիաթներ, հ. IX, «Օձ-մանուկ, Վարթ-մանուկ», էջ 231)*:

Անահիտ աստվածուհու պարսկական փոխառություն չլինելու մասին, ներկայացնում ենք իրանական լեզուների (հին եւ նոր) եւ հնագույն գրականության գիտակ Հովիկ Ներսիսյանի «Հայ ժողովրդի պետականության եւ պատմության ակունքներում»*[2] գրքից հատվածներ:

«Պարսիկ գիտնականները բացատրում են աստվածամոր Անահիտա անունը որպես՝ Anahita > an (բացասել) + ahita (պիղծ, անմաքուր)»[3]: «Anahita = Անպի՞ղծ: Որպես աստվածուհու անուն «անպիղծը» կասկածելի է»*[4]:*

*«Անահիտ անվան առաջին տառը լիահունչ **ա** է: Ուստի նախավանկ **ան**-ը (իրանյան լեզուներում, - ընդգծ. իմն է) ժխտական նախածանց չի կարող լինել, քանզի քմային **ա** չէ»: **«Ահիթա» (ahita)** բառը մեկնաբանել են՝ պիղծ, կեղտոտ, որը ճիշտ չէ»: «Ավեստայում միայն մեկ անգամ է ahita բառը գործածվել, այն էլ «Վանդինդադի» մեջ, եւ ոչ թե կեղտոտ ու պիղծ մեկնությամբ, այլ որպես մի հիվանդություն, այն էլ երբ հիվանդությունների անուններն է հիշվում»*[5]:*

*«1- Հաշեմ Ռազին իր Աւեսթայի անունների երեք հատորեայ բառարանում (էջ 148) ստուգաբանում է թէ՝ «Անահիտան բարդ բառ է. - այսպէս, **ա** սկզբնատառը ժխտական նախածանց է եւ **ահիթա,** որը կեղտոտ եւ անմաքուր է նշանակում: Ուստի, Անահիթան նշանակում է մաքուր եւ անարատ»*[6]:*

*«Իհարկէ մեզ համար զարմանալի չէ (Հաշեմ Ռազիմի կողմից,- ավ. Ա.Ա.) երկրորդ **ն** տառի անտեսումը: Նույն տեղում հեղինակը արտահայտում է հետեւյալ միտքը՝ «Անվան այս բառակազմութեանը եւ մեկնութեանը բոլոր Աւեսթագէտները համաձայն չեն. մանավանդ Անդրէասը, որը Աւեսթայի անունների վերաբերեալ շատ ուշադիր է» (Andreas; Die Vierte Ghatha. 1911. p. 7)*[7]:*

---

*1, - T. Gamkrelidze & V. Ivanov, նույն աղբյուր, էջ 408:

*2, *3, *4, *5, *6, *7,– Հովիկ Ներսիսյան, «Հայ ժողովրդի պետականության եւ պատմության ակունքներում», 2002, ԱՄՆ, էջ՝ 165-200:

Փաստորեն, պարսկական հավատամքային տեքստերում Անահիտա աստվածուհին ներմուծված է, եւ նրա անվան ոչ ճիշտ՝ անհեթեթ, արհեստական ստուգաբանությունն իսկ ցուցում է՝ պարսիկ գիտնականների կողմից նրան «ընդոծին» սարքելու մեծ տենչը: Սակայն հին ժամանակների վավերագիր պատմիչները ճշտում են «իրերի կարգը»:

«Ստրաբոն ասում է, - այս աստվածը ***նանա*** պաշտվում է մարաց եւ պարսից կողմից, բայց նրա պաշտամունքը հայոց մեջ գերազանցում է բոլորից»*[1]:

Նույնիսկ քրիստոնեա Ագաթանգեղոսը, որ հին հավատքի թշնամին էր, Անահիտ աստվածությանը ներկայացնում է այսպես.-

«Եթէ ոչ առնուցուս յանձն դիցն պաշտոն մատուցանել, մանավանդ այսմ Մեծի Անահտայ տիկնոջս, որ է փառք ազգիս մերոյ եւ կեցուցիչ զոր եւ թագավոր ամենայն պատվեն, մանավանդ թագավորն Յունաց, որ է մայր ամենայն զգաստութեանց, բարերար ամենայն մարդկանց, բնութեան եւ ծնունդ է մեծին Արին Արամազդայ»[2]:

Անահիտ աստվածուհին ոչ թե իրանական ծագում ունի, այլ նրա «հիմքերը» խորանում են մինչեւ շումերական ժամանակներ, շումերական պանթեոն: Շումերական տարբերակի պահպանված ակկադական՝ Անունիտու*(Anunitu)* աստվածուհու անունը, որ շումեր.՝ նշանակում է՝ ԱՆ «երկինք» եւ ՆԻՏՈՒ «նետ, եղեգն» իմաստի ակկադական աղավաղված հնչյունադարձությամբ ձեւն է, այնպես ինչպես շումերական ԱՆ-ը հին բաբելոնյան շրջանում է դարձել՝ ԱՆՈՒ: Ուրեմն, Anunitu-ն երկնային ***«եղեգ-նետն է»:***

*«Բազմաթիվ լեզուներում, այդ թվում եւ հայերենում **նետ** բառը ծագում է «եղեգ» նշանակությունից (հնդեւրոպ.՝ «եղեգ - nedo > net, սլաք, փքին, կայծակ)... Շումերական ավանդությունում անդրաշխարհի դռները հսկող աստվածության անունն է՝ ՆԵՏԻ»*[3]:

Դելպի անդրաշխարհ կա երկու «դուռ»՝ գալակտիկայի կենտրոն*(գտնվ. «Կարիճի» պոչին մոտ)* եւ հակակենտրոն՝ եզր*(Կանիս մեծ, Սիրիուս)*: **Եղեգնիկը** երկնքում աղերսվում է՝ Կանիս մեծի ***Սիրիուս աստղի եւ Պրոցիոն*** համաստեղության հետ: «GAG.SI.DI.- «նետ»- Elia՝a- Եղեգան Շամփուր՝ Սիրիուս + Պրոցիոն*[4]: Այսինքն, Անահիտ աստվածուհին նույնպես աղերսվում է եղեգնիկի հետ եւ նրա աստեղատունը Կանիս Մեծի Սիրիուս + Պրոցիոն աստղերի խումբն է: Ավեստայում, Արդվիսուրա Անահիտան երկնային գետի՝ Ծիր Կաթնի, մարմնավորումն է, որի սկիզբը միտող աստղատունը՝ «Կանիս մեծի» Սիրուսն է*[5]:

ԱՅԱ > ԾՈՎԻՆԱՐ > ԱՆԱՀԻՏ տիեզերք ծննանող աստվածամայրը, հայկական լեռնաշխարհի մայր դիցուհին է, որ տարբեր ժամանակներում հանդես է եկել իր ֆունկցիոնալ էությունից բխող տարբեր անուններով:

---

*1, - Strabo XI-XIV, 16.

*2,- «Ագաթանգեղայ Պատմություն Հայոց», Տփղիս 1909թ., պր. 53:

*3, *4, - Ա. Դավթյան, «Հայոց աստղային դիցանանություն», Երեւան, 2004թ., էջ՝ 163: Հղումները՝ Հր. Աճառյան, ՀԱԲ, h. III, էջ 442, եւ «Աշխարհի ժողովուրդների միֆոլոգ.», ռուսեր. էնցիկլոպեդիա, h.2, էջ 648:

*5,- Վան դեր Վարդենը (Science Awakening II, p.193) համձայն չէ Նայբերգի հետ (Nyberg, Religionen des alten Iran, p.262), որ Անահիտը խորհրդանշում է Ծիր Կաթինը, պնդելով, որ Անահիտն Ավեստայում ներկայացնում է Վեներա մոլորակը: Բարթել վան դեր Վարդենը սխալվում է. ըստ հնագույն համակարգի, որեւէ գլխավոր աստվածություն ունի թե՛ իր աստեղատունը եւ թե՛ արեւային ուղեծրում իր մոլորակը: Եվ այս մոտեցումը Ավեստաում նույնպես կա:

Առաջին «թշնամին»՝ Սեննքերիմ-Բել- Բահալ-Բալի-Էլու»



«Սասնա Ծռեր» էպոսի առաջին ճյուղը սկսվում է հայոց թագավորի *(տարբեր պատումներում ներկայանում է՝ Գագիկ, Աստղիկ, խաչապաշտ անուններով)* եւ թշնամի կողմի՝ Սեննքերիմ «կռապաշտ» արքայի հակամարտությամբ. վերջինս հայոց կող-մին պարտադրում է՝ արքայադստեր Ծովինարին իրեն կնության տալ:

Սեննքերիմ > (ասոր. անվ.) > Սիննահարիմ > sin-ah ḫē-erïba, թարգման-վում է՝ ***«Սին (Լուսնի աստվածը) նոքայրներս շատացրեց»*[1]:**

«Սասնա Տուն» էպոսի պատումներից մեկում Սեննքերիմի հետ կապված բացառիկ հետաքրքիր ակնարկ կա: Ըստ այս պատումի, Ծովինարին նկարագրե-լիս, Սեննքերիմը ներկայացվում է որպես յոթ կողաշար ունեցող ճանճ:

Ծովինարը ***«... տրսնուչուրս հավուր լուսնըկի կը նմանի,***
Վուր յոթ սարի իտնվեն դուրս կու գա,
Ճանճ վուր ճակտին վրա ման գա, կրնկնի,
***Ճանճի յոթ կողաշար կը կուտրը՛...»*[2]:**

Տասն եւ չորս օրենքան լուսինը՝ լիալուսինն է, ամսվա կեսը, որ մայրության պատրաստ խորհուրդ ունի իրենում: ***«Յոթ սարի իտնվեն դուրս կու գա»*** ակնարկը «Կույսի»՝ յոթերորդ համաստեղության, եւ յոթ մոլորակների խորհորդն ունի՝

☽	☿	♀	☉	♂	♃	♄
լուսին	**Մերկուրի**	**Վենեռա**	**Արեւ**	**Մարս**	**Յուպիտեր**	**Սատուրն:**

Հայկական գյուղերում ***մեղվին*** նույնպես ճանճ են ասում: *«Ճանճի յոթ կողա-շար»* ակնարկը վերաբերում է «Կարապի» համաստեղությանը, որն ունի տեսա-նելի պայծառության յոթ աստղեր եւ Հայասա երկրի գերագույն աստվածության՝ անդրաշխարհի դից Ներգալի աստեղատունն է: «Թաքնագիտական սիմվոլ-ների» խորհրդապաշտական ակնարկները եւ հատկապես թվերը պարտադիր չէ, որ ուղիղ ձեւով վերաբերեն ենթակա գոյականին: «Կարապ-Անգղի» համաս-

*1, - Հր.Աճառյան, «Հայոց լեզվի պատմություն», 1940թ., հ. I, էջ 200:
*2, - «Սասնա Ծռեր» 1936թ., հ. I, պատում՝ Է, պատմեց Մոկացի Սախո: Գրի է առել Ս. Հայկունին: Պատմողը պատումը լսել է կիսաթաքուն կյանք վարող գզրչիներից. տես՝ առաջաբանը: Այս պատումն առաջին անգամ տպվել է Եմինյան ազգագրական Ժողովածուի Բ հատորում, 1901թ.-ին (ըստ իս, ամենամիստիկ, տիեզերական եւ թաքնագիտականն է հավաքված 150 եւ ավելի պատումներից):

տեղությունը եւ եգիպտական «բզեզը», երկուսն էլ գերագույն արական աստվածության սիմվոլներն են, որի խորհրդապաշտությունը՝ բեղմնավորումն է եւ ***օրվա երկինքն*** է, ի տարբերություն՝ ***գիշերային երկնքի,*** որի սիմվոլը սեւ հովազ-առյուծն է *(գիշերային կաթնածիրը՝ Միրիուս աստղի կենտրոնով):*

«Հնդկական Պրանա (շնչառություն) աստվածությունը, որը խորհրդանշում է տիեզերական կենսատու աղբյուրը, երբեմն ներկայցվում է մեղուների շրջանակով: Մեղվաճանճը որպես սերմնավորման խորհրդապաշտական սիմվոլ, գոյություն է ունեցել հնագույն հավատամքային պատումներում*(եգիպտական Աթում, խալդեական Բաահալ եւ այլն: Ճանճ-բզեզը» նաեւ խորհրդանշել է Յուպիտերին):* Խալդեական աստված Բահալը նաեւ կոչվում էր Բահալ-Զեբուլ, որ հետո դարձավ Բել-Զեբուբ: Բել՝ նշ. է «տեր», zebub կամ zabab նշ. է՝ «ճանճ, բզեզ»: Հրեաները հետագայում սրա անունը փոխելով՝ Բեելզեբուդ-ի, նրան դարձրին դեւերի իշխան»*[1]: Ինչո՞ւ դարձրին դեւերի իշխան. հավանաբար նրա համար, որ սա նաեւ անդրաշխարհի աստվածությունն էր Խալդեացիների մոտ, ինչպես Հայասա երկրի ***Ներգալը:***

Քանանական ***Բաալը***՝ անձրեւի եւ ամպրոպի աստվածությունն էր*[2]: Ապրում էր հյուսիսային լեռան վրա: Նա անվանվում էր ***«հյուսիսի տեր»,*** ինչպես «Անգղի» համաստեղությունն էր համարվում հյուսիսային աստղատուն:

Փյունիկյան պատումներից մեկի համաձայն, YAM-ը՝ ծովի դիցը, խնդրում է գերագույն աստված EL-ին, իրեն արքա ձեռնադրել: Վերջինս պայման է դնում նրա առջեւ, որ YAM-ը նախեւառաջ պետք է հաղթի եւ ոչնչացնի BAAL-ին: Հաղթում է Բաալը եւ այս անգամ «ձեռնոց է նետում» անդրաշխարհի աստծուն՝ MOT-ին եւ մեռնում է: Նրա քույր կամ կին՝ ANAT-ը իջնելով անդրաշխարհ, փորձում է վերակենդանացնել նրան եւ հաջողում է: Բաալը նաեւ համարվել է մեռնող ու հառնող աստվածություն: Պաղեստինյան տարածքում, հունա-հռոմեական շրջանում, Բաալը փոխարինվել է Զեւսով եւ Յուպիտերով*[3]:

Բաալը՝ «տեր» նշանակությամբ քանանցիների գլխավոր դիցն էր:

Բել-Բաալի «ինքնությունը» մեզ համար մասամբ պարզում է վեդայական ***Բալի***-ն:

Վեդայական հավատամքում Բելը՝ BALI -ին, հանդես է գալիս որպես անդրաշխարհի աստվածություն*[4]: Ըստ պատումներից մեկի, երբ տիեզերքի մեծ աստվածություն Վիշնուն հակամարտության մեջ է մտնում Բալիի հետ, նրան առաջարկում է իրեն տալ իր քայլերով երեք քայլի տարածք: Երբ Բալին համաձայնվում է, Վիշնուն վերափոխվելով, ընդունում է իր տիեզերական չափերը եւ երկու քայլ անելով, կտրում է ամբողջ տիեզերքն ու վերադառնում է իր կանգնած տեղը: «Բռնելով» ողջ տիեզերքը, Վիշնուն Բալիին հարցնում է, թե իրենց պայ-

*1,- Manly P. Hall, «The Secret Teachings Of All Ages», 2000, USA, p. LXXXVII.
*2, *3, - Rachel Storm, «Egyptian Mythology», 2000, USA, p. 23, p. 81, 16, 23.
*4, - Rachel Storm, «Indian Mythology», 2000, USA, p. 84.

մանի համաձայն՝ որտե՞ղ դնի իր երրորդ քայլը: Բալլին առաջարկում է երրորդ քայլն իր գլխի վրա դնել, դրանով իսկ ընդունելով Վիշնուի գերազանցությունը: Նման պատասխանի պատճառով Վիշնուն Բալլիին տալիս է անդրաշխարհի թագավորությունը*[1]:

Փաստորեն, Վիշնուն այստեղ հանդես է գալիս որպես տիեզերքի ***արտահայտված*** գերագույն աստվածություն, որն իր երկու քայլերով, «կարկին»-ի նման, եզրագծում է ամբողջը՝ տիեզերական շրջանը ***(ինչպես ուրարտական Հալդիի 2R-ն է ամբողջի՝ շրջանաշղթայի տրամագիծը, 17 ցուլ Հալդդին)***, իսկ Բալին այդ շրջանի հակադարձ կողմն է՝ անդրաշխարհը, որ արտահայտված «տիեզեր-շրջանաօղակում» ունի միայն մեկ տեղ՝ շրջանաօղակի կենտրոնը:

Ըստ Մ. Խորենացու՝ *«Կռոնոս կոչվածը եւ Բելը՝ Ներբրովթն է» (Քրոնոս՝ ժամանկի աստվ.)**[2]**:** Ըստ պատմահոր, հայ հնագույն միֆական պատումներում այս Բել-Բաահալը, Հայկ նահապետի հակառակորդը՝ նույն Նեմրոդն է, նույն Զրվան-Սեմն է*[3], հունական դիցաբանության Քրոնոս՝ «Ժամանակի» աստվածությունն է, եւ ըստ իս, «Սասնա էպոսում», Սենեքերիմն է, որին կնության էր գնում Ծովինարը**:**

Փաստորեն, Հայասա երկրի գլխավոր աստվածություն ՆԵՐԳԱԼԸ ***(որի աստեղատունը «Կարապ-անգղի» համաստեղությունն է)*** ունի երկակի արտահայտություն՝ «երկու դեմք», երկու անձնականություն: *«Ներգալն անդրաշխարհ է գնում Էրրա անվամբ, իսկ այնտեղից գալիս է Ներգալ անվամբ, կարծես լինելով իր իսկ փոխարինողը»**[4]**:**

Բոլոր հնագույն հավատամքներում, գերագույն աստվածությունն իր մեջ ներառելով ամբողջը, արտահայտվում է որպես «լավ» եւ «վատ»՝ երկու «կեսեր»,- «հակադարձ իպոստասներ» միություն-ամբողջությամբ: Եվ սա հնագույն պատումներում իր կերպարանավորումն է ստանում՝ ***հայր եւ նրա երկու որդիները որպես թշնամի եղբայրներ*** ներկայացմամբ: Օրինակ, եգիպտական համակարգում ե՛ւ Օզիրիսը ե՛ւ Սեթը, որպես օպոզիցիոն հակառակորդներ, գերագույնի՝ Աթումի, ներկայություն-արտահայտությունն են, որ կատարում են իրենց ֆունկցիաները: Նույն սկզբունքով է նաեւ իրանական Ահուրամազդան եւ Արիհիմանը, որ Զրվանի որդիներն են, շումերական գերագույն դից Անուի որդիներ՝ Էա եւ Էնլիլ եղբայրները նույնպես հակամարտության մեջ են: Այսինքն, դուալիզմի սկզբունքի համաձայն, ըստ հների աշխարհճանաչողության, տիեզերական շրջանաշղթայում գերագույն աստվածությունն արտահայտվում է որպես երկու իրար հակադարձ՝ «լավ» եւ «վատ», «դրական» եւ «բացասական» իպոստասներ («պլյուս եւ մինուս ֆազերով»), որպեսզի ստեղծվի շրջապտույտ-շարժում *(հիշենք*

*1, - Rachel Storm, «Indian Mythology», USA, 2000, p. 84.
*2, *3, - «Մովսես Խորենացի, «Պատմություն», 1981թ., էջ 33, 29 - 33:
*4,- Ա. Դավթյան, «Հայոց աստղային դիցաբանություն», 2004թ., Երեւան, էջ 210:

բնության մեջ գոյություն ունեցող միաբջջից բազմաբջիջ փուլային «տրոհումը» եւ Ֆոբիոնոչիի թվային աճող համակարգը՝ 0, 1, 1, 2, 3, 5, 8...): Օրինակ, հայկական միֆական պատումներում, մի դեպքում Վահագնը՝ ***հարդագողն*** է, իսկ Բարշամը՝ ***տան պահպանը,*** մի ուրիշ պատումում, Հայկն է աղեղնավոր-պահապանը, իսկ Բելը՝ «գողը»:

Բելը խալդեական գլխավոր աստվածությունն է: Բելի նախնական անունը՝ գալիս է աքադական աղբյուրից՝ ***bêlu*** «տեր»: Խալդեական գերագույն աստվածություն «Բելը» եւ քաննանցիների «Բաալ»-ը, թեւ անվանման առումով նույն հիմքն ունեն, սակայն տարբեր են, քանի-որ ժամանակի ընթացքում, տարբեր ցեղամիավորումների մոտ, սյուժետներում, ֆունկցիոնալ առումով ունեցել են տարբեր իմպրովիզացիաներ: Սրանց հիմքը՝ շումերական Էլ < Էնլիլ աստվածությունն է, Էա-Հայա աստվածության եղբայրն ու հակառակորդը: Բաբելացիներն ավելի ուշ շրջանում Մարդուկին Էնլիլի համարժեք փոխարինողը համարելով, նրան կոչել են՝ ԲԵԼ անունով, որ նշանակում է «տեր»*[1]: Հների հավատամքային գաղտնի համակարգում «Բելի կարգավիճակը» պահպանված է խալդեական համակարգում:

[Ներկայացված Կառույցը տես՝ H. P. Blavatsky, “Isis Unveiled”, h. II, p. 170] , -

Գերագույն առաջին պատճառը՝ ամբողջը, մեկը, որն ինքն իրենում է, կոչվում է՝

հնդկական-վեդայական	**խալդեական**	**թաքնագիտական**
Բրահմա (**Հարի**)	**Իլու**	**անանուն** կամ **գաղտնի անուն** **(kaballa: En-Soph)**

Երբ ՀԱՎԵՐԺԱԿԱՆ-ը արթնանում է քնից եւ ինքն իրեն սկսում է արտահայտել (manifest), ապա ինքն իրեն «բաժանում» է, արտահայտվում է որպես՝ ***արական*** եւ ***իգական*** սկզբունքներ, որն առկա է բոլոր սիստեմներում:

Երկակի սկզբունքով Աստվածությունը, տիեզերական հայր-մայրը՝

վեդայական	**խալդեական**	**թաքնագիտական**	
Բրահմա (**Հարի**)	**Իլու**	**գաղտնի անուն**	
↙ ↘	↙ ↘	↙ ↘	
Նարա **Նարի**	**Անու** **Անատա**	**Աբրասաքս**	**Բիթոս**
(արական/իգական)	(արական/իգական)	(արական)	(իգական)

Երկուսի միությունից գոյանում է երրորդը՝ արարող սկզբունքը,- ***«որդին»*** կամ արտահայտված ***«լոգոսը»,*** աստվածային մտքի արդյունքը:

վեդայական	**խալդեական**	**թաքնագիտական**
Վիրաղջ-որդի	**Բել-որդի**	**Օֆիս** կամ **Էննոյա՝ որդի**

*1, - Rachel Storm, «Egyptian Mythology», 2000, USA, p.30.

Բոլոր համակարգերում առկա է արական երրորդությունը, որոնցից յուրաքանչյուրը արտահայտվում եւ արարում է իգական հիմքով աստվածության միջոցով:

վեդայական	**խալդեական**	**թաքնագիտական**
Երրորդություն՝ ***Բրահմա, Վիշնու, Շիվա,*** որոնք մեկ ամբողջ Բրահման է, որը եւ արարում եւ արարվում է կույս-*Նարի* -ից *(նախամայր, որը մշտապես արարող է):*	Երրորդություն՝ ***Անու, Բել, Հոա*** *(կամ՝ Սին, Սամաս, Բին),* բոլորը մեկ՝ երկսեռ Անուն է, արտահայտված Կույս-Միլիթիայից:	Կույս Սոֆիան ինքը արտահայտությունն է Բիթոսի եւ անանուն աստծո եւ արարում է նրանց միջոցով:

Խալդեական համակարգում գերագույն աստվածությունն ընդունվում է որպես «մեկ»՝ ***Ադ*** կամ ***Ադ-ադ*** անունով, որը երբեք չի անվանակոչվում, այլ ճանաչվում է որպես միակը, ինչպես հնդկական ***Սվայամբհուվա***-ն: Նրանից մանիֆեստվում են՝ Ան-ը կամ Անուն, հաջորդը գալիս է դեմիրուգը՝ ***Բել*** կամ ***Էլու*** անունով, եւ երրորդը՝ իմաստնության սկզբունքը՝ ***Հեա*** կամ ***Հոա*** անունով*[1]:

Փաստորեն, Հելլենա Բլավատսկայի ***հնագույն համակարգի*** ներկայացումը, ինչ խոսք, ճշտումների կարիք ունի *(շումերական պանթեոնը):* Սակայն նրա խնդիրը հների աշխարհայցքի էությունը ներկայացնելն էր: Հելենա Բլավատսկայի մոտ, խալդեական տարբերակը եւ շումերական տարբերակը թեթեւ շեղումներով նույնն են:

Խալդեական՝ ԻԼՈՒ կամ ՀԻԼՈՒ-ն, որ առաջին գերագույն աստվածությունն է, «Սասնա Տուն» էպոսի մի շարք պատումներում առկա է որպես ամեն ինչի սկիզբ հանդիսացող տեղանք՝ բլուր, վանք, «ՀԻԼԻ» անունով, որ գտնվում է Ռշտունիքում, Վանա լճի հարավային կողմում (տես՝ «Ս. Ծ.», հ. II, էջ՝ 849): Ըստ իս, այն աղերսվում է՝ ՀԻԼ < ՀԱԼ= HAL+DI Բիայնական թագավորության գերագույն աստծո հետ:

Հնագույն հավատամքային կառույցներում, կոսմիկական գերագույն Աստծո արտահայտությունը որպես երկու հակառակորդ իպոստասների ներկայություն՝ ***Էա-Էնլիլ, Հայկ-Բել, Գագիկ-Մենեքերիմ*** եւ այլն, ըստ հների, անհրաժեշտ դուալիստական պայմանն է, որի հիմքով «արարչական կամ տիեզերական շրջանաշրջթայում» ստեղծվում է անհրաժեշտ շարժում-պտույտը՝ կյանքը:

Ըստ հնագույն թաքնագիտական համակարգի, տիեզերքն արարելիս, Ոգին սկզբում ստեղծում է իր ***նյութական*** արտահայտությունը, ապա նյութական

*1, - H. P. Blavatsky, “Isis Unveiled”, v. II, p. 170.

անիվը պտտող ***շնչավոր*** *(կենդանական շունչ-հոգի)* իպոստասին՝ լուսնի սիմվոլով ԲԵԼԻՆ կամ ՍԵՆԵՔԵՐԻՄ-ին, ապա արեւի սիմվոլով իր բարձրագույն ***միտք-Ոգու*** արտահայտությունը՝ ՀՈԱ կամ ՀԵԱ-ին: Բանաձեւումը՝ ***1.- նյութի մեջ՝ 2.- շունչ, շնչի մեջ՝ 3.- ոգի*** [1]:

Խալդեական Բելը, ինչպես նրա նախատիպ՝ Էլ-Էնլիլը,- բնույթը՝ օդ, աղերսվում է թաքնագիտական ***«Շունչ-հոգու»*** հետ եւ նրանից կամ նրա հովանու տակ է ծնվում բարձրագույն ***«Միտք-Ոգին»:*** Եվ պատահական չէ , որ «Սասնա Տուն» հայկական էպոսի պատումներից մեկում, տիեզերական նախամայր Ծովինարն իր անբացատրելի հղիության մասին ամուսնուն՝ Սենեքերիմին, հավաստիացնում է, որ նրա ***շնչից*** է հղիացել*[2]:

Պատմահայր Մովսես Խորենացու «Հայոց Պատմություն» աշխատության մեջ, Հայկ նահապետի թշնամին՝ Բելը, կարծես նույնանում է միֆական Տիգրանի հակառակորդ՝ Աժդահակի հետ: Թվում է, թե Մ. Խորենացին մի դեպքում վիշապ Աժդահակին նույնացնում է Կենտավրոս Պյուռիդայի հետ, որն ըստ հին հույների՝ այսօրվա «Աղեղնավորի» համաստեղությունն է*[3], մի ուրիշ տեղում, պատմահայրը վիշապին ոչ թե Կենտավրոսի, այլ Հուշկապարիկի հետ*[4] է համատեղում, որ հյուսիսային Դրակոնիս համաստեղության զուգահեռն է եւ նշանակում է՝ ***վիշապարիք*** (Ա. Սուքիասյան, «Հայոց հոմանիշների բառարան», Երեւան, 1967թ., էջ 407): Խորենացու մոտ, Բելը, ըստ հունական դիցապատումների՝ Քրոնոսն է, «ժամանակի» իպոստաս-աստվածությունը,- ***«Բայց ես ասում եմ Կրոնոս կոչվածը եւ Բելը՝ Նեբրովթն է»*[5]*,***- ասում է Խորենացին: Պատմահայրը չի սխալվում, այլ տալիս է՝ թե՛ Բելի եւ թե՛ Աժդահակի հեթանոսական հնագույն ժամանակների երկու տարբեր աստեղատները: Խորենացին գրում է, որ Աժդահակը՝ ***«... Իր ազգի ցեղապետությունը վարում էր Բելին հնազանդելով»*[6]:*** Փաստորեն, Բելը եւ Աժդահակը Խորենացու մոտ տարբեր են, ինչպես տարբեր են նրանց հայկազունի հակառակորդները՝ ***Հայկը*** եւ առասպելական ***Տիգրանը:*** Խորենացու առասպելական Տիգրանը հայկական էպոսում Սանասարն է *(այս մասին մանրամասն՝ «Երկվորյակներ» բաժնում)* եւ նրա հակառակորդ Աժդահակը՝ Կենտավրոս Պյուռիդան, այսօրվա «Աղեղնավոր» համաստեղությունն է: Հայկի աստեղատունը «Կարապ-Անգղի» համաստեղությունն է, իսկ նրա հակառակորդը՝ Բելը որպես Քրոնոս՝ «ժամանակի աստված» , աղեսվում է ***Հուշկապարիկի՝*** հյուսիսային բեւեռի ***«Դրակոնիս»*** համաստեղության հետ:

---

*1, - H. P. Blavatsky, “Isis Unveiled”, v. II, p. 170.

*2, - «Սասնա Ծռեր», պատում 18:

*3,- *«Բյուրասպի իսկական անունը ճանաչում եմ Կենտավրոս Պյուռիդա»*, «Մ. Խորենացի, «Պատմություն», 1981թ., էջ 109: Ըստ հին հույների, Կենտավրոսի համաստեղությունը այսօրվա «Աղեղնավորն» է, տես Giles Sparrow, «The Universe», 2001, USA, p.137.

*4,- «Մովսես Խորենացի, «Պատմություն», *«Ղապիթիաների եւ Հուշկապարիկի կռիվը Պերիթոսի հարսանիքում»* - էջ 237:

*5,- Նույն աղբյուր, էջ 33: ****6,-*** Նույն աղբյուր, էջ 109:

Քեռի Թորոս >
ԹՀՈՐ > Թեշուբ > Թեյշեբա > Թորգոմ



Խորանարդ.
էլեմենտը կամ տարերքը՝ հող



Նկարում, Թեշուբի դեպի վեր ուղղված նիզակների թվաքանակը ցուցում է տիեզերակարգի կամ պանթեոնի ինչական համակարգը:

Թեշուբի հետեւում, դեպի վեր ուղղված երեք նիզակները ցուցում են, որ արարչական համակարգում Թեշուբը չորրորդ աստվածությունն է: Հետեւում, դեպի վեր ուղղված երեք նիզակները նաեւ ցուցում են, որ պանթեոնի հիերարխիայում, նրանից առաջ կա եռանիզակ սիմվոլով գերագույն աստվածությունը, որ ուրարտական համակարգում գերագույն Հալդի աստվածության նշանագիրն ու սիմվոլն է:

Թեշուբ աստծո ձեռքին, առջեւում կան միայն վեց նիզակներ, որ խորհրդանշում է հող տարերքով նրա երկրաչափական ծավալաձեւը՝ խորանարդը: Խորանարդն ունի վեց նիստ:

Նրա ձեռքի յոթերորդ նիզակը «անգործության մեջ է»:

Ըստ «Սասնա Ծռեր» էպոսի, Քեռի Թորոսը, որ Թեյշեբա աստվածությունն է, հայկական էպոսում վեց ոտանի լազգի ձիով է շրջում: Նժույգի յոթերորդ ոտքը կերել էին մրջյունները:

Թեշուբ-Թեյշեբա աստվածությունը, որի խորհրդապաշտական ծավալաձեւը խորանարդն է, աղերսվում է նյութական տիեզերքի հյուսնի՝ տիրոջ, թագավորի հետ:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Քեռի Թորոս > ԹՀՈՐ > Թեշուբ > Թեյշեբա > Թորգոմի Տուն

«Սասնա Ծռեր» էպոսում Քեռի Թորոսը հայոց արքայի որդին է, Ծովինարի եղբայրը: Նա հավերժական քեռի է: Մեռնում է Սանասարը, նա Մեծ Միհրի քեռին է, մեռնում է Մեծ Միհրը, նա Դավթի քեռին է եւ այլն: Մեկ անգամ «հայտնվելով», նա դառնում է՝ ***հավերժական քեռի,*** բայց երբ Փոքր Միհրը՝ վերջին աստվածությունը փակվում է Ագռավաքարում, Քեռի Թորոսը կսկծու մեռնում է. ինչո՞ւ:

Դիցարանական Էակի լանջակ կ'գոտիական դաբաշրջանի Միջագետքից

ԹՈՐՈՍ > ԹՀՈՐ+ՈՍ = TEŠ.UB, սիմվոլը՝ ցուլ, հյուսիսային բեւեռում նրա աստեղատունը այսօրվա Հերկուլեսի քառանկյան ձեւ ունեցող համաստեղությունն է, արեվի ուղեծրում կամ 12 կենդանակերպերի օղակում «ՑՈՒԼ» համաստեղությունն է:

TEŠ.UB = [*therH-, *tʰe/orH- օձի հետ մարտնչող»]*[1] աստվածություն: Հնդեւրոպական ժողովուրդներից շատերի մոտ միչեւ այժմ էլ պահպանվել է շաբաթվա 4-րդ օրվա հնագույն անվանումը, որը կոչվում է՝ ցուլի, ԹՈՐ-ի օր (***երկուշաբթի՝ 1-ին օր, երեքշաբթի՝ 2-րդ օր, չորեքշաբթի՝ 3-րդ օր, հինգշաբթի՝ 4-րդ օր, THOROS+day = TAURUS = Thur's day***): Թորը գիշերային երկնքում լույսի կամ ամպրոպ-լույսի աստվածությունն է, որ կոչվում է նաեւ «նյութական» տիեզերքի հյուսնը՝ ստեղծողը (Թորը՝ Նոր Կտակարանի Յիսուսի հայրացուի՝ հյուսն Յովսեփի նախատիպն է): Թորի խաչաձեւ մուրճը՝ գեղարդը (էպոսի Թուր-Կայծակի), որի հարվածը լույսի հարուցիչ է, որը Ծիր Կաթինը պտտող խաչաձեւ սվաստիկան է՝ «արարման թե՛ գործիքն է, թե՛ զենքը»: Հայկական լեռնաշխարհի հնագույն Թհորը = Թեշուբը = Թեյշեբան, ըստ պատմահայր Մ. Խորենացու՝ Թորգոմը, հնագույն հնդեւրոպական (**նաեւ՝ հիթթիթական, հուրրիական, ուրարտական շրջանում**) պատկերագրերում ներկայանում է ՑՈՒԼ-ի՝ ՏԱՎԱՐԻ (TAURUS) վրա կանգնած, որովհետեւ Ցուլի համաստեղությունը կենդանակերպի շղթայում, շրջանաշղթայի կենտրոնի՝ «Կարապի», չորս կարդինալ աստեղատներից մեկն է եւ առաջինն է. գարնանային գիշերահավասար, նոր տարի, երբ արեւը «Ցուլ»-ում է *(մ.թ.ա. V-IV հազարամյակ):*



Խորանարդ < Խորան «վրան, տաղավար», Ս. Գր. փոխաբերաբար ասված է նաեւ երկնից կամար, արքունի դահլիճ եւ այլն, որ հայ մատենագրության մեջ հանդիպում է 5-րդ դարից սկսյալ: Ղ. Ալիշանը «Հին հավատ» էջ 343, բխեցնում է՝ Խոր բառից: Karst, «Յուշարձան» էջ 401, բխեցնում է շումեր.՝ g'ar «երկինք, անդունդ» բառից (Հր. Աճառյան, «ՀԱԲ, h. II, էջ՝ 406»):

Խորանարդը, որ տիեզերքի մոդելն է համարվել, ունի 6 քառակուսի նիստեր, որոնցից յուրաքանչյուրը շումերական քառակուսու մակերեսն է, որ սրբազան չափ է՝ 1 IK = 60 x 60 = 3600 (լայնություն **x** երկարություն): Վեց այսպիսի նիստերի մակերեսների գումարը = 21600:

*1,- T.Gamkrelidze & V. Ivanov, նույն աշխատություն, էջ 176, 278, 81:



Ուրարտական Թեյշեբան Յուլի վրա: Նրա հետեւում գտնվում է եռակողմ նիզականման եռաժանին, որ, Հալդի աստվածության սեպանշանն է, բնույթը՝ ***հուր:*** Երկ. ծավ.- ***tetrahedron:*** Ինքը՝ Թեշեյբան, բռնել է վեց գլուխ ունեցող նիզականին, որ բնորոշում է՝ ***հող*** = հաստատատություն = խորանարդ (6 նիստ) սիմվոլը: Հագուստի վրայի քառանկյունիները խորանարդի նիստերի ձեւն է բնորոշում: Յոթերորդ նիզակը ծալված վիճակում է, ինչպես «Սասնա Ծռեր» էպոսում է նշվում՝ Քեռի Թորոսի վեցոտանի լազգի ձիու յոթերորդ ոտքը մրջյունները կերան: Այստեղ, մրջունները անդրաշխարհի սիմվոլն է:

«Սասնա Ծռեր» էպոսում Քեռի Թորոսը ***40 կտրիճ-փահլեվանների գլուխն է,*** եւ վարգում է ***վեց ոտանի նժույգ. ձիու յոթերորդ ոտքը մրջյունները կերել էին***: Էպոսում այս իմֆորմացիան քմահաճույքի կամ պատահականության արդյունք չէ. հնագույն հավատամքային կարգակարգերում աստվածներին վերաբերող թվերը (***ինչպես Բիայնական արձանագրության մեջ, աստվածներին զոհաբերվելիք կենդանիների թվաքանակը***) բնորոշում են հիերարխիայում նրանց կարգավիճակը: Քեռի Թորոսի մասին էպոսի իմֆորմացիան համապատասխանում է ուրարտական արձանագրության մեջ՝ Թեյշեբա աստվածությանը զոհաբերվող անասունների թվաքանակին (***6 ցուլ եւ 12 ոչխար՝ Թեյշեբային***), շումերական թվային համակարգերին եւ հնագույն թաքնագիտական (***մ.թ.ա. VII դդ. Պյութագորյան դպրոց***) ծավալներին: Նա համընդհանուր հնդեւրոպական՝ խուռիական, հիթթիթական, հայկական ***(Թորգոմ, - Մ. Խորենացի)*** աստվածություն է: «Մհերի Դռան» արձանագրությունն ասում է՝ Թեյշեբային զոհաբերել ***«6 ցուլ եւ 12 ոչխար»:***

Խորանարդը (Cub) համարվել է երկրորդ ծավալը. էլեմենտը՝***հող:*** Ունի 6 նիստ եւ 12 կողեզր, եւ յուրաքանչյուր նիստը 4 եզր ունի, քառակուսի է (***էպոսում՝ 40 փահլեւանների գլուխ: Թաքնագիտության մեջ, Պյութագորյան դպրոց, 40 > 4+0 = 4***):

Խորանարդը՝ «Խորանարդ < Խորան = «վրան, տաղավար», Սուրբ Գրքում փոխաբերաբար ասված է նաեւ երկնից կամար, արքունի դահլիճ եւ այլն, որ հայ մատենագրության մեջ հանդիպում է 5-րդ դարից: Ղ. Ալիշանը *(«Հին հավատ» էջ 343),* ***խորանարդը*** բխեցնում է՝ ***Խոր*** բառից: Karst-ը, («Յուշարձան» էջ 401),- բխեցնում է շումեր.՝ g'ar «երկինք, անդունդ» բառից» *(Հր. Աճառյան, «ՀԱԲ, հ. II, էջ՝ 406»):*

Խորանարդը, որ տիեզերքի մոդելն է համարվել, ունի 6 քառակուսի նիստեր, որոնցից յուրաքանչյուրը շումերական քառակուսու մակերեսն է, որ սրբազան չափ է՝ 1 IK = 60 x 60 = 3600 ***(լայնության եւ երկարության բազմապատիկը):*** Վեց այսպիսի նիստերի մակերեսների գումարը = 21600 է: Մեկ զերոյի կրճատումով այս թիվը դառնում է 12 աստեղատներից յուրաքանչյուրում 2160 տարի «երկրագնդի գտնվելը» եւ տիեզերական առաջընթացության օրենքի համաձայն, մեկ պտույտը՝ մեծ տարին 25920 տարի է՝ 2160 x 12:



Հնավայրերից գտնված Թեյշեբային ներկայացնող նշանները:
Ա. Մովսիսյանի «Հայկական Մեհենագրություն» գրքից է, Երեւան, 2003թ.

Ա. Դավթյանը ճիշտ է, երբ այսօրվա «Հերկուլես» կոչվող համաստեղությունը փաստում է որպես՝ Թեշուբի աստեղատուն*[1]: Ճիշտ է նաեւ, երբ TEŠ.UB-ը կարդում է որպես «տնսչություն աստծոյ»*[2]: ***Տեշուբ-Տնսուչ*** աստվածը, հրեական միաստվածության պարագայում, լուսնային իպոստասն է եւ նյութական տիեզերքի իշխան է: Ըստ Ագաթանգեղոսի, որ «հիմնավորում» է ինքն իրեն Հին Կտակարանի սաղմոսներից մեջբերումով*[3], նա պիտի կոչվի ***Տնսչությունն Աստծո*** : Այս աստվածությունը թաքնագիտության մեջ համարվում է նյութական տիեզերքի հյուսնը ***(նոր կտակարանում նա Յիսուսին տնսչություն անողն է, հայրացուն է, բայց ոչ հայրը: Յիսուսի երկնային հոր նշանը թռչուն-աղավնին էր («Կարապ»-ի համաստեղություն) : ՅԱՀ-վեն, I-II դդ.-ի քրիստոնյա գնոստիկների համար Դեմիրուգն է, այս աշխարհի իշխանը)***, որ երկիրնյութ խորհրդապաշտության իպոստասն է՝ ***լուսնի*** եւ ***ցուլի*** սիմվոլներով:

Բայց ինչո՞ւ է այս աստվածությունը կոչվում՝ ***տնսչություն անող:*** Հարցի պատասխանը տալիս է «Սասնա Ծռեր» էպոսը:

Տեշուբ-Թեշուբը «Սասնա Ծռեր» էպոսի Քեռի Թորոսն է, որ պիտի տնսչություն անի իր քրոջ երկվորյակ որդիներին, որոնք երկնային աստվածության որդիներն են նաեւ: ***Տնսչությունն Աստծո՝ Տեշուբ-Տնսուչ*** աստվածը, տնսչություն պիտի անի Սասնա չորս սերունդ դիցերին, որոնք պիտի «ձեւավորեն» արտաշխարհը, աստեղատները եւ տիեզերական համակարգը: Նա քեռի է, որ հայրություն է անում քրոջ որդիներին եւ թոռներին:

Հին հիթթիթական հասարակության մեջ քրոջ որդու հատուկ կարգավիճակը *[հասարակական դիրքը, - ավելացումը մերն է]* կարելի է տեսնել Հաթթուսիլիս 1-ինի (մ.թ.ա. 17-րդ դար) կտակում, որտեղ արքա-քեռին, քրոջ որդուն գահի ժառանգության իրավունք է տալիս եւ կոչ է անում ապագա թագավորներին, որ իրենց քրոջ որդիներին ապագայում չբարձրացնեն [գահակալության]: ***«Մորեղբայրը բացառիկ կարեւորություն եւ կարգավիճակ ուներ վաղնջական ժամանակների հնդեւրոպական տրադիցիաներում: Քեռու եւ քրոջ որդու հարաբերությունները ջերմ էին եւ մոտ»***[4]:

Փաստորեն, մինչեւ մ.թ.ա. 18-17-րդ դարերը, մայրական

---

*1,*2, *3,- Ա. Դավթյան, «Հայոց աստեղային դիցաբանություն», էջ՝ 31-34:
*4, – T. Gamkrelidze & V. Ivanov, “The Indo-European And The Indo-Europeans”, p. 675.



Խորանարդ՝
եռակողմ արտահայտված ծավալ (երկարություն, լայնություն բարձրություն), ունի 6 նիստ եւ 12 կողեզր:

կողմի պապը եւ քեռին «ապահովում» էին «քրոջ որդու»՝ «մայրական կողմի իրավունքով» գահակալությունը: Սա ուղղակի հնագույն հավատամքի, համակարգի՛ ազդեցությունն է վաղ հնդեւրոպական հասարակության կառուցվածքային հարաբերություններում:

Քեռի Թորոսը ***«կսկծու» մնռնում է,*** երբ «իմանում» է, որ Փոքր Միհրը փակվել է Ագռավաքարում: Այսինքն, 1> 8 հավատամքային համակարգում, երբ բարձրագույն Աստծո ՈԳՈՒ վերջին՝ ութեորդ արտահայտությունը, որ Փոքր Միհրն է, Քրիստոսն է*(երկրորդ գալուստ)*, Քրիշնան է, թաքնագիտության մեջ՝ Ադամ Կադմոնն է եւ այլն, փակվում կամ ***«փակում է»*** նյութական տիեզերքում իր ծավալային տրանսֆորմացիան, ապա ***տնսչություն անող նյութական տիեզերքի իպոստասին՝*** այս դեպքում, Քեռի Թորոս աստվածությանը ***«ոչինչ չի մնում անելու»:***

Տեշուբ-Թեշուբը՝ այսօրվա «Հերակլես» անունով համաստեղությունը, ունի քառանկյան ձեւ եւ գտնվում է «Կարապի» համաստեղությունից ձախ: Հնագույն տաճարների ճարտարապետությունը լինելով ըստ հավատամքային կարգականոնով տիեզերքի մոդել՝ լինի դա Միջագետքյան զիկկուրատ, եգիպտական բուրգ, թե հունա-հայկական հեթանոսական տաճար, մշտապես եռանկյունին խորանարդի վրա՝ ***երկինք*** եւ ***երկիր*** իմաստն է միտում, իսկ տաճարի մուտքի աջ ու ձախ կողմերում երկնակամարի գունդը ուսերին բռնած երկվորյակ կուպիդոնները սահմանում են սրբազան «վերին երկնքի» տարածքը: ***Եռանկյուն*** *(եր-կինք)* ***- խորանարդ****(երկիր)* սկզբունքն առկա է նաեւ քրիստոնեական եկեղեցաշինության մեջ:

Հուրրիական եւ հիթթիթական իրականության մեջ, Ալալուն «բարձրագույն» աստվածությունն էր, երկնքում կառավարում էր 9 դար, որից հետո Անուն, որ «ծառայում» էր նրան, մարտընչում է «գերագույնի» հետ ու վերցնում է «իշխանությունը»: Նորից 9 դար ***(գուցե՝ «Շար»..., աստեղաշրջանի մեկ լրիվ պտույտ ?)*** եւ այս անգամ Կումարբին է Անուին հաղթում-հեռացնում, բայց նրա ոտքը պոկելով ու կուլ տալով «հղի» է մնում ու ծնունդ է տալիս նոր աստվածությունների սերնդի՝ ամպրոպի աստված Թեշուբ, Արանցախ գետ*(Արածանի գետ)* եւ Թասմիսու:

Թեշուբը գլան վրա նռագլուխ գավազանը ձեռքին: Նրա առջեւում, ներքին օղակով էլիպսաձեւ նշանը, որ աչքի նման է, շումերական nēru 600 թիվն է, որ բնորոշում է 6 թվի հետ Թեշուբ աստծո աղերսանքը: Ուրարտական շրջան, մ. թ.ա. I հազարամյակ:
Նկարը՝ Ա. Մովսիսյանի «Հայկական Մեհենագրություն» գրքից է, Երեւան, 2003թ.

Փաստորեն, «իշխանափոխության» ինը դար ժամանակաշրջանը՝ որպես «անառարկելի պայման», անհրաժեշտ է եւ սրանք (հուրրիական այս աստվածները) շրջապտույտով դասավորված աստեղային կենդանակերպերն են, որ փոխանցում են «իշխանությունը» մեկը մյուսին: Որեւէ մեկի հաղթանակից հետո էլ «նախահայր աստվածները» ունեն իրենց պատվավոր տեղը «հաղթողի» աջ կողմում, որը ցուցում է կենդանակերպի շարժումը՝ ձախից աջ: *«Երբ ճաշի ժամը եկավ եւ արքան՝ Թեշուբը (Tessub) նստեց ուտելու, Ալլանին նախահայրը, աստվածների հետ միասին նստեց աջ կողմում Թեշուբի»*[1]:

Այն աստվածությունները, որոնք «մեկ անգամ», ըստ ժամանակային կարգավիճակի, արդեն կառավարել են տիեզերքը, ոչ թե ոչնչանում են, այլ «ուղարկվում» կամ «հեռանում» են անդրաշխարհ:

Ալալու→Անու→Կումարբի→Թեշուբ հերթափոխությունը, «ժամանակագրությամբ» ընդգծում է Թեշուբի 4-րդ տեղը: Առաջին երկուսը 9 դար «կառավարելուց» հետո են «զիջում» իրենց «գահը», սակայն, Կումարբին Անուի հետ կռվի բռնվելուց ու նրանից «հղիանալուց» հետո, միայն 9 ամիս (ծննդաբերության ժամանակաշրջան) է «կառավարում», որից հետո Թեշուբն է իշխանություն ստանում: Թեշուբը՝ ամպրոպի ու ռազմի աստվածություն է. հետաքրքրական է, որ բոլոր հնագույն պատումներում (միֆերում) ռազմի եւ ամպրոպի աստվածությունը միշտ երրորդ տեղի հետ է աղերսվում: Փաստորեն, Ալալու→Անու→Թեշուբ երրորդության մեջ, երեքն էլ արական աստվածություններ են: Թեշուբը երրորդն է՝ որպես արական սկիզբ-շարունակող, որովհետեւ Կումարբին «կին» դարձավ, ծննդաբերեց: Թեշուբը նաեւ չորրորդն է՝ ըստ հերթականության: Թե՛ Անուն, թե՛ Կումարբին՝ Ալալուից արտահայտված աստվածություններ են, որոնցից վերջինը «ծննդաբերեց», ինչպես Կումարբին է դժգոհում՝ «կին» դարձավ: Ահա մենք նորից հանդիպում ենք ամբողջի տրոհմանը՝ որպես երկու հակադարձ (արական եւ իգական) սկզբունքների արտահայտություններ (Անու-Կումարբի): Եվ չորրորդը, որը երրորդն է ըստ արական հիմքի՝ Թեշուբն է: Թեշուբի (Tessub) եւ նրա կին Հեբաթի (Hebat) որդու անունը Sarruma*(Շարրումա-Սարրումա)* է, որը նորից ՇԱՐ-

*1- H. A. Hoffner, jr. “Bibliotheca Mesopotamica”, v. 26, p. 193.





Հայկ-Հալդի-Գագա



Թեշուբ-Թեյշեբա-
- Քեռի Թորոս

ՍԱՐ-3600 տարվա եւ շրջան գաղափարի հետ է աղերսվում: Հավանական է նաեւ, որ Sarruma-ն Սանասար-Սարասար՝ հայկական «Սասնա Տուն» էպոսի գլխավոր հերոս-աստծո անվան տարբերակներից է:

Ալալու աստվածության անունը, որից սկիզբ են առնում մնացած բոլոր աստվածությունները*(ըստ հուրրիական հավատամքի)*, «տրոհվում-արտահայտվում» է որպես՝ ԱՆՈՒ (արական) եւ ԿՈՒՄ+ԱՐԲԻ (իգական) սկզբունքների, եւ Թեշուբը նրանցից սերված որդի-աստվածությունն է:

«Սասնա Տուն» էպոսի Քեռի Թորոսը, ընդհանուր հնդեւրոպական Թեշուբը եւ Ուրարտական Թեյշեբան՝ ցուլի սիմվոլով նույն աստվածությունն է: Ուրատական 6 ցուլ եւ 12 ոչխար զոհաբերման թիվը Թեյշեբային, նրա՝ խորանարդ ծավալի հետ աղերսանքը, հնագույն պատկերներում զենքի եւ հագուստի աղերսումը՝ 3 եւ 4 թվերի հետ, ցուլի սիմվոլը, որի վրա կանգնած է եւ այլն, փաստում են, որ ուրարտական Թեյշեբան եւ հնդեւրոպական համընդհանուր Թեշուբը՝ նո՛ւյն աստվածությունն է:

Այս աստվածությունն աղերսվում է հայկական լեռաշխարհի Տավրոսի *(հայկական Տավրոս)* լեռների հետ:

Ե՛վ հուրրիական, ե՛ւ հիթթիթական ե՛ւ ուրարտական պանթեոններում այս աստվածությունն ունի նույն բնութագիրը. նա ռազմի եւ փոթորկի աստվածություն է եւ նրա խորհրդապաշտական սիմվոլը ցուլն է՝ տավարը:

Թեշուբ-Թեյշեբա աստվածությունը, որ «Սասնա Ծռեր» էպոսում ներկայանում է Թորոս անունով, պատմահայր Մ. Խորենացու մոտ հիշատակվում է որպես Թորգոմի Տուն՝ որից սերել են հայերը *(Մ. Խորենացի, Ա, ե):*

«Հին Կտակարանում եբրայական բառի ընթերցված ձեւը՝ Thogarmā-է, բայց կա նաեւ հունարեն տարբերակը՝ Thorgamā ձեւը (որն ըստ իս ճիշտ ձեւն է,-Ա. Ա.): Հին Կտակարանում կա նաեւ Beith Thogarmā կոչված երկիրը հյուսիսում(Եզեկ. իէ, լը), նաեւ Tilgarimmu տեղանունը Մելիտինէում: Ս. Գրքի մեկնիչները «Տուն Թորգոմա» ասելով հասկացել են Հայաստանը»*[1]:

Մենք համակարծիք ենք Հ. Ներսիսյանի հետ*[2], որ պատմահայր Խորենացու ***Տորք Անգեղյան*** եւ ***Թեյշեբա -Թորգոմը*** նույն աստվածությունն է: Տորք անգղյան կամ անգղացի Տորքը, որի անունը նույնպես աղերսվում է երկրամարի հետ, աքքադական, ասորական, ուրարտա-

*1,- Հր, Աճառյան, «Հայոց անձնանունների բառարան», Երեւան, 1944թ., հ. Բ, էջ 343:
*2,- Հ. Ներսիսեան, «Հայ ժողովուրդի պետականության եւ պատմության ակունքներում», ԱՄՆ, 2002թ., էջ 71-75 :

կան, հիթթիթական սեպագիր սալիկներում հնչում է՝ ***Տուրքի, Տուրքիշ, Ուրուքիշ, Տուրուքու, Տարխում,*** ուրարտական սեպագրերում՝ ***Տարխի-Գամա (Թորգոմա Տուն)*** տարբերակներով*[1]:

Հայասա երկրի*(մ.թ.ա. II հազարամյակ)* գլխավոր աստվածություն Ներգալի ***անգղ*** սիմվոլը, որ նրա աստեղատունն է՝ այսօրվա Կարապի(Cygnus) համաստեղությունը, այստեղ դարձել է Տորք դիցի պատկանելիությունը բնորոշող «ազգանուն», նա անգղացի է: Այսինքն, սերում է բարձրագույն Անգղ-Ներգալից: Սակայն, թե ինչո՞ւ է Հայաստանը համարվում հե՛նց ***Թորգոմա Տուն,*** ինչո՞ւ է ***Թոր-Թորգոմն*** աղերսվում ***«ցուլ, տավար»*** սիմվոլի հետ եւ միաժամանակ սերում ***անգղ-արծիվ*** սիմվոլից եւ այլն, հարցերը պետք է ունենան իրենց լիարժեք հիմնավորված բացատրությունը:

Վերեւում բերված հարցերի պատասխաններն աղերսվում են աստղագիտական երեւույթների հետ: Հնագույն հավատամքը՝ ամբողջ դիցաբանությունը, սերտորեն աղերսվում էր երկնային մարմինների՝ աստեղատների շարժերի եւ փուլային պտույտների հետ: Թոր-Թեյշեբա-Թորգոմ աստեղատունը հյուսիսային բեւեռում այսօրվա «Հերկուլես» աստեղատան քառանկյունն է, արեւի ուղեծրում՝ «Ցուլի» համաստեղությունն է: Մոլորակներից՝ Յուպիտերն է:

Հայկական լեռնաշխարհի պանթեոններում *(հուրրիական, հիթթիթական, ուրարտական)* այս աստվածությունը սանդղակում գրավել է առաջին կամ երկրորդ տեղերը, նրա խորհրդաբանական սիմվոլը՝ «երկնային ցուլը», աղերսվել է՝ թե՛ շումերաբաբելական Էնլիլ աստվածության հետ, եւ թե Զեւսն է կոչվել «երկնային ցուլ» եւ այլն:

Մ.թ.ա. V հազարամյակում, գարնանային գիշերահավասարին, արեւը ելնում է «Ցուլի» համաստեղությունից եւ համարվելով սկսվող տարվա առավոտյան առաջինը բարձրացող աստեղատուն, որի մեջ ծիրում է արեգակը, ամբողջ աստեղային կենդանաշրջանի համար նա դառնում է առաջնորդող աստեղատուն՝ ***Տուն Թորգոմա:*** Հայկական լեռնաշխարհում այս դից-աստեղատան «համապատասխան տեղանքը» աղերսվում է իր իսկ խորհրդաբանական սիմվոլի՝ «տավար, ցուլի» հետ, որ հայկական Տավրոսի լեռներն են: «Անգղ-Կարապ» համաստեղությունը հնում համարվել է հյուսիսային համաստեղություն. սա գերագույն աստվածության աստեղատունն է եւ նրա խորհրդաբանական սիմվոլը թռչունների մեջ ամենաուժեղն է՝ ***անգղ-արծիվն*** է:

Այս աստվածության խորհրդաբանական սիմվոլի «Տավար» անունից է բխում՝ Տավրոսի լեռների անունը, ինչպես նաեւ «Ցուլ-TAURUS» համաստեղության անունը: Նախահնդեւրոպ. ձեւը՝ dĭpərо- «արջառ», լատին՝ taurus, հին

*1,- Հ. Ներսիսեան, «Հայ ժող. պետականութ. եւ պատմության ակունքներում», ԱՄՆ, էջ 71-75:

պրուս.՝ tauris, հին սլավ.՝ turu, հայեր.՝ ***տուար*** *(բնիկ հայկական բառ է)*[*1] եւ այլն:

«Սասնա Տուն» էպոսում Քեռի Թորոսի ֆունկցիաները՝

ա) Երկվորյակ՝ քույր-եղբայր առաջին զույգի արական կողմն է, Ծովինարի եղբայրն է,

բ) նյութական տիեզերքի իշխանն է,

գ) նյութական տիեզերքում, էպոսի չորս սերնդի աստվածություններին ***տեսչություն*** անելն է:

Քեռի Թորոսը կարծես ***հավերժական քեռի*** է, նա անմահ է՝ ***«սահմանափակումով»,*** որովհետեւ նյութական աշխարհի իշխանն է: Երբ Սասնա Տան վերջին դիցը՝ բարձրագույն Ոգու արտահայտություն՝ Փոքր Միհրը, որն իսկապես անմահ է, քանի-որ Փ. Միհրը ոգեղենի բարձրագույն իպոստասն է, փակվում է Ագռավաքարում*(Ագռավաքարի թաքնագիտական սիմվոլը՝բուն երկինք, հոգեւոր միջուկ-սֆերա)*, Քեռի Թորոսը լուրն իմանալով «կսկծու մեռնում է», քանի-որ այս աշխարհում նրա ֆունկցիան ***ոգեղենի*** համար ***«տուն»՝ «խորան»*** լինելն է եւ ոգեղենին ***տեսչություն*** անելն է, սակայն երբ այդ ոգեղենն ավարտում է՝ ***նյութական տրանսֆորմացիայի իր վերջին փուլը,*** քեռին՝ «նյութական աշխարհը», վերանում է: Վեդայական համակարգում, երբ Բրահմը կամ Վիշնուն քնած է, ապա նյութական տիեզերքը գոյություն չունի:

*1,- Հր. Աճառյան, «Հայերեն արմատական բառարան», 1979թ., Երեւան, հ. IV, էջ 424:

ԵՐԿՎՈՐՅԱԿՆԵՐ՝ ՍԱՆԱՍԱՐ եւ ԲԱՂԴԱՍԱՐ



Երկվորյակներ / ժայռապատկեր



Երկվորյակների երկրաչափական սիմվոլը՝ Օկտահեդրոնն է:
Ունի՝ 8 նիստ եւ 12 կողնգր:
Կազմված է չորս նիստանի երկու բուրգերից:
Էլեմենտը՝ օդ:
Արեւի ուղեծրում աղերսվում են «Երկվորյակներ» համաստեղության Կաստոր եւ Պոլուքս աստղերի հետ:
Երկվորյակները նաեւ աղերսվում են՝
Մեծ եւ Փոքր արջ(սայլի) համաստեղությունների հետ:



Արեւի եւ Լուսնի շավիղները, որպես կորագծեր:
«Սասնա Տուն» էպոսի երկվորյակ ծռերը՝ Սանասար եւ Բաղդասարը, աղերսվում են Արեւի եւ Լուսնի կորագիծ շավիղներին:

ԳԼՈՒԽ
ՎԵՑԵՐՈՐԴ

Ովքե՞ր են, ի վերջո, գաղտնատես հոր երկվորյակ որդիները

«***Աստվածային երկվորյակների մասին միֆական պատումը, որտեղ երկվորյակները գերագույն աստծո կամ արեւի աստծո որդիներն են, խորանում է մինչեւ նախահնդեւրոպական հնագույն ժամանակներ: Այս միֆական պատումը հայտնաբերվել է համարյա բոլոր հնդեւրոպական հնագույն հիմնական տրադիցիաներում, որտեղ ոչ միայն կրկնվում են միեւնույն մոտիվները, այլ նաեւ առկա է հերոսների անունների համատեղությունը, որը եւ հաստատում է այդ մոտիվների եւ պերսոնաժների բնույթը որպես՝ նախահընդեւրոպական»***[*1]:

Երկվորյակ աստվածությունները առկա են նաեւ հին եգիպտական եւ Միջագետքյան հավատամքային հավատամքներում:

Եգիպտական համակարգում տիեզերական առաջին հայրմայր զույգը որպես՝ ՇՈՒ եւ ԹԵՓՆԱՏ, իսկ ***երկվորյակները*** որպես գլխավոր ***ներթերու*** աստվածներ, որ միավորում են վերեւի եւ ներքեւի երկու սֆերաները, առկա են եգիպտական հավատամքային կարգականոնում դեռեւս հին թագավորության շրջանից*[2]:

Միջագետքյան հավատամքային կարգականոնում, ***երկվորյակները*** ներկայանում են որպես՝ ***Լահմու*** եւ ***Լահամուի*** դիցեր (LḪM եւ LAḪAMU), որոնց անունը աղերսվում է հուրրիերեն ***«լցնել»*** իմաստի հետ:

Հնագույն հավատամքային համակարգերում ***երկվորյակ*** աստվածությունների կուլտն այնքան վաղնջական է, որ թվում է թե հնարավոր չէ վերականգնել հնագույն պանթեոնների սանդղակներում նրանց տեղը եւ ֆունկցիաները, քանի-որ նրանց ֆունկցիաները հետագայում վերախմբագրմամբ «շնորհված» է տարբեր անուններով ներկայացող տարբեր աստվածությունների: Սակայն, «Սասնա Ծռեր» հայկական էպոսում «Երկվորյակների ճյուղը» լիովին ներկայացնում է նրանց «ինքնությունը» եւ աստղագիտական նշանակությունը:

Մայր աստվածուհին երկվորյակների՝ երկու ընձառյուծների հետ: Մ. թ. ա. VI հազ., հայկական լեռնաշխարհ, Զաթալ Հույուք հնավայր: Գտնվում է Դիարբեքիրին մոտ:

Նկարում *«Երկու կատվառյուծների մեջտեղում աստվածամայրը ծննդաբերման ընթացքում է: Նոր ծնվող երեխան նրա ոտքերի արանքում է» (Shrine in level II, 1, Çatal Höyük: 6000 B.C.). "Արձանիկի բարձրությունը 11.8 սմ. է":*
Marija Gimbutas, " The Language Of Goddess", USA, 2001, p. 107.

Գեղարդի տաճար: Երկնային Ցուլից հետո, Երկվորյակները՝ ընձառյուծների սիմվոլով, «նախագրծում» են տիեզերքի ձեւավորման երկրորդ փուլը:

Վերեւի եւ ներքեւի նկարները ցուցում են, որ հին հավատքի հետ առընչվող թաքնագիտական համակարգը, մ.թ.ա. VI հազ.-ից միչեւ միջնադար եղել է՝ անընդհատ:

---

*1,- T. Gamkrelidze & V. Ivanov, "The Indo-European And The Indo-Europeans", USA, 1995, p. 680:
*2, -Moustafa Gadalla, «Egyptian Cosmology», 2001, USA, p. 41.

Եգիպտական երկվորյակները



Միջագետքյան երկվորյակները՝ Լահմու եւ Լահմահու: Նկարը վերցված է՝ Oxford World's Classics «Myths from Mesopotamia», USA, 2000. A new translation by Stephanie Dalley.

Մինչեւ «Սասնա Տուն» հայկական էպոսի Սանասար եւ Բաղդասար երկվորյակ աստվածություններին անցնելը, մեկ անգամ եւս ընդգծենք հնագույն ժամանակների հավատամքային աշխարհճանաչողական մոտեցումները:

Հայկական էպոսի հիմքում առկա խորհրդապաշտական ներկայացումը՝ հին քրմերի աշխարհճանաչողությունն է: Ըստ հնագույն աշխարհճանաչողության կար երկու՝ ***հոգեւոր աշխարհ*** եւ դրա նյութական տրանսֆորմացիան՝ ***արտահայտված աշխարհը:*** Ըստ հների, գոյաբանական աշխարհի ծննունդը սկսվում է, երբ անդրաշխարհի գերագույն աստվածությունները փուլ առ փուլ «ձեւավորում» են արտաշխարհը՝ արտահայտվելով որպես ***երկինք, երկիր,*** նաեւ որպես երկնային ***աստեղատներ*** ու ***մոլորակներ:*** Եթե գերագույն աստվածությունը որպես ***արական*** եւ ***իգական*** երկվություն՝ ինքն իրեն է արտահայտում, ապա նրա ***երկվորյակ որդիները*** անցնելով անդրաշխարհ, պատերազմելով փախցնում են տիեզերական վերարտադրությունն ապահովող ոսկյա ձուն՝ մորը, էպոսում՝ Դեղձունին, ինչպես նաեւ անդրաշխարհում սպանելով մի շարք ոգիների, նրանց արտահայտում են արտաշխարհում՝ որպես աստեղատներ *(ըստ «Սասնա Ծռեր» էպոսի)*: Ըստ հնագույն աշխարհճանաչողության, ***արտաշխարհում*** մեռնելով, տվյալ անձը հայտնվում է ***անդրաշխարհում*** որպես ոգի: Անդրաշխարհում որեւէ ոգի սպանվելով, նյութական մարմնով արտահայտվում է ***արտաշխարհում****[1]**:*** Փաստորեն, հին քրմերի աշխարհընկալումը ներկայանում է որպես երկու իրականությունների՝ ***ոգիների թագավորության*** եւ ***նյութական արտահայտված աշխարհի*** միությամբ ամբողջություն: Եվ, ***անդր***աշխարհ - ***արտ***աշխարհ ***միդիատոր*** աստվածությունը, համակարգում որպես կանոն, միշտ ***յոթերորդ*** դիցն է: Օրինակ, եգիպտական համակարգում նա Օզիրիսն է, շումերականում՝ Դումուզին է, հունականում՝ Դիոնիսիուսը, հայկականում՝ Արա գեղեցիկը, «Սասնա Ծռեր» էպոսում՝ Դավիթը եւ այլն: Հնագույն աշխարհճանաչողական այս համակարգն ուներ իր ***կոսմիկական զուգահեռը:*** Օրինակ, նախնական տիեզերքը, որ ներկայանում է որպես պոտենցիալ ներունակություն, եգիպտական հա-

*1, - Ըստ այսօրվա գիտական աշխարհայացքի, լույսի աննյութ ***ալիքը*** ֆիկսելով՝ սպանելով, այն դառնում է ***մասնիկ:*** Հակադարձը՝ մասնիկների հավաքականությունների ***ուղղորդված ընթացքը*** դառնում է՝ ալիք:

մակարգում NUT-ն էր, հայկականում՝ Ծիր Կաթինը ներկայանում է որպես՝ Ծովինար, բաբելականում՝ Թիամաթ եւ այլն: Հնագույն հավատամքային պատումներում, գլխավոր աստվածություններն ունեն իրենց ***մոլորակներն ու աստղատները,*** որոնք երկրագնդի առանցքի տատանման՝ Precession-ի երեւույթով պայմանավորված, առնչվում են «երկնակամարի պտույտի» փուլային ժամանակների հետ:

Տիեզերական մեծ տարեշրջանը՝ 25920 տարի, սկսվում է, երբ երկնքում Մեծ եւ Փոքր Սայլի համաստեղությունները հյուսիսային բեւեռում դառնում են «իշխող» ***(կենտրոնը՝ Փոքր Արջի Polaris աստղը, պայծառությունը՝ Mag. 2.0):***

Ովքե՞ր են տիեզերքը ձեւավորող աստվածային այս երկվորյակները երկնքում: Նրանք՝ երկվորյակները, առկա են հնդեւրոպական եւ հնագույն միֆական համարյա բոլոր պատումներում եւ ունեն նույն խորհրդաբանական իմաստները:

Ծովինար նախամայրը՝ Կույսը, ***մեկ ու կես բուռ*** խմելով Կաթնաղբյուրից ***(անմեռության-հոր կենսահուրից)***, հղիանում եւ ծննդաբերում է երկվորյակներին:

«Սասնա Ծռեր» էպոսում, այս ***երկվորյակ աստվածությունների*** անունների ստուգաբանությունն ***ավելի քան խոսուն է:*** Ըստ «Սասնա Ծռեր» էպոսի, դիցական երկվորյակների անուններն են՝ Սանասար, Բաղդասար: Որոշ պատումներում Բաղդասարը հանդես է գալիս՝ Ադրա+մելիք, Ադնա+մելիք, Ասլի+մելիք, Աբա+մելիք անուններով: Բայց մինչեւ Բաղդասարին անդրադառնալը, փորձենք մեկնել Սանասար **(«մեծ» եղբոր)** անունը՝ ***Սանասար*** կամ ***Սարասար (Հին Կտակարանում՝ Շհարեզեր, Խորենացու մոտ՝ Սարասար):*** [*1] «Սասնա Ծռեր» էպոսի ***Սան-ա-սար > Սար-ա-սար*** -ը ոչ թե Հին Կտակարանից փոխառություն է, այլ շատ ավելի հին «միֆոլոգիայի» եւ իմաստների հետ է աղերսվում:

Սան-ա-Սար: **ՍԱՆ՝** «հոգի» իմաստով, V դարից ունենք ծիսական ազգակցության՝ ***սան, սանկից, սաննեբայր*** բառերը*[2], որ աղեսվում են ***հոգու*** եւ ***հոգեւորի*** հետ: ՀՆԻՍ՝ (հնդեւրոպ. նախալեզու) *anH- «շունչ, հոգի, արտաշնչում» **(սանսկրիտ՝ a´nila-h, հունարեն՝ a´nemos, գոթերեն՝ uz-anan, հին իսլանդ.՝ andi, լատիներեն՝ anima, հին իռլանդ.՝ ana´l եւ այլն, բոլորն էլ՝ «շունչ, հոգի» իմաստով)***[*3], հայերենում՝ ***ս*** -ի ավելացումով՝ ***ս+ան = ս+անի***՝ ստանում է ***«շունչ-հոգու»*** իմաստ *(օրինակ՝ սանակից = հոգեկից),* որ աղերսվում է նաեւ **արեւի** հետ: Հայերենում **«հոգի»** եւ **«արեւ»** բառերը, նաեւ իմաստների համարժեքության բնույթ ունեն՝ ***«արեւիդ մեռնեմ =***

---

*1,- «Հին Կտակարան», Դ թագավորաց, գլ. 19, տող 36-37:
«Եւ զՇարաշան ի տանէ Սարասարայ», Խորենացի, «Պատմություն», 1981թ. Երեւան, էջ՝ 130:
*2,- Գ. Վ. Հակոբյան, «Մկրտության ծեսի հետ կապված ազգակցական տերմինները հայերենում», Պատմա-Բանասիրական Հանդես, ՀՍՍՀ Գիտությունների Ակադեմիա, Երեւան, 1988, No. 3 (122), էջ 145-146:
*3, - T. Gamkrelidze & V. Ivanov, “The Indo-European & The Indo-Europeans”, p. 388, p. 793.



հոգուդ մեռնեմ»: Նման արտահայտություն դարձվածքները բազմաթիվ են հայերենում: Ուրարտական պանթեոնի՝ ^{D}Ši-u-ni «*արեւի աստված*»[*1], հիթթիթ.՝ šiu-, šiuna-«*աստված*», šiwatt- «*օր*», Ištanu- «*արեւի աստված*», ինչպես նաեւ ՀՆԻՍ՝ *s(a)wHel-/n-, որ հին անգլ.՝ sunne, անգլերեն՝ sun, գոթեր.՝ sunnō, հին գերմաներեն՝ sunna, գերմաներեն՝ Sonne, աղերսվում են **«արեւի»** հետ[*2]:

Սան-ա-Սար: **ՍԱՐ՝ «ժամանակշրջան»** *(ըստ «Հայկազյան բառարանի», նաեւ նշանակում է՝ **դար, ժամանակաշրջան**):*

Ըստ Հր. Աճառյանի,- ՍԱՐ > ՍԱՐԻ(Ք) > ԾՂԹԱ բնիկ հայկական բառեր են[*3], որոնց հիմքը **ՍԱՐ**-ն է: Մեր կարծիքով, ՍԱՐ > ՍԱՐԻ(Ք) > ԾՂԹԱ՝ նաեւ աղերսվում է **ՍԱՅԼ** համաստեղության հետ: Եվ, ըստ Հր. Աճառյանի,- ***«...Հունական ձեւերը փոքրասիական ծագում ունեն եւ համարվում են Փոյուգիական փոխառություն: Մեր բառը համապատասխանում է իր երկու նշանակություններով էլ. որովհետեւ հայերեն սայլ նշանակում է ոչ միայն եզան կոշտ կառքը, այլեւ նաեւ Մեծ եւ Փոքր Արջի համաստեղությունները»***[*4]***:***

Հայերենում ՍԱՐ – ԾՂԹԱ - ՍԱՐԻՔ աղերսվում են՝ «ժամանակի շրջանաձեւ պտույտի» հետ: Այսպես, [**Սան (ա)+ Սար**]-ը՝ հոգու ***(սան)*** օղակաձեւ շրջապտույտի մասին է: Մյուս կողմից, ասորական ՍԱՐ-ը (sar), բաբել.՝ šar, հունարեն՝ sáros, լատին՝ sarus-ը եւ հայկական ԾԱՐ-ը՝ ***3600 տարվա շրջան*** է նշանակում, եւ **շումերական ծագում** ունի:

ԾԱՐ-ը(šar) ներկայացնող սիմվոլը՝ «շրջանագծ» սիմվոլն էր (360^0), որ բացի 3600 տարվա ժամանակաշրջան ցուցելը, նաեւ օգտագործվում էր որպես՝ ***«քովանդակ ամբողջի»*** գաղափար[*5]: Սրան առնչվող մի շարք նախահնդեւրոպական ձեւեր նույն իմաստն են արտահայտում: Օրինակ՝ **SneH**[*6] «պտտվող թաս», **SaK'**[*7] *«սուրբ, սուրբ նշան, ծես»,* *SaKh- նշ. է՝ «սրբազան», «ծես», «ծիսակատարություն»[*8]: Եվ հայերենում՝ **ՍԱՐ + (ԻՔ)** նշանակում է՝ **«շղթա»:** Պատմահայր Մովսես Խորենացին իր աշխատության մեջ, առաջին թագավորների ժամանակագրությունը ԾԱՐ-երով է հաշվում:

Այժմ, ՍԱՆ Ա ՍԱՐ անունի մասին, որը մի դեպքում ***հոգու*** *(օղակած շղթա, շրջան)* շարժման ժամանակաշրջան է ցուցում, մյուս դեպքում կոնկրետ թիվ է՝ ՍԱՐ Ա ՍԱՐ = 3600 Ա 3600 եւ, ***(Ա -ն հնում նաեւ բազմապատկման իմաստով է օգտագործվել)***[*9]: Ուրեմն, ՍԱՐ Ա ՍԱՐ- ը կամ՝ 3600 x 3600 =12960000 թիվ է, որը վեդայական Հարի Բրահմայի օրվա*(12 ժամ, ցերեկ)* տեւողության մեծ փուլն է՝

* - Dick Teresi, "Lost Discoveries", USA, 2002, p. 47-49

*1, *2, -T. Gamkrelidze & V. Ivanov, "The Indo-European & The Indo-Europeans", p. 590, p. 511.
*3, *4, - Հր.Աճառյան, «Հայոց լեզվի պատմություն», h. I, 1940թ., Երեւան, էջ՝ 72:
*5, *6, - Հր.Աճառյան, «Հայոց լեզվի պատմություն», h. I, 1940թ., էջ 141, 199:
*7, *8, - T.Gamkrelidze & V. Ivanov, նույն աղբյուր, էջ 780, 705, 703:
*9, - Հր.Աճառյան, «Հայոց լեզվի պատմութ.», էջ 199: Շումերերեն սš «երեսուն» բառը ձեւավորված է՝ (**a`** ) «տասը» բազմապատ. eš «երեք»-ով,- (**a`**) x (eš) = uš = 10 x 30:

ոսկյա շրջանն է՝ **Սաթիա Յուգա,** երբ տիեզերքը սկսում է «տեսանելի արտահայտվել»**:** Սանասարի թիվը 100-ով կրճատելու դեպքում, ստանում ենք՝ 12960 տարվա մի ժամանակաշրջան, որը, երկրագնդի առանցքի տատանման՝ Precession-ի երեւույթով, «12 զոդիակներով անցնելու»՝ տիեզերական մեծ տարվա կեսն է՝ 25920 : 2 = 12960 տարի:

«Սասնա Ծռեր» էպոսի երկվորյակներին վերաբերող բոլոր պատում-ներում ընդգծվում է Ծովինարի մեկ ու կես բուռ ջուր խմելը: Էպոսում առկա այս կարեւոր ընդգծումը պետք է իր լուրջ հիմնավորումն ունենա: Եթե ընդունենք, որ Սանասարը տիեզերական հոգու *(ՍԱՆ = հոգի)* ամբողջ պտույտն է, եւ ***«բովան-դակի»*** գաղափարագիրը՝ ***շրջանաձևակն*** է, - ՍԱՐ = ՇԱՐ, ապա Սանասարը մեն-մենակ ներկայացնում է տիեզերական մեծ տարին՝ 25920 տարի, քանի-որ նա ***մեկ լիքը բուռ ջրի*** արդյունք է: Իսկ եղբայրը՝ Բաղդասարը՝ ***կես բուռ ջրի*** արդյունք լինելով՝ 25920 : 2 = 12960 տարի ներկայացնող է: Երկու եղբայրները միասին՝ 25920 + 12960 = 38880 տարի, ներկայացնում են երկրագնդի առանցքի ելակետային դիրքից մինչեւ նախկին դիրք՝ ամբողջական տատանման ժամանակաշրջանը, որ մոտավորապես՝ 38880 տարեփուլ է. ***Precession-ի երեւույթ*** *(տես՝ «Աստղագիտություն» բաժինը, էջ 76-115)**:***

Ըստ Ալֆրեդ Ջերեմիասի ուսումնասիրությունների*[1], շումերական զոդիակային խրոնոլոգիան սկսվում է ***Յուլի*** եւ ***Երկվորյակների*** մեջտեղում՝ որպես ***գերոյական կետ:*** Պրոֆեսոր Հ. Վ. Հիլփրիչթի ուսումնասիրությունները*[2], հազարավոր շումերաբաբելական սալիկների տարիների մանրակրկիտ քննությամբ, բացահայտորեն ցուցում են, որ շումերաբաբելական տիեզերաբանության մեջ ամեն ինչ հիմնավորված է 12960000 թվի վրա, որը **«ՍԱՐԱՍԱՐ-ՍԱՆԱՍԱՐ»** -ի թիվն է: Որ հները իմացել են Precession-ի (առաջընթացության) եւ մեծ տարվա (25920 տարի) մասին, անուրանալի է:

Զոդիակի շրջանակից քիչ դուրս, ***«Յուլ»*** եւ ***«Երկվորյակներ»*** համաստեղությունների միջեւ է գտնվում ***«Օրիոնի»*** համաստեղությունը: Հայկական հնագույն առասպելներում *(Մ. Խորենացի)* եւ ավանդապատումներում*[3], Վահագն աստվածությունն աղերսվում է ***«Օրիոն»*** համաստեղության հետ: Հնագույն ավանդապատումի համաձայն, ասորական նախահայր Բարշամից հայերի նախնին՝ Վահագնը հարդ է գողանում եւ, հարդը ճանապարհին թափվելով, ցուցում է վերջինիս անցած ճանապարհը ու կոչվում է «Հարդագողի ճանապարհ»*[4]: Հայկական այս պատումը համանման է եգիպտական «Թոթի գրքում» տեղ գտած՝ ***«Թոթ-Հերմեսի զրույցը կոսմիկական միտք՝ Պոիմանդրեսի հետ»****[5] թաքնա-

*1,- A. Jeremias, “Old Testament in the Light of the Ancient Near East”, 1911.
*2,- H. V. Hilprecht, “Reports of the Babylonian Expeditions”, 1914.
*3, *4, - Ա. Ղանալանյան, «Ավանդապատում», 1969թ., Երեւան:
*5,-Manlly P. Hall, «The Secret Teachings Of All Ages», 2000, USA, p. XXXVIII-XL.



գիտական խորհրդաբանությանը: Վահագնի՝ հարդագողի, ***ճանապարհը*** կոչվել է՝ Ծիր Կաթնի ***ուղի,*** իսկ ***հարդը***՝ որպես ***հոգիներ:*** Այսինքն, Վահագն աստվածը զոդիակների շղթայից փորձում է ազատել՝ «գողանալ» հայոց հոգիները, իսկ Բարշամը չի թողնում, պահապանն է:

Ըստ հնագույն աստղաբաշխության, տիեզերական կենդանակերպերի շղթան(զոդիակ), «Երկվորյակների» 15°-ից մինչեւ «աղեղնավորի» 15°-ը՝ կիսվում է ուղիղ գծով: Շրջանագծի աջակողմյան R-ը՝ շառավիղը, կոչվում է «գահավիժողներ» /Descendant/, իսկ ձախակողմյան R-ը՝ ներքեւից վեր «բարձրացողներ» կամ իշխողներ /Ascendant/: Այսինքն, տրամագծի մի ծայրը գտնվում է «Յուլի» եւ «երկվորյակների» արանքում, մյուսը՝ «Կարիճի» եւ «Աղեղնավորի» արանքում: Ըստ բաբելական եւ հունական դիցաբանական պատումների, «Օրիոնը»՝ Վահագն համաստեղությունը, կենսահուր է ուղարկում Ծիր Կաթնի կենտրոն՝ ***«Կարիճի»*** համաստեղություն *(որի մի պոչածայրն իրոք մոտ է Ծիր Կաթնի կենտրոնին)*, բայց «Աղեղնավորը», նետահարելով «Կարիճին», շեղում է «Օրիոնի» ուղարկած կենսահուրը դեպի «Կույս» համաստեղություն (*հնում, «Կարիճ» եւ «Կույս» համաստեղությունները համարվել են «Կշեռք» համաստեղության ձախակողմյան եւ աջակողմյան թասերը*[*1], *եւ այսօրվա երեք աստեղատները՝ կենտրոնում՝ «Կշեռք», ձախ եւ աջ թեւերում՝ «Կարիճ» եւ «Կույս», դիտվել է նաեւ որպես մեկ ֆունկցիա կատարող ամբողջություն*)[*2], որը հղիանում-ծննդաբերում է, եւ սկսվում է կենսահուրի շրջապտույտը զոդիակի շղթայի ներսում, ստեղծելով նյութականի եւ հոգեւորի միասնությունը՝ գոյաբանական աշխարհը:



Փաստորեն, [***Սանասար-Սարասարը***] տիեզերական կենսական հուր-հոգին է, որը եղբոր՝ **Բաղդասարի** հետ միասին, ներկայացնում է տիեզերական մեծ տարվա մեկ շրջափուլը. **Սանասար = 12960 տարի + Բաղդասար = 12960 տարի = 25920 տարի:** Մեկ աստեղատնով «ընթացքը»՝ 2160 տարի է, 12 աստեղատուն զոդիակներով անցումը՝ 12 x 2160 = 25920 տարի է: Իսկ եթե Սանասարը միայնակ ներկայացնում է տիեզերական մեկ շրջափուլը՝ մեծ տարին, որը 25920 տարի է, իսկ Բաղդասարը դրա կեսը՝ 12960 տարի, ապա նրանք երկուսով ներկայացնում են՝ 38800 տարի

*1- Giles Sparrow, "The Universe", 2001, USA, p. 137:
*2- H. P. Blavatsky, "Isis Unavailed", 1998, USA, p. 302:

ժամանակաշրջանը, որը 12 զոդիակների շղթայում երկրագնդի առանցքի տատանման ***մեկ եւ կես փուլի*** ընթացքն է, երբ այն «վերադառնում է» իր նախկին դիրքին: Մեկ լիքը բուռը՝ Սանասարը 25920 տարի եւ կես բուռը՝ Բաղդասարը 12960 տարի = 25920 : 2:

Միջնադարյան հայ մատենագրության մեջ ***«զույգ թվերը»*** կոչվել են՝ ***«դար»,*** իսկ ***«կենտ թվերը»*** կոչվել են՝ ***«կոճատ»:*** Զույգ թվերի՝ 2, 4, 6, 8... եւ կենտ թվերի՝ 1, 3, 5, 7..., միջոցով կազմվել են այնպիսի շարքեր, որտեղ հորիզոնական շարքում ստացվում էր թվաբանական պրոգրեսիա, իսկ ուղղաձիգ ուղությամբ՝ երկրաչափկան պրոգրեսիա:

Բաբելական կառույցում, երկու աստվածություններ՝ **ԱՆ-ՇԱՐ** -ը եւ **ԿԻ-ՇԱՐ** -ը՝ *«բովանդակ երկինք»* եւ *«բովանդակ երկիր»* նշանակությամբ, գալիս են հաստատելու նույն սկզբունքը: ԱՆ = «երկինք» + ՇԱՐ = 3600 = 360^0 = «բովանդակ, ամբողջ» եւ ԿԻ = երկիր» + ՇԱՐ = 3600 = 360^0 = «բովանդակ»:

Սակայն, հնագույն հավատամքային որեւէ պատում, որն աղերսվում է երկնքի եւ 12-36 աստեղատների հետ, պետք է ուներ իր նպատակային՝ գիտական իմաստը: Այստեղ գործ չունի ֆանտազիան կամ քմահաճույքը, քրմերն ըստ իրենց աշխարհանաչողության, փորձում էին հասկանալ գոյության գաղտնիքը, ինչպես այսօրվա մարդը: Ըստ գիտնականներ՝ Ալֆրեդ Զերեմիասի, Հ. Վ. Հիլփրիչթի, Զ. Մ. Զեկինսի եւ այլոց, հնագույն հավատամքային պատումներում, ներքին իմաստների շեշտը դրված է «գալակտիկայի կենտրոնը» գտնելու վրա: Եվ զոդիակների չորս կարդինալ կետերի հատման, խաչման տեղում, ըստ հների, գտնվում է «կենտրոնը»: Քանի-որ երկրագունդը պտտվում է իր առանցքի շուրջ եւ ստեղծում է երեւույթական այն պատկերացումը, թե երկինքն է անվերջ պտույտի ընթացքում, քրմերը, ժամանակի մեջ աստեղատների դիրքավորումների հաշվարկներով, բավականին ճշգրիտ, այդ ***կենտրոնը*** «տեղադրել» էին «Կարիճի» եւ «Աղեղնավորի» միջեւ: «Երկվորյակները» ***արեւի եւ լուսնի երկու շավիղ-ուղեծրերն են,*** որոնց հատման կետերը գտնվում են հենց «Երկվորյակներ» եւ «Կարիճ» աստղատներում, որ ինքնին՝ 12 զոդեակ-աստղատնի օղակաձեւ շղթայի «տրամագիծ-հատումն» է: Եւ ըստ «Սասնա Ծռեր» էպոսի, երկվորյակ դիցերը, գալակտիկայի ***եզրից՝ «Երկվորյակներ»*** աստղատուն, գնալով ***«Կարիճ-Աղեղնավոր» աստղատների միջնամաս՝*** «ֆիքսում» են գալակտիկայի ***կենտրոնը եւ*** այս տեղամասով անցնելով ***անդրաշխարհ՝*** քաջանց, ոգիների թագավորություն, փախցնում են արքայադուստր Դեղձունին: Փաստորեն, հանձինս երկվորյակների, հնագույն հավատամքը նախանշում է «ժամանակի» ծնունդը՝ հիմք ունենալով երկու իրար հակադարձ /Descendant/ եւ /Ascendant/ շավիղներով պտույտները:

Երկվորյակների անուններն էպոսում:

Բաղդասարը, որը, ըստ «Սասնա Ծռեր» էպոսի մի քանի պատումների, հանդես է գալիս որպես երկվորյակներից մեծը եւ ներկայանում է տարբեր անուններով՝ Ադրա+մելիք, Ադնա+մելիք, Ասի+մելիք, Աբա+մելիք, ներկայանում է նույն աստվածության երկրորդական՝ հատկանիշ ցուցող անուններով: ***Աբա***՝ նշանակում է «հայր», ***ԱԴ***՝ նշանակում է «մեկ», որ վեդայական՝ ԱԴԻ,- թիվ «մեկ»-ը ցուցողն է: Սա նույն սկանդինավյան ՕԴԻՆ գլխավոր աստվածությունն է, որ մի շարք լեզուներում, օր ռուսերենում, մինչեւ այժմ օգտագործվում է որպես «մեկ» թվի անուն՝ odin: Էպոսում «ԱԴՐԱ»-ն՝ «թիվ մեկ, առաջին» եւ «Մէլեք > մելիք»՝ «արքայազն», միանալով, դառնում է ԱԴՐԱՄԵԼԻՔ, որ արտահայտում է «առաջին իշխան» իմաստը:

«Սասնա» էպոսի պատումներից մի քանիսում Ադրա+մելիք անունը նաեւ ԱԲԱ-մելիք է,- ԱԲԱ > ԱՓՈԻ > ԱՓՈ = Մեծ Հայր + ՄԷԼԵՔ **(ՏԵՐ, արքայազն)**: Սանսկրիտ.՝ ԱԴԻ (Adi, Adya) «գլխավոր», «գերագույն տեր», շումեր.՝ Ad, At - «վիշապ», Adda-«հայր»*[1], հայերեն՝ ԱԴ, ԱԺԴ, ԱԴԷ > ԱԴԵՆ-ԱԴԻՆ > «դրախտ», ԱԴԵ՝ «մայր», ԱԴ > ԱԺ-(դահակ) > «վիշապ»*[2] եւ այլն:

ԱԴԱՐ-ը շումերական՝ AD, AT, ADDA, որ մի կողմից նշանակում է «Հայր» (նույն նշանագիրը նաեւ՝ «Մայր» իմաստն ունի), մյուս կողմից՝ AD, AT (-Adder) նշանակում է «վիշապ», «վիշապազուն»: Հնդեւրոպական լեզուներում՝ սանսկրիտ. – ADI, ADYA «գերագույն», «գլխավոր», հունարեն՝ ATTA «հայր», լատ.՝ ATA-vus «նախահայր»*[3]:

Եթե ԱԴՐԱ+ՄԷԼԵՔ անունը աղերսվում է ԱԴԱՐ-ի հետ, ապա ***Ադարը***՝ ուրարտական Adaruta, XII ամիսն է՝ «Ձկներ»: Սա հին տարբերակի՝ փոխված համակարգն է: Հին համակարգում սա՝ Մարտ ամիսն է, հեթանոսական նոր տարվա սկիզբը: Սասունցիք ԱԴԱՐ-ին (Մարտ ամիս), Մարտի լույս մեկի կեսգիշերին, տան ներսի պատերը փայտով ծեծում են, ասելով. ***«սաբաթը (փետրվար) դուրս, ադարը (մարտ) նիրս»՝ չարքերը դուրս վանելու համար»***[4]:

Մարտ ամիսը կենդանակերպի զերո աստիճանն է՝ հին նոր տարին: Մ.թ.ա. V-IV հազարամյակում, գարնանային գիշերահավասարին՝ Մարտ 21, արեւը ծագում է առաջինը բարձրացող ***Յուլ*** համաստեղությունից: Մ. թ. ա. II հազարամյակից սկսած, արեւը գարնանամուտին բարձրանում էր ***Խոյ*** համաստեղությունից: Մոտավորապես 2100 տարի առաջ, գարնանային գիշերահավասարին, առավոտյան, արեւը սկսեց բարձրանալ ***Ձկներ*** համաստեղությունից: Այսինքն, ամեն 2160 տարեփուլի անցումով, արեւը գարնանամուտի

---

*1,- L.A.Waddell, “Sumer-Aryan Dictionary”, London, 1927.
*2, - Ա. Սուքիասյան, «Հայոց լեզվի հոմանիշների բառարան», 1967թ.:
*3,- L.A.Waddell, “Sumer-Aryan Dictionary”, London, 1927.
*4,- Տես՝ Վ.Ա.Պետոյան, «Սասունի բարբառը», 1954թ., էջ 100:

գիշերահավասարին, վաղ առավոտյան սկսում է ծագել հաջորդ աստեղատնում, այն դարձնելով «առաջինը»:

Հայկական էպոսում երկվորյակներից մեկի այլընտրանքային՝ ***ԱՐ-Ա-մելիք*** < Apa-melik անունը կարող է աղերսվել նաեւ՝ «ջուր» իմաստի



Երկրագնդի առանցքի տատանումով էպայմանավորված կենդանակերպ աստղատներով արեւի «անցումը», այսօրվա աստղագիտության մեջ կոչվում է՝ *առաջընթացության երեւույթ* (Precession)*: Յուրաքանչյուր աստեղատան մեջ՝ մոտ 2160* տարի, իսկ 12 աստեղատներով անցումը՝ 25800-25920 տարի, կոչվում էր տիեզերական մեկ մեծ տարեշրջան:



Մ.թ.ա. V-IV հազարամյակներում, գարնանային գիշերահավասարին՝ Մարտ 18-21, առավոտյան արեւը ծագում էր ***Յուլ*** համաստեղության աստղախմբի մեջ: Մ.թ.ա. II հազարամյակից սկսած, արեւը գարնանամուտին բարձրանում էր ***Խոյ*** համաստեղությունից: Մոտավորապես 2100 տարի առաջ, գարնանային գիշերահավասարին, առավոտյան, արեւը սկսեց բարձրանալ ***Ձկներ*** համաստեղությունից:

հետ, համանման Միջագետքյան ԱՓ.ՍՈՒ անվանը, քանի-որ երկվորյակներն էպոսում բազմիցս ընդգծում են, որ իրենք ջրածին են. նախահնդեւրոպական ձեւում՝ ԱՓ (aþ) նշ. է՝ «ջուր», որ հայերենում աղերսվում է գետի՝ (գետ+ԱՓ) հետ: Մյուս կողմից, հայե-րենում՝**API, API, APO, APU** *(ԱՓԻ, ԱՊԻ, ԱՓՈ, ԱՓՈՒ),* բոլորն էլ՝ «հայր», «նահապետ», «պապ», «մեծ հայր» նշանակությունն ունեն, ինչպես նաեւ՝ ԱԴԵ՝ «մեծ մայր»*[1]:

Փաստորեն, Սանասար-Բաղդասարը, ըստ նրանց անունների ստուգաբանության՝ ներկայացնում են մեկ ամբողջություն, մեկ աստվածություն, որ ***ջրածին*** են, ***վիշապագուն*** են, ***մեծ դիցեր*** են (պանթեոնի գլխավոր եռյակում են), եւ նաեւ ***հայր*** են կոչվում, որովհետեւ «ժամանակը» նրանցով է սկսվում:

*1,- Ա. Սուքիասյան, «Հայոց լեզվի հոմանիշների բառարան», 1967թ.:

Գարեգին Սրվանձտյանի մատնանշած զուգահեռը՝ հայկական էպոսի «Սանասար եւ Բաղդասար» առաջին ճյուղի եւ Հին Կտակարանում առկա պատմության*[1] նմանությունները բացահայտ են *(որից թվում է, թե բխում են Մ. Խորենացու հիշատակումները):* Սակայն Ասորեստանի թագավոր Սիննահարիմի *(մ.թ.ա. 701-681թ.)*[*2] իր որդիներից՝ Ադրամէլեք եւ Սարասարից սպանվելու ու Հայաստան փախչելու Հին Կտակարանի պատմությունը կրոնական միստիցիզմի, եւ ոչ թե պատմական վերաբերմունքի արդյունք է, եւ նաեւ՝ խորհրդապաշտական նշանակություն ունի: Որ այս երկվորյակներն աստվածներ են, կա նաե՛ւ Հին Կտակարանում, որ մինչեւ այժմ չի նկատվել՝ ***«... Մենփարուիմի աստվածներ Ադրամէլեքի եւ Անամելէքի համար»***[*3] *(այս մասին մանրամասն տես՝ էջ՝ 84 -193):*

Երկվորյակներից Բաղդասարը, «Սասնա Ծռեր» էպոսի մի քանի պատումներում ներկայանում է տարբեր անուններով՝ Ադրա+մելիք, Ադնա+մելիք անուններով*(մելիք< մէլեք)*: Նախ, վերծանենք Ադրամէլեք անվան՝ ***մէլեք*** երկրորդ կենը, որը հնդեւրոպական բառ է:

Հնագույն ***Ադրա+մէլեք*** աստվածության անվան երկրորդ ***«մէլեք»*** բառը միջնադարում, ժողովրդական բանասացների կողմից հարմարեցվել-դարձել է ***մելիք***՝«իշխան» իմաստով: Սակայն հնդեւրոպական ծագումի հնագույն ***«մէլեք»*** բառը՝ ***մուգ կարմիր, ծիրանագույն, բոսորագույն,*** ինչպես նաեւ՝ ***սեւ, մուգ*** իմաստն ունի: Ըստ հնագույն հավատամքային պատումների, բոսորակարմիր ծովից*(Խորենացի՝ Ծիրանի ծովից)* են ծնվում առաջին աստվածությունները *(Ռիգ Վեդա՝ Agni, Խորենացի՝ Վահագն եւ այլն)*, եւ նրանք՝ բոսորակարմիր հուր-աստվածություններ են: «Սասնա» էպոսում Ծովինարը՝ ծիրանի ծովն է, Ծիրանի ծովից ծնված Վահագնը բոսորագույն աստվածություն է*[4]: ***mel-,** լատին՝ mulleus ***«կարմիր, ծիրանագույն, որ արքայական ծիրանի թիկնոցն է»,*** ռուսերեն՝ malina «մորենի»*[5]: Եվ հայերեն «ծիրանածայրը, ծիրանածագը»՝ վերաբերում է արեգակին, իսկ «ծիրանածինը»՝ ***արքայածին, արքայազն*** իմաստներն ունի*[6]: ***Մէլեք***-ը նաեւ ***«սեւ*** գույն» իմաստն ունի: Նախահնդեւ.՝ ***mel-** «մուգ», սանսկրիտ՝ maliná- «սեւ», հուններեն՝ mélās «սեւ», լատվիերեն՝ mẹĩns «սեւ», հին պրուսերեն՝ melne «մուգ կապույտ հետք»*[7], հայերեն՝ melan «սեւ գույն՝ թանաք»*[8] եւ այլն:

Հնդեւրոպական հնագույն տրադիցիաներում երկվորյակները ***երկնքի Աստծո*** որդիներն են, որ դուալիզմի սկզբունքով խորհրդանշում են՝ ***լույս*** ու ***մութը,***

---

*1,- «Հին Կտակարան», Դ թագավորաց. գլ. 19, 36-37, Ես. ԼԷ, 38:
*2,- Հր.Աճառյան, «Հայոց լեզվի պատմություն», 1940թ., Երեւան, h. I, էջ 200:
*3,- Հին Կտակարան, Թագավորաց Դ, գլ. 17, 31:
*4,- Մովսես Խորենացի, «Հայոց պատմություն», 1981թ., Երեւան, էջ 102-103:
*5, *7, -T. Gamkrelidze & V. Ivanov, “Indo-European & the Indo-Europeans”, p.685-686, p. 680:
*6, *8,- Ա. Սուքիասյան, «Հայոց լեզվի հոմանիշների բառարան», 1967թ., Երեւան, էջ 215:



Արեւի եւ Լուսնի շավիղներ:
Լուսնի հարավ. մակած→ ♍
Հյուսիսային. մակած→ ♋

գիշերն ու ***ցերեկը,*** ճերմակը եւ սեւը: Օրինակ, Ռիգ Վեդայում, Միթրա-Վարունա կամ Ինդրա-Ագնի եղբայրները ներկայանում են որպես՝ հակադարձ եւ իրար լրացնող ճերմակ եւ սեւ հերոս աստվածություններ: Պատահական չէ, որ «Սասնա Ծռեր» էպոսի մի շարք պատումներում Բաղդասարը հանդես է գալիս ***Ադնա+մէլեք*** անունով: Ի տարբերություն Սանասարի, որ ***արեւի ուղեծրի*** խորհրդաբանական, պատումային ներկայացումն է, Բաղդասարը ներկայացնում է՝ ***լուսնի ուղեծիրը:*** Էպոսի համարյա բոլոր պատումներում Սանասարը ներող է, մեծահոգի, իսկ Բաղդասարն աններում է: Էպոսի 7-րդ պատումում *(«Սասնա Ծռեր», h. Ա, պատում՝ Է, էջ 323),* ոգիների աշխարհում, լուսնի ուղեծիր Բաղդասա՛րն է, որ իր ճանապարհին հանդիպած ***աստեղատուն բնորոշող անձանց*** թրատում է եւ դրանով իսկ՝ ոգիների աշխարհից աստեղատները տրանսֆորմացիայի է ենթարկում դեպի նյութական արտաշխարհ: Քանի որ աստեղատներն ու աստղերը տեսանելի են գիշերային երկնքում, ապա դրանք ավելի շատ առնչվում են գիշերային երկնքի իպոստաս Բաղդասարի հետ:



Ջերալդո Ռնյշել-Դոլմոտով, «Ուղղը եւ միտրը Դենսանա շամանիզմում», 1981թ., էջ 88: Մարդկային ուղղ: Պատկերանկարը ըստ՝ Կոլումբիայի ամազոններում գտնվող Դենսանա ցեղի:

Նախահնդեւրոպական բոլոր տրադիցիաներում երկվորյակները, (ինչպես հայկական էպոսի Սանասարն ու Բաղդասարը), երկսեռ երկնքի՝ Դուաուսի, երկնային թագավորի որդիներն են*[1]: «Սասնա Ծռեր» էպոսում երկվորյակներից ***Ադնա + մէլեքի*** անվան երկրորդ՝ ***մէլե(ք) < mel-*** հիմքից բխող հայերեն՝ ***մելեմեմետ, մելետ*** բառերը նաեւ աղերսվում են հին հեթանոսական «տրնդեզ» տոնի հետ, որ քրիստոնեական եկեղեցու վերափոխած՝ ***«տերն ընդառաջ, Տյառն ընդառաջ»*** տոնն է*[2] եւ վերաբերում է Աստծո որդի Յիսուսին: Նույն դիրքը եւ իմաստներն ունի էպոսի Ադնամէլեքը: Բառանվան ***mel*** արմատը եւ **«մելետ, մելեմեմետ»-ը՝ *«Տերն ընդ առաջն է»,*** որ հեթանոսական տրնդեզն է: Երկվորյակները, հնդեւրոպական տրադիցիաներում, նյութական տիեզերքը ձեւավորող երկվորյակ աստվածություններն են, որ երկնային արքայի՝ գերագույն Աստծո «առաջնային որդիներ» են, եւ «Սասնա Ծռեր» էպոսում, ի սկզբանե ունեցել են՝ երկնային արքայազներ, իշխաններ «անուն-գաղափարը»: Հետագայում, միջնադարում, ժողովրդական բանասացի կողմից՝ ***Ադրա-մէլեք > Ադրա-***

*1, -T. Gamkrelidze & V.Ivanov, նույն աղբյուր, էջ 685-686, էջ 680:
*2, - Ա. Սուքիասյան, «Հայոց լեզվի հոմանիշների բառարան», 1967 թ.,Երեւան, էջ 446:

մելիք, մէլեք > մելիք անունը, «թեթեւ» աղավաղումով, ենթարկվել է արաբական փոփոխության՝ «իշխան» իմաստով: Էպոսում, **Մսրա *Մելիքը,*** որը նույնպես աղերսվում է «սեւ հերոս» գաղափարի հետ եւ լուսնի իպոստասն է՝ խորհրդանշելով գիշերային երկինքը, որ իր հնագույն տարբերակում՝ ***Մսրա+մէլեք,*** նույն ***մէլեք> մելիք,-*** փոփոխությունն է ունեցել: Եվ ըստ իս, էպոսում երկվորյակներից Բաղդասարի՝ Ադրամէլեք անունը եւ Սանասարի որդի Մեծ Մհերի հակառակորդ՝ Մսրա Մելիք > Մէլեք անունների կրկնությունները պատահական չեն: Մեծ Մսրա Մելիքը էպոսի հնագույն, չաղավաղված տարբերակում պետք է լինի Բաղդադ (Բաբելոն) տեղափոխված Բաղդասարի որդին: «Սասնա Ծռեր» էպոսի կառուցվածքային տրամաբանությունը, որ հնագույն հնդեւրոպացիների դուալիստական սկզբունքից է բխում, եւ ներկայացնում է երկու արյունակից երկնային թագավոր եղբայրների գլխավորությամբ հնագույն ***արեւապաշտների*** եւ ***լուսնապաշտների*** հիերարխիաները, ուղղակի փաստում է Բաղդասարի ալտերնատիվ՝ ***Ադրա+մէլեք*** անունի եւ ***Մսրա+Մէլեք*** անունի՝ «Սասնա» էպոսում ոչ պատահական կրկնվող ընդգծումները: ***Մեծ Մհերը*** եւ ***Մեծ Մսրա Մելիքը,*** հայկական էպոսում, իրենց արյունները խառնելով դառնում են եղբայրներ եւ դաշինք են կնքում: Իրականում, նրանք ***հորեղբոր որդիներ*** են, որ գլխավորում են ***արեւապաշտների*** եւ ***լուսապաշտների*** հիերարխիաները, ներկայանալով որպես՝ **արեւի** եւ ***լուսնի*** իպոստասներ: Էպոսում, Մեծ Մհերի եւ Մեծ Մսրա Մէլեքի դաշինքի բնույթը՝ ըստ որի նրանցից մեկի մահվան դեպքում, մյուսը պիտի ստանձնի մեռած եղբոր «աշխարհիկ հոգսերը» եւ տերունական պատասխանատվությունը, նույնպես պատահական չէ «Սասնա Ծռեր» էպոսում: Մ.թ.ա. II հազարամյակում, հնագույն հնդեւրոպացի հուրրիների կարգականոնի համաձայն, մահից հետո, սեփական կնոջը եւ գերդաստանի, տոհմի կամ թագավորության կառավարումը միայն արյունակից եղբորն էին վստահում եւ փոխանցում*[1]:

Երկվորյակներից Բաղդասարը՝ Ադրամէլեքը, գիշերային երկնքի իպոստասը կամ սեւ հերոս-աստվածությունը, ըստ «Սասնա Ծռեր» էպոսի, հաստատվում է Բաղդադում: Եվ նույնիսկ Սասնա տան վերջին աստվածություն Փոքր Մհերը Բաղդադում այցելում է իր ***պապի հորեղբոր*** Բաղդասարի գերեզմանին՝ «էրկրրպագություն էտու»*[2], եւ հարվածով իր ձեռքի հետքն է թողնում գերեզմանի քարին. Փոքր Մհերը նույնպես գիշերային երկնքի, լուսնի իպոստասն էր: Նրա մասին, որ Բաղդասարը Բաղդադի թագավոր է եղել, նշանակում է նրա՝ ***լուսնապաշտների*** կլանի գլուխ լինելը: Էպոսում այս մասին ընդգծում կա. Բաղդասարի գերեզմանը Բաղդադի թագավորական սենյակի դիմացն էր*[3]: Փաստորեն, Բաղդասարի ***Ադրամէլեք*** անունը «Սասնա Ծռեր» էպոսում հատուկ է եւ ընդգծում է

*1,- The Anchor Bible, Genesis, E. A. Speiser, 1962, Intr. XL, Gerar, “The Wife-Sister Motive in the Patriarchal Narrative, Bible And Other Studies”, 1963, p. 12-38:
*2, *3, - «Սասունցի Դավիթ», 1989թ., էջ 412:

նրա «սեւ հերոս աստվածություն» եւ «գիշերային երկնքի» իպոստաս լինելը:

Թե՛ Հին Կտակարանում օտար երկիր Սեփարուիմի աստված Ադնամելեքի, թե՛ «Սասնա Ծռեր» էպոսի երկվորյակներից Ադնամելէքի անվան մեջ՝ ***մէլեք > «սեւ գույն»*** ընդգծելը, արդեն ասվեց, որ վերաբերում է այս աստվածության ***գիշերային երկնքի*** իպոստաս լինելուն: Եվ, երկնքի գերագույն աստվածության այս սեւ ու ճերմակ երկվորյակ աստվածությունները պատկանում են ընդհանուր հնդեւրոպական դուալիզմի սկզբունքով տրադիցիային եւ հնդեւրոպական «ծագում» ունեն: Այս առումով, նույնիսկ սեմիտական «ծանր ազդեցությամբ» գրված Հին Կտակարանն է «խոստովանում»: Հին Կտակարանում (Թվոց 24, 19-20) գրված է՝

«Հակոբը պիտի ոչնչացնի նրանց: Վերջին փրկվածին ԱՐ-ից նա պիտի ոչնչացվի»: «Առաջինը բոլոր ազգերի մեջ Ամալէքն է (Ամալէկ = Ամաղեք), բայց նրա վերջը կորստյան է տրված»:

Հին Կտակարանի հայերեն թարգմանություններն աղավաղված են (գուցե դիտավորությամբ, չգիտեմ), անգլերեն այսպես է՝ **«Jakob shall trample them down, The last survivor from AR shall he destroy. First of the nations was Amalek»** եւ այլն*[1]:

Ըստ հին Կտակարանի, իրենց համար օտար ***Ադրամէլեք եւ Անամելէք*** աստվածությունների՝ ***Անա + մելէք*** անունը եւ ***Ամալեկ = Ա + մալեկ = Ամաղեկ*** ազգության անունը վերաբերում է ԱՐ-ի ժողովրդին եւ երկրին: Հին Կտակարանում՝ ***Սեփարուիմ երկիրը եւ նրա աստվածներ Ադրամէլեքն ու Անամելէքը*** ներկայացված է որպես թշնամի երկիր եւ ժողովուրդ*[2]: Սեփարուիմը *(u >2 անցում, Սեպարուիմ < Շուպրիա),* ըստ իս, հնագույն Արմե-Շուպրիա՝ Հայկական լեռնաշխարհի հարավում, պետական միավորման անունն է *(մ.թ.ա. II հազար. երկրորդ կես):*

Վերադառնալով «Սասնա Ծռեր» էպոսում երկվորյակներից՝ Ադնամէլեք = Ադրամէլեք աստվածության անվան առաջին մասի՝ ***Ադնա, Ադրա*** վերլուծումներին, պարզվում է, որ հայկական էպոսի այս աստվածությունը Հայկական լեռնաշխարհից արիացիների կողմից Հնդկաստանի Կաշմիրի տարածք ներմուծված հնագույն Ռիգ Վեդայի ***Ինդրա*** աստվածությունն է:

Խորենացու մոտ, Աժդահակի հակառակորդ Տիգրանը պատմական անձ Տիգրանի հետ որեւէ կապ չունի: Սա միֆական մի կերպար է, որ ըստ Խորենացու, միակն է հայկազունիներից, որ սպանեց Աժդահակին եւ գերի տարավ նրա տունը եւ Անույշին՝ վիշապների մորը*[3]: Թե ինչո՞ւ է Խորենացին ***Աժդահակ-վիշապին*** հաղթող հայ հնագույն աստվածության անունը հատկապես Տիգրան անունով «կնքել», ունի իր բացատրությունը: Նախ, այս հնագույն ***նախա***հնդեւրոպական հավատամքային պատումի իրանական տարբերակում, վիշապը՝ Aži Dahāka-,

*1,- «Ս. Գ.»-ում տեղ գտած թշնամական այս մոտեցման մասին հայտնեց Սեդա Ջերեանը:
*2,- Հին Կտակարան, Թագավորաց Դ, գլ. 17, 31:
*3,- «Մովսես Խորենացի, «Հայոց պատմություն», 1981թ., Երեւան, էջ 103:

սպանվում է հերոս-աստված՝ Thraētaona-ի կողմից*(իրանական, Ավեստա)*[1], իսկ հնդ-վեդայական տարբերակում՝ Viśivarūpa հրեշը սպանվում է՝ Trita Āptya-ի կողմից*(հնդկական, վեդայական)*[2]: Սա նույն հնդեւրոպական հնագույն պատումի երկու տարբերակներն են: Ե՛ւ «Ավեստայի» վիշապը, ե՛ւ «Ռիգ Վեդայի» վիշապը ունեն ֆիզիկական միեւնույն բնութագրումները՝ երեք գլուխ, վեց աչք: Սրա հայկական տարբերակը Խորենացու՝ «Տիգրան եւ Աժդահակ» տարբերակն է: Պատմահայրը զուգահեռ տանելով Արամազդի եւ Տիգրանի միջեւ, հասկացնում է, որ ինքը գլխավոր դիցի մասին է պատմում, բայց տալիս է պատումի հնագույն հայկակա՛ն տարբերակը: Հերոս դիցի՝ Thraētaona եւ Trita անվան հայկական տարբերակ ***Տիգրան*** անունը՝ ԴԻ(ք) + ՐԱՆ = ԴԻ> դից + ՐԱՆ, իմաստավորված ստուգաբանվում է որպես՝ ***«դիցարան»*** *(Խորենացու մոտ այս առասպելական Տիգրանը եւ պատմական արքա Տիգրանը տարբեր են: Մինչեւ հիմա էլ արեւմտահայերը Տիգրան անունը ե՛ւ արտասանում ե՛ւ գրում են՝ Դիքրան, դ>տ եւ գ<ք, բաղաձայնների անցում):*

«Ռիգ Վեդայի» Trita Āptya հերոսը, որ հայկական Տիգրանի զուգահեռն է, հնագույն վեդայական ***Ինդրա*** աստվածության հետագա տարբերակն է*[3]: Նրա նախատիպը՝ ***Ինդրա*** աստվածությունն է, որի երկվորյակ եղբայրը Ռիգ Վեդայի տարբերակներում Ագնի աստվածությունն է*[4]: Թե ինչո՞ւ է նույն պատումը տարբեր ժամանակներում տարբեր անուններով ներկայանում «Ռիգ Վեդայում», մասնագետները բացատրում են նրանով, որ արիացիների միգրացիաները դեպի Հնդկաստան, իրարից դարերի հեռավորությամբ, եղել է ոչ թե մեկ այլ մի քանի անգամ*[5]: Ուրեմն, Տիգրանի հակառակորդ Աժդահակին՝ հնագույն տարբերակում, վեց աչք, երեք գլուխ ունեցող վիշապին սպանում է ***Ինդրան:*** Ինդրայի անունը «Ավեստայում» նշվում է երկու անգամ եւ այն էլ՝ **Añdra** հնչողությամբ*[6]**:** Հայկական «Սասնա Ծռեր» էպոսի մի շարք պատումներում Սանասարի եղբայր Բաղդասարի անունն է՝ ***Անդրամելեք:*** Ուրեմն, պատմահայր Մոսես Խորենացին խոսում է «Սասնա Ծռեր» էպոսի ***երկվորյակների*** մասին: Նույն անունով, երկվորյակ աստվածների մասին խոսվում է նաե՛ւ Հին Կտակարանում՝ ***«Մեփարուիմի աստվածներ Ադրամելեքի եւ Անամելէքի համար»***[7]**,** որտեղ Սեփարուիմին ներկայացվում է օտար երկիր եւ ժողովուրդ: «Ռիգ Վեդայի» լավագույն մասնագետներից Հիլեբրանդթը՝ ի տարբերություն այն մասնագետների, որ ***Ինդրային*** համարում են ամպրոպի աստվածություն, գտնում է, որ Ինդրան հնագույն արեւի աստվածությունն է*[8]: Boghaz-Koi ցուցակում, ***Ինդրան*** հիշատակ-

*1,- Avesta, Yt. 14. 38, 40.
*2,- RV, 2.11.19.
*3, *4, - H. D. Griswold, «The Religion Of The Rigveda», Delhi, 1999, p. 298.
*5,-Նույն աղբյուր, էջ 86:
*6,-Նույն աղբյուր, էջ 177, Vend. X. 9, XIX. 43.
*7, - Հին Կտակարան, Թագավորաց Դ, գլ. 17, 31:
*8,-H. D. Griswold, «The Religion Of The Rigveda», 1999, Delhi, p.178.

վում է որպես ԻՆ-ԴԱՐ (In - dar), Միթրայի, Վարունայի, Նասայայի հետ միասին (մ.թ.ա. 14-րդ դար)*[1]:

Ինդրա աստվածության՝ IN-DAR կամ **Añdra** անունը մինչեւ այժմ սխալ է ստուգաբանված եւ պատճառը կարծում եմ այն է, որ այս աստվածության «ինքնությունը» լիարժեք չի բացահայտված, քանի-որ ***Ռիգ Վեդան*** եւ ***Ավեստան*** տարբեր ժամանակաշրջաններում ներմուծած եւ ավելի ուշ շրջանում մեկ վերնագրի տակ խմբագրված հավաքականություններ են: Ինդրան երկնային դից է ու նրա հնագույն զուգահեռը նաեւ բաբելական Անշարն է՝ ԱՆ = «երկինք», ՇԱՐ = «օղակաձեւ ամբողջ», որ աղերսվում է շումերաբաբելական 3600 թվի եւ «շրջանաօղակ» սիմվոլի հետ: INDAR անվան DAR-ը՝ հայերենում ե՛ւ նշանակում է «ժամանակաշրջան», ե՛ւ «բարձրավադակ, լեռ»*[2], որ լիովին համատեղվում է «Ռիգ Վեդայում» Ինդրայի երկնային դից լինելու, երկնային կառք վարողի եւ Մերու լեռան դից լինելու հետ*[3]:

Համանման «Սասնա Ծռեր» հայկական էպոսի Սանասարին, «Ռիգ Վեդայում», Ինդրա դիցը՝ ***«աղերսվում է արեւի հետ, նա կարմիր կամ ոսկեգույն աստվածություն է, երկնքի եւ երկրի որդին է, որ <u>հավիտյան իրարից անջատում է երկինքն ու երկիրը</u>, վարում է երկնային կառքը, ապրում է Մերու լեռան գագաթին, նրա աջ ձեռքին լույս-կայծակ զենքն է, սպանելով վիշապ Վրիթրային նա ձեւավորում է նախաստեղծ քաոսը, ազատագրում է ջրերի հորդումը, տիեզերքում վերակերտում եւ հաստատում է նոր կյանք եւ նոր համակարգ, եւ արեգակի ծագման պատճառն է դառնում»***[4]:

Հնդեւրոպական երկվորյակները, որոնք գալիս են նախահնդեւրոպական ժամանակներից ու տարածում են գտել թե՛ Միջագետքում, թե՛ արեւմուտքում թե՛ հնդ-իրանական հավատամքային պատումներում, իրենց «ինքնության» լիարժեք բացահայտումը ներկայացնում են «Սասնա Ծռեր» էպոսում եւ պատմահայր Մովսես Խորենացու «Տիգրան եւ Աժդահակ» միֆոլոգիայում:

Պատմահայր Խորենացին զուգահեռ տանելով **Արամազդի** եւ **Տիգրանի** միջեւ, հասկացնում է, որ ինքը գերագույն դիցի մասին է պատմում,- ***«Բայց դիցաբանական տեսակետից եւս ճշմարիտ է մեր ասածը: Չկա ոչ մի Արամազդ, բայց միայն նրանց համար որոնք կամենում են, որ Արամազդ լինի. եւ այսպես կոչված չորս Արամազդներից մեկն է միայն՝ Կունդ Արամազդը: Այսպես նաեւ շատերը կան Տիգրան անունով, բայց սա մեկ եւ միակն է Հայկազունիներից, որ Աժդահակին սպանեց եւ գերի տարավ նրա տունը եւ Անույշին, վիշապների մորը»***[5]: Փաստորեն, Արամազդը առասպելական Տիգրանի զուգահեռն է:

---

*1, - H. D. Griswold, «The Religion Of The Rigveda», 1999, Delhi, p.178,
*2, - Ա. Սուքիասյան, «Հայոց լեզվի հոմանիշների բառարան», 1967թ., էջ 163:
*3, *4,- Rachel Storm, «Indian Mythology», USA, 2000, p. 44.
*5,- Մ. Խորենացի, «Հայոց Պատմություն», 1981թ., էջ 101-103:

Իրանական Ահուրամազդան, ինչպես հայկական էպոսի Սանասարը, ունի եղբայր, որ նրա հակոտնյան է՝ Արիիմանը: Զրվանիզմում, Ահուրամազդան եւ Արիիմանը եղբայրներ են, «ժամանակի աստվածություն» Զրվանի որդիներն են, որ ***սկզբնական շրջանում,*** չեն ներկայանում որպես թշնամի հակառակորդներ: «Սասնա Ծռեր» էպոսում երկվորյակները սպանում են իրենց հայրացու(ոչ թե հայր) Սեննեքերիմին: Հունական դիցաբանության մեջ՝ Զեւս-Արամազդը, որն ինչպես «Ռիգ Վեդայի» Մերու լեռան Ինդրան է, Զեւսի դեպքում լեռը՝ Օլիմպոսն է, սպանում է իր հորը՝ «ժամանակի աստվածություն» Քրոնոսին: Թե՛ Ինդրան, թե՛ առասպելական Տիգրանը, թե՛ Սանասարը սպանում են ***Վրիթրա-Աժդահակ*** վիշապին:

Փաստորեն, համընդհանուր հնդեւրոպական մայր միֆը կրկնվում է արեւմուտքից արեւելք՝ նո՛յն սյուժետով, սակայն հայկական էպոսում եւ պատմահայր Մովսես Խորենացու մոտ է միայն տրված այս սյուժետի աստղագիտական ներկայացումը, որտեղ պարզվում են թե՛ թշնամի ***վիշապի աստեղատունը*** եւ թե՛ երկվորյակների ***արեւի եւ լուսնի շավիղներ*** լինելը:

«Սասնա Ծռեր» էպոսի երկվորյակները՝ ***արեւի եւ լուսնի էլիպսաձեւ ուղեծրերն են,*** որ իրար հետ հատվում են ***լուսնի հյուսիսային մակաձում***՝ «Երկվորյակներ» համաստեղությունում եւ ***հարավային մակաձում***՝ «Կարիճ» համաստեղության մոտ գտնվող ***Աղեղնավորի*** 3^0-ում:

Մ. Խորենացին վիշապ Աժդահակին նույնացնում է Կենտավրոս Պյուռիդայի հետ, որն ըստ հին հույների՝ այսօրվա «Աղեղնավորի» համաստեղությունն է*[1]: ***Վիշապ Աժդահակի*** աստեղատան տեղադրությունը ճշտում է «Սասնա Ծռեր» էպոսը: Սանասարը եւ Բաղդասարը, որոնք արեւի եւ լուսնի արահետներն են, արքայադուստր Քառասուն Ճյուղ Դեղձուն Ծամին հասնելու համար գնում են քաջքերի՝ ոգիների թագավորություն, որ նաեւ կոչվում է՝ ***Օձի*** քաղաք: ***Օձի*** համաստեղությունը գտնվում է «Աղեղնավոր» եւ «Կարիճ» համաստեղությունների միջեւ, քիչ վեր, աստեղատունն է՝ հին հույների «Օձակիրը», որի այսօրվա անունը՝ ***Ophiucus*** է: Փաստորեն, Գալակտիկայի կենտրոնն իսկապես գտնվում է այս երեք՝ «Կարիճ», «Օձ-Ophiucus» եւ «Աղեղնավոր» համաստեղությունների միջնամասում:

«Երկվորյակների» համաստեղությունը «Աղեղնավոր-Կենտավրոսից» հեռու է վեց ամիս եւ վեց աստեղատուն: «Երկվորյակների» համաստեղությունում գտնվում ***արեւի եւ լուսնի ուղեծրերի հատման կետը,*** որ լուսնի ***հյուսիսային*** մակաձն է: Այստեղից սկսելով իրենց ընթացքը, ***արեւի արահետ*** Աղնա+

*1,- «Բյուրասպի իսկական անունը ճանաչում եմ Կենտավրոս Պյուռիդա», Մ. Խորենացի, «Պատմություն», 1981թ., Երեւան, էջ 109: Ըստ հին հույների, Կենտավրոսի համաստեղությունը այսօրվա «Աղեղնավորն» է, տես Giles Sparrow, «The Universe», 2001, USA, p.137.



Արեւի եւ Լուսնի շավիղներ:
Լուսնի հարավ. մակած→ ♍
Հյուսիսային. մակած→♋

մելէքը*(Սանասարը)* > Ինդրա > Անդրա, Նոյեմբեր 21-ին (մ.թ.ա. III-II հազ.) մտնելով իր ճանապարհին գտնվող ***«Աղեղնավոր-Կենտավրոս»*** համաստեղություն, որ արեւի եւ լուսնի արահետների ***հարավային հատման տեղամասն է,*** թրատում է վիշապ Աժդահակին:

«Ռիգ Վեդայի» ամենեահայտնի մասնագետներ համարվող՝ Օլդենբերգը եւ Հիլլիբրանտը, «Ռիգ Վեդայում» Ինդրայի եւ վիշապ Վրիթրայի *(վեդիկ Աժդահակ)* ֆունկցիաները ուսումնասիրելով գալիս են մի եզրակացության, ըստ որի՝ Ինդրան ներկայացնում է ***ամառային,*** իսկ վիշապ Վրիթրան ***ձմեռային*** եղանակների կլիմայական փոփոխությունները*[1]: Եղանակների փոփոխության հետ կապված Ինդրայի եւ վիշապ Վրիթրայի ֆունկցիաները ճիշտ է նկատվել «Ռիգ Վեդան» ուսումնասիրող այս երկու գիտնականների կողմից, սակայն, թե Հնդկաստանում ե՞րբ է սկսվում ցուրտ եղանակների սկիզբը եւ այդ ժամանակ արդյո՞ք երկնակամարում հայտնվում է՝ տեսանելի է «Ռիգ Վեդայի» վիշապ՝ Վրիթրայի համաստեղությունը, այս հեղինակների հոգը չէ: Եվ հավանաբար, սույն հեղինակները չգիտեն, որ միայն երկրագնդի՝ **33⁰, - 44⁰** տարածքից է, որ ցուրտ եղանակների սկսելու հետ միաժամանակ, երկնակամարում հայտնվում է Կենտավրոս Պյուռիդա վիշապի համաստեղությունը *(թե՛ «Օձակիրը», թե՛ «Աղեղնավորը» եւ թե՛ այսօրվա «Կենտավրոս»-ը, երկնակամարում հայտնվում են ուշ աշնանը):*



Բյուրասպն Աժդահակի՝ ***Կենտավրոս Պյուռիդա*** աստղատունը*[2], Խորենացին աղերսում է «Քիմյուռոն գոտու»*[3] հետ: «Քիմյուռոն գոտին», ըստ 7-րդ դարի մատենագիր Ա. Շիրակացու, «Քիմեռական գոտին»*[4] է, որ կոչվում է «ցրտերի համաստեղություն»: Ուրարտական համակարգում այն համապատասխանում է ***«Կենտավրոս Պարխարի»*** հետ*[5] եւ հայկական ***Տրե՝ Աղեղնավոր*** ամսով է սկսվում ցրտերի շրջանը Հայկական լեռնաշխարհում:



Փաստորեն, Խորենացու առասպելական ***Տիգրանը՝*** հայկական էպոսում «Երկվորյակներից» ***Սանասարն*** է, եւ նրա հակա-

*1,- Oldberg, RV. 51, n. 1; Hillebrandt, VM. III, 195-197, see: H. D. Griswold «The Religion Of The Rigveda», 1999, Delhi, p.181.
*2,*3, - Մ. Խորենացի, «Պատմություն», 1981թ., Երեւան, էջ 99, 109:
*4,- Ա. Շիրակացի, «Հայ մատենագիրներ», 1979թ., Երեւան, էջ 116-119, ծանոթագրություն էջ 343:
*5, - Ա. Դավթյան, «Հայոց աստղային դիցաբանություն», 2004թ., Երեւան, էջ՝ 150-153:

ռակորդ Աժդահակը՝ Կենտավրոս Պյուռիդան, այսօրվա «Աղեղնավոր» համաստեղությունն է: Հայկի աստեղատունը «Անգղի» համաստեղությունն է, իսկ նրա հակառակորդը՝ Բելը որպես «ժամանակի» աստված Քրոնոս, աղեսվում է ***Հուշկապարիկի՝ հյուսիսային բեւեռի Դրակոնիս համաստեղության հետ:*** Թե



վերջապես՝ ***ո՞վ է*** վիշապ Աժդահակին (նույն ինքը՝ Aži Dahāka = Viśivarūpa = Vritra) հաղթող Տիգրանը, որը նո՛ւյն Thraētaona-ն է*(իրանական, Ավեստա)*[*1], նույն Trita Āptya-ն է*(հնդկական, վեդայական)* [*2], նույն ***Ինդրան*** է, նո՛ւյն «Սասնա Ծռեր» էպոսի

*1,- Avesta, Yt. 14. 38, 40.
*2,- RV, 2.11.19.



Լուսնի հյուսիսային մակածը գտնվում է «Երկվորյակների» համաստեղությունում, իսկ հարավային մակածը գտնվում է՝ «Կարիճի» եւ «Աղեղնավորի» արանքում: Անընդվոյթ Ռահու-Կետու վիշապի գլխատումով (Սանասար, Ինդրա), արեգակը քաջանց՝ ոգիների աշխարհից արտահայտվում է արտաշխարհում: Գլխատված վիշապը փորձում է կուլ տալ արեգակին եւ չի հաջողում: Ժամանակների վերջում, երբ նրա մարմին եւ գլուխը միանան, ապա նա կլլելու է արեգակը:

Սանասարն է,- հարցի պատասխանը «թաքնված» է Աժդահակի երազում: Խորենացին նորից դիմում է ծածկագետի իր արվեստին, Տիգրանի ինքնությունը ներկայացնելով երազի այլաբանությամբ:

Աժդահակի երազում, ***լեռան*** բարձրունքում, երկունքի ցավերով բռնված ծիրանազգեստ կինը ծննդաբերում է երեք դյուցազուններ: Ծիրանազգեստ կինը՝ Խորենացու Վահագնի ծնունդ արարչության մասին երգում՝ Ծիրանի ծովն է, «Սասնա Ծռեր» հնագույն էպոսի Ծովինարն է: Լեռը՝ ***Մասիսն է:*** Ըստ Խորենացու, Կնոջ երեք զավակներն ունեին այսպիսի տեսք՝

Առաջինն ***առյուծին*** հեծած սլանում էր դեպի ***արեւմուտք,***

երկրորդն ***ինձ*** հեծած դիմում էր դեպի ***հյուսիս,***

երրորդը ***վիշապ*** սանձած արշավում էր ***Աժդահակի վրա՝ դեպի հարավ*** *[1]:

Փաստորեն, Աժդահակի հակառակորդը վիշապ հեծած էր արշավում:

«Լուսնի մակածը (հանգուցային կետը),- երկնքում արեւի եւ լուսնի ուղեծրերի *(տես՝ գծ. # 2)* ***խաչաձեւման տեղանքներն են, որ ցուցում են, թե որտեղ կարող է խավարում տեղի ունենալ: Լուսնի եւ Արեւի ուղեծրերը հիմնականում նույնն են, սակայն այս երկուսի ճանապարհ-շավիղները փոքր շեղում ունեն, այլապես մենք ամիսը երկու անգամ խավարման երեւույթի ականատեսը կլիներինք: Այս երկուսի՝ լուսնի եւ արեւի շավիղները եւ լուսնի երկու մակածները (հյուսիս. եւ հարավ.) վեդայական աստղագիտության մեջ ներկայանում են որպես երկնային գլխատված վիշապ, որի գլխի մասը կոչվում է՝ Ռահու, իսկ պոչաիրանը՝ Կետու, եւ վեդայական արաչության մասին միֆապատումը կոչվում է՝ «Ծիր Կաթնի խնոցի»: Լուսնի հարավային մակածը գտնվում է «Աղեղնավորի» եւ «Կարիճի» համաստեղության արանքում, «Կարիճի» պոչածայրում, իսկ հյուսիսային մակածը «Երկվորյակների» համաստեղությունում»*[2]:***

***«Արեւելյան համակարգում, լուսնի մակածները՝ նորալուսնից միչեւ նորալուսին, կոչվում է՝ Վիշապ-Դրակոնյան ամիս, քանի որ ըստ աստղաբախշական միֆոլոգիայի, Վիշապը կուլ է տալիս արեւը՝ խավարման ժամանակ»*[3]:**



Արեւի եւ Լուսնի շավիղներ:
Լուսնի հարավ. մակած→ ♉
Հյուսիսային. մակած→♋

*1,- «Մովսես Խորենացի, «Հայոց պատմություն», 1981թ., Երեւան, էջ 89-90:
*2,- Jhon Major Jenkins, «Galactic Alignment», 2002, USA, p. 75.
*3,- B. L. van der Warden, Science Awakening II, 1974, Oxford, p. 6.



Փաստորեն, հնագույն աստղագիտության մեջ, արեւի եւ լուսնի շավիղներն ունեն ***հյուսիսային հատում,*** որը գտնվում է ***«Երկվորյակներ»*** համաստեղությունում եւ ***հարավային հատում,*** որը գտնվում է ***«Աղեղնավոր»*** համաստեղությունում: Աժդահակին՝ որպես աստեղատուն պատմահայր Խորենացին ներկայացնում է՝ Կենտավրոս Պյուռիդա անունով, որ հին հույների մոտ «Աղեղնավորի» համաստեղությունն է: Վիշապ հեծած հյուսիսից դեպի հարավ Աժդահակի վրա գրոհող հերոս-աստվածությունը Մ. Խորենացու մոտ ներկայանում է Տիգրան անունով, որ հենց ինքը՝ Thraētaona-ն է*(իրանական, Ավեստա),* նույն Trita Āptya-ն է*(հնդկական, վեդայական)* , նույն ***Ինդրան*** է, նույն ինքը Սանասարն է: Համընդհանուր հնդեւրոպական երկվորյակները, որ հայկական էպոսում՝ Սանասար ու Բաղդասար կամ Ադրամէլեք անունով դիցերն են, երկնքի գերագույն աստվածություն ***Դուառուսի*** որդիներն են, որ խորհրդանշում են **օրն** ու ***գիշերը՝*** հանդիսանալով արեւի եւ լուսնի շավիղներ: Խորենացու այս կտորում Տիգրանը՝ «Սասնա Ծռեր» էպոսի Սանասարն է: Նրա երեք որդիները՝ Բաբ, Տիրան եւ Վահագն, հայ հնագույն էպոսում, ուղիղ համեմատական զուգահեռներով՝ ***Յոան Վերգո, Զենով Օհան, Մեծ Մհեր*** դիցերն են, որ համապատասխանում են՝ ***«Կշեռք», «Զրհոս», «Առյուծ»*** համաստեղություններին,- ներկայացնելով՝ ***աշնանային գիշերահավասարը, ձմեռային արեւադարձը,*** եւ ***ամառային արեւադարձը:***

Երկվորյակները նույնպես վիշապազուն են. բրահմայական Յոգա համակարգում այս երկվորյակ՝ ***ճերմակ եւ սեւ վիշապները*** խորհրդաբանորեն նաեւ ներկայացնում են՝ ողնաշարով բարձրացող եւ չակրաները ֆիկսող էներգակիր երկգալար վիշապներ:

Փաստորեն, հնագույն նախահնդեւրոպական ժամանակների ***երկվորյակ աստվածների*** «ինքնությունը» պարզվում է հայկական «Սասնա Ծռեր» էպոսով, քանի որ հայկական էպոսում է միայն պահպանված երկվորյակների մասին հնագույն աստղագիտական երեւույթների ներկայացումներ՝ մանրամասներ, դետալներ, որի մասին ավելի մանրամասն կներկայացվի առջեվում: Բաղդասարի անվան Ադնամէլեք, Ադրամէլեք զուգահեռը, որ նաեւ վեդայական Ինդրայի՝ ԱՆ-ԴԱՐ-ի հնագույն անունն է, հնդեւրոպական անուն է եւ նրա ծննդոցը Հայկական լեռնաշխարհն է:



Ջնրալդո Ռենշնլ-Դոլմոտով, «Ուղնը եւ միտքը Դենսանա շամանիզմում», 1981թ., էջ 88: Մարդկային ուղեղ: Պատկերանկարը ըստ՝ Կոլումբիայի ամազոններում գտնվող Դենսանա ցեղի:

Հայասա երկրի հնագույն աստվածություն՝ Terittitüniš-ը:

«Ռիգ Վեդայի» **Trita Āptya**-ն, նույն ինքը՝ «Ավեստայի» **Thraētaona**-ն, Մովսես Խորենացաու ներկայացրած վիշապ Aži Dahāka - ին հաղթող **Տիգրանը,** որը նույն **Ինդրան** է, նո՛ւյն «Սասնա Ծռեր» էպոսի **Անդրամէլեքն** է, իրականում, Հայկական լեռնաշխարհում, մ.թ.ա. II հազարամյակում, Հայասա երկրի հավատամքային պանթեոնի աստվածություն՝ **Terittitüniš**-ն է:

Ըստ Գ. Ղափանցյանի, **Terittitüniš** աստվածության անվան Teri(t)-ը՝ համապատասխանում է հիթթիթական Teri «երեք» եւ **ttitüniš-** հայերեն «տտուն, տուտն» («վերջավորություն, ագի, պոչ») իմաստ արտահայտող բառերին. ըստ այսմ ամբողջ բաղադրությունը պիտի նշանակած լինի ***«եռատուն, եռագի»****[1]**:** Սակայն, ըստ Գ. Ջահուկյանի, Գ, Ղափանցյանը չի նշում ***տտուն = տուտն*** բառի հնարավոր հնդեւրոպական ծագումը*[2]: Ըստ իս, սրա նախահնդեւրոպական ձեւը պետք է լինի՝ **dud**-ը, որ կա Հր. Աճառյանի մոտ*[3], եւ հայերեն ***տուտն,*** ուրարտական՝ **ṭu ṭ-** , ներկայանում է նույն ***տուտն***՝ «պոչ, ծայր» նշանակությամբ*[4]:

Հայասա երկրի **Terittitüniš** աստվածության անվան **Ter** -ը աղերսվում է հայերեն՝ **Ter > թևեր** «թյուր = ծուռ, կոր»*[5], իսկ **ttitüniš-**ը՝ հայերեն «տտուն, տուտն» («վերջավորություն, ագի, պոչ») իմաստ արտահայտող բառերի հետ:

«Սասնա Ծռեր» էպոսում, ***երկվորյակները*** նաեւ ***«ծուռ, ծռեր»*** բնութագրումն ունեն, որ վերաբերում է ***արեւի եւ լուսնի շավիղներին, էլիպսաձեւ կորագծերին,*** ինչպես նաեւ, նրանց՝ ***«Երկվորյակների»*** աստեղատունը Ծիր Կաթեի ***եզրային*** *(ագի, պոչ)* աստեղատունն է եւ գտնվում է գալակտիկայի ***կենտրոնից՝«Կարիճ-Աղեղնավորի միջնամաս»,*** վեց աստեղատուն, 180^0, վեց ամիս հեռավորությամբ:

Այս աստվածությունը՝ հայկական էպոսի ***Անդրամէլեքն*** է, «Ռիգ Վեդայի» ***Ինդրան*** է, ինչպես նաեւ Միջագետքյան Մարդուկն է, որ Թիամատին թրատելով երկինքը եւ երկիրը վերջնականապես բաժանեց իրարից: ***Երկինքը միայն արեւի ուղեծրով է բաժանվում երկու մասի*** *(հյուսիսային եւ հարավային):* Եվ երկնքի այս «բաժանումը», տեսողական պերսպեկտիվայով, պարզ կարելի է տեսնել: Այս աստվածությունը հիթթիթական տարբերակով նշանակում է՝ ***«եռագի»:*** Միջագետքյան «The Epic Of Creation» պոեմում այս աստվածությունը երկինքը բաժանում է երեք մասի՝ ***Անուի, Էնկիի*** եւ ***Էայի*** արահետներ, որ MUL.APIN աստեղացանկում ներկայացված է՝ երեք օղակաձեւ շարքերով*(հյուսիսային, միջին եւ հարավային)*, յուրաքանչյուրում 12 աստղեր եւ աստեղատներ դասավորությամբ՝ 3 x 12 *(տես հաջորդ էջի նկարները):*

---

*1, *2, – Գ. Ջահուկյան, «Հայոց լեզվի պատմություն», 1987թ., Երեւան, էջ 329:
*3,- Հր. Աճառյան, «Հայոց լեզվի պատմություն», հ. I, 1940թ., Երեւան, էջ 76:
*4,- Ս. Այվազյան, «Վանի սեպագիր արձանագրությունները», 2006թ., Երեւան, էջ 69:
*5,- Արմեն Դավթյանի կողմից բանավոր հայտնած կարծիք:



Այս աստվածությունը աղերսվում է «ժամանակ» կատեգորիայի հետ, որովհետեւ միայն ***արեւի եւ լուսնի ուղեծրերով***, արեւի եւ լուսնի ընթացքներով եւ նրանց ուղեծիր-արահետի ճանապարհին ընկնող աստեղատներով էր հնարավոր հաշվել ժամանակը:

Երկնքի եւ ***երկրի***՝ «Անգդ» եւ «Կանիս Մեծ» աստեղատներով ներկայացող Ծիր Կաթնի երկվորյակ որդիները՝ արեւի եւ լուսնի ուղեծրեն են: Նրանց պատումային տարբերակների՝ «Ռիգ Վեդայում»՝ Trita Āptya-ն, նույն ինքը՝ «Ավեստայի» Thraētaona-ն, Մովսես Խորենացաու ներկայացրած վիշապ **Aži Dahāka**-ին հաղթող Տիգրանը, ունեն իրենց «նախակարապետը», որ Հայասա երկրի **Terittitūniš-** աստվածությունն է: Հնդ-արիական՝ վեդայական Ինդրա աստվածությունը, որ վերջնականապես բաժանեց երկինքը եւ երկիրը կատարում է նո՛ւյն ֆունկցիան ինչ-որ Միջագետքյան համակարգում վերագրված է Մարդուկին: Նա՛ է, որ Թիամատին սպանելով, երկնքում աստեղատները դասավորում եւ հաստատում «ժամանակը»: Հունական դիցաբանության մեջ, «ժամանակի աստվածությունը»՝ ՔՐՈՆՈՍԸ, ***երկնքի***՝ ***Ուրանոսի*** եւ ***երկրի՝ Գեայի*** որդին էր, որ սպանեց հորը, այնպես ինչպես հայկական էպոսում ***երկվորյակներն*** են սպանում իրենց հայրացուին, ինչպես Մարդուկն է սպանում իր նախնիին եւ այլն: Այս աստվածությունը, որ ներկայացնում է ***արեւի ուղեծիրը,*** իր մեջ ներառում է՝ ուղեծրով դասավորված երկնային 12 համաստեղությունները, եւ ըստ պատմահայր Խորենացու նրա Տիգրան անունը՝ դիք + րան (***դ < տ*** անցում), որպես «դիցարան», «աստվածների տեղ» նշանակությամբ, լիովին համապատասխանում է այս աստվածության բնույթի եւ կատարած ֆունկցիայի հետ: Ուրարտական պանթեոնում նա՝ Շիվինին է՝ ^{D}Ši-u-ni, եւ պատահական չէ, որ պանթեոնում նրան զոհաբերվելիք կենդանաիների թվաքանակը՝ 4 ցուլ եւ 8 ոչխար թվաքանակն է. արեւի եւ լուսնի ուղեծրերը ֆիկսում են տարվա չորս եղանակները՝ ըստ աստեղատների եւ նրանց ծավալաձեւը՝ տետրահեդրոնն է: Պատահական չէ նաեւ պանթեոնում առաջին երեք աստվածություններին զոհաբերվելիք ոչխարների թվաքանակը՝ **54** է: Արեւի եւ լուսնի ուղեծրերը, «Երկվորյակներ» եւ «Աղեղնավոր» աստեղատներում իրար հետ հատվելու պատճառով, ամեն 54 տարին մեկ «ստեղծում» են արեւի խավարում: Եւ եթե արեւի ուղեծիր-շրջանաօղակի պարագիծն ընդունենք **54** միավոր, ապա՝ շրջանագծի շա-



Fig. 6. Reconstruction of a Circular Astrolabe according to A. Schott, Zeitschrift Deutsche Morgenl. Ges. 88, p. 302.

MUL. APIN-ը *(գտնվում է Բրիտանական թանգարանում)*



EA, ANU, ENLIL գոտիները՝ փարվա եղանակների բաժանումներով:



ռավիղ R-ը՝ կլինի մոտ 17 միավոր, իսկ տրամագիծը՝ 2R-ը 34 միավոր*[1], որ Հալդիի թիվն է.- ***17 ցուլ եւ 34 ոչխար զոհաբերել Հալդիին, հրամայում է Վանի արձանագրությունը:***

«Սասնա Ծռեր» էպոսում Սանասարը եւ Բաղդասարը երկնքում «հաստատում» են «ժամանակ» կատեգորիան, կռվելով 60 փահլեւանների հետ: Եվ հնագույն «Սասնա Տուն» հավատամքային կարգականոնը լիովին եւ լիարժեք բացահայտում է բոլոր հնագույն պատումներում՝ «Ռիգ Վեդա», «Ավեստա», Միջագետքյան «The Epic Of Creation» եւ այլն, երկնային վիշապին սպանելով ***«երկինքը»*** եւ ***«երկիրը»*** իրարից բաժանող աստվածության «ինքնությունը», որը՝ «ժամանակ» կատեգորիա սահմանողն է:

Էպոսի խորհրդապաշտական իմաստները:

«***Աստվածային երկվորյակների մասին միֆական պատումը, որտեղ երկվորյակները գերագույն աստծո կամ արեւի աստծո որդիներն են, խորանում է մինչեւ նախահնդեւրոպական հնագույն ժամանակներ: Այս միֆական պատումը հայտնաբերվել է համարյա բոլոր հնդեւրոպական հնագույն հիմնական տրադիցիաներում, որտեղ ոչ միայն կրկնվում են միեւնույն մոտիվները, այլ նաեւ առկա է հերոսների անունների համատեղությունը, որը եւ հաստատում է այդ մոտիվների եւ պերսոնաժների բնույթը որպես՝ նախահնդեւրոպական»:*** (T. Gamkrelidze & V. Ivanov, "The Indo-European And The Indo-Europeans", NewYork, 1995, p. 680):



ԳԱՌՆԻ: Միէր/Միհրի տաճարի հատակագիծը:

Հեթանոսական տաճարների ճարտարապետական ամբողջական կառույցը, որ քրմերի աշխարհճանաչողության՝ արարչության կամ «տիեզերքի մոդելն»-ն էր ներկայացնում, բաղկացած է հիմնականում երկրաչափական երեք մոտեցումների համադրումից: Առաջին ծավալ՝ ***եռանկյուն-տանիք***, որ ***խորհրդապաշտական հուր*** էլեմենտն է եւ ***հայրը:*** Երկրորդ ծավալ՝ ***քառանկյուն,*** որ նյութական աշխարհն է՝ խորհրդաբանական ***հող*** եւ ***ջուր*** էլեմենտ, որի վրա է հենվում առաջին ծավալը: Եվ երրորդ ծավալը՝ ***կառույցը նզրագծող*** նախամուտք աստիճաններն են, որտեղ աջ եւ ձախ կողմերի պատվանդանների դիմահար հարթաքանդակներում պատկերված են «երկնակամար-գունդն» ուսե-

*1, - Հին Միջագետքում ՊԻ=π թվի արժեքը սկզբում ընդունում եւ օգտագործում էին՝ «3»-ը, իսկ հետո՝ π =3,125-ը, շրջանագծի մակերեսը հաշվելու համար (ինչ խոսք, π =3,14 ճշգրտությունից շեղումը մեծ էր): Dick Teresi, "Lost Discoveries", 2002, USA, p. 50-51.

Գերագույն
հայր աստվածության որդիները
Երկվորյակ առյուծները:

Միտանի երկրի արքա՝
Սաուասսաթարի կնիքը:
Մ.թ.ա. 1450թ.:
Նկարը՝
G. Contenau, «Civilisation des Hittites et Hurrites du Mitanni».



Երեք ծավալների համադրումը

ին երկվորյակ կուպիդոնները: Նրանք են, որ սահմանազատում են ***«վերին երկինքը»,*** եւ «սահմանում» են տաճարի պարագիծը: Քրիստոնեության մեջ երկվորյակները դարձան՝ Սերովբե եւ Քերովբե:

Հնագույն աստեղագիտության մեջ նրանք՝ ***երկվորյակներն*** աղերսվում են այսօրվա՝ Մեծ Արջ եւ Փոքր Արջ համաստեղությունների *(Մեծ եւ Փոքր Սայլ)*, 12 զոդիակների շրջանաշղթայում՝ **«Երկվորյակներ»** համաստեղության *(Կաստոր եւ Փոլլուքս աստղերի կամ՝ Կաստոր եւ Xi աստղերի հետ)*, եւ **Արեւի ու Լուսնի ուղեծրերի** հետ: Հնագույն կոսմիկական հավատամքում որեւէ գլխավոր արական աստվածություն, ներկայանում է կրկնակի աստղային ատրիբուտներով: Օրինակ, Հայասա երկրի գլխավոր աստվածություն Ներգալի աստղատունը՝ «Անգղի» համաստեղությունն է, մոլորակների համակարգում՝ Հրատ մոլորակն է (Mars):

Ըստ հնագույն թաքնագիտության, որի պահպանված հիմքերն այսօր համարվում են վեդայական սանսկրիտ տեքստերը, գերագույն արարիչը, որ Մեծ գիտակցությունն է, «արտաշընչելով» ծիրում է աստեղային եւ մոլորակային մեր համակարգը,-

«Մեծ Գիտակցութիւնը կը շնչէ եւ կ'արտաշնչէ, կշռոյթային կենսունակութիւն մը ապահովելով արարչագործութեան դաշտին մէջ յառաջ տարուող բնաշրջումի կամ բարնշրջումի աշխատանքին»:

«Թաքնագիտությունը կուսուցանէ, թէ այս ճառագայթները կը հոսին Մեծ Արջ համաստեղութեան ներքեւ աստղերէն: Անոնց Աղբիւրը Անհունին մէջն է:

Անհունէն ծագում կ'առնէ ահաւոր ոյժի ճառագայթ մը, եւ բախում ունենալով Մեծ Արջ համաստեղութեան ներքեւ աստղերուն հետ կը բնկանուի ներքեւ ճառագայթներու: Այս ներքեւ ճառագայթներու հոսանքը ուղղուելով Ծիր Կաթին համաստեղութեան՝ կը միաձուլուի Ծիր Կաթինի ներքեւ իգական ուժերուն հետ եւ կը սաղմնաւորէ մեր արեւային դրութեան գոյութեան նախատիպարը, որմէ կառոյց կ'առնէ դարերու տեւողութեան մեր արեւային դրութիւնը»: [1]

«Սասնա Ծռեր» էպոսի պատումներից մեկում, Ծովինարը Սենեքերիմ թաքավորին, որին բռնությամբ կնության էր գնացել, համոզում է, որ իր «անսպասելի» հղիությունը, Սենեքերիմի «շնչից» է *(պատում 18, «Ս. Ծ.» h.IV,*

*1,-Թորգոմ Սարեյդարյան, «Հինավուրց իմաստնության հիմները», 1994թ., ԱՄՆ, էջ 50:





1-ին պատկերում. սվաստիկայի շարժումը՝ ձախից աջ պտույտ, - խորհրդանշում է արտահայտվող աշխարհ: Ժամացույցի սլաքներին հակադարձ՝ աջից ձախ պտույտ,- վերադարձ, ներփակվելու պրոցես:



Միջագետքյան երկվորյակները՝ Լահմու եւ Լահմահու: Նկարը վերցված է՝ Oxford World's Classics «Myths from Mesopotamia», USA, 2000. A new translation by Stephanie Dalley.

Մոտիվների համացույց, էջ՝ 421):

Մենեքերիմը եւ ***Գագիկ թագավորը***՝ «բովանդակ-ամբողջի» երկու հակադարձ՝ «վատ» եւ «լավ» կողմերն են, այնպես ինչպես Հայասա երկրի գլխավոր աստվածություն Ներգալն է ներկայանում երկակի՝ թե՛ անդրաշխարհի թե՛ արտաշխարհի գերագույն իպոստաս:

Երկվորյակները ***գերագույն Աստծո որդիներն են,*** այսինքն, «բարձրագույն միտք-ոգին» կրող իպոստասներն են, որ արշավում են քառաձի կառքերով ***(ձիու խորհուրդն է՝ կենդանական շունչ-հոգի, Anima Mundi):*** Նրանք, ըստ վեդայական էզոթերիզմի, տիեզերական հոգեւոր ***«մտախակ»*** ***(Սանասար)*** եւ տիեզերական հոգեվոր ***«հուզախակ»*** ***(Բաղդասար),*** գերագույն աստվածություն որդիներն են, որ վարում են իրենց հոր կառքը: Մտախակի խորհրդաբանական սիմվոլը՝ ***արեւն*** է, հուզախակինը՝ ***լուսինը:***

Ձին՝ ***շունչ-հոգին*** է, հեծյալը՝ ***միտք-ոգին***,- ասում է «Ռիգ-Վեդան»: Եթե Սանասարը լիարժեք՝ ***մեկ բուռ ջրից*** է ծնված, ապա Բաղդասարը՝ ***կես բուռ ջրից:*** Նրանց մեջ մեծ տարբերություն կա: «Սասնա» էպոսում Բաղդասարն ավելի էմոցիոնալ է, քան եղբայրը՝ Սանասարը,- ***«... Այս երկվորյակները, ինչպես հայկական ժայռապատկերներում է երեւում, կայուն եւ անկայուն տիեզերքների սկզբունքներն են, եւ մտան կենդանակերպի մեջ որպես երկվորյակներ»* [1]:*** Նրանք գերագույն Աստծո՝ «բովանդակ ամբողջի»՝ սիմվոլ շրջանաշղթայի «պարագիծը» եզրագծող եւ տիեզերական երկու հակադարձ պտույտներն ապահովող դիցերն են՝ **ԱՐ** եւ **ՐԱ** թեւերով սվաստիկան: Այս առումով, Գ. Կարապետյանն իրավացիորեն զուգահեռ է անցկացնում. ***«Աջ ու ձախ պտույտների հետ են կապվում նաեւ [հայկական] թաղման ծեսերը: Գտնվել են բազմաթիվ խմբակային թաղումներ, որտեղ տղամարդկանց դիակները պառկեցված են աջ կողմի վրա, իսկ կանանցը՝ ձախ: Այս թաղումները կապվում են արականի ու իգականի, ոգեղենի ու նյութականի, բարու ու չարի հետ՝ որպես տիեզերական սկզբունքներ»* [2]:***

Երկվորյակները, Անհունի՝ Բրահմայի, երկու «ձեռքերն են», որոնք զուգահեռաբար աղերսվում են շումերաբաբելական՝ Լահմու եւ Լահամուի դիցերի հետ (LH̲M եւ LAH̲AMU), որ նշանակում է՝ ***«լցնել»* [3]:*** Եվ պատահական չէ, որ Միջագետքյան

*1,*2, -Գ. Կարապետյան, «Հայոց պատմության ուրվագծեր», հ. I, 2002, Երեւան, էջ109:
*3,- LAHMU հուրրիերեն բառ է, որ նշանակում է՝ «լցնել»:

Միջագետքյան Էնկի աստվածությունը, որ շումերական ԷԱ-ՀԱՅԱ աստվածությունն է: Էա աստվածության գլխարկը խորհրդանշում է տիեզերական արարչության ամբողջ համակարգը: Գլխարկի ներքեւի մասը նավակ է, որի վրա նստած է եռանկյունը: Եռանկյան աջ եւ ձախ կողմերում՝ 4+4=8 ճյուղ-թեւեր կան: Սա ամբողջն է, որ արտահայտվում է քառակի,- աջ եւ ձախ հակադիր կողմերով՝ ութ թեւերով: Նրա ձեռքի թռչունը, հայկական «Անգղ», այսօրվա «Cygnus» համաստեղությունն է, որ խորհրդանշում է Հայասա երկրի գերագույն աստվածությանը: Նրա ոտքի տակ ցուլը խորհրդանշում է գարնանամուտը, երբ արեւը ծնվում է Ցուլի համաստեղությունից: Երկու գետերը՝ Տիգրիս եւ Եփրատ, հոսում են նրա ուսերից:
EN.KI -ին հնագույն տեքստում իր մասին ասում է, որ ինքը երկնքի առաջին զավակն է:

առավել ուշ շրջանի տեքստում (The Epic Of Creation), այս երկվորյակների տեղում հանդես է եկող Մարդուկ աստվածությունը՝ EN.KI (Հայա-Էա) աստվածության որդին է: Հարթաքանդակ-պատկերում Էայի ուսերից թափվում են երկու գետերը՝ Տիգրիսը եւ Եփրատը: «Սասնա Ծռեր» էպոսում երկվորյակները բազմիցս ընդգծում են, որ իրենք ***ջրածին*** են: Հնագույն հավատամքի՝ ***«ինչպես վերեւում, այնպես էլ ներքեւում»*** մոտեցման համաձայն, այս երկվորյակները իրենց «տեղն» ունեն նաեւ երկնքում:

«Սասնա Ծռեր» էպոսում, երկվորյակներին եւ նրանց հաջորդող հերոս դիցերին կանչում են՝ ***լառ*** անունով, որ սասնո բարբառում նշանակում է՝ ***որդի: Լառ*** -ի հնարավոր բացատրությունը հնդեւրոպական նախալեզվում՝ *Legho- ձեւն է, որ նշանակում է՝ «լույս»: Սանսկրիտ.՝ lagh-, լատին.՝ Leuis, գոթ.՝ leihts, հին անգլերեն՝ leoht, հայերեն՝ «լոյս» եւ այլն*[1]: Բառի այս նշանակությունը համապատասխանում է հե՛նց «լույս» իմաստի հետ, քանի-որ էպոսում տոհմը շարունակող որդին համարվել է տոհմի ***«լույս»***-ը, ***«ճրագ»***-ը: Մյուս կողմից՝ երկվորյակները լինելով ***լուսնի եւ արեւի ուղեծրները,*** խորհրդանշում են՝ ***գիշերային երկինք*** եւ ***օրվա երկինք*** բաժանումը՝ ինչպես Վարունա եւ Միթրա երկվորյակ եղբայր դիցերն են ներկայանում «Ռիգ Վեդայում»:

Վերադառնալով երկվորյակ աստվածություններին, պետք է ընդգծել, որ նրանք արարչության հաջորդ փուլն են ներկայացնում, որը ԲՈՎԱՆԴԱԿ-ի՝ գերագույնի քառակողմ՝ լիարժեք արտահայտությունն է ցուցում:

Գոյաբանական աշխարհի «կառուցման» գաղափարը որպես՝ **ՀԱՅՐ-ՄԱՅՐ-ՈՐԴԻ,** մենք տեսնում ենք հնդ-արիական **«Ռիգ Վեդա»** սրբազան տեքստերում՝ ծավալների ներկայացմամբ *(Բնության մեջ գոյություն ունեցող գունդը եւ հինգ ծավալները, որպես՝ հուր, ջուր, օդ, հող տես՝ «Վիշապը որպես տիեզերական ծավալների ծննդոց» բաժնում): Երկրաչափական ծավալներ՝ Իկոսահեդրոնը* ***(icosahedron)*** *եւ Դոդեկահեդրոնը* ***(dodecahedron)*** *կերպարային ներկայացմամբ՝* ***Պուրուշան*** *եւ* ***Պրակրիտին,*** *հանդես են գալիս որպես նախնական «արական» եւ «իգական» երկվություն-աստվածություններ, որոնց «միակցումից» առաջանում է ութանիստ օկտահեդրոնը* ***(octahedron)*** **[2]:* Պուրուշան «արական» նախագոյությունն

*1,- T. Gamkrelidze & V. Ivanov, “Indo-European & the Indo-Europeans”, p. 685.
*2,- Robert Lawlor, «Secred Geometry», USA, 1989, p. 103.

կայանում են որպես՝ մեծ շրջանաօղակ, որն ամբողջն է, եւ նրա հայելային արտացոլանքը՝ փոքր շրջանաօղակ: Այս երկուսի «միակցումից», շրջանաօղակների R-ը՝ շառավիղը նույն է, եւ երկու օղակները միասին, հատման հատվածում, «ստեղծում են» որդուն՝ Օկտահեդրոնին: Հնագույն հնդեւրոպացիների մոտ արարչական դուալիզմը նաեւ արտահայտվում էր որպես արական՝ «արեւային աղբյուր» եւ իգական՝ «լուսնային աղբյուր» ներկայացմամբ *(տես նկ.):*



Վերեւում՝ շրջանագիծը որպես ամբողջ՝ 360⁰: Աջում եւ ձախում՝ գծային եւ ծավալային արտահայտությամբ «արական» իկոսահեդրոնը եւ «իգական» դոդեկահեդրոնը: Նրանց միացումից առաջացած ութանիստը՝ Օկտահեդրոնը:





«Արական» *իկոսահեդրոնը* եւ «իգական» *դոդեկահեդրոնը* ներկայացված են որպես շրջանագծեր, որոնց հատման տեղում առաջանում է՝ *Օկտահեդրոնը*, քրիստոնեական որդին՝ որպես «Ձուկ» ֆորմա:

Բնության մեջ գոյություն ունեն չկրկնվող նիստերի կոմբինացիաներով միայն չորս՝ Icosahedron, Octahedron, Cube, Tetrahedron սոլիդները, որոնք ըստ հնագույն թաքնագիտության համապատասխանում են՝ ջուր, օդ, հող, հուր էլեմենտներին: Դոդեկահեդրոնը համարվում էր Աստծո կոմպոզիցիան *(տես՝ էջ՝ 27-51):*

ՋՈՒՐ = բազմանիստ (20 նիստ), icosahedron ---
ՕԴ = ութանիստ, octahedron ----------
ՀՈՂ = խորանարդ, cube ----------
ՀՈՒՐ = քառանիստ, tetrahedron ----------

ԵԹԵՐ = բազմանիստ, 12 նիստ, dodecahedron ----------

Գոյաբանական աշխարհի արարման պրոցեսը որպես գերագույն արարչի արտահայտություններ՝ աստվածություններ, առկա է «Սասնա Ծռեր» էպոսում:

Գագիկ թագավորը ***Իկոսահեդրոնն*** է. էպոսի բազմաթիվ պատումներում երկվորյակների պապը՝ Գագիկը, Սանասար-Բաղդասարին իրենց բերդ-քաղաքը կառուցելու համար նվիրում է 20 տուն, պատումներ կան, որտեղ նշվում է 30 տուն: Իկոսահեդրոնն ունի 20 նիստ եւ 30 կողեզր:

«Սասնա Ծռեր» էպոսի մի շարք պատումներում ընդգծվում է, որ երկվորյակներից յուրաքանչյուրն աղերսվում է 8 թվի հետ: Էպոսի պատումներում բազմիցս 8 թիվը շեշտվում է. օրինակ, երբ երկվորյակները թագավորի առջեւ են կանգնում, ապա յոթ անգամ երկիր (գետին) պագանելուց հետո, ***ութերորդում*** ձեռքերը կանթում, կանգնում են (1>8 համակարգ)*[1]: Եթե ընդունենք այն փաստը, որ ***օկտահեդրոնն*** ունի ***8 նիստ*** եւ ***երկվորյակները*** երկուսն են՝ 8+8=16, ապա կպարզվի որ՝ այս երկու ֆորմաները ստեղծում են՝ 20 + 16 = 36 «տուն»: Փաստորեն, ***Սասնա Տունն*** ինքնին ունի 36 միավոր» եւ, մ.թ.ա. XI դարին վերագրվող Միջագետքյան MUL. APIN աստղացանկում ներկայացված աստեղատների քանակը նույնպես 36 է: Մյուս կողմից, «Սասնա Տուն» էպոսը, գլխավոր հերոսների չորս սերնդափոխության, չորս ճյուղերից բաղկացած կառույց է: Ըստ խալդեական դպրոցն ուսանած Պյութագորասի ***(հաղորդողը Պլուտարքոսն է)***, թվային համակարգում առաջին չորս զույգ եւ չորս կենտ թվերը Աստծո «ամբողջն» է*[2]: Էպոսում թագավորի 20 տուն*(աստեղատուն)* նվերը եւ երկվորյակների թիվը, միասին ձեւավորում են «բովանդակը»: Թագավորի նվերը՝ 2+4+6+8=20 տուն եւ երկվորյակների թիվը՝ 1+3+5+7=16, միասին՝ 16 + 20 = 36 ***ձեւավորում են՝*** «բովանդակը» որպես 36 աստեղատուն կամ ՇԱՐ՝ 3600, որ 360^0-ն է:

---

*1, - «Սասունցի Դավիթ», 1989թ., Երեւան, էջ 93:
*2,- M. P. Hall, «The Secret Teachings Of All Ages», p. LXXII.



Երկվորյակների երկրաչափական սիմվոլը՝ Օկտահեդրոնն է: Ունի՝ 8 նիստ եւ 12 կողնգր: Կազմված է չորս նիստանի երկու բուրգերից: Էլեմենտը՝ օդ:

Octahedron



Ուրեմն, երկվորյակները ներկայացնում են՝ ***Օկտահեդրոն*** ծավալաձեւը: Ունի՝ 8 նիստ եւ 12 կողեզր: Կազմված է չորս նիստանի երկու բուրգերից: Էլեմենտը՝ ***օդ:*** Եվ ինչպես «Սասնա Ծռեր» էպոսում երկվորյակներն իրենք իրենց մասին են փաստում՝ նրանք ջրածին են. Ծովինարի եւ Գագիկի՝ առաջին ***Իկոսահեդրոն*** ծավալաձեւի էլեմենտը՝ ***ջուրն*** է:

Որ «Սասնա Ծռեր» էպոսում նաեւ բացահայտ ցուցվում է երկվորյակների ***արեւի եւ լուսնի ուղեծրեր*** լինելը՝ նույնպես փաստ է: Երկրորդ վիշապին՝ ***«մեկ գոմշի չափ բարձր, հինգ գոմշի չափ էրկեն»***, որը նույնպես ջրի՝ կյանքի, «խոչընդոտ» էր, եղբայրները սպանում են երկու կլոր ջաղացքարերով (1>8 համակարգ):

«Էրկու կլոր քար կա, առնենք, էրթանք.
Էրկուսի մեջն էլ ծակ է, կը մտուցենք մեր թելքեր,
Կ'երթանք: Գնացին քարեր առին»* [1]:

Երկու կլոր քարերը, որպես իրար մեջ երկու օղակներ, կենտրոնում՝ սվաստիկա, տիեզերքի հնագույն պատկերացման խորհուրդն է, որը հինգ հազարամյա Մեծամորի առնանդամ հուշարձան քարասյունին է պատկերված: Արեւի եւ լուսնի ուղեծրերը՝ էլիպսաձեւ, կլոր-օղակաձեւ են: Արեւի եւ լուսնի ***արահետ-ուղեծրերն*** իրար հետ հատվում են՝ ***«Երվորյակներ»****(լուսնի հյուսիսային մակած)* եւ ***«Աղեղնավորի-3⁰»*** *(լուսնի հյուսիսային մակած)* աստեղատներում: Լուսնի հարավային մակաձում էր գտնվում վիշապ Աժդահակի *(Կենտավրոս Պյուռիդիա)* գլուխը: «Երկվորյակներ» եւ «Աղեղնավոր» աղատների միջեւ, որ վիշապ՝ «Կենտավրոս Պոյուիդիան» է, կա հինգ աստղատուն. ըստ հայկական էպոսի, վիշապը՝ ***«հինգ գոմշի չափ էրկեն»*** էր:

Երկվորյակների հոր՝ գերագույն աստվածության աստեղատունը «Կարապ-Անգդ» համաստեղությունն է, որ հնագույն Հայասա երկրի աստվածությունն էր, որը Հայկ աստվածության զուգահեռն է, եւ ըստ «Սասնա Ծռեր» էպոսի՝ Գագիկ-ԳԱԳ(ա) Կարապն է: Երկվորյակ դիցերի աստեղատունը հյուսիսային բեւեռում՝ Մեծ եւ Փոքր Սայլի *(այսօրվա Մեծ եւ Փոքր Արջ)* համաստեղությունն է, քանի-որ տիեզերական պրոցեսիան՝ 25920 տարեփուլը, սկսվում է, երբ «Փոքր Սայլի» Polaris աստղը հյուսիսային

*1, - «Սասունցի Դավիթ», 1989թ., Երեւան, էջ152:



Արեւի եւ Լուսնի շավիղները, որպես կորագծեր:
«Սասնա Տուն» էպոսի երկվորյակ ծռները՝ Սանասար եւ Բաղդասարը, աղերսվում են Արեւի եւ Լուսնի կորագիծ շավիղներին:



է, որ ստեղծելով իր հայելային հակադարձ արտացոլանքը՝ «իգաբեւեռում դառնում է «իշխող»: Պատմահայր Մ. Խորենացու ***Հայկն իր առաջին տանը բնակության դրեց իր Կադմոս թոռանը*** հաղորդումն ունի աստղագիտական իմաստներ: Հնում *(MUL.APIN Միջագետքյան աստեղացանկ)*, երկինքը պատկերացվում էր որպես 36 աստեղային տների համակարգ:

Հյուսիսային բեւեռի համար ***«Հայկ-Անգղ»*** համաստեղությունը ***վիշապ-Հուշկապարիկի (Draco)*** դեմ մենամարտով ու հաղթանակով, սկսվում է տիեզերական մեծ տարվա փուլի սկիզբը, երբ հյուսիսային բեւեռում «Հայկ-Անգղը» հաստատում է իր թոռանը՝ «Փոքր Սայլը» Pollaris աստղակենտրոնով: Պատմահայր Խորենացին հիշատակում է, որ ***Կադմոսը՝ Արամանյակի որդին*** է, եւ Հայկի թոռը: Արամանյակը «արեւի շավիղն է»,- այն գոտին, որտեղով արեւն է անցնում 12 համաստեղություններով: Առաջին ***աստղատունը՝*** համարվել է հյուսիսային բեւեռի կենտրոնը: Փոքր Արջի համաստեղությունը կոչվել է նաեւ «Շերեփ» անունով*[1], որ սասնո բարբառում կոչվում է՝ ***Կադրկ***, կադէս սրբոյ > սուրբ սրբոց*[2] *(թաքնագիտական Կաբալլայում նա կոչվում է Ադամ Կադմոն,- տիեզերական մարդը):* «Փոքր Արջ» համաստեղությունը, կենտրոնը՝ Pollaris աստղով*(այսօրվա անունն է)*, հյուսիսային բեւեռի այն աստեղատունն է, որ պտտվում է իր կենտրոնի շուրջ՝ օրվա 24 ժամերի ընթացքում: Այս համաստեղությունն է, որ VII- դարի թաքնագետ-հեղինակ Ա. Շիրակացու մոտ անվանվում է՝ «ժամադիտակ»:

Կա գիտական կարծիք ***(պարբերական՝ «Nature», Նոյեմբեր, 2000թ., հեղինակ՝ Քեթի Սփենս, Քեմբրիջի համալսարան)***, որ Քեոփսի բուրգը կառուցվել է Մեծ եւ Փոքր Արջի համաստեղությունների ***Միզար*** եւ ***Կոչաբ*** երկու աստղերի միջոցով հյուսիսային բեւեռակենտրոնը ճշգրիտ գտնելով (մ.թ.ա. 2467թ.), եւ բուրգի գագաթ-ուղղահայցը դեպի հյուսիսային բեւեռ ֆիկսելով: Մ.թ.ա. 2750-2400թ.թ.-ին, երբ արեւի՝ «Ռա»-ի պաշտանմունքն իր գագաթնակետում էր, Եգիպտոսում կառուցվեցին 6 տաճարներ՝ ի պատիվ «Ռա»-ի: Առաջին տաճարը (Ռուսերկաֆ) աղերսվում էր «Անգեղ-Կարապ» համաստեղության ամենապայծառ Դենեբ աստղի հետ, քանի որ Ռ-Ա-ն ծնվել է նրանից:

---

*1, – Ղ.Ալիշան, «Հին հավատք», 1895թ., Վենետիկ:
*2,- Ա. Պետոյան, «Սասնո բարբառը», 1954թ., Երեւան, էջ՝ 134: Հր. Աճառյան, ՀԱԲ, h. II, էջ՝ 477-478:

Երկվորյակները եւ երկրագնդի առանցքի տատանումով պայմանավորված տարեփուլերը՝ «Սասան Ծռեր» էպոսում:

Ըստ պատմագիտության այսօրվա ձեռքբերումների՝ օրվա բաժանումը 24 ժամերի, տարին՝ 360/365 օրերի եւ այլն, գալիս է առնվազն շումերական քաղաքակրթության ժամանակներից, երբ նրանք ստեղծեցին 60-ական եւ 10-ական հիմքով թվային շրջանաշղթա համակարգը *(Տես՝ Dick Teresi, "Lost Discoveries", USA, 2002, p. 47-49):* Սակայն, շումերական 6x10/60 հիմքերով «ժամանակի» հայտնագործում-հաստատումը ուղղակիորեն առնչվում է երկնքում աստեղատների ընթացքի եւ փուլային պտույտների հետ: Եվ, երկինքն ըստ աստեղատների քարտեզավորելու հայրենիքը շումերական տարածքը չէ, այլ՝ երկրագնդի **Lat. 36⁰-42⁰, Alt. 38-46⁰** տարածքը: Այս աշխատության «Աստղագիտություն» բաժնում արդեն փաստեցինք, որ հին քրմերը երկինքն ըստ աստեղատների քարտեզավորել են ըստ Հայկական լեռնաշխարհի գետերի, լճերի, լեռների: Մեր փաստացի ապացույցին միանում են նաեւ հնագիտական պեղումների տվյալները: Հայկական լեռնաշխարհի Պորտաքար անունով*(Դիարբեքիրի մոտ)* հնավայրի 11 հազար տարվա հնություն ունեցող տաճարի քարերին եւ Մեծ Արարատ լեռան գագաթին գտնված քարի վրայի պատկերները՝ շումերական գաղափարագրեր են, այն դեպքում, որ 10-11 հազար տարի առաջ շումերական տարածքը ջրի տակ էր: Այսինքն, պարզ է դառնում, որ շումերներ կոչվածները Հայկական լեռնաշխարհից են իջել այսօրվա Իրաքի տարածք եւ շումերական տեքստերում հիշատակվող աստվածների Արատտա երկիրը՝ Հայկական լեռնաշխարհն է:

Հայկական լեռնաշխարհի աստղագետ քրմերը ոչ միայն սահմանել էին օրվա 24 ժամը, տարվա 360/365 բաժանումը, այլ նաեւ գիտեին երկրագնդի առանցքի տատանումով պայմանավորված*(Precession-ի երեւույթ)* տիեզերական մեծ 2590 տարվա փուլը, 38880 տարվա՝ մեկ ու կես փուլաշրջանը եւ այլն, որոնք տեղ են գտել «Սասնա Ծռեր» էպոսում, որպես երկվորյակ աստվածություններ՝ Սանասար եւ Բաղդասարի ընթացքներ: Ըստ «Սասնա Ծռեր» էպոսի, երվորյակ դիցերն են ձեւավորում արեւի ուղեծրում գտնվող աստեղատները:

Նախորդ բաժիններում արդեն ասվել է, որ Առաջին Լոգոսը՝ ՀԱՈՒՔ-ը (Հայկը), ՀԱՐ-ին՝ Բրահման, եգիպտական Աթում-Ամոնը եւ այլն, լիարժեք (360⁰) արտահայտվում է, երբ դառնում է **քառակողմ**: Պյութագորյան դպրոցը, ***տաս*** թիվը համարում էր՝ ***լրումն ամենայնի եւ կատարյալ,*** քանի որ այն քառակի արտահայտության արդյունք է՝ 1+2+3+4=10: Մեկը՝ քառակողմ, 4 «կարդինալ աստղատներով» ամբողջական արտահայտվելով, դառնում է՝ [*therH- «խաչ»), *thorH-«Թոր»] աստվածություն: Եվ, տիեզերական **ԼՈԳՈՍ**-ն իր «արտահայտման ընթացքում» ձեւավորում-ֆիկսում է կենդանակերպի՝ զոդիակի շղթայի

Նկ. # 1.
Կարմիր բլուրից գտնված գրակիր թասը: Մ.թ.ա. I հազ.: Ա. Մովսիսյան, «Հայկական Մեհենագրություն», Երեւ., 2003թ., էջ 107:

Նկ. # 2.
Վերեւում՝ թռչունը, ներքեւում՝ ***Առյուծ*** եւ ***Յուլ*** համաստեղությունները: Հայկական լեռնաշխարհ, մ.թ.ա. I հազարամյակ: Ա. Մովսիսյան, «Հայկական Մեհենագրություն», Երեւ., 2003թ., էջ 230:



Sky Glob 3.5,
վերեւում՝ «Կարապի» (Cygnus), ներքեւում՝ «Առյուծի» եւ «Յուլի» համաստեղությունները:

չորս կարդինալ, դուալիզմի հիմքով իրար նկատմամբ հակադարձ աստեղատները՝ ***Առյուծ-Զրհոս*** եւ ***Յուլ-Կարիճ*** *(դեմ-դիմաց կանգնած չորս աստեղատներ)* եւ ինքը «Կարապն» է՝ կենտրոնում: Նկար # 1-ում, գերագույն հայր աստվածության Հայկ-Հալդի ատղային ատրիբուտը՝ ***Անգեղ-Cygnus*** համաստեղությունն է, որ «ամբողջն» է, ***բովանդակը*** եւ շումերական գաղափարագրով «շրջան»-ի սիմվոլն է՝ 360^0ու կոչվում է՝ ՇԱՐ-ՍԱՐ: Մայր աստվածության սիմվոլը՝ հովազառյուծն է՝ աստեղատունը՝ «Կանիս Մեծ»: Երկու շրջանապտույտ փուլերով երկնքում նրանք «ձեւավորում» են ամբողջ՝ «Բովանդակ» գաղափարը: Կարմիր բլուրից գտնված գրակիր թասի ՍԱՐԴՈՒՐԻ գրվածքը նույնպես միտում է հների պատկերացրած կոսմիկական «ամբողջ» գաղափարհամակարգը՝ ՍԱՐ = ՇԱՐ = 3600 = Šar = 3600: Երկու իրար մեջ շրջանաօղակների գաղափարը շումերական թվային համակարգում միտում է 36000 թիվը՝ Šar-u: Ժամանակների նման ներկայացումը եւ հաշվվումը ՇԱՐ-երով, շումերական ժամանակներից հասնում է մինչեւ 5-րդ դար, մինչեւ պատմահայր Մովսես Խորենացի*[1] *(ՍԱՐՈՍ՝ հույների մոտ, ՇԱՐ՝ հայերի մոտ):* Շումերների մոտ վեցական եւ տասական համակարգերը ներկայանում էին հետեւյալ կերպ. տես գծագիրը ներքեւում:



Գծագիրն ըստ՝ Georges Ifrah, «The Universal History Of Numbers» գրքի, USA, 2000, p. 83:

*1- «Մովսես Խորենացի, «Պատմություն», 1981թ., էջ 14:



Երկրագնդի առանցքի տատանումով է պայմանավորված կենդանակերպ աստղատներով արեւի «անցումը», որ այսօրվա աստղագիտության մեջ կոչվում է՝ *առաջընթացության երեւույթ* (Precession)*: Յուրաքանչյուր աստեղատան մեջ՝ մոտ 2160* տարի, իսկ 12 աստեղատներով անցումը՝ 25920 տարի, կոչվում էր տիեզերական մեկ մեծ տարեշրջան:

Գծագիրն ըստ՝ Georges Ifrah, «The Universal History Of Numbers» գրքի, USA, 2000, p. 84:

Դիոգինես Սոտիկը, որը ճանաչված էր որպես Դիոգինես Բաբելացի, հավատում էր, որ շրջափուլը՝ տիեզերական մեծ տարին՝ 360x18000=30x60^3 տարի է: Պյութագորասը *(մ.թ.ա. 7-րդ դար)*, որի «աշխարհայացքը» առավել հին դպրոցների՝ եգիպտական եւ բաբելոնյան ազդեցություններից ձեւավորված աշխարհճանաչողություն է *(տես՝ B. L. Van Der Waerden, "Science Awakening", I, p. 124)*, համոզված էր, որ բոլոր դեպքերը հավերժական շրջապտույտում՝ կրկնություններ են: Եվ հին հեղինակների բերված բոլոր տարեփուլերը հաշվվում էր հիմքում ունենալով շումերական ՇԱՐ-ը՝ 3600-ը: Եվ քանի-որ երկնակամարի աստեղատները, Precession-ի երեւույթով, ըստ հին քրմերի, փուլային շարժման մեջ են, ապա տիեզերական մեծ տարին՝ 25920 տարի, կարող էր ընդունվել մեկ փուլ:



A- Անուի գոտի, B- Էնլիլի գոտի, C- Էաի գոտի:

Ուրարտական մի պատկերագրում, դեմ-դիմաց, Հալդին առյուծի վրա է կանգնած, Թեշուբը՝ ցլան: Տեսողական պերպեկտիվայով պայմանավորված այս «աստղագիտական երեվույթը», որ դարձել է հավատամքային խորհրդապաշտություն, գալիս է շատ հնից եւ նշանակում է գերագույն դիցի «արտահայտվելը» զոդիակների շղթայի ***Առյուծի*** համաստեղությունում, ամառային արեւադարձին, երբ արեւն իր բարձրակետում է. «Առյուծ» աստեղատան Regulus աստղը, որի հետ ամառային արեւադարձին «միակցվում» է արեւը, կոչվում է՝ ***տանուտեր, թագավոր***:

Նախորդ էջի նկար # 2-ի մեկնությունը նույնպես աստղագիտական զուգահեռ ունի: Գերագույն աստվածության ատրիբուտ՝ ***թռչունը վերեւում,*** իսկ ***ցուլն ու առյուծը՝ ներքեւում*** պատկերը, զոդիակների շղթայում ***գարնանային գիշերահավասարին*** եւ ***ամառային արեւադարձին,*** առավոտյան, արեւի մուտքն է՝ ***«Յուլ»*** եւ ***«Առյուծ»*** աստղատներ: Այս խորհրդապաշտությունը Գերագույն աստվածության «արտահայտությունն» է ***«Առյուծ»*** եւ ***«Յուլ»*** աստեղատներում: Սա արեւի ընթացքն է, արեւադարձը եւ գիշերահավասարը չորս եղանակների բաժանումների ընթացքում, երբ արեւը ձմռանը, դեկտեմբերի վերջ, «ծնվելով» ***«Զրհոսում»***, գարնանն ու ամռանը մտնում է այս երկու՝ ***«Յուլ» եւ «Առյուծ»***

Ծիր Կաթինի առաջին օղակը ձեւավորում են «Անգդ-Cygnus» եւ «Կանիս մեծ» աստեղատները՝ Սիրիուս եւ Դենեբ կենտրոն աստղերով: Արեւի ու լուսնի շավիղները որպես երկրոդ օղակաշղթա, «ձեւավորում» են՝ 4 + 4 = 8 համակարգի հաջորդ փուլը:



Արեւի եւ Լուսնի շավիղները, որպես կորագծեր:
«Սասնա Տուն» էպոսի երկվորյակ ծռները՝ Սանասար եւ Բաղդասարը, աղերսվում են Արեւի եւ Լուսնի կորագիծ շավիղներին:

հաստեղություններ, որը միայն հնարավոր է մ. թ. ա. VII-V հազարամյակներում, երբ Հայկ-Հալդին՝ Առյուծի վրա է, Թեշուբը՝ Ցուլի: Արեւը ելնում է **«Ցուլի»** համաստեղությունից գարնանը՝ Մարտ 21-ին, որը հեթանոս հայերի հին նոր տարին է: Ձմռանը՝ Դեկտեմբեր 24-25 ին, արեւը «ծնվում է» **«Ջրհոսի»** համաստեղությունում, ամռանը՝ հունիս 21-26 արեւն իր բարձրագույն կետում գտնվում է **«Առյուծի»** համաստեղությունում եւ «միակցվում» է «Առյուծի» Ռեգուլուս (Regulus թարգմ. նշանակում է՝ թագավոր, տանուտեր) աստղի հետ, աշնանը՝ Սեպտեմբերի վերջ-Հոկտեմբեր, մտնում է **«Կարիճի»** համաստեղություն *(տես՝ Sky Glob 3.5):*

ԱՌՅՈՒԾ եւ ՑՈՒԼ աստեղատներում խաչաձեւ անկյունագրերի ֆիկսումը, որի կենտրոնը Cygnus՝ ԿԱՐԱՊ աստեղատունն է, կամ այլ ձեւակերպմամբ՝ վիշապ-շրջանի ներսում արտահայտված **ՄԵԿ**-ը՝ իր խաչաձեւ կամ քառակողմ արտահայտությամբ, դառնում է հավատամքային խորհրդապաշտություն. Բրահմայական հավատամքում այս «երեւույթը» կոչվում է՝ ՈԳԻՆ, որ ծնվեց կրկնակի*[1]:

«Սասնա Տուն» էպոսում Թագավոր Գագիկը (**ՀՆԽ՝ *GAGA = Կարապ, ընկույզ, ձու**), նաեւ տիեզերական ամբողջի խորհուրդն է: Գագ+իկը = Կակին՝ ամբողջն է, մեկն է*[2], որ սերում է երկուսին՝ ԹՈՐՈՍ եւ ԾՈՎԻՆԱՐԻՆ, քույր ու եղբայր, որ իր իսկ՝ *արական* եւ *իգական* արտահայտություններն են: Հաջորդ փուլում՝ գլխավոր Աստծո որդիները կամ «թոռները»՝ երկվորյակները, «ձեւավորում» են զոդիակի մնացյալ կենդանակերպերը, սկսելով Օրիոնից (***հացի տուն***) եւ Ջրհոսից(***Ջրի տուն***):

Հայկական էպոսը վերնագրվել է «Սասնա Ծռեր» անունով, որովհետեւ պատումներում գլխավոր հերոս աստվածությունները, սկսած Սանասար-Բաղդասարից, կոչվում են՝ ***«ծուռ»:*** 19-րդ դարերի վերջին եւ 20-րդ հարյուրամյակի սկզբին, «Սասնա Ծռեր» էպոսը պատմող գեղջուկները չիմանալով իրենց հնագույն հեթանոս հավատամքը, այս «ծուռ»-ը մեկնաբանել են գլխավոր հերոսների բնավորությամբ՝ «ուղիղ», «շիտակ» լինելու հետ, որն իրականում բոլորովին տարբեր իմաստ ունի:

---

*1- H.P. Blavatsky, «The Secret Doctrine», 1999, USA, v. I, p.19

*2- Սասնո Էպոսում սկիզբ համարվում է թագավորը՝ Գագիկ = Կակի = Կակո = Կակալ = Ընկույզ: Սասնո բարբառում՝ Կակո = մեծ հայր = մորենական պապ Կակալ = ամբողջ, ընկույզ: «Երբ ցորեն ըլնի քանց գարի մի, երբ գարին ըլնի քանց ընկույզ մի...» արտահայտությունը միտում է՝ ***«վերադարձ դեպի սկիզբ՝ դեպի հայրը, դեպի տիեզերական ամբողջ»:*** Սասնո բարբառում՝ գագա = ձու, (Վ. Ա, Պետոյան, «Սասունի բարբառը», 1954թ., էջ՝ 109):



Իլուստրացիա. հնագույն էգոտերիկ տիեզերական նախաձուն, որին փաթաված էր վիշապը:

Ծուռը՝ էպոսը պատմող ժողովրդական բանասացները մեկնում են որպես՝ արդար, բարոյապես շիտակ, իմաստներով: Այսինքն, աշխարհն անարդար ու կեղծ է, իսկ աշխարհի նկատմամբ հերոսները ***ծուռ*** են՝ շիտակ ու արդար են: Հայկական էպոսում սա «արտաքին տրամաբանությամբ» իմաստ արտահայտելու բացատրության փորձ է: Սակայն հայկական հնագույն էպոսը ճշգրիտ աստղագիտական երևույթների գաղտնի իմաստներ է պարունակում, եւ «ծուռը»՝ ***կորի*** նշանակությունն ունի: Արեւի եւ լուսնի էլիպսաձեւ ***կորագծերով շավիղները*** էպոսի հերոս աստվածությունների աստեղատներով ***անցման ճանապարհն է:*** Անզեն աչքով էլ, տեսողական պերսպեկտիվայի համաձայն, արեւի ծագը եւ մայրամուտը՝ ներկայանում է որպես կորագծով ընթացք:

Բաբելոնյան MUL.APIN. կոչվող աստղագիտական տեքստերում պարզ երեւում է, որ հները երկինքը բաժանել էին երեք գոտիների, դրանց անվանակոչելով գլխավոր՝ Էա, Անու եւ Էնլիլ աստվածությունների անուններով, որոնցով անցնում է արեւը: Արեւային տարին բաժանված էր 12 մասերի եւ զոդիակի շղթան 4 մասերի, որոնցից ամեն մեկը՝ 3 հավասար մասերի: (***Տես՝ Bartel L. van der Waerden, «Science Awakening II, Oxford, University Press», N.Y. 1974***): Այս հիմքով տարին բաժանված էր 12 ամիսների եւ 4 եղանակների՝ յուրաքանչյուրը՝ 3 ամիս տեւողությամբ:

«Սասնա Տուն» էպոսում, Սանասարը, ոսկյա խնձորը անհասանելի սյան գագաթից (Կենաց ծառ) իջեցնելով, տալիս է սիրեցյալին՝ Քառասուն Ծամ Ճյուղ Դեղձունին, որից հետո, իջնելով նախաջրային անդրաշխարհ, սպանում է Վիշապին եւ նրա երախի միջից ազատելով ադամանդյա (հրե) ակը, օղակը՝ մատանին, հանձնում է Դեղձունին, որից վերջինի կախարդական հմայությունը վերանում է եւ, ամուսնանալով Սանասարի հետ, սերունդ է ստեղծում, ծնելով երեք նոր աստվածություններ.- Մհեր՝ հուր, Ձենով Օհան՝ օդ (խոսք), Ցռան Վերգո՝ ջուր*[1]:

Քառասուն Ծամ Ճյուղ Դեղձունը **(Դեղձուն > Դեղձան > Դեղին)** ոգիների աշխարհ-սֆերայից արեգակի արտահայտվելու մասին է: Հնագույն հավատամքային կարգակառույցում մարդը, կամ որեւէ էակ, երկենցաղ է: Որեւէ անձ սպանվելով, միայն մարմնազուրկ կարող է լինել: Եվ մեռնելով, անձը հայտնվում է Ոգու սֆերայում՝ քաջանց աշխարհում: Որեւէ անձ-ոգի, Ոգու սֆերայում մեռնելով *(քաջքերի թագավորություն > ոգիների աշխարհ-սֆերա)*, արտահայտվում է նյութական մե՛ր աշխարհում: «Սասնա Ծռեր» էպոսում, երկվորյակ դիցերը անցնելով Քաջանց (քաջքերի > ոգիների) թագավորություն, ***Քառասուն Ճյուղ*** Դեղձունին, «բերում են»

*1, - Ռիգ-Վեդայում՝ Soma, Fish, Sin / սին, ձուկ, սոմա /:

նյութականորեն արտահայտված աշխարհ-տիեզերք:

ԴԵՂՁԱՆ > ԴԵՂ+ ՁՈՒՆ > ԴԵՂԻՆ > ԴԵՂ+ՆՈՒՅ աղերսվում է հնագույն խորհրդապաշտության եւ միֆական պատումներում հանդիպող տիեզերական նախաձվի հետ, որին փաթաթված էր օձավիշապը*[1]: Փաստորեն, Դեղձունին վիշապից ազատելով, Սանասարը ***արեգակնային*** (Դեղձուն) համակարգության ձեւավորման հարուցիչն է դառնում: Հնագույն թաքնագիտական՝ Հերմեսյան համակարգում, արեգակը նյութական տիեզերքում «հոգու նյութական կաշկանդման» չորրորդ օղակն է եւ աղերսվում է քառասուն թվի հետ *(«The Book Of THOTH», Manly P. Hall, «The Sectret Teachings Of All Ages», p. XL, USA 2000)*:

Քաջանց երկիր: Քաջ(ք) > Քաջ, ***- «Քաջ՝ է՛ ոգի բացարձակ ի հողնդէն մարմնոյ»*** [այսինքն՝ անմարմին, - Ղ. Ալիշանը մեջբերում է անում Դավիթ Անհաղթից (V դար)]*[2]: Քաջանց թագավորի անունը՝ «Սասնա Ծռեր» էպոսում՝ ***անանուն***: Ըստ էպոսի՝ «Քաջանց էրկիր՝ հմայքի էրկիր է»: Ըստ հնագույն Ոիգ-Վեդայի, հակառակն է՝ նյութական տիեզերքն է՝ մայա, իլյուզիա, «արտացոլանք» է ***(Մայա. կույս Մայա Դեւակիից ծնվում է Կրիշնան՝ աստծո 8-րդ արտահայտությունը):***

Բարձրագույն Ոգին՝ Սանասարը, մինչեւ Քաջանց երկիր հասնելը, սահմանաեզրում հանդիպում է այդ երկրի հովվին, որ պատումներից մեկում թագավոր է: Սա պարտադրում է Սանասարին հսկայական տաշտով կաթ ուտել, եւ տաշտն այնքան մեծ էր, որ չորս մարդ տաշտում կարող էր լողալ: «Էնոր հետ ջոջ տաշտ մի կար, որ չորս մարդ մեջն կլողկնա»[3]: *Եվ մինչեւ հովիվը մեկ անգամ շրջան է անում իր հոտի շուրջը (**«մեկ փաթ, որ ման նկավ»**), Սանասարը վերջացնում է տաշտի կաթը մինչեւ հատակը: Բաղդասարի պարագայում, այս նույն հովիվը յոթ անգամ պետք է «փաթ ման գա» իր հոտի շուրջ, մինչեւ վերջինս կարողանա տաշտի կաթը ուտել վերջացնել: Հետո, Քաջանց երկրում, երկվորյակ հերոսները մենամարտում են 60 փահլեվանների հետ, եւ մինչեւ Բաղդասարի դեպքի վայր հասնելը, Սանասարը սպանում է նրանցից 40-ին, իսկ Բաղդասարը դեպքի վայր հասնելով սպանում է մնացած 20-ին:*

Էպոսում, իր ***հոտի՝ մսուրքի***՝ աստեղատների*[4] շուրջը պտտվող ***հովիվն*** աղերսվում է ***Օրիոն*** համաստեղության հետ, որը կոսմիկական հնագույն հավատամքներում կոչվում է ***«երկնային հովիվ»:*** Պատումներից մեկում, հովվի փոխարեն, երկվորյակները հանդիպում են ***յոթ փուռ հաց ուտող,*** բայց չհագեցող մարդուն: Սա նույն՝ Օրիոն, «երկնային հովիվ» համաստեղությունն է, որ նաեւ հայտնի է՝ ***«հացի տուն»*** անունով:

---

*1, - Manly P. Hall, “The Secret Teachings of All Ages”, 2000, USA, p. XX:

*2,- Ղ.Ալիշան, «Հին Հավատամք», էջ 191:

*3,- «Սասունցի Դավիթ», 1989, Երեւան, էջ 134:

*4,- Արեւի ուղեծրով դասավորված աստեղատները նաեւ կոչվել են՝ «մսուրք»: ***Կենդանակերպ*** աստեղատներ անունն իսկ աղերսվում է՝ «հոտի, մսուրքի» հետ: Ըստ Ա. Շիրակացու, ոմանք Ծիր Կաթինը՝ «Մսուր եւ Կայան օդոյն անվանեցին»: Աբրահամյան, «Մատենագրութիւնք Անանիա Շիրակացւոյ», էջ 326:



Ըստ էպոսում եղած տվյալների, երկվորյակները, սկզբում՝ Սանասարը (արեւ, արեւի շավիղ), հետո Բաղդասարը (Լուսին, լուսնի շավիղ), բարձրանում են ***հանտն***՝ գալակտիկայի կենտրոն, որ գտնվում է «Կարիճ» եւ «Աղեղնավոր» համաստեղությունների մեջտեղում: Բաղդասարը տարբեր է Սանասարից, շտապելով օգնության հասնել եղբորը, նա սպանում է իր ճանապարհին հանդիպած եւ իրեն դուր չեկած «էակներին»: Բաղդասարը հասնելով «կենտրոն» առաջինը հանդիպում է աղվեսին եւ սպանում է նրան: Սա անդրաշխարհ եւ արտաշխարհ մուտքի պահապան շնաղվեսը՝ այսօվա Serpenes անունով համաստեղությունն է: Բաղդասարի երկրորդ հանդիպումը՝ յոթ ջաղացի ջուր խմող, բայց չհագեցող մարդու հետ է, որ «Ջրհոս» համաստեղությունն է: Երրորդը՝ յոթ փռի հաց ուտող, բայց չհագեցող մարդուն է հանդիպում, որ այսօրվա «Օրիոն - հացի տուն» համաստեղությունն է: Եւ չորրորդը՝ «Իշեւանատիրոջը»: Սա «Առյուծ» համաստեղության Regulus աստղն է, որ նշանակում է «տանուտեր»:

Էպոսում նկարագրվող «դեպքերը» բացահայտ ցուցում են արեւի ընթացքով չորս կարդինալ աստեղատները՝ գարնանային գիշերահավասար, ամառային արեւադարձ, աշնանային գիշերահավասար եւ ձմեռային արեւադարձ: Նման երեւույթը հնարավոր էր «տեսանելի արձանագրել» մ.թ.ա. V-IV հազարամյակում:

Սանասարի հետ 60 փահլեւանների մենամարտը աղերսվում է ժամանակի շրջանաշրջթայի հետ, ինչպես նաեւ 6 մոլորակները գալակտիկայի կենտրոնին մոտ՝ «Կարիճի» եւ «Աղեղնավորի» արանքում գտնվելու մասին է, եւ օգնության հասած Լուսին-Բաղդասարը կրծքով փակում է արյունից կուրացած Արեւ եղբորը, որ նշանակում է՝ թե հարավային մակաձում արեւի խավարում է եղել: Հներին հայտնի էր խավարման 54 տարվա պարբերափուլը դեռ շումերական ժամանակներից, որ գրանցված է եղել ՈՒրուկի կանիֆորմ-տեքստի վրա: (F. THUREAU-DANGIN, Tablettes d’Uruk, Paris 1922, Text no. 14). B. L. van der Waerden, “Science Awakening II, p. 103.





Ծիր Կաթինի առաջին օղակը ձեւավորում են «Անգղ-Cygnus» եւ «Կանիս մեծ» աստեղատները՝ Սիրիուս եւ Դենեբ կենտրոն աստղերով: Արեւի ու լուսնի շավիղները որպես երկրոդ օղակաշղթա, «ձեւավորում» են՝ 4 + 4 = 8 համակարգի հաջորդ փուլը:



Արեւի եւ Լուսնի շավիղներ:
Լուսնի հարավ. մակաղ→ ♍
Հյուսիսային. մակաղ→ ♋

Երկու եղբայրների կաթ ուտելու ժամանակային պրոցեսը՝ մեկ փաթ եւ յոթ փաթ (շրջան), 1:7 հարաբերությունն է: 60 փահլեւանների ***(60-ը՝ շումերական սրբազան խորանարդի թիվն է եւ ժամանակի խորհուրդը)*** հետ մենամարտում մեծ եղբայրը սպանում է 40-ին, փոքրը՝ 20-ին: 40:20 հարաբերություն:Այս թվերը բացահայտում են Բաղդասարի «ով լինելը եւ թիվը»՝ 1:7 = 40 : 20 = 280:20 = 14, որը լիալուսնն է, եւ Լուսնի հարավային մակաղը՝ ***«Կարիճի»*** համաստեղությունում, որ ***արեւի խավարում*** է ստեղծում: Փաստորեն, Սանասարն այստեղ հանդես է գալիս որպես ***արեւ***,- չէ՞-որ 60 փահլեւանների հետ, ողջ օրը մենամարտելու ժամանակ, Սանասարի աչքերն արյուով են լցվում, եւ նա չի կարողանում տեսնել, մինչեւ եղբայրը գալիս եւ ինքն իրենով «փակելով» եղբորը *(լուսինը ծածկում է արեւին. արեւի խավարում)*, դիմահարձակ սպանում է մնացած 20 փահլեւաններին:

«Սասնա Ծռեր» հնագույն հավատամք-էպոսում, ***«կաթով լի տաշտը»*** Ծիր Կաթնի շրջանաշղթան է: Ըստ հնագույն հայկական ավանդության, Ծիր Կաթինը հարսի կրծքից բխած կաթի ճանապարհ է*[1]: Եվ ըստ էպոսի՝ ***այս կաթով լի տաշտում չորս մարդ կարող էր լողանալ,-*** նկատի ունի, որ Ծիր Կաթնի ամբողջական «շրջանաշղթա-տաշտում» չորս գլխավոր աստվածություններ՝ իրենց աստղատուն ատրիբուտներով, արդեն արտահայտված էին, կայի՛ն, երկվորյակների հետ միասին, չորսն էին: Ինչպես Միջագետքյան կամ եգիպտական հավատամքային աստղագիտական տեքստերում առաջին չորս աստվածությունները *(կամ միակ աստծո չորս ատրիբուտները)* «ձեւավորում» են աստվածային գերհոգու քառաթեւ արտահայտությունը, այնպես էլ հայկական էպոսում, նկատի ունի, որ արարչությունը որպես ամբողջություն, իր առաջին փուլը լրել էր, արտահայտված էր քառաթեւ: Եգիպտական գերագույն աստվածություն Աթում-Ամոնն ասում է՝ ***«Ես մենն եմ, որ դառնում եմ երկու, որ դառնում եմ չորս, որ դառնում եմ ութ, ապա նորից ես մենն եմ»****[2]: Երկինքը որպես «ամբողջ» կամ «շրջանաշղթա» պատկերացնող հին աստղագետների համար, առաջին չորս աստվածությունների աստեղային ատրիբուտները կարող էին լինել այդ շրջանաշղթայի չորս հակադիր կողմերում ֆիկսված այն աստղերը, որոնցով շրջանաօղակի

*1,- Ա. Ղանալանյան, «Ավանդապատում», 1969թ., Երեւան:
*2,- Coffin of Petamon{Cairo Museum item no. 1160}, Moustafa Gadalla, «Egyptian Cosmology», 2002, USA, p.56.

երկու խաչվող տրամագծերը կֆիկսեն կենտրոնը: Եթե ***առաջին տրամագիծը*** «ձեւավորում» են «Կարապ-Անգեղ» եւ «Կանիս մեծ» աստեղատները՝ Դենեբ եւ Սիրիուս աստղերով (Սիրիուսը տեսանելի երկնքում ամենապայծառ աստղն է՝ Mag: 1.4), ապա Արեւի եւ լուսնի ***շավիղները*** «ձեւավորում» են ***երկրորդ տրամագիծը :*** Արեւն ու լուսինը *(լիալուսին՝14 օրեկան)*, գտնվելով հակադիր ծայրերում՝ դեմ-դիմաց, իրենց շավիղներով հանդերձ, առաջին՝ ***«կարապ-կանիս մեծ տրա-մագծի»*** հետ միասին «ստեղծում են» քառաթեւ համակարգ: Փաստորեն, ***կաթ-նածիր*** եւ ***արեւադարձ*** շավիղները ստեղծում են՝ ***«X - քառաթեւ համակարգ»*** *(տես նախորդ էջի նկարը)*: Եվ պատահական չէ, որ վեդայական տեքստերում արեւը եւ լուսինը աղերսվում են «1» եւ «2» թվերի հետ *[1]:

«Լուսնի մակածը (հանգուցային կետը),- երկնքում արեւի եւ լուսնի ուղեծրերի խաչաձեւման տեղանքներն են, որ ցուցում են, թե որտեղ կարող է խավարում տեղի ունենալ: Լուսնի եւ Արեւի ուղեծրերը հիմնականում նույնն են, սակայն այս երկուսի ճանապարհ-շավիղները փոքր շեղում ունեն, այլապես մենք ամիսը երկու անգամ խավարման երեւույթի ականատեսը կլինեինք: Այս երկու՝ լուսնի եւ արեւի շավիղները եւ լուսնի երկու մակածները (հյուսիս. եւ հարավ.) վեդայական աստղագիտության մեջ ներկայանում է որպես երկնային գլխատված վիշապ, որի գլխի մասը կոչվում է՝ Ռահու, իսկ պոչաիրանը՝ Կետու, եւ վեդայական արաչության մասին միֆապատումը կոչվում է՝ «Ծիր Կաթնի խնոցի»: Լուսնի հարավային մակածը գտնվում է «Աղեղնավորի» եւ «Կարիճի» համաստեղության արանքում, «Կարիճի» պոչածայրում, իսկ հյուսիսային մակածը «Երկվորյակների» համաստեղությունում»* [2]:

Պղնձե քաղաք,- արքայադուստր Դեղձունի թագավորություն:

Ըստ հնագույն վեդայական հավատամքի, նյութական տիեզերքը՝ նյութա-կան ռեալությունը, սկսում է ձեւավորվել 3-րդ՝ «պղնձյա» ժամանակաշրջանում **(Դուապարայուգ՝ ոգու եւ նյութի միասնության սկիզբ)***[3]: «Տիեզերական ձուն»՝ Քառսուն Ճյուղ Դեղձուն Ծամը, պղնձյա ժամանակաշերտում է «ազատվում» տիեզերական վիշապից, եւ սերունդ տալիս, որպես երկրորդ նախամայր՝ «Ծովի***նար»***-ից հետո: Սանասարը սրով կտրելով վիշապի գլուխը դառնում է տիեզերքի երկրորդ փուլի արարման հարուցիչը: Սանասարը «արծաթ ժա-մանակ-սֆերայի» հերոսն է, որ իջել է «պղնձե շերտ»: Ինքը խորհրդանշում է՝ երկրորդ՝ արծաթյա շրջանը, որ արքայադստեր համար իջնում է 3-րդ՝ պղնձե շերտ: Էպոսում, Սանասարն «ակնարկում» է իր անձի մասին՝ որպես արծաթյա ժամանակաշերտի իպոստաս:

«Ափո, ես քեզ կտամ ձիուս էրկու արծաթ,
Իմ գլխուն իրեք արծաթ»*[4]:

Էպոսում, Արծաթ-Սանասարից առաջ, երեք հերոս աստվածություններ՝

*1,- H. Johari, «Numerology With Tantra, Ayurveda and Astrology», 1990, USA.
*2,- Jhon Major Jenkins, «Galactic Alignment », 2002, USA, p. 75.
*3,- "Bhagavata - Purana" iv. 24, 4. /Ոսկյա, արծաթյա, պղնձյա եւ երկաթի ժամանակ-սֆերաններ:
*4,- «Սասունցի Դավիթ», 1989թ., Երեւան, էջ 136:

1. Կակիկ, 2. Ծովինար, 3. Թորոս, արդեն «ձեւավորել» էին առաջին՝ ոսկյա եռանկյունին, ոսկյա ժամանակաշրջանը:

Վիշապի բերանից ակը հանելով եւ սյան գլխից ոսկի խնձորը *(Դեղձունի խորհրդանշանն է)* վայր բերելով ու ***կույսին*** տալով, Սանասարը նրան «զրկում» է հմայանք-կախարդանքից, եւ դարձնում սերունդ տվող՝ ՄԵԾ ՄԱՅՐ:

Փաստորեն հարսնացուին խնձոր տալը, հազարամյակների խորքերից մեզ հասած եւ մինչ այժմ հայ իրականության մեջ պահպանված ծիսական արարողություն է: Հուրրիներեն՝ [*Hinzuri]*[1] (***հինզուրի*** – այսօրվա հայերենով՝ ԽՆՁՈՐ, - **h > խ**), նաեւ ***հունիս-հուլիս*** ամսվա անունն էր, որ, հավանաբար, հետագայում դարձել է Մարգաց կամ Հրոտից (նայած, թե հուրրիներն այսօրվա ամսվա ո՞ր օրվանից էին սկսում ամիսը): Հների *(մ.թ.ա. III-II հազար.)* նոր տարվա առաջին օրվանից՝ Մարտ 21-ից սկսած, VI ամսվա 25 օրը, առավոտյան առաջինը բարձրանում են AB. SIN (աստղը՝ Spica),- այսօրվա «Կույս» համաստեղության աստղերը*[2]: Հուլիսի կես-Օգոստոսի կես ընթացքում, երբ արեւը, լուսինը եւ հինգ մոլորակները առավոտյան կգտնվեն «Կույսի» համաստեղությունում(մ.թ.ա V-II հազ. Sky Glob 3.5), ըստ «Սասնա Ծռեր» էպոսի, Սանասարը 60 փահլեւանների հետ կենաց-մահու կռիվ կմղի: Կռիվը կշարունակվի այնքան, մինչեւ Արեւի եւ լուսնի շավիղների խաչաձեւման կետում՝ ***Կարիճ*** աստեղատան մոտ, Բաղդասար-Լուսինը կհասնի եղբորը, երբ Սանասարը 60 փահլեւաններից 40-ին սպանել էր, բայց արյունը աչքերը լցվելով, կուրացած, մնացած 20 փահլեւաններին մի կերպ դիմադրում էր: Ըստ էպոսի, ***Բաղդասար-լուսինը*** իրենով փակելով ***Սանասար-արեւ*** եղբոր դիմացը, սպանում է մնացած 20 փահլեւաններին: ***Խավարում՝ լուսնի հարավային մակածում. 54 տարվա կտրվածքով կրկնվող փուլ է,*** որ հայտնի է եղել հներին, օրինակ՝ շումերական Ուրուկ քաղաքում ((F. THUREAU-DANGIN, Tablettes d'Uruk, Paris 1922, Text no. 14). B. L. van der Waerden, "Science Awakening II, p. 103.) :

Վաթսուն փահլեւաններ: Սանասարը թագավորին հարցնում է.

«Դարձավ հարցուց, - Թագավոր,
Դու քո վաթսուն փահլեւան մնկդի՞ր տի հանես»:
Վաթսուն փահլեւանները դեռ երբեք «մնկդիր» չէին ելել:
« Ըզքեզ ցրիվ կտան, - ասաց Թագավորը, - մեկ մեկ հանեմ կռվեցեք»:
«Վաթսունն էլ մնկդիր թող դուրս, կռվենք»*[3]:

Էպոսի այս հատվածը, մի կողմից, Ծիր Կաթնում «ժամանակը հաստատելու» մասին է՝ փահլեւանները 60-ն էին *(60րոպե, 60 վրկ., 1 ժամը = 3600 վրկ., որ շումերական Շար-ն է)*, եւ վեց աստեղատներով վեց ամիսները՝ կես տարին է. արեւի եւ լուսնի մակածները իրարից հեռու են վեց ամիս՝ վեց աստղատուն հեռավորությամբ: Մյուս կողմից, այս հատվածը նաեւ ընդգծում է լուսնի հարավային մակա-

*1, – Ն. Վիրապեան, «Հայ ժող. ծագումը», 1993թ., ԱՄՆ, էջ 46:
*2,-Bartel L. van der Warden, "Science Awakening II", p. 75.
*3,- «Սասունցի Դավիթ», էջ 143:

ձում, արեւի խավարման մասին*(տես՝ Sky Glob 3.5 ծրգ.):* Եվ վեցապես, էպոսի այս էպիզոդը վերաբերում է նաեւ վեց մոլորակներին: Ոգիների աշխարհում արեգակնային համակարգի 6 մոլորակներին սպանելով, ***Սանասար-արեւը*** եւ ***Բաղդասար-լուսինը*** նրանց դեպի արտաշխարհ տրանսֆորմացիայի՝ կյանքի են կոչում: Թե ինչո՞ւ է էպոսում նշվում մոլորակների թիվը՝ վեց, պարզ է. հներին հայտնի էին՝ արեւ, լուսին եւ վեց մոլորակները:

♀	☿	♀	♂	♃	♄
Երկիր	Մերկուրի	Վեներա	Մարս	Յուպիտեր	Սատուրն

Սանասարը «հաստատում է ժամանակը: Ծիր-Կաթնում «ժամանակ» դեռ չկար: Դեղձունի ձեռքը խնդրող երիտասարդները մեկ օրում, քաղաքի պարիսպների տակ, դառնում էին ծերունի: Սանասարը Քաջանց (ոգիների) թագավորությունում 60 փահլեւաններին «սպանելով», նրանց կյանքի է կոչում արտահայտված աշխարհում, եւ հաստատում է ժամանակը: Այսինքն, ըստ «Սասնա Ծռեր» էպոսի՝ «ժամանակ» կատեգորիան հաստատվում է արեգակնային համակարգության 6 մոլորակների արտաշխարհում ծնվելով եւ նրանց պտույտով:

40-ին Սանասարն է սպանում, մնացյալ 20-ին՝ օգնության հասած Բաղդասարը: 40 եւ 20 թվերի խորհուրդն արդեն ասում է, որ 20-ը անկատար թիվ է, եւ որ Բաղդասարի տեղը պիտի զբաղեցնի 40 Ճյուղ Դեղձունը, որպեսզի Սանասար 40 + Դեղձուն՝ 40 = 80 = 8 + 0 = 8 համակարգը որպես ամբողջություն՝ լրացվի: Երկվորյակները որպես՝ **Սանասար եւ Դեղձուն,** ներկայացնում են ***ջուր*** եւ ***հուր*** ատրիբուտները, որտեղ Դեղձունը՝ հուրն է: Համակարգում եղբայրը ***ջուր,*** քույրը ***կրակ*** մոտեցումը բուն հայկական է*[1]: Երկվորյակները երկրաչափական օկտահեդրոն ծավալն են՝ 4 - 8, եւ համապատասխանում են ուրարտական Ճիվինի աստծո հետ: Էպոսի պատումներում բազմիցս այս 4 կամ 8 թիվը շեշտվում է. օրինակ, երբ երկվորյակները թագավորի առջեւ են կանգնում, ապա յոթ անգամ երկիր (գետին) պագանելուց հետո, ***ութերորդում*** ձեռքերը կանթում, կանգնում են (1>8 համակարգ)*[2]:

Սանասարը առաջին վիշապին չի սպանում, այլ հարվածելով, բերանից ակն է հանում: Առաջին վիշապը (ՎԻՀ-շապ) տիեզերք-«աշխարհի» հիմք-հաստատություն խորհրդաբանական սիմվոլն է: Երկրորդ վիշապին՝ ***«մեկ գոմշի չափ բարձր, հինգ գոմշի չափ էրկեն»***, որը նույնպես ջրի՝ կյանքի, «խոչընդոտ» էր, եղբայրները սպանում են երկու կլոր ջաղացքարերով (1>8 համակարգ):

«Էրկու կլոր քար կա, առնենք, էրթանք.
Էրկուսի մեջն էլ ծակ է, կը մտուցենք մեր թելքեր,
Կ'երթանք: Գնացին քարեր առին»*[3]:

Երկու կլոր քարերը, որպես իրար մեջ երկու օղակներ, կենտրոնում՝ սվաս-

*1,- Ղ. Ալիշան, «Հին հավատք», էջ 30
*2,*3, - «Սասունցի Դավիթ», 1989թ., էջ 93, 152:

տիկա, տիեզերքի հնագույն պատկերացման խորհուրդն է, որը հինգ հազարամյա Մեծամորի առնանդամ հուշարձան քարասյունին է պատկերված:

Էզրեց երկիր: Սանասարը կախարդուհի Դեղձունին ձիու գավակին դնելով, փախցնում է հմայքների երկրից եւ ճամփաբաժանման խորհրդավոր ծերունու խորհրդով բարեւում է իր ճանապարհին հանդիպող «կենդանիներին»՝ մսուրքի աստեղատներին, մինչեւ հասնում է Էզրեց երկիր *(Էզրեց > Արզրում տեղանք, որն ըստ էպոսի, Քեռի Թորոսի «տներից > աստեղատներից» է: Էզրեց երկիրը որպես տեղանք՝* ***Էզրեց < Արզրում,*** *հնարավոր տարբերակ է՝* ***Արզան*** *կենտրոնը, Աղձնիք նահանգում: Երկնքում «Կարիճ-Աղեղնավոր» աստղատների միջեւ տեղամասը համապատասխանում է Հայկական լեռնաշխարհի* ***Աղձն*** *եւ* ***Կորդունք*** *տեղանքների հետ)*: Ըստ հների, «Կշեռք» համաստեղության երկու թասերը՝ մի կողմում ***«Կարիճի»***, մյուսում՝ ***«Կույսի»*** համաստեղությունները, «բալանսի»՝ ***անդրաշխարհի*** եւ ***արտահայտված աշխարհի*** կշռութային սահմանն է: Էզրեց երկրում՝ ***«Էնտեղ մեկ մուրտառ գազան մի ռաստ էկավ, Սանասար էնոր բարեւ չէտուր: Էն գազան էլ էլավ հետ էրկնուց. բարձր ձենով կանչեց.- հայ՝, տարա՝վ, տարա՝վ, Սանասար Քառասուն-Ճյուղ-Ծամ աղջիկ տարա՝վ»*** [1]:

Ծրջանաշղթայի «մարմինները»՝ թուփը քարին, քարը անասունին, սպիրալաձեւ հաղորդելով, բոթը Քաջանց, հմայքների երկիր են հասցնում:

Բոլորը (աստղերը) հարձակվում են «հմայքների երկիրը» «բալանսից» դուրս բերող, նյութական տիեզերքի նախաձուն *(Դեղձուն Ծամ)* գողացող Սանասարի վրա: ***«Էրկնուց աստղերին համար կար, հեծելին համար չկար»*** [2] :

Եղբորը օգնության է հասնում սպիտակ ձիավորը՝ Բաղդասարը, եւ միասին նրանք «սպանում» են **(կյանքի են կոչում նյութական արտահայտմամբ)** բոլոր աստեղատներին: «Սպիտակ ձիավոր» սիմվոլը մեկ անգամ եւս ընդգծում է, որ եղբայրները «սպիտակ» հերոսներ են, որոնք «արարում», «ձեւավորում» են «լույսի աշխարհը», խավարից անջատելով այն: Լույսը խավարից, «անդունդի վիհից» անջատելը *(Գիրք Ծննդոց),* կամ աստվածների «մանիֆեստացիան» *(եգիպտ. Մեռյալների գիրք),* - տիեզերքի աներեւութականից երեւութական արտահայտություն ստանալու գաղափարն է՝ հնագույն աշխարհընկալման պատումային տարբերակներում:

«Սասնա» էպոսի մեզ հասած ավելի քան 150 պատումային տարբերակներում[3] առկա են այնպիսի կտորներ, որոնք ուղղակի ցուցում են, որ էպոսը երկնակամարի կենդանակերպ աստեղատների ձեւավորման մասին վիպական ներկայացում է եւ ամենակարեւորը՝ մոտավորապես ճշգրտում է էպոսում «տեղի

---

*1, - «Սասնա Ծռեր», հ. Ա, պատում՝ Է, էջ 323:

*2,- «Սասունցի Դավիթ», էջ 158:

*3,- 2003թ. հոկտեմբեր 4-ին, Լոս Անջելեսում, վաստակաշատ հավաքագրող, էպոսագետ Արուսյակ Սահակյանն ինձ հայտնեց, որ գոյություն ունեն «Սասնա» էպոսի 47 պատումներ, Մ. Աբեղյանի արխիվ, որոնք մինչեւ այժմ, ցավոք, չեն հրատարակվել:

ունեցած դեպքերի»՝ աստղագիտական երեւույթների ժամանակագրությունը*[1]:

Վերեւում նշվեց, որ հների հնագույն հավատամքային պատկերացումներում, եթե նյութական աշխարհում որեւէ մեկը մեռնում է, ապա մարմնազուրկ լինելով, հայտնվում է ոգիների թագավորությունում, անդրաշխարհում: Եվ հակառակը՝ այնտեղ «սպանվելով», նյութական արտահայտությամբ հայտնվում են այս աշխարհում:

«Սասնա Ծռեր» էպոսի պատումներից մեկում նկարագրվում է, թե ինչպես են երկվորյակները գնում Քառասուն Ճյուղ Դեղձուն Ծամին բերելու, եւ թե ինչպես է եղբորը հետեւող Բաղդասարը, անցնելով աստեղատների օղակաշղթայով, հմայքների երկրում «սպանում»՝ այսինքն,- անդրաշխարհից արտաշխարհ կյանքի է կոչում՝ ***Ջրի մարդուն***, ապա՝ ***Հացի մարդուն*** եւ այլն, որոնք բառացի վերաբերում, եւ արեւի ճշգրիտ ընթացքով համապատասխանում են՝ «Ջրհոսի», «Օրիոնի», «Հիդրայի», «Առյուծի», «Կույսի», «Կարիճի» համաստեղություններին:

Թե՛ եգիպտական, թե՛ Միջագետքյան համակարգերում, «Օրիոնը» համարվել է «Հացի տուն» ***(Օգիրիսի մարմնից ցորեն էր աճում: Կտակարանում՝ Բեթլեհեմ-«հացի տուն»: Նաեւ՝ հնագույն հավատամքի Օրիոն-հացի տունը դառնում է Քրիստոս՝ նոր կրոնում, եւ իր մարմինը որպես հաց է հրամցնում)***:

«Սասնա Ծռեր», հ. Ա, պատում՝ Է, էջ 323, կա հետեւյալ հատվածը, թե ինչպես Բաղդասարը տեսնելով, որ եղբոր աստղը խավարել է, գնում է օգնության*[2]:

«Գնաց խասավ հանտե* [I],

[տես՝ «Ս. Ծ.», հ. II, մ. II, բառարան, հանդուդք > հանտ(դ)+ե]

Վուր աղվիս ան սարից կը թըռնը ան սարը վրա,
Կ'ըսի՝ «Խամ խիալ, քարվան խիալ»*[II]:

[Խ.խ.ք.խ. - էշն ի՞նչ է մտածում, քարավանն ի՞նչ է մտածում]

Բաղդասարն ենաց.- Կանի, քո տիրուջ...
Խամ ի՞մն ի, խիալ քո՞ւն:
Թուր եզար, աղվիսու վիզ կտրից,

---

*1,- Այն մասին, որ «Սասնա Ծռեր» էպոսը երկնքում զոդիակների ձեւավորման մասին էպոս է, առաջին անգամ, ներկայացրել եմ 1996թ.-ին, «Փոքր Մհեր» պոեմի (գրքի, որի հեղինակը ես եմ) վերջաբանում, եւ նույնը որպես հոդված հրատարակվել է՝ 1997թ.-ին, Լոս Անջելեսի «Եղիցի Լույս» ամսագրի 4-րդ համարում:

*2,- «Սասնա Ծռեր» հ. I, 1936թ., Երեւան, պատում՝ **Է**, պատմեց Մոկացի Սախո: Գրի է առել Ս. Հայկունին: Պատմողը պատումը լսել է կիսաթաքուն կյանք վարող գզրչիներից. տես՝ առաջաբանը: Այս պատումն առաջին անգամ տպվել է Եմինյան ազգագրական Ժողովածուի **Բ** հատորում, 1901թ.-ին: *(ըստ իս՝ ամենամիստիկ, տիեզերական եւ էզոտերիկ-թաքնագիտականն է հավաքված 150 պատումներից):*

Կտուր ըմ հուրուղկից երնեել, մեկ արեւպատք*[III]:

[կտուրից նայեց դեպի արեւպատք, - արեւմուտք]

Ընցավ, գինաց. գինաց, տիսավ ըն մարդ,
Վուր յոթ ջաղցը ջուր կը խմի,
Կ'ըսի՝ «Յաման իս ծարավ մնռա»:
Թոր ըմ նթալ անու վրգն էլ կտրից:
Հանտուց ընցավ, գինաց ըն մարդու մոտ,
Ծուր յոթ փուռ խաց կուտեր.
Կ'ասեր՝ «Իս անոթը մնռա»:
Թոր ըմ նթալ անու վրգն էլ կտրից,
Եսաց.- Քո խեր անիծած,
Յոթ փուռ՝ յոթ քաղաք կը կշտացընի.
Դու յոթ փուռ կ'ուտիս, դալ կ'ըսիս՝ «Անոթը մնռա»:
Անտուց ընցավ, գինաց, խասավ մատ ան յոթ դեւ*[IV],

[մատ՝ աստիճան, մատ-մոտ]

Ձիուց իջավ տակ, նստավ անոնց կուշտ:
Խնձուր վուր կը թալրն մեկ մեկը,
Դոր իրի, խասավ անու.
Համա զխնձուր եդի ծուց,
Իլավ, խիծավ հուր ձրն,
Գինաց, խասավ խանջու մոտ, եսաց,- Խանջի,

[խանջի.- իջեւանատեր]

Ան հինչ կռիվ ի, աս հի՞նչ տրնկտրնկուց ի:
Խանջին եսաց, -Վալա չըմ գըտի.
Հերնեկ հըրկուն քո նմուշին ձիավուր մ' իրի ըսդա.
Առուտուն եկրն, խաբար մ' անուցմմնե, խաբար մ' անումնե,
Կռվան, խալա ան կռիվն ի, կը կռվրն»:

{* I, II, III, IV, – «Սասնա Ծռեր», Երեւան, 1936, հ. 2, մ. 2, բառարան}:

Մինչեւ Բաղդասարի «աստղային ճանապարհի» աստղագիտական մեկնությունը ներկայացնելը, պետք է ընդգծել, որ մինչեւ Բաղդասարի «դեպքի վայր» հասնելը, Սանասարն արդեն անցել էր եղբոր անցած ճանապարհով, եւ նույնիսկ հասցրել էր վիշապի երախից ***ակ-մատանին*** հանել, որի պատճառով վիշապը քամի էր անում եւ ծովը փոթորկել էր («ծով կատղավ»): Ծերունին, որի տանը Սանասարը անցկացնում է գիշերը, բացատրում է, որ նրան հանդիպած աղվեսը, ինչպես նաեւ 7 ջաղացի ջուր խմող, բայց ծարավ, 7 փուռի հաց ուտող, բայց

Եգիպտական Անիբուսը

սոված, եւ պարսպի տակ գտնվող ծերունիները, որոնք մեկ օրվա մեջ ծերացել էին, կախարդուհի Դեղձունի հմայաքի արդյունք են, եւ դրա վերացումը վիշապի երախում գտնվող ***ակ-մատանու*** մեջ է:

Երկու եղբայրներն էլ, ուղեւորվելով դեպի Դեղձուն Ծամի քաղաք, սկզբում հասնում են ***«հանտն»***, որտեղից «իջնելով» նախ հանդիպում են՝ 1.- Աղվեսին ***(«Աղվեսի» կամ գայլի համաստեղություն, որ անդրաշխարհի դուռն է պահում: այսօրվա՝ Serpens Cauda),*** 2.- ջուր խմող, բայց ծարավ մարդուն ***(«Ջրհոսի» համաստեղություն),*** 3.- հաց ուտող, բայց քաղցած մարդուն ***(Օիոնի՝ «հացի տուն» համաստեղություն),***, 4.-Աստիճանաձեւ վիշապին ***(«Հիդրայի» համաստեղություն),*** 5.- Խանջուն (***իջեւանատիրոջը՝ Առյուծի համաստեղություն, Regulus աստղ),*** եւ վերջապես՝ 6.- Դեղձունի քաղաքն են հասնում***(«Կույսի» համաստեղություն):*** Վեց աստեղատներ, որոնցից երեքին Բաղդասարը «սպանում է»: Իսկ երբ մնացած աստեղատներն իմանալով Դեղձունին փախցնելու մասին, հարձակվում են երկվորյակների վրա, եղբայրները սպանում են մնացածներին, այսինքն, քաջանց՝ ոգիների թագավորությունը սրի մատնելով, նրանց կյանքի են կոչում դեպի նյութական տրանսֆորմացիա՝ արտաշխարհ: «Ջուր խմող, բայց ծարավ մարդը» կամ «հաց ուտող, բայց սոված», քաջանց թագավորությունում մարմնազուրկ ոգիներ լինելով, անշուշտ չէին կարող հագենալ, քանի-որ նրանք ***դեռ*** ոգիներ էին եւ ապրում էին քաջանց թագավորությունում՝ ոգիների աշխարհում:



Եգիպտական Անիբուսը կշեռքի վրա կշռում է մեռյալի սիրտը, մինչեւ Թոթին հանձնելը

Սանասարը Դեղձունի մոտ՝ ***Պղնձե քաղաք***, որոշ պատումներում՝ ***Օձի քաղաք,*** իր ճանապարհը սկսում է հասնելով՝ ***«հանտն»: «Հանտն»,*** ըստ սասնո բարբառի եւ բառի օգտագործված իմաստով նշանակում է՝ «անդունդ», եւ էպոսում նկարագրված Օձի աստղատունը գտնվում է Ծիր Կաթնի կենտրոնին մոտ: Սանասարի ու Բաղդասարի երկնային ատրիբուտները՝ արեւի եւ լուսնի շավիղներն են եւ այս ***երկու շավիղների հատման՝ խաչման հանգուցակետերը գտնվում են՝ հյուսայինը՝ «Երկվորյակների» համաստեղությունում, հարավայինը՝ «Կարիճի» եւ «Օձակիրի» (Ophiuchus) համաստեղությունների մոտ, որն իսկապես Ծիր Կաթին գալակտիկայի կենտրոնին մոտ է, եւ այստեղ կա սեւ խոռոչ: Մեցոամերիկյան երկվորյակների մասին***



Մատ-ան յոթ դեւ: Հիդրայի համաստեղ. վերականգնությունը՝ Վան Դեր Վարդենի:



էպոսում *(որ համանման է հայկական էպոսին)*, ***այս տեղամասը ներկայացված է որպես «արարման տեղամաս»*[1]:*** Այստեղից են ծնվում կամ արտահայտվում աստղերը կամ աստեղատները: Այստեղ է գտնվում նաեւ դռնապահ շունը՝ հուն. դիցաբանության Կերբերը, նաեւ եգիպտական «աղվեսաշունը», որը «ճանապարհներ բացողն» է եւ այլն *(ըստ եգիպտական միֆոլոգիայի շուն՝ Anubis)* ***[2]:***

Վերեւում «Սասնա» էպոսից բերված հատվածում, պարզորոշ ներկայացվում է, որ Բաղդասարը եղբորը՝ Սանասարին հասնելու համար սկզբում գնում է «հանտե»՝ գալակտիկայի կենտրոն, որտեղ հանդիպում է «աղվեսին»: «Աղվեսաշան» կամ շնագայլի համաստեղությունը «Կարիճի» համաստեղության մոտ է գտնվում. Միջագետքյան մ.թ.ա. I հազարամյակով թվագրվող MUL.APIN աստղացանկում այն ներկայացված է որպես «կատաղի շուն»՝ ***UR. IDIM = Serpens or Caput serpentis*** [3]: Այս համաստեղությունն աղերսվել է «աղվես» կամ «որսաշուն» սիմվոլի հետ, որպես՝ «ուղիներ բացող»: Անդրաշխարհի դռների պահապանը նա է: Եգիպտական հավատամքային պատումներում, մահվան ծիսակատարության ժամանակ, Անուբիսը կշռում էր մեռյալի ***սիրտը,*** որոշելու համար նրա մեղքերի չափը, որպեսզի որոշվեր, թե մեռյալի հոգին ի՞նչ կարգավիճակ ունի եւ դրա համեմատ՝ ինչպե՞ս է շարունակելու իր ուղին: Հայկական հեքիաթներում անդրաշխարհի դռնապան գայլաշունը հայտնի է որպես «սանամեր աղվես» կամ «սանահեր գայլ» անուններով, որ նշանակում է՝ հոգեհայր կամ հոգեմայր. ***սան-ա-մայր*** **(սան > հոգի)**,- «հոգեմայր աղվես»: «Սասնա Ծռեր» էպոսում այս աստեղատունը նորից կհանդիպի, որպես Խանդուդ Խանումի դռնապահ՝ ***Գորգիզ, որ պարսկերեն թարգմանվում է՝ գայլ*** [4] *(գայլաշուն դռնապանի կամ Գայլ անունով դռնապանի անունը, միջնադարում, էպոսը պատմող գուսանների իմպրովիզի արդյունք է)*:

Սպանելով «աղվեսին», Բաղդասարը ***«կտուր ըմ հուրուղկից երեւել արեւվպատը»***՝ այսինքն, կտուրից շարժվեց արեւելքից արեւմուտք **(տես՝ «Սասնա Ծռեր», հ. 2, մ. 2, բառարան, 1936, Երեւան)**: Ճանապարհին, հերոսը հանդիպում է յոթ ջաղացի ջուր խմող մարդուն ***(Ջրհոսի համաստեղություն),*** ապա քիչ էլ գնալով, հանդիպում

---

*1,- Jhon Major Jenkins, «Galactic Alignment», 2002, USA, p. 41.
*2,- J. A. West, «The High Wisdom of Ancient Egypt», 1979, USA, p.130:
*3,- B. L. van der Waerden, “Science Awakening II, p. 73.
*4,-Գորգիզ անվան թարգմանութ. որպես՝ «գայլ»,- հեռախոսով Ա. Դավթյանի հայտնածն է:



է յոթ փուռ հաց ուտող մարդուն ***(Օրիոնի համաստեղություն),*** որից հետո հասնում է՝ «մատ ան յոթ դեւ»-ին ***(յոթ աստիճանածեւ դեւի մոտ՝ «Հիդրայի» համաստեղություն):*** Որից հետո հանդիպում է Խանջիին ***(իջեւանատիրոջը, որ մի շարք այլ պատումներում ներկայացված է՝ տանուտեր, կամ՝ մեծ հոտի հովիվ կամ հովիվ-թագավոր: Այստեղ «Առյուծ» համաստեղության Ռեգուլուս (թագավոր) աստղն է:*** Վերջինս Բաղդասարին ցուցում է, թե որտեղ է Քառասուն Ճյուղ Դեղձուն Ծամի համար կռիվն ընթանում. «Առյուծ» համաստեղությունից հետո, հաջորդը՝ «Կույսի» համաստեղությունն է:

Սանասարը արարող տիեզերական մայր Դեղձունի հետ նոր էջ, նոր սկիզբ են հաստատում, կյանքի կոչելով իրենց երեք որդիներին՝ ***Վերգո*** *(«Կշեռք-Լուծ» համաստեղություն, «ճողված Վերգո» արտահայտությունը պատահական չէ),* ***Զենով Հովհան*** *(«Զրհոս-Այծեղջյուր» համաստեղության տուն)* եւ ***Մեծ Մհեր*** *(«Առյուծ» համաստեղության տուն):* Արտաշխարհի երկնային շրջանաշրջթայում նոր եռանկյունի է ձեւավորվում՝ 1.«Կշեռք», 2.«Այծեղջյուր-Զրհոս» եւ 3.«Առյուծ» համաստեղություններ: Սրանք՝ զոդիակի կարդինալ աստեղատներն են: ***Զենով Օհանը*** եւ ***Մեծ Մհերը՝ ձմեռային*** եւ ***ամառային*** արեւադարձերը միտող՝ «Զրհոս-Այծեղջյուր» եւ «Առյուծ» համաստեղություններն են, որ իրարից 180⁰կամ վեց ամսվա հեռավորությամբ են գտնվում, իսկ նրանց մեջտեղում է գտնվում ***աշնանային գիշերահավասարը*** միտող «Կշեռք-Յոան Վերգո» համաստեղությունը *(տես գծագիրը):*

«Սասնա Ծռեր» էպոսում, հոգիների աշխարհում երկվորյակների հանդիպած աստեղատուն աստվածությունները հետեւյալ են՝

1. «Աղվես-Կշեռք»,- աշնանային գիշերահավասար,
2. «ջրի մարդ-Զրհոս»,- ձմեռային արեւադարձ,
3. «Հացի մարդ-Օրիոն»,- գարնանային գիշերահավասար,
5. «Յոթ մատան դեւ»,- Հիդրա + Խեցգետին

{Միջագետքյան MUL. APIN աստղագիտական տեքստերում, Հիդրայի գլուխը հասնում է մինչեւ այսօրվա Խեցգետին համաստեղ. B cancri, mag: 3.8 աստղն է: Van der Warden, “Sci ence Awakening II, p. 73”}: «Սասնա Ծռեր» h. I, Երեւան, 1936թ., պատում է:

4. «Իջեւանատեր-Առյուծ»,- ամառային արեւադարձ:
5. «Դեղձուն-Կույս»,- {MUL. APIN-ի տեքստերում՝ AB.SIN անունով, այսօրվա աստղը՝ spica}:
6. «Կշեռք-Կարիճ»:

Ըստ էպոսի, երկվորյակների ընթացքը՝ արեւի ուղեծրում չորս կարդինալ աստեղատների ֆիկսումն է: Եվ էպոսում «Զրհոսը»՝ որպես ձմեռային



Երկվորյակների երկրաչափական սիմվոլը՝ Օկտահեդրոնն է: Ունի՝ 8 նիստ եւ 12 կողեզր: Կազմված է չորս նիստանի երկու բուրգերից: Էլեմենտը՝ օդ:

արեւադարձի աստեղատուն, բացահայտ ընդգծում է հավատամքային այս կոսմիկական պատումի վաղեմությունը՝ որպես մ.թ.ա. V-IV հազարամյակի «արտադրանք», քանզի ձմեռային արեւադարձը «Զրհոսի» աստեղատնում հնարավոր է միայն մ.թ.ա. V-IV հազարամյակում:

Եվս մի կարեւոր նկատառում: Ըստ «Սասնա Ծռեր» էպոսում ներկայացված պատկերի, լուսնի հարավային մակածը եւ աշնանային գիշերահավասարը «Կարիճ» համաստեղությունում համատեղվում են, որը եւ ստեղծում է այն պատկերը, իբր Դեղձունին փախցնելով երկվորյակները՝ արեւը եւ լուսինը միաժամանակ անհետանում են, «խոտորելով» անդրաշխարհ-արտաշխարհ բալանսը:

Եզրակացություն

«Սասնա Ծռեր» էպոսը հնագույն էզոտերիկ-թաքնագիտական եւ աստղագիտական հավատամքային կառույց է: Հին հեթանոսական շրջանում, բոլոր ծիսական իրադարձությունները կատարվել են այս հավատամք կարգակառույցի հիմքով: Նշանդրեք, հարսանիք, կնունք, մահվան ծես, երգ, պար, կենցաղ, տեղանքների՝ գետերի, լճերի ու լեռների սրբություն համարվող անվանումները, տիեզերաբանությունը եւ այլն, մեկ համակարգ էր եւ պետք է համապատասխաներ հնագույն հավատամքային կարգականոնին: Վերեւում, էպոսի արարչության մասին աստղագիտական վիպական ներկայացումը լիովին համապատասխանում է մի կողմից՝ հայկական կենցաղում աղջկա նշանադրության եւ ամուսնության ժամանակների հետ, որ մինչեւ այժմ պահպանված է, մյուս կողմից՝ աղերսվում է ճշգրիտ աստղագիտական երեւույթների հետ:

Նշանդրեքը, ըստ հայկական հնագույն ավանդույթի, արվում էր ***գարնանը:*** Ամուսնությունը եւ աղջկան փեսայի տուն տանելը՝ կատարվում էր ***աշնանը*** (Կարիճի համաստեղություն):

«Երկվորյակները», որտեղ գտնվում է ***արեւի*** *եւ* ***լուսնի*** շավիղների հյուսիսային ***մակածը՝ հանգուցակետը,*** (գարնանային գիշերահավասար) սկզբում (այս դեպքում Սանասարը), վիշապի բերանից հանում է մատանին՝ գարնանային նշանդրեք (***«Վիշապ-Հիդրայի» համաստեղությունը գտնվում է Երկվորյակներից աջ, որի նրախը հասնում է մինչեւ Կույսի համաստեղություն: Երկվորյակները պտտվում են ժամացույցի***

հայր-մայր



Որդի/եր-
կրայակներ





Շրջանաօղակը 6 ելուստներով: 12 աստեղատները՝ վեց + վեց բաժանումներով:

սլաքի ուղղությամբ): Դեղձուն Ծամին փախցնում են «Կարիճի» համաստեղությունից՝ աշնանային գիշերահավասար, ամուսնություն: Մուրտառ գազան՝ «Կարիճի» համաստեղությունը, այս դեպքում, գարունից աշուն կես տարեփուլի վերջին աստեղատունն է եւ ներկայանում է որպես՝ անդրաշխարհ-արտաշխարհ «կշռույթային բալանսի խոտորման» աստեղատուն: ***«Էնտեղ մեկ մուրտառ գազան մի ռաստ էկավ, Սանասար էնոր բարեւ չէտուր: Էն գազան էլ էլավ հետ էրկնուց. բարձր ձենով կանչեց.- հա՜, տարա՜վ, տարա՜վ, Սանասար Քառասուն-ճյուղ-Ծամ աղջիկ տարա՜վ»*[1]:***

Դեղձունը տիեզերական ծավալման հաջորդ փուլն ապահովող, դեռ չբեղմնավորված ***«Կուսական Զուն»*** է, որի համար Երկվորյակները պատերազմ են մղում: Մինչ այդ Ծիր Կաթնում «ժամանակ» երեւույթը դեռ չկար: Դեղձունի ձեռքը խնդրող երիտասարդները քաղաքի պարիսպների տակ դառնում էին ծերունի մեկ օրվա ընթացքում: Սանասարը Քաջանց (ոգիների) թագավորությունում 60 փահլեւաններին «սպանելով», նրանց կյանքի է կոչում արտահայտված աշխարհում, եւ հաստատում է «ժամանակը»: «Սասնա Ծռեր» էպոսում ***ժամանակի*** հաստատումն ուղղակի կապվում է՝ արեւի, լուսնի եւ նրանց շավիղների հետ, ինչպես նաեւ այդ շավիղ-ճանապարհին՝ «Երկվորյակներից» մինչեւ «Կարիճ» վեց աստեղատների հետ: Տարին եւ երկնակամարը որպես երկու՝ 6 + 6 աստեղատներով եւ ամիսներով շրջանաշղթաներ ներկայացնելը, հեքսագոնյալ՝ վեցական համակարգ է, որտեղ հեքսագոնի յուրաքանչյուր եզրի «արժեքը» տաս միավոր է *(էպոսում՝ 60 փահլեւաններ):* Սա հնագույն շումերական ժամանակների թվաբանական մատրիցայի մոտեցում է, որ հետագայում, ասենք՝ հին բաբելոնյան շրջանում կամ MUL.APIN-ի ժամանակներում *(մ.թ.ա. I հազարամյակ)* փոփոխություններ կրելով, որպես այդպիսին չի օգտագործվել: Շումերական վեցական համակարգը նաեւ արտահայտվում է նրանց հավատամքում, պանթեոնի գլխավոր վեց զույգ աստվածություններով: «Սասնա Ծռեր» էպոսում հեքսագոնյալ *(վեցական)* համակարգը արտահայտվում է որպես վեց աստեղատուն-աստվածությունների ներկայացում:

*1, - «Սասնա Ծռեր», հ. Ա, պատում՝ Է, էջ 323:

«Սասնա Ծռեր» էպոսի կոսմիկական այս պատումը, փաստորեն, լուսնի ուղեծրի ընթացքի մասին է, եւ Բաղդասարն այստեղ ներկայանում է որպես լուսնի շավիղ: «Օրիոն-հացի տուն» համաստեղությունից հետո, այս պատումում, Բաղդասարն անմիջապես անցնում է «Հիդրայի» համաստեղություն՝ «Յոթ մատան դեւին» եւ ոչ թե ավելի ուշ ժամանակներում ընդունված «Խեցգետնի» համաստեղությանը: MUL. APIN-ի տեքստերից մեզ հայտնի է, որ այսօրվա «Հիդրայի» համաստեղության գլուխը այսօրվա Խեցգետին համաստեղ. b - Cancri, mag: 3.8 աստղն է*[1]: Եվ Բաղդասարի ընթացքը ներկայացված է աստեղատների հնագույն դասավորությամբ: Էպոսում Բաղդասարի անմիջապես անցումը «Հիդրայի» համաստեղություն՝ «Յոթ մատան դեւին» եւ ոչ թե «Խեցգետնի» համաստեղություն, եւս փաստում է, որ «Սասնա Ծռեր» էպոսում տեղ գտած կոսմիկական ներկայացումը շատ ավելի հին է, քան Միջագետքյան MUL. APIN-ի տեքստերում (մ.թ.ա. XI-IX դդ.) առկա աստեղատների ներկայացումը:

Նախ,

MUL.APIN-ում, I հազարամյակ, ներկայացված աստեղատները՝ 18 +18 համակարգն է գործում*[2], իսկ «Սասնա Ծռեր» էպոսում ներկայացվածը՝ 6 աստեղատներ եւ 60 փահլեւաններ, հեքսագոնի 6-60 համակարգն է, որ շումերական ժամանակների թվային հեքսագոն-համակառույցն է:

Երկրորդ,



Ի կոսահեդրոն

Արեւի եւ լուսնի շավիղների խաչման հանգուցակետերը գտնվում են «Երկվորկյակներ» եւ «Կարիճ-Աղեղնավոր» արանքում եւ երկվորյակները 180^0 անցնելով հասնում են կենտրոն՝ Քաջանց երկիր: Սանասարը, եւ Բաղդասարը, որոնք արեւի եւ լուսնի ***կորագիծ*** շավիղներն են***(սասնա ծռերը = ոգու կորագիծ շավիղներ),*** էպոսի այս պատումում ֆիքսում են տարվա արեւադարձը ըստ հերթականության՝ «Այծեղջյուր-Ջրհոս» - ձմեռային արեւադարձ, «Օրիոն-հացի տուն» - գարնանային գիշերահավասար, «Առյուծ» - ամառային արեւադարձ եւ «Կշեռք-Կարիճ» - աշնանային գիշերահավասար, որ մ.թ.ա. V-IV հազարամյակի երեւույթ է:

Երրորդ,



Օկտահեդրոն

«Ս. Ծ.» էպոսում երկինքը որպես «երկու երկինքների» ամբողջություն ներկայացումը եւ աստեղատների 6-ական համակարգը, MUL.APIN-ից շատ ավելի հին պատկերացում-մոտեցում է, որ ներկայանում է Միջագետքյան սալիկների պատկերներում*(տես՝ «Աստղագիտություն» բաժինը, էջ 76-121):*

*1, *2, - Bartel L. van der Warden, “Science Awakening II”, p. 73, p. 79-80.

Չորրորդ,

Երկվորյակների այս պատումը նաեւ բացահայտ ցուցում է « խավարման» օրինաչափությունը, ըստ որի՝ «խավարման» փուլային երեւույթը միայն հնարավոր է՝ հարավային *(«Կարիճ»)* մակաձներում, ամեն 54 տարին մեկ: Եվ «Սասնա Ծռեր» էպոսում արեի խավարման երեւույթը աղերսվում է՝ վեց աստեղատների, վեցական թվային համակարգի եւ Բաղդասարի անվան մեջ՝ ՍԱՐ- ի հետ: 54 տարեփուլով «խավարման երեւույթը» որպես մաթեմատիկական խնդիր, բացահայտ է «Սասնա Ծռեր» էպոսի «Փոքր Մհեր» ճյուղում, որի մասին մանրամասն կներկայացվի առջեւում: Սակայն, Բարթել Լ. վան դեր Վարդենը գրում է, որ ՍԱՐ-ը՝ Saros, որն ավելի ուշ շրջանում որպես տերմին օգտագործել են հույները լուսնի խավարման18 տարեփուլով հաշվումներում, բայց ՍԱՐ-ի հիմքը՝ շումերական ՇԱՐ = 3600 տարին է, եւ MUL.APIN-ի տեքստերում երբեք չի օգտագործվում*[1]: Նախ, մաթեմատիկոս հեղինակը հավանաբար չի անդրադարձել, որ շումերների մոտ ՇԱՐ-ը ոչ միայն ուներ՝ ***3600 տարի*** իմաստը, այլ նաեւ ՇԱՐ բառը բնորոշում էր՝ «շրջանաօղակ» իմաստը որպես՝ «ամբողջ պտույտ»՝ ***"full rolling off"*** (նույն է եւ հայերենում՝ ՇԱՐ = շղթա): Մյուս կողմից, 3600 : 54 = 66.666 միտում է թվային վեցական համակարգ, եւ վաղ քաղդեական շրջանում «խավարման երեւույթը» հաշվում էին 54 տարեփուլով, որ ինչպես Բ. Վարդենն է ընդգծում, այն ներկայացված է շումերական ՈՒրուկ քաղաքից գտնված սալիկում ((F. THUREAU-DANGIN, Tablettes d'Uruk, Paris 1922, Text no. 14). B. L. van der Waerden, "Science Awakening II, p. 103.)

Երկվորյակներն աղերսվում են նաեւ տիեզերական մեծ տարվա՝ շրջափուլի հետ - 25920 տարի, որի սկիզբն ըստ հնագույն աստղագետների, սկսվում է հյուսիսային բեւեռում «Ժամադիտակի»՝ «Փոքր եւ Մեծ Սայլի» համաստեղության «գերիշխանությամբ»: Ըստ «Սասնա Ծռեր» էպոսի, «երկվորյակներ աստվածությունն է», որ հաստատում է ***ժամանակը:***

«Սասնա Տուն» էպոսում, Սանասարի անունը թիվ է, որ ըստ պատմահայր Խորենացու հնչում է՝ *«Եւ զՇարաշան ի տանէ Սարասարայ»* ***(Մ. Խորենացի, Երեւ., 1981, էջ՝ 130, Հին կտակարանում՝ Շհարեզեր, «Հին կտակարան», Դ թագավորաց, գլ. 19, տող 36-37),*** եւ աղերսվում է՝ ՇԱՐ-ՍԱՐ = 3600 տարեշրջանի ու ամբողջի նշանագիր շրջանաօղակի հետ: Մի կողմից, Սանասարը մեկ լիքը բուռ ջրի արդյունք լինելով եւ իր անվան մեջ՝ ՍԱՐ = ամբողջ, գաղափարագիրը կրողն է, որ ընդգրծում է նրա տիեզերական մեծ շրջափուլի հետ աղերսանքը՝ 25920 մարդկային տարի: Էպոսում Ծովինարի գաղտնաթաքուր հրե աղբյուրից խմած մեկ լիքը եւ մեկ կես բուռ ջուրը, որի արդյունքում ծնվում են երկվորյակ եղբայրները՝ Սանասարը եւ Բաղդասարը, պատահականություն կան քմհաճույք-ֆանտազիայով անիմաստության հասնող հնարանք լինել չի կարող: Սանասարը եւ Բաղ-

դասարը ներկայացնում են երկրագնդի տատանումով՝ Precession-ի երեւույթով պայմանավորված, երկրագնդի առանցքի լրիվ տատանման փուլը՝ Սանասար = 25920 տարի + Բաղդասար = 12960 տարի = 38880 տարի:

Մյուս կողմից, Սանասար մեծ դիցի անվան մեջ երկու ՍԱՐ-երի առկայությունը՝ ՍԱՐ- Ա- ՍԱՐ, ենթադրում է 3600 x 3600 = 12960000 է տարեթիվը, որն աղերսվում է վեդայական Հարի Բրահմայի օրվա 12 ժամերի՝ «տեսանելի, արտահայտված» նյութական տիեզերքի տեւողության մեծ փուլի՝ ոսկյա շրջանի՝ ***Սաթիա Յուգայի*** հետ, թեւ հայկական էպոսի որոշ պատումներում ակնարկ կա, որ Սանասարը արծաթյա հերոս-աստվածություն է:

«Սասնա Ծռեր» էպոսը **չորս ճյուղ է,** եւ քեռի Թորոսը ***40*** *փահլեւանների* գլուխն է. թվաքանակ, որ էպոսում երբեք չի փոփոխվում: ***Սանասարն ու Բաղդասարը՝ արեւի ու լուսնի օդակաձեւ շավիղներն են, որ իրար հետ հատվում են «Երկվորյակներ» եւ «Աղեղնավոր» աստեղատներում, որը եւ ստեղծում է խավարման 54 տարվա կրկնվող փուլը:*** **40 x 54** = 2160 տարի՝ երկրագնդի առանցքի տատանումով՝ Procession-ի երեւույթով, տիեզերական մեկ ամիսը՝ **2160 տարի է:** 6 աստեղատներով ընթացքը՝ 6 x **40 x 54** = 12960: 12 աստեղատներով անցման ընթացքը՝ **12 x 40 x 54** = 25920 տարի է. տիեզերական մեծ տարի: Մեկ ու կես փուլը՝ 38880 տարին՝ 18 x **40 x 54** = 38880: Այսինքն, ըստ հայկական էպոսի՝ **40 թիվը՝ հաստատուն է:** Ըստ հայկական էպոսի՝ երկվորյակները արեւի եւ լուսնի ուղեծրեն են, որ ստեղծում են խավարման կրկնվող 54 տարվա փուլը, որը նույպես՝ հաստատուն է: 6/60-ական համակարգով 54 տարվա խավարման կրկնվող փուլի հաշվարկները առկա են միայն «Սասնա Ծռեր» էպոսում եւ շումերական Ուրուկ քաղաքի սալիկներում: Հետագայում, խավարման կրկնվող փուլի հաշվարկները հունական եւ Միջագետքյան տեքստերում հաշվարկվել են տարբեր կերպ՝ 3 x 18 համակարգով *(F. THUREAU-DANGIN, Tablettes d'Uruk, Paris 1922, Text no. 14). B. L. van der Waerden, "Science Awakening II, p. 103):*



«Սասնա Ծռեր» էպոսը բաղկացած է **չորս** ճյուղից:



«Նախահնդեւրոպական ժամանակներում արիացիների մոտ արխայիկ թվային համակարգը հիմնված է եղել չորս թվով հաշվարկման վրա, որ հետագայում փոխվել է տասական համակարգով»: «Ութ»-ը հասկացվում էր՝ երկու անգամ չորս»[*1]*: «Ութ թիվը՝ երկու անգամ չորս, շրջանի լրման թիվն էր. թիվ «ինը»՝ *newen-, նշանակում էր՝ *newo- «նոր»,- ութ թվի (երկու անգամ չորս) շրջանի լրումից հետո»*[*2]*:*

Քառաթեւ եւ ութաթեւ աստղերը որպես՝ «կենա» եւ «ամբողջ»:

Շումերական համակարգում առկա է նույն սկզբունքը: **Քառաթեւ խաչ** գաղափարագիրը նշանակում է՝ ***«կենա»,*** **ութաթեւ աստղը՝** ***«ամբողջ»,*** որից եւ

*1- (Pokorny 1959: 319, Szemere´nyi 1960:173) T. Gamkrelidze & V. Ivanov, "The Indo-European & The Indo-Europeans", NewYork, 1995, p.747.



բխում են՝ «երկինք-դրախտ», «ԱՆ աստվածության» եւ «աստված» գաղափարագրերը:

«Սասնա Ծռեր» էպոսում երկվորյակները «լրացնում» են՝ **կես***(չորս)* եւ **ամբողջ***(ութ)* համակարգը՝ որպես ***կես բուռ*** եւ ***մեկ լիքը բուռ:*** Քառասուն Ճյուղ Դեղձուն Ծամին քաջանց՝ ոգիների թագավորությունից փախցնելիս, եղբայրներն իրականացնում են արեւի եւ լուսնի ուղեծրերով՝ մեկ շրջանի եւ կես շրջանի ընթացք:

Չորս եւ երկու անգամ չորս, որ ութ է(4+4=8),- թվային համակարգը որպես երկրաչափական մոտեցում, լիովին համապատասխանության մեջ է ժամային՝ 6/60 համակարգի հետ, երբ հավասարաչափ խորանարդի նիստը ընդունվում է՝ 60 x 60 = մեկ IK- սրբազան չափը *(աքքադական՝IKU):* ***Խորանարդը՝*** հարթապատկերային ***հնքսագոնն*** է, որ երկնքում ներառում է արեւի ուղեծրի վեց աստեղատներ, կես տարվա կտրվածքով՝ **գարուն-ամառ,** եւ հաջորդ վեց աստեղատներով՝ **աշուն-ձմեռ,** տարվա չորս եղանակները: ***Երկվորյակները*** խորհրդանշում են՝ ***գիշերը եւ ցերեկը,-***12 ժամ+12 ժամ = 24 ժամ կտրվածքով: Մեկ ժամը հավասար է **60 x 60 = 3600վայրկյան** մոտեցումը՝ խորանարդի նիստի 60 x 60 սրբազան համարվող չափն է: Ուրեմն, գիշերվա 12 ժամը՝ 43200 է, եւ ցերեկվա 12 ժամը՝ 43200, որի հազարապատիկը՝ հնդ-արիական հավատամքում Բրահմի օրվա՝ 12 ժամ տեւողությունն է՝ 4 միլիարդ 320 միլիոն տարի: Փաստորեն, Բրահմի կյանքի տեւողությունը, ինչպես «Սասնա Ծռեր» էպոսում Փոքր Մհերի պարագայում է՝ վայրկյանը ընդունված է որպես տարի: 24 ժամը՝ 86400վրկ. է, 360 օրվա սխեմատիկ տարին՝ 31104000վրկ., որը հնդ-արիական Բրահմի կյանքի մեկ տարվա տեւողությունն է ու եթե նա ապրում է 100 կամ 1000 տարի, ապա խնդիրը միայն զերոների ավելացումն է, քանի-որ սա նո՛ւյն՝ **60^2= 3600 = Շար** հիմքով համակարգն է: Ուրեմն, «Սասնա Ծռեր» էպոսի երկվորյակները, նաեւ խորհրդանշում են **գիշերը եւ ցերեկը,** ինչպես «Ռիգ Վեդայի» երկվորյակ աստվածությունները:



Քարե պատկերաքանդակ, Կասսիտական շրջան, մ.թ.ա. 14-րդ դար, Լուվրի թանգարան



ՔԱՌՍՈՒՆ ՃՅՈՒՂ ԾԱՄ ԴԵՂՁՈՒՆ

«Սասնա Ծռեր» էպոսում տիեզերածավալումն արարող գլխավոր դիցերի կողքին կարեւոր ֆունկցիա են կատարում նրանց կանայք՝ դիցամայրերը: Պատահական չէ, որ հնագույն հնդեւրոպական գլխավոր աստվածությունները հանդես են գալիս իրենց իգական կողակից կեսերի հետ միասին, քանի-որ դեռեւս նախահնդեւրոպական տրադիցիաներում եւ հատկապես նրանց աշխարհճանաչողության մեջ՝ **արական/իգական** բինարիզմի սկզբունքը անկյունաքարային էր:

«Սասնա Ծռեր» էպոսում գլխավոր դիցերի կին աստվածությունները հինգն են՝ Ծովինար, Դեղձուն, Արմաղան, Խանդուդ, Գոհար, որոնցից միայն առաջին չորսն են տիեզերածավալումն ապահովող դիցամայրեր:

Բազմիցս արդեն ներկայացրել ենք, որ հնագույն հավատամքում, արարչության իգական, մայր աստվածություններն աղերսվում են «հիմք» կամ «հիմքի վիշապ» իմաստի հետ, ինչպես վեդայական համակարգում Áhi-Budhnyá «ընդերքի վիշապ»-ն է: Հայ իրականության մեջ, գյուղերում, մինչեւ այժմ էլ գերդաստանի մեծ մորը *(ոչ թե տատիկին)* «քյոռք» են ասում, որ «տուտն», «հիմք», «ընդերք» իմաստներն է միտում: Իսկ էպոսի չորս մայրերը հիմնականում ունեն մեկ ֆունկցիա. նրանք Սասունի՝ ***Ոգու Տան*** համար, առաջնորդող, տոհմը շարունակող արու զավակ ծնող ***տուտը՝ «քյոռքն»*** են:

Ծովինար, Դեղձուն, Արմաղան*(Արմահան > արմա+հան)*, Խանդուդ *(Խան < Հան + դուդ < տուտ)* աստվածային սերունդ տվող գլխավոր չորս աստվածուհիներն են, որոնք իրենց արական կեսի՝ ամուսինների հենարան են, որպես տոհմը շարունակող դիցամայրեր: Նրանք՝ այս չորսը, աղերսվում են «ՄԵԾ ՄՈՐ» բնութագրող էպիտետին, որպես տիեզերածավալման փուլային պրոցեսը շարունակող դիցամայրեր: Ըստ «Սասնա Ծռեր» էպոսի, բոլոր այս դիցամայրերը աղերսվում են անդրաշխարհի հետ: Ծովինարը անդրաշխարհի աղբյուրից է հոիանում: Դեղձունը եւ Խանդուդը անդրաշխարհի արքայադուստրեր են: Էպոսում Դեղձունը եւ Խանդուդը ոչ թե սասնո աղջիկներ են, այլ անդրաշխարհից են հարս գալիս Սասուն: ***Սասնա Տան,*** որ արտահայտված աշխարհի Ոգու արեւային տունն է, արական սեռի առաջնորդների հաջորդականությունը պահպանվում է միայն երկու հակադիր բնույթով*(արեւ-լուսին, հուր-ջուր)* աստվածությունների միությամբ՝ Ծովինար + Անանուն, Սանասար + Դեղձուն, Մեր + Արմաղան, Դավիթ + Խանդուդ:

Լուսնի խորհուրդը նաեւ ծովային ջրերի հետ է աղերսվում, եւ հայկական ավանդություններում Լուսինը եւ Արեւը մի դեպքում՝ մայր ու որդի, մյուսում՝ քույր ու եղբայր կամ ամուսիններ են: Հնդեւրոպական բոլոր հնագույն հավատամքային պատումներում, գլխավոր աստվածները անդրոգեն են կամ մշտապես ունեն իրենց կանանց՝ իգական կեսը, որ բնորոշում է՝ ***Ջուր*** եւ ***հուր*** երկվու-

թյան խորհուրդը: Սասնա էպոսի մայր աստվածուհիների անունների ստուգաբանությունը ներկայանում են լուսնի սիմվոլով որպես՝ արարչության «հիմք», «ընդերք»: ***Լուսինը*** նաեւ անդրաշխարհի, մահվան հետ առնչվող սիմվոլ է, որից եւ՝ ***մահիկ, ամիս, մասա, մըսր, մահ*** բառերն են աղերսվում:

Ծովի Նար – ***Լուսին*** (14 օրեկան Լուսնյակի կնմանէր):

Քառսուն Դեղձուն Ծամ - արեւ?

Արմաղան – հեթթիթ.՝ [arma-]*[1] ***«լուսին»*** // Ղան > ՀԱՆ՝ «մեծ մայր»

Խանդուդ - Հան-դուդ > Հան (մեծ մայր) + ***դուդ՝ տուտն,***- «սկիզբ», «հիմք», «ընդերք»:

«Սասնա Ծռեր» հնագույն հավատամքային կարգականոնում Ծիր Կաթինը բնորոշող Ծովինար տիեզերամոր կերպարից հետո {աստեղատունը՝ KAK.SI.DI/ Կանիս մեծ, աստղ՝ Սիրիուս} գալիս է Սանասարի կին՝ ***Քառասուն Ճյուղ Ծամ Դեղձունի*** բացառիկ հետաքրքիր կերպարը: Ի տարբերություն մյուս դիցամայրերի՝ նրա մասին բնութագրական իմֆորմացիան էպոսում քիչ չէ:

Ո՞վ է ԴԵՂՁՈՒՆ-ը:

1. Քաջանց՝ ոգիների աշխարհի արքայադուստրն է,
որի կենտրոնը Պղնձե քաղաք կամ Օձի քաղաքն է:
2. Կույս է:
3. Կախարդուհի է:
4. Նրա մազերի ծամերը քառասուն ճյուղ են:
5. Նրա անունը ԴԵՂՁՈՒՆ է:
6. Նրա ֆունկցիան էպոսում՝ Սասնա դիցերի տանը արական երեք որդիներ պարգեւելն է: Ցռան Վերգոն, Ձենով Օհանը եւ Մեծ Մհերը, իրականում, երեք՝ «Կշեռք», «Զրհոս», «Առյուծ» աստեղատուն ատրիբուտներով աստվածություններ են:

<u>Դեղձունը Քաջանց՝ ոգիների աշխարհի արքայադուստրն է, որի կենտրոնը Պղնձե քաղաքն է:</u> Պղնձե քաղաք,- ըստ հնագույն հնդ-արիական՝ վեդիկ հավատամքի, նյութական տիեզերքը՝ ռեալությունը, սկսում է ձեւավորվել 3-րդ՝ «պղնձյա-բրոնզյա» ժամանակաշրջանում՝ դուալիզմայուգ, երբ սկսվում է ոգու եւ նյութի միասնության, անկման սկիզբը*[2]: Տիեզերական ձուն՝ Քառսուն Ճյուղ Դեղձուն Ծամը, պղնձյա ժամանակաշերտում է «ազատվում» տիեզերական վիշապից եւ սերունդ տալիս, որպես երկրորդ նախամայր՝ Ծովինարից հետո:

Դեղձունը տիեզերական ծավալման հաջորդ փուլն ապահովող, դեռ չբեղմնավորված ***«կուսական ձուն»*** է, որի համար Երկվորյակները պատերազմ են մղում:

---

*1, – T.Gamkrelidze & V.Ivanov, “The Indo-European And The Indo-Europeans”, 1995, p. 591:
*2, - “Bhagavata - Purana” iv. 24, 4. /Ոսկյա, արծաթյա, պղնձյա եւ երկաթի ժամանակ-սֆերաններ: Rachel Storm, «Indian Mythology», 2000, USA, p. 87

ՇՈՒՄԵՐԱԿԱՆ ՊԱՆԹԵՈՆ



Դիցամոր ԴԵՂՁՈՒՆ < ԴԵՂՁԱՆ անվան ստուգաբանությունը եւս կարեւոր բնութագրական բացահայտում է: *«Դեղնագույն, ոսկեգույն, կարմիր զարնող դեղին»: Բնիկ հայ բառ, ծագում է **դեղ** < հնխ.՝ **dhel** արմատից՝ **ձ** աճականով եւ **ան** մասնիկով»*[1]: « **Դեղ** բառի հետ ծագմամբ նույն են՝ - **Դալար, «խոտ, կանաչ, մատղաշ»***[2] իմաստները: Քառսուն Ճյուղ Ծամ Դեղձունն աղերսվում է բուսականության եւ **ոսկեգույն-դեղին** գույնի հետ:

Երկվորյակների խորհրդաբանական ծավալաձեւը «օկտահեդրոնն» է, էլեմենտը՝ «օդ»: Սանասարի էլեմենտը «օդ» է, նրա հարսնացու Դեղձունն աղերսվում է բուսականության եւ **ոսկեգույն-դեղին** գույնի հետ: Ըստ «Սասնա Ծռեր» էպոսի դիցամայր Դեղձունը Ծովինարից հետո երկրորդ աստվածուհին է:

Շումերական պանթեոնի զուգահեռում մենք տեսնում ենք, որ օդի աստվածության կինը՝ **ՆԻՆԼԻԼԸ,** երկրորդ դիցամայրն է, որ հացահատիկի, բերքի աստվածուհին է:

Տետրահեդրոն



Խորանարդ



Օկտահեդրոն



Սանասարը հաստատում է «ժամանակը»: Քաջանց՝ ոգիների թագավորության Պոնձե քաղաքում՝ Ծիր կաթնի անդրաշխարհիկ կողմում ***«ժամանակ»*** դեռ չկար: Դեղձունի ձեռքը խնդրող երիտասարդները մեկ օրում, քաղաքի պարիսպների տակ, դառնում էին ծեր: Սանասարն իր դեմ դուրս եկած «ժամանակի» խորհուրդը միտող 60 փահլեւաններին հաղթելով՝ «սպանելով», ոգիների աշխարհից նրանց տրանսֆորմացիայի է ենթարկում դեպի արտաշխարհ՝ հաստատելով «ժամանակը»: Փաստորեն, երկվորյակների սիմվոլ ծավալաձեւ օկտահեդրոնը բաղկացած է երկու չորս նիստանի տետրահեդրոններից՝ 4 + 4 = 8: Էպոսում երկվորյակները **ութ** թվի հետ են աղերսվում: Թագավորի առջեւ երկվորյակները՝ ***«Յոթը տեղով էրկիր պագին, ութի վերա ձեռ կապեցին»***[3]**:** Բաղդասարի տեղը պիտի զբաղեցնի 40 Ճյուղ Դեղձունը, որպեսզի՝ **Սանասար 40 + Դեղձունն 40 = 80 = 8 + 0 = 8** համակարգ-ամբողջությունը լրացվի: ԴԵՂՁԱՆ > ԴԵՂ+ ՁՈՒՆ > ԴԵՂԻՆ > ԴԵՂ+ՆՈՒՑ աղերսվում է հնագույն խորհրդապաշտության եւ միֆական պատումներում հանդի-

*1, *2, - Հր. Աճառյան, «Հայերեն արմատական բառարան», 1940թ., Երեւան, հ. I, էջ 651, 648:
*3,- «Սասունցի Դավիթ», 1989թ., Երեւան, էջ 93:

պող տիեզերական նախաձվի հետ, որին փաթաթված էր օձավիշապը *(Manly P. Hall, «The Sectret Teachings Of All Ages», XX, USA 2000):* Փաստորեն, Դեղձունին վիշապից ազատելով, Սանասարը ***արեգակնային*** (Դեղձուն) համակարգության ձեւավորման հարուցիչն է դառնում: Քրիստոնեության մեջ արհեստականորեն մտած, ձվի խորհրդաբանության հետ աղերսվող զատիկը հեթանոսական համակարգում արեւի ծննդի եւ լրման մասին է: Հնագույն թաքնագիտական համակարգում արեգակը հոգեւորի «նյութական կաշկանդման» չորրորդ օղակն է եւ աղերսվում է քառասուն թվի հետ *(Manly P. Hall, «The Sectret Teachings Of All Ages», p. XL, USA 2000):*

Ըստ «Սասնա Տուն» էպոսի, քաջանց ոգիների երկիր հասնելու համար երկվորյակները նախ գնում են հանտե՝ գալակտիկայի կենտրոն, ապա իրենց ճանապարհին հանդիպելով՝ ***աղվեսին, ջրի մարդուն, հացի մարդուն, յոթ մատան դեւին, խանջիին,*** հասնում են Դեղձունի քաղաք: Փաստորեն, սրանք համապատասխանաբար, արեւի եւ լուսնի աջից ձախ՝ արեւելքից դեպի արեւմուտք, ընթացքն է արեւի ***ուղեծրի գոտում*** գտնվող՝ ***«Կշեռք-Կարիճ», «Զրհոս», «Օրիոն», «Հիդրա-խեցգետին»*[1], «Առյուծ»*** աստեղատներով: Էպոսի այս պատումում*[2], Բաղդասարը հասնելով «Առյուծի» համաստեղություն, հարցնում է, թե կռիվը ո՞ր կողմն է, եւ նրան ցուցում են արեւպատք՝ արեւմուտք: «Առյուծ» համաստեղությունից հետո, հաջորդը՝ «Կույսի» համաստեղությունն է: Միջագետքյան MUL.APIN աստղագիտական տեքստերի եւ ցուցակների վերակազմությունը ցուցում է՝ մ.թ.ա. XIV - IX դարերում առավոտյան առաջինը բարձրացող աստղերի ցուցակն ըստ օրերի: Հների նոր տարվա առաջին օրվանից՝ Մարտ 21-ից սկսած, VI ամսվա 25 օրը, առավոտյան բարձրանում են AB. SIN (աստղը՝ Spica),- այսօրվա «Կույս» համաստեղության աստղերը*[3]:

Հնագույն վեցական համակարգը, որով կառուցված են շումերական եւ բաբելական գլխավոր աստվածությունների պանթեոնները, հատկանշական է նաեւ «Սասնա Ծռեր» էպոսի գլխավոր դիցերի թվային կառուցվածքին, որտեղ վեց արական աստվածությունների հետ, մաս են կազմում նրանց իգական զույգերը:

1. Գագիկ + ?(անանուն) 3.Սանասար + Դեղձուն 5.Դավիթ + Խանդուդ
2.Թորոս + Ծովինար 4.Մեծ Միհր + Արմահան 6.Փոքր Միհր + Գոհար

«Սասնա Ծռեր» էպոսի մեզ հասած պատումներում անորոշ է մնում համակարգում վեց դիցամայրերի ճշգրիտ հաջորդականությունը, սակայն մեզ հասած արական սեռի դիցերի եւ դիցամայրերի անունները մեկ-երկու հնչյունափոխված, թեթեւ աղավաղումներով, այնուամենայնիվ հասել է մեզ, ի շնորհիվ ժողովրդական գուսան-պատմողների:

---

*1,- «Սասնա Ծռեր» հ. I, Երեւան, 1936թ., Երեւան, պատում՝ ***Է***:
*2,-Միջագետքյան MUL. APIN աստղագիտ. տեքստերում, Հիդրայի գլուխը այսօրվա Խեցգետին համաստեղ. ***B -Cancri,*** mag: 3.8 աստղն է: B. L. Van der Warden, "Science Awakening II, p. 73".
*3,- Bartel L.Van der Warden, "Science Awakening II, p. 75".

ՄԵԾ ՄՀԵՐ՝ ԱՌՅՈՒԾԱՁԵՎ ՄՀԵՐ





Էլեմենտը՝ «հուր», արեգակնային համակարգում աստեղատունը՝ «Առյուծ», աստղը՝ Ռեգուլուս, որ նշանակում է՝ «թագավոր», «տանուտեր»: Սիմվոլը՝ «արեւ», ծավալաձեւը՝ «խորանարդ»:



ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

Մեծ Մեր՝ Առյուծաձեւ Մեր:





Հայկական էպոսում կա երկու Մեր *(Մեծ եւ Փոքր Մեր),* որոնք ունեն տարբեր ֆունկցիաներ: Հայաստանի Խորհրդային շրջանում, «Սասնա Ծռեր» հայկական էպոսի մասնագետները գտնում էին, որ էպոսում երկու Մերների առկայությունը՝ ժողովրդական իմպրովիզացիայի արդյունք է, պետք է լինի մեկ Մեր: Այս մոտեցումը լովին անհիմն է: «Սասնա Տուն» էպոսը բաղկացած է չորս ճյուղերից եւ տիեզերածավալման հնագույն համակարգի համաձայն(1 > 8), արական հերոս աստվածությունները պե՛տք է լինեն չորսը, իրենց զույգերով՝ ութը: Եվ ամենակարեւորը՝ Մեծ Մերը եւ Փոքր Մերը հայկական էպոսում ունեն թե՛ տարբեր ֆունկցիաներ, թե՛ ներկայացված են տարբեր սյուժետներով եւ թե՛ հակադիր բնույթի աստվածություններ են: Մեծ Մերը ներկայացնում է «հուր-արեւ», իսկ նրա կին Արմաղանը՝ «լուսնի» խորհուրդը*[1]: Եվ հակառակը՝ Փոքր Մերը ներկայանում է որպես «լուսնի», իսկ նրա կին Գոհարը՝ «արեւի» խորհուրդ: Մեծ Մերը սերունդ տվող՝ համակարգում «միջանկյալ, փոխանցող» դից է: Փոքր Մերը տիեզերափուլն ավարտող, **անմահ** եւ **անսերունդ** դից է: Բնույթով Մեծ Մերը խաղաղարար է՝ դաշինք է կնքում հակառակորդի հետ: Նաեւ՝ զիջող, որի պատճառով էլ խախտում է տիեզերակարգը, եւ բեղմնավորում է հակադիր կլանի իպոստաս Մեծ Մսրա Մելիքի կնոջը՝ Իսմիլին: Ի հակադրություն իր պապին, Փոքր Մերն աննրում է թշնամու նկատմամբ:

Մեծ Մերը Սանասարի կրտսեր որդին է: Սանասարը հայրն է երեք աստվածությունների՝ Ցռան Վերգո (Օդ-**«Կշեռք»**), Ձենով Օհան (Ջուր-**«Ջրհոս-Ձուկ»**), Մեծ Մեր (**«Առյուծ»**-հուր): Ըստ հնագույն համակարգի, ոսկյա եռանկյունին կրկնվում է հայելային անդրադարձման օրենքով: **Հուր-ջուր-օդ =** Հայր(գաղտնատես) - մայր(Ծովինար) - որդի(Սանասար) եռանկյունին սերունդ է տալիս՝ **օդ-ջուր-հուր,** նոր՝ ***«երեք որդիներ եռանկյանը»*** *(տես գծագիրը: «Հող-երկիր» էլեմենտը, առաջին քառյակի մեջ Թորոսն է, երկրորդում՝ Արմաղանը)*:

Մեծ Մերի պատմությունն էպոսում հետեւյալն է. դառնալով չափահաս, ի տարբերություն իր ավագ եղբայրների, նա Սասուն քաղաքի կամ թագավորության առջեւ ծառացած խնդիրները վերցնում է իր վրա՝ որպես անձնական պատվի խնդիր: Դեռ պատանի հասակում, նա դեպի Սասուն տանող ճանապարհը կտրող ամեհի առյուծի երախը մերկ ձեռքերով պատռում է՝ երկու հավասար կես անելով գազանին եւ դառնում է «առյուծաձեւ Մեր»: Իր հոր՝ մեծն Սանասարի ծանր զենքերը բարձրացնելով եւ կրելով, որն անհնարին

*1,- Արմա + դան > Արմա + հան, դ > h անցում: ՀԱՆ = մեծ մայր եւ «Արմա = լուսին»: «Անատոլիական arma-, «լուսին», բառը աղեսվում է լուսնի բարձրանալու հետ» (T.Gamkrelidze & V. Ivanov, “The Indo-European & The Indo-Europeans”, New York, 1995, էջ 591): Բարձրացող լուսին:

էր Սասունի որեւէ բնակչի համար, նա ապացուցում է իր ավագ եղբայրներին, որ Սանասարի, այսինքն՝ առաջնորդի թեկնածուն միայն ինքն է: Հարեւան տերության թագավոր, գերբնական ուժի տեր Մսրա Մելիքին, որին հարկատու էր Սասունը, նա ձեռնոց է նետում: Մենամարտում երկու հսկաները չեն կարողանում հաղթել իրար, եւ փորձառու ու խորամանկ Մսրա Մելիքը հասկանալով, որ եթե մարտը շարունակվի ապա պատանի Մհերը կհաղթի, եղբայրության դաշինք է առաջարկում սասնա հերոսին, պայմանով, որ նրանցից մեկի մահվան դեպքում մյուսը պետք է ամուսնանա մեռածի այրու հետ եւ պաշտպանի մյուսի տերությունը: Մեծ Մհերը ուրախությամբ համաձայնում է, չմտածելով դրա հետեւանքների մասին: Մսրա Մելիքի մահից հետո, նրա այրու խորամակության շնորհիվ, Մհերը դառնում է Իսմիլ Խաթունի ամուսինը եւ նրան պարգեւում է արու զավակ, այն դեպքում, երբ իր կին Արմաղանի հետ նրանք դեռ արու զավակ չունեին: Մեծ Մհերը վերադառնում է հայրենիք միայն յոթ տարի հետո: Ըստ «Սասնա» էպոսի, Արմաղանը երդումով, Մհերին իր առագաստը մտնելու 40 տարվա արգելք է դնում: Օրենքի խախտումը կյանքով է հատուցվում. երկնային օրենքը Սասունում աներկբայելի պատճառ-հետեւանք «բանաձեւում» է: Արմաղանը նույնպես խախտում է երկնային օրենքը, գիտակցելով, որ իր իսկ երդումը խախտելով, երկնային օրենքով դատապարտված կլինի մահվան: Սակայն նա գնում է ինքնազոհաբերության՝ Սասնա դիցատունը շարունակելու, Սասնա Տանը արու զավակ պարգեւելու պահանջը, փաստորեն, սեփական կյանքից առավել կարեւոր ու առաջնային էր: Եվ երբ նրանց արու զավակը՝ Դավիթը ծնվում է, նույն օրը, երկնային օրենքով, Մեծ Մհերը եւ Արմաղանը մեռնում են:

«Սասնա Տուն» էպոսի այս պատումը թե՛ գունեղ ու հետաքրքիր է եւ թե՛ բացառիկ կարեւորություն ունի: Այս պատումը մեզ համար բացահայտում է հնագույն ժամանակներում կլանի ներսում գոյություն ունեցող օրենքների եւ փոխհարաբերությունների մանրամասները: Օրինակ, արյունները խառնելով եղբայրներ դառնալու հնագույն ծիսական արարողությունից է բխում Մեծ Մհերի պարտավորությունը՝ Մսրա Մելիքի այրու առագաստ մտնելն ու նրա տան անվտանգությունն ապահովելը: «Լուսնապաշտների»՝ հակառակորդ կլանին, արեւի դիցը՝ Մեծ Մհերը, իր սերմն է պարգեւում: *Միեւնույն դիցը չէր կարող երկու կլաններում էլ ներկայանալ որպես սերնդատու հայր: «Արեւապաշտների» շահերի դիրքից սա օրինախախտում է.* նման օրինախատում կատարում է նաեւ Դավիթը, որի պատճառով էլ մեռնում է:

Մեծ Մհերի բնույթը «հուրն» է. նա ***արեւի*** իպոստասն է: Մսրա Մելիքը՝ ***լուսնի*** իպոստասն է: Այս երկու դիցերը խորհրդանշում են՝ ***օրը*** եւ ***գիշերը:*** Մեծ Մհերի եւ Մսրա Մելիքի ***հավասար*** պայքարը եւ նրանց դաշինքը՝

խորհրդանշում է գարնանային գիշերահավասարը, երբ ***օրը,*** որի իպոստասը Մեծ Միհրն է եւ ***գիշերը,*** որի իպոստասը Մսրա Մելիքն է՝ հավասարվում են 12ժամ + 12ժամ կեսերով: Ըստ իս, «Սասնա Ծռեր» էպոսում «ժամանակագրական» թեթեւ աղավաղում-տեղաշարժ կա. Միհրը Մսրա Մելիքի հետ դաշինք կնքելուց հետո պիտի առյուծին երկու կես անի, քանի որ Մեծ Միհրի «առյուծաձեւ» մականունը խորհրդանշում է ***արեւ-Միհրի*** մուտքը «Առյուծի» համաստեղություն՝ ամառային արեւադարձ, երբ արեւն իր բաձրագույն դիրքում է եւ հակառակորդ՝ լուսնի իպոստաս Մսրա Մելիքը պիտի մեռնի:

Տիեզերածավալման հնագույն հավատամքի համաձայն, ***Օկտահեդրոն երկվորյակներից*** հետո, ***Մեծ Միհրը՝ խորանարդն է:*** Ըստ հնագույն կարգականոնի եւ ըստ սասնա էպոսի, Մեծ Միհրը, փաստորեն, հաջորդ փուլի համար «սերում» է ***երկու որդի,*** որոնցից մեկի մայրը ***Իսմիլն*** է, մյուսինը՝ ***Արմաղանը:*** Փոքր Մսրա Մելիքը խորհրդանշելու է «լուսնապաշտների» կլանը, իսկ Դավիթը՝ «արեւապաշտների»: Նույն հորից, բայց տարբեր մայրերից իրար հակադրվող, թշնամի երկու իպոստասների առկայությունը՝ անհրաժեշտ պայման է հնդեւրոպական հավատամքային կարգականոնում: Այսինքն, հաջորդ փուլը կանխագրծված է՝ Մեծ Միհրը որպես ***խորանարդ ծավալաձեւ,*** կիսվելու եւ դառնալու է ***երկու բուրգեր՝ Դավիթ*** եւ ***Փոքր Մսրա Մելիք,*** ընդգծելով հնագույն արաչության մասին հավատամքում դուալիստական սկզբունքի շարունակականությունը: Միայն վերջին դիցը՝ Փոքր Միհրն է, որ լինելով անմահ ու անսերունդ, չունենալով իր հակադիր բեւեռը, իրենում ներառելու է այս երկուսը՝ գիշերը եւ ցերեկը, վերին եւ ստորին երկինքները, վերջնական ու ավարտուն ձեւավորելով տիեզերք-աշխարհը, այնպես ինչպես նրա եգիպտական զուգահեռ Հորոսն է միացնում վերին եւ ներքին Եգիպտոսները *(երկինքն ու երկիրը):* Մեծ Միհրը՝ նոր փուլ, նոր հակադրություն-դուալիզմով, նոր շարունակություն հաստատող դից է: Ինչպես եգիպտական համակագում, այնպես էլ հայկականում, տիեզերածավալման առաջին փուլի վերջին դիցը, որ երկրորդ փուլի առաջին դիցն է, միանգամից սերում է երկուսին՝ Փոքր Մսրա Մելիք եւ Դավիթ հակադիր բեւեռները, քանի որ Մեծ Միհրը քառակողմ (խորանարդ) «ծավալաձեւ» է: Եգիպտական համակարգում՝ Գեբը եւ նրա կին Նաթը նույնպես նոր փուլ «ձեւավորող» դիցեր են, որ սերում են Օզիրիս-Իզիս եւ Սեթ-Նեփթիս «թշնամի զույգեր» դիցերին: Եվ Հորոսն է միայն, որ ի զորու է լինում միավորել վերին եւ ներքին սֆերաները:

Միեւնույն հորից եւ երկու տարբեր մայրերից թշնամի եղբայր-աստվածությունների մասին հավատամքային պատումներն առկա են շումերական ժամանակներից՝ ԷԱ եւ ԷՆԼԻԼ, եւ ոչ պատահականորեն կրկնվում են՝ բաբելական, եգիպտական, վեդայական, իրանական՝ Ահուրամազդա-Ահրիման եւ այլն, տարբերակներում:



Նախահնդեւրոպական հավատամքում, ցեղի հիմնադիր նախահայրերը միֆական երկու թագավորներն էին *(աստվածներ կամ կիսաաստվածներ.-ընդգծումը մերն է)*, եւ այս հավատամքային սկզբունքով, վաղնջական ժամանակների հնդեւրոպական ցեղը, միատեղ պատվում էր ցեղի երկու տոհմերի առաջնորդներին *(Օրինակ, ՀԱԹԹԻ-ի եւ ՄԱՍՍԱ-ի արյունակից երկու կլանները)*[*1]:

Հայկական լեռնաշխարհի հնդեւրոպացիների դուալիզմի հիմքով հավատամքային կոնցեպտի բացահայտ արտացոլումը տեսանելի է «Սասնա Ծռեր» էպոսում: Այսինքն՝ միեւնույն ցեղային հավաքականության մեջ, **<u>լուսնային</u>** եւ **<u>արեւային</u>** կլանների ներկայությունը սկզբից՝ Գագիկ եւ Սենեքերիմ թշնամի զույգից, մինչեւ Դավիթ եւ Փոքր Մսրա Մելիք: Եվ քանի որ, ըստ հնագույն հնդեւրոպական հավատամքային համակարգի, այս երկու կլանների առաջնորդները պե՛տք է եղբայրներ լինեն, ապա «Սասնա Ծռեր» էպոսում եղբայրներ են՝ թե՛ Մեծ Մսրա Մելիքն ու Մեծ Միները *(ըստ էպոսի մեզ հասած տարբերակների՝ արյունները խառնելով եղբայրներ են դառնում)*, թե՛ Դավիթն ու Փոքր Մսրա Մելիքը: Ըստ իս, նույն տրամաբանությամբ, հայկական էպոսի կորսված, մեզ չհասած հնագույն պատումներում, եղբայրներ պետք է լինեն նաեւ՝ Գագիկն ու Սենեքերիմը, իսկ Մեծ Միերն ու Մեծ Մսրա Մելիքը՝ հորեղբոր տղաներ պետք է լինեն: Օտարություն՝ Բաղդադ գնացած Բաղդասարի մասին ակնարկը, պատահական չէ էպոսում: Չէ՞-որ Բաղդասարի սիմվոլն էլ է «լուսինը» *(տես՝ «Երկվորյակներ» բաժինը)*:

<u>Մեծ Մսրա Մելիքը՝ լուսնի իպոստաս:</u>

«Մըսր» բառի ստուգաբանությունը ցուցում է այս սեւ դիցի «պատկանելիությունը», հաստատելով «լուսին» եւ «արեւ» հնագույն դուալիստական հակադրությունը *(տես՝ Մաս II, գլուխ I բաժինը)*:

Մսրա(Մելիք) > Մըսր > Մըսիր.: Հնխ. ձեւն է՝ [*meH-s-] եւ [*me(H)-n-], երկուսն էլ բխում են [*meH-][*2]

*1,*2,- T.Gamkrelidze & V.Ivanov, “The Indo-European & The Indo-Europeans”, NY, 1995, p. 679-682, 682. Նույն աղբյուր, էջ՝ 591, 680, 682:

«չափման միավոր, ժամանակ», «ամիս» *(հնում լուսնամիսն է եղել ժամանակի չափման միավոր, տարին՝360 օր):* Սանսսկրիտ՝ ***máh***, ***mása,***- «ամիս», «լուսին», Ավեստա՝ ***ma,*** հայեր.՝ ***ամսոյ***[*1], ***ամիս***, ***մահ+իկ***, ***մահ***,- «լուսին», «ամիս»: Մսրա Մելիքի գուրզը կամ «հոլը» 360 լիտր էր կշռում: Ի տարբերություն արեւային տարվա՝ 365 օր, լուսնային տարին՝ 360 օր էր համարվում.- *«Մըսրա Մելքի ասդըխ գը ֆըռֆըռը, Սասնու Տավթի ասդըխ խավա՛ր ը»*[*2]:

Փաստորեն, Մսրա Մելիքի անվան ***մըսր, մասա՝*** «լուսին» իմաստը, խորհրդանշում է նրա գիշերային երկնքի արական իպոստաս լինելը: «Սասնա Ծռեր» էպոսում այս «սեւ հերոսի» անվան երկրորդ մասը՝ ***Մելիք*** անունը, հետագայում, միջնադարում արաբական արշավանքների ժամանակների ազդեցությամբ*(7-8 դար),* ժողովրդական երգիչ-գուսանների կողմից ***մելիք՝ «իշխան»*** իմաստով հարմարեցված իմպրովիզացիայի արդյունք է: Նույնը կատարվել է Բաղդասարի՝ Ադրա***մելք*** > Ադրա***մելիք*** ալտերնատիվ անունի պարագայում *(տես՝ «Երկվորյակներ» բաժինը):* Բաղդասարը որպես Սենփարուիմի աստվածություն կա նաեւ Հին կտակարանում, ՄԷԼԵՔ եւ ոչ թե՝ Մելիք անունով,- ***«...Սենփարուիմի աստվածներ Ադրամելքի եւ Անամելէքի համար»***[*3]: ***Մելք***-ը ***«սեւ*** գույն» իմաստն ունի: Նախահնդեւ.՝ ***mel-** «մուգ», սանսկրիտ՝ malinā- «սեւ», հուններեն՝ mélās «սեւ», հին պրուսերեն՝ melne «մուգ կապույտ հետք»[*4], լատվիերեն՝ mę̃lns «սեւ», հայերեն՝ melan «սեւ գույն՝ թանաք»[*5] եւ այլն:

Ուրեմն, հայկական էպոսում Մսրա ***Մելիք-Մելքն*** իր անունով, լիարժեքորեն ներկայանում է որպես «սեւ հերոս», խորհրդանշելով գիշերային երկինքը, ի տարբերություն առյուծաձեւ Միհրի՝ որ ***օրվա, պայծառ երկնքի*** եւ ***արեւի*** խորհրդաբանական սիմվոլն է:

Ըստ «Սասնա Ծռեր» էպոսի, երկվորյակներից Բաղդասարը՝ գիշերային երկնքի, լուսնի իպոստասը, հաստատվում է Բաղդադում: Հետագայում, Սասնա տան վերջին աստվածությունը՝ Փոքր Միհրը, Բաղդադում այցելում է իր ***պապի հորեղբոր*** գերեզմանին՝ ***«էրկրպագություն էտու»***[*6], եւ հարվածով իր ձեռքի հետքն է թողնում գերեզմանի քարին. ինչո՞ւ: Ինչո՞ւ է Փոքր Միհրը հենց Բաղդասարի գերեզմանին երկրպագության տալիս. որովհետեւ Փոքր Միհրը նույնպես գիշերային երկնքի՝ լուսնի իպոստասն էր: Էպոսում ընդգծված ակնարկ կա, որ Բաղդասարը Բաղդադի թագավոր եղել. Բաղդասարի գերեզմանը Բաղդադի թագավորական սենյակի դիմացն էր[*7]: Սա նշանակում է նրա լուսնապաշտների կլանի գլուխ լինելը: Փաստորեն, Բաղդադից հայտնված լուսնապաշտ թագավոր

*1,- T. Gamkrelidze & V. Ivanov, "The Indo-European & The Indo-Europeans", p. 591, 680, 682.
*2, - «Սասնա Ծռեր», էջ129:
*3,- Հին Կտակարան, Թագավորաց Դ, գլ. 17, 31:
*4, -T. Gamkrelidze & V. Ivanov, "Indo-European & the Indo-Europeans", p.685-686, p. 680.
*5,- Ա. Սուքիասյան, «Հայոց լեզվի հոմանիշների բառարան», 1967թ., Երեւան, էջ 215:
*6, *7, - «Սասունցի Դավիթ», 1989թ., Երեւան, էջ 412:

Մեծ Մհերի հակառակորդ մեծ Մսրա Մելիք-Մելէքը *(այս տեղանքի մասին էպոսն ասում է, որ նրանք ոչ թե մուսուլման, այլ՝ կռապաշտ են)*, որը եղբայրանում է Մեծ Մհերի հետ, ըստ էպոսի կառուցվածքային տրամաբանության եւ ակնարկների, ինչպես նաեւ հնդեւրոպական հավատամքային կարգականոնի, պետք է լինի՝ Բաղդասա՛րի որդին: Այսինքն, Մեծ Մհերն ու Մեծ Մսրա Մելիքը հորեղբոր որդիներ են: Կրկնվող շրջապտույտով այուժետային կառուցվածքը էպոսում կարծես պարտադիր պայման է, որ համանման կրկնվում է նաեւ «Սասնա Դավիթ» ճյուղում: Փոքր Մսրա Մելիքը եւ Դավիթը եղբայրներ են հո՛ր կողմից: Լուսնի իպոստասի՝ Բաղդասարի ալտերնատիվ **Ադրա+մէլեքի** եւ Սանասարի որդի Մեծ Մհերի հակառակորդ՝ **Մսրա Մելիք > Մսրա Մէլեքի** անունների երկրորդ կեսի կրկնությունները պատահական չեն: Մեծ Մսրա Մելիքը էպոսի հնագույն, չաղավաղված տարբերակում պետք է լինի Բաղդադ*(Բաբելոն)* տեղափոխված Բաղդասարի որդին: «Սասնա Ծռեր» էպոսի կառուցվածքային տրամաբանությունը, որ հնագույն հնդեւրոպացիների դուալիստական սկզբունքից է բխում, եւ ներկայացնում է երկու արյունակից երկնային թագավոր եղբայրների գլխավորությամբ հնագույն ***արեւապաշտների*** եւ ***լուսնապաշտների*** հիերարխիաները, նաեւ փաստվում է՝ Ադրա+մէլեք անունի եւ Մսրա+ Մէլեք անունի «Սասնա» էպոսում ոչ պատահական կրկնվող ընդգծումներով: Մեծ Մհերը եւ Մեծ Մսրա Մելիքը, հայկական էպոսում, իրենց արյունները խառնելով դառնում են եղբայրներ եւ դաշինք են կնքում: Իրականում՝ նրանք հորեղբոր տղաներ են, որ գլխավորում են արեւապաշտների եւ լուսապաշտների հիերարխիաները, ներկայանալով որպես՝ **արեւի** եւ ***լուսնի*** իպոստասներ: Էպոսում, Մեծ Մհերի եւ Մեծ Մսրա Մէլեքի դաշինքի բնույթը՝ ըստ որի նրանցից մեկի մահվան դեպքում, մյուսը պիտի ստանձնի մեռած եղբոր «աշխարհիկ հոգսերը» եւ տերունական պատասխանատվությունը, նույնպես պատահական չէ «Սասնա Ծռեր» էպոսում: Մ.թ.ա. II հազարամյակում հնագույն հնդեւրոպացի հուրրիների կարգականոնի համաձայն, մահից հետո, սենիական կնոջը եւ գերդաստանի, տոհմի կամ թագավորության կառավարումը միայն արյունակից եղբորն էին վստահում եւ փոխանցում*[1]:

Հայկական էպոսում տեղ գտած «քողարկված ակնարկների» լուսաբանումը՝ ըստ որոնց Բաղդադ քաղաքում հաստատված ***Բաղդասար-Ադրամէլեքը*** եւ Բաղդադի թագավոր ***Մեծ Մսրա Մէլեքը*** հայր-որդի են, ե՛ւ բխում է էպոսի ներքին կառուցվածքային տրամաբանությունից, ե՛ւ համապատասխանում է հնագույն հնդեւրոպացիների արեւապաշտ ու լուսնապաշտ հավատամքային հիմքով կլանային հիերարխիայի կարգականոնին*(լուսնի եւ արեւի*

*1,- The Anchor Byble, Genesis, E. A. Speiser, 1962, p. Intr. XL, Gerar, "The Wife-Sister Motive in the Patriarchal Narrative, Byble and Other Studies", 1963, p. 12-38:

իպոստասները, որոնք նաեւ ներկայացնում են «Ժամանակ» կատեգորիան՝ գիշերվա եւ օրվա կտրվածքով, պետք է լինեն եղբայրներ եւ ունենան մեկ հայր), եւ ունի պատմական պատճառաբանում: Սա Հայկական լեռաշխարհից դեպի Միջագետք կրկնվող միգրացիաների *(մ.թ.ա. IV-II հազարամյակներ)* անդրադարձ-հիշողությունն է էպոսում: Կրոնական հողի վրա արեւապաշտների եւ լուսնապաշտների միջեւ անտոգոնիզմի պատճառով, լուսնապաշտների արտաքսումը, լավագույնս ներկայացված է Ուգարիտում սեպագիր սալիկի վրա գրված լեգենդում*[1]:

ԻՍՄԻԼ ԽԱԹՈՒՆ՝ Մեծ Մհերի երկրորդ կինը:

Իսմիլ Խաթունը հայկական էպոսում Սասնա Դավթի թե՛ խորթ մայրն է եւ թե՛ ծծմայրն է: Տիեզերական դից Դավթին կաթով կերակրելու, քանի-որ մանուկը ոչ մեկի կուրծքը չէր վերցնում, սյուժետային դրվագները հայկական էպոսում պատահական չեն:

Իս+Միլ անունը էպոսում ներկայանում է «աղավաղված» արտաբերմամբ *(ինչպես Սենեքերիմ < Սինահերիբա անունը. տես՝ Մաս II, գլուխ I)*: Հակառակորդ «լուսնապաշտների» կլանի առաջնորդի կնոջ՝ դիցամոր անունը, բաղկացած է՝ is > iš (ištar), եւ mill < *melk'- «կաթ»*[2], կամ՝ is > iš եւ *mel- «սեւ, մութ» բառերից: Ըստ իս, նա աղերսվում է աքքադական Իշտար iš (ištar) *(սիրո, հեշտամոլության եւ ռազմատենչ աստվածուհի, աղերսվում է վեներա աստղի հետ)* աստվածուհու եւ Ծիր Կաթնի հետ: Հայկական էպոսում ***Իսմիլի*** բնությունը որպես ռազմատենչ դիցամայր՝ ներկայացվում է բացահայտ: Միջագետքյան հավատամքային պատումներում Իշտար դիցուհին է ներկյանում ռազմամոլ բնությամբ: Ըստ հայկական էպոսի, Իսմիլն իր ծծկեր երեխային գրկում խաղացնելիս ոչ թե մանկական երգ է երգում, այլ՝ իր 2-րդ ամուսնու, երեխայի հոր՝ Մեծ Մհերի հայրենիքը ավերելու, մոխրացնելու ավետիս է կանչում եւ այլն:

Ո՞վ է Մեծ Մհերը:

Վերեւում արդեն նշվեց, որ հայկական էպոսում կան երկու՝ Մեծ Մհեր եւ Փոքր Մհեր: Իսկ ընդհանրապես, կան միեւնույն դիցի մեզ հայտնի տարբեր անուններ՝ Մհեր *(հայկական)*, Միհր *(իրանական)* եւ Միթրա *(վեդիկ., հնդկ.)*:

Միթրա աստվածությունը «Ռիգ Վեդայում» ներկայանում է որպես երկու եղբայրներից ***ճերմակ*** հերոսը: ***Միթրա - Վարունա*** աստվածությունները որպես ***ճերմակ եւ սեւ*** կողմերի միասնություն՝ վիպական երկու առանձին անձնականությամբ արտահայտված՝ արեւը եւ լուսին են *(Վարունան գիշերային արեւն է՝ լուսինը, իսկ Միթրան օրվա արեւն է)*: «Ռիգ Վեդայում», Միթրա-Վարունան

---

*1,- Զենոն Կոսիդովսկի, «Բիբլիական ավանդապատումներ», 1980թ., Երեւան, էջ 100-101:

*2, - T.Gamkrelidze & V.Ivanov, նույն աղբյուր, էջ 766:

Իսմիլ անունը, հնարավոր է, աքքադական եւ հնդեւրոպական խառն բառակապակցություն է:

թեեւ հանդես են գալիս միասին, բայց ներկայացնում են բեւեռայնացում-հակադրություն: Միթրան՝ ***արեւն*** է, Վարունան՝ ***գիշերային արեւը****(լուսինը):* Վարունան «սեւ սկզբունքն» է, Միթրան արեւի «հուրն» է: Միթրան արարող, դրական սկզբունքն է, Վարունան աղերսվում է ջրի հետ եւ ներկայացնում է տիեզերական «մթին» օվկիանոսը, այսինքն գիշերային երկինքը:

Սկզբունքային նույն դուալիստական մոտեցումը «Սասնա Ծռեր» հայկական էպոսում է: Մեծ Միհրը ***արեւն*** է, իսկ Մեծ Մըսրա մելիքը՝ ***լուսինը:*** Եվ նրանք եղբայրացուներ են: «Սասնա Ծռեր» էպոսում ***Մեծ Միհր- Մըսրա մելիք*** եւ «Ռիգ վեդայում» ***Միթրա-Վարունա*** աստվածությունների ֆունկցիոնալ, կառուցվածքային եւ խորհրդապաշտական բացահայտ նմանությունները փաստում են այս երկուսի՝ հնագույն հավատամքային ***«Մայր պատում»*** համակարգի երկու տարբերակներ լինելը:

Միջին պարսկական շրջանում Mihr u Mâh'(Mihr = Mithra)-ը ընդունված դարձվածք էր «արեւի եւ լուսնի» համար*[1]: Զրադաշտական պանթեոնում *(«Ավեստա», Յաշտ 10)* Միհրը՝ արդարադատության, դաշինքի աստվածություն էր, որին Ահուրա Մազդան հաստատելով, տվել է նրա բոլոր կոչումները, որոնք նա*(Միհրը)* ունե՞ր: Փաստորեն, այս դիցը ներմուծված աստված է, եւ Միթրան շատ ավելի հին աստվածություն է քան Զրադաշտականությունը:

Ընդունված տեսակետ է, թե իբր հայկական եւ վեդայական*(հնդկական)* **[Մըհեր – Միթրա]** աստվածության անունը պարսկական ծագում ունի:

Ըստ Հյուբշմանի ստուգաբանության, այս աստվածությունը եւ նրա անունը ***մարերենից*** անցել է ***պարսկերենին: Մհեր-Միհր-Միթրա*** անունը փորձել են «զոռով» ստուգաբանել: Ըստ Հյուբշմանի ստուգաբանության՝ *ՄԻՀՐ = պահլվ. Mitru՝ «պաղ», զենդերեն՝ «դաշինք, կրոնական պարտավորություն» է, որ վերջում էլ դարձնում է՝ «սեր, արեգակ, բարեկամություն»*[2]*:* Նույն վերաբերմունքը (մակերեսային) կա նաեւ «Մըսր» անվան նկատմամբ: Համարելով, որ հայկական էպոսը «միջնադարյան, ժողովրդական արտադրանք է», Մըսրա Մելիքի անունը Հր. Աճառյանը բխեցրել է «Եգիպտոս» տեղանքից, սակայն ո՞րն է այս դիցի անվան ֆունկցիոնալ իմաստը, նշանակությունը՝ տրված չէ*[3]**:** Նույնիսկ, եթե ընդունենք, թե ՄԻՀՐի վերոհիշյալ՝ «պաղ», «դաշինք-պարտավորություն», «սեր», «արեգակ» *(ո՞ր մեկը սրանցից)* ստուգաբանությունները «հնարավոր» են, ապա պարզ երեւում է, որ դրանք, բացի այն, որ միայն հատկանիշ են ենթադրում, նաեւ՝ իրար

---

*1,- Bartel L. Van der Waerden, «Science Awakening-II», 1974, p.150

*2,*3,-Հր. Աճառյան, «Հայոց անձնանունների բառարան», հ. Գ., 1946թ., Երեւան, էջ 331-332, 474: Նույնիսկ, իրենք իրենց մեկ պարզ հարց չեն տվել, որ եթե միջնադարյան է, ապա ի՞նչու էպոսի բոլոր պատումներում, հարեւանի՝ «թշնամի տեղանքի» մահմեդականությունն ընդգծելու փոխարեն, Մըսրի կռապաշտական լինելն է միայն ընդգծվում:

հակասող ու անկապ իմաստներ են ներկայացնում:

Այս ***Միթրա-Վարունա*** աստվածությունը *(Ինդրայի հետ միասին),* ըստ ընդունված գիտական տեսակետի, պատմականորեն մարերի աշխարհակալության եւ ազդեցության ժամանակներից ավելի «վաղ» է ներմուծվել Հնդկաստան*[1]: Հյուբշմանի, ինչպես եւ նրան կրկնող Հր. Աճառյանի «պատմական աճպարարությամբ» ստուգաբանությունը կարիք ունի վերանայման:

ՄՀԷՐ–ՄԻՀԸՐ–ՄԻԹՐԱ աստվածությունը հնագույն հավատամքպատումներում ներկայանում է իր ֆունկցիոնալ դերակատարմամբ, բացահայտում է իր «էությունը», որից՝ նրա անունը պետք է բխի, եւ ոչ թե ենթադրի հատկանիշ *(երկրորդ փուլ՝ փոխառություն)* կամ ոչինչ չասող անբացատրելի բառակապակցություն: Այս առումով, «Սասնա Ծռեր» էպոսի «Մրհէր»-ը՝ հանդես է գալիս՝ որպես տվյալ աստվածության երկակի ֆունկցիոնալ էությունը ցուցող հավաքական անուն: Նույնիսկ «Ռիգ-Վեդայի» Միթրան փոխառություն է: ***Միթրայի*** կողքին ***Վարունա*** են ստեղծել, որ նաեւ արտահայտի ՄԻՀՐ աստվածության երկվության հիմքը՝ գիշեր-ցերեկ, հուր-ջուր: Միայն ***Միէր < Մ(ա)հ-էր < Մահուր*** անունն է, որ ունի իր թե՛ ֆունկցիոնալ-իմաստային ստուգաբանությունը եւ թե՛ մեկ բառով է արտահայտված: Քանի որ ***Միհր/Միթրան՝ արեւի ու լուսնի*** կամ ***օր ու գիշերվա*** հավաքական խորհրդաբանությունն ունենալով, կարող է միայն վերաբերել ***համակարգում*** վերջին դիցին *(«Սասնա Ծռեր» էպոսում **Փոքր Միհրին**)*, քանի որ գոյաբանական աշխարհի ծավալումն ավարտող վերջին դիցն է, որ միայնակ իր մեջ «ներառում» է՝ թե՛ «գիշերը» եւ թե՛ «օրը», միտելով հավաքական «ժամանակ» կատեգորիան: ՄԸՀ+ԷՐ > **ՄԱՀ(Ա) + ԱՐԱ** > ՄԱՀ(ԻԿ) + ԱՐԵՎ > Լուսին + Արեւ > ջուր + հուր: ՄԸՀԷՐ = [ՄԸՀ > ՄԱՀ > ՄԵՀ] + [ԷՐ > ԱՐ > ԱՐՎԻ = ԱՐԵՎ]:

Երկվության(binarism) սկզբունքը, հնագույն հնդեւրոպացիների թե՛ հավատամքային, թե՛ միֆական մտածողության, եւ թե՛ բնության ու աշխարհի մոդելի հիմքն էր հանդիսանում[2]:

Ինչպես ծիրանի ծովում ՎԱՀ+ԱԳՆ է ներկայանում հավաքական երկանունով, ինչպես վեդայական Բրահմը ունի երկակի անուն՝ ՆԱՐԻ + ՆԱՐԱ, կամ՝ հայկական Արա Գեղեցիկի կին Նուարդ դիցուհին է՝ ՆՈՒ եւ ԱՐ(դի) > ՆՈՒԱՐԴ = ՆՈՒ + ԱՐԱ ***(նու>նայթ՝*** *«գիշեր»,* ***արա < արվի՝*** *«արեւ»),* որ աղերսվում է՝ ԱՐԵՎ + ՄՈՒՏ > «արեւամուտ» > *արեւը մայր մտավ՝ վերադարձավ մոր մոտ,* իմաստի հետ, անպես էլ՝ **Մէհեր > Մրհեր > Մահուր > Միհր**

*1, - "The Rig Veda", Penguin Classics, Wendy Doniger & Flaherty, London, 1981:
Rachel Storm, "Indian Mythology", USA, 2000:
"The Religion of the Rig Veda", H.D.Griswold, 1999, Delhi, p. 114 (n:5-6):
*2, - T. Gamkrelidze & V. Ivanov, "The Indo-European And The Indo-Europeans", p. 679, 591.

անունն է երկվության բնույթով: Միհրի տաճարների 24 սյունները բնորոշում են, որ նա օրվա*(12 ժամ գիշեր, 12 ժամ ցերեկ)* ***«տերն»*** է, եւ արեւն ու լուսինը որպես ***օր ու գիշեր*** նրա ատրիբուտներն են:

Նախահնդեւրոպական՝ *meH- ձեւից, «ժամանակի չափման միավոր», բոլոր հնդեւրոպական լեզուներն ունեն իրենց տարբերակները*[1]: Սանսկրիտ.՝ mā́ti, mimā́ti «չափումներ»*(դրա համար է Միհրը սանսկրիտով դարձել՝ Միթրա)*, լատ.՝ mētior «ես չափեցի», հին եկեղ. սլավոն.՝ měra «չափ», գոթ.՝ mēl «ժամանակ», լիտվ.՝ mētai «տարի», ալբան.՝ mot «տարի», հիթթիթ.՝ **mehur** «ժամանակ», հուրրիերեն՝ taam*[2], հայերեն՝ ’am > zam «տարի, ժամանակ»:

Հնդեւրոպացիների մոտ, լեզուներում, «Լուսին»-ը համարվել է ժամանակի չափման միավոր: Սանսկրիտ.՝ mā́h, mā́sa- «ամիս, լուսին», Ավեստա՝ mā̊, պարսկ.՝ māh, հուն.՝ mḗn, եւ այլն, բոլորի նշ.՝ «լուսին» եւ «ամիս»: Հայերեն՝ amis, amsoy, նշանակում է «լուսին», «ամիս» *(ինչպես նաեւ՝ mahik’ «լու-սին», - ավելացումն իմն է):* Բոլորի հիմքը հնդեւրոպական նախալեզվի [*meH-]-ն*[3] ձեւն է:

Փաստորեն, ***Մրհէր-Միհր-Միթրա*** աստվածությունը, հնագույն հնդեվրոպական հավատամքային բոլոր պանթեոններում, գլխավոր աստվածություններից մեկն է, եւ նրա անունը՝ ֆունկցիոնալ, հավատամքային կարգականոնից բխող, իմաստ արտահայտող հավաքական անունն է: ՄԻՀՐ-ՄԻԹՐԱ աստվածությունը եւ նրա անունը սերտ առնչություն ունի Հայաստանում նախաքրիստոնեական ժամանակների ԱՐԱՄԱԶԴ գերագույն աստվածության հետ:

Ըստ Հյուբշմանի եւ Հր. Աճառյանի, հայոց այս աստվածությունը եւ նրա անունը նույնպես փոխառություն է պարսկերենից: *«*ԱՐԱՄԱԶԴ, ար.< հին պրս. Ahura – mazdah, զնդ. Ahuro – mazda, որի նորագույն ձեւերն են Արշակունյան պիլ. Ohrmazd, Սասանյան պիլ. Hormizd, պրս. Urmuzd «Լուսընթաց»*[4]: «Այս վերջինները տառադարձված են հյ. Որմիզդ, ասոր. Hormizd, Hormazd, արաբ. Hurmuz... բուն նշանակությունն է ahura «տեր» + mazda «գերագույն իմաստություն»*[5]:

Վերեւի բացատրությունը նույնպես կարիք ունի վերանայման: Նախ, Auramazda - գերագույն աստվածության անունը որպես՝ Ahura – Mazda «իմաստուն տեր», «Ավեստայում» լոկ գրական անուն է: Նախահնդեւրո-

*1, - T. Gamkrelidze & V. Ivanov, “The Indo-European And The Indo-Europeans”, p. 591.
*2, *3, - նույն աղբյուր, էջ 590-591, (17n):
*4, - Լուսնթագ - Յուպիտեր, Փառազնոտի, Մուշթարի, Փայեթոն, Փայիթոն, - Ա. Սուքիասյան, «Հոմանիշների բառարան», Երեւան, 1967թ.:
*5, - Հր. Աճառյան, «Հայոց անձնանունների բառարան», h. I, 1942թ., Երեւան, էջ 268: Հյուբշման, 25, 62, Bartholomae, Altir. Wort. 294, Justi p. 7:15.

պական *men - «միտք, պատճառ, հիշել, իմանալ» ձեւը տարբեր լեզուներում դառնում է՝ սանսկրիտ.՝ mánah, Ավեստա՝ manah -, հայերեն՝ i-manam, գոթ.՝ muns, munan, հուն.՝ memona «հիշել» եւ այլն*[1]: Թե ո՞ւր մնաց Mazda-ն, որ հնդեւրոպական [manah-]-ի «միտք, իմաստություն» իմաստների հետ որեւէ առնչություն չունի, հարցի մի կողմն է: Անհիմն է նաեւ Ավեստայի ***mazga-ն,*** որը նշանակում է «ուղեղ», նույնացնել Mazda-ի հետ *(գերագույն իմաստություն)*[2]**,** թեեւ «ուղեղը» եւ «գերագույն իմաստությունը» մեկից մյուսը բխող *(իհարկե՝ ոչ միշտ),* բայց տարբեր նշանակության բառեր են: Եւ ամենակարեւորը՝ Auramazda գերագույն աստվածության անունը «Ավեստայում» գրական, «պոետիկ» անվանակոչում է: Այն բացատրվում է որպես՝ Ahura-Mazda,- «Տեր գերագույն իմաստնության», ենթադրելով՝ հատկանիշ, կողմնակի բնութագրում, բայց բառը չի ցուցում այս աստծո էությունը եւ ֆունկցիան: Այս հեղինակների ստուգաբանությամբ՝ Ahura- ***«տեր»,*** եւ Mazda < Mazga - ***«ուղեղ»,*** - «ուղղեղի տե՞ր», թե՞ «ուղեղ ունեցող»,- չի ցուցում այս աստվածության էությունը եւ ֆունկցիան: Թե «Ավեստայում» ի՞նչու է նա կոչվում «գերագույն իմաստություն», ունի իր տրամաբանական բացատրությունը, որ բխում է հնագույն հավատամքի աշխարհճանաչողության կոնցեպտից: Եղբայրները՝ Արամազդն ու Արհիմանը միասին են «ձեւավորում» գոյաբանական աշխարհը: Արհիմանը՝ ցածրադիր ***«կենդանական շունչ-հոգին»*** է, որ ըստ Ավեստայի, գործում է Ֆլորա եւ Ֆաունայի հիմքում: Արամազդը՝ ***«բարձրագույն միտք-ոգին»*** է, որ գործում է «երկնքում»: Հնագույն հավատամք-կարգակառույցի երրորդության սկզբունքը՝ **1.մարմին > 2.շունչ> >3.հոգի = նյութի մեջ՝ կենդանական շունչ, շնչի մեջ՝ բարձրագույն միտք ոգի,** իր ազդեցությունն է ունեցել նաեւ «Ավեստայի» վրա: Ըստ թաքնագիտական աշխարհճանաչողական կանոնակարգի, Արամազդը՝ բարձրագույն միտք-ոգին է, բնության բարձրագույն գիտակցությունն է:

Հայտնի է, որ Անահիտ աստվածուհին Արամազդի դուստրն է եւ Ավեստայում, Անահիտը՝ գլխավոր աստվածուհի է: Ըստ հավաստի, ճշտված աղբյուրների, Անահիտ աստվածուհու պաշտամունքը ներմուծվել է պարսկաստան Արդաշիր Բ-ի կողմից (մ. թ.ա. 404-358թթ.) Փոքր Ասիայից[3] *(սրա մասին կխոսվի առջեւում)**:** Նախքան Արդաշիր Բ-ն, ավելի հին սեպագիր որեւէ պարսկական արձանագրությունում Անահիտի եւ Միհրի անունները նշված չեն*[4]**:***

---

*1, *2, - T. Gamkrelidze & V. Ivanov, "The Indo-European And The Indo-Europeans", էջ 713, 713n:
*3, *4, - Տես՝ Հովիկ Ներսիսեան, «Հայ ժողովրդի պետականության եւ պատմության ակունքներում», ԱՄՆ, 2002թ., էջ 175, 176: Հնագույն պատմիչներ Քլեմանս Ալեքսանդրիոսի (մ.թ. 220թ.), Բրուսոսի (ն. Ք. 3-րդ դար), Դիոգինես Լաերտացու (մ. թ. ա. 3-րդ դար), ինչպես նաեւ Հախմանէշ դինաստիայի սեպագիր արձանագրությունները փաստում են, որ Արդաշիր Բ-ն առաջին պարսիկ թագավորն էր, որ Անահիտի պաշտամունքը ներմուծեց Փոքր Ասիայից, Հայաստանից:

Հետաքրքիր է իմանալ, թե առանց ***Անահիտի*** եւ ***Միհրի,*** Աուրա Մազդան պարսկական պանթեոնում մեն-մենակ ի՞նչ էր անում կամ ինչպե՞ս էր «արարում» տիեզերքը: Պատասխանը պարզ է. չէ՞ որ «Ավեստան» հավաքվել ու գրի է առնվել մեր թվարկության 226-241 թթ.-ին:

Մյուս հանգամանքը: *Արդաշիր Բ-ի Համադանի սեպագրում (A. T. Olmstead, "The History of the Old Persian Empire", University of Chicago, 1948) Արամազդ անունը ոչ թե տառադարձված է՝ Ahura (Ահուրա), այլ՝ Aoramazdaha (Աօրամազդահա): Ավեստայի լեզվում «Aora» արմատ-բառ չկա***1**, հիմքը հնխ.՝ *phHHur-ն է «կրակ, հուր», որի ամենամոտ ձեւը հուրրիական եւ հայկական՝* ***«հուր»*** *բառի՝ «hurr» > ar > ara ձեւափոխումն է:*

Արամազդ-Աօրամազդահա-ի, Անահիտի եւ Մրհէր-Միհրի պաշտամունքը շատ ավելի հին է, քան «Ավեստայի» հավաքման-գրառման ժամանակները (մ.թ. 226-241թթ.), այն խորանում է նախահնդեւրոպական ժամանակներ: Ուրեմն, հատկապես, աստվածների անունները ստուգաբանելիս, անհրաժեշտ է ճշտել եւ հաշվի առնել՝ 1. տվյալ աստվածության «կարգավիճակը» ըստ հնագույն հավատամքային հիերարխիայի, 2. հաշվի առնել այն ֆունկցիան (կամ ֆունկցիաները), որով օժտված է այդ աստվածությունը, եւ վերջապես՝ 3. հաշվի առնել դրանց խորհրդաբանական իմաստ-նշանակությունները: Պետք է ընդունել նաեւ Հովսեփ Օրբելու բանաձեւ-ձեւակերպումը, ըստ որի՝ *այն աստվածությունը, որը «ձեռք է բերել» բազմաթիվ ֆունկցիաներ (օր.՝ Զեւսը հունական պանթեոնում թե՛ հայր էր, թե՛ ամպրոպի շանթարձակը, թե՛ երկինքն իրեն վերցրեց եւ այլն), ավելի ուշ շրջանի «ձեւավորում» ստացած «կերպար» է****2***:*

<u>Միեր</u>: Նախ, նախահնդեվրոպական r-ի հնչյունաբանական ձեւափոխությունների մասին *1:

աղյուսակ #1

PIE r	Skt. r*	Av. ara*	OCS. ꙗ ꙗ гь, гь	Lith. ir, ur	Arm. ar	Toch. är	Hitt. ar	Gr. ra	Lat . or	OIr. ri	Goth. aur*

*1- PIE – նախահնդեվրոպական լեզու, Skt.-սանսկրիտ, Av.-ավեստա, OCS.-հին սլավոնա-եկեղեցական, Lith.- լիտվանյան, Arm.- հայերեն, Toch.- թոքարիան, Hitt.- հեթթիթերեն, Gr.- հունարեն, Lat.- լատիներեն, OIr.- հին իռլանդերեն, Goth.- գոթերեն: ներկայացված սխեման՝ R. S. P. Beekes, "Comparative Indo-European Linguistics", USA, 1995, էջ 136, 137 եւ 145.

Ընդգծելով, որ հնագույն աստվածների անունները հավաքական են եւ ունեցել են խորհրդաբանական նշանակություն, ***Արամազդ-Aoramazda*** - ն

*1,-Հ. Ներսիսյան, «Հայ ժողովրդի պետականության եւ պատմության ակունքներում», էջ 177:
*2, – Հովսեփ Օրբելի, «Հայ հերոսական էպոս», 1956թ., Երեւան:

հնդեւրոպական տարբերակներում ցուցել է՝ «Արեւ» եւ «Լուսին», - [**ara-**] + [***máh*** < ***mása,***] + [**da**]:

Բառանունի 1-ին մասը՝ ***Աօրա*** [Ar[a]ara]-ն հուրրիական եւ հայկական ***hurr > ar*** ձեւափոխությունն է: Հնխ. [*phHHur-]***[*1]**, հիթթ.՝ pahhur, հայերեն՝ hur, հուրրիերեն՝ hurr,- hurr > ur > ar ձեւափոխումն է՝

Հնխ. [*rH-] > [-r-]՝ սանսկրիտ հին իրան. հուն. լատին. հիթթիթ.***[*2]**

-ir-, -ur- -ar- -ra-(-ara) -ra-(-ar[a]-) -arh-

«Հուր»-ը աղերսվում է՝ հայկական՝ arew, սանսկրիտ՝ ravi´- եւ հիթթ.՝ har(u)wanai- ***«արեւ»*** -ի հետ*(Տես աղուսյակը հաջորդ էջում):*

Գերագույն աստվածության անվան 2-րդ մասը՝ ***-maz > masa- > mah,*** որ խորհրդանշում է՝ «լուսին, ժամանակ», աղավաղված ձեւափոխել է՝ «մեծ» maza (իրան. Avesta),- նոր իմաստով: Եւ վերջապես, եթե խոսում ենք «գերագույն աստվածության» մասին, ապա նա ունեցել է իր խորհրդանշանը, որ Ահուրամազդայի դեպքում՝ ***արծի՛վն է՝ թեւերով արեւի սկավառակն է:*** Արծիվը՝ հիթթ.՝ harahas, պահլվ.՝ haras, հուն.՝ ornis, գոթ.՝ ara, հին պարսկ.՝ arelie, հայերեն՝ oror կամ arciv, բխում է հնխ.՝ ****He/or -*** «արծիվ» ձեւից***[*3]:*** Արծիվը ուրարտական ***Հալդի*** գերագույն հայր աստվածության սիմվոլն էր: «Ավեստայում», որը հավաքագրված է 226-241թթ., Աօրամազդան՝ արդեն պատրաստի, բազմաֆունկցիոնալ, ներկայանում է այս հնագույն աստվածության դերում (թեւավոր արեւ), որն իսկապես «արարման հայր» էր կոչվում նրանից դարեր առաջ: Հնագույն հավատամքում, գերագույն աստվածության սիմվոլը՝ «արծիվը», կամ «թեւերով արեւի սկավառակը» խորհրդանշում էր՝ «արարչությունը որպես ամբողջ գոյաբանություն», «երկինք» խորհրդապատկերներով: Միթրայի սիմվոլը՝ «առյուծը», այս նույն «թեւավոր արեւի» ամառային արեւադարձն է, երբ արեւը մտնում է «Առյուծ» աստեղատուն: Ավելացնենք, որ մ.թ.ա. 14-րդ դարում, Հայկական լեռնաշխարհի երկու տերությունների՝ Միտանի երկրի թագավոր Մաթթիվազայի եւ Հիթթիթական արքա Շուփիլուլիամայի միջեւ կնքված պայմանագրում վկա են կանչվում մեծ աստվածներ՝ ***Միթրան, Ուարուանան, Ինդրան եւ Նասաթյասը:*** Այս նույն աստվածությունները սանսկրիտ հավատամքային տեքստերում հայտնվում են՝ ***Միթրհա, Ինդրա, Նահաիթիյա անուններով*** ****[4],*** եւ կարծում եմ, որ նրանք Հայկական լեռնաշխարհից դեպի Հնդկաստան պիտի հասնեին Պարսկաստանի տարածքով:

Վեդաներում, Միթրայի եղբոր՝ Վարուանայի առկայությունը եւ նրա սիմվոլը՝ որպես ***գիշերային արեւ***՝ «լուսին», ***ջուր*** էլեմենտով, հակադրվող բեւեռն է իր եղբայր՝ ***հուր***-Միթրայի: Այս երկուսով նրանք «ձեւավորում» են օրը՝

*1, *2, *3,- T. Gamkrelidze & V. Ivanov, “The Indo-European And The Indo-Europeans”, p. 605, 176, 455:
*4,- J. Duchesne-Guillemin: La religion de I’Iran ancien(Presses Univercitaires, Paris, 1962:

որպես գիշեր-ցերեկ, նաեւ, որպես տարեփուլի երկու կեսեր՝ ամառային ու ձմեռային արեւադարձ եւ աղերսվում են ***«ժամանակ»*** կատեգորիայի հետ: Պատահական չէ, որ Զրվանիզմում, Արոմազդը եւ Արիմանը՝ ժամանակի դից Զրվանի որդիներն էին:

Այսպիսով, նույն աստվածության հայկական՝ ***Միէր****(«Սասնա Ծռեր»)***,** իրանական ***Միհր*** եւ վեդայական՝ ***Միթրա*** անունների տարբերակներում, ամենաբնորոշիչ անունը, որ ցուցում է «ժամանակ» կատեգորիան որպես արեւի եւ լուսնի միասնությամբ ներկայացող բինարիզմի սկզբունք, հայկական ***Միէր = Մահա + Արա = լուսին + արեւ*** ֆունկցիոնալ նշանակությամբ անունն է, որի զուգահեռը՝ հթթիթ. «Մահուր» բառն է, որ նշ, է՝ ***«ժամանակ»:*** Միջին պարսկական ժամանակներում Միէր-Միթրան՝ «Mihr u Mâh'» օգտագործվող արտահայտություն է եղել «արեւի եւ լուսնի» համար: Եվ, փաստորեն՝ Արամազդ = Արա+մահա անունը, ըստ դուալիստական կոնցեպտի, իր մեջ «ներառում» է «գիշերն ու ցերեկը»: Ու պատահական չէ, որ հայկական Արամազդը չուներ Արիման անունով, հակառակ բեւեռ բնութագրող եղբայր: **Արա+մահա⇆Մահա+արա՝** մեկը մյուսի շրջադրաձն է:

↓ ↓ ↓ ↓

արեւ + լուսին ⇆ լուսին + արեւ:

#1	Հնդ. նախալեզու.	սանսկրիտ	հին իրան.	հուն.	լատին.	հիթթիթ.
	[*rH-] > [-r-]	-ir-, -ur-	-ar-	-ra-(-ara)	-ra-(-ar[a]-)	arh-
Ավես.՝	Ahura	«Արեւ»				
Հայերեն՝	arew/Ara					
#2	Հնդ. նախալեզու.	սանսկրիտ	հին իրան.	հուն.	հայերեն	
	[masa- > maz]=[*meh-]➞	mah	mah	men	(ա)-մսոյ/mah(ik)	
Ավես.՝	maz	«Լուսին/ամիս»				
Հայերեն՝	mas/msr					
#3	[da > di, [դի(g)]	«երկինք», «երկնքի աստված», «աստված» իմաստները՝				
		սանսկրիտ	լատ.	հին հոլդ.	հուն.	հայեր.
		deva-	deus	dia	dios, Zeus	di(c)
		↓		↓		
		Թիվ **«Երկու»**				
#4	Թիվ **«Երկու»**	սանսկրիտ՝	dvau (երկակի) > dva (արական)			
	Հնագույն հնդեւրոպացիների մոտ «երկինքը» բինարիզմի սկզբունքով միություն է, որ նաեւ աղերսվում է թիվ «երկուսի» հետ:		dve (իգական), - թվային՝ dvi			
		ավեստա՝	dva (արական)			
		հոմեր. հուն.՝	du(w)o, թվային՝ di-			
		հին լատ.՝	dui			

Երկու դիցերի անունները՝ Արամազ(sa-) եւ Մրհէր < Maha-ara, Արամազդը՝ ***արեւ-լուսին(ara+ maha)*** եւ Մհերը՝ ***լուսին-արեւ(maha+ara)*** մեկը մյուսի շրջված տարբերակն է՝ հիմքում ունենալով բինարիզմի սկզբունքը:

«Սասնա Տուն» էպոսի Մեծ Մհեր դիցը սերտորեն աղերսվում եւ ֆունկցիոնալ «նույնանում» է Արամազդի հետ: Մեծ եւ Փոքր Մհերների «տարբերությունը» պայմանավորված է հնագույն հավատամքի երկու բեւեռների փուլային շրջադարձերով: Եվ հայ էպոսում, ***հնագույն*** համակարգի դուալիզմի սկզբունքը ամենապահպանվածն ու արխայիկն է: Հայկական «Սասնա Ծռեր» էպոսում Մեծ Մհերը «առյուծաձեւ» է, ***արեւի իպոստասն*** է, նրա կինը՝ Արմաղանը՝ «Լուսնին» է*[1]: Փոքր Մհերը «լուսնի» իպոստասն է, նրա կինը՝ Գոհար, «մեռնող արեւն» է*[2] *(որի մահից հետո Փ. Մհերը դառնում է այս երկուսի միացյալ խորհուրդը):*

Հայկական էպոսում, Մեծ Մհերի «առյուծաձեւ» մականվան պատճառը եւ իմաստը բացատրվում է աստղագիտությամբ: Ամառային արեւադարձին *(մ.թ.ա. V-III հազարամյակներ)*, երբ արեւը մտնում է «Առյուծի» համաստեղություն, եւ «կցվում» է Ռեգիլուս(թագավոր) աստղի հետ, Մեծ Մհէրը դառնում է՝ «առյուծաձեւ»*[3], քանի-որ արեւը՝ ամառային արեւադարձից մինչեւ ձմեռային արեւադարձ, տարին երկու կես է անում: Սրա սյուժետային էպիզոդն էպոսում դարձել է՝ «Մհերն առյուծին երկու կես է անում»: «Առյուծի» համաստեղությունում ***արեւ-Մհերն*** իր բարձրագույն դիրքում է, որից հետո նա սկսում է «վայրէջք» կատարել: Էպոսում, Մհերը ***Յոթ տարի*** մնալով Իսմիլ Խաթունի *(լուսնի խորհուրդ)* հարկի տակ, վերադառնում ու մեռնում է: Արեւը «Առյուծի» համաստեղությունից ***մինչեւ*** ձմեռային արեւադարձ(«Զրհոս»), յոթ աստեղատուն «իջնելով», իր բարձրագույն դիրքից նվազում ու մարում է: Հաջորդ ***արեւը*** կլինի նրա որդի՝ սասնա Խոյ Դավիթը, որը գարնանային գիշերահավասարին, հեթանոսական նոր տարուն, առավոտյան առաջինը բարձրացող աստեղատնից՝ «Խոյ» համաստեղությունից ելնելով, իր առաջին հաղթանակը կտանի հաջորդ Մսրա Մելիքի դեմ, եւ նրան սասունցիք կկանչեն՝ «սասունա Խոյ» անունով (վերջի պարբերությունը բացատրող գծագիրը տես այս բաժնի վերջում):

---

*1,- «Անատոլիական ձեւերը, հիթթիթ.՝ arma- եւ Լուվ.՝ arma-, տարբեր են մնացած հնդեւրոպական ձեւերից, որ օգտագործվում էր «արեւի» համար: Լուսինը եւ Արեւը ունեին հավատամքային հատուկ նշանակություն, եւ բառերը դրանց համար հատուկ եւ տարբեր էին, անկախ հնդեւրոպական լեզվական էթիմոլոգիայից» (T. Gamkrelidze & V. Ivanov, “The Indo-European And The Indo-Europeans”, p. 591): ԱՐՄԱ + ՂԱՆ > ԱՐՄԱ + ՀԱՆ, ՂԱՆ < ՀԱՆ > AN > ANNA «մեծ մայր», «տիեզերամայր» (astral mother): ԱՐՄԱ = լուսին, ՀԱՆ = մեծ մայր, դիցամայր: Այս դիցամոր անունը, ինչպես Դավթի կին՝ ՀԱՆ + ԴՈՒԴ-ի անունը եւ ֆունկցիան որպես տիեզերական դիցամայր՝ աղեսվում է տիեզերական անհուսի, մեծ մոր իմաստների հետ:

*2,- «Սասնա Ծռեր» հայկական էպոսում Փոքր Մհերն աղերսվում է «ժամանակ» գաղափարի եւ «լուսնի» հետ: Այս մասին՝ առջեւում, «Փոքր Մհեր» բաժնում:

*3,- «Առյուծի» համաստեղությունը բաղկացած է 13 աստղերից. այս մասին մեզ հայտնում է VII դարի հայ մատենագիր Ա. Շիրակացին («Ա. Շիրակացի, մատենագրություն», 1973թ., էջ 251):

ԱՐՄԱՂԱՆ՝ դիցամայր, Մեծ Միհրի կինը:

Ըստ «Սասնա Ծռեր» էպոսի մի շարք պատումների, Մեծ Միհրի կնոջ անունը Արմաղան է: Այս դիցամոր մասին էպոսում տրված իմֆորմացիան, կամ մեզ հասած պատումների համաձայն՝ տեղեկությունը քիչ է: Նրա կերպարը բնութագրող էպիզոդները էպոսում մեկ-երկուսն են: Մեծ Միհրը ստանալով մեծ Մսրա Մելիքի՝ իր դաշնակցի եւ եղբոր *(նրանք ձեռք կտրելով եւ արյունները խառնելով դարձել էին եղբայրներ)* այրու՝ Իսմիլ Խաթունի օգնություն խնդրող նամակը, շտապում է Մըսր: Իսմիլը կանացի խորամանկությամբ եւ գինու օգնությամբ յոթ տարի իր մոտ է պահում Մեծ Միհրին եւ արու զավակ է ունենում նրանից: Յոթ տարի հետո, Մեծ Միհրն իր համար պարզելով լուսնապաշտ կլանի առաջնորդ Իսմիլի դավադրությունը, երբ վերջինս Միհրից ունեցած փոքրիկ երեխային խաղացնելով Սասունը ավերելու իր իղձերն է արտահայտում, սասնա դյուցազունը գլխիկոր վերադառնում է Սասուն, Արմաղանի մոտ, հույսով որ Արմաղանից կունենա արու զավակ: Այստեղ է, որ մենք տեսնում ենք Արմաղանի ընդգծված ուժեղ բնավորությունը: Արմաղանը յոթ տարի սպասում է ամուսնուն, այնուամենայնիվ վիրավորված լինելով, մահվան երդում է ուտում քառասուն տարի չթողնել ամուսնուն իր առագաստը: Սակայն արեւապաշտների տան դիցուհին նաեւ օժտված է բարձր գիտակցությամբ եւ անձնազոհությամբ: Արմաղանը խախտում է իր երդումը: Հանուն իր տոհմի, իր երկրի, այս զույգը արու զավակ է ունենում, ընդունելով երկնային կարգը խախտելու համար սահմանված մահվան պատիժը:

Արմաղանը մեծ մայր է, սասնա մեծ դից Դավթի մայրն է: Նա Սասնա Տան՝ աստվածային հոգու տան երրորդ մեծ դիցամայրն է՝ Ծովինարից եւ Դեղձունից հետո: Արմաղանը Քեռի Թորոսի՝ Թեւաթորոսի դուստրն է:

ԱՐՄԱ + ՂԱՆ > ԱՐՄԱ + ՀԱՆ, ՂԱՆ < ՀԱՆ > AN > ANNA «մայր», «տիեզերամայր» (astral mother): ԱՐՄԱ = լուսին, ՀԱՆ = մեծ մայր, դիցամայր: ANNA, ANNI = «մայր»*[1]: Այս դիցամոր անունը, ինչպես Դավթի կին՝ ՀԱՆ + ԴՈՒԴ-ի անունը եւ ֆունկցիան որպես տիեզերական դիցամայր աղեսվում է՝ «գիշերային երկնքի», «մեծ մայր» իմաստների հետ:

«Անատոլիական ձեւերը, որ օգտագործվում էր «լուսին» եւ «ամիս» իմաստների համար՝ հիթթիթ.՝ arma- եւ Լուվ.՝ arma- , տարբեր են մնացած հնդեւրոպական ձեւերից»[2]*: «Լուսինը եւ Արեւը ունեին հավատամքային հատուկ նշանակություն, եւ բառերը դրանց համար հատուկ եւ տարբեր էին, անկախ հնդեւրոպական լեզվական էթիմոլոգիայից»*[3]*:

---

*1,- «Անատոլիական լեզուներում հնդեւրոպական օրիգինալ ***"մայր"*** բառը փոխված է. հիթթիթ.՝ ***anna-, լուվի.՝ anni-*** "մայր" մանկական արտահայտություն բառով» T. Gamkrelidze & V. Ivanov, "The Indo-European And The Indo-Europeans", p. 667n 45: Հայկական գյուղերում մինչեւ այժմ գերդաստանի մեծ մորը՝ ղեկավարին, կոչում են՝ ՀԱՆ > ՀԱՆԻ < ANN > ANNI:

*2, *3,- Նույն աղբյուր, էջ 591:

Լուսնի համար անատոլիական ***arma-*** ձեւը՝ ***ar-*** «բարձրանալ, ծագել» եւ ***-ma-*** վերջածանց, բխում է հիթթիթ.՝ **arma ḫ ḫ-** «հղիանալ» իմաստից, որ պայմանավորված է կնոջ հղիության եւ լուսնի փուլային օրերի հետ*[1]:

Վերեւում արդեն խոսվեց, որ Մեծ Միերը խորհրդանշում է ամառային արեւադարձը «Առյուծի» համաստեղությունում: Ըստ հնագույն կարգականոնի եւ «Սասնա Ծռեր» էպոսի ներքին տրամաբանության, արական դիցը եւ նրա իգական «կեսը» ստեղծում են՝ «ամբողջը»: Եթե արական դիցի աստեղատունը «Առյուծի» համաստեղությունն է՝ ամառային արեւադարձ, ապա նրա իգական «հակոտնյան» ձմեռային արեւադարձն է: Ձմեռային արեւադարձին՝ XII ամսվա *(մ.թ.ա. IV-II հազ., Փետրվարի 17-ից Մարտի 20)* *[2], առավոտյան առաջինը բարձրացող աստեղատների մեջ է ***IKU*** աստեղատունը, որն այսօրվա «Պեգասոսի» համաստեղությունն է*(տես՝ Sky Glob 3.5)*: «Պեգասոսի» IKU աստեղատանը հետեւում է ***Դումուզի - Դավիթ - Խոյ*** աստեղատունը: Մեկ IKU-ն շումերական սրբազան չափն է՝ 60 x 60: IKU աստեղատունը աղերսվում է՝ «չափ», «արտաչափ» իմաստների հետ*[3]: *«Այս արտը մեր էպոսի արտն է, որի տերը արտատեր պառավն է»*,- ճշտում է Ա. Դավթյանը*[4]: «Սասնա Ծռեր» էպոսում Դավիթը որս է անում արտատեր պառավի փոքրիկ արտում: Արտատեր պառավի մասին Էպոսում կա հպանցիկ իմֆորմացիա. *«Սասուն պառավ մի կար. էդ պառավ Միերի **յարն** էր էղեն»*[5]*:* Դուալիզմի սկզբունքով, ***ամառային արեւադարձի*** «Միեր-Առյուծ» աստեղատան իգական զույգը պետք է լինի՝ ***ձմեռային արեւադարձի*** «իգական» ***IKU-«արտ»*** աստեղատունը: Ձմեռային արեւադարձին, առավոտյան առաջինը բարձրացող «IKU-արտ» աստեղատունը՝ իգական բնույթ ունի, որովհետեւ նրան բնորոշ է «հող» տարերքը:

Կասիտական ժամանակների Կուդուրու քարի վրա պատկերված է ձմեռային արեւադաձից սկսած*(Փետրվարի 17-20)*, առավոտյան առաջինը բարձրացող աստեղատները, եւ նրանց մեջ առաջինը՝ հե՛նց այսօրվա «Պեգասոսի» քառանկյունն է՝ Միջագետքյան MUL.APIN աստղացանկում IKU աստեղատունը*[6]: **Երկրորդ հարկը** սկսվում է աջից ձախ՝ 1.«թռչուն-արտույտ», 2.«գութան-խոփ», 3.«խոյ», 4.«ցուլ» պատկերներով, որոնք համապատասխանաբար, մ.թ.ա. 2-րդ հազարամյակում, ձմեռային արեւադարձից սկսած, յուրաքանչյուր ամսվա ***առավոտյան առաջինը բարձրացողները***՝ հետե-

*1,-T. Gamkrelidze & V. Ivanov, նույն աշխատություն, էջ 591, 667n 45.
*2,- Հին հեթանոսական տարին սկսվում էր գարնանային գիշերահավասարին, Մարտի 21-ից, համապատասխանաբար XII ամիսը սկսվում է Փետրվար 17-ից եւ վերջանում է Մարտի 20-ին: Տես «Հայ մատենագիրներ, Ա. Շիրակացի», Երեւան, 1979թ., էջ՝ 250-253:
*3, *4,- Ա. Դավթյան, «Գարուն» ամսագիր, # 1, 20032., էջ 82:
*5,- «Սասունցի Դավիթ», 1989թ., Երեւան, էջ 265:
*6,- B. L. Van der Waerden, «Science Awakening II», 1974, USA, p. 71-72.



Մելիշիպակի կուդուրու պատկերաքարը Սուզից: Մ.թ.ա. 12-րդ դար:

վյալ աստեղատներն են.

1. «Պեգասոսի քառանկյուն», որ հնում կոչվել է «արտ-IKU»*[1]: Այսօրվա «Պեգասոս» աստեղատունը, որ կոչվել է՝ IKU «արտ, արտաչափ», նկարում ներկայացված է՝ ***արտի թռչուն*** *(գուցե արտոյտ)* գաղափարագրով, քանի որ նրանից հետո գալիս է արտը վարող գութանի համաստեղությունը *(գութան - խոփ - Եռանկյուն)*, որի ետեւում վարողը՝ Դումուզի-Խոյն է*[2]:

2. «Եռանկյունին», որ հնում կոչվել է «գութան-APIN»*[3]:

3. «Խոյ», հնում կոչվել է LU.H̱UN.GA*[4] եւ Խոյի ետեւում, պատվանդանի վրայի մկրատաձեւ, երկու ելուստներով գաղափարագիրը խորհրդանշում է Դումուզի դիցի «երկենցաղ» բնույթը՝ որպես մեռնող ու հառնող աստվածություն:

4. «Ցուլ» համաստեղությունը, որ հնում կոչվել է MUL.MUL-***Պլեադաներ*** անունով*[5]: Ցուլի հետեւում, պատվանդանի վրայի խորհրդանշանը ամպրոպի աստվածության խորհրդանշանն է:

ԱՐՄԱ + ՂԱՆ > ԱՐՄԱ + ՀԱՆ, ՂԱՆ < ՀԱՆ > AN > ANNA «մեծ մայր», «տիեզերամայր» (astral mother): ԱՐՄԱ = լուսին, ՀԱՆ = մեծ մայր, դիցամայր: Աղեսվում է՝ «տիեզերական անհուն», «մեծ մայր» իմաստների հետ: Սիմվոլը՝ ***լուսին:*** Խորհրդանշում է ձմեռային արեւադարձը, աստեղատունը՝ ***IKU-արտն*** է, որ այսօր կոչվում է՝ «Պեգասոս»: Նրա զավակ մեծ դիցը Սասնա Դավիթը՝ սասնա խոյը, կլինի գարնանային գիշերահավասարը՝ «Խոյ» համաստեղությունում:



*1, *2, *3,- B. L. Van Der Waerden, “Science Awakening II”, NY, 1974, p. 73. 72:

*4, - B. L. Van Der Waerden, “Science Awakening II”, NY, 1974, p. 71: «Սասնա Ծռեր» էպոսի պատումներից մեկում, շումերական Դումուզիի զուգահեռը՝ Դավիթը, ինքն է լծվում գութանին ու վարում արտը: *5,- B. L. Van Der Waerden, “Science Awakening II”, NY, 1974, p. 76:

ՍԱՍՆԱ ՏԱՎԻԹ



Յոթերորդ աստվածություն:
Էլեմենտը՝ հուր:
Ծավալաձեւը՝ տետրահեդրոն:
Աաստղատունը
արեւի ուղեծրում՝ «Խոյ»:
Արեւի ուղեծրից դուրս՝
աղերսվում է «Օրիոն»
համաստեղության հետ:

«Սասնա Ծռեր» էպոսի
Դավիթին զուգահեռ
աստվածություններն են՝
Արա Գեղեցիկը,
շումերական Դումուզին,
եգիպտական՝ Օզիրիսը:
Բոլորը մեռնող-հառնող
աստվածություններ են:

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

Սասնա Տավիթ

«Սասնա Տուն» էպոսի երրորդ ճյուղը նվիրված է Սասնա Դավթին: Այս դիցը, ըստ հնագույն հավատամքային կարգականոնի, 7-րդ դիցն է: Յոթերորդ դիցը հնագույն բոլոր հավատամքային պատումներում սպանվում է հակառակորդի՝ հիմնականում իգական ներկայացուցչի կողմից: Սակայն նրա մեռնելու պատճառը նաեւ պայմանավորված է համակարգում մեծ սխալ անելու հանգամանքով: Հնագույն հավատամքային պատումներում այս յոթերորդ աստվածությունը մեռնելով «դառնում է» անդրաշխարհի-արտաշխարհի «միդիատոր»: Հնագույն հավատամքային պատումներում 7-րդ աստվածություններն են.- եգիպտականում՝ Օզիրիս, հայկականում՝ Արա Գեղեցիկ, շումերականում՝ Դումուզի, հունականում՝ Դիոնիսիոս եւ այլն: Քրիստոնեության մեջ հնագույն յոթերորդ դիցը ներմուծվել է որպես՝ Հովհաննես Մկրտիչ եւ Յիսուս Քրիստոս խառն կոմբիացիայով:

Եգիպտական համակարգում 7-րդը՝ երկնային հովիվ Օզիրիսը, փորձությունն անցած կատարյալ հոգիներին «ազատելով» Ծիր Կաթնի շրջանաօղակից, նրանց տանում է դեպի բարձրագույն հոգեւոր սֆերաներ:

Յոթերորդ աստվածությունը, ավելի վաղ շրջանում, աղերսվում էր արեւի հետ, որպես մեռնող-հառնող բնության աստվածություն:

«Սասնա Տուն» էպոսում Դավթի պատումը ամենաածավալուն, գունեղ եւ ամենասիրված պատումն է:

Երբ Սասմա Դավիթը ծնվում է, նրա ծնողներ՝ Մեծ Միհրն ու Արմաղանը, քանի-որ խախտել էին երկնային օրենքը, անմիջապես մեռնում են: Ծծկեր որբը ոչ մեկի կուրծքը չի վերցնում: Մտածում են, որ մանուկը միայն «լուսնապաշտ կլանի» մայր-առաջնորդի՝ Իսմիլ Խաթունի կուրծքը կվերցնի: Մանկանը դնելով Մեծ Միհրի Քուռկիկ Ջալալի հրեղեն ձիու գավակին, ուղարկում են Մըսրի երկիր. այլապես փոքրիկ Դավիթը կարող էր մեռնել առանց կաթնամոր: Դավիթը մեծանում է ժամերով: Ազնորդի դիցը դեռ հազիվ է կարողանում քայլել, բայց



ՓՈՔՐ ՄՀԵՐ

խաղալիքի նման բռնում է իր խորթ եղբոր, մեծ եղբոր՝ Փոքր Մսրա Մելիքի 360 լիտրանոց ծանր գուրզը, կատաղության հասցնելով վերջինիս: Իսմիլ Խաթունի միջնորդությամբ է միայն, որ փոքրիկ դյուցազունին չեն սպանում: Մսրա Մելիքի կարգադրությունը՝ մանկանը ուղարկել հայրենիք՝ Սասուն եւ ճանապարհին սպանել,- նույնպես չի ստացվում: Սասունում որբին իր տունն է առնում նրա հորեղբայր Ջենով Օհանը *(«Այծեղջյուր-Զրհոս» համաստեղություն, ամեռային արեւադարձ, երբ արեւը նորամանուկ է, տես՝ Sky Glob 3.5):* Դեռ պատանի, Դավիթը դառնում է Սասունի հովիվը, հետո՝ նախարապանը: Եվ... նրա մոտ ոչինչ չի ստացվում: Պատանին չի կարողանում տարբերել ընտանի եւ վայրի կենդանիներին: Լինելով ուղղամիտ, պարզ եւ միամիտ, պատանին՝ դմբո Դավիթ անունն է ստանում շրջապատի կողմից: Ի տարբերություն Սասնա նախորդ դիցերի, որոնցից կարելի էր սարսափել, հարգելով մինչեւ գետին խոնարհվել նրանց առջեւ, Դավթի հետ, հասարակ մարդիկ՝ շինականները, գյուղացիք, կարող էին կատակել, նրան կարող էին ձեռք առնել եւ լուրջ չնդունել: Բայց պատանին զարմանալի բնավորություն ուներ. նա չէր նեղանում կամ չարանում, երբեք չէր ցուցադրում իր սարսափելի ուժի առավելությունը: Նա սիրում էր իր եկիրը, սիրում էր բոլոր մարդկանց, օգնում էր թե՛ վար անող մշակներին, թե՛ հովիվներին: Ոչ-ոք չէր կարող սպասել, որ այս «անլուրջ» պատանին իր երկրի սիրուց, իր երկրի ազատագրման համար, մենամենակ կելնի Մսրա Մելիքի բազմահազարանոց բանակի դեմ առճակատման:

Ժառանգական իրավունք:

«Սասնա Ծռեր» հնագույն հավատամք-էպոսն այս անկյունով*(ժառանգական իրավունք)*, որքան մեզ հայտնի է, դեռ չի դիտարկվել: Սակայն, առանց քննելու էպոսում ներկայացված սասունցիների հասարակական կառույցում ժառանգական իրավունքի խնդիրը, էպոսում տեղի ունեցող դեպքերն ու հերոսների գործողությունները լիարժեք չեն կարող բացահայտվել:

Մսրա Մելիքին հաղթելուց հետո սասուցիների վերաբերմունքը Դավթի նկատմամբ փոխվում է: Նա արժանանում է իր հոր՝ Մեծ Մհերի դիրքին, բայց հասարակության մեջ, իր պապ Սանասարի տեղը նա չէր կարող գրավել, քանի-որ Սանասարի մեծ որդին՝ Ցռան Վերգոն, Դավթի հորեղբայրը, նույնպես ունի որդի, եւ ժառանգական ավագի իրավունքի պայմաններում, Դավիթը չէր կարող լինել Սասնո կառավարիչը: Պատումների դրվագներից մեկում, ***երկնային հավլունի թուրը՝ «երկնային հայր աստվածության համաստեղությունը («կարապ-Անգղ»),*** ոչ թե Դավթի, այլ Ցռան Վերգոյի որդի՝ ***պարոն*** Աստղիկի ձեռքին է*[1]: Էպոսում այս հերոսի անունից

*1,- Ա. Դավթյան, «Հայոց Աստղային Դիցաբանություն», 2004թ., Երեւան, էջ՝ 211: Նույն տեղում. «Պարոն Աստղիկի մյուս անուններն են՝ Աստղու Ցոլածին, Աստղիկ Երգնկացի»:

առաջ՝ ***պարոն*** տիտղոսային մականունը, հենց ընդգծում է Աստղիկի Սասունի ապագա իշխան լինելու կարգավիճակը: Դավիթը, եւ հատկապես նրա որդի Փոքր Միհրը, դառնում են թափառական ասպետներ, եւ սկսում են շրջել աշխարհով մեկ, փորձելով արդարություն սահմանել ամենուր: Բայց մինչ այս, չափահաս դառնալով Դավիթը գնում է Խանդուդ Խաթունի ձեռքը խնդրելու*(արեւը «Կույսի» աստեղատանն է)* եւ բազմաթիվ սխրագործություններից հետո, արժանանում է Խանդուդի սիրուն: Ամուսնությունից հետո, մինչեւ զավակ ունենալը, Դավիթը հեռանում է Սասունից, բռնելով թափառական ասպետի ճանապարհը: Էպոսում այս հպանցիկ դրվագը շատ կարեւոր է եւ ներկայացնում է արեւապաշտ սասուցիների հասարակական օրենքները՝ ժառանգական իրավունքի, տոհմի հիերարխիայի եւ պաշտոնավարության առումներով: Սանասարի մեծ որդին Յռան Վերգոն էր, ուրեմն ժառանգական իրավունքով ոչ թե Մեծ Միհրն էր Սասունի իշխանը՝ գլուխը, այլ մեծ եղբայրը՝ Վերգոն: Գուցե Մեծ Միհրի Սասունից հեռանալն ու Իսմիլ Խաթունի երկրում յոթ տարի մնալու պատճառներից մեկն էլ սա է: Սակայն, Մեծ Միհրն անպարտելի իր հզորությամբ թեեւ չլինելով կլանի «պաշտոնական» գլուխը, Սասունում առաջին դեմքն էր: Հետագայում, արդեն Մսրա Մելէքին հաղթած հերոս Դավթին, սասնա օրենքը դեռ մեծ դժվարությունների ու հակասությունների առջեւ կկանգնեցնի: Սասունում, կառավարիչը կամ կլանի գլուխը Դավթի հորեղբայր Յռան Վերգոն էր, եւ նրա որդին՝ պարոն Աստղիկը, ժառանգական իրավունքով պետք է լիներ հաջորդողը: Այս առումով փաստերն էպոսում բազմաթիվ են: **Նախ,** օտար զորքով Դավթի դեմ ճակատող Պարոն Աստղիկի ձեռքին էր ***հավլունի թուրը.*** Սանասարի երկնային, տոհմական թուրը միայն կլանի առաջնորդի ձեռքում կարող էր լինել: **Երկրորդ՝** երկնքից հուր մաղող Պարոն Աստղիկը նաեւ կոչվում է՝ Աստղ Յոլաձին, որ գերագույն աստվածության՝ն «Անգղ-Կարապի» համաստեղությունն է: Դավիթը թշնամիների դեմ ճակատամարտի ժամանակ, չիմանալով, նետահարում է ազգականին: Ըստ էպոսի Դավիթը չէր կարող տեսնել, չգիտեր նրա ով լինելը: Բայց երբ մոտենում է, տեսնում է, որ Աստղիկը՝ իր ազգականն է: Դավիթը հոգին տվող ազգականի գլուխը դնում է իր ***աջ*** ծնկին: Ի՞նչ կարող է նշանակել այս հնագույն հեթանոսական ծիսակարգը եւ, օրենքից բխող իրավական ի՞նչ հետեւանքներ կարող էր ունենալ: Պատասխանը կարծում եմ դժվար չէ կռահել. Պարոն Աստղիկը Սասունի կառավարչի՝ Յռան Վերգոյի որդին էր: Հոգին տալու պահին ազգականի գլուխն իր աջ ծնկին դնելով, Դավիթը թե՛ կատարում է սասնա հավատամքային կարգականոնը եւ թե՛ դառնում է մեռնողի իրավունքների ժառանգորդը: Պատահական չէ որ Դավթի մեռնելուց հետո, նրա ծեր հորեղբայր Յռան Վերգոն *(Խանդուդը նրան **քյոփակ** է կոչում)* Դավթի

կնոջը՝ Խանդուդ Խաթունին ամուսնության առաջարկ է անում: Դավթի մահով, իշխանական կամ թագավոր լինելու ժառանգական իրավունքն անցնում էր նրա այրու նոր ամուսնուն:

Բայց վերադառնաք Դավթին: Կնոջը հղի թողնելով Դավիթը բռնում է օտարության ճանապարհը: Ինչո՞ւ: Ինչո՞ւ սիրող եւ նոր ամուսնացած դիցը, որը Խանդուդի համար կենաց ու մահվան բազմաթիվ կռիվներ էր մղել, հանկարծ թողնում է հայրենական տունը: Հավանաբար Պարոն Աստղիկին սպանելուց հետո, իշխանության ժառանգական իրավունքի հետ կապված ասեկոսները Դավթին դրդում են հեռանալ: Գուցե հեռանալով նա փորձում է փաստել, որ իր ազգականին նա չի սպանել միտումնավոր՝ իշխանության համար: Դավիթն օտարության մեջ է լինում, երբ նրա որդին ծնվում է: Օտարությունից Սասնա Տան մեծ դիցը վերադառնում է յոթ տարի հետո *(Արեւը «Խոյում» է՝ 1-ին տուն, հաշված 7-րդ աստղատուն՝ «Կարիճն» է, աշուն):* Նրա որդին՝ յոթ տարեկան Փոքր Մհերը, գնում է հորը փնտրելու: Ճանաչելով իրար, հայր ու որդի մենամարտում են: Հաղթում է որդին: Էպոսում Դավիթն իր պարտությունը պատճառաբանում է՝ Ճմշկիկ Սուլթանի հետ մենամարտելու իր երդումը խախտելու հանգամանքով: Դավթի աջ բազուկին, դեռ պատանի ժամանակներում, երկնքից իջած խաչը սեւացել էր՝ իբր Ճմշկիկ Սուլթանի հետ մենամարտելու իր երդման խոստումը չկատարելու պատճառով *(Ճմշկիկը արքայադուստր է եւ Դավթի կին արքայադուստր Խանդուդի հետ նրանք նույն տեղանքից են. ուրեմն քույրեր են)* Հետագայում, դեպքերի զարգացումը մեզ համար պարզում է, որ Ճմշկիկից Դավիթն ունի աղջիկ երեխա, որը եւ նետահաում, սպանում է հորը: Փաստորեն, «Սասնա Ծռեր» էպոսի այս պատումում ենթատեքստ կա. տրամաբանորեն, Ճմշկիկ Սուլթանը յոթ տարի առաջ*(ուրեմն, Դավթի անօրինական աղջիկը 6 տարեկան է)* եղել է Դավթի սիրուհին եւ հղի է մնացել Դավթից, այլապես ինչո՞ւ համար է Ճմշկիկը՝ «լուսնապաշտների կլանի» առաջնորդը, մենամարտ պահանջում Դավթից *(համանման սյուժետ է՝ Արա Գեղեցիկ-Շամիրամ պատմությունը)* **:** Կնշանակե, Դավթի աջ բազուկի վրայի երկնային խաչը սեւացել է ոչ թե Ճմշկիկի հետ մենամարտ տալու երդումը չիրագործելու, ձգձգելու պատճառով, այլ՝ հնագույն հնդեւրոպացիների երկնային օրենքներից մեկը՝ ամուսնության կարգականոնը խախտելու համար: ***Արեւապաշտների կլանի*** արու զավակը՝ այս դեպքում Դավիթը, կարող էր ***Լուսնապաշտների կլանի*** առաջնորդի դստերը կին վերցնել՝ Խանդուդ Խանումին*[1]**:** Բայց, փաստորեն, օրինախախտում է՝ Սասունից նեղացած հեռանալով, խա-

*1,- Տես՝ T. Gamkrelidze & V. Ivanov, "The Indo-European & The Indo-Europeans" , 1995, USA, p. 679. «Դուալիստական սկզբունքը հնագույն հնդեւրոպացիների հավատամքում եւ դրա անդրադարձը նրանց հասարակական կառուցվածքում» բաժնում, ներկայացված է նաեւ այս երկու կլաններում ամուսնական հարաբերությունների կարգականոն աղուսյակը:

ռիսխ գցել հակառակորդի «վրանում», եւ իր քենուն, որը ***Լուսնի կլանի*** առաջնորդն է, հղի թողնել: *Մենունոյն դիցը չէր կարող երկու կլաններում էլ ներկայանալ որպես սերնդատու հայր: «Արեւապաշտների» շահերի դիրքից սա օրինախախտում է:* Փաստորեն, Դավիթը կրկնում է իր հոր՝ Մեծ Մհերի սխալը, որը դրա համար մահվան արժանացավ՝ արեւապաշտ սասունցիների «երկնային օրենքի» համաձայն:

Ո՞վ է յոթերորդ դիցը՝ Սասնա Դավիթը:

Դավիթ (բառբառում՝ ***Տավիթ***), - անունը, Հր. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարանում»*(Երեւան, 1944թ., հատ. Բ)* ներկայացված է որպես եբրայական անուն՝ *«*Դավիթ, ար.* < Dāīd *անունից, որ բուն նշանակում է «սիրելի», «սիրեցյալ»՝ եբրայական dvd, ասուրական dādu, ասորական dādā «սեր, սիրելի, բարեկամ» արմատից (Gesenius 157)»:* Նույն տեղում Հր. Աճառյանն ավելացնում է՝ *«հայտնի չէ սակայն թե որտեղից է առաջացել հայերենում **Ը** վերջածանցը որ ոչ մի լեզվի մեջ էլ չկա»:* Տավիթ կամ Դավիթ անունը, որ հայկական էպոսում արական սեռի երրորդ, համակարգում՝ յոթերորդ աստվածության անունն է, ***չի կարող լինել ոչ հնդեւրոպական ծագումի***: Եբրայական ***Դավիթ*** անունն է փոխառություն՝ հնդեւրոպական **«երկինք, աստված»** բառիմաստներից: Դավ+իթ = Տավ+իթ > ԴԻՎ > ԴԵՎ < **deva'-** < **dia** > ԴԻ(ց), - անունը աղերսվում է հնդեւրոպական ***dyéuh*** «երկինք» եւ ****t'yeu-*** «աստված» իմաստների հետ**** [1]***:

Հնագույն հնդեւրոպացիների լեզվում *«"Աստված" բառը էթիմոլոգիայով կապված է *t'ei- «փայլել» արմատի հետ: Նույն արմատից բխելով բառը ստանում է **"օր"** իմաստը: Լատին՝ DIĒS «օր», հին Իռլ.՝ "die" «օր», սանսկրիտ՝ di´vā «ցերեկ օր», հայերեն՝ **tiw,- տիվ** «օր», որ բխում է նախահնդեւրոպական՝ *tiu- ձեւից»*** [2]:** Էպոսի Տավիթը(**tiw**) «պայծառ երկնքի»՝ «օրվա» խորհուրդնէ:

Հայկական էպոսի «Տավիթ» աստվածությունը *(սասունցիք Տավիթ են ասում, ոչ թե՝ Դավիթ)* զուգահեռ է Վանի ուրարտական «Մհերի դուռ» ժայռաքարի 79 աստվածությունների արձանագրություններում արական աստվածներից հինգերորդի՝ Տուարանիի (Tuarani) հետ:

Էպոսում «Դավիթ» անունը՝ բնիկ հայկական այս աստվածության «քրիստոնեացված, փոփոխված արտաբերմամբ անունն է: ԴԻ(Վ) > ԴԵՎ(ա) – ձեւը հավանաբար անվան նախնական ձեւն է, որ բխում է՝ ԴԻ(ց) - ***«աստված»*** բառից, եւ քրիստոնեության ժամանակ, իմաստափոխվել, դարձել է՝ «դեւ, սատանա»: Հայկական էպոսում՝***«Դավթի ազգ դեւրստաններուց ի»*** ար-

*1,*2, -T. Gamkrelidze & V. Ivanov, "The Indo-European & The Indo-Europeans", 1995, p. 692-693:

տահայտությունը պատահական չէ:

«Դավթի տղա Միերին կ'ասըն՝ Դավիթ-Միեր:
Դավթի*(Փոքր Միերի,- պարզեցումը՝ Ա.Ա.)* **ձին խրեշտակ նալըց.**
Դավիթ ասաց. – խորոտ նալը:
Ասաց. – Ինչ խորոտ նալըմ
Քո ձիուն, քո ումր մեկ եղնը:
Դավթի ազգ դեվըստաններոուց ի»:

[Պատում Ը, պատմող՝ Մոկացի Վարդան, պատումը տպագր. է եղել 1901թ., «Սասնա Ծռեր», h.I, էջ 378, Երեւան, 1936թ.]:

«Սասնա» էպոսի եւ հայկական հնագույն «առասպելների», ինչպես նաեւ եգիպտական ու շումերական հավատամքային պատումների զուգահեռ համեմատական վերլուծումները, ըստ հնագույն հավատամք-կարգականոնի, բացահայտում են տիեզերածավալման մեջ «Տավիթ աստվածության» դերակատարությունը, ֆունկցիան, եւ նրա կարգավիճակը գլխավոր աստվածների սանդղակում:

Դավիթը հայկական էպոսի կենտրոնական աստված-հերոսներից միակն է, որ՝ 1) ***հովիվ է,*** 2) ***խենթ եւ միամիտ*** բնություն ունի *(միակն է, որին կարողանում են ձեռք առնելով «դմբո» ասել, միակն է, որ վայրի կենդանիներին բերում լցնում է քաղաք, շամփուրով կռվի է գնում, ձիու կողը ջարդում է եւ այլն)*, 3) ***խախտում է կանոնակարգը*** (աջ բազուկի վրայի *Խաչ-Պատերազմին* սեւացել էր), 4) ***սպանվում է թշնամուց*** *(Զմշկիկ Սուլթանի աղջկանից, որն իր սերմից էր)* **:** 5) ***Սպանվում է իգական սկզբունքից:***

«Սասնա» էպոսի Դավիթը լիարժեք համապատասխանության մեջ է՝ Արա Գեղեցիկի եւ շումերական Դումուզիի հետ:

Պատմահայր Խորենացու ***Արա Գեղեցիկ եւ Շամիրամ*** հնագույն պատումը, հիմքում, նույնպես Արեւի եւ Լուսնի՝ որպես արական եւ իգական սկզբունքների դուալիզմ, ներկայացումն է: ***Արա-արեւը*** սպանվում է ***Շամիրամ-լուսին*** (sinarama,- "բարձացող լուսին") իգական սկզբունքից:

Իր օրինական կնոջից՝ Նուարդից Արա Գեղեցիկն ուներ 12 ամյա ***Արայան Արա*** որդուն: ***Արայան Արայի*** տարիքը՝ ***12 տարեկան****[1]**,** խորհրդանշում է, որ նա 12 համաստեղությունների հետ աղերսվող աստվածությունն է, որ հնագույն հավատամքային կարգականոնում վերջին դիցն է՝ ինչպես փոքր Միերը:

Շումերական հավատամքային պատումներից մեզ հայտնի է Դումուզի/Ինանա պատումը, որը հնարավոր է Արա Գեղեցիկ եւ Շամիրամ պատումի

*1,- «Մովսես Խորենացի, «Հայոց պատմություն», 1981թ., Երեւան, էջ 75:

նախանական տարբերակներից է:

Ըստ Ա. Մովսիսյանի, Դումուզին շումերների հարեւան Արատտա երկրի ***արեւի*** աստվածությունն էր: Եվ Շումերից ԱՐԱՏՏԱ սրբազան երկիր տանող ճանապարհը՝ «դարբասները» Կարիճի լեռնաշղթան է *(Կորդվաց նահանգի Սարարադի կամ Արարադի լեռները)*, որտեղով շումերական Գիլգամեշը մուտք գործեց դեպի աստվածների երկիր*[1]:

«Դումուզին պատկանել է մի աստվածային ընտանիքի, որը պաշտվել է Արատտայում եւ որի աստվածներից մի քանիսը մուտք են գործել շումերական պանթեոն: Այդ անցման շնորհիվ էլ նրանք այսօր հայտնի են մեզ: Արատտական աստվածների մասին պատկերացում է տալիս շումերական «Եթե իմ մայրը չլիներ» երգի հետեւյալ հատվածը.

15. Գեշտինաննան քո քրոջից վատ չէ:
Ինաննա, արժանապատվորեն խոսք փոխանակենք:
Ես ինքս Ութու աստծուց վատ չեմ:
Նինէգալլա, խորհրդակցենք հանգիստ:
Էնկի աստվածը Զուենից վատ չէ:
Ինաննա, արժանապատվորեն խոսք փոխանակենք:
Տուրտուր աստվածուհին Նինգալից վատ չէ»:

Փաստորեն Դումուզին Ինաննային (հետագայում՝ Իշտար, Շամիրամ), որը Լուսնի Աստծո դուստրն է եւ «օտար», «հարեւան» երկրի պանթեոնի աստվածուհին է, փորձում է «համոզել» ամուսնանալ, բացատրելով, որ իր հայր Էնկին՝ ՀԱՅԱ-ն, իր մայրը՝ Տուրտուրը, իր քույրը՝ Գեշտինաննան (հայկական՝ Գիսանե), որոնք ըստ կարգավիճակի ունեն իրենց զուգահեռները շումերական պանթեոնում, «պակաս» չեն, իսկ ինքը՝ Դումուզին, Ինաննայի եղբայր Ութուից վատը չէ, որն ***արեւի*** *աստվածություն էր շումերական պանթեոնում:*

«Գիլգամեշի» աքադական տարբերակում, որտեղ շումերական Ինաննային փոխարինել է Իշթարը, Լուսնի Աստծո դուստրը «հաջողում է» եւ իր փոխարեն Դումուզին է «իջնում» անդրաշխարհ: Եւ Գիլգամեշը Ինաննա-Իշթարին ասում է.

45. Դումուզիին՝ ամուսնուն քո պատանեկության,
46. Դու տարեց-տարի ստիպել ես հեկեկալ:

*«Տարեց-տարի հեկեկալը», հավանաբար, արտացոլում է Դումուզիի իբր բնության աստծո՝ ամեն տարի մեռնելու եւ հաջորդ տարի հառնելու պատկերացումը»**[2] (Նույն աղբյուր. Ա. Մովսիսյան՝ հմմտ. հայկական Արայի հետ):

---

*1, *2, - Ա. Մովսիսյան, «Հնագույն պետությունը Հայաստանում, Արատտա», 1992թ., Երեւան, էջ 46, էջ 41-50:

Ըստ Շումերաբաբելական պատումների՝ «Եթե իմ մայրը չլիներ», «Գիլգամեշ» եւ այլն, Դումուզին «օտար», «հարեւան» Արատտա երկրի պանթեոնի աստվածություն է, եւ Արատտա երկիրը հնագույն Հայաստանն է*[1]:

Շումերական Դումուզին-Ինաննա, որից ասորական՝ Թամմուզ*[2] եւ Իշթար, փռյուգիական՝ Ատտիս եւ Կիբլա, հունական՝ Ադոնիս եւ Ափրոդիտե, եգիպտական՝ Օզիրիս եւ Իզիս (Իզիդա), հայկական՝ Արա Գեղեցիկ եւ Շամիրամ, միեւնույն պատումն է, որն, ի վերջո, հնագույն հավատամքում՝ մեռնող եւ հառնող աստվածության մասին վիպական ներկայացումն է:

Ա. Մովսիսյանն իր գրքում իրավացիորեն ներկայացնում է, որ շումերերեն Դումուզի նշանակում է՝ «իսկական որդի» (***Դումու***՝ «որդի» եւ ***զի***՝ իսկական), սակայն անվան շումերական բառիմաստային այս ստուգաբանությունը ոչինչ չի ասում այդ աստծո «բուն էության» մասին: Դումուզին, ըստ շումերական պատում-տարբերակի, պատկանում է՝ օտար, հարեւան Արատտայի պանթեոնին ու շումերական Ութու արեւի աստծո զուգահեռն է Արատտայի պանթեոնում, ուրեմն, նրա անունը պետք է աղերսվի արեւի հետ:

Հնագույն հուրրիների բնօրրանը մի շարք գիտնականներ համարում են Հայկական լեռնաշխարհի հարավը եւ հյուսիսային Միջագետքը: Մ. թ.ա. 2-րդ հազարամյակում հուրրիներն իջան հարավ, Միջագետք, ապա տարածվեցին մինչեւ Միջերկրական ծով: Մի շարք անվանի եւ մեծավաստակ պատմաբաններ՝ Չարլզ Բֆեյֆրը, Գերնոտ Վիլհելմը, Է. Ա. Սպեյզերը եւ այլոք, գտնում են, որ հուրրիների լեզուն միայն կապ ունի ուրարտերենի հետ:

E. A. Speiser-ն իր “Introduction to Hurrians” գրքում, հուրրիների լեզվի մասին գրում է. «Conditions are much more encouraging with regard to Urartian, the pre-indoeuropean language of Armenia»*[3]. Gernot Wilhelm-ն իր “The Hurrians” աշխատության մեջ, ունի հետեւյալ եզրակացությունը՝ «It is now possible to assert confidently that Urartian is not a later continuation of Hurrians, but that both languages are independent branches of a common “root language” (proto Hurrian-Urartian) branches, which had grown apart as early, as the 3rd millennium, BC»*[4].

Հուրրիերեն ***Դումու*** նշանակում է՝ ***«տղա»*** (ոչ թե որդի), իսկ զի=zi=hazzi նշանակում է ***«հյուսիս»:*** Հուրրիերենում՝ ՀՈՒՐԻ (HURRI) նշանակում է՝ «արեւելք», (ԳԻ) + ՇԵՐ (sheri) նշ. է՝ «արեւմուտք», ՆԱՆՆԵ (nanni) նշ. է՝ «հարավ»: Փաստորեն, Դումուզի նշանակում է՝ «հյուսիսի տղա»: Շումերների հարեւան Արատտա երկիրը գտնվում էր Շումերից հյուսիս, եւ Դումուզին հյուսիսային հարեւան երկրից ներմուծված աստվածություն էր շումերական պանթեոն:

Հայկական էպոսում Դավիթը բազմիցս անվանվում է՝ ***սասնա Խոյ*** անունով:

*1,- Տես՝ Արտակ Մովսիսյան, «Հնագույն պետությունը... Արատտա», 1992թ., Երեւան, էջ 41-50:

*2, - Ըստ որոշ մասնագետների, Թամմուզի անունը (Tamuzi) հուրրիական է, որ ներմուծվել է աքքադերեն լեզվից: Տես՝ Ներսես Վիրաբյան, «Հայ ժողովրդի ծագումը», 1993թ., ԱՄՆ, էջ 52:

*3, *4, - Ն. Վիրաբյան, «Հայ ժողովրդի ծագումը», Լոս Անջելես, 1993թ.:

Շումերական Դումուզի աստվածության աստեղատունը Խոյի համաստեղությունն էր: Միջագետքյան MUL.APIN հնագույն աստղացանկում Դումուզի աստվածության աստեղատունը «Խոյ» համաստեղությունն է*[1]: Մ.թ.ա. 2-րդ հազարամյակում, գարնանային գիշերահավասարին «արեւը»՝ Դումուզին դուրս է գալիս «Խոյի» համաստեղությունից:

Դումուզի դիցը, օտար երկրի պանթեոնից, եւ այն էլ ***լուսնի աստծո*** դստերը (ինքն արեւային է) կնության է առնում: Դավթի հակառակորդ եւ սիրուհի Զմշկիկը, ինչպես նաեւ Արա Գեղեցիկին սիրահարված հակառակորդ Շամիրամը, աղերսվում են ***լուսնի*** հետ:

Շումերական տարբերակում Դումուզին ներկայացված է որպես լեռնական հովիվների հովանավոր: Պատանի Դավիթն ինքը հովիվ էր:

Դումու+զի դիցի անվան հիմնական առաջին մաս ԴՈՒՄՈՒ բառը հակադարձ կարդալու դեպքում՝ ՈՒՄՈՒԴ, սասնո բարբառով նշանակում է «հույս, սպասում»*[2], որ այսօր էլ ընտանիքի առաջնեկ որդու առումով որպես՝ «օջախի լույս, հույս, սպասում» գործածվում է սասունցիների մոտ:

Դավիթը, Դումուզին, Արա Գեղեցիկը բոլորն էլ արքա կամ արքայազներ են եւ նրանց «թշնամին», ի վերջո, «Լուսնի թագավորությունն է»: Այս երեքն էլ զոհվում են «օտար» կնոջ՝ իգական հիմքի ձեռքով, եւ ըստ հավատամքային կառույցի, յոթերորդն են (Փոքր Միները 8-րդն է):

Դավիթը նաեւ աղերսվում է Վ. Իվանովի եւ Վ. Տոպորովի վերականգնած հնդեւրոպական մայր պատումում (“Основной Миф”)*[3] փոթորիկ-ամպրոպի աստված Պերկունոյի որդու հետ. երկուսն էլ «սրբազան կանոնակարգը» խախտելով, մեռնում են, դառնալով մեռնող-հառնող աստվածություն:

Դումուզին շումերական Ութու-արեւի զուգահեռն է եղել Հայկական լեռնաշխարհում*[4]: Դումուզի > դում-ուզի, ՈՒԶԻ>ԱԶԻ>ԱԶ(գ) մի կողմից նշանակում է «ից»՝ բնորոշելով, թե որտեղից է, մյուս կողմից՝ թե ինչ ծագում ունի, օր.՝ ազնաորդի, նաեւ՝ Զարմ: ԱԶԻ-ն նաեւ աստվածային նշանակություն ունի՝ ԱԶՆՈՐԴԻ:

Դավիթ-Դումուզու զուգահեռ Արա Գեղեցիկի կնոջ անունն էր՝ **Նուարդ:** Այս անունը մի կողմից աղերսվում է «հատակ, հիմք», մյուս կողմից «գիշեր» իմաստների հետ: Նախահնդեւրոպական [*ni-], որի նշանակությունն է «հատակ», սանսկրիտ.՝ नि́, ավեստա՝ nitama - «ցածր», հունարեն՝ neigs «ցածրադիր հողից» եւ հայերեն՝ ni - «ցածր»*[5]: Հնդեւրոպական «գիշեր»՝ *nek$^{ho\text{-}th\text{-}}$ ձեւից հիթթ.՝ nekut «երեկո», գոթ.՝ naths, հուն.՝ nύks, լատին.՝ nox եւ այլն, բոլորն էլ բնորոշում են «գիշեր» իմաստը:*[6]**:** Արեւի մեռնող-հառնող աստվածությունը օրվա վերջում

*1,- B. L. van der Waerden, “Science Awakening II”, 1974, USA, p.71.
*2,- «Սասնա Ծռեր», հատոր Բ, մաս II, /Բառարան/, Երեւան 1951թ.:
*3,- В. Иванов, В. топоров, “Основной Миф”, 1974, Москва.
*4,- Ա. Մովսիսյան, «Հնագույն պետությունը Հայաստանում, Արատտա», 1992թ., Երեւան, էջ 50:
*5, *6,-T. Gamkrelidze & V. Ivanov, “The Indo-European & The Indo-Europeans”, p. 683, 145:

սուզվում, իջնում է հատակ՝ իր մայր, ըստ հնագույն պատումների երբեմն՝ քույր, գիշերվա մեջ: Բոլոր հնագույն պատումներում «արեւը գնում է ***գիշերվա*** մեջ հանգչելու պերսոնաժը»՝ բնիկ «հայկական երեւույթ» է: Միայն հայերեն լեզվում է, որ այս ընկալումն արտահայտվում է՝ ***«մայրամուտ», «մայր մտնել»*** բառիմաստներով: Հայկական ավանդապատումներում ***գիշերային երկինքը*** ՝ մի դեպքում արեւի մայրն է, մյուս դեպքում՝ քույրը կամ կինը:

Արա Գեղեցիկ-Շամիրամ պատումում, Արայի կին Նուարդը՝ գիշերն է եւ ջրային հիմք ունեցող նախանյութ-ներունակությունն է, ինչպես Ծովինարը: Եւ Արան հառնում է Նուարդից եւ, մեռնելով, իջնում է Նուարդի մեջ: Նուարդի մեկ տարբերակն էլ՝ Դումուզու քույր Գեշտինանան, որ «հմայուհի» է, «իմաստուհի», «տեսանող» եւ այլն: Հուրրիերեն՝ **շերի,** արդի հայերեն՝ **(գի) + շեր՝** «արեւմուտք», «գիշեր» իմաստների հետ է կապվում, որտեղ Արան (արեւը) մայր է մտնում: Ուրեմն, ըստ հնագույն խորհրդապաշտության, **Նու+արդը** ոչ միայն Արայի կինն է, այլ պետք է եւ քույրը լինի, քանի որ ***նախա***հնդեւրոպական հնագույն համակարգում նման ամուսնությունը համարվել է «կատարյալ միություն»*[1]:

Նախահնդեւրոպական հավատամքային պատումներում, քույր-եղբայր *(հորեղբոր երեխաներ)* միությունը, համարվում էր կատարյալ, որովհետեւ հավատամքային հիմքով՝ արական եւ իգական «կեսերը» հանդես են գալիս որպես՝ ***գիշեր-ցերեկ, արեւ-լուսին*** ատրիբուտներով, որ իրար հետ ձեւավորում են «ամբողջը»՝ օրվա 24 ժամը: Միեւնույն տոհմի արական եւ իգական ներկայացուցիչների միությունը համարվում էր տոհմի՝ «ամբողջի» երկու «կեսերի» միություն, որ լրացնում էր բինարիզմի հիմքով «ամբողջի» պայմանը*[2]:

Հուրրիական համակարգը գալիս է լրացնելու երկու ցեղապետերի կլանների միջեւ ամուսնական փոխհարաբերությունների ընդհանրական պատկերը*[3]: Տոհմապետը կամ նահապետը մյուս գերդաստանից իր տուն մուտք գործած հարսին նախ որդեգրում էր, նրան «դարձնելով» իր դուստրը եւ ապա կնության էր տալիս իր որդուն*[4], «ձեւավորելով» որպես ***քույր-եղբայր*** երկու ***կեսերի*** «կատարյալ միություն» պայմանը՝ ըստ հավատամքային կարգականոնի: Մինչեւ այժմ էլ արեւմտահայերի մոտ պահպանված է «հարսքույրիկ» տերմին-ձեւը:

Ինանան շումերական պանթեոնում մարմնական սիրո, պատերազմի եւ տոփանքի աստվածուհին է: Դումուզիի անդրաշխարհ գնալու՝ մեռնող-հառնող աստվածություն դառնալու պատճառը Ինաննան է, այնպես ինչպես Արա Գեղեցիկի սպանվելու պատճառն է Շամիրամը, իսկ «Սասնա Ծռեր»

*1, 2, - T. Gamkrelidze & V. Ivanov, “The Indo-European & The Indo-Europeans”, p. 679-682:
*3, 4, – The Anchor Byble, Genesis, E. A. Speiser, 1962, p. Intr. XL, Gerar, “The Wife-Sister Motive in the Patriarchal Narrative, Byble and Other Studies”, 1963, p. 15-28.

էպոսում Դավթի սպանվելու պատճառը՝ Չ'մշկիկը*[1]: Եւ, ինչպես Ա. Մովսիսյանն է ընդգծում. *«Տվյալ դեպքում փոխառությունների մասին խոսք լինել չի կարող, քանզի այդ դեպքում փոխառնող ժողովուրդն իր հերոսին կօժտեր դրական, իսկ հակառակորդին՝բացասական գծերով, սակայն երկու պատմության մեջ էլ կերպարներն անփոփոխ են: Երկու հարեւան ժողովուրդների (իսկ հարեւան են եղել նրանք Ք.ա. 6-րդ հազարամյակում եւ ավելի վաղ) ստեղծած այս ավանդապատումը հնարավոր է, որ եղած լինի արտահայտությունը նրանց միջեւ գոյություն ունեցած միջցեղային ամուսնությունների: Ք.ա. 3-րդ հազարամյակում այդ պատմության շումերական տարբերակը գրի է առնվել Միջագետքում, իսկ հայկական տարբերակը նորաստեղծ հայկական գրով գրի առնվեց ավելի ուշ՝ Ք. հ. 5-րդ դարում (մեր կարծիքով, քրիստոնեա մոլեռանդները ոչնչացրին ամբողջ հեթանոս շրջանի մեհենագրական ժառանգությունը, իսկ Խորենացին ուղղակի «փրկել» է, վերապատմում է հնագույն մատյաններից), երբ պատմության թատերաբեմից վաղուց հեռացել եւ մոռացության էին մատնվել Շումերն ու Արատտան, իսկ նրանց փոխարինել էին Ասորեստանն ու Հայաստանը»*[2]:*

Հնագույն համակարգում յոթերորդ աստվածության «էլեմենտը»՝ հուրն է, ծավալաձեւը «տետրահեդրոնը»: Եվ «մեռնող-հառնող» լինելով, նա՝ ըստ եգիպտական տարբերակի, «կատարյալ հոգիներին» Ծիր կաթնի օղակից նավով դուրս տանող աստվածություն է: Յոթերորդ աստվածության որդին՝ 8-րդը, տիեզերածավալման փուլն ավարտող աստվածությունն է, որ հայկական Փոքր Միհր, եգիպտական Հորոս եւ այլ անուններով է հայտնի:

Խանդուդ Խաթուն

«Սասնա Ծռեր» հ. II, մաս 2-րդ*[3], էջ 842-ում, ***Խանդուդ*** անունը ստուգաբանված է որպես՝ ***խան*** «իշխան» եւ ***dude*** «մեծ ցեղ կամ վաղնջական տոհմություն»: Հր.Աճառյանը իր «նախասիրությամբ» պարսկական ծագում ապահովելով հայկական էպոսի այս հերոսուհուն՝ աստվածությանը, նույնիսկ չի նկատել Խանդուդի սասունցի չլինելու կարեւոր հանգամանքը:

«Սասնա Ծռեր» էպոսում, Խանդուդը սասունցի չէր, այլ օտար տեղանքից հարս է գալիս Սասուն: Էպոսի տարբեր պատումներում նա ներկայանում է որպես՝ «Խլաթցի» կամ «Վանեցի»: Նա ոչ սասնա բառբառով խոսող ժողովրդից, տեղանքից է: Էպոսի բոլոր պատումներում Դավիթը տեղի՝ սասնո աղջիկ չի ընտրում. դրսի «թագավորի» կամ իշխանի աղջիկ է Խանդութը *(հիմնականում՝ Կապուտակողմից, որը գտնվում է Վանա լճին առընթեր, հարավային մասում, մի*

---

* 1,- Չմշկիկ (Cmskik) անունը աղերսվում է Չ՛-մշկ-իկ = Չ՛- մուշ(k) = *mus- Մուշկ տեղանքի հետ եւ իմաստաբանվում է որպես՝ «վիշապ» եւ «Լուսին», *meH-s-, masa: Հիթթիթական Masa եւ Hatti ***լուսնապաշտ*** եւ ***արեւապաշտ*** երկու խմբերը:

*2, - Ա. Մովսիսյան, «Հնագույն պետությունը Հայաստանում, Արատտա», 1992թ., Երեւան, էջ 46:

*3, - «Սասնա Ծռեր», 2-րդ մաս, Ծանոթագրություններ, 1936թ., Երեւան:

քանի տարբերակներում՝ Խլաթից (Վանա լճին առընթեր հյուսիս արեւմուտք):

Վանեցու կամ հարակից բարբառում՝ ***«հ»*** -ն ***«խ»*** է հնչում: «Հայ»-ը դառնում է՝ «խայ», «հաց»-ը՝ «խաց» եւ այլն: Փաստորենն՝ **Խան+դուդ** = ՀԱՆ + ԴՈՒԴ, եւ ՀԱՆ-ը՝ հայերենն բնիկ բառ է ու նշանակում է ՄԵԾ ՄԱՅՐ: Հնդեւրոպական հնագույն լեզուներում ***anna-, anni*** նշ. է՝ «մայր»*[1]: Հնդեւրոպական [*anH-] նշ. է՝ «շունչ», «հոգի»*[2]: ՀԱՆԻ < ANNI հայերենում ասում են գերդաստանի մեծ մորը: Հնագույն հավատամքներում, երկնային գլխավոր դիցամայրերը՝ բոլորը, աղերսվում են՝ ***անհունի, հիմք-անդնդի*** հետ: Էպոսի ԽԱՆԴՈՒԴ < ՀԱՆԴՈՒԴ աստվածամոր անվան երկրորդ՝ ԴՈՒԴ բառը, նախահնդեւրոպական ***dud-**ը հայերենում «տուտն» է*[3], որը՝ ***«հիմք», «ընդերք», «արմատ»*** իմաստն է արտահայտում: Մեր կողմից բազմիցս արդեն ներկայացվել է, որ հնագույն հավատամքում, արարչության իգական, մայր աստվածություններն աղերսվում են՝ «հիմք» կամ «հիմքի վիշապ» իմաստի հետ, ինչպես վեդայական համակարգում Áhi-Budhnyá «ընդերքի վիշապ»-ն է: Մինչեւ այժմ էլ գերդաստանի մեծ մորը *(ոչ թե տատիկին)* ***«քյոռ»*** են ասում, որ ***«տուտն», «հիմք», «ընդերք»*** իմաստներն է միտում: Էպոսի չորս մայրերը հիմնականում ունեն մեկ ֆունկցիա. նրանք Սասունի համար առաջնորդող, տոհմը շարունակող արու զավակ՝ երկնային դից են ծնում՝ ապահովելով փուլերով տիեզերածավալումը:

Խանդուդը՝ Ծովինար, Դեղձուն, Արմաղան (Արմահան> Հարմա+հան) աստվածային սերունդ տվող գլխավոր աստվածուհիներից վերջինն է: Նա «ՄԵԾ ՄՈՐ» կամ նախամոր վերակրկնությունն է որպես շարունակող: Արական սեռի հաջորդականությունը պահպանվում է միայն երկու աստվածությունների միությամբ՝ Ծովինար+Անանուն, Սանասար+Դեղձուն, Մհեր + Արմաղան, Դավիթ+Խանդուդ: Խանդուդը՝ ինչպես Ծովինարը, Դեղձունը, Արմաղանը, թագավորի դուստր է եւ «մեծ մայր» > «տիեզերամայր» է:

Մեկ ամբողջը՝ 4+4=8 համակարգում, Խանդուդը յոթերորդ աստվածության կինն է եւ պետք է ունենա նույնքան «թվային արժեք», որքան Դավիթը:

Երբ Խանդուդն իմանալով ամուսնու՝ Դավթի մահը, վերից իրեն նետելով ինքնասպան է լինում, ներքեւում քարի վրա թողնում է իր «հետքերը».-

«Գլուխն առավ վեր քարին, քար ծակեց էղավ փոս:
Էն փոսի մեջ՝ Սասունա կես շնիկ կորեկ

---

*1,- «Անատոլիական լեզուներում հնդեւրոպական օրիգինալ ***"մայր"*** բառը փոխված է. հիթթիթ.՝ ***anna-,*** լուվի.՝ ***anni-*** "մայր" մանկական արտահայտություն բառով» T. Gamkrelidze & V. Ivanov, "Indo-European and the Indo-Europeans", էջ 667n: Հայկական գյուղերում մինչեւ այժմ գերդաստանի մեծ մորը՝ ղեկավարին, կոչում են՝ ՀԱՆ > ՀԱՆԻ < ANN > ANNI:

*2,-. T. Gamkrelidze & V. Ivanov, "The Indo-European And The Indo-Europeans", p. 388.

*3, - Հր. Աճառյան, «Հայոց լեզվի պատմություն», հ. I, 1940թ., Երեւան, էջ 76:

Կը լցեն ու կը ծեծեն սանդի տեղ:
Էնոր ծծերի տեղ հիմի էլ երկու աղբյուր կթալի:
Յոթ ճյուղ Ծամի տեղ էլ հիմի կ'էրնա,
Քանց յոթ սուն կը սեւկըտի:
Ու հիմի էլ սանդ էնտեղ է բերդի առաջ»:

(*«Սասունցի Դավիթ», Երեւան, 1989, էջ 388):*

«Յոթ» թվի ընդգծումը «Սասնա» էպոսի կին հերոսուհիներից միայն Խանդուդի համար է ընդգծվում՝ «Յոթ ճյուղ Ծամ», «յոթ սուն կը սեւկըտի»: Մյուս կողմից նա «կես» է՝ ***«սասունա կես շնիկ կորեկ»****[1]: Մյուս «կեսը» Դավիթն է *(Ինչպես Շամիրամ=Սեմիրամ (Semiram) «կես» եւ Արա Գեղեցիկ՝ «մյուս կեսը»: Սա արեւ+լուսին միասնության խորհուրդն է):*

Հետաքրքրականն այն է, որ Խանդուդ Խաթունը եւ Զմշկիկ Սուլթանը *(որը Դավթից խաբված կին է եւ պատճառ է դառնում վերջինիս մահվան),* երկուսն էլ էպոսի մի քանի տարբերակներում Խլաթի (քաղաքի) թագավորի դուստրեր են, ուրեմն՝ քույրեր են: 1934թվին գրանցված մի պատումում *(պատմող՝ Կարճեթցի Հովան Զոհրաբյան, «Սասնա Ծռեր», հ. I)* Խանդուդն ինքն է սպանել տալիս Դավթին: Սա ուղիղ զուգահեռ է «Շամիրամ-Արա Գեղեցիկ» Մ. Խորենացու մեզ հաղորդած հայկական հնագույն առասպելի հետ:

Առհասարակ, «Սասնա Ծռեր» էպոսում առկա է ***կրկնակի*** դուալիզմը: Բացի Սենեքերիմ-Գագիկ, Մեծ Մհեր-Մսրա Մելիք, Դավիթ-Մըսրա Մելիք՝ «չար» եւ «բարի», «լուսին» եւ «արեւ» արական աստվածությունների դուալիզմը, մշտապես նաեւ առկա է՝ «լավ կին», «վատ կին» հակադրությունը: Եւ, ի տարբերություն միեւնույն մոտիվներով հնագույն հավատամքային՝ եգիպտական, շումերաբաբելական, հնդ-իրանական տարբերակների, հայկական տարբերակներում «բացասական» հերոսը անպայման «թշնամի երկրից» է, «օտար» է: Սա խոսում է այն մասին, որ մեզ հասած պատումներն այս առումով էլ իմպրովիզացիայի են ենթարկվել ավելի ուշ շրջանում:

Հայկական ավանդություններում Լուսինը եւ Արեւը մի դեպքում մայր ու որդի, մյուսում՝ քույր ու եղբայր են, միտելով ***եղբայրը՝ ջուր, քույրը՝ հուր*** *(կամ հակառակը)* երկվության խորհուրդը:

Լուսինը նաեւ անդրաշխարհի, մահվան հետ առնչվող սիմվոլ է: Եւ, ինչպես վերեւում ենք ներկայացրել՝ Սինահերիմ, Շամիրամ, Մըսրա Մելիք աստվածների անուններում մշտապես առկա է ***Լուսնի*** սիմվոլը:

Սասնա էպոսի մայր աստվածուհիների անունների ստուգաբանությունը ներկայանում են լուսնի սիմվոլով որպես՝ արարչության «հիմք», «ընդերք»:

Ծովի Նար – ***Լուսին*** (14 օրեկան Լուսնյակի կնմանէր):

---

*1, – Յորենի չափման միավոր:

Քառսուն Դեղձուն Ծամ - արեւ?

Արմաղան – հիթթիթ.՝ [arma-]*[1] ***«լուսին»*** // Ղան > ՀԱՆ՝ «մեծ մայր»:

Խանդուդ - Հան-դուդ > Հան (մեծ մայր) + (դուդ)՝***տուտն,*** «սկիզբ», «ընդերք»:

«Որոշ հնագույն հնդեւրոպական տրադիցիաներում Լուսինը եւ Արեւը ներկայանում են որպես զույգ գոյություն՝ ամուսնական միությամբ ***(Լուսինը ամուսինն է, Արեւը կինը, կամ՝ հակառակ)*** *»*[2]: Հնագույն բոլոր կառույցներում «ծնող նախամայրերը» երեք կամ չորս անգամ են «հայտնվում»: Երեք անգամ արդեն իր իսկ «արտահայտած արարչության» մեջ, եւ սկզբում՝ նախքան արտահայտվելը ներկայանում է որպես ***անհուն-ամբողջություն*** (նույնպես իգական նախահիմք), ընդհանուրը՝ չորս «ծնանող» նախամայր*[3]: Փաստորեն, «Սասնա Տուն» էպոսում, Ծովի ՆԱՐ-ը որպես՝ նախամայր եւ, Դեղձուն, Արմաղան, Խանդուդ, որոնք սերնդաշարունակության «հիմք են հանդիսանում», բոլորն էլ «ՀԱՆ» են՝ «ՄԵԾ ՄԱՅՐ»: Եւ ԽԱՆ-ԴՈՒԴ > ՀԱՆ +ԴՈՒԴ արարող վերջին աստվածուհին իր անվան մեջ բացահայտում է ԱՆՀՈՒՆ-ը, տիեզերական արգանդը, ինչպես Նուարդը, որը Արա Գեղեցիկի ոչ միայն կինը, այլ միաժամանակ՝ թե՛ քույրը, եւ թե՛ կինը պիտի լինի: Ընության մեջ միաբջջից բազմաբջիջ տրոհում-ծավալումը նույն սկզբունքով է: Թե ի՞նչ է հայկական հնագույն առասպելներում, ինչպես նաեւ էպոսի մեզ հասած տարբերակներում, արական եւ իգական արարող աստվածությունների՝ ***քույր-եղբայր-ամուսիններ*** հանգամանքը «ծածկված», եւ միայն նրանց անունների ստուգաբանություններն են դա բացահայտում, ունի պարզ բացատրություն: Նախ, ավելի ուշ շրջանում, հնագույն հավատամքի աշխարհճանաչողական համակարգի խորհրդաբանությունը եւ թաքնագիտական իմաստները չիմանալով, պատմողները հայկական էպոսը «բարոյականության ստանդարտներով» նոր վերախմբագրում է կատարել: Եւ երկրորդ՝ հնագույն հավատամքային համակարգում զույգերի բինարիզմը եւ դուալիստական սկզբունքը, որ «նստած» է նույնիսկ հնդեւրոպական լեզուների հիմքում, նախահնդեւրոպական ժամանակների վաղեմություն ունի*[4]:

Հնագույն հավատամքային կանոններում «Լուսինը» կամ «Արեւը» ոչ թե ուղղակիորեն «մոլորակի» հետ են առնչվում, այլ դուալիստական սկզբունքի համաձայն՝ «ակտիվ եւ պասիվ» բեւեռայնության, ***արական*** եւ ***իգական*** սկզբունքների խորհրդաբանությունն են: Լուսինը՝ «ամուսին», կինը՝ «արեւ» կամ հակառակը, վերջին հաշվով, ամբողջի «երկու կեսերի», երկու

*1,*2,- T. Gamkrelidze & V. Ivanov, “The Indo-European and The Indo-Europeans”, 1995, p. 591.
*3,-H. P. Blavatsky, “Isis Unveiled”, V. 2, p. 171. Timothy Freke & Peter Gandy, “The Lost Goddess”, p. 79 -100.
*4,-T. Gamkrelidze & V. Ivanov, նույն աղբյուր, էջ՝ 679-682:

բեւեռների միասնության վիպական ներկայացումն է: Ամեն դեպքում, մեր կարծիքով, այս դուալիզմի տրոհման տրոհումը, որ ձեւավորել է վիպական «նոր կերպարներ», իրականում, առավել հին, նախնական տարբերակում միեւնույն «անձի»՝ աստվածության, երկու կեսերի արտահայտությունն է եղել, որոնց հետագայում առանձին-առանձին անձնականություն եւ կերպար է հարմարեցվել: Նույնը մենք տեսնում ենք «Ռիգ-Վեդայում». Վարունան եւ Միթրան, թեեւ հանդես են գալիս որպես առանձին անձնականությամբ օժտված դիցեր, սակայն «միեւնույն աստվածության»՝ «սեւ եւ ճերմակ» *(ջուր-հուր, սեւ հերոս, ճերմակ հերոս)* արտահայտությունների միասնությունն են: Եթե «Ռիգ-Վեդայում» Վարունա-Միթրան ներկայացնում են՝ ***ջրի եւ հրի, լուսին-արեւ, մահ-կյանք*** դուալիզմը, ապա «Սասնա Ծռերում» Մհերի կողքին ստեղծվել է մի նոր կերպար՝ Մսրա Մելիքը *(Լուսին)*, որպես «նյութական աշխարհի տիրոջ» կերպարանավորում, որն իրականում, ըստ թաքնագիտության, հենց նույն Մհերի «նյութական» կողմն է՝ «կեսն» է: Մսրա Մելիքը «աշխարհում» ունի իրեն «հավասարազոր թշնամի»՝ Մեծ Մհերին, որի հետ ի վերջո, դաշինք է կնքում, քանի որ երկուսից ոչ մեկը մյուսին հաղթել չի կարողանում: Փաստորեն, Մեծ Մհերը «դաշինքը» ինքն իր հետ է կնքում, իր «կեսի» հետ է կնքում: «Կես» հասկացողությունը կամ գուցե՝ «երեւույթը» այնքան բացահայտ է «Սասնա Ծռեր» էպոսում *(ինչպես հնդեւրոպական բոլոր հնագույն տրադիցիաներում եւ պատումներում)*, որ արարչության կառույցի համակարգն իմանալով, պարզ է դառնում, որ դրանք նույն աստվածության երկակի սկզբունքներն են:

Հայկական էպոսում որեւէ գլխավոր աստվածություն «տրոհված» է նախ՝ ***արական*** եւ ***իգական*** թեւերի ու նաեւ, յուրաքանչյուրն առանձին-առանձին ունեն իրենց «չար» հակոտնյան.

օր.՝ **Մեծ Մհեր + Արմաղան = 1/2 + 1/2 = 1**
1/2 1/2
Մըսրա Մելիք + Իսմիլ = 1/2 + 1/2 = 1
1/2 1/2

ուրեմն՝ **Արմաղան՝ 1/2 + Իսմիլ՝ 1/2 = 1**
Մեծ Մհեր՝ 1/2 + Մսրա Մելիք՝ 1/2 = 1

«Սասնա Ծռեր» էպոսում Մեծ Մհերը եւ Մըսրա Մելիքը եղբայրանում են եւ դաշնություն են կնքում: Իսկ Դավիթը եւ Փոքր Մըսրա Մելիքը, փաստորեն, նույն հորից եւ տարբեր մայրերից եղբայրներ են: Իրականում, նրանք, դուալիզմի կանոնակարգով, մեկ ամբողջի ***լավ*** եւ ***վատ*** «կեսերն» են: Կառուցվածքային այս սկզբունքը, որ նախահնդեւրոպական հնագույն հավատամքային աշխարհճանաչողությունն է, բացահայտ է «Սասնա Ծռեր»

էպոսում: Երբ Դավիթը սպանում, ուղիղ երկու կես է անում Մըսրա Մելիքին, ապա Մելիքի ձախ մասը համարելով «պիղծ», թողնում է Մըսրում, գայլ ու շներին կեր, իսկ «աջ մասը» բերում է Սասուն եւ արժանապատվորեն թաղում է*[1]: *«Աջակողմը Դավիթ դրից ճիու վրա,*

Պիրեց, ժամով-պատարագով թաղել տվեց.

Ինչ ձախ կողմն էր՝ մնաց էնտեղ անտեր.

Շներ, գիլեր կերան»[*2]:

Հնագույն հավատամքում դուալիզմի սկզբունքը, փաստորեն, նման է Ֆիբոնաչիի թվային համակարգին, սակայն՝ կրկնակի հիերարխիաների յուրահատուկ ձեւավորման եւ հայելային անդրադարձման սկզբունքների հիմքով, քանի որ, ըստ հների, ՄԵԾ ԱՆՀՈՒՆ-ից («0») եւ ՊԱՏՃԱՌ-ից՝ «արական մեկից» ***(որոնք մեկը մյուսի «հակառակ երեսն են» եւ միասին «ձեւավորում» են «ամբողջը»)*** են «ծնվում» մնացյալ բոլոր «կոտորակ աստվածները»՝ գերագույն միակ աստվածության մեջ: Ֆիբոնաչիի թվային համակարգը՝

0, 1, 1, 2, 3, 5, 8, 13, 21, 34, 55, 89, 144… եւ այլն*[3], նախորդի թվի հետ գումարման ճոով թվային շարք է:

«Երկու» թվի թաքնագիտական բացատրությունը լավագույնս տալիս է 5-րդ դարի հեղինակ Դավիթ Անհաղթը: *«Զույգ եւ կենտ թվերի համար ընդհանուր սկիզբ է հանդիսանում մեկը, իսկ զույգ թվերի համար՝ երկուսը... Բայց ոմանք կասկած են հայտնում, թե ինչո՞ւ երկուսը, թիվ լինելով* սկիզբ է հանդիսանում: *Սրան մենք այսպիսի պատասխան ենք տալիս. երկուսը թիվ չէ, որովհետու ինքը թվի հատկություն չունի, որովհետեւ ամեն մի թիվ իրենով բազմապատկելիս ավելի մեծ թիվ է տալիս քան գումարելիս... Իսկ երկուսն այդպես չէ, որովհետեւ ինքն իրենով բազմապատկելիս եւ գումարելիս նույն թիվն է տալիս... Երկուսը ոչ թե թիվ է, այլ միայն զույգ թվերի սկիզբ»*[*4]:

Փաստորեն, հնագույն հնդեւրոպական աշխարհանաչողությունից բխող հնագույն հնդեւրոպական հասարակական կառույցը սկիզբ է առնում երկու կլանների միֆական երկու եղբայր առաջնորդ արքաներից, եւ հակամարտության դուալիզմը ծավալվում է միեւնույն ցեղի՝ արեւապաշտական եւ լուսնապաշտական կլանների միջեւ: Այս համակարգի ամենավառ օրինակը «Սասնա Ծռեր» հայկական հնագույն հավատամք-էպոսն է *(տես Մաս II, գլուխ II, էջ 198-217):*

---

*1, - «Սասնա Ծռեր», h. Ա, էջ 283:

*2, - «Սասունցի Դավիթ», նոր պատումներ, էջ 102:

*3,- Leonardo Fibonacci, 1202թ.-ին հրատարակել է իր հայտնի “Liber Abaci” գիրքը:

*4,- «Դավիթ Անհաղթ, «Հայ Մատենագիրներ», 1980թ., Երեւան, էջ՝ 99-100:

Դավիթը եւ Խանդուդը՝ երկնային մարմիններ - աստղատներ:

Հնագույն համակարգում յոթերորդ աստվածության «էլեմենտը»՝ հուրն է, ծավալաձեւը «տետրահեդրոնը»: Եվ «մեռնող-հառնող» լինելով, նա՝ ըստ եգիպտական տարբերակի, «կատարյալ հոգիներին» Ծիր կաթնի օղակից նավով դուրս տանող աստվածություն է: Յոթերորդ աստվածության որդին՝ 8-րդը, տիեզերածավալման փուլն ավարտող աստվածությունն է, որ հայկական Փոքր Մհեր, եգիպտական Հորոս եւ այլն անուններով է հայտնի:

Վերեւում արդեն ասվեց, որ հայկական էպոսում Դավիթը բազմիցս անվանվում է՝ ***սասնա Խոյ*** անունով: Շումերական Դումուզի աստվածության աստեղատունը ***Խոյի*** համաստեղությունն էր: Միջագետքյան MUL. APIN հնագույն աստղացանկում Դումուզի աստվածության աստեղատունը նույնպես ***«Խոյ»*** համաստեղությունն է*[1]: Մ.թ.ա. III-II հազարամյակում, գարնանային գիշերահավասարին «արեւը»՝ Դումուզին դուրս է գալիս «Խոյի» համաստեղությունից: Այսինքն, պատահական չէ, որ Դումուզին հյուսիսի Արատտա երկրից ներմուծվում է շումերական պանթեոն: Դումուզին նոր աստվածություն է եւ կարեւորվում է նրանով, որ արեւը տարվա սկզբին՝ գարնանամուտին, վաղ առավոտյան սկսում է ելնել «Խոյ» համաստեղությունից, որը նոր էպոխայի սկիզբ է: Մինչ այդ՝ մ.թ.ա. V-IV հազարամյակներում, շուրջ 2160 տարի ավելի վաղ, արեւը գարնանամուտին ելնում էր «Ցուլ» համաստեղության ***Պլեադաներ*** աստղերից: ***Խոյի*** խորհրդաբանությունը նաեւ զոհաբերության խորհրդապաշտությունն է: Սակայն, մինչեւ խոյը, ցուլը նույնպես ունեցել է նույն զոհաբերության խորհրդաբանությունը*[2]:

Փաստորեն, Դավիթ-Դումուզին՝ գարնանամուտն է, երբ արեւը Մարտ 21-ին, վաղ առավոտյան, ծագում է «Խոյ» համաստեղությունից: Բնությունը կսկսի «մեռնել» աշնանային գիշերահավասարին՝ «Կշեռք-Կարիճ» աստեղատանը *(Սեպտեմբեր 20-ից Հոկտեմբեր 20, մ.թ.ա. III հազարամյակ):* Խանդուդը «Կշեռք-Կարիճ» համաստեղությունն է, որ «Դավիթ-Խոյի» 180^{0}հակակառակ կողմում է: Խանդուդն էպոսում աղեսվում է յոթ թվի հետ՝ ***«... Յոթ ճյուղ Ծամի տեղ էլ հիմի կ'էրեւա, քանց յոթ սուն կը սեւկրտի...»(****«Սասունցի Դավիթ», Երեւան, 1989, էջ 388):* «Խոյ» համաստեղությունից՝ 1-ին տուն, «Կշեռք-Կարիճի» համաստեղությունը՝ յոթերորդն է արեւի ուղեծրի գոտու շղթայում: Պատումներից մեկում*(«Ս.Ծ.», հ. Ա, էջ 1083-1126, պատմեց Կարճեցի Հովան Զոհրաբյան, գրի առավ Կ. Մ. Օհանջանյան)* հեռնց Խանդուդը՝ Դավթի կինն է սպանում ամուսնուն.-

---

*1,- B. L. van der Waerden, "Science Awakening II", p.71, N. Y., 1974.

*2,-***Տուար** «արջառ»: Բնիկ հայ բառ է, նախահնդեւրոպ.՝ dipero- «արջառ» բառից, որ նշ. է «զոհի անասուն»: Հր. Աճառյան, «Հայերեն արմատական բառարան», հ. IV, էջ 424:

«Տավիթ զուլում արաց, ինչ արաց: Խանդութ խանում մննն քռխնցավ:
Խանդութ խանում ուզնց սպաննել, պայց չկարցավ ինք:
Զադի պառվի ձնռքով ըսպաննել տվնց...»:

Այստեղ ***Խլաթ*** երկրի երկու արքայադուստր քույրերը՝ ***Զմշկիկը*** եւ ***Խանդուդը*** համատեղվել, նույնացել են: Հնում, Զոդիակների շղթայում «Կույսը» եւ «Կարիճը» համարվել են «Կշեռքի» աջ եւ ձախ թասերը: Սակայն, էպոսի պատումների մեծ մասում Դավթին սպանում է իր ***«որովայնի սերմը»***՝ Զմշկիկից ունեցած նրա ***դուստրը:*** Պատմահայր Մ. Խորենացու ներկայացրած տարբերակով*[1], Դավթի զուգահեռ Արա Գեղեցիկի դին աստվածները՝ Արալեզները լիզելով, փորձում են կենդանացնել նրան: Հայկական միֆոլոգիայում շնակերպ արալեզները լիզելով վերակենդանացնում են մեռյալին: Այստեղ Արա Գեղեցիկն աղերսվում է արեւի հետ, որպես մեռնող եւ հարություն առնող ***բնության աստվածություն.*** մի ֆունկցիա, որն առնչվում է միայն արեւի եւ գարնանամուտի աստեղատան հետ, որը Դավթի դեպքում՝ «Խոյն» է: Սա նաեւ սերտ առնչություն ունի ***գարնանային*** եւ ***աշնանային*** գիշերահավասրների հետ: Գարնանամուտը՝ նոր տարին սկսվում է գարնանային գիշերահավասարին, երբ արեւը «Խոյ» համաստեղությունում է: Բնությունը սկսում է «մեռնել» աշնանը՝ «Կարիճի» համաստեղությունում: Դումուզին ոչ թե արեւի աստվածությունն է, շումերական պանթեոնում արեւի աստվածությունը Ութուն էր, այլ՝ բնության, որ սկսվում էր գարնանամուտով: Ուրեմն, Դումուզին նաեւ տարվա սեզոնային փուլ է կանխամիտում:

Միջագետքյան՝ ***Իշխարա*** աստվածուհին աղերսվում է ***«Կարիճի»*** համաստեղության եւ Վեներա աստղ-մոլորակի հետ: Բաբելացիք Վեներա մոլորակը կոչել են ᵈNIN.DAR.AN.NA «Երկնքի պայծառ թագուհի»*[2] Բաբելացիների համար ***Վեներա*** մոլորակը բացառիկ կարեւորություն ուներ, քանի որ Վեներան համարվում էր Իշտար աստվածուհու տեսանելի մանիֆեստացիան*[3]: ***Իշխարա-Իշտար-Շամիրամը,*** որի հնագույն զուգահեռը շումերական ***Ինանան*** է, որ ըստ շումերական միֆոլոգիայի պետք է արեւին իր փոխարեն «իջեցնի» հանդերձյալ աշխարհ, դարձնելով նրան ***մեռնող եւ հառնող*** աստվածություն(***Դումուզի-Դավիթ-Արա Գեղեցիկ***): Շումերա-աքքադական «Գիլգամեշ» էպոսում, Գիլգամեշը Իշթարին, որ շումերական Ինանան է, ասում է՝ 45. «Դումուզիին՝ ամուսնուն քո պատանեկության,

46. Դու տարեց տարի ստիպել ես հեկեկալ»*[4]:

---

*1,- «Մովսես Խորենացի, «Հայոց պատմություն», 1981թ., Երեւան, էջ 61:
*2,*3,- B. L. van der Waerden, “Science Awakening II”, p. 56, 57.
*4,- «Հին Արեւելքի պոեզիա», 1982թ., Երեւան, էջ 128:

Ա. Մովսիսյանն իր «Արատտա»*[1] աշխատության մեջ ճիշտ է նկատում,- *«Տարեց-տարի հեկեկալը», հավանաբար արտացոլում է Դումուզիի(հմմտ. հայկական Արայի հետ), իբրեւ բնության աստծո, ամեն տարի մեռնելու եւ հաջորդ տարի հառնելու պատկերացումը»*[2]*:*

Փաստորեն, Դումուզին, Արա Գեղեցիկը եւ «Սասնա Ծռեր» էպոսի Դավիթը՝ «Խոյ» համաստեղությունն է, որ ***վերածնում է բնությունը գարնանաը՝*** Մարտ 21, երբ արեւն առավոտյան ***«Խոյ»***-ում է, եւ ***սկսում է մեռնել՝ իջնել անդրաշխարհ,*** ուշ աշնանաը՝ «Կարիճի» համաստեղությունում, որտեղ Վեներան Արեւի հետ ***տեսանելի «միակցում»*** է ունենում: Այս մասին իմֆորմացիա կա հին բաբելական տեքստերում(B. L. van der Waerden, "Science Awakening II", p. 49-53): Հավանաբար սա է պատճառը, որ հնագույն պատումում Վեներա-Ինանա-Իշտարը Դումուզիին խաբելով, իր փոխարեն իջեցնում է անդրաշխարհ, նրան դարձնելով մեռնող-հառնող աստվածություն: Իշխարա-Իշտար-Շամիրամ-Ինանան եւ «Սասնա Ծռեր» էպոսի ***Չմշկիկ Սուլթանը*** «Կարիճի» համաստեղությունն է, Միջագետքյան MUL. APIN աստեղացանկի GIR.TAB-ը: Սակայն «Սասնա Ծռեր» էպոսի մի քանի պատումներում ***Չմշկիկը*** եւ ***Խանդուդը*** երկուսն էլ ***Խլաթի*** արքայադուստրեր են*[3]**,** ուրեմն ***քույրեր*** են: Հնում, Զոդիակների շղթայում «Կույսը» եւ «Կարիճը» համարվել են «Կշեռքի» աջ եւ ձախ թասերը: Այսպիսով, Խանդուդը՝ էպոսի չորրորդ դիցամայրը, աղերսվում է «Կշեռք-Կարիճի» համաստեղության հետ: Հայկական էպոսի բոլոր պատումներում *(բացի վերոհիշյալ պատումից)* Խանդուդը դրական հերոսուհի է եւ ամուսնու մահվան լուրը լսելով ինքնասպան է լինում: Նա Դավթի ***կնոջ*** է, այսինքն, Դավթի հետ միասին կազմում է ***մեկ ամբողջություն***՝ միտելով ***գարնանային գիշերահավասարից*** մինչեւ ***աշնանային գիշերահավասար*** տարեփուլը:



Գալով արալեզներին, որ *«շուն կամ թռչնատիպ աստեղաբույլք են»*[4]**,** եւ ըստ հայկական միֆոլոգիայի, մեռած հերոսի վերքերը լիզելով հարություն են տալիս*[5], աղերսվում են «Կարիճ» համաստեղության Անթարես՝ «սիրտ»

*1,*2,- «Հնագույն պետությունը Հայաստանում/ Արատտա», 1992թ., Երեւան, էջ 43:
*3,- А. Петросян, «Армянский эпос и мифология», 2002, Ереван, с. 161,
*4,- Ղ. Ալիշան, «Հին հավատք», Վենետիկ, 1805թ.:
*5,- «Փավստոս Բյուզանդ, «Պատմություն հայոց», 1968թ., Երեւան, էջ 276: «Եզնիկ Կողբացի, «Եղծ Աղանդոց», 1970թ., Երեւան, էջ 77-78:

աստղի հետ: Ըստ հների պատկերացումների «Կարիճում» է գտնվում անդրաշխարհ տանող մուտքի դռները, որի կողքին է «Ծուն» համաստեղությունը (Serpens): Մեռնող արեւը գնում է անդրաշխարհ, եւ «Ծունը» լիզելով մեռնող արեւի վերքերը, *աշնանը արեւը «Կարճում է»,* նպաստում է նրա հարությանը, եւ արեւը ձմեռային արեւադարձին նորից հառնում է որպես արեւամանուկ:

Հնագույն հավատամքային պատումներում յոթերորդ աստվածությունը նաեւ աղերսվում է արեւի ուղեծրից դուրս գտնվող «Օրիոն» աստղատան հետ:

Հնագույն եգիպտական Հելիպոլիսի հավատամքային համակարգը ոչ միայն նման է հայկական հնագույն էպոսին, այլ նաեւ՝ այս երկուսն ունեն միեւնույն ֆունկցիոնալ կառուցվածքը*(տես հաջորդ էջի նկարը),* եւ նույնիսկ այուժետներում առկա են դետալային նմանություններ:

1. Եգիպտական համակարգում յոթերորդ աստվածությունը ***Ասար-Օզիրիսն*** է: Հայկական «Սասնա Ծռեր» էպոսում Դավիթը եւ նրա կին Խանդուդը ուղղակի յոթ թվի հետ են աղերսվում:

«... Յոթ ճյուղ Ծամի տեղ էլ հիմի կ'էրեւա,

Քանց **յոթ սուն** կը սեւկըտի»:

2. Եգիպտական համակարգում Օզիրիսը ներկայանում է որպես դրական հերոս աստվածություն, իսկ նրա եղբայրը՝ Սեթը, բացասական կերպարավորմամբ ներկայացնում է հակադրության բեւեռը: Հայկական էպոսում Դավիթը եւ Մսրա Մելիքը նույնպես եղբայրներ են եւ, «չարի» ու «բարու» բեւեռներն են. նրանք տարբեր մայրերից են, բայց նրանց հայրը՝ Մեծ Միհրն է:

3. Օզիրիսը Սեթի հետ մենամարտի ժամանակ պոկում, կտրում է Սեթի ձախ ձուն, դարձնելով նրան անսերունդ: Հայկական էպոսում, Դավիթը Մսրա Մելիքին հաղթելով, նրա ձախ ձուն՝ ***«եզար ոլման ծեր», «Մսրա Մելիքի ձախ ծուն քառսուն կիտր ի»*** *(«Սասնա Ծռեր», 1936, էջ 829, հավաքագրող՝ Ա.Ղանալանյան, պատմող՝ Սպարկերտցի Փառիկ):* Փաստորեն, թե՛ Օզիրիսը եւ թե՛ Դավիթը հավատամքային «պանթեոնի հիերարխիայում» յոթերորդ աստվածություններն են, եւ երկուսն էլ պատերազմելով եղբոր հետ, որը թշնամի է, պոկում են նրա ձախ ձուն:

4.Եգիպտական համակարգում Օզիրիսի աստեղատունը «Օրիոն» համաստեղությունն է, որը կոչվում է ***«երկնային հովիվ»:*** Այս «աստեղատուն հովիվը» հովվություն է անում *«մսուրքին»*[*1], *որ Ծիր Կաթնի համաստեղություններն են:* «Սասնա Տուն» էպոսի յոթերորդ աստվածությունը՝ պատանի Դավիթը, նույնպես հովիվ է, իսկ նրա զուգահեռը՝ շումերական տեքստերում Արատտա երկրի Դումուզին՝ «հովիվների հովանավորող» աստվածն էր:

5.Եգիպտական համակարգում Օզիրիսի աստեղատունը «Օրիոն» հա-

*1, – Ա. Աբրահամյան, «Մատենագրութիւնք Անանիա Շիրակացւոյ», էջ 326:

ԵԳԻՊՏԱԿԱՆ



ՀԱՅԿԱԿԱՆ «ՍԱՄՆԱ ՏՈՒՆ



մաստեղությունն է, որ կոչվում է՝ ***«հացի տուն»:*** «Սասնա Ծռեր» էպոսում Դավթի աղոթքն է՝ ***«հացն ու գինին Տեր կենդանին»***: Դավիթը թոնրի վրայից հարիսան ու հացը գողացողն է: Փոքր Միհրի մայրն անդրաշխարհից որդուն ասում է՝ ***«Քո հաց թխուկ ը, քո էմագ իփուկ ը, մինչեւ օրն դատաստան»*** *[1]: ***Հացը*** եւ ***հայրը*** նույնանում են թե՛ եգիպտական եւ թե՛ հայկական տարբերակներում: «Հացի Տունը»՝ Օրիոն-Հայկը, հետագայում, քրիստոնեության մեջ, դառնալու է՝ Բեթլեհեմ (հացի տուն): Մոկաց պատումներում այս նույն՝ ***«Հացն ու Գինին, Տեր կենդանին, Մարութա Աստվածածին, Խաչ Պատրագին (Պատերազմին?), ինչ վեր իմ աջ թեւին»,*** աղոթք բանաձեւի մեջ «հացն ու գինին», որը Տեր կենդանու (Աստծո) արտահայտություններն են, «Տեր»-ի փոխարեն ասվում է՝ Խեն=Հայրն*[2]: Փաստորեն, Տերը՝ Խաչի՝ Անգղ-Կարապի» համաստեղությունը, կենդանակերպի շղթայի արեւելյան կողմում «արտահայտվում» է որպես ***հաց***՝ «Օրիոն-Վահագն» եւ **գինի՝** «Ցուլի Բազմաստեղ» *(Պլեադես)*, իսկ ***Մազգարոթը***՝ կենդանակերպի շղթան, այս երկուսի «ստեղծած» շղթան է: Եգիպտական համակարգում ասեւի աստծո՝ Ռա-ի հայրը «Անգղ-Կարապի» համաստեղությունն է:

Եգիպտական հավատամքում ***Օզիրիս-Օրիոնը*** համարվում էր «հացի Տուն» եւ նրա կինը՝ Իզիսը, ջրում էր նրա մեռած մարմինը, որից ցորեն էր ծլարձակում: Եւ Հորոսը (որդին) ծնվում է նրա կողքից, նրա «մեռած» մարմնից*[3]: Ըստ հայկական պահպանված ավանդության, նշանված աղջիկներն են տաշտի մեջ, Վարդավառից 2-3 շաբաթ առաջ, ջրելով ցորեն կամ գարի աճեցնում*[4]:

---

*1, *2,- «Սասնա Ծռեր», 1936թ., Երեւան, էջ 849:

*3, - Jeremy Naydler, "Temple of the Cosmos", 1996, USA, p. 81, 277:

*4,- «Հայկական հեթանոսական Վարդավառ տոնի ժամանակ, ըստ հնագույն սովորույթի, մարդիկ իրար վրա ջուր են ցանում, եւ սա՝ որպես ավանդույթ պահպանվել է մինչեւ այսօր: Օրինակ՝ «Ագուլիսում Վարդավառի տոնից 2-3 շաբաթ առաջ, նշանված աղջիկները տաշտերի մեջ ցորեն կամ գարի էին ծլեցնում (անշուշտ՝ ջրելով այն): Ապա Վարդավառի տոնին, արդեն ծլած կանաչ զանգվածի մեջ երեխայի մեծության ուղիղ կամ խաչաձեւ փայտ էին տնկում եւ զարդարում վարդերով, մրգերով ու մանր վարունգներով: Այդ ամբողջը ****խնդում*** *(որոշ բարբառներում՝* ***խթում)*** էր կոչվում: Վարդավառի կեսօրից հետո, մի պառավ կին խնդումը վերցնում-տանում էր գյուղի հրապարակը եւ իբր հսկում էր նրան: Տղամարդիկ ու կանայք խթումի շուրջը պարում էին զուռնայի ու դհոլի նվագակցությամբ: Երկարատեւ պարից հետո, պառավը վերցնում էր խթումը, դնում գլխին եւ ինքն էլ էր սկսում հատուկ կատակերգ երգելով, պարել: Երգի մեջ պառավը, երբ երկյուղ է հայտնում, որ գուցե խթումը փախցնեն, այդ ժամանակ տղամարդիկ հանկարծ հարձակվում են պառավի վրա եւ, խթումը վայր գցելով, կատակով ու ծիծաղով փախցնում են վարդերը, մրգերն ու վարունգները: Պառավն այս անգամ անեծքի երգ է երգում»: (Ռ. Հ.Համբարձումյան, «Հայկական տոմար», 1992թ., Երեւան, էջ 17):

Ի միջիայլոց, ցորենը միակ կենսաբանական տարրն է, որ իրենում ունի Մենդելեեւյան աղյուսակի (այսինքն բնության մեջ գոյություն ունեցող բոլոր էլեմենտները) բոլոր էլեմենտները, եւ ակադեմիկոս Վավիլովի պնդմամբ, վայրի ցորենի «հայրենիքը» հայկական լեռնաշխարհն է:

6. «Սասնա Ծռեր» հնագույն էպոսում անդրաշխարհ գնալու ճանապարհին, Սանասարը եւ Բաղդասարը հանդիպում են ***հովվին,*** որը թագավոր է: Այսինքն, ինչպես եգիպտական համակարգում, այնպես էլ հայկական էպոսում ***«Օրիոն-հովիվը»*** հանդես է գալիս որպես անդրաշխարհ-արտաշխարհ միդիատոր աստվածություն: «Օրիոնի» համաստեղությունը որպես ***անդրաշխարհ-արտաշխարհ միդիատոր,*** ժամանակագրական առումով շատ հին է եւ կարեւորվում է նրանով, որ նյութական տիեզերքի շրջապտույտում, հոգիները կարող են ազատագրվել նյութական կաշկանդումից՝ ռեինկարնացիայի շրջապտույտից, միայն «Օրիոն» աստեղատան դից Օզիրիսի միջոցով:

Եգիպտական Թոթն իր տեսիլքում տեսնում է տիեզերքի բարձրագույն, աստվածային միտք վիշապ Պոիմանդրեսին, որ նրան ուսուցանում է թե ինչպես դուրս գալ նյութական շրջապտույտի յոթ օղակներից (յոթ մոլորակներ) դեպի հոգեւոր բարձրագույն սֆերաներ: Պոիմանդրեսն աղերսվում է «Օրիոն» համաստեղության հետ: Փաստորեն, հոգեւոր առաջնթացության թաքնագիտական համակարգը՝ ***երկնային հովվի*** *հետ կապված պատումի՝ մեռնող-հառնող աստվածություն եւ նրա աստեղատան հետ է աղերսվում: Պյութագորասն իր ժամանակին քաղդեական դպրոցում ուսանելուց հետո, իր երկրում, Դելֆիում հիմնադրելով իր դպրոցը, սկսում է «կիրառել» հոգեվոր կապի մեթոդները, եւ մեռնող հառնող ասվածության այս պատումը՝ որպես Դիոնիսուս (անվանափոխում) աստվածության պատմություն, ներմուծում է հունական հոգեւոր կատարելության թաքնագիտական դպրոց****[1]:**

«Սասնա Ծռեր» էպոսի եւ արարչության մասին եգիպտական հավատամքի վերոհիշյալ բացահայտ նմանությունները խոսում են այն մասին, որ հնագույն մայր պատումը, որի ծննդոցը Հայկական լեռնաշխարհն է, հնդեւրոպացիների մեծ միգրացիաների ժամանակ, հնդեւրոպական լեզվի հետ միասին «արտահանվելով» աշխարհի չորս ծագերը՝ Միջագետք, Եգիպտոս, կենտրոնական Եւրոպայից մինչեւ Հնդկաստան, դարերի ընթացքում «ձեւավորել» է իր իմպրովիզացիայի ենթարկված բազում տարբերակները: Արարչության կամ տիեզերքի ձեւավորման մասին հնագույն աշխարհճանաչողական համակարգի լեզուն՝ վիպական, սիմվոլիկ կերպարներով սյուժետային լեզու է: Սփռված բոլոր հավատամքային պատումներում պահպանված է հնագույն մայր պատումի «տիեզերածավալման» ֆունկցիոնալ սխեման, աստվածությունների կամ սրբազան անունների հնդեւրոպական ծագումի անունները եւ աստղագիտական նշանակություն ունեցող հայտնությունները:

---

*1,- Manly Hall, “The Secret Teachings Of All Ages”, 2000, USA, p. XL.

Դոդեկահեդրոն
ԵԹԵՐ



ՓՈՔՐ ՄՀԵՐ

Ծավալածեւը՝ «դոդեկահեդրոն»: Էլեմենտը՝ «Եթեր»: Սիմվոլը՝ «լուսին»: Ներկայացնում է՝ 12 համաստեղությունների միացյալ, ամբողջ շղթան: Տիեզերքի ծավալումն ավարտող վերջին՝ 8-րդ դիցն է: Զուգահեռաբար համարժեքն է՝ Արյան Արայի *(«Արա Գեղեցիկ-Շամիրամ»)*, **եգիպտական Հորոսի, վեդայական Քրիշնայի, կաբբալակում՝ Ադամ Կադմոնի, քրիստոնեության մեջ՝ Յիսուս Քրիստոսի(2-րդ գալուստ):**







ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ



Հայկական «Սասնա Ծռեր» էպոսում Փոքր Միհրը տիեզերածավալման վերջին փուլը «սահմանող» աստվածությունն է: Ըստ էպոսի պատումների, այս վերջին դիցի անունը ***Փոքր Միհր է*** *(նաեւ հիշվում է Պզտիկ Միհր անունով):* Էպոսում նա կոչվում է «փոքր»՝ իր պապ Մեծ Միհրի անունը կրելու հանգամանքով: Սակայն կան մի քանի պատումներ, որտեղ վերջին դիցի անունը՝ ***Դավթի որդի Դավիթ է*** կամ՝***Դավիթ-Միհր է***:

ՋՈՒՐ



«Սասնա Ծռեր» էպոսում Փոքր Միհրը ծննդյան օրվանից ներկայանում է որպես բացառիկ ծնունդ՝ իր խորհրդավոր նշաններով եւ անօրինակ ուժով: Դավիթը օտարություն գնալուց առաջ, կնոջը պատվիրում է, որ եթե տղա ծնվի, ապա նրան անվանակոչեն իր հոր անունով, եւ հանձնում է իր թեւի ոսկյա բազբանդն ասելով՝ *«Կկապես էնոր աջ թեւին... Ես որ շատ ուշացա, զՄիհր ճամփի, թող գա, բազբանդ տեսնեմ, կը ճանչենամ»****[1]:**

ՕԴ



Երբ Միհրը ծնվում է, փորձելու համար թե արդյո՞ք նորածինը ազնորդի է, նրա ձեռքերն ու ոտքերը կապում են **գութանի շղթաներով:** Մանուկը կտոր-կտոր է անում շղթաները: Լողացնելու ժամանակ տեսնում են, որ մանկան մեկ ձեռքը խուփ է, իսկ երբ Քեռի Թորոսը՝

ՀՈՂ



«Զմանուկի ձեռք մաժեց, մատներ բացվան.
Տեսավ, կաթ մի արուն ձեռքի մեջ.
Ասավ.- հա՜յ, հա՜յ, թե քար էսոր մուտ տա, մուտ տա.
Հող չի կարնա պահի.
Զաշխարհ արեր է կաթ մի արուն, Դրեր է մեջ ձեռքին»[*2]:

ՀՈՒՐ



Յոթ տարեկան հասակում Փոքր Միհրը հաղթում է իր անպարտելի դյուցազուն հորը՝ Դավթին: Դավիթն անիծում է որդուն, որ նա լինի անմահ եւ անժառանգ:

Միհրն ամուսնանում է արքայադուստր Գոհարի հետ, որը կռվում, փեսացուի՝ Միհրի գուրզը կարողանում է բռնել:

Ամուսնությունից մի որոշ ժամանակ անց, Միհրի կին Գոհարը անսպասելի մեռնում է:

Հոր՝ Դավթի սպանվելուց հետո, Փոքր Միհրը բացառիկ դաժանությամբ լուծում է հոր վրեժը, իսպառ ոչնչացնելով թշնամի Խլաթի թագավորությունը:

Լինելով անմահ ու անժառանգ, աշխարհի վրա իրեն հավասարը չունենալով եւ մնալով մենակ, Միհրը մարտահրավեր է նետում **երկնքին:** Երկնային յոթ հրեշտակները կռվելով Փոքր

ԵԹԵՐ



Dodecahedron

*1, *2, - «Սասունցի Դավիթ», 1989թ., Երեւան, էջ 378, 380:



sidi = քառակուսու կողմ



X^2= sidi ^{2} = mehr = = քառակուսու մակերես: Եթե sidi-ն = 60, ապա ունենում ենք 60 x 60 սրբազան չափը՝ մեկ IKU-ն, եւ mehr-ը դառնում է սրբազան քառակուսու մակերեսը՝ 3600 (60x60):



Մհերի հետ, չեն կարողանում նրան հաղթել:

Հողը, **արդար** Մհերի ծանրությունը չի կարողանում պահել՝ ***«դալբցել էր»:*** Մհերը գնում է իր հոր եւ մոր գերեզման եւ կանչում է նրանց հոգիներին: Ե՛վ մայրը ե՛ւ հայրը նրան խորհուրդ են տալիս գնալ **Ագռավաքար** եւ փակվել այնտեղ մինչեւ աշխարհի վերջը: *«Քո հաց թխուկ ը, քո եմագ իփուկ ը, մինչեւ օրն դատաստան»,- գերեզմանից ասում է մայրը* *** [1]:**

Մհերի փակվելն իմանալով, Սասնա չորս սերունդների համար հավերժական քեռին՝ Թորոսը, կսկծու մեռնում է:

Ագռավաքարում Մհերի առջեւ դրված է ***աշխարհի բախտի անիվը***՝ ժամանակների վերջը ցուցող ***«չարխի ֆալակը».*** երբ ժամը գա, նա ելնելով ***աշխարհը կործանելու է*[2]:***

Քարայրից Մհերը դուրս գալու փորձ է անում տարին մեկ՝ **Համբարձման գիշերը** կամ **Վարդեւորին,** բայց տեսնելով որ հողն իր ծանրությունը դեռ չի պահում, վերադառնում է:

Փոքր Մհերն աղերսվում է ***Միհր-Միթրա*** աստվածության հետ: Հռոմեական տեքստերում այս աստվածությանը կոչում էին ***«Deus Sol invictus»:*** Միջին պարսկ. ժամանակներում՝ **«MIHR U MÂH'»**-ը որպես՝ **«արեւ ու լուսին»,**- ընդունված արտահայտություն էր*[3]: Հնդեւրոպական մեռած լեզուներից հիթթերեն՝ ***Mehur*** նշանակում է՝ **«ժամանակ»**: Շումերների մոտ ***mehr***-ը թվաբանական տերմին էր: Առաջին բաբելոնյան շրջանից մեզ հասած մաթեմատիկական խնդիրներում, բաբելացիք **«քառակուսու»** կողմի համար օգտագործել են՝ **sidi** տերմինը: **«Քառակուսու»** համար օգտագործել են՝ **mehr** տերմինը: Եվ, **sidi^2 = mehr:** Այս տերմինների անուններն*[4] օգտագործել են խորանարդի ծավալը չափելու, հաշվելու համար: Եթե քառանկյունը միտում է 60 x 60 ***սրբազան չափը՝ մեկ IK-ն,*** որտեղ կողը՝ sidi-ն = 60, ապա ունենում ենք 60 x 60, եւ **mehr**-ը դառնում է **սրբազան քառակուսու մակերեսը՝ 3600 (60x60):** Այս թվերը եւ սրբազան տերմինները հայտնի էին շումերական ժամանակներից եւ շումերական ժառանգություն են:

Հայկական էպոսը պահպանել է այս աստվածության ան-

---

*1, - Սասնա Ծռեր, հատ. Ա, էջ 242:
*2,- Սասնա Ծռեր, հատ.Բ, մաս I, էջ 5:
*3, - B. L. van der Waerden, «Science Awakening», p.150.
*4,- Dick Teresi, "Lost Discoveries", USA, 2002, p. 50.

վան ամենանախնական ձեւը՝ **Միհր/Մլհեր = mehr**: Հին քրմերը բինարիզմի սկզբունքով, «ժամանակն» ընդունում էին որպես՝ ***գիշերային*** եւ ***ցերեկային*** լուսատուների՝ արեւի եւ լուսնի «իշխանությունների» միասնություն: ՄԸՀ+ԷՐ > ՄԱՀ(Ա) + ԱՐԱ > ՄԱՀ(ԻԿ) + ԱՐԵՎ > Լուսին + Արեւ > ջուր + հուր: ՄԸՀԷՐ = [ՄԸՀ > ՄԱՀ > ՄԵՀ] + [ԷՐ > ԱՐ > ԱՐՎԻ = ԱՐԵՎ]:

Նախահնդեւրոպական՝ *meH- ձեւից. - «ժամանակի չափման միավոր», բոլոր հնդեւրոպական լեզուներն ունեն իրենց տարբերակները*[1]: Սանսկրիտ.՝ mā́ti, mimā́ti «չափումներ»*(դրա համար է Միհրը սանսկրիտով դարձել՝ Միթրա)*, լատ.՝ mētior «ես չափեցի», հին եկեղ. սլավոն.՝ měra «չափ», գոթ.՝ mēl «ժամանակ», լիտվ.՝ mētai «տարի», ալբան.՝ mot «տարի», հիթթիթ.՝ **me<u>h</u>ur** «ժամանակ», հուրրիերեն՝ taam*[2], հայերեն՝ ’am > zam «տարի, ժամանակ»: Հնդեւրոպացիների մոտ, լեզուներում, «Լուսին»-ը համարվել է ժամանակի չափման միավոր: Սանսկրիտ.՝ mā́h, mā́sa- «ամիս, լուսին», Ավեստա՝ mā̊, պարսկ.՝ māh, հուն.՝ mḗn, եւ այլն, բոլորի նշ.՝ «լուսին» եւ «ամիս»: Հայերեն՝ amis, amsoy, նշանակում է «լուսին», «ամիս» *(ինչպես նաեւ՝ mahik’ «լուսին», - ավելացումն իմն է)*: Բոլորի հիմքը հնդեւրոպական նախալեզվի [*meH-]-ն ձեւն է*[3]:

Հայկական «Սասնա Ծռեր» էպոսում, Փոքր Միհրը տիեզերածավալման վերջին փուլը «սահմանող» աստվածությունն է: Հնագույն հավատամքի տարբեր պատումներում այս աստվածությունն ունի տարբեր անուններ: Եգիպտական համակարգում, նա յոթերորդ աստվածություն Օզիրիսի որդին է՝ ***Հորոսն*** է, եւ 12 կենդանակերպ համաստեղությունների ***«հորոսկոպ»*** անունը, տիեզերածավալումը եզրափակող վերջին աստվածության անունով է կոչվում: 12 կենդանակերպերը ներկայացնող դից է Հորոսի զուգահեռը՝ Արայան Արան, որ հոր՝ Արա Գեղեցիկի մահից հետո 12 տարեկան էր:

Արա Գեղեցիկի եւ Նուարդի որդու անունը՝ **Արայան Արա** է: «Սասնա Ծռեր» էպոսում, **Արայան Արայի** զուգահեռ **Փոքր Միհրը** նույնպես ունի իր անվան մեջ հոր անվան կրկնությունը. «Սասնա Ծռեր» էպոսի պատումներից մեկում Փոքր Միհրը կոչվում է՝ **Դավթի որդի Դավիթ Միհր***[4]:

«Ըստ Մովսես Խորենացու, Արա Գեղեցիկին փոխարինում է Արայան Արան, որը Արա Գեղեցիկի զոհվելու ժամանակ 12 տարեկան էր: Պլատոնի «Հանրապետություն աշխատության մեջ Էրոսը հարություն է առնում զոհվելուց 12 օր հետո: 12 թվի կրկնությունը երկու տեղում, թերեւս, պատահական չէ: Ի դեպ Արան(Արայան Արան) Հաբեթի տոհմաբանության մեջ տասներկուերորդ սերունդն է»[5]:

---

*1, *2, *3 - T. Gamkrelidze & V. Ivanov, “The Indo-European And The Indo-Europeans”, p. 591, 590-591, (17n).

*4,- Պատում **Ը**, պատմող՝ Մոկացի Վարդան, պատումը տպագր. է եղել 1901թ., «Սասնա Ծռեր», h. I, 1936թ., Երեւան, էջ 378:

*5,- Ա. Մովսիսյան, «Հնագույն պետությունը Հայաստանում/ Արատտա», էջ 35:

Տիեզերածավալման չորս փուլերի վերջին արդյունքը ***Դոդեկահեդրոնն*** է՝ ***եթերը***, որն ըստ Պլատոնականների (մ.թ.ա. V- IV դդ.) կոչվում է՝ Աստծո կոմպոզիցիա: Սա լիարժեք արտահայտված տիեզերքն է կամ տիեզերական մարդը (Anthropocosm):

Դոդեկահեդրոն ծավալաձեւն ունի 12 նիստ եւ 30 եզր: 12 x 30=3600: Այս 3600 թիվը շումերական «ամբողջի» գաղափարն է շրջանաձեւակի սիմվոլով, որ մեր՝ 360⁰-ն է եւ նաեւ ներկայացնում է Միջագետքյան MUL.APIN աստղացանկի 36 աստեղատների հավաքականությունը: Արեւմտյան էզոտերիկ ուսմունքում նա կոչվում է տիեզերական մարդ՝ Anthropocosm, Կաբբալայում՝ Ադամ Կադմոն, եգիպտական համակարգում՝ Հորոս, ըստ հայկական «Սասնա Տուն» էպոսի՝ Փոքր Մհեր, ըստ Խորենացու՝ Արայան Արա, ըստ վեդայական համակարգի՝ Քրիշնա, ըստ առաջին քրիստոնեա գնոստիկների՝ Յիսուս Քրիստոս*(երկրորդ գալուստ)* եւ այլն, որ տիեզերածավալումն ավարտող 8-րդ՝ վերջին աստվածությունն է:

Ըստ էզոթերիկ աշխարհճանաչողության, ***համակարգում վերջին դիցը*** գերագույն արարչի արտացոլանք-պատկերն է՝ տիեզերական մարդն է, 12 նիստանի դոդեկահեդրոն ԵԹԵՐ-ն է, որից տրանսֆորմացվում է կյանքը, կայացած տիեզերքը: Հորոսը *«միացրեց վերին եւ ներքին Եգիպտոսը»* խոսքի իմաստը՝ հոգին նյութի մեջ,- հոգեւոր եւ նյութական սֆերաների միացման մասին է, որ կայացած գոյաբանական աշխարհն է, եւ նրա լիարժեք ծավալում-արտահատյտումը կատարվում է՝ 4+4=8 կառուցվածքային համակարգով: Խաչված Քրիստոսը՝ մարդը խաչի վրա,- նույն իմաստն ունի եւ 4+4=8 համակարգն է ներկայացնում, որտեղ քառակողմ մարդը՝ տիեզերական ***ոգու*** սիմվոլն է, իսկ փայտյա խաչը՝ ***նյութական*** աշխարհն է:

Տիեզերածավալման մատրիցա-համակարգում՝ «ամբողջը», որ ութ փուլերով է արտահայտվում, **վեցերորդ փուլում** «ստեղծում» է գոյաբանական աշխարհը՝ «նյութի եւ ոգու դաշինքով»: Մեծ Մհերը որպես ***բարձրագույն Ոգի*** *(արեւի սիմվոլ)* դաշինք է կնքում նյութական աշխարհի ***շունչ-հոգու*** իպոստաս Մսրա Մելիքի հետ*(լուսնի սիմվոլ)*: ***Յոթերորդ*** աստվածությունը, որ հնագույն հավատամքային կանոնակարգում հանդես է գալիս տարբեր անուններով՝ Սասնա Դավիթ, Դումուզի, Օզիրիս, Քրիստոս եւ այլն, սպանվելով կամ ինքնազոհողությամբ «ձեւավորում-դառնում» է երկու աշխարհների միջեւ **միդիատոր,** ներկայանալով որպես մեռնող-հառնող աստվածություն: Օզիրիսը, կատարյալ կամ հասյալ մարդկային հոգիներին, որոնք վերամարմնավորման կանոնին արդեն ենթակա չեն, նավով դուրս է բերում հոգեւոր վերին ոլորտ: Համակարգում **վերջին՝ ութերորդ** աստվածություն Փոքր Մհերը, ոգու եւ նյութի միասնությամբ «ձեւավորված» մեր երեք չափու-

ՀԱՅԿԱԿԱՆ «ՍԱՄՆԱ ՏՈՒՆ

ԳԱԳԻԿ < ԿԱԿԻ



1. ԹՈՐՈՍ
I

2. ԾՈՎԻՆԱՐ
I

3. ՍԱՆԱՍԱՐ
II

4. ԴԵՂՁՈՒՆ
Քառաս.Ծամ
II



5. ՄԵԾ ՄՀԵՐ
III

6. ԱՐՄԱՂԱՆ
III



7. ԴԱՎԻԹ = ՏԱՎԻԹ
IV

8. ԽԱՆԴՈՒԴ
IV

ՓՈՔՐ ՄՀԵՐ

ԵԳԻՊՏԱԿԱՆ









ԵԹԵՐ-Dodecahedron

մանի գոյաբանական աշխարհն է: Նա նաեւ կործանող աստվածություն է: Փոքր Միերը ժամանակների վերջում ոչնչացնելու է աշխարհը: Փոքր Միերն անմահ է եւ անսերունդ. նա տիեզերական ոգին է, որ գտնվում է Ագռավաքարում: ***Քարը*** կամ ***Ագռավաքարը*** մի կողմից խորհրդանշում է նյութական տիեզերքը, մյուս կողմից՝ ***բուն երկինքը:*** Առաջին իմաստը՝ Ագռավաքարը որպես նյութական աշխարհ, եւ ոգին՝ Միերը քարում փակված,- ***«Ոգին նյութականի»*** մեջ միասնությունն է, որ ***գոյաբանական աշխարհ*** իմաստն է արտահայտում: Երկրորդ իմաստը՝ Ագռավաքարը ներկայանում է որպես՝ ***բուն երկինք,*** նյութական տիեզերքից դուրս՝ հոգեւոր բարձրագույն սֆերա *(հնդեւրոպական լեզուներում **քարը** բառը նաեւ «երկինք» իմաստն ունի)*[*1]: Ագռավաքարում Փոքր Միերը նայում է իր առջեւ դրված ժամանակի ճախարակին. երբ ժամը գա, նա ելնելու, կործանելու է աշխարհը: Թեեւ այս վերջին աստվածությունը ստացել է «կործանող աստվածություն» անունը, սակայն պարզ է, որ եթե ***ոգին*** լքի նյութական տիեզերքը՝ այս դեպքում իր կացարան ***Ագռավքարը,*** ապա, այսպես թե այնպես, գոյաբանական աշխարհը կվերանա:

Այս նույն սիմվոլիկ միստիցիզմը ժառանգաբար անցել է նաեւ քրիստոնեությանը, որը մեզ է ներկայանում՝ «Քրիստոսը Խաչի վրա» եւ Քրիստոսի երկրորդ գալուստ՝ **«դատաստան»** իմաստներով: Խաչված մարդը՝ տիեզերական ***Ոգին*** է, որի քառաթեւ կամ չորս կողմերը միտող սիմվոլը նրա՝ 360^0 լիարժեք արտահայտման խորհուրդն է: Փայտյա քառաթեւ խաչը՝ լիարժեք արտահայտված նյութական աշխարհի խորհուրդն է: Մարդը խաչափայտի վրա կամ Միերը Ագռավաքարում սիմվոլը միտում է՝ ոգու եւ նյութի միասնությամբ գոյաբանական աշխարհի ձեւավորումը: Աշխարհի կործանումը Քրիստոսի 2-րդ գալուստով կամ, ժամանկների վերջում Փոքր Միերի ***Ագռավու քարից*** ելնելնելով աշխարհի կործանումը՝ նո՛ւյն սյուժետով, նո՛ւյն ֆուկցիայով, միեւնույն բանի մասին է: Երկրաչափորեն, հնագույն այս համակարգը ներկայանում է որպես մեկ ամբողջի մեջ երկու շրջանաշղթաների ծավալում: Թվերի լեզվով՝ «1»-ը արտահայտվում է 4+4=8 բանաձեւով, որ «ձեւավորում» է գերագույն աստվածների ***իննական համակարգը՝ 1 ➡ 4 + 4 = 1➡8:***

Հնագույն թաքնագիտական համակարգում, հոգեւոր «կենսոլորտն» իր «լիարժեք զարգացումից» հետո, որի սիմվոլը **«ՇԱՐ > շրջանն»** է կամ՝ **«խաչ > 360^0»**-ը, «ձեւավորում» է նյութական աշխարհը՝ սիմվոլը կրկին **«խաչ» կամ՝ «360^0»:** Այս երկու սֆերաների «միասնությամբ» ստեղծվում է գոյաբանական աշխարհը, որ հետո կործանվում է՝ ***նորից ծնվելու պայմանով:*** Հնագույն աշխարհճանաչողական կանոնակարգը՝ տիեզերածավալման այս փուլային համակարգը, իր վիպական ներկայացումն է ստացել

*1, - «In Indo-European the very word for "ston", also means "sky"», T. Gamkrelidze & V. Ivanov, "The Indo-European And The Indo-Europeans", p. 575.



Վիշապի պտույտը ձեւավորում է տիեզերքը՝ ըստ երկրաչափական ծավալների:





հնագույն հավատամքային պատումներում: Ի միջիայլոց, տիեզերքի ***«սկզբի»*** եւ ***«վերջի»*** մասին այսօրվա գիտական ***մեծ պայթունի***՝ որպես սկիզբ, եւ ***մեծ լուծարման***՝ որպես վերջ, տեսությունները հեռու չեն քրմերի աշխարհճանաչողությունից:

«Վիշապի» պտույտը կամ ***«պարը»,*** որը «ձեւավորում» է բնության մեջ գոյություն ունեցող երկրաչափական չորս սոլիդները՝ **icosahedron, octahedron, cube, tetrahedron,** որոնք՝ **«ջուր», «օդ», «հող», «հուր»** էլեմենտների ատրիբուտներն են, ներկայանում են որպես գլխավոր չորս զույգ աստվածությունների «էությունը» ներկայացնող սիմվոլներ: 1 > 4 + 4 համակարգն ի վերջո «ստեղծում» է **Dodecahedron**-ը, որն իր մեջ ներառում է իրենից առաջ «ձեւավորված» բոլոր էլեմենտները կամ իրենից առաջ «հայտնված» չորս զույգ աստվածների ֆունկցիանը: Նա, ըստ Սասնա էպոսի Փոքր Միհրը, այս առումով նման է իր պապի պապին, որի ծավալաձեւը «գունդն» է: Ըստ Սասնա էպոսի, Փոքր Միհրը, որ վերջին դիցն է, իր պապու պապի՝ Գագիկ թագավորի «փոքր տեսակն է»: Ըստ հնագույն թաքնագիտության, Փոքր Միհրը կամ Հորոսը կամ Ադամ Կադմոնը եւ այլն, տիեզերքն արարող գերագույն **Ոգու արտացոլանքն** է, որ հենց ինքնին, մեր երեք չափումնանի գոյաբանական աշխարհն է: Նա՝ այս վերջին աստվածությունը, որ ներկայացնում է «լիարժեք ձեւավորված, վերջնական» գոյաբանական մեր աշխարհը, ըստ Պլատոնի՝ Աստծո «կոմբիանացիան» է եւ այն կոչվում է՝ ԵԹԵՐ: Աստվածների սիմվոլներ համարվող երկրաչափական ծավալաձեւերից միայն ***գունդն*** է, որ իրենում պարունակում է բոլոր էլեմենտների ***պոտենցիալը*** եւ ***դոդեկահեդրոն-եթերն*** է, որ իրենում ներառում է բոլոր չորս էլեմենտատրիբուտների ***կինետիկը*** *(տես աղուսյակը ներքեւում)*:

Գունդ

ՋՈՒՐ = բազմանիստ (20 նիստ), icosahedron-----

ՕԴ = ութանիստ, octahedron ----------

ՀՈՂ = խորանարդ, cube ----------

ՀՈՒՐ = քառանիստ, tetrahedron ----------

ԵԹԵՐ = բազմանիստ, 12 նիստ, dodecahedron ----------

Տիեզերական գերագույն Ոգին արարելու ընթացքում «ներկայանում» է՝ ***ջուր, հուր, օդ, հող,*** «վիճակներով»: Օրինակ, «Սասնա Ծռերում» Ծովինարը խորհրդանշում է «ջուր» էլեմենտը, երկվորյակները, որ ջրածին են ՝ «օդ» էլեմենտը եւ այլն: Նույնը «Ռիգ Վեդայում» է՝ ***«Առաջին անգամ երկնից ծնվեց Ագնին, - (ՕԴ), Մեր միջից - երկրորդ անգամ, - (ՀՈՂ), Նա Իմացյալն է ամենայնի, Երրորդ անգամ [ծնվեց] ջրերում...» - (ՋՈՒՐ)*** [1]:

Հնագույն պատումներում աստվածության միեւնույն կամ համանման անունով հանդես գալը ընդունված էր: «Ռիգ-Վեդայի» աստվածները՝ Ինդրան, Դադհիկրան, Սուրիան, Ագնին, Սոման եւ այլն, կոչվում էին նժույգներ*[2]: Ըստ Սասնա էպոսի մի քանի պատումների, այս վերջին դիցի անունը՝ ***Դավթի որդի Դավիթ է, Դավիթ-Մհեր է*** կամ ***Փոքր Մհեր է*** *(նաեւ հիշվում է Պրզտիկ Մհեր անունով):* Որդու վրա հոր՝ Դավթի անվան, կամ պապի՝ Մեծ Մհերի անվան կրկնությունները պատահական չեն: Այս աստվածությունը զուգահեռաբար՝ Արա Գեղեցիկի որդի ***Արայան Արայի*** հետ է աղերսվում: ***«Արա Գեղեցիկ եւ Շամիրամ»*** տարբերակում, ***Արա*** անունը գործածվում է ե՛ւ հոր՝ Արա Գեղեցիկի, ե՛ւ որդու՝ Արայան Արայի դեպքում: *«Արայան Արան 12 տարեկան»* խորհրդաբանությունը՝ արեւի շրջանաշրջթայում 12 համաստեղությունների մասին է*[3]: Տարվա 12 ամիսների ընթացքում արեւն անցնում է արեւի ուղեծրի 12 համաստեղությունների շրջանաշրջթայով, «գծելով» ՇԱՐԸ (սա մեր այսօրվա 360⁰-ն է)*[4], որ աղերսվում է 3600 թվի հետ, եւ ժամանակ ցուցող Շարը՝ 3600 տարի, սրբազան համարվող չափի՝ 60x60- մեկ ԻԿ-ի դեպքում դառնում ծավալ՝ **mher:** Փաստորեն, ե՛ւ էպոսում, ե՛ւ պատմահայր Մ. Խորենացու «Արա Գեղեցիկ եւ Շամիրամ» պատումում, ***հայր-որդի*** անունների համադրությամբ կրկնողությունը աստղագիտական հիմք ունի:

Հների հավատամքային կառույցը ցուցում է, որ հավաքական անունով «գերագույն դիցը», կարող է հանդես գալ սկզբում, մեջտեղում եւ վերջում: «Սասնա» էպոսում, երկու Մհերների առկայությունը որպես՝ ԱՐԱ+ՄԱՀԱ եւ ՄԱՀԱ+ԱՐԱ,- **«արեւ-լուսին»** եւ **«լուսին-արեւ»**, խորհրդանշում է գիշեր-ցերեկ «երեւույթը»: Մեծ Մհերը՝ «օրն» է, Փոքր Մհերը՝ «գիշերը»:

Հայկական «Սասնա Ծռեր» էպոսում շատ կարեւոր եւ խորհրդապաշտական նշանակություն ունեն թռուցիկ, առաջին հայացքից երկրորդական

---

*1,- Ռիգ Վեդա, X, 45, 1:

*2,- Ռիգ-Վեդա, 1.163, 1.162, 10.56: Կամ տես՝ "Rig Veda", Penguin Classics, Wendy Doniger O'Flaherty, England, 1981.

*3, - ***Արայան Արան*** նաեւ աղերսվում է ***իր նախորդի՝ Արամանյակի*** հետ: Արա+ման+եակ: ***Ման՝*** «պտույտ, շրջան, ոլորք, գալար»: ***Մաննակ՝*** «շղթա»: Երկուսն էլ բնիկ հնդեւրոպական բառեր են: Տես՝ Հր. Աճառյան, «Հայերեն Արմատական Բառարան», h. III, էջ 249, 252-253:

*4,- Šar = 3600 տարեփուլ, սիմվոլը՝ «O» շրջան, շումերական ժառանգություն է: Dick Teresi, "Lost Discoveries", 2002, USA, p. 50.

թվացող ակնարկներն ու էպիզոդները, որ թաքնագիտական հավատամքային միստիցիզմին հատուկ է, «ոճ» է: Նույն «ոճով»՝ ակնարկներով, առակներով ու «ռեբուսներով» է գրված Նոր Կտակարանը, որտեղ առաջին հայացքից երկրորդական թվացող իմֆորմացիան շատ ավելի կարեւոր է, քանի որ խորհրդաբանական իմաստներ ունի, քան այս կամ այն սյուժետային ամբողջ էպիզոդը: Այս «ոճը» հատուկ է թե՛ «Ռիգ Վեդային», թե՛ եգիպտական հավատամքային պատումներին եւ այլն: Ուրեմն, Փոքր Մհերի «անձը» այս անկյունով դիտարկելու հնարավորությունը բավականին բացահայտումներ է անում:

Վերջապես ո՞վ է Փոքր Մհերը:

1. Էպոսում ***Փոքր Մհերը*** միակ **դից-հերոսն** է, որ տեսության է գնում ***Բաղդասարի գերեզմանին:*** Եթե նա այդքան ազգական սիրող էր, ապա ինչո՞ւ Սասնասարի կամ Մեծ Մհերի գերեզմաններին այցելություն չի կատարում, այլ միայն այցելում է Բաղդասարի շիրիմին, որը գտնվում է հարավում, Բաղդադ քաղաքում*(Բաղդասարը Փոքր Մհերից առաջ, լուսնի իպոստասն էր: Տես՝ «Երկվորյակներ» բաժինը):*

2. Էպոսում Փոքր Մհերը միակ դից-հերոսն է, որ շատ «քնկոտ» է: էպոսում բազմիս է նշվում, որ ***օրվա ընթացքում*** Փոքր Մհերը քնած է: Գոհարի հետ ճակատամարտից առաջ նա քնած է, եւ զոռով են նրան զարթնեցնում *(այնպես ինչպես Մսրա Մելիք-լուսնի իպոստասն է օրվա ընթացքում քնած):* Ճակատելուց հետո նա նորից քուն է մտնում:

3. ***Փոքր Մհերը*** գիշերային երկինքն է, ***լուսնի*** իպոստասն է, ինչպես Բաղդասարը, ի տարբերություն ***Մեծ Մհերի,*** որ ***արեի*** իպոստասն է: Փոքր Մհերի կին հուր-Գոհարը՝ արեւն է: ***Գոհար-արեւը*** Մհերի առջեւ կանգնելով, ***իր փայլքով*** խափանում է նրա նետի սլացքը. նետը պիտի մատանու օղակով անցներ: Գոհարը, որ խորհրդանշում է «մեռնող արեւը», Մհերին զգուշացնում է՝ ***«Համա էլի կ'ասեմ՝ տե՛ս, արեւ չզարնի»:***

Մհերի ապագա կնոջ հուր-Գոհարի՝ ***«Մհեր տես, արեւը քեզի կզարնի»*** դարձվածքը չի վրիպել Լեւոն Մկրտչյանի ուշադրությունից. *«դարձվածը, հավանաբար, այլ իմաստ է ունեցել, որը պայմանավորված է եղել արեւի հետ Մհերի կերպարի հետ ունեցած կապի հետ»**[1]:

Փոքր Մհերը լուսնի սիմվոլով գիշերային երկնքի իպոստասը լինելով, կարող էր «զգուշանալ» միայն արեւից՝ «օրվա երկնքից»:

Լուսնի իպոստաս Փոքր Մհերը որպես տիեզերածավալման վերջին դից, «Սասնա Ծռեր» էպոսում ներկայացված է նաեւ ***մատեմատիկական խնդրի*** օգնությամբ: Հայկական էպոսը վերջանում է մի շատ կաեւոր էպի-

*1, - «Սասունցի Դավիթ», 1989թ., Երեւան, Առաջաբան, Լեւոն Մկրտչյան, էջ 54:

զոդով: Փոքր Մհերը փակվում է Ագռավաքարում եւ միայն տարին մեկ-երկու անգամ փորձում է դուրս ելնել Ագռավուքարից:

«Տարին երկու դիր դուռ կը բացվը՛: Զինք աշխարհ թամաշա կ՚անի:
Դավթի տղա Մհեր Համբարձման գշըր դուս կ՚ըլնը,
քառսուն հավուր ճամբախ՝ մեկ սհաթա կ՚երթա.
Քար որ բացվը՛, քառսուն օր վեր քարիրու կ՚երթա.
Ինչ խուղը՛ վրեն ընկընը՝ ձին կը խընդկի, Չկերի քելա, հիտ կդառնա:
Համբարձման գիշեր Մհեր երկու սահաթ ժամանակ ունը,
Մեկ սահաթ դուս կ՚ըլնը, մեկ հիտ կը դառնա:
Ձիու սոլ, մեծ սինու կանդար ի.
Վուր խուղ ի բռնը, աշխարք պիտ ավիրա:
Դավթի տղա Մհերին կասըն՝ Դավիթ-Մհեր:
Դավթի ձին խրնշտակ նալըց.Դավիթ ասաց.- Խորոտ նալը:
Ասաց.- Ի՛նչ խորոտ նալըմ, Քո ձիուն, քո ումր մեկ նոնը՛:
Դավթի ազգ դնվըստաննիրուց ի»:

(«Սասնա Ծռեր», հատ. Ա, մաս I, պատում «Ը», էջ 378, պատմող՝ մոկացի Վարդան):

Բառարան (Սասնա Ծռեր, հատ. Բ, էջ 710-849: Երեւան, 1951)

հավուր - ավուր, օրվա, *(գիշերահավասարին օրը՝ 12 ժամ օր, 12 ժամ գիշեր)*

մեկ սահաթ - մեկ ժամ, ժամացույց, նույն ժամին, իսկույն:

խուղ - հող: Ձիու սոլ - պայտ: Կանդար - չափ: Սինի - պղնձե մեծ ափսե:

Ումր - կյանք, հասակ:

Փոքր Մհերի ***համբարձման գիշերը*** Ագռավաքարից ելնելն աղերսվում է աստղագիտական երեւույթներով հիմնված փուլային ժամանակների հետ:

Համբարձման գիշեր՝ Մայիս 17-18: Քրիստոս հարությունից՝ ***Ապրիլ 7-8,*** *համբարձվում է՝ 40 օր հետո, Մայիս 17-18: Համբարձման տոնը հին հեթանոսական ամենամեծ տոներից մեկն է՝ Ծաղկամոր տոնն է**[1] :

«Սասնա Ծռեր» էպոսի Փոքր Մհեր ճյուղի համարյա բոլոր պատումներում տեղ գտած այս խնդրը, մինչեւ այժմ, որեւէ մեկի ուշադրությունը չի գրավել*[2]:

«... Ձիու սոլ, մեծ սինու կանդար ի»: Էպոսի թաքնագիտական ուղերձում ընդգծված թվերը եւ չափերը բացառիկ կարեւորություն ունեն: Այստեղ ձիու **ՍՈԼ**-ը պայտն է, որ ունի ***կիսալուսնի*** ձեւ, ԿԱՆԴԱՐԸ՝ ըստ 7-րդ դարի մատենագիր Անանիա Շիրակացու,- Կենդինարն է (kentênarion)*[3]**:** Շիրակացու կողմից բերված խնդրի մեջ *«ինչպես պարզ երեւում է նրա լուծումից,* «երեք հազար եւ վեց հարեւր դահեկան»-*ը* հավասար է 1/2 կենդինարի»*[4]:

---

*1,- «Սասնա Ծռեր», հ. Բ, 1951թ., Երեւան, էջ 849:

*2,- «Ս. Ծ.» էպոսի ուսումնասիրություններ՝ աստվածությունների ֆունկցիաներ-ից բխող անունների ստուգաբանություն, ընդհանրապես չի կատարվել:

*3,*4, - Հակոբ Մանանդյան, «Երկեր» հ. Զ, 1985թ., Երեւան, էջ 250:



Գծագիր # 1

Այսինքն, Կենդինարը*(«Սասնա Ծռեր» էպոսի Կանդարը)* հավասար է 7200-ի*[1], որի կեսը՝ 3600 է: Սա շումերական ՇԱՐՆ-է՝ 3600ը, որ 360^0-ն է, սրա կեսը պայտոն է՝ ՍՈԼ, որ 180^0 է:

Հնում մեկ տարին*(սխեմատիկ տարին)* 360 օր էր հաշվվում: Գիշերահավասարի ժամանակ օրը՝ 12 եւ գիշերը՝ 12 ժամ: Ըստ էպոսի, Մհերը երկնքով է անցնում գիշերը, ուրեմն, այստեղ Մհերը որպես գիշերային երկնքի լուսատու է նկատի առնված: ***Մեկ ավուր ճանապարհը***՝ 12 ժամվա ճանապարհ է: Փոքր Մհերը 40 ավուր ճանապարհը մեկ ժամում է անցնում: Նրա արագությունը մեկ ժամում՝ 12 x 40 = 480 ժամ/ճանապարհ է: 40 օր գնալով հասնում է հողին *(ուրեմն երկնքով էր գնո՞ւմ, չէ՞):* 40 օրը՝ 12 x 40 = 480 ժամ է: 40 օրվա նրա անցածը՝ 480 x 480 = 230400 ժ./ճանապարհ, Մհերի անցած ճանապարհն է մինչեւ հողին հասնելը. հողը նրա ծանրությունը չի կարողանում պահել, վերադառնում է: Ետադարձը նույն արագությամբ՝ 230400 ժամ/ճանապարհ է: Ամբողջ գնալ-գալը՝ կես/կես կամ $180^0 + 180^0 = 360^0 = 2 \times 230400 =$ 460800 ժամ/ճանապարհ, որը «ամբողջ շրջանն» է՝ գնալն ու ետ դառնալը եւ 19200 օր է, որ սխեմատիկ տարվա՝ 360 օր «ժամանակով»,- լինում է 640 ամիս, որը 53.333 ≅ 54 տարի է: Սա արեւի պարբերական ***խավարման*** փուլն է, որ կրկնվում է ամեն ***53 + 1/3*** կամ՝ 54 տարին մեկ: Այս մասին, որ լուսինը հարավային մակածում լիալուսին է եւ իր դիրքով փակում է արեւը հիշատակվում է շումերական Ուրուկում գտնված կանիֆորմի սալիկի վրայի տեքստում *(F. THUREAU-DANGIN, Tabletts d'Uruk, Paris 1922, Text no. 14': B. L. van der Warden, Science Awakening II, Oxford Univ. Press, N.Y. 1974, p. 103)*: Հայկական էպոսում տեղ գտած խնդիրը, ինչպես շումերական հաշվարկները, արված են ՇԱՐ = 3600-ի հիմքով*[2]: Փաստորեն, Փոքր Մհերի 54 տարեփուլը մենք ստացանք՝ **480 x 480 x 2** գործողությամբ, բառացի հետեւելով էպոսի վերջաբանին: Եթե 54 տարին բազմապատկենք եւս 480 թվով, որ համակարգի կարգակառույցն է միտում՝ 4-8-0, ապա կստանանք՝ Precession-ի երեւույթով պայմանավորված, տիեզերական մեծ տարվա 25920 ժամանակը:



Արեւի եւ Լուսնի շավիղներ:
Լուսնի հարավ. մակած→ ♌
Հյուսիսային մակած→ ♋

Գծագիր # 2

Այժմ, էպոսի ուղերձում՝ ***«Ձիու տոլ, մեծ սինու կանդար ի»*** արտահայտությունը, քննարկենք հնում գոյություն ունեցող

*1, - Հակոբ Մանանդյան, «Երկեր» հ. Զ, 1985թ., Երեւան, էջ 250:
*2,- B. L. van der Warden, Science Awakening II, Oxford Univ., N.Y. 1974, p. 103.



sidi = քառակուսու կողմ

Գծագիր # 1

չափման միավորներով: Բայց, նախ եւ առաջ պետք է ասել, որ Հայաստանում այս կշիռների ու չափերի մասին ***գրավոր*** հիշատակումներ կան դեռեւս 5-րդ դարից, որովհետեւ, ինչպես Հակոբ Մանանդյանն է ընդգծում՝ *«Թարգմանական հին գրականության մեջ, եւ մասնավորապես, Հին եւ Նոր Կտակարանների հայերեն թարգմանություններում՝ կշիռների եւ չափերի օտար անունները հայերենում փոխարինված են հաճախ Հայաստանում գործածվող կշիռների ու չափերի անուններով»*[*1]: Քանի-որ՝ *«Հայաստանում գործածվող կշիռներն եւ չափերն իրենց քաշով ու տարողությամբ տարբեր են եբրայական ու այլ սիստեմների կշիռներից ու չափերից»*[*2]:

Այժմ, ***«Ձիու սոլ, մեծ սինու կանդար ի»*** դարձվածքը ներկայացնենք 7-րդ դարի մատենագիր, աստղագետ, տոմարագետ, երկրաչափ եւ ***թաքնագետ*** Անանիա Շիրակացու *(ինքն իր մասին ասում է՝ **ծածկագետ**)*[*3] չափերով եւ կշիռներով, որոնք ուղղակի առնչվում են «Սասնա Ծռեր» էպոսում Փոքր Միհրի Համբարձման գիշերը ելնելու հետ:



X^2= sidi ^{2} = mehr =
= քառակուսու մակերես:
Եթե sidi-ն = 60, ապա
ունենում ենք 60 x 60
սրբազան չափը՝ մեկ IKU-ն,
եւ mehr-ը դառնում է
սրբազան քառակուսու
մակերեսը՝ 3600 (60x60):

Գծագիր # 2

«Սասնա Ծռեր» էպոսում Կանդարը՝ Կենդինարն է. *«Կենդինարն 7200 դահեկան: Եւ մանր մանր բաժանելով զկենդինարն, լինի ... փշիտ 230400, գարեհատ 691200»*[*4]: *«Գարեհատ կշխռների ամենափոքր միավորն է, որով Անանիա Շիրակացին որոշում է իր մյուս կշիռները»*[*5]: 6912 գարեհատը Շիրակացու ամենափոքր կշռի միավորն է[*6]:

«Սասնա Ծռեր» Էպոսում նաեւ կա այս ուղերձը՝

«Երբ ցորեն եղավ քանց մասուր մի,
Ու գարին եղավ քանց ընկույզ մի,
Էն ժամանակ հրամանք կա, որ ելեանք էդտեղեն»[*7]**:**

---

*1, *2,- Հակոբ Մանանդյան, «Երկեր» հ. Զ, 1985թ., Երեւան, էջ 238-239:
*3, - «Հայ մատենագիրներ, Ա. Շիրակացի» 1979թ., Երեւան, էջ 253:
*4, *5, *6,- Հակոբ Մանանդյան, «Երկեր» հ. Զ, 1985թ., Երեւան, էջ 250-251:
6912 գարեհատը x 100 = 691200 = «մեծ գարեհատ», որ Կենդինարն է:
*7, - «Սասունցի Դավիթ», 1989թ., Երեւան, էջ 417:

Ե՞րբ է Փոքր Միհրը դուրս ելնելու քարից: Բերենք 150 պատումներից մի քանի տարբերակներ *1.«Երբ ցորեն եղավ քընց ալուճ ու գարին եղավ քընց մասուր մի»*[*1], *2.«Ձուր ցորենի հատ եղնի մասրի բարա», 3.«Երբ ցորենի հատն եղավ մեկ մասուր»*[*2], *«Հար գորիգն չեղնի մասրի խադար, հար ցորին չեղնի ընդույզի խադար, Միհր տուրս չեղնի զուղրի մեչեն», «Հար գորիգն գ'եղնի կրց մասուր, հար կարին գ'եղնի կրց շգլուր»*[*3], *4.«Ձուր ցորենի խատ եղի քանց մասուր մը»*[*4]: Բոլոր պատումներում եղած վերջաբանները հաշվի առնելով, էպոսի խմբագիրները ստեղծել են հավաքական վերջաբան-ուղերձը: «Ս. Ծ.», հատ. Բ, պատում Ա, *2- «Ս. Ծ.», հատ. Բ, մաս I, պատում Բ, *3- «Ս. Ծ.», հատ. Բ, մաս I, էջ 195-196, *4 - «Ս. Ծ.», հատ. Բ, մաս I, էջ 246:



X^2= sidi ² = mehr =
= քառակուսու մակերես

Գծագիր # 3

Այստեղ, Փոքր Միերի ելնելու թաքնագիտական ուղերձում, 1-ին՝ ***ժամանակը*** զուգահեռաբար աղերսվում է կշռային չափերի հետ, 2-րդ՝ բացահայտ ընդգծվում է ցորենի եւ գարու մեծանալու մասին, 3-րդ՝ Միերի Ագռավաքարից ելնելու խնդրում ժամային եւ կշռույթային հաշվարկների թվերը լիովին համատեղվում են:

Փաստորեն, մեկ Կանդարը *(Կենդինարը)* հավասար է՝ **230400 փշիտի** եւ **6912000 Գարեհատի,** քանի որ մեկ փշիտը ծանր է մեկ գարեգատից երեք անգամ. *«Կշիռ 3 գարեհատաց ըստ պարսկական լեզուի կոչի փշիտ»*[*1]:

Փոքր Միերը 40 ավուր ճանապարհը մեկ ժամում է անցնում: Նրա արագությունը մեկ ժամում՝ 12 x 40 = 480 ժամ/ճանապարհ է: Ըստ էպոսում առկա բառացի ուղերձի՝ 40 օր գնալով հասնում է հողին: 40 օրը՝ 12 x 40 = 480 ժամ է: 40 օրվա նրա անցածը՝ **480 x 480 = 230400 ժ./ճանապարհ,** Միերի անցած ճանապարհն է մինչեւ հողին հասնելը. հողը նրա ծանրությունը չի կարողանում պահել, վերադառնում է:

Էպոսում, ***Գարու*** հետ կապված զուգահեռը նույն բանն է: Ամենափոքր կշռի միավորը՝ ***Գարեհատն*** է: Նրա կշիռը Շիրակացու մոտ ցույց է տրված՝ 6912 գարեհատ: Էպոսում՝ *«Երբ գարին դառնա քանց ընկույզ մի»* դարձվածքը պարզ հասկացնում է՝ ամենափոքր կշռի միավոր **Գարեհատի** (0,04 գրամ) բազմապատկում մինչեւ մեծ գարեհատ՝ **Կանդար**: Գարեհատ՝ 6912 x 1000 = 6912000 = Կանդար: Եվ, **6912000 գարեհատը** հավասար է **230400 փշիտի,** որը հավասար է մեկ **Կանդարի**: **6912000 գարեհատ = 230400 փշիտ = մեկ ԿԱՆԴԱՐ:**



Գծագիր # 1

Մյուս կողմից, **Ցորենի մեկ հասկի** վրա կա 60 հատ ցորենի հատիկ եւ այն հայերենում կոչվում է՝ ***վաթսնավոր (60-ական)***[*2]: Գարին հացաբույս է: Շումերական չափման միավոր GAR-ը՝ 60 է, իսկ GAR² = 60 x 60 = 3600, որ շումերական՝ ŠAR = 3600 տարեշրջանի թիվն է, որի պատկերագիրը՝ սիմվոլը շրջանաձեւակն է: Սա հայերեն ՇԱՐ-ն է, հունական ՍԱՐՈՍ-ն է եւ այլն: Ուրեմն, GAR = 60; GAR² = ŠAR = 3600 = **mehr**: Այսինքն, թվային համակարգում թե՛

*1,- Հակոբ Մանանդյան, «Երկեր» հ. Զ, 1985թ., Երեւան, էջ 238-239:
*2,- Ա. Դավթյան, բանավոր:



Գծագիր # 4

sidi ² = 60 x 60 = mehr =3600= = քառակուսու մակերես, mher x 6 = 21600 = = խորանարդի մակերես: mher x 6 x 2 = 43200 = = խորանարդի ներքին եւ արտաքին մակերեսների գումարի, որ մեր 12 ժամն է՝ վայրկյաններով ու նաեւ տիեզերական լոգոսի՝ Բրահմի կյանքի 12 ժամն է: 4միլրդ 320 միլիոն տարին, որ Բրահմի ցերեկային 12 ժամն է, արտահայտված է նույն 60² հիմքով, եւ վայրկյանը որպես տարածքուլ ներկայացնելով:

ժամային թվերը, թե՛ երկրաչափական թվերը՝ այս դեպքում սրբազան չափի մակերեսը, լիովին հարմարեցված են համակարգային նույն սխեմայով, որտեղ ***ŠAR***-ը եւ ***mehr/Մհերը*** ունեն նույն թվային արժեքները, որ ***ցորեն-գարու*** հիմքով է հաշվվում եւ որը «Սասնա Ծռեր» էպոսում Փոքր Մհերի մասին է: Հարց է առաջանում, 5-6 հազար տարի առաջ պատմության թատերաբեմից «վերացած» շումերական հաշվարկներն ու տերմինները ի՞նչ գործ ունեն հայկական «Սասնա Ծռեր» էպոսում: Պատասխանը մեկն է. հայ ժողովուրդը շումերական ժամանակներից այս հնագույն իմաստնության ժառանգորդն է:

Համբարձման տոնը հին հեթանոսական Ծաղկամոր տոնն է, որ քրիստոնեական եկեղեցին վերափոխել է որպես՝ ***համբարձման օր:*** Իսկ ավելի ճիշտ՝ ժողովրդի մեջ մեծ ժողովրդականություն վայելող հնագույն այս տոնը հարմարեցվել է նոր կրոնի համբարձման օրվա հետ, պահպանելով հեթանոսական ճիշտ ամիսն ու օրը, քանի որ այսպես թե այնպես, Մայիս 17-18-ին, ժողովուրդը տոնում էր հազարամյակներով հաստատված իր ծիսական տոնը, եւ այն մոռացության տալու միակ հնարավոր տարբերակը՝ այդ օրը շաղկապել ու հարմարացնելն էր նոր կրոնում տեղ գտած որեւէ ***«դեպքի»*** հետ:

Համբարձման օրը՝ Մայիս 17-18, հին հեթանոսական երրորդ ամիսն է *(սկսած II հազարամյակից՝ «Խոյ», «Ցուլ», «Երկվորյակներ»)*, երբ արեգակը մտնում էր «Երկվորյակների» համաստեղություն: Այս մասին կա նաեւ 7-րդ դարի աստղագետ եւ մաթեմատիկոս Ա. Շիրակացու մոտ *(տես՝ «Հայ մատենագիրներ», Երեւան, 1979թ., էջ 250)*: «Երկվորյակների» համաստեղությունում է գտնվում ***լուսնի հյուսիսային մակածը:*** Փաստորեն, Փոքր Մհերը համբարձման գիշերը **Ագռավաքար-երկնքից** ելնում է «Երկվորյակների» տնից, որտեղ գտնվում է ***լուսնի հյուսիսային մակածը*** եւ հասնում է մինչեւ «Աղեղնավորի - **3⁰**», որ ***լուսնի հրավային մակածն է:***

«Լուսնի մակածը (հանգուցային կետը),- երկնքում արեւի եւ լուսնի ուղեծրերի խաչաձեւման տեղանքներն են, որ



Արեւի եւ Լուսնի շավիղներ:
Լուսնի հարավ. մակած→ ☊
Հյուսիսային մակած→ ♈

ցուցում է, թե որտեղ կարող է խավարում տեղի ունենալ: Լուսնի եւ Արեւի ուղեծրերը հիմնականում նույնն են, սակայն այս երկուսի շավիղները փոքր շեղում ունեն, այլապես մենք ամիսը երկու անգամ խավարման երեւութի ականատեսը կլինեինք: Այս երկուսի՝ լուսնի եւ արեւի շավիղները եւ լուսնի երկու մակածները (հյուսիս. եւ հարավ.) վեդայական աստղագիտության մեջ ներկայանում են որպես երկնային գըլխատված վիշապ, որի գլխի մասը կոչվում է՝ Ռահու, իսկ պոչաիրանը՝ Կետու, եւ վեդայական արաչության մասին միֆապատումը կոչվում է՝ «Ծիր Կաթնի խնոցի»: Լուսնի հարավային մակածը գտնվում է «Աղեղնավորի -3⁰» եւ «Կարիճի» համաստեղության արանքում, «Կարիճի» պոչածայրում, իսկ հյուսիսային մակածը «Երկվորյակների» համաստեղությունում»*[1]:

«Արեւելյան համակարգում, լուսնի մակածները՝ նորալուսնից միչեւ նորալուսին, կոչվում է՝ Վիշապ-Դրակոնյան ամիս, քանի որ ըստ աստղաբախշական միֆոլոգիայի, Վիշապը կուլ է տալիս արեւը՝ խավարման ժամանակ»*[2]:



Լուսնի հյուսիսային մակածը գտնըվում է «Երկվորյակների» համաստեղությունում, իսկ հարավայի մակածը գտնվում է՝ «Կարիճի» եւ «Աղեղնավորի» արանքում: Աններեւույթ Ռահու-Կետու վիշապի գլխատումով (Սանասար), արեգակը քաջանց՝ ոգիների աշխարհից արտահայտվում է արտաշխարհում: Գլխատված վիշապը փորձում է կուլ տալ արեգակին եւ չի հաջողում: Ժամանակների վերջում, երբ նրա մարմին եւ գլուխը միանան, ապա նա կլլելու է արեգակը:

«Արեւելյան համակարգում, այս անդրոգեն վիշապի գլխամասը կոչվում է՝ ***Ռահու,*** պոչամասը՝ ***Կետու:*** Ըստ հնագույն միֆոլոգիայի, եթե հանկարծ վիշապի կտրված գլուխն ու պոչը նորից միանան, ապա աշխարհը կկործանվի: Արեւմտյան աստղագիտության մեջ լուսնի պտույտը, ընթացքը, առաջին մակածից մինչեւ ետ՝ նույն մակածը, նույնպես կոչվում է ***դրակոնյան ամիս:*** Հնագույն միֆոլոգիայում, առաջին աստվածությունն այս վիշապի գլուխը կտրելով հաստատում է գոյաբանական աշխարհի արարման սկիզբը: «Ռիգ Վեդայի» **Trita Āptya**-ն, նույն ինքը՝ «Ավեստայի» **Thraētaona**-ն, Մովսես Խորենացաու ներկայացրած վիշապ Aži Dahāka-ին հաղթող **Տիգրանը,** որ նույն՝ **Ինդրան** է, նո՛ւյն «Սասնա Ծռեր» էպոսի **Անդրամէլեքն** է, իրականում, Հայկական լեռնաշխարհում, մ.թ.ա. II հազարամյակում, Հայասա երկրի հավատամքային պանթեոնի աստվածությունն՝ **Terittitüniš**-ն է: «Սասնա Ծռեր» էպոսում նա գլխատում է անդրաշխարհի վիշապին եւ արե-

*1, - Jhon Major Jenkins, «Galactic Alignment», 2002, USA, p. 75.
*2, - B. L. van der Warden, Science Awakening II, 1974, Oxford, p. 6.



գակ՝ Քառասուն Ճյուղ Դեղձուն Ծամին հմայքների աշխարհից փախցնելով, տիեզերական արարչության սկիզբն է դնում: Փաստորեն, 12 համաստեղությունների շրջանաշրջայում անտեսանելի գլխատված վիշապը ամեն 54 տարին մեկ փորձում է կուլ տալ արեգակին եւ չի հաջողում: Ըստ հնագույն միստիցիզմի, Ժամանակների վերջում, վիշապի ***Ռահու գլուխը*** եւ ***Կետու պոչամասը*** վերամիավորվելու է, եւ այս անգամ նա կկարողանա կուլ տալ արեգակը, որի «արդյունքում» աշխարհի վերջը կլինի: Այս վիշապը, որն ըստ հնագույն աստղաբախշության, լուսնի հյուսիսային եւ հարավային մակածները միտող աստղագիտական երեւույթ է, ըստ 5-րդ դարի հայկական ավանդապատումների՝ Մասիս լեռան քարանձավում բանտված Արտավազդն է, որի դիվային *(վիշապ)* կերպարի եւ ծննդյան մասին պատմահայր Խորենացին ներկայացնում է իր ժամանակի զրուցները. *«Վիշապազունքը մանուկ Արտավազդին գողացան. եւ նրա տեղը դրին դեւ»*[*1]: *«Պառավները սրա մասին զրուցում են, թե արգելված մնում է մի քարանձավի մեջ, երկաթե շղթաներով կապված, երկու շուն կրծում են նրա շղթաները, նա ջանք է անում դուրս գալ եւ աշխարհին վերջ տալ»*[*2]: Արտավազդը Փոքր Միհերի զուգահեռն է: «Սասնա Ծռեր» հնագույն էպոսի պատումներից մեկի համաձայն[*3], Փոքր Միհերի քարայրում է գտնվում ողջ աշխարհի բախտի անիվը՝ «ճախրի ֆալակը», որը «ժամանակների վերջը» ցուցող անիվ է: Միհերը նայելով իր առջեւ դրված «ճախրի ֆալակին», սպասում է իր ժամին, որ դուրս ելնի ու աշխարհը կործանի:



Արեւի եւ Լուսնի շավիղներ:
Լուսնի հարավ. մակած→ ☊
Հյուսիսային մակած→ ☋



Աշխարհի վերջի մասին խորհրդաբանությունը քրիստո-

*1,*2, - «Մովսես Խորենացի, «Հայոց պատմություն», 1981թ., Երեւան, էջ 233:
*3,- «Սասնա Ծռեր», հ. Բ, մաս I, էջ 5:



Լուսնի հյուսիսային մակածը գտնվում է «Երկվորյակների» համաստեղությունում, իսկ հարավայի մակածը գտնվում է՝ «Կարիճի» եւ «Աղեղնավորի» արանքում: Աներեւույթ Ռահու-Կետու վիշապի գլխատումով (Սանասար), արեգակը քաջանց՝ ոգիների աշխարհից արտահայտվում է արտաշխարհում: Գլխատված վիշապը փորձում է կուլ տալ արեգակին եւ չի հաջողում: Ժամանակների վերջում, երբ նրա մարմին եւ գլուխը միանան, ապա նա կլլելու է արեգակը:

նեության մեջ կոչվում է «դատաստանի օր», որից առաջ լինելու է «եկեղեցու հափշտակում», այսինքն, հավատացյալների «վերափոխում» առ Աստված: Եգիպտական՝ հերմեսյան կարգականոնում, **«վերջին օրը»** կոչվում է «բարձրագույն հրաշանքի օր»: Փաստորեն, երկու տեսակետերն իրար չեն հակասում, հավատացյալների համար այն իսկապես «հրաշանքի լավ օր» է, իսկ անհավատների համար՝ «սարսափելի օր»:

13-րդ դարի աստվածագետ Գրիգոր Տաթեւացին, իր «Հասմավուրք» աշխատության մեջ, գալիք «վերջին օրը» ներկայացնում է հետեւյալ կերպ. երեք օր շարունակ աշխարհ-հի մեկ կեսում լինելու է գիշեր, մյուս կեսում ցերեկ *(ուրեմն երկրագունդը երեք օր իր առանցքի շուրջ չի՞ պտտվելու, կա՞նգ է առնելու):* Այս նկարագրությունը շատ նման է ամերիկյան ՆԱՍԱ-ի գիտնական, ռադիոֆիզիկոս Գ. Բրադենի վարկածին (Gregg Braden, “Awakening To Zero Point”, USA, 1993):

«Աշխարհի վերջի» մասին հնագույն ժամանկներից եկող այս միստիցիզմը լավագույնս եւ ինչ-որ տեղ գիտականորեն պահպանված է «Սասնա Ծռեր» էպոսում: Այն աղեսվում է լուսնի մակածի, խավարման 54 տարեփուլի եւ արեգակնային համակարգի գալակտիկայի կենտրոնին մոտենալու հետ: Գալակտիկայի կենտրոնին արեգակը մոտենալու է 2012 թվականին, եւ կենտրոնի, որտեղ կա սեւ խոռոչ, մեծ գրավիտացիան հնարավոր է, որ կլանի արեգակն իր մոլորակներով հանդերձ: Սա միայն հիպոթեզ է, սակայն «աշխարհի վերջի» հետ կապված աստղագիտական այլաբանությամբ համանման միստիցիզմներով հայտնի են՝ Մայաների եւ վեդայական հավատամքային պատումները: Ջոն Մեյջր Ջեկինսն իր «Galactic Aligment» գրքում գրում է, որ մեր գալակտիկան էլ ունի շարժման ընթացքի մակած, եւ արեւի գալակտիկայի կենտրոնին մոտենալը, իսկապես, տիեզերքի մեր լոկալ համակարգում մեծ փոփոխություններ կարող է առաջ բերել*[1]: Այս մասին հների տեղյակությունը եւ Precession-ի երեւույթով դրա հաշվարկները՝ մի կողմից ապշեցուցիչ է,- գրում է հեղինակը,- մյուս կողմից՝ լուրջ, գիտականորեն հիմնավորված ենթադրությունից բխող աղետի հնարավորության ահազանգ է:

*1,- Jhon Major Jenkins, “Galactic Aligment”, USA, 2002, p. 74-85.



Գծագիր # 1

Վանա քարի արձանագրության թվերը եւ «Սասնա Ծռեր» էպոսում Փոքր Մհերի Ագռավաքարից պարբերաբար ելնելու խնդիրը:

«Սասնա Ծռեր» հնագույն էպոսում Փոքր Մհերի Ագռավաքարից դուրս ելնելու տարեփուլը եւ ուրարտական թագավորության ժամանակների «Մհերի դուռ» կոչված քարի արձանագրությունում տեղ գտած աստվածներին զոհաբերվելիք կենդանիների թվերը համատեղվում են:

Գծագիր #1-ում մենք տեսնում ենք, որ շրջանագծի պարագիծը՝ 460800 ժամ/ճանապարհ կամ՝ 54 տարի է: Սա «Սասնա Ծռեր» էպոսում Փոքր Մհերի Ագռավաքարից պարբերաբար ելնելու եւ նրա անցած ճանապարհի ընթացքն է, ուրեմն, 54 տարի/ճանապարհը շրջանագծի պարագիծն է: Եվ ուրեմն, շրջանագծի տրամագիծը՝ 17 է: ***«17 ցուլ զոհաբերել Հալդիին»***,- հրամայելով ցուցում է «Մհերի Դուռ» կոչված քարաժայռի վրայի արձանագրությունը *(ուրարտական շրջան՝ մ.թ.ա. I հազարամյակ):* Գծագրում շրջանագծի պարագիծը՝ 54, համապատասխանում է «Մհերի դռան» աստվածների ցուցակում երեք գլխավոր աստվածություններին՝ Հալդի, Թեյշեբա, Շիվինի, զոհաբերվող ոչխարների թվաքանակին (34 + 12 + 8 = 54): 54 տարեփուլով խավարման երեւույթը քրմերն ուղղակի կապել են երկրագնդի առանցքի տատանումով պայմանավորված տիեզերական մեծ՝ մեկ ու կես տարվա հետ: Երկրագնդի առանցքի տատանումը՝ մեկ ու կես փուլ է, այսինքն, տիեզերական մեծ տարի՝ 25920, գումարած նրա կեսը՝ 12960 = 25920 + 12960 = 38880 տարի: 38880 տարվա ընթացքում, ըստ հների, կա 720 խավարման փուլ՝ 720 x 54 = 38880: Էպոսում Մհերի մինչեւ հողին հասնելը, գծագրում A-ից B կետ՝ 230400 ժամ/ ճանապարհ է: Ամբողջ ընթացքը՝ 2 x 23040 = 460800 = ժամ/ճանապարհ: Մհերի ընթացքի թիվը՝ 23040, եւ նրա վերադարձի թվի հակադարձությունը՝ 04032, զրոների աբստրակտումով՝ 432ϕ234, իրար գումարելուց ստանում ենք՝ հին հեթանոսական ժամանակներում ընդունված ***Արեւ-Արփիի*** թիվ-կոդը՝ 666, որ Նոր Կտարանում տեղ գտած «666՝ գազանի թիվն» է, եւ շումերական վեցական համակարգով «սրբազան հիմնաթիվն» է՝ 111 = 600 + 60 + 6 = 666 *(որտեղ՝ 1 = 6, 10 = 60, 100 = 600 եւ 666-ը հայոց այբուբենի ներքին կառուցվածքի սխեմատիկ թիվն է):*



Արեւի եւ Լուսնի շավիղներ:
Լուսնի հարավ. մակած→ ♋
Հյուսիսային մակած→ ♍

Գառնի. Միհրի տաճարի հատակագծի խորհրդաբանական չափերի վերլուծումները (տես նկ. #1, #2, #3, #4):

1) Տաճարն ունի 8 աստիճաններ:

Խորհրդաբանությունը՝

*/հավատամքային **1 ➔ 8** համակարգ: Միհրը 8-րդ դիցն է /:*

2) Տաճարի 24 սյուները կենտրոնական ուղղահայացի նկատմամբ սիմետրիկ 12 + 12, կես/կես տեղադրված համադրությունն ունեն:

Խորհրդաբանությունը՝

/ ներկայացնում է գիշերահավասարներին օրվա 24 ժամը՝ 12 գիշերային եւ 12 օրվա ժամերի կտրվածքով, որ ներկայացնում է Միհր-Միհրին որպես «Լուսին եւ արեւ»՝ Մահա-Արա /:

3) Գծ.#2-ում, տաճարի ֆասադը ներկայանում է եռանկյունին քառակուսու վրա:

Խորհրդաբանությունը՝

*Տիեզերքի արարման մասին հնագույն հավատամքային կարգակառույցը արտահայտվել է նաեւ հին հեթանոսական տաճարի, ինչպես նաեւ քրիստոն-նեական եկեղեցու գմբեթի ճարտարապետության մեջ՝ որպես եռանկյունը քառակուսու վրա մոտեցում: *Հուր եւ ջուր՝ հայր եւ մայր. եռանկյունին՝ արական է, քառակուսին՝ իգական է: Սիմվոլները՝ հուրը որպես եռանկյունի, ջուրը որպես քառակուսի: *Երեքը չորսի վրա՝«Արական եռանկյունու» հիմքը «իգական քառակուսին» է:*

4) Գծ.#4- ում, տաճարի (մեծ քառակուսու) լայնություն/երկարություն չափային հարաբերությունը կարող է ներկայանալ՝ 6 x 9 (AD = 6; AB = 9): Տաճարի փոքր քառակուսու չափային հարաբերությունն է՝ 4 x 6 = 24; EH=4, EF=6: Համապատասխանաբար՝ մեծ քառակուսին 6 x 9 = 54, փոքրը՝ 4 x 6 = 24, իրար նկատմամբ 2,1/4 կամ 0.44444 հարաբերության մեջ են, եւ մեծի մակերեսը 2.25 անգամ մեծ է փոքրի մակերեսից: Նկ. #4 - ում, LBCM-ի մակերեսը՝ 6 x 8 = 48:

Խորհրդաբանությունը՝

54 թիվը (մեծ քառակուսու մակերեսը) որպես *54 տարվա փուլ՝ ներկայացնում է, որ ամեն 54 տարին մեկ, նույն օրը տեղի է ունենում խավարման երեւույթ: Հույն հեղինակներն այս փուլը կոչում էին՝ «Exeligmos», հույն հեղինակ Գեմինոսը վկայում է, որ սրա հեղինակները Քաղդեացիներն են (Isagoge, ed. Manitius, chapter 18), որի մասին նաեւ հիշատակվում է շումերական Ուրուկում գտնված կանիֆորմի սալիկի վրայի տեքստում (F. THUREAU-DANGIN, Tabletts d'Uruk, Paris 1922, Text no. 14': B. L. van der Warden, Science Awakening II, Oxford Univ. Press, N.Y. 1974, p. 103): Շումերական հաշվարկները արված են ՇԱՐ = 3600-ի հիմքով:*

Միհր/Մրհէր/Միթրայի տաճարը եւ հատակագիծը (մ. թ. ա. 1-ին դար, Գառնի)



Գծ. #1



Գծ. #2

Գծ. #3



Գծ. #4



Հատակագիծը՝ Ա. Սահինյանի

Նկ. 62. Գառնի. Անտիկ տաճար, հատակագիծ, վերակազմություն



Գծ. #4

Փաստորեն, Փոքր Մհերի ընթացքի 54 տարեփուլը մենք ստացանք՝ 480 x 480 x 2 գործողությամբ, բառացի հետեւելով էպոսի վերջաբանին: Եթե 54 տարին բազմապատկենք եւս 480 *(480 ժամ/ճանապարհը Փոքր Մհերի ընթացքի արագությունն է)* թվով, ապա կստանանք՝ 25920 տարի, որը Precession-ի երեւույթով, տիեզերական մեծ տարվա ժամանակն է: Գծ. #4-ում, եթե տաճարի բարձրությունը հավասար է 24 սյուներով «կազմած» քառակուսու LB երկարության հետ, որը հելլենական կոչված ճարտարապետության սկզբունքներից է, ապա LBCM-ի մակերեսը՝ 48 է, որտեղ LB = 8: Եթե ընդունենք, որ հիմքի մակերեսը՝ ABCD = 6 x 9 = 54 է ու աղերսվում է 54 տարին մեկ խավարման փուլի հետ, եւ այն բազմապատկենք LBCM մակերեսի հետ ու մեծացնենք 10 անգամ, ապա կստանաք տիեզերական մեծ տարվա մեկ շրջափուլը՝ 25920 տարի:

Փոքր Մհերի շարժման արագությունը եւ հնդ-արիական Բրահմի կյանքի տեւողությունը:

«Սասնա Տուն» հնագույն էպոսում տեղ գտած Մհերի արագության մասին «դպրոցական» խնդիրն, իրականում, *հնդ-արիական՝ վեդայական* գրականության մեջ, գերագույն էակի՝ Բրահմայի կյանքի տեւողության հետ է աղերսվում: Մհերի ընթացքի 12 ժամը համապատասխանում է գերագույն աստվածություն Բրահմի 12 ժամի հետ: Մհերի արագությունը վայրկյաններով՝ 480ժամ/ճանա-պարհ x 3600*(1 ժամը = 3600 վրկ.)* = 1728000 վրկ./ժամ է, որ Բրահմի մեկ օրվա առաջին կեսի՝ Սաթիա Յուգ = ոսկյա շրջանի՝ 1,728 000 000 = 60^3 x 8, հետ է համատեղվում, նույնանում: Մհերի արագությունը բազմապատկելով 40-ով, քանի որ 360 օրը կամ՝ 360^0-ը՝ 9 x 40 է, ստանում ենք Precession-ի երեւույթով մեկ զոդիակով սահելու ժամանակը՝ 30^0 = 54 տարի x 40 = 2160 տարի: 21600-ը նաեւ սրբազան խորանարդի մակերեսի հետ աղերսվող թիվն է՝ 60^2 x 6, քանի որ մեկ IKU-ն՝ 60 x 60, շումերական սրբազան չափն է:

Մհերը Ագռավաքարից ելնում է տարվա մեջ ***համբարձման գիշերը,*** որ հին հեթանոսական «Ծաղկամոր տոնն էր» եւ ունի ելնելու ու վերադարձի երկու ***սահաթ՝*** ժամանակ, երկու կես պտտույտները՝ մեկ լրիվ շրջան է:*[1]: Նրա անցումը եւ վերադարձն իրար հետ՝ 53 եւ 1/3տարի, մոտավորապես 54 տարի է*[2]: Արեւը եւ լուսինը յուրաքանչյուրը կես/կես պտույտով՝ 180^0+180^0**,** ամեն 54 տարին մեկ

*1 - Պատահական չէ, որ վեդայական կարգականոնում, ինչպես նաեւ հայկական էպոսում երկու՝ Միթրա եւ Վարունա, Մեծ Մհեր եւ Փոքր Մհեր իպոստասները ներկայացնում են՝ արեւ եւ լուսին, գիշեր եւ ցերեկ դուալիզմը:

*2 - B. L. van der Warden, Science Awakening II, Oxford Univ. Press, N.Y. 1974, p. 103.

«հանդիպելով» ստեղծում են ***խավարման երեւույթ:***

Ըստ էպոսի, Փոքր Մհերի Ագռավաքարից տարին երկու անգամ ելնելը *(Համբաձման եւ Վարդեւորի տոներին)* պատահական չէ՝ 54 x 2 = 108: 1008 կամ 108 թիվը վեդայական հոգեւոր ուսմունքում ներկայացնում է՝ անմահության գաղափարը, իսկ արեւմտյան՝ Պյութագորյան դպրոցում, ներկայացնում է՝ անմահության եւ շրջապտույտով վերադարձի գաղափարը: 108 թիվը՝ հնագույն թաքնագիտության մեջ՝ 1 > 8 համակարգն է, որ հայր Աստծո լիարժեք, վերջին արտահայտություն՝ որդին է, որն իրականում հոր արտացոլանքն է, նյութական տիեզերքն է, որ չորս փուլերով արտահայտվում է վերջնական ամբողջությամբ: 108 թվի կենտրոնում **միջանկյալ զերոն՝** պոտենցիալ ներունակությունն է՝ Անհունն է, թիվ **մեկը՝** Հայր աստվածությունն է, թիվ **ութը՝** 8-րդ վերջին աստվածությունն է, որ ավարտում է Ոգին նյութի մեջ տիեզերական փուլը: Նա՝ Փոքր Մհեր, Քրիստոս, Հորոս եւ այլն, Հայր Աստծո պատկերով եւ նմանությամբ է *(«հայր Աստծո արտացոլանքն է»),* սակայն՝ 1/8 հարաբերությամբ՝ ութ անգամ փոքր է:

Եւս մի կարեւոր հանգամանք. հնագույն հավատամքային (1 + 8) համակարգում, որտեղ «1»-ը լռությունն է, չարտահայտված Անհունն է, որը «ստեղծում» է իր ութ արտահայտված կողմերը, Փոքր Մհերը 8-րդ վերջին աստվածությունն է, եւ դեպի ետ՝ դեպի նախնական դիրք, վերադարձ «ապահովող» իպոստասն է: Պարզ պատկերացնելու համար, լավագույն զուգահեռը երաժշտական ստեղնաշարային հնչյուններն են: Եթե «սկիզբը» ընդունենք լռությունը, որից հետո՝ ***դո**, ռե, մի, ֆա, սոլ, լա, սի, **դո**,* ապա պարզ է դառնում, որ առաջին եւ վերջին նոտաները *(հնչյունները, եթե չհաշվենք «լռությունը» որպես «1»)* «դո» հնչյունն է: Վերջին «դո»-ն՝ Փոքր Մհերը *(Հորոս, Քրիստոս, Դիոնիսիոս եւ այլն, համարժեք, նույնական իպոստաս կերպարներ են)* տիեզերական «ԲԱՆ»-ն է, որ իր հոր՝ գերագույն Աստծո նմանակն է, խոսքն է, միածին որդին է՝ 8-րդ «դո»-ն եւ 1- ին «դո»-ն, երկուսն էլ «դո» են, սակայն՝ մեկը բարձր, մյուսը ցածր տոնայնություններում:

Հնագույն շումերական շրջանը՝ 3600 թվային արժեքով, փաստորեն, նրանց 60-ական եւ 10-ական թվային հիմնարար համակարգերի համաձայն՝ 1 րոպ.= 60 վրկ. եւ 60 րոպ. = 3600 վրկ. = 1 ժամ, ժամանակի չափման ու հաշվարկման մոտեցումն է*[1]: Հայկական «Սասնա Ծռեր» էպոսը պահպանել եւ ընդգծում է նաեւ Փոքր Մհերի «երկնային դիցին հատուկ» կյանքի ժամանակը: Լ. Մկրտչյանը ճիշտ է նկատել. ***«Ժայռում, Մհերի անցկացրած մեկ ակնթարթը հավասար է, ինչպես պարզվում է, երկրի վրա մարդկանց ապրած մեկ տարվան»***[2]:

---

*1 - Dick Teresi, “Lost Discoveries”, USA, 2002, p. 48-50.

*2 - «Սասունցի Դավիթ», Եր., 1989թ., Լ. Մկրտչյանի Առաջաբանը, էջ 55:

«Մոկացի Հովանի (գրի է առել ու 1892 թվականին հրատարակել է Գ. Հովսեփյանը)[*1] *եւ Մարտիրոս Մուրադյանի* (1972 թվականին գրի են առել Հ. Հարությունյանն ու Ա. Սահակյանը) *պատումների համաձայն, Միերի ժայռի մեջ է հայտնվում կրակ բերելու ուղարկված մի աղջիկ. Միերի դուռը բաց է եղել եւ աղջիկը գնացել է դեպի ժայռի մեջ վառվող կրակը (սա եւս մի վկայություն է այն բանի, որ քարի, ժայռի մեջ կրակ է ամփոփված): Երկրի վրա անցնում է մի տարի, իսկ աղջիկը չի վերադառնում*[*2]*: Ծնողները (ըստ Մ. Մուրադյանի պատումի) նրան հոգեհանգիստ են կատարում: Ուղիղ մեկ տարի անց աղջիկը վերադառնում է ու կրակ է բերում: Նա զարմանում է, երբ ասում են, որ մի ամբողջ տարի բացակայել է»*[*3]*:*

Խեր ասաց.- Ախչիկ,
Էսիկ տարին թրմրմավ, տու հո՞ւր էր կացի:
Ախչիկ էսաց.- Խերիկ, չէ՞ ես նուր կացի,
Ճրագ կպուցիր, դարձիր իմ,
Իսկի չեմ նստիր էնտեղ[*4]*:*

Տիեզերական Բրահմայի *(գերագույն էակի)* ցերեկային 12 ժամերը *(որի ընթացքում արտահայտվում է նյութական տիեզերքը)* մարդկային 4 մլրդ. 320 մլն. տարիների քանակությունն է: Այսինքն, Բրահմայի կյանքի մեկ օրվա տեւողության հիմքում «ընկած» է օրվա ժամերի թիվը՝ արտահայտված վայրկյաններով, ընդունելով, որ Բրահմայի 1 վրկ. = մարդկային 1 տարվա, ապա մեծացնելով այն՝ «հաշվարկում» էին, «ստանում» էին 4 մլրդ. 320 մլն. թիվը, որը թե՛ նյութական տիեզերքի արտահայտման ժամանակի լայնությունն է եւ թե՛ Բրահմայի ցերեկային 12 ժամը: Մեկ ժամը = 3600 վայրկյանի, Մեկ օրը՝ օրվա 24 ժամը վայրկյաններով արտահայտած՝ 3600 x 24 = 86400 է: Բրահմի կյանքի սխեմատիկ մեկ տարին՝ 360 օրը, վայրկյաններով արտահայտված՝ 86400 x 360 = 31104000 է: Բրահմն ապրում է 100 տարի, որ վայրկյաններով արտահայտված՝ 3110400000 է, որը մեծացնելով 10000 անգամ *(սանսկրիտ տարբեր տեքստերում Բրահմի կյանքի տեւողությունը ներկայացված է՝ 100, 1000, 10000 տարիներով)*, կստանանք վեդայական ուսմունքում մատնանշած Բրահմի կյանքի տեւողությունը՝ 311040000000000: Բրահմի կամ Փոքր Միերի մեկ ակնընթարթը մարդկային կյանքի մեկ տարին է:

Այս մոտեցմամբ, Գառնիի Միհրի տաճարի 12 սյուների խորհրդաբանությունը ժամային մոտեցմամբ՝ 4 մլրդ. 320 մլն. մարդկային տարի (ցերեկ), մյուս 12 սյուները՝ 12 գիշերային ժամեր՝ 4 մլրդ. 320 մլն. մարդկային տարի (գիշեր), եւ 24 սյուն/ժամ = 2 x 4 մլրդ. 320 մլն. տարի է (ցերեկ + գիշեր) =

*1, - Ա. Ղանալանյան, «Ավանդապատում», էջ 41:
*2,- «Սասնա Ծռեր», հատոր Ա, էջ 244-245:
*3,- «Սասնա Ծռեր», հատոր Գ, էջ 55-56:
*4,- «Սասնա Ծռեր», հատոր Ա, էջ 245:

8մլրդ. 640 միլիոն մարդկային տարի:

Բրահմայական համակարգում թվային այս համակարգերը Միջագետքյան ծագում ունեն*[1], որ խորանում են մինչեւ շումերական ժամանակներ:

Վերեւում արդեն ասվել է, որ հայկական լեռնաշխարհի Խեթական եւ Միտանիական արքաների արձանագրված բանակցություններում (մ.թ.ա. 15-րդ դար), վկա կանչված մեծ աստվածների անունների շարքում է նաեւ Միհր/Միթրա աստվածության անունը, երբ մ.թ.ա. 15-րդ դարում, նույն աստվածության պաշտամունքն իրանական տարածքում բացակայում է:

Տարվա մեջ գարնանային ու աշնանային գիշերահավասարների եւ ձմեռային ու ամառային արեւադարձերի ժամանակները, երբ ***արեւը*** ելնում է՝ «Ցուլ», «Կարիճ», «Զրհոս», «Առյուծ», կարդինալ համաստեղություններից, ժամանակագրությամբ խորանում է մինչեւ 7-9 հազարամյակների խորքերը, որ հետո դարձել է կրոնական միստիցիզմ՝ քրիստոնեության մեջ, Կաբալայում եւ այլն:

«Համբարձման տոնն» իրականում եղել է հին հեթանոսական տոն: Այն կոչվել է «Ծաղկամոր տոն»: Համբարձման օրը նաեւ վիճակահանություն էր լինում, այսինքն ծիսակատարությամբ փորձում էին գուշակել իրենց բախտը, հատկապես՝ նորատի աղջիկներն ու նորահարսները: Հավատում էին, թե լույս համբարձման գիշերը մի վայրկյան ջրերն անշարժանում են եւ ընդհակառակը՝ երկինք ու երկիր, լեռ ու քար, ծառ ու ծաղիկ սկսում են շարժվել եւ միմյանց ողջունել: Այս կախարդական վայրկյանին բացվում է եւ Մհերի դուռը ու կարելի է մտնել նրա քարայրը, կամ ինքը՝ Մհերն իր ձիով դուրս է գալիս աշխարհը դիտելու («Սասնա Ծռեր», Երեւան, 1951, հատ. Բ, էջ 849): Մինչեւ 19-րդ դարի վերջերը Սասնո գյուղերում այս ծիսական տոնը պահպանվել էր:

Տիեզերածավալման դարաշրջանները Սասնա Ծռեր Էպոսում *(էպոխաները)*:

Բրահմայի օրվա թվերը՝ 12 ժամը եւ 4 մահայուգաների տեւողությունը, որը փաստորեն, Միջագետքյան ծագում ունի *(տես՝ B. L. van der Warden, Science Awakening),* իրականում հայկական էպոսի դիցերի թվերն են: Սանասար-Սարասար = 129600000 թիվը*[2], փաստորեն, ցուցում է բրահմայական ***Տրետա Յուգա*** ժամանակահատվածը՝ 60^3 x 6, որը ***Կրիտա Յուգայից*** մինչեւ ***Կալի Յուգա*** «անկման» կամ «նյութական աշխարհի» վերջնական

*1,- B. L. van der Warden, Science Awakening II, Oxford Univ. Press, N.Y. 1974, p. 103.
*2,- Տես՝ «Աստվածների անունները որպես թվային արժեքներ» բաժինը:



1, 10, 60, 600, 3600 թվերի շումերական պատկերագրերը եւ բառատերմինները: / D. Teresi, "Lost Discoveries", USA, 2002, p. 47-49

ձեւավորման շրջանն է: Գերագույն էակի ցերեկային 12 ժամերի ընթացքում, երբ նա արթուն է, արարվում է տիեզերքը: Բրահմի 12 ժամերը բաժանվում են չորս մասի՝ ***չորս Յուգաների,*** որ ներկայանում են որպես՝ ***ոսկյա, արծաթյա, պղնձյա եւ երկաթյա*** ժամանակաշրջանտեր: «Սասնա Ծռեր» էպոսում ընդգծվում է Սանասարի «արծաթաստվածություն» լինելը*[1]: ***Արծաթ*** ասվածություն Սանասարը գնում է Դեղձունի ***«պղնձե քաղաք»*** եւ փախցնելով կախարդ Քառսուն Ճյուղ Ծամ Դեղձունին, ամուսնանում է նրա հետ, որը տիեզերական նախաձուն է: Այսինքն, հայկական էպոսում բացահայտ ընդգծվում է՝ ***Տրնտա Յուգայից*** (արծաթ) անցում դեպի ***Դվափարա Յուգա*** (բրոնզ կամ պղինձ) ժամանակաշրջան: ***Սանասար*** կամ ***Սարասար*** անունը, որի ստուգաբանությունն ու վերծանությունը բացահայտում են նրա թվով արտահայտված տիեզերական էպոխա լինելը, թիվ է՝ 60^3 x 6 = 1296000*[2], եւ նրա, Պղնձե թագավորությունից *(պղինձ-բրոնզ ժամանակաշրջան)* «աղջիկ փախցնելը», բանալին է ամբողջ համակառույցը վերականգնելու համար: Հնագույն հայկական էպոսի համարյա բոլոր տարբերակները ընդգծում են «Սասնա Ծռերում» չորս ճյուղի, չորս սերնդափոխության կարեւորագույն կարգակառույցը: Ուրեմն, եթե Սանասարը 1,296 միլիարդ տարվա էպոխան է, ապա ճյուղից-ճյուղ կստանանք հետեւյալ պատկերը՝

Շրջաններ

1) Ոսկի = 60^3 x 8 = 1728000	Թորոս + Ծովինար	***Կրիտա Յուգ***
2) Արծաթ = 60^3 x 6 = 1296000	Սանասար + Դեղձուն	***Տրնտա Յուգ***
3) Պղինձ = 60^3 x 4 = 864000	Մեծ Միէր + Արմահան	***Դվափարա Յուգ***
4) Երկաթ = 60^3 x 2 = 432000	Դավիթ + Խանդուդ	***Կալի Յուգ***

Ընդհանուրը՝ 4,320000:

Չորս ժամաշրջանների ընդհանուր գումարը՝ 4,320000 = Բրահմայի ցերեկային 12 ժամերին:

Հնագույն շումերական ժառանգությունը՝ շրջանաշրջան = 3600-ի մեկ ՇԱՐ է. այսօրվա 1 ժամը՝ 3600 վարկյան է*[3]: 12 ժամը կլինի՝ 12 x 3600 = 43200վրկ./տարի:

Հայկական էպոսը սկսվում է Գագիկ-Կակեի թագավորությունից եւ վերջանում է Փոքր Միհրի Ագռավաքարում փակվելու եւ սպասման վիճակով, որոնք նույնպես ունեն իրենց ժամանակային էպոխան: Ներքեւից վերեւ՝ 2, 4, 6, «բարձրանալու օրինաչափությունը» ցուցում

*1,-«Իմ գլխուն իրեք արծաթ»,- «Սասունցի Դավիթ», Երեւան, 1989թ., էջ 136:
*2,- Սար-ա-Սար = Šar x 10 x Šar = 12960 տարի, որտեղ Šar = 3600, Սար = ՇԱՐ:
*3, - Dick Teresi, "Lost Discoveries", 2002, USA, p. 48-50.

է, որ Կալի յուգայի ժամանակից հետո, որի թիվը՝ 60^3 x 2 է, հաջորդը պետք է լինի՝ 60^3 x 1, որը Փոքր Մհերի Ագռավուքարում սպասելու ժամանակահատվածն է: Թվային նույն օրինաչափությամբ ***Գագիկ-Կակնի թագավորության*** ժամանակաշրջանը՝ 60^3 x 10 է:

1) Գագիկ = Կակի = Հայր = [60^3 x 10] = 2160000:

Շրջաններ		ընդհ. գումարը՝ 4,320000 = Բրահմայի ցերեկային 12 ժամերին:
2) Ոսկի = 60^3 x 8 = 1728000	**Թորոս + Ծովինար**	
3) Արծաթ = 60^3 x 6 = 1296000	**Սանասար + Դենզուն**	
4) Պղինձ = 60^3 x 4 = 864000	**Մեծ Միհր + Արմահան**	
5) Երկաթ = 60^3 x 2 = 432000	**Դավիթ + Խանդուդ**	

6) Փոքր Մհեր = 60^3 x 1= 216000:

Փաստորեն, մենք ստանում ենք հեքսագոն համակարգ, որ լիարժեք համապատասխանության մեջ է թե՛ շումերական, թե՛ բաբելական*[1] եւ թե՛ ուրարտական կարգակառույցին:

***1,- Շումերաբաբելական տարբերակ**

Արական աստվածներ	իգական կողակիցները
60 - ԱՆՈՒ	55 - ԱՆՏՈՒ
50 - ԷՆԼԻԼ	45 - ՆԻՆԼԻԼ
40 - ԷԱ/ԷՆԿԻ	35 - ՆԻՆԿԻ
30 - ՆԱՆԱ/ՍԻՆ	25 - ՆԻՆԳԱԼ
20 - ՈՒԹՈՒ/ՇԱՄԱՇ	5 - ԻՆԱՆԱ/ԻՇՏԱՐ
10 - ԻՇԿՈՒՐ/ԱԴԱԴ	5 - ՆԻՆՀՈՒԵՍԱԳ
6 արական, աստվածներ	6 իգական, աստվածուհիներ:

Հեքսագոն



Այսինքն, 6 զույգ աստվածություններ, որ ներկայացնում են նաեւ թվային արժեքներ եւ աղերսվում են օրվա 24 ժամերի հետ: Փաստորեն, եթե ***Գագիկ-Կակնի*** թագավորության ժամանակաշերտը գերոների աբստրակտումով գումարենք Փոքր Մհերի ներկայացրած թվին, նորից կստանանք 60^3 x 2 = 4320, որ կներկայացնի Բրահմի գիշերային 12 ժամերի տեւողությունը: Հնդեւրոպական ծագում ունեցող եւ Հայկական լեռնաշխարհից ու Միջագետքից Հնդկաստան «արտահանված» վեդայական ուսմունքն ասում է, որ տիեզերքն արարվում է Բրահմի 12 ցերեկային ժամերի ընթացքում *(մարդկային 4 միլիարդ 320 միլիոն տարի),* երբ նա արթուն է: Երբ նա քնած է, տիեզերքը՝ գոյաբանական մեր աշխարհը,- վերանում է, քանի որ Բրահմայի 24 ժամվա տեւողությամբ մեկ օրը ներկայանում է 12+12 երկու կեսերով: Բրահմի 12 ժամերը՝ մարդակային 4 միլիարդ 320 միլիոն տարին, ոչ թե հավասարչափ չորս մա-

*1 - Dick Teresi, “Lost Discoveries”, USA, 2002, p. 48-50.

սերի բաժանում է, այլ ներկայանում է հարաբերական հետեւյալ բաժանումներով՝ **ոսկյա շրջան- 4.8 ժամ, արծաթյա- 3.6, բրոնզյա- 2.4, երկաթյա- 1.2, ընդհ.՝ 12 ժամ:** Նախ պետք է ասել, որ թվային կամ տիեզերական այս էպոխաների համակարգը ոչ թե հնդկական է, այլ «ընդունված» է եղել բոլոր հնագույն հավատամքային կառույցներում, որովհետեւ նրա հիմքը՝ տարեշրջանը 360 օր սխեմատիկ լուսնային տարին է, որտեղ օրը՝ 24 ժամ է եւ շաբաթը յոթօրյա է:

Փոքր Միերի Ագռավաքարում փակվելուց հետո, նույնիսկ հավերժական եւ անմահ թվացող Քեռի Թորոսն է մեռնում:

«Քեռի Թորոս կսկծուց մեռավ,
որ իմացավ Միերի փակվել»
(«Սասունցի Դավիթ», Եր. 1989, էջ 415):

Այսինքն, Փոքր Միերի «Ագռավաքարում» փակվելը նախանշում է նյութական տիեզերքի ավարտը, որի հիմնադիր հյուսն էր Քեռի Թորոսը: Փոքր Միերը՝ Բրահմի ցերեկային ժամերի փուլի ավարտ է եւ վերադարձ նախնականությանը՝ ԿԱԿԻ (Գագիկ) > 1/10 Փոքր Միեր: Առաջին աստվածության՝ Գագիկ = Կակի = Աստղիկ = խաչապաշտ թագավորը *(անունները տարբեր են պատումներում)*, որը Ծովինարի եւ Թորոսի հայրն է, սկիզբն է ամենայնի: Նրա «թիվը» թվում է պետք է լինի՝ [60^3 x 10] ըստ վերեւի աղյուսակի, քանի որ ներքեւից վերեւ 60^3-ը բազմապատկվել է՝ 2, 4, 6, 8 հաջորդականությամբ: Միջագետքյան համակարգում, օրինակ, 7240-ը գրվում էր այսպես՝ (3600 x 2) + 40 = 7240*[1]: Ուրեմն, հաջորդ 60^3-ը բազմապատկվում է «10»-ով, որտեղ ***Կակի-Գագիկը***՝ [60^3 x 10] = 2160000:

Մեր/Միթրան Հին Կտակարանում որպես ժամանակ-էպոխա:

«Եւ Տերն ինձ ասաց. Առ քեզ համար մի մեծադիր մատյան, առ եւ գրիր, - Մահէր-Շալալ-Հաշ-Բազ» (Եսայու Մարգար. գլ. Ը, 1-3):

«Աստվածաշնչի» հայերեն համարյա բոլոր թարգմանություններում ***Միերի*** անունը հիշատակող այս մասը կարծես միտումնավոր կրճատված, «վերախմբագրված» է*[2]: Անգլերեն տարբերակում (ոչ բոլոր) *[3], էջատակում գրված է բացատրությունը՝ «8. 1–4: ***Մահէր-Շալալ-Հաշ-Բազ*** խորհրդանշանը՝ *«արագ-ավարառություն-շուտափույթ-կողոպուտ»:* Մարգարեն վավերագրում է երկու սիմվոլներ («sign acts»), տես՝ 7. 11-12 էջատակ, *«մանկան անունը մինչեւ հասունություն-իմացություն, եւ հենց իր՝ մանկան բուն անունը»:* Եսայու 7. 11-ում կարդում ենք՝ *«Մեկ անգամ եւս Տերը խոսեց Ահազին*

*1, - Dick Teresi, "Lost Discoveries", USA, 2002, p. 48-50.
*2, - Հին Կտակարանում Միէր-Մահերի «գոյության մասին» հայտնեց Սեդա Ջերեանը:
*3, - Ամենաշատ աղավաղումները եւ կրճատում - վերախմբագրումները «Աստվածաշնչի» 1999 թվականի Մայր Աթոռ Ս.Էջմիածնի հրատարակության տարբերակում է:

եւ ասաց, Խնդրիր Տիրոջից, քո Աստծուց նշան, ամենացածր անդունդից կամ ամենաբարձր երկնքից»:

Քանի-որ այս աշխատության մեջ նպատակայնությունը կրոնական ներքին խորհրդաբանությունների բացահայտումը չէ, բավարարվենք ասելով, որ [Մահէր]-ը *(խոսքը 8-րդ աստվածային արտահայտության մասին է, որ ամբողջական, ավարտուն տիեզերքն է, որ ըստ «Սասնա» էպոսի՝ Փոքր Մհեր)* ամբողջական՝ անդունդից մինչեւ վերին երկինք, կարգակառույց խորհրդանշանն է, որն ըստ քրիստոնեության, վերաբերում է ՈՐԴԻ ԱՍՏՈՒՆ: [Մհեր Շալալ-Հաշ-Բազ]-ը ***արագ ավարառություն, շուտափույթ կողոպուտ, -*** բացատրությունն այստեղ խորհրդաբանական իմաստ ունի՝ Քրիստոսը որպես հոգիների գող *(տես՝ Նոր Կտակարան, ըստ Մարկոսի, գլ. 3, 22-30)*, ինչպես հայկական հեթանոսական աստվածություն Վահագն է հարդ (հոգիներ) գողանում Բարշամի ամբարներից*[1], ինչպես Օզիրիսն է «հոգու գող» եւ այլն:

Բոլոր հնագույն կրոնների միստիցիզմում՝ հայկական «Սասնա Ծռեր», իրանական «Զրադաշտ», հնդ-արիական «Ռիգ Վեդա», արեւմտյան Միթրանիզմ, քրիստոնեական «Հայտնություն» եւ այլն, ***ժամանակների սկիզբը եւ վերջը*** բնորոշող այս նշանը ներկայանում է՝ ***ճերմակ ձիավոր ուսին սեւ թռչուն,*** սիմվոլով:

«Սասնա» էպոսում, Ագռավաքարում բանտված*(ոգին նյութի մեջ)* Փոքր Մհերը *(որը սպասում է «իր ժամին» ու նայում տիեզերական ժամանակի «չարխի ֆալակին»*[2]*, որ դուրս ելնի ու «աշխարհը կործանի»)* այնքան «ծեր» է ու «նախահնդեւրոպական», որ ***Մհեր-Մահեր*** բառանունը սեմիտական որեւէ լեզվով չի կարդացվում: Այս դարձվածքի եբրայերեն փոխառությունը՝ Հին Կտակարանյան տարբերակը, չի ներկայացնում՝ թե ո՞վ է ***Մահերը,*** այլ միայն «կողմնակի» բացատրություն է տալիս նշանի մասին, որը խոսում է նրանց կողմից փոխառություն անելու մասին: ***Մահեր Շալալ Հաշ Բազը*** հին եբրայերենով չի թարգմանվում որպես՝ ***«ժամանակ»*** կամ ***«հասակ»***, եւ ոչ էլ՝ ***«արագ-ավարառություն-շուտափույթ-կողոպուտ»:*** Այս նույն սիմվոլը հետագայում հայտնվում է «Նոր Կտակարանի» Հովհաննու «Հայտնության» մեջ որպես վիպականացված կերպար՝ ժամանակների վերջում աշխարհը դատող եւ կործանող «ճերմակ ձիավոր»*(Քրիստոսի 2-րդ գալուստ):* Բայց մինչեւ «Նոր Կտակարան» հասնելը, հնագույն «Ռիգ-Վեդայում» նա արտահայտվել էր որպես ձիու ժամանակաշրջան՝ Կալկի Յուգա (Ռիգ-Վեդայի աստվածները՝ Ինդրան, Դադհիկրան, Սուրիան, Ագնին, Սոման եւ այլն կոչվում էին նժույգներ)*[3]:

---

*1,- Ա. Ղանալանյան, «Ավանդապատում»:

*2, - «Սասնա Ծռեր», h. Բ, մաս I, էջ 5:

*3,- Rig Veda, 1.163, 1.162, 10.56: Կամ տես՝ "Rig Veda", Penguin Classics, Wendy Doniger O'Flaherty, 1981, England.

ՄՀԷՐ-ՇԱԼԱԼ-ՀԱԾ-ԲԱՋ-ը՝ որպես ***ժամանակների սկիզբ եւ վերջ,*** որ մարդկային հոգիների որսորդն է, այս կամ այն ներկայացմամբ, գոյություն ունի հնագույն մի շարք հավատամքների միստիցիզմում, սակայն այս դարձվածքն իր բառաիմաստային ստուգաբանությամբ պետք է ուղղակի կարդացվի որեւէ լեզվով:

1. ՄԱՀԵՐ = նախահնդեւրոպ. *meH- ձեւն է, որ նշկ. է՝ «ժամանակ»:

ՄՀԷՐ դիցը՝ նրա կատարած ֆունկցիան եւ նրա անունը, «ձեւավորված» է հնագույն հավատամք-համակարգի հիմքում ընկած բինարիզմի սկզբունքով: Նա՝ «Լուսին» եւ «Արեւ», ***գիշեր-ցերեկ*** երեւույթն է որպես «ժամանակ» ատրիբուտ, որի էությունը եւ ֆունկցիան պահպանված է վեդայական միֆալոգիայում՝ Միթրա եւ Վարունա,- ***օր*** ու ***գիշեր***, եւ հայկական էպոսում՝ Մեծ Մհերի (արեւ) եւ Փոքր Մհեր (լուսին) ներկայացմամբ:

Նախահնդեւրոպական՝ *meH-ը՝ «ժամանակի չափման միավոր», որից բոլոր հնդեւրոպական լեզուներն ունեն իրենց տարբերակները*[1]: Սանսկրիտ.՝ mā́ti, mimā́ti «չափումներ»*(դրա համար է Մհէրը սանսկրիտով դարձել՝ Միթրա)*, լատ.՝ mētior «ես չափեցի», հին եկեղ. սլավոն.՝ měra «չափ», գոթ.՝ mēl «ժամանակ», լիտվ.՝ mētai «տարի», ալբան.՝ mot «տարի», հիթթիթ.՝ **mehur** «ժամանակ», հուրրիերեն՝ taam*[2], հայերեն՝ ’am > zam «տարի, ժամանակ»:

Հնդեւրոպացիների մոտ, լեզուներում, «Լուսին»-ը համարվել է ժամանակի չափման միավոր: Սանսկրիտ.՝ mā́h, mā́sa- «ամիս, լուսին», Ավեստա՝ mā̊, պարսկ.՝ māh, հուն.՝ mḗn, եւ այլն, բոլորի նշ.՝ «լուսին» եւ «ամիս»: Հայերեն՝ amis, amsoy, նշանակում է «լուսին», «ամիս» *(ինչպես նաեւ՝ mahik’ «լուսին», - ավելացումն իմն է):* Բոլորի հիմքը հնդեւրոպական նախալեզվի [*meH-]-ն ձեւն է*[3]:

2. ՇԱԼԱԼ < ՇԱՐԱՐ, L< R:

ՇԱԼԱԼ = ՇԱՐ-ԱՐ = ՇԱՐ = ŠAR = 3600 շումերական տարեշրջանի թիվն է, որի պատկերագիրը նաեւ շրջանաձեւն է: Սա հայերեն ՇԱՐ-ն է, հունական ՍԱՐՈՍ-ն է եւ այլն:

3. ՀԱԾ ԲԱՋ

Եբրայերենում որեւէ իմաստ չարտահայտող այս դարձվածքը կարող է միայն աղերսվել Մհէր/Միհր/Միթրա աստվածության մշտական ուղեկից խաչաթեւ ագռավ/բազե թռչունի հետ: Ըստ «Ավեստայի», ագռավը՝ Միհրի անբաժանելի ուղեկիցը, գերագույն աստվածության «խոսնակն է» *(Արրամազդան Ագռավի միջոցով Միհր-Միթրային հրամայում է սպանել անհնազանդ ցուլին):* «Սասնա Ծռերում» թռչունը՝ Ագռավաքարի ներկայությունն է: Ըստ եգիպտական տարբերակի՝ անմահ ***ԲԱ*** -ն՝ սեւ թռչունը, մարդու բարձրագույն ոգին է*[4]: Ըստ

*1, *2, *3, - T. Gamkrelidze & V. Ivanov, “The Indo-European & The Undo- Europeans”, p. 591: p. 590-591, (17n):
*4, - Moustafa Gadalla, «Egyptian Cosmology», 2001, USA, p. 107.

հնագույն գերմանական եւ սկանդինավյան տարբերակների՝ Օդին աստվածության մշտական ուղեկիցը բազեն է եւ այլն: Ըստ թաքնագիության, եւ պահպանված ձեւով մեզ հասած եգիպտական համակարգի, ***սեւ թռչունը՝ բազե, ագռավ եւ այլն,*** խորհրդանշում է ***բարձրագույն միտք-Ոգին***, ի տարբերություն ***ճերմակ թռչունի*** կամ ***ճերմակ ձիու,*** որ խորհրդանշում է տիեզերական ցածրադիր, կենդանական ՇՈՒՆՉ - ՀՈԳԻՆ՝ animal moundi:

Այս թռչունի «նախակարապետը» հնագույն աստղագիտության մեջ «Անգղի», այսօր «Կարապ» կոչվող համաստեղությունն է, որ «Սասնա Ծռեր» էպոսում, մինչեւ Ագռավաքարը, հանդես է գալիս որպես երկնային նշան, որ հաջորդաբար իջնում է էպոսի գլխավոր դիցերի աջ բազուկին: Հայկական էպոսում այդ նշանը կոչվում է՝ ***Խաչ-Պատարագ:*** Հավատամքային պատումների գերագույն աստվածության սիմվոլը հանդիսացող թռչունը, ըստ հնագույն աստղագիտության, վերաբերում է ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԽԱՉԻ՝ ***Կարապի*** համաստեղությանը: ԿԱՐԱՊԻ համաստեղությունը գտնվում է երկնային Ծիր Կաթին «գետ-ծովի» կենտրոնում: Եվ Ծովինարը խմելով այդ ծովի միջից բխած աղբյուրից հղիանում է գերբնական երկվորյակներով: Փաստորեն, բառի ստուգաբանությունը ցուցում է, որ էպոսի այս միստիկ խորհրդանշանը՝ ա) ***քառաթեւ խաչ*** է, բ) ***հայր*** է (նախահնդեւրոպ.՝ Patēr), գ) ***թռչող*** է, դ) ***պահպանիչ*** է *(տես՝ «Խաչ-Պատրագին իր աջ բազուկին» բաժինը):*

Վերեւում արդեն ասվեց, որ **սեւ թռչունը՝ բազե, ագռավ եւ այլն,** խորհրդանշում է **բարձրագույն միտք-Ոգին**, ի տարբերություն **ճերմակ թռչունի** կամ **ճերմակ ձիու,** որ խորհրդանշում է տիեզերական ցածրադիր, կենդանական ՇՈՒՆՉ - ՀՈԳԻՆ՝ anima moundi: «Սասնա Ծռեր» հայկական էպոսում, ***կենդանական շունչ-հոգու*** խորհրդանիշը Մհերի անմահ նժույգ՝ ***Քուռկիկ Ջալալին է,*** - animal moundi - «կենդ. շունչ-հոգի», իսկ Ագռավաքարը խորհրդանշում է՝ բարձրագույն ***Միտք-Ոգին:***

Մհերի անմահ նժույգի անունը՝ ***Քուռկիկ Ջ'ալալի*** «կենդանական շունչ-հոգի» իմաստն ունի, որ հնագույն հնդեւրոպական նախալեզվի *anH, ձեւից է: Տիեզերական Շունչը՝ ԱԼԱՅԱ-ն, որը բացարձակ հավերժական գոյություն է՝ ըստ Մահայանա դպրոցի, նաեւ անհատական **Շունչ-հոգու** իմաստն ունի:

Ջալալի: Սանսկրիտով՝ **jiva**[*1] նշանակում է «կենդանություն», եւ սա ֆլորա եւ ֆաունային է վերաբերում: Իսկ **ánila-h**[*2] նշանակում է՝ «շունչ»: Նույն իմաստով, ձին՝ Քուռկիկ Ջալալին, ինքն է իրեն ներկայացնում «Սասնա» էպոսի բազմաթիվ պատումներում.

«Եյ անիրավ, ընչի՞ կը վախենաս,
Քանի մ' քու թրի հեռջեվ եհան,

---

*1, *2,- T. Gamkrelidze & V. Ivanov, "The Indo-European & The Indo-Europeans", p. 387, 388:

Երկու սկոմ յեմ շնչիլը՛ս հեռջեվ կը հա»:

(Սասնա Ծռեր, հ.I, էջ 674, Երեւան, 1936թ.)

Հայերենում ***շունչ*** բառի հոմանիշն է՝ հոգի, էակ, ***արարած***: Հայկական լեռնաշխարհի հնագույն հիթթիթական ***Ալալու*** աստվածությունն առաջին աստվածություններից (***Ալալու,*** Կումարբի, Անու, Թեշուբ), ավագն է՝ առաջինն է, որ տիեզերական ***Շունչ-հոգի*** կենսաուժն է ներկայացնում: Հրեղեն ձիու անունը՝ «***Ջ+ ալալի»***՝ «ջ» նախդիրով, աղերսվում է հեթիթական ալալու > արար-ու > հայերեն՝ արարած-ի *(լ > ր անցումով)* հետ: Ձիու ***Քուռկիկ*** անունը՝ հուրրիերեն՝ Քուրրա, Kurra, հայերեն՝ «քուռակ» ձեւից է:

Պարզ պատկերացնելու համար պետք է հասկանալ հների հավատամքը: Ըստ հնագույն կարգականոնի, մարդը երրորդություն է՝ 1. մարմին - 2. շունչ/ հոգի - 3. Միտք-Ոգի: Մարդն իր մեջ ներառում է ե՛ւ կենդանական շունչ-հոգին ե՛ւ բարձրագույն միտք-ոգին: Ըստ թաքնագիտական միստիցիզմի՝ ***շունչ-հոգին միտք-հոգու*** մարմինն է, կացարանն է*[1], ինչպես նյութական մարմինն է՝ շունչ-հոգու կացարանը: **Շունչ-հոգու** մեջ է ծնվում **միտք-ոգին**: Պատահական չէ, որ հայկական էպոսի պատումներից մեկում երկվորյակ աստվածությունների մայրը հղիանում է հրեղեն ձիու սմբատակի ջուրը խմելուց *(Ս. Ծ. հատ. I, էջ 1029-1031)*: Էպոսի պատումներից մեկում, երբ իջեւանատերը Սանասարից պահանջում է «գիշերելու վարձը»՝ ձիուն մեկ արծաթ, մարդուն կես արծաթ, Սանասարը ճշտում է «իրերի կարգը», ասելով.- *«Ափո՛, ես քեզ կտամ ձիուս էրկու արծաթ, իմ գլխուն իրե՛ք արծաթ»:* Մարդը երրորդություն է՝ 1. մարմին, 2. շունչ, 3. ոգի, ձին երկու՝ 1. մարմին, 2. շունչ: Հայկական էպոսի անմահ նժույգի ***Ջալալի*** անունը որեւէ իմաստային կամ ֆուկցիոնալ կապ չունի արաբական «ջալաթ = դահիճ» բառի հետ, ինչպես ժողովրդական ասացող ծերունին է փորձել մեկնաբանել: Էպոսում Քուռկիկ Ջալալու ֆունկցիան բարձրագույն միտք-ոգու իպոստաս աստվածների չորս սերունդներին իր մեջքին կրելն է: Բոլոր պատումներում այս հրեղեն ձին ինքն իր մասին ասում է, որ կենդանական «շունչ-հոգու» իպոստասն է. ըստ էպոսի, նա իր հրեղ շնչով է կոտորում թշնամու բանակները *(տես՝ «Հրեղեն ձի՝ Քուռկիկ Ջալալի» բաժինը)*:

Հին Կտակարանում ***Մահէր-Շալալ-Հաշ-Բազ*** խորհրդանշանի ներկայացումը որպես՝ *«արագ-ավարառություն-շուտափույթ-կողոպուտ» եւ «մանկան անունը մինչեւ հասունություն-իմացություն, եւ հենց իր՝ մանկան բուն անունը»* խորհրդաբանական ուղերձ-իմաստ, վերաբերում է տիեզե-

*1, - Ըստ թաքնագիտության, սիմվոլի լեզվով, մարդը ձիու վրա կամ ավանակի վրա *(Յիսուսի մուտքը Երուսաղեմ)* նշանակում է բարձրագույն միտք-ոգին կարողանում է կառավարել իր ցածրադիր «ես»-ը՝ շունչ-հոգին:

բական մարդուն՝ լոգոսին, որ կայացած տիեզերքն է, եւ նրա «կյանքի ժամանակը» պատումային խորհրդաբանության մեջ ներկայանում է համաստեղությունների սիմվոլներով եւ տիեզերական շրջափուլերի պարբերական շրջապտույտով *(Մահեր = ժամանակ, Ճալալ = շունչ-հոգի, Հաշ-Բազ = միտք-հոգի):*

«ՍԱՍՆԱ ԾՌԵՐ» ԷՊՈՍԻ ՎԵՐՋԱԲԱՆԸ՝ ԳԱՂՏՆԻ ՈՒՂԵՐՁ

Հնագույն համակարգի վերջին դիցը, որը ներկայացնում է Ժամանակների վերջը, փաստորեն, հնագույն հավատամքային պատումներում ներկայանում է որպես՝ ***ճերմակ ձիավոր է սեւ թռչունը ուսին կամ Ագռավաքարում փակված*** սիմվոլ: Երբ Փոքր Մհերը ելնի, անարդար, հին աշխարհը կործանվելու է եւ սկսվելու է նոր փուլ, նոր սկիզբ: Ե՞րբ է դա լինելու: Հայկական էպոսն այս առումով էլ ունի աստղագիտական իմֆորմացիա, որ ժողովրդական վերապատմող գուսաններն ու ծերունիները չհասկանալով խորհրդաբանական իմաստները, «թեթեւակի» աղավաղել են «Սասնա Ծռեր» էպոսում պահպանված այս ուղերձ-իմֆորմացիան: Ե՞րբ է Փոքր Մհերը դուրս ելնելու քարից: Բերենք 150 պատումներից մի քանի տարբերակներ *1.«Երբ ցորեն եղավ քընց ալուճ ու գարին եղավ քընց մասուր մի»*[1], *2.«Ձուր ցորենի հատ եղնի մասրի բարա», 3.«Երբ ցորենի հատն եղավ մեկ մասուր»*[2], *«Հար գորիգն չեղնի մասրի խադար, հար ցորին չեղնի ընդույզի խադար, Մհեր տուրս չեղնի զուղրի մեչեն», «Հար գորիգն գ'եղնի կըց մասուր, հար կարին գ'եղնի կըց շգլուր»*[3], *4.«Ձուր ցորենի խատ եղի քանց մասուր մը»*[4]*:* Բոլոր պատումներում եղած վերջաբանները հաշվի առնելով, էպոսի խմբագիրները ստեղծել են հավաքական վերջաբան-ուղերձը.

«Երբ ցորեն եղավ քանց մասուր մի,
Ու գարին եղավ քանց ընկույզ մի,
Էն ժամանակ հրամանք կա, որ ելնենք էդտեղեն»*[5]:

Բոլոր պատումներում հատուկ ընդգծվում է ցորեն-գարու եւ դրա մեծանալու՝ մասուրի չափ դառնալու «կարեւորությունը»:

Բայց մինչեւ «Սասնա Ծռեր» էպոսի վերջին ուղերձը վերծանելը, վերադառնանք նրա ծննդի հետ կապված խորհրդաբանությանը:

1.*Նորածին Փոքր Մհերի աջ **ափի** մեջ արյուն կա եւ ինչպես Քեռի Թորոսն է բացատրում, միայն **քարը** կարող է նրան **«մուտ տա»** (մուտ տալ = պահել):*

Հնագույն հնդեւրոպացիների մոտ ***«Քար»*** բառը նշանակել է նաեւ՝ ***«երկինք»*** (Տես՝ T. Gamkrelidze & V. Ivanov, "The Indo-European & The Indo-Europeans", p. 575):

---

*1, – «Ս. Ծ.», հատ. Բ, պատում Ա, *2- «Ս. Ծ.», հատ. Բ, մաս I, պատում Բ, *3- «Ս. Ծ.», հատ. Բ, մաս I, էջ 195-196, *4 - «Ս. Ծ.», հատ. Բ, մաս I, էջ 246:
*5, - «Սասունցի Դավիթ», 1989թ., Երեւան, էջ 417:

Պատահական չէ, որ Ագռավաքարից ելնենով Փոքր Միհրը երկնքով է շրջում, իսկ հողի վրա չի կարողանում մնալ: Նրան միայն ***երկինքը*** կարող է «մուտ տալ»՝ պահել:

2. *Փոքր Միհրի ծնվելուց նրա ձեռքերը եւ ոտքերը կապում են գութանի շղթայով (որպես թե՝ բարուրում են) եւ մանուկը կտոր-կտոր է անում «գութանի շղթաները»:*

Հին հայերի մոտ, մ.թ.ա. V հազարամյակում, տարին սկսվում է գարնանային գիշերահավասարով(Մարտ-21), երբ վաղ առավոտյան արեւը ծագում է տարեշրջանը սկսող առաջին «երկնային Ցուլ» եւ «գութան» համաստեղություններից*[1]: Անմիջապես «Ցուլի» համաստեղության գլխավերեւում է գտնվում «գութանի» համաստեղությունը՝ այսօրվա «Եռանկյունի» (Triangulum) համաստեղությունը*[2]: Աշխարհի առաջին հողագործ նախահնդեւրոպացիների մոտ, տարվա սկիզբը եւ առաջին համաստեղությունը անշուշտ պիտի աղերսվեր հողագործական ամենահին եւ ամենակարեւոր գործիքի՝ գութանի եւ նրան լծված ցուլի հետ: Տարին սկսելով «Գութան-Ցուլ» համաստեղությունից, տասներկու ամիսների ընթացքում, արեգակը ամեն ամսվա առաջին օրը ծագում է առավոտյան առաջինը բարձրացող համաստեղությունից, «ձեւավորելով» 12 համաստեղությունների շղթան: Էպոսում «գութանի շղթա» խորհրդաբանությունը՝ «գութան-Ցուլի» համաստեղությունից սկսվող 12 համաստեղությունների շղթան է:

«Սասնա Ծռեր» էպոսում, բարուրի մանուկ Փոքր Միհրը կտրատում է գութնի շղթաները: Փաստորեն, Փոքր Միհրը, ի տարբերություն իր նախնիների, որոնք «ձեւավորում» են զոդիակների շղթան, պիտի քանդի, կտոր-կտոր անելով ոչնչացնի «գութանի շղթան», եւ իր կատարելիք «ֆունկցիայի» մասին մանուկը դեռ բարուրի մեջ գտնվելով է ցուցում*(կործանող Աստված)*:

3. *Վերջին դիցի կինը՝ Գոհարը, անսպասելի, առանց «պատճառի» մեռնում է, եւ անմահ ու անժառանգ վերջին հերոսը փակվում է Ագռավաքարում (Մեւ ագռավը խորհրդանշում է բարձրագույն ոգի, - ԲԱ՝ սեւագլուխ թռչուն):*

Փաստորեն, եթե ուշադրություն դարձնենք, որ «Գոհար» անունը նշանակում է «ակ», թանկարժեք քար, եւ Սանասար նախահայրը տիեզերական սկիզբ է դնում՝ 1-ին վիշապի երախից ակնաքարը հանելով, որի պատճառով հմայքների թագավորությունը ձեւափոխվում՝ լույս, ջուր ու կյանք է ստանում եւ, Դեղձուն Ծամը «խնձոր» ստանալով, սերունդ տվող մայր է դառնում, «արարում է աշխարհը», ապա Փոքր Միհրի կին Գոհարը՝ որպես ակ,- ակնա-

---

*1,- Տես՝ «Sky Glob» համակարգչային ծրագիրը. տեղանքը՝ 36, -43, Մարտ 21, մ.թ.ա. 5500թթ.:
*2,- Միջագետքյան MUL.APIN-ի աստղագիտական տեքստերում «գութանը» կոչվում է APIN: Տես նաեւ՝ Ա. Դավթյան, «Հայոց աստղային դիցաբանություն», 2004թ., Երեւան, էջ 21-27:

քար, փակվում է՝ անցնում է անդրաշխարհ, մեռնում է: ***«Արեւ-Լուսին»*** բալանսը խախտվում է: Եվ Փոքր Միհրը դեպի վերադարձ, նախնականությունը վերահաստատելու խորհրդանիշն է դառնում:

4. Փոքր Միհրը մենամարտում է յոթ հրեշտակների հետ: Նրա թրի հարվածը հասնում է մինչեւ սեւ ջուր, եւ եթե Աստծո հրեշտակն իր թեւը դեմ չտար հարվածին, ապա աշխարհը կկործանվեր: Բայց քանի որ ժամանակը չէր, ոչ Միհրն է կարողանում հաղթել, ոչ էլ յոթ հրեշտակները, որ միասին ելել էին Միհրի դեմ:

Թաքնագիտություն.-

«Այդպես ճառագայթները Շունչի կը նմանին. Մեծ Գիտակցութիւնը կը շնչէ եւ կ'արտաշնչէ, կշռոյթային կենսունակութիւն մը ապահովելով արարչագործութեան դաշտին մէջ յառաջ տարուող բնաշրջումի կամ բարեշրջումի աշխատանքին»: «Թաքնագիտությունը կուսուցանէ, թե այս ճառագայթները կը հոսին Մեծ Արջ համաստեղութեան եօթը աստղերէն: Անոնց Աղբիւրը Անհունին մէջն է: Անհունէն ծագում կ'առնէ ահաւոր ոյժի ճառագայթ մը, եւ բախում ունենալով Մեծ Արջ համաստեղութեան եօթը աստղերուն հետ, կը բեկանուի եօթը ճառագայթներու: Այս եօթը ճառագայթներու հոսանքը ուղղուելով Ծիր Կաթին համաստեղութեան՝ կը միաձուլուի Ծիր Կաթինի եօթը իգական ուժերուն հետ (Բազմաստեղի յոթ աստղերը) եւ կը սաղմնաւորէ մեր արեւային դրութեան գոյութեան նախատիպարը, որմէ կառոյց կ'առնե դարերու տեւողութեան մեր արեւային դրութիւնը» (Թորգոմ Սարեյդարյան, «Հինավուրց իմաստնության Հիմները»):

Էպոսում, յոթ հրեշտակները «Սայլի»՝ «Մեծ Արջի» յոթ աստղերի ճառագայթներն են *(Մեծ եւ Փոքր Արջերը՝ Երկվորյակ դիցերի աստղատներն են),* «Սեւ ջուր»-ը՝ իգական հիմք ունեցող «Բազմաստեղի» յոթ ճառագայթներն են: Փաստորեն Փոքր Միհրի հետ ճակատամարտի էին դուրս եկել յոթ հրեշտակները, որ Մեծ Արջից բխող արական յոթ ճառագայթներն են: Սրանց «ներկայությունը» Կաթնածիրում յոթ մոլորակներն են, որոնց անուններով են կոչվում շաբաթվա օրերը: Փոքր Միհրը ութերորդ՝ վերջին դիցն է: Ութ սֆերաների մասին 7-րդ դարի հեղինակ Անանիա Շիրակացին գրում է. «Այս յոթ գոտիները հակառակ են միմյանց: Առաջին գոտին, որ կոչվում է երկնային ցրտության **<u>*քնակատեղի,*</u>** հենվում է այն ոլորտի վրա, որ կոչվում է ութերորդ»[*1]: Ութերորդը, որը յոթ գոտիներից անդին է, Ա. Շիրակացին գրում է, որ այն կոչվում է Քիմերական գոտի («Քիմեր»= Վիշապ, օձ):

Ըստ Շիրակացու հայտնածի, յոթ գոտիներից վեր, ամենայնի հիմքը՝ Արփին է, որից Արեգակը ստանում եւ փոխանցում է աստվածային հուր-

*1, - «Անանիա Շիրակացի», 1979թ., Երեւան, էջ 116-119, ծանոթագրություն էջ՝ 343:



Գծագիր # 1





Արեւի եւ Լուսնի շավիղներ:
Լուսնի հարավ. մակած→ ♋
Հյուսիսային մակած→ ♑

լույսը: Թաքնագետ Ա. Շիրակացին մոլորակների մասին տալիս է հետեւյալ տեղեկությունը:

«Արդ՝ մոլորակ կոչվող այդ աստղերը յոթն են, որոնք եւ համապատասխանում են շաբաթվա օրերին՝ սկսելով անծայրածիր արեգակից, այսինքն՝ կիրակի օրվանից, որի հետեւությամբ հեթանոսները անվանել են շաբաթվա օրերը ի պատիվ Արեգակի, Լուսնի եւ հինգ մոլորակների ...»[*1]:

	Հույները	Հայերը	Պարսիկները
Կիրակի՝	**Հելիոս**	**Արեգակ**	**Խորաշետ**
Երկուշաբթի՝	**Սելենոս**	**Լուսին**	**Մանգ**
Երեքշաբթի՝	**Արես***(Մարս)*	**Հրատ**	**Նազ**
Չորեքշաբթի՝	**Հերմես***(Մերկուրի)*	**Փայլածու**	**Կոճ**
Հինգշաբթի՝	**Զեւս** *(Յուպիտեր)*	**Լուսնթագ**	**Տիրենջ**
Ուրբաթ՝	**Ափրոդիտ***(Վեներա)*	**Լուսաբեր**	**Անահիտ**
Շաբաթ՝	**Հրոնոս***(Սատուրն)*	**Երեւակ**	**Զրվան»**[*2]:

5. Փոքր Մհերը, ըստ «Սասնա Ծռեր» էպոսի, «համբարձման» գիշերը փորձում է դուրս գալ Ագռավաքարից:

Սույն գլխի առաջին մասում արդեն ցուցել ենք, որ այս խնդիրը վերաբերում է ***լուսնի մակածին,*** որ փուլային՝ 54 տարին մեկ, ստեղծում է խավարման երեւույթ եւ աղերսվում է երկրագնդի առանցքի տատանման փուլի հետ՝ Precessio-ի երեւույթ:

Լուսնի հյուսիսային մակածը գտնվում է «Երկվորյակներ», իսկ հարավայինը՝ «Կարիճ» համաստեղություններում: Ըստ հնագույն վեդայական աստղաբախշության, աներեւույթ, «ծըխանման» Ռահու-Կետու վիշապը ձգվում էր այս երկու համաստեղությունների երկարությամբ: Արեգակնային համակարգի ձեւավորման սկզբում այս վիշապը գլխատվում է առաջին դիցի կողմից (հայկական էպոսում Սանասարի կողմից): Նրա գլուխը եւ իրանը ապրում են իրարից անկախ, եւ ամեն 54 տարին մեկ, վիշապը փորձում է կուլ տալ արեգակը եւ չի հաջողում: Ժամանակների վերջում, երբ վիշապի գլուխը եւ իրանը ***միանան,*** ապա վիշապը կհաջողի կլլել արեգակը: Ըստ Զոն Զեկինսի, այս հնագույն պատումն ունի գիտական

*1,*2,- «Անանիա Շիրակացի», 1979թ., Երեւան, էջ 116-119, ծանոթագրություն էջ՝ 343:

հիմք. «վիշապի գլխի եւ իրանի միացումը» նա ներկայացնում է որպես արեգակ-լուսնի մակածների համատեղում գալակտիկայի մակածի հետ, որը Ծիր Կաթին գալակտիկայում մեծ փոփոխություններ առաջ կբերի: Փաստորեն, «Սասնա Ծռեր» էպոսում Փոքր Մհերը հանդես է գալիս որպես աշխարհը կործանել պատրաստվող դից, որը վեդայական Ռահուի նման, նույնպես կորցնում է կնոջը, իր կեսին՝ Գոհարին:

Փոքր Մհերի պարբերաբար դուրս ելնելու փորձը՝ 54 տարեփուլով խավարման երեւույթն է: Թե՞ քանի 54 տարիների գումա-ռումով մենք կստանանք տիեզերական աղետի ճշգրիտ ժամանակը, թե Փոքր Մհերը ե՞րբ կելնի Ագռավուքարից, ե՞րբ կհաջողի. «տիեզերական եւ փուլային ի՞նչ երեւույթ, ի՞նչ պրոցեսի դեպքում դա տեղի կունենա».- հարցին, «Սասնա Ծռեր» էպոսը պատասխանում է՝

6. **«Երբ ցորեն եղավ քանց մասուր մի,**
Ու գարին եղավ քանց ընկույզ մի,
Էն ժամանակ հրամանք կա, որ ելնենք էդտեղեն»:
«Սասունցի Դավիթ», Երեւան, 1989թ., էջ 417:

Այս վերջին «ուղերձը» աղավաղված է, ժողովրդական ասացողները չհասկանալով սրա խորհրդաբանությունը, իմպրովիզացիայի ենթարկելով, ուղերձը կապել են՝ «առատության, լիության» հետ, որն ըստ էության, հակասում է «ցիկլը» փակող, աշխարհը կործանող Փոքր Մհերի ֆունկցիայի հետ: Ծննդից սկսած կանխանշված է «աշխարհը կործանելու» Մհերի մեսիան: ***Բերքի առատությունը*** նրա ելնելու հետ ի՞նչ կապ ունի: Այստեղ, վերջին ուղերձում, կատարվել է նմանահունչ բառերից իմաստի վերախմբագրում, քանզի ասացողը չի հասկացել ուղերձի բուն իմաստը, բայց պահպանել եւ հաղորդել է ուղերձը վերափոխված տարբերակով *(Ժողովրդական ասացողի կողմից իմպրովիզացիայի նույն միտումը մենք տեսանք՝ «Խաչ-Պատրազին» խորհրդանշանի առումով, որ չհասկանալով՝ Խաչ-Պատարագին կամ Խաչ-Պատերազմին էր դարձնել)* ***[1]:**

Ա. Ըստ հնագույն կանոնակարգի, 7-րդ աստվածություն Օզիրիսի մարմնից ցորեն է աճում, փաստորեն, 7-րդը, որ Օրիոնի համաստեղությունն է, կոչվում է՝ ***«հացի տուն» կամ՝ «Յորեն»:***

---

*1,- Նման օրինակները շատ են: Օր.՝ ժողովրդական բանասացը չէր կարող իմանալ, որ Փոքր Մհերը հնագույն աստվածություն է, եւ Քրիստոսի նախակարապետ կերպարն է ու նա չի կարող սպասել Քրիստոսի գալստյանը, քանի-որ հենց ինքն է տիեզերական մարդը՝ Ադամ Կադմոնը, Քրիստոսը: Կամ, որ Մելքիսեդեկը համակարգում հենց նույն 8-րդ աստվածությունն է՝ Փոքր Մհերը, եւ Սանասարին ու Բաղդասարին, որոնք 5-րդն են, Մելքիսեդեկը չէր կարող կնքել:



Ը. Էպոսի վերջին ուղերձում, ***մսուրքը*** դարձել է՝ ***մասուր:*** Հին հայերը Կաթնաձիրի աստղերով լի գետը՝ գոտին, կոչել են ***մսուրք*** *(Մսուրք՝ տես որեւէ բառարան, - Հայկազյան բառարան, Հոմանիշների բառարան, Բացատրական բառարան, Տես՝ Ղ. Ալիշան, «Հին Հավատք», Աղթարք բաժնում, Վենետիկ, 1895թ.):*

Գ. *Գարի* - «գարի գցել»՝ գուշակել, «գարեդյուր»՝ գարեհմա, գարընկեց, գարի գցող, - բախտագուշակ, գարե գցում՝ բախտահիմայություն, կանխատեսում, մարգարեացում, աստղահմայություն, ծննդաբաշխք ծննդոցք, ծննդաբախտ *(մեկի ծնունդի մասին):* Հետաքրքիր է, որ ***ցորենի*** կամ ***գարու*** նախահնդեւրոպական ձեւը՝ [*Har-]-ն է եւ ունեցել է նաեւ միֆական նշանակություն *(T.Gamkrelidze & V.Ivanov, "Indo-European And...", p. 551-552):*

«Սասնա Ծռեր» էպոսում «Հացն ու գինին» դարձվածք-աղոթքը քրիստոնեական չէ, այն շատ ավելի հին է: Հայկական լեռնաշխարհի հնագույն հիթթիթների ծիսական աղոթքներում, *(«Մուվաթալիի աղոթքը աստվածների խմբին Ամպրոպի լուսարձակ աստծո շնորհիվ», տես՝ Muwatallis Prayer, Ch. 381, by Itamar Singer, 1996, USA)* ծիսակատարությունը կատարվում է հացի եւ գինու «օգնությամբ»: Հուրրիական աղոթական էքսորսիզմը (ոգեկանչություն) կանչում է նախամորը եւ ապա արտասանում է LUHAL-ի կամ LUAZU խոսքերը:

Դ. *Յորեն-Գարի* խորհրդաբանությունը տիեզերական արական կենսահուր Օգիրիսի՝ «Օրիոնի» հետ է կապվում (universal sexual energy), որից



Ջրհոս
Կարիճ
Ցուլ
Առյուծ
Ոգ
Աստղ
Ոգ
Աստղ
Աստղ
Աստղ



Figure 21.2. Timing parameters of the galactic alignment

Նկարը՝ Jhon Major Jenkins, «Galactic Alignment», 2002, USA, p. 251

Արեգակի գալակտիկայի կենտրոնին մոտենալու հետ կապված ժամանակակից գիտական հաշվարկները հեռու չեն հին քրմերի կողմից հնագույն հավատամքային պատումներում ներկայացվող ինֆորմացիայի ճշգրտությունից: Ստորեւ ներկայացնում ենք Ռութերֆորդ Ափլեթոն լաբարատորիայի աստղագետ Փաթրիկ Վալլասի հաշվարկների արդյունքները:

Զմեռային արեւադարձի ժամանակ արեգակը գալակտիկայի կենտրոնին ամենամոտը կլինի՝ 1998 թվականին: Սա համապատասխանում է Meeus / USNO գիտական կենտրոնի հաշվարկների հետ: Արեգակի հեռավորությունը գալակտիկայի կենտրոնից այդ ժամանակ կլինի՝ 6.4396 աստիճան: Զմեռային արեւադարձին արեգակը ***գալակտիկայի հասարակած*** *կհասնի 2021 թվականին: Զմեռային արեւադարձին արեգակը գալակտիկայի կենտրոնին ամենամոտը կլինի՝ 2219 թվականին, երբ հեռավորությունը կենտրոնից կլինի՝ 5.6367 աստիճան, այսինքն 0.8029 աստիճան ավելի մոտ քան 1989 թվականին (6.4396 - 5.6367 = 0.8029): Սակայն, ձմեռային արեւադարձին արեգակը եւ գալակտիկ կենտրոնը կլինեն տեսանելի եւ նո՛յն տեղամասում՝ միջօրեականի վրա՝ 2225 թվականին* (Jhon Major Jenkins, «Galactic Alignment», 2002, USA, p.252):

Ըստ Ջոն Ջենկինսի, հնագույն Մայաների օրացույցը տիեզերական աղետի ժամանակը ցուցում է՝ 2012 թվականը*[1]:

Ըստ Ջեյ Վեիդների (Jay Weidner), որը Կաբբալայի կոսմոլոգիայի մասնագետ է, Բինահ սեփիրոտն աղեսվում է Գալակտիկայի կենտրոնի հետ եւ կոչվում է՝ աշխարհների «մեծ մայր» եւ հրեական օրացույցով յոթերորդ շեմիթահի անկումը լինելու է՝ 2240 թվականին*[2]:

Ջոն Ջենկինսն իր «Galactic Alignment» գրքում փորձել է վեդայական Ռահու-Կետու վիշապի «հարությունը»՝ գլխի եւ պոչամասի միացումը, բացատրել որպես տիեզերական աղետի վիպական ներկայացում, սակայն հաշվարկների առումով դա նրա մոտ չի ստացվել, որովհետեւ չի օգտագործված SAROS - 54 տարեփուլով կրկնվող խավարման երեւույթի հին շումերական ժամանակների հաշվարկները: Եվ ամենա-

*1, *2, - Jhon Major Jenkins, «Galactic Alignment», 2002, USA, p. 252-255.



Figure 21.1. The alignment of the solstice meridian with the galactic equator

Արեգակի դիրքը Միջօրեականի եւ գալակտիկայի հասարակածի նկատմամաբ՝ մ.թ.ա. 1000թ.-ին, 2012թ.-ին եւ 5000թ.-ին: Նկարը՝ Jhon Major Jenkins, «Galactic Alignment», 2002, USA, p. 249

կարեւորը, վերոհիշյալ հեղինակներից ոչ մեկը չունենալով «Սասնա Ծռեր» էպոսում տեղ գտած ինֆորմացիան, եւ չմտածելով որ տիեզերական աղետը պետք է միաժամանակ համընկնի լուսնի հարավային մակաճում արեւի խավարման հետ *(մի բան, որ 54 տարվա փուլային հաշվարկով կա հնագույն շումերական սալիկներում; F. Thureau-Dangin, Tablettes d' Uruk, Paris 1922, Text no. 14)* *[1], սխալի մեծ շեղում ունի:

Ըստ հին քրմերի, երկրագնդի առանցքի տատանման մեկ ու կես փուլը՝ 38880 տարի է, որ իրենում «ներառում» է 720 հատ 54 տարեփուով կրկնվող խավարման փուլ՝ 54 x 720 = 38880: Տիեզերական մեծ տարին՝ 25920 տարի, ունի 480 հատ խավարման 54 տարեփուլ: Եվ քանի-որ, ինչպես Զոն Զենկինսն է ընդգծում իր գրքում, արեւը 36 տարում է անցնում մինչեւ գալակտիկայի հասարակածը եւ երկրագնդի առանցքի տատանումով ՝ Precession-ի երեւույթով մեկ աստիճանը 72 տարի է: Այս դեպքում, տիեզերական մեծ տարվա վերջում արգակի գալակտիկայի կենտրոնին ընդուպ մոտենալը եւ 54 տարփուլով կրկնվող արեւի խավարումը, ըստ իս *(իմ տեսակետը «Սասնա Ծռեր» էպոսի վերջի ուղերձով է հիմնավորվում)*, պետք է «կայանա» միաժամանակ: Եվ գալիք «տիեզերական աղետը», եթե պիտի տեղի ունենա արեգակի գալակտիկայի հասարակածին մոտենալու պայմանով, ապա ըստ «Սասնա Ծռեր» էպոսի, այն կարող է լինել ոչ թե 2012 թվականին, ինպես Մայաների հնագույն օրացույցն է ցուցում, այլ՝ 2013 թվականին: Եթե «տիեզերական աղետը» պետք է տեղի ունենա արեգակի գալակտիկայի Միջօրեականին ընդուպ մոտենալով, ապա այն կարող է լինել՝ 2222 թվականին, այլ ոչ թե Պատրիկ Վալլասի հաշվումներով՝ 2225թվին: Այս կարգի հաշվարկի համար, որտեղ հաշվի է առնված խավարման կրկնվող 54 տարեփուլը, մեզ համար հիմք է ծառայել մ.թ.ա. 585 թվականի Մայիսի 28-ին Հայկական լեռնաշխարհում տեղի ունեցած Թալեսի խավարումը*[2]:

*1,- B. L. Van der Warden, Science Awakening II, Oxford Univ. Press, N.Y. 1974, p. 103.
*2,- Նույն աղբյուր, էջ 121:

«Ու գարին եղավ քանց ընկույզ մի»:

Գարու աղերսումը ընկույզի՝ «կակալի», «կակեի» հետ հետեւյալն է. տոհմի պապը, տոհմի հիմնադիրը հին հայերի մոտ, աղերսվում է ընկույզի՝ կակալի հետ: Էպոսի ***Գագիկ-Կակո*** թագավորը Սասնա դիցերի մորենական նախահայրն է, որից եւ դյուցազունների այս տոհմի սկիզբը դրվեց: Ընկույզը որպես ամբողջ՝ գունդ, հնագույն համակարգում նախնական, ներունակ ամբողջի՝ գերագույն աստվածության ատրիբուտն է: Աթումը կամ նրա ատրիբուտ «Անգղ-Կարապի» համաստեղությունը աղերսվում է ժամանակների սկզբի հետ:

Փաստորեն, «Սասնա Ծռեր» էպոսի վերջաբանը, վերջին՝ անմահ եւ անժառանգ դից-հերոսի Ագռավաքարում սպասումն է, որի ելնելով աշխարհը կործանվելու է եւ ամենայն ինչ վերադառնալու է իր նախնական վիճակին: Եվ ժամանակների մոտ լինելու կանխանշանը՝ «Յորեն-Հացի Տուն-Օրիոն» աստեղատան ***մուրքին՝*** Կաթնածիրի կենդանակերպ աստղատներին վերադառնալն է: Փոքր Միհրի ***սպասումը, հույսը՝*** իր հոր «Յորեն-հացի տուն» աստեղատան վերադարձն է դեպի ***մուրք,*** երբ ժամանակները կլրանան: «Հացի տուն»՝ Դավիթը, շումերական ***Դումուզի*** աստվածության զուգահեռն է, նրա ԴՈՒՄՈՒ անունը հակադարձ կարդալու դեպքում՝ ՈՒՄՈՒԴ, սասնո բարբառով նշանակում է՝ «հույս, սպասում»*[1], որ այսօր էլ «որդի» եւ «հույս, սպասում» իմաստներով օգտագործվող եւ տարածված բառ է սասունցիների մոտ: Փաստորեն, յոթերորդ դիցը, որ մեռնող ու հառնող աստվածությունն է ե՛ւ որդի է, ե՛ւ հարության՝ բնության հարության սպասում, հույս է:

«Սասնա Ծռեր» էպոսի համարյա բոլոր պատումներում կա մի շատ կարեւոր էպիզոդ: Յոթ տարեկան Փոքր Միհրը չճանաչելով իր հորը, կռվում է Դավթի հետ եւ գետնում է նրան (Ս. Ծ., հատոր Ա, մաս I, էջ 374):

«Օրիոն» համաստեղությունը մոտավորապես ամեն 13 հազար տարին մեկ, «մոտենում է» Կաթնածիրին եւ գիշերահավասարի ժամանակ, նա այնքան մոտ է թվում հորիզոնին, որ կարծես «գետնված» լինի*[2]: Մյուս կողմից Սասնա էպոսում Դավիթը ներկայացնում է արեւը, արեւի «արական կողմը», Փոքր Միհրը որպես լուսնի իպոստաս, իր 54 տարեփուլային պտույտով, արեւի «խավարում» ստեղծող, այսինքն, Դավթին պատուհասող դիցն է: Էպոսի պատումներից մեկում Փոքր Միհրն այնպես է ապտակում հորը, որ սրա դեմքը 180^0 շրջվում է: Էպոսում տեղ գտած այս դրվագը հիշեցնում է երկրագնդի առանցքի տատանումով պայմանավորված Precession-ի օրենքը, քանի որ տիեզերական մեծ շրջափուլից հետո, արեւն «անս-

*1,- «Սասնա Ծռեր», հատոր Բ, մաս II, /Բառարան/, Երեւան 1951թ.:
*2, - G. Hancock, R. Bauval, «The Message Of The Sphinx», Jhon M. Jenkins, «Galactic Alignment».



Երկրագնդի առանցքի շեղումը տատանվում է՝ 22.1⁰ - 24.5⁰:
Առանցքի տատանման պատճառով Հյուսիսային բեւեռի համաստեղությունը մեզ համար փոփոխվում է: Տատանման լրիվ փուլը՝
22.1⁰ ➡ 24.5⁰ ➡ 22.1⁰ մոտավորապես 39-40 հազար տարի է:



Հնում, ամենակարեւոր աստեղատունը համարվում էր այն աստեղատունը, որտեղից գարնանային գիշերահավասարի ժամանակ, վաղ առավոտյան ծագում է արեւը: 12 կենդանակերպ աստղատուներից յուրաքանչյուրում՝ 30⁰, արեւը «սահելով մնում է» 2148-2160 տարի:
Յուրաքանչյուր աստեղատան մեջ՝ մոտ 2160 տարի, իսկ 12 աստղատուներով անցումը՝ 25800 - 25920 տարի, կոչվում էր տիեզերական մեկ մեծ տարշրջան՝ 12 x 30⁰ = 360⁰:

պասելի», 180⁰ «դարձով», կսկսի ծագել հակառակ կողմում՝ այսօրվա արեւմուտքում եւ ոչ թե արեւելքում:

Իր հորը պատուհասող, եւ նրա կողմից անիծված որդու պատմությունը, հայկական ավանդապատումներում, էպոսի Փոքր Միհրի զուգահեռ Արտավազդն է, որ բանտարկվում է Մասիս լեռան քարայրում. երկու հավատարիմ շները կրծում են նրա շղթաները, որ ելնի ու աշխարհը կործանի: Ըստ հին ավանդության, երբ Արտավազդը ծնվել է, Աժդահակի սերնդի վիշապազուն կանայք կախարդել են նրան, գողացել են Արտավազդին օրորոցից եւ նրա փոխարեն դեւ են դրել*[1]: Սակայն, 5-րդ դարի հեղինակ Եզնիկ Կողբացու հաղորդման համաձայն, հին հայերը իրենց փրկության հույսը կապում էին Արտավազդի քարանձավից դուրս գալու հետ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Երկրագնդի առանցքի շեղումը տատանվում է՝ 22.1⁰ - 24.5⁰: Առանցքի տատանման պատճառով հյուսիսային բեւեռի համաստեղությունը մեզ համար փոփոխվում է: Տատանման լրիվ փուլը՝ 22.1⁰ ➡ 24.5⁰ ➡ 22.1⁰, մոտավորապես 39 - 40 հազար տարի է: Հնում, ամենակարեւոր աստեղատունը համարվում էր այն աստեղատունը, որտեղից գարնանային գիշերահավասարի ժամանակ, վաղ առավոտյան, ծագում է արեւը: 12 կենդանակերպ աստղատուներից յուրաքանչյուրում արեւը «սահելով մնում է» 2150-2160 տարի *(յուրաքանչյուր աստղատունը՝* **30⁰,** *եւ 12 աստղատուներում՝* **12 x 30⁰ = 360⁰***)*: 12 աստեղատուներով անցումը՝ 25800 - 25920 տարի, կոչվում էր տիեզերական մեկ մեծ տարեշրջան: Այսօրվա աստղագիտության մեջ այս երեւույթը կոչվում է՝ *Precession-ի երեւույթ:* Արեւի ծագը վաղ առավոտյան՝ «Ցուլ» *(գարնանային գիշերահավասար)*, «Առյուծ» *(ամառային արեւադարձ)*, «Կարիճ» *(աշնանային գիշերահավասար)*, «Ջրհոս» *(ձմեռային արեւադարձ)*՝ համաստեղություններում, ըստ հնագույն համակարգի եւ կրոնական միստիցիզմի, աղերսվում է ժամանակների ***սկզբի*** եւ վերջի հետ: Հին կտակարանում «Եզեկելի» եւ Նոր Կտակարանում «Հայտնության» մեջ տեղ գտած նկարագրությունը, փաստորեն, աղերսվում է «արեւի ելքի» հետ: «Արեւի ելքի» այստեղ ներկայացված համադրումը եղել է 9 - 7 հազար տարի առաջ (տես էջ 426, նկ. #1 եւ #2):

*1,- Ս. Հարությունյան, «Հայ հին վիպաշխարհը», էջ 76:

Մյուս կողմից, ըստ հնագույն համակարգի, գալակտիկայի կենտրոնը եւ եզրը համապատասխանում են լուսնի եւ արեի ուղեծրերի հատման հանգուցակետերին՝ հարավային եւ հյուսիսային մակածներ: Ըստ հնագույն վեդայական տեքստերի, երկնային գլխատված վիշապը՝ Ռահու*(գլուխ)* եւ Կետու*(պոչամաս),* «ձգվում է» լուսնի այս երկու մակածներով եւ փորձում է կուլ տալ արեգակը, բայց քանի որ նա գլխատված է դա նրան չի հաջողվում: Նրա գլուխը գտնվում է գալակտիկայի կենտրոնում, «Կարիճի» եւ «Աղեղնավորի» մեջտեղում, ավելի ճշգրիտ՝ «Աղեղնավորի» 3^0-ում: Վիշապի պոչածայրը գտնվում է «Երկվորյակների» մոտ, գալակտիկայի եզրագծում: Հնում, շումերական ժամանակներում, լուսնի լրիվ պտույտը համարվել է մեկ եւ կես՝ 36տարի+18տարի կամ՝ 18 x 3 = ***54 տարվա շրջանը, երբ ամեն 54 տարին մեկ նույն օրը տեղի է ունենում խավարման երեւույթ:*** Շումերները սա կապում էին ՇԱՐ-ի հետ (մեկ Շարը = 3600 տարի), եւ 54 տարեփուլով մեկ ՇԱՐԸ հավասար է՝ **66.66 x 54 ≅ 3600 տարի*[1]:**

Փոքր Միերը, ինչպես հայկական «Սասնա» էպոսի մատեմատիկական խնդիրն է ցուցում, ամեն 54 տարին մեկ, գարնանային գիշերահավասարին, դուրս գալով Ագռավաքարից, կես շրջան անելով՝ նորից վերադառնում է *(գնալն ու վերադարձը՝* **360^0***)*, համոզվելով, որ աշխարհը կործանելու իր ժամանակը դեռ չի հասել: Ինչպես էպոսն է ցուցում, քարանձավից ելքի եւ մուտքի համար, 54 մարդկային տարին, Փոքր Միերի մեկ *սհաթն* է: Միերի արագությունը բազմապատկելով 40-ով, քանի-որ էպոսում ոչ պատահականորեն նշվում է 40 օրը, ստանում ենք մեկ զոդիակով սահելու 30^0 պրոցեսիայի աստղագիտական երեւույթի ժամանակը՝ 54 տարի x 40 = 2160 տարի: 12 աստեղատոներով սահելով՝ 30^0 x 12 = 360^0, Միերը լրում է տիեզերական մեծ տարին՝ 25920 մարդկային տարիների ընթացքում: Ինչպես հին հույները եւ քաղդեացիներն էին 54 տարվա փուլը հաշվում 3 x 18 = 54 եւ այն անվանում "Exeligmos"«լրիվ պտույտ» *(F. THUREAU-DANGIN, Tabletts d'Uruk, Paris 1922, Text no. 14': B. L. van der Warden, Science Awakening II, Oxford Univ. Press, N.Y. 1974, p. 103)*, նույն կերպ հաշվելու դեպքում՝ երեք կես կամ մեկ ու կես, ստացվում է երկրագնդի առանցքի տատանման լրիվ փուլը՝ 22.1^0 ➡ 24.5^0 ➡ 22.1^0**,** որ 38800 տարի է: Եթե հայկական էպոսում, նախահայրեր Սանասարն ու Բաղդասարը՝ ***մեկ լիքը*** եւ ***կես բուռ*** խմված ջրի արդյունք են, այսինքն, երկուսով միասին են ներկայացնում Precession-ի երեւույթը, ապա վերջին դից՝ Փոքր Միերը, որը փակելու է շրջափուլը, ըստ էպոսի, Precession-ի երեւույթը միայնակ ներկա-

---

*1- Հույները եւ բաբելացիք արեի խավարման հաշվարկները կատարում էին 18 տարվա կտրվածքով: Փաստորեն, հայկական էպոսը պահպանել է ՇԱՐ-ով հաշվարկելու հնագույն սկզբունքը: Մ. Խորենացին էլ է թագավորների տարեփուլերը հաշվում ՇԱՐ-երով: Հայերն ՇԱՐ-ը շումերական Šar = 3600, նույն բառն է, նույն իմաստով:

յացնողն է: Մի քանի պատումներում Փոքր Մհերը սպանում է իր հինգ քեռիներին *(օրնակ՝ Ս. Ծ., հատոր Ա, մաս I, էջ 374):* Այս պատումում, Մհերը նստած տեղը, աջով հոր գոտկատեղից բռնելով նրան բարձրացնում է գլխից վեր ու գետնով է զարկում ձախ կողմում: Մեկ ուրիշ պատումում, այնպես է ապտակում հորը՝ Դավթին, որ սրա դեմքը 180⁰ պտտվում է *(Ս. Ծ., հատոր Ա, մաս I, էջ 467-469):* Էպոսում համանման էպիզոդները չեն կարող պատահական լինել: Եգիպտոս այցելած հույն պատմիչ Հերոդոտը (մ. թ. ա. 5-րդ դար) հաղորդում է ***ժամանակների մասին:*** Ըստ նրա, եգիպտական քրմերը ժամանակի խրոնաոլոգիան գրանցել են հնագույն ժամանակներից՝ *«Այդ ընթացքում արեւը երկու անգամ մայր է մտել այնտեղ որտեղից ծագում է, եւ երկու անգամ ծագել է այնտեղ որտեղ մայր է մտնում»:* Ըստ ֆրանսիացի հայտնի եգիպտոլոգ, մատեմատիկոս Շեւայլե դե Լուբիցի վերլուծության, քրմերի ասածը հնարավոր է միայն Precession-ի երեւույթով. 25920 տարեփփուլի ավարտով, մեծ շրջափուլից հետո, արեւն «անսպասելի», 180⁰ «դարձով», կսկսի ծագել հակառակ կողմում՝ այսօրվա արեւմուտքում եւ ոչ թե արեւելքում: Դավիթը՝ շումերական ***Ութու*** արեւի աստծո զուգահեռն է, ***Արատտա*** երկրի Դումուզին է՝ «արեւն» է: Արեւի դեմքը 180⁰ «դառնալը» կամ Փոքր Մհերի կողմից իր հինգ քեռիներին սպանելը, աստեղատների շարժի եւ նրանց դիրքերի փոփոխման մասին է: ***«Կույս»*** համաստեղությունից մինչեւ ***«Ջրհոս»,*** վեց համաստեղությունների շղթայում միայն «Կույսն» է իգական, եւ նրանից հետո եկող հինգ համաստեղությունները «Կույսի» եղբայրներն են: Փոքր Մհերն իր մոր՝ Խանդուդի,- «Կույսի» համաստեղության հինգ աստեղատուն-եղբայրներին սպանելը, ապա իր հորը՝ արեւ-Դավթին պատուհասելը, աղերսվում է 54 տարեփուլով, խավարման եւ 25920 տարվա շրջափուլի ավարտի համադրման հետ, երբ արեւի ծագման դիրքը վեցյակ աստեղատներով փոխվում է 180⁰-շրջադարձով:

Ըստ «Սասնա Ծռեր» էպոսի, Փոքր Մհերի նախահայր Սանասարը գնում է հմայքների երկիր՝ գալակտիկայի կենտրոն, գլխատում է վիշապին եւ ազատելով Քառասուն-Ճյուղ-Ծամ Դեղձունին՝ արգակին, բերում է արտահայտված աշխարհ եւ ամուսնանում նրա հետ: Սա ժամանկների սկիզբն է. Սանասարը հաղթելով 60 փահլեւաններին, որ ժամանակի խորհրդանիշն են էպոսում, տիեզերքում հաստատում է ժամանակը: Փաստորեն, ըստ հայկական էպոսի «Երկվորյակները» լինելով գալակտիկայի եզրագծում՝ ***լուսնի հյուսիսային մակած,*** ուղեւորվում են դեպի գալակտիկայի կենտրոն՝ ***լուսնի հարավային մակած,*** եւ գլխատում են վիշապին ու գալակտիկայում կյանք են ստեղծում: Փոքր Մհեր վերջին դիցը, ի տարբերություն նյութական տիեզերքն արարող իր նախորդ աստվածությունների, փակում է փուլը:

Նկար-2. The Mithraic tauroctony (from Maarten Vermaseran, *Corpus Inscriptionum et monumentorum religionis mithriacae*. The Hague: Martinus Nijhoff, 1956)

Նկարում բոլոր կենդանիները ներկայանում են որպես երկնային համաստեղություններ: Միթրանիզմը որպես հավատամք, Կիլիկիայի ծովագնացների միջոցով տարածվելով Հռոմեական կայսրության մեջ, I-III դդ. դարձավ կայսրության դոմինանտ կրոնը:



Նկար-1. Galactic framework of Mithraism (from Maarten Vermaseran, *Corpus Inscriptionum et monumentorum religionis mithriacae*. The Hague: Martinus Nijhoff, 1956)

Ցուլի պարանոցին բազմաստեղն է՝ Pleiades ն

Նախ, նետահարելով սպանում է իր հորեղբոր որդի Աստղ Յոլածնին*[1], որ «Անգղ-Կարապ» համաստեղությունն է: Փաստորեն, «Անգղ-Կարապ»-ը՝ Գագիկ-Կակե *նախապապ-սկիզբ* աստվածության աստեղային ատրիբուտն է, որ ժամանակների վերջում նորից վերահառնել էր: Փոքր Միները սպանում է նրան: Ապա, ըստ մի քանի պատումների, սպանում է իր քեռիներին: Դավթի մահվան լուրը լսելով Խանդուդը ինքնասպան է լինում: Ըստ մի շարք պատումների, սպանված հոր վրեժը լուծելիս, Փոքր Միները իսպառ վերացնում է Խլաթի՝ լուսնապաշտների կլանի վերջին պառավին եւ ***սեւ կատվին,*** որ թաքնագիտական խորհրդաբանության մեջ վերարտադրության սիմվոլ-խորհրդանիշ է: Եւ վերջում, մինչեւ Ագռավուքար մտնելը կռվում է բարձրագույն Աստծո յոթ հրեշտակների հետ ու սրանք չեն կարողանում հաղթել Փոքր Միերին: Կռվի ընթացքում Միերի թուրն անցնելով անդրաշխարհ, հասնում է մինչեւ «սեւ ջուր» ու եթե Աստծո հրեշտակն իր թեւը դեմ չտար թրի առաջ, ապա աշխարհը կկործանվեր: Փաստորեն, մինչեւ Ագռավաքար մըտնելը, Փոքր Միները կանխագծում է, թե ինչ է անելու Ագռավաքարից դուրս գալուց հետո: Այսինքն, այն ինչ նրան չի հաջողվում անել մինչեւ Ագռավաքար մտնելը՝ աշխարհը կործանել յոթ հրեշտակներին հաղթելով եւ սեւ ջուրը թրատելով, նա կանի դա քարայրից ելնելով:

Ըստ հնագույն թաքնագիտության, Մեծ Արջից արտահայտվող արական յոթ ճառագայթները միանալով Բազմաստեղի յոթ իգական ճառագայթների հետ ստեղծում են մեր այս երեք չափումնանի գոյաբանական կյանքը Ծիր Կաթնում: Սակայն միչեւ Ագռավաքար մտնելը, Փոքր Միները կռվում է յոթ արական հրեշտակների հետ, որ Մեծ Արջի կամ Սայլի համաստեղության յոթ աստղերի արական յոթ ճառագայթներն են: Կռվի ընթացքում նրա թրի հարվածը հասնում է մինչեւ «սեւ ջուր»՝ Բազմաստեղի իգական յոթ ճառագայթներ *(Բազմաստեղը՝ «Յուլի» համաստեղության Պլեադաներ աստղերն են)*, եւ եթե հրեշտակը թեւը դեմ չտար, ապա աշխարհը կկործանվեր վաղորոք, քան նախատեսված է: «Սասնա Ծռեր» հայկական հնագույն կարգականոնում, Փոքր Միները ժամանակների վերջում երեք ֆուկցիա պիտի կատարի: 1-ին, պետք է սպասի «Հացի տուն-Օրիոն» համաստեղության ***մուրքին***՝ Կաթնածիրին մոտենալու ժամանակներին, 2-րդ, պետք է իրեն արգելող «Մեծ Արջի» յոթ արական հրեշտակներին հաղթի, 3-րդ, պետք է «Բազմաստեղը» սրախողող անելով, սպանի «Յուլին», դրանով իսկ «փակի» տիեզերական հին շրջափուլը կամ ընդհակառակը՝ «Յուլին» սպանելով նոր տիեզերք արարի*[2]:

---

*1,- «Ս. Ծ.», հատ. Բ, մաս I, պատում ***Ը,*** էջ 347:

*2,- «Սասնա Ծռեր» էպոսում, Մեծ Միերն է սպանում սեւ եզին՝ «Յուլին»: Ըստ իս, այուժետային այս էպիզոդում ժողովրդական պատմողի կողմից Փոքր եւ Մեծ Միերների դերակատարությունները ու տեղերը խառնված, փոխված են:

Փոքր Մհերն ինքը տիեզերական մեծ տարվա պտույտն է, Precession-ն է, որ փակում է տիեզերածավալման հին փուլը եւ բացում է նոր փուլ, որը հին փուլի կրկնությունը չի՛ լինենու: Գերեզմանից հայրը՝ Դավիթը, որդուն պատգամում է՝ գնալ Ագռավաքար. *«Քո տեղ ենտե՛ղն ի, չուր անծին ծնանի, **անմախ մեռանի»***[1]*:* Փաստորեն, ըստ այս պատումի, Փոքր Մհերն իր ֆունկցիան կատարելուց հետո կարող է մեռնել՝ հանգստյան կոչվել, քանի որ միակ անմահ եւ անսերունդ դիցն էպոսում հենց ինքը՝ Փո՛քր Մհերն է:

Նախկին տիեզերածավալումը սկսվում է Գագիկ-Կակե թագավորով, նրա զավակներ՝ Ծովինարով եւ Թորոսով, ապա նրա թոռները՝ երկվորյակները, սպանելով առաջին վիշապին, հաստատում են կյանքը Ծիր Կաթնում: Փոքր Մհերը նոր փուլ բացելու համար սպանում է ոչ թե վիշապին, այլ՝ «Ցուլին», որի արյունով նոր համակարգ, նոր շրջափուլ պիտի հաստատվի: Այս առումով, «Սասնա Ծռեր» էպոսի տարբեր պատումներում նույնպես կարեւոր եւ ֆունկցիոնալ իմֆորմացիա կա: Էպոսի վերջում, չորս սերունդ աստվածությունների համար հավերժական Քեռի Թորոսն իմանալով Փոքր Մհերի փակվելը, կսկծու մեռնում է: **Քեռի Թորոսը նյութական տիեզերքի հյուսն է, ժամանակների վերջում նյութական աշխարհը պետք է լուծարվի, Քեռի Թորոսը պետք է մեռներ: «Ցուլի» համաստեղությունը նաեւ աղերսվում է Թոր-Թեյշեբա-Թորգոմ-Քեռի Թորոսի հետ: Նա այս համաստեղության արական ուժականությունն է:**

Հարց է առաջանում՝ թե «Սասնա Ծռեր» էպոսում ի՞նչ գործ ունի հակասական գծերով օժտված բացասական այս կերպարը: Ո՞վ է Փոքր Մհերը: Հնագույն կարգականոնն ասում է, որ նյութական աշխարհի շրջափուլը փակող վերջին դիցը, նյութական աշխարհը մերժողն է, նա ահեղ դատաստանն ինքն է, ինչպես Քրիստոսն իր երկրորդ գալստյան ժամանակ: Փոքր Մհերի թաքնագիտական, խորհրդաբանական սիմվոլները բացահայտում են նրա ով լինենը: *Մեւ թռչունը,* այս դեպքում ագռավը, ինչպես եգիպտական ԲԱ-ն, տիեզերական բարձրագույն «միտք-ոգու» սիմվոլն է: *Քարայրը,* որտեղ Փոքր Մհերը կենում է, Քիմերական գոտուց*[2] այն կողմ գտնվող բարձրագույն «բուն երկինքն» է՝ ութերորդ երկինքը, հոգեւոր երկինքը: Մհերը, տիեզերքի նյութական շրջափուլի վերջում, իր մեջ ներառելով աշխարհի բոլոր հոգիներին, վերացնում է նյութական տիեզերքը եւ անցում է կատարում դեպի նոր՝ հոգեւոր սֆերա: Փոքր Մհերի կերպարը՝ որպես նյութական աշխարհը վերացնող եւ մարդկությանը դեպի հոգեւոր սֆերա տանող վերջին աստվածություն, պահպանված ձեւով գոյություն ունի թե՛ հին եգիպտական, թե՛ հին վեդայա-

---

*1,- Ս. Ծ., հատոր Ա, մաս I, էջ 377:

*2,-Ա. Շիրակացի, «Մատենագրություն», 1979թ., Երեւան, էջ 119:

կան եւ թե՛ արեւմտյան ուսմունքներում: Սակայն, այս առումով հայկական «Սասնա Ծռեր» էպոսը բացառիկ է. այն լիարժեք ներկայացնում է հնագույն աշխարհճանաչողությունը եւ նյութական տիեզերքի ծավալումն իր ամբողջական փուլերով, մինչեւ բարձրագույն հոգեւոր սֆերա: Նախահնդեւրոպական ժամանակների հնագույն կարգականոնը՝ ***«Մայր հավատամք պատումը»*** *(Basic myth),* տարածվելով արեւմուտք եւ արեւելք, ունեցել է բազմաթիվ աղավաղումներ, իմպրովիզացիաներ, կրճատումներ, սակայն իր ծննդոցում՝ Հայկական լեռնաշխարհում, իր լիարժեք չորս ճյուղերով այն պահպանվել ու հասել է մինչեւ մեզ: Հայ գեղջուկը չհասկանալով հնագույն հեթանոսական Ավետարանի՝ «Սասնա Ծռեր» էպոսի միստիկ իմաստները, քրիստոնեությունից հետո, իր բնազդով պահպանել ու սերնդե սերունդ որպես ***հեքիաթ*** փոխանցել է բազում հազարամյակների վաղեմություն ունեցող իր գենետիկական հավատամքը, որ իր բազմահանճար քրմերի հաստատած կարգականոնն է եղել:

Մ. թ. I -III դարերում, Միթրականությունը դոմինանտ հավատամք լինելով կայսերական արեւմուտքից մինչեւ կայսրական արեւելք տարածքներում, իր խոր ազդեցությունն է ունեցել քրիստոնեության վրա: Նոր Կտակարանում տեղ գտած պատումներն ու դրվագները թաքնագիտական նշանակություններ ունեցող կոդավորված էպիզոդներ են, որ լիովին առկա էին Միթրանիզմում:

«Որդի աստվածությունն» իր երկրորդ գալուստով, տարբեր հավատամքներում տարբեր անուններով նո՛ւյն աստվածությունն է, նո՛ւյն ֆունկցիաներով: Հնդկական համակարգում նա կոչվում է՝ Քրիշնա, արեւմուտքում՝ Քրիստոս, հնագույն հայկական հավատամքում նրա անունը Փոքր Միհր է:

Համբարձման գիշերը Փոքր Միհրի ելնելու փորձի ժամանակ, նրա ընթացքի արագությունն ու ժամանակը, որ ներկայացրինք այս գլխի սկզբում, աղերսվում է խավարման 54 տարեփուլի, պրոցեսիայի երեւույթով տիեզերական մեծ շրջապտույտի մեկ ու կես փուլի՝ 25920 + 12960, եւ վեդայական Բրահմի կյանքի տեւողության հետ (311040000000000 մարդկային տարի): Փոքր Միհրի մեկ ակնթարթը քարայրում *(քարայր խորհրդասիմվոլը նշանակում է՝ բուն երկինք)*, հավասար է մարդկային կյանքի մեկ տարվան:

«Կարմիր կիրակին հիրկվան պատարագ որ կըլնը,
Էն հիրիկվան մեկ մարդ ուր ախչկան կ'ասը.
-Իլի կինա ժամ, մում կպը, ոխնուկ կրակ առ, քի:
Ախչիկ կըլնի տուս, կ'իրիշկը, կը տեսնա՝
Եդա քարեն ճրագի բուխ կելնի.
Էդ ախչիկ ելավ կինաց էն ումուտով, թի ժամն ի,
Մտավ էնտեղ, զճրագ կպցուց,
Դարձավ, տը կըեր, տուռ եկավ իրար.



Ախչիկ մնաց էնտեղ:
Տնսավ, որ երկնուց մանանա իկի.
Միերն էլ առից, կերավ, ձին էլ, ախչիկն էլ:
Էլ չքաղցացան մինչեւ տարին թըմըմավ:
Էն ավուր որ, ինչ տարին թըմըմավ,
Ախչիկ զճրագ կպուց. Ինչ տուռ բացվավ, ելավ տուս,
Ճրագ առից, նկավ տուն: Խեր ասաց, - Ախչիկ,
Եսիկ տարին թըմըմավ, տու հո՞ւր էր կացի:
Ախչիկ ասաց. – Խերիկ, չէ՞ ես նուր կացի.
Ճրագ կպուցիր, դարձիր իմ, Իսկի չիմ նստիր էնտեղ»:
(Գրի է առել Գ.Հովսեփյանը, 1892թ., պատմող՝ Մոկացի Հովան: «Ս. Ծ.», հատ. Ա, էջ 244-245, Երեւան, 1936թ.):

Հնքսագոնը տարածածավալային խորանարդն է:



Հնագույն հայկական արարչության մասին՝ «Վահագնի ծնունդ» հեթանոսական ծիսական երգը՝ «ոսկյա բանալին» է, որ նույն կարգակառույցն է՝ շրջանագծերի ներկայացմամբ: Եւ միջին Ծովից ծնված ԲԱՆ-ը, Լոգոսը*(Վահագնը)*, տիեզերական արարչության եռահարկ արտահայտության մասին է:

«Շրջանագիծը» *(կենտրոնում կետով)*, եռանկյունին եւ հնքսագոնը, իրար հետ տասնմեկ թվային հիմքով 9-ական համակարգ է, եւ նույնը՝ Լճաշենի 4 հազարամյա բրոնզե մոդելն է՝ «Կենաց Ծառը» կամ «Տիեզերական Ծառը», որտեղ երկրաչափորեն «աշխատում» են՝

[0, 1, 3, 5, 7, 9, 11],

[0, 2, 4, 8],

[0, 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9],

[4 + 4 = 360º + 360º] բոլոր կոմբինացիաները:



Ուրարտական շրջանի (մ.թ.ա. 9-7դդ.) վնց վիշապներով ծիսական ջրամանը, որը համապատասխանում է վնց նզր ունեցող երկրաչափական *հնքսագոնին:*

Շրջանագիծը որպես միստիկ խորհրդաբանություն, առկա է նաեւ հայկական պարերում: Եթե մեռածի գերեզմանի թաղման շուրջպարն է, ապա պարողների «շղթան» պտտվում է աջից ձախ, հարսանյաց պարերում՝ հակառակը *(տես՝ Սրբուհի Լիսիցյան, «Հայկական հնագույն ծիսական պարեր»)*: Շրջանագծով ձախից աջ պտույտը՝ արտահայտված իրականություն-աշխարհն է, աջից ձախ պտույտով՝ մեռյալի հոգին ուղեկցում են դեպի հոգիների աշխարհ:

Վերեւում արդեն խոսեցինք Կաթնածիրի չորս աստղատերերի՝ կարդինալ կետերի մասին: Եվ *շրջանաշղթան,* եւ *խաչը* խորհրդանշում են՝ *քառակուսի = շրջանագիծ,* որովհետեւ երկուսի դեպքում էլ՝ 4 անկյունների գումարը 360º է, որն «ամբողջի» խորհուրդն ունի: Երկու շրջանաշղթաները՝ 4 + 4 = 8

Սարդուրի 2-րդի սաղավարտը՝ 4+4=8 վիշապներով եւ 11 դռներով *(ուրարտ. շրջան մ.թ.ա. 1-ին հազ.):*

Երկու շրջանագծերի R-երի հարաբերությունները՝ 1/φ եւ 1/φ² է: Արարչական սկզբունք *(ուրարտ. շրջան մ.թ.ա. 1-ին հազ.):*

Երկու շրջանաօղակներով տիեզերքի կառուցվածքը: Մենամորի առնանդամ հուշարձան *(մ.թ.ա. 3-րդ հազ.):*

«կայացած» տիեզերքի (արարչության) խորհուրդն էր հների հավատամքում, որ նախահնդեւրոպական թվային համակարգն էր ***(Ութը հասկացվում էր՝ երկու անգամ չորս եւ փուլի ավարտ. սա նախահնդեւրոպացիների արխայիկ թվային համակարգն է եղել մինչեւ տասական համակարգին անցնելը)*[1]:*** Փաստորեն «Սասնա Ծռեր» էպոսի կառուցվածքը՝ չորս ճյուղ, արական եւ իգական աստվածություններով՝ 4 + 4 = 8, իր հիմքում կառուցված է նախահնդեւրոպական ժամանակների թվային համակարգով:

Տիեզերական Ոգին, որի սիմվոլը՝ *շրջանագիծ = քառակուսին* է, որ նաեւ քառաթեւ խաչ է, արտահայտվում է նյութականի մեջ, որի սիմվոլի երկրաչափական ձեւը նույնպես 4-ի հետ է աղերսվում՝ *շրջանագիծ = քառակուսի*: **Առաջին խորանարդը՝** Տեսչությունն Աստծո, աղերսվում է նյութական տիեզերքի հյուսն՝ Թիոր-Թեյշեբա-Թորգոմ-Քեռի Թորոսի հետ, որտեղ բնակվում է **երկրորդ խորանարդը՝** տիեզերական Ոգին:

«Սասնա» էպոսն այս առումով եւս պարունակում է համակարգի բացառիկ ճշտություն: Փոքր Մհերի Ագռավաքարում փակվելուց հետո, համարյա բոլոր պատումները «ընդգրծում» են, որ լուրը հասավ Քեռի Թորոսին (Թիոր, Թեշեբա՝ 4-րդ աստվածություն, առաջին «խորանարդ») եւ նա՝ հավերժական Քեռին՝ կսկծու մեռավ, իմանալով Մհերի փակվելու մասին: Խորհրդաբանությունն այս է՝ երբ Ոգին *«փակվում է բուն երկնքում»,* ապա նյութական տիեզերքը լուծարվում է: Արարչության «մատրիցայում», Փոքր Մհերը՝ երկրորդ «խորանարդը», գոյաբանական աշխարհի վերջին փուլը եզրագրծողն է, նաեւ՝ վերջին դիցն է, որ «վերադարձի շրջապտույտը» խորհրդանշողն է՝ անմահ-անժառանգն է: Նրանով «արարչությունը» լրացվեց, եւս «մի փոքր ժամանակ» ու Որդի-դիցը Ագռավաքարից դուրս ելնելով, կործանելու է աշխարհը, մինչեւ նոր փուլ, նոր սկիզբ:

«Փոքր Մըհէր»-ը որպես գոյաբանական աշխարհի ժամանակները՝ սկիզբը եւ վերջը ներկայացնող խորհրդաբանական նշան, «ներկայանում է» նաեւ հիթթիթական աղոթական տեքստերում եւ Հին Կտակարանում:

---

*1,-T. Gamkrelidze & V. Ivanov, “The Indo-European & The Indo-Europeans”, p. 747.

ՊԱՏՄԱՀԱՅՐ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻՆ
ԵՎ
«ՍԱՍՆԱ ՏՈՒՆ»
ՀՆԱԳՈՒՅՆ ՀԱՎԱՏԱՄՔ-ԷՊՈՍԸ

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ

«Սասնա Ծռեր» էպոսը հազարամյակների խորքերից բանավոր փոխանցմամբ հասնել է մեզ եւ բացառիկ ճշտությամբ պահպանել է թե՛ հնագույն հավատամքի արարչական **1➔ 4+4 = 8** կարգակառույցը ու նրանում հնագույն նախահնդեւրոպական ժամանակների բինարիզմի եւ դուալիզմի սկզբունքները եւ թե՛ աստվածների աստեղային կոդերը՝ նրանց համապատասխան աստեղատները: Այն հարցին թե ինչպե՞ս է դա հնարավոր, ունենք մի քանի կարեւոր փաստարկներ:

Առաջին. Դարեր շարունակ, հայոց գյուղական կենցաղում, մինչեւ 19-րդ դարի վերջերը, երգով համեմված պատումը, աշխատանքից դուրս «զվարճանքի» միակ եւ ամենասիրված ձեւն էր: Նույնը եւ այսօր է. ԱՄՆ-ի նման զարգացած երկրում, կինոն, որն ի վերջո պատում է, այսօրվա ամենամասսայական զվարճանքի (entertainment) ձեւն է: Դուցազներգությունը կամ հեքիաթը որպես արվեստի՝ «հմայելու» միջոց, առ այսօր ամենամասսայական եւ կատարյալ ֆորման է:

Միջնադարում, դյուցազներգություն կամ հեքիաթ պատմողը՝ ժողովրդական գուսանը, կարեւոր դիրք ուներ հասարակության մեջ եւ կարողանում էր իր ապրուստը վաստակել պատմելու արվեստով: Եվ նման «մասնագետներն» իրենց «գործը» փոխանցում էին սերնդից-սերունդ՝ հորից-որդի հաջորդությամբ:

Երկրորդ. Երբ պատումը բացառիկ գունեղ է, ունի ընդգծված կերպարային լուծումներ ու սյուժետային կուռ կառուցվածք՝ հմայող ու տանող ընթացք, եւ նրանում կերպարների անօրինակ անունները, թվերը եւ սյուժետային ընթացքը այնքան է տպավորիչ եւ միստիկ, որ «հնարավոր չէ» այն փոփոխել, այլապես, որեւէ ֆունկցիոնալ փոփոխություն կփլուզի ամբողջ սյուժետային ստրուկտուրան եւ կդառնա անհետաքրքիր *(սա կարող ենք ընդունել որպես գրողի փորձառությամբ հաստատված կարծիք)*, ապա տվյալ պատումը, ժողովրդական պատմող գուսանի համար դառնում է բացառիկ կարեւոր ու թանկարժեք, եւ նա այն փոխանցում է հնարավորին չափ անփոփոխ:

Երրորդ. Հնագույն քրմերի կողմից ստեղծած հավատամքային պատումները՝ հնագույն կարգականոնը, հազարամյակներ շարունակ ժողովրդի կենցաղն էր, կյանքը: Հողագործը գիտեր, որ աստղի ծագումով է սկսելու իր աշխատանքը, երբ է թխելու ձմեռվա պաշար իր հացը, երբ է նշանդրեքի եւ ամուսնության ժամանակները եւ այլն, եւ սրանք բոլորը աղերսվում էին աստվածների, հնագույն ծիսական տոների հետ, ինչպես նաեւ երկնակամարում աստղատների հետ, որը կարծես պրակտիկ ***«երկնային ժամացույց»*** լիներ: Փաստ է, որ հայ ժողովուրդը, քրիստոնեությունն ընդունելուց հետո էլ,

դարեր շարունակ պահպանել ու հիշում էր իր հնագույն հավատամքի հետ աղերսվող ծիսական տոները, զրույցները, երգն ու պարը: Ինչպես 5-րդ դարից սկսած գրում են հայ մատենագիրները, ժողովուրդը չէր մոռացել՝ երգում ու պատմում էր հեթանոսական ժամանակների իր ծիսական եւ «Թվելյաց երգերը»: Թաղման եւ հարսանյաց շուրջպարերը՝ աջից ձախ եւ ձախից աջ, որ աղերսվում էին հոգեւոր աշխարհի եւ հնագույն հավատամքի հետ, հայկական գյուղերում պահպանվեցին մինչեւ 20-րդ դարի առաջին կես:

Չորրորդ. Արեւապաշտների գյուղերը Հայաստանում, որոնք թաքուն էին պահում իրենց հավատամքը, գոյատեւել են մինչեւ 19-րդ դար:

Հինգերորդ.. Հին Հայաստանում, փաստորեն, պատումն անգիր անելու եւ պատմելու հաստատված ու մշակված դպրոց է եղել, որ ավանդաբար պահպանվել ու փոխանցվել է ուսուցչից աշակերտ եւ հորից որդի հաջորդականությամբ:

Վեցերորդ.Հայաստանում թաքնագիտական էզոթերիկ գաղտնի դպրոցները եւ եղբայրակցությունները, որոնք սերնդե սերունդ փոխացում էին իրենց էզոթերիկ գաղտնի գիտելիքները, պահպանվել են մինչեւ 1915 թվականները: Համաշխարհային հեղինակություն Ի. Գուրջիեւն իր էզոթերիկ, գաղտնի գիտելիքները ստացել է Անի քաղաքում, Սարմունք գաղտնի եղբայրակցությանը ուսանելով: Նույնիսկ Տիբեթում եւ Եգիպտոսում նա չգտավ իր փնտրած այն գաղտնի գիտելիքը, ինչ-որ ստացավ Անիում: Նրա հայտնագործություն համարվող իննական համակարգ-բանաձեւ-գծագրությունը, հոգեւոր երաժշտությունը եւ հոգեւոր պարերը, որ իրենց մեջ միտում են գոյաբանական եւ հոգեւոր աշխարհների համակարգը եւ կապի միջոցները, իրականում, հայկական ֆոլկլորից վերականգնված ոսկյա գոհարներ են:

Յոթերորդ. Դարեր շարունակ Հայաստանում թաքնագիտական հոգեւոր դպրոցների առաքելություններից էր՝ հնագույն կարգականոնը թեկուզ որպես «հեքիաթ» ժողովրդի հիշողության մեջ պահպանելու եւ տարածելու խնդիրը: Որովհետեւ, ըստ թաքնագիտական իմաստնության՝ ա)պատումը եւ աստվածների անունները վիբրացիոն համագարգ է, եւ քանի ասվում եւ պատմվում է հնագույն հեթանոսական աստվածաշունչ-կարգականոնը, այնքան մնում է կենդանի: Բ) Ըստ հնագույն կարգականոնի, տիեզերքը փուլային կրկնությունների շղթա է, եւ տիեզերական ամեռը՝ երբ գարնանային գիշերահավասարին արեգակը «Ձկների» համաստեղությունում է, տեւում է միայն 2160 տարի, որից հետո նոր արթնություն է սկսվում «Ջրհոսի» համաստեղությունում: Արթնության նոր փուլի ժամանակ, հնագույն կարգականոն-Աստվածաշնչի իմացությունը պարտադիր հոգեւոր պայման է:

Ութերորդ. Հոգեւոր եւ նյութական սֆերաների միդիատոր, Կույսից ծընված, մեռնող ու հառնող աստվածության մասին պատմությունը, որ շումերների մոտ Դումուզին էր, Հնդկաստանում, վեդայական գրականության մեջ՝ կույս Մայա Դեւակիի որդի Քրիշնան է, եգիպտական համակարգում՝ Օզիրիսն էր, հունականում՝ Դիոնիսիուսն էր, հայկականում՝ Արա գեղեցիկը կամ «Սասնա Ծռեր» էպոսի Դավիթը, եւ նոր կրոնում՝ Քրիստոսն է, անփոփոխ պատում է, քանի որ հոգեւոր կապի*(բարձրագույն մեդիտացիա)* եւ հոգեւոր առաջընթացության համար *(աստիճանական հոգեւոր հրավերք)* այն անհրաժեշտ պայման էր Դելֆիի, Հելիոպոլիսի, Խալդեական հոգեւոր դպրոցներում*[1]: Եվ այս անփոփոխ պատումն աղերսվում է մակրոկոսմոսի՝ տիեզերական մարդու հետ: Լուսնի հյուսիսային մակածից մինչեւ հարավային մակած ձգված օձագալար գլխատված աներեւույթ վիշապը, որ երկնքում ձգվում է՝ «Երկվորյակների» համաստեղությունից մինչեւ «Աղեղնավորի»-3^0-ն, այդ տիեզերական մարդու օձահուր-Կունդալինին է՝ հոգեւոր առաջընթացի իր յոթ չակրաներով: Ըստ հին քրմերի, ***Մակրոկոսմոսի***՝ «վիշապի» զորությունը գալիս է տիեզերական կենսատու աղբյուր գալակտիկայի կենտրոնից... Ինչպես վերեւում այնպես էլ ներքեւում բանաձեւի համաձայն, մարդու հոգեւոր անատոմիան՝ ***միկրոկոսմոսն*** է, որ ***մակրոկոսմոսի***՝ տիեզերքի սկզբունքով ու նմանությամբ համակարգ է:*[2]: Եվ, «Սասնա Ծռեր» էպոսը այդ ***մակրոկոսմոսի*** ծննդի եւ փուլերով արտահայտվելու մասին է:





*1,- Timothy Freke & Peter Gandy, «The Jesus Mysteries», 2000, USA, p. 21-26, 253-256.
*2,- Jhon Major Jenkins, «Galactic Alignment», 2002, USA, p. 83.

Ստորեւ ներկայացնում ենք «Սասնա Ծռեր» էպոսը պատմող գզրչիների մասին*[1], որոնք փաստորեն, «գաղտնի» խմբեր են եղել եւ ունեցել են «ծածկագիր» լեզու: Թաքնագիտական սիմվոլների *(լեզվի)* եւ սրանց «գաղտնի» լեզվի համեմատությունը ցուցում է, որ դրանք լիովին համանման են: Հավաքագրող Ս. Հայկունին գաղափար անգամ չի ունեցել, թե իրականում ովքե՞ր են գզրչիները, եւ-որ նրանց առաջին առաքելությունը ոչ թե բուրդ ծախելն է եղել, այլ «Սասնա Ծռեր» «հեքիաթը» տարածելը:

ԱՌԱՋԱԲԱՆ

(«Սասնա Ծռեր» հ. I, Երեւան, 1936թ., պատում՝ ***Է,***)

Այս պատումն առաջին անգամ տպված է Եմինյան Ազգագրական Ժողովածուի Բ հատորում, 1901թ.: Պատումի վերջում Ս.Հայկունին ունի հետեւյալ ծանոթությունը. «Ցարգ ունեցած հետաքրքրութենես այն յեզրակացության հասած եմ, վոր Սասունա Դավիթ եւ Մհեր դյուցազնական վեպը Մոկացի գզրարարներ* տարածած են հեռու գավառներ, նաեւ փոքր մասամբ Կումանցի յեվ Վոզմեցի գզրարարներ: Սոքա իրենց արհեստը, ուր վոր ի գործ կը դնեն, անդ եւս կը պատմեն Սանասար ու Բաղդասար, Դավիթ եւ Մհեր, նաեւ այլ եւ այլ հեքիաթներ:

Գարուն, ամառ, աշուն սոքա կը տարածվին Բշերի, Ռավանգա, Մահմըտանք, Մուշ, Բուլանխ, Խլաթ, Արծկե, Արճեշ, Ապադա եւ այլն, իսկ ձմեռն եւս Աճամ (Յերեվանա նահանգ):

Խումբ-խումբ կը տարածվին ամեն կողմեր. յուրաքանչյուր խումբ 5-10-15 հոգի կը լինի:

Այն խումբը առաջին տարին վոր գյուղի մեջ գզրարարություն արած է, հաջորդ տարիներն եւս նույն խումբը պիտի անե. վոր եւ է մի ոտար խումբ չե կարող այդ գյուղը մտնել, յեթե համարձակի մտնել թեեւ հանկարծ՝ ձայն չեն հաներ, կռիվ եւս տեղի չունենար, սակայն յերբ հարմար վայր մի (իրենց հայրենիքի մեջ) այդ խմբի վոր եւ է մեկին, պատահեցան, կը սպանեն:

Գզրարարները խիստ չարքաշ կյանք ունին, գյուղե գյուղ, տնե տուն ման կը գան, ցրտին եւ անձրեվին յերբեմն դուրսը, յերբեմն ներսը, յերբեմն անոթի, ծարավ եւ առանց անկողնո, շատ անգամ չոր հողի վերա, գլխու ներքեվ իբր բարձ մի քար դրած՝ կը մրափեն:

Յուրաքանչյուր խումբ ունի մի հատ ***նաղլ ասող,*** վորպեսզի թե իրենք այդ չարքաշ կյանքի մեջ զբաղվին եւ թե վոր գյուղ գնան, զբաղեցնեն նույն գյուղացիքը:

*1,- «Սասնա Ծռեր» հ. I, Երեւան, 1936թ., պատում՝ ***Է,*** պատմեց Մոկացի Սախո: Գրի է առել Ս. Հայկունին: Պատմողը պատումը լսել է կիսաթաքուն կյանք վարող գզրչիներից. տես՝ առաջաբանը: Այս պատումն առաջին անգամ տպվել է Եմինյան ազգագրական Ժողովածուի Բ հատորում, 1901թ.-ին (Ս.Հայկունու ծանոթության մեջ սովորական են գզրարար եւ գզրար ձեւերը. թողնում ենք անփոփոխ: Խմբ):

Վոր մեկ խմբի մեջ վոր լավ նաղլ ասող կա, այդ խմբի պատիվը շատ ե. նույն խմբին լավ եւ առատ ուտելիք կը տրվի:

Մի խումբ յերբ առաջին անգամ մի գյուղ մտավ, գյուղի ոդայի տերը կամ ռեսը կը հարցնե, յեթե իրենց մեջ լավ նաղլ ասող լինի, կ'ընդունե:

Ս. ՀԱՅԿՈՒՆԻ

Այդ գզրարարներու չարքաշ կյանքն, թե ագահությունն ասեմ՝ գիրենք մղած են գողության: Գողությունն արհեստ դարձած ե իրենց համար:

Բրդի գողությունը շատ ճարպիկությամբ կը կատարեն, այնպես վոր զարդ վոչինչ զգալի անել տված չեն: Շատ անգամ կշեռքով բուրդը կը ստանան, թաղիք կը ձգեն, ապա թաղիքը կշեռքով կը հանձնեն տիրոջ, սակայն դարձյալ կը գողա-նան: Կշռելու միջոցին կը խարդախեն, գզելու, ձգելու միջոցին, յերբ տերը վերան կանգնած ե, տիրոջ ուշադրությունն այլ կողմ կը դարձնե մի վայր ցույց տալով. այն միջոցին գզրարն այնչափ բուրդ մի կողմ կը ձգե, վորչափ վոր կշեռքի մեջ խարդախած եր:

Ապա ձայն կը տա յուր ընկերոջ, կասե. -Մուխսին գնաց Յերուսաղեմ:

Ընկերը կը հասկանա, վոր բուրդ դրված է մի կողմ, զայն պահել պետք ե. յուր մի զգեստը կը ձգե բրդի վերան, բուրդը շորով վերցնելով՝ իբրեվ հագուստ կը զետեղե քրձերու մեջ: Արդեն յերբ տուն մի պիտի գան, քրձի մեջ խոտ լեցած՝ կը մտնեն այդ տունը. տանտերը կը կարծե, թե բուրդ ե, այլ տներե իբրեւ վարձ ստացած են: Միջոց մի գործ չեն աներ, այս այն կողմ կը տնտնան, մի հարմար ժամանակ քրձի մեջի խոտը կը դատարկեն, վորպեսզի գողացած բուրդն այնտեղ զետեղեն:

Նաեւ երբ գզրարարներեն մին զգաց, վոր յեղած գողությունը տերը պիտի իմանա, մյուսին կը հասկացնե «Խուզ գը մանե» (մարդը պիտի իմանա): Այս միջոցին վարպետը հանկարծ վեր կը թռչի, աշակերտին քանի ապտակ կը զարնե, աշակերտը կուլա, բրդի տերը կը միջամտե, վոր չծեծե. այս միջոցին յերրորդ ընկերը կը պահե գողացված բուրդը:

Յերբեմն կը պատահի, վոր բրդի կեսը կը գողանան: Բուրդը չոր կը ստանան կշեռքով եւ թաց կը հանձնեն: Գզրարարներն ունին իրենց ***գաղտնի խոսակցությունը,*** զորս մասնավոր ինչ գրի առած եմ: Զեքրն, վոր 3 ֆունտ ե, 20 փարայի կը ձգեն: Վերջին տարիները գզելու իրավունքը քիչ կը տան, սակայն իրենք եւս գողության հնարները ավելացուցած են:

Այսպիսի գզրարարներե լսած եմ Սանասար-Բաղդասարի վեպն, զոր գրի առի:

Սանասար եւ Բաղդասարը պատմողն ե Սախոն:

Սախոյի հայրն Ջաղացպանենց տղան - Գզրար Թումաս:

Թումասի հայրը՝ յերգիչ Պողոս:

Պողոսի հայրը՝ Մուրատ, վոր գեղեցիկ սրինգ կ'ածեր:

Մուրատ նաեւ վեց յեղբայրներ ուներ, վորք վեց տուն յեղան:

Մուրատի հայրը Մարկոս, վոր Մոկաց մելիք կարգած եյին, նա կ'իշխեր ըստ ասության Սախոյի, Մոկաց գավառի հայոց վրա:

Սույն Մարկոսի մյուս վորդին (Մուրատի յեղբայրը) Վարդան եւ Կիրակոս, վորք անվանի վորսորդ եյին. սոցա յեղբայրը Քեմալ, վոր հոտատեր յեղած ե, վոչխարի ու այծի վրա շատ սեր ձգած ե:

Սախոյի ազգատոհմ, վերեվեն առնելով՝ ա. Մելիք Մարկոս, բ. Մուրատ, վոր սրինգ կ'ածեր, վորո ժամանակ հարուստ յեղած են, ունեյին 400 կթու մաքի, 2 ջրաղաց, բազմաթիվ յեղ եւ կով:

Մուրատ իր վեց յեղբայրներով այսոր քառասուն տուն յեղած ե, վորք կը բնակին՝ 10 տուն իրենց բնիկ յերկիրն Առինճ, 2 տուն Խանիձոր, 4 տուն Կարս՝ Կուտեյլու, 6 տուն Բագրեվանդա Ղումլի-Պուճախ, 3 տուն Արշեճ, 1 տուն (Սախոն իր յեղբոր հետ) Ղըրխբուլախ (Շավարշան), 2 տուն Դաշբուռուն:

Մուրատի վորդին Պողոս, որ լավ յերգիչ եր, ծաղիկներու եւ բույսերու վրա յերգեր կը հորիներ. Դավթի յոթ ճյուղն խիստ մեծ հաջողությամբ կ'ասեր սա 150 տարի ապրած ե եւ վերջին տարիները աչքերը վնասված:

Պողոսի 4 վորդիքն են՝ Գալուստ, Ոխան, Թումաս եւ Փոխան:

Թումաս ունի այժմ յերկու վորդի՝ Սախո եւ Հարություն:

Սախոն լսած ե սույն Սանասար Բաղդասարն իր պապեն (Պողոսեն), վոր 14 տարի առաջ Արճեշ մեռած ե:

Սախոն Դավթի ցեղեն եւ ճյուղերեն կը համարե ***«Բալաք աչառ», «Շիրին շահ ու Բարակ շահ»***, վոր մենք այլ վեպերու շարքը դասած ենք:

Սախոյի հորեղբայրն այժմ Դաշբուռուն կը բնակի եւ կը պատմե Դավթի չորս ճյուղն: Սախոն Արճեշու Կտրած-քար գյուղը մնացած ե 21 տարի, ուր փոքր ինչ գրել-կարդալ սովրած ե. վերջին տարիները, 1890 թվին հետաքրքիր յեղած ե մեր աշակերտ պ. Շավարշի մոտ ուսումը զարգացնել: Սա 12 տարի գիզ արած ե. գիտե գզրարարներու գաղտնի լեզուն եւ հմուտ ե անոնց գողության ձեվերուն: Արճեշի 1896 թվի կոտորածեն վերջ տնով պանդխտած եւ Ղըրխբուլախ (Մակվա սահմանի մեջ) գյուղը հիմնողներեն մին յեղած ե: Զինք լավ կը ճանաչեմ. քաջ եւ յեսասեր ե. նաեւ խիստ նախանձոտ, եւ առավել շահասեր: Շահասիրությունն այն աստիճան մոլորե-ցուցած ե զինք, վոր մի կոպեկի վրա բծախնդիր ե, վորով չե կարող վարվիլ այլոց հետ»:

Ս. Հ. / ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ, Սասնա ծռեր, հ. I

ՊԱՏՄԱՀԱՅՐ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻՆ ԵՎ «ՍԱՍՆԱ ՏՈՒՆ» ՀՆԱԳՈՒՅՆ ՀԱՎԱՏԱՄՔ-ԷՊՈՍԸ

Ընդունված տեսակետ է՝ «Սասնա Ծռեր» էպոսը, միջնադարում 8-9 դարերում, արաբների դեմ հայ ազատագրական պայքարի ժամանակ, ժողովրդական բանահյուսության արտադրանք է որն առաջին անգամ գրի է առել Գարեգին Սրվանձտյանը: Սակայն դա այդպես չէ: «Սասնա Ծռեր» էպոսը բանավոր փոխանցումով մեզ հասած հնագույն հեթանոսական հավատամքկարգականոնն է եւ, Մեսրոպյան կոչվող այբուբենով այն առաջին անգամ գրի է առել 5-րդ դարի փիլիսոփա եւ պատմահայր Մովսես Խորենացին:

Այսօր, ամերիկյան համալսարանների հայագիտական ամբիոնների դավադրությունը Մովսես Խորենացուն «սարքել» է 9-րդ դարի ստահոդ պատմություններ պատմող հեղինակ: Բացառել Մովսես Խորենացուն որպես 5-րդ դարի հեղինակ, նշանակում է՝ կտրել հայոց հնագույն հեթանոսական պատմությունը, եւ հայերին Հայկական լեռնաշխարհում համարելով եկվորներ, հարցականի տակ դնել նրա ինքնությունը: Ն. Գարսոյանի, Ռ. Թոմսոնի, Ջ. Ռասսելի, Գ. Սյունու նմանները ոչ թե գիտական, այլ քաղաքական նկրտումներից ելնելով կատարում են քաղաքական առաջադրանք: Եվ բանը հասել է այնտեղ, որ անտեղյակ լինելով, արդեն լուրջ գիտնականներն իրենց աշխատություններում, հայագիտության հետ առնչվող հարցերում մեջբերումներ են անում անգրագետ դավադիր՝ Ջ. Ռասսելից: Կովկասում սեփական շահեր ունենալու Ամերիկյան Կայսրության քաղաքական խնդիրը ուղեկցվում է մշակութային էքսպանսիայով: Մի բան, որ նոր չէ նրա քաղաքականության մեջ: Ամերիկյան կայսրապաշտական քաղաքականությունը գիտե, որ տիրապետել որեւէ երկիր, չի նշանակում միանգամից «պատերազմական» միջոցներ կիրառել: Խնդիրը հաղթահարելու համար անհրաժեշտ է սկզբից խարխլել եւ մոռացության տալ տվյալ ժողովրդի պատմությունը, ապա հոգեւոր մշակույթը: ***Մոռացության տվեք ժողովրդի պատմությունը, խարխլեք նրա հոգեւոր արժեքները եւ փոխարինեք դրանք կեղծ արժեքներով ու աշխարհը կառավարելի կլինի,-*** ամերիկյան քաղաքական տեսաբան Զիգմունդ Բժեզինսկու բանաձեւը շատ հին մեթոդ է, որ օգտագործվում է նաեւ այսօր:

Թե վերոհիշյալ ամերիկացի «հայագետները» ի՞նչ փաստարկների հիմքի վրա են Խորենացուն սարքում 9-րդ դարի հեղինակ, հին, չարչրկված եւ վաղուց գիտականորեն մերժված պատմություն է: Սակայն, ամերիկացի ***նորաթուխ*** «հայագետների» էքսպանսիան սկսվեց 15 տարի առաջ, ԽՍՀՄ-ի փլուզումից եւ Հայաստանի անկախացումից հետո: Ինչեւէ, փորձենք այս

հարցը համառոտ անցումով ներկայացնել:

Խորենացու ***մեզ հասած*** «Հայոց Պատնություն» աշխատության մեջ հիշատակվում են Հայկական լեռնաշխարհի չորս վարչական միավորումները, այն դեպքում, որ Խորենացու ժամանակներում՝ 5-րդ դարում, դա հնարավոր չէր: *«Առաջին, Երկրորդ, Երրորդ եւ Չորրորդ Հայք անուններով Հայաստանի հունական մասի ստորաբաժանումները սահմանված են Հուստինիանոս կայսեր 31-րդ նովելլայով, 536 թվի Մարտի 18-ից: Նույն նովելլայից երեւում է, որ այս թվականից առաջ էլ գոյություն է ունեցել Առաջին եւ Երկրորդ Հայք: Քանի որ Խորենացու Պատմության մեջ հիշատակվում են այս չորս Հայքն էլ, այս հանգամանքը ծառայել է իբրեւ անժխտելի ապացույց, թե Պատմությունը գրված է 536թվից հետո: Այս բանն առաջին անգամ ցույց տվեց Գուտշմիտը Բրիտանական Հանրագիտարանում զետեղված իր հոդվածում»*[1]:* Կամ մի ուրիշ օրինակ, որ ամերիկացի նորելուկ հայագետներին կարող էր «մոլորության» մեջ գցել: Խորենացու «Պատմության» մեջ հիշատակվում է Անին, որ 5-րդ դարում իհարկե գոյություն չի ունեցել: Սակայն Խորենացու մոտ ոչ թե հիշատակվում է Բագրատունյաց մայրաքաղաքը, այլ՝ *«Այս Անին Բագրատունյաց մայրաքաղաք Անին չէ Շիրակ գավառում, Ախուրյան գետի վրա, որ Խորենացուն բոլորովին հայտնի չէ, այլ հին բերդ է Դարանաղի գավառում, Բարձր Հայքում, որտեղ ըստ Փավստոսի թաղվում էին Հայոց Արշակունի թագավորները: Հաճախ կոչվում է ՀԱՆԻ, եւ ավելի ուշ դարերում՝ Կամախ»*[2]: Սակայն, ասեղի ծայրին սատանա ման գալու փոխարեն, պարզ տրամաբանությունն իսկ հուշում է, որ Խորենացու օրիգինալ «Պատմություն» գիրքը մեզ չի հասել: Ավելի ուշ շրջանի արտագրող գրիչները, եկեղեցական խմբագիրները, ինչպես միջնադարում է ընդունված եղել, ընդմիջարկումներ, կրճատումներ եւ ավելացումներ են արել: Ինչպես Ստ. Մալխասյանն է գրում,- *«Մեր ձեռքը հասած Խորենացու Պատմությունը սկզբնագիր չէ, այլ խմբագրություն ավելի ուշ ժամանակի (Է-Ը դարերում), եւ կրում է ընդմիջարկության հետքեր»*[3]*:*

Որ Մ. Խորենացին իսկապես 5-րդ դարի պատմիչ է, եղել են գիտական մանրակրկիտ վերլուծումներ, համեմատական քննություններ, բազմաթիվ հոդվածներ եւ աշխատություններ*[4]: Սակայն, այդ ամենի հետ միասին, առաջին հերթին կա նաեւ տարրական տրամաբանություն կոչվածը: Օրինակ, մաթեմատիկական բացասման բացասում օրենքի համաձայն, ենթադրենք, թե Մովսես Խորենացին 9-րդ դարի հեղինակ է *(ինչպես Ջ. Ռասելի նմաններն են ներկայացնում պատմահորը)*, բայց իր գրած «Պատմության» մեջ, ինքն իրեն ներ-

*1,*2,*3,- Մ. Խորենացի, «Հայոց Պատմություն», 1981թ., Երեւան, ծանոթագրություն Ստ. Մալխասյանցի՝ էջ 467-468, էջ 489:

*4,- Տես՝ Ստ. Մալխասյան, «Խորենացու առեղծվածի շուրջ»:

կայացնում է որպես 5-րդ դարի մատենագիր, եւ կատարում է ամենամեծ իշխանական տներից մեկի իշխան՝ Բագրատունու պատվերը: Հիմա պատկերացրեք, որ Բգրատունի իշխանը, ասենք թե 9-րդ դարում, ընթերցում է իր առաջադրած պատվերը՝ Խորենացու «Պատմությունը», եւ հայտնաբերում է, որ իր ժամանակի Խորենացին ապրել եւ գործել է 400 տարի առաջ՝ 5-րդ դարում: Զավեշտալի է, չէ՞: Սակայն հայագիտական ամբիոնի պրոֆեսոր Զ. Ռասելի հայագիտական մանկամիտ հնարանքները նորություն չեն: Օրինակ, նրա գրքում Էրեբունին հիմնադրել է ոչ թե Արգիշտի առաջինը, այլ Արգիշտի երկրորդը: Զ. Ռասելի «The Armenian People From Ancient To Modern Times» (Vol. I, II, ed. by R. Hovannisian, New York, 1997) գրքում տեղ գտած միտումնավոր անգրագետ հնարանքների մասին անդրադաձել է Արմեն Պետրոսյանն իր *«Զ. Ռասելի հայագիտական հնարանքները» հոդվածում**1*:* Բայց արի ու տես, որ վերջին տարիներին մի շարք հեղինակներ իրենց գիտական լուրջ աշխատություններում Խորենացուց մեջբերում անելիս նշում են, որ նա 9-րդ դարի հեղինակ է, եւ հենվում են հայագիտության մեջ հեղինակություն դարձած Զ. Ռասելի «գիտական նորամուծությունների վրա*2:

Մովսես Խորենացին եւ Հայոց հնթանոսական առասպել-այլաբանությունները:

Մեր խնդիրն այս աշխատությունում այլ է: Ակադեմիկոս Հովսի Օրբելու տեսակետը, ըստ որի՝ պատմահայր Մովսես Խորենացին հայկական «Սասնա Ծռեր» կոսմիկական էպոսը մաս մաս ներկայացնում է իր «Հայոց Պատմություն» աշխատության մեջ, ոչ միայն լիովին ճիշտ ու գիտական է, այլ ավելին, ըստ իս առաջին հարցադրումը պետք է լինի՝ «Պատմությունը» գրելիս ո՞րն է եղել Խորենացու ելակետային նպատակայնությունը ***նոր կրոնի պայմաններում:*** Մովսես Խորենացու «Հայոց Պատմություն» աշխատության ծավալի մոտ կեսը հայոց ծագումնաբանության եւ հնագույն առասպելների մասին է: Եվ առասպելների մասին խոսելիս պատմահայրը հաճախ օգտագործում է «այլաբանություն» տերմինը: Խորենացին հայկական հնագույն առասպելները որպես այլաբանություն ներկայացնելիս ոչ միայն պատմում է հնագույն հեթանոսական հավատամքի այս կամ այն կտորը, այլ նաեւ տալիս է դրանց ներքին կառուցվածքը որպես փիլիսոփայական գաղտնագրված համակարգ: Այսինքն, սյուժետի եւ ակնարկի տակ թաքնված ներքին ասելիքը փիլիսոփա-

*1,- Ա. Պետրոսյան, «Զեյմս Ռասսելի «հայագիտական» հնարանքները», 2000թ., Երեւան, Պատմա-Բանասիրական Հանդես, 3/2000, էջ 241:

*2,- Օրինակ՝ Calvert Watkins -ն իր «How To Kill a Dragon»(Oxford University Press, 1995, 2001) մեծարժեք աշխատության մեջ, Մ. Խորենացուց մեջբերում անելիս, նրան ներկայացնելով որպես 9-րդ դարի հեղինակ, Զ. Ռասսելի մասին գրում է. «In these as for that matter much late(Medieval and Early Modern) Armenian poetry I may quote the ***eminent specialist*** J. R. Russell», p. 251.

յական թաքնագիտության մեջ արվեստի լեզու է, որ որոշ մասնագետների կարծիքով, քրիստոնեա գնոստիկների ոճն է: Արեւմուտքում հոգեւոր վարպետի՝ սագայի, սվամիի համար Պյութագորասի ներմուծած *փիլիսոփա* կոչումտերմինը նշանակում է՝ փիլո = «սիրահար, սիրեկան» եւ Սոֆիա = «հոգեւոր սֆերա»: Ինքը Պյութագորասը (մ.թ.ա. 580-500) ուսանելով եգիպտական եւ Խալդեական հոգեւոր դպրոցներում, հոգեւոր եռաստիճան վարպետ էր*[1]: Հետագայում, Հունաստանում, Սոկրատեսի աշակերտ Պլատոնի փիլիսոփայական դպրոցը համարվում էր Պյութագորասի հոգեւոր ուսմունքի շարունակող:

Գալով Խորենացուն, պետք է ասել, որ առաջին հերթին նա փիլիսոփա էր: Պատահական չէ Խորենացու ակնարկը, որ Ալեքսանդրիա քաղաքում նա սովորել է պես-պես գիտություններ նոր Պլատոնից. *«... Այլ ուսանել զորութիւնս պէսպէս իմաստից ի նորն Պղատոնէ, յիմն ասեմ վարդապետէ, որում ոչ անարժան գտայ աշակերտ եւ ոչ անկատար վարժմամբ ի յանգ ելեալ արուեստից՝ ինքնացայ»*[2]: Փաստորեն, Մ. Խորենացին առաջին հերթին փիլիսոփա է, եւ իրեն համարում է *Նոր պլատոնական* փիլիսոփայական դպրոցի հետեւորդ:

Ալեքսանդրիայի «Նոր պլատոնականների» հոգեւոր փիլիսոփայական դպրոցը՝ *«Ընդունում էր վաղ ժամանակների փիլիսոփայական բոլոր դպրոցների ձեռքբերումները, եւ հատկապես Պյութագորասի, Պլատոնի եւ Արիստոտելի սիստեմները»*[3]*:

Փաստորեն, Մովսես Խորենացին որպես «Նոր Պլատոնական» փիլիսոփայական ուղղության հետեւորդ, պետք է փայլուն իմանար Պյութագորասի թվերի ուսմունքը, որպես աստվածային արարչության փուլեր, նրան պետք է ծանոթ լիներ Բրահմայական համակարգը, քանի-որ Ալեքսանդրիայի նեոպլատոնական ուսուցիչներից եգիպտացի Պլոտինուսը այն ներմուծել էր դեռեւս մ.թ. III դարում*[4], եւ նաեւ ծանոթ պետք է լիներ գնոստիկների աշխատություններին:

Այսուամենով, նոր կրոնի՝ քրիստոնեա եկեղեցու աչալուրջ հսկողության տակ, Մովսես Խորենացին, որի «Պատմություն» աշխատության ծավալի կեսը նվիրված է հայոց ժողովրդի ծագումնաբանությանը եւ այլաբանական առասպելները ներկայացնելուն, ի՞նչ ելակետային նպատակ է ունեցել: Առաջ անցնելով ասենք, որ մեր ժամանակների հեռվից նայելով, Խորենացու վաստակն այնքան մեծ է ու անգնահատելի, որ հայ ինքնության գիտակցությունը առանց Խորենացու թողած աշխատության անհնարին է պատկերացնել: Խորենացին իր ժամանակի եկեղեցու մոլեգնած ճիրաններից ոչ միայն փրկել

*1,- Manlly P. Hall, «The Secret Teachings Of All Ages», 2000, USA, p. LXIX- LXXII.
*2,- Մ. Խորենացի, «Հայոց Պատմություն», 1981թ., Երեւան, էջ 428-430:
*3,*4,- Hegel, Vol. II, Plato & The Platonists, 1995, University Of Nebraska Press, p. 400, 404-406.

է՝ «Հայկին», «Վահագնին», հայ հնագույն հավատամքային պատումները եւ այլն, այլ նաեւ թաքնագիտության լեզվով՝ ակնարկներով, ներկայացրել է հնագույն համակարգի սխեմատիկ կարգակառույցը:

Ըստ հնագույն կարգակառույց-հավատամքի, շրջանաձեւ վիշապը խորհրդանշում է տիեզերական օվկիանոսը եւ այդ անհուն «բովանդակը» ներկայացնող շրջանի գագաթ-կենտրոնը՝ հրե լույս է, որը տրոհում է շրջանը *(օղակաձեւ վիշապին)* 4+4=8 մասի, քանի որ Աստծո արարչությունը արտահայտվում է՝ **1➔4+4=8** համակարգով: Արարչական 1 ➔ 8 համակարգը խորհրդապաշտորեն աղերսվել է Մասիս լեռան հետ: Տրդատը, նմանվելով Հայկին, հսկայորեն ***ութ քար*** է բերում ***Մասիսի գագաթից,*** վկայարանների եւ եկեղեցիների հիմքում դնելու համար*[1]: Մեհյանական տաճարը որպես երկնքի մոդել, նույնպես [1➔8] համակարգն է հիմք ընդունում, ինչպես նաեւ հայկական քրիստոնեական ճարտարապետությունը, որ հնի ազդեցության շարունակողն է:

Խորենացին, ներկայացնելով վիշապների հետ կապված մի քանի հնագույն հեթանոսական «երգեր», դիմելով Սահակ Բագրատունուն *(որի պատվերով գրում էր իր «Հայոց պատմությունը»)* ասում է. *«Արդ դու այստեղ առավելապես չե՞ս զարմանա, թե ինչպես պատմեցինք ճշմարիտը՝ բացատրելով մութ պատմություններն այն վիշապների մասին, որ ապրում են ԱՋԱՏ-ն ի վեր, Մասիսի վրա»*[2]: Մինչ այդ, պատմահայրը ընդգծում է, որ. *«այս բանը* ***ճշմարտապես*** *պատմում են եւ թվելյաց երգերը»*[3]:

Նախ, «Թվելյաց երգ»՝ նշանակում է թվային կարգակառույցով երգեր, եւ հնում թվերն աղերսվում էին ոչնչից արտահայտված գլխավոր աստվածների (1➔8) հնագույն հավատամքային կարգակառույցի հետ, դրա համար էլ կոչվում էին՝ ***Թվելյաց երգեր:*** Արիստոտելի եւ Պյութագորասի փիլիսոփայական ուսմունքներին քաջածանոթ Խորենացին լավ գիտեր, որ հեթանոսական հնագույն հավատամքներում, թվերը եւ չափումները աղերսվում էին աստվածների անունների եւ «միստիկ ծավալների» հետ: Ըստ Արիստոտելի («METHA-PHYSICS-AS») պյութագորյան դպրոցը թվերի նկատմամբ ուներ հետեվյալ վերաբերմունքը՝ *Դրախտը ներդաշնակություն է եւ թվեր,*

Թվերը էությունն են ամբողջի,

Իրերի գոյությունը՝ թվային արտահայտություններ են:

Ցավոք, «Թուելեաց երգ»-ը մինչեւ այժմ սխալ է հասկացվել, այն բխեցրել են՝ ***արտասանել*** նշանակությունից:

Մ. Խորենացին ***թվելյաց*** հեթանոս երգերից հաղորդում է երեք «պա-

*1,- «Ագաթանգեղոս, «Պատմություն հայոց», Թիֆլիս, 1914թ., էջ 390:
*2, *3,- «Մովսես Խորենացի, գլ. Լ, ԼԱ, ԺԲ:

տում»՝ միեւնույն իմաստով, որոնք աղերսվում են համակարգի եւ Մասիս լեռան հետ: Խորենացին դրանք երրորդ դեմքով է ներկայացնում:

Առաջին՝ «Այլեւ ասում են.

Արգավանը ճաշ սարքեց ի պատիվ Արտաշեսի,

եւ նրա դեմ դավ լարեց վիշապների տաճարում»:

«Ճաշ ասեն գործեալ Արգաւանայ ի պատիվ Արտաշեսի, եւ խարդաւանակ լեալ նմին ի տաճարին վիշապաց»*[1]:

Երկրորդ՝ «Այլեւ ասում են.

Արտավազդը, Արտաշեսի քաջ որդին, Արտաշատի հիմնելու ժամանակ, մի փոքրիկ տեղ չգտնելով ապարանքի համար՝ անցավ, ասում են, գնաց եւ Մարաց մեջ շինեց Մարակերտը»:

«Արտաւազդայ ոչ գտեալ, ասեն, Քաջի որդվոյն Արտաշեսի, տեղեկիկ ապարանից ի հիմնանալն Արտաշատու՝ նա անց, ասէ, գնաց եւ շինեաց ի մեջ Մարաց զՄարակերտ. որ է ի դաշտին՝ որ անուանեալ կոչի Ճարուրայ»*[2]:

Երրորդ՝ «Այլեւ ասում են.

Տենչալով տենչում է Սաթենիկ տիկինը Արտախուր խավարատ եւ տից խավարածի Արգավանի բարձերից»:

«Տենչայ, ասեն, Սաթենիկ տիկին: Տենչանս՝ զարտախուր խաւարտ եւ զտից խավարծի ի բարձիցն Արգաւանայ»*[3]:

Եւ անմիջապես, թվելյաց երգերից ***այս երգերը*** հաղորդելուց հետո, պատմահայրը դրանք «կապում» է Ազատն ի վեր, Մասիսի հետ:

Այստեղ, փաստորեն, Արգավանն աղերսվում է Վիշապների տաճարի հետ, քանի որ ի պատիվ Արտաշեսի ճաշ է սարքում եւ, հրավիրելով, դավ լարում իր տանը՝ «ի տաճարին Վիշապաց»: Տրամաբանորեն եւ ըստ հնագույն հայկական սովորույթի, ճաշ են տալիս եւ պատվում սեփական տանը եւ ոչ թե ուրիշի տանը: Ուրեմն, Արգավանը վիշապ էր, եւ նրա տաճարը՝ Վիշապների տաճարն է: Վեդայական հավատամքում ***ընդերքի վիշապը***՝ A´hi- Budhnya´- ն, որից սկսվում է արարումը, Ավեստայում՝ **Aži,** հայերենում՝ ***iž, օշապ, հուշապ,*** որի նախահնդեւրոպական ձեւերը՝ ***og^{hoi-}** եւ ***ang^{hoi-}**, «վիշապ-օձ»-ն է*[4]: ԱՐԳԱՎԱՆ-ը, այստեղ, ներկայանում է որպես ***խավարի դից*** (զտից խավարծի): Այսինքն, ԽԱՎԱՐ՝ «մութ, մթություն» իմաստով, Արգավանը՝ ընդերքի, անդնդի դիցն է, որ այստեղ ԱԺԴԱՀԱԿԻ զուգահեռն է: Խորենացու Գողթն գավառի հեթանոսական թվելյաց երգն ամբողջությամբ դառնում է անիմաստություն, երբ Հր. Աճառյանը ***«արտախուր», «խավարտ», «տից» եւ «խավարծ»*** բառերը տանում կապում է ինչ-որ բույսերի հետ*[5]:

*1,*2,*3,- «Մ. Խորենացի, «Հայոց պատմություն», 1981թ., թարգմ.՝ Ստ. Մալխասյանց, էջ101:
*4,- T. Gamkrelidze & V. Ivanov, “The Indo-European And The Indo-Europeans”, 1995, NY, p. 444.
*5,- Հր.Աճառյան, «Հայերեն արմատական բառարան», 1973թ., Երեւան, հ. II, էջ 351-352:

Հնագույն աշխարհընկալման հավատամքային կարգակառույցը եւ թվային համակարգը լիովին բացահայտում են սրանց իմաստները: Մինչեւ Արգավանին հասնելը, նախ Խորենացին պատմում է վիշապազուն Աժդահակի մասին, որի կնոջը վիշապների մորը՝ Անույշին իր ընտանիքով, միֆական Տիգրանը *(ոչ թե պատմական Տիգրան Բ-ն)* բնակեցնում է մեծ լեռան(Մասիսի) ստորոտում: Դրանից հետո, հիշատակելով թվելյաց երգերը, պատմահայրը իրար հետեվից ավելացնում է երեք տարբեր պատումներ ու վերջում ամփոփում, որ այդ վիշապների մութ պատմությունները աղերսվում են Մասիս լեռան հետ՝ *«որք են յԱզատն ի վեր ի Մասիս»:*

Փաստորեն, Աժդահակը եւ Արգավանը (պատումները), հավանաբար, տարբեր ժամանակներում, միեւնույն կամ համանման սյուժետով, հնագույն կրոնի խորհրդաբանական կարգակառույցին «հարմարեցված» պատումներ են: Ավելին, երբ Խորենացու «Պատմության» պատվիրատուն՝ Բագրատունի իշխանը, ցանկանում է, որ գրքում զետեղվի այդ հնագույն հավատամք-կառույցի պարսկական պատում-տարբերակը, Խորենացին, «կատարելով» պատվերը, նաեւ տալիս է նույն կարգակառույցի ***թվելյաց երգերի*** տարբերակը՝ Արգավանի, Արտաշեսի, Արտավազդի եւ Սաթենիկի մասին: Մեծ լեռը՝ Մասիսը, կոսմիկական արարչության կարգակառույցի խորհրդանիշն էր:

Նախ, Խորենացին պարզում է Բյուրասպ Աժդահակի ինքնությունը՝ *«Եվ ես այս Բյուրասպի իսկական անունը ճանաչում եմ Կենտավրոս Պյուռիդա, որ գտել եմ քաղդեական մատյանում»**[1],- ասում է պատմահայրը եւ մի քանի տող հետո նրան կապում է «աստեղաբանության» հետ, ակնարկելով Աժդահակի աստեղատուն լինելը: Ավելացնենք, որ Խորենացին զուգահեռ է տանում Աժդահակի եւ Նեբրովթի(Բել) միջեւ: Բկուրասպն Աժդահակի Կենտավրոս Պյուռիդա համաստեղությունն այսօրվա «Կենտավրոս» համաստեղությունն է, որը նաեւ աղերսվում է «Քիմյուռն գոտու»*[2] հետ: «Քիմյուռն գոտին», ըստ 7-րդ դարի մատենագիր Ա. Շիրակացու «Քիմեռական գոտին»*[3] է, որ կոչվում է «ցրտերի համաստեղություն» եւ ուրարտական համակարգում համապատասխանում է «Կենտավրոս Պարխարի» հետ*[4]: Կոչվում «ցրտերի համաստեղություն», որովհետեւ երկնակամարում հայտնվում է Հոկտեմբեր 20-ից մինչեւ Փետրվար 20-ի ընթացքում, երբ եղանակը այս տարածքում սկսում է ցրտել: Երկնակամարում այս համաստեղությունը գտնվում է տեսանելի Ծիր Կաթնի շրջանաձողակի եզրում, հարավում: Այս համաստեղությունը աղերսվում է անդրաշխարհի հետ : Իսկ Ծիր Կաթնի կենտրոնն աղերսվում է «Անկդ-

*1, *2,- «Մովսես Խորենացի, «Հայոց պատմություն», 1981թ., Երեւան, էջ 107, 99:
*3,- «Անանիա Շիրակացի», «Հայ մատենագիրներ», 1979թ., Երեւան, էջ 119:
*4,- Ա. Դավթյան, «Հայոց աստղային դիցաբանություն», 2004թ., Երեւան, էջ 153:

Կարապ» համաստեղության հետ, որ հների տարվա սկզբ հանդիսացող գարնանային գիշերահավասարին՝ Մարտ 21, երկնքում դառնում է «կենտրոնական» աստեղատունը: Մ. Խորենացու մոտ Աժդահակի՝ ստորերկրյա, խավարի դիցի զուգահեռ համարժեքը Արգավանն է: Սաթենիկը թվելյաց երգում աղերսվում է Արգավանի ***բարձի*** հետ. *«ի բարձիցն Արգաւանայ»:* «Կենտավրոս» աստեղատան աստղերից են ուրարտական Բարձի(ա) ᵈBarzi-a-դիցուհու աստղերը*[1]: Ծիր Կաթնի շրջանաօղակը եւ նրա կենտրոնը հնագույն համակարգի աստղաբանական կառույցն է (36 աստեղատուն) եւ, Մեծ լեռը՝ Մասիսը, կոսմիկական արարչության կարգակառույցի խորհրդանիշն էր: Նրա օղակաձեւ հիմք-ստորոտը համարվում էր մայր-վիշապ, իսկ գագաթը շրջանի կենտրոնը՝ լույս-դիցի «նստատեղ», որ բազմաթիվ հնդեւրոպական միֆական պատումներում լույս-ամպրոպի աստծո կարգատեղն էր (Աթում, Ինդրա, Թոր եւ այլն): Եւ այս կենտրոնական լույս-աստվածությունը, ըստ տարածված հնդեւրոպական միֆական, կոսմիկական պատումների, կամ «սպանում» է օղակաձեւ վիշապին, կամ «մերձենում» վիշապների մոր հետ*[2]: Մի շարք հնդեւրոպական միֆերի տարբերակներում, ամպրոպի աստվածը սպանում է «ամուսին» վիշապին, մյուս տարբերակներում ամպրոպի աստծո կինը դավաճանում է ամուսնուն՝ վիշապի հետ «մերձենալով»: Օրինակ, ըստ Վ. Իվանովի եւ Վ. Տոպորովի կողմից վերականգնած հնդեւրոպական նախահիմք մոդելի, ամպրոպի աստվածը՝ *Per(Kw)uno-ն, հաղթում է իր հակառակորդ Վիշապին՝ *wel-, որի հետ իր կինը «դավաճանական» ակտի մեջ էր մտել: Սրա տարբերակներից է նաեւ հայկական զուգահեռը, ըստ որի, Տիգրանը *(Խորենացին նրան զուգահեռ է անցկացնում Արամազդի հետ)* *[3], հակառակը՝ իր քրոջն է կնության ուղարկում Աժդահակին, որը սակայն նրա դեմ դավադրություն է փորձում կազմակերպել՝ ներգրավելով Տիգրանուհուն, բայց վերջինս հավատարիմ է մնում եղբորը եւ ոչ թե ամուսնուն:

Փաստորեն, Խորենացին հասկացնում է, որ նույն պատմության տարբերակներն են Թվելյաց երգերը, որտեղ Աժդահակը՝ Արգավանն է, Արտաշեսը՝ Տիգրանը, եւ Արգավանը նրա դեմ դավ է լարում վիշապների դահլիճում (տաճարում): Նույն պատումի տարբերակներից է նաեւ «Սասնա Ծռեր» էպոսի առաջին մասը. ինչպես Տիգրանն է իր քրոջը՝ Տիգրանուհուն որպես «հարս» ուղարկում թշնամի Աժդահակին, այնպես էլ Թորոսն է համաձայնություն տալիս, որ իր քույր Ծովինարը գնա ու «դառնա» Սենեքերիմի կինը:

*1,- Ա. Դավթյան, «Հայոց աստղային դիցաբանություն», էջ 152-153:

*2,- В. Иванов, В. Топоров, “Основной Миф”, 1974, Москва.

*3,- «Մ. Խորենացի, «Պատմություն», Գլ.՝ ԼԱ,- *«եւ այսպես կոչված չորս Արամազդներից մեկն է միայն (ճիշտը) Կունդ Արամազդը: Այսպես նաեւ շատերը կան Տիգրան անունով, բայց սա մեկ եւ միակն է Հայկազուններից, որ Աժդահակին սպանեց եւ գերի տարավ նրա տունը՝ Անույշին, Վիշապների մորը»:*

Եթե այս պատումների հիմքում «տեսնենք» Ծիր Կաթնի վիշապ-օղակ եւ կենտրոն-գագաթում՝ լույս-շարժում, որ խորհրդաբանորեն կոսմիկական արարչության մասին հնագույն աշխարհընկալման մոդելն է, ***ամբողջի եւ նրա տրոհման-արտահայտման գաղափարն է,*** որը երկնքի, ***աստղատրների եւ կենտրոնի՝ քառաթեւ «Անգղի» համաստեղություն գաղափարն է,*** որի վրա շապիկի նման «հագցված» է հնդեւրոպական ընդհանրական պատումը՝ ամպրոպի աստվածը սպանում է անդնդի ջրային վիշապին, որից տիեզերք եւ գոյություն է առաջանում, ապա պարզ են դառնում Խորենացու կողմից բերված «Թվելյաց երգերի» եւ Աժդահակի պատմության իմաստները ու դրանց մեջ զուգահեռներ անցկացնելու անհրաժեշտությունը:

Արգավանը եւ Սաթենիկը միասին շրջանակի օղակաձեւ երկսեռ, երկու վիշապներն են՝ քույր-եղբայր եւ միաժամանակ՝ ամուսիններ *(հնագույն միֆերում նման միությունը պարտադիր պայման է. «Ռիգ Վեդա» Ադիթի-Դակշա):*

Սաթենիկի անունը կազմված է **[-ենիկ]** մասնիկով, ***սաթ*** բառից *(ռուսերեն՝ янтарь, տես՝ Հր.Աճառյան, էջ 342, «Հայոց անձնանունների բառարան», հ. Դ, 1948, Երեւան)*: Նույն աղբյուրում (Dumezil REA 9, 41-53), Սաթենիկը զուգահեռաբար համեմատված է Satana առասպելական հերոսուհու հետ, որ կովկասյան ժողովուրդների առասպելներում հաճախ է հանդիպում: Փաստորեն, SAT եւ ANA երկու բառերից կազմված այս առասպելական հերոսուհու անունը, հայկական ՍԱԹ-ԵՆԻ(Կ) *(ինչպես Վարսենիկ, Արփենիկ բուն հայ լեզվի տրամաբանությամբ կառուցված անուններն են),* ունի համանման հնչյունային արտաբերում՝ ՍԱԹ-ԵՆԻ(Կ) > ՍԱԹ-ԱՆ(ԻԿ): Եւ նրա անվան 2-րդ կեսը՝ ԱՆԱ = ԱՆ = ՀԱՆ = «մեծ մայր, նախամայր» եւ շումերերեն՝ «ԱՆ > երկինք», իմաստների հետ է աղերսվում: Իսկ նրա անվան 1-ին մասը՝ ՍԱԹ-ը, «սեւ գույն» նշանակությունն ունի*[1], որ խորհրդանշում է սեւ հերոսուհու՝ ***«խավար», «գիշերային երկինք»*** իմաստների հետ աղերսանքը: Այսուամենով, այս առասպելական աստվածուհին վիշապազուն է, կոսմիկական նախամայր է, բնութագրվում է «սեւ-մութ» գույով, եւ իր ամուսնու՝ Արգավանի «խավարի դից» լինելու հետ լիովին ներդաշնակ համապատասխանության մեջ է: Ընդգծենք, որ առասպելական Սաթենիկ տիկինը՝ կա՛մ իշխանուհի է կա՛մ թագուհի է, որովհետեւ «տիկին» բառը 5-րդ դարում օգտագործվում էր միայն այս դեպքերում: Սաթենիկ տիկինը, ըստ հնագույն կանոնակարգի, ընդերքի վիշապ Արգավանի քույրն է ու միաժամանակ կինն է, եւ ձգտում է, տենչում է Արգավանից բարձրին՝ Արտավսուր > Արտ + հուր = Արտաշեսին, որ այս դեպքում, լեռան գագաթի խորհրդաբանական լույս-ամպրոպի հրե աստվածությունն է: Այս

*1,- Հր. Աճառյան, «Հայերեն արմատական բառարան», հ. IV, էջ 154:

հնագույն արարչական խորհուրդը առկա է նաեւ Հին Կտակարանում, որպես խավարի մեջ լույսի ծննդի խորհրդապաշտություն: Եւ վերջապես առասպելական Սաթենիկ տիկինը եւ նրա անունը աղերսվում է Sabt-ի հետ: Sabt-ը՝ Սիրիուս Շնաստղ աստղատունը, որի հետ հին եգիպտացիք կապում էին Սոտկական տարին՝ 1400-01 տարի, որպես մեկ շրջափուլ, համարվում էր արարող տիեզերական մայր, որը գտնվում է կենդանակերպի շրջանաշղթայից դուրս, եզրում *(M. Gadalla, "Egyptian Cosmology", p. 89, USA, 2001թ.)*: Եւ աստվածուհու AUSET «Իզիս» > Sabt անվան SAT-ANA եւ ՍԱԹ-ԵՆ-ԻԿ > ՍԱԹ-ԱՆ-ԻԿ նմանությունը եւ առասպելների սյուժետային համանման զուգահեռները հիմնավորում են այս տեսակետը, առավել եւս, որ Մեծամորի (մ.թ.ա. 2600-2800թթ.) հնագույն հավատամքային կենտրոնի աստղադիտարանը «ֆիքսված» է եղել դեպի Սիրիուս աստղը *(տես՝ «Մեծամոր», ՀՍՍՀ Գիտութ. ակա-դեմիա, Երեւան, 1973թ.)*: «Աժդահակ-Կենտավրոս» համաստեղությունը խորհրդանշում է ձմեռային արեւադարձը, իսկ «Սիրիուս-Sabt-Կանիս մեծ» համաստեղությունը՝ ամառային արեւադարձը. սրանք իրար նկատմանբ վեց ամսվա հեռավորություն կամ շրջանաշղթայում՝ 180⁰-ի «օպոզիցիա» են «ձեւավորում», որ ըստ կանոնակարգի՝ արական եւ իգական զույգի սխեմատիկ կառույցի պայմանն է: Ի վերջո, Խորենացու բերած մեկ այլ պատումում, Սաթենիկը «հասնում է» Արտաշեսին. վերջինս շիկափոկ պարանով «որսում, փախցնում» է օրիորդին *(այս պատում-տարբերակում Սաթենիկն օրիորդ է)*: Հեթանոսական երգում Արտաշեսը համեմատվում է սրաթեւ արծվի հետ, որ Ծիր Կաթնի կենտրոնը միտող «Անգղի» համաստեղությունն է: Նա նույնիսկ անցնում է գետը. ո՞ր գետը, Քուռ-Արաքսը, թե՞ երկնային Ծիր Կաթին գետը: Պատմահայր Խորենացուն Ալեքսանդրիայի նեոպլատոնականների դպրոցից լավ ծանոթ պիտի լիներ եգիպտական Հերմեսի՝ «ինչպես վերեւում, այնպես ներքեւում» բանաձեւը: Այսինքն, վերեւում՝ երկնակամարը, աստեղատները, հեթանոսական արարչության համակարգը պատմական դեմքերի ու համանման դեպքերի շապիկով ներկայացնելու թաքնագիտական ոճը, իրականը «անիրականի» հետ խառնելն ու հուշելը՝ որ նայի՛ր ու հասկացի՛ր, սա այլաբանություն է, Խորենացու վարպետությունն է: Եվ պատմական անունների ու դեպքերի քողի տակ, ժողովրդական բանասացի բերանը դնելով*(«այլեւ ասում են»)* հնագույն կարգակառույցը, պատմահայրը Արտաշեսի եւ Արգամի մասին նորի՛ց է պատմում. որը թեեւ նույն անուններով, սակայն «Թվելյաց երգերում» իր ներկայացրածից լրիվ տարբեր է: Նա կարծես հասկացնում է, որ «Թվելյաց երգերի»՝ Արգավանը, Սաթենիկը եւ Արտաշեսը հարմարեցված անուններ են: Պատմահայրը չէր կարող օրիգինալ, հին անուններով բացահայտ պատմել հայ հեթանոսական «Աստվածաշունչը»:

Նույնիսկ Վահագնին, որ հայոց հեթանոսական մեծ աստվածություններից էր, նա ստիպված դարձնում է Տիգրանի որդին, եւ ասում, թե նրան աստվածացրել են վրաց կողմերում: Այն դեպքում, երբ զգուշավոր Խորենացուն թեկուզ Ագաթանգեղոսի գրքից, լավ հայտնի պիտի լիներ Վահագնի հայոց աստվածություն լինելը:

Վերեւում մենք ընդգծեցինք, որ պատմահայր Մովսես Խորենացու ելակետային նպատակը՝ իր «Պատմություն» աշխատությունը գրելիս, եղել է՝ *հատկապես հնագույն հեթանոսական շրջանի հավատամքային կոսմիկական պատումները գալիք սերունդներին փոխանցելը:* Եվ ինչպես Հովսեփ Օրբելին է դիպուկ նկատել, պատմահայրը դա անում է սիրով: Եվ նրա աշխատության ծավալի կեսից ավելին նվիրված է հայ ժողովրդի ծագումնաբանության եւ հնագույն հավատամքի «առասպելները» պատմելուն: Սահակ Պարթեւից հետո հայոց քրիստոնեական եկեղեցին գտնվում էր ասորական ազդեցության տակ: Խորենացին, թեեւ ուներ Բագրատունի իշխանի նման հզոր պատվիրատու եւ աջակցող, սակայն եկեղեցու աչալուրջ հսկողությունից բացի, նա պետք է նաեւ մտածեր այն մասին, որ իր աշխատությունը ապագայում գոյատեւի եւ չարգելվի: Իր ժամանակակից Դավիթ Անհաղթի նման, Խորենացին առաջին հերթին փիլիսոփա էր. *նոր պլատոնական փիլիսոփայական դպրոցի հետեւորդի* համար քրիստոնեությունը չէր կարող դոգմատիկ, անբեկանելի ճշմարտություն լինել: Հնագույն հեթանոսական «Աստվածաշունչը» Խորենացու համար ոչ թե անունների եւ սյուժետային պատումների ներկայացում պետք է լիներ, այլ՝ արարչության համակարգ: Եվ, «Պատմությունը» գրելիս, Խորենացու համար միայն երկու հենարան կար. 1-ին՝ Բագրատունյաց մեծ իշխանը որպես պատվիրատու, եւ 2-րդ՝ նեոպլատոնականների թաքնագիտական լեզվի օգտագործումը: Հին Կտակարանում տեղ գտած Նոյյան պատմությունը հիմք ընդունելով, նա հայոց ծագումնաբանությունը սկսում-ծագեցնում է նրա որդի Հաբեթից: Հայոց հեթանոսական պանթեոնի գլխավոր աստվածություն Արամազդի մասին թռուցիկ անցնելիս, օգտագործում է՝ ***Կունդ (գունդ) Արամազդ*** անունը*[1], երբ «գունդ» ծավալաձեւը Արիստոտել-Պլատոնյան համակարգում աղերսվում էր գերագույն աստվածության հետ: Միաժամանակ, Արամազդին զուգահեռաբար «համեմատում» է Աժդահակի հակառակորդ Տիգրանի հետ, կարծես դա Տիգրանին է վերաբերում: «Գունդ»-ը եւ «Կունտն» բառերը միեւնույն «գնդաձեւ մարմին» նշանակությունն ունեն, եւ Արամազդի պարա-

*1,- Կունդ Արամազդի՝ «Ճաղատ Արամազդ» թարգմանությունը, եւ ինչ-որ արձանի հետ կապելը՝ լիովին սխալ եւ անհիմն վերսիա է: Այստեղ «Կունդ»-ը նաեւ վերաբերում է Տիգրանին եւ ունի խորհրդաբանական իմաստ: «Մ. Խորենացի, «Հայոց պատմություն», 1981թ., Երեւան, էջ 103:



գայում, ըստ Պլատոն-Արիստոտելի, նաեւ պետք է աղերսվի «երկնակամար» իմաստի հետ. «գունդ=երկնակամար»*[1]:

Հայկ եւ Բելի մասին գրելիս, Խորենացին որպես ծածկագետ, տալիս է Հայկի 180⁰-ի ընթացքը, որ «Անգղ-Կարապի» համաստեղության ընթացքն է երկնքում*(տես «Գագիկ թագավոր» բաժինը):* Խորենացու մոտ, Աժդահակի հակառակորդ Տիգրանը պատմական անձ Տիգրանի հետ որեւէ կապ չունի: Սա միֆական մի կերպար է, որ ըստ Խորենացու՝ միակն է հայկազուններից, որ սպանեց Աժդահակին եւ գերի տարավ նրա տունը եւ Անույշին՝ վիշապների մորը*[2]: Թե ինչո՞ւ է Խորենացին ***Աժդահակ-վիշապին*** հաղթող հայ հնագույն աստվածու-թյան անունը հատկապես ***Տիգրան*** անունով «կնքել», ունի իր բացատրությունը: Նախ, այս հնագույն հնդեւրոպական հավատամքային պատումի հնդ-իրանական տարբերակում, վիշապ Aži Dahāka-ն սպանվում է հերոս՝ Thraētaona-ի կողմից *(իրանական, Ավեստա)*[3], իսկ հնդ-վեդայական տարբերակում՝ **Viśivarūpa** հրեշը սպանվում է՝ Trita Āptya-ի կողմից*(հնդկական, վեդայական)*[4]: Սա նույն ***նախա***հնդեւրոպական հնագույն պատումի արձագանքով ավելի ուշ շրջանի երկու տարբերակներն են: Սրա հայկական տարբերակը Խորենացու՝ «Տիգրան եւ Աժդահակ» տարբերակն է: Պատմահայրը զուգահեռ տանելով Արամազդի եւ Տիգրանի միջեւ, հասկացնում է, որ ինքը ***գլխավոր դիցի*** մասին է պատմում, բայց տալիս է պատումի հնագույն հայկակա՛ն տարբերակը: Նույն ֆունկցիան կատարող Ավեստայի Thraētaona եւ վեդայական Trita Āptya հերոսների անունները, որոնք սպանում են երեք գլխանի եւ վեց աչք ունեցող վիշապին, Քալվերտ Վաթկինսի կողմից ստուգաբանված են եւ նշանակում են՝ Trita «երեք, երրորդ»*[5]: Վեդայական տարբերակում վիշապասպան հերոսի Āptya անունը՝ Āp-, աղերսվում է «ջուր» իմաստի հետ: Հնագույն համակարգում երրորդ աստվածությունը՝ հայր-մայր-***որդի***, իր մեջ «ամփոփում» է արարչական երրորդություն «երկինքը»՝ ***բովանդակ ամբողջությունը:*** *«Հնդեւրոպական միֆական էպոսում երեք*



Ծիր-Կաթինը, որպես շրջանաօղակ, «հայր-մայր» երկու ֆիկսված աստեղատուն-կետերով:

*1,- Հր. Աճառյան, «Հայերեն արմատական բառարան», հ. I, էջ 593-594:
*2,*3,-«Մ. Խորենացի, «Հայոց պատմություն», 1981թ., Երեւան, էջ 103: էջ 89-90:
*4,- Avesta, Yt. 14. 38, 40.
*5,- C. Watkins, “How To Kill Dragon”, 1995, Oxford, p.314, 316.



Fig. 6. Reconstruction of a Circular Astrolabe according to A. Schott, Zeitschrift Deutsche Morgenl. Ges. 89, p. 302.

MUL. APIN-ը *(գտնվում է Բրիտանական թանգարանում)*

պերսոնաժները միասին ներկայանում են որպես մեկ ամբողջ՝ բովանդակ»[1]*:* Մյուս կողմից Thraētaona եւ Trita անունները նաեւ աղերսվում են՝ ***«համաստեղություն»*** իմաստի հետ. հունարեն՝ térēon, Հոմեր՝ teírea եւ այլն*[2]:

Վեդայական Trita Āptya հերոսի նախատիպը՝ Ինդրան, հե՛նց երրորդ աստվածությունն է, որ ***երկնքի*** եւ ***երկրի*** որդին լինելով, *երկինքն* ու *երկիրն* իրարից վերջնականապես բաժանեց: «Սասնա Ծռեր» էպոսում, երրորդը՝ որդի աստվածությունը, Սանասա՛րն է: Սանասարն է, որ աղերսվում է «ջրի» հետ. էպոսում նա բազմիցս է ընդգծում իր ջրածին լինելը: Սանասարն է, որ սպանում է վիշապին: Սանասարն է, որ ոգիների աշխարհից ազատում է Դեղձունին եւ սրի մատնելով 60 փահլեւաններին հաստատում է «ժամանակը» ու նրա ***անցած ճանապարհը,*** ըստ «Սասնա Ծռերի» նկարագրության՝ ***արեւի ուղեծիրն է:***

Խորենացու ներկայացված վիշապ Աժդահակին սպանող **Տիգրանը** նույնանում է՝ Ավեստայի եւ Ռիգ Վեդայի Thraētaona եւ Trita Āptya հերոսների հետ, ինչպես նաեւ զուգահեռ փոխարինողն է վեդայական Trita Āptya-ի նախատիպը հանդիսացող Ինդրա(An-dar), նույն ինքը՝ Սանասար(կամ եղբայրը՝ Անդրամէլեք) աստվածությունների: Հերոս դիցի՝ Thraētaona եւ Trita անունների հայկական տարբերակով ***Տիգրան*** անունը՝ ԴԻ(ք) + ՐԱՆ = ԴԻ> դից + ՐԱՆ իմաստավորված ստուգաբանվում է որպես՝ ***«աստվածների տեղ»:*** Մինչեւ հիմա էլ արեւմտահայերը ***Տիգրան*** անունը ե՛ւ արտասանում ե՛ւ գրում են՝ ***Դիքրան*** *(դ>տ եւ գ<ք, բաղաձայների անցում):* Տիգրան-Սանասարը, որ խորհրդանշում է ***արեւի ուղեծիրը,*** իր օղակաձեւ արահետով, իսկապես ընդգրկում է՝ 12 < 6+6, աստեղատուն-աստվածների:

«Ռիգ Վեդայի» **Trita Āptya**-ն, նույն ինքը՝ «Ավեստայի» **Thraētaona**-ն, Մովսես Խորենացաու ներկայացրած վիշապ Aži Dahāka-ին հաղթող **Տիգրանը,** որը նույն **Ինդրան** է, նո՛ւյն «Սասնա Ծռեր» էպոսի **Անդրամէլեքն** է, որ հիմքում՝ մ.թ.ա. II հազարամյակում ***Հայասա երկրի*** հավատամքային պանթեոնի աստվածությունն՝ **Terittitüniš-ն է:**

Այս աստվածությունը՝ հայկական էպոսի ***Անդրամէլեքն***



*1, *2, - T. Gamkrelidze & V. Ivanov, նույն աղբյուր, 1995, USA, p. 749; 591:

Նկ. # 1,
Հայասա երկրի գլխավոր աստվածությունը: Մ.թ.ա. II հազարամյակ:

Երկինքը ծնող հիմք-աստվածներ

Նկ. # 2,
Հայասա երկրի գլխավոր աստվածությունը: Սուսի Մելիշպակի կուդուրու քարապատկերից հատված:

Նկ. # 3,
Ծիր Կաթինի առաջին օղակը ձեւավորում են «Անգղ-Cygnus» եւ «Կանիս մեծ» աստեղատները՝ Սիրիուս եւ Դեններ կենտրոն աստղերով: Արեւի ու լուսնի շավիղները որպես երկրոդ օղակաշղթա, «ձեւավորում» են՝ 4 + 4 = 8 համակարգի հաջորդ փուլը: Ամառային արեւադարձ. արեւը «Առյուծի» համաստեղությունում է:

է, «Ռիգ Վեդայի» ***Ինդրան*** է, ինչպես նաեւ Միջագետքյան Մարդուկն է, որ Թիամատին թրատելով՝ երկինքը եւ երկիրը վերջնականապես բաժանեց իրարից: ***Երկինքը միայն արեւի ուղեծրով է բաժանվում երկու մասի*** *(հյուսիսային եւ հարավային):* Եվ երկնքի այս «բաժանումը» տեսողական պերսպեկտիվայով, պարզ կարելի է տեսնել: Այս աստվածությունը հիթթիթական տարբերակով նշանակում է՝ ***«եռագի»:*** Միջագետքյան «The Epic Of Creation» պոեմում այս աստվածությունը երկինքը բաժանում է երեք մասի՝ ***Անուի, Էնկիի*** եւ ***Էայի*** արահետներ, որ MUL.APIN աստեղացանկում ներկայացված է՝ երեք օղակաձեւ շարքերով*(հյուսիսային, միջին եւ հարավային)*, յուրաքանչյուրում 12 աստղեր եւ աստեղատներ դասավորությամբ՝ 3 x 12 *(տես նախորդ էջի նկարները):*

Թե վերջապես՝ ո՞վ է Աժդահակին հաղթող Տիգրանը,- հարցի պատասխանը «թաքնված» է Աժդահակի երգում: Խորենացին նորից դիմում է ծածկագետի իր արվեստին, Տիգրանի ինքնությունը ներկայացնելով երգի այլաբանությամբ:

Աժդահակի երգում, ***լեռան*** բարձրունքում, երկունքի ցավերով բռնված ***ծիրանազգեստ*** կինը Խորենացու «Վահագնի ծնունդ» արարչության մասին երգում՝ ***Ծիրանի ծովն*** է, եւ «Սասնա Ծռեր» հնագույն էպոսի ***Ծովինարն*** է: Լեռը՝ ***Մասիսն է:*** Հայկազյան տունը համարվում էր՝ ***«արեւելք»:*** Ըստ Խորենացու, կնոջ երեք զավակներն ունեին այսպիսի տեսք՝

Առաջինն ***առյուծին*** հեծած սլանում էր դեպի ***արեւմուտք,***

երկրորդն ***ինձ*** հեծած դիմում էր դեպի ***հյուսիս,***

երրորդը ***վիշապ*** սանձած արշավում էր ***հարավ:***

Խորենացու մոտ վիշապը համեմատվում է արծվի հետ.- *«արծուոյ իմն արդարեւ սլացեալ թեւոք տեսի յարձակեալ»**[1]:

Այստեղ, սկզբում, Խորենացին ներկայացնում է Հայասա հնագույն պետության Ներգալ գերագույն աստվածությանը՝ ***վիշապ-Անգղ-հովազ-վիշապ*** աստեղային նկարագրությամբ*(նկ. # 1)*, որ Ծիր Կաթնի օղակաձեւ ամբողջությունն է՝ ***ընձառյուծի*** եւ ***անգղի*** գլուխներով:

Քրիստոնեության մեջ Հայասա երկրի այս հնագույն Ներգալ աստվածությունը նոր կրոնում դարձել էր՝ **Նեռը** *(Հին Կտակարանից՝ Դանիել Է, Նոր Կտակարան մտած՝ Հովհաննու հայտնություն գլ.՝*

*1, - «Մովսես Խորենացի, «Հայոց պատմություն», 1981թ., Երեւան, էջ 89-90:



Արեւի եւ Լուսնի շավիղներ:
Լուսնի հարավ. մակած→ ♉
Հյուսիսային. մակած→ ♋

ԺԲ, ԺԳ), եւ պատմահայր Խորենացին չէր կարող այս հնագույն աստվածության ճիշտ անունը տալ կամ բացե ի բաց ներկայացնել թեկուզ հայկական, բայց հեթանոսական հնագույն աստվածությանը:

Խորենացու ներկայացրած Տիգրանը՝ ***Որդի աստվածությունն*** է, որ աղերսվում է Արեւի եւ լուսնի շավիղների հետ: Արեւի ուղեծրով պայմանավորված զոդիակների ***օղակի*** «իշխող տունը» ըստ հնագույն աստղաբախշության՝ «Առյուծ» համաստեղությունն է, երբ արեւը, որը «սլանում» է արեւելքից դեպի արեւմուտք, ամառային արեւադարձին՝ իր բարձրագույն դիրքում մտնում է «Առյուծի» համաստեղություն *(տես՝ համակարգչային ծրագիր Sky Glob 3.5):*

Խորենացու առասպելական ***Տիգրանը***՝ հայկական էպոսում «Երկվորյակներից» Անդրամէլեքն է, եւ նրա հակառակորդ Աժդահակը՝ Կենտավրոս Պյուռիդան, այսօրվա «Աղեղնավոր» համաստեղությունն է: ***Հայկի*** աստեղատունը՝ ***«Կարապ-Անգղի»*** համաստեղությունն է, իսկ նրա հակառակորդը՝ ***Բելը*** որպես «ժամանակի» աստված Քրոնոս, աղեսվում է ***Հուշկապարիկի****(վիշապ = օշապ = հուշապ).*- հյուսիսային բեւեռի ***«Դրակոնիս»*** համաստեղության հետ: Ըստ Խորենացու Բելի կամակատար Վիշապ Աժդահակի ատսեղատունը՝ «Աղեղնավորն» է, որ հնում, ըստ իս, ներկայացել է՝ այսօրվա «Աղեղնավորի» եւ «Օձակիրի» աստղերից կազմված համախմբով *(նույն ինքը՝ Aži Dahāka = Viśivarūpa = Vritra)**[1]: Աժդահակին հաղթող Տիգրանը՝ «Ավեստայում» դարձել է Thraētaona*[2], հնդ-վեդայական կառույցում՝ Trita Āptya*[3], որի նախնական, առավել վաղնջական տարբերակը՝ ***Ինդրան*** է *(«Ավեստայում»՝ Ան-դար)*, որ «Սասնա Ծռեր» էպոսի Անդրամէլեքն է:

Հնագույն աստղագիտության մեջ, արեւի եւ լուսնի **շավիղներն** ունեն ***հյուսիսային հատում՝ մակած,*** որը գտնվում է ***«Երկվորյակներ»*** համաստեղությունում եւ ***հարավային մակած,*** որը գտնվում է ***«Աղեղնավոր»*** համաստեղությունում: Աժդահակին որպես ***աստեղատուն*** պատմահայր Խորենացին ներկայացնում է՝ ***Կենտավրոս Պյուռիդա*** անունով, որ հին հույների մոտ «Աղեղնավորի» համաստեղությունն էր: Խորենացու մոտ, վիշապ հեծած հերոս-աստվածությունը *(Տիգրան =Տրաետաօնա=Ինդրա=Անդ-րամէլեք)* հյուսիսից՝ «Երկվորյակների» համաստեղությունից, դեպի հարավ՝ Աժդահակի «Աղեղնավորի» համաստեղության վրա գրոհողն է, որ գլխատելով վիշապին՝ իրարից հավիտյան անջատում է ***երկինքն*** ու ***երկիրը:***

Միջագետքում, կասիտական շրջանում, այս դիցը հանդես է գալիս Մար-

*1,- RV, 2.11.19. *2,- Avesta, Yt. 14. 38, 40. *3,- RV, 2.11.19.

դուկ անունով, որ բաժանում է երկինքն ու երկիրը: Համնդհանուր հնդեւրոպական պատումներում, ***երկվորյակները,*** որ հայկկան էպոսում՝ Սանասարն ու Բաղդասար (կամ Ադրամէլեք) անունով դիցերն են, երկնքի գերագույն աստվածություն ***Դուառուսի,*** որդիներն են, որ խորհրդանշում են ***արեւի եւ լուսնի շավիղները:*** Խորենացու այս կտորում, Տիգրանը՝ «Սասնա Ծռեր» էպոսի Սանասարն է: Նրա երեք որդիները՝ Բաբ, Տիրան եւ Վահագն, հայ հնագույն էպոսում, ուղիղ համեմատական զուգահեռներով՝ Ցռան Վերգո, Զենով Օհան, Մեծ Մհեր դիցերն են, որ համապատասխանում են՝ «Կշեռք» *(աշնանային գիշերահավասար)*, «Ջրհոս»*(ձմեռային արեւա-դարձ)*, «Առյուծ»*(ամառային արեւադարձ)* համաստեղություններին *(ման-բամասն տես՝ «Երկվորյակներ» բաժնում, էջ՝287-344):*

Եթե մենք հայ հնագույն Աստվածաշնչի՝ «Սասնա Տուն» էպոսի {սան = հոգի, սուն = բխել,- «Աստծո շնչի տուն»}, գլխա-վոր դիցերին զուգահեռաբար համադրենք պատմահայր Մովսես Խորենացու բերած հայ հնագույն «առասպելների» հերոսների հետ՝ ըստ նրանց կատարած ֆունկցիաների եւ ոչ թե ըստ անունների, ապա մեզ համար լիովին կպարզվի, որ հնագույն հնդեւրոպական հավատամքային պատում՝ «Սասնա Ծռեր» էպոսը, քրիստոնեությունից հետո, առաջինը գրի է առել պատմահայրը՝ մեծն Մովսես Խորենացին:



Լուսնի հյուսիսային մակաձը գտնըվում է «Երկվորյակների» համաստեղությունում, իսկ հարավային մակաձը գտնվում է՝ «Կարիճի» եւ «Աղեղնավորի» արանքում: Ինդրայի կողմից աներեւույթ Ռահու-Կետու վիշապի գլխատումով (Աժդահակ), արեգակը քաջանց՝ ոգիների աշխարհից արտահայտվում է արտաշխարհում: Գլխատված վիշապը փորձում է կուլ տալ արեգակին եւ չի հաջողում: Ժամանակների վերջում, երբ նրա մարմինը եւ գլուխը միանան, ապա նա կլլելու է արեգակը:



«Սասնա Ծռեր»	ըստ Մովսես Խորենացու	«Աստղատունը»
Հայոց թագավորը՝ 1.Գագիկ=Աստղիկ= =Խաչապաշտ=Թեւաթորոս:	**Առաջին Նահապետը՝** 1. Հայկ	**«Անգղ-Կարապ» = = Cygnus,** կենտրոնը՝ Դենեբ:
Առաջին Դիցամայրը՝ Ծովինար=Սարան:	**Առաջին Դիցամայրը՝** Ծիրանի Ծով=ծիրանազգեստ կին	**«Կանիս Մեծ»,** կենտրոնը՝ **Սիրիուս:**
Հայոց 1-ին թշնամին՝ Սենեքերիմ:	**Հայոց 1-ին թշնամին՝** Բել=Նեբրովթ	**«Հուշկապարիկ»= = «Դրակոնիս»**
Երկվորյակներ՝ Սանասար, Ադրամէլեք=Բաղդասար:	**Հայոց առասպելական արքան՝** Տիգրան	**«Արեւի ուղեծիր»**
Սանասարի երեք որդիները՝ Վերգո, Օհան, Մեծ Մեր:	**Հայոց արքայի երեք որդիները՝** Բաբ, Տիրան, Վահագն:	«Կշեռք», «Զրհոս», «Առյուծ»:

Էպոսի ***Վերգոն*** եւ ***պապ(Բաբ) Խրենկը*** եւ Խորենացու ***Բաբը***՝ նույնն են:
Էպոսի ***Մեծ Մեները*** եւ Խորենացու ***Վահագնը***՝ նույն են:
Էպոսի ***Զենով Օհանը*** եւ Խորենացու ***Տիրանը***՝ նույնն են:
Բաբ-Վերգոն՝ ***աշնանային*** գիշերահավասարն է՝ ***«Կշեռքի»*** համաստեղություն:
Զենով Օհան-Տիրանը՝ ***ձմեռային*** արեւադարձ՝ ***«Զրհոս-ձուկ»*** համաստեղություն:
Մեծ ***Մեր-Վահագնը***՝ ամառային արեւադարձ՝ ***«Առյուծի»*** համաստեղություն:

Հաջորդ դիցը՝ Մեծ Մեր	**Հաջորդ դիցը՝** Վահագն	**Արեւ,** աստեղատունը՝ **«Առյուծ»:**
Սասնա հաջորդ դիցը՝ Դավիթ	**Հայոց հաջորդ արքան՝** Արա Գեղեցիկ	**«Խոյ»**

Դավիթ -Արա Գեղեցիկը՝ գարնանային գիշերահավասարն է, արեւը գտնվում է ***«Խոյի*** համաստեղությունում», Մարտ 21, Նոր Տարի: Թե՛ Դավիթը, թե՛ Արա Գեղեցիկը մեռնում են թշնամուց՝ կնոջ հետ կապված պատմության պատճառով, որն աղերսվում է լուսնի հետ:

Հայոց կին թշնամին՝ Չ'մշկիկ	**Հայոց կին թշնամին՝** Ճամիրամ	**«Լուսին»**

Քառաթեւ համակարգի լրումից հետո հայտնվում է վերջին դիցը. նա անմահ է եւ անժառանգ ու փակվում է քարայրում:

Սասնա վերջին դիցը՝ Փոքր Մեր	**Հայոց վերջին հերոս դիցը՝** Արտավազդ=Արայան Արա	**Արեւի ուղեծրի** 12 աստեղատները

ԵԳԻՊՏԱԿԱՆ



ՀԱՅԿԱԿԱՆ «ՍԱՄՆԱ ՏՈՒՆ



Խորենացու «Պատմությունում» թվելյաց երգերից երկրորդը, որտեղ Արտավազդի մասին է երգվում, նույն հնագույն կարգակառույցի մասին է, որի խորհրդաբանական սիմվոլն աղերսվում է՝ ***Մասիս*** եւ ***Մասիուս*** լեռների հետ է: Փաստորեն, ըստ երգի, Արտավազդը Արտաշատ հիմնելու տեղ չգտնելով, գնաց եւ շինեց ի մեջ Մարաց ***Մարակերտը*** *[1], որը ***Շարուրա*** անունով դաշտում է գտնվում: Կա երկգագաթ Մասիս լեռը՝ Սիս ու Մասիս, եւ կա Վանա լճից հարավ, Հյուսիսային Տիգրիսից վեր՝ ***Մասիուս*** լեռները, ըստ Հին Կտակարանի՝ ***Արարադի*** լեռները: Խորհրդաբանությունը հասկանալու եւ տեղանքը ճշգրտելու համար նախ եւ առաջ մի քանի զուգահեռների մասին: Պատմահայրն իր աշխատության ***«Ը»*** գլխում, փաստորեն, կողմնակիորեն մեզ համար «փաստում-պարզում» է, որ ***«Եւ զՇարաշան ի տանէ Սարասարայ»*** եւ «Շարուրա» անունով դաշտը (երկրամասը) նույն տեղանքի մասին է, որ ժամանակին, հավանաբար, մեծ բդեշխություն է եղել, ընդգրկելով Կորդվաց եւ Սասնո գավառները*[2]: *Եւ պատահական չէ, որ մի քանի անգամ հայ միջնադարյան հեղինակների մոտ Նոյյան տապանի «ջրհեղեղից փրկելու կանգառ»՝ սրբազան լեռան անունը կանչվում է* **Սարադ***[3], *աղերսվելով «Սասնա Ծռեր» էպոսի Սարասար = Սանասար > Սան-ասար = հոգի + շրջան, գլխավոր հերոս աստվածության անվան հետ:*

Խորենացին ուղղակի «տեղյակ»է պահում նաեւ ՇԱՐ = ՍԱՐ = 3600 տարի (կամ 360º ամբողջ շրջան) շրջապտույտի տիեզերական մեծ տարվա՝ 25920, 36000, 432000, մասին *(տես՝ նույն աղբյուրը, էջ 32):* Եւ փաստորեն, Շարուրա դաշտում ***Արտաշատ*** *(մայրաքաղաք = կենտրոն)* հիմնելը, ոչ թե քաղաք հիմնելու, այլ՝ կենտրոն, իմաստով է ներկայանում: Արտավազդը ***Արտաշատ*** հիմնելու համար, անցավ գնաց եւ շինեց Մարաստանում ***Մարակերտը:*** Բայց ուզում էր Արտաշատ հիմնել, չէ՞, եւ ոչ թե՝ Մարակերտ: Այս կտորը անհեթեթություն է դառնում, եթե թվելյաց երգերի այս կտորում Մարաստանը եւ Արտաշատ հիմնելը փորձենք հասկանալ բառացի՝ Մարաց երկրի եւ կոնկրետ քաղաքի իմաստներով: ***Մարակերտ*** անունով քաղաք չի էլ եղել: ***ՄԱՐ-Ա-կերտն*** աղերսվում է ***մայր*** բառի հետ, որպես կենտրոն՝ մայրաքաղաք, իմաստով: Թաքնագիտական ասելիքը (կոսմիկական առասպելը) «իրական-պատմական» երեւույթով ներկայացնելը հնագույն թաքնագիտական դպրոցների «ոճ»-ն էր, որը հատուկ է թե՛ Խորենացուն, թե՛ այլոց՝ Փ. Բյուզանդ, Ա. Շիրակացի եւ այլն: Խորհրդաբանական հիմքով ներկայացված ՄԱՐ-ը՝ բխում է ՄԱՅՐ-ից՝ «մթություն, խավար», անկախորեն գործածված չէ, բայց պահված է մի քանի դարձվածքների մեջ, ինչպես՝

*1,-Մարաց մեջ կամ Մարաց կողմերը՝ «Մասիսից բռնած Արաքսի կողմերում մինչեւ Նախիջեւան եւ Ջուղա, մինչեւ Գողթն գավառի սահմանները» տարածքն է *(տես՝ «Վարք Մաշտոցի», Մ. Աբեղյան, 1962թ., Երեւան, էջ 11):*

*2,- «Մովսես Խորենացի, «Պատմություն», 1981թ., Երեւան, էջ 130:

*3,- *«Ի լերինս հայոց, ի լեառն Սարարադայ ի սահմանս Այրարատեան տերութեան…»,* «Փավստոս Բյուզանդ, «Հայոց պատմություն», 1987թ., Երեւան, էջ 36:

ի մայրն դառնալ, ի մայր մտանել «արեւի մայր մտնել» իմաստներով(տես՝ Հր.Աճառյան, «Հայերենի *արմատական բառարան», հ. III, էջ 248):*

Փաստորեն, ժողովրդական հնագույն հավատալիքը՝ ***«Արեգակը գնում է իր մոր մոտ հանգստանալու»*** կամ՝ ***«Արեւը մոր ծոցից ելավ»*** ընկալումը, տիեզերական արարչության մասին վաղնջական հավատամքային կարգակառույցի հետ լիարժեք համապատասխանության մեջ է: Նախահնդեւրոպական *mor-/*mar ձեւը՝ «ծով, լիճ, ճահիճ» նշանակությամբ (հայերեն՝ mawr)*[1] հնդեւրոպական մի շարք լեզուներում, հարակից եւ նման հնչյունային արտահայտությամբ միեւնույն կամ համանման իմաստն են արտահայտում, որը հնագույն միֆոլոգիական ընդհանրական կոնցեպտում՝ խավարի ջրային մայր վիշապի խորհուրդն է ներկայացնում:

Այս գրքի «Աստղագիտություն» բաժնում ներկայացված է Արեգակի եւ լուսնի ***հարավային*** եւ ***հյուսիսային*** շրջադարձային ***մակածները***՝ «Կարիճ» եւ «Երկվորյակներ» համաստեղություններում, եւ դրանց աղերսումը երկրի վրա՝ «ինչպես վերեւում, այնպես ներքեւում» հերմետիկ բանաձեւի համաձայն՝ Մեծ Մասիս եւ Մասիուս (Սարարդի լեռներ) կենտրոնների հետ: Հնագույն համակարգում այս երկու կարդինալ աստեղատուն կենտրոններով է ձգվում գլխատված աներեւույթ Ռահու-Կետու վիշապը, որն ըստ «Սասնա Ծռեր» էպոսի, Փոքր Մհերն է, որ Համբարձման գիշերը աշխարհը կործանելու համար փորձում է ելնել քարայրից եւ չի հաջողում: Նրա 180⁰ ընթացքը *(տես գրքի «Փոքր Մհեր» բաժինը)* երկնակամարում լուսնի հյուսիսային մակածից մինչեւ հարավային մակածն է՝ «Երկվորյակներից» մինչեւ անդրաշխարհի մուտք՝ «Կարիճի» համաստեղություն է, որ երկրի վրա՝ Սարարադի (Մասիուս) եւ Մեծ Մասիս լեռներ-կենտրոններն են: Արտավազդը դեռ բարուրում, ըստ Մ. Խորենացու բերած զրույցների, վիշապ Աժդահակի սերունդների կողմից փոխված է, եւ նրա տեղը դեւ-վիշապ է դրված: Ուրեմն, Արտավազդ-Փոքր Մհերը վեդայական նույն Ռահու-Կետու վիշապն է, որ միտում է լուսնի հյուսիսային եւ հարավային մակածները:

Թվելյաց այս երգը (#2),- **«Արտաւազդայ ոչ գտնալ, ասեն, Քաջի որդվոյն Արտաշեսի, տեղեկիկ ապարանից ի հիմնանալն Արտաշատու՝ նա անց, ասէ, գնաց եւ շինեաց ի մեջ Մարաց զՄարակերտ. որ է ի դաշտին՝ որ անուանեալ կոչի Ծարուրայ»***(Մ. Խորենացի, էջ 101)***,** պետք է հասկանալ այսպես՝ Արտավազդ դիցի ***երկրի կենտրոնն*** իր իսկ կառուցած Մարակերտն է՝ Սարարադ(Մասիուս) կենտրոնն է, լուսնի հյուսիսային մակած*(երկնքում՝ «Երկվորյակների աստեղատուն»):* Նրա մայր մտնելու մուտքի կենտրոնը՝ Մեծ Մասսի անձավն է, որտեղ նա հետո կկալանվի:

---

*1,-T. Gamkrelidze & V. Ivanov, նույն աշխատություն, 1995, USA, p. 580.

ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐ

HALDI դիցանուն
եւ
«Մեղրի դուռ»

Նշումներ՝
***Մաշտոցյան այբուբեն**
***Շարականներ**

HALDI դիցանուն եւ «Միհրի դուռ». տարբերություններն ու համատեղությունը որպես թվային եւ ժամային արտահայտություններ:

Վան քաղաքից դեպի հյուսիս, փոքրիկ լեռնագոտու վրա է գտնվում **«Միհրի դուռ»** կոչված հայտնի այն ժայռը, որի վրա սեպագրված են «ուրարտական» շրջանի հայկական աստվածների անունները՝ նրանց զոհաբերվելիք ցուլերի եւ խոյերի «թույլատրելի» թվաքանակներով: Ու թեեւ շարքում չկան «Միհր» կամ «Ագռավ» անունները, սակայն քարաժայռը ժողովրդի մեջ հիշվել է հենց այս անուններով: Հայ հնագույն էպոսի որոշ դիցանուններ, օրինակ՝ Թորոս-Թեյշեբա, Սարդի (Շիվինի) – Սանասար (?), նմանություններ ունեն «Միհրի դռան» կամ Վանի թագավորության դիցանունների հետ, սակայն առկա է նաեւ տարբերությունը: Օրինակ, հատկապես Միհրի անունը («Միհրի Դուռ»), որով հայտնի է ժայռաբլուրը, բացակայում է: Շարքի աստվածների անուններից եւ ոչ մեկը նույնիսկ չի սկսվում (M) տառահնչյունով:

Արդյո՞ք հայկական էպոսը «գործ չունի» հին հավատամքի հետ: Հայկական լեռնաշխարհում, հյուսիսային Միջագետքում եւ Անատոլիայում հիթթիթական, հայասական, հուրրիական, ուրարտական շրջանների մի խումբ առանձնացող դիցեր եւ դիցանուններ, համարյա անփոփոխ «գոյատեւել» են անհիշելի ժամանակներից, որը խոսում է տվյալ տարածքներում ապրող ժողովուրդների էթնիկական ազգակցականության կամ միատարրության մասին: Անհիշելի ժամանակներից այս տարածքների պանթեոններում գլխավոր աստվածների «ֆունկցիոնալ փոփոխություններ» չեն եղել: Մ.թ.ա. III հազարամյակից միչեւ I հազարամյակ, կենցաղային մշակույթը, ճարտարապետությունը, արվեստը, գիտությունը եւ հավատամք-կրոնը՝ իրարից անջատ տիրույթներ չէին, ինչպես այսօր, այլ՝ հնում եղել է ամբողջական, միաձույլ հավատամք-մշակութային համակարգ:

Հարց է առաջանում. արդյո՞ք հայկական էպոսն իր հիմքում, իր նախնականությամբ, հեքիաթների ու առասպելների հավաքածու է եւ «կապ» չունի հին հավատամքի հետ *(ապա ինչո՞ւ է Ագռավաքարը կոչվում «Միհրի դուռ»),* թե՞ մենք գործ ունենք երկու տարբեր հավատամքների՝ ՀԱԼԴԻ-ի շարքի աստվածությունների եւ ***Սասնա դիցերի*** պաշտամունքային կարգականոնների հետ (հին եւ նո՞ր): Սակայն, փաստ է եւ գիտականորեն համընհանուր ընդունված է, որ ***Միհր-Միհր***-ի պաշտամունքը Հայկական լեռնաշխարհում, գոյություն է ունեցել առնվազն մ.թ.ա. II հազարամյակում*[1] եւ հյուսիսային Միջագետքից դեպի արեւելք՝ Հնդկաստան *(գուցե այսօրվա Պարսկաստանի տարածքով)* «արտահանվել» է մոտավորապես նույն ժամանակաշրջանում*[2]:

*1,- Միտանիական արքա ՄԱԹԹԻՎԱԶԱՆ (մոտ 1400 մ.թ.ա.), երբ պայմանագիր է կնքում հիթթիթական արքա ՇՈՒՓՓԻԼՈՒԼԻԱՄԱՅԻ հետ, վկաներ է կանչում մեծ աստվածներ՝ Միթրային, Ուրունային, Ինդրային, Նաշատիային: Նույն աստվածների պաշտամունքը Հնդկաստանում, համապատասխանում է՝ Միթրա, Վարունա, Ինդրա, Նասուրիաի հետ:

* 2,- J. Duchesne-Gulemin, La Religion De Iran Ancien, Paris, 1962.

Համապարփակ վերլուծությունը ցույց է տալիս, որ հնագույն հավատամքը **արարչության մասին համակարգ** է՝ ե՛ւ իր թվային, ե՛ւ իր աստղագիտական ներկայացմամբ: Միեւնույն աստվածությունն ուներ արարչության մեջ իր ֆունկցիոնալ դերակատարությունը բնորոշող՝

1) «անձնանունը»,

2) իր ծածկանունը՝ «թվային համարժեք անունը»,

3) աստղաբաշխական ներկայացումն ու սիմվոլը:

Իրականում հայ հնագույն էպոսի գլխավոր դիցերի ու նրանց անունների եւ ուրարտական շրջանի աստվածությունների միջեւ «հակասություն» չկա, առավել եւս, երբ ընդունում ենք այն փաստը, որ հայկական էպոսը մեզ է հասել հազարամյակների խորքերից, բանավոր փոխանցման ձեւով, եւ բնականորեն, բաց թողումներ եւ շեղումներ պետք է ունենար:

Ստորեւ կներկայացնենք հնագույն հավատամքի գլխավոր աստվածության անվան վերլուծությունները՝ 1) ***անձնանուն եւ սիմվոլ***, 2) ***թվային ծածկագիր անուն եւ սիմվոլ,*** 3) ***աստղային անուն եւ սիմվոլ*** զուգահեռներով:

ԱՆՁՆԱՆՈՒՆ, ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆ (սիմվոլ), ԱՍՏԵՂԱՏՈՒՆ, ԾԱՎԱԼ, ԺԱՄԱՆԱԿ

Նախեւ առաջ, ներկայացնենք մի հատված Ա. Մովսիսյանի «Haldi դիցանվան գրության, նշանակության եւ հարակից հարցերի շուրջ» զեկուցումից:

«1. Վանի թագավորության դիցարանում առանձնանում են մի խումբ դիցանուններ (Խալդի, Արդի, Սարդի, Ծինուարդի, Մելարդի (Շիելարդի), Արծիբիդի(նի)), որոնք ավարտվում են ***di*** *վանկով, որում ուսումնասիրողներն իրավամբ տեսնում են բնիկ հայերեն* ***դի՝*** *«աստված» (<*dhes) բառը:*

2. Հատուկ ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ դիցանվան գրության հարյուրավոր դեպքերում, առանց բացառության, առաջին վանկը գրվել է միայն hal վանկով (Քելիշինի արձանագրության բիայներեն մասի առաջին կետի Aldi տարբերակը գրագրի վրիպակի արդյունք է, ինչը երեւում է նույն մասի երկրորդ կետում եւ ասորերեն մասում առկա Haldi ձեւից): Ողջ բիայնական սեպագրության մեջ (ավելի քան 600 արձանագրություններում) ուրիշ ոչ մի տեղ այն չի հանդիպում): ***hal*** *վանկն արտահայտելու համար այլ դեպքերում կիրառվում են* ***ha-al, ha-li, ha-lu*** *կապակցությունները, որոնք երբեք չեն գործածվում* ***Haldi*** *դիցանվան գրության մեջ:* ***Hal*** *վանկի՝ բացառապես գերագույն աստծո անվան գրության մեջ հանդես գալը di «աստված» բաղադրիչից առաջ, չի կարող պատահական լինել եւ հատուկ նշանակություն չունենալ:*

3. Վանի թագավորության սեպագիր սալիկների ուսումնասիրության արդյունքում Ի.Մ.Դյակոնովը նկատեց, որ բիայնական դպիրների կողմից կիրառված որոշ նշանաձեւեր գործածությունից դուրս էին եկել դեռեւս հին բաբելոնյան գրչության կենտրոններում, սակայն առկա են Ք.ա. III հազարամյակում եւ Ք.ա. II հազ. կեսերի խեթական եւ խուռիական դպրության կենտրոններում: Տրամաբանորեն, բիայնական սեպագրության ակունքները պետք է գան Ք.ա. III հազարամյակից կամ Ք.ա. II հազ. կեսերից: Այդ հենքի վրա ***hal*** *վանկի բացառիկ կիրառության պարզաբանումը նոր հարց է առաջադրում. ի՞նչ իմաստ ու նշանակություն է ունեցել այդ վանկանշանը սկզբնապես:*

4. Շումերական պատկերանշան-գաղափարագրերից ծագող սեպագրերի զարգացումը դիտարկելիս՝ մեր հարցին ստանում ենք ուշագրավ պատասխան: ***Hal*** *վանկը չունի երկրորդ նշանակություն (մինչդեռ բազմանշանակությունը չափազանց տարածված է միջագետքյան սեպագրության մեջ) եւ ծագում է շումերական «**լուսավորել**» եռաբաղադրիչ աստղի տեսք ունեցող գաղափարագրից* ***(ψ)****: Այս ուշագրավ երեւույթը գալիս է լրացնելու մեր պատկերացումները Խալդիի պաշտամունքի մասին, ընդգծելով դրանում երկնային լույսի գաղափարի կարեւոր տեղը:*

Սեպանշանի նախաձեւ-գաղափարագրի նմանակը՝ դեպի վեր ուղղված եռաժանին, հանդիպում է բիայնական արքայական կնիքների պատկերներում՝ խորհրդանշելով Խալդիին: Այդ նշանը համադրելով շումերական, խեթա-լուվիական, միջնադարյան հայկական մատյաններում վկայված գաղափարագրերի հետ՝ ժամանակին մեկնաբանել ենք որպես Haldi «արարիչ»:

5. ***Hal*** *վանկի «լուսավորել» իմաստը, սակայն, չի նշանակում, թե այն դիցանվան մեջ չի ունեցել հնչյունային կիրառություն (այդ են վկայում ոչ բիայնական աղբյուրներում եւս դիցանվան* ***Haldi*** *հնչյունային գրությունը, հատկապես, Ք.ա. 8.-րդ դարով թվագրվող նորագյուտ արամեերեն արձանագրությունն Իրանական Ադրբեջանից, որում դիցանունն ունի HLDY գրությունը): Չփորձելով հաստատել կամ մերժել* ***hal*** *վանկին նախկինում տրված մեկնությունները (**«երկինք»** - Կ. Ֆ. Լեհման-Հաուպտ եւ ուրիշներ, «**հայ**» ցեղանուն – Ի. Ի. Մեշչանինով, «**ժամանակ**» - Գ. Բ. Զահուկյան), ենթադրում ենք, որ դիցանունը կարող էր արտացոլել գերագույն աստծո մասին տոտեմական պատկերացումները: Ելնելով մի շարք փաստերից՝ Խալդիի տոտեմը կարելի է համարել այծը (**քաղը**), իսկ դիցանունը մեկնաբանել* ***քաղ****-դի՝ «Այծ(ատեսք)-աստված» (վաղագույն պատկերացումներում այծը կապվել է եւ պտղաբերության (արարում), եւ երկնքի ու ամպրոպի («լուսավորել»), եւ ժամանակը հաշվելու ու այլ գաղափարների հետ): Եթե այս ենթադրությունը հաստատվի, նշանակում է գործ*



* Աղուսյակը՝ Ա. Մովսիսյան, «Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը», Երեւան, 2003թ., էջ 37:

ունենք հնագույն դիցաբանական մտածողությանը բնորոշ մի երեւույթի հետ, երբ աստծո անունը համարվել է անճառելի, եւ նրան կոչել են մակդիրով, տիտղոսով կամ այլ կերպ...»: [*Լույս է տեսել «Հայկական քաղաքակրթությունը հնագույն ժամանակներից մինչեւ քրիստոնեության ընդունումը»*. Գիտաժողով (Զեկուցումների թեզեր), 2000թ., Երեւան, էջ 33-35]:

Փաստորեն, **HALDI**, **HAL** վանկը չունի երկրորդ նշանակություն, ունեցել է բացառիկ կիրառություն, աղերսվելով միայն գերագույն Աստծո անվան հետ, եւ սեպանշանի նախաձեւ-գաղափարագրի նմանակը՝ դեպի վեր ուղղված եռաժանին ծագում է շումերական «լուսավորել» եռաբաղադրիչ աստղի տեսք ունեցող գաղափարագրից:

HAL վանկին տրված են հետեւյալ մեկնությունները՝

1) «երկինք» - (Կ. Ֆ. Լեհման-Հաուպտ),
2) «Հայ» ցեղանուն – (Ի. Ի.Մեշչանինով),
3) «ժամանակ» - (Գ. Բ. Ջահուկյան) եւ
4) «Քաղ-դի», - այծ(ատեսք) – (Ա. Մովսիսյան):

Վերոհիշյալ հեղինակները ճիշտ են յուրովի: HAL-ը որպես գերագույն աստվածություն, կարող է միաժամանակ նշանակել ե՛ւ «երկինք», ե՛ւ «հայ», ե՛ւ «ժամանակ» ու նաեւ «Քաղ+դի»՝, քարայծի արտահայտությունն ունենալ: Սակայն, վերոհիշյալ գիտական մոտեցումներում չկա հիմնահարցը՝ ինչո՞ւ, ի՞նչ սկզբունքային աշխարհճանաչողության հիմք ունեն բերված չորս իմաստները, եւ ինչո՞ւ է ուրարտական Հալդիի պանթեոնի աստվածություն-ների մասին արձանագրության քարաժայռը ժողովուրդը կոչել՝ **ՄՀԵՐԻ ԴՈՒՌ**: «Մհերի դռան» արձանագրության շարքը սկսվում է՝

«***6 այծ Հալդի Աստծուն, որպեսզի լինեն զենված***»:

Ուրեմն այս աստվածության «**թիվը**» կամ «**թվային կարգավիճակը**» պետք է աղերսանք ունենա «**6**» թվի հետ: Բայց մինչ թվային համարժեքների մասին խոսելը, վերլուծենք Ա. Մովսիսյանի «**Քաղ-դի**»՝ «քարայծի տոտեմ» տեսակետը:

Համապարփակ դիտարկումը ցույց է տալիս, որ **Քաղ-դի** «այծ-աստվածը» եւ ընդհանրապես ***կենդանու տոտեմը*** հնագույն հավատամքներում (հատկապես մ.թ.ա. IV-III հազարամյակներում) գաղափար արտահայտելու՝ սիմվոլի նշանակություն ունի եւ հիմնականում աստղաբաշխության հետ է աղերսվում (12 կենդանակերպ աստղատներ) ու ***որեւէ կապ չունի*** նախնադարյան ***տոտեմապաշտության*** հետ:

Ա. Մովսիսյանի ընդգծած «Քաղ»-ը, ոչ թե ***«այծ»,*** այլ՝ ***«երկինք»*** իմաստի հետ է աղերսվում: Ընդունված է, որ օրինակ, «Քաղդեացիների» անունը՝ ***երկինք - ա- գետ*** իմաստն ունի (հավանական է՝ Ր > Ղ անցումը):

Եւ եթե մենք աստեղատուն կենդանակերպերի (զոդիակների) հնագույն անունները փորձենք վերլուծել, կպարզվի է, որ հայերենում, մի շարք, կենդանակերպ համաստեղություններն իրենց անվան հիմքում ունեն «ՔԱՐ»-ը, որից «արտահայտվում» են կենդանակերպերը:

կենդանակերպ աստեղատան անունը	*հին անվանումը*	*հնարավոր հոմանիշը եւ տրոհումը*
1) Այծեղջյուր	**Քաղ-ի**	**Քարայծ ➡ Քար - այծ**
2) Կարիճ	**Քար-իճ**	**Քարիճ ➡ Քար - իճ**
3) Խեցգետին	**Քար-ճանկ**	**Քարճանկ ➡ Քար - ճանկ**

4) Ձուկ *dheǵh- > [*-u] գետնի տակի կենդ. աղերսվում է՝ **Քար-ա-ձուկ**, ՀՆԽ՝ «երկիր» բառի հետ՝ հուն.՝ ikhthus, հայ.՝ ձուկ[*1]:

Ինչպես նաեւ՝

5) Կույս = Քարակույս = Քառակուսի = կին = «երկիր» = քար (?)

6) Ագռավ-ա-քար > Քար-ա-ագռավ (?)

Թ. Գամկրելիձեի եւ Վ.Իվանովի հնդեւրոպական լեզվի ֆունդամենտալ ուսումնասիրությունը պարզում է, որ հնդեւրոպական «ժայռ» կամ ***«քար»*** բառը նաեւ նշանակում է՝ ***«երկինք»:***

«Հնդեւրոպական լեզվում «քար»-ի համար ամենաճիշտ բառը նաեւ նշանակում է՝ «երկինք»[*2]:

Հոմերոսի մոտ, Զեւսը երկու սալաքար է կախում Հերայի ոտքերից, երբ նա երկնքից գլխիվայր էր իջել: Հնդեւրոպական լեզուներում «քարը»-ը օգտագործված է, որպես ամպրոպի աստվածություն՝ «քար = երկինք» իմաստով: ԹՀՈՐ աստվածությունը քարեր է նետում երկիր[*3]: Հայկական էպոսում Սանասար-Բաղդասարը երկու ջաղացքարերով են սպանում գոմշավիշապին, Փոքր Մհերը փակվում է Ագռավա ***քար***-ում եւ այլն:

Փաստորեն, «ժայռաքարի», այսինքն՝ «լեռան» խորհուրդը, միանշանակ, հատուկ կարեւորություն ունի հնագույն հավատամքային բոլոր պատումներում, միտելով ***«երկինք»*** իմաստը: Եվ պատահական չեն հավատամքային հնագույն կենտրոնների փաստացի տեղադրությունները: Եթե պաշտամունքային կենտրոնը գտնվում է Եգիպտոսում կամ դաշտավայրային Միջա-

*1,- T. Gamkrelidze & V. Ivanov, “The Indo-European & The Indo-Europeans”, 1995, USA, p. 453.
*2, *3,- Նույն աղբյուր, էջ 575:

գետքում, ապա, դեպի երկինք ձգված լեռնատիպ «քարի»՝ **զիկկուրատի** կամ **բուրգի** գոյությունը «պարտադիր» է: Եթե տվյալ տերիտորիան լեռնային է, ապա հավատամքային՝ «Աստծո հետ հարաբերվելու» կիզակենտրոնը դառնում է կամ Օլիմպոս լեռը (Հունաստան), կամ Սինա լեռը (Պաղեստին), կամ Տիբեթը կամ Հիմալայան լեռները (Հնդկաստան), կամ հայկական լեռնաշ-խարհում՝ Մասիսի, Սասնո, Վանա լեռները: Ի դեպ, Հունական Օլիմպոս լեռը 9,570 ոտնաչափ բարձրություն ունի, հայկական Մասիսը՝ 16,345 ոտնաչափ, Տյան Շան լեռնաշղթայի Kungur Shan՝ 25,325 ոտնաչափ (հինդու հավատ. կենտրոն Kush-ի շրջան), ինչպես նաեւ Հիմալայանների հյուսիս արեւմտյան Կաշմիրի շրջանում՝ K-2 լեռնագագաթը՝ 28, 250 ոտնաչափ, զարմանալիորեն, բայց ոչ պատահական, բոլորն էլ գտնվում են երկրագնդի **44º-45º** լայնության տարածքում եւ հայտնի են որպես արարչության հետ աղերսվող հոգեւոր, սրբազան լեռներ:

Ուրեմն, եթե գերագույն աստծո անունը երկնքի եւ աստեղատների հետ է աղերսվում, ապա **«քար»**-ը այն մատրիցա-բաղադրիչն է՝ հիմքը, որից «արտահայտվում» են աստեղատները՝ կենդանակերպերը: Այնպես-որ հայերենում, աստղատների՝ կենդանակերպերի անունների «Քար» հիմքը՝ ***«բովանդակ երկինք»*** նշանակությունն ունի: HALDI-ն, աստղաբաշխության ներկայացմամբ, այն **«քարն»** է, ամբողջն է՝ **աներեւույթ, անընկալելի «վերին երկինքը»,** որ նյութականորեն արտահայտվում է որպես՝ **Քաղ-ի** («Այծեղջյուրի» համաստեղութ.), **Քար-ին** («Կարիճի» համաստեղութ.) եւ այլն, աստեղատներ: Եւ պատահական չէ, որ Փոքր Մեր կոչված «վերջին տիեզերածավալումը»՝ արարչության շրջափուլն ավարտող վերջին դիցը, «վերադառնում-փակվում է» ՔԱՐ-ի մեջ (Ագռավաքարում), որ աներեւույթ ***վերին երկինքն*** է: Այսինքն, վերադարձ դեպի նախնականություն, նյութական անգոյություն:

Անանիա Շիրակացին (VII դար) հայտնում է, որ հեթանոս իմաստունները՝ ***«լինելիության պատճառը հյուլեն համարեցին, իսկ գոյի հիմքը՝ նյութը»***[*1]: Ըստ իս, Շիրակացին ուղիղ իմաստով «քարը» նկատի ունի, երբ հենց «Տիեզերագիտություն» բաժնում, երեւութաբար քննադատելով (երբեմն համաձայնվելով) հնագույն աստղաբախշության հետ, չի խորանում, թե «հյուլե» եւ «նյութ» ասելով, ինքն ինչ նկատի ունի, կամ հեթանոս իմաստուններն ինչպես են այն մեկնաբանել:

«***Քար*** բառը բնիկ հայերեն բառ է, ՀՆԽ՝ **Kar-** «քար». կարծր արմատից, որ (հնդեւրոպ.) ցեղակիցների մեջ կրկնվում է կրկնությամբ կամ ածան-

*1,- «Հայ մատենագիրներ, «Անանիա Շիրակացի», 1979թ., Երեւան, էջ 64:

ցական իմաստներով»[*1]: Սանսկրիտ՝ **kara-kara-** «կարծր», «կոշտ», լատ.՝ **cancer** «խեցգետին», շվեդ.՝ **har** «քարքարոտ գետին», շումերերեն՝ **g'ar** «ադամանդ», ֆինն.՝ **kari** «ժայռ», խալդերեն՝ **qarbi** «քարեր», սանսկրիտ՝ **karaka-** «կոկոսի ընկույզ»[*2] եւ այլն: Ինչպես նաեւ՝ Ավեստա **aśman-** «քար, երկինք», Սանսկրիտ՝ **aśman-** «քար, ժայռ, քարե գործիք, քարե մուրճ, ամպրոպի աստվածության քար, երկինք»[*3]:

Երբ Սասնա էպոսում Փոքր Մհերի, - ***մինչեւ գարին չդառնա քան ընկույզ մի***, - արտահայտությունը, տիեզերքի՝ ***«քար-երկնքի»*** տրոհում, ծավալումից հետո, նորից դեպի ետ, դեպի «ամբողջ մեկ»-ը վերադառնալու իմաստով է ասված, որ հետագայում պատմող գուսանները չհասկանալով խորհրդաբանությունը, այն կապել են «լիություն» իմաստի հետ[*4]: Փաստորեն, Փոքր Մհերը ***Ագռավ+ա+Քարի*** մեջ է փակվում եւ սպասում է այն օրվան, երբ քարը՝ երկինքը, դառնա ընկույզ՝ ամբողջություն: Շումերական սեւ գնդի գաղափարագիրը՝ «բովանդակ, ամբողջ», «կատարյալ» նշանակություններն ունի՝ ●, O, իսկ անունը՝ KHA[*5]:

HALDI գերագույն աստվածության HAL վանկի «եռաժանի» գաղափարագիրը, որ օգտագործվել է «բացառիկության սկզբունքով» եւ նշանակում է արարիչ-աստված, իրենում ունի «երրորդությամբ արարելու» գաղափարական մոտեցումը: Գլխավոր աստվածությունը, որից «սերում» են մնացյալ դիցերը, անշուշտ ուներ արարելու ֆունկցիան, բայց նաեւ բազմախորհուրդ արտահայտություններ պիտի ուներ: Երկնքում նա «կենտրոնն» է, որից արտահայտվում են աստեղատները: **«Քարը»** որպես «երկինք-ընդերք» եւ HALDI աստվածությունը որպես՝ **«երկինք»**, համապատասխանության մեջ են, եւ այս առումով, Կ. Ֆ. Լեհման-Հաուպտը ճիշտ է: Սակայն երկնակամարի փուլ առ փուլ շրջապտույտը, հատկապես գարնանային եւ աշնանային գիշերահավասարների կտրվածքով, երբ օրվա եւ գիշերվա ժամերը հավասարվում են՝ 12ժամ + 12ժամ, ենթադրում է նաեւ «ժամանակ» հասկացողությունը, որը հնում հիթթիթերեն կոչվել է՝ **Մահուր = Մեր = «ժամանակ»:** Հայկական **ՄԸՀԷՐ**-ը՝ Մահ+Էր **(ԷՐ > ԱՐ),** հնդեւրոպական «լուսին» եւ «արեւ» իմաստների հետ է աղերսվում, եւ Լուսինը, լուսնային սխեմատիկ տարին՝ 360 օր, հնում համարվել է որպես ***ժամանակի*** չափում:

«Լուսին»՝ ***meH-**[*6]: Սանսկրիտ՝ **mā́h**, պարսկերեն՝ **māh,** հայերեն՝

*1, *2,- Հր.Աճառյան, ՀԱԲ, h. IV , էջ 558-559
*3,- T. Gamkrelidze & V. Ivanov, "The Indo-European & The Indo-Europeans", 1995, USA, p. 453.
*4,- Այս մասին տես՝ «Փոքր Մեր» բաժնում:
*5,- L. A.Waddel, "A Sumer-Aryan Dictionary", plate IV, 1927, London.
*6,- T. Gamkrelidze & V. Ivanov, "The Indo-European & The Indo-Europeans", 1995, p. 590-591.

māhi-(k), բոլորի նշանակությունն էլ՝ **«լուսին»** է: Եվ հայերեն «արեւ»՝ **arew** զուգահեռ համեմատական է սանսկրիտ՝ **ravi´- «արեւ»**, հիթթիթերեն՝ **ḫar(u)wanai-** «ներքեւ»[*1], ինչպես նաեւ հուրրիերեն՝ **hur** «հուր» բառերի հետ: ԷՐ > ԱՐ > ԱՐ(վի) > ԱՐԵՎ: Հայկական ՄԸՀԷՐ աստվածության ՄԻԹՐԱ-ՎԱՐՈՒՆԱ վեդայական (հնդկական) զուգահեռը՝ գիշերային արեւ՝ որ ***լուսինն*** է եւ օրվա,- ցերեկային ***արեւն*** է: ՄԸՀԵՐ = ՄԻՀՐ = ՄԻԹՐԱ աստվածության Գառնիի հեթանոսական տաճարի 24 գլխավոր սյունները՝ օրվա 24 ժամերի խորհրդաբանությունն ունեն: Եվ եթե օրը՝ 24 ժամը (շումերական ժամանակների ժառանգություն) վայրկյանների վերածենք եւ մեկ վայրկյանն ընդունենք աստվածային տարի, ապա կստանանք՝ Բրահմայի 12 ժամվա կյանքի տեւողություն՝ **Մահա-յուգա** [**60^3 x 20= 4** միլրդ. 320 միլիոն մարդկային տարի]: Ահա թե ինչու է բիայնական ՀԱԼԴԻ գերագույն աստվածության արձանագրության ժայռը՝ Ագռավաքարը, ժողովրդի հիշողության մեջ մնացել որպես՝ **ՄՀԵՐԻ ԴՈՒՌ**: Ուրեմն, HALDI-ն = MHER, որ նաեւ իր արարած աշխարհի ժամանակի տերն ու չափման միավորն է: Երբ Գ.Բ. Զահուկյանը HALDI-ն «կարդում է» որպես՝ ***«ժամանակ»***, նույնպես չի սխալվում, բայց թե՝ ինչպե՞ս... անհրաժեշտ էր լիովին պարզաբանել գերագույն աստվածության «ժամանակ» կատեգորիա լինելը:

Հայտնի է, որ շումերների, բաբելացիների, եգիպտացիների եւ այլն, գլխավոր աստվածությունները ներկայանում են նաեւ թվային արժեքների զուգահեռներներով (տես էջ՝ 61-75): Ուրեմն, HALDI-ն նաեւ ծածկագիր թվային արժեք ու միստիկական չափի ու ծավալի իմաստ պետք է ունենա: Նրա եռաժանին՝ երեք ուղահայացների միասնությունը՝ (111 = 666) իր թիվն է բնորոշում:

Հայտնի է, որ հեթանոս իմաստասերների «ազգությունը» բնորոշող անունը՝ ***«քաղ-դնացի»***[*2], նաեւ ***«աստղագետ»*** կամ ***«երկինք -ա- գետ»*** իմաստով էր հասկացվում, որն ըստ իս, **ՀԱԼԴԻ** ***(հալ+դի = քար+դի= երկինք+դից)*** աստվածության հավատամքային պատկանելիությունից սերված անուն է[*3]: Ա. Շիրակացին այս մասին շատ կարեւոր մանրամասներ է հաղորդում. թե ինչպես են պատկերացրել «վերին երկինքը»՝ գոյության հիմքը, քաղդեացի վարդապետները:

«Դառնանք դեպի վիթխարի սահմանակետը՝ վերին երկինքը, որին հույները եթեր են անվանում, իսկ քաղդեացիները՝ խտացած կրակ: Այն անարատ մարմին է, պարզ կրակ, որը ոչնչից չի առաջացել եւ ոչ մի բան նրանից չի առաջացել: Առանձնակի մի մարմին է՝ չհատվող, չկոտրվող, չծռվող, առանց խորշերի, կոկ, անկոր, որը

*1, - T. Gamkrelidze & V. Ivanov, “The Indo-European & The Indo-Europeans”, 1995, p. 590-591.

պարփակելով ամեն ինչ եւ ծածկելով բոլոր գոյացություններն իր ներքո, տարածվեց, պատեց ամենուր, շրջափակում է իր մեջ բոլոր տեսակի գոյացությունները եւ բոլորակաձեւ երկնի սերտությամբ բոլոր տարրերն ընդգրկում է իր տակ: Եւ բավական եղավ նրա մեծատարած շրջանը, որը շրջափակում է արտաքինից ամեն ինչ, որպեսզի ցույց տա իր հսկայական փորված ծոցի գնդաձեւությունը, որին նրանք [բարի փիլիսոփաները] հավիտենական եւ կատարյալ ձեւ են անվանում, որը եւ պտույտ է գալիս անդադար, անչափելի, անթվարկելի ու անտեսանելի արագությամբ: Եւ այդ ըմբռնել կարելի է միայն մտքով, այն էլ ոչ բոլորի կողմից, այլ միայն նրանց կողմից, ովքեր ի վիճակի են տրամաբանորեն ըմբռնելու, այն էլ՝ ոչ այնպես, ինչպես կամենում են, այլ ինչպես նրա շրջագայության գոյացությունն է, որին նրանք երկնակամար են անվանում»*[1]:

Ա. Շիրակացին ընդգծում է նաեւ այն կարծիքը, որ այս բուն երկինքը (ոչ թե արտաքին երկինքը) «մտավոր հասկացողություն է եւ ոչ՝ նյութական»*[2]:

«ՀԱԼԴԻ» (կամ՝ **Խալդի**) գերագույն Աստծո մասին որպես՝ **«բուն երկինք»** արտահայտություն, **«մտավոր հասկացողություն», «խտացած կրակ», «անկոր» -** [խորանարդ?], **որ «ձեւավորում է մեծատարած գնդաձեւություն»**, բոլոր նկարագրությունները հասկանալու համար «բանալի-միջոց» է հայերեն ԽՈՐԱՆ եւ ԽՈՐԱՆԱՐԴ բառերի ստուգա-

*2,- Անանիա Շիրակացի, (մ.թ. VII դար), 1979թ., Երեւան, էջ 68, 70:

*3,- Որ քաղդեացիները ծագմամբ Հայկական լեռնաշխարհից են, տես՝ պարականոն Ավետարան, Զուդիթ 4, 5: «The New English Bible» with the apocrypha, Oxford Study Edition; N.Y. *Oxford University Press*, 1976; editors: S. Sandmel, M. J. Suggs, A. J. Tkacik. Երբ Nebuchadnezzar թագավորի օրոք, ասորական զորքի հրամանատար՝ Հոլոպերնեսին հայտնեցին, որ իսրայելցիները պատրաստվում էին պատերազմի, նա իր մոտ կանչելով քանանացիների առաջնորդ Աքիորին հարցնում է քանաանցիների եւ լեռնային երկրի հետ նրանց կապի մասին, Աքիորը պատասխանում է՝ *«... իրենք սերում են Խալդեացիներից (**հալդեացի** կամ **խալդեացի**, հայկական միջնադարյան մատենագրության մեջ՝ **քաղդեացի**)»:* Եվ մի ժամանակ, նրանք *(«իսրայելցիների նախահայրերը»,- ընդգծ. մերն է)* հաստատվեցին Միջագետքում, որովհետեւ **Խալդեա** երկրում նրանք մերժեցին պաշտել իրենց հայրերի աստվածներին, որովհետեւ սկսեցին պաշտել Աստծուն, որին այժմ ճանաչում են, որը դրախտում է: Խալդեացիներն իրենց երկրից նրանց քշեցին դեպի Միջագետք, որտեղ նրանք ապրեցին երկար ժամանակ: Հետո նրանց Աստվածը նրանց ասաց, որ լքեն իրենց նոր տունը եւ գնան Քանան»: Հազարամյակների ընթացքում, Հայկական լեռնաշխարհից դավանանքի պատճառով քշված լուսնապաշտ արիացիների եւ սեւամորթ քոչվոր բեդվինների միաձուլումը ձեւավորեց սեմիտ աքքադներին, որոնց մեկ ճյուղն էլ սեֆերդիկ (ոչ աշքենազի) հրեաներն են: Իսրայելցիները ձուլվածքն են՝ արիացիների եւ սեմական ցեղերի, որոնց լեզուն փոխվել է, պահպանել են միայն մի շարք հնագույն՝ հնդեւրոպական ծագումի հավատամքային անուններ, հավատամքային համակարգեր եւ այլն: Իսկ հետագայում, նրանց դեպի արեւելք միգրացված ճյուղը, խառնվելով խազարական՝ ալթայական ցեղերի հետ, ձեւավորեց աշքենազի*(աշքենազ անունը՝ հետագայում վերցված անուն է)* հրեայի տեսակը: Այսօր, հրեաները բաժանված են՝ **սեֆերդիկ** եւ **աշքենազի** երկու ճյուղերի, եւ ոչ մի ընդհանուր (լեզվական, գենետիկական) բան չունեն միայն հիշողություն դարձած իրենց հնագույն հնդեւրոպացի հայրերի հետ: Այսօր, աշխարհում, հրեաների 80%-ը աշքենազ է:

*1, *2,- «Անանիա Շիրակացի», 1979թ., Երեւան, էջ 68, 70:

բանումները: Հր.Աճառյանի ՀԱԲ, հ. II-ում, հայերեն ԽՈՐԱՆ բառի հետ զուգահեռ համարժեք է շումերերեն՝ **g'ar** «երկինք, անդունդ» բառը[*1]:

Հեթանոսական հնագույն տաճարներում, «արարչության» մասին պատկերացումների համաձայն, ***խորանը*** գտնվում էր կենտրոնում՝ շրջանաձեւ, խորը, որ բնորոշում էր շրջանաձեւ «բուն երկինքը», անդունդը՝ ընդերքը, կենտրոնում՝ կրակի խորհրդապաշտությամբ: **ԽՈՐԱՆ** եւ **ԽՈՐԱՆԱՐԴ** հնագույն բառերը, որ ոսկեդարյան հայերեն մատենագրությունից են արդեն հայտնի՝ ԽՈՐ + ԱՆ = խոր ընդերք, ԽՈՐ+(Հ)ԱՆ > «մեծ մայր»[*2], աղերսվում են հնագույն հեթանոսական հավատամքային կարգականոնի հետ: ԽՈՐԱՆԱՐԴ բառն, ըստ իս, նույնպես հնագույն գաղափարագրից է առաջացել: ԽՈՐԱՆԱՐԴ = ԽՈՐ-Ա-ՆԱՐ + Դ(ի), ՆԱՐ-ը՝ հայկական էպոսի ԾՈՎԻ + ՆԱՐ[*3] եւ հեթանոսական «երկնեց երկինք…» արարչության մասին երգի մեջ՝ ԾԻ-ՐԱՆ մեջտեղից հակադարձ կարդալու դեպքում՝ ԾԻ+ՆԱՐ, մատնանշում են «խորանարդի» հիմքը՝ **քառակուսին**, որի հին հայերեն հոմանիշն է՝ ***«Քառակույս»***[*4] բառը: Հայ էպոսի ջրային բնույթ ունեցող ծովի ՆԱՐԸ՝ կույս է: Հայերենում՝ ԿՈՅՍ=«կողմ»[*5], քառակուսի = քառա-կոյս = քառակողմ: Նաեւ՝ «խորանարդ» բառի երրորդ մասը՝ **ԱՐԴ** -ը (ԽՈՐ-ԱՆ-ԱՐԴ < ՀՈՐ + ՀԱՆ + ԱՐԴ) կարող է նկատվել որպես՝ ՀԱՆ-ի(մեծ մոր) **ԱՐՏ**, որի հոմանիշներն են՝ ***հանդ, անդակ, հանտե, անդ, հանդակ, խոզան*** եւ այլն[*6], որ հայ էպոսում, արտատեր պառավն է, իսկ աստղագիտության մեջ՝ «Պեգասոս» համաստեղության քառկուսին[*7], որ «խորանարդ» բառի մեջ ունի հավատամքային համարժեք իմաստ: Սա հնագույն շումերական՝ սրբազան համարված չափն է՝ 60 x 60, որը վեց նիստերով հավասարաչափ խորանարդի հիմք հանդիսացող մեկ նիստի՝ քառակուսու չափն է եւ «իգական» է՝ «կույս» է,- քառակուսի < քառակույս, ծովինԱՐ է՝ ջրային բնույթով նախամայր, եւ թի՛վ է՝ 60x60=3600,- շումերական շրջանի սիմվոլ: ԽՈՐ+ԱՆ+ԱՐԴ = խորանարդի սիմվոլը՝ հնագույն անդրոգեն աստվածությունն է՝ հայր + մայր = էր + կի(ն) = էրիկ + կին = «երկինք», որ սրբազան խորանարդի սիմվոլով շումերերեն կոչվում է՝ **g'ar** «երկինք, անդունդ», հայերեն՝ **Ք'ար** եւ հեթանոս

*1,-Հր.Աճառյանի ՀԱԲ, հ. II, էջ 406:

*2,- ***Հաւ՝*** մեծ հայր = նախահայր, ***Հան՝*** մեծ մայր = նախամայր:

*3,-Հայերենում բնիկ հայկ. *ՆԵՐ = «ներքին», «մեջ» բառը, որ ՀՆԽ՝ **ner-** ձեւից է, եւ սանսկրիտ՝ **naraka**, որ «ստորերկրյա աշխարհ» իմաստն ունի, աղերսվում են սանսկրիտ՝ ***narda** «նեղեգ»-ի հետ, որն առակա է հնագույն հնդեւրոպական կոսմիկական արարչության մասին թե՛ հայկական՝ **«երկնեց երկին...»**, թե՛ միջագետքյան՝ **«Երբ վերեւում»** պատումներում, որտեղ Եղեգնիկից ծնվում է աստվածությունը (հայկ. Վահագնը): ՆԱՐԱ -ն եւ ՆԱՐԻ-ն գերագույն գոյության՝ Բրահմի արական եւ իգական «կողմերը»՝ արտահայտություններն են:

*4, *5, - Հր.Աճառյանի ՀԱԲ, հ. II, էջ 629-630, էջ 406:

*6, - Ա. Սուքիասյան, «Հայոց լեզվի հոմանիշների բառարան», Երեւան, 1967թ.:

*7,- Ա. Դավթյան, «Հայոց 36 գրանշան-թվանշանները եւ 36 աստղերի սրբազան կանոնը», «Գարուն» ամսագիր, 1/2003թ.:







վարդապետների կողմից կոչվել է ԲՈՒՆ ԵՐԿԻՆՔ, ի տարբերություն «արտաքին երկնքի»*1: Այս ԲՈՒՆ ԵՐԿԻՆՔԸ «ձեւավորում» է ***արտաքին երկնքի*** գնդաձեւությունը: Ա. Շիրակացին*(մ.թ. VII դար)* ներկայացնելով հեթանոս վարդապետների աշխարհճանաչողությունը, ուղղակի ասում է. ***«Եւ բավական եղավ նրա մեծատարած շրջանը, որը շրջափակում է արտաքինից ամեն ինչ, որպեսզի ցույց տա իր հսկայական փորված ծոցի գնդաձեւությունը»****2***:***

Հեթանոսությունից քրիստոնեական հավատամք «մուտք գործած» յոթ թիվը ել խաչը, հեթանոսական նույն «6» թվի եւ 6 նիստերով հավասարաչափ խորանարդի արտահայտությունն է գումարած կենտրոն-կետը: Խորանարդը «բացելու» դեպքում, մենք նորից ունենք 6 քառակուսիներ: Հորիզոնական երեք քառակուսիները եւ ուղղահայաց չորս քառակուսիները՝ յոթն են, իրար վրա դնելով խաչ սարքելու դեպքում՝ #3-րդ քառակուսին կրկնվում է:

Եզրափակելով կամ ի մի բերելով կրկնենք, որ՝

ՀԱԼԴԻ=Սասնա էպոսի ԿԱԿԻ (Գագիկ)=Ք'ԱՐ=խորանարդ (60 x 60 x 60) = ԺԱՄԱՆԱԿԻ հայր (60 վրկ. 60 րոպ.) = ԵՐԿԻՆՔ (բուն) = գերագույն աստվածություն, որին Շիրակացին ***ԱՐՓԻ*** է կոչում, որից կենսականություն է ստանում ԱՐԵԳԱԿԸ եւ որն անտեսանելի է*3: Այս ամենը գաղտնի քրմական կաստայի, թաքնագետների իմացության շրջանակներում փակված կառույցն է, արտաքին վիպական դիցապատումների տակ քողարկված միջուկը, որի մասին Շիրակացին ասում է. ***«գիտեմ ծածկագետը, որ չեմ ստում»****4***:***

Նոր հավատամքում, Քրիստոս՝ տիեզերական ԲԱՆ-ը, երկրորդ Լոգոսը, նույնպես աղերսվում է ՔԱՐ = երկինք իմաստների հետ, խորհրդանշելով ՔԱՐ-ի՝ երկնքի ՈՐԴՈՒՆ *(Հորոս, Փոքր Մեր, Քրիստոս եւ այլն)*: Քրիստոս անունը վերցված է **<u>խալդեական Նոյի</u>** անունից՝ **Xisuthros = Khasisatra***5**,** եւ խորհրդանշում է խորանարդը՝ *տապան-քար-երկինքը՝ 60 x 60* չափով: Հայերեն ՔԱՐ = qar + bi (խալդերեն)*6: Խալդեական Նոյյան ջրհեղեղը, ինչպես նաեւ դրա Հին Կտակարանի տար-

*1,- «Անանիա Շիրակացի», 1979թ., Երեւան, էջ 68, 70:
*2,- «Անանիա Շիրակացի», 1979թ., Երեւան, էջ 68, 70:
*3, *4,-Նույն աղբյուր, էջ 90, 74:
*5,- Ignatius Donnelly, "Atlantis", 1976, NY, "The Deluge of the Chaldeans", p. 75.
*6,- Հր. Աճառյան, ՀԱԲ, h. IV , էջ 559:



* Ադուսյակը՝ Ա. Մովսիսյան, «Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը», Երեւան, 2003թ., էջ 37:



*Dick Teresi, "Lost Discoveries", 2002, USA, p. 47.

բերակը, տիեզերական եւ օկուլտ խորհրդաբանություն ունի, որի «արմատները» շումերական թվային 60-ական համակարգն է: Խալդեական Նոյը՝ Xisuthros-ը՝ **64800 ÷ 60 = 1080** սրբազան չափի՝ IK-ի,- 60 x 60 քառակուսու անկյունագիծն է՝ 1080:

Զրհեղեղյան խորհրդաբանությունը՝ հոգեւոր 2-րդ Լոգոսի անկումն է՝ նրա նյութական (տիեզերական) արտահայտությունը: Աղավնին եւ Ագռավը խորհրդանշում են նրա ցածրադիր կենդանական եւ բարձրադիր աստվածային էությունները՝ «Հոգի-շունչ» եւ «Միտք-ոգի» (soul, spirit):

Գիտական, ընդունված տեսակետների համաձայն, «HAL + DI» ուրարտական շրջանում պանթեոնի գլխավոր աստվածության HAL սեպանշանի նախաձեւը ծագում է շումերական «լուսավորել» եռաբաղադրիչ աստղի տեսք ունեցող գաղափարագրից, սակայն նշանակության առումով մեկնաբանում են տարբեր՝ «երկինք», «ժամանակ» եւ այլն: Ստուգաբանման կամ մեկնաբանման առումով, եթե «գործ ունենք» գերագույն արարչի հետ (եւ նրա անվան հետ), անհրաժեշտ է հաշվի առնել հների գործածած թվային համակարգը, որը աղերսվում է արարչության մասին հնագույն հավատամքի հետ:

Նախ, HAL վանկի նշանագիրը (Ψ) պետք է «կարդալ» վերեւից եւ ընդունել, որ այն ենթադրում է նաեւ «սկիզբ», ինչպես որ նույն նշանագիրը թեթեւ «վերախմբագրմամբ», գուցե հնագույնի պարզաբանմամբ՝ հայ միջնադարյան ձեռագրերում է օգտագործվել (վերեւում «կետ» դնելով, Ψ): ***Կետը,*** որը՝ չափ, ծավալ եւ կշիռ չունի, ըստ Պյութագորասի, որի աշխարհայացքը հին եգիպտական եւ խալդեական դպրոցների ազդեցությունների արդյունք էր, ***ամենայնի ծնողն*** էր եւ «մեկ» թվի «զորությունն» ուներ[*1]:

Արտահայտվելով (ծիրելով) աջ եւ ձախ թեւերով, նա՝ «կետը», այսպես ասած, «արարում» է աշխարհը՝ երրորդությամբ (ոսկյա եռանկյունի): Մյուս կողմից, ինչպես վերեւում ասվեց, շումերների մոտ 60-ական համակարգը ընդունված էր որպես «հիմքն» ամենայնի եւ, 60 x 60-ը սրբազան չափ էր: Ուտնապիշտիմի տապանի արտաքին մակերեսը սրբազան

*1,- Manly Hall, "The Secret Teaching of All Ages", 2000, USA, p. LXVII.



Արեւի մոգական քառակուսին: 1-ից 36 թվերի գումարը՝ 666 է. բոլոր հորիզոնական, ուղղահայաց եւ անկյունագծերով դասավորված թվերի գումարները՝ 111 է:
Օրինակ՝
AD=6+11+16+21+26+31=111,
CD=36+5+33+4+2+31=111
AC=6+7+19+18+25+36=111
եւ այլն:



2 x 60^3= 432000



Հնքսագոնը «ձեւավորում» է խորանարդը

չափի հիմքով (մեկ նիստը՝ 60x60), հավասար է՝ 60^3 = 2160000, իսկ ներքին մակերեսը նույնքան՝ 216000: Սրանց գումարը վեդայական Բրահմի օրվա 12 ժամն է՝ 432000:

Շումերական համակարգում, **mehr** էր կոչվում քառանկյան մակերեսը: Եվ սրբազան համարվող չափն ընդունելով որպես խորանարդի մեկ նիստի մակերես՝ 60 x 60 = 3600, իսկ խորանարդն ունի վեց նիստեր, մենք ստանում ենք խորանարդի մակերեսը՝ 216000, եւ ներքին ու արտաքին մակերեսների գումարը՝ 432000, որը վեդայական Բրահմի նո՛ւյն ցերեկային 12 ժամերն են վայրկյաններով արտահայտված, երբ նրա քնից արթնանալով, սկսվում է «ծավալվել» նյութական տիեզերքը:

Վերադառնանք խորանարդին: Ուրեմն, սրբազան խորանարդը՝ երկնքի խոհրդապաշտական սիմվոն է: ***Երկինք-խորանարդի մակերեսը եռաստիճան չափում է՝ լայնություն, երկարություն, բարձրություն, որ «ստեղծում է» Հալդիի եռաժանին:*** «111» թիվը (այսօրվա նշանակությամբ) շումերների մոտ՝ «մեկ հարյուր», «մեկ տաս» եւ «մեկ՝ մեկ» - արժեքները նախանշում են՝ «մեկի» արժեքը = 6, «տասի» արժեքը = 60 եւ «հարյուրի» արժեքը = 600, որ փաստորեն՝ «666» թիվն է, որ համարվում էր ամենայնի «սկիզբը», այսինքն՝ «արարչություն», քանի որ ըստ շումերական համակարգի վեց թվի մոգական քառակուսին՝ 6 x 6 = 36, 1-ից մինչեւ 36 թվերի ճիշտ համադրումով, բոլոր ուղղություններով շարված թվերի գումարը՝ 111-ի է հավասար: Եվ, 1-ից մինչեւ 36 թվերի գումարը՝ 666 է, 111 x 6 = 666: Սա Անհունի՝ Արփիի (նաեւ արեգակի) թաքնագիտական թիվհամակարգն է, եւ մաշտոցյան համարվող հայկական այբուբենը նույն համակարգի կառույց է: HALDI-ի «եռաժանին» «սկիզբ-կետն» է, որն ի վերջո ձեւավորելու է «սրբազան ծավալը»՝ հավասարաչափ խորանարդը՝ 60 x 60 քառակուսու հիմքով*(6 x 60 x 600=216000, ըստ Կաբալլայի, Յահվեի ծածկագիր անվան թվային համարժեքն է եւ կիսատ է՝* ***216,000=432000:2,*** *այսինքն, միտում է միայն արտաքին նյութական կողմը):* Այսինքն, խորանարդը այն երկնային «Լույս-Քարն» է, որից «ձեւավորվում» է տիեզերք-աշխարհը:



Ուրարտական շրջանի (մ.թ.ա. 9-7դդ.) վնց վիշապներով ծիսական ջրամանը, որը համապատասխանում է վնց նգր ունեցող երկրաչափական *հնքսագոնին:* «Վնց այծ Հալդիին»:

Ժամային առումով, ե՛ւ շումերները, ե՛ւ բաբելացիք օրը սահմանել էին 24 ժամ, որը 4 x 6, «վնց» թվի հիմքով էր արտահայտվում: Այսինքն, HALDI-ն ե՛ւ անձնանուն է, ե՛ւ լույսի խորհուրդն է, ե՛ւ թիվ է *(Քար-ծավալի մոգական խորանարդի ստեղծողն է).* ե՛ւ երկինք է, ե՛ւ ***ժամանակի*** խորհուրդն է: ՀԱԼԴԻի գլխավորած պանթեոնի աստվածների անունների եւ նրանց զոհաբերվելիք անասունների թվաքանակների արձանագրությունը քարաժայռի վրա կոչվում է նաեւ՝ «Միների դուռ», որովհետեւ ՀԱԼԴԻՆ նաեւ «ժամանակ» կատեգորիան է, եւ «Հալդի-ժամանակ»-ը արտահայտված է հնագույն հիթթիթներեն՝ **«ժամանակ»՝ *Մահուր*** եւ շումերական՝ ***mehr «մակերես»*** տերմին բառերով:



Շրջանագծի մեջ 6 կողնգրներովը՝ հնքսագոնն է:

«Միների Դռան» վրայի աստվածներին զոհաբերվող կենդանիների թվաքանակի արձանագրության մեջ, մինչեւ Հալդիի գլխավորությամբ աստվածներին ցուլեր եւ ոչխարներ զոհաբերվող թվաքանակները, ցուցակը սկսվում է՝ ***6 այծ Հալդիին*** հաղորդումքվ:

Այծը որպես զոհաբերության կենդանատեսակ միայն մեկ անգամ է հիշատակվում, եւ այն էլ 6 հատ եւ միայն զոհաբերվում է գերագույն աստվածությանը՝ ***Հալդիին:*** «Վնց» թիվի հիմքով համակարգը՝ 6-60-ը, շումերական ժառանգություն, «շրջանաօղակ-ժամացույց»-ի թվային համակարգն էր:

«Շումերներն ունեին երկու համակարգային սիստեմ: Նրանք հաշվում էին երկու՝ 10 ական եւ 60 ական համակարգերով: Վնցական (sexagesimal)» համակարգը մեր՝ 60 բոպեն = 1ժամի, 60 վրկ. = 1 բոպեի, որը նաեւ 360 աստիճան ցուցող կողմնացույցն է (6 x 60)»* [1]:



Հալդին =17-ի, $12^2+12^2=144+144=$ $\sqrt{288} = 17$:

Որեմն, «Միների դռան» վրա գրված,- ***6 այծ Հալդիին:*** Հալդին «ամբողջ երկինքն» է, որպես՝ «Տիեզերական վիշապ», «շրջանավիհն» է, որն իր մեջ ներառում է ամենայնը: Շրջանագծից՝ անհունից հետո, ***առաջին գոյությունը*** հարթապատկերային ***հնքսագոնն է,*** որ ունի 6 կողնգր: Հնքսագոնը նաեւ խորանարդի հարթապատկերն է:

*1,- D. Teresi, «Lost Discoveries», 2002, USA, p. 48, 51.



Գծագիր # 1



Գծագիր # 2

AC=17, 17 ցուլ Հալդիին:
AA″= 6, A″B =6, AB = 12,
Թնյշնբային՝ 6 ցուլ եւ 12 ոչխար:
AA′= 4, A′A‴=4, AA‴ = 8,
Ճիվինիին՝ 4 ցուլ եւ 8 ոչխար:
Շարունակելով մինչեւ՝
Խուտուինի՝ 2 ցուլ եւ 4 ոչխար,
Տուրանի՝ 1 ցուլ եւ 2 ոչխար:

«17 ցուլ եւ 34 ոչխար Հալդիին»:

Որպես երկրաչափական հարթապատկեր Հալդին՝ հեքսագոնն է, որ իր մեջ ներառում է ամենայնը: Նրա 6 կողերից յուրաքանչյուրը 17 միավոր է: Ուրեմն **հեքսագոնի** պարագիծը՝ 17 x 6 = 102 է: Վանա Քարի վրայի արձանագրության ցանկում գրված բոլոր արարկան աստվածներին զոհաբերվելիք ցուլերի թվաքանակը՝ 102 է:

Համակարգը «քառակուսիներով» ներկայացնելու պարագայում, եթե առաջին քառակուսու կողեզրը 17 է, ապա հաջորդ քառակուսու անկյունագիծը 12 է, եւ քառակուսիների անկյունագծերը համապատասխանաբար ենթարկվում են՝ 2V¯2, V¯2 հաջորդականությանը (V¯2=1.414, տես գծ. #1):

Այս նույն ***հեքսագոնը,*** փաստորեն, երկրաչափական հավասարաչափ ***խորանարդի*** հարթապատկերն է:

Երկրաչափական հավասարաչափ խորանարդի յուրաքանչյուր կողեզրի արժեքը 12 է, իսկ խորանարդի 6 նիստերից ***(= 6 այծերի)*** յուրաքանչյուր նիստի անկյունագիծը՝ 17 է: Փաստորեն, **Հալդի** գերագույն աստվածությունը հեքսագոնն է, որ որպես ծավալաձեւ՝ խորանարդ է: Եվ այս խորանարդը «ձեւավորում է» հաջորդ՝ 1.Թեշեյբա, 2.Ճիվինի, 3.Խուտուինի, 4.Տուրանի աստվածությունները՝ 6-12, 4-8, 2-4, 1-2 հարաբերությամբ *(տես երկու տարբերակներով՝ գծ. #1, նաեւ՝ գծ. #2, #3):*

Նույն մոտեցմամբ է «Սասնա Տուն» էպոսի հերոս աստվածների «ծավալային կարգավիճակը»: Գագիկ = Կակե՝ «ամբողջ», սիմվոլը՝ ընկույզ, ուրեմն՝ սֆերա,- գունդ, շրջանաձողակ: Քեռի Թորոս՝ 6 ոտանի լազգի ձիով շրջելը կարեւոր ատրիբուտ է, որ խորանարդի ակնարկն է էպոսում. խորանարդն ունի 6 նիստ եւ 12 եզր: Սանասար եւ Բաղդասար՝ ***երկվորյակներ,*** սրանց ծավալային ատրիբուտը՝ օկտահեդրոնն է եւ այլն:

«Սասնա Ծռեր» էպոսի ***Փոքր Միներ*** ճյուղի համարյա բոլոր պատումներում տեղ գտած խնդրը՝ Միների Համբարձման գիշերը ելնելու փորձ անելը, նույնպես աղերսվում է ուրարտական արձանագրության հետ:

«Տարին երկու դիր դուռ կը բացվը՛: Զինք աշխարհ թամաշա կ՚անի:
Դավթի տղա Միներ Համբարձման գշըր դուս կ՚ելնը,
քառսուն հավուր ճամբախ՝ մնկ սհաթա կ՚երթա.
Քար որ բացվը՛, քառսուն օր վեր քարիրու կ՚երթա.
Ինչ խուղը՛ վրեն ընկընը՝ ձին կը խընդկի, Չկերի քելա, հիտ կդառնա:



Գծագիր #3

Հնում մեկ տարին*(սխեմատիկ տարին)* 360 օր էր հաշվվում: Գիշերահավասարի ժամանակ օրը՝ 12 եւ գիշերը՝ 12 ժամ: Ըստ էպոսի, Մհերը երկնքով է անցնում գիշերը, ուրեմն այստեղ, Մհերը որպես գիշերային, երկնային լուսատու է նկատի առնված: ***Մեկ ավուր ճանապարհը***՝ 12 ժամվա ճանապարհ է: Փոքր Մհերը 40 ավուր ճանապարհը մեկ ժամում է անցնում: Ուրեմն, նրա արագությունը մեկ ժամում՝ 12 x 40 = 480 ժամ/ճանապարհ է: 40 օր գնալով հասնում է հողին *(ուրեմն երկնքով էր գնո՞ւմ, չէ՞):* 40 օրը՝ 12 x 40 = 480 ժամ է: 40 օրվա նրա անցածը՝ 480 x 480 = 230400 ժ./ճանապարհ, Մհերի անցած ճանապարհն է մինչեւ հողին հասնելը. հողը նրա ծանրությունը չի կարողանում պահել, վերադառնում է: Ետադարձը՝ նույն արագությամբ, կրկնությունն է՝ 230400 ժամ/ճանապարհ: Ամբողջ գնալ-գալը՝ կես/կես կամ 180^0 + +180^0 = 360^0 = 2 x 230400 = 460800 ժամ/ճանապարհ, որը ամբողջ շրջանն է՝ գնալն ու ետ դառնալը եւ 19200 օր է, որ սխեմատիկ տարվա՝ 360 օր «ժամանակով»,- լինում է 640 ամիս, որը՝ 53.333 ≅ 54 տարի է: Սա պարբերական ***խավարման*** փուլն է, որ կրկնվում է ամեն.- մոտ 54 տարին մեկ՝ ***53 + 1/3***, որի մասին հիշատակվում է շումերական Ուրուկում գտնված կանիֆորմի սալիկի վրայի տեքստում ***(F. THUREAU-DANGIN, Tabletts d'Uruk, Paris 1922, Text no. 14': B. L. van der Warden, Science Awakening II, Oxford Univ. Press, N.Y. 1974, p. 103)***: Հայկական էպոսում տեղ գտած խնդիրը, ինչպես շումերական հաշվարկները, արված են ՇԱՐ = 3600-ի հիմքով*[1]: Փաստորեն, Փոքր Մհերի 54 տարեփուլը մենք ստացանք՝ **480 x 480 x 2** գործողությամբ, բառացի հետեւելով էպոսի վերջաբանին: Եթե 54 տարին բազմապատկենք եւս 480 թվով, որ համակարգի կարգակառույցն է միտում՝ 4 - 8 - 0, ապա կստանանք՝ 25920 տարի, որը երկրագնդի առանցքի տատանումով, **Precession**-ի երեվույթի համաձայն, տիեզերական մեծ տարվա ժամանակն է:

«Սասնա Ծռեր» հնագույն էպոսում Փոքր Մհերի Ագռավաքարից դուրս ելնելու տարեփուլը եւ ուրարտական թագավորության ժամանակների «Մհերի դուռ» կոչված քարի արձանագրությունում տեղ գտած աստվածներին զոհաբերվելիք կենդանիների թվերը համատեղվում են: Գծագիր # 4-ում մենք

*1,- B. L. Van der Warden, Science Awakening II, Oxford Univ., 1974, NY, p. 103.



Գծագիր # 4

տեսնում ենք, որ շրջանագծի պարագիծը՝ 460800 ժամ/ճանապարհ կամ՝ 54 տարի է: Սա «Սասնա Ծռեր» էպոսում Փոքր Միների Ագռավաքարից պարբերաբար ելնելու եւ նրա անցած ճանապարհի ընթացքն է, ուրեմն, 54 տարի/ճանապարհը շրջանագծի պարագիծն է: Եվ ուրեմն, շրջանագծի տրամագիծը՝ 17 է: ***«17 ցուլ զոհաբերել Հալդիին»***,- հրամայելով ցուցում է «Միների Դուռ» կոչված քարաժայռի վրայի արձանագրությունը *(ուրարտական շրջան՝ մ.թ.ա. I հազարամյակ):* Գծագրում #4, շրջանագծի պարագիծը՝ 54, համապատասխանում է «Միների դռան» աստվածների ցուցակում երեք գլխավոր աստվածություններին՝ Հալդի, Թեյշեբա, Շիվինի, զոհաբերվող ոչխարների թվաքանակին, - 34 + 12 + 8 = 54:

Փոքր Միների Ագռավաքարիվ ելնելու 54 տարեփուլը, որ Precession-ի երեւույթով պայմանավորված խավարման փուլային կրկնության ժամանակն է, եւ աղերսվում է ***Հնդարիական,*** վեդայական գերագույն աստվածություն՝ հայր ***Մահա***-ի կյանքի, եւ օրվա ժամանակների հետ:

Հնդկական համարվող, վեդայական սանսկրիտ տեքստերում, գերագույն աստվածություն՝ ***հայր Մահա*** -ի (Pita Maha) անունը, ուղղակի աղերսվում է՝ Pita՛ ***«հայր»*** եւ ****Mā́ha*** ***«լուսին, ժամանակ»*** իմաստների հետ: Բրահմի նյութականորեն արտահայտվելու կյանքի տեւողությունը կամ նրա 100 տարին՝ 311040000000000 մարդկային տարի է* [1]: Հնագույն «հնդեւրոպացիների մոտ լուսինը համարվել է որպես ժամանակի չափման տերմին, որ բխում է *Meh- ձեւից»*[2]: Բրահմի 12 ժամվա ընթացքում (4 միլյարդ 320 միլիոն տարի), երբ նա արթուն է «ձեւավորվում» է նյութական տիեզերքը՝ չորս ժամանակափուլերով:

Շրջաններ

1) Ոսկի = 60^3 x 8 = 1728000	**Թորոս + Ծովինար**	***Կրիտա Յուգ***
2) Արծաթ = 60^3 x 6 = 1296000	**Սանասար + Դեղձուն**	***Տրետա Յուգ***
3) Պղինձ = 60^3 x 4 = 864000	**Մեծ Միէր + Արմահան**	***Դվափարա Յուգ***
4) Երկաթ = 60^3 x 2 = 432000	**Դավիթ + Խանդուդ**	***Կալի Յուգ***

Ընդհանուրը՝ 4,320000:

*1,-Ն. Վ. Բարգինսկայա, «Օրացույց», հոդվ., «Ìèôû íàðîäîâ ìèðà», ò. I, Ì. 1980, c. 612-615.

*2-, T. Gamkrelidze & V. Ivanov, “Indo-European & Indo-Europeans”, New York, 1995, p. 591.

Գերագույն աստվածություն Հալդիի օրվա, որի ընթացքում արարվում է գոյաբանական աշխարհը, չորս փուլերը «ձեւավորում» են ուրարտական՝

1.Թեշեյբա,
2.Շիվինի,
3.Խուտուինի,
4.Տուրանի
< ՀԱԼԴԻ

աստվածությունները, որ ըստ «Սասնա Ծռեր» էպոսի՝

1.Թորոս,
2.Սանասար,
3.Մեծ Միեր,
4.Դավիթ
< ԿԱԳԻԿ թագավոր

աստվածություններն են:

Փոքր Միերի հետ աղերսվող, Լուսնի մակաձով պայմանավորված խավարման 54 տարվա փուլը, փաստորեն, հիմնարար թիվ է գերագույն էակ Բրահմի կամ Հալդիի օրվա 12 ժամերի չորս փուլերի համար, որ կոչվում են չորս Մահայուգաներ՝ 54 x 32 = 1728, 54 x 24 = 1296, 54 x 16 = 864, 54 x 8 = 432: Ուրարտական արձանագրության մեջ աստվածների թվաքանակը պետք է լինի՝ 80, քանի-որ՝ 32 + 24 + 16 + 8 = 80:

Շրջաններ

1) Ոսկի = 60^3 x 8 = 1728000	**Թորոս + Ծովինար**	***Կրիտա Յուգ***
2) Արծաթ = 60^3 x 6 = 1296000	**Սանասար + Դենձուն**	***Տրետա Յուգ***
3) Պղինձ = 60^3 x 4 = 864000	**Մեծ Միէր + Արմահան**	***Դվափարա Յուգ***
4) Երկաթ = 60^3 x 2 = 432000	**Դավիթ + Խանդուդ**	***Կալի Յուգ***

Ընդհանուրը՝ 4,320000:



Թիվ 666-ը նույնպես հաստատուն է՝ **80 x 66.6 = 53.38** ≅ 54 տարի: 54 եւ 666 թվերի հիմքով նաեւ կարելի է որոշել երկրագնդի առանցքի լրիվ տատանումը՝ տիեզերական մեծ տարի՝ 25920 տարի, գումարած նրա կեսը՝ 12960տարի = 25920 + 12960 = 38880 տարի:

Գծագիր # 1

Գերագույն աստվածության՝ ***«ես մեկն եմ, որ դառնում է երկուս, ապա՝ չորս, ապա՝ ութ»,*** արարչական սխեման՝ ըստ աստղագիտության ներկայանում է այսպես՝

I - Գերագույն «չդիֆերենցված ամբողջ» (գծ. # 1),

II-*հայր -մայր* = «Անգղ - Ընձառյուծ» = «Cygnus» եւ «Sirius» (գծ. # 2),

II- *երկվորյակներ,*- արեւի եւ լուսնի շավիղներ (տես գծ. # 3-ը),

IIII-*չորս եղանակները* ֆիկսող ***կարդինալ աստեղատները*** (գծ. # 4)**:**

⇩ ⇩

I ⇨ **II** — **երկուս,** **II** — **չորս,** **IIII** — **ութ:**

Տես գծ. #4-ը: Մ.թ.ա. V-IV հազ., գարնանային գիշերահավասարին արեւը ելնում է «Ցուլ»-ից: Ամառային արեւադարձին արեւը՝ «Առյուծում» է, աշնանային գիշերահավասարին՝ «Կարիճում» է, Ձմեռային արեւադարձին՝ «Ջրհոս»-ում է:



Գծագիր # 2 / Ծիր կաթինը ամբողջն է՝ արական եւ իգական բեւեռներով. «Հովազ եւ Անգղ» աստվածություն:



Գծագիր # 4

Գծագիր # 3

Երկրագնդի առանցքի տատանումով՝ Precession-ի երեւույթով պայմանավորված, հաջորդ փուլում, 2160 տարեփուլի անցումով, մ.թ.ա. III-II հազարամյակում, գարնանային գիշերահավասարին արեւը ելնում է՝ «Խոյից», աշնանային գիշերահավասարին՝ «Կշեռքում» է, ամառային արեւադարձին՝ «Խեց-գետնում» է, ձմեռային արեւադարձին՝ «Այծեղջուրում» է:

ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

*«Քար» բառից է «Քարադի» բուի տենսակից մի թռչուն, որի համար հները առասպելաբանում էին, թե մահը գուշակում է եւ հիվանդությունները ոչնչացնում»: Նաեւ՝ «Քարբ» -արքայիկ օձ, ՀՆԽ՝ **krp**, բնիկ հայերեն բառ է»*[*1]:

Երկուսն էլ՝

Քարադր > «բու կամ ագռավ», եւ ***Քարբ*** < «արքայիկ օձ կամ վիշապ», հնագույն թվային, ծավալային սիմվոլների եւ աստղաբաշխության հետ են աղերսվում:

Երկնքում, 12 զոդիակներից դուրս, հյուսիսային բեւեռում, *Վիշապի* **(Ալֆա Դրակոնիսի աստղատուն)**, *Թռչունի* **(Cygnus-ի աստեղատուն, Դեննեբ աստղով)** եւ *Յուլի* **(հյուսիսային բեւեռում Յուլ աստեղատունը՝ Վարազ՝ հնդիրանական տարբերակով**[*2], **այսօրվա Cepheus-Կեփիեուս աստղատունն է)** երեք աստեղատներն ամեն 36000 տարեփուլով (կամ 1/2, - 18 հազար տարին մեկ) «հայտնվում» են դեմ-դիմաց «տիեզերական Ծառի» (Ծիր Կաթնի գետ) շուրջ, խորհրդանշելով տիեզերական նոր շրջափուլ՝ «սկիզբ» կամ ավարտ՝ «վերջ»: Տիբեթական «տարբերակը» կամ ընկալումը *(տես «Աստղագիտություն» բաժինը)* տիբեթական չէ, այլ համընդհանուր է հնագույն բոլոր հավատամքային պատումներում:

Թռչուն՝ Քարադր:

Մ.թ.ա. 2750-2400-ականներին, երբ Եգիպտոսում (Ռ-Ա > ՐԱ > ԱՐ) Ռ-Ա-արեւի պաշտամունքն իր զենիթում էր, «Cygnus»՝ Դեննեբի աստեղատունը (կռունկ, ագռավ՝ ի վերջո՝ **թռչուն**) համարվում էր «առաջնայինը», որից ծնվել է Ռ-Ա-ն՝ արեւ աստվածությունը[*3]:

Յուլ՝ (Ք)արջառ (հյուսիսային բեւեռի ցուլը):

Աստղատների եգիպտական պատկերագրերը ցուցում են, որ հյուսիսային բեւեռում համաստեղություններից մեկը համարվել է՝ ՅՈՒԼ-Վարազ(**Cepheus-Կեփիեուս աստղատունն է**):

Երկնքի հյուսիսային բեւեռի այս ***երեք աստեղատներն***, ի տարբերություն 12 զոդիակ աստեղատների, համարվել են «անշարժ» *(նրանք միշտ պտտվում են տեղում)* եւ երկնքի կենտրոն*(տես «Աստղագիտություն» բաժինը):*

ՔԱՐ-ԵՐԿՆՔԻ հետ է աղերսվում ԿԱԼ բառը՝ բրբ. ԿԱԼ = ցորեն կալելու տեղ, բակ, որ , քանի որ ըստ հների՝ ԿԱԼ= «լուսնի կամ արեւի շուրջը բակ»[*4]:

---

*,1 - Հր.Աճառյան, ՀԱԲ, h. IV , էջ 560, էջ 561:

*2,- ***«Հայոց արքա Տրդատը վայրի խոզ դարձավ»*** խորհրդապաշտական ներկայացումը, ***վարազի***՝ *հյուսիսային բեւեռի* (Cepheus) աստեղատան հետ է աղերսվում. ոչ թե ունի բառացի նշանակություն, այլ խորհրդանշում է հնագույն պաշտանմունքի աստեղային ատրիբուտը:

*3,- Dick Teresi, “Lost Discoveries”, USA, 2002, p. 128.

*4,-Հր.Աճառյան, ՀԱԲ, h. II , էջ 483:

Հայոց մաշտոցյան այբուբենի շուրջ:

Մաշտոցյան այբուբենի 36 տառերը, մեր խորին համոզմամբ, մոռացված ու լրացումներով վերականգնված հնագույն համակարգն է, որի զուգահեռն է MUL.APIN -ում տեղ գտած 36 աստղերի եւ աստեղատների համակարգը: Մաշտոց անունը նշանակում է՝ MASH = MUSH «վիշապ», այնպես ինչպես հոգեւոր մեծ վարպետ Պյութագորասի անունն է միտում՝ Pita «վիշապ» իմաստը: ***«Մաշտոցը լեռան կատարին երեք տարի ճգնեց»*** հաղորդումը թաքնագիտական նշանակություն ունի *(ճգնելու համար երեք տարին ծիծաղելի ժամանակ է. հայտնի ճգնավորները ճգնել էին՝30, 40 եւ ավելի տարիներ. Անտոն անապատական, հայր Պողոս եւ այլն):* ***«Մաշտոցը լեռան կատարին երեք տարի ճգնեց»*** հաղորդման մեջ՝ լեռը, ***քար-ժայռ-երկնքի*** նշանակությունը եւ իմաստն է կրում: *«Երեք տարի»* ծածկագիրը՝ Մաշտոցի հոգեւոր երրորդ աստիճանն է ցուցում *(մարմնում չորրորդ հոգեւոր աստիճան հնարավոր չէ ունենալ):* Փաստորեն, թաքնագիտական այս ներկայացմամբ, հաղորդվում է, որ Մաշտոցը զուգահեռաբար հավասարվում է եգիպտական Հերմես-Թոթին, Պյութագորասին, եւ ներկայանում է որպես Աստծո դպիրը երկրի վրա: Երկնքում դպրության աստեղատուն աստվածությունը՝ շումերաբաբելական Նաբուն է, եգիպտական Թոթն է, հայկական Տիրն է, որ երկնքում «Աղեղնավորի» համաստեղությունն է:

«Աստծո Ձեռքը, ***Քարի*** վրա, Մաշտոցի համար գրեց 36 տառերը» թաքնագիտական հաղորդումը բացվում է հետեւյալ կերպ: Ինչպես բազմաթիվ անգամ փաստել ենք այս գրքում՝ ***Քարը*** եւ ***Երկինքը*** համարժեք են: ***Ձեռքը՝*** աստեղատուն է երկնքում, հունական Քիրոնն է*[1], եւ հայկական Տրե՝ ՏԻՐ դպրության դիցի անունով ամիսը համապատասխանում է «Աղեղնավոր» համաստեղության հետ*[2]: Փաստորեն, Աստծո ձեռքը՝ «Աղեղնավոր», գրում է քարի՝ «երկնքի» վրա հայոց 36 տառերը*[3], որոնք ի վերջո 36 աստղերն ու աստեղատներն են:

Հայկական այբուբենում Մաշտոցը ներմուծեց մեհյանական դպրության մեջ չգրվող յոթ ձայնավորները, որոնք յոթ մոլորակների հնագույն նշաններն էին՝

♄	♃	♂	☉	☿	♀	☽
Սատուրն	Յուպիտեր	Մարս	Արեւ	Մերկուրի	Վեներա	Լուսին

Ա - ☉ - Արեւ, Ե - ♂ - Մարս, Է-♃- Յուպիտեր, Ը - ♄ - Սատուրն,
Ի - ☽ - Լուսին, (ու) Ի - ♀ -Վեներա, Ո -☿- Մերկուրի:

---

*1,*2,- Ա. Դավթյան, «Հայոց աստղային դիցաբանություն», էջ 150-151:
3,- Քիրոնը = Թոթ = Տիր՝ գերագույն աստվածության դպիրն է: Քիրոնը՝ հայկական Տիրը, Աստծո այն ձեռքն է, որ ըստ Մ. Խորենացու(«Հայոց Պատմութ.» Երեւ. 1981թ., էջ 404-405),* քարի վրա *(ըստ թաքնագիտության՝ քար = բուն երկինք)* գրեց 36 գրերը, որն իրականում 36 աստեղատներն են:

A B

6	32	3	34	35	1
7	11	27	28	8	30
19	14	16	15	23	24
18	20	22	21	17	13
25	29	10	9	26	12
36	5	33	4	2	31

C D

Արեւի մոգական քառակուսին: 1-ից 36 թվերի գումարը՝ 666 է. բոլոր հորիզոնական, ուղղահայաց եւ անկյունագծերով դասավորված թվերի գումարները՝ 111 է: Օրինակ՝ AD=6+11+16+21+26+31=111, CD=36+5+33+4+2+31=111 AC=6+7+19+18+25+36=111 եւ այլն:





Արեւը կենտրոնում՝ թաքնագիտական դասավորու-թյունը համապատասխանում է արեւից հետո վեց մոլորակ-ների դասավորությունը: Ըստ հնագույն աստղաբախշության արեգակի գաղտնի կոդ թիվն է՝ 666, որը 1-ից մինչեւ 36 թվերի գումարն է: Թե ինչո՞ւ է արեւն աղերսվում 36 թվի հետ,- շատ պարզ է, արեգակը Precession-ի երեւույթի համաձայն 36 տարում է անցնում գալակտիկայի հասարակածով: Փաստ է, որ հնագույն ժամանակներում քրմերը գիտեին այս մասին, սակայն պարզ չէ՝ թե ինչպե՞ս գիտեին:

Արեւի մոգական քառակուսին, ըստ որի կազմված է հայոց այբուբենը՝ 6^2=36 է, որտեղ արեւի թիվ կոդը՝ 666 է,- 1 + 2 + 3 + 4 + ... + 36 = 666, Մերկուրիինը՝ 8^2=64, եւ այլն: Հայկական այբուբենում «Ա» տառը աղերսվում է 6 թվի հետ՝ ԱՅԲ = 1 + 300 + 2 = 1+3+0+0+2=6: ՔԷՆ = 9000 + 7 + 400 = 9+0+0+0+7+4+0+0 = 2: ԱՅԲ + ՔԷՆ = 6 + 2 = 8: *«Ես եմ Ալֆան եւ Օմեգան, առաջինը եւ վերջինը»* հեթանոսությունից քրիստոնեություն ներմուծված «Որդի աստծո» արտահայտությունն ասում է, որ նա ութերորդն է՝ Մերկուրին է, քանի-որ եթե արեւն առաջինն է, ապա սպիրալաձեւ դասավորությամբ՝ Մերկուրին շարքում դառնում է վերջինը: Շարքում, պետք է հաշվել նաեւ հունական դիցաբանության մեջ հայտնի՝ «պայթած» Փայետոն մոլորակը *(տես նկարը):* Այսպիսով, *«Ես եմ Ալֆան եւ Օմեգան, առաջինը եւ վերջինը»* արտահայտությունը մատնանշում է՝ «Որդի աստծուն», որի մոլորակային ատրիբուտը Մերկուրին է:

Ըստ Ներսես Շնորհալու հաղորդման, մեր այբուբենը՝ ԱՅԲ-ից ՔԷՆ, արեւի ելքով են*[1]: Մ. թ.ա. V-IV հազարամյակներում, նոր տարուն՝ գարնանային գիշերահավասարին, արեւը սկսում է իր ընթացքը «Ցուլի» համաստեղության ***Պլեադա*** աստղերից, երբ հնագույն Հայասա երկրի գերագույն աստվածության ***Անգղ-Կարապի*** համաստեղությունը ***տեսանելի երկնքի կենտրոնում է: Նա է երկնային արքան. ամառային արեւադարձին, մ.թ.ա. V-III հազարամյակում, արեգակը մտնում է «Առյուծի» համաստեղություն եւ միակցվում է Ռեգիլուս(թագավոր) աստղի հետ:*** Ասորական եւ եբրայական այբուբեններում առաջին տառը՝ ԱԼԵՖ

*1,- Ա. Դավթյան, «Հայոց 36 գրանշան-թվանշանները եւ 36 աստղերի սրբազան կանոնը», «Գարուն» ամսագիր, 1/2003թ.:



նշանակում է՝ ԵԶ, ՅՈՒԼ, հունականում՝ ԱԼՖԱ: Հայերենում «Յուլ» համաստեղության անունը՝ «ԱՐՋԱՌ» է: Հայերենում՝ ***Արջառ, Արեւ*** եւ հնագույն Հայասա երկրի ***Անգղ*** երկնային աստղերի եւ աստեղատների անունները սկսվում են **«Ա»** տառով: Յոթնագրյանքի ծածկագրված տեքստերն ասում են, որ ԱՅԲ-ը թագավոր է՝ ***արքա:***

Շարականների մասին:

Հնագույն հեթանոսական ժամանակներից մեզ հասած Շարականների եւ խազերի վերծանության խնդիրը միշտ կլինի փակի տակ, եթե վերծանողները չուսումնասիրեն հեթանոսական հավատամքային համակարգի մաթեմատիկական մատրիցան: Օրինակ, պատահական չէ, որ հնագույն ծիսական երգերի հավաքականությունը կոչվում է՝ «Շարականներ»: ՇԱՐ՝ նշանակում է շրջան 360^0 եւ 3600 թվի անունն է: Օրիգինալ, հնագույն շարականների թիվը պետք է լինի՝ 36 կամ 360 հատ: Հիմքում այն բաժանվում է չորս հիմնական թեմատիկ մասերի՝ ***գարուն, ամառ, աշուն, ձմեռ,*** որ աղերսվում են՝ ծննդի, հասունության այլն հետ, մինչեւ շրջափուլի փակում: Սրանք համապատասխանաբար նաեւ՝ բնության մեջ գոյություն ունեցող չորս սոլիդներ՝ ծավալներն են *(իկոսահեդրոն, տետրահեդրոն, օկտահեդրոն, խորանարդ),* որ խորհրդանշում են՝ ***ջուր, հուր, օդ, հող*** ատրիբուտները: 360 շարական եւ յուրաքանչյուր շարականը՝ տաս տող, որ լրացնի 3600 թիվը: Յուրաքանչյուր շարականի մեկ տողը պետք է լինի՝ 4 + 4 վանկայաին համակարգ: Խազերը նմանապես պետք է լինեն՝ 360: Հնում ձայնային վիբրացիաների այս համակարգը ստեղծում էր կապ հոգեւոր սֆերաների հետ:



Հնագույն համակարգում՝ երաժշտությունը, մաթեմատիկան, աստղագիտությունը եւ արարչության մասին հավատամքային կարգականոնը մեկ համակարգ էր:

ՎԵՐՋ ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԻ

ԱՐԹՈՒՐ ԱՐՄԻՆ
(Արթուր Լեւոնի Բաբայան)

Արթուր Արմինը հեղինակ է չորս գրքերի, բազմաթիվ ակնարկների, հոդվածների:
«Նամակներ մենության հեռուներից», 1989 թվական, Երեւան:
«Փոքր Մեր» 1996 թվական, ԱՄՆ:
«Բնազանցություն», 2003 թվական, ԱՄՆ:
«Հնագույն հեթանոսական Աստվածաշունչ՝ Սասանա Ծռեր էպոսը»,
2007 թվական, ԱՄՆ:
1996-1998 թթ., Լոս Անջելեսում հրատարակվող «Եղիցի Լույս»
մշակութային հանդեսի հրատարակիչ, խմբագիր:
1999 թվականին ստեղծում է Լոս Անջելեսի
«SPURK-DIASPORA» հասարակական մշակութային կազմակերպությունը:
2000 թվականին, ԱՄՆ-ում «60 Րոպե» CBS հեռուստահաղորդաշարի պատվերով,
մասնակցում է լեգենդար բժիշկ Զաք Գեւորգյանի (Doctor Death) դատավարության
մասին փաստավավերագրական ֆիլմի ստեղծմանը՝
որպես սցենարի հեղինակ եւ համապրոդյուսեր:
Որպես բանաստեղծ եւ լրագրող արժանացել է հետեւյալ մրցանակներին՝
«BOSTON POET'S SOCIETY», 1997թ., ԱՄՆ,
«CALIFORNIA MOTION PICTURES», 1998թ., ԱՄՆ:
2003 թվականին, Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիայի
օղակաձեւ սրահում, Արթուր Արմինին շնորհվեց
«Բնության եւ Հասարակության Մասին
Գիտությունների Միջազգային Ակադեմիայի»
պատվավոր դոկտորի եւ Ակադեմիայի իսկական անդամի կոչում:

«Բնության եւ Հասարակության Մասին
Գիտությունների Միջազգային Ակադեմիա»

Այսօրվա դյուցազներգությունները հնագույն քրմական տաճարների հավատամքային ավետարան-կոթողներ են, որ հին ժամանակներում ձեւավորել են մարդկանց հոգեւոր եւ բարոյական նկարագիրը:
Հնագույն հավատամքային պատումներում փորձել են բացատրել գոյության գաղտնիքը եւ մեկնաբանել բնությունը՝ որպես հոգեւոր-աներեւույթ սֆերայի տրանսֆորմացիա՝ նյութականացված պրոեկցիա, որը երեք չափումնանի մեր գոյաբանական աշխարհ-իրականությունն է:
«Սասնա Ծռերը» նույնպես պատկանում է այդ էպոսների ընտանիքին եւ հնագույն ժամանակների աշխարհաճանաչողության ու արարչության մասին վիպականացված պատում-կառույց է: